Նուէր

Լիզլոնի Գալուստ Կիւլպէնկեան

Հիմնարկութեան կողմէ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների

Ակադեմիայի Մատենադարանին

1966

ՍՐԲՈՅՆ

ՕԳՈՍՏԻՆՈՍԻ

ՀԻՊՊՈՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԱՂԱԳՍ ՔԱՂԱՔԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՒԵՏԻՔԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

Ի ԽՆԴՐՈՅ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ

ԳԱԹԻՆԵՔՕ ՏԻԿՆՈՋ ԽՈՏԻԿԵԱՆ

ԿՈՂԱԿՑԻ

ՆԱԶԱՐԵԹ ԱՄԻՐԱՅԻ ԱԼԼԱՀՎԷՐՏԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻՆ 1841 ՌՄՂ.

ՍՐԲՈՅՆ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ

ԻՊՊՈՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԱՂԱԳՍ ՔԱՂԱՔԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԳԻՐՔ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ուր ճառէ Օգոստինոս գործեալ յաղագս մեղաց առաջնոյն մարդոյն, յորմէ պատճառեալ առէ զմարմնաւոր կեանս, և զախտաւոր յօժարութիւն. և առաւել զամօթալի ցանկութիւն ցուցանէ լինել անդրադարձ պատուհաս անհնազանդութեան. և 'ի խնդիր առնու թէ զիարդ զաւակաւորիլ ունէր մարդ առանց հեշտախտութեան, եթէ ոչ էր յանցուցեալ։

ԳԼՈՒԽ Ա.

Անհնազանդութիւն մարդոյն առաջնոյ՝ ամենեցուն հասանէր ընկենուլ յերկրորդ մշտնջենաւոր մահն, եթէ չէր Այ շնորհացն ապրեցուցեալ զբազումս։

Ասացաք 'ի նախակարգեալ գիրսդ՝ թէ կամեցեալ Այ ոչ միայն համանման բնութիւն միաւորել զազգ մարդկան, այլ և ազգակցութեան իմն սերտիւ կապել 'ի համաշունչն միութիւն յօդիւ խաղաղութեան, 'ի միոջէ մարդոյ հաստատեաց զմարդկան լինելութիւն. և այն ազգ անկցորդ 'ի մահուանէ մնայր յիւրաքանչիւրս, թէ ոչ երկու առաջինքն՝ որոց մին յանգոյից հաստեցաւ, և միւսն առաւ 'ի նմանէ, անհնազանդութեամբ զմահ յինքեանս ձգէին. և յանհնարին 'ի նոցա յանցաւորութենէն՝ 'ի վատթարն փոփոխեալ մարդկային բնութիւն, մահաւորեցան և 'ի սերունդս նոցա պարտիք մեղաց, և մահուն կարիք. Իսկ մահու թագա-

ւորութիւն այնչափ իմն տիրեաց 'ի մարդիկ, մինչև զամենեսին իսկ վարեալ էր արդեօք արժանապարտ պատուհասիւ և յերկրորդն մահ՝ յանեզրականն, թէ ոչ անպարտական շնորհք ոյ ապրեցուցանէին զոմանս։ Եւ ահա 'ի դոյն պատճառէ՝ այնչափ յոքունց ազանց եղելոց ընդ տիեզերս ազգի ազգի կրօնիւք և սովորութեամբք, որոց բազմապատիկ զանազանութիւնն է լեզուաց և զինուորութեանց և զգեստուց, այլ ըստ մարդկօրէն ընկերութեանն՝ յերկու սեռս ևեթ որոշեցան, զորս երկու քաղաքս յիրաւի է անուանակոչել ըստ մեր գրոց. միումն ըստ մարմնոյ, և միւսումն ըստ հոգւոյ կեալ ախորժելով խաղաղութեամբ՝ իւրաքանչիւր յիւրում սեռի. և յորժամ զամագիւտ ախորժելեացն լինին, կեան այնուհետև 'ի խաղաղութեան ըստ իւրեանց կարգի։

ԳԼՈՒԽ Բ.

Կեանք մարմնական ոչ ըստ մարմնոյ ախտիցն ևեթ իմանին, այլև որ ըստ հոգւոյ։

ԱՐԴ տեսանել արժան է նախ առաջին՝ զի՛նչ ըստ մարմնոյ կեալն իցէ, և զի՛նչ ըստ հոգւոյ։ Քանզի թէ ոք 'ի վերին երեսս հայիցի յասացեալքս, և ոչ զոր խօսին սուրբ գիրք՝ յուշ ունիցի, կամ քաջ կշռիցէ, համարիցի թերևս թէ եպիկուրեան իմաստասիրացն է կեալ ըստ մարմնոյ, իբր զի 'ի հեշտութեան մարմնոյ հաստատեցին նոքա զգերագոյն բարին մարդոյ. և որ այլք ևս ըստ նոցա՝ զմարմնոյ բարիսն կալան փոխան գերագոյն այնր բարւոյ. և բովանդակ ռամիկն նոցա՝ որք ոչ եթէ ուսմամբ ինչ կամ նմանաբար նոցա իմաստասիրեն, այլ մէտք 'ի հեշտախտութիւն ելով, ոչ այլով ինչ գիտեն զուարճանալ՝ բայց հեշտութեամբք որք ընդ մարմնոյ զգայութիւնս հարկանին։ Իսկ զստոյիկեանսն համարիցի այնպիսին՝ կեալ ըստ հոգւոյ. իբրև զի զգերագոյն բարին մարդոյ հաստատեն նոքա 'ի յոգւոջ։ Այլ սակայն ըստ բարբառելոյ աստուածային գրոց՝ ցուցանին

և սոքա և նոքա կեալ ըստ մարմնոյ ։ Վասն որ մարմին առնուանի գիրն ոչ միայն զՀոգեղէն զմահկանացուս ընդուցանէ, որպէս յատկէն, ։ ։ Ա Կոր ։ ԺԵ ։ 39, ։ ։ Ամենայն մարմին նոյն մարմին է, այլ այլ մարմին է մարդոյ, և այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց, և այլ մարմին ձկանց ։ ։ , այլ ըստ բազում այլ ևս օրինակի ՚ի կիր առնու զայդ անուն ։ և մի ՚ի բազմից անտի և՝ մարմին կոչել զմարդն գլխովին, այս է՝ զմարդոյ բնութիւն, ՚ի մանաւ զբոլորն յայտ առնելով, որպէս այն ։ ։ Ի գործոց օրինաց ոչ արդարացի ամենայն մարմին ։ ։ ։ Հռ ։ Ժ ։ 20 ։ ուր զինչ այլ է իմանալ, բայց զամենայն մարդ ։ զոր և յայտնի առ ։ ։ Ո ՚ի օրինացն ոչ որ արդարացի ։ ։ և դարձեալ ։ ։ Ո այս գիտեմք եթէ ոչ արդարանայ մարդ ՚ի գործոց օրինաց ։ ։ Կաղ ։ Բ ։ Ի ։ ոչին միտս է և այն ։ ։ Ասանն մարմին եղիւ ։ ։ այսինքն է՝ մարդ ։ զոր ամենք (ապաղինարիքս) կամակորելով՝ համարեցան Թէ կեայցէ ՚ի Քրիստոս մարդկային Հոգի բանական ։ Այլ զոր օրինակ բոլորն գնի փոխանակ մասին ՚ի բանս Աբիամա մեղադրելոյ ըստ աւետարանին, ։ ։ Ասացէք ըզաւերն իմ, և ոչ գիտեմ ուր եղիցի գնա ։ ։ , ուր խօսեր նա զՀոգեկալ մարմինն Քրիստոս ։ Ոչ ևս, զոր բարձեալ կարծէր ՚ի գերեզմանէ անտի, այլոյպէս մնան փոխան բոլորի առեալ, յանուանէն մարմին, իմանի մարդն ողջոյն ։ որպէս ՚ի նախայիշատակելոցն է տեսանել ։

Այսպա քանզի բազմօրինակաբար ՚ի կիր առնուն ածայինն տուաք գտնուն մարմնոյ, զոր յերկար է ՚ի խոյզ առեալ հաւաքել աստուածօր, առ ՚ի կարելոյ մեզ քննել զինչ իցէ կեալ ըստ մարմնոյ, որ արդարեւ միշտ չար է, Թէպէտ և մարմնոյ բնութիւն ոչ է չար, Հայեցուցք արդեաւն մտօք յայն բան Պօղոսի առաքելոյ առ գաղատացիս ։ ։ Ո ՚ի յայտնի են գործք մարմնոյ, այսինքն են՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիշերութիւն, գռեհկաբարոյութիւն, կռապաշտութիւն, թշնամութիւն, հեւս, նախանձ, բարկութիւն, հակառակութիւնք, երկպառակութիւնք, հերձուածք, չարախոհութիւն, սպանութիւնք, արբեցութիւնք, անառակութիւնք,

և որ ինչ սոյին նման են. զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս և կանխաւն ասէի, թէ որ զայսպիսի ինչ գործեն, զարքայութիւն այ ոչ ժառանգեն ,,. Գաղ. Ե. 19. Ահա այս տեղի առաքելական թղթոյն բովանդակ՝ ըստ առաջինկայ իրացդ պատշաճի կշռադատեալ, լուծանել բաւական է զխնդիրս՝ թէ զինչ իցէ կեալ ըստ մարմնոյ. Զանզի 'ի գործս մարմնոյ՝ զորս յայտնիս լինել ասաց, և մի ըստ միոյ յիշատակեալ դատապարտեաց, ոչ լոկ զմարմնոյ հեշտալիսն գտանեմք՝ զպոռնկութիւնս, զպղծութիւնս, զգիջութիւնս, զարբեցութիւնս, զանառակութիւնս, այլ և որ ինչ հոգւոյ ճանաչին ախտք՝ ուրոյն 'ի մարմնոյ հեշտալեացն. Զի՞ ոք զկռապաշտութիւն, զկախարդութիւն, զթշնամութիւն, զհեռ, զնախանձ, զհակառակութիւն, զերկպառակութիւն, զհերձուած, զչարակնութիւն ոչ գիտիցէ ոգւոյ առաւել՝ քան թէ մարմնոյ լինել ախտս. Ապաքէն պատահէ իսկ երբեք՝ զի սակս կռապաշտութեան կամ հերձուածական մոլորութեան ժուժկալիցէ ոք 'ի հեշտութենէ մարմնոյ. և սակայն այլ այնպիսի՝ մարմնոյ ցանկութենէ ոտնհարու կարծեցեալ՝ տակաւին ըստ մարմնոյ ցուցանի կեալ առաքելական բանիւս. և թէպէտ հրաժեշտ տայ 'ի հեշտութենէ մարմնոյ, բայց դատապարտելի գործոց մարմնոյ գտանի պարտական. Ո՞ ոք զթշնամութիւն ոչ հոգւոյ վարկանիցի. և կամ իցէ թէ ասիցէ ոք ուրում թշնամւոյ, կամ թշնամի կարծեցելոյ, չարամարմին ես դու առ իս, և ոչ մանաւանդ ասիցէ՝ չարամիտ ես. և զոր օրինակ՝ եթէ մարմնազեղծութիւն ոք լուիցէ, առանց երկբայելոյ՝ մարմնոյ զնոյնս ընծայէ, սոյնպէս զհակառակութիւս կամ զերկպառակութիւս ոչ ոք երկմտեսցի հոգւոյ անկաւորս ասել. Իսկ ընդէր ապա զայս ամենայն և զնմանատիպսն՝ այն որ հեթանոսացն է վարդապետ հաւատոյք և ճշմարտութե՛՝ անուանէ գործս մարմնոյ, բայց եթէ 'ի ձև խելամտութեան՝ որով բոլորն անուամբ մասին նշանակի, զմարդն ողջոյն մարմնոյ անուամբ տայ իմանալ.

ԳԼՈՒԽ Գ

Մէկտեղ պատճառ՝ ի հոգւոյ եկն յառաջ, և ոչ ի մարմնոյ. և ապականելն ածանցեալ ի մեղաց՝ ոչ ի մեղք, այլ պատիժ։

Այլ թէ ասիցէ ոք, մարմինն յամենայն վատթարութիւնս պատճառ իւրաքանչիւր ախտից, իբրու զի հոգի մարմնոյն զգածեալ՝ այնպիսի վարկ կենաս, արդարեւ ոչ բուսնդատ կացուցանէ զմարդոյ բնութիւն մանր գնել այսպիսին։ Այսպէսն «Այրմին եղծանելի ծանրացուցանէ զոգի...» Իմաստ. Թ. 15. ուստի նա ինքն առաքեալ խօսելով յաղագս եղծանելի մարմնոյն, զորմէ փոքր ինչ յառաջ ասացեալ էր, «Ախ, պիտ և արտաքին մարդս մեր ապականի...», ի վերոյ բերէ. «Այանդի գիտեմք, զի եթէ երկրաւոր տանիքս շինուածոյս մերոյ քակտեցի, շինած յոյ ունիմք առանց ձեռաց գործի յաւիտենական յերկինս։ Այս ընդ այս տաղտկամք. քանզի զնաւակութիւն երկնից փափաքեմք զգենուլ. միայն թէ յարժամ զգենուցուիցին, ոչ մերկ գտանիցիմք։ Այանզի որ եմք ընդ յարկաւս ընդ այսմիկ, տաղտկամք ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ զգեցի՛ ի վերոյ այսը զգենուլ. զի ընկղմեսցի մահկանացուս՛ի կենաց անտի...։ Ա։ Կոր. Ե։ Այսպա ուրեմն թէ և ծանրանամք եղծանելի մարմնով, բայց պատճառ ծանրութեանս դիտելով ոչ զմարմնոյ բնութիւնն իսկական՝ այլ զապականութիւնն նորա, մերկանալ զմարմնին չկամիմք, այլ զնորա անմահութիւնն՝ ի վերայ զգենուլ. քանզի և յայնժամ մարմին, այլ զի եղծանելի ոչ է, չծանրացուցանէ։ Այսպա ուրեմն այժմ «Այրմին եղծանելի ծանրացուցանէ զոգի, և հակիւ հողեղէն յարկ զմիտս բազմահոգս...» Այլ սակայն սխալէն ոքք համարիցին թէ ամենայն չարիք հոգւոյ յառաջ գայցեն՝ ի մարմնոյ։

Այդարեւ վիրգիլեանն քերթուած հոյակապ՝ թուի զպղատոնին արտայայտել կարծիս յանդ։

"Ի սերմնորակ ոգւոյն ի սիւնս,
Հրատիպ կայ այժ յերկնից ծագ լոյս.
Յորչափ մարմինքըդն ժանտագործ
Զարիցեն արգել ի բաւոյն փորձ,
Կամ երկաւոր կապք մեզկեսցեն,
Ընդամէն որ պարտ մահու իսկ են... Այնէհան. ։

Այս կամեցեալ յայտ առնել թէ ի մարմնոյ անտի բնաւորին քառեանն այն ծանուցեալ ամբոխմունք հոգւոյ, ցանկութիւն, երկիւղ, խնդութիւն, տրտմութիւն, իբր սկզբնաւրիթս առնոյն մեզոյ և սխտաւորութեց, ի վերայ բերեալ ասէ.

"Ոչ՞ւտի ծոցս երկիւղ, տարփանք,
Որ ինչ ցաւին, որ ինչ խնդանք,
Ոչ վայելուղք են քաղցր օդոյս,
Խաւարաբոգելք ի բանտ անդոյս...

Այլ սակայն ոչ այդպէս աւանդեն հաւատոք մեր. քանզի մարմնոյ եղծականութիւն որ ծանրացուցանէ զոգի, ոչ երբէք պատճառ առաջնոյ մեզոյն է, այլ պատիժ. և ոչ մարմինն եղծանելի մեզանչական արար զոգի, այլ հոգին մեզանչական զմարմինն արար եղծանելի։ Յայտ ասելոյ նութիւնէ արդարեւ ի վեր երբէն զրգռութիւնք ինչ սխտից, և ցանկութիւնք սխտաւորք, այլ ոչ զտիստ ամենայն զանբարի կենցաղ ի մարմին անդր հանել արժան է. զի մի ամենայնի այնոցիկ անուանակ համարիցիմք զսատանայ, որոյ չիք մարմին. Ոչ թէպետ և ոչ է մարթի պռնկիկ գինս առել կամ արբեցող, և կամ որ այլ ևս անուն չար ըստ մարմնական հեշտութեց, որոց մեզոյ ևս է նա ինքն խթատոտ և զրկիչ անէրևոյթ, սակայն է է ամբարտաւան սատիկ և չարակնոյզ. և այս սխտաւորութիւն այնպէս ինի զրաւեաց զինս, մինչև սորին վանն պահեցաւ մշանջենաւոր տանջանաց ի բանտ օդոյս խաւարի։ Այդ զայսոսիկ սխտս՝ որ առաւելութիւն են ի սատանայ, առաքեալն ընծայէ մարմնոյ, զոր չունի բնաւ սատանայ. քանզի զօրձս մարմնոյ ասէ զինամութիւնս, զկեռ, զինախնձ, զկախաւակութիւնս, զարարկնութիւն, որոյ չարեաց առնոյնի

գլուխ և սիկզբն՝ հայտարարելի է, այն որ անմարմնաբար
սիրէ՛ի սատանայ. և ո՞ր առաւել քան զնա ձեռնամ
սրբոց. ո՞ առաւել խեղացող, հակառակող և չարակիրող
առ սուրբս գտանիցի, կամ եթէ նա առանց մարմնոյ ու-
նակ է այսոցիկ, զիարդ գործք մարմնոյ իցեն՝ եթէ ոչ զի
մարդոյ գործ են, զոր ըստ ասացեալսմ՝ անուանեմք մար-
մնոյ կոչել. Օ՛ի և մարդս ոչ եթէ մարմին ունկալոյն՝ զոր
չունի սատանայ, այլ ինքնօրէն վարելոյն՝ ըստ կամի մար-
դոյ՝ եղև նմանող սատանային. զի և սատանայ ինքնօրէն
կեալ ախտիւժեաց՝ յորժամ՛ի չէմարտութեան ոչ եկաց,
որպէս զի ոչ ըստ ՚ոյ, այլ յիւրոց անտի զառատ խօսիցի,
եղեալ ոչ միայն սատիսօս, այլ և սուտքեհ Հայր. զի նա
առաջինն սուեաց. և յորմէ մեզքն նախ գոյացան, ՚ի նմանէ
և սուտքինն.

ԳԻՒՒԽՈ ԴՐ

Ջ ինչ է եթէ ըստ մարդոյ կեալ, և զինչ ըստ ՚ոյ.

Ա՚ՊԱՆ ուրեմն յորժամ մարդ կեայ ըստ մարդոյ՝ և ոչ ըստ
՚ոյ, սատանայի նման է. զի և ոչ հրեշտակին այն ունկալ
կեալ ըստ հրեշտակի՝ այլ ըստ ՚ոյ, որով՛ի չէմարտութենէն
կացցէ, և՛ի նորայոյն խօսեսցի զչէմարտութի՛ն, և ոչ եթէ
յիւրոց անտի զառատէ. Ա՚մանզի և վասն մարդոյ ասէ յայ-
լումն վայրի նոյն առաքեալ. ՚՚Ա՚յնքան չէմարտութենէն ՚ոյ յի-
մէ սուտքենէն առաւելաւ ..՝ ՚՚Ե՛ր ասէ ըզ-
սուտքէն, և ՚ոյ զչէմարտութէն. վասն որոյ յորժամ ըստ չէմ-
արտութե՛ կեայ մարդ, ոչ ըստ իւր կամս կեայ՝ այլ ըստ ՚ոյ.
զի ՚ած է որ ասացն. ՚՚Ա՚յս եմ չէմարտութի՛ն ..՝ ՚՚Ա՚յժ
Ա՚յժ յորժամ ըստ իւր կեայ, այսինքն ըստ մարդոյ, և ոչ
ըստ ՚ոյ, յայտ է թէ կեայ ըստ սուտքե՛. ոչ զի մարդ ինքն
սուտքի՛ է, ուր նորա պատճառ և արարիչ՝ ած է, որ չէ
սուտքե՛ արարող, այլ զի մարդ այնպէս արարաւ ուղիղ,
զի ոչ ըստ իւր ինքեան՝ այլ ըստ իւրումն արարողի կեցցէ,

այս է՝ զնորա կամս առնիցէ քան թէ զիւրն ․ իսկ արդ ոչ կեալ ըստ այնմ առ որ եղեւ՝ ստութիւն իսկ է, զի երանելի կամի լինել ոչ կելով այնպէս՝ որով լինելն հնար էր ․ և զինչ առաւել ստութիւն քան զայսպիսի կամս ․ ուստի ոչ անպատճառ ինչ ասել ունիմք, թէ ամենայն մեղք ստութիւն է ․ քանզի մեղք ոչ գործի՝ բայց այնու կամօք որով կամիմք զի մեզ բարի լինիցի, կամ չկամիմք թէ չար ինչ մեզ լիցի ։ Ապա ստութիւն է՝ յորժամ 'ի կարծել մեր բարի ինչ լինել՝ այնու չար լինի առաւել, կամ զլաւագոյնն մեզ լինել կարծելով՝ յոռեգունին յաւէտ հանդիպիմք ։ Եւ ասիմ՝ այս, եթէ ոչ զի առ 'ի յա̃յ յաջողէ բարի լինել մարդոյ, զոր յանցմամբն լքանէ, և ոչ յինքենէ՝ ըստ որոց կենցաղելովն յանցաւոր լինի ։

Ապա զոր ասացաքն՝ թէ այնու 'ի վեր երևեցան երկու քաղաքք այլակերպք և հակառակամարտք, զի ոմանք կեան ըստ մարմնոյ, և այլք ըստ հոգւոյ, լինի և այսպէս ասել, զի ոմանք ըստ մարդոյ կեան և ոմանք ըստ ա̃յ ։ Քանզի յայտնապէս ասէ Պօղոս առ կորնթացիս ․ “ Ուր և արդ իսկ իցէն 'ի ձեզ հեռ և նախանձ, ո՞չ ապաքէն մարմնաւորք էք, և ըստ մարդկան գնայք „ ․ Ա․ Կոր․ Գ․ 3 ։ Ուստի որ ինչ է գնալն ըստ մարդոյ, նոյն է լինել մարմնաւոր ․ իբր զի 'ի մարմնոյ որ է մասն մարդոյ՝ իմանի մարդըն ․ քանզի զայնոսիկ շնչաւորս ասաց վերագոյն, զորս յետոյ ասէ մարմնաւորս ․ “ Զի ո՞ ոք 'ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ 'ի նմա ։ Այնպէս և ոչ զաստուծոյն ոք գիտէ՝ եթէ ոչ հոգին ա̃յ ։ Այլ մեք, ասէ, ոչ եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զհոգին որ յա̃յ, զի ծանիցուք զայն՝ որ յա̃յն շնորհեցաւ մեզ ։ Եւ զոր խօսիմքս, ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից, այլ վարդապետութեամբ հոգւոյն ընդ հոգևորս զհոգևորսն համեմատեմք ․ քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն ա̃յ, զի յիմարութիւն է նմա „ ․ Ա․ Կոր․ Բ․ 11 ։ Եւ ահա առ այսպիսի շնչաւորս յետ սակաւուց ասէ ․ “ Եւ ես եղբարք ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրև ընդ հոգևորս, այլ իբրև ընդ մար-

ձնաւորս.., Ա՛ւ սովին իսկ ձևով բանի մի և նոյն ինչ իմա-
նի, այս է՝ ի մասնէ բոլորն. զի Թէ՛ ի հոգւոյ և Թէ՛ ի
մարմնոյ՝ որ մասունք են մարդոյ, նշանակի ողջոյն մարդն.
ուստի ոչ այլ է ընչաւոր մարդն, և այլ՝ մարմնաւորն, այլ
նոյն մի երկոքինն, այսինքն է՝ մարդ ըստ մարդոյ կենցաղա-
վարել։ Ո՛չ որ օրինակ ոչ այլ ինչ՝ բայց մարդիկ նշանակին՝
յընթեռնուն " Ի գործոց օրինաց ոչ արդարանայ ամե-
նայն մարմին ,, ՀԻ. Գ. 20. նոյնպէս և յայտմ. " Ի՛մե-
նայն ոգիք տանն Յակոբու որ մտին Ա՛գիպտոս՝ եօթա-
նասուն և հինգ ,, ԾՆԱ. Խ. 27. Ա՛յանդի որպէս յա-
ռաջնումն՝ ամենայն մարմնով իմանի ամենայն մարդ,
նոյնպէս յերկրորդումն՝ եօթանասուն և հինգ ոգւով
նոյնչափ մարդիկ իմանին. Ա՛ւ որ ասացաւն՝ ոչ մարդկե-
ղէն իմաստութիւն, նոյն էր Թէ ասէր՝ ոչ մարմնեղէն ի-
մաստութիւն. և ասացեալն՝ ըստ մարդկան գնայք, նոյն է
ասել՝ ըստ մարմնոյ. Ա՛ւ այս առաւել ևս բացերև տե-
սանի յառաջիկայ բանս. " Ո՛չորժամ ասէ՝ որ՝ ի ձէնջ
ես պօղոսեան եմ, և միւսն՝ Ե՛ս ես ապողոսեան, ո՞չ
մարդիկ էք ,, ա. Կոր. Գ. 4. Ա՛յդ զոր ասէրն՝ ընչաւորք
էք, մարմնաւորք էք, մեկն ասաց՝ մարդիկ էք. այս է՝
ըստ մարդոյ կեցէք, և ոչ ըստ ոգւոյ. զի Թէ ըստ այսմ կե-
ցեալ էիք, աստուածք ոմանք լինէիք.

ԳԻ ՀԱԻԱՏ Ե

Թէպէտ և պղատոնականացք կարծիք յայտգիտ բնաւթիւն մարմնոյ և հոգւոյ առաւել քան զմանիքեացն Նէբելի է, բայց են և նոքա սպառամէնիք՝ բնաւթիւն մարմնոյ առլով զպատճառս սխալից.

Ա՛լ ԱՄՆ այսորիկ չէ պարտ՝ ի յանցուածս մեր և յախ-
տաւորութիւնս Թշնամանս բերելով արարչին՝ զմարմնոյ
բնաւթիւնն պատճառել, որ յիւրումն ժեռի և՝ ի կարգի բա-
րի է. սակայն Թողեալ զարարչն արարիչն՝ կեալ ըստ արա-

բաժական բարւոյ՝ ոչ բարի է, թէպէտ ըստ մարմնոյ կեալ ընտրեացէ որ, թէպէտ ըստ հոգւոյ, թէպէտ ըստ բոլոր մարդոյն որ՛ի հոգւոյ բաղկանայ և՛ ի մարմնոյ. բայց սակս է զի անուամբ հոգւոյ միայն, և է զի մարմնոյ միայն՝ նշանակեալ գտանի. Վասնզի որ ոք իբր բարի գե- րագոյն մեծարիցէ զհոգւոյ բնութիւն, և իբր չար պարսա- ւիցէ զմարմնոյ բնութիւն, այսպիսին անշուշտ մարմնապէս ցանկայ հոգւոյ, և մարմնապէս խոյս տայ՛ի մարմնոյ, զի մարդկօրէն սուտ թէ այդպէս դատի, և ոչ ըստ այ Հմար- տութեն. Արդարեն պղտոտեանք՝ ոչ ըստ զառանցելոյ մանիքեացւոյ՝ իբր՛ի բնութէ չարէ խորհրդ յերկրային մարմնոյ. որովհետև զարարեալս ամենայն՝ զբազմացու- ցիչս երևելոյ այսմ և չշտաբերէլ աչիւրհի, և գնոցայն յատկութիս ընծայեն այ Հարտարապետի. Արդ սակայն այնպէս իմն Համարին ըմբռնիլ հոգւոյ յերկրաւորն կա- պից և՛ի յանդամից մահկանացոյ, մինչև ասել՝ թէ ստոյ եւեթ լինին՛ի նոսա ախտք ցանկութեն և երկիւղի, և խնդութեն և տրտմութեն, չորեքին այն՛ի Արիկեբռնէ ամ- բոխումն անուանեալք, կամ ըստ յոյն բառին կիրք ասա- ցեալք՛ի բազմաց, յորս մարդկային բարուց ախտաւորու- թեն Համայն բովանդակի. Արդ սակ եթէ այդպէս իցէ, առ ինչ ապա լուեալ Արնեասայ՛ի Տօրէ իւրմէ՛ի սանդա- բամետս անգ զՀոգւոյն անդրէն դարձուածն՛ի մարմինս, զարմանայ ընդ բանն՝ բացագանչելով առ Արն իրդիլեայ.

«Արՙ Տայր, ո՛ Տայր, զիարդ Հոգւոյ
Արյսոի յերկինս վերաթռչելոյ,
Արնդրէն՛ի դարձ դանդաղ մարմնոյ,
Արգել անձկալ ըստ բանից քոց,
Արուսեղինին էր այդ գԺնեայ
Արբ հիքացեալն ըղձումըն կայ ... ՀԱՆԷՒԱՆ Ը.

Հիմ արդեօք անՀանգիստ այդ առփուն կայցէ տակա- ւին՛ի Հոգիսն անաղտ խոստովանեալս յերկրաւոր կապից անտի և յանդամից մահացուաց. ոչ ապաքէն յամենայն՛ի մարմնական ժանդից՝ որպէս ինքն կոչէ, մաքրեալս ասէ զՀոգիսն՝ յորժամ ակամբին յանդրէն դարձ առ մար-

վինս ցանկանալ. Ուստի լինի իմաստասիրել, զի թէ և այդպէս լինէր բանն, որ չէ և չէ իսկ ձշմարիտ, թէ այն պէս ինն յար գործադարձ առնիցեն հոգիք ի մարդիկ և յայլաեղանակս, տակաւին անմարթ է ասել ձշմարտութիւն թէ ամենայն չարժումն հոգւոյ անդ անանկելի և անտակիր՝ յերկրային մարմնոյ գոյանայցէ ի նոսա. Վասնզի ըստ նոցին իսկ՝ որպէս ձայնատար քերթողն ասէ, ըղձումն այն գիմեալ այնչափ անհնարագործելի է ի մարմնոյ, մինչ զի զմարքեաքս հոգի յամենայն մարմնական ախտէ, և զմերս կացեալն յամենայն մարմնոյ թախանձէ լինել ի մարմին. Վասն որոյ ի նոցունց իսկ խոստովանեալ է, թէ ոչ ի մարմնոյ միայն վարի հոգի ի ցանկալ յերկնչել, ի խընդալ և ի տխրիլ, այլ ինքեամբ ևս կրողական է այսոցիկ չարժմանց.

ԳԼՈՒԽ Ը.

Զաղագս որպիսութեանն մարգկային կամաց, որով գոհաստանալ Թիւր կամ ուղիղ գործն ախորժակք հոգւոյ.

ՎՅԼ գործ է ընտրել որպիսի արդեօք իցեն կամք մարդոյ. զի եթէ թիւրեալ իցէ, թիւր և զչարժմունս զայնոսիկ ունիցի. իսկ եթէ ուղիղ իցէ, ոչ միայն անանգոսնելիք իցեն չարժմունքն, այլ գովելիք ևս. Վասն զի կամք է յամենեսեան ի նոսա. Մանաւանդ թէ ամենայնքն ոչ այլ ինչ են, բայց կամեցմունք. զի ցանկութիւն և խնդութիւն զինչ այլ՝ եթէ ոչ կամք իսն է ի հաճութիւն այսոցիկ զորս կամիմք. և զինչ երկիւղ և արտմութիւն, բայց կամք անհաւանի առ այն՝ զոր չկամիմք. Վասն յորժամ հաձիմք փափաքելով ընդ որս կամիմքն, ցանկութիւն ասի. և յորժամ հաձիմք վայելելով յորս կամիմքն, ասի խնդութիւն. նոյնպէս անհաւանեալ ընդ այն՝ զոր չկամիմք թէ գայցէ, այնպիսի կամք՝ երկիւղ է. իսկ յանհաւանելն ընդ այն որ ըստ ոչ կամաց հասանել, այդ արտմութիւն է. և համեմուն

ըստ զանազանութեձ բաղձալեացն և խորհրդեաց՝ որպէս
զիարդ ամէքին կամ իրաչին կամք մարդոյ, ըստ նմին փո-
փոխին և չքշին յայս և յայն կերս ախորժակաց . Ա՝ ասն ո-
րոյ մարդ որ ըստ ոյ կեայ՝ և ոչ ըստ մարդոյ, պարտի սիրող
լինել բարւոյ, որուամ զինի գայ՝ առել զայն . և զի որ որ
միանգամ չարն իցէ, ոչ թնուեձեամբ՝ այլ ախտիւ ի չար,
պարտ է այնմ որ ըստ ոյն կեայ, առելութիւն կատա-
բեալ բերել առ չարս , ոչ՝ի սակս ախտին առելով զմարդ-
գէն, և ոչ վասն մարդոյ զախտն սիրելով . այլ զի զախտն ա-
տիցէ, և զմարդն սիրիցէ . քանզի յատաքինել ախտին՝
ինացեալն առնեայն սիրելոյ է ստծանի, և ոչ առելութեձ ,

ԳԼՈՒԽ Լ՝

Ակր է սիրելութեձ անխտիր ասի՝ի բարին և՝ի չարն՝ ըստ ոձոյ որ գրոց ,

ՎՐԱՆՁԱՒ որ Հաստատեալն է սիրել զնձ, և ոչ ըստ մարդոյ՝ այլ ըստ ոյ սիրել զնկերն, նա և զանձն իւր և ա, արդա-
րեւ այնպիսին վս այսր սիրոյ կոչի կատեցող բարւոյ . և այս
յայնմ անուանի՝ի որ գիրս սէր ոյ, ձծախրուեի և երջայր-
սիրութեձ , և ա և պարզապէս սէր . զի և առաքեալ ասէ՝
թեձ այնմ որ ընտրելին է՝ի վերակացուեձ ժողովրդեան,
պարտ է լինել բարեսէր . Տիտ . ա . 8 ։ Լու տէրն ինքնին
իբրև Հարցանէր երիցս յՊետրոս առաքեալ, “Սիրես
զիս առաւել քան զդոսա ..., նա ետ պատասխանի . “Ո՛յ
տէր, դու գիտես զի սիրեմ զքեզ .. ։ Ոչորս բայդ սիրել՝
անխտիր ասի՝ի լատինն ամօ , և ֆիլէօ ։ Ասլսկս և սէրն
անխտիր ասի ֆաւէօ , ամօ , ֆիլէցիօ . որք ըստ տեղւոյն
զանազանին ,

Ո՝այս յայն սակս յիշատակել՝ի դէպ վարկայ, իբր զի
Համարեցան ոմանք , թեձ ֆիլէցիօ և ֆաւէօ՝ի բարւոյ
միոյ վարիցի, իսկ ամօ՝ի չարն ։ Ասկայն Հաւատամ և՝ թեձ
և ոչ յոյն և լատին մատենագրողք աչխարհական գոլու-

Հանց այդպէս որոշաբար խօսէցան , Թագ Իմաստա-
սէրը տեսնէն՝ արդեօք և իւ որոշիչն գայսոսիկ . բայց
մատեանը նոցա յայտնապէս գՀայդ ամօ , որ է սէր ,
յարգեն՝ ի բարին , և առ այծ խոկ . Իակ միւք յայծատրա-
ման գրոյ՝ որոյ գՀատատարմանէն գերիվերոյ գնեմք
քան զայլ ամ գրոց , ընկալաբք զխարանս բառիցդ . «Ի ան-
զի սէր ասի Հայերէս ամօ՝ նա և՝ ի բարւոյ կողմն . և սէր
ասի՝ նա և ոչՀԷՀՏ բառ իւ՝ ոչ՝ ի բարին միայն , այլ և՝ ի չարն.
զոր օրինակ՝ ի բանս յայսոսիկ . «Իսէր սիրէ զիս , առեալ
զանձն իւր ։ Ա՛ղ . Ճ՝ . 6 . և «Իսէր որ սիրէ զաշխարհ ,
ոչ է՝ ի նմա սէր Հօր ։ ՚ . ՚ . ՃՀ . Ը՝ . 15 . Այսպէս իմս
և զգրեալն ամս բայիւ ըստ լատ . «Օ՛ի եղեցին մարգիկ
անձնասէրք , արծաթասէրք ։ Ի՛չտ ուրեմն ուղիղ կամքն
է սէր բարի , և կամք Թիւր՝ սէր չար . Լեատ սէրն անձ-
կացեալ՝ ի ստացումն սիրելոյնն՝ ցանկութիւն է . ՚ի ըս-
տանալն զնոյն և՝ ի վայելել՝ խնդութիւն է . ՚ի խուսեալն
՚ի նեբՀակէն՝ երկիւղ է . իակ՝ ի կրեալն զվերաքաշան՝ արբա-
մասէրն է . և այսոքիկ չարք են , եԹէ չար իցէ սէրն .
և բարիք , եԹէ սէրն իցէ բարի ։ Ի գրոց ցուցցուք զա-
ստուածաբան . ցանկալիք առաքեալն Հայեալ՝ ի մարմնոյ և
լինել ընդ Քրիստ . Փիլիպ . ՚ . 23 . և «Փափագեալ անձն
իմ՝ ի ցանկալ ինձ յերեսանա քո ։ Ղ՚ . ՃՀ . 20 . և
«Ցանկութիւն խնամասիրէ տանի յարքայասէրն ։ Ա՛մաթ .
Ճ՚ . 21 . Այսպէս սովորութիւն Հզեալ խօսիմ , զի չասուս-
նելն ցանկութիւն առանց՝ ի վերայ բերելոյ՝ Թէ իմ խիղճ ,
միշտ՝ ի չարին կողմն իմանի . Խնդութիւն՝ ի բարին է ,
«Ցնծացեք արդարք՝ ի տէր ։ և «Ի՛տուր ուրախութիւն
որպէս մերոց ։ և «Ի ցուսցես զիս յուրախութիւնէ երե-
սաց քոց ։ , Ի՛րկիւղ՝ ի բարին է յասել առաքելոյ . «Ի՛նիս
և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցիք ։ և
«Ի՛ի Հպարտանաւք , այլ երկիւղ ։ և «Ի՛ա երկնչիմ գու-
ցե որպէս ձեզ խաբեաց զԻ՛ւա խորամանկութեամբ իւ-
րով , ապականեսցին միտք ձեր՝ ի միամտութենէն որ՝ ի
Քրիստ Ի՛ես ։ Ի՛այց յայտնի տրամաբան , զոր Աիկերոն
ընտրէ առնել՝ խօսուն և Ի իրգիլեոս՝ ցաւ , ուր այդ բառք

առաւել ասին զկրից մարմնոյ , իսկ արտաքին կիրք է ոգւոյ , կայ ինդիր հետաքննելի՝ արդեօք գտանիցի առաջեալ՚ի լաւ անդր ։

ԳԼՈՒԽ Ը.

Զազգս երից ամբոխմանց՝ զոր դնեն առօխիկանք լինել՚ի յոգւոջ առն խմաստնոյ , արտաքոյ Թոզով գրաւ կամ զրամանէն , զոր անպատեհ վարկանին առաքինութեանէ հոգւոյ ։

Լուսոյ կիրս , զորս Հոռիք ե-ե-ռիկ կոչեն , և՚ի լատինականն փծոթանիկա , սերտութեանէ կամ անյողդողդութենէն ասաց Կիկերոն , երիս միայն դնեն առօյիկեանք՝ փոխառնակ երից ամբոխմանցն՚ի յոգւոջ առն խմաստնոյ . փոխառնակ ցանկութենէ ասեն՝ կամս , փոխառնակ ինդութենէ՝ ուրախութենէ , փոխառնակ երկիւղի՝ զգուշութենէ . իսկ փոխառնակ արտմութենէ՝ չաւնն յանձն դնել ինչ յանձին խմաստնոյ ։ Ա՚անգի ասեն . կամըն ըղձանոյ բարւոյն , զոր խմաստունն գործէ . ուրախութիւն է ընդ բարին առայեալ , զոր ամենայն ուրեք՚ի ձեռս բերէ այլ խմաստուն . զգուշութենէ տեղի տայ՚ի չարէն՝ յորմէ խոյս տալ ունի այլ խմաստուն ; Վակ արտմութենէ քանզի է , ասեն , առ չարն է կեալ հասեալ , և զի համարին թէ ոչ մի ինչ չար հասանել կարէ խմաստնոյն , առացին թէ այդ չունի տեղի յանձին խմաստնոյ ։ Ա՚յլա ըստ նոցայն խօսելոյ՝ կամիլ , ուրախանալ , զգուշանալ՝ որպէս կիրք բարիք՚ պատշաճին խմաստնոյն և են . իսկ անմտին միայն է՝ ցանկալ , ինդալ , երկնչել , տրտմիլ՚ ։

Վ՚ասն այնորիկ կամին , զգուշանան , ուրախ լինին և են՝ բարիք են չարք . և կամ զնոյն այլովք արտայայտելով բայիւք . ցանկան , երկնչին , ինդան և բարիք և չարք . սակայն նոքա՚ի բարիոքն , և սոքա՚ի չարն , որպէս

1 Ջանց առնեմ և զայլ հասուածով ուր լատին բառիդ է խորութիւն ։

զիարդ կամք մարդկանն իցեն ուղիդք կամ թէ ւրեւլք ։ Ա-
ԼՀ և նոյն իսկ տրամաբէնն՝ զոր յանձն իմաստնոյ ոչ
բնաւ դնել հաւանին տայիկեանք , գաւառի և՛ բարբն ,
մանաւանդ առ մեր մտառնագիրս · քանզի գովէ գկորըն-
թացիս առաքեալն յայն սահս , զի տրամեցան ըստ նմ ,
Ա-ԼՀ ասիցէ զոր թերեւս · ինդակիից լինի նոցա առաքեալ ,
զի տրամեցան յապաշխարութեն , և այդպիսի տրամաբէն
նոցա միայն անկ՝ որք մեղացեալ իցեն · զի ասէ այսպէս ·
«Չեամանեմ զի թուղեն այն թէ աւժամանակ մի տրամե-
ցոյց զնեզ · արդ ուրախ եմ, ոչ զի տրամիցիք , այլ զի յա-
պաշխարութեն տրամեցարուք · քանզի տրամեցայք դուք
ըստ նմ , զի մի իւիք զրկիցիք՛ի մենջ ։ Օ՜ի որ ըստ նմն
տրամաբէնն է , ապաշխարութեն՛ի փրկութեն ա-
ռանց գղջմանալոյ գործէ · իսկ աշխարհի տրամաբէն՝ մահ
գործէ , Ա-ԼԴ նոյն իսկ որ ըստ նմն տրամեցարուք , որչափ
ինչ փոյթ գործեաց՛ի ձեզ ։ Է · Ւ՜ր · Է · Ւ՜ր այդ ահա ունին
տայիկեանք զիւրեանցն արդարացուցանել թէ տրամա-
բէն յայն ինչ թուի պիտանի՝ զի զմեզն որ ապաշաւես-
ցէ · իսկ՛ի հոգւոջ իմաստնոյն չունի այդ տեղի , այնու
զի մեզաց չէք՛ի նմա մուտ՝ որոյ ապաշաւանաքն տրամա-
ցի , և ոչ այլ չար ինչ՝ զոր կրեալդ վշտագնեալ տեսցէ ,
Ա-ՆԱղի և վասն Ա-ՀՀիպիսիդեալ պատմէն , եթէ ոչ տես-
լեցեմ՛ի Յիշատակ անուանն , թէ կարծեցեալ նորա զմեզ
ձըն երջանիկ , իբրև յանդիմանեցաւ Ա-ՈՀրատոյ՝ ցու-
ցեալ թէ քանի թշուառ էր սակս անմիտն գոլոյ , ՛ի լա-
լեւն հարաւ · Ա-յա ուրեմն անմտութեն եղև նմա պատ-
ճառ այսր պիտանի և ցանկալի տրամաբէնն , որոյ ցաւագ-
նի մարդ ընդ լինել իւր այնպիսի՝ որպիսի ոչ էր աթեան
լինել · իսկ տայիկեանք վասն իմաստնոյ ևեթ՝ և ոչ վասն
անմտին ասեն՝ թէ չիարժ տրտում լինել ։

ԳԼՈՒԽ Ը

Յաղագս յուզմանց հոգւոյ՝ զորոց զուղիղ չարժումն ունին վարք արդարոց։

Լուաց արդ որ ինչ անկ էր ինդրոյս յաղագս ամբոխմանց հոգւոյ, արարաք պատասխանի իմաստասիրացդ այդոցիկ յիւրեերդոդ գիրսն մատենիս, ցուցեալ եւ սակս ձայնից յաւէտ՝ զան եթէ իրաց է նոցայն փոխն բանաւկառուածէ, և ոչ չմարտուածէ։ Ասէ առ մեզ՝ ըստ ոճոեղէնս գրոց և ըստ ողջամիտ վարդապետութեանն՝ կենցաղաւարեալքն ի նդգհուածս քաղաքացիք սրբոյ քաղաքին այ երկնչին և ցանկան, ցաւին և խնդան. և զի սէր նոցա ուղիղ է, ուղիղ և զայս ամենայն կիրս ունին։ Այր կընչին ի յաւիտենից պատժոցն. ցանկան կենացն յաւիտենից. ցաւին արդեամբք, զի "Ընդամբ յանձինս հեծեն, որդեգրութեանն ակնկալեալ փրկութեանն մարմնոյ իւրեանց.. Հռ. Ը. 23։ Խնդան յուսով, զի եղիցի բանն որ գրեաւեալ է, թէ ընկալաւ մահ՝ ի յաղթութեան։ Այս դարձեալ, երկնչին ընդ մեղանչել. ցանկան քաւել՝ ի բարին. ցաւին ընդ մեղն. խնդան՝ ի գործս բարիս։ "Ականզի առ երկրս. լեալ՝ ի մեղաց՝ լսեն. "Ի բազմամեայ անօրէնութեանն, ցամաքեսցի սէր բազմաց.. ։ Ի ցանկալ տեղոյ եանն՝ ի բարիս՝ լսեն զգրեալն. "Ոլր համբերեսցէ խոպառ, նա կեցցէ.. ։ Ո՛վ ցաւիցին ընդ մեզ՝ լսեն. "Ականզի ասացեմք եթէ մեզ ինչ մեր ոչ ունիմք՝ սուտ, և չմարտութիւն՝ ի մեզ ոչ գոյ.. ։ Այս զի խնդացեն ընդ գործս բարիս՝ լսեն. "Ո՛վ տուբս զուարթս սիրէ ած.. ։ Այս դարձեալ, ըստ չափու տկարութեանն և պնդութեան իւրեանց, երկնչին՝ ի փորձելոյ, ցանկան՝ ի փորձել, ցաւին՝ ի փորձութիւնս, խնդան՝ ի փորձութիւնս։ "Ականզի երկնչելոյ վասն՝ ի փորձելոյ՝ լսեն. "Ականզի յամենայն ըմբռնեսցի ոք՝ ի ձէնջ յինչ և իցէ յանցանս, դուք որ հոգևորդ էք՝ հասատատե-

ցԼք զայրալիսին Հոգւով Հեզութեամբ. զի այլ լինիցիք անձանց՝
զի մի և դուք փորձիցիք ... Կոչ. Ի. 1, Լսակ առ՝ի ցանկա-
նալոյ փորձիլ լաւն քաջի ուրուքն՝ի քաղաքին այլ ասէ Ս.
Փորձեա զիս, տէր, և քննեա զիս, փորձեա զերիկամունս
իմ և զսիրտ իմ. Սաղ. ԿԶ. 2, Լ՚ը՝ի ցաւիլ՝ի փորձու-
թիւն՝ տեսանէն զՊետրոս զի լոյս. և զի ինդայեցն՝ի փոր-
ձութիւն՝ լաւն ասէ Հակոբոս, Լ՚ինհայն ուրախութեամբ
ժամանիք զանազան փորձիցք, եղծեալք, յորժամ՝ի պէսպէս փոր-
ձութեանց՝ի մէջ անկանիցիք ... ա. 2,

Լինդ այսոսիկ կերս անցանէն նոքա՝ ոչ սակս անձանց
եւեթ, այլ և այնոցիկ վասն՝ որոց ազատութեանն ցանկան,
և ընդ կորուստ նոցա երկնչին. ցաւին եթէ կորնչիցին,
և ինդան եթէ ապրեսցին, Լ՚ամ՚ի սոյն յաւէտ յիշատա-
կեսցուք եկեալքս՝ի հեթանոսաց յիւիզեցի Լինի՝ զմեծն
զայն և զօրաւոր այր, որ յիւր տկարութիւն պարծի, զհեթա-
նոսացն վարդապետ հաւատոյ և ձեմարտութեան. որ ա-
ռաւել քան զամենայն առաքելակիցս իւր վաստակեցաւ.
և թղթովք բազմօք ուսոյց զժողովուրդս այր, ոչ զմիբամ-
կայս միայն զիւր տեսեալն, այլ և զորս գալոցն տեսանէր.
զայն այր ասեմ զԼինի նահատակն, զի՝ի նմանէ ուսանիմ,
զի՝ի նմանէ օծեալ, զիաւրհնեալ ընդ նմա, զիաւրհնութիւն՝ի
նմա. որ յասպարիզի աշխարհիս եղեալ տեսիլ հրեշտակաց
և մարդկան՝ տղեաց օրինօք զմեծ պատերազմին, որ՝ի յաղ-
թանակ վերջին կոչմանն յառաջէր, և յայն կամակալ
անկ ուձեր հաւատոյ այնօք. ինդայր ընդ ինդացողս, լայր
ընդ լացողս, արասքոյ մարտս կրեալ՝ի ներքոյ արհարիս.
որ ցանկայր ելանել և լինել ընդ Լինի, զհոմայեցիս
տեսանել անձկայր՝ առ՝ի գոանելոյ և՝ի նոսա պատգա-
մել, որպէս և յայլ հեթանոսս. որ նախանձեցուցանէր
զկորնթեացիս, և նոքին նախանձու երկնչէր՝ մի արգելօք
խաւարեսցին միտք նոցա՝ի միամտութենէն որ՝ի Լինի. ո-
րում էր տարմութեի յոյժ և անպատրաստ ցաւբ տրամի վասն
խոպանելացուց, զի ոգէտ գոլով այ արդարութենն՝ զնո-
րեանցն կամիին կացուցանել, և ոչ հնազանդիլն արդա-
րութենն այ. որ ոչ ցաւս լոկ, այլ սուգս բազոքեր առ ո-

մանս յառաջագոյն մեզուցեալս և ոչ ապաշխարեալս ՚ի վերայ պղծութեանց և պոռնկութեանց իւրեանց ։

Ա՚ւր արդ եթէ զշարժմունս զայսոսիկ , և զայսպիսի կերս լրջեմանակ բարւոյն յառաջ եկեալս և՚ի մաքուր սիրոյ՝ աթոռս պարտիցէ կոչել Թ զլուսամբ սպաս զի և տադգ սիրոյ առաքինեաւ անուամբ պատուեսցին ։ Ա՚ւր յորժամ ուղիղ բանին գՀետ երթան այսներգործութիւք , ըստ ժամու և ըստ տեղւոյն սիրելոյ կատարեալք , ո՞ր սիրոյ գնոսա կամ պարտաւելի կիրս խրեսցէ ասել ։ Վ՚ան որոյ ինքնին տէրն ՚ի ծառայի կերպարանս յանձն առեալ մարդկապէս քաղաւարիլ , Թէպէտ և անուշնակ մեզաց գլխովին՝ կրեաց զայսոսիկ ուր միանգամ արժան դատեցաւ ։ զի յորում չՀմարիտ էր և մարմին և Հոգի մարդոյ , ոչ եթէ սուտ էին կիրք մարդկային ։ Ա՚յլս ուրեմն ոչ ստուգէ ինչ պատմին վասն նորա յաւետարանի , Թէ ընդ խոտորուելն Հրէիցն լի ցասմամբ տրտմեցաւ և Թէ առաց , Ա՚յս ուրախ եմ վասն ձեր , զի դուք Հաւատասջիք ... և Թէ ՚ի յարուցանելն զՎ՚ազարոս արտասուեաց ։ ցանկացաւ ուտել զատիկ ընդ աշակերտան ։ և ՚ի մերձենալ չարչարանացն արտուր եղև ոգի նորա ։ Ա՚սացեալ նա ըստ անտեսանելի իրիք այնպէս յինքն ընկալաւ զայս ամ մարդկային Հոգւով յարժամ կամեցաւ , որպէս յորժամ կամեցաւն՝ մարդ եղև ։

Ա՚ւր արժան է խոստովանել և զայն , զի Թէ և ուղիղ գտանիցին ՚ի մեզ կիրքս այսոքիկ և ըստ ասի , տակաւին ՚ի պէտս ապաշխարս կենացս միայն են , և ոչ Հանդերձեալ լոյն՝ որում ակն ունիմք , և յորմէկէ չոչ կամաց եւս տանիմք այնոցիկ ։ Ա՚յլ ըստ այմ երբեմն ոչ պարսաւելի ինչ ըղձմամբ , այլ ՚ի գովելի սիրոյ չարժեալք , Թէ և չկամիցիք՝ արտասուեսջիք ։ ուստի ըստ պայմանի մարդկային տեարբեՀեան կրեմք զայսոսիկ , այլ ոչ նոյնպէս Վ՚ՀՈ , ոբոյ և տեարբեՀին իսկ ՚ի ձեռս իշխանութեանէ իւրոյ էր , Վ՚ակայն ցոլլաւթ յայժմու կենացս տեարբեՀին գտանիմք , եԹէ անկրելի բնաւ կայցեմք միով իմիք յայնցանէ , ոչ եւս ուղիղ լինիցին կենցաղք մեր ։ Վ՚անգիր բամբասել առաքեալն և անգամանէ զոմանս ոմանս՝ զորս և սակ լինել ան-

նաւէրս , անողոքմս։ ¶Եղադիր վնիմ և արբազան առաքման
արեց ասէ . ¶Կին ունելի Թէ ո արամեցի ընդ իս , և ոչ
ոք էր ,։ ¶ասն զի անցաւ կեալ բնաւին՝ մինչդեռ եմքն
ի Թշուառութեն վայրի , ոչ այլ գովեստից մեծաց աւ-
ժանեայ , բայց գազանութե՛ն ի յոգւոջ , և ապրելե՛ն ի
մարմնի , որպէս և ունի յարտաքին գիանաւորացն վկայեալ ,
¶կին իբրև զոր ¶ոյնք ասեն աբեմիա , այս է՝ անախտու-
Թե՛ , զոր ¶ատիւք հարկին Թարգմանել անցաւութե՛ն կամ
անկրզութե՛ն , որ առ Հոգին ասի՝ և ոչ առ մարմին , եԹէ
այնպէս իմացուք Թէ կեցցէ մարդ առանց կրեցն այնո-
ցիկ՝ որք բանին հակառակ ի վերայ գան և գիտուս ամբո-
խեն , արդարեւ կարի լաւ է և ըղձալի յոյժ . բայց ոչ այսց
կենաց է այն . քանզի ոչ մարգոց սոսկականաց՝ այլ յաւէտ
բարեպաշտուց և առաւել արդարոց և արբոց ի ձայնս .
¶ԵԹէ ասիցեմք եԹէ մեզ ինչ մեք ոչ ունիմք , զանձինս
խաբեմք , և ձշմարտութե՛ն ի մեզ ոչ գոյ ,։ ¶Յհ . ¶. 8 .
¶Աւասիկ անցաւութե՛նդ կամ անախտութե՛նդ ասացեալ լինի
ցի յայնժամ , յորժամ ոչ մի ինչ մեզ գայցէ ի մարգն .
իսկ այժմ բարեկրթն են կեանք՝ եԹէ ազատ յեղեռանն
իցեն . այլ եԹէ ազատ ի մեզոց կեալ Համարիցի զբ , ոչ
եԹէ մեզ չունելի այնպիսին , այլ նեբաւն չգտանիցէ .
¶այս եԹէ անախտութե՛ն զայն իցէ ասել , զոյ ոչ մի ինչ
կիցս անցանել ընդ Հոգին կարծիցի , ո՛զ զաշխարհն այդ-
պիսի ոչ վաճառագոյն քան զամենայն ախտս գտիցի ,
¶յաքսէն ուղղութե՛ն լինի ասել՝ Թէ՝ի կատարեալ եբանու-
Թե՛ն վաճառել է երկիւղ և տրամանե՛ն ամենայն . բայց ո՛
ասիցէ՝ Թէ չլինի յայնմ սէր և խնդութե՛ն , բայց զբ օտար
զբ իցէ ի ձշմարտութե՛ն , իսկ եԹէ անցաւութե՛ն կամ անախ-
տութե՛ն իմացուի այն՝ յորում ոչ երկիւղ ինչ զարհուրեցուցէ ,
և ոչ ցաւ վշտագնիցէ , այդ խորչելի է յատուկ կենաց՝ եԹէ
կամիցիմք ուղղութե՛ն ըստ նմ կեալ . իսկ յերանելի կեանս՝
զբ յաւէրժ խոստացեալն է , է արդարեւ ակնկալելի .
¶Արանզի երկիւղ զբմ առաքեալն ասէ ¶ովհաննէս ,
¶Երկիւղ ոչ գոյ ի սէրն , այլ սէրն կատարեալ ի բաց
մերժէ զերկիւղ , քանզի երկիւղ ընդ տանջանաց է , իսկ

որ երկնչին, չէ կատարեալ ի սէրն ... , ՚ . ՚ . ՚ . 18 . այս ոչ է նոյնասեռ ընդ երկիւղին՝ զոր Պօղոս առաքեալ վասն կարելի ազատուցն երկնչէր՝ զի մի պատրեսցին խորամանկութեամբ օձին . վասն զի զայս երկիւղ ունի սէրըն . մնանաւանդ թէ սիրոյ միայն է այդ երկիւղ . այլ Յովհաննու առացեալն երկիւղ, որ չիք ի սէրն, այն է զորմէ ասէ Պօղոս առաքեալ ասէ . " Օ՛ի ոչ առէք զՀոգին ծառայութեան միւսանգամ երկիւղ ... ՚ . ՚ . 15 : Իսկ երկիւղն այն սուրբ՝ որ մնայ յաւիտեան, եթէ կայցէ պահեցէ նա և ի հանդերձեալ յաւիտենին, զի և ոչ այլազգաբար իմանալիմնալ յաւիտեան, ոչ է երկիւղն խոտոռեցուցիչ ի չարէն՝ որ հատանէլն կարէ, այլ որ պնդէ ի բարւոջն՝ որում կորնչել չէ մարթ : Այ ան զի ուր անկեալն է սէր բարւոյն ստացելոյ, անդ՝ եթէ ասել օրէնի իցէ, երկիւղ զգուշանալոյ չարէն՝ աներկեան է . զի երկիւղ սուրբ՝ այնր կամաց է նշանակիչ, որով Հարկ է մեզ վկամիլ զմեզանէն, և ի մեզոց զգուշանալ ոչ Հոգովք տկարութենէն՝ զի մի մեղջեմք , այլ վստահութեամբ սիրոյն : Այլ եթէ և ոչ ըստ միոյ իրիք օրինակի երկիւղ սէրն ունիցի յանսուտ յապահովուէ միանձնեալոք և երանաւէտ խնդութեանցն , յայն միտս ասացաւ՝ սուրբ երկիւղ տէն միալ յաւիտեան, որպէս միւս ասացաւն . " Համբերութեամբ տանակաց մի կորնչիցէ խոպառ ... ՚ . ՚ . 19 : Օ՛ի ոչ եթէ մխանջնեական եղիցի Համբերութենէն, որոյ պէտք ի վշտակրութեան և եթէ խնդրէն . այլ զի միանջնեալոք է՝ յոր Համբերութենէն լինի ժամանել : Այսպէս և երկիւղ սուրբ եթէև ասացաւ միալ յաւիտեան, զի կայցէ միայցէ այն ինչ՝ յոր երկիւղն տարեալ ածէ .

Այս զի այսոքիկ այսպէս , որովհետև առ ժամանելոյ յերանելի կեանս՝ պիտոյ է կեանս վարել ուղիղս, ըստ նմին և կիրք այսոքիկ ամենայն ուղիղք լինիցին յուղիղ կեանս, և թիւրեալք ի թիւրս : Իսկ երանելի կեանքն և յաւիտենական ունիցի սէր և խնդութիւն ոչ միայն ուղիղ, այլ և անխախտելի, բայց երկիւղ և ցաւ և ոչ մի . ասի փոքր ի շատէ յայսմիկ տեսանի , թէ որպիսի լինել

պաթեին ՚ի պանդխտութիւնս յայսմ քաղաքացիք քաղաքին ՚ին, որք ըստ Հոգւոյ կեան՝ և ոչ ըստ մարմնոյ, այս և ըստ ՚ին, և ոչ ըստ մարդոյ, և որպիսիք լինելոց են անմահութիւնք ՚ի կեանսն՝ յոր դէմ եդեալ են, Յոկ քաղաք կամ ժողով ամբարչաց՝ որ ոչ ըստ ՚ին, այլ ըստ մարդոյ կեան զՀաւ երեքեալք վարդապետութիւնք մարդկան և դիւաց, պաշտելութիւն սուտ աստուածոց, և ՚ի Հմարտն յիւս կալուլ, այն ահա հարկանի վտանգաւ կրկին կամ անտիւրք՝ իբրև ցաւովք և յուզմամբք ՚ի ՚ին եթէ ՚ի քաղաքացւոց նորա իցեն ոմանք՝ որք թուիցին չափ դնել այնպիսի շարժմանց և իբր զգծացուցանել, այնպէս լին մեծամտեալք են ամբարչութիւնք, մինչ սորին աղագաւ այնչափ մեծամեծս ունել փքացմունս, որչափ նուազ ցաւս և որք առաւել անտրժելիս տանել յանձինս զանազովքն զայն՝ քայց գերժական ունայնութիւնք, զի ոչ մի ինչ կրկին ոչ չարժեսցին, ոչ զարթնուցուն, ոչ մեղկասցին, ոչ միաեսցին, արդարեւ զմարդկութիւն ողջոյն կորուսանիցեն, քան եթէ Հմմա բիա խաղաղուն Հաստատիցեն ՚ի Հանգիստ ոչ որ խիստ ինչ է, վասն այն ուղիղ իցէ. կամ զի անգգայ, այնու առողջ

ԳԼՈՒԽ ԺԲ

Մինչ Հնախաոաեգծին ևգէլոյ ՚ի գրախտին եղեմ ունել չարժմունս ինչ անգոանելի կրկին, մինչ չէ յանցուցեալ էին.

Ի ՚ցՀ եթէ արդեօք մարդն առաջին, կամ երկոքին նա, խաոատեգծք լծակիցք՝ էին ներքոյ անկեալ կրնցս այսոցիկ չնչաւոր մարմնովքս յառաջ քան զմեզս, որպիսիս չունիցիմք ՚ի Հոգևոյն մարմինք՝ ՚ի սրբել և ՚ի վախճանիլ ամենայն մեզաց, արդարև և իրաւ է խնդրել, Հանգիր եթէ ունել ունէին, զիարդ ասա երջանիկք յայսմ Հրաշագանն վայրն երանութեն՝ ՚ի գրախտին ասեմ. և ո՞ երանելի որ պարզաբար ասիցի՝ երկիւղ ներքոյ անկեալ կամ ցաւոց. իսկ

երկինքէ կամ ցաւագնել իւր իւիք մարթի էր նոցա յայնչափ մեծամեծ բարեացն լուռթե, ուր ոչ մնչհու երկիւղ կայր, և ոչ մարթիոյ ցաւագարուռթե. ոչ պակասեր ինչ ուղիղ կաւ մացն ինդրելի, և ոչ առձեռն կայր ինչ՝ մարթիոյ և հոգւոյ բարերջանիկ մարդոյն ՚ի ասագործ, ՚ի ամենայն ինչ առ ած, և լծակցացն առ միմեանս՝ հաւատարիմ և անսեռնգ միաբանուռթե կենցաղելոցն. և ՚ի սիրոյ անտի ինդուռթե մեծ, առնպատակելի գոլով վայելման սիրելոցն ՚ի ամենայնի անդորրական զգուշուռթե ՚ի մեզաց, որով և այլոյ իւիք տխրական չարի անմարթե էր ՚ի վերայ հասանել: Կուցէ արդեօք յարգելեալն ծառ հուպ լինել ցանկային առ ՚ի ձաշակումն, այլ ՚ի մեռանելոյ զանգիտելք, այսու աղագաւ և ցանկուռթե և երկիւղ յայնժամ խոլեր զնոսա ՚ի դրախտի անդ: Այլ քաւ լեցի զայդ կարծել, ուր ոչ մի ինչ մեղք կային. քանզի և չէ իսկ առանց մեղաց՝ այնմ զոր օրէնք ոչ արգելուն՝ ցանկալ և հրաժարել յայնմանէ առ աչի պատժոցն՝ և ոչ ՚ի սիրոյ արգարուռթե. քաւ ասեմ, թէ նախկին քան զանձնային մեղ՝ լեալ իցէ անատնօր մեղք այնպիսի, որով զայն ինչ յանցուցեալ իցեն ՚ի փայտն արգելեալ՝ զոր յաղագս կնոջ ասէ տէրն. "Ալր հայի ՚ի կին մարդ առ ՚ի ցանկանալոյ նմա, անդէն ընացաւ ընդ նմա ՚ի սրտի իւրում.,, Ած. ե. 28: Այլ ուրեմն որչափ երջանիկք էին նախաստեղծքն՝ ոչ հոգւոյն ամբոխմամբ իւիք տագնապելք, և ոչ վշտօք ինչ մարթիոց պատահելք, նոյնչափ համօրէն մարդկուռթեն սեռ լեալ էր երջանիկ, եթէ չէր նոցա գործեալ զայրն՝ զոր ՚ի սեռ ընդունդս անդր փոխաբերեցին, և ոչ ՚ի նոցա զաւակէն ոք զանօրէնուռթե գործէր՝ գատաւարտուռթե առնիս: Այլ ՚ի կալ ՚ինալ երջանկուռթես այսմ, մինչև ՚ի բովանդակիլ Թուոյ նախասահմանելոցն սրբոց՝ ըստ օրհնուռթեն որ ասացաւ "Աճեցէք և բազմացարուք,, պարգևեալ լինէր այլ մեծ և օրհնուռթե, այն որ ամեներջանիկ հրեշտակացն տուաւ. յորում լինէր այնուհետև անեզրևանուռթե ստոյգ՝ թէ ոչ ոք մեղսէ, ոչ ոք մեռանիցի. և սրբոցն կենդանք այնպիսի լինէին՝ անձաշակ գլխովին վատակոց և

ցաւոց և մահու, որպիսի լինիցին յետ աղցաւոր կենցաղոյս յանապականութեանն անդ մարմնոց՝ զոր տայ յարութիւն ի մեռելոց։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Զաղագս անկման առաջին մարդոյն, յորում բարի հաստատել էր բնութիւն, և ոչ ի նորոգելումն՝ բայց յիւրմէ արարչէն։

ՅՔ. քանզի յառաջագոյն գիտէր Աստ զանհնազան, որով և զմարդոյն յապա մեղանչելն տգիտանալ նմա անմարթ էր, սորին վասն զայն պարտ է մեզ համարել քաղաքս սուրբ, որ ըստ նորա յառաջգիտութեանն է, և ոչ ըստ այնմ որ առ մեզ ծանօթանալոյն է, և ոչ ի տնտեսութեանն այ կայր։ Վասնզի ոչ կարէր մարդ ազգիկել իւրովքն մեղօք զնորհուրդն այ, որպէս թէ ստիպեցեալ զնա ի փոխել զիւր կարգաւորութիւն. ուր ինքն նա նախագիտութիւնն առեղակ էր երկուցն ևս, այնմ թէ մարդն՝ զոր բարի ստեղծ, զիարդ չարանալ ունէր, և այնմ թէ զոր բարի հանելոց էր ինքն ի չարէն։ Ո՛ի թէ և ասի փոխել այ զՀրամանս իւր, ըստ որում և այլաւսացիկ բանիւ զդնալ այ ընթեռնումք ի գիրս սուրբս, այլ այդ ըստ այնմ իմանի՝ որում ակն ունէր մարդն, կամ զոր բերէր բնական պատճառացն կարգ, և ոչ ըստ այնմ՝ զոր ամենակալն գիտէր յառաջագոյն թէ ունի ինքն առնել։ Այս արդ առաջ ասի ըստ գրեցելումն՝ զմարդն ուղիղ, ուստի և կամօք բարեաւք. զի և ոչ ուղիղ լինէր, եթէ ոչ ունէր կամս բարեխոսական բարի կամքն է գործ այ. զի այնու արարաւ մարդն առ ի յայ։ Իսկ չար կամքն նախկին՝ իբր յառաջելոյ ի մարդումն քան զանհնազան գործս չարս, եղև յաւէտ պակասութիւնն ի գործոցն այ յարարածս իւր՝ քան թէ գործ լինէր. և այնու իսկ չար են գործք, վասն զի ըստ ինքեանց են՝ և ոչ ըստ այ. որով գործոցն այնոցիկ իբրև պղտոյ չարաց՝ կամքն իցէ ծառ չար, և կամ ինքն մարդն ըստ որում յա-

ժարեալ'ի չար կամս։ Արդ կամք չար թէպէտ և ոչ ըստ բնութեան է՝ այլ ընդդէմ բնութեան, զի է ախտ կամ արատ, սակայն այնր բնութեան է՝ որոյ ախտն է. և ախտն'ի բնութեան միայն մարթի գտանել յայնմ բնութեան՝ զոր յանգոյից ստեղծ', և ոչ զոր յիւրմէն ծնաւ արարիչն, որպէս ծնաւ զԲանն որով ամենայն ինչ եղև։ Զի թէպէտ և'ի հողոյ երկրի կերպացոյց Աստուած զմարդ, այլ հողն ինքնին և համօրէն նիւթ երկրային յանէից է, և զհոգի'ի չգոյէ արարեալ եդ'ի մարմինն՝ յորժամ եղև մարդն։ Այլ այնչափ յաղթողական են բարիքն քան զչարիս, մինչ զի թէ և թոյլ տուեալ են չարիքն՝ առ'ի ցուցանելոյ թէ զիարդնա և զնոսին'ի բարիս վարել կարող է ամենախնամ արդարութիւն արարչին, բայց բարիք էանալ կարեն և առանց չարեաց. զոր օրինակ նա ինքն Աստուած ճշմարիտ և ծայրագոյն, որպէս և ամենայն երկնային արարած աներևոյթ և երևելի՝ որ գերիվերոյ է խաւարային օդոյս. իսկ չարիքն գոյանալ ոչ կարեն առանց բարեաց. վասն զի բնութիւնքն յորս չարիքն կան, ըստ որում բնութիւնք՝ անշուշտ բարի են։ Իսկ չարն'ի բաց փարատի՝ ոչ եթէ բարձմամբ մակեղուտ բնութեան իրիք կամ մասին ինչ նորա, այլ յողջութիւն և յուղղութիւն գալով ախտացելոյ և խանգարելոյ բնութեան։ Ամեն իրի անձնիշխանութիւն կամաց յայնժամ է ճշմարտապէս ազատ, յորժամ ոչ ծառայանայ ախտից և մեղաց. և այնպիսի տուաւ յԱստուծոյ, զի թէ իւրովի ախտաւորութեամբ կորընչիցի, ոչ յայլմէ ումեքէ՝ բայց յորմէ տուաւն՝ ունի անդրէն նորոգիլ. ուստի ասէ Ճշմարտութիւն. " Եթէ որդին զձեզ ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք ". Յհ. Ը. 36. իբր ասել. եթէ որդին փրկեսցէ զձեզ, յայնժամ արդարև փրկեալք լինիցիք. զի այնու է ազատիչ, որով և փրկիչ։

Բայց արդ քաղաքավարէր մարդն առաջին ըստ այնմ'ի դրախտի անդ՝ որ մարմնական էր և իմանալի. զի որպէս մարմնական էր սակս մարմնոյ բարեացն, նոյնպէս և իմանալի սակս բարեաց իմացականին. կամ որպէս իմանալի էր'ի վայելել մարդոյ ներքին զգացողութիւնք, նոյնպէս և

մարմնական էր ըստ զգայմանցն արտաքնոց. ուստի էր տիրապէս կրկին ձրից ունակ ըստ երկաքանչիւր բարեացն: Իսկ յորժամ հրեշտակն այն ամբարտաւան՝ որով և մախացող, այն որ ամբարտաւանութ՟ն յա՟ծընդդէմ անդր անձնընտիր եղեւ, առաւել քան զհնազանդն կալ՝ որսալ իւր հնազանդեալս կամեցաւ բռնաւորականաւ իմն պերճութ՟բ, վարեցաւ անկաւ յիմանալի դրախտէ անտի. զորոյ զանկումն և զմիաբանելոցն՝ որք նախ հրեշտակք ա՟յ, սատանայի ապա եղեն հրեշտակք, ճառեցի ըստ իմում բաւականին 'ի մետասաներորդ և յերկոտասաներորդ գիրս այսր մատենի: Նա ինքն ասեմ չարիմաց նենգանօք սողոսկել ընդ մարդոյն զգայու՟իս հնարելով, առ մախանացն՝ զի ինքն անկեալ էր, և նա կայր յակաստանի, զօձն ընտրեաց 'ի մարմնական դրախտի անդ՝ ուր և այլ ա՟մ երկրաստեղծ կենդանիք գնային ընդ երկուց մարդոցն արուի և իգի՝ հլուք և անփնասելիք, զօձն իմա զկենդանի զեռուն և մոլորաշաւիղ՝ իւրում իրագործուե՟ պատշաճող՝ առ 'ի կարելոյ խօսս յօդել. զոր և հրեշտակական գերազանց բընուե՟ն ազդմամբ հնազանդեցուցեալ ինքեան ըստ հոգեկան չարուե՟ն, և իբր գործի 'ի վար արկեալ, բանս պատրողականս բարբառեցաւ առ կինն, 'ի խոնարհագոյն մասնէ լծակցացն առնելով սկիզբն, զի տակաւ առ բովանդակն հասու լինիցի. քանզի ոչ դիւրահաւան ոք համարեր զայրն, և ոչ դիւրախաբ անձամբ, այլ մարթելի անսալ մոլորութ՟ե կնոջն: Զի զոր օրինակ Ահարոն 'ի կազմութ՟ի որթագլխոյն ոչ եթէ համահաւանութ՟բ ընդ մոլորեալ ժողովրդեանն յօժարեցաւ, այլ բռնի զիջանելով, և ոչ վասն Սողոմոնի հաւանելի է՝ մոլար կարծեօք պաշտելի զկուռսն համարել, այլ 'ի կանացի ողոքանաց յայն ամբարշտութ՟իս ածեալ, նոյնպէս հաւանելի է՝ թէ այրն Ադամ յանսանել զպատուիրանաւն ա՟յ՝ ոչ եթէ խաբմամբ հաւատաց կնոջն իբրև զճշմարիտն խօսողի, այլ կենակցին ընտանութ՟բ անսաց մին միումն, մարդն մարդում, լծակիցն լծակցի: Քանզի ոչ վայրապար ասաց առաքեալ, "Ադամ ոչ պատրեցաւ, այլ կինն պատրեցաւ". այլ զի կինն զա-

սացուած օձին ընկալաւ իբրև Աշմաիտ, իսկ Աքամ ոչ կամեցաւ մեկնել՝ի միակ լծակցէն՝ի գործակցութենէ անդամ մեղացն. բայց ոչ այնու նուազ պարտաւոր, այլ գիտելով և ընտրութիւն մեղաւ. ուստի և առաքեալ չասաց, ոչ յանցեաւ Աքամ, այլ թէ ոչ պատրեցաւ. քանզի զնա իսկ զեկուցանէ յասել անդ. "Ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին,, և ապա յայտնագոյն և ա. "Եւ սա համանուագն յանցուածոյն Աքամայ,,: Աբդ առաքեալ զայնպիսի իմանալ պատրեալն՝ որք ոչ՝ի մեղս համարին զոր առնէին. իսկ Աքամ գիտակ էր այդմ. ապա թէ ոչ՝ զիարդ արդարանայր ասել՝ ոչ պատրեցաւ. Բայց զի անտեղեակ գոլով այ արդարութենէն՝ ունէր խորհիլ՝ի կարծելն թէ գործեցեալն նեղելի իցէ. ուստի յայն ինչ որով պատրեցաւ կինն, ոչ պատրեցաւ Աքամ, այլ վերիպեալ անգիտացաւ՝ թէ զիարդ ընդ դատաստանաւ անկանէր բանն զոր ասելոցն էր. "Կինս զոր ետուր ընդ իս, սա ետ ինձ և կերի,,: Օ ինչ այլ յաւելից. Թէպէտ և ոչ եթէ հաւատալով խաբեցան երկոքեան, բայց մեղանչելով ըմբռնեցան երկոքին՝ շաղակաք յօրոգայթս սատանայի:

ԳԼՈՒԽ ԺՐ

Յաղագս հանգամանաց առաջին մեղաց մարդոյն:

Եթէ խնդիր ոք առնիցէ, զի՞ է զի այլովք մեղօք ոչ այնպէս փոփոխիցի մարդկայինս բնութիւն, որպէս փոփոխեցաւ երկուց առաջին մարդոցն յանցաւորութիւն, մինչև ապաքանութենէն զոր տեսանեմք և կրեմք, և նոքաւ մահու՝ի նեղքոյ գրաւիլ, և այնչափ յօրինազան կրիւք միմեանց հաւ կառակօք՝ի յոյզս կալ և՝ի ծփանս, որպիսի չէր այն՝ի դրախտին յառաջ քան զմեղանչելն, թէպէտ և չնչաւոր ունէր մարմին: Եթէ զայդ խնդրիցէ ոք ասեմ, ոչ արժան է նմա թեթև ինչ և դուզնաքեայ համարել զգործեցեալն,

այնու զի կերակրով եղև, որ ոչն էր չար և վնասակար՝ բայց եթէ սակս արգելմանն. քանզի և չէր իսկ չար ինչ ստեղծեալ և տնկեալ ՚ի յայնմ բարութեն վայրի։ Այլ ՚ի պատուիրանի անդ պահանջեցաւ հնազանդութիւն, որ ՚ի բանական արարածումն՝ բոլոր առաքինութեանց մայր է գոգցես և պահպանիչ. քանզի այնպէս իմն արարաւ բանականն, զի նմա օգտակար իցէ ՚ի հնազանդութեն կալ. և կարի վնասակար՝ զիւր կամսն, և ոչ զարարչին կատարել։ Եւ ահա այս մի պատուէր ՚ի միոյ ևեթ կերակրոյ չուտելոյ, ուր այլոց կերակրոց լիութիւն առաջի կայր, պատուէր թեթևագոյն ՚ի պահպանութիւն, համառօտ ՚ի չմոռանալ, ուր զի և ոչ ցանկութիւն դեռ ՚ի դիմի կայր կամաց, որ յապա ցուցաւ ՚ի պատիժ յանցմանն, լուծաւ եղծաւ այնչափ առաւել յանիրաւի, որչափ դիւրին էր յոյժ ՚ի պահել։

ԳԼՈՒԽ ԺԳ

Ի պատուիրանազանցութեն Ադամայ չար կամք յառաջեցին քան զգործն չար։

Արդ ՚ի ծածուկ սկսան չարանալ՝ առ ՚ի գալ անկանիլ ՚ի յայտնի անհնազանդութիւն. զի ոչ էր ձեռնարկել ՚ի գործ չար, թէ ոչ կանխէին չար կամք։ Իսկ սկիզբն չար կամաց զինչ այլ կարէր լինել՝ բայց հպարտութիւն. ըստ այնմ. «Սկիզբն ամենայն մեղաց ամբարտաւանութիւն»։ Եւ զինչ հպարտութիւն իցէ կամ ամբարտաւանութիւն, բայց անկարգ գերազանցութեան իղձ։ Քանզի անկարգ գերազանցութիւն է՝ թողուլ հոգւոյ զսկիզբն՝ յոր յարիլն պարտ է, և իւր ինքեան իւիք օրինակաւ սկիզբն լինել։ Եւ այս լինի յորժամ ոք յանչափս հաճի ընդ անձն իւր, և անձնահաճ գտանի յորժամ ընդվզեալ յեանի յանփոփոխելի բարւոյն, որում հաճոյանալն պարտ էր առաւել քան իւրում անձինն։ Իսկ այս յետնութիւն է կամաւոր. զի եթէ անշարժ մնայր կամքն ՚ի սէր գերակայ ան-

փոփոխ բարւոյն, յորմէ լուսաւորեալ լինէր առ 'ի տեսանել, և վառեալ 'ի սիրել, ոչ իւիք խոտորէր յինքնահաճութ՟ի խաւարեցուցիչ և ցրտացուցիչ. որով կինն հաւատաց՝ ճշմարիտ խօսել օձին, և այրն քան զպատուիրանն ա՟յ գեր 'ի վեր դասեաց զհաճոյս կնոջն. և համարէր ներելի գոլ զպատուիրանազանցութ՟ին, եթէ այնմ որ իւրոց կենացն կցորդ էր՝ լինէր և 'ի մեղսն կցորդ: Ապա ուրեմն ոչ արդիւնացաւ գործն չար, այն է՝ յանցումն ուտելոյ յարգելեալ կերակրոյն, բայց եթէ յայնցանէ որք արդէն չարք էին: Զի ոչ լինէր պտուղն այն չար՝ բայց 'ի չար ծառոյ. իսկ ծառոյն չար լինել՝ հակառակ էր բնութ՟են. զի ոչ լինէր այնպիսի առանց ախտի կամաց՝ որ հակառակն է բնութ՟ե: Իսկ բնութ՟են ախտանալ՝ ոչ այլուստ կարէր լինել՝ բայց զի յոչընչէ է: Վասն որոյ զլինելն բնութ՟ի՝ ունի այնուիկ զի յա՟յ արարաւ. իսկ զպակասելն յայն որ ինչ էն՝ ունի 'ի գոլոյ յոչէից: Այլ ոչ այնպէս յետնեալ նուազեաց մարդ՝ մինչև չքանալ իսպառ. այլ զի յինքն կոյս հակամիտեալ փոքրկացաւ՝ քան զոր էրն, յորժամ միացեալ կայր յէն ծայրագոյն. ուստի թողլով զա՟ծ՝ կալ մնալ յինքն, այս է անձին հաճոյանալ, չէ անգոյութ՟ի, այլ մերձիլ 'ի չգոյն: Վասն այսորիկ 'ի սուրբ գիրս հպարտքըն կոչին և անձնահաճք: Ապաքէն բարի է 'ի վեր ունել զսիրտ, բայց ոչ առ ինքն կոյս՝ որ հպարտութ՟ե է, այլ առ ա՟ծ՝ որ հնազանդութ՟ե է. և այս առ խոնարհս միայն գտանի. գոյ ուրեմն խոնարհութ՟ի, որ հրաշապէս 'ի վեր տանի զսիրտ, և է ամբարձումն՝ որ 'ի խոնարհ առնէ զսիրտ: Հակառակ իմն թուի բանս, զի ամբարձումն 'ի խոնարհ իցէ, և խոնարհութ՟ին 'ի վեր: Այլ երկիւղած խոնարհութ՟ին հպատակ առնէ առ վերնագոյնն. և քան զա՟ծ վերագոյն չիք. վասն որոյ բարձր առնէ խոնարհութիւնն, հպատակեցուցեալ ա՟յ: Իսկ ամբարձումն որ ախտիւ է, 'ի հնազանդութ՟են բացակացեալ, վայրանկանի յամենեցունց գերագունէն, և առնի ստորնային, որով կատարի գրեալն. “Կործանեցեր զնոսա յամբարտաւանութ՟ե իւրեանց„. Սղ. ՀԲ. 18: Ըստ

ասէ՝ յորժամ ամբարտաւանեալ էին. որպէս թէ նախ ամբարձան 'ի վեր, և ապա ստորանկան. այլ անդէն յամբարտաւանելն կործանեցան. զի նոյն ինքն ամբարտաւանելն է կործանել: Նմին իրի այն՝ զի խոնարհութիւն այժմըս 'ի քաղաքին Աստուծոյ, և առ քաղաքն Աստուծոյ որ յերկրի նժդեհեալ՝ մեծապէս արգոյ ընծայի, և նոյն գերահռչակեալ է 'ի թագաւոր նորա 'ի Քրիստոսի, և նորուն հակառակ ամբարհաւաճութեան ախտ բռնացեալ է 'ի նորա թշնամին 'ի սատանայ՝ ըստ աւանդելոյ գրոց սրբոց, այս է ահա անջըրպետութիւն մեծ՝ որով զատանին երկաքանչիւր քաղաքք, զորոց խօսիմքս. մին ժողով արանց բարեպաշտաց, և միւս ամբարշտաց, հանդերձ իւրաքանչիւր սեպհական հրեշտակօք. յորոց ի միումն աստուածսիրութիւն կանխեաց, և 'ի միւսումն անձնասիրութիւն:

Վասն որոյ ոչ ըմբռնէր սատանայ զմարդ յայտնի հրապարակատես մեղօքն 'ի գործել նորա զառ 'ի յԱստուծոյ արգելեալն, եթէ ոչ նա ձեռն հաճութեան յանձին հարեալ էր. քանզի և վասն այսր զուարճացաւ յասացեալն, "Լինիջիք իբրև զաստուածս": Այդ լաւ ևս յաջողէր նոցա՝ յարելով 'ի ծայրագոյն 'ի ճշմարիտ սկիզբն հնազանդութեան, քան անձամբ անձին սկիզբն լինելով հպարտութեան. զի աստուածք եղականք ոչ եթէ իւրեանցն իսկութեամբ լինին աստուածք, այլ հաղորդակցութեամբ Աստուծոյ ճըշմարտի. իսկ որ յառաւելն ձգտի, յետնեալ գտանի. և որ ինքնաբաւն լինել ախորժէ, նուազի յայնմանէ՝ որ իսկութեամբ բաւական էր նմա: Արդ այն չար որով մարդ անձնահաճ եղեալ, որպէս թէ ինքն լոյս իցէ՝ 'ի բաց դառնայ 'ի լուսոյ անտի՝ յոր հաճելովն լինի և ինքն լոյս, այն չար ասեմ յառաջեաց 'ի ծածուկ, զի զհետ եկեսցէ ապա չարն գործեցեալ յայտնապէս. զի ճշմարիտ է գրեալն. "Յառաջ քան զկործանումն բարձրանայ սիրտ, և նախ քան զփառսն խոնարհի". Առակ. ժէ. 18. ըստ յն: Արդարեւ կործանումն որ 'ի գաղտնիս լինի, յառաջէ քան զեղեալն յայտնապէս, այն զի և ոչ կործանումն իսկ համարեալ է. զի ո՞ ոք զվերտին ամբարձումն համարիցի կործանումն, ուր

արդէն լեալ է պահաստունին, յորժամ եթող զը զատրէն. և՝ի հակառակէն ո՛չ տեսանիցէ զկործանուածին, յորժամ ակներև և անժխտելի յանցուածն լինի հրամանին. սորին աղագաւ արգել զայն ՚ած, զի՝ի գործելն զհակառակն՝ չունիցի տեղի իրաւացի չքմեղանել։ Ա՛յլ ես իշխեմ իսկ ասել, թէ՝ի չահէ գիձել Հպարտացո՛ի մէջս ինչ յայտնի և ծանուցեալ, որում ընդ անձինս թշնամեացին՝ ըստ որում նախ անձնահաճն լինելոյն անկան. քանզի և Պետրոս առաւել չահէցաւ՝ի գժկամակիցն ընդ անձն իւր՝ յորժամ ելաց, քան անձնահաճ լինելով յորժամ խիզախէրն։ Ոչ այն և սրբազանն ասէ սաղմոս. “Ա լից զերեսս նոցա անարգանօք, և խնդրեսցեն զանուն քո տէր,, ։ՃԲ. 17։ Ա՛յս ինքն է, զի դու հաճոյացիս նոցա՝ի խնդրել զանուն քո, որք նախ անձանց հաճոյ էին՝ զուրբեանցն խնդրելոյ զանուն։

ԳԼՈՒԽ ԺԴ

Թէ սաթարտանուէ պատուիրանագանցութիւն չար եւ եղև քան զպատուիրանագանցուին։

Ա՛յլ չար ևս է և առաւել դատապարտելի Հպարտութիւն, որով և՝ի մէջս անգամ յայտնի ծանուցեալս պատճառանք խնդրին՝ի չքմեղս լինելոյ. որպէս և տեսանել՝ի նախաստեղծս անդ, ուր կինն ասաց. “Օձն խաբեաց զիս և կերայ,, ։ և այլն։ “Կինս զոր ետուր ընդ իս, սա ետ ինձ՝ի ծառոյ անտի և կերայ,, ։ Ա՛յլ սի աստանօր աղերս Թողուն, ոչ խնդիր դնեցոյ։ Ոչ՝ի Թէպետև ոչ ուրացան ըստ Այտնի օրինակին զգործեցեալսն, այլ տակաւին՝ յայլոք հնարի արկանել Հպարտութիւնն զոր ինքն գործեաց յանպատեհս, կինքն Հպարտութիւ յօձն, և առնն՝ի կինն։ Ա՛յս յայտ է Թէ ուր յայտնի կայ յանցուածն՝ընդդէմ այ հրամանին, տիրապէս ամբաստանութիւն է զանձն՝ քան եթէ չքմեղութիւն։ Ա՛նգի ոչ եթէ անյանց գտան այ-

նու՝ զի կլինն 'ի սադրելոյ օձին, և այլն 'ի կարկառելոյ կնոջն բերաւ 'ի գործ անդր. որպէս թէ արժան ինչ էր 'ի վեր քան զա̃ծ դասել զայլ ինչ իբր արժանահաւատ կամ ընդունելութեան արժանի.

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս արդարադատ հատուցմանն՝ զոր ընկալան նախաստեղծքն վասն անհնազանդութեան իւրեանց.

Այս արդ քանզի ա̃ծ հրամանադիր արհամարհեցաւ, այն որ արարչագործեացն զնոսա և պատկեր իւր արար, և 'ի վերայ այլոց կենդանեաց զնոսա էր կացուցեալ, և 'ի դրախտի բնակեցոյց, և զլիութիւն ամենայնի առ'ի կեանս պարգևեաց, և ոչ իսկ յոլովիւք և մեծամեծօք, և ոչ դժուարակիր պատուիրանօք ծանրացոյց զնոսա, այլ միով ևեթ հակիրճ և թեթևագոյն հրամանաւ օժանդակեաց նոցա 'ի փրկականն հնազանդութիւն, խելամուտ առնել զարարածն՝ թէ ինքն է տէր, և նմա յօգուտ է ազատականն ծառայութիւն, յիրաւի ապա եկն 'ի վերայ արժանահաս դատապարտութիւն. և այնպիսի դատապարտութիւն, զի մարդ որ պատուիրանապահութեամբ լինելոց էր հոգևոր և ըստ մարմնոյ, դարձցի լինիցի մարմնաւոր և ըստ մտաց. և որ անձնահաճն եղև հպարտութեամբ, յարդար իրաւանց ա̃յ թողեալ լիցի 'ի ձեռս անձին իւրոյ, իբր ոչ եթէ ամենայնիւ յինքնիշխանութիւն վայելել, այլ զի ինքն ընդ ինքն ոգորելով, փոխանակ ցանկացելոյ ազատութեանն՝ ծառայութիւն խիստ և եղկելի հարկանիցէ այնմ, որում մեղանչելովն դատաւ հաճաւան, մեռեալ հոգւովն կամաւորաբար, և մարմնով հանդերձեալ մեռանել յակամայս. ոչ միայն տարամերժող յաւ խոռենիցն կենաց, այլ և մահուն յաւիտենականի պարտաւոր, եթէ ոչ ազատէին զնա շնորհք ա̃յ. Օ այսպիսի դատապարտութենէ եթէ աւելա-

զանց ոք համարիցի կամ անարգել, անգիտանայ կշռել բնաւ՝ որչափ անօրինութիւն է ի մեղանչել անդ, ուր այնչափ դիւրութիւն կայր ի մեղանչել։ Իսկզի զոր օրինակ Աբրահամն յիրաւի գերահաչակի հնազանդութիւն, զի եւս գոհաբարտանալին քան հրամայեցաւ նմա՝ սպանանել զորդին, նոյնպէս անհնազանդութիւն այնչափ մեծ գործեցաւ ի դրախտին, որչափ զի չէր ինչ գժուարին որ հրամայեցաւն. և որպէս հնազանդութիւն երկրորդն Ադամայ գերամեծար այնու՝ զի եղև հնազանդ մահու չափ, նոյնպէս առաքինոյն անհնազանդութիւն այնու առաւել բասրելի, զի եղև անհնազանդ մահու չափ։ Ապա զի ուր անհնազանդութեանն սահմանեալ պատուհաս՝ մեծ է, և հրամայեցեալն յարարչէն դիւրագիտաւոր ինչ, թվի զոր բաւական լինի արտայայտել՝ քանի չար է չհնազանդիլ ի գործ դիւրին՝ հրամայեալ յամենակալն իշխանութիւն և պատկառանդական սաստիւք։

Այլ զի համառօտիւք ասացից, զինչ ի պատուհաս այնր մեղայ՝ բայց անհնազանդութեանն փոխարէնցաւ անհնազանդութիւն. զի ոք այլ է թշուառութիւն մարդոյ՝ եթէ ոչ հակառակ անձին իւրում անհնազանդութիւն իւր ինքեան. որով քանզի ոչ կամեցաւ զոր կարէրն, կամիցի զոր ոչն կարէ։ Կայաքէն ի դրախտի անդ թէպէտ և ոչ զամենայն կարէր նախ քան զմեղն, բայց զոր միանգամ չկարէր, կամէր և ոչ. ուստի և զամենայն զոր կամէրն՝ կարէր. իսկ այժմ որպէս ի զառակոծոյս փորձեալ գտեմք, և վկայէ իսկ ածային գիրն, «Ոգի՝ նաւրոյ նմանեցաւ ...» (Յոբ. ԽԱ. 4)։ Ո՞վ ոք ի համար բերիցէ՝ թէ քանի ինչ բազում է զոր չկարէ և կամի, ի սուտնգանել նորա անձամբ անձին, այս է՝ երբ ոգին կամ սիրտ իւր, և խոնարհագոյն անգամ մարմինն անասաստեն կամաց. զի ըստ ոչ յօժարութեան նորա՝ և հոգին խռովի բազում անգամ, և մարմինն ցաւագնի և հիանայ և մեռանի. և զոր ինչ այլ կրեմք, զոր ոչ կրեաք արդեօք յակամայս, եթէ բնութիւնս մեր ամենայն իրօք և ըստ համօրէն մասանց հնազանդեալ էր կամաց մերոց։ Այլ թերևս մարմինն

կրէ ինչ խափանարար ծառայուէ նորա ։ Այլ զի փոխ այդմ, ուր ըստ արդար իրաւանց ունի այլ , որում Հայատակ գաւելք ծառայել ոչ կամեցաք , մարմինս մեր՝ որ Հայատանին էր մեր , չծառայելովն մեզ լինելոյն տանջուական ։ Եւ թողից զայն՝ զի մեք չծառայելով այլ , մեզ՝ և ոչ նմա կարեաք լինել վճռացուցիչք · զի ոչ որպէս մեք մարմնոյ՝ նոյնպէս մերումն ծառայութեն պէտս ունի այծ · նմին իրի պատուհասն զոր ընկալաք՝ մեր է , և ոչ նորա , մերով յանցանելովս ։ Իսկ ցաւք որ մարմնոյ ասին , Հոգւոյն են ի մարմնի անդ և ի մարմնոյ · զի մարմին զինչ ինքեամբ առանց Հոգւոյ ցաւ կրեցեալ կամ ցանկասցեյ · այլ զոր ասեմք ցանկալ մարմնոյ կամ ցաւել , կամ ինքն մարդն իմանի՝ ըստ որում ասացաք , և կամ մանն ինչ Հոգւոյն՝ յոր չէին կիրք մարմնոյն, եթէ դժուարահաճ՝ ի ցաւեցուցանել , եթէ հաճոյք՝ ի հեշտացուցանել , Այլ ցաւն մարմնոյ գառնուի միայն ի Հոգւոյն ի մարմնոյ անտի , և խոչընդուն ինչ ի նորա կրիցն · որպէս և Հոգւոյ ցաւ՝ որ արտմտելոյն ասի , խոչընդուն ի յակամայից ոմանց գիպուածոց , Այլ քան զարտմուելն յոլովակի կանխել երկիւղ , որ և այս՝ի Հոգւոջ է՝ և ոչ ի մարմնի · իսկ ցաւոց մարմնոյ ոչ յառաջընթաց և երկիւղ ինչ մարմնոյ , կանուխ քան զցաւսն զգացեալ՝ի մարմնի , Այլ քան զհեշտութեն ցաւ առաջէ բաղձանն ինչ , ի մարմնի զգացեալ իբր ցանկութեն նորա , զոր օրինակ քաղց և ծարաւ , և այն որ՝ի ծննդական մասանցն յաճախակի առփուն անուանի. Թէպէտ և այս Հանրական կոչումն է ամենայն ցանկութեն , Այսպէս և զբարկութեն ոչ այլ ինչ սահմանեցին առաջինքն՝ բայց տրտփուն կամ իդէ վրէժխնդրութեն , Թէպէտ և է երբէք՝ զի զայրասոյ մարդ և ընդ իրս անչունչս՝ առանց վրէժխնդրութեն ոգւոյ , իբր առ ցաստանին Հարկանել զգրիչ անյարմարագիր , կամ զեղգն բեհեզեն , Սակայն և յայսմ Թէ և ոչ քանաւորապէս , ի նեբքս մտանել ըղձումն ինն վրէժական , և կամ ասել՝ ուրուական դարձ փոխաբերին , որպէս զի որք չարաչարն գործեն , չարիս կրեսցեն , Այլ ուրեմն գոյ ըղձումն վրէժ խնդրելոյ , որ բարկութեն ասի .

գոյ ըղձումն ընչս կուտելոյ, որ է ագահութիւն. ըղձումն յաղթահարելոյ, որ է խստասրտութիւն. ըղձումն պարծելոյ, որ է մնապարծութիւն։ Բազում այլ ևս և զանազան ըղձանք են, յորոց ոմանք ունին սեպհական անուանս, և են որք ոչ ունին. զի ոչ դիւրաւ է ասել՝ զի՞նչ կոչիցի բաղձանքն տիրելոյ կամ իշխանասիրութիւն, որ թէ քանի զօրանայ 'ի բռնաւորացն անձինս՝ վկայեն և մարտք քաղաքականք։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Տռփումն անարժան թէպէտ և ախտից բազմաց 'ի դէպ գայ, այլ տիրապէս ասի զանպատեհ շարժմանց մարմնոյ։

ԱՊԱ քանզի բազմաց իրաց են տռփանք կամ ցանկութիւնք, ուր միանգամ տռփումն ասի պարզաբար առանց յաւելուածոյ իրին, զայն 'ի միտս արկանէ սովորաբար, որով տգեղ մասունք մարմնոյ գրգռին. և այս յինքն գրաւէ ոչ միայն զմարմինն ողջոյն, և ոչ արտաքուստ միայն, այլ և 'ի ներքուստ, և զմարդն ողջոյն դղրդէ՝ հոգւոյ ախորժակացն և մարմնոյ յօժարութեան 'ի մի խառնեալ, որով 'ի վեր երևի հեշտախտութիւն այն՝ քան զոր 'ի մարմնոյ հեշտութիւնս սաստկագոյն չիք. մինչ զի 'ի ժամուն յորում գրգիռն 'ի կատարումն հասանէ, ամենայն գոգցես խորհրդոցն յստակութիւն և զգաստութիւն առնու ընտուներածս։ Նա ո՞ ոք որ իմաստութեան է սիրող և անախտակիր բերկրանաց, եթէ ամուսնականին վիճակեալ իցէ կենաց, և խելամուտ առաքելականն խրատու, "Գիտել զիւր աման ստանալ սրբութեամբ և պատուով, մի 'ի ցաւս ցանկութեան, որպէս և այլ հեթանոսք՝ որ ոչ գիտեն զԱծ", Ա. Թես. Դ. 5, ոչ արդեօք առաւել ախորժէր՝ թէ մարթ ինչ էր, առանց այսր հեշտութեան զաւակագործել. մինչ զի և 'ի գործ զաւակաբերութեան՝ այնպէս իւրն հլու կայցեն մտաց անդամքն 'ի դոյն կարգեալք, զոր օրինակ

այլքն յանդամոց պատշաճեալք 'ի գործս իւրաքանչիւր , վարեալք ըստ ակնարկելոյ կամաց , և ոչ 'ի տապոյ հեշտութեան զայրացեալք ։ Սակայն և ոչ նոքին իսկ հեշտութեան տարփածուք՝ յորժամ և կամին՝ գրգռին կամ յամուսնական խառնմն , կամ 'ի չարախտաւատ զազրագործութիս ․ այլ է երբեք՝ զի տարադէպ շարժումն այն կայ առանց ուրուք խնդրելոյ , և է՝ զի լքանէ զխնդրողն ․ և ցանկասիրութիւն եռացեալ 'ի յոգւոջ՝ ցուրտ է 'ի մարմնի ․ և ահա զարմանք այս՝ զի տռփումն ոչ միայն կամաց ծննդագործութեան չհնազանդի , այլ և ոչ տռփանաց վավաշականին ․ և ուր բազում անգամ ընդդէմ հարկանի հեշտատեաց մտացն , մերթ և անձինն հակառակ բաժանի , զոգին գրգռէ , այլ 'ի գրգռել զմարմին ընդ ինքն չմիաբանի ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս մերկութեան նախաստեղծիցն , որ յետ մեղացն ցուցաւ նոցա զազիր և ամօթալի ։

ՅԻՐԱՒԻ ապաքէն կարի ամօթալի են այս տռփանք ․ յիրաւի և անդամքն՝ զորս իբր իրաւամբք ինչ իւր՝ թէ ասել կամիցիմ, թէպէտ և ոչ ամենայնիւ ըստ մեր հաճոյից՝ գրգռէ , կամ ոչ գրգռէ , ամօթոյք ասացան , որպիսիք ոչ էին յառաջ քան զմեղս մարդոյն ։ Զի որպէս գրեալ է , “Մերկ էին , և ոչ ամաչէին „ , իբր ոչ եթէ աներևակ էր նոցա մերկութիւն իւրեանց , այլ զի չև էր տգեղ մերկութիւն ․ չև ևս տռփումն ըստ ոչ կամաց զանդամսն շարժէր ․ չև ևս 'ի կշտամբանս անհնազանդութեան մարդոյն՝ իբր վկայ գոգցես արձանանայր մարմինն իւրով անհնազանդութեամբ ։ Քանզի ոչ եթէ՝ որպէս եղև տխմար ռամկին կարծել, զաչացուք ոմանք ստեղծան նոքա , ուր Ադամ տեսեալ զկենդանիսն՝ եդ նոցա անուանս , և վասն կնոջն ընթեռնումք ․ “Ետես կինն զի բարի էր ծառն 'ի

կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ ,, ։ Ապա ուրեմն բաց էին աչք նոցա. այլ յայն ինչ բացեալ չէին, այս է՝ չմտադիւրք առ 'ի ճանաչելոյ զի՛նչ վերարկութիւն շնորհաց պարգևեալ էր նոցա՝ յորժամ անդամքն չէին ընդվզեալ 'ի կամաց նոցա ։ Իսկ շնորհացն 'ի բաց մերկացեալ, որպէս զի անհնազանդութ̃ին զփոխարէն պատուհասն տարցի, եղև 'ի շարժման անդ մարմնոյ նորութ̃ի իմն լրբենի, յորմէ և մերկութ̃ի անվայելուչ. և սա արար զնոսա ըզգայունս և ամօթապարտեալս ։ Այսորիկ աղագաւ յետ լուծանելոյ նոցա զպատուիրանն ա̃յ յայտնի յանցաւորութե̃՝ գրեցաւ զնոցանէ. "Եւ բացան աչք երկոցունցն և գիտացին զի մերկ էին. և կարեցին տերևս թզենւոյ, և արարին իւրեանց սփածանելիս ,, ։ Բացան, ասէ, աչք երկոցունց, ոչ առ 'ի տեսանել, ուր յառաջն ևս տեսանէին, այլ ընտրութ̃ի առնել բարւոյն՝ զոր կորուսին, և չարին՝ յոր անկեալ էին. ուստի և ծառն՝ որ այսմ ընտրութե̃ լինէր գործօնեայ՝ 'ի մերձենալն առ 'ի ճաշակումն հակառակ արգելմանն, 'ի գործոյ անտի զանուն ընկալաւ՝ կոչեցեալ ծառ գիտելոյ զբարի և զչար ։ Քանզի երբ լինի զփորձ առնուլ տառապանաց հիւանդութե̃, յաւէտ ևս բացերևի առողջութե̃ն բերկրանք ։ Ապա գիտացին զի մերկ էին, մերկ կողոպուտ 'ի շնորհաց անտի՝ որով մերկութ̃ի նոցա ոչ ամաչեցուցանէր օրէնօք ինչ մեղաց հակառակ մտացն ։ Զսոյն ահա գիտացին. զոր երանագոյն ևս էր անգիտանալն նոցա, եթէ հաւատալով և հնազանդելով ա̃յ, ոչ գործեալ էին զայն ինչ՝ որ տայր նոցա զփորձ առնուլ քանի՛ վնասուց պատճառ է անհաւատութ̃ի և անհնազանդութ̃ի ։ Վասն որոյ ամօթահարեալք յանհնազանդութե̃ մարմնոյ իւրեանց՝ որ էր պատուհաս իբր վկայ իւրեանցն անհնազանդութե̃, "Կարեցին տերևս թզենւոյ, և արարին իւրեանց սփածանելիս ,,. այս է՝ ծածկոյթս առականացն իբր ըստ օրինակի ըմբշաց ։

Այսպէս ահա զոր տռփումն անաղդակ՝ գրգռէր հակառակ կամացն ըմբռնելոյ 'ի յանցանս անհնազանդու-

թէն, պատկառուածն ծածկէր զայն ամաչելով. և յայտ պատճառէ համօրէն ազգաց իբր ի միջէ արմատոյ սերելոց՝ այնպէս իմն ընդաբոյս և վերարկել զամօթանս, մինչ զի ոմանք ի բարբարոսաց ի բաղանիս անգամ ոչ մերկանան զայն մասունս մարմնոյ, այլ ծածկութիւքն հանդերձ լուանան. այլ և ի խորին առանձնութիւնս հնդկաց՝ որք մերկամարմին պարապեալք յիմաստասիրութին՝ մերկ իմաստակք կոչին, ծածկոյթս առականացն ի վերայ արկանեն, զայլս յանդամոցն անվերարկելիս ունելով։

ԳԼՈՒԽ ԺՐ.

Յաղագս ամօթոյն որ կրի ոչ միայն յանարժան անկողինս, այլ և յամուսնականին։

Իսկ զպործն՝ որ այնպիսի տուփանօք վճարի, գողանալ հնարի ի հասարակաց տեսութէ տուփուճին՝ ոչ միայն ի խայտառականս կուսի կամ առնակնոջ, յորս տեղի Թագստեան խնդրի՝ վասն ի մարդկային դատաստանաց խուսափելոյ, այլ և ի պոռնկական քարուականութիս՝ զոր երկրաւոր քաղաքն իբր գարշութէ օրինաւոր՝ առանց վրիժուց օրինացն Թողեալ է անպատուհաս. մինչ զի ի պոռնկոցս իսկ առ բնակաւոր իմն ամօթխածութէ տեղի առանձին վասն այսր կարգեալ է, և դիւրաւ ևս յաջողեաց անպարկեշտութէ անկապ յօրինաց լինել, քան թէ անամօթութէ ի քաց դնել զծածկարան այնր գարշութէ, ի նոցունց իսկ զազրագործաց զազրութէն առնուանեալ, որում Թէպէտև սիրողք են, այլ ոչ իշխեն հրապարակացոյց լինել։ Զինչ և ամուսնականն զուգաւորութէ, որ ըստ օրինաց հարանևորութեն Ցախտակաց՝ ի պատճառս որդեծնութէ կատարի. ոչ ապաքէն և օրինաւորն այն և հաճեստ՝ խնդրէ սենեակ մեկուսի անտես ի դատաւորաց. ոչ ապաքէն զսպասեակս ամե-

նայն, նա և զՀարմնացուս, և որոց համաբաժակ մտանել էր սակս ընտանութեան, ի գուբս նախ հանէ՝ նախ քան զընտանութեի սիրոյ լծակացս առ միմեանս։ Այլ զի որպէս ասէ հոռվմէական պերճախօսութեանն քաջահայլը, ամենայն ինչ ուղիղ գործեալ ի լոյս ինդրէ բնակել, այս է՝ ի գիտութիւն գալ ցանկայ, այլ ամուսնականն գործ ուղղութեի՝ թէպէտ և կամի զի ճանիցի ուղղուն իւր, այլ ինքն տեսանիլ պատկառէ։ Օ՛ի ո՞ չգիտէ զոր ինչ յամուսնացն գործիցի առ ի զորդիս ծնանելոյ. ուր զի առ ի զայն գործել՝ մեծահանդէս հռչակաւ լինին հաւմնացութիւնք. սակայն ի գործել անդ զայն ինչ՝ որով որդեծնութի լինի, և ոչ նոքին որդիքն արդէն ծնեալք վկայք լինել կարին ըստ օրինացն. այսպէս գործն արգասբայի երևութանալ ցանկայ ի լոյս անձանց, այլ փախչի ի լուսոյ աչաց։ Այս առիմ այս, բայց զի այնպէս կատարի վայելչականն ի բնութենէ, զի լծորդ ամմ լինիցի ամօթալին ի պատուհասէ։

ԳԻՒՒԽ ՀԻԹ

Թէ հարկ է զբարկութի և զցանկութի նուաճել խմաստութեան սանձիւք յախտաւոր շարժմանցն նոցա, որ չկարին չառաջ քան զմիգան չառաջք բնութեի անդ։

Ա՛ՅՍՈՐԻԿ աղագաւ որք միանգամ յիմաստասիրեաց անտի մերձաւորագոյնք առ Ճշմարտութեի գտան, խոստովան եղեն թէ բարկութեի և ցանկութի մասունք են հոգւոյ սիստաւորք, իբր զի խոովաբար իմն և յանկարգս շարժին նա և ի ներգործութեիս թողացուցեալս յիմաստութեէ. որոյ վասն պէտս ունին բարեկարգող մտաց։ Օ՛այն երբորդ մասն հոգւոյ ձևակերպեն կալ բնակել իբր ի դղեակի ուրեք. որպէս զի նորա հրամայելով և սոցա ծառայելովն՝ պահեսցի արդարութեի ի մարդն ըստ համբերն

մասանց հոգւոյ։ Արդ այսորիկ մասունք՝ զորս ճանա-
չին լինել ախտաւորս նա և յայլ իմաստուն և 'ի ժուժ-
կալ, մինչ զի հարկ է մտացն սանձ արկեալ նահանջել ընդ
նոսա յանարգար շարժմանց, թոյլ արարեալ նոցա զոր
միանգամ իմաստութեն օրինօք առնել 'ի դէպ է, զոր օ-
րինակ բարկութեն յիրաւացի պահու և ցանկութեն 'ի
գործ որդէծնութե, այս մասունք առեալ ոչ էին ախտա-
ւորք 'ի դրախտի անդ նախ քան զմեղս։ Զի ոչ հակառակ
ուղիղ կամացն խորհէին իւիք, որով հարկ լինէր բանին
սանձահարութ հրաժարեցուցանել զնոսա. զի որ այժմ
այնպէսն շարժին, և 'ի ժուժկալ 'ի բարեկրօն կենցաղա-
վարելոյն մերթ դիւրաւ, մերթ աշխատութ սանձա-
հարեալք պահին 'ի չափու, ոչ եթէ առողջութ է 'ի
բնութե, այլ տագնապ 'ի յանցանաց։ Իսկ այն զի զբար-
կութեն ազդմունս և զայլոցն կիրս եթէ բանիւք իցեն
եթէ գործովք՝ ոչ այնպէս ծածկէ ամօթխածութիւն, որ-
պէս զտռփմանն գործս ծածկէ որ յանդամս, զինչ ար-
դեօք պատճառք իցեն, բայց զի յայլսն ոչ եթէ նորին
կիրքն են մարմնոյ անդամոցն շարժիչք, այլ կամքն հա-
ճեալ ընդ կիրս՝ շարժէ, իշխեցող ամենայնիւ նոցա ներ-
գործութեն գոլով. զի որ զբան ինչ ասէ ոք զայրացեալ,
կամ թէ զոք հարկանիցէ, ոչ զայդ կարէր առնել՝ եթէ
լեզու և ձեռն ոչ շարժէին հրաման առեալ գոգցես 'ի
կամաց. որ և երբ չգուցէ ընդ բարկութ, շարժին ան-
դամքդ 'ի կամաց անտի։ Բայց զծննդական մասունս մար-
մնոյ այնպէս ինն ընդ իւրովք իրաւամբք 'ի ծառայութե
կալաւ տռփումն, մինչ զի շարժիլ չկարեն՝ եթէ նա պա-
կասիցէ, և կամ ոչ զարթնուցու ինքնաշարժ, կամ 'ի
դրդմանէ։ Այս է որ ածէ ամօթ, այս է որ ամաչելով
խոյս տայ 'ի տեսողաց. և առաւել յանձն առնու զբազ-
մութ տեսողաց զկիրս բարկուէ իւրոյ՝ թէ և յանիրա-
ւի լինիցի, քան եթէ զտեսուէ միոյ իսկ ուրուք, թէ և
օրինօք մերձեսցի առ ըմակից իւր։

ԳԼՈՒԽ Ի

Յաղագս անմիտ գարշելոյն հնականնաց :

Ոչ՝ի միտ առին զայս հնական անուանեալ իմաստասէրք, որք հակառակ մարդկային ամօթխածութեանն զինաբարոյ վէմիւռ արտադրեցին զաղտեղի և զանամօթ. զայն թէ՝ որովհետև օրինաւոր է որ ինչ ընդ առուսինն գործի, ոչ ամօթ ինչ է առնել զայն ակներև, և ոչ հարկ՝ի չէնս իսկ կամ՝ի հրապարակս խորշել յամուսնական խառնից : Սակայն զօրացաւ ամօթն բնական և յաղթեաց մոլար ուսմանս. թէպէտ և պատմի իմն թէ պանծանօք երբեմն գործեալ էր զայդ Դիոգինեայ, կարծեցեալ արգոյ ընծայեցուցանել զաղանդ իւր, եթէ զինաւոր զիւրոյ լրբութեն յիշատակ անձանացուսցէ առ մարդիկ, այլ յետ այնր խափանեցին զայն ինքեանք իսկ չնականք. և առաւել զօրացաւ ամօթն՝ ամաչել մարդոյ՝ի մարդկանէ, քան թէ մոլորութենն՝ որով յօժարէցին մարդիկ լինել չանց նմանող : Սա՝ ասն որոյ թուի ինձ, թէ դա, և այլքն զորոց պատմի գործեալ այդպիսի ինչ, առաւել ըստ աչս երևեցուցին զշարժուածս անպատկառս առ մարդիկն՝ որ չտեսանէին զինչ ինչ ընդ վերարկուաւն գործիցի, քան թէ արհամարհեալ զմարդկան տեսութեն՝ հեշտութեբն անկղնտանալ. զի անդանօր՝ ուր տուփուճն՝ի վեր երևել ամաչէր, իմաստասէրքն չամաչէին խառնակութեն երևել տարփածուս : Եւ արդ իսկ տեսանեմք տակաւին իմաստասէրս չնականս, և նոքա են՝ որք ոչ միայն աղաբողոնաւ պատին, այլ և՝ի ձեռս կրեն վէրգ կամ գաւազան. այլ ոչ ոք իշխէ գործել զքարուսականդ. և եթէ լրբէին ոմանք, ապաքէն թէ ոչ հարուածովք քարաձգողաց՝ այլ թքանելեացն լորձամբք լցեալ լինէին : Սա՝ ասն որոյ մարդկան բնութեն ամաչելով ամաչէ ընդ տուփուճդ, և արդարեւ յիրաւի. քանզի՝ի նորա

անհնազանդուեն՝ որ զանդամն կարևորս զմարմնոյ կորզեալ յիշխանութէ կամաց, ներքոյ իւրոց շարժմանց եւթ ըմբռնէ, ցուցանի քալ՝ ուր հատուցումն սուաւ առաջնում անհնազանդութէ մարդոյ, որ և յայնմ մասին առաւելապէս գայ յերևան՝ որով բնութէին ծննդագործ, այն որ առաջնումն այնու ահագին մեղօք յոռացաւ. յորոյ ՚ի կապիցն պրծանի և ոչ ոք, մինչև յանցումն որ ՚ի հասարակաց վնասաբերութէն գործեցաւ յորժամ ամենեքեան կային ՚ի միում, և յոյ արդարութէնն պատուհասեցաւ, ՚ի հնոր հացն այ սրբեալ քաւեցի յայր իւրաքանչիւր:

ԳԼՈՒԽ ԻԸ.

Ցաղագս օրհնութէն առնելոյ մարդկան յառաջ քան զմեղն, զոր ոչ եբարձ պատուիրանազանցութէնն, այլ ախտ տուփանն ՚ի վերայ յաւելաւ:

Վասն որոյ քաւ մի լեցի կարծել՝ թէ լծակիցքն երկոքին բնակեալք ՚ի դրախտին՝ այնուիկ տուփմամբ ընդ որ պատկառեալ զանդամն ծածկեցին, ունէին ընուլ զայ աստցեան յօրհնել իւրում, "Աճեցէք և բազմացարուք, և լցէք զերկիր,,: Վասն զկնի մեղացն գոյացաւ պն տուփումն. բնութէնն պատկառոտ՝ կորուսեալ յետ մեղաց զիշխանութէնն որով ծառայեցուցանէր զմարմինն առնային մասամբ, ՚ի զգայութէն եկն տուփմանն, ծանեաւ, ամաչեաց, քօղարկեաց: Ասկ օրհնութէն հարսանեացն՝ որով ամուսնացեալքն առել ունէին և բազմանալ և ընուլ զերկիր, թէպէտ և մնալ մնաց նա և ՚ի մեղուցեալն, բայց տուաւ մինչ չև մեղանչեալ էին. զի ծանիցի թէ որդւոցն առնելութէն ՚ի պատիւ ամուսնութէնէ է, և ոչ ՚ի պատուհաս մեղաց: Այլ այժմ մարդիկ անտեղեակք առնայնու երջանկութէն որ ՚ի դրախտին, կարծեն ոչ այլ ազգ ինչ որդեծնութէնն յաջողել՝ բայց զոր յանձինս ըզդայնն տուփանօքն, ընդ որ տեսանեմք պատկառեալ ըզ-

նոյն իսկ ղՀամաստուածութիւնն ամուսնական . վասն որոյ ամենեք միաբանութեամբ եղէալ յաճախոյն գրոց՝ ծաղր առնէին անձինս հաւատոյն յընդհանուր անդ՝ թէ յետ մեղացն ամաչելոյն ընդ մերկութիւնն , և զամօթալիսն վերարկեցին . իսկ այլք թէ և ընդունէին զդիրս և յարգէին , բայց զաստուածային՝ աչեցեալ և բազմացարուբք , ոչ ըստ մարմնական բարեաճումն իմանան . քանզի և ըստ հոգւոյ ընդհանուն ասացուածք այսպիսի . “Աւազումբ արասցես զօրութիւնս յանձն իմ ,, . Ղ. Ձ . 4 . և յայնմ որ զինքն գայ ի բան ծննդոց , “Երթ լեր ելեկիր , և տիրեցիր դմա ,, , երկրաբ զմարմին իմանան , զոր ինքեամբ ընու հոգին , և տիրել նմա առաւելապէս՝ յորժամ առաւելեալ գտանի ի զօրութիւնս : Իսկ զմարմնաւոր ծնունդս՝ որպէս այժմ , նոյն և յայնժամ անմարթ էր , ասեն , զաւակագործել առանց տուիմանն . ուր այդ յետ մեղանացն յայտնեցաւ , ղձաց , ամաչեաց , ծածկեցաւ . և ոչ ունէր ի գրախտի անդ լինել , այլ արտաքոյ՝ որպէս և եղև . զի յետ արտաքսելոյ ի գրախտէն մերձաւորեցան ի ծննդագործութիւնն , և ապրին որդիս :

ԻՒ ՅԱՒԵՏ ԻՐ

Թէ զղութեի լծակցաց առ յայն նախ կարգեալ և օրհնեալ է :

Ա.ՑԻ. մեզ չէք յերկուանալ քնաւ , թէ առել ըստ օրհնութեանն այ , բազմանալ և լնուլ զերկիր՝ պարզև է լծակցութեան , զոր ի սկզբանէ սահմանեաց ած յառաջ քան զմեղս մարդոյն , արարչագործեալ արու և էգ . որ և այս որոշումն ազգի յայտնապէս ի մարմնի է : Ա՝ ան զի այսմ գործոյ այ ի վերայ բերաւ օրհնութիւնն . յետ ասելոյ զրոցն , “Երու և էգ արար զնոսա ,, , անդէն զնովիմբ ածելով . “Եւ օրհնեաց զնոսա ած և ասէ . աչեցէք և բազմացարուբ և լցէք զերկիր , և տիրեցէք դմա ,, : Այսքեն մարթ է զանգաս զայսոսիկ ոչ յանդեպս ինչ յարե-

մարել և՛ի հոգևորական իմաստս. սակայն արու և էգ՝ ոչ որպէս նմանաբանութեի՛ ինչ՛ի մի մարդ է իմանալ, իբր զի է ինչ՛ի նմա որ տիրէ, և է որ տիրի, այլ որպէս բա-
ցերև տեսանի՛ի մարմնոյ տարասեռս, թէ ըստ սմամ սահեղման արու և էգ, զի զաւակագործելոյն աձիցէն և բազմանայցէն, և ընդացուն զերկիր. սորին վասն կարի յան-
տեղեաց է հակառակարանել. Ա՛նանդի հարցուած եղև առ տէր, ոչ վասն հոգւոյ որ հրամայէ, և մարմնոյ որ հնա-
զանդի, ոչ զբանական ընդոյն որ իշխէ, և զանբան ցան-
կութիւ որ իշխի, ոչ զչկայեցողական առաքինութեանէ որ պերճանայ, և զգործականէն որ ծառայանայ, ոչ զհան-
ձարոյ մտաց, և զզգայութիւ մարմնոյ, այլ յայտնապէս յաղագս ամուսնական կապոյն ընդ այր և ընդ կին, եթէ արժան իցէ արձակել զկին ըստ ամենայն պատճառս. իբր զի Մովսէս սակս իսրայէլեանցն խստասրտութեի՛ հրամա-
արարեալ էր գիր տալ արձակման. առ որ պատասխա-
նեալ ասէ. Ոչիւք ընդ երցեալ ձեր թէ որ հաստատեա-
ցըն՛ի սկզբանէ, արու և էգ արար զնոսա և ասէ. վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկոքեան՛ի մարմին մի. ապա ուրեմն ոչ են երկու, այլ մարմին մի։ Ա՛յդ զոր ած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ ։։ Ա՛ռ. ֆ. ։ Ա՛յս ուրեմն հաւաստի է՝ թէ այսպէս հաստեցան՛ի սկզբան անդ արու և էգ, որպիսի այժմ տեսանեմք և ճանաչեմք՝ մարդ երկու արական և իգական խտրութի՛ւ. բայց մի ասի կամ սակս զուգաւորութեն, կամ զի ծագումն իցի՛ի կո-
ղից արուին արարաւ. զի և առաքեալ յայտ նախագիծ յիշեցուման օրինակ խրատել զիւրաքանչիւր զնոսա՝ զի արք սիրեսցեն զկանայս իւրեանց. Ա՛ֆես. ե ։ Կող. գ ։

ԴԻՅՈՒԼԻՍ ԼԻՈՒ

Աբդեաք՝ ի չհեղանալ մարդոյ՝ լինէր ծնունդ՝ ի դիտաւորն, կամ թէ ոգեմոռ հաւատն ուներ մարտ դնել հակառակ ազգման ցանկութեան։

Լսեմ արդ որ միանգամ ասիցէ, թէ ոչ լինէր մերձաւորութեամբ և ոչ ծնունդ ազատութեամբ՝ ի չհեղանալ առաքինի մարդոյն, զինչ այլ ասէ, բայց թէ մեզք մարդոյ կաթիլք ինչ ևին առ աձելութեամբ թուոյ սրբոց։ Վկայեմ եթէ չհեղանալոյն ինքեանք ևեթ ունայնին, իբր զի ըստ իւրեանցն կարծելոյ՝ ծնանել ոչ էր նոցա առանց մեղանչելոյ, չայտ է թէ առ՝ ի չծնալոյ երկուց նոցա ևեթ արդարք, այլ զի բազումք լինիցին, սակաւք ևին մեղացն լնելոյ։ Այս եթէ զայդ կարծել անտեղի է, ապա պարտ է և հաւանել, թէ այնպէս թիւս սրբոց լինէր՝ բաւական առ՝ ի ընուլ զերանաւէտ քաղաքն, թէ և ոչ ոք մեղանչէր, որպէս այժմ ժողովի հոգևոյն այ՝ ի բազմութենէ մեղաւորաց, զոր վայր որդիք աշխարհիս ծնանին և ծնեալք լինին։

Այսուհետև վասն այն ամենայնի՝ բարձրութեամբ դրախտին վայելչական, եթէ մեզք ոչ լինէին, արգարեւ զաւակ ծնանէր սիրելի՝ այլ ոչ կրեր զամենայնին տափուն։ Այլ թէ որով օրինակաւ հնար էր այնմ լինել, ոչ է ժամ յայտ յուցից վերոյ հաստատել։ բայց մի անհաւատալի թուիցի, թէ այն մի անդամ ևս կարող էր առանց տափանաց արբանեակել կամաց, որում բազում այլ անդամք կան այժմ՝ ի ծառայութեան։ Այթէ զձեռս և զոտս երբ և կամիցէ՝ շարժեմք՝ ի գործս իւրաքանչիւր այսց անդամոց պատկանաւորս, առանց դիմադարձութեան և դիւրութեամբ ծառայ՝ որպիսում զչափ առնումք՝ ի մեզ և յայլս, մանաւանդ յարհեստագէտս գործոյից մարմնականաց, ուր՝ ի վարժել զտկար և զվհերոտ բնութենին ձեռն տայ հնար բազիտութեանն ժիրաժիր, ոչ աբդեաք հաւատայցեմք՝ թէ

նա և՝ ի գործ որդեծնութեձ կարող էին այն անդամք գոյ-
նակ այլոցն՝ հպատահելոյն ծառայել մարդկան ըստ սակս-
արիելոց կամաց, թէ և ոչ կայր առիթումն՝ անհնազան-
դութեձ մեղացն արիտուր։ Ոչ ապաբէնն նա ինքն Աիկիբոն
՝ի գիրս յաղագս հասարակապետութեձ, Ճառելով զպա-
տասխանութեձ տէրութեձց, և զիրացն նմանութեձ յառաջ
բերեալ՝ի մարդոյ բնութեձ, ասաց՝ թէ մարմնոյ անդամ-
մոյ իշխանաւք երբու որդւոց սակս գիւրանասց գոլոյն. իսկ
զհետաւոր մասունս հոգւոյ՝ զորմէն ծառայից բանաւո-
րականն նուաձեմք։ Այս արդարեւ ըստ բնաւորական
կարգի նախագահ քան զմարմին է հոգի. սակայն մինչն
հոգի գիւրագոյն և իշխէ մարմնոյ՝ քան թէ ինքեան։
Այլոյ տափութեան զորմէ բանս է, առաւել և ամենայն
գ տաւ այսու՝ զի հոգի՝ի մասնիս յայսմ ոչ անձին իւրում
իշխէ տիրաբար առ՝ի չտափելոյ բնաւ, և ոչ մարմնոյ գըլ-
խովին, որպէս զի զկարևոր անդամն կամքն շարժիցէ, և
ոչ տափութիւն. զի թէ այդպէս լինէը, ոչ և ամենայնի կո-
չէին։ Սակ այժմ ամենէ հոգի, հակառակութեձ կրել՝ի
մարմնոյն, որ խոնարհ բնութեձն ներքոյ է նմա. քանզի
յայլ կիրս թէ ինքն ընդ ինքն կռուիցի, նուազ ամենէ՝
իբր յաղթեցեալ լիւրիմ, որով և յաղթող ինքն ինքեան,
թէ և յանկարգս և ըստ ախոհ. զի պարտութեձ է՝ի մա-
տանց անտի՝ որոց պիտոյ է բանին կալ՝ի ներքոյ. այլ զի
մասունքն իւր են, այսու յինքնեան՝ որպէս ասացաւ, մնայ
յաղթեալ։ Այլ յորժամ կարգաւորաբար յաղթիցի հո-
գի իւր ինքեան, իբր զի անքան չարժմունքն ներքոյ ան-
կանիցին մտաց և բանին, միայն զի և ինքն հնազանդեալ
ոյ իցէ, այս գովութեձ և առաքինութեձ է։ Այլ սակայն
փոքր է ամենեն, յորժամ ինքնակիւ լինի հոգի յիւրոյ
ախտակիր մասանցն, քան թէ յորժամ տարբերեալն՝ի
նմանէ մարմին՝ խոնարհագոյնն քան զնա, այն՝ որոյ և
բնութեձ ոչ կեայ առանց նորա, չհնազանդիցի կամաց և
հրամանի նորա։

Այլոյ յորժամ այլքն յանդամոց՝ առանց որոյ անդամ-
բըն զրգռեալք առիթանօք ընդդէմ կամաց՝ վարեն զոր

ցանկանան կատարել հնազանդեալք կան հրամանի կա-
մաց, արդարեւ ամենախաճուքին պահպանի, և մեղացն
հաճուքի թէ և ոչ բարձեալ, այլ և ոչ թողացուցեալ
է։ Ո՛չ այս դիմադրուքի, զայս հակառակուքի, զայս զկա-
մացն և զսովմանն վիճումն, կամ գէթ զայս պէտս տըրփ-
մանն ի կատարումն կամաց՝ արդարեւ ոչ կրէր ամուս-
նուքին ի դրախտի անդ, եթէ անհնազանդուքին մե-
ղապարտ ոչ լինէր ձգէր զպատժականն անհնազանդու-
քի. այլ անդամքն այնոքիկ՝ որպէս և այլքն՝ հպատակէին
կամաց. և ծնունդականն անդամ այսպէս զսերմն արկանէր
յաման անդը կարևոր, որպէս ձեռն սերմանիկ այժմ յեր-
կիր։ Ա՛յլ որ այժմ ի կամել մեր որոշաբար ի վերայ ի-
րացդ ձառել, արգել արկանիկ ամենախաճուքին, և ամէ-
նեքին իսկ առ այսու ակնածուքիւ ներումն Տայցել ի մաքրա-
սէր լսելեաց, յայնժամ ի դրախտին Տայր բնաւ պատճառ
այսմ լինելոյ. այլ յաւիտեան մտածուքիւն որ յաղագս
այսպիսեաց անդամոց՝ առանց իրիք երկիւղիլ յայրատանաց
լինէր համարձակաբանել. և ոչ ևս լինէին խօսքն՝ յայրատ
ասացեալք. այլ որ ինչ ճառիւբն զայսցանէ, այնպէս պարզ
կէշտք լինէին, ոչ՝ի խօսելն կայլոց մասանց մարմնոյ։ Վ ամն
որոյ թէ յանապարկէշտից ոք Հանդիպիցի այսոցիկ գրուա-
ծոց, ի յանցուածոյն փախիցէ, և ոչ՝ի բնուքէ. գոր-
ծոց իւրուքն զաղրուքի մեղ դիցէ, և ոչ մերոցս Տարկա-
ւորեալ բանից. յորս մտադիւբ ներողամիտ ինձ լեցի պարզ
կէշտ և բարեկրօն վերծանողն կամ լսողն, մինչև ցբեցիլ
զանՀաւանուքէն այնոցիկ՝ որք վէձս յուզելն ոչ զՀաւատոյ
իրաց չփորձելեաց, այլ որոց՝ի փորձ զգայուքէն անկանիկն։
Վ՛ասողն կարող է առանց գայթագղուքէ զայսոսիկ ըն-
թեռնուլ նա՝ որ ոչ խրտնու՝ի կշտամբել առաքելոյն
զքստմնելի մեծդնեւուքեանս իգացն այնոցիկ, որք “Վոխեցին
զպէտս բնականս՝ի պէտս անբնականս ,, . ՟ . ՟ . 46։
Ա՛յս զի մեք ոչ եթէ զոր օրինակ առաքեալն, ի յուշ բե-
րեալ աստանօր զդժոխալուր խայտառականսն յանդի-
մանեմք, այլ բացայայտեմք որչափ տանելի է՝ զգործս
մարդկային ծնունդագործուքենն, զգուշացեալք նայապէս
յանառակ բանից։

ԳԼՈՒԽ ԺԳ

Թէ անյանց մարդկան հնազանդութբ 'ի դրախտին կացեալք՝ այնպէս 'ի կիր առնուին զկարևոր անդամս 'ի զաւակագործութիւն, որպէս և զայլ անդամս ըստ հաճոյից կամաց :

ՈՒՍՏԻ այրն սերմանէր և կինն ընդունէր՝ յոր ժամ և որչափ պիտոյն էր, կարևոր անդամօքն՝ որ 'ի կամաց շարժէին, և ոչ 'ի տռփանաց գրգռէին : Վասն զի է մեզ շարժել ըստ կամի ոչ զայն անդամս և եթ՝ որ յօդակապեալք են ոսկերօք, զոր օրինակ զոտս և զձեռս և զմատունս, այլ և զորս կակղագոյն ջլօքն են դաշնակեալ, երբ և կամիմք՝ շարժեմք տարուբերելով, և կարկառելով երկայնեմք, և թեքելով կորացուցանեմք, և ձգելով պնդեմք. զոր օրինակ զայնս որ կան 'ի բերանի և յերեսս՝ շարժեն կամքն որչափ և կարեն : Այլ և թոքք յամենայն ախոնդամնս գողտրականք, բաց յուղղոց թերևս, և այնորիկ աղագաւ 'ի լանջամէջն ամրափակեալք, ծառայեն կամացն 'ի շնչոց տուրևառութի, այլ և յարձակել կամ 'ի դաշնաւորել զձայնն, ըստ նմանութե փքոց դարբնաց կամ երգեհոնաց, 'ի փչել, 'ի շնչել, 'ի խօսել, 'ի գոչել, յերգաձայնել : Թողում զոր 'ի կենդանիս ոմանս բնաւորութի. զի թէ 'ի ծածկոյթ մարմնոյ ողջոյն 'ի մորթն զգայցեն ինչ ուրեք 'ի բաց վանելի, անդ միայն ուրանօր զգանն՝ շարժեն, և ոչ միայն զճանճս վերանստեալս, այլ և զտէգս մխեալս 'ի բաց խլեն մորթոյն դողացմամբ : Իսկ եթէ զայդ ոչ կարող է առնել մարդ, միթէ վասն այնր տկարացաւ արարիչն շնորհել կենդանեաց որոց և կամեցաւ : Ապա և մարդն կարող էր պահել զառ ինքն հպատակութի ստորին անդամոց գլխովին, զոր կորոյս իւրովի անհնազանդութբ. զի ոչ դժուարին ինչ էր Այ այնպէս յօրինել զմարդն՝ զի և այն անդամ 'ի մարմնի նորա կամօքն և եթ շարժեսցի. զոր օրինակ այժմ շարժի միայն տռփանօքն :

Քանզի և զմարդոց ոմանց բնաւորութիւնս դէպ եղև ճանաչել մեզ՝ կարի աննմանս այլոց, և առ նորութեան զարմացուցիչս, առնելով ինչ ինչ ըստ կամի 'ի վր մարմնոց իւրեանց, յորս այլք անկարանան, և 'ի լսել իսկ թերահաւատ լինին։ Զի են՝ որ զականջսն շարժեն՝ կամ ուրոյն և կամ զերկոսին միահաղոյն. են որք անշարժ զգլուխ կալեալք, զբովանդակ գէսս որչափ հերք կան՝ 'ի ճակատ անդր իջուցանեն, և անդրէն 'ի վեր ձգեն յորժամ կամին։ Այլք՝ որոց կլեալ իցէ յոլովագոյնս ինչ և յօքնատեսակս, առ փոքր մի ճնշեալ զլանջս անդրէն իբր 'ի պարկէ իմեմնէ զոր կամին՝ 'ի դուրս բերեն անխեղծ։ Ոմանք զհաւուց և զխաշանց, այլ և զմարդոց իսկ ձայնս այնպէս իմն նման աւաչիւք հնչեցուցանեն, մինչ զի առանց տեսանելոյ զնոսա՝ որոշել անհնար է։ Այլք ոմանք յերաստանաց փուքս ստէպ արձակեն ըստ հաճոյից ոչ ժահահոտս, մինչ թուի այնու մասամբ ևս երգս եղանակել։ Ես ինքն տեսի զայր՝ որ երբ կամէր՝ քրտունս թափէր. և քաջածանօթ իսկ է՝ զի ոմանք յորժամ կամին՝ լան, արտասուս յորդհեղեալ։ Այլ անհաւատալի առաւել այն է՝ որում բազումք յեղբարց մերոց իրագէտ եղեն ոչ բազում ժամանակ է։ Երէց ոմն էր՝ անուն Ռեստիտուտոս՝ 'ի վիճակի եկեղեցւոյն Կալամինայ յԱփրիկէ. որ յորժամ և կամէրն, աղաչեցեալ իսկ յայնցանէ՝ որք ականատեսք զարմանալի գործոյն լինել ցանկային, 'ի լսել անդ զողբաձայնի ուրուք ձևակերպութիւն, այնպէս անզգայացեալ տապաստ անկանէր մեռօրինակ, մինչ զի ոչ միայն չզգայր ինչ յօղորելն և 'ի խթել, այլ և երբեմն հուր մերձեցուցեալ 'ի կիզումն՝ անզգայ ցաւոյն կայր, բայց միայն յետոյ ուրեմն 'ի խոցիլ խարանօք։ Եւ թէ չխլրտել մարմնոյն ոչ 'ի տոկալոյ էր՝ այլ յանզգայութենէ, յայտ անտի է՝ զի տուրևառ շնչոյ բնաւ չերևէր 'ի նմա՝ զորէն մեռելոյ. զմարդկան խօսս յստակաձայնս յետոյ պատմէր լսել իբր 'ի հեռաստանէ։ Իսկ արդ այժմ իսկ մարմին ոմանց տառապելոց դեռ վշտամբեր կենօք յեղծանելի յայսմ զանգուածի՝ այնպէս զարմանալեօք իմն ըստ ոչ սովորական պայմանի բնութեան

ծառայութիւն հարկանէ, առ իմէ՞ իցէ մեզ անհաւատանալ՝ թէ յառաջ քան զմեղս անհնազանդութեան, և մինչ չև յապականութիւն դատապարտեալ, հնար էր մարդկեղէն անդամոյն ծառայել կամաց մարդոյ 'ի զաւակասերութիւն առանց ախտաւոր տռփանաց. Ապա թողու լքաւ մարդ յիւր ձեռն, վասն զի եթող զԱստուած՝ ինքնահաճ լինելով, և անհնազանդեալ Աստուծոյ՝ անկարացաւ և իւրում անձինն հնազանդիլ. Աստի ահա թշուառութիւն այն քաջածանօթ, որով ոչ կեայ մարդ ըստ որում կամի. զի եթէ կեայր որպէս կամէրն, երանելի զանձն համարէր. սակայն և ոչ այսպիսի լինէր, եթէ կեայր ախտաւորաբար.

ԳԼՈՒԽ ԻԵ

Յաղագս ճշմարիտ երանութեան՝ զոր չէ ստանալ 'ի ժամանակեայ կեանս.

ԲԱՅՑ սակայն մտաւորաբար կշռադատեալ, երանելին միայն է՝ որ կեայ որպէս կամի. և ոչ երանելի ոք է՝ բայց արդարն միայն. սակայն և արդարն ոչ կեայ ըստ որում կամի, եթէ ոչ անդր ժամանիցէ՝ ուր չիցէ այլ նմա մեռանել, սխալել, վշտանալ ընաւ, և գիտիցէ ստոյգ յարամնալ 'ի նոյն. Վասն զի այսմ ցանկայ բնութիւն, և ոչ լի բովանդակ երանելի եղիցի՝ բայց 'ի ձեռս բերեալ որում ցանկայ. Իսկ այժմ ո՞ ոք 'ի մարդկանէ կարիցէ որպէս կամի կեալ, յորժամ և կեալն իսկ ընդ իշխանութեամբ ոչ է. քանզի կեալ կամի, և բռնադատի մեռանել. Իսկ եթէ մեռանել կամիցի, զիա՞րդ ունի կեալ ըստ որում կամի, որ ոչն կամի կեալ. և եթէ մեռանել կամիցի ոչ առ չկամելոյն կեալ, այլ լաւ ևս կելոյ վասն յետ մահու, ուրեմն չև ևս ըստ որում կամին՝ կեայ, այլ յորժամ մեռանելովն հասանիցէ յայն զոր կամի. Բայց դնեսցուք թէ կեայ ըստ կամելոյն՝ այնու զի բռնադատեալ անձին հրամայէ՝ չկամել զոր ոչն կարէ, այլ զայն ևեթ կամել զոր կարէ, ըստ տե-

բնութեան աստացածին . եթէ անմարթ է լինել այնմ զոր կամիցի , զայն որ մարթելին է՝ կամեսջիր , իցէ՞ արդեօք երանելի յայն զի համբերութ՟բ է թշուառ ։ Վասն զի երանելի կեանք ոչ ստացանի՝ թէ ոչ սիրիցի . և եթէ սիրի և ստացանի , հարկ է գերիվերոյ քան զայլ ինչ ամենայն լինել սիրելի . զի վասն նորա սիրելի է որ ինչ միանգամ սիրի ։ Իսկ եթէ այնչափ սիրի՝ որչափ սիրելոյ է արժանի , քանզի և ոչ երանելի ոք է՝ որ չսիրիցէ զերանելի կեանսն որչափ արժանին է , անմարթ է ապա այնպէս սիրել զայն որ չկամիցի լինել յաւիտենական ։ Ուրեմն ապա երանելի կեանք լինիցի յորժամ յաւիտենական իցէ ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Հաւանել արժան է՝ թէ երջանկութ՟ն կացելոցն 'ի դրախտին առանց ամօթոյ կարէր արբանեկել 'ի ծննդագործութ՟ն ։

ԿԵԱՅՐ արդ կեայր մարդն 'ի դրախտի որպէս կամէր , ցորչափ զայն կամէր՝ զոր ա՟յ հրամայեալ էր . կեայր զուարճացեալ յա՟ծ , 'ի բարւոյ անտի բարեգործեալ . կեայր անկարօտ իմիք , իշխան գոլով այնպիսի կեալ միշտ ։ Կերակուր առձեռն կայր՝ զի մի՛ քաղցնուցու , ըմպելի՝ զի մի՛ ծարաւիցի , կենացն փայտ՝ զի ծերութ՟բ մի՛ լուծանիցի ։ Ոչ մի ինչ ախտ ապականութ՟ե 'ի մարմնի անդ կամ 'ի մարմնոյ՝ վիշտս երբէք բերէր 'ի նորայն զգայութ՟իս ։ Ոչ կայր երկնչել՝ ոչ 'ի ներքին ախտակրութ՟է իմեքէ , ոչ յարտաքին դիպմանց . քաջողջութ՟ի կատարեալ 'ի մարմնի , համակ անդորրութ՟ի 'ի յոգւոջ ։ Նաև զոր օրինակ 'ի դրախտի անդ ոչ տօթ էր , և ոչ ցուրտ , նոյնպէս 'ի բնակիչ նորա ոչ մի ինչ ներհակ բարի կամացն պատահէր 'ի ցանկութ՟է կամ յերկիւղէ . ոչ գլխովին տրտմական ինչ , և ոչ վայրապար խնդալի . զուրախութ՟ին ճշմարիտ ունէր միշտ առ յա՟յ , և 'ի նմա եռայր“ Սէրն 'ի սուրբ սրտէ , և 'ի մտաց

բարեաց, և յանկեղծաւոր հաւատոց ... ... Յեր. ֆ. 5.
Ի ծանկացն առ իրեարս հաւատարիմ կենակցութիւն մա-
քուր սիրով, մտաց մարմնոյ միախորհ արձնութիւն, և
անաչառ պահպանութիւն պատուի բանին։ Ոչ խոնջուն
հարկ առնէր ի դատարկանալ, ոչ քունն նեղէր յակամայ.
Յայնքան յաջողուած իրաց և ի բարերջանկութիւնէ մարդ-
կան՝ կասկածել խակ օրէն ոչ է, թէ անմարթ էր լինել
զատակսերութիւնէ առանց ախտի տուժանաց. այլ զի նո-
վին ակնարկութիւնէ կամաց շարժէին անդամքն ծնողականք՝
որով և այլքն. և առանց զրգռելոյ վաղաք ջերմութիւնն
անխոտոր միաբովդ էին և մարմնոյ, ոչ ինչ ընասեալ ամբող
ջանէն անհանգիստ այրն ի գիրկ կնոջն։ Կանղն ոչ եթէ ուր
հաւաստիք ի փորձոյ պակասեցին, վասն այն թէ զահաւա-
տել իցէ արժան. յորժամ զայն մնասուն մարմնոյ ոչ ե-
ռացումն պղտորիչ շարժեալ վարէր, այլ ըստ որում պէտքն
էին ի կիր առնոյը ընտրողական իշխանութիւնէ, յայնժամ
հնար էր առնացի սերմանն այնպէս ի նեղըս անկա-
նել յարգանդ լծակցին՝ անեղծ պահեալ կինոջական ան-
դամոյն, զոր օրինակ հնար է այժմ բղխման գաշտանին
արտաքս հոսել ի կուսական արգանդէն՝ անխախտելի մնա-
լով. քանզի ընդ ձանապարհ որով այս արտաքս բերի, ընդ
նոյն մարթ էր և այմ՝ ի նեղըս անկանիլ։ Եւ զոր օրինակ
առ ի ծնանել ոչ երկանցն հեծումն ընդարձակէր զարգանդ
հինոջ, այլ ժամանակին հասելոյ ստիպումն, նոյն օրինակ
առ ի սաղմնառել ոչ տուժանացն ախորժակ՝ այլ կամայ-
ականն կիրառութիւնէ մերձաւորեցուցանէր զնմանէ եր-
կաքանչիւր։

Կապաքէն ձառեմք զերաց որք այժմ ամենայն էն. նմին
իրի թէպէտ և ըստ կարելոյ մեր խոստասիրեմք զպնացա
նէ որպիսիս մարթ էր լինել յառաջ քան զամօթ ալիւն
վիշակ, բայց ամօթ խածուածքին ստիպէ զմեզ յաչառ չափ
դնել ձառիս քան թէ զպերճախօսութիւնէ՝ ի ձեռն առնուլ,
յորմէ նուազեալ խակ եմք։ Կանղն զոր ասեմն, և ոչ նո-
քին անպատ՝ որք ուշնկին վայելել զիորձ առնին, զաւ ի
դրախտին վառուցին արժանապէս յանձինս ձգեալք ի

կանխելոյ մեղացն, մինչ չև առ միմեանս եկեալ նոցա խաղաղականն ընտրութ̃ի 'ի գործ որդէծնութ̃ե. և զկա̃րդ ապա յայժմու յիշատակելս այլազգաբար ինչ հարկանիցին այսոքիկ 'ի մարդկան զգայութ̃իս՝ բայց եթէ պղտորիչ տափմանն կրիւք, և ոչ մտախոհութ̃ անխռով կամաց: Սորին վասն արգելու ամօթն 'ի խօսելոյ, թէպէտ և ոչ պակասէ բան 'ի խորհրդածել: Այլ սակայն ա̃յ որ ամենազօրն է, և ծայրագոյն լի բովանդակ բարի արարիչ համուրց բնութ̃եց, օգնական և վարձատրող կամաց բարեաց, իսկ չարացն՝ անտեսող և դատիչ, բայց և երկաքանչիւրոցն տնօրէն, ա̃յ ասեմ ոչ պակասեաց արդարեւ խորհուրդ՝ առ 'ի լնլոյ զսահմանեալ թիւ քաղաքացեաց իւրումն քաղաքի նախակարգելոց յիւրմէ իմաստութ̃էն նաև 'ի միջոյ դատապարտ ազգի մարդկան. զորս ոչ ըստ արժանի գործոց ինչ, որովհետև զանգուածն ողջոյն դատապարտեալ էր իբրև 'ի փտասաբեր արմատն իւր, այլ շնորհօք ընտրեաց, ցուցանելով ոչ միայն ապրեցելոցն 'ի նոցանէ, այլ և չապրեցելոյն զոր ինչ պարգեւէ նոցա: Վասն զի իւրաքանչիւր 'ի մտի առնու յայնժամ, թէ ոչ ըստ պարտեաց բարերարութ̃՝ այլ ձրիականաւ ազատանայ 'ի չարեաց, տարատրոհեալ 'ի դատակարգէ մարդկանն՝ որոց արդարապէս պատժակիցն էր: Ապա ուրեմն առիմէ՞ ոչ ստեղծանել ա̃յ զայնոսիկ՝ զորոց զմեղանչել տեսանէր կանխաւ. որովհետև կարող էր ցուցանել 'ի նոսա և 'ի նոցունց՝ զի՞նչ նոցին յանցմանն արժան էր, և զի՞նչ իւրովքն շնորհօք պարգեւէր, և յանցուցելոցն խոտորնակ անկարգութ̃ի ոչ իւիք թիւրել ունէր զուղիղ կարգ իրաց ընդ ձեռամբ այնպիսւոյ արարողի և տնտեսողի:

ԳԼՈՒԽ ԻԶ

Խոտորնակութեի մեղուցելոց հրեշտակաց և մարդկան ոչ վիգովի ջոյ նախախնամութեին։

Ա ՝ԱՍՆ այնորիկ մեղուցեալք եթէ հրեշտակք, եթէ մարդիկ՝ ոչ ինչ ներգործեն առ ՝ի խափանելոյ զՔՆԱ-ՆԵՆ գործս տեառն, և զքննեալ յամենայնի կամս նորա. Ա՛ղ . ՃԳ . 2 ։ Ա ՝ասն զի կանխագէտ և ամենազօր ՝ոյն ՝ի բաշխել անդ իւրաքանչիւր ումեք զպարգևս իւր, գիտէր ՝ի բարիոքն վարել ոչ միայն զաբրիս, այլև զչարիս ։ Ա ՝մին իրի յորժամ հրեշտակն չար՝ այն ինչ դատապարտեալ և խոտացեալ էր ըստ աբժանի առաջինն չար կամացն, մինչև անուռնակ այնուհետև լինել նմա կամաց բարւոյ, զնա ՝ի լաւ անդր կամեցեալ ՝այ ՝ի կիր արկանել Թոյլ տայր նմա, զի փորձեսցէ զմարդն առաջինն ղՀասատանն ուղիղ ՝ի կամս բարիս ։ Ւորև զի այնպէս ինն պայմանեալ էր, զի եթէ յոյ օգնականութեի լինէր ապաստան մարդն բարի, յաղթէր ապաքէն հրեշտակին չարի. իսկ եթէ յանձն ամբարհաւանձեալ Թոյլոյր լքանէր զօգնականն, յաղթեալ ինայր. ունելով զվստահակ բարի ուղիղ կամքն որ առ յոյ օժանդակեալ, և զչար վստահիս ըստ խոտորնակ կամացն օտարացեալ յոյ ։ Ա ՝ղանգի և ապաստանեալք խակ յօգնութեի ՝այ՝ ոչ լինէր առանց նորա օգնականութեն . այլ ոչ վասն այսր չուներ նա իշխանութեի ՝ի բաց կալ յՀաճախորդ բարերարութեց սասի՝ ինքնահաճ լինելոյն ։ Ո ՝ի զոր օրինակ ասրել ՝ի մարինուս առանց դարմանոյ կերակրոց՝ ոչ ՝ի ձեռս մարդոյ, բայց ոչ կենդի ՝ի մարմնի՝ և ՝ի ձեռս նորա, զպակս անձնասպանքն առնեն, նոյնպէս բարիոքն կենդանացել առանց ՝այ օգնականութեե՝ ոչ էր յիշխանութեե ուրուք և ՝ի դպահտի անդ. բայց յիշխանութեե մարդոյ էր կենդի չարաչար, բայց միանգամայն և զքանութեին կորուսանել, և կրել զարժանի պատուհասս ։

Ա ՝ՅՍ ամենայնի ցուցեալ ինչ ՝ի մեզ ՝ի վերայ ՝ոյ ՝ի ՝ոյ ՝ի ՝ոյ ՝ի

դարակիւռ պատուհան։ Ա՛յդ քանզի այսմ հանդերձելոյ անկման մարդոյ ոչ անգիտակ էր ածՙ հիմ էր արգելուլ զի մի փորձեսցէ զնա չարութեն մախացող հրեշտակին։ Ա՛ւ անգիտանայր իւիք՝ թէ յաղթեսցի մարդն, բայց յաւագագետ ևս էր՝ թէ ի զաւակէ նորա զօրացելոյ իւրովքըն չնորհօք պարտեալ անկանիցի նա ինքն ստանայ՝ առաւելագոյն առութելով փառս սրբոցն։ Ա՛յսու օրինակաւ ոչ մի ինչ յապառնեացն ծածկէը յայՙ և ոչ նորա յառաջ գիտելովին ձգիւր զը ի մեղանչել։ միանգամայն յերեկոյ անտի փորձոյ ծանուցանէր բանաւոր ստեղծուածոյ՝ հրեշտակայնոյն և մարդկայնոյ, թէ զինչ խոիր կայցէ ընդ յանձնապաստանութեն նոցա, և ընդ խնամակալութեն իւր։ Օ՛ի ո՞ զը կարծել քնաւ կամ ասել յանդգնեսցի, թէ ոչ էր ՚ից կարողութեն արգելուլ զանկումն հրեշտակի կամ զմարդոյ։ այլ կամեցաւ առաւել չքառնալ զայդ ի նոցա կարողութենէն, զի և այնպէս յուցանիցէ՝ որչափ առ ի չարն զօրաւոր էր նոցայն հպարտութեն, և քանիօն ի բարիս՝ իւրն չնորհք։

ԳԻՒՂԻՍ ԻՐ.

Յաղագս հանգամանաց երկուց քաղաքաց՝ երկրաւորին և երկնաւորին։

Ա՛ՀԱ այսու օրինակաւ զերկոսին քաղաքսն կատոյգ սէրն երկեակ-զերկրաւորն չնեաց անձնասիրութեն մինչև յարհաւամարհութիւն ՚ից, իսկ զերկնաւորն՝ ածսիրուէն մինչ յարհամարհութիւն անձին։ Ա՛յն չինքն պարծի, և այս ի տէր։ Վ՛ասն զի այն փառս ի մարդկանէ խնդրէ, իսկ այսմ փառք մեծ ածՙ է, վկայ ներքին մտաց. այն ի փառս իւր բարձրացուցանել զգլուխ, և այս ասէ առ ածՙ իւր. “փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ.։ Ա՛յնմ տիրէ խչնասիրութեն չկշռանաս նորա, կամ յաղգսն ներքոյ անկեալը. իսկ յայսմ իրեւց ծառայեն սիրով առաջնորդք խրատելով,

և հնազանդեալք անսալով։ Նա 'ի հզօրս իւր սիրէ զիւրն զօրութիւն. այս՝ ասէ առ ած իւր. «Սիրեցից զքեզ տէր զօրութիւն իմ»։ Վասն այսորիկ 'ի նմա իմաստունք նորա ըստ մարդոյ կեցեալք, զհետ չոքան բարեաց մարմնոյ, կամ հոգւոյ, կամ երկոցուն ևս. կամ թէ և կարացին «Ճանաչել զած, բայց ոչ իբրև զած փառաւորեցին կամ գոհացան. այլ նանրացան 'ի խորհուրդս իւրեանց, և խաւարեցան անմտութեան սիրտք նոցա. զանձինս առ իմաստունս ունէին, (այս է՝ 'ի հպարտութեան ըմբռնեալք՝ բարձրամտեցան յիւրեանցն իմաստութիւն) յիմարեցան. և փոխեցին զփառս անեղծին այ 'ի նմանութիւն եղծանելի պատկերի մարդոյ և թռչնոց և չորքոտանեաց և սողնոց. (քանզի յերկրպագութիւն այսպիսեաց կռոց կամ վարդապետք եղեն ժողովրդոց, կամ հետևողք). հնազանդեցան և պաշտեցին զարարածս՝ և ոչ զարարիչն, որ է օրհնեալ յաւիտեանս»։ Հռ. ա.։ Իսկ յերկնաւոր քաղաքիս ոչ ինչ է իմաստութիւն մարդոյ, այլ աստուածպաշտութիւն միայն, որով ուղիղ պաշտի ճշմարիտն ած յայն վարձ պսակաց վերակնելով 'ի միաբանութեան սրբոցն ոչ մարդկան միայն, այլ և հրեշտակաց, «Զի եղիցի ած ամենայն յամենայնի»։ Ա. Կոր. ժե. 28.

ԳԻՐՔ ՀՆԳԻՏՄԱՆԵՐՈՒ

Ցետ Ղաւէթի Օդոտոմոսի ի լորեան յառաջ անցեալ գիրսդ յաղագս ծագման երկուց քաղաքացն , երկրայնոյն և երկնայնոյն , յաւէտ նոյնչափ գիրս յաղագս յառաջանալոյ քաղաքացն այնոցիկ . և ի սոյն պէտս ձեռն արկեալ զերեսելի գլուխս սրբազան պատմուածոց զառ ի սոյն անհատս ի Ղառ առնուս , և զառաջինն յայս հնգետասաներորդ գիրս ի մէջ բերէ զկարգ գրոցն ծննդոց ի կայենէ և ի Հաբէլէ մինչև ի ջրհեղեղ :

ԳԼՈՒԽ Ա.

Ցաղագս երկուց կարգաց մարդկայինս ազգի՝ որ ի սկզբանէ անտի ընթանայ յայլ և այլ կատարած :

ԶԱԴԱՄԱՆԸն բարերջանկութենէ, և զնմին իսկ ըղդրախտէն, և զանտանօր կենաց առաջին մարդոցն , դյանդ յուածոյ նոցա և զպատուհասէն՝ բազումք բազում ինչ խորհեցան , յոլովս ասացին , բազում ինչ ի գիր աւանդեցին : Այլ և մեք ի մատենանդ նախագրեալս ասացաք զայդցանէ ըստ սուրբ գրոց զոր ինչ ի նոսին վերծանեմք կամ զոր կարացաքն իմանալ համաձայն աւանդութենե նոցա : Իսկ եթէ այլ և այլ մանրախուզիւ այսոքիկ հարցաքընննեսցին, բազմապատիկ և բազմերիւնակ վէճմանց բանայցէ դուռն, որ պէտս ունիցին յոգուտց մատենագրութեց՝ քան զոր ներէ առաջինքայս մատեան և ժամանակս . ուր մեզ ոչ այնչափ առատ է ժամանակ , զի դեգերել յանձն առնուցումք յայմ իմիջս՝ զոր պարապողքն և հետաքննիք առնել կարող էն , առ ի հարցանելն կազմք՝ քան թէ ուշիմք յիմանալ Վակայն թուի ինձ թէ հատուցաք ըստ բաւականի զնեծամեծ և զդժուարապատում խնդիրսն որ յաղագս սկզբան աշխարհի, կամ հոգւոյ, կամ մարդկային ազգի . զոր և յերկուս սեռս որոշեցաք , մի այնոցիկ որ ըստ մաք-

դոյ կեան, և միւս ոյք ըստ ա̄յ. զորս և խորհրդաբանեալ անուանեմք քաղաքս երկու. այս է՝ երկու ժողովս մարդկան, յորոց միումն առաջի կայ թագաւորել յաւիտեան ընդ ա̄յ, և միւսումն 'ի յաւիտենից տանջանս զրաւիլ ընդ սատանայի։ Բայց այս՝ կատարած նոցա է, զորմէ խօսել կայ զկնի։ Իսկ աստանօր՝ քանզի բաւականաբար ասացաւ զծագմանէ նոցա՝ եթէ ըստ հրեշտակաց, որոց թիւ անյայտ է 'ի մեզ, և եթէ ըստ երկուց առաջին մարդոցն, ժամ թուի ինձ զաճելութէ նոցա ճառ արկանել, յորմէ հետէ երկու նոքա ծնանել սկսան՝ մինչև 'ի դադարումն ծննդեան մարդկան։ Քանզի բովանդակ այս ժամանակ կամ դար՝ յորում տեղի տան մեռեալք, և փոխանորդեն ծնեալք, է ընթացք կամ աճելութի երկուց քաղաքացըս՝ զորոց բանքս են։

Արդ յերկուց ծնողաց մարդկութեան երեց ծնաւ Կայէն որ 'ի քաղաք մարդկանն առակի, և կրսեր՝ Աբէլ, որ 'ի քաղաքն ա̄յ. զի որպէս 'ի մի մարդումն տեսաւ ըստ որում առաքեալ ասաց, "Ոչ նախ հոգևորն, այլ շնչաւորն, և ապա հոգևորն", Ա. Կոր. ԺԵ. 46, վասն որոյ իւրաքանչիւր ոք իբրև դատապարտ ազգատոհմի ծնունդ՝ հարկ է զի նախ յԱդամայ իցէ չար և մարմնաւոր, որ 'ի Ք̄ս վերստին ծննդեամբն զարգացեալ՝ լինիցի այնուհետև բարի և հոգևոր, սոյնպէս յընդհանուր մարդկութե իբրև երկոքին այս քաղաքք աճել նախ սկսան ծնանելով և մեռանելով, յառաջ ծնաւ քաղաքացին այսր աշխարհի, և ապա որ պանդուխտն է այսմ, և յարմարեալ 'ի քաղաքն ա̄յ, շնորհօք նախասահմանեալ, շնորհօք ընտրեալ, շնորհօք օտար 'ի ստորևս, շնորհօք քաղաքացի 'ի վերինս։ Սակայն զի յիւրմէ կողմանէ յառաջ գայ նա 'ի զանգուածոյ անտի՝ որ 'ի բուն արմատն համբուն դատապարտեալ է. բայց ա̄ծ իբրև բրուտ, ըստ որում ոչ անխորհուրդ՝ այլ իմաստնաբար զայս տարացոյց 'ի ներքս բերէ առաքեալ, "Ի նմին զանգուածոյ արար անօթ զոմն 'ի պատիւ, և զոմն յանարգանս", Հռ. Թ. 21. այլ նախ եղև անօթն յանարգանս, և ապա միւսն 'ի պատիւ. քանզի և 'ի միումն

անդ 'ի մարդումն, որպէս յառաջ ասացի, յառաջ է խո-տումն, յորմէ և սկսանելն հարկ է, թէ և 'ի նոյն յարա-մնալ հարկ ոչ է, և զկնի՝ ընտրեալն, յոր յառաջեալ ժա-մանիցեմք, և ժամանեալք կայցեմք մնայցեմք 'ի նմին: Աւստի թէպէտ և ոչ ամենայն մարդ չար՝ լինիցի բարի, բայց ոչ ոք եղիցի բարի՝ որ նախ չար ոչ լեալ իցէ. այլ որ-չափ արագագոյն ոք 'ի լաւ անդր փոփոխի, այն անուն վերակոչի՝ զոր վաղագոյն յանձին կալաւ, յետնումն զա-ռաջինն ծածկելով կոչումն: Արդ վասն Կայենի գրեալ է թէ շինեաց քաղաք. իսկ Աբէլ իբրև նժդեհ ոչ շինեաց: Վասն զի սրբոցն քաղաք վերնային է. թէ և աստանօր ծնանի քաղաքացիս՝ յորս պանդխտի. մինչև գայցէ ժա-մանակ արքայութե̃ նորա, 'ի ժողովել անդ զամենեսին զյարուցեալս մարմնովք իւրեանց յորժամ տացի նոցա արքայութի̃ն խոստացեալ, յորում թագաւորեսցեն ան-ժամանակաբար ընդ իշխանի իւրեանց՝ ընդ թագաւո-րին յաւիտենից:

ԳԼՈՒԽ Բ

Յաղագս որդւոցն որ ըստ մարմնոյ, և որ ըստ աւետեաց:

ԱՊԱՔԷՆ ստուեր իմն այսր քաղաքի, և պատկեր մարգարէատիպ 'ի նշանակել յաւէտ զնոյն՝ քան թէ յանդիման ածել՝ ծառայեաց նմա յերկրի յորում ժա-մանակի ցուցանելն 'ի դէպ էր. և այն իսկ քաղաք սուրբ կոչեցաւ՝ սակս նշանակիչ պատկերն լինելոյ, և ոչ վասն բացերևեալ ճշմարտութե̃ն որ յապառնին: Յաղագս ծառայական այսմ պատկերի, և ազատ քաղաքին՝ որում նշանակիչն էր, այսպիսաբար խօսի առաքեալ առ գա-ղատացիս. Դ. 21. «Ասէք ինչ ինձ՝ որ ընդ օրինօքն կա-միք լինել. չիցէ՞ ընթերցեալ ձեր զօրէնս: Զի գրեալ է՝ թէ Աբրահամու երկու որդիք էին, մի յաղախնոյ ան-տի, և մի յազատէն: Այլ որ յաղախնոյն էր, ըստ մար-

մնոյ ծնեալ էր, և որ յազատէն՝ ըստ աւետեացն։ Որ է առակ օրինակի. զի այս ինքն են երկու կտակարանք. մի 'ի լեռնէն Սինայ 'ի ծառայութիւն ծնեալ, որ էր Հագար. քանզի Հագարն՝ լեառն Սինայ է յԱրաբիա, հաւասար է այսմ Երուսաղէմի, զի ծառայ է որդւովք իւրովք հանդերձ։ Այլ վերինն Երուսաղէմ ազատ է, որ է մայր մեր ամենեցուն։ Զի գրեալ է, ուրախ լեր ամուլ, որ ոչ ծնանէիր, գոչեա և աղաղակեա որ ոչդ երկնէիր, զի բազում են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբւոյն։ Այլ մեք, եղբարք, ըստ Սահակայ աւետեացն որդիք եմք։ Այլ որպէս յայնժամ, որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հոգւոյն, նոյնպէս և այժմ։ Այլ զինչ ասէ գիր. 'ի բաց հան զաղախինդ և զորդի դորա, զի մի՛ ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն ազատի։ Վասն որոյ, եղբարք, չեմք որդիք աղախնոյն, այլ ազատին՝ ազատութեամբն որով Քրիստոս զմեզ ազատեցոյց»։ Ահա այս տիպք իմաստից յառաքելականէն աւանդեալ հանճարոյ՝ շաւիղս հորդէ մեզ թէ զիարդ առնուլ պարտ իցէ զգիրս երկուց կտակարանաց՝ հնոյն և նորոյս. վասն զի մասն ինչ երկրային քաղաքին՝ պատկեր իմն տուաւ երկնայնոյն, ոչ եթէ զինքն նշանակելով, այլ զայլ, որով և ծառայական է։ Զի ոչ եթէ առ 'ի զինքն նշանակելոյ սահմանեցաւ, այլ այլում գոլ նշանակիչ. և զի նշանակումն այլ յառաջընթաց էր, եղև և ինքն նախանկարըն նախ նկարագրեալ։ Քանզի Հագար աղախին Սառայի և որդի նորա՝ պատկեր իմն եղև այսմ պատկերի։ Այլ զի անցանելի էին ստուերք 'ի գալ լուսոյն, ասաց ազատն Սառա, որ զազատ քաղաքն յայտ առնէր, որում և այլով դիմաւ նշանակիչ ծառայ էր ստուերն. «Ի բաց հան զաղախինդ և զորդի դորա, զի մի՛ ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյ իմում Իսահակայ», զոր առաքեալ ասէ՝ ընդ որդւոյ ազատին։ Ապա ուրեմն յերկրաւոր քաղաքի անդ երկուս դէմս գտանեմք, մի զբուն զինքն յանդիման ցուցանելով, և միւս 'ի նշանակել զերկնային քաղաքն իւրովն ցուցակութեամբ ծառայելով։ Բայց ըզ-

քաղաքացիս երկրաւորն քաղաքի ծնանի որ 'ի մեղացն ապականեալ բնութե՟. իսկ զերկնաքաղաքացիս՝ շնորհն ազատեցուցիչ բնութ՟են 'ի մեղաց. որոյ վասն նոքա բարկութե՟ կոչին անօթք, և սոքա՝ ողորմութե՟: Այն այս ցուցաւ և յերկու որդիս Աբրահամու, իբրև զի մին յաղախնոյ անտի Հագարն կոչեցելոյ ծնաւ ըստ մարմնոյ Իսմայէլ, և միւսն յազատէն Սառայէ ըստ աւետեաց Իսահակ ծնեալ: Ապաքէն երկոքին ևս 'ի սերմանէն Աբրահամու են. այլ զնա ծնաւ սովորութի՟ն՝ ցուցակ բնութե՟, և զսա ետուն աւետիքն՝ նշանակ շնորհաց. անդ մարդկայինն ցուցանին պէտք, աստ մեծարի բարերարութի՟ն ա՟ծային:

ԳԼՈՒԽ Գ

Յաղագս ամլութե՟ Սառայի՝ զոր բեղնաւորեաց շնորհն ա՟յ:

ՔԱՆԶԻ Սառայի ամուլ գոլով, անյոյս յորդէծնութե՟, և ցանկացեալ ստանալ գէթ յաղախնոյ իւրմէ զայն՝ զոր յինքենէ անլինելի տեսանէր, ետ զնա 'ի զուգաւորութի՟ առն իւրում, յորմէ կամէր՝ այլ ոչ կարէր ծնանել. և այսու օրինակաւ զպարտմն պահանջեաց յառնէն, 'ի կիր արկեալ զիւր իրաւունս յօտար արգանդի: Վասն որոյ ծնաւ Իսմայէլ՝ զոր օրինակ ծնանին մարդիկ, զուգախառնութեամբ արուի և իգի՝ ըստ հասարակական օրինաց բնութեան: Ուստի ասացաւ՝ ըստ մարմնոյ, իբր ոչ եթէ այս իրք չիցեն երախտիք ա՟յ, կամ ոչ յաջողիցէ զնոյնս ա՟ծ, որոյ Ճարտարագործն իմաստութի՟ ըստ գրեցելումն "Ձգի 'ի ծագաց մինչև 'ի ծագս օգտակար առողջութե՟, և դարմանէ զամենայն քաղցրութե՟„, Իմաստ. Ը. 1, այլ վասն զի ուր կամք էին յայտ առնել զպարգևն ա՟յ, որ զանպարտն մարդոյ շնորհէ ձրի, այնպէս իմն պարտ էր տալ զզաւակն, որպէս ոչ ըստ ընթացից բնութե՟ անկ էր: Քանզի բնութի՟ ոչ զաւակա-

գործէ այնպիսի խառնութք արուի և իգի, որպիսի լինելն մարթ էր Աբրահամուն և Սառայի յայնմ հասակի, յաւելեալ և ամլութե կնոջն, որ և ոչ յայնժամ ծնանել կարող էր ; յորժամ ոչ եթէ հասակն պակասէր առ ծննդագործութի, այլ այս պակասէր առ հասակն : Ապա զի բնութի այսանակ զգածեալ չունէր գալ 'ի սերունդս, յայտ առնէ թէ մարդոյս բնութի մեղօքն ապականեալ, որով և յիրաւի դատապարտեալ, ոչ միոյ ինչ երջանկութեան ընդունակ էր յապայսն : Ուստի ծնեալն ըստ աւետեաց Իսահակ՝ ուղղաբար իսկ նշանակէ զշնորհացն որդիս, զքաղաքացիս ազատ քաղաքին, զկցորդեալս խաղաղութեան յաւիտենից. ուրանօր ոչ կայ սէր առանձնային և մասնաւոր հաճոյից, այլ որ խնդայ 'ի հասարակաց յանփոփոխելի բարին, և 'ի բազմացն առնէ մի սիրտ, միախորհ ամենայնիւ 'ի հնազանդութի սիրոյ :

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս մարտադրութե կամ խաղաղութե երկրաւոր քաղաքին :

Իսկ քաղաքն երկրաւոր, որ և ոչ լիցի մշտնջենաւոր, քանզի վերջին տանջանօքն դատապարտեալ նորա՝ ոչ եւս քաղաք եղիցի, աստ 'ի կենցաղումս ունի զիւր բարին՝ որոյ ստացմամբ զուարճանայ զայնպիսի զուարճութի՝ որպիսի լինել մարթ իցէ ընդ իրս այնպիսիս : Այլ քանզի չէ բարի այնպիսի՝ որ յիւրոցն սիրողաց հեռի առնիցէ զանձկութիս ամենայն, նմին իրի այս քաղաք յոլովակի անձամբ անձին ընդ հարկանի 'ի կռիւս, 'ի պատերազմունս և 'ի պայքարս՝ խնդրելով յաղթութիս, կամ մահագործս, կամ գոնէ մահուամբ վախճանելիս : Վասն զի որով կողմամբն ամբարձցի մարտնչելով ընդ հակառակ կողման, կամի յաղթող լինել ազգաց, գոլով ինքն գերի ախտից : Եւ եթէ յաղթող եղեալ ամբարտաւանեսցի,

ահա մահապարտ է. իսկ եթէ զպայման և զպատահմունս հասարակաց յուշ ածեալ՝ հոգայ առաւել ընդ ձախողականացն դիպել՝քան թէ հպարտանայցէ ընդ յաջողել բարօրութեանցն, յայնժամ վախճանելն միայն է յաղթութէնն. քանզի ոչ կարող է յար իշխեցող ճնալ այնոցիկ՝ զորս նուաճելն կարաց յաղթելովն: Սակայն և ոչ ուղիղ է ասել, թէ աւետնային ինչ իրք՝ որոց ցանկայ այս քաղաք՝ անբարիք լցեն, ուր զի և ինքն յիւրումն մարդկային պայմանի՝ է երբէք լաւագոյն, քանզի ցանկայ երկրաւոր խաղաղութէ ինչ՝ի ստորակայ իրքս, առ որ հասանել փափաքէ պատերազմելովն: Զի եթէ յաղթեսցէ և չկայցէ ոք զիմամարտ, եղիցի խաղաղութէ, զոր ոչ ունէին կողմանքն հակառակամարտք. և յետին կարօտութէ մաքառէին՝ի պատճառս իրացն՝ զորս չմարթէին վայելել՝ի միասին: Այսմ խաղաղութէ՝ի ինդիր են պատերազմունքն յոքնավաստակք. և զայս՝ի ձեռս բերէ կարծեցեալն փառաւոր յաղթութէ: Իսկ յորժամ սակս արդարացի պատճառաց պատերազմողքն յաղթական լինին, ո՞ երկուանայցէ թէ արդարեւ ինդալն է յաղթութէնն և ըղձալն խաղաղունն՝ի գլուխ ելեալ: Այսոքիկ ահա բարի են, և անշուշտ պարգև այ: Այլ սակայն եթէ լաւագունէին անփոյթ արարեալ՝ որ վերնական այնմ քաղաքի անկատարքն են, ուրանօր լինիցի յաղթութէ՝ յաւէրժական և բնաւ աներկեւան խաղաղութէք, այնպէս իմն ցանկալի համարիցին աստ բարիքս, զի կամ ինքեանք միայն բարի կարծիցին, և կամ առաւել քան զլաւագոյն գիտացեալն սիրեսցին, հարկ է ապա զի թշուառութէ՝ի վերայ գայցէ, և որ էրն՝ յաւելցի:

ԳԼՈՒԽ Ն

Յաղագս նախկին շինողի երկրաւոր քաղաքին եղբայրասպան եղելոյ. որում հանգունակ գտաւ կերտող քաղաքին Հռովմայ՝ սպանմամբ հարազատին իւրոյ։

Արդ նախկին կառուցող երկրաւոր քաղաքի եղև եղբայրասպան ոք, զի զիւրն եղբայր զքաղաքացի յաւիտենական քաղաքին՝ զպանդխտեալն յերկրի աստ սպան՝ առ 'ի նախանձուէ յաղթեալ։ Վասն որոյ զարմանք ոչ են՝ թէ յետ յոլով ժամանակաց 'ի շինութեան այնր քաղաքի՝ որ հանդերձեալն էր լինել գլուխ երկրաւոր քաղաքիս՝ զորմէ խօսիմքն, և տիրել ազգաց բազմաց, եկաց այնմ առաջին օրինակին կամ սկզբնատպին նոյնասեռ պատկեր. քանզի և անդանօր՝ ըստ որում յիշատակէ զայդ եղեռն քերթող նոցա Ղուկիանոս, "Առաջին պարիսպք՝ եղբայրական արեամբ ոռոգեցան"։ Այսպիսաբար շինեցաւ Հռովմ 'ի սպանանել Հռոմուլոսի զՀռեմոս զեղբայր իւր, ըստ վկայելոյ պատմութեան. թէպէտ և երկոքին նոքա՝ երկրաւոր քաղաքի էին քաղաքացիք։ Երկաքանչիւրն խնդրէր զպարծանս հաստատելոյ պետութեան, այլ երկոցուն այնչափ ունել զպարծանս՝ որչափ միոյ միայնոյն՝ անմարթ էր։ Քանզի որ տիրելով պերճանալն կամէր, սակաւս տիրէր ապաքէն՝ եթէ նուաղէր իշխանութիւն նորա կենդանի իշխանակցաւն։ Արդ զի մին և եթ բովանդակ տիրապետեսցէ, բարձաւ ընկերն. և ապիրատութեամբն մեծացաւ 'ի չարիս՝ այն որ անչարութեամբ փոքր՝ այլ լաւագոյն լինէր։ Իսկ եղբարքն Կային և Հաբէլ ոչ ունէին երկոքեան զնմանակիր ցանկութիւն երկրաւորաց, և ոչ որ սպան զընկերն, այնու նախանձէր ընդ նա՝ զի փոքրկանայր իւրն տէրութիւն 'ի տիրել երկուցն 'ի միասին. ուր և ոչ իւիք տիրանալ խնդրէր Հաբէլ 'ի քաղաքին կառուցելոյ յեղօրէն. այլ 'ի վեր ել նախանձ

սատանայական՝ որով չարք յաչաղեն ընդ բարեկիրս, ոչ յայլ ինչ պատճառաց՝ բայց զի նոքա բարիք են, և ինքեանք չարք ։ Վասն զի ստացումն բարւոյն, կամ լաւ ևս՝ բարին ստացեալ ոչ իւիք նուազէ 'ի գալ կամ 'ի մնալ ժառանգակցին ․ այլ այնչափ ընդարձակագոյն ևս ժառանգէ զայն անհատ սէր ընկերակցացն, որչափ իցէ առաւել միաշնչութիւն ։ Ոչ ընաւ ստացող այնմ բարւոյ լինիցի՝ որ ոք չկամիցի ունել զայն հասարակորդ ․ և այնչափ ճոխագոյն զայն գտանիցէ, որչափ առաւել սիրել կարիցէ յայնմ զիւրն բաժանակից ։ Այն որ ընդ Հռեմոս և ընդ Հռոմուլոս զարթեաւ գրգիռ, յայտ առնէ՝ զիարդ յանձն իւր մաքառի քաղաքն երկրաւոր ․ իսկ որ ընդ Կային և ընդ Հաբէլ, զթշնամութիւն որ ընդ երկու քաղաքսն՝ այ և մարդկան՝ նշանակեաց ։ Ապա ուրեմն կռուին առ իրեարս չարք և չարք ․ կռուին դարձեալ յիրեարս բարիք և չարք ։ Իսկ բարիք՝ եթէ իցեն կատարեալք, կռուել առ իրեարս կարեն ոչ ընաւ ․ այլ զարգացեալք և չև կատարեալքն այնպէս իմն կարեն, զի իւրաքանչիւր այր բարի յայնմ մասնէ կռուիցի ընդ այլում, որով և ընդ անձինն, զի և 'ի մի մարդ "Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ„ ․ Գաղ․ Ե․ 17 ։ Վասն որոյ հոգեկան ցանկութիւն կարէ կռուել ընդ մարմնականի միւսոյն ․ կամ մարմնականն ցանկութիւն ընդ հոգեկանի միւսոյն, զոր օրինակ բարիք և չարք կռուին առ իրեարս ․ կամ նա և մարմնական ցանկութիւնք իսկ երկուց բարեաց չև ևս կատարելոց, զոր օրինակ չարք ընդ չարս կռուին, մինչև բժշկելոցն յայնցանէ առողջութիւն հասանիցէ 'ի կատարեալ յաղթութիւն ։

ԴԻՄԻՒ Ը.

Յաղագս խօթոտելոյ կամ ախտից զրպա՛ւ ի պատուհաս մեղացն կրեն նա և քաղաքացիք քաղաքին այլ ի նժգհական յայս կեանս, յորոց և բժշկին այլ դասանելովք։

ԽՕԹՈՒԹԻՒՆՆ այս է անհնազանդութիւնն այն՝ զորմէ Աստուածաբան՝ ի չորեքտասաներորդ գիրսն, պատիժ առաջոյ անհնազանդութեան ստուգի ոչ բնաւին է, այլ ախտ. վասն որոյ բազում կրօնեցիքն յառաջագիտեցան, և որք հաւատովք կեանն՝ ինժգհեցան յայսմիկ՝ հրամայի. «Ո՛ միմեանց բեռն բարձէք, և այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի» Գաղ. գ. 2, Պաւղոս դարձեալ ասէ. «Խրատեցէք զտուհանս, միխթարեցէք զկարձամիտս, պատսպարան լերուք տկարաց, երկայնամիտ լերուք առ ամենեսեան։ Ո՛ գոյշ լերուք, գուցէ որ չարի չար հատուցանիցէ» Ա. Թես. ե. 4. 5։ Կարձեալ յայլում վայրի. «Կրթեմ զանկարծ ըմբռնեցեալ որ ի ձէնջ լինիւ և իցէ յանցանս, դուք որ հոգևորդ էք՝ հաստատեցէք զայսպիսիսն հոգւով հեզութեամբ. զգոյշ լինիցէք անձանց, զի մի և դուք փորձիցիք» Գաղ. գ. 1։ Պաւղոս. «Զբեռս միմեանց տարէք և այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի» Գաղ. զ. 2։ Յայլ տեղի. «Ո՛ վերայ բարկութեան մի մտանէք» Եփես. դ. 26։ Յայլ տեղի. «Կրթեմ մեղեցէք քեզ հզօրացը քո, երթ յանդիմանեսցես զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք» Մատթ. ժե. 15։ Կարձեալ՝ ի մեղան՝ յորոց վտանգէ բազմաց գայթակղութիւն, ասէ առաքեալ. «Ոչ որ մեզանէնն առաջի ամենեցուն յանդիմանեսցէ, զի և այլքն երկիցեն» Ա. Տիմ. ե. 20։ Պատուիրակ ազգաւ բազում ինչ և մեծաւ ստիպաւ հրամայի յաղագս նեղելոյ միմեանց, զի պահեցեալ խաղաղութիւնն առանց որոյ ոչ ոք տեսանէ զտէր. Եբր. ժե. 14։ Որը կայ այն սպառնալիքն, զի ծառայինն որում մոռացաւն էին պարտիք բիւր քանքարացն, հրամայի հատուցանել զայն ողջի՝ սակս ոչ թողլոյ նորա ծառայակիցն զՀարիւր դահեկանն. և զայս տարացոյց՝ ի

մէջ բերեալ Աթէն՝ ոմն մերոյ յաւէլ ասէլ. «Զմեզ և հայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում ի սրտից ձերոց զյանցանս նոցա...» Ի՞նչ. ԺԸ. 35։ Աստ օրինակաւ բժշկին քաղաքացիք քաղաքին՝ այ պանդխտացեալքն յերկրի աստ, խաղաղութեն փափաքողք վերին հայրենեաց. և հոգին սուրբ ազդէ ի ներքուստ՝ զի օգտեսցեն դեղքն՝ որք արտաքոյ ի վերայ դնին։ Աչա թէ ոչ եթէ ած ինքնին ի գլխովքն կերպաձեւեալ իւրաստեղծ արարածով ոմանք ի տեսիլ մարդկեղէն, խօսիցի առ մարդոյ զգայարանս՝ կամ առ մարմնականսն, և կամ զորս ունիմք նմանակս այնց յանուրջս, բայց ոչ զմիտն վարեալ չարժիցէ ներքինն ընդ հօր, ոչ մի ինչ օգուտ գործիցի մարդոյ ի քարոզելոյ Աստուածութեն։ Իսկ զայս առնէ ած՝ որոշելով զանօթս բարկութեէ յանօթոց անտի ողորմութեէ՝ տեսանելոյ որ գաղտնածածուկ, բայց արդար, ինքեան միայնոյ ծանուցեալ։ Վասն զորս օգնելոյին սբանչելի և անյայտ եղանակաք, մեզայն բնակեցելոյ ի մարմնի մերում, որ և առաւել պատուհաս մեզաց է այժմ ըստ ասելոյ առաքելոյն, ոչ թագաւորելով ի մահկանացու մարմնիս առ ի հնազանդելոյ ցանկութեէց նորա, և ոչ զանդամս մեր պատրաստելով իբր զէն անիրաւութեէ, զաստնայ մարդ ի միտն ոչ հաձեալս ընդ չարն՝ այ առաքինորդելոյին. և ըստնոյն առաքինորդական միտս ունիցի այժմ վարիչ խաղաղական, մինչև ի ստանալ անդ զանթերի առաջութեէն և և զամահութեէ թագաւորեսցէ մարդ ազատ ի մեզաց յաւիտենական խաղաղութեէ։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս պատճառաց և յամառութեան չարեացն Կայենի, զոր ի չար մեաց անտի և ոչ իսկ բանն ոչ կասեցոյց։

Լ.ՈՒԱՆ սակայն նոյն իսկ՝ զոր ըստ կարի բացատրեցաք, խօսեցաւ ցայտ առ Կայէնն՝ որով օրհնակաւ ընդ յառաջասացեաց մարգոյն խօսեր զօրէնն ընտանւոյ՝ համապատշաճ կերպա- րանաւ ձևացեալ յիւրաքանչիւրն արարածոց, զինչ չահ եղև նմա . ոչ ապաքէն զիարհեցեալն ապիրատութիւն՝ ի սպա- նութիւն եղբօրն՝ ի գլուխ տարաւ նա և զինի ազգաբար բա- նին ցոյ ։ Վասնզի ընտրութիւն առնելով ցոյ պատարագաց երկոցունցն , յԱբելին հայեցեալ , և զկայենին արհա- մարհեալ , որ և յայտ է ընդ երևելի նշանի իրիք վկայուի ծանուցաւ , և զայն ատար ածի , զի Կայենի գործք չար էին , և եղբօրն բարիք , ատամնցաւ յոյժ Կայէն , և ե- րեսաք նորա անկան . զի այսպէս գրեալ է . “Չե՞ ասէ տէր ցնա ցԿայէն . ընդէր ատամնցար , կամ ընդէր խոնարհե- ցան անկան երեսք քո ։ Եթէ ապաքէն լաւ ուղիղ մատու- ցանես , և ուղիղ ոչ բաժանես , մեղար ։ Լուռ լեր , առ քեզ լինի դարձ նորա , և դու տիրեսցես նմա ...” Ծն . գ . 6 ։ Հայտ կրնամբանաբար առ Կայէն՝ քանզի ասացեալն , “Եթէ ապաքէն լաւ ուղիղ մատուցանես , և ուղիղ ոչ բաժա- նես՝ մեղար ... , ընդ աղօտ բերէ զվտան էին , բազմագիմի ասէ խմասա մեծութիւն նորա , ի կամել իւրաքանչիւրքն նորոյ զրոյց սրբոց բացայայտել զայն ըստ կանոնի հատա- ռոց ։ Վասնզի ուղիղ մատուցանի պատարագն , յորժամ ճշմարտին ցայ մատուցանի . որում միայնոյ պատարագել արժան է ։ Իսկ ոչ ուղիղ բաժանի , յորժամ ոչ ուղիղ ըն- տրութիւն լինի առիթացն , կամ ժամանակաց , կամ իբացն մատուցելոցդ , կամ մատուցողին , կամ որում մատուցանի՝ կամ որոց ի հաշտութեան բաշխի նուիրեալն . ուստի բա- ժանումն ատամնոյ զընտրութիւնն է իմանալ . ըստ որում

կամ ուր ոչն է պարտ՝ մատուցանի, կամ ոչ անդ՝ այլ յայլում տեղւոջ պարտ է, կամ յորժամ մատուցանի՝ երբ չէ պարտ, կամ ոչ յայնժամ՝ այլ յայլում ժամանակի պիտի. կամ յորժամ այն ինչ մատուցանի՝ որ ոչ ուրեք, ոչ երբեք նուիրելին էր. կամ յորժամ զընտիր ընտիրս իրացն այնոցիկ պահէ մարդ անձինն՝ քան զնուիրեալսն այ. կամ յորժամ մատուցելոյ իրին բաժանորդ լինի անսուրբն, և կամ ո ոք այլ՝ որում օրէն ոչ է:

Իսկ թէ որո՞վ իւիք յայսոցիկ անընդունելի եղև Կայէն այ, ոչ դիւրին է գտանել. բայց զի Յովհաննէս առաքեալ խօսելով զեղբարցս զայսցանէ՝ ասէ, "Ոչ որպէս Կայէնն 'ի չարէ անտի էր, և սպան զեղբայրն իւր, և յո՞ր սակս սպան զնա, զի իւր գործքն չար էին, և եղբօրն բարի", գոյ իմանալ այսու, թէ յայն սակս չիցէ հայեցեալ այ յընծայս նորա, զի չարաչար բաժանէր՝ տալով այ ինչ մի զիւր, իսկ անձին՝ զինքն: Զսոյն առնեն ամենեքին նոքա՝ որք ոչ այ կամացն զհետ երթեալք՝ այլ իւրեանցն, այս է՝ ոչ ուղիղ, այլ խոտորնակ սրտիւք քաղաքավարեալք, ընծայաբերք լինին այ զայն ինչ՝ որով համարին թէ հաճեսցի ձեռն տալ նոցա ոչ 'ի բժշկել զանարժան ցանկութիւնս, այլ 'ի կատարել: Եւ այս գործ է երկրաւոր քաղաքին, պաշտել զած կամ աստուածս յորոց օժանդակեալ թագաւորեսցէ յաղթութեամբք և երկրաւոր խաղաղութեամբ, ոչ 'ի սէր առաջնորդելոյ՝ այլ 'ի ցանկութեան տիրելոյ: Վասն զի բարեպաշտք վարեն զաշխարհս առ 'ի վայելել յած. և ընդ հակառակն՝ չարք առ 'ի վայելելոյ յաշխարհէ՝ կամին վարել զած. և այս այնոցիկ է՝ որք հաւատան թէ գոյ ած, կամ խնամարկէ զմարդկայինքս. քանզի են և կարի վատթարագոյնքն, որք և ոչ զայդ հաւատան: Արդ ծանուցեալ Կայենի թէ 'ի պատարագ եղբօրն՝ և ոչ յիւրն հայեցաւ ած, պարտ և արժան էր նմա զգաստանալ, և նմանող եղբօրն բարւոյ լինել, և ոչ եթէ ըմբոստանալ և յաչաղել ընդ նա: Բայց տրտմեցաւ, և երեսք իւր կործանեցան. զայդ մեղս առաւելապէս 'ի դէմս հարկանէր ած՝ զտրտմելն ընդ բարին այլոյ. և այն՝

ընդ եղբօրն . զի զայս ահա կշտամբողական հարցուածո-վըն ասէր . "Ընդէ՞ր տրտմեցար, կամ ընդէ՞ր խոնարհե-ցան անկան երեսք քո" . քանզի տեսանէր ա՟ծ զչարակ-նել նորա ընդ եղբայրն, և զնոյն յանդիմանէր : Զի առ մարդիկ՝ որոց թաքուն է սիրտ այլոց, յերկուանալի էր ապաքէն և անյայտ գլխովին՝ արդեօք տրտմութ՟ն այ-նուիկ զի՞ւր զչարութ՟ն 'ի միտ առնոյր՝ որով անհաճոյ գտաւ այ՟, թէ ընդ լաւութ՟ի եղբօրն ցաւագնէր՝ որ այ՟ հաճոյա-ցաւ, մինչև հայել ընդ նորա պատարագն : Այլ 'ի մէջ բերեալ այ՟ զպատճառն՝ ոյր վասն ընդունել ոչ կամեցաւ զնորայն մատուցումն, յայտ առնէ՝ թէ նմա պարտ էր զի ինքն առաւել իւրում անձին անհաճոյացի յիրաւի, քան թէ նմա եղբայրն յանիրաւի, ուր ինքն էր անարդար՝ յոչ ու-ղիղ բաժանելն, այս է՝ ոչ ուղիղ քաղաքավարելով, և ան-արժան ընդունելի լինելոյ ընծայից նորա . և մի՛ առաւել ևս անարդար լիցի, ատելով տարապարտուց զեղբայրն ար-դար :

Այլ սակայն ոչ թողեալ զնա այ՟ առանց պատուիրանին որ սուրբ և արդար և բարերար, ասէ . "Լուռ լեր, առ քեզ լիցի դարձ նորա, և դու տիրեսցես նմա" : Նմա տիրել ասէ, միթէ 'ի վերայ եղբօ՛րն . ոչ ընաւ . և ո՞ւմ ապա, բայց մե-ղացն : Քանզի ասացեալ թէ մեղար, անդէն ած 'ի վերայ . "Լուռ լեր, քեզ լիցի դարձ նորա, և դու տիրեսցես նմա" : Մարթ է ապաքէն այնպէս իմն իմանալ, թէ առ նոյն ինքն մարդն լիցի դարձ մեղացն, ոչ այլ ումեք՝ բայց իւր ինքեան պարտ գիտելով ընծայել զմեղանչելն : Զի այս իսկ է դեղ փրկաւէտ ապաշխարութ՟ե, և պատկանաւոր հայցումն նե-րողութ՟ե . մինչ զի յասելն, առ քեզ լիցի դարձ նորա, իբրև հրամայելով իմանայցի, և ոչ թէ գուշակելով : Քանզի յայնժամ տիրէ ոք մեղացն, յորժամ ոչ ինքեան տիրացու-ցանէ զայն 'ի չքմեղս լինելով, այլ զղջանալովն ընդ իւրև նուաճէ . ապա թէ ոչ՝ ծառայէ նմա իբրև իշխեցողի, եթէ ջատագով այնմ կանգնեսցի 'ի պատահելն : Այլ սակայն եթէ լինիցի մեղօք իմանալ աստ զմարմնաւոր ցանկութ՟ի, զորմէ առաքեալ ասէ, "Մարմին ցանկայ հակառակ հո-

գՀոյ ,, , Կ՝ըլ. Է. 17, և՝ի պատուզս այնր մարմնոյ յիշատա-
կէ նա և զապրահնութեաՀն, որով ապաքէն գրգռեաՀն էր Կայ-
ֆն, և՝ի սպանումն եղբօրն առաքանայր, ՚ի դէպ իմանալ
մարԹ է՝ առ քեզ եղիցի դարձնորա ,և դու տիրեսցես նմա,
այս է, ՚ի յուզիլ այնր մարմնական մասին՝ զոր մեզս կոչէ
առաքեալ յասել իւրում՝ “Եթէ եմ զործեմ զայն, այլ
քնակեալ յիս մեղքն ,, , Հ՚ը. Է. 13, զոր և խնաստասէրք
զայն մասն ոգւոյ Ձանալէն լինել ախտասոր , ոչ զիտեն
յինքն յանկուցանել, այլ որում միտքն ունին հրամայել, և
յանարժան գործոց զնա ՚ի բաց կացուցանել բանիւ, ՚ի
յուզիլ ասեմ մարմնական ցանկութեՀն առ ՚ի զանպատշաճ
Ձըս ինչ գործելոյ, եԹէ լռեսցէ և անասցէ առաքելոյն ա-
սելոյ “Մ՚ի պատրաստեք զանդամս ձեր զէն անիրաւութե՛
մեզաց ,, , Հ՚ը. Է. 17, այսու ՁՀ առ միտս լինի գարձ
նորա նուաՁեալ և յաղԹեալ, և նմա պարտեցեալնին տի-
բեսցէ բանն ։ Օ՚այս հրամայէ ՁՀ Կայենի ։ որ նախանձով
բացաւառեալ ընդ եղբայրն, փոխանակ նմանողնմին լինե-
լոյ՝ կորուսանել զնա ՚ի միջոյ ցանկայր ։ Մ՚ակ՝ լուռ լեր ։
արգել զՁեռն քո յասլիբառաԹէ ։ մի Թագաւորեսցեն
մեզք ՚ի մահկանացու մարմնիդ հնազանդել ցանկութե՛ց
նորա , և մի պատրաստեր զանդամս քո զէն անիրաւու-
թե՛ մեզաց ։ “Ո՚ւ քեզ լեցի գարձ նորա ,, ։ եԹէ ոչ ձեռն
տայցես Թուլացուցանելով, այլ լռելով սանձեացես ։ “Կ՚ւ
դու տիրեսցես նմա ,, ։ իբր զի յօրժամ ոչ Թոյլ տացի նմա
արտաքոյ արդեամբ ՚ի գործ ելանել, վարժեսցի չկըր-
տիլ և ներքոյ ընդ իշխանութե՛ առաջնորդական մտացն
կատեցողի զբաբեն ։ Այդեպիսի ինչ և յաղագս Կ՚ւայի ա-
սացաւ ՚ի նոյն յիշեալսն գիրս , յօրժամ յետ մեզացն ՚ի
Հարցափորձել ՚ըյ և ՚ի դատել ընկալան զդատաՀիճն՝
սատանայ յանձն օձին, իսկ կինն և այրն իւրեանց գե-
մըս ։ քանզի առ կինն ասէրով, “Կ՚ազմացուցանելով
բազմացուցից զտրամաԹե՛ քո և զՀեծուԹե՛ն, տրամա-
Թե՛ ծնցիս որդիս ,, , ած՝ ՚ի վերայ ։ “Կ՚ւ առ այր քո
դարձ քո , և Նա տիրեսցէ քեզ ,, ։ Որ ինչ առ Կայեն ա-
սացաւ յաղագս մեզացն, կամ զանասուոր ցանկութե՛ մար-

ինոյ, նոյն ասի աստանօր վասն կնոջն ու զաւակացն. յորում գոյ իմանալ՝ թէ այր՝ի տեսչութիւն կնոջն նմանել պարտի հոգւոյ վարողն զմարմին. ուստի ասէ առաքեալ. «Այր սիրէ զկին իւր, զանձն իւր սիրէ. զի ոչ ոք երբէք ատեաց զանձն իւր...» Ա.Կէս. Ե. 28. «Այնպէս այնոքիկ իրրև ունայատուկ բժշկելիք են, և ոչ իրր օտարոտիս դատապարտելիք. Այլ կայցէ զայս հրաման՝ այլ կալաւ իրրև ատունգանող. զի նախանձաբեկ ախտին զայրանալով՝ի նմա, սպան նենգաւ զեղբայրն։ Այսպիսի էր կառուցող երկրաւոր քաղաքին, Իսկ թէ զիարդ օրինակեաց նա և զՔրիստոս սպանողս «Ինչո՞ւ հոլովի մարդկային հօտից, զոր նախանձաբեր Հաբէլ անբան հօտիցն հովիւ, քանզի մարգարէական իմաստք են յայտաբանութիւնն, զանց առնեմ ասել առ տեղեաւս. և ինչ ինչ ևս յաղագս այսը, որպէս յիշեմ, խօսեցեալ է իմ ընդդէմ փաստոսի մանիքեցւոյ,

ԳԼՈՒԽ Ը.

Որչափ պատճառս կային՝ի սկզբան անդ ծննդոց մարդկան կատարել քաղաք։

Եւսի աստանօր արդարացուցանել՝ի դէպ համարիմ զպատմութիւնն, մի արդեօք չաւատալի լինիցի գիրն՝ յասել անդ թէ քաղաք չինեցաւ՝ի միոջէ մարդոյ, ՝ի ժամանակի յորում չորից արանց՝ և ոչ աւելի կարծէ լեալ՝ի վերայ երկրի, մանաւանդ թէ երից ևեթ՝ յետ սպանանելոյ Կայենի զեղբայրն. այս է՝ նահապարդոյն Հանուրց Հօրն, և Կայենի, և որդւոյ նորա Հնոքայ, յորոյ անուն կոչեցաւ քաղաքն։ Այլ որք միանգամ վարանիցին ընդ այդ, ոչ ուշ գնեն՝ թէ սրբազան մատենագիրն ոչ Հարկ համարեցաւ միահամուռ յիշատակել զանհնարն զմարդկին գործեալ՝ի ժամանակին, այլ զանմոռիկ միայն՝ որք՝ի ձահ էին իւրումն առաջարկութեանն։ Վասն զի առաջարկութեան էրնորա՝ ըստ ազդելոյ հոգւոյն սրբոյ, ընդ կարգաւորու-

թիւ ոմանց ծննդոց սերելոց 'ի միջէ մարդոյն գալ հասանել մինչև յԱբրահամ, և 'ի նորա զաւակէն առ ժողովուրդն այ̃ . յորոյ 'ի զատանիլն յայլոց ազգաց՝ նախանկար օրինակաւ Ճառէին 'ի նմա ամենայն հանդերձեալք հոգւով նախատեսեալք յաղագս քաղաքին՝ որոյ յաւիտեան է արքայութիւն, և յաղագս թագաւորի նորա և շինողի՝ որ է Քս̃ . և այս՝ առանց լռելոյ զմիւս ժողովոյ մարդկան, զոր քաղաք երկրաւոր ասեմք, որչափ ինչ յիշատակել զնոմանէ շատ էր, զի համեմատութբ̃ ներհականին առաւել ևս պայծառասցի քաղաքն այ̃ : Արդ քանզի ա̃ծային գիրն 'ի թուարկել անդ զամս կենաց մարդկանն՝ այնպէս ի̃մ կնքէ ասել՝ զորմէ խօսէրն, թէ "Եւ ծնաւ ուստերս և դստերս, և եղեն ամ̃ աւուրք զորս եկեաց, ամք այսչափ և մեռաւ", միթէ սակս ոչ յանուանէ դնելոյն զուստերս և զդստերս՝ չիցէ՞ պարտ կարծել թէ ընդ այնքան յոլովութիւ ամացն զոր յայնժամ ապրէին 'ի նախնումն դարու աշխարհիս, ծնեալ իցեն մարդիկ յոքնաթիւք, առ 'ի կարող լինելոյ ժողովս նոցա կանգնել քաղաքս յոլովագոյնս : Բայց սակայն այ̃ տնտեսութեն՝ որոյ ազդմամբ գրեցան այսոքիկ, 'ի դէպ էր կարգել յառաջագոյն և որոշել զերկոսին միաբանութիւն ըստ այլ և այլ ծննդոց . ո̃մ զի ծնունդք որ մարդկան են՝ ըստ մարդոյ կենցաղելոյ, և որ որդւոց այ̃՝ կենցաղելոյն ըստ այ̃՝ որոշ առ 'ի միմեանց շարակարգեսցին մինչև 'ի ջրհեղեղ . ուրանօր զրուցեալ պատմի երկոցունց ընկերութեանցն և որոշումն և լծորդութիւն : Որոշումն, զի երկուցն ծնունդք ուրոյն յիշատակին, մին՝ եղբայրասպանն Կայենի, և միւս այնր որ Սէթն անուանեցաւ, ծնեալ և սա յԱդամայ փոխանակ սպանելոյն յեղբօրէն : Իսկ լծորդութիւն, զի 'ի վատթարանալ և բարեացն՝ եղև ամենեցուն նոցա ջնջիլ հեղեղաւ, բաց 'ի միջէ արդարոյ՝ Նոյ անուանելոյ . և 'ի լծակցէ նորա, և յերից որդւոցն և 'ի հարսանցն . զի ութ ոգւք միայն գտին շնորհս ապրել տապանաւ 'ի համայնաջինջ կորստենէ մահկանացուաց :

Ապա ուրեմն որ գրեցաւ, "Եմուտ Կայէն առ կին իւր, և յղացաւ և ծնաւ զԵնովք, և շինէր քաղաք, և դնէր ա-

նուն քաղաքին յանուն որդւոյ իւրոյ Ենովքայ ,, , ոչ տայ կարծել թէ առաջին որդի զսա ծնեալ իցէ ․ զի ոչ է զայդ յառաջ բերել յասելոյ անտի՝ եմուտ առ կին իւր , որպէս թէ այն առաջին անգամ մերձեցեալ իցէ առ նա ։ Վասն զի դոյն այդ և վասն ամենեցուն հօր Ադամայ ասացաւ , ոչ միայն յորժամ զԿայէն յղացաւ՝ որ անդրանիկըն կարծեալ է , այլ և յետ այնր ասէ նոյն գիր ․ “Եմուտ Ադամ առ Եւա կին իւր , և յղացաւ և ծնաւ որդի , և անուանեաց զանուն նորա Սէթ ,, ։ Ուստի իմանալ ունիմք , թէ այնպէս սովոր են խօսել գիրք , թէ և ոչ ամենայն ուրեք , յորժամ ընթեռնու ծնունդս եղեալ մարդկան , և ոչ եթէ միշտ յառաջին մերձաւորիլ լծակցացն ։ Եւ ոչ առ 'ի կարծելոյ զԵնովք անդրանիկ լինել հօրն՝ անվրէպ ապացոյց է այն , զի յանուն նորա կոչեցաւ քաղաքն ․ քանզի ոչ տարադէպ ինչ է , թէ ունելով նորա զայլ որդիս՝ սակս իրիք պատճառի զնա առաւել քան զայլսն սիրէր ։ Զի և Յուդաս ոչ էր անդրանիկ , այլ 'ի նմանէ անուանեցաւ երկիր Յուդայ , և յուդայեանք ։ Այլ սակայն թէ յառաջնածին ևս որդի լեալ էր նա շինողի քաղաքին , ոչ այնու համարել արժան է՝ թէ անդէն 'ի ծնանելն եդաւ նորայն անուն շինեցելոյ քաղաքին ․ զի և անմարթ իսկ էր միով մարդով քաղաք սահմանել ․ որ չէ այլ ինչ՝ բայց բազմուն մարդոց յօդիւ իմն ընկերութե̃ շաղկապեալ ։ Այլ յորժամ տուն նորա այնչափ բազմամարդացաւ , մինչև ունել զչափ ժողովուրդ կոչման , յայնժամ ապաքէն հնար էր և քաղաք կանգնել , և յանուն անդրանկին վերակոչել զքաղաքն շինեալ ։ Քանզի այնչափ էր երկայնակեցութ̃ի այնր ժամանակի որերոյն , մինչ զի 'ի յիշատակելոցն անտանօր՝ որոց ամք կենաց կան նշանակեալ , որ առաւել սակաւակեացն եղև յառաջ քան զջրհեղեղն՝ ժամանեաց յամս եօթնհարիւր յիսուն և երիս ։ Եւ ո՞ ապա երկբայեսցի՝ թէ ընդ ժամանակ ամաց միոյ առն հնար էր այնչափ բազմանալ մարդկութե̃ս , մինչև բաւական լինելոյ կանգնել ոչ զմի , այլ բազում քաղաքս ։ Զայդ ունիմք դիւրաւ 'ի միտ առնուլ այնու՝ զի 'ի միջէ յԱբրահամէ իբր յամս

չորեքհարիւր այնչափ 'ի բազմութիւն սերեցաւ ազգն եբրայական, մինչ զի յելանել այնր ժողովրդեան յԵգիպտոսէ՝ վեցհարիւր հազարս պատմեն գիրք մարտիկ երիտասարդաց, թող զազգ եդոմայեցւոց՝ որ ոչ 'ի համարի էր ժողովրդեանն Իսրայէլի, զոր ծնաւ եղբայր նորա Եսաւ թոռն Աբրահամու, թող և զայլ ազգս ծնեալս 'ի սերմանէ Աբրահամու, բայց ոչ 'ի Սառայէ սերեալս ։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս երկայնակեցութեան մարդկան նախ քան զջրհեղեղն, և յաղագս վեթխարի ձևոյ մարդկային մարմնոց ։

ՄԱՍՆ այսորիկ ոչ ոք 'ի խոհական դատողաց ունի յերկուանալ, թէ կարող էր Կային ոչ միայն զուգնաքեայ ինչ քաղաք կառուցանել, այլ զմեծ և զընդարձակ, երբ այնչափ բազմաժամանակեայ յերկարէին կեանք մարդկան ։ Բայց եթէ զուցէ յանհաւատից ոք խնդիր 'ի մէջ արկանիցէ 'ի վերայ յոլովութեան ամացն՝ զոր յայնժամ ապրէին մարդիկն ըստ ասելոյ մատենագրութեանց մերոց, և անհաւանելի դնիցէ զայդ. քանզի անհաւան լինին զոյնպէս ընդ մեծութիւն մարմնոց առաւելեալ յոյժ յայնժամ, քան այժմս ։ Բայց ականաւոր նոցայն քերդող Վիրգիլիոս ասէ՝ թէ զվէմ անարի կանգնեալ 'ի սահման անդաստանաց այր ոմն ուժեղակ այնց ժամանակաց 'ի մարտնչել իւրում խլեաց, վազեաց 'ի վերայ, արձակեաց 'ի թշնամի անդր, և դարձեալ եդ 'ի տեղին.

“Զոր քաջընտիրք երկոտասան
Հողածնելոց այժմու մարդկան
Տանել հազիւ էին զիպան„. Անէական ԺԲ ։

Յայտ արարեալ այսու՝ թէ յայնմ ժամանակի մարմինս ահագինս արտածէր երկիր. քանիօն ապա և 'ի դեռահաւակ ժամանակս աշխարհի՝ մինչ չև եղեալ անհնարինն

այն և հռչակելին ջրհեղեղ։ Ասյց յաղագս մարմնոյն վիճախօսելն շատ իսկ յանդիմանեն զանհաւանս՝ զե-լեզմանքն բացեալք ՚ի հնութէ ժամանակի, կամ ՚ի բռնութէ զեռոց, կամ ըստ սիակսէս դիպուածոց, յորս երևեցան կամ ՚ի գուբս եկին ոսկերք մեռելոց յաղթք քան զկարծել։ Ետուն ես ինքեանք ոչ միայնակ, այլ ո-մանք և ընդ իս, ՚ի ծովեզերին Աւտիկեայ զատանն ինչ ծամել մարդոյ, որոյ այնչափ էր մեծութէն, զի եթէ մանր կոտորէր ՚ի չափ մերոյ ատամանց, հարիւրեակ մի շինել մարթի էր։ այլ զայն կարծեմ սակայն ուրուք լինել։ Կանդի թէ և ամենեցունն մարմինք այնը ժամանակի յաղթանդամք քան զմերն էին, սակայն առ այլովքն մեծամարմինս և ա-ռաւելագոյնս սկայք։ որպէս և յայլ զինի ժամանակս, և առ մերովն իսկ թէպէտ և սակաւք, բայց ոչ իսպառ պակա-սեցին այնպիսիքն՝ որք զշափ այլոց մեծագոյն անցանէին։ Պղինիոս Սեկունդոս այլ բազմահմտեան վկայէ, թէ ըստ յառաջելոյ արշաւի՝ արտադրել բնութիւն մարդ-մինս փոքրագանակ։ և յուշ առնէ՝ թէ Հոմերոս ևս առեալ յիւրում տաղն քանքարատաց վասն այսր, ոչ իբր քերթողական ինչ ստեղծուածս զայդ հնդկանելով, այլ ՚ի հաւատարմութէն պատմութէնն յառաջ բերելով։ իբր մատենագրող հրաշալեաց բնութէ։ Ասյց արդ ըստ ո-րում ասացի, զվաղեմեայ մարմնոյն վիճախօսութէն՝ ա-հա կմախքն յոլովակի յայտ եղեալք, քանզի երկարատեւք են, ցուցանեն զնոսի գարուց բազմաց։ Ոակ զազմաւո-րութէ ամաց անցուիւբ մարդոյ առ այնու ժամանակօք՝ ոչ է մարթ արդարեւ նոյնպիսի հաւատարեօք այժմ՚ի փորձ մատուցանել։ բայց և ոչ վասն այդր թերամտել արժան է ընդ սրբազան պատմութէնն։ և այնչափ լրբութէն մեծ է անհաւատանալ ընդ նորա պատմելոյն, որչափ զի տեսա-նեմք Հնդիսի ՚ի գլուխ երեալ նախապատմէ լոյն ՚ի նմա-նէ։ Սակայն ասէ զարձեալ նա ինքն Պղինիոս, թէ գոյ տակաւին ազգ՝ յորում երկերիւրեամեան կեանս է տե-սանել։ ապա եթէ երկայնակեցութէնէ առ մեզ անտեղոյ՝ կարծի գտանիլ և այսօր յայլ անծանօթ մեզ տեղիս, ըն-

դէր չհաւանիցիմք գտանիլ և յայլ ժամանակս, եթէ հաւատալի է թէ ուրեք գտանիցի ինչ՝ որ 'ի սահմանս մեր ոչ գոյ. ապա չէ անհաւատալի այն՝ թէ եղև երբեմն՝ որ այժմ ոչ է։

ԳԼՈՒԽ Ժ.

Ցաղագս տարբերութեան թուոյ ամաց ընդ եբրայական մատեանն՝ և ընդ եօթանասնիցն։

Յաղագս այսորիկ թէպէտ և գոյ տեսանել ընդ եբրայականսն մատեանս և ընդ մերսն (որ 'ի հին լատինն ըստ եօթանասնից) զթուոյ ամաց այլազանութիւն ինչ, զորոյ անգիտանամ զպատճառն, բայց չէ այնչափ զի և զերկայնակեցութեան մարդկանն անմիաբանս խօսիցին։ Քանզի առաջին մարդն Ադամ մինչ չև ծնեալ էր զորդին զանուանեալն Սէթ, ասի 'ի մեր գիրս կեցեալ ամս երկերիւր և երեսուն, իսկ յեբրայականսն դնի հարիւր և երեսուն. բայց յետ ծնանելոյն զՍէթ՝ ամս եօթնհարիւր կեցեալ ընթեռնուն մերքս, իսկ եբրայականք՝ ութհարիւր. և այսպէս յերկոսին զոյգ գայ գումար բովանդակին։ Յետ այսր ընդ իւրաքանչիւր ազգ՝ մինչ չև յիշատակեալ զզաւակն, վասն հօր նորա գտանեմք յեբրայականսն հարիւրիւ չափ պակաս կեցեալ. իսկ յետ ծնանելոյն՝ վասն նորին հօր հարիւր ամք պակաս դնին 'ի մերսն՝ քան յեբրայականս. այսու օրինակաւ յերկուց կողմանց զուգաբան է լրումն թուոյն։ Ի վեցերորդ ազգին չիք անմիաբանութիւն յերկաքանչիւր մատեանս։ Իսկ յեօթներորդումն՝ ուր վասն Ենովքայ պատմի՝ ծնեալ, և ոչ մեռեալ, այլ հաճոյ գտեալ Այ և փոխադրեալ, տեսանի անմիաբանութիւնն՝ որ յանցեալ հինգ ազգս, այս է՝ հարիւր ամաց նախ քան զծնանել յիշատակեցելոյ որդւոյն. որով 'ի գումարի անդ նոյնպէս զուգաթիւ են. քանզի եկեաց յառաջ քան զփոխիլ իւր ամս երեքհարիւր վաթ-

սուն և հինգ ըստ երկաքանչիւր գրոց ։ Յաղագն ութերորդ կայ ինչ այլազանութիւն, բայց դիւրին և աննման այլոցն ․ քանզի Մաթուսաղա՝ զոր Ենովքն ծնաւ, նախ քան զծնանելն զայն որ 'ի կարգին՝ ըստ եբրայեցւոցն ոչ հարիւրիւ պակաս կեցեալ ասի, այլ քսանիւ չափ աւելի ․ զոր 'ի մերումն գտանեմք յաւելեալ յետ ծնանելոյն զնա ․ և այսպէս 'ի մի ժողովի գումար ամբողջ թուոյն յերկաքանչիւրն ։ Իններորդում ազգի ևեթ, այս է՝ յամին Ղամեքայ որդւոյ Մաթուսաղայի՝ և հօր Նոյի՝ օտարանայ ամբողջ գումարումն, այլ ոչ բաղումխիք ․ քանզի յեբրայականսն քսան և չորս ամս առաւել կեցեալ գտանի՝ քան 'ի մեր մատեանս ․ զի մինչ չև ծնեալ զորդի զանուանեալն՝ Նոյ, վեց ամ պակաս ունին եբրայականքն քան զմերս ․ իսկ յետ ծնանելոյ զնա՝ ամք երեսուն աւելի են 'ի նոսա՝ քան 'ի մերումն ․ յորոց 'ի բաց հանեալ զվեց, մնան քսան և չորք՝ որպէս ասացաւ ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս ամաց Մաթուսաղայի՝ որ թուին անցանել չորեքտասան ամօք քան զջրհեղեղն ։

ԻՍԿ յանմիաբանութէ աստի ընդ եբրայական մատեանսըն և ընդ մերումն՝ ծագի հռչակելին այն խնդիր, յորում հաշուի այլ ևս ամս չորեքտասան կեցեալ Մաթուսաղայի յետ ջրհեղեղին ․ ուր գիրն յայտ առնէ՝ յամենեցունց անտի եղելոց յայնժամ 'ի վերայ երկրի՝ ութից միայն ոգւոց ապրեալ տապանաւն 'ի հարուածոյ ջրհեղեղին ․ յորս ոչ գտաւ Մաթուսաղա ։ Քանզի ըստ մերոց մատենից՝ Մաթուսաղա մինչ չև ծնեալ զկոչեցեալն Ղամեք՝ եկեաց ամս հարիւր վաթսուն և եօթն ․ ապա Ղամեք՝ մինչ չև ծնեալ էր նորա զՆոյ, եկեաց ամս հարիւր ութսուն և ութ ․ որ միանգամայն գումարին երեք-

հարիւր յիսուն և հինգ ամք․ յայսոսիկ յաւելեալ զվեց-
հարիւր ամս Նոյի յորում ժամանակի եղև ջրհեղեղն,
լինին ընդ ամենայն ամք իննհարիւր յիսուն և հինգ՝ 'ի
ծննդենէն Մաթուսաղայի մինչև ցամ ջրհեղեղին․ իսկ ա-
մենայն ամք կենաց Մաթուսաղայի համարին իննհարիւր
վաթսուն և ինն․ քանզի կեցեալ նորա ամս հարիւր վաթ-
սուն և եօթն, և ծնեալ որդի Ղամէք անուն, յետ
ծնանելոյ զնա եկեաց ամս ութհարիւր և երկուս ընդ ա-
մենայն՝ որպէս ասացի, արարեալ ամս իննհարիւր վաթ-
սուն և ինն․ յորոց 'ի բաց առեալ զիննհարիւր յիսուն և
հինգ 'ի ծննդենէ Մաթուսաղայի մինչ 'ի ջրհեղեղ, յա-
ւելուն ամք չորեքտասան, յորս կենդանի լեալ կարծի
յետ ջրհեղեղին։ Վասն այսր բանի համարին ոմանք՝ թէ
կեցեալ իցէ նորա ոչ 'ի վերայ երկրի, ուր յայտ է թէ հա-
մայնաջինջ եղև ամենայն մարմին՝ որոց բնութի ոչ է ջրա-
սուն, այլ ընդ հօր իւրում Ենովքայ՝ որ փոխադրեալն էր՝
եկաց առ ժամանակ մի մինչև 'ի նուաղել ջրհեղեղին։
Քանզի ոչ յանձն առնուն թերի կացուցանել զհաւատար-
մութի մատենիցն՝ որոց վկայութի մեծարոյ է 'ի մէջ եկեղեցւոյ,
առաւել հրէականացն տալով խոտորել 'ի հաւատոյն՝
քան մերոցս մատենից։ Զի և հաւանին իսկ ոչ՝ թէ թարգ-
մանչաց յաւէտ վրիպակ լեալ իցէ, քան եթէ սուտ ինչ լի-
նել յեբրայականն, յորմէ 'ի մերս յունականաւն փոխա-
դրեցաւ գիրն սրբազան։ Այլ և չէ ասեն հաւատալի՝ թէ
թարգմանք եօթանասուն 'ի միում ժամանակի միով մտօք
պարապեալք 'ի թարգմանութի սխալեալ ինչ իցեն, կամ
ստել կամեցեալք առանց միոյ իրիք օգտի։ Այլ Հրեայք՝
քանզի նախանձաբեկք են ընդ մեզ՝ յայն զի օրէնք և
մարգարէք 'ի մեր ձեռս անցին թարգմանութք, փոփա-
խեալ իցեն ինչ ինչ յիւրեանց մատեանսն՝ առ 'ի զմերոցն
զօրութի նուաղեցուցանել։ Զայս կարծիք կամ զկաս-
կած կալցի իւրաքանչիւր ոք որպէս և ախորժէ․ բայց հա-
ւաստին բան այն է՝ թէ ոչ եկեաց Մաթուսաղա զկնի
ջրհեղեղին, այլ 'ի նմին տարւոջ վախճանեցաւ՝ եթէ
արդար իցէ գրեալն յեբրայական մատեանս յաղագս

թուոյ ամսոյն։ Իսկ որ ինն են կարծիք յաղագս եօթանասնից թարգմանչաց, յիւրում տեղւոջ ասացի պատասխանի, յորժամ՝ ի սեառն յայնոցիկոյ հասանիցեմք յայն ժամանակս՝ յիշատակել որչափ պիտոյ առաջիկայ գործոցս պահանջիցեն։ Վասն այժմու խնդրոյս մեր շատ է այն, զի ըստ երկաքանչիւր ևս մատենից այնչափ երկայնասցեաք լինելոյ մարդիկ այնր առաջին դարուս, մինչ զի յաւուրս միոյ այնմ նախկին ծնեցելոյն յերկուց անտի՝ ողջ միայն բնակիչն յերկրի՝ հնար էր բարգաւաճել մարդկութեան ի չափ կառուցանելոյ զքաղաք։

ԳԻՒՂԻՒ ԺԲ

Որ կարծիս այնոցիկ՝ որոց անհատանելի թուի երկայնակեցութեն գրեալ յաղագս մարդկան նախնի ժամանակաց։

Վասն չի ոչ արժան է անսալ քննու ոմանց՝ որք կարծելոյն թէ այլազգաբար հաշիւ լինէր տարեաց ընդ այն ժամանակս, իբր այնչափ կարճագոյնս համարել, մինչև միոյ տարւոյս մեր՝ առ նոսա լինել տասն, ուստի ասեն՝ ի լսել կամ լընթերցուլ անդ՝ թէ այն որ կեցեալ էրն ամս ինն հարիւր, իսմանալ պարտ է՝ ինամսուն։ զի նոցայն տասն ամ՝ մի ամ է մեզ, և մեր տասն՝ առ նոսա հարիւր էր։ Վասն որոյ ըստ նոցա կարծեաց Ադամքսան և երից այլոց էր՝ ի ծնանիլն զՍէթ, և Սէթայ էին ամք քսան և ամիսք վեց՝ յորժամ ծնաւ ի նմանէ Ենովս. զորս գիրն ասէ՝ երկերիւր և հինգ ամ. զի այդպիսի կարծեաք վարեաքն՝ զորոց խօսիմք, համարին ինն թէ զմի ամ որպիսի մեք ունիմք, առաջինք ի տասն հատանէին, զմասն իւրաքանչիւր կոչելով ամ. և մի յայնց մասանց ունի զվեցեակ քառակուսի. իբրև զի ած ի վեց աւուրս կատարեաց զգործս իւր, զի յեօթներորդումն հանգիցէ. զորմէ ըստ խմում կարի չառաւելի ի միտասանհերորդ գիրսն։

Լոկ վեցկոս վեց՝ որ առնէ քառակուսի վեցեակ, լինին աւուրք երեսուն և վեց, և այսք տասնիցս բազմապատ-
կեալք՝ գումարին երեքհարիւր վաթսուն, այն ևն եր-
կոտասան ամիսք լուսնական։ Այլ զի սակս ծնացելոց
Հնգից աւուրց՝ որովք գլխաւորի ամն արեգակնային, և
վասն չորիւր մասին աւուր՝ որ չորիցս կրկնեալ, ի նահանջ
ամին յաւելցի զմի օր, առաջինքն դնեմք ի վերայ զա-
ւուրսն՝ ի հռոմայեցւոց նահանջ ասացեալս, առ՝ ի
զոյգ բերելոյ զթուաբերութիւն ամացն։ Այսրիկ վասն ըստ
այսմ սակի՛նս և Հռոմի՛ դնեմք Ավեթայ՝ ինն և տասնեակ
եր՝ ի ծնանել որդւոյ նորա Այշխանայ։ Լոկ գիրն ասէ՝
Հարիւր և ինն տուն։ Ճշմարիտ այնր յամենայն ծնունդս՝ յորս
ամք մարդկան յիշատակին որ յառաջ քան զՔրիստոսէ,
ոչ գոյ ասացեալ գոգոյս և ոչ զմիոյ ումեքէ՝ ի մեր գիրս,
թէ՝ ի ծնանելն զորդի՝ հարիւրեւմեան լեալ իցէ և կամ
պակաս կամ թէ հարիւր և քսանմեկնի, և փորք ինչ
աւելի և։ Այլ որք սակաւակեացս ասին լեալ՝ ի ծնանելն,
ունելին ամն հարիւր վաթսուն, և բազմագոյն և։ Վասն
զի, ասեն, ոչ որ տասնամեայ հասակաւ զաւակագործել
կարող է։ որ յառաջնոց մարդոցն հարիւրեակ ամաց լինէր
ասացեալ։ բայց՝ ի վերջասանամեայ հասակի գոյ արուե-
թէ լափահաս՝ բաւական՝ ի զաւակասերութիւն, զոր յայն
ժամանակն ասէին հարիւր և վաթսուն ամ։ Այս զի մի
անհաւատ ինչ Թուիցի՝ այլազգաբար հաշուել զտարի
ընդ այն ժամանակս, յառաջ բերեն զազգմոյ վիպագրացս
յիշատակեալն, թէ չորից ամաց էր եգիպտացւոցն ամ,
պարսպացուցն վեցամեայ, և լալիմեացն՝ յերբեմնասան
ամաց։ Պլինիոս Վերունդոս թէպէտ և յիշատակէ թէ
կայ զոյգ՝ ի գիրս, առն միոջ կեցեալ ամս հարիւր յի-
սուն և երկու, և այլում տասն և աւելի, այլոց՝ երկերիւր
ամս ձգեալ զկեանս, ոմանց երեքհարիւր, այլոց հինգ-
հարիւր, այլոց վեցհարիւր, և ոմանց յոլովհարիւրն և
բաւեալ, այլ զայս ամենայն համարի նա յառաջ եկեալ
յանտեղեկութիւն ժամանակաց։ Այանզի ասէ. ոմանք
զամաւն մի ամ թուէին, և զմիւսն՝ այլ միւս ամ. և ո-

մանք՝ ընդ չորս յեղանակս, որպէս արկադացիք, երեք-ամսեայ հաշուելով զամս։ Յաւելու Պլինիոս, թէ եգիպտացիք զորոց ասացաք փոքր ամ վարել չորեքամսեայ, երբեմն 'ի կատարմանէ լուսնոյ չափէին զամս. սորին վասն պատմի, ասէ, առ նոսա կեալ հազարամեայ ժամանակս։

Այսոքիւք իբր հաւանական փաստիւք առ 'ի ոչ տկարացուցանելոյ զհաւատարմութիւն սրբազան պատմութեանս, այլ ջանացեալք հաստատել՝ զի մի անհաւատալի լինիցի որ յաղագս առաջնոցն պատմեալ երկայնակեցութիւն, հաւանեցան ոմանք յանձինս, և համարին իսկ ոչ վայրապար հաւանեալ, թէ փոքր միջոց ժամանակի տարի կոչէր յայնժամ, որով նոցայն տասն ամ՝ մեզ մի ամ լինի, և մեր տասն՝ առ նոսա հարիւր։ Սակայն ամենայայտ հաւաստեօք սուտ ամենևին ցուցանի բանդ այդ. զոր մինչ չև արարեալ, ասել 'ի դէպ վարկանիմ զայն ինչ՝ որ հաւանելի կարէ առնել զայդ կասկած։ Արդ էր առաջին յեբրայական մատենիցն յանդիմանել և հերքել զայդ ասացուած, ուր Ադամ 'ի ծնանելն զերրորդ որդին՝ ոչ եթէ երկերիւր և երեսուն ամաց ասի լեալ, այլ հարիւր երեսնից. և եթէ այս լինէր երեքտասան ամ մեր, անշուշտ ապա 'ի ծնանելն զառաջին որդի մետասանամեայ լինէր, կամ փոքր ինչ աւելի։ Իսկ ո՞ ոք յայնքան հասակի զաւակագործել կարողանայցէ ըստ սովորական և մեզ ծանօթագոյն օրինաց բնութեան։ Բայց թողցուք զայս. գուցէ արդեօք յորժամ ստեղծաւն Ադամ, բաւական էր 'ի դոյն. քանզի ոչ այնպէս փոքրահասակ արարեալ նա իբրև զմեր տղայս՝ կարծելի է։ Այլ սակայն որդի նորա 'ի ծնանելն զԵնովս՝ ոչ երկերիւր և հինգ ամաց էր՝ ըստ մերում ընթերցուածոյ, այլ հարիւր և հնգից. ուստի ըստ դոցա չև ևս ունէր զմետասան ամ հասակի։ Զի՞նչ և զԿայնանայ որդւոյ նորա ասացից, որ առ մեզ հարիւր և եօթանասուն ամաց գրի, այլ յեբրայականն ընթեռնումք եօթանասնամեայ եղեալ 'ի ծնանելն զՄաղաղայէլ. և ո՞ եօթնամեայ ոք ծնող լինիցի, եթէ առ այնու ժամանակաւ եօթանասուն ասացեալ ամք՝ եօթն միայն էին։

ԳԼՈՒԽ ԽԳ

Արդեօք հաշուի ամաց եբրայեցւոցն վկայութեան անսալ պարտ իցէ առաւել՝ քան եօթանասնից թարգմանչաց ։

ԱՅԼ յասել իմում զայս, անդէն 'ի դէմս բերցի՝ խաբէութիւն Հրէից լինել յայդմ, ըստ որում վերագոյն ասացաւ. վասն զի անմարթ էր եօթանասուն թարգմանչաց՝ արանց բարեհամբաւելոց խարդախել ինչ ։ Եթէ խնդիր արկից աստանօր, ո՞ր յերկուցս արժանահաւատ ևս իցէ, միթէ ազգի՛ն հրէականի սփիւռ տարածեցելոյ՝ քան դնել 'ի մի խորհուրդ առ 'ի գրելոյ զայն ստութիւն, և ուր այլոց չտան իշխանութիւն՝ յինքեանց բառնալ զճշմարտութի՛ն, թէ եօթանասուն արանց՝ որ և ինքեանք հրեայ էին 'ի մի վայր եկելոց ըստ հրաւիրելոյ Պտղոմեայ եգիպտացւոցն արքայի 'ի սոյն գործ, թաքուցանել յօտարածին ազգաց զճշմարտութի՛ն, և միաբան խորհրդով շարժիլ 'ի դոյն. ո՞ չտեսանէ ապաքէն՝ ո՛ր կողմն առաւել 'ի հաւանութիւն ձգիցէ ։ Սակայն քաւ լիցի առն խոհականի հաւանել, թէ կամ Հրէից նա և կարի թիւրելոց և ապիրատից՝ այնչափ ինչ առնել կարացեալ իցէ 'ի մատեանս յօքնաթիւս և ընդ ամենայն կողմն սփռեալս, և կամ եօթանասնից արանց ականաւորաց համախորհուրդ եղեալ առ 'ի զճշմարտութիւն քօղարկելոյ յայլասեռից ։ Սորին վասն հաւանելի ևս ասիցէ ոք, թէ իբրև զառաջինն սկիզբն եղև գաղափարել 'ի մատենադարանէ անտի Պտղոմեայ, այնպիսի ինչ փոփոխումն սպրդեալ իցէ 'ի մատենի անդ նախկին գաղափարելոյ, և յայնմանէ ապա յայլս տարածեալ. ուր զի և գրագրի վրիպակ ոչ անսովոր ինչ է ։ Եւ ընդ այս ոչ անպատճառ ունիմք կասկածել 'ի խնդիրն որ յաղագս կենաց Մաթուսաղայի, և 'ի միւսումն՝ յորում առաւելու գումարն քսան և չորիւք ամօք ։ Իսկ յայնս յորս միօրինակ պահի նման վրիպումն, իբրև զի չև ևս ծնելոյ որդւոյն անուա-

նելոյ 'ի կարգին՝ ուրեք առաւելուն ամք հարիւր, և ուրեք պակասին, և յետ ծնանելոյն՝ ուր պակասէինն, առաւելուն, և ուր առաւելուինն՝ պակասին, որով զուգորդելանէ գումարն. որպիսի է տեսանել յառաջին ծնունդն, յերկրորդն, յերրորդն, 'ի չորրորդ, 'ի հինգերորդ և յեօթներորդ, թուի թէ սխալումն անդեալ յամառեալ կայ, թէ այսպէս ասել օրէն իցէ. և ոչ դիպուածոյ իրք թուին՝ այլ կամակարուց։

Աստ այսօրիկ զթուոցն այլևայլութի 'ի յոյն և 'ի լատին մատեանսն երևեալ օտար յեբրայականացն, ուր ուրեք չիք այս զոյգ հաւասարուի հարիւրեակ ամացն նախ յաւելլով՝ և ապա 'ի բաց հանելով 'ի բազում ծնունդս, զայդ ասեմ չէ պարտ ընծայել՝ ոչ Հրէիցն խարդախութե, և ոչ հոգողութե կամ խորհրդոյ եօթանասուն թարգմանչաց, այլ սխալանաց գրագրին՝ որ զառաջինն գաղափարել ձեռն արկ զմատեանն 'ի գրանոցէ նախայիշատակեալ թագաւորին։ Զանզի և զարդիս՝ ուրանօր թուականութիւն ոչ նպաստէ ինչ առ 'ի հեշտընկալ առնելոյ զիմաստսն, կամ չերևի ուսանելոյն շահ, անհոգութիւն է 'ի գաղափարել, և առաւել ևս յուղղագրել։ Զի ո՞ ոք պարտ վարկանիցի գիտել, քանի հազարս արանց լեալ յանցնիւր ցեղ իսրայէլեան. որ չհամարի առ մի ինչ յօգուտ. կամ քանիք այնոքիկ իցեն՝ որք այնմ օգտի խելամուտք լինիցին։ Իսկ անտանօր՝ ուր 'ի բազում չարակարգեալ ծնունդս է զի յաւելուն ամք հարիւր, և է զի պակասին, և յետ ծնանելոյ որդւոյն՝ որ յիշատակի, պակասին ամք ուր յաւելուածով էին, և յաւելլան ուր պակասէինն՝ առ 'ի զգումարն հաւասարելոյ, կամեցաւ որ զայսն արար՝ հաւանեցուցանել թէ յայն սակս բազմաթիւ կենաց ամս ասէին ունել առաջինք, զի նոցայն ամք կարճագոյնք էին. և 'ի դոյն փոյթ կալաւ ցուցանել զչափահաս արութին որ առ 'ի ծնանել բաւական իցէ. այսօրիկ աղագաւ եդ 'ի մտի հարիւրեակ ամօքն նշանակել զմեր տասն ամս, զի մի անհաւանք թերամտեսցին ընդ երկայնակեցութի մարդկանն, յաւելեալ զհարիւրն՝ ուր

առ որդէծնութեան անկարող տեսանէր զհասակն , և զնոյն հարիւր 'ի բաց համեալ յետ զորդին ծնանելոյ , զի զգումարն միաբան գտանիցի . քանզի այնպէս հաւատարիմ առնել կամեցաւ զչափ հասակացն յարմարելոյ 'ի մանկածնութեան , զի մի թերի կացուցէ զթիւ ողջոյն հասակի ամացն իւրաքանչիւր ։ Իսկ թէ 'ի վեցերորդումն ազգի զայն ոչ արար , գոյն իսկ առաւել տայ հաւանութեան անդ միայն արարեալ նորա , ուր պահանջէր պատճառն զոր ասացաք . եթէ զի չարար զայն՝ ուր պէտք ոչ էին ։ Վասն զի ետես յայնմ ազգի կեցեալ Յարեդայ ըստ եբրայեցւոցն ամս հարիւր վաթսուն և երկու՝ յառաջ քան զծնանել Ենովքայ , որ ըստ համարողութեան կարճ ամաց լինին վեցտասան ամք , և եթէ երկու ամիս , և այս հասակ առ 'ի ծնանել բաւական գոյ . ուստի ոչ հարկ եղև յաւելուլ հարիւր ամս փոքր՝ առ 'ի լինելոյ քան և վեց . և ոչ բառնալ զայնս յետ Ենովքայ ծնանելոյն , եթէ զի յառաջն յաւելեալ ոչ էր , այսու ապա ոչ ծագեաց աստանօր տարբերութիւն ինչ ընդ երկաքանչիւր մատեանս ։

Բայց դարձեալ խնդիր շարժի , զմի՞ յութերորդ ազգի՝ մինչ չև Ղամեք ծնեալ էր 'ի Մաթուսաղայէ՝ յեբրայական ընթերցուածի գնին ամք հարիւր ութսուն և երկու , իսկ 'ի մեր մատեանս քանիւ պակաս ամի , ուր ընդ հակառակն հարիւր մի յաւելուլ սովոր էր . և յետ ծնանելոյն Ղամեքայ՝ գնին քան ամքն առ 'ի բովանդակել զգումարն , որ միաձայն գնի յերկաքանչիւր մատեանս ։ Վասն զի եթէ հարիւր և եօթանասուն ամք վասն արութեան հասակի՝ տայ իմանալ եօթնևտասան , որպէս չէր պիտոյ յաւելուլ ինչ , նոյնպէս ոչ 'ի բաց համել . քանզի կայր աստանօր հասակն ծննդագործական , յոր սակս 'ի չգտանելն զայն յանցեալ ծնունդս՝ յաւելուած առնէր հարիւրոցն ամաց ։ Զայս ապաքէն զքանից ամացս յիրաւի էր կարծել վրիպագործ գիպուածոյ լեալ արկածս , թէ ոչ էր հոգացեալ զնախկի բարձեալ ամսն՝ յետոյ 'ի տեղւոջն հատուցանել՝ ողջին զգումարն բերելոյ վասն ։ Այլ, թերևս հնարիմացութիւն կարծեսցի արարեալ, առ 'ի թաքուցանելոյ զճար-

տարն զայն ձեռնեբէցութի՛ յաւելուլ նախ, և ապա պա-
կասեցուցանել զՏարեւր ամին. որովհետեւ այնպիսի ինչ
արարեալ տեսանի նա և ուրանօր ոչ կայր Տարի այնմ,
բառնալով նախ՝ և յետոյ դարձուցանելով թէ և ոչ ամս
Տարեւր, բայց զԹիւ բաւական, Լ՚այլ սահմն որպէս զի-
արգ և առցի այս, եթէ Տաւանեսցի ոք այսպէս եղեալ,
և եթէ ոչ Տաւանեսցի, եթէ այսպէս իցէ, և եթէ ոչ, յԵր-
կուանամ ոչ քնաւ այսպէս գատել ուղղաբար, թէ ուր այ-
լաբան ինչ պատահէ յերկաքանչիւր մատեանս, և առ
առաւգութի՛ իրացն անմարթ է երկուցն և Ճշմարիտ լի-
նել, այնմ բարբառոյ առաւելապէս Տաւատալ արժան է՝
յորմէ՛ ի լեզու յայլ փոխադրեալ է թարգմանութի՛ն. քան-
զի և յերբիս ոմանս յոյն օրինակս, և՝ ի մի լատինեան, և
յայլ միասորի՝ Տամաձայնութի՛ իրերաց գտաւ՝ վախճա-
նել Ա՚ահ ուսաղալի վեցիւք ամօք յառաջ քան զՔրը-
Տեղէդ։

ԳԻ ՅԱՒԻՏ ՀՈ

Բաղագս Տամամեւմունի ամացն Հաշուելոյ՝ ի Նախնական գոռս՝ նոյն միջոցիւք
Ժամանակի՝ զոր ընդ այժմուս։

Հարկ է տեսանել արդ, որպէս ակնարկ ցուցանել մարթ
էցէ, թէ ամքն թուարկեալք՝ ի բազում երկայն կամս
առաջնոց ազանցն՝ ոչ այնպէս փոքրունք էին, մինչև տասին
նոցա լինել մի ամ քան մերումն. այլ գնոյն ցայժմու չափ
երկայնաւէ ունէին, որ արեգական պարագայութի՛ն կա-
տարի՝ Գրեալ է թէ՝ ի վեցհարիւրորդ ամի կենաց Նոյ
եղև Ջրհեղեղ. և ընդեր ապա ընդ եռնուտ անտանօր,
Կողև Ջուր Ջրհեղեղին՝ ի վերայ երկրի յամին վեցհարիւ-
րորդի կենացն Նոյի, յամենայն երկրորդի (կամ եօթնե-
րորդի)՝ի քան և եօթն ամսոյն,, եթէ արդարեւ այն փոք-
րիկ՝ որոյ տասն առներ զմեր մի այն, ունէր աւուրս երե-
սուն և վեց. քանզի այսպիսի դոյզն ամ, եթէ վաղնջուց

տոլորութ̃ ընկալեալ զայդ անուն , կամ ոչ ունէր ամիս , կամ երեքօրեայ լինէին ամիսք նորա , որպէս զի ունիցի ամիս երկոտասան ։ Ո խո՞րդ ուրեմն ասացաւ աստանօր , « Ի վեցհարիւրորդ ամի , յերկրորդում ամսեան , 'ի քսան և եօթն ամսոյն » . բայց եթէ զի և յայնժամ նոյնպիսի էին ամիսքն՝ որպէս այժմդ . ապա թէ ոչ՝ անմարթ էր ասել թէ սկսաւ ջրհեղեղն 'ի քսան և եօթն երկրորդ ամսոյն ։ Յետ այնր 'ի դադարման ջրհեղեղին ընթեռնումք . « Եւ նստաւ տապանն յեօթներորդում ամսեանն 'ի քսան և եօթն ամսոյն 'ի լերինս Արարադայ ։ Եւ ջուրն երթայր և նուազէր մինչև 'ի մետասաներորդ ամիսն , իսկ յամսեանըն մետասաներորդի՝ որ օր առաջին էր ամսոյն՝ երևեցան գլուխք լերանց » ։ Վասն որոյ եթէ այնպիսի էին ամիսքն , նոյնպիսի ապաքէն էին և ամքն , որպիսի այժմս ունիմք , քանզի այն երեքօրեայ ամիսք չկարէին ունել աւուրս քսան և եօթն . կամ եթէ երեսներորդ մասն երեքօրէին կոչիւր օր , ապա նոյնն համեմատութ̃ փոքրկացուցանելով զամենայն , զհետ գայ թէ 'ի մերում չորեքօրէի կատարեցաւ ահագինն այն ջրհեղեղ՝ որ եղեալ ասի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ։ Եւ ո՞ ժուժեսցէ այսպիսում անտեղութեան և բանի մնոտւոյ ։ Վասն որոյ ո՛ն անդր 'ի բաց լիցի մոլորութիւնդ որ պատիր հանճարով այնպէս իմ̃ հաւատարմութ̃ տալ կամի մերոց սրբազան գրոց , զի այլուր եղծանէ զնոյն ։ Անշուշտ նոյնչափ էր յայնժամ օրն՝ որչափ այժմ , սահմանեալ 'ի քսան և 'ի չորս ժամս տուընջենային և գիշերային շրջանաւ . այնչափ էր ամիսն՝ որչափ և այժմ , լրացեալ ծննդեամբ և նուազմամբ լուսնի . այնչափ էր ամ̃՝ որչափ այժմս է , որ կատարի երկոտասան լուսնական ամսովք , յաւելեալ և աւուրս հինգ և քառորդ մի սակս արեգակնային ընթացից . և որչափ էր վեցհարիւրորդ ամի կենաց Նոյի ամիսն երկրորդ , և նորա քսաներորդ եօթներորդ օրն , յորժամ հեղեղ ջուրցն սկսաւ , յորում յիշատակին անդադար հոսանք անձրևաց զքառասուն օր . և այն աւուրքն ոչ էին երկուց ժամուց և փոքր ինչ աւելի , այլ քսան և չորից տե-

ւեալ ընդ տիւ և ընդ գիշեր ։ Լաց այսմիկ ապա այնչափ մեծ տարեկանս կեցին նահապետքն՝ մինչ աւելի քան զինհարիւր , որչափ յետ այնը եկեաց Լքբրահամ ամն հարիւր եօթանասունն և հինգ , և զինի որդի նորա Ւսահակ՝ ամն հարիւր և ութսուն , և նորա որդին Յակոբ՝ իբր հարիւր յիսուն , և որչափ յետ ժամանակաց եկեաց Ա՝ովսէս ամն հարիւր և քսան , և որչափ կեան այժմ մարդիկ եօթանասուն ամ, կամ ութսուն , և ոչ կարի շատ . զորմէ ասացաւ , "Ալը ինչ աւելի քան զայն , ցաւոք և հիմնովթիւն ,, ։ Ալ. ՟ղ. 10 ։

Իսկ տարբերութիւն թուականացն որ ընդ եբրայական մատեանս և ընդ մեզն՝ ոչ իւիք հակառակ ելանէ նախնեացն երկայնակեցութիւն . և եթէ կայցէ ’ի նմանս անմիաբան ինչ՝ որում չիցէ մարթն Աստուածային յերկաքանչիւրեան , զիրացն սուղութիւն յայմ լերգուէ հայցելի է՝ յորմէ փոխադրեցաւ մեզ ։ Լաւ զայդ առնել՝ առձեռն է ամենայնի որ կամիցին ամենայն ուրեք . սակայն ոչ անպատճառ է և այս , զի ոչ որ իշխեաց ըստ եբրայական մատենից ուղղագրել զեօթանասնեանն ’ի բազում տեղիս այլոցան երեւեալն . քանզի ոչ եթէ վերիսուսին ինչ համարեալ է այն տարբերութիւն , և ոչ ես բնաւ այնպէս համարել ընտրեմ . Ալ ուր միանգամ ոչ վերիպակ գրագրի սպրդեալ իցէ , հաւանել արժան է թէ կամեցան այլ ազգ ասել ինչ ինչ ըստ հոգւոյն այլ , համաձայն Աստուածութիւն բերելով իմաստս , և զՀնմաստութիւն բարոգելով , ոչ ըստ թարգմանչաց օրինի , քան թէ ազատութիւն մարգարէականաւ . սոքին վասն յիրաւի և զառաքելականն վարդապետութիւն տեսանեմք՝ ոչ միայն եբրայականացն վարիչսայլ և ըստ եօթանասնից՝ ուր ուրեք ’ի գրոց առնուս վկայութիւնս ։ Լայց յաղագս այսր խոստացայ ուշի ուշով խօսել ’ի գիպան տեղւոջ , եթէ ՚աճ ձեռն տայցէ . իսկ ’ի ժամուս կրճեցից որ ինձ ասելն է . իբրև զի ուր այնչափ բազմօրեայք կեցին նախնիք , չէ երկայնել թէ ’ի միոյ մարդոյ նախկին ծնելոյ ’ի նահաՀօրէն՝ մարթն եր կազմիլ քաղաքի երկրաւորի , և ոչ այնմ որ քաղաք կոչի այլ . զորմէ գրել կամեցեալ , ’ի մեծ յայս երկասիրութիւնն ձեռն արկաք ։

ԳԻ ՅԻՒՍ ԻՒՐ

Իցէ արդեօք հաւանելի՛ Թէ մարդիկ առաջին գոյուն ժուժկալեալ իցեն յամուսնութենէ մինչև յայն հասակ, յորում Նշանակի Ծնանել նոցա որդիս։

Լսեմ արդ ասիցէ ոք. Միթէ իցէ՛ հաւատալի Թէ մարդ կարգեալ՝ի Ծննդագործուէն, որոյ ոչ հաստատեալ է՝ի սըրտի ժուժկալել, յամուսնականն գործոյ հրաժարեալ իցէ ամս հարիւր և աւելի, կամ ըստ երկայնեցոյ՝ փոքր ինչ պակաս, այս է զամս ուԹսուն, եօԹանասուն, վաԹսուն, և կամ եԹէ զամուսնութի՛ն ևիեալ՝ ոչ իցէ զաւակագործեալ երբէք։ Արկնակ լուծումն տամք ինդրոյս. Երբ զի կամ անագան լեալ է արուԹին ըստ հասմմատութե՛ն բազմաւոր ամաց կենաց նոցա, և կամ առաւել հատանելի որպէս կարծեմ, ոչ անդրանիկքն որդիք յիշատակին աստանօր, այլ զոր պահանջէր յաջորդութե՛ն կարգ՝ հասանել միւսեալ ցՅոյ, յորմէ տեսանեմք գալ հասանել առ Ա՛բրահամ, և ապա մինչև՝ի սահմանել ժամանակա՛ հկա՛ն՝ որչափ պիտոյ էր յիշատակել Ծննդոցքն ակնարկել զընԹացս փառաւորեալ քաղաքին՝ նշդեհ եղելոյ՝ի կենցաղումն, և վերջին Հայրենեացն ինդրողն։ Ո՞ այս ինչ ուրանալ չէ մարԹ, Թէ ամենեցունց նահապին Ծնաւ Ա՛յին՝ի մերձաւորութե՛ն արուի և իգի. ապա Թէ ոչ՝՝ի Ծնանել նորա ոչ արդեօք ասացեալ էր Ա՛դամ զայն որ գրի. "Ասացայ մարդ ՚ուղ.. այս է՝ զի յերկուսն յայնոսիկ սահմանին յաւելուս Ծննդեամբ մարդ առաջին։ Ո՞ չէտ նորա եղև Ա՛բէլ, զոր սպան երեց եղբայրն, ՚ի նախատինս յարացոյց պանդխտելոյ քաղաքին այ, առաջին յուցանել զանպատ Հալածմանեան՝ զոր յամբարշտաց անտի ուներ կրել յերկրասեռիցն, որոց սիրելի և ծագումն երկրաւոր՝ զուարճացեալոցն յերկրաւոր երջանկութե՛ն քաղաքին երկրայնոյ։ Ա՛յլ Թէ քանի ամաց էր Ա՛դամ՝ի Ծնանել զնոսա, երևի ոչ քնաւ։ Չէտ այնր չարակարգին

այլ ծնունդք ՚ի Կայենէ, և այլք՝ յորդւոյն Ծնելոյ Յ՚Ա-
դամայ փոխանակ սպանելոյն՝ Աբէլ զնա անուանելով, և
ասելով ըստ գրեցելոյնն. "Հարոյց ինձ Աստ զաւակ այլ՝
փոխանակ Հաբէլի զոր սպանն Կայէն ... Յ՚որդի ի երկու
այս շարք ծնունդոց՝ որ ՚ի Աբէլայ, և որ ՚ի Կայենէ, եր-
կուց տարորինակ քաղաքացն զորոց խօսիմք՝ ևս ցուցից,
մին երկնային յերկրի հղդհՅացեալ, և միւս երկրային՝
յերկրաքարշ զբօսանս տարփացեալ, կամ կռուեալ իրք ՚ի
միմեանս հեշտալս. Ի Թուելն զսերունդս Կայենի սկսեալ
Յ՚Ադամայ մինչև յառգ ուԹերորդ՝ և ոչ զիոյ ոմն ըզ-
քանիսուԹիւն ամացն Ծանոյց գիրն, ՚ի Ծնանել իւրաքան-
չիւր նոցա՝ որպէս յորդիս. Յ՚Անգի ոչ կամ էին հո-
գւոյն այ Ճգնտաբանել զժամանակս ՚ի Ծնունդսն երկրա-
որ քաղաքին յառաջ քան զՋրհեղեղն. բայց ՚ի Ծնունդս
երկնաւորին կամեցաւ առնել զայդ իբրև յառաւել ար-
ժանաւորս յիշատակաց. Ւոկ իբրև Աբէլ Ծնաւ, ամք
հօր նորա Թուեալ էին, և սակայն յառաջն իսկ Ծնեալ էր
նորա և զայլս. և ո՞ իշխեսցէ ասել՝ Թէ զԿայենի զ՚քել
միայն. Ա՛ ամն զի գնացս ևԹէ անուանելոյն սակս կարգի
Ծննդոցն՝ զորս յիշատակէն կամէր, ոչ գՀետ գայ Թէ այ-
նոքիկ միայն Ծնեալ էին յայնժամ Յ՚ադամայ. և յորժամ
առանց յայտնելոյ գանուանս այլոցն՝ ասի յընԹերցուա-
ծին, Ծնաւ նա ուստերս և դստերս, ո՛ որ Հշդել Համար-
ձակիցի՝ քանիք լեալ իցեն զաւակք նորա, ևԹէ չիամիցէ
ոգիւս յանդգնուԹիւնէ ձգել յանձն. Օ՛ի կարող էր Յ՚Ա-
դամ Թէպետգիտել առ ՚ի յայլ ասել՝ յետ Ծնանելոյն ըզ-
Աբէլ, "Հարոյց ինձ Աստ զաւակ այլ՝ փոխանակ Հաբէլի...
իբրև զի այսպիսի լինել Հանգերձեալ էր, որ զնորա սըր-
բուԹիւնն փոխանորդեր, այլ ոչ ևԹէ ըստ կարգի ժամա-
նակին նա առաջին յետ Յ՚քելի Ծնեալ էր, Յ՚ո գաձեալ
՚ի գրէն "Հյետ Աբէլ Ծնեալ էր Կայենի ... կամ
ըստ Եբրայեցւոց՝ Հարիւր և Հինգ, և Ծնաւ զՀնովս, ո՞
քնաւ՝ բայց ևԹէ անընտրող ոք ՚ի մոլի եղեալ ասիցէ զնա
անդրանիկ Աբէլայ լինել. Յ՚ինչ զի յիրաւի է զարմաց-
մամբ ինն խնդիր առնել՝ զիաղդ զայնքան ամին անկցորդ

յամուսնաւորութեան կացեալ իցէ, ոչ ունելով կամս ժուժկալութեան. կամ թէ ամուսնաւորեալ, բայց անծնունդ լեալ իցէ, ուր զնմանէ եւս ասէ ընթերցուածն. «Եւ ծնաւ ուստերս և դստերս. և եղեն ամենայն աւուրք Սեթայ՝ ամք ինն հարիւր և երկոտասան, և մեռաւ»: Սոյն օրինակ և 'ի հետակայսն՝ որոց միանգամ յիշատակին ամք կենաց, ոչ զանց առնէ ասել՝ թէ ծնան ուստերս և դստերս. սորին վասն անյայտ իմն է՝ թէ ծնունդն յանուանէ նշանակեալ իցէ՝ արդեօք անդրանիկ ծնեալ. մանաւանդ զի անհաւանելի ընաւ է՝ ծնողացն այնոցիկ ընդ այնքան յերկարաւոր հասակ կամ զարութիւն չունել, և կամ զրկեալս լինել 'ի լծակցաց կամ 'ի սաղմնառելոյ. ուստի և ոչ զորդիսն անուանեալս համարել արժան է անդրանիկս նոցին լինել: Այլ քանզի սրբազան վիպագիրն կամէր ընդ կարգս ծննդոցն որոշեալ ժամանակօքն գալ հասանել մինչև 'ի ծնունդ և 'ի հասակ կենաց Նոյի, առ որով ջրհեղեղն դիպաւ, զայն ծնունդս ապաքէն յուշ արար՝ ոչ որ իւրեանցն ծնողաց սկզբնածինք էին, այլ յորոց սկսանէր կարգ սերնդեան:

Այլ զի բացերևագոյն այս լինիցի, 'ի տիպ ապացուցի արկից 'ի մէջ ինչ մի, աներկբայելի ամենեցուն առնել զասացեալս: Մատթէոս աւետարանագիր կամեցեալ զազգաբանութիւն տէրունական մարմնոյն յիշատակագրել ընդ չորս հարցն, սկսեալ յԱբրահամէ նախահօրէ, և 'ի Դաւիթ անդր դիտելով ժամանել նախ, ասէ. «Աբրահամ ծնաւ զԻսահակ». և ընդէր չասաց՝ զԻսմայէլ, զոր նախ ծնեալ էր: «Իսահակ ծնաւ զՅակոբ». և էր վասն ոչ ասաց՝ զԵսաւ, որ անդրանիկ նորա էր: Յայտ է ապաքէն՝ զի ոչ էր մարթ նոքօք գալ հասանել առ Դաւիթ: Ի վերայ բերէ ապա. «Յակոբ ծնաւ զՅուդա և զեղբարս նորա». մինթէ Յուդաս անդրանիկ էր: «Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա». ուր և ոչ մին յերկուորեկացս անդրանիկ էր, այլ զերիս այլս ծնեալ էր յառաջ քան զնոսա: Ապա ուրեմն զայնոսիկ շարադասեաց 'ի կարգի ծննդոցն, ընդ որս լինէր հասանել 'ի Դաւիթ, և 'ի նմա-

նէ յոր և կամէր ։ Ուստի զոյ խմանալ, Թէ նախնի ա-
բանից որ յառաջ քան զՔրիստոսէդ՝ ոչ եթէ անդրանիկքն
յիշատակին , այլ այնոքիկ ընդ որս զնիսի եհէլոցն Մնդոց
կարդ եհէալ Հանդիպէ ՝ի Ա՛յոյ նահատակ, զի մի ընդ
զրաջան ինդիր և անյայտ դեգերիցիմբ յաղագս անագան
արուեստն ՝ի նոսա լինելոյ ։

ԳԻ ՅԱՒԵՏ ՀՕ.

Թէ նախնին անուանուեցան իրաւունք այլ ազգ կին քան զկանոյ ։

ՎԱՆԶԻ մարդկան ազգ յետ առաջինն յաճուստ պատկ-
ման հողաճնելոյ առնն ընդ իւրում կողաճնին ամուսնոյ՝
պէտս ունէր մերձաւորութեանէ ընդ այլ և ընդ կին առ ՝ի
բարգաւաճելոյ ծնունդեամբ , և զի չգոյին այլ մարդիկ՝
քայց ծնեալքն յերկուց անտի, Հարկ եղև երիտասարդաց
՝ի կնութեանէ զուրբոց առնուլ ։ և այս որչափ վաղ-
ժամանակայ է՝ առ ՝ի Հարկին բռնադատեալ, նորչափ
յապա ժամանակի գոսա յերկրանս՝ արգելեալ ՝ի կրօ-
նից ։ Ա՝ան զի արդարացի և պատեալ եղև պատճառ
սերոյ , զի մարդիկ սակս ունելոյ զօգտակար և զգովելի
միակամութեանէ՝ առ իրեարս յօգեացին պէտսպէս կապով Հա-
րազատութեան ։ և ոչ ընտանութեանէ բազում ՝ի մի ոք լինիցին,
այլ իւրաքանչիւր բաշխեալ յայլ և այլս ։ և այնպէս առ
անդագոյնս յօդակապելոյ զընկերական կեանս՝ բազում
ընտանութեանէ ՝ի բազում մարդիկ տեղի ունիցին ։ Վ՛ան
զի Հայր և անէր՝ երկուց ընտանութեանէ անուանք են ։
ուստի եթէ իւրաքանչիւր ոք զայլ ումն Հայր ունիցի , և
զայլ ումն զանէր , յանդիպանգոյն ևս ընդարձակի տեղի ։
Ա՛ակ միայն Ա՛զամայ Հարկ էր լինել և Հայր և անէր ուս-
տերաց իւրոց և դստերաց , յորժամ եղբարք և քոյրք ա-
մուսնանային ընդ միմեանս ։ Նոյնպէս Ա՛ւա կին Նոյա՝
եղև միանգամայն զբանչ կամ սկեսուր , և մայր երկա-

քանչիւր զաւակաց. ուր եթէ երկու կին լեալ էր, մին մայր, և միւսն զոքանչ, յորդագոյն ևս կապէր ընկերականն սիրելութիւն: Այլ և նա ինքն քոյրն՝ 'ի կնութիւն եղեալ, երկուս ընտանութիւնս կրէր միակ գոլով. որոց յայլ և այլս մասնաւորեալ, միոյն քոյր լինելով, և միւսոյն կին, ընկերականն մերձաւորութիւն առաւելոյր ապաքէն թուով մարդկանն: Բայց այս յայնմ ժամանակի ոչ ունէր լինել, յորում ոչ այլ մարդիկ ոք՝ բայց եղբարք և քորք միայն կային յերկուց նախածնողաց անտի: Վասն որոյ պարտ եղև յորժամ մարթ էր, իբր զի բազմանալով մարդկանն՝ յայնցանէ կին առցի, որ ոչ քորք էին. և յայնժամ ոչ միայն հարկ ոչ մի ինչ կայր զքորս առնլոյ, այլ անարգ ևս էր գործ այնպիսի: Քանզի և թոռունք նախածնողացն՝ որոց մարթ էր զեղբօր դուստր առնուլ 'ի կնութիւն, եթէ առնուին զիւրեանց քորս, ոչ ևս ահա երկու ընտանութիւնք 'ի մի մարդումն լինէին, այլ երեք, որոց իւրաքանչիւր արժան էր տարածանել առ այլս և այլս՝ վասն զսիրելութիւն բազմապատիկ մերձաւորութեան լծորդելոյ: Ոչ յայնժամ մի մարդ լինէր իւրոց զաւակացն՝ եղբօր և քեռ լծակցելոյ ընդ միմեանս՝ հայր և աներ և հաւ. նոյնպէս կին նորա՝ լինէր նոցին զաւակաց՝ մայր և հանի և զոքանչ. և նոքին զաւակք լինէին առ իրեարս ոչ միայն եղբարք և ամուսինք, այլ և եղբօրորդիք: Իսկ այս ընտանութիւնք որք ընդ միոյ մարդոյ կապակցեն երիս մարդս, զինն ապաքէն կապէին՝ եթէ առանձնաբար լինէին. զի միոյ մարդոյ այլ ոք լինէր քոյր, այլ ոք կին, այլ եղբօրդուտըր. այլ հայր, այլ հաւ, այլ աներ. այլ մայր, այլ հանի, այլ զոքանչ. և այսու օրինակաւ ոչ 'ի սակաւուն ամփոփեալ լինէր յօղն ընկերական, այլ յաճախ մերձաւորութիւք սփիւռ և յօքնաթիւ ընդարձակեալ ձգէր:

Յաճել և 'ի բազմանալ մարդկան սեռի՝ տեսանեմք ապաքէն այնպէս իմն զգուշանալ այսմ նա և ազգաց ամբարշտաց մոլելոց 'ի բազմաստուածութեան պաշտօն սնոտեաց, զի թէ և ըստ խոտորնակ օրինաց ումանց՝ կայ թողութիւն եղբարց և քերց զամուսնութեան գալոյ, սակայն ըն-

տրէլագոյն սովորութենէն առաւել հրաժեշտ ցուցանէ յայդմ ազատուիլ. և ուր՝ ի նախկին ժամանակս մարդոյն օրէնն եղեւ առնուլ զքորս յամուսնութենէ, յետ այսր այսչափ խորհելի է, որպէս թէ ոչ բնաւ օրէն լեալ իցէ, \Jանզի առ մարդկան զմիտս ամրացուցանէլոյ՝ բազում ինչ զօրէ սովորութենէն, \J.է զի յառաջիկայ խնդրոյս սանձահարէ այն զանյագութենէն ցանկութենէն, յիբաւէ անարժան դառնալ է ապախտ առնել զայն և լուծանել։ Օ ի եթէ անիրաւ է՝ աւելաստացութենէն կրկին անցանել ըստ ահմանի անդառնանաց, քանի՞ անիրաւ է՝ ամուսնալ օրութենէն տափանօք զահմանի սովորութենէ շրջել վեր՝ ի վայր։ \Jչքաբէն տեղեկացեալ գիտեմք, զի առ մերով իսկ ժամանակաւ ամուսնութիւք եղբօր որդւոց և դստերաց՝ սակս մերձաւորութենէն առ եղբայրական աստիճան՝ դուն ուրեք լինէին ըստ սովորութենէ, որում ըստ օրինաց լինել ըմբռն էր, զի ածային օրէնք զայն ոչ արգելուին, և մարդկայինն չէ և ս արգելել էր։ \Jակայն եղեալն իսկ իբր կայինն չէ և ս արգելել էր։ \Jակայն եղեալն իսկ իբր օրինաւոր՝ խորշումն բերէր սակս հնուց չօրինաւորին գոլոյ։ և որ լինէին ընդ դառնէր եղբօր, կարծիւք ընդ քեռն զոգոյս եղեալ, զի և նոքա սակս կարի մերձաւոր արիւնակցութենէն եղբօրք միմեանց կոչին, և են հարապատք, \Jսկ նահապետացդ առաջնոց փոյթ զգուշութենէ եղև, մի արգելք մերձաւորութենէն ըստ աստիճանաց սերնդոց ծուլացեալ առ սակս սակս, և՝ ի հեռաւորն ձգեալ, դադարեսցէ՝ ի մերձաւոր գոլոյ. որպէս վասն մինչ չև կարի օտարացեալ էր, կապով ամուսնութենէ զարձեալ ընդորձին զայն, իբր օրինակ ինն՝ զփախստեայն յետս պարտեղալով։ \Jւստի յորժամ բազմամարդացեալ իսկ էր երկիր առհասարակ, թէպէտ և ոչ զքորս առ՝ ի հօրէ կամ առ՝ ի մօրէ, և կամ յեղբուց իսկ ծառայս ծնեալս առնելին կանայս, բայց սխորժելին յիւրեանց ազգէ ածել, \J.ւլ արդ ունի իցէ յերկուանալ՝ զի առաւել պարկեշտութիւք արգելան այժմ ամուսնութենէ եղբօր որդւոյ կամ դստերաց, ոչ միայն սակս պատճառացն ասացելոց, այլ և՝ վասն բազմացուցանելոյ զխնամութենէն, զի մի երկու ըն-

տանուն Թէ՛ի միւսմանէն լինելին, ուր յերկուց զայնս ունել մարթի է առ՝ ի զթիւ մեքենաւորութեան առնեցուցանելոյ, այլ և չգիտեմ զիարդ՝ ի մարդկային առնթիանութեան բնաւորեալ կայ ինչ մի գովելի, զի որում պատիւ դնել վայելուչ է սակս մեքենաւորութեան, խորշի տուփանս բերել՝ Թէ և առ՝ ի ծնունդ. ընդ որ տեսանեմք զի և առ մուսնականն առնթիանութիւն պատկառէ։

Այսպս ուրեմն զուգաւորութեան արուի և իգի՝ իբր անկատար սեռի մահկանացուաց՝ է սերնդարան իմն քաղաքի. այլ երկրաւոր քաղաքն՝ ծննդեան միայն պէտս ունի, իսկ երկնաւորն՝ նա և վերստին ծննդեան, զի՝ ի վերստուէ ծննդեանն փրծանիցի։ Այլ Թէ յառաջ քան զըՀեղեղ լեալ իցէ արդեօք և կամ զինչպիսի մարմնական և երևելի նշանակ ինչ վերստին ծննդեան, որպէս յետ այնր Աբրահամու եղաւ հրաման Թլփատութեան, ոչ ասէ ինչ սըրբազան պատմութիւն։ Այայց ասէ Թէ կարի նախնագոյնք իսկ պատարագս այ մատուցանէին, որ և յերկուս առաջինն եղբարն տեսաւ. և վասն Այոյի ընծեռնումբ՝ յետ ջըՀեղեղին յԵլեան՝ ի տապանէ անտի զոհս մատուցանել այ։ Յաղագս այսց իրաց ասացեալ եմք՝ ի յառաջագոյնս գիրսդ, ցուցեալ Թէ գեր աստուածութիւն Թեկն ածելոյ, և առ աստուածս ցանկալով մեծարելոյ, ոչ յայլ ինչ պատճառէ անձանց պատարագս ինդրեն՝ զուարճացեալք ընդ այնպիսի պատիւ, բայց զի գիտեն Թէ պատարագ Հնմարիտ՝ այ Հնմարտի է վայելական։

ԳԻ ՅԱՒԵԼՈ ԺՈՂ

Յաղագս կրկնահաւատուեցեալ յառաջագոյնէջց՝ ի միոջէ հօրէ։

Այդ քանզի կրկին ազգի Հայր գտաւ Այ՝ամ, այնմ՝ որոյ պայազատք յերկրաւորն պատշաճին քաղաք, և այնմ՝ որ յերկնաւորն, յորժամ սպանաւ Աբէլ՝ յորում աւանդեալ

հակառեցաւ խորհուրդն աքանչելահրաշ երեւեցան երկուքնա
խաչարեալ իւրաքանչիւր սեռի, կայրին և Ադէմ . և ի նոցին
որդիս յիշատակեալս յանուանէ որչափ պիտոյն էր, ակն
յայտնի ի ցուցակութենէ եկին նշանակք երկուց քաղա-
քացս ի մահկանացուաց ազգի . Վանգի Կայինն ծնաւ
զԱնոքը, յորոյ անուն կառոյց քաղաք, յայտ է թէ զերկ
հրաւոր, ոչ պանդխտ յաչխարհիս, այլ հանդարտացեալ
ի ժամանակեան խաղաղութենէ և ի բարօրութենէ . Իսկ Կայինն
Թարգմանի՝ առացուած . որպէս ի ծնանել նորա առա-
ջաւ ի հօրէն կամ ի մօրէն . Ստացայ մարդ առ., Իր
Անոքը նուիրութեան կամ ընծայութեան լսի . զի առ ընծայի
քաղաքն երկրաւոր՝ ուր և կազմի, առատաւոր կալեալ
զայն ինչ՝ ուստ դէտ ակն ունի և ցանկայ իբրու կատարա-
ծի, Կայց Աբէթ Թարգմանի յարութեն, և Անոքն որ-
դի նորա լսի՝ մարդ, ոչ որպէս անունն Ադամ, որ թէ-
պէտ և նշանակէ մարդ, բայց յերբայական լեզուի Կառա-
բահաբար ասի արաբի և իգի . զի այսպէս գրեալ է վասն
նորա . Ադամ և Եւ արար զնոսա, և օրհնեաց զնոսա, և
անուանեաց զանուն նոցա Ադամ., Յորմէ հաւաստել
գոյ՝ թէ ուր ըստ յատուկ անուան յորջորջումն էգին Կա-
ւա էր, անունս Ադամ, այս է՝ մարդ, երկոցունց հաւա-
սար ասի, Իսկ Անոքն այսպէս Թարգմանի մարդ, զի
ըստ վկայելոյ լեզուագիտաց երբայականին չմարթի ասել
իգի, երբեմն որդի յարութենէ ուր ոչ արանց լինին, և ոչ
կանայս առնեն . Վ ասն զի ոչ եղիցի անստանօթ ծնունդ,
յորժամ անդր մուծանիցէ վերստին ծնունդն . Յաղագս
որոյ ոչ վայրապար կարծեմ նշանակել և զայս, զի ի ծը-
նունդան յառաջագիտելոյ ի սէթեան տոհմէ՝ ասելով
սոսկ, ծնան ուստերս և դստերս, ոչ մի ոք յերգոյն ծնելոց
յանուանէ ծանուցանի . իսկ յառ ի Կայենէ սերեալսն մինչ
ի վախճան նոցա հանգուցեալ զանձն, յանուանէ ցու-
ցանի վերջին եգն ծնեալ . այսպէս ունելով բանին . Ծն
Ադաւսաղա ծնաւ զԱ ամեք . և առ իւր Ա ամեք եր-
կուս կանայս . անուն միում Ադդա, և անուն երկրորդին
Սէլլա . և ծնաւ Ադդա զՅաբէլ, նա է հայր այնոցիկ՝ որ

քնահեալ էն ի վրանս խաշնարածայ ։ Այլ անուն եղբօր նորա Յովճաղ, նա է Հայր՝ որ եցոյց զերդս և զքնարս ։ Այլ Ակլա ծնաւ զՅոբէլ և էր Ձարտարապետ դարբնին պղինձոյ և երկաթոյ, և քոյր Յոբելայ Նոյեմա ։ Հայտ վայր ձգեցաւ աղգահամար Այսեղի, ամենեքին ուր՝ զուգաթուեալ և զԼամէ. իբրև զի եօթն են միանգ ի Կայէնէ, որ երկիկն եղև. և ութերորդ ծնունդ եղև յոր դիս նորա ։ յորս և էգն յանուանէ յիշատակի ։ Ո՞ահն դարպէս օրինակեցաւ աստանօր ։ Թէ քաղքն երկրային միոչ ի վախճան իւր ունելոց է ծնունդս մարմնականս, որք յառաջագային յարուցաց և յիւգաց զուգամանէն. ուստի ուր կանանց ոչ լինի յիշատակ նախ քան զՔրիստեղեղ քաց Աբելայէ, որպա յատուկ անուամբք ծանուցան կանայք առն՝ որ աստանօր անուանեալ է յետին Հայր ։ Այլ զոր օրինակ Կայինի թարգմանեալ ստացուած, կատուցող երկրաւոր քաղաքին, և որդի նորա՝ յոր անուն կոչեցաւ՝ Հնոքը, այն է՝ նուիրուած, յայտ առնէն թէ այսր քաղաքի և սկիզբն և վախճան երկրաւոր է, ուր ոչ այլ խնդիր գոյ յուսալ՝ քաց որ ինչ ի կենցաղուսն նշմարի, նայն օրինակ Աբէ՝ թարգմանեալ յարութիւն, քանզի ուրոյն յիշատակելոց ծնունդոց է Հայր, Հայել արժան է՝ զինչ յաղագս որդւոց նորա սրբազանն ասիցէ պատմութիւն ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Զինչ նշանակեցաւ ի Հաբէլ, ի Սէթ և յԵնովս. ակնարկելով ի Քս, և ի մարմին նորա յեկեղեցի ։

“Այ Աբէթայ, ասէ, եղև որդի, և անուանեաց զանուն նորա Հնովս. նա յուսացաւ կոչել զանուն տեառն Այ.։ Լրջարեւ ձշմարտութենն վկայուի գոչ աստանօր ։ Հնոսով ուրեմն կեայ մարդն՝ որդի յարութեան. յուսով կեայ մինչդեռ պանդխտի աստանօր քաղքն Այ, որ ծնանի ի

հաւատոց յարութեանն Քրիստոսի, ի մասն ի յայն երկու արս, ի Հաբէլ՝ որ լսի ողբ, և յեղյայր նորա Կայէն՝ յարութեամբ մարդկանեաւք, նկարագրի մանկն Քրիստոս, և կեանք ի մեռելոց։ Ի հաւատոց աստի ծնանի քաղաքն այ, այն է մարդն՝ որ յուսացաւ կոչել զանուն տեառն այ։ “Ոչ ի յուսով ապրեցաք, ասէ առաքեալ. այլ յոյս տեսանելի չէ յոյս։ Ոչ ի զոր տեսանէ ոք, զի և յուսայ։ ապա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակնկալեմք։” Հռ. ը. 24։ Ի արգելոք մերկ ի բարձրագոյն խորհրդոյ համարիցի զանս. միթէ Կ՚բէլ չյուսացաւ կոչել զանուն տեառն այ, զորոյ զպատարագն հաճոյացեալ այ վկայէ գիրն. միթէ և Կայէն ոչ յուսացաւ կոչել զանուն տեառն այ, զորմէ ասացաւ. “Ցարոյց ինձ ամէն զաւակ այլ՝ փոխանակ Կ՚բէլի։” Կ՚ըվանն ապա Հնովքայ ուրոյն ընծայի այն ինչ՝ որ հաւաքակորդ իմանի բոլորից ամենայնից, բայց եթէ զի՝ ինձմա որ ծնանդոյն զատուցելոց ի մանն բարի, քաղաքին վերնոյ ասեմ, նախկին ծնեալ յիշատակի ի հօրէն, պարտ էր նախանկարել զմարդն, այս է զժողովուրդ մարդկանն, որ ոչ ըստ մարդկութեանէ կեայ ի վայելուչն կենցաղական երջանկութեանէ, այլ ըստ այ յուսով երջանկութեանն յաւիտենից։ Հնոքայ իսկ, նա յուսացաւ ի տէր ամ, կամ նա կոչեաց զանուն տեառն այ. այլ եթէ նա յուսացաւ կոչել զանուն տեառն այ. զինչ այլ զեկուցանելոց վասն, քան եթէ զի մարգարէութեանէ է՝ ծագել ժողովրդեան որ ըստ ընտրութեանէ հնոքհաց կոչեցեալ զանուն տեառն այ։ Ոչ սոյն զայս այլով մարգարէիւ ասացեալ՝ իմանալ առաքեալն ի վերայ ժողովրդեան ընտրելոց ի հնոքհ այ. “Կ՚ու եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն տեառն՝ կեցցէ...։ Կ՚անգի յասել անդ գրոյն և անուանեալց զանուն նորա Հնովքս, այն է մարդ, և ապա ի յաւելուլն՝ եթէ նա յուսացաւ կոչել զանուն տեառն այ, ցուցանի քաջ եթէ չէ պարտ մարգոյ յուսալ յանձն. զի որպէս և այլուր գրեալ է։ Կ՚ելմ. ֆէ. 5. “Կ՚նիծեալ լիցի մարդ որ արասցէ զյոյս իւր ի մարդ...։ ուստի և ոչ յիւր անձն. որպէս զի լինիցի քաղաքացի այլոց քաղաքի, որ ոչ ըստ որ-

դարձ Կայենի նուիրեալ իցէ յայսմ ժամանակի, այն է՝ ի հոսանուտ ընթացս կենցաղոյս, այլ յանմահականն մշտակայ երանութեն։

ԿԻՒՐԻՒՍ ՀԻԱ

Ջրհեղ ի փոխանն Ենովքայ օրինակաւ ցուցանի։

Կրանգի և սերունդն՝ որպ Աբէլ հայր է, ունի զնուիրամանն անուն յեղաներորդումագգի Թուելով և զԱդամ. զի եօթներորդ ի նմանէ ծնաւ Ենովք, որ նուիրուին Թարգմանի։ Այլ նա ինքն փոխադրեաւն, զի Հաճոյ եղեւ Աստ, և նշանաւոր Թուով եօթներորդ Աղամայ՝ ի կարգի ծննդոցն, որով և չաբաթն սրբեցաւ. իսկ ի Աբէլ ի հօրէ այսց ծննդոց զատուցելոց ի տունկն Կայենի՝ վերջերորդ է. յորում աւուր արարաւ մարդն, և կատարեաց ամ զամենայն գործս իւր։ Այսր Ենովքայ փոխուիցն է նախագիծ օրինակ հանդերձելոյ նուիրմանս մերոյ, որ և եղեալ իսկ է ի գլուխս մեր Աստ, այնպէս ինն վերակենդանացեալ, զի ոչ այլ մեռանիցէ, և ինքն իսկ փոխադրեալ է. և ինայ միւս նուիրուին Համօրէն տանն, որոյ հիմն է ինքն Աստ. և այն նուիրուին յամենայ մկնէ ի կատարած՝ յորժամ ամենեցուն լրցի չարութիւն, որ ոչ ևս մահկանացու գտանին։ Կայց արդ եթէ տուն ոյ կոչիցի, եթէ տաճար ոյ, եթէ քաղաք ոյ, նոյն ի մի ինչ է, և ոչ օտար ի սովորութենէ լատին բարբառոյ։ Կրանգի և Աբէլ իրգիլեաս յԱրեւմտից. զամենիցնան քաղաքն կոչէ տուն Կիսարաց, իմացեալ զՀռոմայեցիսն՝ որք Կիսարակայ ունին սերունդն ի ձեռն տոյժացուց. և զնոսին դարձեալ ասէ՝ տուն Կենեասայ, զի նորուն առաջնորդութենէ եկեալ տոյժացուց Կիտալիա չինեցին զՀռոմ։ Կայսմ զոչ սրբազան գրոց կալաւ քերթողն, յորս տուն Կակոբայ կոչի բազմութիւ ժողովուրդն երբայեցւոց։

ԳԼՈՒԽ Ի

Ընդհէր սերունդ կայնէի յաւէտ ծնունդս աւարաւ՝ սկսեալ Ադամայ, և ի պայազատս ի նոյն հորէ Ադամայ առանէրօդ գաւանի նոցա։

Այլ՝ ասիցէ ոք. եթէ այն կամաք էին պատմագրողս ի յիշատակել անդ զծնունդս Ադամայ որդւովք Աւետա, զի նորաք հասեալ ի Նոյ՝ առ որով ջրհեղեղն, ի նմանէ վերստին չարայարեացն կարգ ծնելոցն՝ հասանել մինչև ցԱբրահամ, յորմէ Աստուածոս աւետարանագիրն սկսանի զազգահամարն, ընդ որս գայ ժամանակ ի Քրիստոնէից Թագաւոր քաղաքին այ, զի՝նչ կամք էին ասա՝ ի թուէն զծնունդս որ՝ ի Նայնէ, և յոր վայր կամէր զնոսա հաստուցանել։ Պատասխանեմք. մինչև՝ ի ջրհեղեղ անդր, առ որով համայնաքինք բարձաւ ազգն այն երկրային քաղաքին. այլ նորոգեցաւ յորդւոց Նոյի, Վանզի ոչ եթէ մարթ ինչ է երկրաւորի քաղաքիս, և ժողովոյ մարդկան մարմնակենցաղից պահասել բնաւ մինչև՝ ի վախճան աշխարհիս, յասել տեառն զնմանէ. «Վրդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն, և արանց լինին», Լոկ զքաղաքն այ զպանդխտեալն յաշխարհիս յայսմիկ՝ վերստին ծնունդն առեալ տանի յայլ՝ ի միւս աշխարհ, որոյ որդիք ոչ ծնանին, և ոչ ծնեալ լինին, Լոկ աստանօր երկաքանչիւր քաղաքաց՝ և միապէս է ծնանել և ծնեալ լինել. և թէպէտ քաղաքն այ ունի և աստանօր բազում հազարս քաղաքացւոց՝ որք հրաժեշտ տան ի ծնունդագործութենէ, բայց և երկրաւորն ունի նմանողութիւն քրիստոնէից այսպիսիս՝ մերձենալ. Վանզի այնմ ընտանի են որք խոտորելոք ի հաւատոց երկնաւորին՝ հերձուածս պղտիս կարկատեցին, ըստ մարդկութենէ կենցաղավարելոք, և ոչ ըստ այ, Նոյ մերկիմաստակք հնդկաց՝ զորոց ասի մերկանդամ պաշտել խմաստասիրութենէ յանապատս հնդկաց, են քաղաքացիք երկրաւորիս, թէ և ի ծնանելոյ հրաժա-

բեալք ։ Ա՝ ասն զի այդ է՝ի բարւոյն սակի՝ յորժամ ըստ
հաւատոց լինիցի ծայրագոյն բարւոյն, որ է ՅԾ ։ Ա՝ակայն
զայդ անամաւսին կեանս ոչ ոք յանձին կալաւ նախ քան
զքրիստեղէց. ուր նա ինքն եօթնեքորդն Ա՝ղամայ Ա՝հովիմ՝
որ փոխադրեալն ասի՝ և ոչ մեռեալ, ծնաւ ուստերս և դուս-
տերս յառաջ քան զփոխելն ։ յորս գտաւ Ա՝ենոսասգաս,
ընդ որ և կարգ ծննդոցն յիշատակելոց ածեալ ընթանայ ։
Ա՝սկ արդ էր վասն՝ի Ա՝յենի ծննդոցն սակաւք յայժ սե-
բուններք յիշատակին, եթէ արդարեւ պիտոյ էր յառաջ վա-
րել զայնս մինչև՝ի քրիստեղէց, և ոչ յերկար ժամանակ
յառաջեր քան զարուեստն, մինչև ամ հարիւր կամ աւելի
եւս անսերմն լինել ։ Ա՝ասն զի եթէ մատենագրողն ոչ ա-
ռաջի աչաց ունէր զոք՝ առ որ հարկաւ հասուցանիցէ
զշարս ծննդոցն, զոր օրինակ՝ի Ա՝ենայ սերեալսն կամէր
՝ի Ա՝ղդ անգր գալ հասանել, որում այսպէս յաջորդելոց էր
գարձեալ այլ կարգ կարևոր, զի՝նչ պէտ էին զանգրանիկ
որդւովքն զանց առնել առ՝ի հասանելոյ՝ի Ա՝ամբ, յորոյ
որդիս գադարումն առնու առմաքիւն. այն է՝ յուեե-
բորդ ազգին Ա՝ղամայ, և յեօթնեքորդում՝ի Ա՝յենէ,
որպէս թէ կայր ինչ յարակից՝ կամ առ ժողովուրդն իսրայէլեան, յորում երկրա-
սորն Ա՝բրահամէմ զաիսկ իմն երկնաւոր քաղաքին նահա-
նգարեր, և կամ առ Ա՝ՀՈ ըստ մարմնոյ, որ է՝ի վերայ ա-
մենայնի ՅԾ օրհնեալ յաւիտեանս, վերինն Ա՝բրահամէմ
շինիչ և տիրող, ուր ընդ հակառակն բոլոր զարմ հայե-
նեան բարձաւ ջրհեղեղն ։ Ա՝ասն որոյ կարծելի է՝ թէ
յայն շարս ծննդոց անդրանիկքն եւեթ յիշատակին. և
ընդէր ապա այնպէս սակաւք. որովհետև չէր մարթ այն-
քանեաց միայն լինել մինչև ջրհեղեղ. զի եթէ յայնժամ
ոչ ըստ երկայնակեցութեանն անագաներ արուեցին, յայտ
է՝ թէ ոչ անծննդական միայն չարքն մինչ՝ի հարիւրե-
ամն արուեցի, Ա՝սկ եթէ երեսնամեայք էին՝ի սկսանել
որդեծնութեանն, ահա ութիցս երեսուն, քանզի ութ ծը-
նունդք թուեալ են Ա՝դամայ հանդերձ և որդւովքն Ա՝ա-
մբայ, լինին ամք երկերիւր և քառասուն. և միթէ ընդ

բովանդակ յապա ժամանակն մինչ՝ ի ջրհեղեղ դադարե-
ցին՝ ի ծնանելոյ ։ Ա՛յր աղագաւ ապա որ զայն գրեաց՝
չկամեցաւ զնոի եկեալն ծնունդս արձանագրել ։ Վ՛ասն
զի յ՛ԶամանՅ մինչև՝ ի ջրհեղեղ հաշուեալ գումարին ամբ՝
ըստ մերոց մատենից՝ երկուհարիւր երկերիւր վաթսուն
և երկու ։ իսկ ըստ եբրայեցւոյ՝ հազար վեցհարիւր յի-
սուն և վեց ։ Վ՛որդ Թէ զնուազ զայս Թուական ձեռագա-
գոյն ևս համարիցիմք ։ ի բաց անտի հանեալ զամս եր-
կերիւր քառասուն ։ զի՞արդ և հաւատալի՝ Թէ ամն հա-
զար չորեքհարիւր՝ և ևս աւելի բաւեալ մինչև՝ ի ջրհե-
ղեղ՝ անծնունդ կացեալ իցէ զարմն Կայենի ։

Վ՛ասյ արդ որ ոք յասացեալդ հրէ տարակոյս ։ յոյժ
առնեմ զոր՝ ի հարցաքննել իմ Թէ զիա՞րդ կարծելի իցէ՝
առաջնոցն ազանց ընդ յոքնաթիւ ամս անմերձ կացեալ՝ ի
զաւակագործելոյ ։ կրկնակի լուծումն տուեալ ինդրոյդ ։
այս է՝ կամ զի արբունքն արուեստն անագանեին՝ հաճե-
մատ երկայնատև կենաց նոցա ։ կամ զի որդիքն յիշատա-
կեալ յայն ծնունդս՝ ոչ էին անդրանիկքն ։ այլ այնոքիկ
ընդ որս ունէր մատենագիրն ժամանել՝ ի նկատեալն իւր
անձն ։ որպէս՝ ի ծնունդս Վ՛եթայ՝ առ Վ՛ոյ ։ Վ՛ասն այսո-
րիկ եթէ՝ ի Կայենի ծնունդսն չէր որ դիտեալ այնպիսի՝
առ որ ժամանելն պիտոյ էր ծննդովքն յիշատակելով ։
արտաքս Թողեալ զանդրանիկսն ։ ծնայ այնուհետև խոս-
նալ զայսպիսին արուեստն ։ իբրև զի սակաւ ի զինի հա-
րիւր ամաց լեալ իցէ առ որդեծնութեանն յաջողակք ։ որով
շարք ծնունդոցն ընդ անդրանիկսն ընթանային ։ և Թէ ա-
մացն զոյգ հաւասարէր մինչև՝ ի ջրհեղեղ ։ Վ՛ասյ իցէ Թէր
և այլ պատճառ ինչ գաղտնածածուկ՝ և առ յինէն Թա-
գուն ։ որ վասն մինչ՝ ի Վ՛ամբ և՝ ի նորուն որդիս հա-
սեալ ազգահամարին ։ երևելանայր քաղաքն՝ զոր սահմ-
երկրաւոր ։ և յետ այնր լուծեր մատենագիրն յիշատակել
զայլսն՝ որ մինչ՝ ի ջրհեղեղ ծնանել կարելին ։ Վ՛այ սակ և
զայլ պատճառ ։ որոյ վասն ծննդոցն կարգ ոչ ընդ անդրա-
նիկսն դասաւորեր ։ և ոչ ևս հարկ իցէ յայտաղեցուցանել
՝ի մարդիկն զարբունս արուեստն ։ այս է՝ Թէ քաղաքն զոր

շինեաց Կային յանուն որդւոյ իւրոյ Ենովքայ, կարէր թագաւորել ընդ յամայր ժամանակս, և ունել թագաւորս ոչ բազումս միանգամայն, այլ յիւրաքանչիւր ժամանակս իւրեանց առանձին զայնոսիկ՝ զորս թագաւորեալքն ծնանէին յաջորդս: Այնոցիկ թագաւորաց առաջին լինէր Կային. երկրորդ՝ որդի նորա Ենովք, յորոյ անուն շինեցաւ քաղաքն՝ ուր թագաւորեցէ. երրորդ՝ Գայերիդադ ծնեալ յԵնովքայ. չորրորդ՝ Մայիէլ ծնունդ Գայերիդադայ. հինգերորդ՝ Մաթուսաղա ծնեալ ՚ի Մայիէլեայ. վեցերորդ՝ Ղամէք՝ Մաթուսաղայի ծնեալ որ և յԱդամայ եօթներորդ է ընդ Կային: Եւ ոչ հարկ ՚ի վերայ կայր անդրանկաց փոխանորդ ՚ի թագաւորութին հարցն անցանել, այլ զորս կամ բաղդ ինչ վիճակեցուցանէր, կամ արժանաւորութի իշխելոյ սակս իրիք քաջութե յօգուտ երկրաւոր քաղաքին. և կամ իրաւամբք իմն ժառանգութե աթոռոյ՝ նա փոխանորդէր զհայրն, որ առաւել քան զայլսն էր սիրեցեալ: Թերևս արդեօք մինչդեռ կենդանի էր Ղամէք և թագաւորէր, եղև ջրհեղեղն. որով և նա գտաւ ՚ի կորստեան համօրէն մարդկան, բաց յեղելոցն ՚ի տապանի անդ: Քանզի և ոչ զարմանք ինչ են, եթէ այլաթիւ յոլովութե ամաց ընդ մէջ անկանելով, ընդ այնքան բազմադարեան ժամանակ որ յԱդամայ մինչև ՚ի ջրհեղեղ, ոչ զուգաթիւ լեալ իցեն ծնունդք երկուքանչիւր զարմի, այլ ընդ Կային՝ եօթն, և ընդ Սէթ՝ տասն. զի որպէս յառաջ ասացի՝ Ղամէք եօթներորդ է յԱդամայ, և Նոյ՝ տասներորդ. և վասն այն ոչ մի միայն որդի Ղամէքայ յիշատակեցաւ, որպէս յայլ առաջինսն, այլ բազումք. զի անյայտ էր՝ թէ ո՞ ոք ունիցի յաջորդել ՚ի մեռանել հօրն՝ եթէ մնայր ժամանակ թագաւորելոյ մինչև ՚ի ջրհեղեղն:

Սակայն զիարդ և առեալ հաշուեսցի ազգաթիւ ծնընդոց ՚ի Կայենէ՝ թէպէտ ընդ անդրանիկսն, և թէպէտ ընդ թագաւորս, զայն ինչ լաւել բնաւ ոչ յանձն առնում, զի Ղամէքայ եօթներորդ յԱդամայ ելով, նորին որդիք՝ ՚ի թիւ արկանին մինչ ՚ի լրումն մետասան թուոյ, որով մեղք

նշանակեալ ցուցանին. քանզի յաւելեալ գնին երեք
ուսոյ, և գուսոյ մի. |ոսկ կանայք նոցա պղծեմ խիք ի-
ցեն գուցէ նշանակիչք, և ոչ այլոյ զոր յայժմեա խորհըր-
դաբերել արժան գատիմք. զի աստանօր խօսիմք զնոցոց,
իսկ վասն կանանցն չիք ասացեալ՝ ուստի ենն ծնեալք,
|ՎԴ քանզի օրէնք տանեակ Թուոյն յորմէ
և տանեբանեանն այն Տէրչակելի, յայտ է Թէ մեսասանե-
լոցդ Թիւն անցանելով զտասամբ՝ նշանակէ զանցուածն ա-
րիեաց, որով և զմեզ՝ |՝յոր օրինակաւ՝ ի խորանին
վկայութեՅ՝ որ ի Ձանապարհորդել ժողովրդեանն այ եր
նոցա իբրև տաճար շարժական, հրամայեցաւ առնել մե-
սասան փեղկս մազեղէնս. քանզի մազեղէն խորգով յի-
շուածն է մեզաց՝ սակս այծիցն՝ ի ձախակողմանն լինելոյ. որ
և՝ ի խոստովանել մեղաւ խարազնագեաց լինիմք, իբր
զաղամասի գրէաքն ասելով. “|՝և մեղք իմ առաջի իմ են
յամենայն ժամ”, |՝յա ուրեմն զարմն որ |՝ձամայ ընդ
ժանտագործն |՝ային՝ աւարտի՝ ի մեսասանն Թէ՝ նշա-
նակիչ մեղաց. և այն Թէ իգաւ սահմանեալ կնքի, յորմէ
ակիզըն առնի մեղքն՝ որով ամենեքին մեռանիմք. իսկ
մեղքն գործեցան, զի զՀետ գայցէ մարմնոյ հեշտութեՅն՝
որ հակառակ կայ հոգւոյ. զի և գուսոյ |՝ամբոյ |՝յհե-
մա՝ Թարգմանի հեշտութեՅ՝ |՝ամ ընդ |՝ԼԲ՝ |՝ձամայ
մինչ՝ ի |՝յոյ յայտնեալ ցուցանի տասնեակ Թիւն օրինա-
ւոր. և առ |՝յ մերձ գնին երեք ոզդիք. յորոց մին ան-
կաւ, և երկուքն ևեթ օրհնին՝ ի հօրէ անտի. որպէս
զի խոտանին՝ ի բաց զատմամբն, և ընտիր ոզդւոցն
յաւելմամբ՝ ի Թիւն, երկոտասանն Թիւ վերանակա-
բեացն. որ և՝ ի Թիւ նահապետաց և առաքելոց պա-
տուեալ է՝ ի պատճառս մնասից եօԹնեակ Թուոյ մի
մեամբք բազմապատկելոց. զի երից չորք, և չորից ե-
րեք՝ առնեն երկոտասան. |՝ձոսոցիկ այս պէս գոլով, ժամ
է քննել և յայտ առնել՝ Թէ զիաւրդ երկաքանչիւր այս
զաբմ, որ զատուցեալ ծննդովք նախարագրեն զերկուս քա-
ղաքս՝ զերկրածնացն և զվերածնելոց, յետոյ ապա այնպէս
ինն ընդ երեսաբս խառնակեալ պղտորեցան, մինչև արդա-

բացի եղև ջրհեղեղաւ բառնալ մարդկութիւնս ողջոյն, ու-
Թէ ևեթ մարդոց ապրելով։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Աբ. Ինչ արդեօք յետ յիշատակելոյ զնոյեայ զորդի կայենի՝ անգէն շարա-
կարդէ պատմութիւն ազգահամարի նորա մինչև ի ջրհեղեղ. եւ յետ յիշելոյ
զնոյա զորդի Սեթայ՝ դարձեալ զսկիզբն պարզաւանէ մարդոյ նշանակէ գիտն։

Յայլ. Նկատել արժան է զառաջինն, Հիմ արդեօք ի
Թուարկելն զոր ի կայենէ ծառանդան՝ նախ քան զայլ սե-
րունդս նորա յիշատակելով զՅնոյեայ, յորո անուն չինեցաւ
քաղաք, շարադասեցան այլք մինչ ի յետինն՝ զորմէ ա-
սացի, յորժամ ազգն այն և զարին համայն վախճան ա-
ռին ջրհեղեղաւ։ Իսկ իբրև Սեթայ մի որդին Յնոյեայ յի-
շատակեցաւ, չև ևս առ այլոն անցեալ մինչ ի ջրհեղեղ,
ընդ մէջ անկանի հատուած բանին ասելով. "Եւ ես գիւ
արարածոց մարդկան, յաւուր յորում արար Ած զԱդամ.
ըստ պատկերի Ած ստեղծ զնա. արու և էգ արար զնոսա
և օրհնեաց զնոսա, և անուանեաց զանուն նոցա Ադամ,
յաւուր յորում արար զնոսա,, (Ծն. Ե. 1։ Զայն ինձ՝
Թէ յայն սակս անջրպետ արկաւ բանդ, զի միւսանգամ
Ադամայ սկսանիցի համարողութիւն ժամանակաց. զոր
մատենագրողն ոչ կամեցաւ առնել յերկրաւոր քաղաքին,
ցուցեալ Թէ այնպէս յիշատակէ զայն Ած, զի ոչ ի հա-
շիւ դնէ, Ասացեալ էր վասն դառնոյ աստի ի գլխաւորուն
ծննդոցն, յետ յիշատակելոյ զորդի Սեթայ՝ զայր որ յոյ-
սացաւ կոչել զանուն տեառն Այ. բայց զի այսպէս պիտոյ
էր յանդիման կացուցանել զերկիւղ զայս քաղաք, զմին ի
մարդասպանէ մինչև ի մարդասպան, քանզի և Վ սանդ
խոստովան լինի երկուց կանանց իւրոց՝ Թէ սպանութիւն
գործեաց, և զիւսն յայտնանէ՝ որ յուսացաւ կոչել զանուն
տեառն Այ։ Ի քաղաքին Այ պանդխտացելոյ յաշխարհի

աստ՝ այս խոկ է բովանդակ և գերագոյն պարապուն՝ի մահկանացու կեանս, որ և ցուցաւ՝ի ձեռն միոյ մարգոյ՝ զոր ծնաւ յարութեի սպանելոյն. քանզի մին այն մարդ՝ է միութեի բոլոր քաղաքին վերնոյ, որ թէ և չէ ևս լցացեալ, բայց ընդացս բան նախագուշակ օրինակութեն՝ կ՚ասա ուրեմն որդի Կայենի, այս է՝ որդի աւազտման երկրաւորի՝ ունկնդիր անուն չերկրաւորը քաղաքին, որ՝ի նորին անուն չինեցաւ. քանզի զայսպիսեացդ երգէ սաղմոս. Խբ. 12. «Կարգացին անուանք նոցա՝ի հոգս իւրեանց». որոյ վասն՝ի գէպ գայ նոցա և գրեալն յայլում սաղմոսի. Հբ. 20. «Տէր, ի քաղաքի քումմէ զկտակեսո նոցա անարգեսցես». յոկ Աւելայ որդին, այս է՝ յարութենէն որդի յուսացոյն կոչել զանուն տեառն ՅՀ. քանզի զայն ժողով մարդկան օրինակէ՝ որ ասէին. «Կ՚ելեսս որպէս ձիթենի պտղալից՝ի տան ՅՀ յուսացայ յողորմութեի ՅՀ». Ծ. 10. որ և զնուռտի պարծանս անուան մեծի ոչ ինդրէ յերկրի. զի «Հրանեալ է այր, որոյ անուն տեառն յոյս է նորա. ոչ հայեցաւ նա՝ի նանրութիւն, և ոչ՝ի մոլութիւն սուտ». Ե. 6. Կ՚ըդ լեա յանդիման կացուցանելոյ զերկոսին զքաղաքս, զմի՝ի ստացուածն աշխարհիս, և զմիւս՝ի յոյսն ՅՀ, որք ելին գոգցես ընդ հասարակաց գուռն մահկանացուին բացելոյ Կ՚դամ, ընծանալ և անցանել իւրաքանչիւր յերեսանցն ուրոյն և յանկաւոր կատարած, սկսանի այնուհետև համարողութեի ժամանակաց, յորում չարագործն և այլ ծնունդք, վերստին թերևս կեանս՝ի Կ՚դամայ, յորոյ՝ի դատապարտն արմատոյ՝ իբրև յարժանապատ զանգուածոյ արար ՅՀ անօթս զմահանա յանարգանս բարկութեի, և զայլս՝ի պատիւ ողորմութեի. նոցա հատուցանելով զարժանն ըստ պատահասի, և սոցա պարգևելով զանապարան ըստ հնորհի. որպէս զի որ յերկրի պանդխտեալս քաղաք վերին՝ հայեցեալ յանօթան բարկութեի՝ի միտ առնուցու, մի՛ վատահել յանձնիշխանականն՝ իւր ազատութեի, այլ յուսալ կոչել զանուն տեառն՝ՅՀ՝ Կ՚ան զի որ՝ի բնութենէ կամք՝ բարի՝ներգործեալ՝ի բարւոյն ՅՀ, այլ փոփոխել յանփոփոխելոյն՝

իբր առ 'ի յոչընչէ, կարող է՝ և 'ի բարւոյն խոտորիլ առ 'ի գործելոյ զչար, որ անձնիշխանութե՟ վճարի, և 'ի չարէ խոտորիլ առ 'ի զբարին առնելոյ, որ չվճարի առանց ա՟յ օգնականութե՟ ։

ԳԼՈՒԽ ԻԲ

Յաղագս զեղծանելոյ որդւոցն ա՟յ զակատելոցն 'ի սէր օտարածին կանանց · յորմէ և բոլորին արժանահաս կորուստ ջրհեղեղաւ՝ բաց յութից ոգւոց ։

Արդ՝ նովին անձնիշխան կամօք՝ յետ աճելութե՟ մարդկան ազգի, խառնակութե՟ գործեցաւ և անօրէն չփոթութե՟ երկաքանչիւր քաղաքացս ։ Այս չար ևս առթեցաւ դարձեալ 'ի կանանց ազգէ · ոչ եթէ ըստ առաջնութե՟ օրինակի՝ 'ի պատրանս ուրուք ըմբռնեալ կանանցն այնոցիկ՝ առ 'ի մեղս հրապուրեցին զարս, այլ որ յառաջնմէ իսկ խառնակեցիկ էին յերկրաւոր քաղաքին, այս է՝ 'ի ժողով երկրաքարշիցն, առ գեղոյ մարմնոց իւրեանց սիրելի եղեն որդւոցն ա՟յ, քաղաքացեաց միւսոյ քաղաքին պանդխտացելոյ 'ի կենցաղումս ։ Այսպէս և բարիդ այդ վայելուչ գեղոյ՝ է պարգև ա՟յ · բայց և առ չարս յայն սակս առատաձեռնէ ա՟ծ, զի մի մեծ ինչ բարի վարկանիցեն զայն բարիքն ։ Այլ ահա թողեալ լքեալ զմեծն բարի՝ զայն որ բարեացն է ուրոյն սեպհական, եղև խոտորութե՟ առ 'ի բարին փոքր, որ չէ բարեաց յատուկ, այլ միապէս բարեացն և չարաց · որով որդւոցն ա՟յ տռփացեալ 'ի դըստերս մարդկան, առ 'ի նոցա ամուսնութե՟ն գրգելոյ՝ թիւրեցան մեղկեցան 'ի բարս ժողովոյ երկրակոխիցն, թողեալք յանձնէ զբարեպաշտութիւն զոր ունէին 'ի սրբակրօնիցն ժողովի · քանզի այսու օրինակաւ մարմնոյ գեղ՝ թէ և բարի արարած առ 'ի յա՟յ, բայց ժամանակեայ, նիւթեղէն և կարի ստորին, չարաչար 'ի սէր առեալ լինի, յետս ընկեցեալ զա՟ծ՝ զանզրաւ, զներքին և զյաւէրժակայ բարին · զոր օրինակ զարդարութե՟ ապախտ արարեալ,

'ի սէր ասկւոյ զակատին ագահէք , որ ոչ ասկւոյն մեղ է , այլ մարդոյն ։ Այսպէս ինն է ամենայն արարած · որ բարի գոլով՝ մարթի սիրել և բարւոք և չարաչար · բարիոք, եթէ կարգն պահեացի · չարաչար, եթէ կարգն խանգարեացի ։ Օ որ և 'ի գովեստ ինչ մոմեղենի ' ասացի հանաւօտ տաղիւքս ·

"Լոյս են սոքա , և բարիք իսկ ,
զի քո բարւոյդ են հաստատած ·
Ձէք 'ի նոսա ինչ 'ի մէրմէս ,
բայց որ մեղայ է յանցուած՝
Միբեալ յանկարգս քո փոխանակ՝
զայն որ 'ի քէն բառեղծուած ,

Լոկ արարչէն եթէ չէմարտութիւն սիրեացի , այս է՝ եթէ սիրեացի ինչն , և ոչ այլ ինչ փոխանակ նորա՝ որ չէ նա ինչն , ապաքէն չմարթի սիրել չարաչար · Վանզի և ըզսէրն գլխովին կարգաւորաբար սիրել արժան է , որով բարիոք սիրեացի որ սիրելին է , զի եղիցի 'ի մէզ առաքինութիւնն՝ որով է կեալ բարիոք · Այլն իբրև զայս կարծեմ կարճառօտ և չշդրիտ տահման առաքինութեան , կարգ սիրոյ · Աւտի հարանն Վինի քաղաքն այդ՝ երգէ 'ի սրբազան երգս երգոց · "Կարգեցէք 'ի վերայ իմ զսէր ,, ։ Է . 4 · Վդզայսոբ սիրելութիւն զկարգ յեղաշրջել որդւոցն այդ՝ Թողին զնա , և սիրեցին զդստերս մարդկան · Վրովք երկու առնուամբք յայտնապէս ահա զատանին երկու քաղաքք · իբր ոչ եթէ և նոքա չէին որդիք մարդկան բնութեամբ , բայց անուն այլ ընկալան ըստ ընդհարն · Վանզի ուր 'ի նմին գրի ասացաւ թէ զդստերս մարդկան սիրեցին որդիք այդ , անտանօր կոչին նոքա և հրեշտակք այդ · ուստի բաղձամբ զնոսա ոչ մարդս՝ այլ հրեշտակս լինել համարին ,

1 Ցայտ է 'ի բանիցս , եթէ տաղ ինչ 'ի գովեստ հրաշակերտութեան մոմեղէն չտիպաբերել էցէ առաքելական , և յայնմանէ յառաջ սիրել գնոսաւոր ծրդ · Ա յս ըստ ամենայն ձեռագրաց գնացքին · Լոկ տպագիրքն առհասարակ ունին այսպէս · « Ջոր և 'ի գովեստ արարչին տղոցանէրք չտիպաբերեալ ասէր

ԳԼՈՒԽ ԻԹ

Նեմ արժան իցէ կարծել, թէ հրեշտակք գոյիւ հոգեվիճք սարփակալք ի գէզ կանանց՝ խառնակեալ իցեն ընդ նոսա յորոց և սկսցին եղեալ ծնունդ։

Ո՞ՐԱԳՒ ինդիր վեր՛ի վերոյ յուշ արարեալ մեր յերբորգում գրի մատենիս, ոչ Հաստացաք լուծանիլ իցէ արդեօք Հնար հրեշտակաց՝ որ ոգիքն են, ընդ կանայս զուգաւորիլ մարմնապէս։ Ո՞վ գրեալ է. Աղ. ձՁ. 4. "Ո արար զՀրեշտակս իւր Հոգիս„. այս է՝ զնոսա որք ոգիք են բնութեամբ, արար իւր հրեշտակս՝ կարգելով զնոսա՛ի պատգամաւորութեամբ։ Ի՛նչպէս յոմնականն ՄեՂՔ՛ս, ՛ի մերս հրեշտակ Թարգմանի, կամ պատգամաւոր։ Ասի Թէ արդեօք իցէ՞ մարմնոյ նոցա նշանակիչ յատեալ բանիւն, "և զպաշտօնեայս իւր՛ի Տուր կիզեղոյ„, կամ Թէ պարտ է սիրով իբրև հրով Հոգևաւրաւ վառիլ պաշտօնեից նորա, ընդ երկեպաւթեամբ է։ Վ՛իտեմք, զի և նոյն Ձմարտապատումն տառք վկայեն՝ Թէ հրեշտակք այսպիսի մարմնովք երևեցան մարդկան, մինչ զի ոչ միայն տեսանելի գոյ, այլ և վտնելի։ Ա՛յլ զի կայ զոյդ Հաւակեալ, և բազումք ևս Հաստատեն իբրու անձամբ զիմորձ առեալ, կամ՛լուեալ յայլոց արժանահաւատ փորձառուաց, Թէ Վիղուանք և Վ՛ասնոք՝ աստուածկարծեցեալք՝ մին անտառայ, և միւսն՝ ագարակաց, զորս ռամիկն քաջս կոչէ, յոլովակի բուռն արարեալ իցեն՛ի կանայս, և Թէ գևք ոմանք՝ ՛ի գաղջիացւոց Վ՛ուսիոս կարդացեալք՝ ատեպ յայն գաւրուԹէն մտաբէրիցեն. և զի այսպիսիք ոմանք, և բազումք են վըկայողք իրացդ, մինչ զի ՛ի ժպրՀուԹէն Համարիցի դիմաԽօսել ինչ, սորին վասն չՀամարձակիմ ասել սահմանաւ՝ իցէ արդեօք մարԹ ոգւոց ոմանց մարմին առնուլ՛ի տարբերակեն օգոյ, որ զի այս տարբ՛ի յուզել անդ Հոգմահարաւ՝ ՛ի գոյացուԹէն մարմնոյ և՛ի չոշափումն գայ, և ցանկականն սիրաւ լինել նոցա կրտղական, որով կարիցեն ընդ կանայս

խառնակիլ զգալով և նոցա ։ Ոչ ակամայ ոչ ինչ բնաւ Կամ-
նեալ եմ, թէ հնար եր յայնմ ժամանակի յայսոսիկս
անկղեմանալ սրբոց հրեշտակաց ոչ. և ոչ զնացանէ ասաց
Պետրոս առաքեալ. “ Օ՛ յ եթէ ’ի հրեշտակս յանգա-
ցեալս ՚ձեռ ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ
’ի տարտարոս՝ եւս պահել ’ի դատաստան ։ այլ զայն-
յանէ,՝ սրք ’ի սկզբան ապստամբեալք յոյ ընդ իշխանի ի-
բեւոց սատանայի, անկան կործանեցան, և առ նոսին-
ձու զմարդն առաջին օձաքամբ պատրանօք խարդաւանե-
ցին, Կայք և արանց ՚ձեռ ապաշաւոից հրեշտակս անուանա-
կուել՝ յաձախութեան վկայ է գիրն սրբազան. զի և վասն
Յովհաննու գրեալ է. “ Կհաւասիկ ես առաքեմ զհրեշ-
տակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զձանապարհս քո ։,
Կւ Կաղաքիաս մարգարէ սեպհական ինն ձրիւք հրեշ-
տակ անուանեցաւ ։

Կայց այն ինչ ’ի տարակոյս արկանէ զմինս, զի յա-
ւացելոց անտի հրեշտակաց և ’ի կանանց նոցին տարփա-
ծուաց՝ ոչ միբառեւ մարդկիկ ընձեռնուն ծնեալս, այլ
սկայս, որպէս թէ աս վիթխարիս յաղթամարմինս քան
զմեզ, զոր և յանցեալդ յիշատակեցի, չտեսանիցեմք և
առ միոք ծնեալս ։ Կիշեա սակաւուք ամօք յառաջ՝ յոր-
ժամ միբձ ’ի վերայ կայր հարուած քաղաքին Երուսաղէմայ
’ի գոմեացւոց անտի, գաւաս անտանօր կին ունի ընդ Տօր և
մօր իւրում՝ անաբի մարմնով սկայաձև բարձրացեալ քան
զայլս, յորոյ ’ի տեսուի խուռնըրնեմայ Ռեպկին մարդկին,
առաւել յայս ինչ բերելով զարմանս, զի երկոքին ծնողք
նորա՝ և ոչ ’ի չափ մարդոյ զրոյս բարձրահասակս սովորե-
ցաք տեսանել՝ ռնչկին զերկայնութեն ։ Կայս ուրեմն եր երբ
Տնարաւոր սկայից ծնանել՝ նա և մինչև սրդիք ոչ, հրեշ-
տակ ասացաքըն, խառնակեալ Կին ընդ գաստըս մարդ-
կան՝ ընդ մարմնակենցաղս. այս է՝ սրդիք Կհեայ ընդ
գաստըս Կայնեին ։ Կանգի և ձաշաւնչ գրոյն՝ ուր գայդ
ընձեռնուն, այս քանըք են. “ Կւ եղև իբրև սկսաւ մարդ
դնին բազմանալ ’ի վերայ երկրի, և գաստըք ծնան նոցա,
տեսեալ որդւոցն ոչ զգաստըն մարդկան զի գեղեցիկ Կին,

առէն իւրեանց կանայս յամէնեցունց զոր ընտրեցին՝ և՝ասէ տէր ՚ած . մի՛ ձեռասկ ոգի իմ՝ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին . և եղիցին աւուրք դոցա ամք հարիւր քսան : և՝ սկայք էին՝ ի վերայ երկրի յաւուրսն յայնոսիկ . և յետ այնորիկ իբրև մտանէին որդիք որդիքն՝ առ դստերս մարդկան , և՝ ծնանն իւրեանց որդիս. նոքա էին սկայքն որ յաւիտենից արք անուանիք ,, : և՝ յայ բանք ՚ած եղէն զրոց յայտ առնէն լիով յառաջմէ իսկ լինել սկայից՝ ի վերայ երկրի՝ յորժամ որդիք ՚ի ամուսնացան զդստերս մարդկան , սիրելով զնոսա վասն գեղեցկութեան : և՝ յլև զկնի այնը լինելոյ՝ ծնան սկայք՝ զի ասէ . “ Սկայք էին՝ ի վերայ երկրի յաւուրսն յայնոսիկ . և յետ այնորիկ իբրև մտանէին որդիք ՚ի առ դստերս մարդկան ,, և՝ ձայս ուրեմն կային եթէ յառաջ յաւուրսն յայնոսիկ , և եթէ յետոյ , և՝ ոմն զի ասէ , “ և ծնանն իւրեանց ,, , յայտնի ցուցանէ թէ միոչ չէ ՚ի որդիքն այսպիսի զառաջեալ էին, ծնանէին ոչ ինքեանց , այլ ՚ի . այս է՝ ոչ լինելով նոցա գերի տուփական խառնիճն , այլ ՚ի սպաս պաշտամանն բարգաւաճելոյ՝ ոչ զաղգատոհմ ՚ի պերճութիւն իւրեանց , այլ զընտանիս քաղաքին ՚ի՛, պատգամաւորել նոցա իբրև հրեշտակք ՚ի՛, զի զիւրեանցն յայս ՚ի նա դնիցեն , նմանեալք որ ՚ի Աւետն ծնաւ՝ որդւոյն յարութիւն , և յուսացաւ կոչել զանուն տեառն ՚ի՛. որով յուսով լինէին ընդ սերըն դոցն իւրեանց ժառանգաւորք յաւիտենից բարութեացն , և եղարարք որդւոց իւրեանց ՚ի՝ ներքոյ ՚ի՛ հօր ։

Սակայն ոչ էին նոքա այնպիսի հրեշտակք ՚ի՛, որ չիցեն մարդիկ , ոչ ոմանց եղև կարճել . այլ հաւաստեաւ մարդ էին . զոր և գիրն յայտ առնէ առանց երկբանութեան , ՚Յանգի յառաջ ասացեալ՝ թէ “ Տեսեալ հրեշտակաց (որդւոց) ՚ի՛ զդստերս մարդկան՝ զի գեղեցիկ էին , առէն իւրեանց կանայս յամէնեցունց զոր ընտրեցին ,, , անդէն յաւելուած զնի . “ և՝ յս ասէ տէր ՚ած , մի՛ ձեռասկ ոգի իմ՝ ի՛ մարդկանդ յայդմիկ յաւիտեան՝ վասն լինելոյ դոցա մարմին ,, ։ ՚Յանգի և մարդիկ հոգւով ՚ի՛ եղեալ էին հրեշտակք ՚ի՛ և որդիք , բայց հակամտեալք առ ստորեայքս ,

մարդ կոչին բնութեն անուամբ՝ և ոչ ընդհվին. առին և մարմին՝ մերկացոզքն զՀոգին, և մերկանալովք՝ մերկ ինա-
ցեալք. Լ՚պաքէն եօթանասուն Թարգմանիչք ասացին զոսա՝ և հրեշտակս այ, և որդիս այ, Թէպետ և ոչ ամե-
նայն օրինակք նոյնպէս ունին. զի ոմանք ասեն միայն՝ որ-
դիս այ. և Լ՚ևիւզաս՝ զոր նախապատիւ այլոց դնեն Հրե-
այք, ոչ հրեշտակս և ոչ որդիս այ Թարգմանէ, այլ որ-
դիս աստուածոց, Լ՚ՀԼ երկաքանչիւր իսկ չնմարիտ է. զի
այ որդիք էին, և նովաւ որ Հայրն էր Տերց իւրեանց՝ էին
և ինքեանք եղբարք. այլ և որդիք աստուածոց էին, իբրև
յաստուածոց ծնեալք, ընդ որս և ինքեանք աստուածք
էին, ըստ սաղմոսին. յե. 6. Ես ասացի Թէ աստուածք
իցէք, կամ որդիք բարձրելոյ ամենեքեան, Լ՚ևանզի յի-
բաւի է կարծել, Թէ եօթանասունքն Թարգմանիք մար-
գարէական ինն վիճակեալ էին ոգւոյ, որ զի Թէ փոփո-
խել ինչ, և այլ ազգ քան զընտիրն Թարգմանութեն ա-
սել պատահիցէ, առանց երկիւղի իրիք ծանիցի ա-
սացեալ յիմծակոյս կողմանէ իշխանութիք Հոգւոյն, Ա-
կայն աստանօր եբրայականն իսկ ձայն երկդիմի տայ ի-
մաստս. ուստի Թարգմանել մարթի՝ որդիս այ, և որդիս
աստուածոց,

Լ՚ՀԼ որդ Թողուք՝ ի բաց զառաստիլս զրոցն որ ան-
հարազատք կամ անընդունելիք ասին. այնու զի նո-
ցայն սկիզբն ոչ ծանուցաւ Տերց՝ յորոց գայ հասանել
առ մեզ ստուգաբան և յայտնի առանդութեամբ զո-
րութիւն չնմարտաձառ գրոց, Լ՚ւ Թէպետ յանընդունե-
լիս յայնոսիկ գտանի իրիք իրիք չնմարտութիւն, բայց ի
պատճառս յոլով ստութեց և ոչ մի կանոնական զօրութիւն
գոյ ի նոսա, Ուբրանալ ոչ է մարթ՝ Թէ եօթնեքորդն
Լ՚գամայ Հնոցք գրեալ իցէ ինչ ինչ առ ի յիմծայնոցն.
զի վկայէ այսմ Հիւդաս առաքեալ յիւրումն կաթ ողիկ
Թղթի. Լ՚այց և ոչ վայրապար արտաքոյ են այնոքիկ կա-
նանի գրոց, որ պահել պահէր ի տաճարի եբրայական ժո-
ղովրդեան ընդ տեսչութ քահանայիցն յաջընդելոց. իբրև
զի սակս կարի հնութեն Թերիք առ ի հաւատարմու Թի

դատեցան, և ոչ 'ի վերայ հասանել մարթ էր՝ նոյն այնք էին արդեօք առ 'ի յԵնովքայ գրեցեալքն. զի ոչ յայնպիսեաց ումանց առաջի եդան՝ որոց անկ էր ըստ կարգի յաջորդութեան լինել օրինաց աւանդապահս։ Ուստի որ ինչ միանգամ յանուն Ենովքայ արտաճառեալք 'ի ներքս բերեն զոր վասն սկայիցն առասպելս, որպէս թէ ոչ 'ի մարդոց իցեն նոքա ծնեալք, արդարապէս դատեալք են առ յիմաստնոց՝ ոչ Ենովքայ լինել. զոր օրինակ կանխաւ բազումս ինչ յանուն այլոց մարգարէից, և յետ այնր յանուն առաքելոց հրատարակեցին աղանդաւորք. բայց ամենայնքն իբրև անհարազատք մերժեցան 'ի կանոնական վաւերականութենէ զգուշաւոր քննողութեամբ։ Ուրեմն ապա ըստ կանոնական գրոց եբրայեցւոց և քրիստոնէից աներկբայելի է՝ թէ սկայք բազումք էին նախ քան զջրհեղեղ. և թէ քաղաքացիք էին նոքա երկրաւոր ժողովոյ մարդկան. իսկ որդիք այ 'ի Սեթայ ըստ մարմնոյ սերեալքն՝ թողեալ զարդարութիւն, յարեցան յայս ժողով։ Եւ չէ պարտ զարմանալ՝ թէ 'ի նոցունց ևս ծնանէին սկայք. զի ոչ եթէ ամենեքեան սկայք լինէին, այլ թէ բազմագոյնք յայնժամ՝ քան թէ յետ ջրհեղեղին յապա ժամանակս։ Զորս յայն սակս կամք եղեն արարչին գոյացուցանել, զի ցուցանիցէ և սովիմբ՝ մի միայն զգեղեցկութիւն մարմնոյ, այլ և զմեծութիւն և զուժեղութիւն ոչ մեծ ինչ գրել արժան է առն իմաստնոյ՝ որ երջանկանալ ունի բարեօք հոգևորօք և անմահականօք, որք առաւել ևս լաւք են և հաստատունք, բարեգործաց սեպհականք, և ոչ հասարակաբար բարեացն և չարաց։ Զսոյն այլոյ մարգարէի յայտ արարեալ ասէ. «Անդ ծնան սկայքն անուանիք, 'ի սկզբանէ եղեալք մեծամեծք, հմուտք պատերազմաց. ոչ եթէ ըզնոսա ընտրեաց ած, և ոչ զճանապարհ իմաստութեան ետ նոցա. և կորեան առ 'ի չգոյէ իմաստութեան, և սատակեցան վասն անմտութեան իւրեանց»։ Բարուք. Գ. 26։

ԳԼՈՒԽ ԻԹ

Ը. Խաթգ պարտ է իմանալ զասելն տեառն առ կորստականն ջրհեղեղատ. և Եղիցին աւուրք դոցա ամք հարիւր քսան և։

Ասէ ցոր ասացն ՚ած, «Լ՚ղիցին աւուրք դոցա ամք հա-
րիւր քսան.., ոչ այնպէս առնուլ պարտ է, որպէս թէ
յայտ առնել զկենաց մարդկան յետ այնր չանցանել զհա-
րիւր քսանամենիւքը. ուր գտանեմք նա և զկնի ջրհեղե-
ղին անցանել քան զհինգհարիւր։ Ա՚յլ է իմանալ թէ
զայդ ասաց ՚ած մեզ ՚ի կատարած հինգհարիւրոց ամաց
՚Լ՚ղի, այս է՝ մինչ չորեքհարիւր և ութսներորդ ամ էր
կենաց Նոբա. զոր ըստ սովորութեանն հինգհարիւր կոչէ
գիկն, բազորին անուամբ զևս մեծագոյն մասն յոլովակի
նշանակելով. քանզի ՚ի վեցհարիւր ամի կենաց ՚Լ՚ղի յեր-
կրորդումն ամսեան եղև ջրհեղեղն. ուստի հարիւր և քսան
ամքն նախայառաջեալք՚են կենաց որինալին կորստականացն
այնոցիկ մարդոց, յորոց ՚ի կատարելն ջրահեղձոյին աս-
տուածն լինելոց էր։ Լ՚ոչ վայրապար ինչ կարծիցի ցայն
վայր սահմանել զջրհեղեղն, այլ զի մի գտանիցին յերկրի
անպարտականքն ՚ի կրել զմահ որ ՚ի վրէժխնդրութի՚ն ամ-
բարշտից. այլ եթէ և բարեպաշտից պատահիցէ երբեք
այնպիսի մահուամբ զրաւել, ոչ մի ինչ տուժել յետ մա-
հու կայ նոցա։ Լ՚այց սակայն յայնգամ զոր սուրբ գիրն
յանուանէ յիշատակէ սերեալս ՚ի Լ՚ևեթայ, ոչ զոք մեռա-
ւ ՚ի ջրհեղեղէ։ Լ՚սկ պատ՚ասխանի ՚ած առաստաս հեղեղին այսպէս
պատմի. «Լ՚չ իբրև ետես տէր ՚ած եթէ բազմացան չա-
րիք մարդկան ՚ի վերայ երկրի, և ամենայն որ խորհէր ՚ի
սրտի իւրում ինամով ՚ի չարիս զամենայն աւուրս։ Լ՚չ
ապրեցաւ ՚ած զի արար զմարդն ՚ի վերայ երկրի, և մտա-
խոհ եղև ՚ի սրտի իւրում, և ասէ տէր ՚ած, Ընդնեցից զա-
մենայն մարդին զոր արարի յերեսաց երկրի, ՚ի մարդոյ
մինչև յանասուն, և ՚ի սողոց մինչև ՚ի թռչունս երկնից.
զի բարկացայ զի արարի զնոսա..։

ԳԼՈՒԽ ԻԵ

Թէ բարկութիւն այ՟ ոչ իւիք բորբոքմամբ ամբոխէ զանայլայլելի անդորրութիւն նորին :

Ոչ եթէ պղտորումն ինչ ոգւոյ է բարկութիւն այ՟, այլ դատաստան 'ի պատուհասել զմեղս . իսկ խորհել նորա և ստրջանալ՝ է իրաց փոփոխելեաց պայման անփոփոխ : Զի ոչ որպէս մարդ է ած՟՝ ապաշաւել ընդ գործս իւր . այլ յիրս ամենայն և ամենայնիւ այնչափ հաստատուն է վճիռ նորա , որչափ յառաջգիտութիւն ստոյգ : Սակայն եթէ ոչ 'ի կիր առնոյր գիրն բանս այնպիսիս , ոչ ընտանեգոյն առ իմանալ զինքն ընծայեցուցանէր իւրաքանչիւր վիճակի մարդկան՝ զորս խրատել կամի , երկեցուցանել զամբարտաւանս , զյուլացեալս զարթուցանել, զհարցասէրսն հրահանգել, և զմտառուս տածել . զոր ոչ արդեօք առնէր՝ եթէ նախ չցածնոյր , և ըստ իրաց ինչ չխոնարհէր առ վայրանկեալս : Իսկ այն զի գոյժ արկանէ և զկորուստ կենդանեաց ցամաքայնոց և թռչնոց , քաջ ծանուցանէ զհանդերձելոյ հարուածոյն զմեծութիւն , և ոչ եթէ անբանաւոր կենդանեաց սպառնայ սատակումն , իբր թէ և նոքա մեղուցեալ ինչ իցեն :

ԳԼՈՒԽ ԻԶ

Թէ տապանն՝ զոր շինել հրամայեաց ած՟ Նոյի , ամենայն սարգք զՔն՟ նշանակէր և զեկեղեցի :

ՆՈՅ այր արդար , և որպէս ճշմարիտն գիր խօսի զնմանէ՝ կատարեալ յազգի անդ իւրում, ոչ ըստ օրինակի քաղաքացւոց քաղաքին այ՟ , որք կատարելոցն են անմա-

հութե՝ լինել զուգահաւասար հրեշտակաց այ, այլ որպէս մարթ է 'ի նշդեհութենս լինել կատարեալ, հրաման ընկալեալ յայ կազմել զտապան, յորում ապրեսցի 'ի ջուրցն յորդուէ իւրովքն հանդերձ՝ կնաւ, և որդւովք և նուովք, զոյգ ընդ կենդանիս, որք ըստ պատուիրելոյ տեառն առ Նոյ՝ եկին մտին 'ի տապան անդր: Անշուշտ տիպք օրինակի եղեն իրքդ պանդխտացելումս յաշխարհի քաղաքիս այ, որ է եկեղեցի՝ փայտիւն փրկեալ յոր կախեցաւ միջնորդն այ և մարդկան՝ մարդն Յս Քս. քանզի և երկայնութեն չափք և բարձրութեն և լայնութե՝ օրինակեն զմարմին մարդկային, որով ճշմարտապէս գալ առ մարդիկ նախագուշակեցաւ, և եկն իսկ: Վասն զի մարդկային մարմնոյ երկայնութի 'ի գագաթանէ մինչև ցներբանս՝ վեցկին առաւելու քան զլայնութին՝ որ 'ի կողաց 'ի կողս, և տասնիցս քան զբարձրութին՝ որոյ չափ է 'ի կողմն 'ի թիկանց մինչ յորովայն. զոր օրինակ եթէ զմարդ ընկողմնեալ չափիցես յորսայս կամ 'ի վերայ երեսաց, վեցիցս երկայն է 'ի գլխոյ ցոտս՝ քան թէ լայն յաջմէ ընդ ահեակ, կամ յահեկէ յաջ. և տասնիցս՝ քան զբարձրութին յերկրէ: Նմին իրի արարաւ տապանն երեքհարիւր կանգուն յերկայնութի, և յիսուն 'ի լայնութի, և երեսուն 'ի բարձրութի: Եւ զի դուռն ունէր 'ի կողմանէ, այն է ահա խոցուածն՝ յորժամ կող խաչեցելոյն տիգաւն պատառեցաւ. զի ընդ այս դուռն մտանեն եկեալքն առ նա, յորմէ խորհուրդքն աղբերանան 'ի մաքրագործութի հաւատացելոց: Եւ զի առնել հրամայեցաւ 'ի չորեքկուսի փայտից, զամենայնիւ անդրդուելի վարս սրբոց նկարագրէ. զի քառակուսին կամ խորանարդ ընդ ո՛ր կոյս և շրջեսցի՝ անխախուտ կացցէ: Սոյնպէս և որ այլքն ասացեալք 'ի շինութե տապանին՝ եկեղեցական խորհրդածութեց են նշանակք:

Սակայն այդոցիկ ամենայնի զհետ կրթիլ աստանօր՝ կարի երկար լինի. զոր կանխաւ արարեալ իսկ է մեր 'ի գիրսն գրեալ ընդդէմ Փաւստոսի մանիքեցւոյ, որ ուրանայր թէ գիրք եբրայեցւոց նախագուշակեալ ինչ իցեն

յաղագս Ի՟ոի ։ Ապաքէն մարթ իսկ է՝ թէ ոք աւելի քան զմեզ, և այլ ոք քան զայլ ճահողագոյն ևս մեկնաբանիցեն զայսոսիկ, բայց միայն զի ասացեալքն պատկանեսցին 'ի քաղաքն ա՟յ զորմէ բանքս են, 'ի պանդխտեալն յաշխարհի յայսմիկ չարի խբրու առ ջրհեղեղաւ, եթէ չկամիցի մեկնաբանիչն զարտուղել յիմաստից մատենագրողին ։ Զոր օրինակ զգրեալն աստանօր, «Ներքնատունս և միջնատունս գործեսցես 'ի նմա», իմացայ ես 'ի նախասացեալ մատենին՝ 'ի վերայ եկեղեցւոյ ժողովելոյ յամենայն ազգաց, միջնատուն կամ երկյարկեան ասացեալ յաղագս երկուց ազգաց որ 'ի թլփատութէ և յանթլփատութէ, կամ այլով բանիւ ըստ առաքելոյ՝ զՀրէից և զհեթանոսաց. իսկ վերնատուն կամ եռայարկ, զի ազգք համօրէն յերից որդւոց Նոյի բարգաւաճեցին յետ ջրհեղեղին ։ Արդ թերևս այլ ոք ոչ զայս իմանալ կամիցի, այլ զայլ ինչ ասիցէ՝ ոչ արտաքոյ սահմանի հաւատոյ ։ Նաքանզի ոչ 'ի ներքնակողմն միայն կամեցաւ սենեակս ունել տապանին, այլ և 'ի վերնակողմն՝ զոր միջնատուն ասաց, և ևս 'ի բարձրն կոյս՝ զոր վերնատուն կոչեաց. մինչ զի 'ի ստորէ 'ի վեր երրորդ բնակութի կամ յարկ բարձրանայր. այսորիկ աղագաւ մարթ է իմանալ աստանօր և զերեսեան առ 'ի յառաքելոյ աւանդեալն՝ զհաւատ, զյոյս և զսէր ։ Գոյ 'ի դէպ ևս զերրեակ պտղաբերութիւն խորհըրդածել զաւետարանականս, զերեսնաւորն և զվաթսնաւոր և զհարիւրաւոր. իբրև թէ 'ի խոնարհ վայրի բնակել ամուսնական պարկեշտութե, վերոյ քան զայն՝ այրիականն, 'ի վերնումն՝ կուսականն, և որ այլ ևս լաւագոյն միտս թէ ունիցի ոք խորհել և ասել՝ ըստ հաւատոյ հոգևոր քաղաքիս ։ Զսոյն և վասն այլոց բանից կամ է ինձ ասել որչափ պարզաբանել կայ մեզ աստանօր. զի թէ և չասիցեն միով օրինակաւ, բայց զամենայն 'ի մի միաբանութի ուղղափառ հաւատոյ հայեցուցանել արժան է ։

ԳԼՈՒԽ Ի.

Թէ վասն տապանին և ջրհեղեղին չէ արժան անսալ այնոցիկ՝ որք զպատմականն ևեթ առնուն առանց այլաբանական իմաստից, և ոչ որք օրինակականացն ևեթ պաշտպան կան՝ թողեալ 'ի բաց զպատմականն ճշմարտութիւն :

Այլ սակայն ոչ պարտ է կարծել ումեք, թէ կամ վայրապար գրեալք են այսոքիկ, կամ զգործեցելոցն ճշմարտութ՟ն ևեթ իցէ խնդրելի առանց իրիք այլաբանական իմաստից, կամ թէ ընդ հակառակն՝ այս ամենայն ոչ իրագործութ՟իք ինչ իցեն, այլ միայն տիպք կերպարանաց բանից, և կամ որ ինչ և այն իցէ՝ ոչ հայիցի բնաւ 'ի խորհուրդ եկեղեցւոյ : Ապաքէն խելաշուրջ ոք իցէ նա՝ որ զմատեանս զգուշութ՟բ մեծաւ և անվրէպ աւանդութ՟բ պահպանեալս ընդ հազարս ամաց՝ կարծիցէ անխորհրդաբար ինչ գրեալ, կամ թէ ընդ անցսն գործեցեալս ևեթ ակն յաւիցէ . ուր՝ զի մի՛ զայլսն ասիցեմ, եթէ արդարեւ խուռն բազմութ՟ի կենդանեացն՝ լայնածոց զտապանն լինել պահանջէր, զի՞նչ ապա հարկ էր յանսրբոցն կենդանեաց երկու երկու, և 'ի սրբոց եօթն 'ի ներքս ժողովել, բաւական գոլով յերկաքանչիւրոցն պահպանութ՟ի չափ հաւասարաթիւ . և կամ ա՟ծ որ պահել հրամայեաց առ 'ի թողլոյ նոցա զազգն, միթէ չէ՞ր կարող վերստին հաստատել զնոսա՝ նովին օրինակաւ որով հաստեալն էր :

Իսկ որք վիճին՝ ոչ իրագործութ՟իւ ինչ լինել, այլ լոկ ձևս յաւակ այլոց իրաց, նախ զայն ունին կարծիս, թէ ոչ այնչափ յորդագոյն հնար էր ամբառնալ ջրհեղեղին՝ մինչև ծածկել ջրոցն զլերինս բարձունս հնգետասան կանգնաւ չափ, հայելով 'ի բարձրագագաթն Ողիմպոս, յորոյ վերայ անմարթ է, ասեն, թանձրանալ ամպոց . զի երկնաբերձ իմն գոզցես ելով, չիք անտանոր այս օդ թանձրախիտ՝ առ 'ի ծնունդ հողմոց, մառախղոց և անձրևաց : Այդպիսիք չառնուն 'ի միտ, թէ բոլորից տարերց թան-

ձրագոյնն հող՝ ունի անտանօր տեղի. մինչ ասիցեն թէ գագաթն այնր լերին հող ոչ է։ Եւ ընդէր ապա մինչ յայն միջոցս երկնից օրէն է ամբառնալ հողոյ, իսկ ջրոյ ամբառնալ չիցէ օրէն, որպէս ասենն, ուր դոքա տարրաչափք և տարրակիցք ուսուցանեն՝ վերամբարձ և թեթևագոյն է ջուր քան զհող. և զո՞ր փաստս ունիցին յառաջ բերել, որոյ վասն հող ծանրադանդաղն և ստորնայինն անցեալ իցէ 'ի խաղաղաւէտն երկնի վայրս ընդ շրջանս ամաց բազմաց, իսկ թեթևագոյն և վերամբարձիկ ջրոյ ոչ շնորհեալ իցէ զայդ առնել՝ գէթ առ փոքր մի ժամանակ։

Ասեն դարձեալ. ոչ կարէր չափ տապանին տանել զկենդանեացն սեռս յոգնաթիւս յերկաքանչիւր ազգէ, երկու երկու յանսրբոց, և 'ի սրբոց՝ եօթն։ Ինձ թուի թէ սոքա ոչ առնուն 'ի հաշիւ, բայց միայն զերիս հարիւր կանգունս երկայնութեան, և զյիսուն լայնութեան. և չածեն զմտաւ թէ այլ ևս նոյնչափ կայ յերկրորդում յարկին, և նոյնչափ այլ 'ի վերնումն. ուստի երիցս կրկնեալ զկանգունսն, գումարի ինն հարիւր ընդ երկայն, և հարիւր յիսուն ընդ լայն։ Իսկ եթէ կշռիցեմք զոր Որոգինէսն ճահագրէ, թէ Մովսէս այրն այ վարժեալն ըստ գրեցելումն՝ ամենայն իմաստութե եգիպտացւոց զակատելոց յերկրաչափականն մակացութի, իմանայր թերևս կանգուն երկրաչափական, որոյ մին է, ասեն, իբր զվեց կանգունս, ո՞ ոչ տեսանէ՝ թէ մեծութի այնպիսի որքանեաց լինէր պարագրական։ Բանզի ընդդիմաբանել նոցա, թէ անմարթ էր տապան կառուցանել այնչափ մեծաքանակ, բաջաղանք են մնոտի, ուր գիտեն իսկ քաղաքս ամենավայրս կառուցեալս, և ոչ զհարիւր ամն յորս տապանն կազմեցաւ՝ 'ի յուշ բերեն. գուցէ արդեօք հնար է քար 'ի քար կցել կրով լոկով առ 'ի զպարիսպս ածելոյ ընդ բազում մղոնս, և չիցէ հնար զփայտ 'ի փայտ յարակցել սեպովք և հեղուսիւք և բևեռօք՝ սոսնձեալ կպրաձիւթով, առ 'ի կերտելոյ զտապան՝ ոչ կորագիծ փայտիւք՝ այլ ուղղագիծ ընդ երկայն և ընդ լայն. զոր

ոչ ճարտարութ՟ի մարդկան ունէր 'ի ծով ընկենուլ, այլ 'ի յորդել կոհակացն վերամբառնալ ըստ բնակաւորն օրինի ծանրութ՟ե, վարեալ յաւէտ ա՟ծային տեսչութ՟բ՝ քան մարդոյ հանճարով 'ի շրջագայելն, զի մի՟ խորտակումն ուրեք երբեք կրիցէ։

Եւ և այլոց սովորութ՟ի մանր խուզել յաղագս փոքունց աղկաղկ կենդանեաց, ոչ միայն որպիսի մկունքն են և մողէսք, այլ և խըր մարախք, բզէզք, ճանճք և լուք, եթէ կայի՞ն արդեօք 'ի տապանի անդ բազմաթիւ քան զսահմանեալն 'ի հրամանէն ա՟յ։ Նախ առաջին գիտասցեն որք զայսն հարցաքննեն, զի զասացեալն "Որ սողին 'ի վերայ երկրի", ոչ այնպէս իմանալի է՝ որպէս թէ հարկ էր պատսպարիլ 'ի տապանին նա և ջրակեցիկն անասնոց՝ եթէ զուղակաց իբրև զձկունս, եթէ ընդ երեսս լուղելոց, որպէս են թեաւորք բազումք։ Եւ դարձեալ ասելն, "Արու և էգ լինիցին", յայտ առնէ ապաքէն առ 'ի նորոգումն իւրաքանչիւր սեռի լինել. ուստի ոչ հարկ էր մտանել անդր և այնպիսեաց՝ որք առանց խառնից գոյանան յայլոց նիւթոց, կամ յիրաց փտութ՟է. և կամ եթէ եղեալ ևս իցեն, որպէս 'ի տունս լինել սովորեցան, կարէին առանց որոշ թուոյ կալ, կամ եթէ սրբազնակատարն խորհուրդ որ առ տեղեաւն ցուցանիւր, և նախագիծ օրինակ մեծի գործոյն ոչ այլազգաբար 'ի գլուխ ելանէր ըստ արդեանցն ճշմարտութ՟ե, թէ ոչ սահմանեալ թուով լինէին անտանօր ամենայնքն՝ որոց չմարթի ապրել 'ի ջուրս ըստ բնութ՟են հանգամանաց, այդորիկ հոգողութ՟ի ոչ Նոյի անկանէր՝ կամ այլոց մարդոց, այլ ա՟յ. զի ոչ եթէ Նոյ ինքնին որսացեալ զնոսա 'ի ներքս 'ի տապանն արկանէր, այլ որ գայինն և մտանէին՝ թողացուցանէր. զոր ակնարկէ ասացեալն "Մտանէին առ Նա". այսինքն է՝ ոչ մարդոյ ածելովն, այլ յա՟յ ակնարկութ՟են. և այնպէս՝ զի չէ կարծելի թէ անդ լեալ իցեն և այնոքիկ յորս չիք որոշումն սեռի. քանզի հրամայեալ իսկ էր սահմանաւ՝ արու և էգ լինել։ Զի են ոմանք՝ որք առանց խառնից ծնեալք յիրաց յիրաց, յետ այնր ընդ իրեարս խառնելով ծնանին, որ-

պէս ձանձք. են և այլք՝ յորս խտիր չիք արուի և իգի, որպէս 'ի մեղուս ։ Իսկ յորս թէ և կայցէ զանազանութ̃ի սեռի՝ այլ ոչ ունին սաղմնաւել, որպէս ջորիք արու և մատակ, զի՞նչ պէտք գտանելոյ 'ի տապանին, որպէս թէ ոչ բաւական էր լինել անտանօր ծնողաց նոցա՝ ձիոյ և իշոյ. և որ այլք ևս են 'ի կենդանիս՝ որք խառնմամբ այլասեռիցն զօտարասեռ ինչ ծննդագործեն ։ Սակայն եթէ ունէր և այս ակնարկումն առ խորհուրդն, գտանէին արդեօք 'ի տապանին. զի և այս ազգ ունի զարուի և զիգի որոշումն ։

Հարցաքննեն ոմանք դարձեալ, միթէ այն տեսակք կերակրոց կարգեալք 'ի դարման կենդանեաց՝ որոց միս ևեթ կարծի ուտեստ, եղե՞ն 'ի տապանի առաւել քան զթիւն սահմանեալ առանց յանցանելոյ զպատուիրանաւն, իբր զի առ 'ի պէտս դարմանելոյ այլոցն հարկ էր առնուլ. կամ թէ որ առաւել հաւանելին է, առանց մսոյ եղեն անդ պարէնք՝ ամենեցուն յարմար 'ի ճաշակումն. քանզի տեսաք զբազումս 'ի շաղղակեր կենդանեաց՝ արմտեօք կերակրիլ և պտղովք, մանաւանդ թզով և շագանակօք ։ Զի՞նչ զարմանք ապա, եթէ Նոյ այր իմաստախոհ և արդար՝ խրատեալ ևս առ 'ի յա̃յ, ուտեստ զպատշաճող իւրաքանչիւրումն ազգի պատրաստեալ և համբարեալ իցէ՝ առանց մսոյ. թող զի և կարիք քաղցու տայ զա̃մ առնուլ 'ի ճաշակումն. կամ միթէ ո՞չ էր կարող ա̃ծ գործել զա̃մն համեղաճաշակ և առողջարար, այն որ և զանկերակուր կեալն ունէր շնորհել ա̃ծաբար, թէ ոչ դարմանատրիլն կերակրօք անկ էր 'ի լրումն օրինակի մեծի խորհրրդոյն ։ Բայց արդ կարծել թէ այնչափ յօքնայօրէն նշանակք իրացն եղելոց ոչ օրինակիցեն զեկեղեցի, ոչ ումեք օրէն է, բայց միայն որ կագելն սիրիցէ ։ Զի ահա ազգք և աղինք այնպէս իմն լցին զեկեղեցի՝ սուրբք և անսուրբք մինչև 'ի սահմանեալն չափ կատարածի, և այնպէս յօդիւ միութե̃ն նորա պարունակեալք են, մինչ զի ըստ միումս այս ամենայայտ ապացուցի՝ չէ պարտ և պատշաճ թերամտել և զայլոց՝ որք թերևս աղօտաբար ինչ ասացան, և դժուարինք են առ իմանալ ։

Նու զի այսօրինակ այսպէս, երբ 'ի զուր ինչ գրեալ զպա-տօսիկ չիշխէ կարծել եւ ոչ յամառուտ ոք, եւ ոչ աննշանականս ինչ ասել զգործեցեալսն, եւ ոչ որպէս թէ լոկ բանք իցեն անարգասիք, եւ ոչ ասել թէ աւ օրինակել զեկեղեցի չունին հաւանաբար յարմարումն, այլ յաւէտ ընդհակառակն մնայ հաւանել՝ թէ իմաստնաբար 'ի յիշատակս գրոց աւանդեցան, եւ արդիւնք գործոց են, եւ նշանակեն ինչ, եւ յօրինակել զեկեղեցի 'ի դէպ գան, ահա ասեմ յայս սահման բանի հասուցեալ զգիրս զայս՝ կընքելի է, որպէս զի հարցաքննեսցուք զընթացս՝ որ զկնի ջրհեղեղին եւ անդր՝ զերկաքանչիւր քաղաքաց՝ զերկրաւորին որ ըստ մարդոյ կեայ, եւ զերկնաւորին որ ըստ ա̄յ։

ԳԻՐՔ ՎԵՀԱՏԱՄՆԵՐՈՒՆ

Ուր յառաջնում մասին գրոց մինչև յերկոտասան գլուխ՝ երկոցունց քաղաքացն երկիւղորին և երկրաւորին յառաջադիմելի՛ն ի մէջ բերի ըստ արբասան պատմուճանն՝ ի նոյէ մինչև յԱբրահամ՝ իսկ ի յետին մասին բանք լինին միայն գյառաջադիմելէ երկնային քաղաքին յԱբրահամէ մինչև ի Թագաւորս Խորայելի։

ԳԼՈՒԽ Ա.

Դասանիցն արդեօք յետ ջրհեղեղին ի նոյէ մինչև յԱբրահամ ազգատոհմն ոմանք յաճախալոյք։

Արուց քաղաքին չափիք՝ եթէ յառաջադէմն ձգեցան արդեօք յետ ջրհեղեղին, կամ թէ խափանեցան՝ անջրպետ ընդ միջ անկանելով ժամանակաց ամբարշտութե՛ն, մինչև չհետոյ և ոչ միոյ ուրուք պաշտօնատարի ձրդմարիան նոյ միոյ, բացայայտակի գտանել՛ի բանս գրոց դժուարին է. վասն զի յաճախուն՝ գիրս՝ յետ՝ նոյի արգասաւորէին ապրեցելոյ տապանաւ՛ի հարուածոյ ջրհեղեղին՝ ընդ կնոջն և երից որդւոցն նուոյն, չգտանեմք մինչև ցԱբրահամ զայլոյ ուրուք յաճախուելի՛ն բացայայտ վկայեալ յաճախոյն պատգամաց. այլ միայն զի՝ նոյ զերկու զուր որդիս զՍեմ և զՀաբեթ մարգարէական օրհնութի՛ն հաստատէ, յառաջագոյն նկատեալ զհեռի ժամանակաւ լինելոցն։ Սորին աղագաւ զմինէն յորդւոց իւրոց զկրօսերն քան զաւագն, և զմեծն քան զկտիսն, զմեղուցեալն առեմ առ հայր իւր, ոչ՛ի նմա՝ այլ՛ի Թառն իւր անիծանելոյ ասելովն. "Անիծեալ Քանան մանուկ, և երկրի ծառայ եղբարց իւրոց,, ։ Քանան ծնեալ էր՛ի Քամայ, այն որ զԹմբեցելոյ հօրն զմերկութի՛ն փոխանակ ծածկելոյ՝ հրապարակատես արար։ Ասուի զոր զհետ այսր յա

Ելու ասելով, «Ո՞րհնեալ տէր ՚ած, ՚ած Իսրայ, և եղիցի Աստուած նորա, ընդարձակեսցէ ՚ած Յաբեթի, և բնակեսցէ ՚ի տան Սեմայ..., որպես և անկագործուԹիւն Նոյի զոյգի, և արբենալն ՚ի գտղոյ նորա, և մերկուԹիւն ՚ի հնձելն, և որ այլ ևս գործեցեալքն և արձանագրեալք, յորոնս ունին խմաստս մարգարէականս, ԹէպԹա և քօղարկեալս։

ԳԼՈՒԽ Ը

Զինչ ինչ մարգարէաբար նկարեցաւ յոգիս Նոյի։

Յայն այժմ յերևելն արդեանց իրացն ՚ի սերունդս նոցա, լուով մերկացան որք ծածկեալքն էին. զի ո՛ր իմասցուք ուշ եդեալ յայսոսիկ և մտաւորաբար, ոչ ծանիցեմ ՚ի ՊՀա ունել զՀայեցուածն «Աստղի Սեմ յորոյ ՚ի գաւակին ճուռ ՊՀա ըստ մարմնոյ, Թարգմանի՝ անուանի. իսկ ո՛ առաւել քան զՊՀա մեծանուն, որոյ անուն սփռեալ է ընդ Հանուրս, որ և յերկս երկոց մարգարէականն նահատակեալն Համ մտաւ Թափելոյ. և ՚ի տանն նոյա որ է եկեղեցի, բնակիչ ընդարձակուԹիւն ազգաց. զի Յաբեթ Թարգմանի՝ լայնուԹիւն կամ ընդարձակուԹիւն, Իսկ Աստ՝ ջերմ Թարգմանեալ միջնի որպէ Նոյն, իբրև յերկոցունցն զատուցեալ և ընդ երկոսին խոր կացեալ, ոչ յատաչնապատուց խոպանելացուց, և ոչ ՚ի լման Հանուսաց, զի՝նչ այլ յայտ առնի՝ բայց զՀերեսխովատացն ազգ ջերմացեալ՝ ոչ խմաստուԹեն Հոգւով, այլ անհամաբերուԹեՀ որով բորբոքեալ սովորեցան աղանդաւորացն ոգիք, և զհաղաղուԹիւն սրբոցն աղմկել։ Նոյ և այսոքիկ ՚ի պէտս յատաչքակխելոյն արբեանեկին, ըստ առաքելական բանին. «Նայց և Հերձուածք լինելոց են ՚ի ձեզ. զի որ ընտիքն իցեն ՚ի ձեզ, երևեսցին...» Կր.ժ.19։ Ա՝ան որոյ գրեալ էսկ է. «Ոգին խրատեալ խմաստուն լեսցի, և զամիան ՚ի ծառայուԹիւն վարեսցէ...» Ի՝ա։

Ֆ. 5։ Վասնզի բազում ինչ յիրս ուղղափառ հաւատոյ՝ ի գրոհել հերետիկոսացեալն անհնազիտ բորբոքման, առ ի կարող լինելոյ պաշտպան կալ հակառակ նոցա՝ զգուշացոյց ևս ի քննին առեալ լինին, և առաւել բացայայտեալ իմանին, և սնգագոյնս քարոզին. որով առ ի հաստակորդն չարժեալն ինդիր՝ ուսանելոյ պատճառ լինի։ Այլայն ոչ միայն յայտնապէս որոշեաքն, այլ և ամենեքեան որք քրիստոնէական կոչմամբ պերճացեալք կեանս վարեն կորստականս, ոչ անյայտաբար ինչ օրինակին ի միջին որդի Աստի, զի և առքա զՎեհ չարչարիլն՝ որ մերկութեամբ Աստի նշանակեցաւ, թէպէտ և դատանելոյն պատմեն, այլ չարաչար գործելոյն անպատուեն. ուստի վասն այսպիսեացն ասացաւ. «Ի պըտղոց նոցա ծանիջիք զնոսա»։ Այլ վասն յիւր որդին անիծաւ Վհամ, իբրև ի պատուղ իւր, կամ ի գործ. և ձանձրացեալս Վհանան որդի նոցա թարգմանի՝ չարժուն նոցա. որ չէ այլ ինչ՝ բայց գործ նոցա։ Ասէ Այեաբէթ՝ իբր թէ լիատաւելի և անթէ լիատաւելի, կամ այլով անուամբ յատաւելոյ յորջորջելոյք Հրեայք և հեթանոսք՝ բայց կուեցեալք և արդարացեալք, իմանալով զՀօր իւրեանց զՔրիստոսն՝ որ ի չարչարանս փրկչին առաւելեալ է, հանդերձս զԱբիմաքիք առեալք մտին յհաս յհաս, և ծածկեցին զՔրիստոսն՝ Հօր իւրեանց, և ոչ տեսին զոր պատճառսն չարարն քօղարկեցին։ Այսան զի և ի չարչարանսն Վհան՝ օրինակաւ ինչ զոր ասկս մեր գործեցաւն՝ պատուեմք, և զՀրէիցն ապիրատութիւն զգուեմք։ Հանդերձք զհօր Նոյեայ նշանակեն, և Թիկունք՝ գիշատակ անցելոց. քանզի զչարչարանս Վհան՝ ի ժամանակին յորում Հայբեմ բնակ՝ ի տան Աստի, և եղբայր նոցա չար՝ ի միջոցին, իբր՝ ի գլուխ ելեալ և անցեալ հռչակ եհեղեցի, ոչ ևս նկարեալ զայն որպէս հանդերձեալ։

Այլ չարագործն եղբայր յորդւոջ իւրում, ի գործ իբր, և մանուկ, այս է՝ ծառայ բարեգործ եղբարցն. իբր զի բարիք ի կիր առնուն խնամատեղ զչարսն առ ի մարզըս համերեսութեամբ իւրեանց, և կամ յանձնումն գերութեամբ.

քանզի են են ըստ առաքելոյն վկայելոյ որք զՔս քարո-զեն ոչ սրբութբ. բայց ասէ. «Եթէ պատճառանօք, և եթէ ճշմարտութբ Քս պատմի. և ընդ այս խնդամ, այլ և ուրախ եւս եղէց». Փիլ. Ա. 17. Քանզի նա ինքն անկեալ զայգի, զորմէ մարգարէն ասէ. «Այգի տեառն զօրութեանց տունն Իսրայէլի է». Ես. Ե. 7. և որք 'ի գինւոյ անտի նորա, խմա կամ զբաժակն՝ զորմէ ասէ «Կարէք ըմպել զբաժակն զոր ես ըմպելոցն եմ», և «Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն», որով անշուշտ զիւր չարչարանս նշանակէր, և կամ զի գի-նի՝ բեր որթոյ է, զայն յաւէտ 'ի դէմս բերէ՝ թէ յայ-գւոյ անտի յազգէ Իսրայելացւոց մարմին առընկալաւ և արիւն վասն մեր՝ առ 'ի կարելոյ չարչարիլ. Ես որբե-ցայ, այս է՝ չարչարեցայ. Ես մերկացայ. զի անդ հո-լանեցայ, այս է՝ երևեցայ տկարութիւն նորա, զորմէ ա-ռաքեալ ասէ. «Խեղեալ և խաչեցաւ 'ի մերմէ տկարու-թէն». Բ. Կոր. ԺԳ. 4. և նոյն ասէ դարձեալ. «Տկարն Այ զօրագոյն է քան զմարդիկ, և յիմարն Այ իմաստնագոյն է քան զմարդիկ». Ա. Կոր. Ա. 25. Իսկ առ մերկացումն յաւելուլ գրոյն՝ 'ի տան իւրում, գեղեցկապէս 'ի դէմս ածէ, թէ 'ի մարմնակից ազգէն և 'ի համարեանց իւրոց 'ի Հրէից կրեալ էր զխաչ և զմահ. Զայս զՔսի կիր բարբառով եւեթ արտաքուստ պատմեն խառնակքն, և ոչ զոր պատմենն՝ իմանան. իսկ ընտրեալք 'ի ներքին մար-դուն ունին զմեծահրաշ խորհուրդն, և 'ի ներքս 'ի սրտի մեծարեն զտկարն և զյիմարն Այ, որ զօրագոյն և իմաստ-նագոյն է քան զմարդիկ. Այսմ օրինակ էր այն՝ զի Քամ ելեալ պատմեաց արտաքոյ. իսկ Սեմ և Յաբեթ՝ զի զայն ծածկեցին, այս է՝ առ 'ի մեծարել, մտին 'ի ներքս, ներքոյ վնոյն գործելով.

Զայսոսիկ զգաղտնիս ճծայնմն դրոց հետազօտեմք ըստ մերում կարի՝ այլ ոք քան զայլ դիպաւորագոյն յաւէտ կամ նուազ, բայց միայն կալեալք հաւատոյ՝ թէ ոչ ա-ռանց օրինակութեան պատահեաց գործեցան այնք և 'ի գիր արկան, և թէ վերաբերել արժան է զնոյնս 'ի Քս միայն

և յեկեղեցւոյ նորա, որ է քաղաքն այ · որոյ քարոզութիւն ոչ պակասեաց երբէք անդստին 'ի ստեղծմանէ մարդկութեանս, և տեսանեմք բովանդակապէս 'ի գլուխ ելեալ ։ Արդ յետ ընդունելոյ երկուց որդւոց Նոյի զօրհնութիւն, և միջնոյն՝ զանէծս, այնուհետև մինչև ցԱբրահամ յիշատակ ինչ արդարոց ումանց բարեպաշտելոյ յամս՝ չիք ուրեք ընդ ամս աւելի քան զհազար ։ Ոչ հաւանիմ թէ պակասեցին խոպառ արդարքն · այլ զի զամենեսին յիշատակել գրով՝ յերկար յոյժ լինէր · և էր այն յաւէտ ճշգրտութիւն վիպասանական, քան եթէ մարգարէական յառաջատեսութիւն ։ Վասն որոյ սրբազան գրոցս մատենագրողն, մանաւանդ թէ նովաւ հոգին այ զայնոսիկ միայն բերէ 'ի մէջ, որովք ոչ լոկ անցեալքն պատմեսցին, այլ և ապառնիք նախագուշակին՝ ըստ որում 'ի քաղաքն այ ունին ակնարկումն · զի թէ և ասիցի անտանօր ինչ ինչ ըզմարդոց՝ որ այնմ քաղաքացիք ոչ են, այլ յայն սակս առ՝ զի քաղաքն այ յառաջեսցէ կամ բարձրանայցէ 'ի հակառակին բաղդատութենէ ։ Իբր ոչ եթէ ամենայն վիպագրեալն գործք 'ի տիպ օրինակի համարելիք իցեն, այլ վասն որոց ունին ինչ խորհուրդ նշանակի՝ 'ի ներքս յարին և աննշանակքն ։ Որ օրինակ, երկիր խոփով միայն հատանի · բայց 'ի դոյն գործոյ կատարումն պէտք են և այլոց մասանց արօրոյն · այլ և 'ի քնարս կամ յայլ անօթս երաժշտականս՝ աղիք եւեթ յարմարեալ կային 'ի հընչիւն նուագաց · այլ 'ի յարմարել զնոյնս՝ կան 'ի յօդուածս նուագարանացն և այլ ինչ իրք, որք թէ և 'ի նուագածուաց ոչ բաղխին, բայց 'ի յօդակապել զձայնահանսն պիտանիք են ։ Ըստ այսմ օրինակի 'ի մարգարէական վէպս թէպէտ և ասին ինչ ինչ՝ որոց չիք նշանակել, բայց ընդ նոյնս յարակցին կարգեալքն 'ի նշանակս, և իբր յօդիւք իմն կային ։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս ծննդոց երից որդւոցն Նոյի։

Արդ այսուհետև տեսցուք զծնունդս որդւոց Նոյի, և զոր յաղագս այնոցիկ դէպ թուի ասել, յօդեսցուք յայս մատեան՝ առ՚ի ցուցանելոյ ըստ իւրաքանչիւր ժամանակաց զյառաջադիմութիւն երկոցունց քաղաքաց՝ զերկրաւորին և զերկնաւորին։ Սկիզբն յիշատակելոյ ծննդոցն լինի ՚ի կրսեր որդւոյն ՚ի Յաբեթն յորջորջելոյ. որոյ որդիք ութ գրին յանուանէ, և թոռունք եօթն յերկուց որդւոց նորա, երեք ՚ի միոյն, չորք ՚ի միւսոյն. և լինին ընդ ամենն հնգետասան։ Իսկ որդիք Քամայ միջնոյ որդւոյ՝ Նոյի՝ չորք, և թոռունք հինգ ՚ի միոջէ որդւոյ նորա, թոռնորդք երկու ՚ի միոջէ թոռանէն, և գումարումն նոցա՝ մետասան։ Զայսոսիկ ՚ի համար արկեալ դառնայ իբր ՚ի գլուխ բանին ասելով. «Քուշ ծնաւ զՆեբրովթ, նա սկսաւ լինել սկայ ՚ի վերայ երկրի. և նա էր սկայ որսորդ առաջի տեառն այ̃. վն̃ այնորիկ ասեն՝ իբրև զՆեբրովթ սկայ առաջի տեառն այ̃։ Եւ եղև սկիզբն թագաւորութե̃ն նորա Բաբելոն, և Որեք և Աքադ և Քաղանէ յերկրին Սենաար։ Յերկրէն յայնմանէ ել Ասուր, և շինեաց զՆինուէ, և զՌոբովթ քաղաք, և զՔաղան, և զԴասեմ ՚ի մէջ Նինուէի և ՚ի մէջ Քաղանայ, այն է քաղաք մեծ»։ Իսկ Քուշն հայր սկային Նեբրովթայ՝ առաջին անուանեցաւ յորդիս Քամայ, որոյ որդիք հինգ համարեցան, և թոռունք երկու։ Բայց զսկայն կամ յետ լինելոյ թոռանցն ծնաւ, կամ հաւանելի ես, սակս գերազանցութեան ուրոյն զնմանէ խօսեցաւ գիրն. իբր զի յիշատակի և թագաւորութիւն նորա, որոյ սկիզբն՝ հոյակապն այն Բաբելոն քաղաք, և զոյգ նմին յիշատակեալ քաղաքք կամ գաւառք։ Իսկ ասացեալն՝ յերկրէն յայնմանէ, այս է՝ յերկրէն Սենաար՝ որ անկանէր ՚ի թագաւորութիւն Նեբրովթայ, ել Ասուր և շինեաց

զ՝Աիմոսէ և զայլսն և բան նմանի կարգեալ քաղաքս, կետ բազում ժամանակաց կատարեցաւ այն. զոր ըստ պատշաճի տեղւոյս համառօտ ակնարկեաց՝ սակս ականատես գահակալութեանն աստուածանեցայց՝ հրաշապէս ինն ընդարձակելոյ ի Աիմոսէ, որ Ահելայ է որդի, կառուցող մեծի քաղաքին Աիմոսէի, զայս անուն ընկալեալ ի Աիմոսէ, Յակ Լսուր, յորմէ աստղատանեցայք, ոչ էր յորդիս Ահամայ միջին որդւոյն Այլ, այլ ի Ացմայ որդիան երեց որդւոյ Այլ գահին. ուստի երևի թէ ի սերնդոց Ացմայ ծագեցին որք կետ ժամանակաց կալան զթագաւորութիւն սկայնն, և անտի անդր ևս խաղացեալք չհնեցին զայլ քաղաքս, որոյ առաջինն Աիմոսէ ի Աիմոսէ անուանակոչեալ։ Ընդ այսոքս գառնայ մատենագիրն յայլ որդի Ահամայ՝ կոչեցեալ Ացմոսեմ. և յիշատակին ծնեալսն առ ի նմանէ՝ ոչ անցնիւր այր, այլ եօթն ազգ. և ի վեցերորդէն իբր ի վեցերորդ որդւոյ ազգ ասի ծագեալ փղշտացիք անուանեալ. որով լինին ութ։ Ընդրէն ասպա զարձ առնէ առ Ահանան՝ յորում Ահամ անիծաւ. և ի նմանէ ծնեալսն անուանին մեռասան, ասացեալ զսահմանս յորս սփռեալ հասին, և զքաղաքս ինչ յիշատակելով։ Ապակս ահա ի համար արկեալ՝ զորդիս և զծառունս, յառաջ բերին ի սերնդոց Ահամայ երեսուն և մի ծնունդք։

Նոյ այլ և յիշատակէ զորդիս Ացմայ՝ զերկոց որդւոյ Այլ. զի առ նա գայ հասանել պատմութիւնն ըստ կարգի ծննդոցս այսոցիկ, սկսեալ ի կրսերագունէն։ Այլոյ ի սկսուածն անդր յիշատակելոյ զՑմայ որդիս՝ մնալ ինչ կայ ի վերայ՝ քացայայտութեանէ արժանի, որ և յառաջիկայ խնդիրս կարի պատշաճող է։ Օ ի այսպէս ունի բնաթերցուածն. Ա Ացմայ ծնան որդիք և նորա, Հօրն ամենայն որդւոցն Լրբեթայ, եղբօրն Հաբեթի երիցու.., Կարգ բանիցն պարզելի է։ Ացմայ ծնաւ Լրբեր. և նորա, այսինքն է՝ այնմ Ացմայ, որ Հայկայ է ամենայն որդւոց Լրբերայ։ Ապա յայտ առնել կամեցաւ, թէ Ացմ ևս նահապետ ամենեցուն ծագեալոցն ի զարմէ նորա, զորս Հանդերձեալ է յիշատակել, թէպէտ որդիք էցեն, թէպէտ թո-

ռունք, թէպէտ թոռնիցք, և որ այլ ըստ նմանէքն։ Իբր ոչ եթէ զնա ինքն զԵբեր Սեմ ծնաւ, այլ 'ի Սեմայ հինգերորդ է նա 'ի շարս սերնդոցն։ Քանզի Սեմ բաց յայլոց որդւոց ծնաւ զԱրփաքսադ, Արփաքսադ ծնաւ զԿայնան, Կայնան ծնաւ զՍաղա, Սաղա ծնաւ զԵբեր։ Ոչ վայրապար ինչ ապաքէն նախկին անուանեցաւ նա 'ի Սեմայ ծննդաբանութեն, յառաջագաս քան զորդիսն եղեալ, որ 'ի թոռանցն հինգերորդ է. այլ զի ստոյգ ցուցցի աւանդեալն զրոյց՝ թէ 'ի նմանէ անուանադրեցան եբրայեցիք, իբրև թէ՝ եբերացիք. թէպէտ և գոյ այլ ազգ ևս կարծել, յԱբրահամէ թերևս ասացեալք աբրայեցիք։ Սակայն արդարացեալ ևս է՝ յԵբերայ զեբերացին առեալ յորջորջումն, և ապա միոյ տառին փոխմամբ աբրաբեալ եբրայեցի. զոր և զեբրայականն լեզու կարաց պահել ժողովուրդն միայն իսրայէլեան, յորում պանդխտեաց քաղաքն այ արամբք որոնք, և յամենայնի խորհրդեամբ օրինակեցաւ։ Բայց որդիք Սեմայ նախ անուանեալ դնին վեց, յետոյ 'ի միջէ նոցա ծնանն չորք թոռունք նորա. դարձեալ և միւս որդի Սեմայ ծնաւ զնորին թոռն, և 'ի նմանէ ծնաւ թոռնիս, և 'ի սմանէ թոռն թոռինն, որ է Եբեր։ Իսկ Եբեր ծնաւ երկուս որդիս, անուանեալ զմին Փաղեկ, որ թարգմանի բաժանեալ. ուր 'ի վերայ բերէ գիրն զպատճառ անուանակոչութեն Ճշգրտելով. « Զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր »։ զորոյ զխմաստն յետոյ տեսանեմք։ Իսկ միւս զաւակ Եբերայ ծնաւ որդիս երկոտասան. որով ամենայնքն 'ի Սեմայ սերեալք՝ լինին քսան և եօթն։ Բայց ընդ ամենին բոլոր յառաջագայեալք յերեցունց որդւոց Նոյի, այս ինքն է՝ հնգետասանք 'ի Յաբեթայ, և երեսուն և մի 'ի Քամայ, և քսան և եօթն 'ի Սեմայ՝ լինին եօթանասուն և երեք։ Զհետ այսոցիկ ասէ գիրն. « Սոքա են որդիք Սեմայ յազգս իւրեանց, ըստ լեզուս իւրեանց, յաշխարհս իւրեանց և 'ի տոհմս իւրեանց »։ Եւ դարձեալ վասն ամենեցուն. « Այս են ազգք որդւոց Նոյի ըստ ծնունդս իւրեանց, ըստ տոհմս իւրեանց. և 'ի տո-

ցանէ. սիւեցան կղզիք ազգաց ՚ի վերայ երկրի յետ ջրհեղեղին ,, ։ Յորմէ ունելով իմաստասիրել Թէ յայնմ ժամանակի կային եօթանասուն և երեք, կամ լաւ եւս՝ որպէս յետոյ ցուցցի , եօթանասուն և երկու ազգք , և ոչ լոկ մարդիկ . քանզի նա և յառաջ քան զլինելոցդ Յաբեթայ նոյնպէս ինքեացու . " Լե ՚ի սոցանէ մեհենեան կղզիք ազգաց յերկրի իւրեանց , իւրաքանչիւր ըստ լեզուս յազգս իւրեանց , և ՚ի տոհմս իւրեանց ,, ։

Ի միտ առնուլ՚ի դէպ է այսուհետև զԱստուծոյ աւետիսն կամ զխոստմունս եղեալ առ Աբրահամ . քանզի նոքօք սկսան քաջայայտ լինել պատգամք Աստուծոյ մերոյ ճշմարտի յաղագս ժողովրդեան աստուածապաշտից , զորմէ մարգարէականն ստուգութիւն նախաճառեաց ։ Զառաջինն՚ի խոստմանցս ընթեռնումք այսպէս . “ Եւ ասէ Աստուած ցԱբրահամ , ել դու յերկրէ քումմէ և յազգէ քումմէ և՚ի տանէ հօր քո , և եկ յերկիր զոր ցուցից քեզ . և արարից զքեզ յազգ մեծ , և օրհնեցից զքեզ և մեծացուցից զանուն քո , և եղիցես օրհնեալ . և օրհնեցից զօրհնիչս քո , և զանիծիչս քո անիծից . և օրհնեսցին՚ի քեզ ամենայն ազգ երկրի „ ։ Արդ նկատել արժան է՝ երկուս ինչս խոստացեալ առ Աբրահամ . մի՝ ժառանգել զաւակի նորա զերկիր Քանանու , որ և նշանակի յասացեալն “ Եկ յերկիր զոր ցուցից քեզ , և արարից զքեզ յազգ մեծ „ ։ Իսկ երկրորդն կարի բարձրագոյն , ոչ վասն մարմնաւոր զաւակին , այլ հոգևորին , որով հայր լինի ոչ միայնոյ իսրայելական ազգի , այլ բոլորից ազգաց որք երթան ընդ հետս հաւատոյ նորա . և այս խոստումն բացայայտի բանիւքն “ Եւ օրհնեսցին՚ի զաւակի քում ամենայն ազգ երկրի „ ։ Եղև խոստումնս՝ ըստ կարծելոյն Եւսեբեայ՝ յեօթանասունն և հինգ ամի կենաց Աբրահամու , որպէս թէ անդէն՚ի լինել խոստմանն ելեալ

իցէ Աբրահամ 'ի Խառանէ. զի անհակառակելի է ընթերցուած գրոյն, « Եւ Աբրահամ էր ամաց եօթանասուն և հնգից՝ յորժամ ել 'ի Խառանէ »: Սակայն եթէ յայնմ ամի լեալ իցէ խոստումն, ուրեմն ապա 'ի Խառան բնակէր Աբրահամ ընդ հօր իւրում. քանզի ելանել անտի անմարթ էր, թէ ոչ նախ անտանօր էր բնակեալ: Արդ միթէ ընդդէմ ասիցեմք Ստեփաննոսի ասելոյն. « Ա̃ծ փառաց երևեցաւ Աբրահամու հօր մերում մինչդեռ 'ի Միջագետս էր, մինչ չև բնակեցուցեալ էր զնա 'ի Խառան »: Այլ իմանալ պարտ է թէ 'ի նմին ամի եղև ամենայնն՝ եթէ ա̃յ խոստումնն մինչ չև Աբրահամու 'ի Խառան բնակեալ, եթէ բնակութի̃ նորա 'ի Խառան, և եթէ չուելն անտի. քանզի ոչ միայն նա ինքն Եւսեբի 'ի քրոնիկոնին յամէ անտի խոստմանս համարէ և ցուցանէ յետ չորեքարիւր և երեսուն ամաց լեալ զելոն յԵգիպտոսէ՝ յորժամ օրէնքն տուան, այլ և Պօղոս առաքեալ յիշատակէ զնոյն. Գաղ. Գ. 17:

ԳԼՈՒԽ ԺԷ

Յաղագս երից մեծաշուք թագաւորութեանց ազգաց, յորոց մին՝ այն է ասորեստանեայցն՝ առ Աբրահամաւ գերիվերոյ պերճանայր:

Առ այնու ժամանակաւ կային մեծամեծ թագաւորութիւք ազգաց, յորս պերճացեալ Ջոխանայր քաղաք երկրածնացն, այն է ժողով մարդկան մարմնակենցաղից ընդտերութե̃ ապստամբելոց հրեշտակաց. և են երեք այս թագաւորութիւնք, սիկիոնացւոց, եգիպտացւոց և ասորեստանեայց. և յետինս առաւել քան զայլսն հզօր և ամբարձեալ: Քանզի՝ Նինոս որդի Բելայ ընդ լծով արկեալ էր զժողովուրդս Ասիայ բովանդակ՝ բաց 'ի հնդկաց: Ասիա ոչ զփոքրն ասեմ, զայն մասն որ գաւառ մի է մեծին Ասիայ, այլ զայն որ ընդհանուր Ասիա կարդացեալ է. զոր

ումանք Համարին մի յերկուց մասանց սրեւելեցաւ, և բա-
զումք երրորդ մասն բռնեցին, և վճռին ամենեքին Աբիա,
Նադապ, և Աբիհու. այլ ոչ հաւասար բաժանմամբ. որո-
շեն, Ա՝ ասն զի անուանեալ Աբիա ձգի ի Հարաւոյ ընդ
արեւելս մինչև ի հիւսիս. և Նադապ ի հիւսիսոյ մինչև
յարեւմուտս. և ապա Աբիհու յարեւմտից մինչև ի հա-
րաւ. որով աւասնի Թէ զսահմանքն կիսով չափ գրաւէն
երկուքեան՝ Նադապ և Աբիհու. իսկ զմիւս կէս՝ Աբիա միայ-
նակ. Այլ վասն այն երկու մասն եղեալ նոքին, վա՛ զի յԱվ-
կիանոսէ անտի ընդ երկաքանչիւր ի նեղքս հասեալ ամենայն
ջուր ողողիչ երկրի, և առնէ զմեծ զայս գծով միջերկրա-
կան. Այսքան վասն եռից ընդ երկու մասն զատանիցես
զսահմանքն՝ յարևելս և յարևմուտս, ի միջոցի լճիցի Աբիա,
և ի միջոցի Նադապ և Աբիհու. Յերից սեբուելոց
անտի պէտ Ձայցելոց յայնմ ժամանակի՝ սիկիմեանցն ոչ
էր ընդ ասորեստանեօք, զի Նադապ կայր. բայց եգիպ-
տացւոց զիարդ ոչ ընդ նոքօք լինէր նաւաձեալ որք բռնա-
կալին զԱբիա ողջոյն բաց ի հնդկաց, որպէս պատմի.
Ա՝ ասն որոյ յասորեստանեայս զօրանայր իշխեցողութիւն
ամբարիշտ քաղաքին, և գլուխ նորա՝ Նաբելոն, կարի ձա-
հողական երկրածին քաղաքին գիտառնակութեամբ առեալ
զանուն, Ընդ նոյնոր թագաւորիւք Աբիոս յետ մահուն Ա-
լոյ հօր իւրոյ, որ առաջին պայազատաց անդ ամս վաթ-
սուն և հինգ. յորոյ ի մեռանելն որպէս նոքա Նինոս յա-
ջորդեաց զթագաւորութիւնն ամս լիսուն և երկու. և ի
քառասուն և երեք ամի տէրութեանն նորա ծնաւ Աբրա-
համ. և այն էր իբրև հազար երկերիւր ամաւ յառաջ քան
զչինուիլն Հռոմայ՝ երկրորդն Նաբելոնի գոգցես յա-
րեւմտեան։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս կրկին խօսելոյ ա̃յ ընդ Աբրահամ, խոստանալով նմա և զաւակի նորա զերկիր Քանանու ։

ԸՆԴ մեկնեալ Աբրահամու 'ի Խառանէ ամաց եօթանասուն և հինգ, և հօր նորա՝ հարիւր քառասուն և հինգ ամաց, առեալ զՂովտ զեղբօրորդի և զՍառա զկինն, դիմեաց յերկիրն Քանանու, և եկն եհաս մինչև 'ի Սիւքեմ. ուր և ընկալաւ դարձեալ զա̃ծականն պատգամ. ըստ որում գրեալն է. «Եւ երեւեցաւ Տէր Աբրամու և ասէ ցնա. զաւակի քում տաց զերկիրս զայս»։ Ահա է աստանօր խոստումն յաղագս զաւակին՝ որով եղև նա հանուրց ազգաց հայր, այլ վասն նորա միայն՝ որով իւրայէլական ազգին եղև հայր է. զի այս զաւակ ժառանգեաց զերկիրն զայն ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս պահելոյն ա̃յ զպարկեշտութիւն Սառայի յԵգիպտոս, ուր Աբրահամ ոչ կին իւր ասացեալ էր, այլ քոյր լինել ։

ԿԱՆԳՆԵԱԼ Աբրահամու 'ի տեղւոջն սեղան, և կոչացեալ զանուն ա̃յ, չուեաց անտի և բնակեաց յանապատի. և առնեալ 'ի կարեաց սովու չոգաւ յԵգիպտոս ։ Անդանօր զկին իւր ասաց քոյր լինել, յորում չէայր սուտթի. քանզի քոյր եւս էր, գոլով մերձաւոր համօրէն. որպէս և Ղովտ ըստ նմին մերձաւորութեան՝ եղբօրորդի նորա գոլով, ասացաւ եղբայր նորա ։ Սառայն որոյ զկինն կին լուեաց, և ոչ եթէ ուրացաւ, յոյժ խնամոյ ապաստանն արարեալ զպարկեշտութիւն ընծայեցին, և 'ի մարդկան գոււաղրութեանցն զգուշացեալ մարդկապէս. զի եթէ 'ի վր-

տանգէն ոչ զգուշանայր՝ որչափ զգուշանալն մարթ էր, լինէր փորձել զնոճ առաւել քան յառաջ՝ ի նա. և վասն այսր բանի ասացեալ է մեր լուով ընդդէմ չարախօսութեն փաւստոսի մանիքեցւոյ՝ Յոչ արդարեւ կատարեցաւ ոք բռւմ աչն ունէր՝ ի տեառնէ Քրիստոսէ. քանզի փաւստոս արքայ եգիպտացւոց այն ինչ լիւր կնոջն առնոյր զԱստա, մեծապէս՝ ի վիշտս մատնեալ դարձոյց անդրէն առ այր իւր. և ոչ հաւանիմք ընդ այսմ ասել, կողով պղծեալ ինչ իցէ կինն. այլ առաւել ունիմք հաւատալ, թէ յետս կասեցաւ փարաւոն՝ ի գործոյ անտի վշտաբեր մեծամեծաց։

ԳԻՂԻՒ Ի

Ցաղագս մեկնելոյ՝ ի միմանց Ղովտայ և Աբրահամու կամաւոր հաճութեբ սիրոյ։

ԻՐԲԵՒ դարձ արար Աբրահամ յԵգիպտոսէ՝ ի տեղին ուստի եկեալն էր, յայնժամ եղև որոշել՝ ի նմանէ Ղովտայ եղբօրորդւոյն և գնալ յերկիր սոդոմացւոց, հաստատուն առ իբեւարս զսիրելուին կալեալք, Աչանգի մեծացան նոքա, և հովիւս ունեցեալ բազումս՝ որք հակառակէին ընդ միմեանս, խորհեցան արգելուլ այսու օրինակաւ զանհամբոյր գժտութեն ընտանեաց իւրեանց. զի մարթ էր յայնմ պատճառել լինել գրգռուել ինչ և յիւրեանց միջի, որպէս սովորութեն է առ մարդիկ՝ Աչմին իբր զառաջս չարեացն ունելով Աբրահամ, ասաց առ Ղովտ. Ո՞ի լեցի կռիւ ընդ իս և ընդ քեզ, և ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո. ոչ աւագիկ երկիրդ ամենայն առաջի քո է. մեկնեաց յինէն. եթէ դու յահեակ, ես յաջ. եթէ դու յաջ, ես յահեակ..։ Ախերեւս ասասի կալաւ արդեօք առ մարդիկ սովորութեն իրաւախոհ՝ զի յորժամ կայցէ բաժանել զերկիր կամ զկալուած ինչ, երիցագունեն է բաժանել, և կրաւորն ընտրել։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Ցաւագա երբորդ խոստանձն այ, որով վերկիրք գանանու խոստանայ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան։

ՅՈՐԺԱՄ մեկնեցան և ուրոյն բնակեցան Աբրահամ և Ղովտ առ ի պէտս դիւրելոյ տանց իւրեանց, այլ ոչ անմիաբանաբար ոգւով և Աբրահամ կայր յերկրին Քանանու, իսկ Ղովտ ի Սոդոմ, երբորդ պատգամաբարբառեցաւ առ Աբրահամ. "Հայեաց աչօք քովք և տես ի տեղւոջէ յորում դու ես, ի կողմանէ հիւսիսոյ և հարաւոյ, յարևելից և ի ծովս. զի զամենայն երկիրդ զոր տեսանես դու, քեզ տայ զդա և զաւակի քում մինչև յաւիտեան։ Եւ արարից զզաւակ քո իբրև զաւազ երկրի. եթէ կարիցէ ոք թուել զաւազ երկրի, ապա և քո զաւակ ընդ թիւ մտցէ։ Եւ արդ արի չքնաց ընդ երկիրդ յերկայնութիւն դորա և ի լայնութիւն դորա. զի քեզ տացից զդա։" Եւ արդեօք կայցէ ի խոստմանս յայսմ և այն որով եղև հայր ամենայն ազգաց, էերևի յայնմանակս. զի մարթէ առնուլ ի դոյն զասէնն. "Աբրահամ զզաւակ քո իբրև զաւազ երկրի"։ և է ասացուածդ ըստ յատնականին ոձոյ կարգացեալ չափազանցութիւն կամ առաւելաբանութիւն. որ է ոճ փոխաբերեալ և ոչ յատուկ. և զայնպիսի ձևս փոխաբերական ի կիր առնուլ զգրոց ոչ աք որ ի նոսա մեկացու լեալ իցէ, յերկիւղանայ, Իսկ փոխաբերութիւն յիշանակ այն է, յորժամ ասացածն առաւելու կարի չոյժ քան զնշանակեալն բանիւն. զի ո՞ չտեսանէ թէ աւազոյն թիւ գերազանցէ անհամեմատ և քան զհամօրէն մարդկան Ա՝ղ տասից մինչև ի վախճան աշխարհի. քանիսն ասա՝ ի վեր ևս քան զզաւակ Աբրահամու՝ ոչ միայն ըստ խոսքակական ազգին, այլև որ ըստ հաւատոցն նմանութեանէ, և լինելոց է ընդ ոտիկեաս յամենայն ազգաց. որ և այս զաւակ առ բազմութիւն ամբաւչատաց ի սակաւս է, թէպէտ և

այն նուազունք ունին զիւրեանցն անհամար բազմութիւն, որ ի թիւ աւազոյ երկրի օրհնակեացյ ըստ առաւելաբանութեան։ Այսպէսն բազմութիւնն խոստացեալ Աբրահամու՝ անհուելի է ոչ այ, այլ մարդկան. իսկ այ և ոչ աւազ երկրի։ Այլ քանզի ոչ միայն ազգն իսրայէլեան՝ այլ բովանդակ զաւակ Աբրահամու, ուր միանգամ կայ խոստումն, ոչ ըստ մարմնոյ օրհնոց բազմոյ՝ այլ ըստ հոգւոյ, ի դէպ համեմատի բազմութեան աւազոյ, մարթի է իմանալ աստուածային ըստ երկուցն և եղեալ վերստուին։ Այլոց ասացի՝ ոչ յայտնապէս երևիլ, վասն զի և միոյ այմ ազգի բազմութեան՝ որ ըստ մարմնոյ ծնեալ Աբրահամ՝ ի տանէ Յակոբ բայ թուին նորա, այնչափ անհնարաց՝ մինչև ընդ գոգցես զամենայն կոզմանս երկրի. ուստի և այս ազգ մարթի ասել աւազոյն բազմութեան զալ ի կիր ըստ առաւելաբանութեան. զի է և այս միայնակ անհուելի մարդկան։ Իսկ երկիր աստանօր յայտ է թէ նշանակէ զԱնանուն միայն. բայց տարակոյս գոյ լինելոյ ոմանց յասելոյն «Վկեզ տաց զդա և զաւակի քում մինչև յաւիտեան», եթէ յաւիտեան ասան իմանայցեն զմշանջենաւորն։ Իսկ եթէ աստանօր իմանայցեն՝ որպէս և Տաւանեալ իսկ ասէ, զսկիզբն հանդերձելոյ յաւիտենին՝ ի կատարած ներկայիս, ոչ գոյնդ յատարակուսիլ. զի թէ և մերժել մերժեցան իսրայելացիք Աստուածդ մեզ, բայց յայլ քաղաքս երկրին Վանանու կան ինամն, և կայցեն մինչ՝ ի կատարած. և այն իսկ երկիր առհասարակ բնակեալ է՝ ի քրիստոնէից, որ և նոքա են զաւակ Աբրահամու։

ԻՒ ՅԱՒԵԼ ԻՆ

Աբրահամ վախճան զՇառայ ասդմացոց, յորժամ Թափէաց զՂօժա ի գերութիւն, և օրհնեցաւ ի Աստուծոյ ի Աբեղիսեդեկէ քահանայէ։

Ընդունելով Աբրահամու զայս պատգամ խոստման, չոր ապար և գոպարեաց յայլազգ տեղւոջ երկրին, առ կաղ-

նաւքին ||Ա մարքեէ որ էր ի Կէբրոն։ Ի յարձակիլ Թշնամեացն ի ||ոգամ, հինգ Թագաւորք մարտ եդին ընդդէմ Յեսուայ, և սոդոմացիքն ի պարտուԹիւն մանուկեան։ գերի անկաւ և Ղովտ, զոր գերծոյց Աբրահամ, զուարԹական ընդ իւր տարեալ զերեքհարիւր ուԹևտասն ընդ դաձինսն։ և գյաղԹուԹենէն ետ մատոյց Թագաւորացն սոդոմացւոց, ոչ ինչ առնուլ կամեցեալ յատուկ անտի՝ զոր Թագաւորն ||ոգոմայ առաջի առնէր նմա։ Ոչ ահա յոյժ ամ սիրասէս օրհնեցաւ նա ի ||Ելբիսեդեկէ՝ որ քահանայ էր այ բարձրելոյ, զորմէ բազում ինչ և մեծամեծ գրեալ կան ի ԹուղԹն մակագրեալ առ երբայեցիս, ըստ բազմաց ասելոյ՝ ի Պօղոսէ առաքելոյ, Թէպէտև ոչ հաւատն ոմանք։ Ի դիտաւոր գառաջինն ցուցցէ պատարագն, որ այժմ մատուցանի ի քրիստոնէից ընդ ողբոյս սիրելեաց, և կատարի Հարուստ ժամանակաւ գինի ասպետացն մարգարէին ի Ոչխ, որ գեռ գալոց էր ի մարմին։ Ոչ ասէ քահանայ յաւիտեան ըստ կարգին ||Ելբիսեդեկի՝, Այլ ոչ ըստ կարգին Հարցնի, որ խափանելոցն էր ի լուսափայլել արդեամնցն նախանկարելոց առաւելականացն այնոքիւք։

ԳԻ ՅԻՒՍ ԻՆ։

Զազգս խոստանայ այ առ Աբրահամ վասն բազմութեան ըստ բազմութեան աստեղաց։ յոր հաւատալով արդարացաւ միշտեռ յանթվեսութեան էր։

Ի դէպ բան նոին դարձեալ յայնմ ժամանակի առ Աբրահամ ի տեսլեան, և խոստանայր նմա զպատպանութիւն և վարձս բազում յոյժ։ Իսկ Աբրահամ հոգ ածեալ ունել սերունդս, զի դիզաբար սին զիւր ընդդէմն ասէր կալ ինքեան ժառանգ։ Այլ անդէն վարդապետի առեւտրական նմա, Թէ կացցէ ժառանգ ոչ ընդդէմն այն, այլ Աբրահամ ծնանի։ և միւսանգամ խոստանայ նմա զաստեղս երկնից, զոր ոչ զօրէն աւազդ երկրի, այլ աստեղաց երկնից։ որով Թուի

ինձ խոստանալ առաւել զսերունդս վսեմական ըստ երկնաւոր երջանկութեն : Քանզի ըստ բազմութենն առեալ զբանդ, զի՞նչ են աստեղք երկնից առ աւազով երկրի, բայց եթէ և զայս յարացոյց առցէ ոք ըստ այնմ ևեթ նմանութեն, զի ոչ 'ի համար անկանին նա և աստեղք. զի չէ հաւատալի թէ տեսանել մարթ իցէ զամենայնն առհասարակ. և որչափ ոք կորովի բբօք նշմարիցէ, նոյնչափ յոլովագոյնս տեսանէ, ուստի կարծելի է իրաւաբար՝ ծածկիլ ոմանց յայնցանէ նա և 'ի քաջ դիտողաց, թող զայն ևս աստեղս զորոց ասեն ծագել և մտանել յայլում կողման աշխարհի կարի բացակայ 'ի մէնջ : Բայց որք միանգամ կարծեն յանձինս գիտակ գոլ բովանդակ համարոյ աստեղաց և ընդ գրով արկանել, որպիսի ոք Արատոսն է կամ Եւդոքսոս, և կամ որ այլք ևս, յանդիմանեալ կշտամբին բանիւ գրոցս : Յայս տեղի ակնարկէ առած առաքելոյն 'ի մեծացուցանել զա̅յ շնորհսն. “Հաւատաց Աբրահամ յա̅ծ, և համարեցաւ նմա յարդարութի̃”. զի մի՛ թլփատութե̃ն պարծեսցի, և զազգս անթլփատս արտաքոյ հաւատոց : Ոչ թողուլ կամիցի. քանզի յորժամ հաւատք յարդարութի̃ համարեցան Աբրահամու 'ի հաւատալ նորա, չև ևս էր թլփատեալ :

ԳԼՈՒԽ ԻԳ

Զի՞նչ նշանակէր զոհն զոր հրամայեաց Ա̅ծ մատուցանել 'ի խնդրել Աբրահամու գիտել զոր հաւատացն :

ԻՍ ՏԵՍԼԵԱՆ յայնմ զայս ևս ասէ Ա̅ծ 'ի խօսելն ընդ Աբրահամու. “Ես եմ Տ̅ր Ա̅ծ քո որ հանի զքեզ յաշխարհէն քաղդէացւոց, տալ քեզ զերկիրդ զայդ 'ի ժառանգութի̃” : Ուր 'ի հարցանել Աբրահամու՝ իւ գիտասցէ ժառանգել զայն, ասաց նմա Ա̅ծ. “Առ դու ինձ երինջ երեմեան, և քօշ երեմեան, և խոյ երեմեան, և տատրակ և

աղաւնի ։ Եւ առ զամենայն զայն և յօշեաց զնոսա ընդ մէջ, և եդ զնոսա դէմ ընդդէմ միմեանց, և զթռչունսն ոչ յօշեաց. և իջանէին թռչունք 'ի վերայ յօշելոյ անդամաթուին նոցա, և նստէր առ նոքօք Աբրամ ։ Եւ մօտ ընդ մուտս արևուն թմբրութի անկանէր 'ի վերայ Աբրամու, և ահա ահ խաւարին հասանէր 'ի վերայ նորա, և ասացաւ առ Աբրամ ։ Գիտելով գիտասջիր, զի պանդուխտ եղիցի զաւակ քո յերկիր որ ոչ իւր իցէ. և ծառայեցուսցեն զնոսա և չարչարեսցեն և տառապեցուսցեն զնա ամս չորեքհարիւր ։ Բայց զազգն որում ծառայեսցեն, դատեցայց ես. և յետ այնորիկ ելցեն այսր բազում ստացուածովք ։ Եւ դու երթիցես առ հարս քո խաղաղութի, սնեալ 'ի բարւոք ծերութե. և 'ի չորրորդում ազգի դարձցին այսրէն. քանզի չև ևս լցեալ է մեղք ամովրհացւոցն մինչև ցայժմ ։ Եւ իբրև արեն 'ի մուտս լինէր բոցք հատանէին, և ահա հնոց ծխեալ, և ջահագայթք հրոյ անցանէին ընդ մէջ անդամոցն յօշելոյ ։ Յաւուր յայնմիկ եդ տէր ուխտ ընդ Աբրահամու և ասէ. զաւակի քում տաց զերկիրդ զայդ 'ի գետոյն եգիպտացւոց մինչև 'ի գետն մեծ Եփրատ զկինեցիս, և զկենեզացիս և զկեդմոնացիս և զքետացիս և զփերեզացիս և զռափիմացիս և զամովրհացիս և զքանանացիս և զգերգեսացիս և զյեբուսացիս ,, ։

Այս ամենայն եղև և ասացաւ առ յԱյ 'ի տեսլեան անդ զորոց յերկար է մի ըստ միոջէ ճառաբանել բացերևակի, և առաջարկութե գործոցս արտաքոյ ելանէ ։ Վասն որոյ զբաւականն ևեթ տեսանել արժան է. զի յետ ասելոյն հաւատաց Աբրամ յԱծ, և համարեցաւ նմա յարդարութի, ոչ եթէ երկմտեալ ինչ 'ի հաւատոցն ասէր, “ Տէր տէր, իւ գիտացից եթէ ժառանգիցեմ զսա ,, . ժառանգութի զերկրին խոստացելոյ իմացեալ ։ Ոչ ասաց՝ ուստի՞ գիտացից, որպէս թէ չև հաւատացեալ. այլ ասէ, իւ գիտացից. տարացոյց ինչ հաւատացելոյ իւրին տալ հայցելով առ 'ի զգլխարդն գիտելոյ. զոր օրինակ ոչ թերահաւատութի ինչ էր կուսին Մարիամու յասելն. “ Զիա՞րդ լինիցի ինձ

այդ, քանզի զայր ոչ գիտեմ ... քանզի հաւատակալ նորա ընդ լինելոյն, զյարատևական կատարմանն հարցանէր. և ըստ խնդրելոյն լուաւ. "Հոգին որ եկեսցէ ի քեզ, և զօրութեամբ բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո ... ի ըդ տա-բացոյց տուաւ Աբրահամու յանանուոց՝ երինջ, քոյր և խոյ, և երիս Թռչունք՝ տատրակ և աղաւնի. զի գիտասցէ Թէ ըստ այսոցիկ ի գլուխ ելանելոց և զոր լինելոյն համարեր անեղիսիա, կներևս արդեօք երինջով նշանակեացի ժողովուրդն եգեալ ընդ լծով օրինաց, քոյրս նորա ժողովուրդ՝ յորժամ մեռանիցեմ, և խոյիս նորա ժողովուրդ՝ յորժամ Թագաւորեսցէ. Աբրահամ ասէր կենդանեաս, իբրև զի երևելի սահմանք ժամանակաց են յԱստուած մինչև ի Այր, և ի նմանէ յԱբրահամ, և ի սմանէ մինչ ի Ծա-ւիթ. որ յանարգել Աաւուզայ՝ առաջին հաստատեցաւ կամաք տեառն ի ԹագաւորաՀեն իսրայէլեան ազգին. և յերրորդ յայսմ կարգի՝ որ յԱբրահամէ մինչև ի Ծաւիթ աձեաց ժողովուրդն այն՝ իբր իւրումն երրորդ հաստակի վի-ճակելով Աբդ եթէ այսոցիկ կամ այլ ինչ դիպողագոյնս նշանակիցին կենդանեօքս, զայն ինչ անեղիսիայ ասէիմ, Թէ յաւելուած տատրակին և աղաւնոյն արանց հոգևորաց է նախագիծ ցուցակ, որոյ վասն ասացաւ. "Այս զերծ-չանան ոչ յօշեաց ... քանզի մարմնաւորը բաժանին յիւ-րեանս. իսկ հոգևորքն ոչ իւրք, եթէ այնոցիկ որք ի զաւ-զական կենցաղականացն Թէ մարդկան մեկուսացեալ են իբրև զտատրակ, և եթէ կենցաղակցորդքն՝ զօրէն ազաւնոյ. սա-կայն երկաբանիւք այս Թռչունս պարզամիտ է և անվնաս, նշանակեալ Թէ յիսրայէլեան ժողովրդեան՝ ում վիճակե-ցաց էր երկիրն, կացցեն ինասցեն որդիքք աւետեաց և ժա-ռանգք արքայութեան ի յաւիտենից երանութեան. Իսկ Թռչունքն որ ի վերայ անդամոցն յօշելոց իջանէին, ոչ բարւոյ խիք յայտարարք են, այլ հոգւոցն օդոյս այսոյ, որք ի մարմնաւորացն յօշատելոց Հաբակ իմն որսանեն, Իսկ այն զի առ նոքօք նստէր Աբրահամ, յայտ առնէ Թէ նա է ի մարմնաւորացն բաժանելոց միջի զտանիցին մինչև ի կատարած Հնմարիտ հաւատացեալքն. Այս զի ընդ մեռս

աբեւաւն ԹմբրաւԹի անկանէք ի վերոյ Յ[ք]րահամու, և
ահ մեծ խաւաբին, նշանակի՝ մերձ ի կատարած աշխաբ-
հի կրէ հառաւագելոյ խռովուԹի և նեղուԹի մեծ, ըսա
ասացելումն տեառն յաւետաբանի. "Ո՛վ ի եղեցի յայն-
ժամ նեղուԹի մեծ, որպիսի ոչ եղև ի սկզբանէ ",

Իսկ որ ասացաւն առ Յ[ք]րահամ, "Վախեալ գիտաս-
ջիը, զի պատգուխտ եղերցի զաւակ քո յերկիր որ ոչ իւր
էցէ, և ծառայեցուցին զնոսա և չարչարեցուցին ամս չո-
բեքհարիւր "յայսմանաբան գուշակուԹի է ժողովրդեանն
Ասրայելի ծառայելոյ Հ[ա]գիպտոս. Իբր ոչ եՀէ ամս չո-
բեքհարիւր կալոց էր ժողովուրդն ընդ ծառայուԹիւն եգիպ-
տացոցն հարստահարողաց, այլ զի կուսցանէ Թէ յայն ի
չորեքհարիւրն ամսն վերնիցի. զոր օրինակ որ գրեցաւն յա-
զագս Աբրայի հօր Յ[ք]րահամու. "Յո՛ւ եղիցի առուրբ
Աբրայի ի Ասառան ամք երկերիւր և հինգ "։ ոչ միւ ան-
ամնօր եկեաց նոյնիբան, այլ անդ լցան ամքն. նոյնպէս առ
ամնօր յայն սակս ի միջ եգաւ "Յո՛ւ ծառայեցուցին զնո-
սա և չարչարեսցին ամս չորեքհարիւր "։ զի յայն տառա-
պանն լցաւ Թէ նոսա ասացեալ, այլ ոչ եՀէ անդ ծախեցաւ
բռնադակ։ Իսկ ասէն ամք չորեքհարիւրի՝ սակս ամբողջ
զիԹիւ նշանակելոյ. ապա Թէ ոչ՝ փոքր ինչ աւելի ևս էին,
եՀէ ի ժամանակէ անտի հաշուեացին՝ յորում խոստ-
մունքս եղեն առ Յ[ք]րահամ, և եՀէ յորմէ հետէ ծնաւ
Ասահակ, վասն զաւակին Յ[ք]րահամու՝ զորմէ գուշակու-
Թիւնքս էին։ Ալ ասն զի համարին որպէս վերոյ ասացաք,
յեօԹանասուն և ի հինգ ամին Յ[ք]րահամու, յորժամ
առաջին խոստումն եղև առ նա մինչև յելս Ասրայելի
Հ[ա]գիպտոսէ՝ ամք չորեքհարիւրն և երեսուն. զոր և առա-
քեալ այսպէս յառաջ բերէ. "Ասայ զայս առեմ. զկտակն
յառաջագոյն հաստատեալ յոյ ի Ա՛ստ օրհնէն որ յետ չո-
րեքհարիւրն և երեսուն ամի եգան, ոչ կարեն խափանել առ
ի խափանել զաւետիսն.։ Ասյա ուրեմն մարԹի էր զայս
չորեքհարիւրն և երեսուն ամն կոչել չորեքհարիւրն, զի ոչ
շատ աւելի էին, և ոչ աւելի զի ամք ինչ յայսմ Թուոյ մին
ինչ անցեալ էին յորժամ այսորիկ ի տեսլեան անդ ցու-

ցան և ասացան առ Աբրահամ, և կամ յորժամ Իսահակ ծնաւ Հարիւրամեայն Հօրն յետ քան և Հինգ ամաց յառաջ քան խաստմանել անտի, որով ի չորեքՀարիւր և յերեսուն ամաց ինչպէս չորեքՀարիւր և Հինգ · զոր և չորեքՀարիւր կամ ասել ՚ձԾ · և այլ և այ քանզ որ զՀետ գան ի գուշակութենն այ, անեղբայր Հային առ ժողովուրդն իսրայէլեան ։

Իսկ որ զՀետն յարի, "Աւ իբրև արևն ի մուտս լինէր, բոյզ Հատանէին, և ահա Հնոց ծխեալ, և Հառագայթք Հրոյ անցանէին ընդ մէջ անդամոյն յօշելոյ ,, ցուցանէ Թէ ի կատարած աշխարհի Հրով դատելոց են մարմնաւորքն · զի զոր օրինակ վշտակրութի քաղաքին այ՝ որպիսի ոչ եղեալ քնաւ յառաջագոյն, որ և կայ Հասանել ի ժամանակս գերաբրիստոսին, նշանակի խաւարին առիւն Աբրահամու ընդ մուտս արևուն, այն է՝ ի մերձենալ կատարածի աշխարհիս, նոյնպէս ընդ արևուն մուտս՝ մերձ ի կատարած, նշանակի Հրովս այսու դատողութենն օր՝ որ զմարմնաւորսն ընտրեցէ՝ զփրկելոսն Հրով, և զդատապարտելոսն ի Հուր ։ Զետ ամենայնի՝ ուրան առարեալ ընդ Աբրահամու ծանուցանէ զերկիրս Քանանու, Հաստատել ի նմա զմետասան ազգսն ի գետոյն Եգիպտոսի մինչև ի գետն մեծ Եփրատ · ոչ ի մեծ գետոյն Եգիպտոսի՝ ի Նեղոսէ, այլ ի փոքրուէն որ Հատանէ ընդ մէջ Եգիպտոսի և Պաղեստինոյ, ուր կայ քաղաքն Ռինոկորուրա ։

ԳԼՈՒԽ ԻԵ

Յաղագս Ագարայ ազախնոյն զոր Սառա ետ ի Հարճ Աբրահամու ։

ՅԱՄԱՆԱԿԻՑ այսու Հետև ի վերայ կան ծնանիլեան որդւոց Աբրահամու, միումն Ագարայ ազախնոյ, և միւսոյն յազատեան Սառայէ՝ զորոց ասացեալ եմք յանցելումն գրի ։ Զերկիդ յայդմիկ սակաւ և ոչ ի մարթ է արկանել

Ա՛բրահամ յազգաց առնելոյ զՀարձն . վասն զի առ՝ ի ծնունդ զաւակի վարեցաւ նովին, և ոչ՝ ի ցանկութենէ լրումն, ոչ լծակից քամահանս առնելով, այլ մանաւանդ հնազանդելով նմա որ զարմանն ինն համարեալ իւրումն ամուսնէ, եթէ զսպողիսակի արգանդ աղախնոյն՝ ոչ բնութիւնք որ անմարթն է, այլ կամաքն՝ իւր առնէր, և զիրաւունսն զոր առաքեալ ասէ . “Ոչնախիս և այլոն իւրում մարմնոյն ոչ իշխէ , այլ կինն .., ՚ի կիր առնոյր Սառա առ՝ ի յայլմէ ծննդագործել, զոր յիւրմէն չկարէր , Որ ոչ մի ինչ զրկիս կայ անաբժան ցանկութէ , և ոչ մի սխեզծուէ չարութէ . կինն զաղախինն աւանդէ առնն ՚ի պատճառս զաւակի , և այլն ընդունի վասն նորին պատճառի . և երկաբին ոչ գայլատանս սիրեն ինդրէն , այլ զպատճարանս բնութէն : Ա՛յլ երբեք աղախինն սաղմնաւորել ունիս առնէր սիրեաջն անծննդական , և Սառա կանացի ինն կատ կածանօք յայր իւր արկանէր զինան, անդ ևս եցոյց Ա՛բրահամ, թէ չէ ինքն գերի սիրոյ , այլ ազատ ծնող , և չանձն Ա՛գարայ ինամ տանի պարկեշտութէ Սառայի բնիկ լծակցի . ոչ զիւր տարփանս՝ այլ զկամն նորա կատարեաց , առ զ՚Ագար՝ և ոչ ինդրեաց . մերձեցաւ ՚ի նա՝ և ոչ յարեցաւ . սերմանեաց՝ և ոչ Տարաւ ՚ի սէր նորա . քանզի ասէ . “Ա՛հաւանիկ աղախին քո ՚ի ձեռս քո . արա նմա զինչ հաճոյ է առաջի աչաց քոց .., Ո՛ այլ .՝ առնապէս վարեաւ ընդ կանայսն , ընդ լծակցին՝ ժուժկալաբար , ընդ աղախնոյն հպատակօրէն , և ոչ ընդ միումն անժուժաբար :

ԳԼՈՒԽ Լ.Ը.

Ցաղագս վկայութենն ոյ առ Աբրահամ, որով որդի խոստանայ Սերոյն յամէնն Սառայէ, և հայր ազգաց կացուցանէ զնա, և զՀաւատոյ խոստմանն ԹՂթատուութենն Նշանակաւ .

Յետ այսոցիկ ծնաւ Իսմայել՝ Ա՛գարայ , որով կարծել մարթի էր Թէ ընդացու խոստացեալն առ՝ ի յայր յոր-

ժամ զընդոծինն կամէր Աբրահամ առնուլ իւր յորդեգիրս, և ասացաւ նմա. « Ոչ ժառանգեսցէ զքեզ դա՛ այլ որ ելանէն 'ի քէն, նա ժառանգեսցէ զքեզ »: Ապա զի մի յորդի աղախնոյն կարծիցէ զխոստմանն կատարումն, մինչ էրն « Աբրամ ամաց իննսուն և իննուց, երևեցաւ տէր ա͞ծ Աբրամու և ասէ ցնա. ես եմ ա͞ծ քո, հաճոյ լեր առաջի իմ, և լեր անարատ. և եդից զուխտ իմ ընդ իս և ընդ քեզ. և բազմացուցից զքեզ յոյժ: Եւ անկաւ Աբրամ 'ի վերայ երեսաց իւրոց. և խօսեցաւ ընդ նմա ա͞ծ և ասէ. և իմ աւադիկ ուխտ ընդ քեզ, և եղիցես հայր բազմութեան ազգաց. և ոչ կոչեսցի այսուհետև անուն քո Աբրամ, այլ եղիցի անուն քո Աբրաամ. զի հայր ազգաց բազմաց եդի զքեզ: Եւ աճեցուցից զքեզ յոյժ, և եդից զքեզ յազգս, և թագաւորք 'ի քէն ելցեն. և հաստատեցից զուխտ իմ ընդ իս և ընդ քեզ, և 'ի մէջ զաւակի քո յետ քո յազգս իւրեանց յուխտ յաւիտենական, լինել քեզ ա͞ծ և զաւակի քում յետ քո: Եւ տաց քեզ և զաւակի քում զերկիրս զայս՝ յորում բնակես պանդխտութ͞ե, զամենայն երկիրդ քանանացւոց 'ի ժառանգութ͞ի յաւիտենական. և եղէց նոցա ա͞ծ: Բայց դու զուխտ իմ պահեսցես, և զաւակ քո յետ քո յազգս իւրեանց: Եւ այս է ուխտ իմ զոր պահեսցես ընդ իս և ընդ քեզ, և 'ի մէջ զաւակի քո յազգս իւրեանց: Թլփատեսցի ձեր ամենայն արու, և թլփատեսջիք զմարմին անթլփատութ͞ե ձերոյ. և եղիցի նշանակ ուխտին ընդ իս և ընդ ձեզ: Եւ մանուկ ութօրեայ թլփատեսցի ձեր ամենայն արու յազգս ձեր, ընդոծինն և արծաթագինն, և յամենայն օտարածնէ որ ոչ իցէ 'ի զաւակէ քումմէ՝ թլփատելով թլփատեսցի ընդոծին տան քո և արծաթագին քո. և եղիցի ուխտ իմ 'ի վերայ մարմնոյ ձերոյ յուխտ յաւիտենական: Արուն անթլփատ որ ոչ թլփատեսցէ զմարմին անթլփատութ͞ե իւրոյ յաւուր ութերորդի, սատակեսցի անձնն այն յազգէ իւրմէ, զի ցրեաց զուխտ իմ: Եւ ասէ ա͞ծ ցԱբրաամ. և Սարայի կնոջ քո ոչ կոչեսցի անուն նորա՝ Սարա, այլ Սառա եղիցի անուն նորա. և օրհնեցից զնա, և տաց

քեզ ՝ի նմանէ որդի . և օրհնեցից զնա , և եղիցի յազգս . և Թագաւորք ազգաց ՝ի նմանէ եղիցին : Ընկաւ Աբրաամ ՝ի վերայ երեսաց իւրոց և ծիծաղեցաւ . և խօսեցաւ ՝ի սրտի իւրում և ասէ , Թէ հարիւրամեայ որդի լինիցի , և Սարրա ինհնամեայ ծնանիցի : Եւ ասէ Աբրաամ ցնծ . Իսմայէլ ոս այս կեցցէ առաջի քո : Եւ ասէ Ած ցԱբրաամ . այո , ահա Սարրա կին քո ծնցի քեզ որդի . և հաստատեցից զուխտ իմ ընդ նմա ուխտ յաւիտենական , և ընդ զաւակի նորա յետ նորա : Եւ վասն Իսմայէլի ահա լուայ քեզ , և օրհնեցից զնա և աճեցուցից զնա , և բազմացուցից զնա յոյժ . և երկոտասան ազգ ծնցի , և տաց զնա յազգ մեծ : Այլ զուխտ իմ հաստատեցից ընդ Սահակայ զոր ծնցի քեզ Սարրա ՝ի ժամանակի յայսմիկ ՝ի միւսում տարւոջ ... :

Իստանօր բացայայտագոյնս եղեն խոստացեալք յաղագս գրս կռման ազգացն Սահակ , յորդին աւետեաց , որով հնորհք նշանակի , և ոչ բնութիւն . զի խոստումն է զաւակ կի յաւելուրէն և յամուլ պատաւոյն : Իանգի Թէպէտ և բնաւորական որդեծնութիւնք խակ յաջողութիւն յոյ է՝ բայց ուր յայտնի է գործն այ յանգործ և յանպիտան բնութիւն , անտանօր շնորհն լաւ և ա Ճանապէն : Ալ զի ոչ ծննդեամբ հանդերձեալ էր այս լինել , այլ վերածնութիւն , նորին վասն այժմ հրամայեցաւ Թլփատութիւն , յորժամ որդի խոստացեալ եղեւ Սաւսիւ : Իսկ զի ամենեցուն պատուիրէ Թլփատիլ՝ ոչ որդւոց միայն , այլ և ծառայից ընդ ծնեալս և արծաթագնոց , վկայէ Թէ այն շնորհք ամենեցուն պատրաստեալ էին : Ա՝ ան զի եմ իմիք այլ նշանակիչ է Թլփատութիւն , բայց եթէ նորոգման բնութիւն՝ զնոսնիկն մերկանալով : Եւ օր ութերորդ յինչ այլ անկարկէ՝ բայց ՝ի Կիւ , որ ՝ի լման եօթնեբեկի՝ զկնի շաբաթ աւուրն յաբեաւ : Վասիսիկն և ծնողացն անուանք , ամենայն ինչ նորութիւն է ձայնատու , և ՝ի հնումն կտակի նորն քօղաբկեալ ծածկի : Օ ինչ է կտակն ասացեալ հինն , բայց նոքա զոն թաքնութիւն . և զինչ այլ նորն ասացեալ , բայց հնոյն բացեալութիւն , Սբրահամու ծիծաղիլն՝ հրճուանք

են առն ինդացելոյ, և ոչ թերահաւատելոյ ծաղր. և բանիք նորա "Հարիւրամեայն որդի լինիցի, և Սարրա ինքնատասեայ ծնանիցի", ըստ նորայն մտաց ոչ երկբայելոյ ինչ են, այլ զարմացելոյ։ Զուարճ արդեօք տատակուսիցի ոք ընդ ասացեալն, տաց քեզ և զաւակի քում յետ քո զերկիրն յորում դնակես՝ ի ժառանգութիւն յաւիտենական, թէ որպէս իմանի այս կատարեալ, կամ տակաւին յուսով կատարելի, որովհետև երկրաւոր ինչ ժառանգութիւն որպիսի և իցէ՝ չմարթի լինել յաւիտենական որում և է ազգն։ Զիտասցէ հարցաքննողն, թէ յաւիտենից անուն ըստ լոյն բառին եբրայեցւոյն՝ նշանակէ և աշխարհական, ուստի երկդիմի լինելը իմացուածոյն. զի այսպիսի ասին բազում ինչ՝ որ յաշխարհի գործին և արագավախճանք են. վասն այն թարգմանք ոչ դնեն աշխարհական, այլ յաւիտենական, որով իմանի կամ այն որոյ չիք վախճան, և կամ որ բաւ մինչ՝ ի վախճան այսր աշխարհի կամ յաւիտենից այսորիկ։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Զինչ է այն, թէ արու անթլփատ յաւուր ութերորդի սատակեսցի յազգէ իւրմէ իբրև զդող ուխտին իոյ։

Զարհուրելի է դարձեալ, զիարդ պարտ իցէ իմանալ զբանն "Արուն անթլփատ որ ոչ թլփատեսցի զմարմին անթլփատութեան իւրոյ յաւուր ութերորդի, սատակեսցի անձնն այն յազգէ իւրմէ, զի զդեաց զուխտ իմ.", Ուր չկայ ինչ մեղ տղայոյն, որում սատակիլ ասել. և ոչ նա ինքն զուխտ ոյ ցրեաց, այլ ծնողքն որք անհոգացան թլփատել զնա. բայց միայն զի նա և տղայք՝ թէ և ոչ ըստ իւրեանց առանձնայնոյն կենաց, այլ ըստ արմատոյ հայասրակաց մարդկութեանս ցրեցին զուխտն ոյ՝ ի մի մարդն յայն, յորում ամենեքին մեղան։ Ա՝ այն զի բաց յերկուց անտի՝ ի մեծ ուխտին, զկինն իմն և զնորն, են անուանեալ

բազում այլ ուխտք ա̄յ, զոր և օրէն է ամենեցուն ընթեռնուլ և ճանաչել։ Իսկ նախկին ուխտ եղեալ առ մարդն առաջին, այն է ապաքէն. «Յորում աւուր ուտիցես, մահու մեռանիցիս»։ Վասն որոյ 'ի Սիրաքայ գիրս ժդ. 18. գրեալ կայ. «Ամենայն մարմին որպէս հանդերձ մաշի. զի ուխտ 'ի յաւիտենից հետէ այն է, թէ մահու մեռցիս»։ Բայց զի օրէնք յետոյ ուրեմն տուան յայտնապէս, և զի առաքեալ ասէ, «Ուր ոչ են օրէնք, և ոչ յանցանք ինչ», զիա՞րդ ընթերցուած սաղմոսին իցէ ճշմարիտ. «Յանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի». բայց եթէ այսու՝ զի ամենեքին որ մեղօք իւիք վարակեալք են, յանցման օրինաց ինչ են պարտաւորք։ Վասն որոյ եթէ նա և տղայք ըստ աւանդելոյ ուղիղ հաւատոյ ծնանին մեղաւորք ոչ յինքեանց՝ այլ 'ի նախասկզբնէն, որով կարեւոր առ նոսա խոստովանիմք զշնորհ մեղացն թողութե̄, արդարեւ այնու օրինակաւ որով ենն մեղաւորք, յանցաւորք եւս ճանաչին օրինացն որ 'ի դրախտին տուաւ, որով և ճշմարտեալ լինիցի երկաքանչիւր գրեալն, «Յանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի». և «Ուր ոչ են օրէնք, և ոչ յանցանք ինչ»։ Եւ զի թլփատութե̄ նշանակ եղև վերածնութե̄, և զօրղայն սակս սկզբնական մեղաց՝ որով ցրեցաւ առաջին ուխտն ա̄յ, արդարապէս կորուսանէ ծնունդն մարմնոյ՝ թէ ոչ ապրեցուսցէ ծնունդն վերստին։ Այսպէս իմանալ ունիմք զայսօրիկ ա̄ծեղէն բանս, իբր ասել. որ ոչ ծնանիցի վերստին, կորիցէ անձն այն 'ի ժողովրդենէ նորա. զի ցրեաց զուխտն ա̄յ, յորժամ և ինքն մեղաւ յԱդամ ընդ ամենեսին։ Քանզի եթէ ասացեալ էր՝ զայս զիմ ուխտ ցրեաց, յայնժամ զմարմնոյ թլփատութե̄ հարկ էր իմանալ. այլ զի ոչ բացատրեաց՝ որո՞յ ուխտի ցրող իցէ մանուկն, ազատ եմք իմանալ զայնպիսի ուխտէ՝ որոյ ցրումն նա և տղայոյ պատշաճիցի։ Իսկ եթէ պնդիցէ ոք՝ զմարմնոյ թլփատութե̄ ևեթ ասացեալ, իբրև թէ անթլփատ մնալով տղայն՝ ցրեալ իցէ զայն ուխտ ա̄յ, խնդրեսցէ այնպիսին զձև ինչ ասացուածոյ՝ որով առանց անյարմարու-

թէ մարթ իցէ իմանալ, թէ այնու ցրեալ իցէ զուխտն՝ ոչ զի 'ի նմանէ, բայց 'ի նմա ցրեցաւ : Այլ տակաւին 'ի միտ առնուլ արժան է, թէ ոչ իւրով ինչ հեղգութեամբ յանիրաւի կորնչի անձն տղայոյ անթլփատի, այլ ըստ պարտեաց սկզբնական մեղաց :

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս փոփոխման անուանց Աբրահամու և Սառայի, որք անկարողք առ ծնունդ գոլով՝ 'ի պատճառս ամլութեան միոյն և ծերութեան միւսոյն, ընկալան զպարգև ծննդականութեան :

ՅԵՏ լինելոյ առ Աբրահամ մեծի և ամենապայծառ աւետեացն, որում յայտնաբարբառ ասացաւ, “Հայր ազգաց բազմաց եդի զքեզ, և աճեցուցից զքեզ յոյժ, և եդից զքեզ յազգս, և թագաւորք 'ի քէն ելցեն, և տաց քեզ 'ի Սառայէ որդի, և օրհնեցից զնա, և եղիցի յազգս, և թագաւորք ազգաց 'ի նմանէ ելցեն,,, աւետիս իմա, զոր 'ի Քն տեսանեմք այժմ փոխատրեալ. այնուհետև ապա լծակիցքն երկոքին ոչ ևս կոչին 'ի գիրս՝ որպէս յառաջն կոչէին, Աբրամ և Սարա, այլ որպէս մեքս ստէպ կոչեցաք՝ ըստ ամենեցուն կոչելոյ՝ Աբրահամ և Սարրա կամ Սառա : Իսկ թէ առ ինչ փոխեցաւ անուն Աբրահամու, մերձ դնի պատճառն. “Զի հայր, ասէ, ազգաց բազմաց եդի զքեզ,,. զայս ուրեմն տայ իմանալ Աբրահամդ անուն. իսկ որ նախն կոչէր Աբրամ, թարգմանի՝ հայր բարձր : Այլ յաղագս փոփոխելոյ անուան Սառայի՝ պատճառ ինչ ոչ կայ ասացեալ. բայց որք գրեցին զթարգմանութիւս եբրայական անուանց գտելոց 'ի սուրբ գիրսդ, ասեն թէ Սարա թարգմանի՝ տիկին կամ դշխոյ իմ. իսկ Սարրա կամ Սառա՝ զօրութի նշանակէ. ուստի յառ եբրայեցիս թղթին գրեալ է. “Հաւատովք և ինքն Սառա զօրութի առնլոյ զսերմն որդեծնութեան

ընդունէր,,։ Որդ երկոքին ծերացեալք էին՝ ըստ վկայելոյ գրոյն. այլ կինն ամուլ եւս էր, և պակասեալ 'ի կանանցն օրէնէ. ոյր վասն սաղմնաւել այլ ոչ եւս կարէր, թէ և չլինէր ամուլ։ Ապաքէն կին եթէ անցեալ զաւուրբք իցէ, բայց կրիցէ տակաւին զսովորական հոսումն դաշտանին, կարող է յերիտասարդէ զաւակասերել, և ոչ 'ի ծերացելոյ, թէպէտ և նոյն ծերացեալ կարող է 'ի մանկամարդէ առնել որդիս. որպէս Աբրահամ յետ մահուն Սառայի կարաց որդիս ունել 'ի Քետուրայ, առուգագոյն զնորա հասակն գտեալ։ Եւ ահա այս է՝ զոր հրաշալիս իմն ցուցանէ առաքեալ, և 'ի դոյն իբր մեռեալ ասէ զմարմին Աբրահամու, զի ոչ յամենայն կնոջէ՝ որում կայցէ դեռ մնացուած որդէծնութե̃՝ կարող էր յայնմ հասակի ծնունդ լինել. այլ ըստ միոյ իմիք իմանամք զմարմին նորա մեռեալ, և ոչ ըստ ամենայնի. քանզի եթէ առ ամենայն մեռեալ էր, ոչ եւս լինի ծերութե̃ կենդանւոյ, այլ վրձակ մահուամբ դիականացելոյ։ Բայց և այսպէս սովորութե̃ է լուծանել զխնդիրս. այնու որդիս ունել Աբրահամու 'ի Քետուրայ՝ զի զորդէծնութե̃ն պարգև զընկալեալն յո̃յ պահեաց նա և յետ վախճանելոյ կնոջն։ Բայց ինձ թուի՝ թէ ընտրելի է քան զլուծումնդ միւսն այն՝ որում հետևեցաք. զի թէպէտ և հարիւրեմեան ոք մերոյ ժամանակիս անկարող է զաւակագործել յորմէ և իցէ կնոջէ, այլ յայնմ ժամանակի՝ ուր դեռ երկայնակեաց լինէին մարդիկն, հարիւր ամ ոչ արկանէր զմարդ 'ի ծերութե̃ զառամեալ։

ԳԼՈՒԽ ԻԹ

Յաղագս երից արանց կամ հրեշտակաց՝ որովք տէր երևի Աբրահամու առ կաղնեաւն Մամբրէի։

ԵՐԵՒԵՑԱՒ միւսանգամ ա̃ծ Աբրահամու առ կաղնեաւն Մամբրէի 'ի տեսիլ երից արանց, որք անշուշտ հրեշ-

տակք էին . Թէպէտ և ոմանց թուի՝ լինել միութիւն յայնցանէ Ք͞ն տէրն ինքնին . զի ասեն՝ յառաջ ևս քան ըզմարմնոյ զգեցումն տեսանելի զնա գոլ : Ապաքէն ա͞ծական զօրութե͞ն, և աներևոյթ անմարմին և անփոփոխ բնութե͞ն մարթ է առանց միոյ իրիք փոփոխութե͞ անձին գալ յերևան աչաց մահկանացուաց, ոչ այնու ինչ՝ որով ինքն է, այլ այլով իւիք՝ որ ընդ նորա տէրութբ͞ է . և կայցէ՞ ինչ արդեօք անհնազանդ նմին : Բայց սակայն եթէ յայն սակս ասեն մի յերիցն զՔ͞ն լինել, իբր զի երիս տեսանելով՝ միաւորական խօսեցաւ առ տէրն, այսպէս ունելով գրոյն, “Եւ ահա արք երեք կային 'ի վերոյ քան զնա . և իբրև ետես, ընթացաւ ընդ առաջ նոցա 'ի դրանէ խորանին իւրոյ, և երկիր եպագ 'ի վերայ երկրի և ասէ . տէր, եթէ գտի շնորհս առաջի քո „ և այլն, այլ ընդէ՞ր և յայն ոչ ուշ դնեն, զի երկու 'ի նոցանէ գնացին 'ի կործանումն սոդոմացւոց, և Աբրահամ խօսելով տակաւին ընդ միումն՝ տէր զնա կոչէր, և աղերսէր չկորուսանել 'ի Սոդոմ զարդարն ընդ ամբարշտին : Իսկ զերկուսն զայն այնպէս ընկալաւ Ղովտ, զի և ինքն միաւորական կոչէր զնա տէր 'ի խօսել իւրում ընդ նոսա : Քանզի յետ ասելոյն բազմաւորակի, “Աւասիկ ես, տեարք, եկայք 'ի տուն ծառայի ձերոյ „, հանդերձ այլովք ասացելովք՝ զհետ գայ ընթերցուածն . “Եւ կալան հրեշտակքն զձեռանէ նորա և զձեռանէ կնոջ նորա և զձեռանէ երկուց դստերաց նորա, զի խնայեաց տէր 'ի նա, և հանին զնա և եդին արտաքոյ քաղաքին : Եւ եղև իբրև հանին զնոսա արտաքս, ասեն . ապրեցո զանձն քո, մի՛ դառնայցես յետս, և մի՛ կայցես յամենայն կողմանս աշխարհիդ . զերծիր 'ի լեառն, գուցէ ընդ նոսա ըմբռնիցիս : Եւ ասէ Ղովտ ցնոսա . աղաչեմ, տէր . որովհետև եգիտ ծառայ քո ողորմութի͞ առաջի քո „ և այլն : Յետ այսց բանից միաւորական պատասխանէ և տէրն՝ որ յերկոսին հրեշտակսն էր, ասելով. “Աւասիկ արարի մեծարանս երեսաց քոց „ և այլն : Վասն որոյ առաւել հաւանելի է, թէ Աբրահամ յերիս արսն, և Ղովտ յերկուսն ճանաչէին զտէր . առ որ և

միաւոր թուով խօսէին, թէպէտ և զնոսա մարդս լինել կարծէին. զի և ոչ այլով աղագաւ ընդունելութիւն արարին նոցա, սպաս տարեալ իբրև մահկանացուաց և կարօտելոց մարդկային դարմանոյ, բայց զի գերիվերոյ ինչ ցուցանէին՝ թէ և իբր մարդիկ, աներկբայաբար համարէին հիւրընկալիչքն՝ թէ տէր էր 'ի նոսա, որպէս և 'ի մարգարէսն լինել սովոր է. սորին վասն մերթ բազմաբար, և մերթ միակի զնոսա տէր անուանէին: Իսկ հրեշտակս լինել նոցա վկայէ գիրն՝ ոչ 'ի ծննդոցս միայն՝ ուր գործեցեալքն պատմին, այլ և յառ Եբրայեցիս թղթին, ուր զհիւրասիրութիւն գովասանելով ասէ. "Այնու ոմանք յանդէտս ընկալան զհրեշտակս": Արդ յորժամ երրեակ արամբքս դարձեալ խոստումն եղև առ Աբրահամ վասն Իսահակայ որդւոյ 'ի Սառայէ, տուաւ և պատգամ ածեղէն այսպիսի. "Աբրահամ լինելով լինիցի յազգ մեծ և 'ի բազում, և օրհնեսցին 'ի նա ամենայն ազգք երկրի": Ուրանօր երկու ինչ համառօտ և բովանդակ խոստացեալք են. ազգն իսրայէլեան ըստ մարմնոյ, և ազգք համօրէն ըստ հաւատոց:

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս զերծանելոյ Ղովտայ 'ի Սոդոմայ ծախելոյ երկնատեղաց հրով. և վասն Աբիմելէքայ՝ որոյ ցանկութիւն ոչ վնասեաց սրբութեան Սառայի:

Զկնի խոստմանս այսորիկ ապրեցաւ Ղովտ 'ի Սոդոմայ՝ 'ի տեղալ անդր երկնառաք հրոյ, և 'ի յանձինն դատիլ այնր գաւառի ամբարիշտ քաղաքին. ուրանօր արուամոլութեան սովորոյթ զօրացեալ կայր՝ իբր օրէնք աշխարհի: Սակայն և այս նոցա հարուած՝ պատկեր իմն եղև հանդերձելոյ ածային դատաստանին. քանզի առ ինչ ակնարկէ արգելուլ զերծելոյն 'ի ձեռն հրեշտակաց զի մի յետ հայիցին, բայց յայն՝ թէ չէ պարտ վերադարձիլ սրտիւ

յառաջին գնացս, զոր յաւազանէ ծնեալն մերկանայ շնոր-հօք, եթէ ապրել 'ի վերջին դատաստանէն կամիցիմք: Ահա կինն Ղովտայ՝ ուր հայեցաւ յետս, անդ եկաց մը-նաց. և յաղ փոխադարձեալ, գտաւ համեմիչ գոգցես մարդոց հաւատացելոց՝ առնուլ օրինակ զգուշութեան: Յետ այնր Աբրահամ զնոյն օրինակ վարեաց յաղագս ծածկելն 'ի Գերարայ առ Աբիմելէք արքայ քաղաքին՝ որպէս յԵ-գիպտոս. և կինն նոյնպէս անմերձ դարձուցաւ անդրէն. ուր և 'ի յանդիմանել արքայի զԱբրահամ՝ թէ էր վասն զկինն լինել լռեալ՝ քոյր զնա ասաց, յայտնէ Աբրահամ զորմէ խիթայրն, 'ի վերայ բերեալ. “Բայց արդարեւ քոյր իմ է 'ի հօրէ, և ոչ 'ի մօրէ„. զի 'ի հօրն կողմանէ այնու քոյր էր Աբրահամու, որով մերձաւոր էր նորա: Իսկ ըստ գեղոյ վայելչութեան այնպիսի էր, զի և յայնմ անցեալ հասակի զտեսողսն սրտացուցանէր:

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յաղագս ծննդեան Իսահակայ ըստ աւետեաց, անուն ընկալեալ 'ի ծիծաղելոյ երկոցունց ծնողացն:

Յետ այսորիկ ծնաւ Աբրահամու ըստ խոստմանն այ որդի 'ի Սառայէ, և անուանեաց զնա՝ Իսահակ, որ թարգմանի՝ ծաղր: Վասնզի եղև ծիծաղել և հօրն 'ի լի-նել առ նա խոստմանն, զարմացեալ 'ի խնդութենէն. եղև և մօրն ծիծաղել՝ յորժամ յերից անտի արանց երկրոր-դեցաւ խոստումնն, երկմտեալ 'ի խնդութենէն. որով յան-դիմանեցաւ 'ի հրեշտակէն, իբր զի խնդութեան էր ծաղրն, այլ ոչ կատարեալ հաւատոյ. բայց ապա հրեշտակին բա-նիւ հաստատեցաւ և 'ի հաւատս: Վասն որոյ յայսմ պատ-ճառէ անուն ընկալաւ մանուկն. և թէ ոչ յայպանումն ինչ էր ծաղրն, այլ 'ի ցոյցս ուրախութեան, ծանոյց զայդ Սառա 'ի ծնանել անդ և յանուանելն զԻսահակ. զի ա-

ած. "Ելա՛ր արար զիս ամօթ, զի ո՛ր և լսիցէ՝ ուրախ լինիցի ընդ իս ,, : Յետ ժամանակի ինչ աղախինն որդւոյն հանդերձ արտաքսի՛ ի տանէն. և երկու կտակարանք՝ հինն և նոր օրինակին ըստ առաքելոյ. ուր Սառա զտարացոյց բերէ վերնուհին Երուսաղէմի, այս է՝ քաղաքին այ:

ԳԼՈՒԽ Ի՛Ը

Յաղագս հնազանդութեանն և հաւատոյ Աբրահամու, որ հանդիսացաւ ի յանձն առնուլն զոհել զորդի իւր. և յաղագս մահուան Սառայի:

Ընդ այսոսիկ՝ զորս յառաջ բերել բովանդակ՝ երկայնագունից պէտք են բանից, Աբրահամու լինի փորձ հանդիսի՛ ի ջենուլ զսիրելի զորդի իւր զԻսահակ, զի ամօթ պաշտ հնազանդութեան իւր յայտնի լիցի՛ ի գիտութեան դարուց՝ի դարս, և ոչ եթէ առաջի այ: Քանզի ոչ ամենայն փորձութեան ստգտանելի է, այլ ընդգրկելի և այն՝ որով ընտրութեան լինի. և է յոլովակի ոչ այլով օրինակաւ ճանաչել մարդոյ զանձնն՝ բայց զի փորձութեին ինքնին որպէս թէ հարցանիցէ, և մարդ տայցէ պատասխանի ոչ բանիւ, այլ ինքնափորձ գատմամբ յաղագս անձինն զօրութեանէ. յորում եթէ ճանաչիցէ զայ պարգևան, ահա ձեռնարկ ամրանայ հաստատութեանն ընդ աստուած, ոչ փքացեալ մտօտի անձնահաճութեամբ: Քանզի ոչ բնաւ հաւանեալ էր Աբրահամ, թէ հաճոյ իցէն այ մարդասէրն՝ ուննկղրել արժան է, և ոչ հարցաքննել. այլ գովելի այնու գտաւ, զի հաւատաց թէ անդէն՝ի ջենուլ զորդի իւր՝՝ի կեանս դառնալոց է նա: Ո՛չ ասացեալ էր նմա ած՝ յորժամ դժուարանայր արտաքսել զաղախինն և զորդի նորա ըստ կամելոյ լծակցին. "Ոսահակաւ կոչեսցի քեզ զաւակ ,,: Ոսկ զի ասի յետ այսր, "Եւայց զորդի աղախնոյդ արարից յազգ մեծ, զի սերմն քո է ,,, զի՞րդ

ապա ասացաւ՝ Իսահակաւ կոչել նմա զաւակ, ուր զԻսա-մայել ևս կոչէ ա՟ծ սերմն կամ զաւակ նորա: Իսկ առա-քելոյ բացայայտեալ թէ զի՞նչ իցէ՝ Իսահակաւ կոչել զա-ւակին՝ ասէ. “Այսինքն թէ ոչ որ որդիք մարմնոյն են՝ են որդիք ա՟յ, այլ որդիք աւետեացն համարեսցին 'ի զա-ւակ”. Հռ. Թ. 8: Եւ վասն այնորիկ զի աւետեացն որ-դիք էին զաւակ Աբրահամու, Իսահակաւ կոչին, այս է՝ 'ի Ք՟ի ժողովին կոչմամբ շնորհաց: Արդ պնդապէս կա-լեալ հօրն բարեպաշտի զայս խոստումն, և զի զոր սպա-նանելն հրամայէր ա՟ծ, նովաւ լնուլ պարտ էր խոստմանն, ոչ ինչ երկմտեաց՝ թէ յետ զենմանն անդրէն տացի նմա որդին՝ որ յանյոյս տուեալ էր նմա: Այսպէս տեսանեմք իմացեալ և մեկնաբանեալ 'ի թղթին առ եբրայեցիս. ԺԱ. 17. “Հաւատովք, ասէ, մատոյց Աբրահամ 'ի փոր-ձութեան իւրում զԻսահակ պատարագ, և զմիամօրն մատու-ցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր. որում ասացաւն թէ Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ. եդ 'ի մտի իւրում՝ թէ և 'ի մեռելոց կարող է յարուցանել ա՟ծ. ուստի և յառակս իսկ ընկալաւ զնա”: Իսկ յո՞ր առակ կամ 'ի նը-մանութ՟ի, եթէ ոչ այնմ զորմէ նոյն առաքեալ ասէ. “Որ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատ-նեաց զնա”. Հռ. Ը. 32: Ուստի զոր օրինակ տէր Ք՟ս զիւր զխաչն, նոյնպէս Իսահակ մինչ 'ի զենմանն տեղի ստանձնեալ տարաւ զփայտն՝ յորոյ վերայ դնելոց էր: Իսկ արդ քանզի ոչ էր մարթ 'ի սպանումն գալ Իսահակայ, երբ արգելաւ հայրն մխել 'ի նա ձեռն, զի՞նչ այն խոյ էր՝ որոյ զենմամբ կատարեցաւ պատարագն 'ի նշանակ ա-րեանն, յորժամ ետես զայն Աբրահամ կախեալ զեղջե-րացն զծառոյն սաբեկայ 'ի թփուտն: Ո՞չ այլ օրինակ էր այն՝ բայց Ք՟ի, որ մինչ չև զենեալ 'ի խաչին՝ հրէական փշովքն պսակեցաւ:

Այլ ուշ դիցուք առաւել ա՟ծեղէն բանից որ 'ի ձեռն հրեշտակին. զի ասէ գիրն. “Եւ ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն, և զենուլ զորդին իւր: Եւ կոչեաց զնա հրեշտակ տեառն յերկնից և ասէ. Աբրահամ Աբրահամ.

և նա ասէ ցնա, աւասիկ եմ. և ասէ. մի՛ մխեր զձեռն քո 'ի պատանեակդ, և մի՛ ինչ առներ դմա, զի այժմ գիտացի թէ երկիւղած ես դու յա՟յ, և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ„: Այժմ, ասէ, գիտացի. իմա, այժմ գիտել ետու. զի ոչ եթէ յառաջն ոչ գիտէր զայն ա՟ծ: Իսկ յետ ողջակիզելոյ զխոյն փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ, ասէ ընթերցուածն. “Կոչեաց Աբրահամ զանուն տեղւոյն այնորիկ՝ Տէր ետես. զի ասիցեն ցայսօր 'ի լերինս յայսմիկ տէր երևեցաւ„: Որպէս ասացաւ՝ այժմ գիտացի, փոխանակ ասելոյ ետու գիտել, նոյնպէս ասա՝ տէր ետես, փոխանակ ասելոյ՝ տէր երևեցաւ, ետ տեսանել զինքն: “Եւ կոչեաց հրեշտակ տեառն զԱբրահամ երկիցս անգամ յերկնից և ասէ: Յանձն իմ երդուայ՝ ասէ տէր, փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ, և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ, այո օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո որպէս զաստեղս երկնից բազմութ՟բ, և որպէս զաւազ առ ափն ծովու. և ժառանգեսցէ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց. և օրհնեսցին 'ի զաւակի քում ամենայն ազգք երկրի, փոխանակ զի լուար ձայնի իմում„: Այսպէս ահա խոստումն այն յաղագս կոչման ազգաց 'ի զաւակին Աբրահամու՝ յետ ողջակիզին՝ որ զՔ՟ի օրինակէր, հաստատեցաւ և երդմամբ ա՟յ. զի բազում անգամ խոստացեալ էր, այլ ոչ ընաւ երդուեալ: Վասնզի ա՟յ ճշմարտի և հաւատարմի երդնուլ զի՞նչ է, բայց խոստմանն հաստատութ՟ի, և կշտամբութ՟ի իմն անհաւատից:

Յետ այսորիկ վախճանեցաւ Սառա, 'ի հարիւր քսան և եօթն ամի իւրում, և 'ի հարիւր երեսուն և եօթն ամի առն իւրոյ. զի տասն ամօք երէց էր քան զկինն որպէս և 'ի խոստանալն որդի 'ի նմանէ ասաց ինքն. “Եթէ հարիւրամենի որդի լինիցի, և Սառա իննսնամեայ ծնանիցի„: Յայնժամ ագարակ գնեաց Աբրահամ. ուր և թաղեաց զկինն: Այլ ըստ պատմելոյ սրբոյն Ստեփաննոսի՝ յայնժամ բնակեցաւ յերկրի անդ, զի սկսաւ սառ

յող լինել անդ՝ յետ մեռանելոյ հօրն, որ և կարծի վախ-
ճանեալ երկեամ մի յառաջ:

ԳԼՈՒԽ ԼԳ

Յաղագս Ռեբեկայ Թոռին Նաքովրայ՝ զոր 'ի կնութին առ Իսահակ:

Յետ այսր Իսահակ քառասնամեայ գոլով հարսնա-
ցոյց իւր զթոռն Նաքովրայ հօրեղբօր իւրոյ, 'ի հարիւ-
րորդի քառասներորդի ամի կենաց հօր իւրոյ Աբրահա-
մու, երիւք ամօք զկնի մահուան մօրն: Իսկ սակս ածե-
լոյ զկին՝ յառաքել հօր նորա 'ի միջագետս զծառայն՝ ա-
սաց առ նա. "Դիր զձեռն քո ընդ երանօք իմովք, և
երդմնեցուցից զքեզ 'ի տէր յա̃ծ երկնից և յա̃ծ երկրի,
զի մի առցես կին որդւոյ իմում Իսահակայ 'ի դստերաց
քանանացւոց,,: Զի՞նչ այլ ցուցաւ այսու, բայց թէ
տէր ա̃ծ երկնի և տէր երկրի հանդերձեալ է գալ մար-
մնով, որ 'ի նորա երանացն ունէր ծագել. և միթէ փո-
քո՞ւնք իցեն այս ցոյցք նախագուշակեալ ճշմարտութե̃ն՝
զորոյ զլրումն 'ի Քս̃ տեսանեմք:

ԳԼՈՒԽ ԼԴ

Զի՞նչ իմանի՛ կին ածել Աբրահամու զՔետուրա յետ մեռանելոյ
Սառայի:

Իսկ այն զի՞նչ իցէ՝ ամուսնանալ Աբրահամու ընդ
Քետուրայ յետ վախճանելոյն Սառայի. քաւ լիցի ան-
ժուժկալութե̃ առնուլ զնմանէ կարծիս, մանաւանդ
յայնմ անցեալ հասակի, և յայնպիսում սրբութե̃ հա-
ւատոյ. և միթէ տակաւին հոգք ինչ էին զաւակս ստա-

նալոյ. ուր ահա ըստ խոստմանն այ ամենեւին հաւաստեալ իսկ էր բազմորդութիւն Իսահակաւ՝ իբրեւ զաստեղս երկնից, եւ որպէս զաւազ ծովու: Սակայն թէ արդարեւ ըստ առաքելոյն վարդապետութե՛ Ագար եւ Իսմայէլ տպացուցիչք եղեն մարմնաւորս կարգի հնոյ կտակին, ընդէ՞ր եւ Քետուրա եւ որդիք իւր չլինիցին օրինակք մարմնաւորացն այնոցիկ՝ որք ՚ի Նոր ուխտ գիտեն վերածեալ զանձինս, զի երկոքին նոքա՝ եւ կանայք ասացան Աբրահամու, եւ հարճք. իսկ Սառա ոչ ընաւ հարճ կոչեցաւ: Քանզի յորժամ տուաւ Ագար Աբրահամու՝ այսպէս գրեալ է. «Եւ առ Սարա կին Աբրամու զԱգար եգիպտացի զաղախին իւր, յետ տասն ամի բնակելոյ Աբրամու յերկրին քանանացւոց, եւ ետ զնա Աբրամու առն իւրում կնութե՛»: Իսկ վասն Քետուրայ առելոյ յետ ննջման Սառայի՝ ընթեռնումք. «Եւ յաւել Աբրաամ առնուլ կին որում անուն էր Քետուրա»: Աւասիկ երկոքին եւս կին կոչին, եւ զերկոքին դարձեալ հարճս լեալ գտանեմք յասել գրոյն զկնի. «Եւ ետ Աբրամ զամենայն ինչս իւր Իսահակայ որդւոյ իւրում. եւ որդւոց հարճիցն իւրոց որ էին Աբրաամու, ետ Աբրաամ պարգեւս, եւ արձակեաց զնոսա յԻսահակայ որդւոյ իւրոյ մինչդեռ ինքն կենդանի էր՝ ընդ արեւելս յերկիրն արեւելից»: Ապա ուրեմն ունել ունէին եւ հարճիցն որդիք պարգեւս ինչ, բայց յարքայութին խոստացեալ ոչ ժամանեն՝ ոչ հերձուածողք, եւ ոչ Հրեայք ըստ մարմնոյ. զի բաց յԻսահակայ այլ ոք ժառանգ ոչ է. եւ «Ոչ որ որդիք մարմնոյն են, են որդիք այ. այլ որդիք աւետեացն համարին ՚ի զաւակ». Հռ. Թ. 8. զորմէ ասացաւ. «Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ»: Քանզի չիմանամ իսկ էր վասն Քետուրա յետ մահուն Սառայի ածեալ ՚ի կնութի տակաւին հարճ կոչիցի, բայց եթէ այսր խորհրդոյ աղագաւ. սակայն որ չկամիցի ոք ըստ ասացելումս խորհրդածութի առնել յայսոսիկ, շատ է թէ սոգիւտ չարկանիցէ յԱբրահամ: Զի թերեւս յառաջատես կցուցուի իմն էր այդ հակառակ ապագայ հերեսիովտայց՝ անարգողաց զերկրորդ ա-

մուսնութիս, ցուցանել 'ի նախահայրն ազգաց բազմաց՝ թէ ոչ մեղք ինչ են յետ մահու լծակցին դարձեալ ամուսնանալ։ Վախճանեցաւ Աբրահամ, լեալ ամաց հարիւր եօթանասուն և հինգ, և եթող զորդի իւր զԻսահակ եօթանասուն և հինգ ամաց. զոր ինքն հարիւրեմեան ծնեալ էր։

ԳԼՈՒԽ ԼԶ

Զի՞նչ զեկուցանէր պատգամն այ յաղագս երկուորեկացն տակաւին եղելոց յարգանդին Ռեբեկայ։

ՏԵՍՑՈՒՔ այսուհետև, զի՛արդ յառաջեն ժամանակք քաղաքին այ ընդ սերունդս Աբրահամու. և յառաջնոյ ամէ կենաց Իսահակայ մինչև 'ի վաթսներորդն՝ յորում որդիք ծնան նմա, այս ինչ կայ յիշատակաց արժանի՝ զի յաղաչել նորա զած տալ զաւակ կնոջն որ ամուլն էր, երբ պարգևէր տէր զխնդրելին, և յղի գտանէր Ռեբեկայ, խաղային մանկունքն երկուորեակք յորովայնի նորա։ Ընդ որ տագնապեալ մօրն՝ հարցանէր 'ի տեառնէ, և առնոյր պատասխանի. “Երկու ազգք են յարգանդի քում. և երկու ժողովուրդք յորովայնէ քումմէ զատցին. և ժողովուրդ զժողովրդեամբ ելևել առնիցէ, և երէցն կրսերոյն ծառայեսցէ„։ Մեծ իմն իմաստս շնորհաց զմտաւ ածէ Պօղոս առաքեալ 'ի տեղւոջս. զի մինչ չև ծնեալ էին, և մինչ չև բարի ինչ կամ չար գործեալ էին, առանց վաստակոց բարեաց կրսերն ընտրի, երէցն անարգի. ուր չիք երկբայել՝ թէ ըստ սկզբնական մեղաց՝ երկոքին զուգահաւասարք էին, իսկ ըստ անձնականին՝ և ոչ մին մեղս ունէր։ Այլ զայսմանէ երկայնել բանս աստանօր՝ ոչ ներէ առաջարկուն մատենիս. զորմէ յայլ տեղիս բազում ինչ ասացեալ է մեր։ Իսկ "զասելն", “Երէցն կրսերոյն ծառայեսցէ„, ոչ ոք 'ի մերոյս գոգցես այլազգ մեկնաբանեաց, բայց զի երէցն ժողովուրդ Հրէից

ծառայելոց է կրսերոյն՝ քրիստոնէական ժողովրդեան ։ Եւ թէպէտ զլրումն բանիս մարթ է համարել յազգին եդոմայեցւոց՝ որ ծնաւ յերիցուէն, որ երկանուն էր, Եսաւ և Եդովմ, յորմէ եդոմայեցիք, զի յետ ժամանակաց նուաճեալ՝ի ժողովրդենէն ծնելոյ ՝ի կրսերոյն, այս է՝ յիսրայէլեանց, լինելոց էր նմին հարկատու, սակայն ՝ի դէպ ևս կարծի՝ յայլ ինչ ՝ի մեծ ունել զակնարկումն մարգարէութեանս, “Ժողովուրդ զժողովրդեամբ ելևել առնիցէ, և երէցն կրսերոյն ծառայեսցէ„. և իւիք այլ՝ բայց ՝ի Հրեայս և ՝ի քրիստոնեայս յայտնապէս գտանի աւարտեալ։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Յաղագս պատգամին և օրհնութեան զոր ընկալաւ յա̃յ Իսահակ իբրև զհայր իւր, որոյ արժանեօքն իսկ հաճոյացեալ էր ա̃յ։

Պատգամ ընկալաւ և Իսահակ՝ որպէս ընկալեալ էր հօր նորա յայլ և այլ նուագս. քանզի գրի այսպէս. “Եւ եղև սով յերկրին. թող զառաջին սովն որ եղև ՝ի ժամանակս Աբրահամու. և չոգաւ Իսահակ առ Աբիմելէք արքայ փղշտացւոց ՝ի Գերարա ։ Եւ երևեցաւ նմա տէր և ասէ. մի իջաներ յԵգիպտոս, այլ բնակեա դու յերկրի՝ յորում ասացի քեզ. և պանդխտեաց յերկրիս յայսմիկ, և եղէց ընդ քեզ, և օրհնեցից զքեզ. զի քեզ և զաւակի քում տաց զամենայն զերկիրս զայս. և հաստատեցից զերդումն իմ զոր երդուայ Աբրահամու հօր քո ։ Եւ բազմացուցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից. և տաց զաւակի քում զամենայն զերկիրս զայս. և օրհնեսցին ՝ի զաւակի քում ամենայն ազգք երկրի, փոխանակ զի լուաւ Աբրահամ հայր քո ձայնի իմում, և պահեաց զհրամանս իմ և զպատուիրանս իմ և զիրաւունս իմ և զօրէնս իմ„ ։ Այս նահապետս ոչ առ զայլ կին, և ոչ հարճ եղև նորա. այլ շատ համարեցաւ զսերունդս երկուորեակ

մանկանցն ծնելոց ՚ի միջէ լծակէ ։ Պատքէն և սա խնԹայր ընդ վտանգն յաղագս գեղոյ լծակին , բնակեալ ՚ի մէջ ազգաց օտարաց . և արար զոր օրինակ և հայր իւր քոյր զնա ասելով, լռեալ զկինն լինել . քանզի համարիւն էակ էր նորա ՚ի հօրէ և ՚ի մօրէ , և սա ևս անշալախ պահեցաւ յօտարազգեաց անտի՝ իբրև ծանուցաւ կինն լինել նորա ։ Սակայն եԹէ սա քոյր ՚ի միոյ լծակէ ոչ գիտաց զայլ կինն , ոչ այնու յառաջադասեալն քան զհայրն պրեալ արժան է . վասն զի արժանիք հայրենականն հատոյց և հնազանդուԹիւնն անշուշտ առաւելագոյնք էին . մինչ զի սակս նորա բարիս առնել Աստահակայ՝ ասէր ՚ած . “Ծնանիցին ՚ի զաւակի քում ամենայն ազգք երկրի , փոխանակ զի լուաւ Աբրահամ հայր քո ձայնի իմում . և պահեաց զհրամանս իմ և զպատուիրանս իմ և զիրաւունս իմ և զօրէնս իմ ,, ։ Եւ յայլում պատգամի դարձեալ . “Ես եմ ած Աբրահամու հօր քո . մի երկնչիր , զի ընդ քեզ եմ . և օրհնեցից զքեզ , և բազմացուցից զզաւակ քո վասն Աբրահամու հօր քո ,, ։ Որպէս զի ՚ի միտ առնուցումք՝ քանի ողջախոհ սրտիւ վարեցաւ Աբրահամ յայնչափ՝ որ մարդոյ անառակաց առ հեշտի Թուի արարեալ, որք և ՚ի գրոյն ած յայնոց օժանդակս խնդրեն իւրեանցն անպատկառուԹեամբ ։ Ընդունելով և զայն դարձեալ մի ըզմարդիկ ըստմանեայ բարեօք հաւատալ առ իրեարս , այլ հիւրաքանչիւրում զբովանդակն դնել ՚ի կշիռ ։ Քանզի զի ե երբեք , Թե ոք յիւրում կենցաղի և ՚ի վարս ունիցի չափ՝ որով քան զայլոք առաւելուցու , և այն գերիվերոյ իցէ քան զայն՝ յորում նուաղի առ այլով . ուստի ըստ ոչ ջանիւ և ուղղապատկելոյն Թէպէտ և ժուժկալուԹեամբ նախամեծար է քան զամուսնուԹիւն , բայց այր հաւատացեալ ամուսնաւոր՝ լաւագոյն է քան զանհաւատ ժուժկալ ։ Այլ զի այր անհաւատ ոչ միայն առ ՚ի գովելոյն Թերի է , այլ առաւել և անգոհանելի , ՚ի մէջ կացուցցուք երկուս արս բարեկրօնս . և ահա ՚ի գովելն իսկ լաւագոյն է ամուսնաւոր առնոյնիւ հաւատարիմ և լիով հնազանդ գեալ՝

*հնազանդութեանէ ։ Իսկ եթէ յայլսն ամենայն համահան-
պետք կացեն, ոչ ոք յերկուսանայ թէ վերագոյս է ժուժկալն
քան զամուսնաւորն ։*

ԳԼՈՒԽ ԼՂ.

Յակոբ որ ինչ լեալ և՛ ի Յակոբ նկարեցան խորհրդաբար ։

*Ընդ Իսահակայ երկու որդիք՝ Եսաւ և Յակոբ զոյգ
ածեցին . և պատիւ անդրանկութեանէ երիցուն՛ ի կրսեր
անդր փոխադրի դաշամբ և հաւանութեամբ երկոցունն նոցա .
զի ուր ոսկնաթան էր պատրաստեալ կրսերն՛ ի կերակուր
իւր, երէցն յանդէպս ցանկացաւ այնմ . որով զանդրան-
կութիւնս իւր վաճառեաց եղբօրն՝ միջնորդեալ երդմամբ ։
Ունելիք աստանօր ուսանել, թէ՛ ի չաշակողութենէն մա-
սին ոչ ըստ ազգի կերակրոցն մեղադրելի ոք է, այլ ըստ
անչափ ժուժանացն ։ Ծնեալ Իսահակ, աչք իւր վատին
առ ծերութիւնէ . օրհնել կամի զորդին երէց, և յանգէտս
օրհնէ զկրսերն, որ փոխանակ երիցուն թաւամորթի՝
եկն խոնարհեցաւ ընդ հայրական ձեռօք, զուլենիան
յարմարեալ զանձամբ, որպէս այն թէ զօտարի մեղս
լինքն տանելով ։ Այլ զի մի այս հնարագիտուն Յակո-
բայ՛ ի դաւաճանութիւնէ կրեսցի, անքնին Թողեալ զոր՛ ի
նմա զխորհուրդն մեծ, կանխեաց ասաց գիրն . "Նա էր
Եսաւ այր հմուտ որսոյ վայրագ, և Յակոբ այր առանց
պաճուճանաց ընտաստուն ,, ։ Ուր զյունականն ա՛ընաւթօս,
որ է առանց պաճուճանաց, կամ պարզ և անկեղծ, զիարդ
և առնուցու ոք, զինչ արդեօք կցէ նենգութիւն անկեղծ
մարդոյ յառնուլ անդ զօրհնութենն . որ կցէ նենգ առն
պարզամտի, որ կեղծաւորութիւն ոչ ատողի, քայց խորին
գաղտնիք ձչմարտութենէ ։ Իսկ օրհնութենն որպիսի՞ . "Տ-
հա, ասէ, հոտ որդւոյ իմոյ իբրև զհոտ անդոյ լիոյ զոր
օրհնեաց տէր . և տացէ քեզ ած՛ ի ցօղոյ երկնից և՛ ի
պարարտութենէ երկրի, և բազմութիւն ցորենոյ և գինւոյ .

և ծառայեսցեն քեզ ազգք · և երկիր պագցեն քեզ իշխանք · և եղիցես տէր եղբօր քում, և երկիր պագցեն քեզ որդիք հօր քո · որ անիծանիցէ զքեզ, անիծեալ լիցի · և որ օրհնեսցէ զքեզ, օրհնեալ„ ։ Այս օրհնութ̃ի Յակոբայ է քարոզութ̃ի Ք̅ի ընդ ամենայն ազգս · այս կատարի · այս արդիւնանայ · օրէնք և մարգարէութ̃ի Իսահակ ինքն է · ահա և ընդ Հրէիցն բերան օրհնի Ք̅ս յօրինաց՝ իբրև յանգիտողէ անտի · զի և ինքն օրէնքն մնայ անգիտելի ։ Ի հոտ անուանն Ք̅ի լնու աշխարհ զօրէն անդոյ · նորա է օրհնութ̃ին 'ի ցօղոյ երկնից , այս է՝ յանձրևոյ ա̅ծայնոց պատգամաց, և 'ի պարարտութ̃են երկրի՝ 'ի համախմբութ̃են ժողովրդոց ։ Նորա է բազմութ̃ի ցորենոյ և գինւոյ · այն է՝ ցորեան և գինի ամբարեալ 'ի խորհուրդ մարմնոյ և արեան նորա ։ Նմա ծառայեն ազգք, նմա երկրպագեն իշխանք · տէր է նա եղբօր իւրում · զի ժողովուրդ նորա իշխէ Հրէից ։ Նմա երկրպագեն որդիք հօր նորա , այն են որդիք Աբրահամու ըստ հաւատոց · զի և ինքն որդի Աբրահամու է ըստ մարմնոյ ։ Որ ոք զնա անիծանէ , անիծեալ է , և որ օրհնիցէ , օրհնեալ ։ Արդ ասեմ, Ք̅ս մեր նա և 'ի բերանոյ Հրէից՝ թէպէտ և մոլորելոց , բայց երգեցողաց զօրէնս և զմարգարէս՝ օրհնի ճշմարտապէս , թէպէտ և առնոցա՝ կարծիս օրհնի այլ ոք , որում խաբեալք ակն ունին ։ Այլ ահա յերկրորդ անգամ խնդրել երէց որդւոյն զօրհնութ̃ին խոստացեալ, յապուշ կրթի Իսահակ · և գիտացեալ թէ զայլ ընդ այլոյ օրհնեալ իցէ՝ զարմանայ · և ո՞վ ոք նա իցէ՝ հարցաքննէ · բայց և ընդ իւրն խաբիլ ոչ ստրջանայ · այլ անդէն 'ի սրտի յայտնութ̃ի ընկալեալ մեծի խորհրդոյն , զցասումն արգելու , զօրհնութիւնն հաստատէ · "Իսկ այն ո՞վ էր , ասէ , որ որսացաւ ինձ որս , և եբեր մատոյց , կերայ յամենայնէ մինչ չև քո եկեալ էր , և օրհնեցի զնա , և եղիցի օրհնեալ„ ։ Ո՞ ոք ոչ մնայր առաւել զանէծս լսել աստանօր զհօր զայրացելոյ , եթէ արդարև մարդկօրէն գործէին իրքս , և ոչ ըստ վերնային ազդեցութ̃են ։ Բա՛րէ գործեցելոց իրացդ , այլ մարգա-

ըհաքար. յերկրի, այլ յերկինից անտի.՝ի ձեռն մարդկան, այլ ածուատ. եթէ ՝ի քննին առցին իւրաքանչիւր իրք ոճամոճ խորհրդովք լինք, հարկ է մատեանս յոլովս բովանդակել. բայց չափաւորուն առաջիկայս մատենի ստիպէ զմեզ փութալ ձեպել և յայլս ևս ծնացեալ բանս։

ԳԼՈՒԽ ԼՐ.

Յաղագս առաքման Յակոբայ ՝ի միջագետս՝ առնուլ իւր կին, և վասն տեսլեանն գիշերոյ զհանապարհայն, և վասն չորից կանանց նորա՝ ուր ինքն զմի եւեթ խնդրէր։

Ի ՄԻԶԱԳԵՏՍ առաքի Յակոբ ՝ի ծնողացն՝ առնուլ իւր անտի կին. և հօրն բանք յառաքելն այս էն. "Մի՛ առնուցուս կին ՝ի դստերաց աստի քանանացւոց։ Այլ արի գնա՝ի միջագետս Բաթուէլի հօր մօր քո, և առ անտի քեզ կին ՝ի դստերաց Լաբանու եղբօր մօր քոյ։ Եւ ած իմ օրհնեսցէ զքեզ, և աճեցուսցէ զքեզ, և բազմացուսցէ զքեզ. և եղիցես ՝ի ժողովս ազգաց. և տայէ քեզ զօրհնուլթին Աբրահամու հօր իմոյ, քեզ և զաւակի քումդ յետ քո, ժառանգել քեզ զերկիր պանդխտուլթե՛ք քո զոր ետ ած Աբրահամու"։ Ընդունի Յակոբ ՝ի մանամէ զօրհնուլթիւն զհօրէ՝ի միւսմէ զաւակէն Ծահակայ, ՝ի զարմէն ասեմ Եսաւայ։ Վասնզի յորժամ առնոյր, "Ծահակա՛ւ կոչեսցի քեզ զաւակ", այս է զաւակ կարգեալ առ քաղաքն՝այ, զատուցաւ այնու սերունդ Աբրահամու՝ որ յաղանդէն և ՝ի քեռուրացինան։ Այլ յերկուս որդիս Ծահակայ յերկուորեակն՝ դեռ անորոշ էր ժամանակ էգն օրհնուլթին, երկոցունց արդեօք, կամ միւսմ՝ի նոցանէ. և եթէ միւսին, որ այն էգն։ Այս ահա ծանուցաւ արդ, յօրհնել հօրն զՅակոբ մարգարէաբար և յառել, "Եւ եղիցես ՝ի ժողովս ազգաց, և տայէ քեզ զօրհնուլթին Աբրահամու հօր իմոյ"։

Արդ յուղի անկեալ Յակոբայ 'ի միջագետս, պատ-
գամ ընկալեալ յանուրջս, զորմէ գրեալ է այսպէս . "Եւ
ել Յակոբ 'ի ջրհորոյ անտի երդման, և գնաց 'ի Խառ-
ռան . և հասեալ 'ի տեղի մի, և ննջեաց անդ, քանզի
արեւն 'ի մուտս էր . և առ 'ի քարանց տեղւոյն և
եդ ընդ սնարս իւր, և ննջեաց 'ի տեղւոջն յայնմ :
Եւ ետես տեսիլ, և ահա սանդուղք հաստատեալ յեր-
կրի, որոյ գլուխ իւր հասանէր մինչև յերկինս . և հրեշ-
տակք ա̃յ ելանէին ընդ նա . և տէր հաստատեալ կայր 'ի
նմա : Եւ ասէ . ես եմ տէր ա̃ծ Աբրահամու հօր քոյ, և
ա̃ծ Իսահակայ . մի՛ երկնչիր . զի զերկիրդ յորում դուդ
ննջեցեր, քեզ տաց զդա և զաւակի քում : Եւ եղիցի
զաւակ քո իբրև զաւազ երկրի . և ընդարձակեսցի 'ի ծո-
վակողմն և ընդ արևելս, և ընդ հիւսիսի և ընդ հարաւ .
և օրհնեսցին 'ի քեզ ամենայն ազգք երկրի, և 'ի զաւակի
քում : Եւ ես աւասիկ ընդ քեզ եմ պահել զքեզ յամե-
նայն ճանապարհս քո յոր և գնասցես, և դարձուցից զքեզ
յերկիրս յայս . զի ոչ թողից զքեզ մինչև արարից զամե-
նայն ինչ զոր խօսեցայ ընդ քեզ : Եւ զարթեաւ Յակոբ
'ի քնոյ անտի իւրմէ և ասէ . տէր է 'ի տեղւոջս յայսմիկ, և
ես ոչ գիտէի : Զահի հարաւ և ասէ . ահեղ իմն է տեղիս
այս . և ոչ է սա եթէ ոչ տուն ա̃յ, և այս է դուռն երկնից :
Եւ յարեաւ Յակոբ ընդ առաւօտն և առ զվէմն զոր եդ
ընդ սնարս իւր, և կանգնեաց զնա արձան, և արկ իւղ 'ի
գլուխ նորա . և կոչեաց Յակոբ զանուն տեղւոյն այնորիկ
տուն ա̃յ" : Այս ամենայն 'ի մարգարէութի̃ հայէին . և ոչ
ըստ կռամոլըն սովորութե̃ իւղեաց Յակոբ զվէմն իբր
ա̃ծարելով զայն, զի ոչ երկիր եպագ նմին, և ոչ նուէրս
մատոյց . այլ քանզի անուն Քրի յօծմանէ ասացեալ է,
արդարև նկարեցաւ աստանօր ինչ մի մեծի խորհրդոյ
նշանակ : Իսկ զայն սանդուղսն ինքնին փրկիչն թուի յուշ
ածել մեզ յաւետարանի . Յհ . ա . 47 . ուր ասելովն յա-
ղագս Նաթանայելի, "Ահա արդարև իսրայէլացի, յո-
րում նենգութի̃ ոչ գոյ", զի Իսրայէլ որ և Յակոբն,
տեսեալ էր զտեսիլն զայն, յաւել 'ի նմին վայրի . "Ամէն

ամէն ասեմ ձեզ, զի տեսանիցէք զերկինս բացեալ, և զհրեշտակս Այ զի ելանիցեն և իջանիցեն 'ի վերայ որդւոյ մարդոյ ,, ։

Արդ եկն եհաս Յակոբ 'ի միջագետս՝ առնուլ անտի կին • և թէ որպէս եղև նմա չորս կանայս ունել, յորոց ստացաւ ուստերս երկոտասան և դուստր մի, մինչ ինքն և ոչ միումն ցանկացեալ էր յանպատշաճս, զայդ յայտ առնէ ածային գիրն ։ Քանզի նա միում ամուսնոյ 'ի խնդիր եկեալ էր • բայց զի այլ փոխան այլոյ գաղտնապէս մատուցաւ առ նա, ընդ որում եղև 'ի գիշերի յանդէտս, և ոչ արձակեաց զնա՝ առ 'ի չառակելոյ զնա, և զի յայնմ ժամանակի առ 'ի զծնունդս յաճախելոյ ոչ արգելուին օրէնք զբազմակնութիւն, առընկալաւ Յակոբ և զմիւսն՝ որոյ վասն ևեթ բան եդեալ էր ամուսնանալ ։ Իսկ սորա ամուլ գտեալ, ետ զաղախինն առն իւրում՝ ունել 'ի նմանէ որդիս • ընդ որ նախանձ բերեալ և երիցու քեռն՝ թէ և ծննդականի, զնոյն արար՝ ցանկալով բազմացուցանել զաւակս ։ Ուր տեսանեմք զի Յակոբ զմի կին միայն խնդրեաց, և բազմօքն վարեցաւ առ 'ի պէտս զաւակասերութե, ամուսնական իրաւանցն պատկառ կացեալ • մինչ զի և ոչ զայդ յանձն առեալ էր նորա, եթէ չէր 'ի նոյն թախանձեալ առ 'ի կանանցն՝ որք իշխանութի ըստ օրինի ունէին 'ի վերայ մարմնոյ առն իւրեանց • որոյ վասն ծնաւ երկոտասան ուստերս և դուստր մի 'ի չորեցունց կանանց ։ Յետ այնորիկ եմուտ Յակոբ յԵգիպտոս վասն որդւոյ իւրոյ Յովսեփայ, որ 'ի մախացող եղբարցն վաճառեալ ածաւ անդր, ուր և ամբարձաւ յիշխանութի ։

ԳԼՈՒԽ ԼԹ

Յորմէ՞ պատճառէ Յակոբ կոչեցաւ և Իսրայէլ ։

Իսկ Յակոբ կոչէր և Իսրայէլ, որպէս փոքր ինչ յառաջ ասացի • և զայն անուն յաճախ 'ի կիր արկ ժողովուրդն

սերեալ՝ի նմանէ։ Այս անուն տուաւ նմա՝ի հրեշտակէն՝ որ՝ի դարձի Ձանապարհի միջագետաց գտեհկաիւ եղև ընդ նմա, յայտնապէս զՔրիստի տպացուցեալ զիսուհտուրդ։ Այսպէս զի զօրանալ Յակոբայ քան զնա՝ յայտ է թէ նո՛ բուն իսկ հաձոյ՛ւն առ՝ի ձևակերպութիւնէ խորհրդոյ, նշանակեալ ցուցանել զՔրիստի յարչարանսն, յորում երևեցան Հրեայք զօրացեալ քան զՔրիստ, և սակայն՝ի հրեշտակէ անտի որում յաղթեալն էր, զօրհնութիւն ինդրեաց Յակոբ. ուստի և անուանն դրութիւն եղև օրհնութիւն. զի Խորայէլ թարգմանի՝ ՚ձծատես. և այս իսկ է՛ի կատարածին՝ վարձք սրբոց ամենեցուն։ Իսկ հրեշտակին կալաւ բուռն ևհար զիւրումն յաղթողի զտախտակ զըստին, և զնա կազացոյց. որով նոյն ինքն Յակոբ լինէր միանգամայն օրհնեալ, և կազացեալ. օրհնեալ՛ի նոսա՝ որ՛ի նորա ժողովրդենէն հաւատացին՛ի Քրիստ, իսկ յանհաւանութեան՝ կազացեալ։ Քանզի զըստին տախտակ նշանակէ բազմասերութիւնէ. և բազումք են յայսմ զարմէ՝ զորոց ասացաւ մարգարէաբար. “Եւ կազացան՛ի շուրջանց իւրեանց ,,։ Ամ. ԺԷ. 46։

ԳԼՈՒԽ Խ

Չխորհ մեռ Յակոբայ Եգիպտոս ասի լինել եօթանասուն և հինգ ոգով, ուր բազումք՝ի լիչատակէ ըզայնցանէ յետոյ ժամանակաւ ծնեալ են։

Ար՛դ մեռեալքն ընդ Յակոբայ Եգիպտոս ասին միանգամայն անձինք եօթանասուն և հինգ, ընդ մի համարեալ որգովք հանդերձ. յորում երկու միայն կին լիչատակին, մի դուստր, և միւս՝ Թոռն։ Այլ մանր նկատեալ զիրսդ, ոչ եթէ յայտ առնէ նոցինքան համարոյ լինել ազգատոհմին Յակոբայ յայսմ աւուր կամ՛ի տարւոջ, յորում եմուտ Եգիպտոս. վասն զի ընդ նոսա յիշատակեալ են և Թոռնիքայք Յովսէփայ, որոց բնաւ անմարթե

էր լինել յայնժամ. զի էր Յակոբ յայնժամ հարիւր և երեսուն ամաց, և որդի նորա Յովսէփ երեսուն և ինն ամաց. և զի յայտ է կին ածեալ նորա երեսնամեայ կամ աւելի ևս, զիա՞րդ ընդ ինն ամս կարող էր ունել Թոռնիայս յորդւոց անտի՝ զորս 'ի նոյն կնոջէ ստացաւ: Ապա քանզի և ոչ որդիք Յովսէփայ Եփրեմ և Մանասէ ունէին տակաւին որդիս, այլ իբր իննամեայ մանկունս եգիտ զնոսա Յակոբ 'ի մտանելն յԵգիպտոս, զիա՞րդ ոչ միայն որդիք նոցա՝ այլ և Թոռունքն գտնին 'ի համարի մտելոցն ընդ Յակոբայ յԵգիպտոս ընդ եօթանասուն և հինգ Թուովս: Քանզի անտանօր յիշատակի Մաքիր որդի Մանասէի, Թոռն Յովսէփայ. և նորին Մաքիրայ որդի Գաղաադ, Թոռն Մանասէի, Թոռնիայ Յովսէփայ. անդ է և Եփրեմի երկրորդ որդւոյն Յովսէփայ զաւակն՝ Սուտաղաամ, Թոռն Յովսէփայ, և որդի Սուտաղաամայ՝ Եդեմ, Թոռն Եփրեմի, Թոռնիայ Յովսէփայ. որոց չէր մարթ լինել 'ի գալն Յակոբայ յԵգիպտոս, յորժամ որդիք Յովսէփայ Թոռունք իւր և հաւք սոցա՝ էին դեռ մանկունք իբր իննամեայք: Այլ յայտ է թէ՝ ասել գրոյն եօթանասուն և հինգ ոգւով մտեալ Յակոբայ յԵգիպտոս, ոչ 'ի նմին աւուր կամ 'ի նոյն ամի մտիցն իմանալ, այլ հաշուէ զբովանդակ ժամանակն ցորչափ եկեաց Յովսէփ, որոյ վասն եղև մտանելն նոցա: Քանզի վասն նորին իսկ Յովսէփայ այսպէս խօսի գիրն. “Եւ բնակեաց Յովսէփ յԵգիպտոս՝ ինքն և եղբարք իւր, և ամենայն համօրէն տուն հօր իւրոյ. և եկեաց Յովսէփ ամս հարիւր տասն. և ետես Յովսէփ զորդիս Եփրեմի մինչև յերրորդ ազգ„: Նա ինքն է Թոռնիայ նորա երրորդ յԵփրեմէ. զի ազգ երրորդ ասէ զորդին, զԹոռն, զԹոռնիայ: Եւ ածէ զնովիմբ. “Եւ որդիք Մաքիրայ՝ որդւոյ Մանասէի ծնան յերանս Յովսէփայ„: Ահա և սա է Թոռն Մանասէի, Թոռնիայ Յովսէփայ. բայց բազմաբար ասացաւ, որպէս է գրոց սովորութի, որ և զմի դուստր Յակոբայ դստերս անուանեաց. այլ և 'ի լատինական լեզուի սովորեալ է բազմաւորական ասել զաւակս կամ

որդիս, թէ և մի միայն իցէ։ Ապա քանզի զՅովսէփայ բարեփառութեանց էին բանքն, որ և զթոռնիայս իւր տեսանել կարողացաւ, ոչ իւիք կարծելի է թէ կային նոքա յերեմներորդ յիններորդ ամի նախահաւուն իւրեանց Յովսէփայ, յորժամ եկն առ նա Յակոբ հայր նորա յԵգիպտոս։ Իսկ որք վերիվերոյ հային յայսոսիկ, սխալեն այնու զի գրեալ է. « Եւ այս են անուանք որդւոցն Իսրայելի որ մտին յԵգիպտոս »։ Սակայն այսպէս ասացաւ, զի միահամուռ ընդ նմա հաշուին եօթանասուն և հինգքըն. այլ ոչ եթէ կային ամենեքին նոքա 'ի մտանելն յԵգիպտոս. և որպէս ասացիդ, բովանդակ ժամանակն յորում եկեաց Յովսէփ՝ համարի մտից նորա, զի վասն Յովսէփայ իսկ եղեն մուտքն։

ԳԼՈՒԽ ԽՄ.

Յաղագս օրհնութեան որով օրհնեաց Յակոբ զՅուդա զորդի իւր։

ԱՅԼ. արդ եթէ վասն քրիստոնէական ժողովրդեան՝ յորում քաղաքն այ պանդխտի յերկրի, խնդրիցեմք զմարմին Քի 'ի զաւակին Աբրահամու, 'ի բաց որոշմամբ հարճորդւոցն, կայ մնայ Իսահակ. եթէ յԻսահակայ զաւակին խնդրիցեմք, երբ 'ի բաց դնի Եսաւ որ և Եդովմ, կայ մնայ Յակոբ, որ և Իսրայէլ. իսկ յԻսրայելեան զաւակին թէ խնդրիցեմք, այլոցն 'ի բաց թողեալ՝ կայ յանդիման Յուդա. զի յազգէն Յուդայ ծագեաց Քս։ Ուստի այն ինչ 'ի վախճան մերձեցեալ Իսրայէլի յԵգիպտոս՝ օրհնէր զորդիս իւր, լուիցուք զիարդ զՅուդա օրհնեաց մարգարէական առասացութբ. « Յուդա, զքեզ օրհնեսցեն եղբարք քո. ձեռն քո 'ի վերայ թիկանց թշնամեաց քոց. երկիր պագցեն քեզ որդիք հօր քո։ Կորիւն առիւծու Յուդա. 'ի շառաւիղէ ելեր որդեակ իմ. ելեր բազմեցար, ննջեցեր իբրև զառիւծ, և իբրև զկորիւն առիւծու. ո՞ յա-

րուցանէ զնա ։ Մի՛ պակասեսցէ իշխան Յուդայ, և մի պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ նա՝ որոյ իւր է հանդերձեալքն. և նա է ակնկալութիւն հեթանոսաց ։ Կապեսցէ զորթոյ զյաւանակ իւր, և զգնդակէն զյաւանակ իշոյն. լուասցէ գինւով զպատմուճան իւր, և արեամբ խաղողոյ զհանդերձս իւր. զուարթագին են աչք նորա ՚ի գինւոյ, և սպիտակ ատամունք իւր քան զկաթն ,, ։ Այսոցիկ արարեալ է իմ բացայայտութիւն ՚ի վիճաբանելն ընդդէմ Փաւստոսի մանիքեցւոյ, և շատ թուի ինձ ՚ի լուսաբանել ըզճշմարտութիւն մարգարէութեանս. ուր և մահն Քնի նախապատմի ընդ անուամբ ննջման, այլ և իշխանութիւն ՚ի մահուն՝ և ոչ հարկ՝ ընդ անուամբ առիւծու ։ Զայն իշխանութիւն ինքնին քարոզէ յաւետարանի անդ ասելով. " Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա ։ Ոչ ոք հանէ զնա յինէն. այլ ես դնեմ զնա անձամբ իմով, զի միւսանգամ առից զնա ,, . Յհ. Ժ. 18 ։ Այսպէս գոչեաց առիւծն, այսպէս զոր ասացն՝ կատարեաց ։ Քանզի այնմ իշխանութեան է յայտարար որ յաղագս յարութեան նորա յաւելուածն. " Ո՞ յարուցանիցէ զնա ,, . այսինքն է՝ ոչ ոք ՚ի մարդկանէ՝ բայց անձամբ զանձն, որ և վասն մարմնոյ իւրոյ ասաց. " Քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս շինեցից զդա ,, . Յհ. Բ. 19 ։ Իսկ յեղանակ մահուն, այս է՝ բարձրութիւն խաչին միով բանիւս նշանակի՝ ելեր ասելովն ։ Իսկ զոր յաւելու՝ բազմեցար ննջեցեր, բացայայտէ աւետարանիչն ասելով. " Խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին ,, . Յհ. ԺԹ. 30 ։ Կամ այսու թաղումն նորա ակնարկի, որով բազմեալ ննջեաց, և ոչ այլ ոք ՚ի մարդկանէ յարոյց զնա, որպէս մարգարէք զոմանս, կամ որպէս ինքն Քս զայլս, այլ ինքնին յարեաւ ։ Իսկ պատմուճան նորա զի՞նչ այլ է, բայց եկեղեցի. զոր լուաց գինւով, այս է՝ սրբեաց ՚ի մեղաց արեամբ իւրով, զորոյ զարեանն զխորհուրդ գիտեն մկրտեալքն, որպէս և յարէ՝ և արեամբ խաղողոյ զհանդերձս իւր ։ " Զուարթագին են աչք նորա ՚ի գինւոյ ,, . այս է՝ հոգևոր անդամքն՝ արբեալք բա-

ժակաւ Նորա, զորմէ երգածախն սաղմոն. "Խաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս ,, . ԼԷ . 5 ; "Լե սպի. տակ ատամունք իւր քան զկաճն ,, . զոր Ճաշակէն ըստ առաքելոյ տղայք, այսինքն է՝ բանս տածիչս, վե ևս բա. ւականք հաստատուն կերակրոյ : Ընդս ուրեմն ինքն Ինչ է, յոր գանձեալ կան խոստմունք Յուդայ . և մինչ չե եկեալ այոց ի կատարումն, ոչ պակասիցին իշխանք Թագաւորք Իսրայէլ յայմ ցեղէ. "Լե նա է ակնկալու. Թէ հեթանոսաց ,, . զոր արդեամբք տեսանեմք՝ առանց կարօտ լինելոյ մեկնութեն :

ԳԼՈՒԽ ԽՐ

Յաղագս որդւոց Յովսէփայ՝ զորս օրհնեաց Յակոբ մարգարէաբար փոփոխմամբ ձեռացն :

Ո՞ՐՐ օրինակ երկու որդիք Իսահակայ՝ Լսաւ և Յա. կոբ եղեն տարացոյց երկուց ժողովրդոց որ ի Հրեայս և ի քրիստոնեայս, Թէպետ և ըստ մարմնոյ սերնդեանն՝ ոչ Հրեայք ծագեցին ի զաւակէն Լսաւայ՝ այլ եդոմայեցիք, և ոչ քրիստոնէական ազգք ի Յակոբայ՝ այլ Հրեայքն. զի յայդ միայն Հայէր օրհնական որ ասացաւ . "Լրբեցն կրաե. բոյն ծառայեսցէ ,, . Այոյնպէս կատարեցաւ և յերկու որ. դիս Յովսէփայ. զի երեցն տպաւորեաց զՀրեայս, և կըր. սերն զքրիստոնեայս : Ո՞րպս յօրհնել առեալ Յակոբայ, զձեռն իւր զաջ դնէր ի վերայ կրսերոյն կացելոյ ընդ ա. հեկ իւրմէ, և զձախն ի վերայ երիցուն որ յաջմէն կայր. Ոչանր Թուեցաւ այն Յովսէփայ, և ազդ արար հօրն՝ զվրիպական ուղղել կամեցեալ, և ցուցանէր Թէ որ ի նա. ցանէ իցէ անդրանիկ : Այոյց նա ոչ կամեցաւ զձեռն փոփոխել. այլ ասէ . "Գիտեմ որդեակ, գիտեմ. և դա եղիցի ի ժողովուրդ, և դա բարձրասցի. այլ եղբայրն դո. բա կրտսեր եղիցի մեծ քան զդա. և զաւակ սորա եղիցի ի

բազմութ̃ն ազգաց»: Ահա և աստանօր երկու խոստմունքն ակնարկէին. զի նա եղիցի 'ի ժողովուրդ, սա 'ի բազմութ̃ն ազգաց. զի՞նչ յայտնագոյն քան զայս, թէ երկոքումբքս բովանդակէր զժողովուրդն իսրայելեանց, և զտիեզերս ողջոյն 'ի զաւակին Աբրահամու, զայն ըստ մարմ̃նոյ, և զայս ըստ հաւատոց:

ԳԼՈՒԽ ԽԴ

Յաղագս ժամանակաց Մովսէսի և Յեսուայ, և դատաւորաց, և թագաւորաց. յորոց առաջին Սաւուղ, այլ նախապատիւ գտանի Դաւիթ ըստ խորհրդին և ըստ արժանաւորութեան:

ՎԱԽՃԱՆԵՑԱՒ Յակոբ, վախճանեցաւ և Յովսէփ. և ընդ միացեալ ամս հարիւր քառասուն և չորս մինչև յելս յերկրէն եգիպտացւոց՝ 'ի բազմութ̃ն անկարծելի աճեաց ազգ Յակոբայ, և այն հանդերձ անհնարին հարստահարութ̃բ, մինչև զարուսն ծնեալս 'ի նոցանէ սպանանել առ ժամանակ մի, զանգիտելով եգիպտացւոցն յանչափ աճելութ̃է ժողովրդեանն: Յայնմ ժամանակի հնարիւք իմն ապրեալ Մովսէսի 'ի մանկակոտոր ձեռաց՝ յարքունականն աճեալ կայր 'ի տան. ուրանօր սնեալ և յորդեգիրս ընկալեալ 'ի դստերէն փարաւոնի, որ է անուն համօրէն թագաւորաց եգիպտացւոց, այնչափ իմն քաջացաւ, մինչև զազգն զբազմացեալ սքանչելապէս՝ 'ի խիստ և 'ի ծանրակիր լծոյ ծառայութ̃են՝ ընդ որով հեծէր, կորզեաց եհան ինքն, մանաւանդ թէ ա̃ծ 'ի ձեռն նորա, ըստ որում խոստացեալն էր Աբրահամու: Նանզի յառաջն խոյս տուեալ Մովսէսի յԵգիպտոսէ, առ երկիւղի՝ զի պաշտպան կալով իսրայելացւոյ ումե̃մն՝ սպանեալ էր զեգիպտացին, յետոյ ապա առաքեցաւ անդր իշխանութ̃բ հոգւոյն ա̃յ, և յաղթահարեաց զդիմակաց մոգսն փարաւոնի: Նովաւ յաճախեցին յայնժամ առ եգիպ-

տացիս տատն Հարուածքն երևելիք՝ ի վկայ նոցա արձակել զժողովուրդն, ջուր յարիւն դարձեալ, գորտք և մուն և չանաչանձ, խաչատամ, կեղ, կարկուտ, մորախ, խաւար, մահ անդրանկաց. և որք այնքանեօք մեծամեծ Հարուածովք նեղգևեալք եգիպտացիք՝ Հուսկ ապա արձակեցին զիսրայէլացիս, զկետ այնգեալք նոցա՝ կորեան ի ծովն կարմիր, քանզի խոպայէլացոյն ելելոց՝ Ճանապարհ արար ծովն հերձեալ՝ իսկ զկետատեալս նոցա ընկղմեաց ջուրն կարկատեալ։ Կետ այնր քառամեայ ժամանակս յածէր ժողովուրդն այ յանապատի անդ՝ ի Սինայ առաջնորդեալ. յորժամ խորան վկայութեան կանգնեցաւ, ուր պաշտէին Աճ պատարագաք՝ ի նախաձեռնութէ հանդերձելոցն, կետ տալոց օրինաց՝ ի լերինն առաւորութէ բազմաւ. քանզի Աճուածին յայտնապէս վըկայէին գնեը ահեղագրաւ նշանօք և բարբառովք։ Այս եղև անդէն յելանել նոցա Սինայ գիպատոսէ, յորժամ միջամէն եղև ժողովուրդն յանապատ յիսուն աւուրք զինի կատարելոյ պասեքին զենմամբ ոչխարիւ. այնպէս տպաւորագոյն զՆա օրինակեալ, նախագուշակելով զնա չարչարանացն զենմամբ անցանել յաշխարհէ աստի առ Հայր, զի պասքա կամ պասեք յերբայականն անցուցմն Թարգմանի, մինչ զի երբև այն ինչ յայտնեալ լինէր կետակն նոր, կետ զենոյց զատկին մերոյ Սինի՝ յաւուրն յիսնեերորդի ի Քաներ գայր յերկնից Հոգին սուրբ. որ մատն այ ասացաւ յաւետարանին, յուշ չիշատակի բերեալ մեզ զնախագիծ օրինակին կատարումն. քանզի և օրինացն տախտակք առացան գրեալ մատամբն այ։

Ի վախճանել Մովսէսի Կետու Նաւեան կալաւ զառաջնորդութէն ժողովրդեան, զոր և եմոյծ յերկիրն խոստացեալ կամ աւետեաց, բաժանեալ զայն ժողովրդեանն։ Կերկուց գերահրաշ առաջնորդացս մղեցան և պատերազմունք բարեյաջողք սքանչելագործս, այլ ինքնին վկայեալ թէ յաջողել յաղթութէցն այնոցիկ ոչ երթէ յարժանեաց անտի երբայական ժողովրդեանն է, քան թէ առ մեզս ազգացն պարտեցելոց։ Կետ նոցա կային դատաւորք,

մինչ ժողովուրդն բնակացեալ էր յերկրին աւետեաց, և այն ինչ սկսեալ էր նախկին խոստումն առ Աբրահամ 'ի գլուխ ելանել յաղագս միոյ ազգի, այն է եբրայականին, և վասն երկրին Քանանու՝ այլ ոչ վասն ամենայն ազգաց, և ընդհանուր տիեզերաց, որ 'ի Ք̅ի մարմնով գալըստեանն հանդերձեալ էր լնուլ՝ ոչ հնոյ օրինացն պահպանութ̅ք, այլ հաւատովք աւետարանին: Յորոյ 'ի տիպն ապացուցի՝ ոչ Մովսէս որ զօրէնսն ընկալեալ էր 'ի լեառն սինէական՝ եմուծ զժողովուրդն յաւետեացն երկիր, այլ Յեսու՝ որ և յայս անուն փոփոխեալ կոչեցաւ ըստ ա̅յ հրամայելոյն: Իսկ առ դատաւորօք՝ այլ և այլ դէպք եղեն պատերազմաց՝ աջողակք կամ ձախողակք, որպէս զիարդ պահանջէին մեղք ժողովրդեան, և ողորմութի̅ ա̅յ:

Զհետ եկին ապա ժամանակք թագաւորաց. որոց առաջին տիրեաց Սաւուղ. այլ իբրև անկաւ նա յերեսաց, և կոտորածով մարտի տապալեցաւ՝ հանդերձ անարգութ̅բ տանն նորա առ 'ի չմնալոյ զաւակի թագաւորութեան, յաջորդեաց Դաւիթ յաթոռ արքայութե̅ն. որում և առաւելապէս որդի ասացաւ Ք̅ս: Առ որով կէտ իմն սահմանի. և սկիզբն եղև գոգցես երկրորդութե̅ ժողովրդեանն ա̅յ. որոյ իբր պատանեկութ̅ի իմն ձգեալ գայր յԱբրահամէ մինչ 'ի Դաւիթ: Զի ոչ վայրապար ինչ Մատթէոս աւետարանիչ այնպէս յիշատակեաց զազգահամարն, զայս կարգեալ առաջին միջոց ծննդոցն՝ յԱբրահամէ մինչև 'ի Դաւիթ: Քանզի առ պատանութ̅բ սկսանի մարդ բաւական լինել 'ի ծննդագործութ̅ի. վասն այսորիկ յԱբրահամէ սկիզբն ծննդոցն արար. որ և հայր ազգաց սահմանեցաւ՝ յառնուլ անդ զանուանն փոփոխումն: Ապա ուրեմն նախ քան զայս՝ իբր մանկութ̅ի իմն էր ազգի ժողովրդեանն ա̅յ 'ի Նոյէ մինչև ցԱբրահամ. ուստի և առաջին լեզու գտաւ եբրայականն. զի առ մանկութ̅բ արձակի լեզու առ 'ի խօսել՝ յետ անխօսուն տղայութե̅ն: Զայս զառաջին հասակ անհետ առնէ մոռացութ̅ին, որպէս և մարդկութ̅ս դար առաջին ջնջեցաւ ջրհեղեղաւ. զի ո՞ ոք այն իցէ՝ որ զիւր տղայութ̅ի յուշի ունի-

ցի։ Ամին իբր յայտնի ընթացս քաղաքին այ՟, որպէս յանցելումն գրի բովանդակեցաւ մի և նախկին հասակն, նոյնպէս յառաջիկայ գիրս կարգեցի երկրորդ և երրորդ հասակն. յորում երրորդիս՝ ըստ երեւման երնջոյն, և երեւման քօշին և երեւման խոյին՝ եղաւ օրինացն լուծ, և երեւեցաւ յաճախութ՟ն մեղաց, և երկրաւոր թագաւորութեանն ծագեաց սկիզբն. ուր ոչ պակասեցին և արք հոգեւորք խորհրդաբերեալք 'ի տատրակ և յաղաւնի ։

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՒՏԱՍՆ.

Որ բանք լինին յաղագս ընթացից քաղաքին ա̃յ առ ժամանակօք թագաւորաց եւ մարգարէից 'ի Դաւթէ մինչեւ 'ի Քն̃, եւ գուշակութիւնք աւանդեալք յա̃ծային գիրս ըստ այնց ժամանակաց՝ բացայայտին 'ի Քն̃ եւ յեկեղեցի.

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս ժամանակաց մարգարէից.

ԱՒԵՏԵԱՑՆ ա̃յ եղելոց առ Աբրահամ, որովք ուսաք զաւակի նորա խոստացեալ ա̃յ զազգն իսրայելական ըստ մարմնոյ, եւ զամենայն ազգս ըստ հաւատոց, թէ որով օրինակաւ արդեօք լրումն տայցի՝ ցուցցէ մեզ քաղաքն ա̃յ յառաջեալ ըստ կարգի ժամանակաց. Իսկ քանզի աւարտումն անցելոյ գրոցդ արարաւ մինչ 'ի թագաւորութիւն Դաւթի, անտի ապա եւ յայլ զկնիւն ձեռն արկցուք այժմ, ըստ բաւականի յանձնառեալս գործոյ կշռադատելով. Արդ այն ժամանակ՝ յորմէ հետէ ա̃ծայինն Սամուէլ եկաց մարգարէ, եւ յետ այնր ցգերութի ժողովրդեան Իսրայէլի 'ի Բաբելոն, եւ յանդրէն դարձ նոցա յետ եօթանասուն ամի ըստ սրբոյն Երեմիայի գուշակութեանն՝ յորժամ տունն ա̃յ նորակերտեցաւ, այդ ամենայն՝ ժամանակ է ասեմ մարգարէից. Իրաւամբք կարող էաք մարգարէս անուանակոչել եւ զնոյն իսկ զԻ̃սյ նահապետ՝ յորոյ աւուրս երկիր ամենայն կորեաւ 'ի ջրհեղեղէ, եւ զայլս յառաջ եւ զկնի մինչեւ 'ի ժամանակ երեւելոյ թագաւորաց 'ի ժողովրդեանն ա̃յ, յաղագս իրիք իրիք ապագայից 'ի ձեռն նոցա նշանակեցելոց կամ նախապատմելոց, ըստ պատշաճից քաղաքին ա̃յ եւ երկնաւոր թագաւորութեանն. Մանաւանդ զի զոմանս յայնցանէ ընթեռնումք յայտնա-

պէս մարգարէս առաքեալ, որպէս զ՝քրաշամ և զՂ՝ովհաննէս Մկաւթայ առաւելապէս աւուրըք մարգարէից ասացան այն ժամանակք, յորմէ հետէ Յամուէլ սկսաւ մարգարէանալ, որ և զԱաւուղ նախ, և ապա յանարգիլ նորա՝ զԴաւիթ օծ՛ի Թագաւոր ըստ հրամանին Ա՛ստ, յորոյ՛ի գաւակէն ունելին այլեայ փոխանորդեալ՝ որչափ ժամանակս սահմանեալ էր յաջորդութիւն։ Ի՝զդ որ ինչ միանգամ ասացան՛ի մարգարէից յաղագս Ք՝ին, յորժամ քաղքն Ա՛ստ ընդունայս առնելը յայն ժամանակս՝ իւրոց անգամոյն ոմանց մահուամբ գնալով՛ի բաց, և այլոց յաջորդելով Ծննդեամբ, եթէ զդովանդակն յառաջ բերել կամիցիմ, ըստ չափ ելանել բանս, Ի՝անգի նախ այն իսկ՝ զի գիրն որ՛ի կարգաբանել անդ զԹագաւորացն արարս և զանոցա՝ Թուի զվիպասանականն փոյթ՛ի կիր առնուլ՛ի պատմաբանութիւն։ Եւթէ իրացն գործեցելոց, եթէ մնասուք բանիս Ճառեսցի Հոգւոյն Ա՛ստ օժանդակելովն, գտանիցի ուշ ունել յաւէտ կամ ոչ սակաւ՛ի նախաճառուն հանդերձելոցն, քան եթէ՛ի զրուցաբանութիւն անցելոց։ իսկ զայն քննողաբար՛ի դուրս բերել և բացախօսութիւն արտայայտել՝ Թէ քանի տաժանական իցէ և երկայնատարած, և յորով մտաճնից կարօտ, ոչ ոք ոչ չափաւորապէս այսոցիկ խելամուտ իցէ՝ անգիտանայ։ Ա՛ս միւս կս, զի և յայտնապէս՛ի մարգարէութի՛ն պատշաճելոքն՝ այնչափ յաճախագոյնք են վասն Ք՝ին և վասն երկնից արքայութե՛ն՝ որ է քաղաքն Ա՛ստ, մինչ զի առ՛ի զայնոսիկ մեկնաբանելոյ առաւելագոյն Ճառից պէտք են՝ քան զպահանջել պայմանի առաջադրեալս մատենի։ ուստի այնպէս իմն ըստ իւրում բաւականի չափ եղից կարգի բանիցս, զի առ մատենիս յաջողել կամօքն Ա՛ստ ոչ զաւելորդն ասացից, և ոչ զպիտանեօք զանց արարից։

ԳԼՈՒԽ Ի

Թէ յորում ժամանակի լցաւ խոստումն Տեառն վասն երկրին Քանանու. զոր մարմնաւորն Իսրայէլ ընկալաւ ՚ի ժառանգութիւն:

ՑՈՒՑԱՔ ՚ի նախագրեալ ճառիդ՝ թէ ՚ի սկզբան աւետեացն Տեառն առ Աբրահամ երկու ինչ իրք եղեն խոստացեալ. մի՝ ժառանգել զաւակի նորա զերկիր Քանանու. որ և տեսանի յասացեալն. «Եկ յերկիր զոր ցուցից քեզ, և արարից զքեզ յազգ մեծ»: Եւ միւս ևս՝ կարի բարձրագոյն՝ ոչ վասն մարմնաւոր զաւակին, այլ հոգևորին, հայր կարգեալ ոչ միում ազգի Իսրայէլեան, այլ համօրէն ազգաց՝ որք ընդ հետս հաւատոյ նորա գնայցեն. և այս է խոստացեալ այնու բանիւ. «Եւ օրհնեսցին ՚ի քեզ ամենայն ազգք երկրի»: Ի վերայ այսորիկ բազում այլ ևս վկայութեամբք ցուցաք զերկու զայս խոստմունս: Արդ ուրեմն յերկրին աւետեաց կայր զաւակն Աբրահամու, ժողովուրդ Իսրայէլի ըստ մարմնոյ. և անդ ոչ միայն կալեալ և ժառանգեալ էր զքաղաքս հակառակորդաց, այլ և թագաւորս ունելով՝ տիրանալ սկսեալ էր, բազում մասամբք հետզհետէ կատարելով խոստմանցն Տեառն վասն նորին ժողովրդեան. խոստմանց՝ իմա եղելոց ոչ միայն երեցունց հարց Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, կամ որ այլ ևս առ նոցա ժամանակօք, այլ և որ ՚ի ձեռն Մովսէսի եղեն յազատել նորա զժողովուրդն յեգիպտական ծառայութենէն, որով և անցեալքն ամենայն յայտնեցան ՚ի ժամանակս նորա՝ յորժամ զժողովուրդն ածէր ընդ անապատն: Սակայն ոչ առ ականաւոր զօրավարաւն Յեսուաւ Նաւեայ, յորոյ ձեռն եմուտ ժողովուրդն յերկիրն խոստացեալ, և յաղթահարեալ զազգսն՝ ցեղիցն երկոտասանեցունց ըստ Տեառն հրամայելոյն բաժանեաց զերկիրն և վախճանեցաւ, և ոչ յետ նորա ընդ ժամանակ դատաւորացն ողջոյն գլխաւորեալ էր խոստումն Տեառն վասն երկրին Քանանու՝ ՚ի գետոյն

Ա, գ խստոսի մինչև՛ ի գետն ածմ, պրատ. բայց և ոչ տակա-
ւին ընդ մարդարէսն կայը իբրև ապառնի, այլ տակաւին
լսմանն ակնկալութեն էր։ Ա, ու ահա լցաւ՛ի ձեռն Գաւթի
և որդւոյ նորա Սողոմոնի. որպ Թագաւորութեն ընդա-
ձակեալ ձգեցաւ ցոր վայր և խոստացեալն էր. զի զբոլո-
րեսին գնոսա նուաճեցին՝ հարկատուս արարեալ։ Ա, յսու
օրինակաւ հաստատեալ զաւակին Աքրահամու՛ ի մար-
ձական խոստման յերկրին Քանանու առ յիշատակեալ
Թագաւորքն, ոչ այլ ինչ ինայր առ՛ի լրումն այնր խոստ-
մանն՝ բայց զի ըստ ժամանակին բարեբաստուէնն անչար-
ժելի կացեալ ինասցէ երբայականին ազգ սերնդովքն յաջոր-
դելովք մինչև՛ ի կատարած մահկանացու աշխարհի, եթէ
հնազանդեսցի օրինաց տեառն՝ այ իւրոյ։ Ա, յլ քանզի զի-
տէր ած թէ անսասանելոց էր ազգն այն, ի գործ արկ և
զժամանակեան պատուհաս նորա առ՛ի մարգելոյ զսա-
կաւաւոր հաւատացեալսն իւր որ՛ի նմա, և խրատելոյ այ-
նու զորս յամենայն ազգս լինելոց էին, թէ այնպէս պարտ
է խրատիլ այնոցիկ՝ յորս կատարելոց է զմիւս խոստումն
՛ի յայտնել նորոյ կտակին մարդեղութեն Քրիստոսի։

ԳԼՈՒԽ Գ

*Յաղագս հաւատացելոյ խմաստից մարդարէիցն՝ որք մերթ յերկրաւորն
երևեալ էմանուիլն, մերթ յերկնաւորն և մերթ յերկոքեանցն։*

Ա ԱՍՆ այնորիկ զոր օրինակ պատգամէն ածեղէնք առ
Աբրահամ և առ Իսահակ և առ Յակոբ, կամ որ այլ ևս
նշանք կամ ասացուածք մարդարէականք եղեն՛ ի սրբա-
զան գիրս առաջինս, նոյնպէս՛ ի ժամանակիկ անտի Թա-
գաւորաց այլ ևս մարգարէութեք՝ հային մասամբ ինչ առ
մարմնականն ազգ Աբրահամու, և մասամբ յայն զաւակ
նորա՝ յորում օրհնեն ազգք ամենայն՝ ժառանգակիցք
Քրիստոսի՛ ի ձեռն նորոյ կտակին, առ ստանալոյ զյաւիտե-

հնից կեանս և զարթայութիւն երկինք։ Այլ ուրեմն մասամբ
Հայկն յաղախինն՝ որ ի ծառայութիւն ծնեալ, այս է՝ յեր-
կրաւորն Հրեաստեղէմ, որ ծառայէ որդւովք իւրովք Հան-
դերձ, և մասամբ յազատ քաղաքն այ, ի բուն Հրեաս-
ղէմն յաւիտենական երկինս, որոյ որդիք՝ մարդիկ ըստ
այ քաղաքավարեալք պանդխտին յերկրի։ Վասն զոն
ի նոսն մարգարէականս և ինչ ինչ՝ որ յերկոսին իսկ վե-
րածին, յաղախինն՝ տիրապէս, և յազատն՝ նշանակաբ։

Այլ եռամանեայ նշմարին մարգարէիցն պատգամք.
զի ոմանք պատշաճին յերկրաւորն Հրեաստղէմ, ոմանք
առ երկոսին։ (Յլենակօք ցուցանել պիտի զոր ասեմն։
Ոմանք մարգարէ առաքեցաբ առ արքայ Դաւիթ՝ յան-
դիմանել գնա սակս ծանր մեղացն, և նախապատմել նմա
զոր վճռ այնր զկնեալոց յարիւն։ Իսկ ահա այս և այլ ևս սոյն-
պիսիք յաճախոց պատգամաց եթէ հասարակաբար ասա-
ցեալք, եթէ ի փրկութիւն կամ յօգուտ ժողովրդեանն, և
եթէ առանձնաբար՝ որպէս զիւրդ անցիւրք իրք պահան-
ջէն, որովք լինել ինչ ի յայտնութիւն գայ ի պէտս ժա-
մանակեայ կենաց, ոչ զբ յերկուսանայ թէ երկրաւորն քա-
ղաքի անկ էն։ Այլ ուր ընթերնումբ, « Հաւասիկ ա-
ւուրբք գան ասէ տէր, և ուխտեցից տանդ Իսրայէլի և
տանդ Յուդայ ուխտ նոր։ Ոչ ըստ ուխտին զոր ուխտեցի
ընդ Հարս նոցա՝ յաւուր յորում առի զձեռանէ նոցա
Հանել զնոսա յերկրէն եգիպտացւոց. զի նոքա ոչ կացին
յուխտին իմում, և ես անփոյթ արարի զնոցանէ, ասէ
տէր։ Այլ այս է ուխտն զոր ուխտեցից տանդ Իսրայէլի՝
յետ աւուրցն այնոցիկ ասէ տէր. տայց զօրէնս իմ ի մի-
տս նոցա, և ի սիրտս նոցա գրեցից զնոսա. և եղէց նո-
ցա յԱծ, և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ։, Երեմ. լԱ.
աստանօր Հաւաստաբար զվերնոյն Հրեաստղէմ մար-
գարէանէ և. որոյ վարձք ինքն Ած է, և զնա ունելն և
նոքա լինելն՝ է իւր ծայրագոյն և Համակ բարին։ Իսկ
որ երկաքանչիւրումն պատշաճի, այն իսկ է՝ զի Հրեաս-
ղէմ ասի քաղաք այ, և գուշակի լինել ի նմա տանն այ.
և տեսանի ընդ մարգարէութեանն՝ յորժամ Սողոմոն թա-

գաւոր չինէ զգերահրաշ տաճարն․ զի այսոքիկ և յերկրաւորն Երուսաղէմ կատարեցան ըստ պատմութեան, և երկնաւորին այնմ եղեն տիպք օրինակի։ Այս յեղանակ մարգարէութեան՝ յերկաքանչիւր իմաստից գոգցես շաղկապեալ և խառնեալ 'ի նախնի գիրս ածաշունչս, յորս վէպք գործեցելոց իրացն բովանդակին, արգոյ է մեծապէս․ և բազմօք հրահանգեաց և հրահանգէ զուշ որոց սրբազան տառիցն են խուզարկուք․ որպէս զի զոր միանգամ ընթեռնումքն պատմաբար գուշակեալ և արդեամբք կատարեալ յաբրահամեան զաւակին ըստ մարմնոյ, քննեսցի՝ զի՞նչ ինչ այլաբանութ՛ նշանակիցէ լինել 'ի զաւակին ըստ հաւատոց․ մինչ զի թուեցաւ ոմանց թէ չիք ինչ նախագուշակեալ ինչ յայն գիրս և արդեամբք կատարեալ, կամ թէ գործեցեալ ինչ՝ թէ և ոչ նախ գուշակեալ, որ ըստ այլասացիկ իմաստիցն ոչ ակնարկիցէ ինչ պատշաճեալ վերնումն քաղաքին այ, և որդւոց նորա պանդխտելոց 'ի կենցաղումս։ Սակայն թէ այդպէս իցէ, այնուհետև երկմասնեայ՝ և ոչ եռամասնեայ լինին պատգամք մարգարէից, կամ առհասարակ գրոցն՝ որք հնոյ կտակի անուամբ նշանակին․ զի ոչ ևս կայցէ ինչ 'ի նմա՝ որ միայնոյ երկրաւոր Երուսաղէմի պատշաճիցի, եթէ արդարև ամենայն զնմանէ կամ վասն նորա ասացեալքն և գործեցեալքն նշանակիցեն ինչ մի այլաբանական ձևով պատշաճեալ երկնաւորն Երուսաղէմի․ և լինիցին միայն երկու ազգ իմաստից, մին յաղագս Երուսաղէմ անկաւոր, և միւսն յերկնաւորին իսկ։ Այլ ինձ թուի՝ թէ զոր օրինակ մեծամեծս սխալեն որք համարինն՝ իրացն գործեցելոց յայն գիրս ոչ նշանակել զայլ ինչ բաց 'ի հանգամանաց ճառեցելոցն, նոյնպէս յանչափս համարձակին որք պնդենն՝ թէ ամենայն ինչ անտանօր 'ի ներքս փակէ իմաստս այլաբանականս։ Վասն այսորիկ եռամասնեայ՝ և ոչ երկմասնեայ իմաստս լինել ասացի․ բայց զայդ այդպէս վարկանիմ առանց մեղադիր լինելոյ այնոցիկ՝ որ կարողք իցեն իմաստս հոգևորականս արտայայտել յիւրաքանչիւր իրաց անտի գործեցելոց, հաստատուն միայն և

նախկին պահեալ զՀմարտութէն պատմութէնն ։ Ասայց արդ եթէ այնպիսի իցեն ասացեալքն, որ չկարեն ի գէպ գալ գործեալ լինելոյ ի մարդկանէ կամ առ չայ, միթէ երկբայիցէ հաւատացեալ ոք՝ թէ անխորհուրդ ինչ լինի ասացեալ. և ո՞ ոք որ կարօղն է յիմաստս հոգևոր ընդոստ ոչ ձգիցէ, կամ ոչ խոստովանեսցի՝ թէ անկ է կարօղն ի վէր բերել իմաստ ինչ հոգևոր ։

ԳԼՈՒԽ Գ

Յազագս նախանձոյ փոխոխման խորհրդեան Թագաւորութէն և քահանայութեան, և ումն իշխան զոր Սմբատ մայր Սամուէլի մարգարեացաւ ի գէմ Հեղեզկայ ։

Արդ այն ինչ յառաջագիտէին քաղաքին այ հաստատէր ի ժամանակս Թագաւորացն և յանարգել անդ Աստուծոյ՝ այնպէս ինն նախկին կալաւ Դաւիթ զԹագաւորութէնն, զի սերունդք նորա յետ այնր իշխեսցեն յերկրաւորն Իրուսաղէմ բազմատևական յաջորդութէբ, տուաւ ապաքէն տիպ՝ յիրացն գործեցելոց նշանակել և նախագուշակել զայն ինչ, զորով չէ լռութէբ անցանել, յազագս ապագայիցն փոխոխութէբ ըստ երկուց կտակարանացն՝ հնոյն և նորոյ ։ յորում քահանայութէն և Թագաւորութէն փոխոխեցաւ միովն այնուհետև նոր և մշտնջենաւոր քահանայիւ, որ է Յիսուս Քրիստոս։ Ա՝ սան զի և յանարգել Հեղեզկայ քահանայի՝ փոխանորդելն Սամուէլի ի պատճառս այ, զքահանայի միանգամայն և զդատաւորի կալեալ զաստիճան, և ի Սաւուղայ մերժելն՝ Դաւթայ հաստատել ի Թագաւորութէն, նախատպատ որեցին զայն զոր ասացիդ ։ Եալ և մայր Սամուէլի Աննա, որ յառաջն ամուլ էր, և յետոյ որդեծնութէբն բերկրեալ, ոչ զայլ ինչ Թուի մարգարեանալ՝ յորժամ ցնծալից զդոհաբանութէն մատուցանէր տեառն, զմանուկն ծնեալ և զհատեալ ի տեհոյ

հաստատելով նմին տեառն նովին ածպաշտութիւն որով ուխտեալն էր . քանզի ասէ . « Հաստատեցաւ սիրտ իմ 'ի տէր, և բարձրացաւ եղջիւր իմ յած իմ . ընդարձակեցաւ բերան իմ 'ի վերայ թշնամեաց իմոց . ուրախ եղէց 'ի փրկութեան քում : Զի ոչ գոյ սուրբ իբրև զտէր, և ոչ գոյ արդար իբրև զած մեր, և ոչ գոյ սուրբ բաց 'ի քէն : Մի պարծիք և մի խօսիք զամբարտաւանս, և մի ելցէ մեծաբանութիւն 'ի բերանոյ ձերմէ . զի ած գիտութեանց տէր, և ած պատրաստէ զարուեստս իւր : Աղեղունք հզօրաց տկարացան . և տկարք զգեցան զօրութիւն : Լցեալք հացիւ նուաղեցին, և քաղցեալք բնակեցան յերկրի (կամ անցին ընդ երկիր) . զի ամուլն ծնաւ եօթն, և բազմածինն նուաղեաց յորդւոց : Տէր մեռուցանէ և կեցուցանէ . իջուցանէ 'ի դժոխս և հանէ : Տէր աղքատացուցանէ և մեծացուցանէ . խոնարհեցուցանէ և բարձրացուցանէ . կանգնէ յերկրէ զտնանկն, և յարուցանէ զաղքատն յաղբեաց . նստուցանել զնոսա ընդ զօրաւորս ժողովրդեան . և աթոռ փառաց ժառանգեցուցանէ նոցա : Տայ զուխտս ուխտաւորի . և օրհնեաց զամս արդարոց . զի ոչ իւրով զօրութեամբ զօրանայ այր հզօր . տէր տկար առնէ զհակառակորդս իւր, տէր սուրբ է : Մի պարծեսցի իմաստունն յիմաստութեան իւր, և մի պարծեսցի հզօրն 'ի զօրութեան իւր, և մի պարծեսցի մեծատունն 'ի մեծութեան իւր . այլ այնու պարծեսցի որ պարծիցին՝ իմանալ և ճանաչել զտէր, և առնել զիրաւունս և զարդարութիւն 'ի մէջ երկրի : Տէր ել յերկինս և որոտաց, և ինքն դատի զծագս երկրի, որ արդարն է . տայ զօրութիւն թագաւորաց մերոց, և բարձրացուսցէ զեղջիւր օծելոյ իւրոյ » :

Ահա միթէ կնոջ միոյ լոկոյ համարիցին բանքս՝ ընդ ծնունդ որդւոյ իւրոյ խրախացելոյ . կամ թէ ցայն վայր օտարանայցէ հանճար մարդոյ 'ի ճշմարտութենէն լուսոյ, մինչև չիմանալ թէ անցանեն զանցանեն ասացուածքս այս մաղթանաց 'ի վեր քան զկար կնոջս : Բայց արդ որ միանգամ ըստ պատշաճի մտաւոր ոք իցէ իրացն՝ որք յերկրաւոր պանդխտութեանս սկսան առնուլ զկատարումն, ոչ

ահա 'ի յուշ բերէ և տեսանէ և ճանաչէ թէ 'ի ձեռն կնոջս այսորիկ, որոյ և անուն իսկ Աննա՝ թարգմանի շնորհք ա՟յ, այնպէս խօսեցաւ մարգարէահրաշ հոգւովն նա ինքն կրօնք քրիստոսական, նա ինքն քաղաքն ա՟յ՝ որոյ թագաւոր և կերտող Ք՟ս է, և միով բանիւ՝ նա ինքն շնորհքըն ա՟յ. յորմէ ամբարտաւանք օտարանան՝ զի անկցին. որով խոնարհք ընուն՝ զի կանգնեսցին. զոր և մեծաբարբառ հնչեցոյց երգդ այդ։ Այլ ասիցէ ոք արդեօք, ոչ բան ինչ մարգարէանալ կնոջս, այլ միայն վասն որդւոյն զոր հայցելով ընկալաւ՝ օրհնել զա՟ծ բերկրաձայն բարբառով։ Ապա ուրեմն զինչ այն ասացեալն իմանի. «Աղեղունք հզօրաց տկարացան, և տկարք զգեցան զօրութի՟ն. լցեալք հացիւ նուազեցին, և քաղցեալք ընակեցան յերկրի. զի ամուլն ծնաւ եօթն, և բազմածինն նուաղեաց յորդւոց»՝ Միթէ այն ինչ ծնեալ էր նորա զեօթն, ամուլն գոլով. զի ևեթ ունէր զորդի յասել իւրում զայսոսիկ. և ոչ յետ այնր եօթն ծնաւ նա, և կամ վեց՝ ըստ որս եօթներորդ լինէր Սամուէլ, այլ երիս ուստերս և երկու (կամ երիս) դստերս։ Եւ դարձեալ, չև ևս յայնմ ժողովրդեան կացեալ էր ոք թագաւոր. զոր 'ի կատարածին եդ. «Տայ զօրութի՟ն թագաւորաց մերոց, և բարձրացուսցէ զեղջիւր օծելոյ իւրոյ»։ Եւ ուստի ասէր զայս՝ եթէ մարգարէացեալ ոչ էր։

Ասասցէ ուրեմն եկեղեցի Ք՟ի, քաղաք թագաւորին մեծի, լցեալն շնորհօք, բազմածնունդն. ասասցէ զոր վաղ ժամանակաւ յառաջ զինքենէ ճանաչէ գուշակեալ բերանով մօրն բարեպաշտի. «Հաստատեցաւ սիրտ իմ 'ի տէր, և բարձրացաւ եղջիւր իմ յա՟ծ իմ»։ Արդարև հաստատեալ սիրտ, յիրաւի եղջիւր բարձրացեալ. վասն զի ոչ յինքն, այլ 'ի տէր ա՟ծ իւր։ «Ընդարձակեցաւ բերան իմ 'ի վերայ թշնամեաց իմոց»․ վասն զի նա և յանձկութի՟ս տառապանաց՝ ոչ է կապեալ բանն ա՟յ 'ի կալանաւոր քարոզիչս անգամ։ «Ուրախ եղէց 'ի փրկութե՟ն քում»․ Ք՟ս ինքն է այս փրկութի՟ն Ա՟յ. զոր Սիմէոն ըստ գրեցելումն յաւետարանի՝ հինաւուրցն զմանուկն ընդ

զրկեալ՝ այլ մեծ գնա Ձանաչելով ասէր. “Ի զդ արձակես զծառայ քո տէր՛ի խաղաղութեՀ. զի տեսին աչք իմ զփրկութեՀ քո ,, : Լսասցէ արդ և եկեղեցի . “Ուրախ եղէ՛ի փրկութեՀ քում. զի ոչ գոյ սուրբ իբրև զտէր, և ոչ գոյ արդար իբրև զՅաՀ մեր ,, . իբրև զի սուրբ է և սրբարար , արդար և արդարացուցիչ : “ Լ՛ոչ գոյ սուրբ բաց ՛ի քէն ,, . զի ոչ սուրբ ոք լինի՝ բայց ՛ի քէն միայոյ : Օ՛հետ գայ ապա . “ Ի՛ պարծիլք և մի խօսիք զամբարտաւանս. և մի ելցէ մեծաբանութեՀ ՛ի բերանոյ ձերմէ . զի Ձած գիտութեՀց տէր ,, : “Լա գիտէ զձեզ և անդ՛ուր ոչ ոք գիտէ . զի “Որ համարիցի լինել ինչ և չիցէ , զանձն իւր խաբէ ,, . Գ՛ող . ե . 3 : Լ՛սորիկ առ Թէնասիա քաղաքին ՅայասկՀ՝ առ ընտանացեալսն Ա՛ստելոյն , վստահացեալս յիւրեանցն զօրութեՀ , յանձինս՝ և ոչ ՛ի տէր պարծեցեալս . յորոց սակի են և ըստ մարմնոյ իսրայէլեանքն , երկրաւորն Ա՛րուսաղէմի քաղաքացիք . որպէս առաքեալ ասէ . Ֆ՛ . Ֆ . 3.“ Տգէտ են ՅՅ արդարութեՀ ,, , այլմ՛զոր տայ մարդ ՅՅՁ , որ միայն արդար է և արդարացուցիչ . “ և զիւրեանցն խնդրեն կացուցանել ,, . իբրև յանձանց ունել զայն, և ոչ առ յՅՅ մատնաւորեալ : “Օ՛ի արդարութեՀն ՅՅ ոչ Ձնազանդեցան ,, : Լ՛դարեւ զի ամբարտաւանք էլով, անձամբ՝ և ոչ ՅՅլ կարծեցին Ձամոյանալ ՅՅ . որ ՅՅՁն է գիտութեՀց , ուստի և դատիչ մտացն խղճի , անդ տեսեալ զնորՀուրդս մարդկան զի են ընդունայն՝ եՀէ մարդոյ իցէն , և ոչ ՛ի նմանէ : “Լ՛ոչ պատրաստէ զարուեստս իւր ,, : Օ՛ջր արուեստս կարծիցեմք , բայց զի ամբարտաւանք անկցին , և խոնարՀք կանգնեսցին : Լ՛յոց առուեստից կատարումն է ասել . “Լ՛ղեղունք Ձզօրաց տկարացան . և տկարք զգեցան զօրութեՀ ,, : Տ՛կարացաւ աղեղն , այն է Ձիգն ամենցին՝ որք այնպիսի զօրաւորս յաջս իւրեանց երևութեանան , մինչ զի կարողս լինել ՛ի կատարումն Ձծ այնոց պատուիրանաց մարդկօրէն բաւականութեՀ լեկով առանց պարգևաց և օգնականութեՀն ՅՅ . այլ զգեցան զօրութեՀ տկարք , որոց սրտի Ձայն է “ Ողորմեա ինձ տէր , զի հիւանդ եմ ես ,, . Ա՛ող . ե . 3 :

«Լ ցեւալք Հայիւ, ասէ, Նուազեցին և քաղցեալք բնա-
կեցան յերկիրն։ » Լ՚ոչ զոյս է խնամալ Հայելիցս, բայց զնո-
սին իակ Հղօր կարծեցեալս, զիարբայելանս՝ որոց Հաւատա-
ցան պատգամքն այդ։ Լ՚ԱՀ յայնմ ժամուվրդեան աղաչիսը-
դիբն Նուազեցին, փոքրկացան, իբր յերկրյուել ան-
կեալք. քանզի և՚ի նոյն իակ Հացս ածայնոյն պատգամաց՝
զոր իսրայելեանք միայն յամենայն ազգաց ընկալան յայն-
ժամ, զերկրաւորս խորհին։ Իակ Հեթանոսք՝ որոց չէին
տուեալ օրէնքն, յետ այնր Հասու եղեալք պատգամացն
՚ի ձեռն կատարածի նորոյ, մեծապէս քաղցնլով զնակե-
ցին յերկրի իբրու անցաւորք, ոչ զերկրաւորս՚ի նոսա խոր-
Հելով՝ այլ զերկնաւորս։ Լ՚ԱՀ զվասն որոյ եղեւն այս՝ Հար-
ցաքննելով զպտգես, ասէ. «Օ յ ամուլն ծնաւ եօթն։ և
բազմածինն նուազեաց յօրդոց ». Լ՚ցանաւոր մարգա-
բէութիւն ազգին լուսաբանի առ տեղեկացեալս եօթնեակ
Թուոյն, որով ընդՀանրական եկեղեցւոյ կատարելութի
օրինակեալ է. որոյ վասն և Քրիստոնէս առաքեալ գրի
առ եօթն եկեղեցիս, յայտ արարեալ զրել առ լուսին միոյ
եկեղեցւոյ. որ և յառակս Առաքելոցն նախ տպաւորեալ է.
« Լմատուցանել չինեաց իւր առն, և կանգնեաց սիւնս
եօթն...» Ա՚ան զի քաղաքն այ ամուլ էր յամենայն Հեթա-
նոսս, մինչ չև ծագեալ էր զաւրն զոր տեսանեմք. տեսա-
նեմք և զնոսա բազմածինն որդւովք՝ այժմ նուազեալ
զերկրաւորն Լերուսաղէմ. զի որ միանգամ էին՚ի նմա
որդիք ազատին, զօրութեամբ նորա էին. իակ այժմ զի զիբն
է անդ՝ և ոչ Հոգի, նուազեալ՚ի զօրութենէ տկարացաւ։
« Ցէր մեռուցանէ և կեցուցանէ ». մեռոյց զազգս-
ծինն որդւովք, և կենդանացոյց զամուլն զոյն՝ եօթանց
զաւակաց ծնողս Լ՚ԱՀ՚ի չՀոհ ևս մարթի է իմանալ, կե-
ցուցանել զոյնսոսիկ զորս մեռոյց. զի զնոսին իբր երկրոր-
դեալ յաւերտս. « Լջուցանէ՚ի դժոխս և Հանէ ». Լ՚ան-
զի որոց ասէ առաքեալ, « Լրեմ մեռարուք ընդ Քրիստ...
զվերինն խնդրեցէք ուր Քրիստոս ընդ աջմէ այ... Լոչ ե-
Է ։ զդոսա արդարեւ վասն փրկութենէ՚ի մեռելոցն կրեմ է
տէր. առ որս և ասէ. « Օ վերինն խորհեցարուք, մի զայս

որ յերկրի աստ է ,, . մինչ զի նոքին իսկ են՝ որ քաղցեալք անցանեն ընդ երկիր : Ասեաւրաք՝ ասէ . ահա զիարդ ի փրկութիւն մեռուցանէ ած . և զինի բերէ . “ Նոյ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուծոյ . ահա զիարդ զնոսին կեցուցանէ ած : Նայց միթէ զնոյնս ի ջուրցն ի դժոխս և ի հան՝ . Օ երկու զայս առանց իրիք յերկուասից տեսա նեմք կատարեալ տիրապէս ի նոյն ի գլուխն մեր, ընդ որում զմեր կեանս յած ծածկեալ ասաց առաքեալն . քանզի “ Ոչ յիւր որդին ոչ խնայեաց , այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա ,, Հռ . ը . 32 . այսու օրինակաւ ապաքէն մեռոյց զնա . և զի յարոյց ի մեռելոցն ՝ զարձեալ զնա կեցոյց : Քրիստոս եթէ քանզի բարբառ նորա Ձանայի ասացեալն ի մարգարէութիւն . Ագ . ը . 10 . “ Ոչ թողցես զանձն իմ ի դժոխս ,, զնոյն ահա ինքեան ի դժոխս և ի հան՝ . Քայս աղաւաւթիւն նորա մեծացաք . զի “ Տէր աղբատացուցանէ և մեծացուցանէ ,, . Նա առ ի գիտելոյ զինչ այս իցէ , լուիցուք զոր զինին . “ Խոնարհեցուցանէ և բարձրացուցանէ ,, . ապաքէն զամբարտաւանս խոնարհեցուցանէ , և զխոնարհս բարձրացուցանէ : Օ ի զոր այլոսն ընթեռնումք , “ Տէր ամբարտաւանից հակառակ կայ , տայ շնորհս խոնարհաց ,, զնոյն բովանդակեալ ասացուածս Ձննայի , որոյ անուն՝ շնորհ նորա լսի ։

Նսկ և որ զինին յարի , “ Կանգնեալ յերկրի զանանին ,, , ոչ այլ ումեք Ձհաղագոյնս իմանամ , որպէս այնմ որ “ Վասն մեր աղբատացաւ որ մեծատունն էր, զի նորա աղքատութիւնն , որպէս արդ ասացի , մեծացոյց ,, : Վանզի այնպէս արագ կանգնեաց զնա յերկրի , զի մարմին նորա ոչ տեսանիցէ զապականութիւն ; Նա ոչ անպատկանաւորս առ նա համարիմ գլուխս ածն . “ Յարուցանէ զաղքատն յաղբեւաց ,, . զի նոյն է տնանկ և աղքատ . իսկ աղբեւս յորոց Հանաւ նա , ուղղակի իմանամք զՀրէիցին հալածմունս , յորոց ի համարի և զանձն դնեալով առաքեալ ի հալածել զեկեղեցի , ասէ . “ Քրիստոս որ ինչ ինձ շահն էր, զայն ինաս համարիմ վասն Քրիստոսի ... և համարիմ կղկղանս , զի զՔրիստոս շահեցայց ,, . Փիլիպ . գ . 7 . Քայս յեր-

կրէ. կանգնեցաւ այն տեղին վերոյ քան զամենայն մեծա-
տուն, և յաղթեաց անտի յարուցաւ աղքատն ամենից ըն-
չեզօք վերադոյն, "Լսեալ ընդ զօրաւորս ժողովրդեան ,,
որոց տասոյն, "Լսողիք յերկրաւսան աթոռ ,,։ "Լաւ աթո-
փառաց ժառանգեցուցանել նոցա ,, . քանզի տացեալ էին
զօրաւորքն այնոքիկ ։ "Լհաւասիկ մեք թողաք զամենայն,
և եկաք զքէն քո ,, . զայս ուխտ ուխտեալ էին նոքա քա-
ջաբար ։

Լայց յուսմէ՞ նոցա այս, թէ ոչ յայնմանէ՝ զորմէ ան-
գէն ասացաւ . "Ցայ զուխտս ուխտաւորի ,, ։ Լայս թէ
ոչ՝ լինելին ի հզօրաց յայնցանէ՝ որոց աղեղունք տկարա-
ցան ։ Ցայ, ասէ, զուխտս ուխտաւորի . զի ոչ ուղիղ ինչ
ուխտէր ոք ՚այ, թէ ոչ ի՝նմանէ առնոյր զուխտեն ։ "Լաւ
օրհնեաց զամն արդարոց ,, . որպէս զի անվախձան կեցցէին
ընդ նմա, որում ասացաւ . "Լաւ ամբ քո ոչ պակասին ,, ։
Լրանզի անդ կան ՚ինան ամբ . իսկ աստ անցանեն, նա կո-
րընչին իսկ . զի մինչ չև եկեալք՝ ոչ գոն . և յորժամ գան,
ոչ եղիցին, այնու զի գան զդէպ ընդ վախձանի իւրեանց։
Լսկ զերկուցս այսոցիկ, ուխտելոյն և օրհնելոյն, զմին մեք
առնեմք և զմիւսն ընդունիմք . բայց զերկրորդս զայս ոչ
ընդունիմք՝ ի պարգևացն ՚այ, թէ ոչ զառաջինն զործե-
ցեմք յօգնականութենէն ՚այ, "Օ ի ոչ իւրով զօրութէ զա-
բանայ այր հզօր . տէր տկար առնէ զհակառակորդս իւր ,,։
կամ ըստ լատ . օրինակին, "զհակառակորդ նորա ,, . այս-
ինքն է՝ զնա որ չարահնէ ընդ մարդ ուխտաւոր, և հա-
կառակ կայ՝ զի մի զօր ուխտաւոր՝ կատարել զօրեցէ ։
Լայց ըստ յոհնէն իմանի և՝ զհակառակորդ իւր . զի
յորժամ սկսանի տէր ժառանգել զերէց, անշուշտ որ հա-
կառակորդն էր մեր՝ լինի և նորա . և յաղթի՝ ի մէնջ այլ
ոչ մերով զօրութէ . "Օ ի ոչ իւրով զօրութէ զօրանայ այր ,,։
Լայս ուրեմն "Ցէր տկար առնէ զհակառակորդն . տէր
սուրբ է ,, . որպէս զի հակառակորդն յաղթեսցի՝ ի սրբոյն՝
զօրս սուրբ առնէ տէր սուրբն սրբոց ։

Լյ վասն այսորիկ "Ալ պարծեսցի իմաստունն յի-
մաստութեէ իւր . և մի պարծեսցի հզօրն՝ ի զօրութեէ իւր .

և մի պարծեսցի մեծատունն 'ի մեծութիւն իւր. այլ այնու պարծեսցի որ պարծիցին՝ իմանալ և ճանաչել զտէր. և առնել զիրաւունս և զարդարութիւն 'ի մէջ երկրի »։ Ոչ փոքու ինչ մասամբ իմանայ և ճանաչէ զտէր այն՝ որ իմանայ և գիտէ թէ 'ի տեառնէ տուեալ է նմա և այս իմանալս և ճանաչել զտէր։ « Օ՛ի զի՞նչ ունիս, ասէ առաքեալ, զոր ոչ իցէ առեալ. և եթէ առեր, զի՞ պարծիս իբրև զչառեալ »։ Ա. Կոր. Դ. 7. այս է՝ որպէս թէ 'ի քէն 'ի բնէդ իցէ այն որով պարծիսդ։ Իսկ առնէ իրաւունս և արդարութիւն այն որ ուղղութեամբ կեայ. և ուղիղ կեայ՝ որ անսայ հրամանացն այ. իսկ « Կատարած օրինացն՝ սա որ բերէն հրամանքն, սէր է, 'ի սուրբ սրտէ, և 'ի մտաց բարեաց, և յանկեղծաւոր հաւատոց ». բայց և սէրն այ է, որպէս Յովհաննէս վկայէ առաքեալ։ Ապա ուրեմն առնել իրաւունս և արդարութիւն՝ այ է։ Բայց զի՞նչ է ասելն՝ 'ի մէջ երկրի. զի ոչ եթէ որք 'ի ծագս երկրի բնակեն՝ չպարտին առնել իրաւունս և արդարութիւն. ո՞ ոք զայդ ասիցէ. և յո՞յր սակս ապա իցէ յաւելուածդ՝ 'ի մէջ երկրի. ուր եթէ առանց այնր ասէր լոկ՝ առնել իրաւունս և արդարութիւն, լաւ ևս 'ի դէպ գայր հրամանդ երկաքանչիւրոց ևս մարդոց՝ և միջերկրեայց և ծովահայեցաց։ Այլ զի մի կարծիցէ ոք թէ յետ կատարածի մարմնական կենացս՝ կայցէ այլ ևս ժամանակ առնելոյ իրաւունս և արդարութիւն, զոր ոչն արար 'ի մարմնի գոլով, որով և յաստուածային դատաստանաց ապրել կարիցէ, վասն այն թուի ինձ ասացեալ՝ 'ի մէջ երկրի, յորժամ դեռ 'ի մարմնի ոք քաղաքավարի։ Քանզի յաստի կեանս տանի իւրաքանչիւր զիւրն երկիր կամ զհող. և 'ի մեռանել մարդոյ՝ ընդունի զայն երկիրն հասարակաց, զոր և անդրէն հատուցանելոց է 'ի յարութեան։ Վասն որոյ՝ 'ի մէջ երկրի, մինչդեռ հոգիս մեր 'ի հողազանգուածս մարմնի ամփոփեալ կայ, պարտ է առնել իրաւունս և արդարութիւն, որպէս զի նպաստ մեզ յապայն լինիցի, յորժամ « Ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ եթէ բարի, և եթէ չար ». Բ. Կոր. Ե. 10։ Ուր մարմնով

ասէ առաքեալ զժամանակն, որով ոք ՚ի մարմնի եկեաց. զի եթէ ոք Հայհոյիցէ չարախորհուրդ ևեթ և ամբարիշտ մտածութիւն, թէ ոչ ինչ գործէ մարմինն անդամովքն, ոչ եթէ այնու չկենդանի յանցաւոր, իբր զի ոչ մարմնոյ չարժամարքն գործեաց զայն. այլ շատ է զի գործեաց ՚ի ժամանակին՝ յորում զմարմինն կրէր, Աստուծոյ օրինակաւ իմանալ ՚ի գէտ է և զընթերցուած սաղմոսին. հդ. 12. «Ո՞ իմացեալ սիրէ յառաջ քան զյանցանսն. որ ստորագրեալ զիրկութիւն ՚ի մէջ երկրի ... զանէ Ոգի իմացեալ ոճ մեր, որ յառաջ է քան զյանցանս, զի նուաստ յանցանքն եղեն, և արար զիրկութիւն մեր ՚ի մէջ երկրի, յորժամ Բանն մարմին եղև, և ՚ի հողեղէն մարմնի բնակեաց; Զնա մարգարէանալով Աստուածայի բանիւքս այսորիւք թէ զիարդ պարծել արժան է ոչ յանձն, այլ ՚ի տէր, ասէ. ապա վասն հաստատմանն որ ընկերի յանցաւոր գտատասանի. «Ցերը եւ յերկինս և որոտաց. և ինչն գտատ զծագս երկրի, որ արգարն է ... Համարեա զկարգն կալաւ զդատաստանեալ հաստատակաց. քանզի եւ յերկինս տէր Աբրահամ, ուստի գալոց է ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս: Ո՞ է որպէս առաքեալ ասէ, «Ոչ եղեն զինչ է, եթէ ոչ զի ՚ի նմա ՚ի սորին կողմ երկրի. և որ ՚ի նմա՝ նոյն է և որ եղեն ՚ի վերոյ քան զանհնային երկինս, զի լցոյ զամենայն ... Ա. Յհ. ե. 9. Այս ինքն որոտաց յամենից իւրոց, զորս հոգւով սրբով ելից ՚ի համբառնալ իւրում. յորոց և ազաղնոյն Աբրահամ ապաւինորհ այգուոյն ըստ պատգամաւ ՚ի ձեռն Աստուածոյ մարգարէի՝ ընդալ ՚ի վերայ նորա: Աստէն և աստ ասացաւ. «Զնորն գտատ ընծագս երկրի ... որպէս թէ ասէր, նա և զծագս երկրի. զի ոչ եթէ զայլ մասունս չգտատիցի, որ հաստատի գատելոյն և զանհնային մարդկի: Աստուածայն լաւ ևս՝ ծագք երկրի իմանին յեռնէքն մարդոյ. զի ոչ ըստ այնց գատիցին յորս ՚ի լաւն կամ ՚ի վատթարն փոփոխին մարդկի ՚ի միջոցժամանակին, այլ յորս գտանիցի գատեցեալն ՚ի ծագս կենաց. որ վասն ասացաւ. «Որ համբերեացէ խոպան, նա կեցցէ ... Աստ ուրեմն որ մինչև յանդ առնէ վերս-

ւումն և զարդարութի՛ւն ի մէջ երկրի, ոչ գատապարտեա-
յի՛ յորժամ ծագք երկրի գատիցին։ "Ո՛չ տայ, ասէ, զօ-
րութի՛ւն թագաւորաց մերոց.. որպէս զի մի՛ գատելի ըզ-
նոսա գատապարտեսցէ։ Ջայնոցա զօրութի՛ւն, որով վարեա-
ցեն զմարմին իբրև թագաւորք, և նոքա յաղթեսցեն աշ-
խարհի, որ ետուր նոցա։ "Ո՛չ բարձրա-
ցուսցէ զեղջիւր օծելոյ իւրոյ.., Ո՛չ զիարդ Ինձ բարձ-
բացուսցէ զեղջիւր Ինձի կամ օծելոյ իւրոյ։ զի զորմէ
յառաջն ասացաւ՝ տէր ել յերկինս, և իմացաք զտէր
Ինձ, նա ինքն՝ ըստ որում ասաց ասէ, բարձրացուսցէ զեղ-
ջիւր օծելոյ իւրոյ Ինձ։ Ինձ քրիստոսի իւրոյ։ Թէր-
և արդեօք բարձրացուսցէ զեղջիւր իւրաքանչիւր հա-
ւատացելոյ իւրոյ։ որպէս սոյն ինքն Ինձնա ասէ՝ ի գլուխ
երգոցս։ "Ո՛ւարձրացաւ եղ ջիւր իմ յօծ իմ.., Ա՛յսն զի
զամենայն օծեալս իւղով նորա՝ արդարեւ քրիստոս ասել
կարող եմք։ Թէպէտ և համայնից ընդ իւրումն գլխոյ մի
մարմին Ինձ է, Ո՛ այսոսիկ ահա մարգարէացաւ Ինձնա՝
մայր Աամուէլի, սրբոյ և գերաշխարհակալոյ առն։ յորում
օրինակեցաւ յայնժամ փոփոխումն հնոյ քահանայութե՛ն,
և արդ լցեալ կատարեցաւ ի նուաղել բազմածնին այս-
միկ, որպէս զի զնորն ի Ինձ գքահանայութե՛ն ունիցի ա-
մենքեան՝ եօթնեակ զաւակացն Ծննդական։

ԳԼՈՒԽ Ե՛

Բազագ բանիկ՝ զոր պղն ՅՅ խօսեցաւ մարգարէական հոգւով առ Հեզի քահանայապետս արարեալ զքահանայութեն որ ըստ կարգին Ահարոնի։

Ո՛ ՍՈՑՆ զայս յայտնագոյն ևս բարբառեցաւ եհեաղն առ Հեզի քահանայ՝ այլն ՅՅ. որոյ անուն նշանակեալ չէ, բայց ի գործոյ անտի պաշտամանին մարգարէ ոք ի-
մանի հաւաստեաւ։ Ո՛ի այսպէս գրեալ է. "Ո՛չ եկն հրեշտակ ՅՅ, (կամ ըստ լատինականին՝ այլ ՅՅ) առ Հեզի,

և ասէ. այսպէս ասէ տէր. յայտնելով յայտնեցայ ամենայն տան հօր քո, մինչդեռ էին նոքա յերկրին եգիպտացւոց ծառայք տան փարաւոնի. և ընտրեցի զտուն հօր քո յամենայն գաւազանայն Իսրայէլի քահանայանալ ինձ, և ելանել առ սեղանն իմ, արկանել խունկս, և կրել զեփուտն առաջի իմ. և ետու տան հօր քո զամենայն զառ 'ի հրոյն որդւոցն Իսրայէլի 'ի կերակուր։ Իսկ ընդէր հայեցար 'ի խունկս իմ և 'ի զոհս իմ ժպիրհ ակամբ, և փառաւորեցեր զորդիսն քո քան զիս, օրհնելով զպտուղ ամենայն զոհից Իսրայէլի, որ է առաջի իմ։ Վասն այդորիկ այսպէս ասէ տէր ած Իսրայէլի. ասացի թէ տուն քո և տուն հօր քո շրջեսցին առաջի իմ մինչև յյաւիտեան. և արդ ասէ տէր. քաւ լիցի ինձ. այլ զփառաւորիչս իմ փառաւորեցից, և որ արհամարհէին զիս՝ անարգեսցին։ Ահա աւուրք եկեսցեն, և սատակեցից զզաւակ քո և զզաւակ տան հօր քո. և մի եղիցի ծեր 'ի տան քում. և հայեսցիս ստէպ կողկողագին յամենայն բարութիւս զոր արասցէ տէր ած Իսրայէլի. և մի եղիցի ծեր 'ի տան քում զամենայն աւուրս։ Իսկ այր ոչ սատակեցից 'ի սեղանոյ իմմէ, առ 'ի սպառելոյ աչաց իւրոց, և մաշելոյ զանձն նորա. և ամենայն մնացորդք տան քո անկցին սրով արանց. և այն նշանակ եղիցի քեզ որ եկեսցէ 'ի վերայ երկոցուն որդւոցն քոց Ոփնեայ և Փենեհեսի, 'ի միում աւուր մեռցին երկոքեան։ Իսկ յարուցից ինձ քահանայ հաւատարիմ, որ զամենայն ինչ 'ի սրտի իմում և յանձին իմում արասցէ. և շինեցից նմա տուն հաւատարիմ. և շրջեսցի առաջի օծելոյ իմոյ զամենայն աւուրս։ Իսկ եղիցի ամենայն որ մնայցէ 'ի տան քում, եկեսցէ երկիր պագանել նմա դանգի միոջ արծաթոյ, և նկանակի միոյ հացի. և ասիցէ, ընկեա զիս 'ի տեղի մի քահանայութեան քո, զի կերայց հաց„։

Ապաքէն չէ մարթ ասել, թէ այս մարգարէութիւն յարում հնոյ քահանայութեան փոփոխումն մեկնաբար նախապատմի, լցեալ կատարեալ իցէ 'ի Սամուէլ. զի թէպէտ և ոչ էր Սամուէլ յայլմէ ցեղէ, այլ անտի իսկ՝ որ

'ի սպաս սեղանոյն կարգեալ էր, սակայն ոչ էր յորդւոցն Ի'Հարոնի, յորոյ 'ի զաւակ լինելոյ էին քահանայք. վասն որոյ 'ի գոյն 'ի գործելոցդ իրսդ օրինակեցաւ փոփոխումն՝ որ Ի'Հնոիս լինելոց էր. և որ 'ի հին կտակն Հայէր տիրապէս, առաւել Հայի առ նորն՝ մարգարէութիւն գործոց՝ և ոչ բանին. այս է՝ ըստ արդեանց գործոց նշանակեալ զայն ինչ՝ որ բանիւ ասացաւ առ Հեղի քահանայ 'ի ձեռն մարգարէին, Ի'Հանդիր եղէ և յետ այնր քահանայք յաւգնէն Ի'Հարոնի, որպէս Նադաբ և Ի'Բիհաբ առ Թագաւորութիւն Դաւթի, և այլք ևս զկնի մինչ լև Հասեալ ժամանակին, յորում նախագուշակեալքդ յաղագս փոփոխելոյ քահանայութեն ունէին 'ի գործ ելանել Ի'Նոիս, և ո՞ր չտեսանիցէ այժմ ուղղագատ աչօք զդոն զայդ 'ի լուսին եկեալ. յորժամ ոչ ևս խորան, ոչ տաճար, ոչ սեղան, ոչ պատարագ, ուստի և ոչ քահանայ որ մեաց Հրէից, որոց Հրամայեալ էր յորէնս այլ 'ի զաւակէն Ի'Հարոնի լինել. որ և աստանօր յիշատակեալ է յասելն. "Ի'Յակոբ ասէ տէր Նձ Ի'սրայէլի. ասացի Թէ տուն քո և տուն Հօր քոյ չքնջեսցին առաջի իմ մինչև ց յաւիտեան. և արդ ասէ տէր. քաւ լիցի ինձ. այլ զփառաւորիսն իմ փառաւորեցից, և որ արհամարհէն զիս՝ անարգեսցին". Յոկ Թէ տուն Հօր նորա ոչ զմերձաւոր Հօրէն ասէ, այլ զի'Հարոնի, որ առաջին կարգեցաւ քահանայ, և 'ի նորին սերնդոց այլքն յաջորդէին, զայդ նախասացեալքն ցուցանեն յասելն. "Նայտնելով յայտնեցայ ամենայն տան Հօր քոյ՝ մինչդեռ էին նոքա յերկրին եգիպտացւոց ծառայք տան Փարաւոնի, և ընտրեցի զտուն Հօր քոյ յամենայն գաւազանացն Իսրայէլի քահանայանալ ինձ". Յո՞ր 'ի Հարց նորա յայտնանալ իւրեանց յեգիպտական ծառայութենէն ընտրեցաւ 'ի քահանայութէ, բայց Ի'Հարոն՝ Ի'զոր ուրեմն յաղագս զարմի նորա ասաց 'ի բանին՝ ոչ ևս լինել քահանայ. զոր և այժմ տեսանեմք 'ի գլուխ եկեալ. Ի'զթուն կացցէն Հաւատք, զի և արդիւնքն մերձ կան, տեսանին, չշոշափին, և չկամողացն տեսանել ընդ աչս Հարկանին. ասէ. "Ի'Նա աւուրք եկեսցեն, և սա-

տակեցից զզաւակ քո և զզաւակ տան հօր քոյ . և մի եղիցի ծեր ի տան քումմէ յաւուրս : Այլ այլ ոչ առ տակեցից ի սեղանոյ իմմէ, առ՝ի սորելոյ աչաց իւրոց, և մաշելոյ զանձն նորա ,, : Այդ յառաջ գուշակեալքն աւուրք եկիցեն հասին . ոչ քահանայ որ կայ ըստ կարգին Ահարոնի . և թէ իցէ ոք այլ յազգէ նորա , տեսեալ զբիւրս տանելիցին պատարագ համատարած ընդ տիեզերս , սորին աչք նորա , և անձն նորա մաշի առ ցաւս թախծութեան :

Իսկ առ տունն Հեղեայ՝ առ որ և բանքն են, ելանեն տիբապես յաջորդքն . « Մինչդեռ ծացորդք տան քո անկցին սրով աբանց . և այն նշանակ լիցի քեզ՝ որ եկեսցէ ի վերայ երկոցունս որդւոցն քոց՝ Ափնեայ և Փենեհես , ի միում աւուր մեռցին երկոքեան ,, : Այդ այս եղև նշանակ փոփոխելոյ քահանայութեանն ի տանէ նորա . և այսու նշանաւ օրինակեցաւ փոփոխել քահանայութեան տանն Ահարոնի . վասն զի մահ որդւոց նորա նշանակաց զմահ ոչ զմարգկանն , այլ զքահանայութեան յորդւոցն Ահարոնի , Իսկ որ զկնի գայ, ամբ քահանայի ի դէպ ելանէ՝ զորոյ զմանուելի տարաւ Սամուէլ փոխանորդելոյն զԵղի . ուստի՝ ի Ափնեայ յարմարին յաջորդքդ՝ ի Հնչմարեան քահանայ նորոյ կտակին . « Այլ յարուցից ինձ քահանայ հաւատարիմ, որ զամենայն ինչ՝ի սրտի իմում և յանձին իմում արասցէ . և շինեցից նմա տուն հաւատարիմ ,, : Այս իսկ է յաւիտենական վերինն Յրուսաղէմ , « Այլ շրջեսցէ առաջի օծելոյ իմոյ զամենայն աւուրս ,, : Շ ջիկ՝ զքաղաքավաբերն ասէ . որպէս և վերագոյն զամանէն Ահարոնի ասացեալ էր, տուն քո և տուն հօր քոյ շրջեսցին առաջի իմ : Իսկ առաջի օծելոյ իմոյ ասէն, իմանալի է՝ ի վերայ տանին, և ոչ՝ի վերայ քահանային, որ է ինքն Ափա , մինչդորգ և փրկիչ . ապա տուն նորա շրջեսցի առաջի Ափայի : Արթ է շրջիցէն կամ զանցանիցէն իմանալ և զփոխմանէ՝ի մահաւանէ՝ի կեանս , զամենայն աւուրս՝ յորս մահկանացուս այս դիմէ՝ի կատարած այսր աշխարհի : Այլ զոր ասէ՝ ՅԾ , արասցէ զնմա՝ որ յանձին իմում, այս է՝ ի հոգւոջ կամ՝ի սրտի , ոչ եթէ համարիմք

ունել ա՟յ զհոգի բանական կամ զմիտ, որ ինքն ստեղծիչ է հոգւոյ և սրտից․ այլ փոխաբերմամբ՝ և ոչ տիրապէս ասի զա՟յ, որպէս ձեռն, ոտն և այլ մարմնոյ անդամք․ և զի մի կարծիցի այսու՝ թէ մարդ ըստ մարմնոյ կերպարանաց լեալ իցէ 'ի պատկեր ա՟յ, այլուր գնին և թեւք, զոր յայտ է չունել մարդոյ․ ուստի առ ա՟ծ ասի․ "Ի հովանի թեւոց քոց ծածկեսցես զիս,, ։ Որպէս զի 'ի միտ առցեն մարդիկ թէ այսոքիկ զանճառելի այնր բնութեան ասին ոչ իսկութ՟բ, այլ փոխաբերեալ անուամբք իրաց ։

Իսկ որ զկնի յարէ, "Եւ եղիցի ամենայն որ մնասցէ 'ի տան քում, եկեսցէ երկիր պագանել նմա,, , ոչ զտանէն Հեղեայ ասի տիրապէս, այլ զտանէ Ահարոնի, յորմէ մնացին մինչև 'ի գալուստ Յ՟ի Ք՟ի, և մինչև ցարդ ոչ պակասին յայնմ ազգէ ։ Քանզի վասն տան Հեղեայ յառաջն իսկ ասացեալ էր, "Ամենայն մնացորդք տան քո անկցին սրով արանց,, ․ և զիա՞րդ ապա մարթ էր ճշմարտութ՟բ ասել զնմանէ, թէ մնացեալն 'ի տանէ նորա գայցէ երկիր պագանել, եթէ միւսն այն ճշմարիտ է՝ ոչ ումեք ապրել 'ի վրիժագործ սրոյ անտի․ բայց զի ցուցցէ իմանալ զայնոսիկ՝ որք այնմ զարմի են ըստ բոլոր քահանայութ՟ե ահարոնեան կարգին ։ Ապա այնպիսին իցէ յընտրեալ մնացորդաց անտի՝ զորոց այլ մարգարէ ասաց․ "Սակաւ ինչ մնացորդք մնասցեն,, ․ ուստի և առաքեալ ասէ․ "Նոյնպէս և յայսմ ժամանակի մնացորդք ըստ ընտրութ՟ե շնորհացն եղեն,, ։ Ի վերայ այսպիսի մնացորդաց 'ի դէպ իմանի ասացեալն, ամենայն որ մնասցէ 'ի տան քում, արդարեւ հաւատալով 'ի Ք՟ս․ որպէս ընդ ժամանակս առաքելոց բազումք յազգէ անտի հաւատացին․ և զարդիս եւս թէ և դուն ուրեք՝ այլ չպակասին որք հաւատան․ և կատարի առ նոսա զհետ եկեալ բանն․ "Եկեսցէ երկիր պագանել նմա դանգի միոջ արծաթոյ,, ։ Ո՞ւմ երկիր պագանել, բայց գերագոյն քահանային այնմ, որ է և ա՟ծ․ քանզի յահարոնեան քահանայութեան անդ ոչ եթէ այնու աղագաւ գային մարդիկ 'ի տաճարն կամ առ սեղանն՝ զի երկիր պագանիցեն քահանային ։ Իսկ զի՞նչ է

գանգի միջ . այս է՝ համառօտ բանիւ հաւատոց . զոր և առաքեալ յուշ առնէ . « Օ քանի՛ հակիրճ և համառօտ արասցէ տէր՝ի վերայ երկրի ... , չէ արծամի ասել զայտ գան ՚ն , վկայէ սաղմոս յերգեցն . « Խնդիր տեառն բանիք սուրբ են , որպէս արծաթի ընտրեալ և փորձեալ ... ,

ՎՆԱ և ՚ի ստացուած նորա յԵկեղեցի իմանի . զի և տէրն յառակ աւետարանին ցուցանէ այնպիսի ինչ ասել չար մշակացն . « Այս է ժառանգն , եկայք սպանցուք զսա , և կալցուք զժառանգութիւնն սորա » ։ Ա՚որ ։ ։ 38 ։ Ա՚ւ դարձեալ , ՚ի նոյն առակաց գիրս ։ ։ 1 ։ զգանն զոր և յառաջն Ա՚ղբտաբանեցաք ՚ի Ա՚ռաւելն յաղագս եօթնածին ամղոյն , ոչ այլ ազգ ինչ՝ քան զՎՆԱ և զեկեղեցւոյ իմացան անգէն ՚ի լսելն այնոքիկ՝ որ զՎՆԱ լինել՝ այ իմաստութիւն Ա՚նաստուածն չէին . « Իմաստութիւն շինեաց իւր տուն , և կանգնեաց սիւնս եօթն ։ Ա՚զէն զղեցիկս իւր , և խառնեաց ՚ի խառնիկս գինի իւր , և պատրաստեաց զսեղան իւր ։ Ա՚ւ առաքեաց զծառայս իւր կոչել բարձր քարոզութիւն ՚ի խառնելիս իւր և ասէ . որ որ իցէ անզգամ , եկեսցէ առ իս . և ցպակասամիտսն ասէ . եկայք կերայք ՚ի հացէ իմմէ , և արբէք զգինի իմ՝ զոր խառնեցի ձեզ » ։ Ա՚յսքէն իմաստութիւն այ գիտեմք զՎՆան հօր մշանջենականից , որ ՚ի կուսական արգանդի շինեաց իւր տուն զմարմինն մարդկէն , ՚ի նոյն իրէ ՚ի գլուխ զանդամս յօգեալ զեկեղեցի . զէն զմարտիրոսացն զենիս . պատրաստեաց սեղան ՚ի հաց և ՚ի գինի , յորում և քահանայութիւնն յայնմի ցուցաւ ըստ կարգին Ա՚ելքիսեդեկի . կոչէ զանգգամս և զպակասամիտս . զի ըստ առաքելոյ ասելոյն « Ո՚չ տկարս աշխարհիս ընտրեաց Ա՚ծ , զի յամեղ արասցէ զՀզօրս » ։ ։ Կոր ։ ։ 27 ։ Ա՚նայց առ տկարս ասէ և յաջորդ բան առակացն . « Ա՚ծողիք զանգգամութիւնն և կեցջիք . ինդրեցէք զիմաստութիւն զի ապրեսջիք » ։ Ա՚յսն զի հաղորդ լինել այնմ սեղանոյ՝ է նոյն ինքն կենդանութիւն սկսումն . զի և ՚ի միւսում գրի՝ որ ժողովողն առաքեալ , ասէ . « Ա՚ղ է բարի մարդոյ ՚ի ներքոյ արեգական՝ բաց յուտելոյ և յըմպելոյ » ։ Ա՚ղ ։ ։ 15 ։ Ո՚ր ՚ի նմ այլ Ա՚հաղագոյն իմանալ կայ բանիւս , բայց զՀաղորդութիւնն սեղանոյս՝ զոր առնէ նա ինքն միշտորդն նորոց կտակարանաց քահանայ ըստ կարգին Ա՚ելքիսեդեկի՝ ՚ի մարթինոյ իւրմէ և յաբենէն . վասն զի այս պատարագ յաջորդեաց համաբէն զոհից հնոյ ուխտի որք մատչէին յօրինակ հանդերձելոցն . ուստի և նորին

միջնորդի համարիմք զձայնն մարգարէաբար բարբառեալ յերեսնեւերորդ խնդերորդ սաղմոսին. « Լսեղ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար. լսելիս (կամ մարմին) հասատատեցեր ինձ ,, ։ Այանզի փոխանակ ամենայն զոհից այնոցիկ և պատարագաց՝ մատուցանի մարմին նորա, և բաշխի հաղորդելոցն. զի և ժողովողն ասացածս ուսանելոց և ըմկելոց՝ զոր յաձախ կրկնէ, և ապրսպարէ իսկ մեծաապէս, ոչ զմարմնական ձաչկերութիւն վայելը ակնարկել՝ հաւատաւ միւս նորա ասացեալն. « Խարի է երթալ ի տուն սգոյ՝ քան երթալ ի տուն արբեցութեան ,,. և յետ սակաւուց. « Այրտ իմաստնոյ ի տան սգոյ, և սիրտ անմտի ի տան ուրախութեան ,, ։ Այակայն ի ժողովողն գրոյս. ֆ. 16. ընտրելի համարիմ յիշատակել զպատշաձեալն առ երկոսին քաղաքս՝ սատանայի և Քրիստի, և առ նոցին թագաւորսն ։ Քրիստ. « Ալ այ քեզ քաղաք, որոյ թագաւոր քո մանուկ է, և իշխանք քո ընդ առաւօտս ուտեն ։ Երանի քեզ երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է, և իշխանք քո ի ժամու ուտեն զօրութիւն, և ոչ ամաչեսցեն ,, ։ Այանուկ զսատանայ կոչեաց՝ սակս անմտութեանն և հպարտութեանն և յանդգնութեանն և լքութեանն, և այլոց ախտից՝ որ յայն հասակ բնաւորեալ են յաձախել. իսկ Քրիստ որդի ազատի է, այս է նահապետացն սրբոց վերձակելոց ի քաղաքն ազատ. յորոց ծագեաց մարմնով ։ Իշխանք այնր քաղաքի ուտեն ընդ առաւօտս, այն է՝ տարաժամ. քանզի պատուպատշաձ երջանկութիւնն՝ որ միայն Աստուծոյ է, ոչ ի հանդերձեալն ակն ունին, այլ շտապով բարօրանալ ցանկան ի խրախուսս այսր աշխարհի. Քայց իշխանք քաղաքին Քրիստի ժուժկալելոք սպասեն ժամանակի անպատիր երանութեանն. և վասն այսր ասէ. « Ուտեն զօրութիւն, և ոչ ամաչեսցեն ,. զի յայս նոցա ոչ ի դերև ելանէ, զորմէ առաքեալ ասէ. « Ցոյս ոչ երբեք ամաչեցուցանէ ,. ասէ և սաղմոսն. « Ամենեքեան որ համբերեն քեզ՝ մի ամաչեսցեն ,, ։ Իսկ երգոցն երգ՝ զուարճութիւն ինչ հոգևորական է սրբեցելոց մնաց, ի միաւորութիւն աբբայի և աբբայուհւոյ քաղաքին, որ է Քրիստ

և եկեղեցի. բայց յայլասացիկ դարձուածս ծրարեալ է այն զուարճութեամբ, զի յորդեառնդն լինիցիմք ի խուզել, և բերկրալիցք ի պարզելն. և երևեսցի փեսային, որում ասի անտանօր. "Աղղութիւն սիրեաց զքեզ.." այլ և հարսին որ լսէ անդ. "Ակը ի փափկուէ քումմ.." Օ՜այլովք բազմօք լուսաբեր անցանելոյ, ի կատարած անդր մատենիս փութացեալք։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Ցարգաս Թագաւորաց զնի Սողոմոնի եգիպտոս և յԵրուսաղէմ։

Յայնմ որ յետ Սողոմոնի Թագաւորաց երբայեցւոց կարի սակաւս ինչ գտանեմք մարդաբէսացեալ առակօք բանից և գործոց իւրեանց ի խորհուրդ Աստի և եկեղեցւոյ, եթէ ի յուդայականս, և եթէ յիսրայէլեանս։ Վասնզի այսպէս կոչեցան մասունք ամբ ժողովրդեան, յորմէ հետէ սակս յանցմանն Սողոմոնի ընդ երկու ձեռքեցաւ ի ցասմանէն ոյ առ Աստուածամբ որդւով նորա՝ որ զՏէրն փոխանորդեաց ի Թագաւորութեն։ Վասն որոյ տասն ցեղք զորս կալաւ Երոբովամ ծառայ Սողոմոնի, արքայ կարգեալ նոցա ի Սամարիա, առանձինն կոչեցան Իսրայէլ, Թէպէտ և Տասարակաց անուն էր այդ համօրէն ժողովրդեանն, Իսկ երկուց ցեղիցն Յուդայի և Բենիամինի՝ որք ինացին յարեալք ի քաղաքն Երուսաղէմ առ ի ոչ ջնջելոյ Թագաւորութեանն Դաւթի, Յուդա անուն կոչեցաւ. յորմէ ցեղէ Դաւթեան էր. և Բենիամին այլ ցեղ՝ ի նոյն Թագաւորութեն պատկանեցաւ՝ որպէս ասացի, ուստի Աստուած էր Թագաւոր նախ քան զԴաւիթ. Իսկ երկու ցեղքս զուգապես Յուդա կոչէին, զատուցեալք այսու անուամբ Իսրայէլէ՝ որ առանձնաբար զտասն ցեղսն նշանակէր, ունելով սեպհական Թագաւոր. Իսկ ցեղն Ղևի ոչ համարիւ երբեք

տասանեւորդ . զի քահանայական էր՝ յայ , և ոչ՝ ի Թագաւորաց ծառայութեի գրաւեալ . զի Յովսէփ մի յերկոտասանեցունց որդւոց Իսրայէլի՝ ոչ զմի ցեղ կացոյց , որպէս այլքն զիւրաքանչիւր , այլ զերկու՝ զԵփրեմ և զՄանասէ , Ակայն և Ղեւեայ ցեղն վիճակեցաւ առաւել՝ի Թագաւորութիւնն երուսաղէմացւոց, անդ գոլով տաճարին այ , ուր բուն և ծառայէին , Լսելիս ապա բաժանեցելոյ ժողովրդեանն, նախկին Թագաւորեաց Հերուսաղէմ Ռոբովամ արքայ Յուդայ որդի Սողոմոնի . և՝ ի Ամասիա Յերոբովամ արքայ Իսրայէլի ծառայ Սողոմոնի , Լսե իբրև կամէր Ռոբովամ զվտարանդութիւնն բաժանեցելոյ մասինն նուաճել մարտիւ , արգելաւ ժողովուրդն չմարտնել ընդ եղբարս իւրեանց , յասել այ՝ի ձեռն մարգարէի՝ Թէ կինէն եղև բանն . որով ցուցաւ Թէ յայն իրս չկայր յանցանքն ինչ՝ ոչ Թագաւորին Իսրայէլի , և ոչ ժողովրդեան , այլ ածաստաստ կամացն էր լըուծն . զոր և ծանուցեալ՝ դադարեցին երկաքանչիւր կողմանք՝ի խաղաղութիւն . զի ոչ եթէ կրօնից արարաւ բաժանուծն , այլ Թագաւորութիւնն ,

ԳԼՈՒԽ ԻԲ

Քաջագա Ցերոբովամայ , որ ամբարիշտ կամաւորութի տաճարացոյց՝ի տեառնէ չՆազանգիտելն զերբ ժողովուրդ . Թէպետ և՝ ի նմա եա յաւել ածՙ ազգել՝ի մարգարէս , և զյոլովս պահել՝ի կապարիշտն մեզանաց :

ՆՈՒՑ սակայն արքայ Իսրայէլի Հերոբովամ յետասիտ գտեալ առ ածՙ , զորոյ զՀմարտութիւնՙ զլսելի առեալ էր՝ ի խոստանալ և՝ ի տալ նմա զԹագաւորութիւնն , եղև՝ի կասկածանս՝ մի արգեօք ժողովուրդ իւր ելանելով՝ի տաճարն այ Հերուսաղէմ , ուր միայն արժան էր ըստ ածային հրամանին գնալ Համօրէն ազգին՝ի պատճառս զՀեղոյ , խոտորեսցի յիւրմէ , և դառնայցէ առ տունն

Դաւթի իբր 'ի զարմ թագաւորական, վասն որոյ կար-գեաց եդ յիւրում թագաւորութեան զդիցապաշտութիւն, և ընդ իւր մոլորեցոյց զժողովուրդն Աստուծոյ՝ նուիրեալ 'ի կռոցն պաշտօն քարուական ամբարշտութեամբ։ Եւ ոչ իսպառ անտես արար Աստուած կշտամբել մարգարէիւք ոչ միայն զայն թագաւոր, այլ և զնորուն պայազատս զնմանողս ամբարշ-տութեան, և զժողովուրդն գլխովին. քանզի անտանօր կացին և մեծամեծքն այնք նշանաւորք 'ի մարգարէս՝ բազմաց սքանչելեաց արարողք՝ Եղիաս և նորուն աշա-կերտ Եղիսէոս. ուր և յասել Եղիայի, «Տէր զսեղանս քո կործանեցին և զմարգարէս քո կոտորեցին սրով, ես միայն մնացեալ եմ, և խնդրեն զանձն իմ առնուլ զնա»։ տուաւ նմա պատասխանի՝ թէ կան անդ եօթն հազար արանց, որ ոչ կրկնեցին ծունր Բահաղու։

ԳԼՈՒԽ ԻԳ

Յաղագս բազմադէմ վիճակի երկաքանչիւր թագաւորութեանց, մինչև 'ի գերութիւն վարեցան երկոքին ժողովուրդք յայլ և այլ ժամանակս, և ապա Յուդայի անդրէն հաստատեալ 'ի տէրութեան իւր՝ անկաւ հուսկ յետոյ ընդ իշխանութեամբ հռովմայեցւոց։

ՆՈՅՆՊԷՍ դարձեալ 'ի թագաւորութեան Յուդայ որ յԵրուսաղէմ ոչ պակասեցին մարգարէք առ թագաւո-րօքն որ զկնի, որպէս զիարդ կամք էին Աստուծոյ առաքել զնո-սա՝ առ 'ի նախապատմելոյ զկարևորս ինչ, կամ 'ի յանդի-մանել զյանցանս և պատուիրել զարդարութիւն. քանզի և անտանօր թէ և նուազունք քան յԻսրայէլ՝ կալով կացին թագաւորք դառնացուցիչք ածակողմանն ամբարշտութեամբ իւրեանց, և ընդ նմանագործ ժողովրդեանն տարան զչա-փաւոր հարուածս։ Սակայն ոչ փոքր ինչ և բարեպաշտ թագաւորաց արգասիք գովութեան յիշատակին անտանօր, ուր առ Իսրայէլ ընթեռնումք թագաւորս զոմն յաւէտ զոմն նուազ, բայց զամենեսին խոտանս։ Վասն որոյ երկա-

քանչիւր ես բաժին ըստ յաջողելոյ կամ ըստ թոյլ տալոյ ա՛ծայնոյ տեսչութեա՛ն՝ էր զի պէսպէս յաջողուածովք յօրանայր, և էր զի ձախողակօքն ճնշեալ տագնապէր, ոչ յարտաքնոյ ևեթ պատերազմաց տառապեալ, այլ և յառանձին յուզելոցն. որով ըստ բերելոյ իւրաքանչիւր պատճառաց՝ յայտնեալ ցուցանէր կամ ողորմութի՛ այ, և կամ սրտմտութի՛. մինչև ապա 'ի սաստկանալ ցասմանն ա՛յ, ազգովին հարստահարեալք 'ի քաղդէացւոց անտի՝ ոչ միայն 'ի բնիկ աթոռս իւրեանց վատթարեալ ապականեցան, այլ և առաւելագոյն մասամբ յասորեստանեայցն երկիր եղեն տարաշխարհիկ՝ նախ իսրայելեանն կոչեցեալ բաժին տասն ցեղիցն, և յետ նորա Յուդաս՝ կործանմամբ Երուսաղէմի և մեծաշուք տաճարին. և անտանօր շարաթացաւ գերութե՛ զամս եօթանասուն։ Յետ այնորիկ տունն Յուդայ թողեալ յազատութե՛ նորակերտեաց զտաճարն կործանեալ. և թէպէտ յերկիրս այլազգեաց բնակէին բազումք 'ի նոցանէ, այլ ոչ ընդ երկու մասն հատաւ թագաւորութի՛ նորա, և ոչ երկու թագաւորք եղեն յիւրաքանչիւր բաժնի. այլ էր նոցա մի իշխան յԵրուսաղէմ. և 'ի տաճարն ա՛յ որ անդ՝ գային ըստ սահմանեալ ժամանակաց ամենեքին յամենայն կողմանց ուր և էինն, և ուստի կարէին։ Սակայն և ոչ յայնժամ ոսոխք և դիմամարտք պակասեցին նոցա յայլոց ազգաց. զի և Քս եկն եգիտ զնոսա հարկատուս հռովմայեցւոց։

ԳԼՈՒԽ ԻԳ

Յաղագս մարգարէից՝ որ վերջին գտան առ Հրեայս, կամ որք առ ժամանակաւ ծննդեան Քի՛ յիշատակին յաւետարանագիր պատմութեան։

Ընդ ա՛մ ժամանակն յորմէ հետէ դարձան Հրեայք 'ի Բաբելոնէ, յետ Մաղաքեայ, Անգեայ և Զաքարիայ՝ որ յայնժամ մարգարէացան, և յետ Եզրայ, ոչ կացին

մարգարէքը մինչև՛ ի գալուստ քրիստոսին, բայց միայն միւս Հաքարիա հայր Յովհաննու, և կին նորա Եղիսաբեթ, յորժամ մերձ՛ ի վերայ կայր ծնունդ Մկան. և՛ ի նորա ծնանելն՝ Զաքարիա ծերունի, և Հինա այրի պառաւեալ, և ինքն Յովհաննէս վերջին. որ դեռ տղայ գոլով զՄեսիա զայն ինչ տղայացեալն ոչ երբեք գալոցնախագուշակեաց, այլ զտակաւին անտեսն մարգարէական տեսութիւնն եցոյց. որոյ վասն ասէ և տէրն. "Օրհնեալ և մարգարէքն մինչև Յովհաննէս,, ։ Այդ հնգիցս այսոցիկ մարգարէութիւն ծանուցեալ է մեզ յաւետարանէ անտի. ուր և նա ինքն կոյս մայրն տեառն տեսանի նախ քան զՅովհաննէս մարգարեացեալ։ Այլ անհաւան հրեայքն չընդունին զսոցայն մարգարէութիւն. ուր և անհամարք՛ ի նոցանէ, ընկալան՝ հաւատացեալք յաւետարանն։ Ոմանն զի յայնժամ արդարեւ ընդ երկու բաժանեցան Իսրայէլ, բաժանմամբ որ անզգաստալի գուշակեցաւ՛ ի ձեռն Մատաւելի մարգարէի առ արքայ Մատուղ։ Իսկ զԱզարիաս, զՆեգիդեոս, զՕաբադիաս և զյոբաս ընդունէին նա և հրեայքն անհաւատք որպէս վերջինս՛ ի վաւերական կարգի կանոնականն գրոց. զի և նոցա գրութիւք են՝ որպէս այլոցն որք՛ ի բազմութենէ անդ մարգարէից Թուով սակաւաւորք գրեցին մատեանս ընդունելիս որպէս կանոնականս։ Այդ՛ ի սոցա պատգամաց՝ որ ինչ՛ ի Քէ Հայկն և յեկեղեցի, արժան դատիմ բացատրել ինչ ինչ յայս մատեանս, այլ գիպողագոյն ևս՛ ի գրիդ որ զկետ գայ՝ արասցուք զայդ ըստ օգնականութեամբ. զի մի յերկարեալս այս առաւել ևս ծանրանայցէ։

ԳԻՐՔ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Խօսի աստանօր յաղագս ընթացից երկրաւոր քաղաքին ընդ երկնայնոյն՝ ՚ի ժամանակէ անտի Աբրահամու մինչև ՚ի կատարած աշխարհի, ՚ի մէջ բերեալ զպատգամս որ վասն Քնի զՍիբիլլայից, և առաւել ևս զորոց մարգարէից՝ որք գրեցին ՚ի ծագմանէ անտի հռովմայեցւոցն տէրութեն, Ովսեայ, Ամովսայ, Եսայեայ, Միքիայ, և որ յետ նոցա։

ԳԼՈՒԽ Ա.

Որչափ ինչ մինչև ՚ի ժամանակս փրկչին ճառեցան ՚ի նախագրեալ յեօթնևտասան գիրսդ։

Խոստացեալ ապաքէն ջանադրել յաղագս ծագման և յառաջելոյ և կարևոր վախճանի երկոցունց քաղաքացն՝ որ այ, և որ այսմ աշխարհի՝ յորում զարդիս պանդխտեալ կայ և երկնայինն՝ ըստ սեռի մարդկութեն։ Յառաջնմէ ՚ի տասն մատեանսն անցեալս՝ զթշնամիս քաղաքին այ, որչափ ինձ օժանդակեցին նորայն շնորհք՝ ՚ի բաց վանեցի, որք զդիս իւրեանց քան զՔրիստոս շինիչ նորա նախամեծար դնեն, և անձնատուր մախանօքն անողորմ զայրանան առ քրիստոնեայս։ Իսկ յաղագս եռամասնեայ խոստմանս զոր արդ յիշատակեցի, յաջորդեալ չորիւք գրովք ծագումն երկաքանչիւր քաղաքաց կարգաբանեցաւ։ Յետ այնր վիճակ ընթացից ՚ի նախկին մարդոյն մինչև ՚ի ջրհեղեղ ՚ի մի մատեան ցուցաւ, որ է հնգետասաներորդ գիրքն մատենիս. և անտի մինչև ցԱբրահամ դարձեալ երկաքանչիւր քաղաք զոյգ ընթացան որպէս ժամանակօքն՝ նոյնպէս ՚ի գրուածիս մերում։ Սակայն յԱբրահամէ նահապետէ մինչ ՚ի ժամանակ թագաւորաց իսրայէլեանց՝ զոր ՚ի վեշտասաներորդ մատենի կատարե-

ցաք, և անտի մինչ 'ի մարմնով գալուստ փրկչին՝ յոր յանկի մատեանն եօթնևտասներորդ, թուի թէ յիմում բանի միայնակ ընթանայ քաղաքն այ. ուր զի յաշխարհիս յայսմ չէ միայն, այլ երկոքին 'ի մարդկան ազգի զուգապէս 'ի սկզբանէ անտի և 'ի յառաջել անդ փոփոխեցին զիւրեանցն ժամանակս։ Իսկ զայդ այնր աղագաւ արարի, զի նախ յորմէ հետէ բացերևագոյնք եղեն խոստմունք այ մինչև յաւ 'ի կուսէն ծնունդ այնորիկ՝ յորում կատարելոց էին յառաջագոյն խոստացեալքն, առանց ընդ մէջ անկանելոյ դիմամարտ քաղաքին՝ ածաքաղաքս այս զիւր ընթացս ունելով՝ ինքնուրոյն երևեսցի, թէպէտ և մինչ չև յայտնեալ էր նորոյ կտակին, ոչ 'ի լոյս՝ այլ 'ի ստուերի շրջէր։ Արդ ապա պատեհ կարծեմ զոր թողին՝ կատարել, յայտ արարեալ ըստ արժան բաւականին թէ զիարդ ընթանայր և երկրաւորն քաղաք 'ի ժամանակաց անտի Աբրահամու. որպէս զի եղիցի ընթերցանելեացն զերկոսին առ իրեարս կշռադատել։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս թագաւորաց և ժամանակաց երկրաւոր քաղաքին, որոց զուգընթաց գտանին և սրբոց նահապետացն ժամանակք սկսեալ յԱբրահամէ։

ՄԱՀԿԱՆԱՑՈՒԱՑՍ ժողով ընկերական սփիւռ տարածեալ ընդ երկիր պէսպէս վայրաց անջրպետութբ, այլ համբնական ինչ կցորդութբ 'ի մի կապեալ, ուր միանգամ 'ի խնդրել նոցա զիւրաքանչիւր օգուտ և զցանկութի խնդրելին ոչ ումեք և կամ ոչ ամենեցուն լինի 'ի բաւականութի, իբր զի ոչ նոյն ինչ նոցա, դէպ լինի բազում անգամ բաժանիլ նմա յանձն, և հզօրագոյն մասինն նուաճել զմասն անաւագ. քանզի յաղթողին ներքոյ անկանի յաղթեալն, նախադասելի համարեալ զոր և է խաղաղութի և զապրուստ՝ քան զիշխեցողութի և քան զազատութի անգամ. մինչ զի զարմանս մեծ լինել՝ եթէ

առաւել քան զծառայել զկորնչելն ընտրելին ոմանք։ Ա՛ւ զի ձայն ինն բնութեանն է հնչեցեալ ընդ ազգս ամենայն, զի յաղթեցեալքն ընտրելի դասին ընդ լծով կալ յաղթողաց քան ընկիլ սպառազինութեա՛ն հարուածս պատերազմաց։ Այսմ պատճառէ ըստ ածախնամ տեսչութենն յորոյ իշխանութենէ է ուժին յաղթիլ, և ուժին յաղթականս լինել պատերազմաւ, եղև ոմանց Թագաւ պերճանալ և այլոց կալ՛ի հպատակութենէ իշխեցողաց։ Ա՛ւ՛ի յորնաթիւ Թագաւորութենս անդ տիւերքայ՝ յորս երկրաւոր շահիցն և կամ ցանկութենն կցորդուի բաժանեալ գտաւ, զոր քաղաք անուանեմք հասարակական կոչմամբ աշխարհ մի, երկուս տեսանեմք Թագաւորութենս ականատես առ այլովքն երևեալ նախ զասրեստանեայցն, և ապա զՀռովմայեցոց, կարգեալս և զատուցեալս յիերքայ ժամանակօք և վայրօք։ Օ՛ի որպէս այն նախկին, և այս յետին, նոյնպէս այն յարևելս, և այս յարևմուտս կանգնեալ, և դարձեալ՛ի նորա հատաւածին՝ այսմ վաղվաղակի եղաւ սկիզբն։ Ոսկ զայլ Թագաւորութենս և զԹագաւորս նոցա՝ յաւելուածս ինն այսոցիկ ասել վարկանիմ։

Ա՛րդ Թագաւոր երկրորդ ասորեստանեայց էր Ա՛ինոս, փոխանորդեալ զՆայր իւր զՆ՛ել՝ զառաջին արքայ այնր Թագաւորութե՛ն. յորում ժամանակի ծնաւ Ա՛բրահամ՝ ի քաղդեացւոցն երկրի։ Ա՛ր այսու ժամանակաւ էր և Թագաւորութե՛ն սիկիւռացւոց՝ Թէպէտ և փոքր. յորմէ իբր՝ի նախնագոյն ժամանակէ սկիզբն արար բազմահմտան Ա՛արկոս Ա՛ արքուն իւրում գրուե՛ յաղագս հռովմէական ժողովրդեան. քանզի՛ի սիկիւռացւոցն Թագաւորաց գայ հասանէ առ աթենացիս, յորոց առ լատինացիս, յայնցանէ առ հռովմայեցիս։ Ա՛այց յառաջ քան զՀռովմայ շինութենն կարի նուազագունք յիշատակին այդոցիկ առ կրկո՛ Թագաւորութե՛ն առաջնահանեայց։ Ա՛ւ վասն աթենացւոցն ասէ Ա՛ուգոստոս Հռովմայեցի վիպասան՝ բազմաթ արգարեւ երևելի լեալս՛ի յունաստանի, բայց՛ի հնմէ՛ւսյ յաւէտ՝ քան Թէ իրօրէն, այսպէս ասէլով զնոցանէ. « Ա՛թենացւոցն արարուածք՝ որպէս

Էս վարկանիմ, են են նշանաւորք և մեծամեծք, այլ փո-
քունք ինն քան զՆինէ Համբաւոյն ։ Իսայց զի գոան ան-
տանօր մատենագիրքք քաջահանձարք, նոցայն պարագ առ-
մեծս Տալակին ընդ որոյս տիեզերաց ։ և զորձելեացն ա-
ռաքինութենէն ամենայն մեծագրի, որչափ բանիւք մեծացու-
ցանել զայն կարողացան հանձարք գերազանցք .. ։ Ոչայր
քաղաք յաւելեան ոչ գոյղն պարծանաք և՝ ի գրականութենէ և
յիմաստասիրաց ։ իբր զի ուսմունք այնպիսիք անտանօր
յաւէտ ինն բարգաւաճեցին ։ Վակայն ըստ աշխարհակա-
լութենէն բանի՝ ոչ եկաց քնաւ այլ մեծագոյն քան զասո-
րեստանեայց՝ ի ժամանակն առաջինս, և ոչ իբրև զայն
լոյսատարը ծաւալեալ ։ քանզի յայնմ ուրդ Ինելայ
ասի նուաճեալ զԱսիա համօրէն, որ ըստ Թուոյ մասանց
սիեզերացս՝ երրորդ կոչի, այլ ըստ մեծութենէն զկնի
ունի, մինչև՝ ի սահմանս Իբերայ ։ Հնդկաց և եթէ ոչ իշ-
խեր նա՝ ի կողմանս արևելից ։ այլ՝ ի մեռանել նորա՝ Հ աչ
միշտ նորուն կին գիմեաց անդր պատերազմաս ։ Իսոս
օրինակաւ որ միանգամ յայն երկիրս կայնի ժողովուրդք
կամ Թագաւորք, հնազանդեալք կին ասորեստանեայցն
արքայութենէ և սահմանի, զնորա հրամայեալն կատարե-
լով ։ Ոչայնմ Թագաւորութենէ պապ ծնաւ Իբրահամ առ
քաղդեացիս՝ ի ժամանակս Ինոսի ։ Իոր քանզի Ոնհայն
իբր ծանօթագոյն քան զասորեստանեայցն են մեզ, և՝ ի
Ոնհաց անտի առ Իատինս, և՝ ի սոցանէ առ Հռովմայե-
ցիս նոյնպէս լատինս՝ ածին կարգեցին զպատ ժամանա-
կաց՝ որք միանգամ հետազօտեցին զվաղնջուց ծագումն
Հռովմէական ժողովրդեան, նմին իբր պատ է մեզ ըստ
իրացն բերելոյ՝ յիշատակել զնագաւորս ասորեստանեայց,
որպէս զի ծանիցի Թէ զինարդ Իաբեթեան՝ առաջին գոգլես
Հռովմ՝ ընթանայ ընդ քաղաքին այ պանդխտելոյ՝ ի հինգ
ցաղումս ։ Իոկ զերն՝ զոր առ՝ ի Համեմատութենէ երկա-
քանչիւր քաղաքի՝ երկրաւորին և երկնաւորին պիտոյ իցէ
պատկանել յայս գործ, առնուլ ունիմք առաւելապէս՝ ի
Ոնհաց և՝ ի Իատինաց, ուր կայ և Հռովմ իբր երկրորդ
Իաբելոն ։

Այս յոբժամ Աբրահամն ծնաւ, երկրորդ կայեն Թագաւորք՝ ասորեստանեայց Ադինոս, սիկիխեաց՝ Հերոպս. իսկ առաջին նոցա Թագաւորք՝ անդ Ադել, ասա՝ Հգիաձև։ Ամէ յելանել Աբրահամու ի Հաբեղնէ՝ յոբժամ խոստացաւ Ած ազգ մեծ առնել զնա, և ի նորա զաւակի տալ օրհնութիւն ազգաց, ասորեստանեայց երկրորդ Թագաւոր էր, և սիկիխեաց՝ հինգերորդ. զի առ նոսա Թագաւորէր որդի Ադինոսի յետ մօր իւրոյ Շ ամիրամայ, զոր ասեն սպանեալ յորդւոյ իւրմէ սակս հրապուրելոյն զնա յազգապիղծ խառնակութիւն, Օ այս Շ ամիրամ համարին ամենք լինել կերտող Բաբելոնի. բայց Թերեւս նորոգեալ իցէ զայն. իսկ Թէ Երբ չինեցաւ և զիարդ, ասացաք ի վերատասաներորդ գիրսն։ Իսկ զորդի Ադինոսի և Շ ամիրամայ՝ որ զմայրն փոխանորդեաց յաթոռն, ոմանք նոյնպէս կոչեն Ադինոս, և այլք յանուանէ Հօրն առեալ կոչեն Ադինուաս։ Օ սիկիխեացն Թագաւորութիւն ունէր յայնժամ Ցէղսիոն. և առ նորա տերութիւնն այնպէս իւն յանդորրու և յուրախութիւն կայեն ժամանակք, մինչև ի մեռանել նորա զաճախական մատուցին պաշտօն զոհագործութիւնք և խաղաց հանդիսիւք. և զայն նախ առաջին կարգեալ սահմանեցին նմա։

ԳԼՈՒԽ Գ

Ա՛ք Թագաւորէին առ ասորեստանեայս և առ սիկիխեացիս յոբժամ Աբրահամու հարիւրամեայ ծնաւ Իսահակ ըստ աւետացն, և նմին Իսահակայ վաթսնամեայ երկրորդին ծնան Եսաւ և Յակոբ ի Ռեբեկայ։

Ը՛նդհանուր ժամանակաւ և Իսահակ ըստ այ աւետեացն ծնաւ Հարիւրեւմեամն Աբրահամու որդի ի Սառայէ հնոջէն, որ ամուլ և պառաւեալ անյոյս իսկ էր առ ի ծընանիդ զաւակի, և առ ասորեստանեայս յայնժամ էր հինգերորդ Թագաւոր Ադաղոս։ Իսկ Իսահակայ վաթսնա-

մեկն ծնան երկուորեակքն Եսաւ և Յակոբ, զորս ծնաւ նմա Ռեբեկա կինն, մինչդեռ կենդանի էր հայր նոցա Աբրահամ, ի հասակի հարիւր և վաթսուն ամաց. որպ լցեալ զՀարիւր եօթանասունն և հինգ ամ՝ վախճանեաց զկեանս։ Յորում ժամանակի Թագաւորէր սասրեատաց նեայց՝ Աբերքսես առաջին, որ և Խաղէոս անուանեալ, և առ սիկիմացիս՝ Տուբլիակոս, զոր ոմանք գրեն Տուբլիմակոս, և սոքա են եօթնեերորդ Թագաւորք։ Իսկ Թագաւորութէ արդիացոց կամ Յունաց յաբեաւ առ Թագամբքն Աբրահամու, առաջին Թագաւորեալ ի նմա Ինաքոս։ Նայց զոր լռելն չէ արժան, առ գերեզմանի եօթնեերորդ արքայի իբրեանց Տուբլիակոսի զոմս մատուցանելն սիկիմացիք՝ ըստ պատուիրելոյ Աստրոնի։ Իսկ ի միրելուեերորդ Թագաւորացն, Քրմամիարեայ յասորեստանեայս, և Ալկիպոսի առ սիկիմացիս, և առաջնոյն Ինաքոսի առ արգիացիս, խօսեցաւ ածէ ընդ Իսահակայ զնոյն զայն երկու իրս խոստանալով նմա, զորս առ Հայրն. այսինքն է՝ տալ զաւակի զերկիրն Քանանու, և զօրհնութէն բոլորից ազգաց ի նորա զաւակէն։ Այս խոստմունք եղեն և առ որդի նորա՝ Թոռն Աբրահամու, որ նախ Յակոբն կոչեցեալ, և ապա Իսրայէլ. առ որով Ռեղոբս իննեերորդ Թագաւոր ասորեստանեայց, և փոխանակ որդի Ինաքոսի երկրորդ Թագաւորեալ յարգիացիս, և Ալկիպոսի բաւեալ դեռ առ սիկիմացիս։ Ոյսու ժամանակաք առ Թագաւորութէն Փորմնեսի Արգողիկայ՝ ամանաւոր եղև յունաստան կարգաք օրինաց և դատաստանաց։ Ալ իբրև փեգովս կրսեր եղբայր նորուն Փորմնեսի մեռաւ, տաճար կանգնեցին առ գերեզմանի նորա՝ պաշտօն իբրև ոյ տանել անտանօր արջառոց զնիւմմոբ։ Թուի ինձ, Թէ վասն այն այնքանոյ արժանի զնա վարկան պատուոյ, վասն զի սա՝ յորոշել հօր նոցա մինչ կենդանին էր՝ սահմանս իշխանուէն երկոցունցն, յիւրումն բաժնի արարեալ էր մատրունս ի պաշտօն դից, և ուսուցեալ էր զնոսա ժամանակաց ըստ ամսոց և տարեաց՝ ի գիտուէն չափոյ և համարոյ նոցին։ Ինդ այսպիս-

սի նորահնարս զարմացեալ անգէտ մարդկանն, ՚ի մեռա-
նել նորա՝ աստուածացեալ զնա կարծեցին, և կամ ախոր-
ժեցին։ Ուրանգն և զՅովզ դուստր լեալ ասէն Ինաքայ,
որ յետոյ Ինաս յորջորջեալ, իբր աստուածուհի մեծ
պաշտեցաւ Աղգիպտոս. Թէպէտ և այլք գրէն Թէ եկն
նա Աթոռվոլիոյ Աղգիպտոս Թագուհի լեալ. և յերկար
աշխարհակալեալ աւանդեաց նոցա բազում ինչ իրս ՚ի
շահ և յիմաստուԹիՀ. որոյ վասն յետ մեռանելոյն աս-
տուածական տուաւ նմա պատիւ, և այնչափ, զի մահա-
պարտ լինէր՝ Թէ ոք իշխէր մարդ զնա ասել։

ԳԼՈՒԽ Գ

Յաղագս ժամանակաց Յակոբայ և Յովսէփայ որդւոցն նորա։

Ի ԱԳՈՒԽՈՐԷՐ ասորեստանեայց տանէերորդ Թագաւոր՝
Ինադոս, և սիկիոնեաց ԻՀնէերորդ՝ ԱՀեսապոս, որ և
Կեփիսոս ասի յոմանց. սակայն ԵԹԷ միոյ մարդոյ իցեն
երկու անուանքս, և ոչ զայլ ոք փոխանակ այլոյ մարդոյ հա-
մարեցան որք վանգամ զերկրորդ անունն յիշատակեցին
՚ի գիրս իւրեանց։ Իսկ արդեաւթոց երրորդ Թագաւոր էր
Ազիս։ Արդ առ սոքօք վախճանեաց կենանս իւր Ինահակ
ամաց Հարիւր և ութսնից. Թողեալ զերկուորեակս իւր
ամաց Հարիւր և քսանից, յորոց կրսերն Յակոբ՝ վիճա-
կեալ քաղաքին այ զորմէ գրեմքս, Թող զերեցն անարգ՚,
ունէր որդիս երիսուսան, յորոց զանուանեալն Յովսէփ
վաճառեցին եղբարքն նորա վաճառականաց Աղգիպտոս,
մինչդեռ կենդանի էր հաւ նոցա Ինահակ։ Նկատ Յով-
սէփ յանդիման Փարաւոնի, յորժամ յանարգուԹէՀ ան-
ցի՝ որում ժուժկալեացն, ամբարձաւ ՚ի փառս՝ երեւեա-
ցեալ գոլով. քանզի զերազս արքային մեկնելով առ ՚ի
յոյ, նախատացմեաց լինել եօԹն ամաց լիուԹԷ, և Թէ
այսպիսւոմ առատուԹԷ զինի զայցեն այլ եօԹն ամ ան-

բերք. այսր աղագաւ իշխան վնաս կարգեաց Թագաւորն ի վերայ Աղիքսեոսի՝ զի բանտեւ հանեալն, յոր արկեալ էր վնաս անտեսեցն ողջախոհութեան. զի ոչ հաւանեցաւ չարասիրի տիկնոջն ի գործ դաւուն՝ ի զրպարտել նոքա առ տէրն դիւրահաւատն, և զհանգերձիկն իակ Թողեալ ի ձեռս բռնադատողին՝ փախեաւ խոյս ետ, քաջութեամբ զմաքրութեան անսխեղծ պահելոյ։ Այդ յերկրորդում ամի եօթն ամաց սովոյն եկն Յակոբ Աղիքսեոս առ որդին իւրոյ՝ զոլով ամաց հարիւր և երեսնից, որպես ինքն ասաց ի հարցանել Թագաւորին. իսկ Յովսէփ ունէր ամն երեսուն և հինն. իբրև զի երեսնամեայ պատուեալ յաթոռայն, յաւելան եօթն ամք լիութեան, և երկու՝ սովոյն։

ԳԻ ՅԱՒԽ Ե

Հաղագս Ընդհ անուն աբբայի որդեացոց, զոր եգիպտացոցն Սիրապես անուանեալ՝ աստուածաբար պաշտէին։

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ Աղիս Թագաւոր արգիացոց նաւարկեալ Աղիքսեոս, իբրև մեռաւ անդ, եղև Աերապիս հանուրց աստուածոցն եգիպտացոց գերագոյն։ Իսկ զանուանն պատճառ Թէ առիմ՞ յետ մահուն ոչ Աղիս կոչեցաւ՝ այլ Աերապիս, առձեռն աւանդ Աարդոն. իբրև զի տապանն յոր հանգուցաւ մեռեալն՝ ի բազմաց կոչեցեալ յունաբէն սառաքիաղոս, իբրու մսակեր կամ հալիչ մարմնոյ, առաւել ասի ասօս, այն է՝ արիզ, տապան. և անտանօր ի Թագմանն վայրի պատիւ գնեին նմա՝ մինչ չև տաճար կանգնեալ էր՝ ինորին անուն. ուստի ի ձայնիցս ասօս և ապիս, նախ կարդացեալ ասօսապիս, ապա որպէս և պատահէ՝ փոփոխմամբ միոյ տառի ասացաւ սերապիս։ Որինօք իսկ սահմանեցաւ, զի եթէ ոք մարդ վնաս ասիցէ լինել, մնհապարտ լցցի։ Այս քանզի յամե-

նային առաջարս յորս պաշտեալ էին Խոս և Վերապիս, կայր կուռք մնան առ ջրեթամբք ունելով իբր՝ ի լուսե՛ն նշանակ, համարի նա ինքն Վարրոն Թէ յայտ առնէր՝ մի՛ բնաւ մարգս զնոսա ասել, Խակ զարջառն զոր առ՝ ի պատիս Վերապէայ յոբնապարարն փախուցիք մնուցա՛ նէր Աղիպտոս ըստ խաբէպատիր ունայնութե՛ն, քանզի կենդանւոյն պատուէին և ոչ՝ ի տապանի, վասն այն Ապիս կոչէին, և ոչ Վերապիս։ Ի մեռանել արջառոյն՝ ի ինդիր էլեալ նորա՝ տեսանէն զորթ ըստ նման երանգոյ, այս է՝ սպիտակախայտ պիսակացեալ և ընդ գտանէն զայն հրաշս ինն վարկան յաստուածոստ անտեսեալ։ Սակայն առ՝ ի պատրելոյ զնոսա՝ ոչ դժուարին ինչ էր գիւրին՝ յանգիման երևեցուցանել կովու ծննդականի զպատկեր այնպիսի ցըլու, զոր միայն տեսեալ մարն զկծանէր, և զնոյն կերպա՛ րան տպացուցանէր իրօրէն՝ ի ծնունդ իւր։ զոր օրինակ և Յակոբ արար՝ նկարէն գաւազանաքն ծնանել ոչխարս և այծս խայտախարիս։ զի զոր մարդիկ առնեն իսկական գունովք և մարմնովք, և դուք գիւրաւ և առնել կարող էն պատիր երևութի՛ւք յանասունն ծնանելիս։

ԳԻՒՂԻՒ Ջ.

Ո՞ Թագաւորէք յաղգիացիս, և ո՞ յատրեստանեայս՝ յորժամ Յակոբ վախճանեցաւ յԵգիպտոս։

Իդ Ապիս Թագաւոր ոչ Եգիպտացւոց՝ այլ արգիացւոց՝ մեռաւ յԱգիպտոս։ և զԹագաւորութի՛ւնն փոխանորդեաց Ազգոս որդի նորա, յորմէ Ազգիք և Ազգիացիք յորջորջեցան։ իսկ առ անցելովք Թագաւորացն՝ ոչ տեղին, և ոչ ազգն յայս անուն կոչէր։ Ապա՝ ի Թագաւորել սորա առ արգիացիս, և առ սիկիոնացիս՝ Ադրաստոս, իսկ առ ատորեստանեայս կալով տակաւին Ասդէոս, վախճանեցաւ Յակոբ յԱգիպտոս ամաց հարիւր քա-

ուսումն և եօթն . և մերձ յօրհաս անդր օրհնեաց զորդիս իւր, և զԹոռունսն 'ի Յովսեփայ, յայտնապէս զՔ՟ս գուշակեալ՝ յասելն յօրհնութեն Յուդայ . «Ո՛չ պակասեսցէ իշխան Յուդայ, և մի պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ որոյ իւրն է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց»: Ի թագաւորել Արգոսի երևեցոյց յունաստան արդիւնս, բերս ունելով երկրագործութեք, զորոց սերմանս յայլ կողմանց հայթայթեցին : Այլ և սա յետ մահուն ընդ աստուածս գրեցաւ, տաճարօք և պատարագօք պատուասիրեալ. և այն պատիւ առ նորա թագաւորութեն յառաջնմէ տուաւ սոսկականի ումեմն կայծակնահար եղելոյ Խոմոգիրոս անուն. որպէս թէ նախ նորա լծեալ իցէ զարջառս յարօր :

ԳԼՈՒԽ Է.

Առ որովք թագաւորօք վախճանեցաւ Յովսէփ յԵգիպտոս:

Ի ԹԱԳԱՒՈՐԵԼ առ ասորեստանեայս երկոտասաներորդին Սամիտոսի, և մետասաներորդին առ սիկիոնացիս Պլեմնէի, և առ արգիացիս կալով դեռ Արգոսի, մեռաւ Յովսէփ յԵգիպտոս ամաց հարիւր և տասանց: Զկնի մահու նորա ժողովուրդն Իսրայէլի աճեցեալ կարի յոյժ՝ եկաց մնաց յԵգիպտոս զամս հարիւր քառասուն և հինգ, 'ի խաղաղութեան վայելեալ զառաջինն, մինչև մեռեալ պակասեցին այնոքիկ որ ճանաչէին զՅովսէփ. այլ յետ այնր աճեցուածն ժողովրդեան յաչաղելի և խիթալի ցուցեալ, խոշտանգեալ լինէր մինչև յազատիլ իւր անտի՝ 'ի հալածանս և 'ի վաստակս անբերելի ծառայութեան. թէպէտ և յանծապարգեւն աճելութէ յուանայր տակաւին 'ի վիշտս անդ: Առ այնու ժամանակաւ յասորեստանեայս և 'ի Յոյնս կային նոյն թագաւորութիւնք.

ԳԻՐՔ Ը.

Յորմէ Թագաւորաց Ժամանակի ծնաւ Մովսէս, և որպ դիպ պատահմունք հնարեցան ընդ այն ժամանակս։

ՅՈՐԺԱՄ առ ասորեստանեայս Թագաւորեր չորեքտասաներորդն Այափրոս, և առ սիկիոնացիս՝ երկոտասաներորդն Ապոլոնիոս, և Արիասոս հինգերորդ առ արգիացիս, ծնաւ Ամղիպատոս Մովսէս, յորմէ ձեռն ազատեցաւ ժողովուրդն ոչ յեգիպտական ծառայութենէ. իբր զի պէտք էին այնպէս փորձիլ նմա առ՝ ի ժամելոյ զձեռնտուութեն արարչին իւրոյ։ Ի ժամանակս Թագաւորացդ յիշատակէլոց կարծի յոմանց լինել Պրոմիթևս, զորմէ ասեն Թէ՝ ի կատարմարդ ստեղծեալ իցէ, այնու զի Ճարտար ուսուցիչ գտաւ իմաստութեն. այլ Թէ այք ոմանք եղեն՝ ի ժամանակին իմաստունք, չէ յայտ։ Ամղայոր նորա Ապոլոս ասի լեալ աստեղաբան քաջ. յորմէ առասպելն հնարեցաւ՝ տանել նմա զերկինս ըստ անձին. Թէպէտ և կայ լեառն՝ ի նորին անուն յորջորջեալ յորոյ՝ ի բարձրութենէն Թուի հնարեալ կարծիք ոամկին՝ տանել զերկինս։ Տազուտ և այլ առասպելք սկսան յօդել Ամղլադա՝ ի ժամանակաց անտի. և մինչև՝ ի Ակերսոս աթենացւոց Թագաւոր, առ որով անուն ընկալաւ Ապենք քաղաք, և յորում ժամանակի հան ածծ զմողովուրդ իւր Ամղիպատոս՝ ի ձեռն Մովսէսի, մեռեալք ոմանք՝ ի համար աստուածոց գրեցան ըստ կոյր և նանրախորհուրդ բարոյից և մնապաշտուէ հելլենացւոց. յորս կին Արիասոսի արքայի՝ Ապեմտոմիկ, և փոքրսյս որդի նորա՝ որ զԿնի Հօրն եկաց վեցերորդ Թագաւոր արգիացւոց, և Եօթնեերորդին Տրիովըայ որդի Յասոս, և հինգերորդ արքայ՝ Ապենեդաս կամ Ապենեղևս կամ Ապենեղեոս. զի և պէտպէս գտանի գրեալ առ մատենագիրս։ Ոմանք ժամանակօք ասի լինել և Ապերկուբիոս կամ Հերմէս Թոռն Ապատլասայ՝ ի Մայեայ գտեր-

ըև , զոր և հրապարակածանօթ գրուածքը յայտ առնեն . ծանուցաբ սա քաղմաց արհեստից տեղեակ , զորս և յոյսումն աւանդեաց մարդկան . և ըստ արժանեացն աստուածզնա յետ մահուն լինել ախորժելոյն կամ կարծելոյն : Ընտոյ ասի լեալ Հերքուլէս կամ Հերակլէս , քայց ի նոյն ժամանակս արդիացոց . Թէպէտ ոմանք երկյագդոյն քան զՀերմէս դնեն ժամանակաբ , և կարծեմ սխալեն : Ասկայն երբ և լեալ իցէ նոցայն ծնունդ , քաջայայտ է յերեւելի վկայութենէ զնախնականն իւր մատենագրողաց , զի երկրին նոքա մարդ կէին , և զի առ մահկանացուացս բարեկեցուէի յոլովագոյնս գտան երախտագործք , արժանիք ճաճանս պատուոյ եղեն ի մարդկանէ : Իսկ Ապիներևս , որ և Թենաս , նախնագոյն քան զոսոս է . քանզի ընդ ժամանակս Ավգիւգեայ ասի երևեալ նա օրիորդ հասակաբ առ լճաևին կոչեցեալ Ջրիտոնի . յորմէ և լինքն Ջրիտոնիա անուանեցաբ . յոբունց երկասիրուեց գոլով գոիչ , այնչափ և յորդորագոյնս աստուածունէի կարծեցաբ , որչափ զի անձանօթ էր ազգատոհմ նորա . զի որ յերգս ասի՝ ծնեալ նոբա ի գլխոյն Լիւոսի կամ Լ.բամազդայ , ի քերթողացն առասպելս տանելի է , և ոչ ի վէպս գործոց անցելոց : Ասկայն և վասն Ավգիւգեայ Թէ երբ լեալ իցէ՝ անվիաբան են վիպագիրբ , առ որով դիպաբ և Ջրհեղեղ անհնարին , ոչ հանրականն այն համայնաջինջ ամենայն մարդոյ՝ բաց յեղելոյն ի տապանին , որում անգիտակ է հեթանոսացն պատմութիւն Հունաց և Լատինաց . բայց արդարեւ մեծ քան զայն որ յետոյ առ Պևկալիոնիւն եղեւ : Պանգղ Ա աբրոն անտի սկսանի զմատեանն՝ զոր յիշատակեցի վերագոյն . և ի գլուխ իրացն հռովմայեցւոց ոչ առաջի դնէ հնագոյն ինչ քան զՋրհեղեղն հանգիսեալ առ Ավգիւգեաւ : Իսկ որք ի մերոց աստի ժամանակագրութեաբ երկասիրեցին , նախ Յուսեբիոս , և ապա Հերոնիմոս , զհետ երթեալք անշուշտ կարծեաց հին պատմագրաց , զՋրհեղեղն որ առ Ավգիւգեաւ՝ յիշատակեն եղեալ յետ երեք հարիւր և աւելի և ամաց , յորժամ թագաւորէր Փորոնևոս երկրորդ աբքայ արդիացոց : Ասկայն երբ և

լեալ իցէ, յայտ է զի յառաջ քան զայն և ս աստուածու-հւոյ պաշտօն մատչէր Աթենասայ 'ի Թագաւորել Կեկրո-պայ յԱթէնս. առ որով ասեն զայն քաղաք նորոգեալ կամ նորակերտեալ:

ԳԼՈՒԽ Թ

Ե՛րբ շինեցաւ աթենացւոցն քաղաք, և զի՛նչ պատճառ անուանն ըստ Վարրոնի:

ՔԱՆԶԻ Աթէնս կոչել քաղաքին՝ առեալ է անշուշտ 'ի Մինեռվայ, որ յունարէն Աթենաս ասի. որում զայս պատճառ յառաջ բերէ Վարրոն: Երեւելով յերկրին յայն-միկ յանկարծ ծառոյ ձիթենւոյ, և յայլում կողման յորդե-լով ջրոյ, 'ի շփոթս անկաւ Թագաւորն ընդ նորանշան իրսն. և առաքեաց հարցանել 'ի դեղփեանն Ապողոնէ՝ զի՛նչ նշանակիցեն իրքն, և զի՛նչ առնել պարտ իցէ: Նա ետ պատասխանի. Ձիթենի զԱթենաս նշանակէ, յորդութ̃ն զՊոսիդոն, և թէ 'ի կամս քաղաքացւոցն է՝ կոչել զքա-ղաքն յանուն միոյ յերկուց այն աստուածոց, որոց են այն նշանակք: Զայս պատգամ ընկալեալ Կեկրոպայ, ժողո-վեաց 'ի խորհուրդ ընտրութե̃ զքաղաքացիս համօրէն զարս և զկանայս. զի էր յայնժամ սովորութ̃ի տեղեացն այնոցիկ՝ մտանել և կանանց 'ի հասարակաց խորհրդակ-ցութ̃իս: Ապա 'ի խորհուրդ առնել բազմութե̃ն՝ արք վասն Պոսիդոնի ետուն հաւանութ̃ի, և կանայք վասն Աթենասայ. և զի սոցայն առաւելաւ միով, յաղթեաց Ա-թենաս. ընդ որ մռմռեալ Պոսիդոնի, ծովասաստ ալեօք յուզելովք յաւեր յապականութ̃ի եդ զաթենացւոցն գաւառս: Քանզի և դիւաց ոչ դժուարին ինչ է յոր-դել ծաւալել զջուրս ընդ բացարձակ վայրս: Առ 'ի ցա-ծուցանելոյ զսրտմտութ̃ի Պոսիդոնի, ասէ նոյն մատե-նագիր, երրեակ պատուհաս կապեցին աթենացիք 'ի վե-րայ կանանց, զի ոչ ևս այնուհետև քուէարկու լինիցին,

զի ոչ ոք 'ի զաւակաց առնուցու զմայրենի անուն, և զի մի ընաւ ոք զնոսա աթենուհիս կոչեսցէ։ Այսպէս ահա այն քաղաք ազատականացն ուսմանց և յոգունց անուանի իմաստասիրաց մայր և դայեակ, քան զոր ոչ երևեալ 'ի յունաստանի պերճագոյն և ազնուական, խաղ առնելով դիւաց 'ի վէճս երկուց աստուածոց՝ արուի և իգի, 'ի յաղթութենէ անտի կանանց զկնոջականն ընկալաւ անուն Աթենք. բայց 'ի յաղթեցելոյն կրեալ տոյժս՝ բռնադատեցաւ պատուհասել զնոյն ինքն զյաղթութիւն յաղթականին, առաւել 'ի Պոսիդոնի ջուրցն երկուցեալ, քան 'ի զինուց Աթենասայ. քանզի 'ի պատժաւորեալ կանայսն՝ և Աթենաս որ յաղթողն էր՝ յաղթեցաւ. և ոչ այնչափ ինչ ձեռն ետ իւրոցն նպաստաւորաց. զի եթէ զրկեցան այնուհետև 'ի քուէատու իշխանութենէն, և որդիք նոցա օտարացան 'ի մարցն անուանէ, գոնէ օրէն լինէր նոցա աթենուհիս անուանիլ, արժանացեալք կրել զանուն աստուածուհւոյն այնր՝ զոր իւրեանցն ընտրութեամբ յաղթական կացուցին 'ի վերայ արուական աստուածոյն։ Որպիսիս, և որքանիս ասել մեզ կայր 'ի ձեռին, եթէ ոչ յայլ ինչ ձեպեցուցանէր զմեզ բանս։

ԳԼՈՒԽ Ժ

Զինչ աւանդէ Վարրոն յաղագս Արիսպագին, և յաղագս Ջրհեղեղին Դևկալիոնի։

Այլ սակայն Մարկոս Վարրոն ոչ ախորժէ ընծայել գիւտից հակառակ աստուածոցն, զի մի անվայելուչս ինչ արժանեաց մեծութեան նոցա զմտաւ ինչ ածիցէ։ Սորին վասն և ոչ զԱրիսպագոսն անուն ուրանօր առաքեալն Պօղոս ատենաբանեաց ընդ աթենացիս, և 'ի տեղւոյ անտի արիսպագացի կոչեցան իշխանաւորք քաղաքին, յօժարի առնուլ անտի՝ զի Արէս ասացեալ աստուածն, ամբաստանեալ 'ի մարդասպանութեան յանցանս, և յատենի երկոտասան աս-

տուածոց դատեալ՝ 'ի նմին տեղւոջ, արձակեցաւ վեցեակ վճռովք. զի ուր հաւասարաթիւ ելանէր վճիռ, արձակումն նըն զօրանայր քան զպարտաւորումն: Այլ ընդդէմ այսմ հաւաքեալ կարծեաց՝ հնարի Վարրոն զայլ պատճառ յարմարել անուանս յանյայտ գրոց ումանց, զի մի կարծիցի թէ Արիսպագոս կոչեցին աթենացիք յանուանէն Արեսի և պագոսի, որ է գիւղ, յանարգանս արդարեւ ածականացն՝ յորոց օտարս համարի զվիճմունս և զդատանս. և ոչ միայն զայս որ յաղագս Արեսի՝ ընդ սուտս դրէ, այլ և որ յաղագս աստուածուհեացն ասի՝ Հերայ և Աթենասայ և Ափրոդիտեայ, որք առ 'ի ձեռս բերելոյ զխնձորն ոսկի՝ ասեն 'ի պայքար մտանել յանդիման Պարիսայ՝ ո՛ր ոք առաւել գեղաւոր իցէ. և առ 'ի հաճոյս խաղաղասէր աստուածոցն զուարճացելոց ընդ իւրեանցն ոճիրս սուտս կամ անսուտս՝ 'ի թատերական ծափմունս երգէին զայնս, և 'ի կաքաւս առնուին: Ընդ սոյնպիսիս ոչ հաւատայ Վարրոն, զի մի զանվայելչականս ինչ բընութէ և բարուց աստուածոցն յանձն առնուցու. և սակայն կամեցեալ տալ զպատճառ ոչ զառասպելայօդ՝ այլ զպատմական յաղագս աթենացւոցն անուանակոչութէ, կարգեաց եդ 'ի գիրս իւր զաստիկն զայն վէճ Պոսիդոնի և Աթենասայ՝ թէ յորո՛յ անուն կոչեսցի քաղաքն. և 'ի հակառակաբանել նոցա նշանագործ խորխտանօք, և ոչ Ապողոն անգամ հարցեալ իշխէր համոզել 'ի միջի նոցա, այլ յորոշումն վիճի աստուածոցն՝ որպէս զյիշատակելոյ երից աստուածուհեացն խնդիր 'ի Պարիս յանձն արար Դիոս, նոյնպէս Ապողոն առաքեաց առ մարդիկ, ուր Աթենաս յաղթէր քուէիւքն, և առ 'ի պատիժ իւրոց քուէարկուաց յաղթեալ լինէր. որ ընդդէմ արանց հակառակողաց իւրոց շահեցաւ զայն զի քաղաքըն կոչեսցի Աթէնք, այլ չկարաց զսիրայինս իւր զկանայս ունել աթենուհիս: Ի այսու ժամանակօք՝ ըստ գրելոյ Վարրոնի, յորժամ թագաւորէր աթենացւոց Կրանաւոս յաջորդ Կեկրոպայ, իսկ ըստ մերոցն Եւսեբեայ և Յերոնիմոսի՝ մինչ տիրէր դեռ Կեկրոպս, եղև ջըր-

հեղեղն՝ ասացեալ Պուկալոնի, երբև զի նա ինքն Թագաւորէ յայն կողմանս երկրի՝ ուր առաւելապէս զօրացաւ. և ոչ ժամանեաց այն ջրհեղեղ յԵգիպտոս և 'ի մերձակայս նորա:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յորում ժամանակի հան Մովսէս զժողովուրդն յԵգիպտոսէ. և Յեսու Նաւեայ որ զնա փոխանորդեաց, առ որովք Թագաւորօք կատարեաց զկեանս:

Արդ զժողովուրդն ա̃յ եհան Մովսէս յԵգիպտոսէ 'ի յետին ժամանակս Կեկրոպայ աթենացւոց արքայի, յորժամ յասորեստանեայս Թագաւորէր Ասկատադէս, առ սիկիոնացիս՝ Մարաթոս, և առ արգիացիս՝ Տրիոպաս: Ժողովրդեանն ելելոյ աւանդեաց Մովսէս զառ 'ի յա̃ծուստ ընկալեալն օրէնս 'ի Սինայ լերին. որ և կտակ կամ ուխտ հին ասի, մարմնականս ունելով խոստմունս. իսկ նոր կտակն 'ի ձեռն Յ̃սի Ք̃սի հանդերձեալ էր լինել, որով խոստումն էր արքայութ̃են երկնից: Վասն զի այս կարգ էր պատշաճող, զոր օրինակ յիւրաքանչիւր մարդ՝ որ առ ա̃ծ ուղղեալն է, նոյն կատարի, զոր առաքեալ ասէ, զի ոչ նախ իցէ հոգևորն, այլ շնչաւորն, և ապա հոգեւորն. զի որպէս ճշմարտութ̃ ասէ. " Առաջին մարդն յերկրէ հողեղէն, իսկ երկրորդ մարդն տէր յերկնից ,, : Արդ առաջնորդեաց Մովսէս ժողովրդեան յանապատի զամս քառասուն. և մեռաւ ամաց հարիւր և քսանից. մարգարէացեալ և վասն Ք̃սի առակաւ մարմնաւոր պաշտամանց խորանին, և քահանայութ̃ե և պատարագաց, և այլ ևս բազմօք խորհրդական հրամանօք: Փոխանակեաց զՄովսէս Յեսու Նաւեայ, և հանգոյց յերկրին աւետեաց զժողովուրդն, յաղթահարեալ ա̃ծայնով զօրութ̃ե զազգսն՝ որք տիրացեալ էին յայն տեղիս. որ և սա առաջնորդեալ ժողովրդեան յետ մահուն Մովսէսի զամս քսան և եօթն՝ վախճանեցաւ, յորժամ յասորեստանեայս Թագա-

ւորէր ութեւտասներորդ Ամինտաս , առ սիկիոնացիս՝ վեշտասաներորդ Կորաքս , առ արգիացիս՝ տասներորդ Դանաւոս , առ աթենացիս՝ չորրորդ Երիքթոնիոս ։

ԳԼՈՒԽ ԺԲ

Յաղագս պաշտամանց սուտ աստուածոցն՝ զոր թագաւորք Ելլադայ կարգեցին ընդ այն ժամանակս ելից Իսրայէլի յԵգիպտոսէ ցվախճան Յեսուայ Նաւեայ ։

ՅԱՅՆՄ դարու ելիցն Իսրայէլի յԵգիպտոսէ մինչև 'ի մահ Յեսուայ Նաւեայ , յոյր ձեռն ստացաւ ժողովուրդն զերկիրն պարգեւական , սահմանեցան պաշտամունք սուտ աստուածոց 'ի թագաւորաց յունաստանի . որք մեծահանդէս տօնիւք նորոգեցին զյիշատակ ջրհեղեղին , և զառ 'ի նմանէ ազատութե՟ն մարդկան , և զբազմավիշտ այնր ժամանակի կենաց մարդկան , 'ի փոփոխել նոցա բնակութ՟ մերթ 'ի բարձրագոյն վայրս , մերթ 'ի տափակողմանս ։ Քանզի և զլուպերկեանց քրմացն ելևէջս ընդ սրբափողոցն մեկնաբանեն նշանակել՝ թէ սակս յորդութե՟ ջուրցն 'ի կատարս լերանց չուէին մարդիկն , և 'ի թողանալ ջրոյն անդրէն 'ի խոնարհագոյն տեղիս իջանէին ։ Զայնու ժամանակօք Դիոնիսոս Բաքոս , որ և ազատ հայրն կարդացեալ , կամ սպանդարապետ , և յետ մահուն աստուածացեալ , եցոյց ասեն զորթ յԱտտիկէ հիւրոյ իւրում ։ Յայնմ ժամանակի սահմանեցան խաղք երաժշտականք 'ի պատիւ դեղփեանն Ապողոնի , ողոքել կամեցեալ զցասումն նորա , յորմէ կարծէին անպտղութ՟բ հարեալ զգաւառս յունաստանի , զի ոչ ապրեցուցին զմեհեան նորա՝ յորժամ Դանաւոս արքայ մարտիւ յարձակեալ յերկիրն հրձիգ արար զայն . վասն որոյ ըստ պատգամի նորա կարգեցին զխաղսն զայնոսիկ ։ Իսկ յԱտտիկէ արքայն Երիքթոնիոս զառաջինն նուիրեաց նմա զայն խաղս . ոչ նմա

միայն, այլ և Աթենասայ, յորում մրցանակ յաղթողաց եդեալ լինէր ձիթենի. իբր զի գտիչ նորա զԱթենաս ասեն լինել, որպէս և գինւոյ զԴիոնիսոս ազատ: Յայն ամսն Քսանթոս արքայ կրետացւոց, որում այլք զայլ անուն տան, ասի յափշտակեալ զԵւրոպա, և 'ի նմանէ ծնեալ զՀռադամանթոս, զՍարպեդոն, և զՄինոս. Թէպէտ և համբաւն առաւել համարի զսոսա որդիս լինել Դիոսի 'ի նոյն կնոջէ: Սակայն պաշտօնատարք աստուածոցդ այդոցիկ՝ վէպ հաւաստի համարին զասացեալն յաղագս կրետացւոցն արքայի. իսկ զոր քերթողք նուագեն վասն Դիոսի, և տեսարանք շռնչեն, և ամբոխն տօնախմբէ, կեղծիս առասպելաց վարկանին. որպէս զի առ 'ի հաճելոյ զաստուածսն՝ խաղս հռչակեսցեն նա և 'ի ստայօդ նոցա եղեռնութեցն: Ընդ այն ժամանակս անուանի լինէր Հերակլէս 'ի Տիւրիա, բայց այլ ոք՝ և ոչ այն զորմէ յառաջ խօսեցաք. զի ըստ գաղտնի (կամ մեհենական) պատմուե բազում ասեն լինել Դիոնիսոս և Հերակլէս: Արդ վասն այսր Հերակլեայ՝ զորոյ մեծամեծ արարս երկոտասան 'ի Թիւ արկանեն, ոչ յիշատակեալ զսպանումն Անտէասի ափրիկեցւոյ, իբրև այլում Հերակլեայ անկ գոլ, արձանացուցանեն 'ի գիրս իւրեանց թէ անձնակէզ լեալ իցէ 'ի լեառն Ոյետայ, ոչ կարացեալ քաջութբն՝ որով զհրէշս նուաճէր, ժուժկալել ախտակրութեն յոր ըմբռնեալն էր: Յայնմ ժամանակի արքայն, կամ լաւ ևս ասել՝ բռնաւորն Բուսիրիս զիւր իսկ հիւրս զոհագործէր դից իւրոց, զոր ասեն որդի լեալ Պոսիդոնի 'ի Լիբիայ մօրէ 'ի դստերէ Եպափոսի: Բայց զի մի կարծեսցի՝ թէ պղծութի այնպիսի գործեալ իցէ Պոսիդոն, որով աստուածքն բամբասիցին, գիւտ համարին քերթողաց և թատերաց՝ առ 'ի զաստուածսն հաշտ առնելոյ: Երեքթոնեայ արքայի աթենացւոց՝ յորոյ 'ի վերջին ամս գտանեմք վախճանեալ զՅեսու Նաւեայ, ծնողս լինել ասեն զՀեփեստոս և զԱթենաս: Այլ զի զսա կոյս համարին, ասեն թէ 'ի գօտեկռուիլ երկոցունցն՝ կրգռեալ Հեփեստոսի թափեաց զարուեն ընդ երկիր. և անտի ծնելոյ մալ-

դոյն եղաւ անուղղայնամ պատճառէ . զի առյոյն լերկոյ էր հեռւ լսի , և ընդ , երկիր . և յերկուց անտի բարեաց է ձայնդ Նրկնքեան : Նայց արդ խոստովանեալ արժան է թէ իմաստնագոյնքն մերժեն զայդոսիկ, և՝ի քայ տանին՝ի զից իւրեանց . և առաստելաձայն կարծեացդ պատճառ զայս աւանդեն, զի՝ի տաճարին Երեմեստեայ և Ն.թենասայ՝ որ երկուցն միոյ Ն.թէնս, գտաւ ընկեցեալ մանուկ մի պատատեալ յօճ, որ մեծ ոմն լինելոյ նշանակ էր . և զի ծնողքն անծանօթք էին, ասացաւ որդի լինել Երեմեստեայ և Ն.թենասայ ստակս հասարակաց տաճարին . այլ զանուանակոչութենէն պատճառ՝ առաստելն արտայայտէ՝ և ոչ այդ պատմութենէ : Նայց մեզ զի՞ կայ՝ի բանքս . Թող մին լոյծ պաշտօնասիրաց մարդոց ուսուանի՝ի Հիզերտապատում գիրս, իսկ միւսն եղիցի դիւաց անմաքրից զուարճութենէ՝ի խաղըն անոտիապատուաստս . քայց զի պաշտօնասէրքն այն առ աստուածս ունին զնոսա . Թէ և զարարսդ չտայցեն նոցա , տակաւին անպարտ յաւելնայն անցաւորութէ կացուցանել կարեն ոչ քնաւ . վասն զի խաղս նուիրեն նոցին իսկ խնդրելովն՝ յորում անամօթ Թաբար կատարէն իրք , զորս ինքեանք իմաստութէ հանարին ուրանալ . և այնպիսի սուտ և քարուսական իրօք հաշտ գտանին գիւքն . ուր Թէ և առաստելն յերգ առնու զսուտ յանցանս աստուածոց , սակայն և զուարճանալն ընդ սուտ յանցանս՝ Հիմարիտ յանցանք են :

ԳԼՈՒԽ ԺԴ

Որպէս առաստելեայց դիւտք՝ի վեր եկին առ Հելինս՝ի ժամանակի դատաւորաց Եբրայեցւոց :

Յետ մեռանելոյ Յեսուայ Նաւեայ՝ դատաւորք կացին՝ի վերայ ժողովրդեան Ա՛յ . առ որովք հետզհետէ անցին ընդ նոսա և զբմբաղք տառապանաց սակս մեղաց իւ-

բեանց, և յաջողուածք գիւրութե՛ի գթութե՛ն ՝այ։ Ար-
նովին ժամանակօք Հնարեցան առաստպելքն յաղագս Տրի-
պտղոմեայ, որպէս թէ Ալեմետրի հրամանաւ ամբարձեալ
նորա յօձս թևաւորս՝ ցորեան տարեալ էցէ թուչելով յեր-
կիրս սովեալս։ Յաղագս Անինոտաւրոսի, որ էր ասէն
գազան արգելեալ ի լաբիւրինթոսի, ուր մտեալ մարդ-
կանն՝ յանզերծ մոլորուածն գնային առանց կարելոյ ել-
նել։ Յաղագս Կենտաւրոսաց կամ ձիացլուցն, որոց
բնութե՛ էցէ խառն ի ձիոյ և ի մարդոյ։ Յաղագս Եր-
բերոսի եռագլուխ շան դժոխոց։ Յաղագս Փրիւքսի և
Հեղլայ քեռ նորա, ոյք հեծեալք ի խոյ սրաթռիչ լի-
նէին։ Յաղագս Որպոնայ, որ օձախուռիս վարսիւք ըզ-
հայեցողս ի քար փոխարկէր։ Յաղագս Պեղերոփոնտեայ
աշտանակելոյ ի թևաւոր ձի՝ Պեգասոս առձայնեալ։
Յաղագս Ամփիոնի, որ քաղցրանուագ քնարաւ զքարինս
կակղեալ յինքն ձգէր։ Յաղագս Որեղաղոսի հիւսան և
որդւոյ նորա Ուկարոսի, որք թևս կցկցեալ թռանէին։
Յաղագս Ոդիպոսի, որ զհրէշս իմն քաւոտանի ի կանա-
ցի կերպարան Սփինգա կոչեցեալ՝ ստիպեաց գահավէժ
կորնչել, լուծանելով զառեղծուած ինչ նորա՝ զոր նա
անլուծանելի կարծէր։ Յաղագս Ընտէոսի, զոր Հե-
րակլէան սպան, զորդին կարծեցեալ հողոյ. ոյր վանն ի
գետին անկեալ ուժեղագոյն յառնէր։ Այս առաստպելք,
և եթէ այլք ևս զորս գուցէ ոչ յիշեցի, մինչև ի պատե-
րազմն տրովացւոց՝ ուր զերկրորդ գիրն կատարէ Ոմար-
կոս Արրոն յաղագս ծագման հռովմէական ժողովրդ-
դեանն, այնպէս իմն լըր ի կարգի հաւաստի պատմու-
թեց հնարեցան ի մտաց մարդկան, զի գոնէ մի իցեն ի
նախատինս աստուածոցն։ Բայց որք միանգամ յօդեցին,
թէ Ադամագդ մանկատուփուք յաւիշտակեաց զգեղանի
մանուկն Գանիմեդէս, ուր Ցանտաղոս արքայ գործեալ
էր զայն քարուական, և առաստպելն ընծայէ Գիոսի,
համ թէ Գանայէս ոսկի անձրևով եկեալ էցէ անկանիլ
ընդ կնոջ օտարի, որով է իմանալ թէ ոսկւով գողացաւ
զպարկեշտութիւն, այսոքիւք՝ եթէ գործեցեալք իցեն,

եթէ սուեղծաբանեալք ընդ այն ժամանակս, կամ թէ այլք գործեցին, և յանուն Արամազդայ շփեցին, ասել չէ մարթ՝ քանի՜ չարաչար խորհեցան զսրտից մարդկան, որպէս թէ ժուժկալել կարեն այնպիսեաց ստութեց, զոր և նոքա ախորժաբար ընկալան. և սակայն պարտ էր նոցա՝ ըստ նախանձայոյզն լինելոյ 'ի պաշտօն Արամազդայ նոյնչափ սաստիկս պատուհասել զյանդգնեալսն յայնպիսի բանս կցկցեալս զնմանէ: Իսկ մարդիկ ոչ միայն չզայրացան ընդ կեղծաբանսն ընդ այնոսիկ, այլ երկուցեալք ևս 'ի ցասմանէ աստուածոցն՝ հաճեցան ընդ գործիլ այնպիսեացն 'ի թեատրոնս: Զայսու ժամանակօք ծնաւ Լետով կամ Լատոնա զԱպողոն, ոչ զայն յորմէ պատգամս հարցանէին ըստ վերագոյն ասացելոցդ, այլ զայն՝ զոր ասեն ընդ Հերակլեայ դարմանեալ զանդեայս արքային Ադմետոսի. և սակայն այնպէս ընդ աստուածս հաւատացաւ, մինչև ամենեցուն զոգցես մի և նոյն Ապողոն համարել: Յայնժամ և Դիոնիսոս կամ Բաքոս ազատ հայրն պատերազմ մղեաց 'ի հնդիկս, և ունէր 'ի զօրուն իւրում կանայս բազումս՝ բաքոսուհիս կամ կովայինս անուանեալս, մոլեգնութբ՝ քան թէ քաջութբ երևելիս: Զայս ազատ անուն ոմանք գրեն յաղթեալ և կապեալ. և այլք՝ սպանեալ ևս 'ի Պերսէոսէ. ասեն և զթաղմանն տեղի. և սակայն յանուն նորա իբրև աստուծոյ՝ սահմանեցան յայսոյն պղծոյ սպանդարամետականքն պաշտամունք, մանաւանդ թէ զարշանք. այլ ընդ մոլեգին աղծապղծութիս նոցա այնչափ ամաչեաց ծերակոյտն յետ բազում ամաց, մինչև խափանեաց առնել զայն 'ի Հռովմ քաղաքի: Ընդ այն ժամանակս զՊերսէոս և զկինն նորա զԱնդրոմեդա յետ մեռանելոյ նոցա համարեցան յերկինս փոխադրեալ, մինչև զպատկերս նոցա յաստեղս գրել և յանուն նոցա կոչել ոչ պատկառեցին և ոչ երկեան:

ԳԼՈՒԽ ՀՐ

Յաղագս աստուածաբանող բանաստեղծից, կամ դիցաբան քերթողաց։

*ՅԱՒՈՒՐՍ ժամանակացն այնոցիկ կացին պուեետիկոսք կամ քերթողք, որք աւ հեթանոս աստուածաբանք և անուանեցան, սակս տաղս յօրինելոյ նոցա զաստուածոց կամ զդիւց։ բայց զայնպիսեաց՝ որք թէ և արք մեծաւմեծք, այլ մարդիկ էին, կամ աւ՝ի ձչմարտէն ոչ չինած աշխարհիս տարերք ոմանք են, կամ՝ի պետութենէ և յիշխանութենէ ամբարձեալք ըստ կամաց արարչին և յիւրեանց վաստակոց։ Այս եթէ՝ի բազում՝ի նանիր ստութենէ անդ նուագեցին ինչ մի և յաղագս միայնոյ ձչմարտին ոչ, սակայն կից նմա և զոչ աստուածն պաշտելով, և նոցունց չարկանելով զծառայութենէն զվայելչական միոյն ոչ, յայտ է թէ ոչ ըստ արժանւոյն ծառայեցին նմա, և ոչ յառաստպելեալ անվայելչութենէ աստուածոց իւրեանց կարացին լռեցուցանել զլեզուս նա ինքն Արփէոս, Ա՛ուսէոս և Լինոս։ Ա՛յսպիսի աստուածաբան քերթողք պաշտեցին զաստուածն, թէպէտ ինքեանք ոչ պաշտեցան իբրև աստուածք. միայն չգիտեմ զիարդ՝ զԱրփէոսն զայն դժոխական պաշտամանց՝ կամ մանաւանդ գարշանաց վերակացու համարի քաղաքն ամբարշտաց։ Ասկ կին արքային Ա՛թամասայ՝ կոչեցեալ Ինոն, և որդի նորա Ա՛եղիկերտես ինքնակամ ծովամոյն եղեալ կորեան, և մարդկանն կարծիք աստուածարեցին զնոսա, զոր օրինակ և զայլ մարդիկ ժամանակին՝ զԱաստովը և զՊողիտևկիս։ Ա՛պաքէն զմայրն Ա՛եղիկերտեայ Յոյնք անուանեցին Լետոն, և Լատինք՝ Ա՛ատուտա, այլ միաբան համարեալ զնա աստուածուհի։

ԳԼՈՒԽ ԺԵ

Յաղագս փոխանակելոյ թագաւորութեան Արգիացւոց, յորում ժամանակի առ Լաւրենտացիս Պիկոս որդի Սատուռնոսի առաջին կալաւ զթագաւորութիւն հօրն ։

Ի սոյն ժամանակս դադարեաց թագաւորութիւն Արգիացւոց, փոխանցեալ առ Միկենացիս, ուստի էր Ագամեմնոն, և յարեաւ տէրութիւն Լաւրենտացւոց. ուր Սատուռնոսի կամ Կռոնոսի որդի Պիկոս նախկին թագաւորեաց. իսկ առ Եբրայեցիս դատաւոր էր Դեբորա կին մարգարէ՝ հոգւոյ ս̃յ առաջնորդութ̃բ. այլ զի աղօտ է նորայն մարգարէութիւն, չէ մարթ առանց յերկար մեկնաբանութեան ցուցանել զյարմարութիւն 'ի Քս̃ ։ Արդ թագաւորէին յայնժամ Լաւրենտացիք յԻտալիա, յորոց ծանօթագոյն իմանի ծագումն հռովմայեցւոց զկնի Յունաց. այլ տակաւին կայր թագաւորութիւն Ասորեստանեայց, առ որս քսաներորդ երրորդ թագաւոր էր Լամպարէս, մինչդեռ Լաւրենտացւոցն առաջին տիրէր Պիկոս ։ Յաղագս հօր սորա Սատուռնոսի զինչ արդեօք խորհել կամիցին դիցապաշտք, որք մարդ զնա ոչ ասեն լինել. իսկ այլք գրեցին թէ նախ քան զորդի իւր զՊիկոս թագաւորեաց յԻտալիա. և յայտնաբան տաղիւք Վիրգիլիոս ասէ. յԷնէականն. Է ։

«Սա զազգ անկազմ վայրավատին լերանց բարձանց,
Եդ յարդարուն, 'ի կիրթ արկեալ քաջ օրինաց ։
Լատին, թաքուն՝ զանձն և զտեղի կոչել ընտրեաց,
Զի յայն ափունս պատսպարիլ էր անկասկած ։
Ոսկի գոգցես զայն դարս ասեն վէպք զրուցաց,
Երբ Սատուռնոս՝ որ և Կռոնոս՝ արքայ եկաց» ։

Այլ զայսոսիկ համարիցին արդեօք քերթողաց ստեղծմունս, և զհայր Պիկոսի ասիցեն առաւել Ստերկէս, իբր աղբարկու. զի երկրագործ ելով քաջահմուտ՝ հնարեաց

անանոյ աղօթիւ պարարտացուցանել զանդաստանս, և՝ ի նորա անուանկէն աղբեւր ասացաւ առ լատինս «Ընկերթաս», որ և ըստ ոմանց ասի անուանեալ Ադրիանոպոլիս։ Այլ Թէ յորժ՝ և իցէ պատճառէ Վաստուրնոս զնա ձայնել կամեցան, այն ինչ հաւաստի է՝ զի զայս Վտերկէս կամ Վտերկուս տիս կարգեցին աստուած երկրագործութեան, և զվիճակս զորդեցին աստուածոց այնպիսեաց խառնեցին, զոր և ասեն ձարտար հաւհմայ լինել և պատերազմող. և սա ծնաւ զվաւնոս զերկրորդ Թագաւոր լաւբենտացւոց, աստուածացեալ առ նոսա։ Վնա նախ քան զՋրոյայ պատերազին պատիւ այսպիսի ածաւվայել ընծայեցին մարդոց մեռելոց։

ԳԼՈՒԽ Ժ.Օ.

Յաղագս Դիոմեդեայ աստուածացելոյ յետ ասելոյն Ջրոյայ, զորոյ զընկերսն ասեն ի Թռչունս փոխարկեալ։

Վյերկան Ջրոյայ կամ Իղմանի այսպիսի կործանմամբ, որ ամենայն ուրեք յերդ առեալ է, և տղայոց անդամ գիտելի, է արդարեւ սիւիւռ հռչակեալ։ Եթէ անցեալ մեծութիւնք, և եթէ մատենագրացն ձարտար բանահիւսուածքք. որ դիպաւն իսկ ի Թագաւորել Վտինոսի որդւոյ Վաւնոսի, յորմէ լատինականացն սկիզբն առ Թագաւորութիւն, իսկ լաւբենտացւոցն դադարեաց։ Ոչունացն յաղթականաց Թողեալ զաւերեալն Ջրոյա, և յիւրեանց քրնիկան դարձ արարեալ, անդ մաչեցան խորտակեցան պէս-պէս հարուածովք աշաւորօք. բայց և յայնմանէ աձեցուցին զթիւ աստուածոց իւրեանց։ Վանգի և զՎիտեդէան աստուածացուցին՝ զոյն զորմէ ասեն յիմծառաք պատուհասէ ոչ կարացեալ առ իւրսն դառնալ. և զնոսն ընկերս ի Թռչունս փոխադարձեալս հաստատեն ոչ որպէս առասպելայօդ ստութիւն՝ քան Թէ պատմական հա-

ւասատեօք . որոց զմարգկային բնութիւն ոչ ինչ ՚ի ծածագեալն կարաց անդրէն ՀՈՐՀԵԼ, և ոչ գոնէ ԱՂԱՄԱԶԱՅ արքայի իւրմէ ընդունել յաջողեաց նորեկ երկնաքաղաքացին : Ապէն և տաճար չինեալ նմա ՚ի գիւմէտեան կղզոջ, ոչ ՚ի բացեայ ՚ի լեռնէն Վարգանայ՝ որ ի ԱՂՈՒՆԻա . և թէ զայնու տաճարաւ չուրջ թառնին և բնակին թևաւորքն այնոքիկ զարմանահրաշ մեծարանօք , մինչև կիտուցս լցեալ ջրով ՚ի վերայ ցօղէն . և եթէ ՀՅՈՒՐՔ գնայցեն անդր , կամ ՚ի յունական ազգէ սերեալք , ոչ միայն հանդարտիկ ինան , այլ և զնոքօք խաղապատեն . բայց զօտարազգիս թէ տեսանիցեն , ՚ի գլուխս նոցա խոյանան՝ սաստիկ հարուածովք վիրաւորելով մինչև ՚ի սպանումն . քանզի կարծր և մեծամեծ կտուցք՝ զինք նոցա են, ասէն , բաւականք յայնպիսի մրցմունս։

ԻՒ ՅԱՒԽ ԺՒ։

Ջ ինչ կարծիք են Վարդանի յաղագս անկարծելի փոխարկմանց մարդկան ։

Ո ՉՈՑՆ կամեցեալ Վարդանի հաւանեալն առնել յուշ առնէ զայլս ևս ոչ փոքր անկարծելիս յաղագս Աիրկեայ անուանի վէմին, որ զընկերս Դիսեայ ՚ի գազանս փոխարկեաց . այլ և զարկադեանց՝ որք վէմական ընտրեալք յանցանեն ՚ի լեզ ընդ ծովակ ինչ՝ ՚ի գայլս փոխարկէին, և ընդ ջուխ նման գազանաց կէին յանշէնս գաւառին . և եթէ ոչ կէրակրէին ՚ի մարդկեղէն մարմնոց , յետ ինն ամաց անդրէն ընդ նոյն ծովակ լողացեալ կերպարանէին ՚ի մարդիկ : Յանուանէ ծանուցանէ զարձեալ զՎեմենէոս զմին, թէ Ճաշակեալ ՚ի զոհէ անտի՝ զոր արկադեանք նուիրէին Լիկոսի՝ գայլ անուն աստուածոյ իբրեւ զնմանէ մանկան միոյ, անդէն ՚ի գայլ փոխարկեցաւ . և ՚ի տասներորդումն ամի Հաստատեալ յիւրկերպարանս , և ՚ի բռնամարտիկ խաղս մարզեալ յողիմպիա-

կանան մըցմունս տարաւ զյաղթութեն, Այլ այս պատմագիրը համաբեր թէ ոչ յայլ ինչ պատճառէ Յ.ըկագիա զայդ անուն յառնելեալ ասէին՝ Պանեակ լիկեացւոյ և Յ.բամոզդայ լիկեացւոյ, եթէ ոչ սակս այդպիսի փոխարկման մարդկան՝ի գայլս. զոր և յիմծելէն զօրութեն և եթ հնարաւոր լինել ասէին՝ մարդաւք յայն՝ զի դայլ՝ի յայն լեզու Լիֆ՝՝ ասի. յորմէ թուի առեալ և անունն Լ՝՝՝

փոխարկելին կերողք, և զբեռինս ստանձնեալ տանէին. և յետ կատարելոյ գործոյն՝ ապա անձին զգայլին. բայց պահէր 'ի նոսա բանականն մարդկային մտաւորութի̄ն, ոչ փոխեալ յանասնականն, զոր օրինակ և Ապուլէոս 'ի գիրսն մակագրեալ Ոսկեղէն իշոյ, յայտ առնէ կամ ձևանայ՝ իւրում իսկ անձին հանդիպեալ. իբր զի թոյն ինչ առեալ՝ դարձաւ յէշ, մնալով մարդկեղէն ոգւոյն:

Այսոքիկ կամ ստայօղք են, կամ այնչափ անսովորք, մինչև յիրաւի է չհաւատալ: Սակայն աներկբայելի ունիմք հաւատալ, թէ ամենազօրն Ա̄ծ կարող է զամենայն զոր կամիցի առնել, եթէ 'ի պատուհասել, և եթէ 'ի բարեգործել. իսկ դևն որ է 'ի բնէ հրեշտակային արարած, թէպէտ իւրոյին յանցանօքն չարացեալ, ոչ ներգործէ ինչ ըստ կարողութե̄ բնութե̄ իւրոյ, եթէ ոչ թողացուցէ Ա̄ծ, որոյ դատաստանք գաղտնիք են և բազմօրինակք, բայց և ոչ մին անարդար: Ապաքէն դևք բնութիւնս ոչ ստեղծանեն, յորժամ գործ այնպիսի զորմէ խնդիրս է, առնեն. այլ երևութիւ չափ ևեթ զարարեալսն 'ի ճշմարտէն Ա̄յ այլափոխեն՝ երևել որ ինչ ոչն են: Ուստի ոչ միայն զհոգի, այլ և ոչ զմարմին անգամ կարծեմ փոփոխել կարեն դևք իւրեանցն արուեստիւ կամ իշխանութե̄ 'ի ստոյգ անդամս և 'ի կերպարանս անասնեղէնս. այլ երևակայականն մարդոյ՝ որ և մտածութե̄ կամ յերազելով յանհամար ազգս իրաց այլակերպի, և ոչ մարմին գոլով՝ զմարմնոյ նման տեսակս յինքն ընդունի արագութեամբ սքանչելի, թմրելով կամ ճնշելով մարմնեղէն զգայարանաց մարդոյ, չգիտեմ որով անասելի օրինակաւ սա այլոցն զգայութե̄ ածեալ բերի մարմնական ձևով. մինչ զի մարմինք մարդկանն անկեալ կայցեն ուրեք՝ թէ և կենդանիք, այլ ծանրադանդաղք և սաստիկ ևս՝ քան թէ 'ի քուն ըղգայազիրկ. իսկ երևակայականն իբր մարմնաւոր ինչ՝ անասնոյ իրիք կերպարանաւ երևութանայցէ յօտարի ըղգայութիւ, և մարդն այնպիսի լինել երևեսցի ինքեան, որպիսի երևել մարթէր յերազի, և բեռինս իսկ տանել: Եթէ այն բեռինք ստոյգ իցեն, 'ի դիւացն տարեալ լի-

նին, որպէս զի խաղ առնիցեն զմարդկաւ՝ի տեսանել նո-
ցա կէս մի զսոյգ մարմինս բեռանց, կէս մի զսուտ մար-
մինս անատոց։ Վասնզի այր ոմն անուն Պրեստանտիոս
պատմէր Հանդիպեալ հօր իւրում զայս ինչ, զի Ճաշա-
կեալ զՅունին պանրով՝ի տան իւրում, անկեալ մայր յան-
կոյնի իբր՝ի քուն, այլ զարթուցանել զնա չէր հնար.
իսկ յետ աւուրց ինչ սթափեալ, պատմէր իբր երազս զոր
ինչ կրեալն էր. այս է՝ զի լեալ գրաստ՝ բարձեալ տանէր
ընդ այլոց գրաստուց պաշար՝ի բանակ զօրաց, պաշար
կոչեցեալ Հռոմայեցւոց, իբր տարեալ՝ի գաւառս Հռո-
մայ։ Այս որպէս պատմեացն, նոյնպէս արդեամբք Ճշ-
մարտեցաւ, Թէպէտ և նմա Թուէին երազք, Պատմէր և
այլ ոք, Թէ՝ի տան իւրում գիշերային մինչ լե՛ի Հանգիստ
քնոյ մտեալ, տես գալ առ ինքն զիմաստասէր ոմն ծանօթի
իւր, որ բացայայտեաց նմա զասացուածս ինչ պղատոնա-
կանս, զորս յառաջի՝ի ինդրել նորա չէր կամեցեալ բացա-
յայտել։ Իբրև Հարցաւ իմաստասէրն՝ ընդէր՝ի տան օտա-
րի պարս զայն ինչ, զոր յիւրում տան զլացաւ Հարցողին,
ասէ. ոչ Եթէ պարսիւ, այլ յերազացայ առնել։ Այսպէս
ահա յերևակայեալ պատկերի ցուցաւ արձանոյն այն ինչ՝
զոր միւսն յանուրջս տեսանէր։

Ո այսոսիկ ընկալաք՝ի պատմելոյ՝ ոչ այնպիսեաց ոմանց
որոց յիրաւի էր չընծայել Հաւատս, այլ այնպիսեաց զորս
անխոցս առ մեզ Համարիմք, Ա՝ ասն որոյ այն որ ասի, և
՝ի գերս և կայ աւանդեալ Թէ՝ աստուածքն, կամ մա-
նաւանդ արկածեան դևք զմարդիկ՝ի գայլս փոխարկէն,
և՝ի Ա իրդիլեայ տաղերգուԹեան ասի՝ Ալիբիեայ վհկի
փոխակերպեալ զընկերս Ագիսեայ, ինձ Թուի Թէ Հնա-
բաւոր էր լինել ըստ օրինակին զոր ասացի, Եթէ արդարե-
լեալ էցէ՝ Խոկ յաղագս դիտմդեան Թռչնոցն՝ զորոց ա-
սի ըստ նմին ազգի ծննդեամբ յայրերգել, ոչ Եթէ փո-
խարկմամբ մարդկանն լեալ կարծեմ, այլ փոխան նոցա
զթռչունսն եդեալ՝ի տեղւոջն, զոր օրինակ էին եգաւ
փոխան Ալիպենեայ դստեր Ա՝ քամեհնոյի արքայի. զի և
ոչ գժուարին ինչ էր զայսպիսի կախարդանս առնել դի-

ւայ ըստ նեբելոյ դատաստանացոյն ՚ի՝ . այլ զի չէտ այնը կենդանի գտաւ կոյսն Ներիկեհէ , արագ ծանուցաւ Թէ եղեն փոխանակորա եղեալ էր : Ապայ ընկերք Պիոմիդեայ ոչ վաղվաղակի յայտնեցան , և չէտ այնը ոչ այլ ուրեք երեւեցան , անհետ արարեալ զնոսա ոխերիմ հրեշտակացն չար . Նմին իսկ կարծեցան փոխարկեալ յայն Թռչունն՝ որք զանիրաւաբար ածան անգը յայլոց վայրաց ուր կայ այն ազգ հաւուց , և եղան արագապէս փոխանակ մարդկանն : Ապակ այն Թէ ջուր ածէին կոցաւ և ցօղարկէին ՚ի տաճար Պիոմիդեայ , և Թէ առ յոմնագիս համբոյր գտեալ ՚ի բաց վարէն զայլասեռս , չէն զարմանք Թէ յազգմանէ դէւաց լինիցի . որոց փոյթ մեծ է հաւանեցուցանել զաստուածմանսն Պիոմիդեայ՝ առ ՚ի պատրելոյ զմարդիկ , որպէս զի բազում աստուածս սուտս պաշտիցեն յանաղուԹի չչմարտին ՚ի՝ . և մարդոց մեռելոց՝ որք և ոչ առ կենդանութիւն իւրեանց կեցին արդարապէս , սպաս տանէ յէն տաճարօք և սեղանովք և պատարագօք և քահանայութիւն . որք եԹէ ուղիղք իցեն , ոչ այլուստ բայց միայնոյ կենդանւոյն և չչմարտին ՚ի՝ բովանդակ վայելչականք են :

ԳԻՒՂԻՒՍ ԻԹ

Թէ յայնմ ժամանակի Ենէաս եկն յԻտալիա . յորում հրեից առաքելոցն Աբդեան դասատուր :

Ի ՀԱՄԱՆԱԿԻՒ անդ չէտ առնէին և աւերածոյ Տրովադայ՝ Ենէաս քան նաւուք որք բարձեալ ունէին զնիւթ յորդոյ որոյացոյց , եկն եՀաս Լատալիա , ուր Թագաւորեր Լատինոս , և առ աԹենացիս ԱենեսեԹեւս , առ սիկիենացիս՝ Պողիբիդէս , յասորեստանեայս Տատանէս , իսկ առ երբայեցիս դատաւոր էր Ներդոն : Ի մեռանելոյ Լատինոսի Թագաւորեաց Ենէաս ամն երիս , նոյն միաժ լով Թագաւորաց ՚ի յիշատակել կողմանս . բայց միայն

սիկիմնացւոցն էր Պետրոս, և Հրէից Սամիսան գաւառը, որ սակս գերաշրջ զօրութեան համարեցաւ լինել Հերակլէս։ Ւ։ Քանզի անյայտաբար իմն եղև մեռանել Ադամայ, աստուածացուցին զնա Ղաւիթ. այլ և սաքմնացիք զնուրանց առաջին Թագաւոր զԱնկոս, կամ ըստ այլոց գրելոյ զԱգաթոս ընդ աստուածս կարգեցին, Ո՞չ՝ւս ժամանակաւ Կոդրոս Թագաւոր աթենացւոց յանծանօթս իմն եղև անձնամատոյց ի սուր պատերազմի Թշնամեաց քաղաքի Իւրոյ, և այսպիսի մահուամբ ազատիչ Հայրենեացն զնա քարոզեին. քանզի պատրաստ էին պերգայմնացիք՝ յաղթական լինել եթէ զԹշնամեացն Թագաւոր ոչ սպանանիցէին. վասն որոյ Կոդրոսի պատրեալ զնոսա՝ երևեցաւ ի հանդերձս գրգռեալ. յորմէ եղև Ա իրգիլեայ ասել. “ Կամ Թշնամիս Կոդրոսի ”, Ւ։ ահա զնա իբրև աստուած պաշտեցին աթենացիք զոհագործեալ։ Ձորժամ չորրորդ Թագաւոր էր Ղաւինաց Ալիզեւոս որդի Ւ՝նեասայ՝ ոչ ի կրեսայ հինոջէ, յորմէ Ւ՝նա կանիսս եղև՝ երրորդ Թագաւորեալ անտանոջ, այլ՝ի Ղաւինայ գտեալ Ղաւինոսի, յետ մահու հօրն ծնեալ և ասորեստանեայց քսանեւորդ հինեւորդ Ալինէոս, և աԹենացւոց վեցտասաներորդ Ալեքսանդրոս, իսկ Հրէից դաւառ Հեղի քահանայ, եղև վախճան Թագաւորութեանն սիկիմնացւոց, որ ասի բաւեալ զամս հինհարիւր յիսուն և հինն։

ԳԻԼՈՒԽ Ի

Զաղագս յաջորդելոյ Թագաւորութեանն առ Իսրայէլացիս՝ յետ ժամանակաց դատաւորաց։

Ի ՏԻՐԵԼ Թագաւորացն այնոցիկ՝ի յիշատակեալ կողմանսդ, վախճան առեալ ժամանակի դատաւորաց առ Իսրայէլացիս, սկիզբն եղև Թագաւորութեանն նոցա՝ի Ալա-

ւուրջս աղբեայէ , յորում ժամանակի եկաց մարգարէն Սամուէլ ։ Եւ նովաւ ապա Տէրունեայ Թագաւորք՝ այն որ Իզուխոսք յորջորջէին՝ սկիզբն կալան . զի յորդոյ անտի Հնէասայ՝ նախկին կոչեցեալոյ Իղվեոս, այլոց գինի եկելոցն բաց յիւրեանց սեպհական անուանէ՝ պահիւր և այս մակ դիր կոչումն . զոր օրինակ յետ յալով ժամանակաց կեսար վերակոչեցան յաջորդք կեսարու Օգոստոսի ։ Սաուղայ՝ի մերժիլ առ՝ի չթագաւորելումբք՝ի նորա զարմէն, և՝ի մեռանել նորա յետ իշխանութեէ տմոց քառասնից , յաջորդեաց՝ի Թագաւորութիւն Դաւիթ ։ Հայմմ ժամանակի յետ անկմանն Յորդոսի ոչ ևս կացին Թագաւորք յաթենացիս , այլ տառեանս սահմանեցին՝ի վարել զհասարակաց պետութիւնն ։ Ոչնչի Դաւթի Թագաւորելոյ նոյնպէս ամս քառասուն, եկաց որդի նորա Սողոմոն Թագաւոր իսրայէլացւոց , որ կառոյց զՀրաշակերտն զայն տաճար Երուսաղէմի ։ Ի նորա ժամանակս շինեցաւ քաղաքն Աղա առ Տէրունեայ, յորմէ ոչ ևս Տէրունեայ Թագաւորք կոչէին՝ այլ ալբացւոց, Թէպէտ և՝ի նմին երկրի Տէրեայ ։ Սողոմոնի յաջորդեաց որդի նորա Ռոբովամ, առ որով յերկու Թագաւորութիւնս զատաւ ժողովուրդն , և իւրաքանչիւր բաժին կալաւ զառանձին Թագաւորս ։

ԳԻՒՂԻՍ ԻԲ.

Յաղագս Թագաւորաց Յաթեայ , որոց առաջինն Նեհաս , և երկոտասանեըորդն Աբենհինոս ընդ աստուածս համարեցան ։

Յառաջ զինի Հնէասայ կարգելոյ յաստուածս՝ կալաւ Թագաւորս մեռեալս , յորոց և ոչ մին աստուածացաւ ։ Սակ Իէնհինոս երկոտասանեըորդ յետ Հնէասայ տապաստանեալ՝ի մարտի , և Թագեալ՝ի լերին անդ՝ որ և այժմ նորին անուամբ կոչի , յաբելաւ՝ի Թիւ աստուածոցն այնոցիկ՝ որպիսիս ստեղծանէին նոքա ։ Սմանք չկամեցան

պրել զնմանէ Թէ ՚ի պատերազմի սպանաւ , այլ անէրեւոյ Թագաւ ասացին . և ոչ յանուն նորա կոչեցեալ համարէին զնէառն զայն , այլ յեկաւորութէն հաւուց (քանզի ասէ և հաւ) կարդացեալ ՚ի ենտինոս : Յետ սորա ոչ աստուածացաւ աք՚ի ՚ատիա՝ բայց միայն Հռոմուլոս կանգնէ Հռոմայ . իսկ ընդ սա և ընդ նա գտանին Թագաւորք երկու , յորոց առաջինն է՝ըստ վերդիբեանն տալղ , “Պոկահնորին՝ հնուպ իշխեցող , Ջրոյայ ազգին՝ պարծանագ քոզ ,, ՚ի սուվատ քանզի էբբ յերկուսն ինն կայր Հռոմ , գերագահն այն համարէին Թագաւորութեց ասորեստանեայն՝ վախճան ընկալաւ իւրումն երկարատեւութէն . քանզի էանց ՚ի ձեռս ՚ասաց՝ յետ իբր հազար երեքհարիւր և հինգ ամաց , հաշուեալ և զժամանակս Ռէյայ՝ որ ի ՚ենէասն ծնաւ , և անտանօր փոքու իշխանութէ Ռոմայեաւ առաջին եղև Թագաւոր : ՚Ի դէպ Պրոկաս Թագաւորեաց նախ քան զՖռմուլիոս . և սա զդուստր ՚ումիտորայ եղբօր իւրոյ՝ ՚Ռէա անուն , որ և Ռէլիա կարդացեալ , զմայր Հռոմուլոսի առբաղեալ էր կուսան ՚ի Ջեստեայ . զոր և ասէն յ՚քեսէ յաշխեցեալ երկուորեակս , արգոյ կացուցանելով այսու և համանբամբաս զպղծութէն նորա , ՚ի մէջ բերեալ և հաւաստիս գործոյն՝ զայն Թէ զտղայսն արկեալս ՚ի բացի՝ անուշեցեալ իցէ գայլ քանզի զայս գաղան համարէին նուիրեալ ՚Քէսէի . որպէս Թէ յայն սակս գայլն մատակ սատուեղիս տղայոցն , զի գիտաց զնաս տեառն իւրոյ ՚Քէսէի որգիս լինել , ՚այց են՝ որ ասեն , Թէ ՚ի լալ ընկեցեալ տղայոցն , բոզի ուրուք զառաջինն դիւեցուցեալ է զնաս . քանզի զբոզս կոչէին լ՚ոբա՝ մատակ գայլս . որպէս և այժմ առ ՚ատինս զբոզանոցն կոչեն լ՚ուպանարս , այս է՝ գայլենոցս . և Թէ յետոյ անկեալ իցեն նոքա ՚ի ձեռս փաւստուլոսի հովուի , և մնուցեալք յ՚կայէ ՚ի հնոյնէ նորա : ՚Այլսակայն եԹէ ՚ի կշտամբութեն առն Թագաւորի՝ որ հրամայեալ էր ջրամոյն առնել զտղայսն խժգժաբար , կամեցեալ իցէ՝ այ ասպեզուցանել զայնոսիկ՝ յորոց ձեռն չինելոց էր քաղաք այնպիսի , որ զարմանք են գաղան իսկ կարգել նոցա կաթնատու : ՚Ումբրիոսի յաջորդեաց

'ի Թագաւորութենէն Լատինաց եղբայրը Նորուն Լուսաւորչի, Հաւն Հռոմոլոսի. և յառաջնումամի Նորա հիմն նեցաւ Հռոմ. որով յետ այնորիկ կոչ ընդ Թռիչն իւրում Թագաւորեաց Լուսիտոր։

ԳԻՒՂԻՒ ԻԲ

Թէ Հռոմ չինեցաւ 'ի ժամանակին՝ յորում գագաթեաց սարբատանէ այլոյն Թագաւորութեն. և 'ի հրեաստանի Թագաւորէր Եզեկիաս։

Ո՛յ մի յերկար յամիցեմ՝ 'ի բանէս, չինեցաւ Հռոմ քաղաքն՝ իբր այլ Խաբէղոն, դուստր գոգոյս առաջնոյն Խաբէղոնի. որով կամք եղեն այ զտիեզերս ամենայն նըկատուն առնել, և համատարած խաղաղել զնոյն՝ 'ի մի միաբանութեն վերածեալ տերութեն և օրինաց։ Վանդի այնր ժամանակի ժողովուրդք բռնութք և զօրաւորք, և ազգք վարժեալք 'ի զէնս՝ ոչ դիւրով ինչ գայթն 'ի հնազանդութեն. ուստի առ 'ի նուաճել զնոսա՝ ծանր ծանր վտանգք կային առաջի, և աւերումն ոչ դոյզն երկաքանչիւր կողմանն, և աշխատութեն սաբատիեղն։ Վյսպիսին յորժամ ասորեստանեայցն Թագաւորութեն ընդ լծով արկ զբեթէ զԱյսիա ողջոյն, թէպէտ և պատերազմաւ կատարեցան իրքդ, այլ չէղեն պէտք սաստիկ և դժնեայ մարտից, քանզի այլ ազինք դեռ անկիրթք էին 'ի դիմամարտել, ոչ կարի բազում, և ոչ կարի մեծամեծք։ Վասն զի չետ համատարած մեծի այմ ջըհեղեղի՝ յորժամ ուր անձինք ևեթ ապրեցան 'ի նոյեան տապանին, բոլորեցան ամբիրթ հազար՝ մինչ 'ի նուաճել Լինոսի զԱյսիա բոլոր, բայց 'ի հնդկաց։ Իսկ Հռոմ ոչ այնպէս արագ և հեշտեաւ տիրացաւ 'ի վերայ անչափ ազգաց արևելեայց և արևմտեայ, զորս ներքոյ անկեալս տեսանեմք հռոմէական պետութեն. այլ հետզհետէ բազգաւանեալ, զօրացեալս եգիտ զնոսա և քաջամարտիկ՝ ուր միանգամ ընդարձակեալ

բերիւը ։ Ա՛յլ արդ ՝ի ժամանակի յորում Հռոմի շինեցաւ , իսրայէլեան ժողովրդոցն ամբ բնակելոյ յաւետեացն երկրի՝ ելին եօթնհարիւր ուեթևատասն ։ յորոց քսան և եօթն ամբ՝ են ժամանակին Յեսուայ Նաւեայ , և դատաւորացն՝ երեքհարիւր քսան և ինն ։ իսկ ՝ի վեներլոյ անտանուր թագաւորաց՝ ելին ամբ երեքհարիւր վեհասուն և երկու ։ և եր յայնժամ՝ ի հրեաստանի թագաւոր՝ Ա՛քազ անուն ։ կամ ըստ հաշուելոյ այլոց՝ յաջորդ նորա Եզեկիաս ։ և յայտ իսկ է ամենեսեան այնմ թագաւորի և բարեպաշտի սիրեալ առ ժամանակօք Հռոմուլոսի ։ Իսկ ՝ի բաժնի երբայական ժողովրդեան՝ որ Իսրայէլն կոչեր , Ովսէէ ուներ զթագն ։

ԳԼՈՒԽ ԻԹ

Յաղագս Երիթբեայ սիբիլլայի , որ քան զայլն ՝ի սիբիլլայից բազում ինչ յայտնագոյնս վասն Քրիստոսի ։

Ա՛յն այնու ժամանակաւ ասէն ոմանք գուշակ երևեալ Երիթբեայ սիբիլլայն ։ Իսա Ալարքոսի զրուցաբանուածքն՝ ոչ մի , այլ բազում են կացեալ սիբիլլայք ։ այլ Երիթբեայ բացայայտս ինչ գրեաց յաղագս Քրիստոսի ։ զոր և ընդ երցեալ է մեր յառաջագոյն ՝ի լատին լեզու անհարթ չափով և անյարմար առ ոգիտութիւն անձանօթ թարգմանչին , որպէս յետոյ տեղեկացաք ։ Ալ՝ ասն զի այնու ակառնաւոր վկայիանոս՝ որ և երբեմն եղեալ փոխանակ բդեշխի , պերճաբան և բազմահմուտ , մատոյց մեզ ՝ի խօսել մեր յաղագս Քրիստոսի՝ զմատեան յունարէն , և ասէր լինել տաղս Երիթբեայ սիբիլլայի ։ և անդ ՝ի գլուխս տողից ուրեք եցոյց զշարս տառիցն՝ այսպիսի ունելով ընթերցուած ։ Ա՛ւրհնաբան Յիսուսի Աստուծոյ որդի փրկիչ Աւդ այս տողք որոց սկզբնատառք արտայայտին զանուանել բառդ , ի-

մաստս այսպիսի բերեն՝ ըստ ուրումն թարգմանելոյ 'ի լատինական ոտս յարմարեալս.

"Դատաստանին նշանակ 'ի քիրտն զերկիր համակեսցէ։
Յերկնից գայցէ թագաւոր հանդերձեալ յաւիտեան կալ։
Մարմնով լեալ յանդիման առ 'ի դատել զաշխարհ։
Որով զա՟ծ տեսանիցեն և անհաւանն և հաւատացեալ։
Զբարձրեալն սրբովք հանդերձ 'ի կատարածի անդ դարուց։
Հոգիք մարմնով հանդերձ անդ կացցեն դատիլ 'ի նմէ։
Յորժամ աշխարհ ապալեր թողցի 'ի խիտ մացառս։
Լքցեն մարդիկ զկուռս և զգանձս ամենայն։
Զերկիր լափեսցէ հուր, և զծով և զերկինս։
Հետազօտել խորտակեսցէ զդրունս խաւարին դժոխոց։
Ի սրբոցն մարմինս լոյս տացի բացարձակ։
Այլ անօրինաց բոց ծախիչ անշէջ։
Ի յայտնելն զգաղտնի գործս, խօսեսցի յայնժամ իւրաքանչիւր զծածուկս։
Եւ ա՟ծ 'ի լոյս հանցէ զսիրտս բոլորից։
Եղիցի յայնժամ ողբումն, ատամանց կրճել ամենեցուն։
Կապտեսցի արեւու նշոյլ, և աստեղաց պարք վատնեսցին։
Գալարեսցի երկին, ծագումն լուսնոյ նուաղեսցի։
Զբլուրս խոնարհեցուսցէ, զձորս ամբարձցէ 'ի խորուստ։
Ոչ ևս կայցէ 'ի մարդկայինքս բարձր և խոնարհ։
Լերինք հաւասարեսցին դաշտաց, և ծովու կապուտակ ալիք՝
Համայն դադարեսցեն, և գետին պատառոտեալ կորիցէ։
Աղբիւրք և գետք միանգամայն 'ի հուր բորբոքեսցին։
Այլ յայնժամ փող 'ի բարձանց տիեզերաց գոչեսցէ տխրագին,
Զաղետալին ողբացեալ զգործս, և զվաստակս պէսպէս։
Եւ զանդնդային վիհ ցուցցէ երկիր բացեալ։
Ընդ յանդիման լիցին ա՟ն թագաւորք միանգամայն։
Հոսեսցէ յերկնից գետ հրոյ և ծծմբոյ"։

Ա.յս տունք՝ի լատին թարգմանեալ եղեն ըստ կարի. այլ չեղև մարթ յարմարել զբառ՝ուր ուրեք յունականին սկըզբնատառք էին Χ իփսիլոն. որպիսի են տունքն հինգերորդ, ութևատաներորդ,իննևատաներորդ։ Սակ ընդ ամ են տունք քսան և եօթն. և այս թիւ առնէ զբառակուսի երրեակ հաստատուն։ Վ.անզի երից երեք լինի ինն. և ինն երից կրկնեալ, ի կողմանէ ի վեր կոյս ձգելով, գումարի քսան և եօթն։ Սակայն եթէ զյունական հնգեցունց բառից սկզբնատառան կապեսցես, լինի ՀՒԼԼՈՍ, որ է ձուկն. և այս խորհրդաբար զՔ.ն յայտ առնէ. իբրև զի ի մահ կանացու յայս խոնարհ երկիր՝ իբրև ի խորս ջուրց եկաց կենդանի, այս է՝ զատ ի մեղաց։

Ա.րդ սիբիլլայդ եթէ Ներիթրէա էցէ, եթէ որպէս այլք ոմանք ընտրեն՝ Կումէա, ի բովանդակ տաղի իւրում յորմէ փոքր հատուածդ առեալ է, ոչ մի ինչ նըպաստէ ի պաշտօն աստուածոց ստոց կամ դրօշելոց, նա հակառակ իսկ նոցա և նոցուն պաշտօնատարացն խօսի. մինչ զի այնոցիկ սակի համարելի է՝ որք վիճակեալք են քաղաքին Ա։ Այլ և Լակտանտիոս ինքնին յառաջ բերէ յիւրումն մատենի գուշակութիւնս ինչ յաղագս Սիբիլլայի ուրուն՝ ոչ յայտնեալ զանունն. և զոր նա ցրիւ դնէ, ի մի ժողովել ընտրեցի, իբր բան ինչ երևկան՝ զնորա ի բազում մասունս կարձառօտ յիշատակեալն, օրինակ զայս. “Յանօրէնն ձեռս անհաւատիցն
„ անկանիցի յետ այնր. ածցեն այ ապտակս ձեռօք աղտե-
„ ղեօք. և ի պիղծ բերանոյ արկանիցեն թուքս թու-
„ նալիս. և ի հարուածս տայցէ զարբեանեալ թիկունսն
„ անխռով։ Կռուսիս ընկալեալ կացցէ լուիկ, զի մի ոք ծա-
„ նէցէ թէ Բան է, կամ թէ ուստի եկն առ՝ի խօսել ընդ
„ ստորայինս. և պատկեսցի փշանիւթ պսակաւ։ Կտուն
„ ի կերակուր լեղի, և ի ծարաւին քացախ. զայս սեղան
„ օտարատեցուէ պատրաստեսցեն։ Կու ազգ անմիտ ոչ
„ ծանեաւ զայ ք՝ որ ծիծաղի զխորհրդովք մահկանա-
„ ցուաց. փշովք պսակեցեր, և զգաւն լեղի խառնեցեր։
„ Կ.արագոյր տաճարին հերձցի. զմիջօրէիւս եղիցի կո-

„ չէր խաւարամած ժամն երբս ։ Մահու մեռանիցէ ,
„ երեքօրեայ ըմբռնեալ քնով . և ելեալ յայնժամ՝ի դժո-
„ խոց , առաջին եհեալ՝ի լոյս , ցուցանել կուժեցելոցն զե-
„ բախայրիս յարուԹե „ ։ Օ այսոսիկ վկայուԹիւն սիբիլ
լային՝ի կիր առ Ա ակատտիոս այսր անդր յընԹացս վիճա-
բանուԹե իւրոյ՝ ըստ պահանջիլ իրացն զոր ցուցանելն
կամէր . և մեք ոչ ինչ՝ի ներքս յաւելեալ՝ի մի շար հաւա-
քեցաք , փոյԹ կալեալք ղգլուխն և եԹ որոշել , միայն Թէ
ընդօրինակողք պահել մի զնոց արասցեն ։ Ա ՀԼ յաղագս
Ա յրելԹեայ սիբիլային գրեցին ոմանք՝ ոչ առ ժամանակօք
Հռոմուլոսի լինել , այլ Ջրոյայ պատերազմին ։

ԳԼՒԽ ԻԳ

Ի Թագաւորել Հռոմուլոսի երեսուն եօԹն իմաստունք . և ասն ցեզք Խորայելի գերեցան՝ի քաղդէացւոց . իսկ Հռոմուլոս մեռեալ աստուածական պատիւ ընկալաւ ։

Ա՛ն ԹագաւորուԹիւն Հռոմուլոսի ասի լինել Ա՛ւագիս միղեսացի , մի յեօԹանց իմաստնոց որք զկնի դիցաբան կուե-
ցեալ քերԹողաց , յորս բոլորիցն գերազանց Հոփէոս , ասէ
առ ձայնեցան յունարէն , այս է՝ իմաստունք ։ Ա՛ւ այնու
ժամանակաւ տանեալքն ցեղքն Խորայէլ կուժեցեալք՝ի քա-
ժանիլ ժողովրդեանն , յաղԹահարեցան՝ի քաղդէացւոց ,
և վարեցան գերիք յերկիր նոցա . ետալով՝ի հրեաստանի
երկուցն ցեղից՝ յանուն Ջուդայի կուժեցելոց , որք և զաԹո-
ԹագաւորուԹէն ունէին Ա յրուսաղէմ ։ Ի մեռանել
Հռոմուլոսի՝ քանզի անյայտեալ ծածկեցաւ , յաստուածս
վերագրեցին զնա հռովմայեցիք , որ և աշխարհածանօթ
իսկ է . ուր ցայն վայր դադարեալ էր անպատեհուԹիւնդ .
և որ յետ այնր եղև առ Ա կեսարաւ՝ ոչ՝ի մոլորուԹէ էր ,
այլ վասն զմիտս հաձելոյ . մինչև Ա լեկերոնի գովեստս մեծ
Հռոմուլոսի գրել զի այնպիսում պատուոյ գտաւ արժա-

նապեալ ոչ՝ի կորդ և յանուսումն գաւս՝ յորում դիւրաթաթ
էին մարդիկ, այլ՝ի յարդարուն և հրահանգեալ ժամա-
նակի. Թէպէտ չև ևս իմաստասիրացն անօսր և նրբախոս
լեզուանութիւն ջեռեալ էր և բողբոջեալ՝ այլ սակայն եթէ
յգկնի ժամանակս ոչ եղև աստուածացուցանել զմեռեալ
մարդիկ, բայց ոչ յետս կացին զառ՝ի յառաջնոց կարգեալ-
սըն ունել և պաշտել իբրև աստուածս. այն զի պատկե-
րօք խոկ՝ որ առ հինան անսովոր էր, յաճախեցին զհրա-
պոյրս մնոտի և ամբարիշտ պաշտամանն, այսոցն պղծոց
ազգեղով՝ի սիրտս նոցա, և խաբեպատիր պատգամաք մո-
լորեցուցանելով. մինչ զի և զառաստղեղեալ յանցուածս
անգամ դիցն՝ զանստեղծանելիսն՝ի բարեկիրթ ժամանակ
կի՝՝ի խաղտն կատարել նոցա անպատկառապէս առ՝ի մե-
ծարանս ոչ աստուածոցն, Օ հետ Հռոմոլոսի թագաւո-
րեաց ապա Նումա. որոյ եղեալ՝ի մտի թէ սուտ աստուա-
ծոցն բազմութիւն ամրացուցանել արժան է զքաղաքն զայն,
չեղև արժանի խառնիլ յայն գումարտակ՝ի մեռանել իւ-
րում, այնպէս իմն թուեցեալ թէ խուռն բազմութիւն առ
տուածոց գրաւելով զերկինս՝ տեղի անտանօր ոչ գտանէր
նմա. Թագաւորել սորա՝ի Հռոմ, առ երջանիկս սկիզբն
եղև Թագաւորութիւն Աստանէի, և յամբարիշտ արքայի
անտի սպան եալ սոքա մարգարէն Դանիէլ՝ Ցամս ժամա-
նակի եկաց ասեն և Ամիա սերիլլա՝

ԳԻՒՂԻՍ ԻԵ

Ընդ յիմաստասիրացն երևելիք եղեն՝ի Թագաւորել Տարկունիոսի Պրիսկոսի
առ Հռոմէացիս, և առ երջանիկս՝ Սեռեկիայ, յորժամ առաւ Երուսաղէմ,
և տաճարն քանդեցաւ։

Լուծ՝ի Թագաւորել Աեռեկիայ առ երջանիկս, և առ
Հռոմէացիս՝ Տարկունիոսի Պրիսկեայ՝ որ յաջորդեացն
զԱնկոս Աարտիոս, ՝ի գերութիւն վարեցաւ Ժողովուրդ

Հրէից՝ի Բաբելոն, կործանմանէն Երուսաղէմի և տաճարին կառուցելոյ՝ի Յովսիայէ, Ա՛ստ զի կշտամբեալ մարգարէից վնասս յաղագս անօրէնութեանց և ամբարշտութեանց նոցա՝ նախասացեալին զվնասելոցն, առաւելապէս Երեմիա՝որ և զջախ ամաց գերութենէն բացայայտոյց։ Յայնմ ժամանակի ասեն կացեալ զՊիստակոս միանգի նոցի՝ զիւսն յաօձանց խմաստնոց, և վն այլոց և՛ն հնգից գրե Լսեաբի լնելո՛ի ժամանակին յորում գերի կայր ժողովրդն Ա՛յ՝ի Բաբելոն, զորս յաւելեալ՝ի նախայիշատակեանն Յովգէս և՝ի Պիստակոս, բովանդակեն զեօթն թէն թէ։ Լու էն սոքա Յողոն աթենացի, Վիփոն լակեդեմոնացի, Պերիանդր կորնթացի, Կղեովբոլոս լինդացի, Խիտա պրենացի։ Ընդ ամենն եօթն սոքա խմաստուն անուանեալք՝ Համբաւեցան յետ դիցաբան քերթողացն. զի գովանի քաղաքավարութիւն ինն դեպ վերոյ այլոց մարդկան գտան, այլ և հրամանս ինչ վարուց աւանդեցին կարճառօտ ասացուածովք Ասկայն գրաւորական յիշատակս ինչ ոչ թողին յետնոց՝ բաց՝ի Յողոնէ, զոր մէ ասի օրէնս ոմանս աւանդեալ աթենացւոց. իսկ Յովգէս էր բնախօս, և գիրս ևս եթող իւրոյն վարդապետութեանց։ Իբ Հրէից գերութիւն անուանի երեք բնախօսքն Ինաբսխմանդր և Ինաբսխմենէս և Վսենոփանէս. ժամանակակից է և Պիւթագորաս, յորմէ սկիզբն եղև փիլիսոփոսն անուանակոչութեանն, այն է՝ խմաստասէր։

ԳԼՈՒԽ Ի.Ը.

Ի ժամանակին յորժամ՝է լռանալ եօթանասուն ամաց դիւրութեանն եղև Հրէից գերութեանն, ազատացան և հռովմայեցիք յաթքայական իշխողութենէ։

Ի՛ հռովմէ ժամանակաւ Կիւրոս Պաբսից արքայ՝ որ և իշխեաց քաղդեացւոց և ասորեստանեայց, ընդարձակութեամբ հնարհեալ գերութեանն Հրէից, արար յիմնից հաղա-

քաց՝ի նոցանէ ելանել առ՝ի նորոգումն տաճարին։ Ա՛յն ինչ յառաջին հիմունս ձեռնակեալ էին և զսեզանն ևեթ կանգնեալ, ՚ի վերայ խուժելով Թշնամեաց Հրէիցն՝ ոչ յաջողեաց նոցա յառաջ տանել զշինուածն, խափանած ե֊ղեալ գործոյն մինչև ՚ի Դարեհ։ Ի սոյն յայս ժամանակ դիտան իրքն՝ որ արձանագրեալ էն՝ի գիրս Ցուդէացի. Թէպէտ և ասի ոչ ընդունել զայն Հրէից՝ի կանոն գրոց։ Ա՛րդ առ Դարեհիւս Պարսից արքայիս՝ի գլուխ եղեալ եօթանասուն ամայն ըստ նախագուշակութեանն Երեմիայ, գերեզմանձ եղև Հրէից յաղատութեան, յորում ժամանակի տիրեր հոգւոյն Ջարկուխիոս եօթնեորդի Թագաւոր. զոր և՝ի բաց հանեալ հոգւոյն՝ ազատացան այնուհետեւ՝ի Թագաւորացն հարստահարութենէ։ Այլքն յայս վայր մարգարէք՝ի ժողովրդեան Իսրայէլի. և՝ի բազմացն եղելոց՝ սակաւուց եւեթ կանոնական գիրք գտաւ նիւթ առ Հրեայս և առ մեզ. զորոց խոստացայ՝ի կատարած անցելոյ մատենիւն խօսել ինչ ինչ, և աստանօր՝ի դէպ տեսանեմ կատարել։

ԳԻՒՂԻՒ ԻԱ՚

Յաղագս ժամանակաց մարգարէիցն՝ որոց պատգամք աւանդեալ կան՝ի գիրս, և բազմութ ինչ յաղագս հնութեանցն կոչման յայս արարեալ՝ի ժամանակին յորժամ հոգւոյն տէրութենէ եղև սկիզբն, և ասուրեաստանեայցն վախճան։

Այլ զի չհիգրտել կարիցեմք զժամանակս նոցա, պիտոյ է փոքր մի՝ի վերագոյնս անդր շարժել զբանս։ Ի գլուխս մատենին Ովսեայ մարգարէի, որ նախ դասի յերկոտասանից, գրեալ այսպէս է. «Իսկ տեառն, որ եղև առ Ովսէէ որդի Բերեայ, յաւուրս Ոզիայ և Յովաթամայ և Աքազու և Եզեկիայ՝ Թագաւորաց Յուդայ...։ Այլ և Ամովս գրէ զանձնէ մարգարեացեալ յաւուրս Ոզիայ արքայի. յիշէ և զՅերոբովամ զարքայ Իսրայէլի՝ որ՝ի նոյն աւուրս էր։ Ա՛ս և Հոսէիան որդի կամ Ամովսայ նախ

յիշատակեալդ մարգարէի, և կամ ըստ յոլովից այլոյ համանուն Ամովսայ ոչ մարգարէի, զնոյն չորեսին Թագաւորս յիշատակեալս յՈվսեայ դնէ 'ի գլուխ մատենին իւրոյ, յորոց աւուրս ասէ մարգարէացեալ: Միքէաս դարձեալ յիշատակէ զնոյն ժամանակս իւրոյ մարգարէութեան յետ աւուրց Ոզիայ. քանզի զերիս Թագաւորսն զառ 'ի յՈվսեայ յիշատակեալս յանուանէ դնէ՝ զՅովաթամ և զԱքազ և զԵզեկիա: Զայսոսիկ ահա ժամանակակից մարգարէս գտանեմք 'ի նոցին իսկ գրոցն: Յաւելեալ լինին 'ի սոսա Յովնան առ Թագաւորութեամբ Ոզիայ, և Յովէլ 'ի Թագաւորել Յովաթամայ՝ որ յաջորդեաց զՈզիաս, Թէպէտ և լռեն զերբեանց աւուրս, որով անմարթ էր գտանել 'ի գրոց նոցա, բայց ունիմք 'ի քրոնիկոնսն: Իսկ այս ժամանակք ձգին 'ի Պրոկայ լատինացւոցն արքայէ կամ 'ի նախորդէ նորա յԱւենտինոսէ մինչև 'ի Հռոմուլոս արքայ հռովմայեցւոց, կամ մինչև 'ի սկիզբն Թագաւորութեան յաջորդի նորա՝ Նումայ Պոմպիլեայ: Քանզի Եզեկիաս արքայ Յուդայ մինչ ցայն ժամանակ տիրեաց. ուստի ընդ այն ժամանակս բղխեցին միանգամայն այս աղբերք մարգարէութեանց, յորում ասորեստանեայցն պակասէր Թագաւորութիւն, և 'ի վեր երևեցաւ հռովմէականն. և կարի 'ի դէպ իմն. քանզի զոր օրինակ 'ի սկսանել Թագաւորութեան ասորեստանի եկեաց Աբրահամ, որում եղեն յայտնաբարբառ խոստմունք օրհնելոյ 'ի զաւակի նորա բոլորից ազգաց, նոյնպէս 'ի սկսուածի արևմտայինն Բաբելոնի, առ որոյ տէրութեամբ գալոց էր Քրիստոս՝ լցուցիչ խոստմանցն այնոցիկ, բանայցին պատգամք մարգարէից՝ ոչ բարբառով և եթ, այլ և գրովք 'ի վկայութիւն մեծի գործոյն որ լինելոցն էր: Զի որովհետև իսրայէլեան ժողովրդեանն ոչ պակասեցին երբէք արք մարգարէք, մինչդեռ Թագաւորք կային 'ի նմա, 'ի նոցա պէտս եղեն մարգարէքն, և ոչ 'ի հեթանոսաց: Իսկ յայտնագոյնս արձանանալ մարգարէականն գրութեան՝ որ հեթանոսաց յօգուտ երբեմն լինելոց էր, պատշաճ եղև յայնժամ սկսանել՝ յորժամ կանգնէր քաղաքն իշխեցող ազգաց հեթանոսաց:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Զոր ինչ յաղագս աւետարանին Քնի մարգարէացան Ովսէէ և Ամովս։

ՄԱՐԳԱՐԷՆ Ովսէէ ըստ խորութեան ասացուածոյն՝ նոյնպէս դժուարապատում ունի զիմաստն. բայց և ՚ի նմանէ առնուլ ինչ և դնել աստանօր արժան է ըստ մերում խոստաբանութեան։ Որդ ասէ. «Եւ եղիցի ՚ի տեղւոջ յորում ասացաւ՝ ոչ ժողովուրդ իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք Այ կենդանւոյ»։ Զայս մարգարէական վկայութիւն և առաքեալք ինքնին իմացան ՚ի վերայ կոչման ժողովրդեան հեթանոսաց, որ յառաջն ոչ էր յԱծակողմանն։ Եւ զի այս որ ՚ի հեթանոսացն ժողովուրդ՝ յորդիս Աբրահամու գրեալ է հոգևորապէս, որով իրաւաբար անուանակոչի Իսրայէլ, սորին վասն զհետ բերեալ ասէ. «Եւ ժողովեսցին որդիքն Յուդայ և որդիքն Իսրայէլի ՚ի միասին, և դիցեն իւրեանց իշխանութիւն մի, և ելցեն յերկրէ անտի»։ Եթէ աւելի ևս պարզել կամիցիմք զբանդ, նուաղել իմն լինիցի զօրութեան մարգարէական ասացուածոյն. այլ յուշ լիցի վէմն անկեան, և երկոքին որմունքն՝ մին Հրէից, և միւս հեթանոսաց, այն անուամբ որդւոց Յուդայ ծանուցեալ, և այս յանուն որդւոց Իսրայէլի. որք յիշխանութիւն ՚ի մի հաստատեալք ելանեն յերկրէ։ Իսկ յաղագս Իսրայէլեանցն ըստ մարմնոյ՝ որք այժմ հաւատալ ՚ի Քս ոչ կամին առնուլ, վկայէ նոյն մարգարէ թէ յետոյ հաւատալոց են, իմա յորդիս իւրեանց՝ որ փոխան կացցեն ՚ի մեռանել նոցա. և ասէ. «Զի աւուրս բազումս նստցին որդիքն Իսրայէլի առանց թագաւորի, և առանց իշխանի, և առանց պատարագաց, և առանց սեղանոյ, և առանց քահանայութեան, և առանց յայտնութեանց»։ Ո՞ ոչ տեսանիցէ զՀրէիցն զայժմու զայսպիսի վիճակ. այլ զոր զկնին՝ լուիցուք. «Եւ յետ այնորիկ դարձցին որդիքն Իսրայէլի, և խնդրեսցեն զտէր Ած իւրեանց, և զԴաւիթ

արքայ Իւրեանց. և զօրացին՝ ի տէր և՝ ի բարութիւնս նո-
ցա յաւուրս կատարածի,,: Ձիք ինչ բացայայտապոյն քան
զմարգարէութիւնս զայս, ուր անուամբ Դաւթայ արքայի
նա ինքն Քն նշանակեալ ցուցանի, որ եղիւն՝ ըստ առա-
քելոյ, ՝ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ: Այն մարգարէ
նախածանոյց և զերեքօրեայ յարութիւն Քի՝ ըստ որում
մարգարէականի վեհ նախատացութենն էր վայելչական,
ասելով. “Ողջացուսցէ զմեզ յետ երկուց աւուրց, և յա-
ւուրն երրորդի յարիցուք,,: Քանզի տովին օրինակաւ ա-
սէ ցմեզ առաքեալ. “Նախ յարեայք ընդ Քի, զվե-
րինն խնդրեցէք,,: Ա.յլ և Ա.մովս յաղագս երացս այսոցիկ
մարգարէականայ ասելովն. “Պատրաստեա կարդալ զա-
նուն տեառն այ քոյ Իսրայէլի. զի ահաւասիկ ես եմ որ
հաստատեմ զերկինս, և հաստատեմ զհողմն. և պատմէ
՝ի մէջ մարդկան զօծեալ իւր,,: Նա այլուր ասէ. “Յա-
ւուր յայնմիկ կանգնեցից զխորանն Դաւթի զանկեալն, և
կանգնեցից զկործանեալսն նորա, և զյատակեալսնորա վե-
րստին կանգնեցից, և շինեցից զնա ըստ աւուրցն յաւի-
տենից: Որպէս զի խնդրեսցեն զիս մնացորդք մարդկան,
և ամենայն ազգք՝ յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ,
ասէ տէր՝ որ առնէ զայս,,:

ԳԼՈՒԽ ԻԶ.

Ո՛ր ինչ յայտագս Քի և հիւղեցւոյ գուշակեցաւ Նեսայեայ:

Նաստայուսս մարգարէ ոչ՝ի մատեան երկոտասան մար-
գարէից կարգեալ է, որք փոքր ասին՝ այնու զի քանք նո-
ցա կարճառօտք են, առ հասեմատութիւն այլոցն մեծ կո-
չեցելոց՝ որք ձառս երկայնս աւանդեցին: Ի սոցանէ և
Նասայեաս է. այլ մարգարէութիւն ժամանակակից պոլով
երկուց նախ յիշատակելոցդ՝ յարեմ աստանօր: Ա.րդ սա
՝ի կրտամբել անդ զանօրէնութիւնս, և՝ ի հրամանատրել

զարդարութիւն, գուշակելով յանցուցելոյ ժողովրդեանն զլինելոցն չարիս, մարգարէացաւ յոլով ինչ առաւել քան զայլ մարգարէս յաղագս Քնի և եկեղեցւոյ, այս է՝ յաղագս արքային, և 'ի նմանէ կառուցելոյ քաղաքին. մինչև ոմանց աւետարանիչ յաւէտ՝ քան մարգարէ զնա կարդալ: Բայց չափ եդեալ առաջիկայ գործոյս, զմի ևեթ 'ի բազմացն կարգեցից յայսմ վայրի. քանզի 'ի դէմս այ Հօր խօսելով ասէ. ծբ. ծգ. "Ահաւադիկ 'ի միտ առցէ մանուկ իմ, վերասցի և բարձրասցի և փառաւորեսցի յոյժ: Որ օրինակ զարմասցին բազումք 'ի վերայ քո, այնպէս անշքեսցի տեսիլ քո 'ի մարդկանէ, և փառք քո յորդւոց 'ի մարդկանէ: Այնպէս զարմասցին ազգք բազումք 'ի վերայ քո, և կարկեսցեն թագաւորք զբերանս իւրեանց. զի որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց չիցէ լուեալ՝ 'ի միտ առցեն: Տէր ո՞ հաւատաց լրոյ մերում, և բազուկ տեառն ո՞ւմ յայտնեցաւ: Պատմեցաք առաջի նորա իբրև զմանուկ, իբրև զարմատ 'ի ծարաւուտ երկրէ. ոչ գոյր նորա տեսիլ, և ոչ փառք: Տեսաք մեք զնա, և ոչ գոյր նորա տեսիլ, և ոչ գեղեցկութիւն. այլ տեսիլ նորա անարգ նուաղեալ քան զամենայն որդւոց մարդկան: Այր մի 'ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց. զի դարձուցեալ զերեսս իւր՝ անարգեցաւ, և ոչ ինչ համարեցաւ (այս է՝ համարեալ եղև): Նա զմեղս մեր բառնայ, և վասն մեր չարչարի. և մեք համարեցաք զնա 'ի ցաւս և 'ի հարուածս և 'ի չարչարանս իբրև յայ: Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց: Խրատ խաղաղութեան մերոյ 'ի նմա, և նորա վիրօքն բժշկեցաք: Ամենեքեան իբրև ոչխարք մոլորեալք (էաք). այր 'ի ճանապարհի իւրում մոլորեցաւ. և տէր մատնեաց զնա առ մեղս մեր. և նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր: Իբրև ոչխար 'ի սպանդ վարեցաւ. իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր: Ի խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ. և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ. զի բառնան յերկրէ կեանք նորա. յանօրէնութեանց ժողովրդեան

իմոյ ՚ի մահ վարեցաւ։ Եւ տաց զչարս փոխանակ գերեզմանի նորա, և զմեծամեծս փոխանակ մահու նորա։ Զի անօրէնութի̃ ոչ գործեաց. և ոչ գտաւ նենգութի̃ ՚ի բերան նորա։ Եւ տէր կամի սրբել զնա ՚ի վիրաց անտի։ Եթէ տաջիք զվասն մեղացն, անձինք ձեր տեսցեն զզաւակ երկայնակեաց։ Եւ կամի տէր ՚ի ձեռն նորա բառնալ ՚ի ցաւոց անձին (կամ զանձն) նորա. ցուցանել նմա լոյս, և ստեղծուլ իմաստութե̃բ (կամ իմաստութի̃). արդարացուցանել զարդարն, որ մտադիւրն ծառայեաց բազմաց. և զմեղս նորա նա վերացուսցէ։ Վասն այնորիկ նա ժառանգեսցէ զբազումս, և զաւար հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի ՚ի մահ մատնեցաւ անձն նորա, և ընդ անօրէնս համարեցաւ։ Եւ նա զմեղս բազմաց վերացոյց, և վասն անօրէնութե̃ց նոցա մատնեցաւ„։ Զայսոսիկ յաղագս Ք̃ի։

Այլ յաղագս եկեղեցւոյ լուիցուք զոր զհետն գայ. "Ուրախ լեր ամուլ որ ոչ ծնանէիր. գոչեա և աղաղակեա որ ոչդ երկնէիր. զի բազում են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբւոյն։ Քանզի ասաց տէր, ընդարձակեա զտեղի խորանաց քոց և զորահից քոց. կանգնեա և մի խնայեար, երկայնեա զպաւանդակս քո, հաստատեա զցիցս քո. յաջ և յահեակ թռուսջիր. և զաւակ քո զհեթանոսս ժառանգեսցէ, և զքաղաքս աւերեալս շինեսցես։ Մի երկնչիցիս զի յամօթ արարին զքեզ. մի պատկառեսցես զի նախատեցին զքեզ. զի զամօթն յաւիտենից մոռասցիս, և նախատինք այրութե̃ քո ոչ ևս յուշ լիցին քեզ։ Զի տէր է որ առնէ քեզ զայդ. տէր սաբաւովթ անուն է նորա. և որ փրկեաց զքեզ՝ նոյն ա̃ծ Իսրայէլի ամենայն երկրի կոչեսցի„, այլովքն համդերձ։ Այսոքիկ հերիքասցին. և եթէ կայցէ ինչ մեկնելոյ արժանի, կարծեմ յայտաբան ասացեալքն բաւական են տալ իմաստս նա և հակառակադրաց յակամայից։

ԳԼՈՒԽ Լ.

Զինչ մարգարէացան Միքիաս և Յովնան և Յովէլ յաղագս Նորա կատակին :

ՄԻՔԻԱ մարգարէ 'ի լեառն մեծ առակաւորեալ զՔս , այսպէս խօսի . "Եւ եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն տեառն , պատրաստեալ 'ի գլուխս լերանց . և բարձրասցի 'ի վերայ բլրոց . և փութասցին 'ի նա ժողովուրդք բազումք , և երթիցեն ազգք բազումք և ասիցեն . եկայք ելցուք 'ի լեառն տեառն , և 'ի տուն այ Յակոբայ , և ցուցցեն մեզ զճանապարհս նորա , և գնասցուք 'ի շաւիղս նորա : Զի 'ի Սիոնէ ելցեն օրէնք , և բան տեառն յԵրուսաղէմէ . և դատեսցի 'ի մէջ ժողովրդոց բազմաց , յանդիմանեսցէ զազգս հզօրս մինչև ցհեռաւորս " : Այն մարգարէ նախապատմելով և զտեղին ուր Քս ծնաւ , ասէ . "Եւ դու Բեթղեհէմ տուն Եփրաթայ սակաւաւոր՝ իցես լինել 'ի հազարաւորս Յուդայ . 'ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի , և ելք նորա 'ի սկզբանէ աւուրց աշխարհի : Վասն այնորիկ տացէ զնոսա մինչև 'ի ժամանակ ծննդականին . ծնցի , և մնացորդք եղբարց նորա դարձցին առ որդիսն Իսրայէլի : Եւ կացցէ և տեսցէ և հովուեսցէ հօտի իւրոյ զօրութբ տեառն , և 'ի փառս անուան տեառն այ իւրեանց հաստատեսցին . զի այժմ մեծասցին մինչև 'ի ծագս երկրի " :

Իսկ Յովնան մարգարէ՝ քան բանիւք , առաւել իւրովք կրիւք վասն Քսի գուշակեաց , բացայայտագոյն ևս՝ քան եթէ ձայնիւ բարբառեալ էր զմահ նորա և զյարութն . քանզի առ ինչ ըմբռնիլ նմա 'ի փոր կիտին , և յերիր աւուր գալ 'ի դուրս , բայց զի նշանակիցէ զՔսի զերեքօրեայ զդարձ յանդնդոց դժոխոց :

Յովէլայ կանխասացութիքն ամենայն բազում բանից ունին պէտս մեկնութե՝ առ 'ի լուսաբանելոյ զպատշաճեալսն 'ի Քս և յեկեղեցի . այլ սակայն զմի զայն թո-

ղուլ չկամիմ ղոր և առաքեալք ՚ի գէմս ածին՝ յորժամ ՚ի վերայ հաւատացելոցն Ժողովելոց եկն էջ Հոգին սուրբ ըստ խոստմանն Աստի . ասէ . "Այս եղեցի կեա այսորիկ հե- ղից յոգւոյ իմոյ ՚ի վերայ ամենայն մարմնոյ , և մարգա- բէսացին ուստերք ձեր և դստերք ձեր . և ծերք ձեր երա- զեսցին , և երիտասարդք ձեր տեսլիս տեսցեն . և ՚ի վերայ ծառայից իմոց և ՚ի վերայ աղախնաց իմոց յաւուրն յայնմիկ հեղից յոգւոյ իմմէ ,, ։

ԳԻՒՂԻՍ ԼՂ.

Որ ինչ յաղագս փրկութեն աշխարհի գրեաց՝ կան գուշակեալք յԱրդիսա , ՚ի Նաւում և յԱմբակում ։

ԱՐԵՒՔՈՒՆ ՚ի փոքունց անտի մարգարէք՝ Աբդիսա , Նաւում , Ամբակում , ոչ ինքեանք ծանուցանեն զիւ- րեանցն ժամանակս , և ոչ ՚ի քրոնիկոնսն Եւսեբեայ և Հերոնիմոսի գտանեմք երբ արդեօք մարգարէացան ։ Ա- պաքէն զԱբդիսա դնեն նոքա ընդ Միքիայ , բայց ոչ յայնմ վայրի՝ յորում ժամանակքն նշանակին , ուր Մի- քիայ ժամանակ մարգարէութեն յայտ՚ի նորին գրոցն է . վասն որոյ ՚ի սխալմանէ վայրապար ընդօրինակողացն կարծեմ զայդ լինել ։ Ուստ զայլ երկուս յիշատակեալս չկարացաք գտանել ՚ի մատեանս քրոնիկոնին եղեալս առ մեզ . բայց զի դասեալ են ՚ի կանոնի գրոց , ոչ արժան է անյիշատակ անցանել ։ Աբդիսա համառօտաբան քան զամենայն մարգարէս ըստ չափոյ գրոցն , սպառնայ առ եդոմայեցիս , այն է զարմ Եսաւայ երկրացն անարգե- ցելոյ յերկուց որդւոց Իսահակայ՝ ՚ի Թոռանց Աբրահա- մու ։ Եթէ եդովմայեցւովք իմանայցեմք զՀեթանոսս , ըստ այմ առացուածոյ՝ որոյ ՚ի մանկ իմանի բոլորն , ունիմք ապաքէն ՚ի Պօ առնուլ զոր ընդ այլ բանից ասէ . "Ասայ ՚ի լեառն Սիոն եղեցի փրկութէ , և եղեցի սուրբ ,, ։

և յետոյ՝ի կատարած մարգարէութենէն. “Յե ելլեն ապրեալք՝ի լեռնէ Սիոնի, առնուլ վրէժ՝ի լեռնէն Եսաւայ. և եղիցի տէառն արքայութիւն,,։ Ա՝ան զի այս և՝ր՝ևի արդեամբք կատարեալ յորժամ ապրեալքն՝ի լեռնէ Սիոնի, որ են՝ի Հրեից հաւատացեալքն՝ի Քրիստ, և մանաւանդ առաքեալք, ելին դիմել՝ի լեռն Եսաւայ, առնուլ վրէժ, կամ ըստ այլ ընթերցուածոյ՝ պաշտպանել, իւ, քայց քարոզութիւն աւետարանին ապրեցուցանելով զՀաւատացեալս, զերծեալք յիշխանութենէ խաւարի, և փոխեալք յարքայութիւն՝ի որդի ըստ կարգի բացատրեաց յաւելուածոյն. “Եւ եղիցի տէառն արքայութիւն,,։ Ո՝անզի Սիոն լեառն զՀրեաստան նշանակէ, ուր նախագուշակեցաւ լինել փրկութիւն, և սրբոյն, որ է Քրիստ, իսկ լեառն Եսաւայ՝ Եդոմի է, որով օրինակեցաւ եկեղեցի հեթանոսաց, յոր դիմեցին ապրեալքն՝ի լեռնէ Սիոնի, որպէս զի եղիցի տէառն արքայութիւն։ Ա՝յս միանգամ կատարեալ չէ եր, մնայր ուշեր. իսկ այժմ կատարեալ ո՛՝ի Հաւատացելոց ոչ ձանաչէ։

Իսկ Ա՝աւումայ մարգարէ, և մանաւանդ Հեթ՝ած նոյնպէս. “Ջ՝նջեցից զգրօշելս. և զձուլածոյսն արարից՝ի դերեզման քեզ։ Օ՝ի ահա երագ են՝ի վերայ լերանց ոտք աւետարանչին, և որ պատմէ զխաղաղութիւն։ Տօնեա զտօնս քո, Յուդա. հատո զուխտս քո. զի ոչ ևս յաւելցեն անցանել՝ի հնանալ. ամենայն ջնջեցաւ, մնջեցաւ, և բարձաւ.... Ո՝անզի եղ որ փչէ ընդ երեսս քո, և ապրեցուցանէ՝ի նեղութենէ,,։ Ով ո՛ որ իցէ եղեալն՝ի գժոխոց, որ փչեցէ ընդ երեսս Յուդայ՝ այս է՝ Հրեից աշակերտաց Քրիստոսի սուրբ, ՝ի միտ առնուցու ապաքէն որ յաւրէ բերեցէ զաւետարանն։ Ո՝անզի նորոյ կտակարանին որդւոցն է՝ ունել աւուրս տօնից Տիրոջ նորոգեալս, որ ոչ անցանեն՝ի հնանալ։ Իսկ աւետարանաւն ջնջեալս ահա տեսանեմք զգրօշելսն՝ և զձուլածոյս զսատկելս սուտ աստուածոց, և իբր թաղեալս՝ի մոռացումն. որով և զայս մարգարէութենէն արդիւնացեալ գտանեմք։

Ա՝ռ՝ակուսմայ ասացեալն զի՛նչ այլ՝ քայց զՔրիստի զա-

լուսան տայ ինձեզ. “Պատասխանի ետ ինձ տէր և ա-
սէ. գրեա զտեսիլդ զայդ յայտնապէս ՚ի տախտակս, զի
որ ընթեռնուն՝ համարձակ ընթեռնուցու. զի տակաւին
տեսիլդ ՚ի ժամանակս է. և ծագեսցէ խոսատ, և ոչ յու-
նաիմանալեն։ Նայց եթէ անագանեսցէ, համբեր նմա. զի
որ գալոցն է՝ եկեսցէ, և ոչ անագանեսցէ...»

ԳԼՈՒԽ ԼՂ

Ցաղագս մարգարէութեան՝ որ յաղթեաց և յօրհնութեան Ամբակումայ։

Լոպ յաղթեաց իւրում և յօրհնութենն առ ո՞ այլ խոսի
Ամբակում, բայց առ Աստ տէր ասելով. “Ցէր, զլուր
քո լուայ և երկեայ. տէր Հայեցայ ՚ի գործս քո և զարհու-
րեցայ...» Նչ այս զինչ՝ բայց անձնառ հիացումն է ընդ կանս
խոտեսնող և անակնկալ փրկուչն մարդկան։ Ի միջ երկուց
գազանաց (կամ կենդանեաց) ծանիցես... այս է ՚ի միջ եր-
կուց կտակարանաց, կամ՝ ի միջ երկուց աւազակաց, կամ
՚ի միջ Հռովմէացի և Նդէայի՝ որք ՚ի լերինն խոսեցան ընդ
նմա։ “Ի մերձենալ ամացն յայտնեսցիս՝ ՚ի հասանել ժա-
մանակին երևեսցիս...» Նյս ինքնին մեկն է։ “Խռովել
անձին իմոյ՝ ՚ի բարկութենէ զողորմութիս յիշեսցես... ինքն ա-
ռակէ զԱրեայս՝ զհամագիտ իւր, որոց ՚ի խռովելն և ՚ի
խաչ հանել զԱստ, նա զողորմութենն յիշելով ասաց.
“Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն...» Ոսկ
յասելն “Ես ՚ի թեմանայ եկեսցէ, և սուրբ ՚ի հովա-
նաւոր և յանտառախիտ լեռնէ...» զձայնդ ՚ի ՊեՀմաոյ, այլք
թարգմանեցին՝ ՚ի հարաւոյ. որով մեջբերայ կողմն նշա-
նակի, ջերմութիւն սիրոյ. և Ձառագայթ Ձմարտու-
թեն։ Ոսկ լեառն հովանաւոր և անտառախիտ՝ թէ և
բազմօրինակաբար խմանի, բայց զխորութեն ՀաճախոյՀ
գործն առնուլ ախորժեմ, յորս կայ գուշակութիւն վասն
Ագի. քանզի բազում ինչ անտանօր ստուերաբար են և յոր-

նախեպ , որ գՀաթրցաքննողին միտն հրահանգեն . և ան-
ու գայ Վ[illegible] , յորժամ՝ի գիրս անդ գտանէ զնա որ իմա-
նայն : “ Ո՛ւածկեցեն զերկինս փառք նորա . օրհնութիւ
նորա լի եղիւ երկիր ,, . Ի՛սյ զինչ է՝ բայց՝ի սաղմոսի
ասացեալն . “ Ի՛արձրեալ ես դու յերկինս ՚ա՛ծ . յամենայն
երկրի են փառք քո ,, . և . “ Ձ՛առագայթք նորա իբրև
զլոյս եղիցին ,, . այս է՝ անուն նորա լուսաւորեսցէ զՀա-
ւատացեալս : “ Ի՛յ եղջիւրք՝ի ձեռին նորա ,, . այն է՝
յաղթանակ խաչին : “ Ի՛յ հաստատեաց զսէր սատիկ
զօրութիւն իւրոյ ,, . անկարօտ՝ի մեհենաբանէ : “ Ի՛ջանչի
երեսաց նորա գնասցէ բան . և ելցէ՝ի գաշտս զինի նո-
րա ,, . Ո՛վ ինչ այս իմանի , այլ զի մինչ չէ եկեալ էր՝ նա
խապատմեցաւ . և յետ գառնալոյն աստի՝ աւետարանե-
ցաւ : “ Ի՛կաց և շարժեցաւ երկիրք ,, . եկաց առ՝ի ձեռն
տալ և շարժեցաւ երկիրք առ՝ի հաւատալ : “ Ճ՛այեցաւ ,
և հալեցան աղգք ,, . զթացաւ , և զղջացոյց զժողովուրդ-
դըս : “ Ի՛ երկինք խորտակեցան բռնութիւն ,, . այս է՝ ի զո-
րութիւն աքանչելեաց խորտակեցաւ ամբարձելոցն հպար-
տութիւն : “ Ի՛ր բլուրք յաւիտենականք հալեցան ,, . խո-
նարհեցան առ ժամանակ մի , զի յաւիտեան կանգնեսցին :
“ Ո՛ գնացս նորա յաւիտենական փոխանակ աշխատու-
թեանց տեսի ,, . Հայեցայ , տեսի զի վաստակք սիրոյ ոչ առ
բաժ են՝ի յաւերժական վարձուց : “ Խ՛ոտրանք եմ ոտիւք
ցեղ զարհուրեցան , և խորտնք երկրին Ա՛ռիամբ ,, . ՚ի
լուր աքանչելեաց քոց յանկարծ զահի հարեալ և ազգացն ,
որ ոչ ընդ հնազանդեցելոց աւերութեամբն են , լինկնին՝ի
քաւական ժողովրդեանն : “ Ա՛ՆԷՆ գնասցե բարկացիս տէր ,
կամ սրտմտութիւն քո՝ի վերայ գետոց , կամ ասպատակ քո
՝ի վերայ ծովու ,, . Ի՛յս ասացաւ , զի նա ոչ եկն այժմ՝ի
դատել զաշխարհ . այլ զի փրկեսցէ աշխարհն նովաւ : “ Ո՛վ
ելցես յերկիւղս քո , և հեծեծութիւն քո փրկութիւն է ,, .
այս է՝ աւետարանիչք քո բարձեալ տանիցին գքեզ , ՚ի քէն
իսկ կատավարեալք . և քո աւետարանդ փրկութիւն է հա-
ւատացելոցն ՚ի քեզ : “ Ի՛ արեալ լարեացես զաղեղն քո՝ի
վերայ իշխանութիւն , ասէ տէր ,, . այս է՝ արկցես զսպառ-

նալիս դատաստանաց քոց նա և 'ի վերայ Թագաւորաց երկրի ։ “Գետոց պատառեցաւ երկիր”. այսինքն է՝ 'ի յորդել բանից քարոզողացդ քո՝ բանայցին 'ի քոյդ խոստովանութիւն սիրտք մարդկան, որոց ասացաւ այլուր. “Պատառեցէք զսիրտս ձեր՝ և մի զհանդերձս”։ Զի՞նչ է բանն “Տեսցեն զքեզ ազգք և երկնեսցեն”. բայց զի սգալովն երանելի լինիցին ։ Զի՞նչ է “Սր ցանես զջուրս գնացից”. այլ զի գնալով 'ի նոսա որ զքեզն աւետարանեն ընդ ամենայն կողմն, այսր անդր ցանես զհոսանս վարդապետութեան ։ Զի՞նչ այն. “Ետուն անդունդք զձայնս իւրեանց”. Թերևս խորութիւն սրտի մարդոյն յայտ արար զոր յինքն խորհէր. և այսորիկ բացայայտութիւն է յաջորդն, “Զբարձրութիւն սաստկութեան իւրոյ”. ոչ կալաւ, ոչ ծածկեաց զոր գիտացն, այլ դաւանելովն 'ի վեր բղխեաց ։ “Բարձաւ արեգակն, և լուսին եկաց 'ի կարգի իւրում”. բարձրացաւ եւ Քրիստոս յերկինս, և եկեղեցի կարգեցաւ 'ի ներքոյ Թագաւորի իւրոյ ։ “Գնասցեն նետք քո 'ի լոյս”. այս է՝ բանք քո ոչ 'ի ծածուկ գնասցեն, այլ ակն յանդիման ։ “Ի փայլիւն փայլատականց զինուց քոց”. իմա, գնասցեն նետք քո. զի ասացեալ էր իւրոցն աշակերտաց. “Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի, ասացէք 'ի լոյս”։ “Սպառնալեօք նուաղեցուցեր զերկիր”. այն է՝ ահարկութիւն խոնարհեցուցանես զմարդիկ ։ “Եւ բարկութիւն զիջուցես զազգս”. զի զամբարհաւաճեալսն՝ առ քինալ հարկանես ։ “Ելեր 'ի փրկութիւն ժողովրդեան քոյ՝ փրկել զօծեալս քոյ. արկեր զգլխով անօրինաց մահ”. այսոցիկ պէտք ոչ են մեկնութեան ։ “Զարթուցեր զկապանս մինչև ցպարանոցս 'ի սպառ”. ունիմք իմանալ աստանօր զգեղեցիկ կապանս իմաստութեան, զի ոտք արկանիցին յոտնակապս նորա, և պարանոց ընդ անուր նորա ։ “Խորտակեցեր ապշութիւն զգլուխս բռնաւորաց”. զկապանս չարս ։ “Եւ սասանեսցին 'ի նմա” հիացեալք. ըստ սաղմոսին՝ “Հատեր զկապանս իմ”։ “Բրձակեսցեն զերասանակս իւրեանց իբրև զտնանկ գաղտակեր”. քանզի մեծամեծք ոմանք Հրէից գային առ Քրիստոս զարմացեալք ընդ գործս նո-

բա և ընդ բանան, և քաղցեալք Հաշակեին զՀայ վարդա-
պետութեն ծածկապէս առ ակի Հրեիցն, որպէս և աւե-
տարանն զեկուցանէ, «Հաներ՛ի ծով զերիվարս քո, պըղ-
տորել զջուրս բազումս,» սոքա ոչ այլ ինչ խնամեին՝ բայց
ժողովրդիք բազմաւք. զի եթէ կէսք երկիւղիւք զառ-
նային, և այլք կատաղեալք Հալածէին. յայտ է, թէ ա-
մենեքին պղտորուն կրեին, «Ո՛չ ուշացայ, և զարհու-
բեցայ սիրտ իմ՛ի ձայնէ աղօթից շրթանց իմոց. եմուտ
դողումն յոսկերս իմ, և խռովեցաւ փոր իմ՛ի ներքուստ,»
Հնգնին մարգարէն մնախօսէ լինի հիւր ասացեալն, և
զարհուրի հիւր իսկ աղօթիմն, զոր առնէ մարգարէաբար,
զապառնին՛ի նմանակատեալ. քանզի՛ի խռովել բազմաց
ժողովրդոց՝ եաեւ զգալոց տառապանս եկեղեցւոյ, և ան-
դէն ծանեաւ վինքն լինել անդամ նորա, և ասէ, «Հան-
գեայց յաւուր նեղութեն,» իբրև մի յայնցանէ՝ որք յա-
ւուն ինդիան, նեղութեն Համբերեն, «Յանեալ լինիմ, ասէ,
՛ի ժողովրդ պանդխտութեն իմոյ,» ՛ի բաց մեկնեալ՛ի
կեսասիա ժողովրդենէ, ըստ մարթիոյ ազգակցին, որ ոչ
պանդխտանայ կերկրի սաս, և ոչ վերին Հայրենեացն՛ի
խնդիր է, «Ո՛չ թզենւոյ ոչ տացէ զպտուղ իւր, և մի ե-
ղիցի ծնունդ որձոյ. սակայ բեր ձիթենւոյ, և դաշտք
մի արասցեն կերակուր. պակասեսցեն Հօտք՛ի Հարակոյ,
և ոչ իցեն եղինք՛ի մնուրս,» Կատես մարգարէն՝ զի ազ-
գըն որ ՀՀ սպանանելոց եր, ունէր վերջնաբար կատա-
րութեն Հոգևորական բարեացն՝ զոր կերկրաւոր արգասիս
առակէ ոճով մարգարէականաւ. Կու զի այսպիսւոյ ցաս-
ման այ՝ ներքոյ անկաւ ազգն այն՝ անկաւ գոլով արդա-
րութեն այ, և զիւրն խնդրելով կացուցանել, վասն այն
՛ի վերայ ածէ մարգարէն, «Լաւ ես՛ի տէր ցնծացայց,
և ուրախ եղէց յաձ փրկիչ իմ. Ձեր ած զօրութեն իմ. և
կարգեսցէ զոտս իմ՛ի վախձան. և Հանցէ զիս՛ի բար-
ձունս՝ յաղթել երգով նորա,» այս է՝ երգովն՝ որում նմա
նաձայնս ինչ ասացեալ է՛ի սաղմոն, «Հաստատեաց
՛ի վերայ վիմի զոտս իմ, և ուղղեաց զշնաց իմ. Կաք՛ի
բերան իմ օրհնութեն նոր, օրհնութեն աեառն այ մերոյ,»

Ա՛ման որոյ նա յաղթէ երջով տեառն, որ զնորայն գո-
վեստ՝ և ոչ զիւրն ախորժէ. «Օ՛ի որ պարծին՝ ի տէր պար-
ծեսցի»,։ Ի մատեանս ինչ կայ գրեալ լաւ և՝ որպէս ինձ
թուի. «Աւրախ եղէց յաճ Յիսուս իմ»,. զոր Թարգմա-
նիչք ըստ նշանակութեանն եդին փրկիչ, ոչ պահել զՅի-
սուսդ անուն, զոր մեզ առաւել ախորժելի և քաղցր է
անուանել։

ԳԼՈՒԽ Լ

Ջոր ինչ Նբեմիա և Սոփոնիա խօսեցան յառաջագոյն մարգարէական հոգւով յարգագ գրոյ և վասն կոչման հեթանոսաց։

Նբեմիան մարգարէ՝ ի մեծաց անտի է, որպէս և Նա-
սայիա, և ոչ՝ ի փոքունց իբրև զայլն՝ յորոց սակաւս
ինչ նշանակեցի։ Մարգարէացաւ նա՝ ի Թագաւորել Յով-
սիայ Յորսաղէմ, և առ Դամմայեցիս՝ Մնկոսի Մար-
տիսի, յորժամ այն ինչ Հրեից գերութեի մերձ՝ ի վերայ
կայր. և ժամանել մարգարէութեի նորա ցհինգերորդ ա-
միս գերութենէն, ըստ որում՝ ի նորին գրոցն է տեղեկա-
նալ։ Կից նմին յիշատակէ զՄոփոնիաս զմի՝ ի փոքունց
ցին. զի և նա ասէ զանձնէ մարգարէացեալ յաւուրս Յով-
սիայ. Թէպէտ և չասէ մինչև ցոր վայր՝ Աւդ մարգարէա-
ցաւ Նբեմիաս ոչ միայն ընդ ժամանակս Մնկոսի Մար-
տիսի, այլ և Տարկուինիոսի Պրիսկոսի, որ Դամմայե-
ցւոց հինգերորդ Թագաւոր էր, սկսեալ Թագաւորել նոցա
քան զգերութենէն։ Աւդ՝ ի մարգարէանալն յաղագս
Մնկի ասէ. «Հոգի երեսաց մերոց տէր Մչ. պատեցան
զնովաւ յապականուէ իւրեանց»,։ Աչսպէս համառօտիւք
ցուցեալ զտէր մեր Մչ, և զնոյն չարչարեալ վասն մեր։
Ասացեալ չայլուստ վայրի. «Ա՛յս է յաճ մեր, ընդ որում
ոչ համարեսցի այլ. եգիտ զամենայն Ճանապարհս իմաս-
տութեի, ևետ զնա Յակոբու ծառայի իւրում, և Իս-
րայէլի սիրեցելոյ՝ ի նմանէ. յետ այսորիկ երկրի երևե-

ցաւ, և ընդ մարդկան չդնեցաւ ։ ՚Ո՛յս վկայութիւնք ոչ
կրեմիայի ասեն ոմանք, այլ դպրի նորա Բարուքայ. այլ
կրեմիայի համարեալ է սովորաբար ։ Եւ դարձեալ նոյն
մարգարէ ասէ վասն Քրիստոսի. ՚Ահա աւուրք գան ա-
սէ տէր, և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան.
և թագաւորեսցէ թագաւոր, և ի միտ առցէ և արասցէ
զիրաւունս և արդարութիւն ի վերայ երկրի ։ Յա-
ւուրս նորա փրկեսցի Յուդա, Իսրայէլ բնակեսցէ յոյ-
սով. և այս է անուն նորա՝ զոր կոչեսցէ նմա տէր, Յով-
սեդեկ ի մարգարէս արդարութիւն մեր ։ ՚Ոչ կա-
զագս հանդերձեալ կոչման հեթանոսաց զոր այժմ տե-
սանեմք ի լրումն եկեալ, այսպէս խօսեցաւ. ՚Տէր զօ-
րութեամբ իմ և օգնութեամբ իմ յաւուր չա-
րեաց. առ քեզ հեթանոսք եկեսցեն ի ծագաց երկրի և
ասացեն, ոչ ապաքէն սուտ գործեցին հարքն մեր կուռս, և
ոչ գոյր օգուտ ի նոցանէ ։ Եւ քանզի ոչ էին ձանձրացեալ
գնա՝ ընթեաց, այլ սպանանէր և ուն էին, զդոյն անխոր-
հեաց մարգարէն. ՚Խորհուրդ է սիրտ քան զամենայն. և
մարդ է, և ով ճանիցէ զնա ։ ՚Ոչ մարդ է, և ով ճանիցէ զնա ։ Արա՛ր է և միւս բանն՝
զոր յիշատակեցի յեօթնեւտասաներորդ գիրսն յաղագս նո-
րոյ կտակին, որոյ միջնորդ է Քրիստոս. զի ասէ. ՚Հաւատասիկ
աւուրք գան ասէ տէր, և ուխտեցից տանն Իսրայէլի և
տանդ Յուդայ ուխտ նոր ։ ։ այլոլէքն հանդերձ։

Իսկ ի Սոփոնիայ մարգարէէ՝ որ առ Երեմիայիւ մար-
գարէանայր, զայսոսիկ յաղագս Քրիստոսի զնախատեսեալն
եդից առաջնոյ. ՚Սպասեա ինձ ասէ տէր, յաւուրս յա-
րուցանելոյ իմոյ ի վկայութիւն. զի դատաստանք իմ ի վերայ
ազգաց յըմբռնել զթագաւորս ։ ։ Եւ դարձեալ ասէ.
՚Երևեսցի տէր ի վերայ նոցա, և սատակեսցէ զամենայն
աստուածս ազգաց. և երկիր պագցեն նմա իւրաքանչիւր
ի տեղւոջէ իւրեանց կղզիք ազգաց ։ ։ Եւ յետոյ դար-
ձեալ. ՚Յայնժամ դարձուցից ի վերայ ժողովրդոց լե-
զու յապգս նորա, ի կարդալ ամենեցուն զանուն տեառն,
և ծառայել նոցա նմա ընդ միով ուծով. ի գետոյն եթով-
պացւոց ընկալայց զնոսա ընդ ցրուեալսն, մատուցանիւ-

ցէն ինձ պատարագ ։ Յաւուր յայնմիկ ոչ ամաչեսցես յամենայն գործոց քոց, որովք ամբարշտեցեր առ իս ․ զի յայնժամ զերծից 'ի քէն զչարութիւն ամբարտաւանութեան քո ․ և ոչ ևս յաւելցես մեծաբանել 'ի վերայ լերին սրբութեան իմոյ ։ Թողից քեզ ժողովուրդ հեզ և խոնարհ ․ և երկիցեն յանուանէ տեառն մնացորդք Իսրայէլի „ ։ Սոքա են մնացորդքն նախագուշակեալք յայլում վայրի ևս ․ զոր և առաքեալ յիշատակէ ․ “Եթէ իցէ թիւ որդւոցն Իսրայէլի իբրև զաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք մնասցեն „ ։ Զի այս մնացորդք հրէական ազգին հաւատացին 'ի Քս̃ ։

ԳԼՈՒԽ ԼԳ

Մարգարէութիւնք Դանիէլի և Եզեկիէլի՝ որ հային 'ի Ք̃ս և յեկեղեցի ։

Իսկ առ բաբելացւոցն գերութ̃բ մարգարէացան զառաջինն Դանիէլ և Եզեկիէլ, այլք երկու 'ի մեծագունից մարգարէիցն ․ յորոց Դանիէլ ճշգրտեաց թուով ամացն նա և զժամանակ գալստեան Քս̃ի և զչարչարանացն ․ զոր յերկար է արտայայտել համարողութ̃բ, և յայլոց նախ քան զմեզ աշխատասիրեալ իսկ է ։ Բայց յաղագս իշխանութ̃ե և փառաց նորա այսպէս խօսի ․ “Տեսանէի 'ի տեսլեան գիշերոյ, և ահա ընդ ամպս երկնից իբրև որդի մարդոյ գայր և հասանէր մինչև 'ի հինաւուրցն, և մատուցաւ առաջի նորա ։ Եւ նմա տուաւ իշխանութ̃ի և արքայութ̃ի ․ և ամենայն ազգք և ազինք և լեզուք նմա ծառայեսցեն ․ և իշխանութ̃ի նորա իշխանութ̃ի յաւիտենական որ ոչ անցանէ, և թագաւորութ̃ի նորա ոչ եղծանիցի „ ։

Բայց և Եզեկիէլ նշանակեալ զՔս̃ անուամբ Դաւթի ըստ մարգարէական ոճոյ, իբրև զի մարմին ընկալաւ 'ի զաւակէ Դաւթի, և վասն ծառայական կերպին՝ որով մարդն եղև, ծառայ ևս ա̃յ ասի որդին ա̃յ, այսպիսաբար զնմա-

նէ մարգարէացեալ ծանուցանէ 'ի դիմաց Հօր Այ. «Եւ կացուցից 'ի վերայ նոցա հովիւ մի զծառայ իմ զԴաւիթ, և նա հովուեսցէ զնոսա. նա եղիցի նոցա հովիւ, և ես Տէր եղէց նոցա յԱծ, և Դաւիթ ծառայ իմ իշխան 'ի մէջ նոցա. ես Տէր խօսեցայ»: Եւ այլուր ասէ. «Եւ մի իշխան եղիցի 'ի վերայ ամենեցուն դոցա 'ի թագաւոր, և ոչ ևս եղիցին յերկուս ազգս, և ոչ ևս բաժանեսցին յերկուս թագաւորութիւնս: Զի մի ևս պղծեսցին 'ի կուռս իւրեանց և 'ի գարշելիս իւրեանց, և յամենայն ամբարշտութիւնս իւրեանց. և փրկեցից զդոսա յամենայն անօրէնութեանց դոցա զոր մեղան 'ի նոսա. և սրբեցից զդոսա, և եղիցին ինձ 'ի ժողովուրդ, և ես եղէց դոցա յԱծ. և ծառայ իմ Դաւիթ իշխան 'ի մէջ դոցա. և մի հովիւ եղիցի ամենեցուն դոցա»:

ԳԼՈՒԽ ԼԵ

Գուշակութիւնք երից մարգարէից՝ Անգեայ, Զաքարիայ և Մաղաքիայ:

ՄՆԱՆ երեքին 'ի փոքր մարգարէից՝ որք 'ի կատարածի գերութեան մարգարէացան, Անգէոս, Զաքարիաս, Մաղաքիաս. յորոց Անգէոս համառօտ՝ բայց մեկին զՔի և զեկեղեցի նախագուշակէ բանիւս. «Այսպէս ասէ Տէր ամենակալ. դարձեալ միւսանգամ շարժեցից զերկինս և զերկիր և զծով և զցամաք. և միանգամայն շարժեցից զամենայն ազգս. և եկեսցէ ընտիր ընտիր ընչից (կամ ցանկալին) ամենայն ազգաց»: Այս մարգարէութիւն կէս մի ահա տեսանի կատարեալ, և կէս ակնկալեալ թէ կատարելոց է 'ի վախճանին. քանզի զերկինս շարժեաց վկայութեամբ հրեշտակաց և աստեղաց՝ յորժամ Քս մարմնացաւ. շարժեաց զծով և զցամաք, մինչ 'ի կղզիս և ընդ ամենայն երկիր Քի աւետարանի. այսպէս տեսանեմք զամենայն ազգս շարժեալ 'ի հաւատս: Իսկ որ զկնին,

«Հկեսցի ցանկալին ամ ապրաց .., ակնկալեալ է ի նոսա յեսուսէ գալստեանն . քանզի առ ի ցանկալի լինէլոյ յուսացեալդ՝ պիտոյ էր լինել նոսա սիրելի հաւատացողաց ։

Օ. Ասաբաիաս ասէ ի Վեր ի յեհեզեցի . «Ուրախ լեր յոյժ գուսար Սիոնի , քարոզեա գուսար Երուսաղէմի . ահա Թագաւոր քո գայ առ քեզ , արդար և փրկիչ , նոյն հեզ և հեծեալ ի վերայ էշոյ և յաւանակի նորոյ . և տիրեսցէ ջրոց ի ծովէ մինչև ի ծով , և ի գետոց մինչև ի ծագս երկրի .. ։ Ա. յս Թէ երբ կատարեցաւ այս , մինչև այսպիսի անառանով վարիլ Վեր տեառն ի Ճանապարհի , ահա գոյ ընթեռնուլ յաւետարանին , ուր և յառաջ բերի այս մարգարէն ի մասն , որչափ բաւական էր տեղոյն ։ Հայելով վայրի առ Վեր խոսելով հոգւով մարգարէութեն յաղագս Թողութեն մեղաց արեամբ նորա , ասէ .« Ապա դու արեամբ ուխտի քո արձակեցեր զկապեալս քո յանջրպետէ զբոյ .. ։ Ա. յս և այլ խմաստս մարթի ի յարմարել յայս գուսայլ ինձ Թուի ձանհոգուց օրոնդնշանակել զնորս մարգկային Թշուառութեն զանջատն և զանբեր , ուր ոչ արգաբուսէն հոսանք , այլ տիրմ անօրհնութեն է . զի և ի սաղմոսի վասն այսր ասէ . « Արձան զնս ի գբոյ տառապանաց , ի կաւոյ և ի տղմոյ .. ։

Աղաքիաս զեհեզեցի առաքեալ ի մարգարէութեն , զոր և առաքանէմբ սիրուս տարածեալ Վեռնու , ասէ յայտնապէս առ Հրեայս ի բերանոյ նոյ .« Ձեզ են կամք իմ՝ ի ձէզ՝ ասէ տէր ամենակալ . և զպատարագս ոչ ընկալայց ի ձեռաց ձերոց ։ Օ. ի յարևելից մինչև ի մուտս արևու փառաւորեալ է անուն իմ ի մէջ ազգաց , և յամենայն տեղիս մատչին խունկք անուան իմոյ , և պատարագ սուրբ . զի մեծ է անուն իմ ի հեթանոսս՝ ասէ տէր ամենակալ .. ։ Ա. զդ քանզի զայս պատարագ տեսանելոյ ի նուիրագործեալ քահանայութեն Վեր ըստ կարգին Մելքիսեդեկի՝ ամենայն ուրեք յելից մինչ ի մուտս արևու , իսկ զՀրեիցն պատարագ՝ որոց ասացաւ , ոչ են կամք իմ ի ձէզ , և զպատարագս ոչ ընկալայց ի ձեռաց ձերոց , ինքեանք իսկ զիտեն դադարեալ , առ ինչ ասաց մեան տակաւին այլուամ

քրեստոսի. որովհետեւ մարգարէութիւն զոր ընթերցանուն եւ աւարտեալ տեսանէն, ոչ այլեւ բայց սուաւ ունէր կատարել, Աստղի փոքր ինչ ի վայր ասէ վերոյ ի գիմաց այդ. Վերան իմ ընդ նմա՝ կենաց եւ խաղաղութիւն. ես ետու նմա երկիւղ երկնչել յինէն, և յերեսաց անուան իմոյ խոր շել. օրինք ճշմարտութիւն էին ի բերան նորա, և անօրէնութիւն ոչ գտաւ ի շրթունս նորա. խաղաղութիւն և ուղղութիւն գնաց ընդ իս, և զբազումս դարձոյց յանիրաւութենէ, Օ ի շրթունք քահանային զգուշացին գիտութիւն, և օրէնս խնդրեսցեն ի բերանոյ նորա, զի հրեշտակ տեառն ամենակալի է... Այլ զի հրեշտակ տեառն ամենակալի ասացաւ. Վէ ՛ջ, ոչ զարմանք ինչ էն. քանզի որպէս ծառայ է սակս ծառայական կերպին՝ որով եկն առ մարդիկ, նոյնպէս հրեշտակ կամ պատգամաւոր վասն աւետարանին՝ զոր պատգամաւորեաց առ մարդիկ. զի և յաւետեան ձայնիցն Յովհաննէս՝ անձն՝ պատգամաւոր կամ հրեշտակ լսի, և ես անձն՝ աւետիք բարեաց, Աստղի զնմանէ ասէ դարձեալ. Վէ ՛հա ես առաքեմ զքեզ հրեշտակ իմ. և տեսցէ զձանապարհն իմ առաջի իմ. և յանկարծակի եկեսցէ ի տաճար իւր նորն զոր դուք խնդրէք, և հրեշտակն ուխտի զոր դուք կամիք, Վհաւատիկ գայ ասէ տէր ամենակալ. և ով ժուժկալեսցէ, աւուր մուխ նորա, և կամ ո հանդարտեսցէ յայտնուելն նորա... Վյառաջոր նախաձայնեաց մարգարէն զպալուստ Վէսի զառաջինն և զերկրորդն. զառաջինն յառել ասէ Վէնկարծակի եկեսցէ ի տաճար իւր... այս է՝ ի մարմին իւր, զորմէ ասացն յաւետարանի. Վակեցէք զառաջարդ զայդ, և զերիս աւուրս կանդնեցից զդա... Վակ զերկրորդն ասելով, Վէ ՛հաւատիկ գայ, և ո ժուժկալեսցէ, աւուր մուխ նորա... և այլն. Վյլ որ ասէ, Վտէր զոր դուք խնդրեք... և այլն, յայտ արար ապաքէն թէ Հրեայք իսկ ըստ գրոցն զոր ընթերցանուն՝ զՎէսի խնդրեն և կամին. բայց յոլովք ի նոցանէ ոչ ծանանան թէ եկեն զոր խնդրեն և կամին, զաւրացեաք սրտիւք իւրեանց սակս յաւուրսպոյն յանցանացն, Վակ ուխտ՝ զոր ասէ ի վեր բանիւն, ՎԱխան իմ ընդ

նմա .., և կամ՝ ի վայր յասէին գնա "Հրեշտակ ուխտի .., անեղբարայաբար վնասն ունիմք իմանալ, յորում յաւէրժա կայ են խոստմունքն, և ոչ գիհին՝ յորում ժամանակեայք էին . զոր առ մեծս ինչ գրեալ բազումք խօթամիտք, և վասն այնպիսեացն փոխարինի ծառայելով ՚ի, խոավին ՚ի տեսանելն զամբարիշտս այնոքիւք բարգաւաճեալս : Այո-բին վասն կամեցեալ մարգարէին որոշումն առնել յաւի-տենից երանութենէ նորոյ ուխտին՝ որ բարեգործաց միայն պարգևի, յերկրաւոր բարեկեցուէ հնոյն՝ որ յոլով անգամ ընդհարի և չարագործաց, ասէ . "Ոչ անարացուցիք ինձ զամս ձեր՝ասէ տէր . և ասացիք՝ ՚ի բամբասեցաք զքեզ. զի ասէիք թէ զուր է ամ՝ որ ծառայէ ՚ի . և զի՞նչ աւելի է զի պահե-ցաք զպահպանուիս նորա . և զի գնացաք պաղատանօք ա-ռաջի տեառն ամենակալի : Ոչ արդ մեք երանեմք այլոց, բարեշէն են ամենեքին որ գործեն զանօրէնութիւն . և ընդ-դէմ դարձան ՚ի և կեցին : Այս արանցեցին երկիւղած-քըն տեառն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. և ան-սաց տէր , և լուաւ և գրեաց գիր յիշատակի առաջի եր-կիւղածաց տեառն և որոց սարսեն յանուանէ նորա .., ՚ի գրին զոր ասէ՝ նշանակեալ է ուխան նոր : Ամ զյա-ջորդն լուիցուք . "Ոչ եղիցին ինձ ասէ՝ տէր ամենակալ, յաւուր յորում ես արարիմ փրկութիւն, և փայփայեցից զնոսա որպէս փայփայէ Հայր զորդի զբարւոք ծառայեանն նմա : Ոչ դարձիլք և տեսջիք ՚ի մէջ արդարոյն և ՚ի մէջ անօրինին, և ՚ի մէջ ծառայելոյն ՚ի և ՚ի մէջ չծառայելոյն : Այ ահա եկեսցէ օր տեառն բորբոքեալ իբրև հնոց , և այրեսցէ զնոսա . և եղիցին ամենայն այլազգիք , և ա-մենայն որ գործեն զանօրէնութիւն եղէգն , և վառեսցի զնոքօք օրն որ գալոց իցէ ասէ տէր ամենակալ . և մի ձեսցէ նոցա արմատ , և մի ուրս : Ոչ ծագեսցէ ձեզ եր-կիւղածաց անուան իմոյ արեգակին արդարութիւն , և բժիշկ կութիւն ՚ի թևս նորա . և ելջիք և խայտասջիք իբրև որթք արձակեալք ՚ի կապոյ . և կոխեսջիք զանօրէնս . և եղիցին մոխիր ՚ի ներքոյ ոտից ձերոց յաւուրն զոր ես ա-րարից՝ ասէ տէր ամենակալ .., Ամ ես ասացեալն՝ օր գա-

տաստանի · զորմէ ընդարձակագոյն խօսեսցուք յիւրում տեղւոջ, եթէ կամիցի տէր ։

ՊԻՏԻՈՒ Ա.Ո.

Յաղագս Եզեսայ, և գրոցն մակաբայեցւոց։

Ո.ՏՆԻ երեցունց մարգարէից՝ Ագդէայ, Ո.աքարիայ, Ա՛աղաքիայ, առ ազատուԹ՛ժողովրդեանն՝ի բաբելական ծառայուԹ՛էն գրեաց Եզրաս, որ առաւել վիպագիր անցիցն անցելոց համարեալ է՝ քան եԹէ մարգարէ · զոր օրինակ է և գիրքն անուանեալ Եսթերայ · որոյ անցք գործեցեալք՝ի գովեստ այ ոչ հեւսի գտանին յայսց ժամանակաց։ Ա՛յլ Թերևս մարգարէանալ համարեսցի Եզրաս յաղագս Ա՛ծոյ՝ այսու, զի՝ի լինել խնդրոյ իրիք՝ի մէջ պատահեաց ոմանց՝ Եթէ զի՞նչ լինի առաւել զօրաւոր իցէ, ոմն ասաց զԹագաւորս, այլ ոք զդինի, երրորդն զկանայս՝ որք բազում անգամ իշխեն և Թագաւորաց · բայց երրորդս այս յաւել Թէ յաղԹող քան զամենայն է Ճշմարտութիւն։ Ա՛զդ ըստ բանից աւետարանին զՈ՛չ ձանձրէմք լինել ՃշմարտուԹ՛ի։ Այսմ ժամանակի մինչև յանդրէն կանգնել տաճարին առ Հրեայս՝ ոչ ևս Թագաւորք կացին նոցա, այլ իշխանք մինչև ցԱ՛րիստաբուղոս · որոց հաշիւ ժամանակաց ոչ՝ի սուրբ գիրս որ կանոնականքն ասին՝ գտանի, այլ յայլսն՝ յորս և մակաբայեցւոյն են գիրք · և զայսոսիկ ոչ Հրեայք՝ այլ եկեղեցի առ կանոնականս ունի, ՚ի պատճառս անհնարին և աքանչելի վերամբերուԹ՛ի մարտիրոսաց ոմանց, որք նախ քան զՈ՛չի մարելով Եւրեւումն մարտեան վասն ՃՃայնի օրինաց մահուամբ չարի, և տանջանս ծանուննս և ահագինս յանձն առին ։

ԳԼՈՒԽ ԼԶ

Թէ մարգարէական վաւերականութիւն երիցագոյն է քան զգնաւ վաղեմի իմաստասիրութեանն հեթանոսական։

Այդ յայտ եղև, թէ առ ժամանակօք մարգարէիցս մերոց՝ որոց գրուիքք աշխարհածանօթք եղեն գոգ ցեղս յաւիտեան ազինս, չև և երբեմն էին հեթանոսացն փիլիսոփոք՝ այսպիսւոյ անուան վիճակեալք, զի այդ սկիզբն առ՛ի Պիւթագորայ սամիացւոյ, այն որ յետ աբաքակեայ գերութեանն Հրէից՝ անուանի եղեալ ծանուցաւ. և առաւել այլք յիմաստասիրաց յետոյ քան զմարգարէսն եղեալ ցուցանին։ Վասնզի և Մոկրատէս իակ աթենացի՝ սահմանեցուց զայնր ժամանակաւ հռչակեցելոյն վարդապետ, և՛ ի բարոյականն կամ գործական անուանեալ մասին իմաստասիրութեանն գահերեց, գտանի ապաքէն՝ի քրոնիկոնն զկնի Նզրասայ երևեալ. որպէս յետ սակաւ ժամանակաց ծնաւ և Պղատոն՝ գերազանցեալն յաշակերտս Մոկրատայ։ Այս որս եթէ և զնախագոյնսն յաւելուցեալ զչև անուանեալսն փիլիսոփոս, զեօթն իմաստուհանն ասեմ, և ապա զենախօսսն հետևողս նմա. զեսի՛ի քննութեան բնութեան գոյից, որպիսի եղեն Նշաքսիմանդր և Նշաքսիմենէս և Նշաքսագորաս, և այլք ոմանք երևեալք, մինչև եր Պիւթագորայ զփիլիսոփոսն անուն յանձին բերեալ, և ոչ դոքա հնագոյն քան զՀամարևէս մարգարէս մեր գտանին ժամանակաւ. որովհետև Մադես երիցագոյն քան զայլսն ասի ծաղկեալ՛ի Թագաւորել Հռոմուլոսի. յորժամ յաղթերացն Լծորայելի մարգարէութեն գետ յորդեաց գրուիքն նոցա՝ որք ինաև յինն պահեցան յամենայն տիեզերս։ Նչպատուհասն քերթողք միայն գիցաբան անուանեալք՝ Հոմերոս, Հեսիոդոս, և եթէ այլ ևս որ լեալ իցէ առ Յոյնս, կանխագոյնք ամանակաւ գտանին քան զմարգարէսն եբրայեցիս, որոց

դրեանն պատուէրեալ էն առ մեզ։ Ասկայն և դոքա ան-
գամ ոչ յառաջէկին ժամանակաւ քան զսոյգ ՝ամսիսն
մեր զ՝ովսէս. որ զմի ՝ձմերիան ՝ամ հաւատարար քա-
րոզեաց, և նոքայն գիրք կան այժմ ՝ի գլուխ վաերա-
կան կանոնի։ Ա՝ան որոյ զ՝ենելենացն վարկ կրնելով յո-
րոց լեզուն առաւելապէս աշխարհականն պայծառացաւ
գրականութե՛ն, չտնին ինչ պարծել յիւրեանցն իմաստու-
թե՛ գեղ իրը նախնագոյն գնել, Թող Թե վսեմագոյն
քան զմեր կրօնս, յորում կայ իմաստութե՛ ՝ձմարիտ։
Ա՝այց խոստովանեալ և զայն հաւանիմք, զի Թե ոչ ՝ի յու-
նաստանի՝ այլ առ բարբարոսական ազգս, զոր օրինակ
Ա՝գիպտոս, էր էր կանոնս քան զ՝ովսէս գիանականու-
Թե՛ ինչ իմաստութե՛ նոցա ասացեալ. ապա Թե ոչ՝ ան-
մարթ էր արձանացուցանել ՝ի գիրս սուրբս, Թե վար-
ժեալ էր ՝ովսէս ամենայն իմաստութե՛ եգիպտացոց,
յորժամ ծնաւ անառնօր, և յորդեգիրս ընկալեալ դստեր
փարաւոնի, և մնուցեալ դաստիարակեցաւ ՝ի հրահան-
գըս ազատականաս։ Ա՝ակայն և եգիպտացոցդ իմաստութե՛
չտնի վաղժամանակեայ լինել քան զիմաստութե՛ մերոցս
մարգարէից. իբր զի և Ա՝բրահամ մարգարէ էր. իսկ
որ իմաստութե՛ կայր արդեօք Ա՝գիպտոս՝ մինչդեռ ՝ոմն
գեայ ոչ էր գիրս աւանդեալ նոցա, զոր և ՝ի մեռանելն
կալան ինքեանց աստուածուհի մեծ. և զայն ՝ոմս դուռ
որը ասեն լեալ Ա՝նաքայ՝ որ առաջին Թագաւորեաց ար-
գիացւոց, յորում ժամանակի ծնեալ էին Թոռունք Ա՝բ-
րահամու։

ԳԻ ՅԻՒՍ ԱՅ.

*Թե չքնկալաւ կանոն եկեղեցւոյ զգրաւածս ինչ սրբոց պատց սակս կարի
դնուԹե՛ն, զի մի այնու ընդ ՝ձմարիտն առաջ ՝ի ներքս խառնեսցին։*

Ա՝յլ, եԹե զևս վարկանիցեն յոմանց առնել կասկիծ,
ապաքէն և քան զՀանրականն ջրհեղեղ յառաջագոյն ե-

կաց մերս Աբրահամ, զոր արդարացուցեր իսկ մարգարէ լինել յորջորջել ունիմ. քանզի տապանին զոր կերտեաց, և իւրայոցն ապրեցոյց ի նմա, էր մարգարէութեան մերոց ժամանակացս։ Ո՞ւնչ և եօթներորդն Յովհաննէս ոչ ապաքէն մարգարէացեալ ասի ի կամողիկէ Թղթին Յուդայի առաքելոյ։ Այլ գրուածոց նոցա ընդունելի լինելոյ առ Հրեայս առաւել՝ խափան եղև կարի հնութեանն, այլ վասն կեղակարծելիք դատեցան, մի արդեօք սուտք իբրև ստոյգս ի մէջ կացցեն։ Այսպէս և ինչ ինչ իբրև նոցունց ասացուած յառաջ բերին յայցմանէ՝ որք ըստ իւրեանց մտի զոր կամիցեն, հաւատան. սակայն ողջամիտն կանոն ոչ ընդունի, իբր ոչ եթէ արհամարհեալ զարժանաւորութեանն արանցն Հաւատացելոց ՚ի, այլ զի ոչ նոցա լինել կարծի։ Այս ոչ զարմանք են ընդ կեղակարծս ունել զայնպիսիս՝ որք զրազմաժամանակեայ հնութեանն կրեն զանուն. ուր զի և ՚ի նմին իսկ պատմութեանն Թագաւորաց Յուդայ և Իսրայելի՝ որ անցից անցելոց բովանդակիչն է, և այնոցիկ հաւատս ընծայեմք ըստ կանոնական գրոցն, յոլով ինչ իբր յիշատակին՝ և ոչ պատմաբանին անտանաւոր, այլ ասին գտանել յայլ գիրս ՚ի մարգարէիցն գրեալս, որոց և անուանք ցուցանին յայլում վայրի. այլ սակայն ոչ գոն ՚ի կանոնի՝ զոր ընկալաւ ժողովուրդն ՚ի։ Ոյսպիսիկ պատճառս արդարեւ անգիտանամ. բայց վարկանիմ և եթէ, թէ նոքին իսկ որոց յայտնեալ իցէ հոգին սուրբ զպիտանացուն յաւանդ կրօնից, և ինչ զոր մարգիկն պատմողական պարապմամբ գրեցին, և ի՝ զոր իբր մարգարէ ըստ ՚ի աղէկութեանն. որով այսպիսի լինէր ՚ի նոսա որոշումն, զի առաքինքն համարիցին իբրև նոցունց բանք, և յետինքն ընծայեսցին ՚ի իբր նոքօքն խօսողի. ուստի այնք յաձուին տեղեկութեանցն լինելոյն օժանդակ, և այսք՝ յաւանդ կրօնից. և յայսմ աւանդի պահեալ պահի կանոն. և եթէ արտաքոյ այնր գրուածք ինչ երբեք յառաջ բերցին յանուն մարգարէիցն հնոց, յաձուին իսկ գիտութեանն օգտին ինչ ոչ այնոքիկ. վասն զի անստոյգ է լինել այնոցիկ յորոց անուն վերագր-

չէին. յայլ սակս չէին իսկ հաւատարիմք, մանաւանդ յորս իցէ ընթեռնուլ ինչ ինչ հակառակ հաւատոյ գրոցն կանոնականաց. քանզի յայտնեալ ցուցանի այսու՝ ոչ նոցա լինել ընաւ:

ԳԼՈՒԽ ԼԹ

Թէ եբրայական նշանագիրք կային մինչ յայնմ լեզուի:

Ոչ արժան է հաւանիլ ընդ այն՝ զոր կարծեն ոմանք, թէ եբրայական բարբառն եւեթ պահեցաւ յԷբերն կոչեցեալ նահապետ, յորմէ և եբրայեցիդ անուն, և անտի անց ժամանեաց առ Աբրահամ. իսկ նշանագիրք եբրայականք սկսեալ իցեն յօրինաց՝ որ ՚ի ձեռն Մովսէսի տուան: Այլ առաւել ես նովին աւանդութբ հարց բարբառն զՍԳ. ընդ նշանագրօք պահեցաւ: Իսկ ապա Մովսէս կարգեաց ՚ի ժողովրդեանն իւր վերակացուս ուսման նշանագրաց, մինչ չեւ ծանօթ էին նոքա գրոց ա՟ծային օրինաց. զորս գիրն կոչէ առաջնորդս դպրութե: Ապա ոչ ոք յազգաց ունի յաղագս երկնայնոյն իմաստութենն պարծել ՚ի նանիր առ նահապետօք և մարգարէիւք մերովք, յորս էր իմաստութի ա՟ծայինն, ուր և Եգիպտոս անգամ ունայնապարծն այն ընդ վաղնջականութի իւրոյն ուսմանց՝ ոչ գտաւ յառաջեալ իւրոյին ուսմամբ իմաստութբ քան զիմաստութի նահապետաց մերոց. քանզի չիշխէ ոք քաջահմուտս զնոսա առնել զարմանալի մակացութեց՝ մինչ չեւ ծանօթք նշանագրաց լեալ էին, այս է՝ չեւ եկեալ անդր Իսիդեայ ուսուցչի նշանագրաց: Իսկ պանծալի նոցայն ուսումն՝ իմաստութին վերածայնեալ, զի՞նչ այլ էր՝ բայց առաւել աստեղագիտութի, և կամ եթէ այլ ինչ յայնպիսեաց մակացութեց՝ որ բաւական իցեն ՚ի հրահանգս հանճարոյ՝ քան թէ զմիտս լուսաւորել ճշմարիտ իմաստութբն: Վասնզի ըստ այնմ մասին իմաստասիրութե որ պարապի աւանդել խրատս բնն առ մարդկան երջան-

կութէ, առ ժամանակաւ Հերմէսի եռամեծին կոչեցեալոյ փոխէ կալան ՚ի կողմանն յայնոսիկ, Թէպէտ և կանուխ քան զնմանեսեանս կամ քան զնիւթիմոսիոս յուշատետանի, բայց յետոյ քան զ՚ԼբրահամՀ և զՅաահակ և զՅովսէփ, և քան զ՚Յովսէս գլխովին. ապա զի ՚ի ժամանակին յորում ծնաւ Յովսէս, գտանեմք երևեալ զ՚ուրս գնմանեսեանն աստեղագէտ, զեղբայր Պղատոնի եայ, զի մօրէ հասն Հերմէսի առաջնոյ, որոյ Թոռն եղև Հերմէս եռամեծն,

ԳԼՈՒԽ Խ

Յաղագս առաջի պարծանացն եգիպտացւոց՝ ՚ի հնացուցանել նոցա զիւրաքանչիւր գիտութիւն հարիւր հազար ամաւք։

Լ՚յԱրդ վայրապար չաղակրատեն ոմանք մնոտիապատուաստ մեծաբանութիւնք, ասել Թէ յորմէ հետէ յաստեղագիտութիւն կրթեցաւ Լ՚գիպտոս, աւելի Համարեն քան զՀարիւր հազարս ամաց. քանզի յոր մատեանս Հասու եղեն գորա այսմ Թուականութիւն, որք իբր երկհազարեան ամաք ևեթ յառաջ վարժապետուհի գրոց ընկալան զ՚ինս, Լև գուցեաւ ինչ և յարգ Լ՚արբմի՚ի պատմութիւնս՝ որ զսոյն վիպասանէ, ոչ ինչ անմիաբան եգ Հնմարտութիւնք ածմոյնցն գրոց. քանզի այն ինչ յառաջին մարդոյ անտի՝ որ Լ՚դամն կոչեցաւ, չև էին անցեալ ամք վեց հազար, զիարդ ծաղուս առաւել քան ընդդիմաբանութիւնք չիցեն արժանի որք միանգամ յաղագս միջոցաց ժամանակաց հաւանեցուցանել Հնարին զայնպիսի այլաբանս և Հակառակս ամենայայտ Հնմարտութիւնք. զի որում պատմողի անցելոց իրաց առաւել Հաւատս ընծայեմք՝ քան այնմ որ և զապառնիսն կանխաւ ասացեալ, տեսանեմք յանդիման զնոցին կատարումն։ Լ՚Այնզի և նոյն իսկ պատմագրաց առ միմեանս չիմաբանութիւնք, պատճառս տայ մեզ

իրաւացիք առաւել նմա բերել հաւատս՝ որ չհակառակի
ծագած պատմութեան զոր ընկալեալ ունիմք։ Այլոքն
քաղաքացիք ամբարիշտ քաղաքին սիրելք ամենայն ու-
րեք ընդ աշխարհ լսելի եղեալ անդ զարս դիմաւորս ոչ
արհամարհս ըստ վկայութեանն զի այլազանս լիբերաց ա-
ւանդեն զանցիցն բազմօք տարակացելոց՝ ի մերոցս դա-
րուց, ի վարանս կան՝ ոմն առաւել հաւատալ արժան ի-
ցէ։ Սակ մեք ի պատմութեանէ մերոյ կրօնից սկսեալք ի
վկայութեան ածայիմն, զոր ինչ միանգամ ընդդիմակ ասիմ
գտանի, անեղիք այլազար ընդ սուտս գրեմք, զնարդ և ի-
ցեն այլքն առնոյին յաշխարհական դպրութեանս անդ, որ
թէպէտ ճշմարիտք, և թէպէտ սուտք, ոչ ի ինչ յաղիղ
և կեղծանիկ կենցաղս լինին նպաստաւորք։

ԴԻ ՅԻՍՈՒՍ ԻՒ.

Յաղագս անմիաբանութեան խմաստասիրական կարծեաց, և միաձայնութեան
կանոնական գրոց եկեղեցւոյ։

Աւդացն թողեալ ի բաց զպատմագրական տեղեկուԹիս,
խմաստասէրքն յորոց յայսոսիկ բանս ածեալ եկաք, որոց և
վաստակք ոչ յայլ ինչ թաւնին պարապեալք՝ բայց զի հնա-
րըս հայթայթեն թէ զիարդ քաղաքավարել արժան ի-
ցէ վայելչապէս առ երանութեանն ստացումն, զի՛ և զի տա-
րաիորհրդն էն աշակերտք ընդ վարդապետս, և աշակեր-
տակիցք յիրեարս, բայց այնու զի մարդկօրէն քննեցին
զայսոսիկ մարդկային խորհրդովք և մարդկապէս պատ-
ճառաբանութիբք։ Չորս՝ թէպէտ և անճառապանծն գրե-
գիս տեղի ունիցի, այլ բան զայր ցանկացեալ խմաստաս-
գոյն երևելոյ և նրբատես, ոչ յայլոյ կարծիս լինել եկա-
մուտ, այլ ինքնին գոիչ առանձնային վարդապետութեանէ
և կարծեաց, տակայն հաւանեալ և՝ թէ՝ ի նպատակ տանիք
կամ բազմագոյնք իսկ առ սիրոյ ճշմարտութեանէ յետս կա-

ցեալ իցեն ՚ի վարդապետաց իւրեանց կամ յուսուհնակ-
ցաց, յայն ինչ զոր Հշմարտուհն կարծէին՝ մարտուցեալք,
եթէ արդեամբք այնպիսի էր, և եթէ չէր, զինչ ազդիցէ
արդեօք, կամ յո՞ և իւ առ երանուհնէն Հաստատի ձեռն
տալցէ մարդոյ փանաքուհնէ, եթէ ոչ ածայինն իշխանու-
հնէ վարեալ առաջնորդեացէ։ ՚Ա՛յլ մերոցս մատենագրաց՝
յորս ոչ վարկպարագլխ Հաստատեալ բովանդակի կանոն
սրբազան գրոց, չէք և չէք անմիաբան իւրք յիրեարս գտա-
նել. վասն որոյ յիրաւի ապա ՚ի գրել նոցա զարհուրիկ՝ որ-
պէս ՚ի այ խօսեցեալ առ նոսա կամ նորքօք Հաւատացին՝ ոչ
եթէ սահաւք ոմանք վայրապարք ՚ի դպրանոցս և ՚ի վար-
ժարանս բանակռիւս մերոյս ՚ի քէզ էր նուազունս լինել, մի գուցէ բազմահնէն նուաստանայցէ՝
որ ըստ ածպաշտուհնէն արգոյ լինելոց էր. բայց և ոչ այն-
չափ նուազունք էն, որ չբերիցէ զարմանս նոցայն միանայ-
նուհնէ. իսկ ՚ի բազմուհնէ իմաստասիրաց՝ որք և գրաւոր
երկասիրուհնէ Թողին գլիշատակս իւրեանցն ուսմանց, ոչ
դիւրին է գտանել որք յաճեցան ՚ի կարծիս միախորհք լինել
քեռաս իցեն. զոր յերկար լինի ցուցանել աստանօր։

Ա՛սկ արդ որ առաջնորդ որ իւրաքանչիւր ազանդոյ
այնոցիկ ընդունելի եղև ՚ի դիւաբնակ յայսմ քաղաքի, զի
այլքն օտարաձայնք և ընդդիմակարծք խոտան լեալ իցեն,
Ա՛յ ահա առ աթենացիս շուք ունէին և եպիկուրեանք,
որք ասէին՝ ոչ ինչ հոգս աստուածոց տանել մարդկայնոցս
իրաց. և ստոյիկեանք որք ՚ի հակառակ կարծեաց գնդէին՝
իրացս ամենայնի յատուածոյն օգնականուհնէ և ՚ի ինա-
մելոյ վարել և կալ յակաստանի։ Ա՛ ամն որոյ է ինձ զար-
մանս առիմ՝ արդեօք մնհու պարտ եղև Ա՛նաքսագորաս
սակս ասելոյ նորա զարեգակն՝ վէմ հրաբորբոք՝ և ոչ աս-
տուած. ուր ՚ի նոյն ՚ի քաղաքի պատուասիրեցաւ Ա՛պի-
կուրոս և եկեաց յանհոգս, որ ոչ միայն զարեգակն և կամ
զնի որ յաստեղսյ Համարեր աստուածս, այլ և զԱ՛թոս ինք-
նին և բնաւ զայլ աստուածս չընակել ասէր յաշխարհի,

և ոչ Տպյցուածոց և պաղատանաց մարդկան առնոսա Տա-
սանել։ Ալ անդ ՝ի նմին վայրի Աբիսախպոս՝ որ զբարին
Ծայրագոյն առդնեը ՝ի մարմնոյ հեշտութենէս, անդ Աչսո-
թենէս՝ որ Տոգւոյ առաքինութենէն առաւել Տամարեը
զմարդոյ երանութենէ, երկու փիլիսոփաք ականատեսք, և
երկոքին սակրատեանք, որք յայլևայլ դէմս դիմադիմ կատա-
բածս Տաստատեին զլռութեան կենաց, յորոց և առաջինն ու-
սուցանեը թէ առն իմաստնոյ արժան է խորհել ՝ի պետու-
թէ, և երկրորդն՝ թէ վարել զպետութէն։ և այսպէս այր
իւրաքանչիւր Ժողովեր առնեը աշակերտս իւրեանն ազգին
դոյ։ Ալանզի յայտնապես ՝ի նշանաւոր սրահս աթենաս ՝ի
վարժանոցս, ՝ի պարտիզկունս, ՝ի Տրապարակաչէնս և յա-
ռանձնայինս գունդագունդ իւրաքանչիւր ՝ի պայքար գայ-
ին ըստ իւրեանցայնկ կարծեաց, ոմանց զմի առելով աշ-
խարՀ, և այլոց՝ զանթիւս։ և զմին զոմն ոմանց ասել
սկզբնաւոր, և ոմանց՝ անսկիզբն։ կէսք՝ թէ վախճան առ-
նուցու, և կէսք՝ յաւէրժակաց էսկ։ ոմանք թէ ածային
Տանձաւով, և այլք ՝ի բախտէ և ըստ դիպոյ տնտեսել,
Ալն որք անմահ զՏոգիան ասացին, և են՝ որ մահկանա-
ցուս։ և անմահութենն ուսուցողք՝ ոմանք թէ յանապատնս
փախաբերին, և այլք՝ թէ ոչ քնաւ։ իսկ ասողացն մահկա-
նացու՝ ոմանք դնեն եղծանելի անդհն ՝ի մարմնոյն բաժա-
նումն, այլք՝ թէ կեան այլ ևս սակաւ կամ յերկար, այլ
ոչ միշտ։ Ո կատարած բարւոյ ոմանք ՝ի մարմնի սահմա-
նեցին, կէսք յոգւոջ, այլք յերկոքանչիւրսն։ ոմանք և զար-
տաքինսն բարիս յաւելին ՝ի Տոգի և ՝ի մարմին։ Ալմանք
Համարեցան թէ մարմնոյ զգայութենէց միշտ Տաւատալ ար-
ժան է, այլք թէ ոչ միշտ, այլք թէ ամենևին ոչ քնաւ։
Ալ արդ զայսոսիկ և զայլսն ևս իբր անթուելի զիիլիսո-
փայիցն գժտութիս որ Ժողովրդ արդեօք, որ առեան
ծերոց, որ իշխանութէն կամաւագութէն Տաստակաց փոխ
կալաւ ՝ի քէնին արկանել, զՀաւանեալսն ընդունել և զիո-
տանսն բացամերժել, և ոչ ՝ի Տակառակին՝ անքննաբար
և խառնիխուռն յիւրումն ծոցի տարաբ զվիճմունս մար-
դոց Տակառակողաց՝ ոչ ՝ի խնդիրս անդոց և տանց, կամ այ-

ըզ ընչից ստացուածոց, այլ իրաց այսպիսեաց՝ որովք կեալ
է Թշուառ, կամ եբանելը. և թէ և կայից ՚ի նոսա ինչ
ինչ. Չէմարիտ ասացեալք, բայց նոյնպէս համարձակ և
սուտքն ասացեալ լինէին. մինչ զի ոչ յանպատճառս ինչ
խորհրդեամբ զ՚տաբեղնի ընկալաւ զանուն քաղաք այսպէս
ոչ, զի ՚տաբեղն խառնակուն Թարգմանի. ըստ որում կարծեմ ասացեալ է մեր յայլոմ վայրի. ՚տակ սատանայի՝ որ
այնմ քաղաքի Թագաւոր է, ոչ փոյթ ինչ է հերձանիլ ՚ի
միմեանս դիմամարտ մնըրուԹիք՝ այնոցիկ զորս ըստ աւ-
ժանեաց բազմապատիկ և պէսպէս ամբարշտուԹեն միօ-
րինակ ստացեալ ունի.

Ո՚այց սակայն ազգն այն, այն ժողովուրդ, այն քաղաք,
այն պետուԹի, իսրայէլեանքն այնոքիկ՝ որոց հաւատա-
ցան պատգամըն այ, ոչ իւիք զմարգարէսն սուտ ընդ Ձըշ-
մարիտսն անխտիր խառնակեցին. այլ զմիասորհն և՚ե՝
և զոչ յիմիք տարաձայնեալսն Ձանազէին և ունէին առ
իրաւաբան մատենագիրս սրբազան տառիցն: Ոսոքա էին
նոցա փիլիսոփոսք, այսինքն իմաստասէրք. սոքա իմաս-
տունք, սոքա ՝ձօպախօսք, սոքա մարգարէք, սոքա ուսու-
ցիչք բարեկրօնուԹե և ՁօպալաւուԹե. Որ միանգամ ոք
ըստ նոցա խորհեցաւ և կենցաղավարեցաւ, ոչ ըստ մարդ-
կան՝ այլ ըստ ՚ոյ որ նոքօքն խօսէր, խորհեցաւ և եկեաց:
Ո՚յնպիսիսք եԹէ սեղմնակապուԹի արգելաւ, Ձօ արգել, ՈեԹէ ասացաւ, պատուեա զՀայր քո և զմայր քո,
Ձօ հրամայեաց: ՈեԹէ ասացաւ, մի՛ ընար, մի՛ սպանաներ, մի՛
գողանար, և այլք այսպիսի, ոչ չըԹունք մարմնեղքն՝
այլ պատգամք Ձօնակիք արտայայտեցին. Ո՚ր ինչ փի-
լոսոփայք ոմանք խառն ընդ սուտ կարծիս իւրեանց՝ մար-
Թացան և զՀմարիտ ինչ նշմարեալ, և զան բազմասա-
տակ պատՃառաբանուԹե հաւանեցուցանել աշխատ է-
ղեն. իբր այն Թէ Ձօ արար զաշխարհս, և նա տեսչու-
Թե մատակարարէ, և կամ յաղագս առաքինականն հա-
մեստուԹե, յաղագս սիրոյ հայրենեաց, յաղագս հաւա-
տոց բարեկամուԹե, յաղագս բարեպարիշտ գործոց, և
այլոյն ամենայնի առ բարեկրօնուԹենն պատշաձելոց,

զրոս և անգիտանային իսկ՝ լինչ վախճան և որով օրի-
նակաւ վերածել պարտ էցէ զամենայն , այդոքիկ ասեմ
աւանդեցան ժողովրդեան որ յերկինսաւոր քաղաքի՝ լոկ
մարգարէական ածախօս բարբառովք , թէ և ՚ի ձեռն
մարդոյ , և ոչ բանամարտիկ ապացուցիւք հաստատեալ.
որպէս զի որ ՚ի միտ առնուս զայնս , զահի հարկանիցի սր-
համարհել իբրև ՚ոչ պատգամ, և ոչ մարդոյ հանճար :

ԳԼՈՒԽ ԽՌ.

*Ըստ անեսսուէ եածային նախախնամութեն սուրբ գիրք հնոց կանոնացոյց
յեղան ՚ի յոյն բարբառ՝ ՚ի գեանաւորութեն թագաւորին :*

Ո՛ՐՔՈՒԶԱՆ գիրս զայսոսիկ մի ունի և ՚ի պտղոմեան
Թագաւորաց Եգիպտոսի ձանաչել փոյթ յանձին կալաւ ,
և առ իւր ունել . Վասն դի յետ Աղեքսանդրի մահուդո-
նացաւ՝ մեծն անուանելոյ՝ հրաշացուցիչ , այլ կարճատև
իշխանութենն , որով զՈ՚ոլիա ողջոյն և զամենայն դոդ ոյս
երկիր նուաձեալ էր նորա՝ կէս մի գինուոյ բռնութեր , և
կէս ահարկութեր , յորում ժամանակի ընդ այլ ազգս էլեայս
մտեալ կալաւ և գՀրէայսան , ՚ի մեռանել նորա՝ դայեակ
որգիք իւր փոխանակ խաղաղութեր բաժանելոյ յինքեա-
նըս զաբքայութեր զայն համատարած՝ ցիր և ցան յայէտ
կացուցին պատերազմայ աւերածովք . և Ա՛ղեքսոս սրբա-
զոմեանքն Թագաւորք կալան զՀրէաս . որոց առաջին որ-
դի Պ՛ագոսի՝ գերութեր բազում խաղացոյց ՚ի Հրէաս-
տանեայ Ա՛ղեքսոս : Օ՛ նա փոխանորդեալ միւս Պտղոմէոս
եղբայրասէրն մահձայեալ, զամենեսին ղգերեվարեալսն
յառաջնոյն՝ եթող անդրէն յազատութիւն . յաւել և
պարգեւս արբայականս առաքել ՚ի տաճարն այ , ինդրեալ
Ա՛ղեազարէ այնր ժամանակի քահանայապետէ մատու-
ցանել ինքեան զմատեանսն զոր ՚ի Համբաւոյ ծանուս
ցեալս ՚ոճայինս լինել , որոյ վասն ունել ցանկայր զնոյնս

յիւրակերտն բազմազան մատենադարանի։ Իսկ զի յեբրայական լեզու առաքեաց զնոյնս քահանայապետն, խնդրեաց Թագաւորն Թարգմանիչս, և առաքեցան ծերք եօթանասուն և երկու՝ յերկոտասան ցեղից անտի՝ որք քաջագէտք երկաքանչիւր լեզուի, եբրայականին՝ և յունականին. յորմէ և սովորութիւն կալաւ՝ եօթանասնից յորջորջել զնոցայն Թարգմանութիւն։ Այլ ապաքէն զրոյց այնպիսի հրաշալի միաձայնութեան իմն ածայնոյ եղեալ 'ի բանս նոցա, զի ուր առանձինն իւրաքանչիւր միայնիկ պարապէին յայս գործ, կամեցեալ Թագաւորին այսու 'ի վերայ կալ հաւատարմութեան նոցա, ոչ 'ի միում բանի՝ Թէ և նոյնանշանակ և համեմատ, և ոչ 'ի շարս բանից գտաւ զանազանութիւն յիրերաց, այլ իբր միոյ ուրուք Թարգմանչի՝ նոյն մի էր Թարգմանեալն յամենեցունց. քանզի և արդեամբք մի հոգի էր յամենեսին 'ի նոսա։ Իսկ մեծի այսմ ածահրաշ պարգևի յայն սակս եղեն բաժանորդք, զի արդոյ ընծայեսցի այսու զօրութիւն մատենիցն՝ ոչ իբրև մարդկայնոց, այլ որպէս արդարև ածեղինաց, 'ի շահ յապա հաւատալոցն ազգաց, զոր և տեսանեմք 'ի գլուխ ելեալ։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս վաւերականութեան եօթանասնիցն Թարգմանչաց՝ որ քան զայլ ամենայն Թարգմանութիւնս նախադասելի է, անթերի մնալով պատուոյ եբրայական բնագրին։

ՔԱՆԶԻ եղեն կացին և Թարգմանք այլ՝ որք յեբրայեցի բարբառոյ 'ի յոյն փոխաբերեցին զածաշունչ գիրս, որպէս Ակիւղաս, Սիւմաքոս, Թէոդոտիոն, զոր օրինակ է միւս այլ յանծանօթ մատենագրէ և անանուն, վասն այն՝ հինգերորդ Թարգմանութիւն կոչեցեալ։ Սակայն զեօթանասնիցն իբր մի միայն գոլ՝ այնպէս ընկալաւ

եկեղեցի, և զայն 'ի կիր առնուն յունականացն ժողովուրդք քրիստոսադաւանք, յորոց բազումք և գիտեն ոչ ինչ՝ թէ կայցէ այլ թարգմանութի։ Ի թարգմանութէ ատի եօթանասնից յեղաւ և 'ի լեզու լատինական, զոր ունին Լատինացն եկեղեցիք։ Իսկ առ մերով ժամանակաւ եկաց Հերոնիմոս երէց՝ այր յոքնիմաստ, տեղեակ երեցունց եւս լեզուաց, որ 'ի լատին բարբառ յեղաշրջեաց զնոյն մատեանս ոչ 'ի յունականէն՝ այլ յեբրայեցւոյն. և թէպէտ զայս գծրաւոր փաստիւ նորա հարազատ եւս լինել հաստատեն Հրեայք, և եօթանասնից թարգմանչաց վրիպակս ընծայեն 'ի բազում տեղիս, սակայն եկեղեցիք Քի ոչ զմի զոք նախամեծար դասին քան զվկայութի բազմաց արանց ընտրելոց յայն 'ի մեծ գործ յԵղիազարայ քահանայապետէ. զի թէ և ոչ միոյ հոգւոյ ածային ազդեալ էր 'ի նոսա, այլ ըստ մարդկան սովորութե խորհրդակիցք միմեանց լեալ էին 'ի վերայ բանից թարգմանութեն, որպէս զի ամենեցունց համոյ թուեցեալն կացցէ, տակաւին ոչ օրէն էր զմի ոք թարգման առանձին՝ վերոյ նոցա դնել։ Այլ քանզի ածազդեցիկ ներգործութեն ոչ գոյզն նշանակ 'ի նոսա երևի, արդարև ո՛ որ այլ թարգման գրոցն այնոցիկ յեբրայականէն յայլ զինչ և իցէ բարբառ գտանիցի ճշգրտաբան, այնպիսին կամ համաբան լինի եօթանասնից թարգմանչաց, և կամ եթէ այլաբան տեսանիցի, խորհուրդ իմն մարգարէական անտանոր հաւաստալ արժան է։ Նման զի հոգի որ 'ի մարգարէսն էր 'ի բարբառել նոցա, նոյն և յեօթանասունս արան էր 'ի թարգմանել նոցա. որ և կարող էր ապաքէն ածայնովն իշխանութբ ասել և զայլ ինչ, որպէս թէ նորին մարգարէի ասացեալ էր զերկոսին. իբրև զի երկուն եւս նորին հոգւոյ լինէր ասացած. կամ զնոյն զմի այլազգաբար ասել, որ զի թէ ոչ նոյն բանք, բայց իմաստք նոյն յայտնեսցին քաջ մտառուաց. և կամ թողուլ ինչ, և այլ ինչ յաւելուլ, զի եւս այսու ցուցանիցի՝ ոչ մարդկային ծառայութբ յաջողեալ գործոյդ այդմ, բանիցն հարկ արկանելով թարգմանչին,

այլ առաւել ՝ածային տէրութիւն , որ զհարգմանչին միտս ընդոյր և վարէր : Իսկ ոմանք համարեցան թէ արժան իցէ գյուեանական օրինակս եօթանասնիցն թարգմանութեան ուղղադրել յերբայականացն . բայց ոչ իշխեցին հատանել՝ զոր յերբայականն չկայր , և եօթանասունսն եղէն . այլ յաւելին միայն զգաւառսն յերբայականն , և զլեղեասն առ եօթանասունս . և զնոյնս աստեղաձև նշանօք ոսկւոյ ծանուցին ՝ի գլուխս տանցն , որ և այն նշանք աստղ կամ աստեղանիշ կոչին : Իսկ զորս յերբայականն պակասեալ՝ կային յեօթանասնիցն , նշանակեցին նոյնպէս ՝ի գլուխս տանցն առկողեալ գծիւք , որ կոչին յօբելևկք , կամ բրգաձևք կամ շամիւրք . և ի տեսանել օրինակս բազմաց՝ և և լսոիկականս սփռեալ ամենայն ուրեք այսպիսի նշանիւք : Իսկ որ ոչ թերատ և ոչ աւելորդ , այլ այլօրինակ ասացեալն էն , և այսոքիկ կամ տարբերը իմաստս առնիցեն ոչ օտարոտիս , և կամ այլով բանիւ իմաստս զնոյն արտայայտիցեն , չէ մարթ ՝ի վեր համնել՝ բայց առ միմեանս համեմատելով զերկաբանչիւր օրինակս : Վ ան որպ լեթէ որպէս պարան է՝ ոչ այլ ինչ ինդրիցեմք ՝ի գիրսն՝ բայց զոր հոգին ոյ ասացեալ է ՝ի ձեռն մարգկան , զոր միանգամ գոյ յերբայականսն՝ և ոչ յեօթանասնիցն , չկամեցաւ նա ասել զայն ՝ի ձեռն սոցա , այլ՝ի ձեռն մարգարէից . և զոր առ եօթանասունսն կայ և ոչ յերբայական մատեանս , նոքօք կամեցաւ առաւել նոյն հոգի՝ քան թէ սոքօք , ցուցեալ այսու օրինակաւ զերկաբանչիւրսն լինել մարգարէս : Վանզի այսպէս ահա զայլ ինչ ասաց Հայեաւ , և այլ Հրեմայիւ , և այլ ՝ի ձեռն այս և այն մարգարէի , և այլաբանաբար զնոյն բանս ՝ի ձեռն սոցա կամ նորա ասացեալ որպէս և կամեցաւ : Իսկ որ յերկաբանչիւրսն նոյն գտանի , երկոքումբքն կամեցաւ ասել մի և նոյն հոգի . բայց այնպէս իմն , զի նոքա յառաջեցին մարգարէանալով , և սոքա զհետ չոքան մարգարէօրէն զնոսա թարգմանելով . զի որպէս ՝ի նոցա Հնմարիտ և միաբան առասպութենն՝ մի հոգին խաղալուածք ազգեաց , նոյնպէս ՝ի սոսա՝ առանց ընդ միմեանս

բանաձնաց լինելոյ , իբր՝ի միջի քերանոյ Թարգմանելով զամենայն , մի և նոյն հոգի յայտնեաւ ցուցաւ ։

ԳԻ ՅԻՒՍ ԽՕՐ

Ջխաղք իմանալ պարտ է յայտգս կործանման ներհակացուց, որոյ պատճառիքը յերբայեցի մառեանն Ձգի ընդ քառասնօրեայ ժամանակ, իսկ յեօթանասնիցն երեքօրեայ համառօտակաւ գնի ։

Ա՛յլ ասիցէ ոք . ես գիտացից՝ զինչ արդեօք Յովհաննու ասացեալ իցէ առ Նիկոդեմոսիս , միթէ ահա երեք աւուրք՝ և Քրիստոս կործանեսցի , Թէ քառասուն աւուրք . զի ո՞ր չեւանէ Թէ անմարթէ էր զերկուս եւս ասել մարգարէին յայնմ ժամու , որ առաքեալն էր ահ արկանել քաղաքին մեռանելոյն կորստեանն գուժիւ . որոյ Թէ աւուրն երրորդի պահեալ էր աւերուին , ապա ոչ եւս քառասնիցն . և եթէ քառասնից , ոչ եւս երրորդին ։ Զրգ ես Թէ լինէն ոք հարցանիցէ , զի յայնցանէ Յովհան ասաց , զերբայականին ընթերցուած առաւել համարիմ , ահա աւուրք քառասուն՝ և Քրիստոս կործանեսցի ։ Օ՛ի եօԹանասունք յետոյ ուրեմն առեալք՝ի Թարգմանել կարող էին ասել այլազան ինչ՝ բայց՝ի նոյն իրս և՝ի նոյն իմաստս անկասուր , նշանակութեամն ևեթ գոլով այլ և այլ . միտս տուեալ ընթերցողին՝ զի պահելով զերկաքանչիւրոցն չարչ , ՚ի պատմականէ անտի ամբառնայցի հետազօտել զայն՝ յորոյ ՚ի նշանակ պատմութիւնն իակ գրեցաւ ։ Վասն զի իրագործեցան այնոքիկ ՚ի Քրիստոս քաղաք , բայց զայլ ինչ եւս օրինակին գերազանցեալ քան զՀանգամանս քաղաքին . որպէս գործեցաւ այն՝ զի Յովհան մարգարէ եղև զերիս աւուրս ՚ի փոս կիսին , սակայն նշանակեաց և այլումն լինել երեքօրեայ ՚ի խորս գժոխոց . որ տէրն է ամենայն մարգարէից , Քրիստոս իրի եթէ այն քաղաք իրաւապէս յառակ գայ եկե-

ղեցւոյ հեթանոսաց մարգարէական օրինակութ̃, իբր կործանեալ ապաշխարութ̃, ոչ և ս կալ այնպիսի՝ որպիսի էրն, և զի Ք̃սիւ կատարեցաւ այս յեկեղեցի հեթանոսաց, զորոյ Նինուէ բերէր զօրինակ, ապա և քառասուն աւուրբքն, և երիւքն՝ նոյն մի Ք̃սն օրինակեցաւ. քառասնօրեայ՝ զի նոյնչափ վարեցաւ ընդ աշակերտաց իւրոց յետ յարութ̃ն և վերացաւ յերկինս, և Երեքօրեայ՝ զի յաւուր երրորդի յարեաւ. իբր այն թէ ընթերցողին 'ի պատմութիւն ևեթ անցիցն գործեցելոց ուշ ունողի, ձայն տայցեն եօթանասունքն թարգմանիչք նոյն և մարգարէք՝ անձին զգալ և հետաքննել զխորս մարգարէութ̃ն, ասելով իմն. 'ի քառասուն աւուրսն խնդրեա զայն՝ զոր և յերրորդումն գտանել կարիցես. զայն 'ի համբարձմանն նորա գտցես, և զայս 'ի յարութ̃ն: Որոյ վասն երկաքանչիւր ևս համարով ճահողապէս նշանակեցաւ այս, նորին միոյ հոգւոյն ասելով զմին 'ի ձեռն Յովնանու մարգարէի, և զմիւսն եօթանասնից թարգմանչացն մարգարէութ̃: Ապաքէն խորշիմ յերկարութ̃է, ոչ կամեցեալ յոլովագունիւք ցուցանել թէ յորս միանգամ եօթանասունք թուին օտարանալ յեբրայականն ճշգրտութ̃է, 'ի բարւոքն մտաւել՝ համիմաստք գտանին: Ուստի և ես իմովանն զգուշութ̃ զառաքելականացն շաւղաց զհետ երթեալ, որպէս նոքա յերկոցունց իսկ՝ յեբրայեցւոց և յեօթանասնից առին վկայութ̃ս մարգարէականս, իրաւունս համարեցայ 'ի կիր առնուլ զերկաքանչիւրն, զի մի են և ա̃ծայինն: Այսուհետև որ մնացեալն է մեզ՝ բովանդակեսցուք ըստ մարթելոյ:

ԳԼՈՒԽ ԽԱ

Յետ նորոգութեան տաճարին պակասեցին առ Հրեայս մարգարէք, և անտի մինչև 'ի ծնունդ Քնի տառապեցան 'ի վիշտս անդադար, զի յայտնի լինիցի թէ այլոյ տաճարի շինութիւն խոստացեալ էր 'ի բանս մարգարէիցն ։

Յետ դադարելոյ մարգարէից 'ի հրէական ազգին՝ անշուշտ վատթարացաւ վիճակ նորա, ուր ինքն ակն ունէր 'ի նորակերտիլ տաճարին զկնի բաբելական գերութեն 'ի լաւագոյնսն վայելել. քանզի այսպէս իմանայր մարմնախոհն այն ժողովուրդ զնախաճառեալն 'ի ձեռն Անգեայ մարգարէի. «Մեծ եղիցին փառք տանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն»։ Բայց թէ նա զայս ասէր յաղագս նորոյ ուխտին, եցոյց փոքր ինչ յառաջ՝ յայտնապէս զՔս խոստանալով, յասելն. «Եւ միանգամայն շարժեցից զամենայն ազգս, և եկեսցէ ցանկացեալն ամենայն ազգաց»։ Յորում վայրի եօթանասունն թարգմանք զայլ իմաստս արտայայտէին մարգարէական բնն ազատութբ՝ առաւել մարմնոյն՝ քան զլխոյն պատշաճեալ. այս է՝ եկեղեցւոյ առաւել, քան Քրիստոսի. «Եկեսցեն ընտրեալքն տն յամենայն ազգաց»․ այսինքն է՝ մարդիկ, զորոց Յիսուս ասէ յաւետարանին. «Բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք»։ Քանզի այնպիսի ընտրելովք յազգաց շինի տունն այ 'ի նոր ուխտին վիմօք կենդանեօք, մեծափառագոյն ևս քան զտաճարն կանգնեալ 'ի Սողոմոնէ արքայէ, և նորոգեալ յետ գերութեն ։ Սորին ադադաւ ապա յայնմ հետէ զուրկ 'ի մարգարէից եկաց ազգն այն, և բազմազան հարուածովք նեղեցաւ յօտարազգի թագաւորաց, և 'ի նոցունց իսկ 'ի հռոմայեցւոց, զի մի կարծիցէ լռութին լինել մարգարէութեն Անգեայ 'ի նորոգութեն տաճարին ։

Յետ ոչ բազում ժամանակի անցանելոյ՝ նուաճեցաւ ազգն 'ի յարձակել Աղեքսանդրի. որում ոչ իշխեցեալ

նոցա զդէմ ունել, առանց իրիք աւերածոյ խաղաղութիւն անկան ընդ նոքա ծառայութիւն. սակայն փառք տանն այնորիկ ոչ եղեն՝ որչափ էիւնն ընդ ինքնիշխան տէրութիւն բնիկ Թագաւորաց իւրեանց։ Ի՝ղբքսանդր մնասցեց ապաքէն պատարագս ի տաճարին այ, իբր ոչ եթէ ուղիղ ածպաշտութիւն ի նորին պաշտօն գրաւեալ, այլ ամբարիշտ ունայնութիւն հաստատակորով ինն սուտ աստուածոցն վնաս վերագրելով։ Ո՞հետ այնը Պաղեստինոս որդի Պ՝ագոսի՝ զոր յիշատակեցի վերագոյդ, յետ մահուն Ի՝ղբքսանդրի՝ գերիս ի նոցանէ վարեաց Յ՝դիպատոս, զորս յաջորդ նորա Պաղեստինոս եղեալ պատերազմեաց ընդ Արաբիոն, յորոյ ձանիցն յաջողեաց ունել մեզ զգիրս եօթանասնից թարգմանչաց՝ զոր յառաջ պատմեցի։ Յետոյ ակնարկեցան ապա մարտիւ պատերազմաց, զոր մակաբայեցւոցն մատուանք յայտ առնեն. յետ այնորիկ ըմբռնեալք գտան ի Պաղեստինայ աղեքսանդրացւոցն արքայէ՝ որ Յ՝նտիոքայ Ք՝որոց արքայէ՝ ի կուռն պաշտօն տիպեալք բազմապատիկ գառն տանջանօք, մինչ զի և տաճարն իսկ նոցա լցաւ պղծութիւն հեթանոսականացն. այլ քաջարի առաջնորդ նոցա Յ՝ուդա Մ՝ակաբէ վերածայնեալ՝ զզօրավարս Ք՝նտիոքայ վանեալով, սրբեբեաց զպէս ի բոլոր դիցակրօն գաւառութիւնէ։

Իսկ յետ սակաւուց Յ՝ակիմոս ոմն իշխանասիրութիւնբեբեալ, օտար ի քահանայականն գոլով ցեղէ, եկաց քահանայապետ ըստ ոչ օրինաց։ Ք՝այս յետ իբր ամաց յիսնից անցանելոյ՝ յորս թէ և իւիք իւիք աջողակըն գործեցան, այլ խաղաղութիւն ոչ էր նոցա գլխովին, նախկին թագ ընկալաւ առ նոսա Ք՝րիստոբուղոս, եղեալ Թագաւոր և քահանայապետ։ Ո՞ի յառաջ քան զայս ի դարձն գերութեանն Բաբելոնի և ի նորոգելոյ տաճարին՝ ոչ եղեն նոցա Թագաւորք, այլ առաջնորդք կամ իշխանք, թէպետ այլ Թագաւոր էս ունի կոչիլ իշխան՝ սակս հրամանատարութեան, և առաջնորդ՝ ի գլուխ կալով զօրաց. բայց ոչ ամենայն որ իշխան է կամ առաջնորդ՝ իսկ և իսկ Թագաւոր ասիցի, որպիսի սոյն այս Ք՝րիստաբուղոս եղև։

Օ՜ սա փոխանորդեաց Աղբքանդը, Թագաւոր՝ նոյն և քահանայապետ, զորմէ պատմի անվթացեալ յիւրմն Տղատակ. ապա կին նորա Աղբքանդրա եկաց դշխոյ Հրեից, և յայնմ հետէ չարիք մեծամեծք եկին հասին նոցա. քանզի որդիք Աղբքանդրայ դշխոյիս Աքիտաբուղոս և Հիւրկանոս՝ ի վեղ եկեալք ընդ միմեանս սակս տիրանելոյ, զՀռոմայեցւոցն զինս գրգռեցին՝ ի վերայ խռովել Արեան ազգին, ձեռն օգնականութեամբ՝ ի նոցանէ խընդրելով Հիւրկանեայ հակառակ եղբօրն, ի ժամանակին յայնմ նուաճեալ էր Հռոմ զԱրեան, նուաճեալ էր զյունաստան, և ընդարձակ իշխեցողութիւն յայն ևս կողմանս աշխարհի՝ ոչ կարացեալ գոգցես տանել ինչ ինքեան, յերեսի կայր առ՝ ի յիւրմէ մեծութենէն, ի վերայ հասինն առանձին խռովութիւնք ծանուցք, և ապա մարտք առանձնաւորք, զինի և քաղաքականք. այնչափ ինն վտանգեալ և խորտակեալ, մինչև փոխելոյ հասարակաց պետութենէն՝ ի թագաւորական տեսչութիւն դառն բացեալ էր. Աղդ Պոմպիոս իշխան փառաւորագոն հռովմական ժողովրդեան՝ զորս մոռեալ՝ ի հրեաստան կալաւ զքաղաքն, երաց զառաջնոն՝ ոչ աղաչաւորի կամաք, այլ իրաւամբք յաղթականի. և՝ի սրբութենէ սրբոյն՝ ուր քահանայապետին ևեթ մտանել օրէնք էր, մտեալ ինքն ոչ իբր պատուագիր, այլ ոտնհարս. և՝ի քահանայապետութենէ հաստատեալ անդ զՀիւրկանոս, և պահապան կարգեալ նուաճելոյ ազգին զՆեթխտարոս, զորս յայնժամ գործակալս կոչէին, առեալ տարաւ ընդ իւր զԱրիս տարուղոս կապեալ. Յայնմ հետէ եղեն Հրէայք հարկատուք Հռոմայեցւոց. յետ այնր և Պասխոս առ յաւարի զառաջն. և զՀետ ամաց սակաւուց սպժանի գտան նոքա ունել Թագաւոր այլազգի զՀերովդէս, առ որոյ Թագաւորութենէ ծառ՝ Արտ՝ Ա ման զի եկեալ իսկ էր լըրումն ժամանակին մարգարէական հոգւոյն սպասաւորեալ՝ ի բերանոյ նահապետին Յակոբայ. “Ա՝ի պակասեցի իշխան Յուդայ, և մի պետ յերանաց նորա. մինչև եկեսցէ նա որոյ իւրն է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն

հեթանոսաց ,, ։ Ար. Եբ. 10 ։ Այլա՞ւ ուրեմն ոչ պակասեաց Հրէիցն իշխան՝ի յուգայեանց՝ միւնդ ցայս Հերովդէս , զոր առաջին ընկալան Թագաւոր այլազգի . և եր իսկ ժամանակ եկաւորելոյ այնմ օրում պահեալ կայր խոստումն նորոյ կտակին , լինել նմա ակնկալութիւն հեթանոսաց ։ Իսկ անմարթ էր հեթանոսաց ակնկալել գալստեան նորա , զոր օրինակ տեսանեմք ակն ունել գալոյ նորա՝ի գատել փառաւք զօրութիւք , եթէ ոչ նախ հաւատային՝ի նա՝ յորժամ եկն և յանձն էառ լինել ընդ դատաստանաւ խնամարհականն համբերութիւք ։

ԳԻՒՒՈՒՍ ԽՕ.

Ցաղագս Ծննդեան փրկչին մերոյ՝ որով Բանն մարմին եղև , և յազգս ցրման Հրէից ընդ ամենայն ազգս՝ ըստ նախ գուշակութեանն ։

Ա՛ՐԴ՝ի Հերովդէ Թագաւորէն՝ի վերայ հրէաստանի , և յայլափոխիլ առ Հռովմայեցիս կարգի հասարակացն պետութեան , իբրև տիեզերակալէր Օգոստոս կայսր , և նովաւ յանդորրու կայր աշխարհ , ծնաւ Փրկիչ ըստ նախայիշատակեալ մարգարէութեանն՝ի Ներեթ-ղեհէմ Յուդայ , մարդ յայտնի՝ի կոյս մօրէ , և ՚ած ծածկեալ յայ չօրէ . զի այնպէս նախահաճառեաց մարգարէն . ։ Ա՛յս կոյս յղասցի և ծնցի որդի , և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ , որ թարգմանի՝ ընդ մեզ ՚ած ,, ։ Որ և յանձն իւր փառաւորելով զ՚ած , հրաշագործեաց բազումս , յորոց զոմանս ևեթ մատենագրէ աւետարանականն գրութիւն , օրշափ բաւական Թուեցաւ առ՝ի զՓրկչագործելոյ ։ Աքանչելեացն այնոցիկ առաջինն զի ծնաւ Հրաշափս . և վերջինն՝ զի մարմնոյն՝ի մեռելութիւն յարուցեալ վերացաւ եւ յերկինս ։ Իսկ Հրեայք առ՝ի սպանանել զնա կամեցան , և առ՝ի հաւատալն անկամեցան , որ զի պարտ էր նմա մեռանել և յառնել , ողորմելիս իւն Հարան՝ի*

հռովմայեցւոց անտի, և յիւրեանցն Թագաւորելէ՛ ուր
օտարազգիք այն ինչ տիրէին նոցա, խլեալք խապա և
յրուելք ընդ աշխարհս, զի չէք տեղի ուր չգտանիցին, զրովք
իւրեանց տան վկայութիւն Թէ զոր վասն Աշոի են մարգա-
րէութիւնք՝ ոչ մեզէն ինչ արուեստակեցաք. և՝ի նոցունց
իսկ յոքունք՝ի միտ առեալ և յառալ քան զաւրացանան,
և առաւել ևս յետ յարութեն նորա հաւատացին, ըստ ո-
րում նահան գուշակեալ էր. "Աշոի եղիցի ժողովուրդն
Իսրայէլի իբրև զաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք միայն
ցներս,, Իսկ այլքն կուրացան. զորոց յառալ ասացաւ. "Աշ-
ղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, ՚ի հատու-
ցումն և ՚ի գայթակղութիւն և յապաւարեացին աչք նոցա, զի
մի տեսցեն. և զթիւնեանոցա հանապազ կորացո,, Աշ ՚է՝
Աորին վասն յորժամ մերոց գրոցս ոչ հաւատան, իւ-
րեանցն կատարի առնոսա՝ զոր կոյր զկուրացն ընթեռնուն.
գուցէ արդեօք ՚ի քրիստոնէից հնարեալ ասիցէ ոք զմար-
գարէութիւնն վասն Աշոի՝ որք յանուն սիբիլլայի կամ այլոց
ուրուք երբէք յառալ բերին, որք և ոչ հայկն առ ժողո-
վուրդն հրէական. Աայլ մեզ չատ է որ ինչ առեալ բերին
՚ի մատենից Թէնամեաց մերոց, զորս և Ճանաչէմքն սակս
այսր վկայութեանն զոր տան մեզ ակամայ, ունելով և պահե-
լով զնոյն մատեանս, իբր զի ցրուեալ ևն և ինքեանք ընդ
ամենայն ազգս, ուր միանգամ ընդարձակի եկեղեցի Աշոի,
Աանզի կանխեաց և զայսմանէ մարգարէութէ՛ ՚ի սաղ-
մոն ծէ. զոր և ընթեռնուն, այսպէս գրեալ ունելով. "Աշ
իմ, ողորմութէ՛ նորա կանխեսցէ առ իս. և նա իմ ցցցէ
ինձ ՚ի Թշնամիս իմ, Աի սպանաներ զնոսա, զի մի մոռա-
ցին զժողովուրդս քո. ցրուեա զնոսա զօրութեանդ քովդ,
Աի որպ եցոյց ած եկեղեցւոյ՚ի Թշնամիս նորա՝ի Հրեայս
զողորմութէ՛ Հնոյն. զի որպէս առաքեալ ասէ. Հռ. ժ. 11.
"Արդ յանցանաքն փրկութիւն հեթանոսաց,, Այս ոչ
սպանանէ զնոսա, այս է՝ ոչ ջնջէ ՚ի նոսա զորս Հրեայքն
էն, Թէպէտ և նուաճեալ կոխան եղեն՚ի հռովմայեցւոց.
որպէս զի մի մոռացեալք զօրհնս այ անպիտանք լինիցին
՚ի վկայութէ՛ իրացն՝ զորմէ խօսիմք. նմին իրի փոքր հա-

մարեալ զոր ասացի՝ յաւել ՚ի վերայ “ցրուեա զնոսա„, զի եթէ միայն յերկրի իւրեանց մնային ամսոյիսի գրովք վկայութեն, և չլինէին ամենայն ուրեք, ոչ կարէր ապաքէն եկեղեցի՝ որ ընդ ամենայն տեղիս է, վկայս զնոսա ունել ՚ի բոլոր աշխ՝ մարգարէութեցն որ վասն Քրիստ են նախասաւետեալք։

ԳԼՈՒԽ ԽԶ։

Աբգիսէ նախ քան զթրխամանէութեն ժամանակս կայցն ամենք ոչ խոսակցեցեալ, որք վճռակիցք լեալ էին երկնաւորը քաղաքին։

ԱՅՍՏ եթէ կայցէ օտարազգի ոք՝ որ չիցէ սերեալ Հրեայսէ, և բան նորա չիցէ ՚ի ժողովրդենէն առաջի ընկալեալ ՚ի կանոն սուրբ գրոց, այլ մարգարէացեալ իցէ գրել իրս ինչ յաղագս Քրիստոսի, և ՚ի մեր ծանօթութենէ և կեալ իցէ կամ գայցէ, կարող եմք ապաքէն յիշատակել զայն իբր լուկ յաւելուած ինն։ ոչ եթէ կարևոր ինչ համարեցուք, թէ և պահասէր։ այլ զի ոչ յանդիմանս ինչ կարծի՝ թէ եղեն և յայլ ազգս անձինք՝ որոց յայտնեալ իցէ այս խորհուրդ, և զնոսին նախագուշակել ազդումն լեալ իցէ նոցա, եթէ ինքեանք բաժանակիցք հնոցդ գտեալք իցեն, և եթէ անբաժան, այլ ուսեալք ՚ի հրեշտակաց յառաջագոյն, զորոց գիտեմք թէ յանդիման խոստովան եղեն զՔրիստոս, զոր Հրեայքն չճանաչէին։ և ոչ կարծեմ թէ իշխեցեն ասել Հրեայքն՝ ոչ զոր բաց յիսրայէլացւոց յաճախ կոյս կողին ընտրեալ յորմէ հետէ զատաւ սերունդն Քրիստոսի, կոթող, յանարգել եղեալ նորա երիցս։ Վճանզի թէ կայր արդարեւ իբր տիրապետ ժողովուրդ՝ այ կռնէցեալ, ոչ այլոք էր։ սակայն ուրանալ ոչ կարող են թէ գտանիցին և յայտար ազգս մարդք վճռակեալք առ Աստուածիմ խոստացեալ եանսն քաղաքացիս վերնայինն հայրենեաց՝ երկնային հաղորդակցութենէ և ոչ երկրայինն։ զի եթէ յուբաստ լինի-

ցին, յանդիմանելին վաղվաղակի օրինակաւ սրբոյ և սքան- չելի առն Յովբայ, որ ոչ բնակածին էր և ոչ եկամուտ յաւելեալ 'ի ժողովուրդն Իսրայելեան, այլ յեդովմայեցի ազգէ սերեալ, անդ ծնաւ, անտանօր մեռաւ. և յա՟ծայ- ինն բարբառոյ այնպիսի իմն գովութ՟ի ընկալաւ, զի արդա- րութ՟են մասամբ և ա՟ծպաշտութ՟են ոչ ոք 'ի ժամանակի մարդկանէն գոյր նմին զուգահաւասար։ Եւ թէպէտ զնորա ժամանակն 'ի քրոնիկոնսն ոչ գտանեմք, բայց 'ի նորին գրոցն՝ զոր երբայեցիք յիրաւի ընկալան 'ի կանո- նական հաստատութ՟ի, գոյ իմանալ՝ յերրորդում ազգի կրսեր լինել նմա քան զՅ՟ակոբ։ Ոչ ինչ յերկուանամ այն- պէս տնտեսեալ առ 'ի յա՟յ, զի միով այսու գիտակ լինի- ցիմք գտանիլ նա և յայլ ազգս այնոցիկ՝ որք ըստ ա՟յ քա- ղաքավարեալք հաճոյացան նմա, վկայեալք 'ի հոգևո- րն Երուսաղէմ։ Իսկ այս մի ուրեք շնորհեալ կարծիցի, բայց այնմ որում յայտնեալ իցէ յա՟ծուստ մի միջնորդն ա՟յ և մարդկան՝ մարդն Ք՟ս Յ՟ս, որ քարոզեալ լինէր սրբոցն առաջնոց իբր գալոց 'ի մարմնի, զոր օրինակ մեզ քարո- զեցաւ եկեալ. որպէս զի մի և նոյն հաւատք որ նովաւ՝ առ ա՟ծ տանիցեն զամենեսեան զկարգեալսն 'ի քաղաքն ա՟յ, 'ի տունն ա՟յ, 'ի տաճարն ա՟յ։ Իսկ որոց և է այլոց մարգարէութ՟իք յաղագս շնորհացն ա՟յ որ 'ի Ք՟սիւ Յ՟սիւ թէ 'ի մէջ բերին, համարիցին արդեօք առ 'ի քրիստո- նէից յերիւրեալ. նմին իրի չիք այլ առաւել ազդոյ առ 'ի յաղթահարելոյ զօտարսն՝ եթէ ընդ այս հակառակութ՟ի բերիցեն, և կամ 'ի մեզ դրաւելոյ՝ եթէ ողջամտիցին, քան թէ իբր ա՟ծային նախաձայնութիւնս յառաջ բերի- ցեմք զայնս և եթ՝ որ 'ի հ՟րէից մատեանս դրոշմեալ կան. որոց խախտեալ 'ի բնիկ իւրեանցն կայից, և սակս այսր վկայութ՟են վանեալք ընդ աշխարհ ողջոյն, աճեաց յա- մենայն ուրեք եկեղեցի Ք՟սի։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Մարգարեական Աղեկայսեր են, մեծ եղիցին փառք տանն ետ քան զառաջինն, ոչ ի նորոգութենէ տաճարին կատարեցաւ, այլ յեկեղեցի Քրիստոսի։

Այս տուն ետ առաւել է փառօք քան զառաջինն զսոյն՝ զկերտեալն ի փայտից և ի քարանց և յայլոց ևս նիւթոց պատուականաց և ի ձուլից. ուստի ոչ ի նորոգման տաճարին լուաւն եառ մարգարէութենէ Աղեկայ, Այանզի յորմէ հետէ նորոգեցաւ այն, ոչ ցուցանի բնաւ առաւել լագունի հասեալ փառաց քան զոր առ Սողոմոնիս. Նա զի նուազուն ևս փառաց նորա երևիցի նախ գադարմամբ մարգարէութենէ, և ապա մեծամեծ հարուածովք ազգին մինչ ցյետին կործանումն՝ որ ի հռովմայեցւոցն գործեցաւ. որպէս ի նախ ասացելոցն յայտնի ցուցաւ. Իսկ այս տուն նորոյ ուխտի այնչափ առաւելեալ է փառօք, որչափ լաւագոյն են վէմքն կենդանիք՝ որոց հաւատովք և նորոգմամբ նշանակեցաւ այս տուն. վասն զի այնոր չինուածոյ նորոգումն՝ ըստ մարգարէական բարբառոյ (Եփ. Ե. 10. էր նշանակ այլոյ ուխտի՝ նոր անուանելոյ. վասն որոյ յասէ՝ այ մարգարէին, "Ահա ի տեղւոջդ յայդմիկ տաց խաղաղութիւն,, օրինակական տեղեաւն գոյ զնուաւ օրինակեալն իմանալ. և զի նորոգեցելոյնն այնու տեղեաւ նշանակեցաւ եկեղեցի՝ որ Քրիստոս հանդերձեալ էր շինել, ոչ այլ միտս տայ ասացեալն, "ի տեղւոջդ յայդմիկ տաց խաղաղութիւն,, եթէ ոչ՝ տաց խաղաղութիւն ի տեղւոջն՝ որում այդ տեղի նշանակ է։ Այսն զի նշանակէն ամենայն Թուէն իմն զնշանակելոց իրացն բերել զդէմս. որպէս առաքելոյ ասացեալ. "Այն էին եր ինքն Քրիստոս,, իբր զի վէմն զորմէ այդ ասացաւ, զՔրիստոս նշանակէր։ Զայդ փառք տանս այս նորոյ ուխտի՝ մեծ էն քան զտան ուխտին հնոյ. և յայնժամ երևեսցի մեծ՝ յորժամ կանգնեսցի. զի յայնժամ "Լկեսցէ ցանկացեալն ամենայն ազ-

գաց ,, . որպէս ունի եբբայական ընթերցուածն . վասն զի նորայն առաջինն գալուստ չև եւս էր ցանկացեալ յա-
հնային ազգաց . զի յոր չևն էին հաւատացեալ ոչ գի-
տէին ուր ցանկալն պարտ էր : Այս և յայնժամ ըստ ես-
թանանիցն Թարգմանչաց , որ և այն է իմաստ մարգա-
րէական , “ Լիկեսցեն ընտիրքն տեառն յամենայն ազ-
գաց ,, : Արդարեւ յայնժամ եկեսցեն ընտիրքն միայն ,
զորոց ասէ առաքեալ . “Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յա-
ւաջ քան զվէմեն աշխարհի ,, . զի Հաւատարապետն ինք-
նին որ ասացն , “ Խազումք են կոչեցեալք , և սակաւք
են ընտրեալք ,, , ունի ցուցանել Թէ ոչ յայնց կոչեցելոց
որք եկին՝ բայց ի ինջոյիցն արտաքսին , այլ յընտրելոց
անտի չինի տունն՝ որում չիք այլ ևս կոթծանմանին խո-
Թալ : Լակ յայժմուս՝ յորժամ գտանին լեկեղեցիս նոյն-
պիսիք ևս , որոց լծնիցի որշումն հոսմամբ իբր ի կալն ,
ոչ այնչափ երևին փառք տանս այսորիկ , որչափ երևես-
ցին՝ յորժամ որ միանգամ իցեն անդ , միշտ իցեն ։

ԴԻՅԱԽՍ ԽԱԹ

Ցաղագս անխոնջ բազմութեանն եկեղեցւոյ յաշխարհի ատս . ուր խառն ընդ ընտրեալս գտանին և բազումք յանապատելոց ։

ՎՅՈ ուրեմն ի չարախտաւոյատ կենցաղումս , ի չարուն աւուրքս յայս , յորժամ եկեղեցի ատանօր խնայարհուեցին զՀանդերձեալն ըմբռնել բարձրուն , և ընդ կիրթ անցանել երկիւղի խիթ մանց , տանջիչ ցաւոց , վշտակիցն տաժան-
մանց , վտանգաւոր փորձուեց , յուսոյին եւեթ խնդացեալ , եթէ միայն յարժանիս խնդայցէ , խոտանեալ բազումք խառն ընդ բարիս կան , հաւաքեալք երկաքանչիւր իբր յաւե-
տարանական ուռկանի , և յաշխարհի Հանգոյն ի ծովի փակեալք երկոքին ի ցանցս խառն կայտառն , մինչև տա-
րեալ ձգիցի չափն կոյս , ուր չարք մերհնեսցին ի բարեաց ,

և 'ի բարիս անդ զօրէն յիւրումն տաճարի եղիցի ա̃ծ ա- մենայն յամենայնի ։ Վասն որոյ խելամուտ լինիմք ահա թէ 'ի լրումն եկեալ է բանն սաղմոսի․ ԼԹ․ 6․ "Պատ- մեցի և խօսեցայ, և բազում եղեն քան զթիւ"։ Այս կատարի այժմ, յորմէ հետէ նախ բերանով կարապետի իւրոյ Յովհաննու, և ապա ինքեան իսկ բերանով պատ- մեաց և խօսեցաւ ասելով․ "Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութ̃ի երկնից"։ Ընտրեաց աշակերտս, զորս և առաքեալս անուանեաց, արս անտոհմիկս, անպաճոյճս, անգրագէտս․ որպէս զի թէ մեծ ինչ իցեն, և կամ առնի- ցեն, ինքն 'ի նոսա մեծասցի և մեծագործեսցէ․ յորոց և մին չար ելով, 'ի բարիոքն նովին վարեցաւ, կատարեալ այսու զտնտեսութ̃ի չարչարանաց իւրոց, տալով և եկե- ղեցւոյ իւրում օրինակ 'ի վշտամբերութ̃ի ։ Սերմանեալ որչափ պիտոյն էր իւրով անձամբ զաւետարանն սուրբ, չարչարեցաւ, մեռաւ, յարեաւ․ ցուցեալ չարչարանօքն՝ զոր ինչ կրելն պարտիմք սակս ճշմարտութ̃ե, և զոր յա- րութ̃են յուսալ 'ի յաւիտեանսն․ թողում ասել զբարձ- րութ̃ի խորհրդոյն՝ որով արիւն նորա հեղաւ 'ի թողու- թ̃ի մեղաց ։ Շրջեցաւ յերկրի ընդ աշակերտս իւր ա- ւուրս քառասուն․ և նոյին յանդիման վերացաւ ել յեր- կինս, առաքելով յետ տասանց աւուրց զխոստացեալն հոգի սուրբ․ որոյ եկաւորութ̃ենն 'ի վերայ հաւատացե- լոց՝ էր յայնժամ նշանակ մեծ և կարևոր յոյժ՝ բարբա- ռել իւրաքանչիւր նոցա 'ի լեզուս ամենայն ազգաց, նշա- նակեալ այսու զմիութ̃ի հանրական եկեղեցւոյ՝ որ լինի- ցի ընդ ամենայն ազգս, և խօսիցի բոլորիցն լեզուօք ։

ԳԼՈՒԽ Ը

Քարոզութիւն աւետարանին պայծառ կա գաւառ և զբաւորք՝ քարոզեցոյն չարչարանաւք :

ՂՏՏ մարգարէութեանն բանի, "Ի Սիոնէ ելցէն օրէնք, և բան տեառն Երուսաղէմ ,, , Ա՞· Է· 3· զոյգ բերի և Վիոնի տեառն կանխասացութեանն, յորժամ զինի յաբուքեանն ի զաղմանալ ընդ նա աշակերտացն, "Երթայ զմիտս նոցա խմանալ զդիրս· և ասէ ցնոսա, Թէ այսպէս պարտ էր չարչարել Քրիստոս, և յառնել ի մեռելոց յաւուրը երրորդի, և քարոզել յանուն նորա ապաշխարութեանն և թողութեանն մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ Երուսաղէմ ,, : Եւ յորժամ դարձեալ յաղագս յետին գալստեան նորա հարցանէին աշակերտացն, պատասխանեալ ասաց· "Ձէ ե ձեզ գիտել զժամն և զժամանակս զոր Հայր եդ ի բուռս իշխանութեանն· այլ առնիք զորութիւն ի հասանել Հոգւոյն սրբոյ ի վերայ ձեր· և եղիջիք ինձ վկայք Երուսաղէմ, և յամենայն հրէաստանի, և ի Սամարիա և մինչև ի ծագս երկրի ,, : Ա՝ ասն որոյ Երուսաղէմ զառաջինն ծաւալեցաւ եկեղեցի· և բազմաց հաւատալով ի հրէաստանի և ի Սամարիա, բացաւ Ձանապարհ և առ այլ ազգս, նոցին իսկ պատմելով զաւետարանն՝ զորս Ինչ ինքնին՝ իբը լուսաւորս ոմանս՝ հրաՀանգեալ էր բանիւ, և Հոգւովն սրբով վառեալ· զի ասացեալ էր նոցա· "Ի՞ի երկինքէ յայնցանէ որ սպանանէն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել ,, : Օ ի մի երկիւղիւ ցրտանայցեն, վառեցան բորբոքեցան ի նուր սիրոյն : Եւ ոչ միայն այնոքիւք որք նախ քան զաւրաւորանն և յետ յաբուքեանն տեսին զՔՒՏ և լուան, այլ և զկնի վախճանի նոցա հետևողքն նոցին՝ ի կալ երկեզագին Հալածմանց, և ազգի ազգի տանջանաց և մահուց մարտիրոսաց՝ քարոզեցաւ աւետարանն ընդ ամենայն աշխարհ, վկայեալ յոյն նշանօք և

արուեստիւք, և պէսպէս զօրութիւնք, և մասամբք հոգւոյն սրբոյ. որպէս զի հեթանոսացն ժողովուրդք հաւատացեալք յայն՝ որ առ փրկութիւն նոցա խաչեցաւ, մեծարեսցեն քրիստոնէականն սիրով զարիւն մարտիրոսաց՝ զոր հեղին յերեսաց դիւական կատաղութեան. և նոքին իսկ թագաւորք՝ որք օրէնս տային 'ի քանդումն եկեղեցւոյ, գրաւեսցին ճշմարտութեամբ յայն անուն, զոր խժաբար ջնջել յերկրէ հնարէին. տուեալ հալածանս առ սուտ աստուածսն, որոց վասն յառաջ հալածեալ էին զպաշտօնեայս ճշմարտին այ.

ԳԼՈՒԽ ԾԳ.

Հակառակութիւնք հերետիկոսաց ամրանան ուղղափառ հաւատք.

ՏԵՍԵԱԼ սատանայի զամայանալ տաճարացն դիւաց, և զմարդկան ազգի խրախուսել յանուն ազատարար միջնորդին, գրգռեաց զհերետիկոսս՝ ընդ հարկանել ընդ քրիստոսականն վարդապետութեան քրիստոնեայ անուամբ, կարծեցեալ թէ հնար իցէ խառնիխուռն կալ նոցա առանց կշտամբանաց 'ի քաղաքին այ. զոր օրինակ խառնակուէն քաղաք տանէր յինքն անխտրաբար փիլիսոփոսս այլակարծս և ընդդիմախոհս: Սակայն որք միանգամայն եկեղեցւոջ Քսի անառողջս ինչ և թիւրս խորհին, և խրատեալք յառողջ և յուղիղ միտս՝ ընդդէմ դառնան յամառութեամբ, ոչ կամեցեալք թողուլ զիւրեանցն ժանտաբեր և զմահաբեր ուսմունս, այլ պնդ կան 'ի ջատագովել, հերետիկոսք լինին ապաքէն, և արտաքս ելեալք՝ 'ի համար թշնամեաց մտանեն՝ որք կրթիչքն իսկ են: Քանզի և այսու օրինակաւ իւրեանցն չարութեամբ յօգուտ լինին նոքա ճշմարիտ և ողջախոհ անդամոց Քսի յորժամ ած զչարն 'ի բարիոքն տնտեսէ, և որոց սիրենն զնա՝ յամենայնի գործակից լինի 'ի բարիս: Վասն զի եկեղեցւոյ թշնա-

միքն ամենայն՝ կամ իւրաքանչիւր մոլորութիւնք կատարեալք, կամ չարութիւնք ապականեալք, եթէ իշխեցեն ինչ նեղել ըստ մարմնոյ, ահա զհամբերութիւն եկեղեցւոյ վարժեալ կրեն. և եթէ լոկ չարաչարն խորհելով հակառակին, գնորա զհմաստութիւնն ի վարժս արկանեն. և զի իբր թշնամիք և սիրելիք իցեն, ընդ կիրճ վարեն զարբեսութիւնն նորա, կամ զարբեսրարութիւնն իսկ վարեալով ընդ նոսա թէպէտ ողբական վարդապետութիւնք, թէպէտ սաստիկ խրատով, ՚ի՛ մին իրի սատանայ իշխան ամբարիշտ քաղաքին յարուցանեալ զնրան գործիս հակառակ քաղաքին այ պանդխտացելոց յաշխարհի սուտ, ոչ մի ինչ ձեռաւել ունի նմա. որովհետև պատրաստեալ կայ անչուշտ յածայինն տեսչութիւն և միխիթարութիւն ի յաջողուածս առ ի չքեանելոյ ի ձախողականն, և նեղվարժուհին ի ձախողուկրս, զի մի յաջողակքն զեղծանիցի. որով երկաքանչիւր այսպէս իմն յիրերաց չափաւորին, զի գիտասցուք սասի հնդել բարբառոյն որ ի սաղմոսի. ՟ղէ. 19. ՟՚Լաւ քաղաքս ցաւոց սրտի իմոյ միխիթարութիւն քո ուրախ առնեզ զանձն իմ՟՚, ՚Լյա է և առաքելականն. ՟՚Ցուսով լերջ դացէք. նեղութիւն համբերեցէք ... ՚Հ՚՚. ՚ծէ. 12,

Վասն զի և միւս բանն նորին հետ անասոց վարդապետի, ՚է. Ջնմ. ՚է. 12. ՟՚Մինչեզին որ կամիցին ՚ծծպատուհասութիւն կեալ ի ՚Վէ ՚Ցէ, ի հալածանս կացցեն ..., չէ կարծելի թէ դադարեսցէ յերբեմն ժամանակի, ՚Վասզի նա և ՚ի միջնադարս դժդսակութիւնն արատաբնոցն՝ յորժամ թուի թէ խաղաղութիւնք իցեն, և է իսկ արդեամբք, միխիթարութիւնք բազում ընձեռելով՝ մանաւանդ տկարաց, ոչ պակասեն՝ և այն չատք ի նեղբնոց անտի, որք իւրեանց կորըստական վարուք տանջին զսիրտս բարեպաշտաց. զի նոքօք հայհոյի քրիստոնէական անուն և ուղղափառ, զոր որպէս առաւել սիրեն բարեպաշտեալքն ի ՚Վէ, նոյնչափ և այ քան զևս ցաւագնին, զի ի պատճառս չարացն գտելոց ի ներքոյ՝ սակաւ սիրի քան զոր ծծպատուհասն ըղձանան միաք, ՚Լյլ և նոքին հերեսիոմոսք՝ որք գանուն և զհորհուրդս քրիստոնէականս և զգիրս և զդաւանութիւնն տանել ձեռ-

նան , մեծաց ցաւոյ առթիւք են 'ի սիրտս բարեպաշտաց . զի սակս նոցա հակառակութեանցն բազումք 'ի յօժարելոցն 'ի քրիստոնէութիւն տարակուսեալք նահանջին . և լեզուագարք յոքունք գտանեն և 'ի նոցանէ պատճառս զքրիստոսական անունն հայհոյելոյ . զի և նոքա որպէս և է՛ անուանեալ կոչին քրիստոնեայք ։ Այսոքիւք այս և սոյնպիսեօք խառնակ վարուք և մոլորութիւնք մարդկան կրեն հալածանս որք միանգամ ա՟ծպաշտութ՟բ կամին կեալ 'ի Ք՟ս , թէ և չկայցէ ոք նեղիչ և չարչարիչ մարմնոց նոցա . զի զայն հալածումն ոչ 'ի մարմինսն կրեն , այլ 'ի սիրտս. ուստի և բանն , “ Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ ,, ասէ , և ոչ մարմնոյ իմոյ ։ Այլ քանզի և անզեղջ խոստմունքն ա՟ծայինք յուշի լինին , և զոր առաքեալ ասէ , “ Ծանեաւ տէր զայնոսիկ որ իւրքն են ,, , և թէ “ Զորս յառաջն ճանաչէր , յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյ իւրոյ ,, , յորոց և ոչ ոք կորնչի , սորին վասն զկնի բերէ սաղմոսն . “ Մխիթարութի՟ քո ուրախ առնէր զանձն իմ ,, ։ Ահա այն ցաւ՝ որ 'ի սիրտս բարեպաշտաց ներգործի՝ 'ի հալածիլ նոցա վարուք քրիստոնէիցն չարաց կամ ստոց , յօգուտ է ցաւագնելոցն . վասն զի սիրոյ ծնունդ է , որ չկամի զնոցին կորնչելն , և ոչ փըրկութե՟ նոցա լինել խափան ։ Ներգործի դարձեալ մխիթարութի՟ մեծ 'ի նոցա ուղղութե՟ն , որ այնչափ խնդութ՟բ լնու զանձինս ա՟ծապաշտից , որչափ ցաւօք տառապեցան ընդ նոցայն կորուստ ։ Սակայն յայսմ աշխարհի յաւուրս չարութե՟ ոչ միայն 'ի Ք՟սի մարմնով երևմանն և առ նորա առաքելովք , այլ յԱբելէ անտի 'ի նախկին արդարոյն՝ զոր սպան եղբայրն ամբարիշտ , և յետ այնր մինչ յաշխարհիս կատարած , ընդ մէջ կենցաղոյս հալածմանց և առ 'ի յա՟յ մխիթարութե՟ց յառաջեալ ընթանայ պանդխտեալս եկեղեցի ։

ԳԼՈՒԽ ՆՈՒ

ԵԹԷ ԽՁ պիտի հաւանէլ զոր կարծենն ոմանք, Թէ չէա կատարելց տասանց անգելոց Հալածանաց՝ Նոյ այլ մեռասաներորդ ևԵթ որ ի ժամանակս Սենեքայ լինիցէ։

ԼՅՈՐԻԿ ազագաւ ոչ ի դէպ համարիմ ասել վայրապար կամ հաւանել օրպէս ոմանց Թուեցաւ, և կամ այժմ Թուիցի, Թէ ոչ ևս այլ կայ եկեղեցոյ կրել Հալածանս մինչ չև ի Սենեքին ժամանակ. զի տասանց համբերեալ նորա, մեռասաներորդն և այն վերջինն լինիցի ասեն ի դերասքիստոսէն։ Վասզի զառաջինն համարեն ի Սերենէ եղեալ, զերկրորդն ի Նոմոտիանոսէ, զերրորդն ի Ջրայեանոսէ, զչորրորդն ի Նետոնինեայ, զհինգերորդն ի Սևերոսէ, զվեցերորդն ի Սաբսիմինոսէ, զեօթներորդն ի Նակոսէ, զուԹերորդն ի Սաղերիանոսէ, զինիներորդն ի Նէբեղիանոսէ, զտասներորդն ի Նոկղետիանոսէ և ի Սաբսիմիանոսէ։ Օի որովհետև տասն եղեն հարուածք ելիսցուոց յառաջ քան զելս անտի ժողովրդեանն ՚ոյ, համարին յայս ուՀել զանդարձուն, և յետին հալածմանն որ ի դերասքիստոսէ՝ լինել նմանաւոիպ մեռասանեերորդ հարուածոյն, որով եգիպտացիքն զհետ սպրդեալք երթայելոց՝ ծածկեցան ի ծովն կարմիր, յանցանել ժողովրդեան ՚ոյ ընդ ցամաք։ Սակայն ինձ չէ հաւանելի, Թէ որ ինչ ընդ Նգիպտոս անցք եղեն, հալածանաց եկեղեցւոյ լեալ իցեն մարգարէական նշանակիչք. Թէպէտ և այսպիսի կարծողք մանրամասն և հանճարով միւմ միւմ պատշաճեցուցանեն զայն առ այս, ոչ եԹէ մարգարէօրէն ազդմամբ՝ այլ մտաց կշռուԹիւ. որ Թէ երբէք մեռի ի Հմարիան, և երբէք զի և սխալ։

Վասզի զինչ՝ որք այդպէսդ կարծենն՝ ասել ունիցին յաղագս հալածմանն որով ինքն տէրն ի խաչ հանաւ. յորում համարի զնիցեն զայն, Նսկ եԹէ զայն Թողեալ,

՛ի Թիւ արկանել ախտաժէն զՀալածանսն չարժեալս ՛ի վե-
րայ մարմնոյ եկեղեցւոյ, և ոչ օրով գլուխն Վէճ ըմբռնե-
ցաւ և սպանաւ, զինչ առնիցեն զանձ՝ որ յետ եղեց Վէնի
յերկինս գործեցաւ Յ[ոյ]րդանանէն Յաե-
փաննոս քարոզեցաւ. ուր Յակոբոս եղբայր Յովհաննու
սրով կատարեցաւ. ուր Պետրոս առաքեալ կալանաւորե-
ցաւ առ՛ի սպանումն, և ապրեցաւ՛ի ձեռն հրեշտակի. ուր
եղբարքն փախստեայ ցրուեցան Յ[ոյ]րդանանէմ. ուր Յա-
ւուրսն՝ յետոյ Պօղոս առաքեալ՝ աւար հարկանէր զե-
կեղեցի. ուր և ինքն յաւետարանել իւրում զՀաւատան
զոր խախտէր, կրեալ կրեաց զոր ընդ այլս անցուցանէր՝
եթէ՛ի հրէաստանի, եթէ յայլ ազգս ուր միանգամ լի
նահանձու քարոզէր զՅի[սու]ս՛ր վասն ապա՛ի Կերտնէ ընտ-
րեն սկսանել՝ յորժամ մինչ՛ի ծորս ժամանակս գժդեակ
Հալածանօք՝ զորոց զովանդակն ասել կարի ընդարձակ
է, ահաւասիկ առնցոր եկեղեցի՛ի. Այլ եթէ զառ՛ի Թագա-
ւորացն յաւելեալ զՀալածանս՛ի գէպ կարծեն արկանել՛ի
Թիւ, ահա Հերովդէս այր Թագաւոր էր, որ և նա Հա-
լածանս սաստիկ յարոյց յետ Համբառնալոյ տեառն. Յա-
գարձեալ, զինչ վասն Յուլիանոս ասիցեն, զոր՛ի տա-
ճառնն ոչ Թուեցին. միթէ ոչ Հալածեաց նա զեկեղեցի,
արգելեալ քրիստոնէից ուսուցանել և ուսանել գիրս ա-
զատականս. առ որով Վ աղեհոխիանոս ասէն՝ որ զինի
նորա եկաց երրորդ կայսր, քանակս Հաւատոց եղեալ գա-
ւանող, մերժեցաւ՛ի զինուորական պատուոյ. Ծնողսն
և զոր Յ[ոյ]նահոքն առնել ձեռնարկեալ էր, ուր զազգսն
ըմբռնեալ առ՛ի տանջանս մատնել էր, նախ զերիտա-
սարդ ոմն քաջահաւատ և անխախտելի զօրն ողջոյն տանջ
Ջեաց երկաթի եղնգամբք և այլ և խոշտանգանօք. այլ՛ի
սաղմոսել Նէր զարմացեալ ընդ անվեհերսի և ընդ զուար
Թութեի, զահի Հարաւ բռնաւորն, երկուցեալ Թէ յայլոցն
ևս և ամենեցունս կրիցէ. Ծետ սոցա ոչ ապաքէն առ ժա-
մով ժամանակաւ Վ աղէս արիոսական՝ եղբայր նախայիչ-
տակեալդ Վ աղեհոխիանոսի, մեծաւ Հալածանօք վեր՛ի
վայր խռովեաց զուղղափառացն եկեղեցի յարևելեան կող-

մանս . ևգինչ իցէ չաճել զմտաւ , Թէ կարող է եկեղեցի՝ որ ընդ-եմ աշխարհ ածէ և պատաբեկ , յազգս ուրեք կրել հալածանս ՚ի Թագաւորաց , ՚ի ժամանակի յորում յայլ ազգս ոչ գնոյնս կրեցէ . Այլ ոչ արդեօք ՚ի հալածանս հա-մարեցայ այն՝ յորժամ արքայ գոԹացւոց գբրիստոնեայս որ ուղղափառք իսկ էին ամենեքեան՝ հալածեաց նորա-նման դժնդակուԹ՚ի Վոռոթաց երկրին . յորոց բազմագոյնք պակ ընկալան մարտիրոսուԹիւն , զոր օրինակ լուաք յերէ-բարց ոմանց՝ որք ՚ի տղայուԹենէ տիս անդ գտան ՚ի ժամա-նակին , և զտեսեալսն ողբիկ յիշէին . Օ՜ինչ և որ ՚ի Պարսս այժմ բորբոքեաւ հալածումն ընդդէմ քրիստո-նէից , եԹէ արդեօք դադարեալ իցէ . մինչ զի փախստեից ոմանց հասանել մինչև ՚ի սահմանս Հռոմայեցւոց . Օ՜այս և զոյնպիսիս ածեալ իմ զմտաւ , ոչ արժան համարիմ սահ-մանել զԹիւ հալածանաց՝ որք ՚ի մարզումն եկեղեցւոյ պիտեանիք են . բայց և հաստատեալ ԹԷ լինելոցն յետ այսր ՚ի Թագաւորաց , բայց ՚ի վերջնոյ անտի՝ որ աներկ-բայելին է առ քրիստոնեայս , ոչ փոքր համարձակուԹիւն իցէ . Վ՜ասն որոյ ՚ի միջոցին կացեալք , միով ուրուք մա-սին այսր խնդրոյ ոչ չինչիչք եմք , և ոչ քակտիչք . այլ հրա-ժարեցուցանեմք ևԵ՚ի վայրապարն հաստատելոյ զմի յայնցանէ .

ԳԼՈՒԽ ՆՈՒ

Զաղագս անցեալ ժամանակի յետին հալածանն .

Ի՝ՁԱՐՁԵՆ զհալածումն յետին որ ՚ի դէրաքրիստոսէն լինելոցն , խափանելոց է ինքնին տէր [՝]Ցն իւրով գալս-տեամբ . զի այսպէս գրեալ է . Բ . Ղես . Բ . 8 . “ Օ՜ր տէր [՝]Ցն սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ , և խափա-նեսցէ յայտնուԹեամբ գալստեան իւրոյ ,, . Ի՝ԱՀ է սովորու-Թիւն հարցանել աստանօր , երբ լինելոցն այդ . Թայց կարի յանդէպս . զի եԹէ օգուտ ինչ էր ի գիտել զայդ , ոչ

այլ որ լաւ քան զնա ինքն զվարդապետն մեր և զտէր՝ ասել կարող էր 'ի հարցանել աշակերտացն . որք ոչ լռեալ եղեն յայդմ, այլ պարզաբար հարցին 'ի նմանէ ասելով . " Տէր, եթէ 'ի ժամանակի աստ յայսմիկ հաստուցանելո՞ց իցես զարքայութի՛ն Իսրայէլի ,, ։ Եւ նա ասէ . " Ոչ է ձեզ գիտել զժամանակս զոր հայր եդ յիւրում իշխանութեան ,, . Գործ . ա ։ Ահա ոչ զժամէ հարցանէին նոքա , կամ վասն աւուրն և ամին , այլ զժամանակէն՝ յորժամ զայդ տուին պատասխանի ։ Ապա ուրեմն զուր ջան է առնել հաշիւ և սահմանել զամն՝ որ մնան զայսր աշխարհի , յետ լսելոյ 'ի բերանոյ ճշմարտութեանն թէ ոչ է մեզ գիտել զայդ ։ Եւ սակայն ոմանք ասացին ամս չորեքհարիւր, այլք հինգհարիւր , և կէսք հազարս եւս բովանդակել 'ի համբարձմանէ տեառն մինչ ցյետին գալուստ նորա ։ Իսկ թէ զիարդ իւրաքանչիւր սեթևեթէ զիւրն կարծիս , յերկար է ասել և կարևոր իսկ ոչ . քանզի մարդկօրէն կշռադատեն , ոչ մի ինչ հաւաստիս 'ի կանոնական գրոց վկայութեան 'ի դէմս ածելով ։ Այլ զամենեցուն զայսցանէ համարողացն զթուարկութի ունայնացուցանէ և լռել հրամայէ որ ասացն . " Ոչ է ձեզ գիտել զժամանակս՝ զոր հայր եդ յիւրում իշխանութեան ,, ։

Եւ քանզի աւետարանական է վճիռս , զարմանք ինչ ոչ են՝ թէ բազում աստուածոցն սուտ պաշտօնատարք ոչ խրատեալք այսու , ձևանան պատգամս իմն ունել 'ի դիւաց աստուածս 'ի նոցանէ կարծեցելոց , որովք սահմանեալ իցէ քրիստոնէական կրօնիցն չափ տևողութեան ։ Վասն զի տեսեալ նոցա թէ ընդ այնչափ և այնպիսի հալածանօք ոչ բարձաւ քրիստոնէութի , այլ առաւել ևս աճեաց սքանչելապէս , հնարեցին չգիտեմ զինչ քերթածս հելլենացիս՝ իբրև հարցողի ուրուք պատգամ ածական ընկալեալ . յորում թէ և Քս անպարտ ասի 'ի յանցուածոյ նենգութեան , բայց Պետրոսի տան կախարդանօք իմն ջանացեալ , զի անուն Քսի պաշտեսցի զամս երեքհարիւր վաթսուն և հինգ , և 'ի լնուլ թուոյ ամացս՝ իսկ և իսկ վախճան առնուցու ։ Վաչ սրտի արանցդ գիտնաւորաց .

թաւէ մեծիմաստ հանճարոյ ձեր՝ արժանի հաւատալոյ զայսպիսի զՔ͞սէ, որ ուղղ կամիք հաւատալ 'ի Ք͞ս . որպէս թէ աշակերտ նորա Պետրոս ոչ 'ի նմանէ ուսեալ արհեստս գիտական, առանց յանցանաց վարդապետին լեալ իցէ նորա մօտ, և զնորա՝ քան զիւրն անուն կամեցեալ իցէ առնել պաշտելի իւրովքն գիտութ͞ք, մեծամեծ վաստակօք և վտանգօք, և իւրոյ արեանն իսկ հեղմամբ : Եթէ կախարդն Պետրոս արար՝ զի այսպէս սիրեսցէ աշխարհ զՔ͞ս, զի՞նչ անպարտն Ք͞ս արար՝ առ 'ի այսպէս սիրելոյ զնա Պետրոսի : Ո՞չէ տացեն անձանց պատասխանի, և 'ի միտ առցեն՝ եթէ կարեն, թէ այնուիկ վերնայինն շնորհօք յաջողեաց՝ սիրել աշխարհի զՔ͞ս վասն յաւիտենից կենաց, որով և Պետրոսի յաջողեաց զՔ͞ս սիրել առ ընդունելոյ 'ի նմանէ զկեանսն յաւիտենից, մինչև զժամանակեայ մահ ևս վասն նորա յանձն առնուլ : Եւ դարձեալ, որպիսիք ոք իցեն աստուածքդ այդոքիկ, որք կարող գոլով նախագուշակել զայսոսիկ, չեղեն կարող և 'ի բաց դարձուցանել, այնպէս իմն նկուն եղեալք 'ի կախարդէ միոջէ, և 'ի նորա գիտական եղեռանէն, որով ասեն՝ զմանուկ միամեայ սպանեալ, յօշատեալ և ընդ երկրաւ ծածկեալ չարարուեստ սովորութ͞բ, մինչ զի թողացուցին այնմ ընդդիմամարտն աղանդոյ զօրանալ այնքան ընդ երկար ժամանակ, գերիվերոյ լինել քստմնելի անգթութեանց յոքնատեսակ հալածմանց, ոչ դիմամարտելով, այլ ժուժկալելով, և գամագիւտ 'ի քակտումն դրօշելոց նոցա և նուիրեալ տաճարաց և պատգամախօսութեանց : Որ այն աստուած է՝ ոչ եթէ մեր, այլ նոցա, որ յայնպիսի եղեռանէ կամ շողոմեալ և կամ հարկեալ՝ ձեռն ետ յայսոսիկ . քանզի ոչ եթէ զիւր ումեք՝ այլ աստուածոյ ասեն քերթածքն այնք՝ սահմանեալ զայսոսիկ գիտական արուեստիւ Պետրոսի : Աստուած այդպիսի նոցա է, որք զՔ͞ս ոչ ունին :

ԳԼՈՒԽ ՆՈՂ

Զաղագս չհաստատել տուրքն հեթանոսաց՝ որով հնարիցին ոչ տալ քրիստոնէութեան աւելի քան զերբեմնիւրբ վաճառանէ հինգ ամ։

Ա՛ն այսոքիւք և յոլովս այլ սոյնպիսիս կուտակէի զբազձս, եթէ չէր ահա բոլորեալ այն՝ զոր ստացօղն գուշակութիւն ժամանակաց, և պատրեալ ունայնութիւնն հաւատայ։ Ա՛յլ քանզի յորմէ հետէ Վիշի անուանն պաշտօն հաստատեցաւ՝ նորին ըստ մարմնոյ երևմանէն, և՛ ի ձեռն առաքելոց, ահա ամբ յառաջ բովանդակեցաւ եւ բնչքհարիւր վաթսուն և հինգ ամն, զի՛նչ և այլ պիտոյ իցէ մեզ առ՛ի զօտուիւն քանիդ խայտառակելոյ։ Ապաքէն իբրացդ այդմ սիրզն ոչ՛ ի ծննդենէ անտի Վիշի եդեալ, զի այն ինչ տղայ մանուկ ոչ ունէր աշակերտս, այլ իբրև սկսաւ ունել, յայտ ի թէ յայնժամ ինքնին անձամբ երևելով ծանուցաւ վարդապետութեանն քրիստոսական և կրօնք. այս է՝ յետ մկրտելոյ՛ի Յորդանան գետ աբրահամեանէ Յովհաննու. քանզի յայդ իսկ յառաջեաց զնմանէ մարգարէութեն. “Տիրեսցէ նա՛ ի ծովէ մինչև՛ ի ծով, և՛ գետոց մինչև՛ ի ծագս աշխարհի ...։ Ովս. հե. 8։ Եւ զի չև եւս յառաջ քան զչարչարել նորա և՛ ի մեռեալոցն յառնել՝ սահմանեալ էին հաւատք առնելոցն, զի այն՛ ի Վիշի յարութենէն սահմանեցաւ, որպէս առ աթեն նացիսն խօսի Պօղոս առաքեալ. “Իբրդ զայս պատուիրէ մարդկան, առնայն ուրեք ապաշխարել. քանզի հաստատեաց օր՝ յորում պարտ է դատել զաշխարհս արդարութի՛ ի ձեռն առնն որով սահմանեաց տալ հաւատս առնելոցն, յարուցեալ զնա՛ ի մեռելոց ...։ Գործ. ժէ. 30։ Ապրին վասն լաւ եւս՛ ի յարութենէ անտի առնուելոյ սիրզն՛ ի ինդբոյս լուծումն. մանաւանդ զի յայնժամ տուաւ և հոգին սուրբ, ըստ որում պիտոյ էր յետ Վիշի յարութենէն գալ նմա յայնմ քաղաքի, յորմէ սկսանելոց էին երկրորդ

օրէնքն՝ կատակ նոր . զի առաքինին եղիւ ի լեռնէն Սինայ ի ձեռն Մովսէսի , անուանեալն կատակ հին . և վասն որ Աստուածն տալոց էր՝ ասացեալ էր ցանխաւ . " Ի միտն եղ- ցեն օրէնք , և բան տեառն Յերուսաղէմ ... ուստի և ինքն տէրն ասաց՝ քարոզել յանուն նորա ապաշխարութիւն ընդ ամենայն ազգս , բայց սկսեալ Յերուսաղէմ : Պատ- ուին անդ սկզբնաւորեցաւ պաշտօն այսր անուան , հաս- տատ ի Քրիստոս , որ խաչեցաւն և յարեաւ . անտանօր ար- ծարծեցան այս հաւատոյ այնպիսեաւ ի՛ն գերապանծ և բախտաբերօք , զի հազարաց ոմանց գրեալք յանունն Քրիստոսի զարմանալեաւ , տասնաւածոցն վաճառամարդ սակս բաշխելոյ ի կարօտեալս , և նուիրականին կամաք ի յորդ- եւանդն սիրոյ զկամաւոր աղքատութիւն ընդգրկելոցն , պատրաստեալք ի մէջ բարեացայտ և արիւնահամնձն Հրեից մահուամբ չափ վասն ձշմարտութեանն մարտնչել ոչ սպառազէն բռնութեամբ , այլ հզօր ժուժկալութեամբ : Յոկ արդ եթէ այս գործեցաւ առանց միոյ իրիք դիւթական հնարից , զմի թերահաւատեն՝ թէ նովին զօրութեամբ ածաք նով լինել մարթ էր ընդ աշխարհ ամենայն , Այլ եթէ պատրոյն դիւութեամբն եղիւ այնչափ բազմութիւն մարդ- կանն Յերուսաղէմ վաղիլ ի պաշտօն անուանն Քրիստոսի , զոր ինքեանք իսկ կամ ըմբռնեալ ի խալն բեւեռեցին , կամ զբեւեռեալն կատակեցին , ապա յայնմ ամ ինչ խնդրել , երբ արդեօք լցան ամքն երեքհարիւր վաթսուն և հինգ , Աստ մահ ընկալաւ Քրիստոս ի հիւպատոսութեան երկուց Պռե- մենից , յոմն կաղանդից սպրիլի : Հարեաւ յաւուր երրորդի , որպէս առաքեալք իւրեանց իսկ զգայութիւնքն հա- ւաստեալ ծանեան . զհետ աւուրց քառասնից վերացաւ յերկինս , և այլ ևս տասնից՝ որ յինքեանէրդ օր էր գնդի յարութեանն , առաքեաց զՀոգին սուրբ . և յայնժամ ե- րեք հազարք արանց հաւատացին ի Քրիստոս ըստ քարոզելոյ առաքելոց , Իսկ ահա յայնմ ժամանակէ պաշտօն Քրիստոսի անուանն սկիզբն առ հոգւոյն սրբոյ ազդեցութիւն , որպէս մեքս հաւատամք , և որպէս է իսկ ձշմարտութիւնն . իսկ ըստ կարկատելոց կամ համաբերելոց ամբարիշտ ստութեանն՝

Պետրոսի կախարդանօքն։ Յետ սակաւ ժամանակի նշան աքաղէղի գործեցաւ, յորժամ մուրացիկ ոմն կաղ յորովայնէ մօրն՝ որ յայլոց բարձեալ դնիւր առ դրան տաճարին առ՝ի խնդրելոյ ողորմութիւն, Պետրոսի բանիւն որ յանուն Յիսի Քրիստոսի՝ ի վեր վազեաց, և հաստատացին հինգ հազարք արանց. և յետ այնր այլոց ևս հաւատացելոց յաւելեալ օր ըստ օրէ՝ աձեաց եկեղեցի։ Յայսմանէ իմանալի և օրն՝ յորում ակսաւ այն ամ, յորժամ առաքեցաւ Հոգին սուրբ, այս է՝ ի հնգետասանն Մայիսի. ուստի արկեալ՝ի հաշիւ ժամանակ հիւպատոսաց, ամքն երեք հարիւր վաթսուն և հինգ գան կատարին՝ի նոյն կէսն Մայիսի առ հիւպատոսութիւնք Ինորի և Լուտիքիանոսի։ Ասկ Թէ՝ի գալոց ամին՝ առ հիւպատոսութիւնք Անիկայ Ֆէստոսի, յորժամ ըստ դիւական աչիմ պատգամի, կամ ըստ մարդկանն ստեղծանելոց քննչիկնք լինելոց էր քրիստոնէութեի, զինչ յայլ կողմանս երկրի գործեցաւ արդեօք, խնդիր առնելոց ոչ Կարկինէ է՝ի ժամուս գիտեմք զայն՝ զի յանուանէ և՝ի հոյակապ քաղաքին Կիբիկայ՝ի Կարքեդոն որ և Կարթագինէ, Կաւդենտիոս և Յուլիոս իշխանք Ինորիոս կայսեր՝ի յորեքտասանն կաղանդից ապրիլի քան գեցին զնհՀեանս չաստուածոցն, և զղջօշէալն խորտակեցին. և անտի և այսր իբր ընդ ամն երեսուն ո՛ոչ տեսանէ քանի բարգաւաճեաց պաշտօն անուանն Յիսի, առաւելապէս՝ի հաւատալ բազմաց այնոցիկ՝ որք ձնմարիտ իմն կարծեցեալք զգուշակութիւնն զայն, կասկին՝ի հաւատոց. այլ՝ի ընալ թուոյ ամացն՝ գիտացին ստապաձոյձ լինել և ծիծաղելի։ Կ՛ասէ արդ մեք որ քրիստոնեայքս եմք և կոչիմք, ոչ՝ի Պետրոս հաւատամք, այլ Յիսի՝ յոր Պետրոն հաւատաց, չինեալք Պետրոսի բանիւքն որ զՅիսէ, և ոչ՝ի տաղից ոմանց դեղեալք. ոչ պատրեալք կախարդութիւնք, այլ նորա բարեբարութիւնքն գտեալք օգնութիւնք, Պետրոսի վարդապետն Կ՛ա՝ վարդապետութիւնքն որ տանի յաւիտենական՝ի կեանս, նա ինքն և մեր վարդապետ է։

Կ՛ասէ ասեմնօր տացի աւարտ այսր գրոց, յետ խօսելոյ

մեր ցայս վայր, և ցուցանելոյ ըստ բաւականն դատելոյ՝ թէ որպիսի իցեն յառաժամանակէիս ընթացք երկոցունց քաղաքացն՝ երկնաւորին և երկրայնոյն՝ խառն գտելոց 'ի սկզբանէ մինչ 'ի կատարած։ Յորոց երկրաւորն այն արար իւր ուստի և կամեցաւ՝ մինչև 'ի մարդկանէ իսկ՝ աստուածս ոչինչս, ծառայել նոցա զոհիւք. իսկ երկնաւորն պանդխտեալ յերկրի՝ աստուածս սուտս ոչ առնէ, այլ ինքն լինի յայ ճշմարտէ, որում և ինքն իսկ է պատարագ ճշմարիտ։ Բայց երկաքանչիւր ժամանակէիւքս՝ եթէ բարեօք զոյգ վարին, եթէ չարեօք զոյգ վշտագնին, միայն հաւատովք այլ, յուսով այլ, սիրով այլ, մինչև 'ի դատողութեն յետնում զատանիցին, ընկալեալ իւրաքանչիւր զիւրն կատարած, որոյ չիք վախճան. և զերկոցունցն կատարածէ մնայ մեզ ճառել այսուհետև.

ԴԻՐՔ ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Յորում բանք լինին յաղագս կատարածի երկուց քաղաքացն՝ որ երկրաւոր և որ երկնաւոր; ի համար բերին իմաստասիրացն կարծիք յաղագս կատարածի բարեաց և չարեաց, որք ի զուր ջանացան զերծանումն յատուկ կէանս գնել անձանց; նաև յետ զրաւոր հերքման ցուցանի՝ թէ որ իցէ երանութիւնն և խաղաղութիւնն երկնաւոր քաղաքին կամ քրիստոնէից ժողովրդեան, և զոր պիտի մարթ իցէ ունել ասասնոր, կամ ի հանդերձեալն ակն ունել:

ԳԼՈՒԽ Ա.

Թէ ի ինդիրն յաղագս կատարածի բարեաց և չարեաց յուզեալ առ իմաստասէրս՝ երկերիւք ուղեցան և ուղի ազանդս նշմարեալ ցուցանէ վարդան:

ՎԱՆԶԻ Ճառել ինձ յաղագս վայելչականն կատարածի երկաքանչիւր քաղաքացւոյ՝ երկրաւորին և երկնաւորին հասանել այսուհետև, ի մէջ մատուցանել նախ արժան է՝ որչափ ներիցէ մատենիս աւարտմանն չափ, զպատճառաբանութիւնս երկրախոհ մարդկանն՝ որովք հնարեցան երանութի՛ն իմն անձանց հայթայթել և ի թշուառութեան այսց կենցաց. որպէս զի թէ զինչ ընդ նանիր նոցա իցս իսկ տիր կայցէ՝ և ընդ մեր յոյսն զոր մեզ պարգևեաց ՅԱ՛, և ընդ բուն իրն՝ այս է ընդ Ա՛ստիարսին երանութիւն զոր պարգևել ունի, բացափայլ ծանիցի ոչ միայն յաճուստ վկայութի՛ւ, այլ և զանական ցոյցս ի վար արկանելով՝ զոր մարթ իմք առ անհաւատս առնուլ՝ ի կիր. Ա՛ան զի յաղագս կատարածի բարեաց և չարեաց շատս իմն և յոքնապատիկ պայքարեցան յիւրեանս իմաստասէրք, բուռն դէտ պարապեալք յայս խնդիր, առ ի ջանից գտանելոյ զինչ այն իցէ՝ որ զմարդ գործիցէ երանելի. Ո՛ի կատարած բարւոյ մեր այն է, որ վա՛ր այլք լինին քաղձալիք, իսկ ինքն՝ վա՛ր իւր միայոյ. և չարին կատարած այն է, որ վասն այլք

Էն փախչելի, իսկ ինքն վան իւր ևԵթ. Ի՝սպա կատարած բարւոյ ասելմբ ատանօր, ոչ զայն որով սպառեալ՝ ոչ ևս իցէ, այլ զայն որով կատարելմնայ՝ զի իցէ պատարուն. և կատարած չարի՝ ոչ որով՝ի գոլոյ դատարկանայ, այլ ցոր վայր ձգեալ տանի մնասելով. Ի՝ւ ահա այս կատարածք Էն՝ ծայրագոյն բարին և ծայրագոյն չարն. Ի՝րդ առ՝ի գիւտ այսոցիկ, և առ ստանալոյ յաստի կենցաղս զատ բին ծայրագոյն, և փախչելոյ՝ի ծայրագոյն չարէ, բազումս աշխատեղեն՝որպէս ասացի՝ պարապեալքն՝ի ջանս իմաստութեանէ ըստ աշխարհիս ունայնութե. և թէպէտ սիակ լել սխալեցին ըստ սկսպէս յերանակս, այլ ոչ եմող բընութենէն սահման այնչափ ինն ստերիւրել նոցա՝ի հետոց Հմարտութենէն, որ զի չգիտիցեն հաստատել զկատարած բարեաց և չարեաց ոմանք՝ի հոգւոջ, այլք՝ի մարմնի, և կեաք յերկոսին. Ի՝նտ այսմիկ եռամսեան որոշման սեռից աղանդոց՝ Ի՝արկոս Ի՝ արբան՝ի մատենին որ յաղագս իմաստասիրութե, ՝ի քննին առեալ խնամով ինն և անօր սեռութե զյոբնազան ուսմանցն այլևայլութիւն, յոշ առնէ ժամանել գրեթէ մինչ յաղանդս երկերիւր ութսուն և ութ. իբր ոչ եթէ ամենայն արդեամբք լեալ իցէն, այլ թէ լինելին ապաքէն՝ տարբերութենէս ոմանս՝ի վերայ յաւելեալ.

Ո՝ր կամիցեալ ցուցանել Համառօտիւք, սկսայց ուստի պարան է, զոր և Ի՝ արբան ազգ արարեալ գնէ՝ի յիշատակեալ մատենին. այս ինքն է, յորբ ինչ էն որոց ցանկան մարդիկ բնաւորապէս՝ առանց վարդապետի, առանց նպաստից ուսման, առանց Հարատարութեան կամ արհեստի կենցաղավարելոյ, որ առաքինութիւնն կոչի, և ուսողութեամբ ստացանի անշուշտ. Ո՝ր կամ հեշտութիւն է որով մարմնոյ զգայութիւն չարժի ախորժաբար. կամ Հանգիստ՝ որով անկիր մնայ ոք՝ի մարմնոյ նեղութե. կամ երկաքանչիւր սոքա. զորս և միով անուամբ հեշտութիւն առնձինն Ի՝սիկուրոս. և կամ առհասարակ նախկինք բնութե, յորս գոանին յիշատակելոցդ այլովք հանդերձ. և այս կամ՝ի մարմնի, զոր օրինակ ամբողջութի

անդամոց, և առողջութ՟ի և բարեկեցութ՟ի նորա. և կամ 'ի հոգւոջ, որպիսի են որ ինչ միանգամ փոքր և կամ մեծ գտանի 'ի հանճարս մարդկան: Արդ սոքա չորեքին, հեշտութ՟ի, հանգիստ, երկոքին միանգամայն, և նախկինք բնութ՟ե՝ այնպէս իմն կան 'ի մեզ, զի կամ առաքինութ՟ին որ և վարդապետութ՟ե ներդոյանայ, սակս սոցա լիցէ բաղձալի, կամ սոքա վասն առաքինութ՟ե, և կամ երկաքանչիւր վասն միմեանց. որով և ծագեն աղանդք երկոտասան. զի այսու օրինակաւ երեքպատկի իւրաքանչիւր. զոր 'ի միումն ևեթ բացերևոցեալ, զնոյն և յայլսն 'ի վեր բերել ոչ դժուարին իցէ: Այլ արդ քանզի մարմնոյ հեշտութ՟ի կամ 'ի ներքոյ մնայ առաքինութ՟ե հոգւոյ, կամ 'ի վերոյ կայ, կամ զուգորդ դնի. ըստ այսմ եռամասն զանազանութ՟ե լինին աղանդք: Ի ներքոյ մնայ առաքինութ՟ե, յորժամ 'ի նորա պէտս արբանեկէ: Քանզի առաքինութ՟են պարտեաց անկ է՝ կեալ հայրենեացն, և վասն հայրենեաց որդիս զաւակագործել. որոց և ոչ միումն առանց մարմնոյ հեշտութ՟ե լինել մարթ է. զի չէ և չէ անհեշտաբար առնուլ կերակուր և ըմպելի՝ առ 'ի կեանս, և ոչ մերձաւորել առ 'ի զաւակաւորութ՟ի: Իսկ յորժամ հեշտութ՟ի 'ի վերոյ կայ առաքինութ՟ե, ինքն վասն իւր լինի ցանկացեալ, և առաքինութիւնն վասն նորա թուի ընդգրկելի, իբրև այն թէ ոչ ինչ առնիցէ առաքինութ՟ի՝ բայց 'ի ձեռս բերել կամ տածել զմարմնոյ հեշտութ՟ի. որ և է կենցաղ զազրատեսիլ, ուր առաքինութ՟ի տիկնոջ հեշտութ՟ե ծառայանայ. թէպէտ և բնաւ և առաքինութ՟ի ոչ է անուանելի. այլ 'ի վերայ այսր քարուականութիւն այդպիսի զզուական՝ եգիտ զոմանս յիմաստասիրաց իւր բարեխօսս և ջատագովս: Իսկ զուգորդ առաքինութ՟ե դասի հեշտութ՟ի, յորժամ ոչ մին սակս միւսոյն, այլ իւրաքանչիւր վասն ինքեան ցանկացեալ է: Սորին վասն զոր օրինակ հեշտութ՟ի՝ կամ ներքոյ կալով առաքինութ՟ե, կամ վերոյ, և կամ զուգորդ, աղանդս երրեակ ծնանի, նոյնօրինակ հանգիստն, նոյնպէս երկոքին, նոյնպէս և նախկինք բնութ՟ե՝ զայլ երրեակս պատճառաւորեն: Ս

զի ըստ պէսպէս կարծելոյ մարդկան՝ է զի ներքոյ անկանին առաքինութե՟, է զի վերադասին, է զի համադասին. որով երկոտասան թիւ աղանդոց 'ի վեր ելանէ. Բայց և այս թիւ կրկնապատկի, յաւելմամբ տարբերութե՟ իրիք, այս է՝ ընկերական կենաց. վասն զի որ ոք զհետ գնայ միոյ յերկոտասան աղանդոցն, յայտ է՝ զի կամ վասն իւր ինչ զայն առնէ, և կամ նա և վասն ընկերին՝ որում և պարտի զոր անձինն կամի. Սորին վասն լինին երկոտասան դաս այնոցիկ՝ որք սակս անձանց եւեթ միոյ 'ի կարծեացն անսան, և այլ ևս երկոտասան այնոցիկ՝ որ ոչ անձանց առանձինն ընտրեն այսպէս և կամ այնպէս իմաստասիրել, այլ և սակս այլոց՝ որոց բարւոյն իբր անձանց ցանկանան. Իսկ այս քսան և չորք աղանդք դարձեալ կրկնին, յաւելեալ զտարբերութի՟ 'ի նորոց ակադեմականաց, որ լինին քառասուն և ութ. վասն զի կարող է իւրաքանչիւր ոք զմի մի 'ի քսան և չորից աղանդոցն ունել և ջատագովել իբր ստոյգ, զոր օրինակ ստոյիկեանք պնդագոյնս ունէին, թէ բարին մարդոյ որով երջանիկ լինիցի, հաստատեալ կայ միայն յառաքինութե՟ հոգւոյ. իսկ այլ ոք կարող է յանստոյգս զայդ ունել, որպէս նոր ակադեմականքն կալան, զի այդ ոչ ստոյգ թուէր նոցա, այլ հուպ 'ի ճշմարիտն. Ապա ուրեմն լինին քսան և չորք ըստ այնոցիկ՝ որք իբր ստոյգս կալեալ զհետ երթան կարծեացն սակս ճշմարտութե՟ն, և այլ քսան և չորք այնոցիկ՝ որք թէ և յանստոյգս, բայց ճշմարտին մօտաւորս համարին. Նու միւսանգամ դարձեալ, քանզի զիւրաքանչիւր 'ի քառասուն և չորից աղանդոցդ կարող է ոք ախորժել ըստ տարազու կերպարանաց այլոց իմաստասիրաց, կարող է և այլ ոք ըստ չնականացն տարազու. ահա և այսու տարբերութե՟ երկպատկեալ, լինին իննսուն և վեց. Հուսկ յետոյ, իւրաքանչիւրում յաղանդոցդ կարեն պաշտպան կալ մարդիկ և զհետ երթալ՝ կամ զհանդարտ կենաց սիրելով, որպէս որք յուսումնասիրութի՟ եւեթ դեգերիլ կամեցան և յաջողեցան, կամ զվաստակաւոր կենաց, որպէս որք յիմաստասիրելոյ փոխեալք՝ 'ի գործակալութի՟ տէրութե՟ և

'ի տեսչութեան կենդանական խրաց եղեն միջամուխ. և կամ չափով յերկաքանչիւր տարազ պարապեալք. զոր օրինակ որք զկենաց ժամանակս յարգեցին կէս մի 'ի դիտնական պարապմունս, և կէս 'ի կարևոր գործառնութիւնս. և յայոց որոշմանց եռապատիկ աճէ աղանդոցն թիւ, հասեալ յերկերիւր յութսուն և ութ.

Զայսոսիկ որչափ և մարթ եղև՝ 'ի մատենէն Վարրոնի համառօտ և մեկնաբար եդի առաջի, զնորայն իմաստս բացայայտեալ խմոյք բանիւք. Իսկ թէ զինչպիսի օրինակաւ 'ի բաց թողեալ զայլ աղանդս, զմին և եթ ինքն ընտրէ՝ զոր ասէ նախնի ակադեմականացն լինել, այն որք 'ի Պղատոնէ հաստատեալք մինչև ցՊողեմոն՝ չորրորդ կացեալ առաջնորդ դպրոցին կոչեցելոյ Ակադեմիա, ունելին ասէ ուսմունս ստոյգս, որոշեալք այսու 'ի նորոց ակադեմականաց, որոց ամենայն ինչ անստոյգ էր, և այս ազգ իմաստասիրութեան յԱրքեսեղայ սկիզբն առ՝ 'ի յաջորդէ Պողեմոնի, իսկ զաղանդն որ նախնի ակադեմականաց՝ համարի որպէս յերկբայութեան, նոյն և 'ի մոլորութեան անբաժ լինել գլխովին, զայսոսիկ ասեմ արտայայտել բովանդակապէս՝ կարի երկար է, բայց և ոչ ըստ բնաւ մասանց լռել արժան է. Արդ նախ առաջին 'ի բաց տանի զտարբերութիւն զայն ողջոյն՝ որ զթիւ աղանդոցն բազմացուցանէն. զորս և անտեսել լաւ համարի՝ այնու զի չէք 'ի նոսա կատարած բարւոյն. Վասն զի ոչ արժան դատի ընդ աղանդս իմաստասիրութեան անուանել զայն ինչ, որ յայլոցն չզանազանիցի ըստ ունելոյն այլազան վախճան բարեացն և չարեաց. Զի որովհետև և պատճառս իմաստասիրելոյ ունի մարդ սոսկապէս զերջանիկն լինել, և որ երջանիկն գործէ՝ այն է վախճան բարւոյն, ապա ոչ այլ ինչ պատճառ է իմաստասիրելոյ՝ բայց կատարած բարւոյն, սորին վասն որ ոչ 'ի խնդիր է կատարածի իրիք բարւոյ, չէ կոչելի աղանդ իմաստասիրութեան. Այլ արդ 'ի խնդրելն յաղագս ընկերական կենաց՝ իցէ՞ արդեօք առն իմաստնոյ փութալ, զի զծայրագոյն բարին՝ զերջանկացուցիչն մարդոյ՝ այնպէս կամիցի

և հոգայցէ իւրումն բարեկամի, որպէս և անձինն, կամ թէ իւրային երանութեան սակս ևեթ առնիցէ զոր առնէն, յայժմ ոչ եթէ զբուն ծայրագոյն բարւոյն խնդիր է, այլ յաղագս ունելոյ կամ ոչ ունելոյ բաժանակից այնմ բարւոյ՝ ոչ սակս իւրոյ անձինն, այլ նորին ընկերակցի, այնպէս ընդ նորա բարին խնդալով՝ որպէս խնդայ ընդ իւրն։ Դարձեալ 'ի խնդրելն ըստ նորոց ակադեմեանց՝ որոց ամենայն ինչ անստոյգ է, արդեօք իցէ՞ արժան այնպէս համարել զիրսն՝ զորոց ունիմք իմաստասիրել, թէ զոր օրինակ այլոց իմաստասիրաց թուեցաւ, ստոյգս համարել պարտ իցէ, ոչ խնդրի աստանօր՝ զի՞նչ կարծելի իցէ զկատարածէ բարւոյն, այլ զնորին ճշմարտութէ՝ թէ յերկուանալի՞ իցէ, և կամ ոչ։ Եւ զի յայտնաբանես ցուցից, արդեօք ունող աղանդոյն՝ ճշմարիտ զայն ունիցի ասել, թէ ասել ևեթ ճշմարիտ երևի, բայց գուցէ սուտ իցէ։ և սակայն երկոքին ևս զմի զնոյն բարի ունին 'ի միտս։ Նոյնպէս և յորոշմանն որ առեալ 'ի տարազէ կենաց և սովորութէ շնականաց, ոչ այն խնդրի՝ ո՞ր կատարած իցէ բարւոյն, այլ թէ իցէ՞ պարտ յայն տարազ և 'ի սովորոյթ քաղաքավարիլ այնմ որ զգեստ է ճշմարիտ բարւոյ, որ ոք և թուիցի նմա ճշմարիտ և յանձն առնլի։ Թող զի, զի և հաւանեալքն այլ և այլ վախճանի բարւոյն՝ ոմանց զառաքինութիւն դնելով, և այլոց զհեշտութիւն, սակայն տարազ վարուց և սովորոյթ զնոյն վարէին՝ զշնականացն անուանեալ։ և այնպէս որով իւիք շնականքն իմաստասէրք զատանէին յայլոց, այն ոչ նպաստէր ինչ յընտրութի և 'ի հետևումն բարւոյն՝ որով երջանիկ լինիցին։ քանզի եթէ յայդ նպաստէր ինչ, ապաքէն նոյն տարազ 'ի նոյն կատարած վարեալ տանէր, բայց այլազգի տարազ ոչ ներէր 'ի նոյն բերիլ կատարած։

ԳԼՈՒԽ Ը

Չխօսի՛ւ ի բաց թողեալ վարդանի զամենայն որոշմունս՝ որք չեն ազանդք, այլ ինդիրք, դառնայ յեռատեսի սահմանի ծայրագոյն բարւոյն, յորոց մին ևեթ է ընտրելի։

Ա՛նէծ յերբեակ յայս ազգ կենաց, մին հանդարտեալ կամ պարապորդ՝ ոչ՝ի յուզուիլ, այլ ըստ հայեցողութեանն և՛ խոյզս չչմարտութեան, և միւս վաստակաւոր՝ ի հոգոզուիլ կենցաղական գործոյից, և երրորդն յերկաքանչիւր տեսակէ զուգախառնեալ՝ ի խնդրել անդ որ յայսցանէ յաւէտ իցէ ընտրելի, ոչ եթէ կատարած բարւոյն՝ ի վիճումն առեալ է, այլ թէ որ յերիցս դժուարաւ և կամ դիւրեաւ՝ ի ստացումն տանիցէ կամ՝ ի պահպանումէն կատարածի բարւոյն՝ այս աշա հարցաքննէ։ Ա՛ւան զի կատարած բարւոյն՝ անդէն՝ ի ժամանելն յայն՝ վաղվաղակի երանելի գործէ։ Ա՛սէ յիմաստախնդիրն պարապուիլն, կամ՝ի հասարակաց վաստակաւորութեան, կամ յերկուսին փոփոխակի պարապելոյ, ոչ անդէն վաղվաղակի իւրաքանչիւր երանելի ոք լինի. զի մարթէ է բազմաց ըստ միոյ յերից քաղաքավարել, այլ՝ի բազձումն կատարածի բարւոյն՝ որով է մարդոյ երանութիւն, սխալել։ Ա՛յլա ուրեմն այլ է ինդիր յաղագս կատարածի բարեաց և չարեաց, որ զիւրաքանչիւր աղանդ իմաստասիրացն զատանէ, և այլ խընդիրք են յաղագս ընկերական կենաց, յաղագս դեգերանացն ակադեմեանց, յաղագս զգենլոյ և ապրելոյ շնականաց, յաղագս եռատեսակ կենացն՝ պարապորդ, և վաստակաւոր և յերկուց խառն. յայսոցիկ և ոչ՝ի միումն զկատարածէ բարեաց և չարեաց հարցաքննութիւնն լինի։ Ա՛յն իբրև քանզի Ա՛րկաս Ա՛ պրծոն՝ ի քառեակ որոշմանց աստի՝ ոչ յընկերական կենաց, և՝ի նոցանէ ակադեմեանց, ՝ի շնականացն, և յեռատեսակն քաղաքավարուիլ՝ հաշիւ եգեալ եհաս մինչ յաղանդս երկերիւք ուխտուն

և ութ , և եթէ գուցէ այլս նոյնպիսիս յաւելուլ մարթ իցէ , զինի ապա զամենայն զայն 'ի բաց թողեալ սակս ոչ պարապելոյ նոցա 'ի խոյզս ծայրագոյն բարւոյն , որով և աղանդք ոչ են , և ոչ կոչին , դառնայ այնուհետև յերկոտասանսն յայնոսիկ՝ յորս խնդրել գոյ որ իցէ բարին մարդոյ , որոյ ստացմամբ լինի երանելի . որպէս զի ընտրեալ յայնցանէ զմին ճշմարիտ, զայլսն սուտս լինել ցուցանիցէ ։ Վասն զի հանեալ 'ի բաց զեռատեսակն զայն տարազ կենաց , նուազէն երկու մասունք նշանակեալ համարոյդ , և մնան աղանդք իննսուն և վեց ։ Բարձեալ 'ի բաց զորոշումն որ 'ի շնականաց , ընդմիջելով լինին քառասուն և ութ . հանցուք և զոր 'ի նոր ակադեմեանցըն յաւելուած , և մնայ կիսով չափ՝ քսան և չորք . բարձեալ նոյնպէս և զյաւելեալն յընկերական կենաց , երկոտասան լինին մնացեալքն . զի այս որոշումն վերածեաց զթիւն 'ի քսան և 'ի չորս ։ Արդ զերկոտասանեցունց զայսցանէ չմարթի ասել թէ աղանդք ոչ իցեն . քանզի ոչ այլ ինչ՝ բայց վախճան բարեաց և չարեաց յայնս խնդրի . և 'ի գտանել վախճանի բարեացն , ապաքէն 'ի հակառակէն և չարեացն իմանի ։ Իսկ զի երկոտասան աղանդք լինիցին . երեքկնել պիտի զչորեսին զայն՝ զհեշտութիւն , ըզհանգիստ , զերկաքանչիւր միանգամայն , և զնախկինս բնութեան , զոր Վարրոն սկզբնածինս կոչէ ։ Զի չորեքին այս ուրոյն ուրոյն՝ է երբեք զի առաքինութեան ներքոյ անկանին , ոչ սակս ինքեանց լինելով ցանկալիք , այլ 'ի պէտս առաքինութեան . է զի նախապատիւ քան զայն լինին , որպէս թէ ոչ վասն իւր կարեւոր ինչ համարիցի առաքինութիւն , այլ առ ստանալոյ կամ պահելոյ զայնոսիկ . և է զի զույգ մեծարին , թուելով իմն սակս ինքեանց լինել բաղձալիս՝ եթէ առաքինութիւն , եթէ չորեքին այս . և այսու օրինակաւ զքառեակ թիւն եռապատկէն , յերկոտասան աղանդս վերաբերեալք ։ Բայց 'ի չորիցն յայնցանէ զերիսն 'ի բաց պարուրէ Վարրոն , այս է՝ զհեշտութիւն , զհանգիստ , և զերկուսն կից , իբր ոչ եթէ յումպէտս դնելով զնոսա , այլ զի սկզբնածինքն բնութեան 'ի ներքս

փակեն և զհեշտութիւն, և զհանգիստ ։ Ապա յերկուց յայսցանէ զի՞նչ պիտոյ է առնել երիս, որպէս թէ ուրոյն բաղձացեալ հեշտութեանն, և ուրոյն՝ հանգստեանն, և երրորդ՝ երկոցուն միանգամայն. որովհետև նախկինքն բնութեան յինքեանս ունին և զայսոսիկ, և զայլս ևս բազումս ։ Այժմ իբր արժան դատի Վարրոն քննել խնամով՝ ո՞ր յերից աղանդոց իցէ առաւել ընտրելի. զի ոչ ներէ և հաւատոյ բանն՝ աւելի քան զմին գտանել ճշմարիտ՝ եթէ յերեսեան յայսոսիկ, և եթէ յայլ խնդիրս ուրեք, զոր և տեսանելոց եմք զկնի. այլ առ տեղեաւս խօսեսցուք ըստ կարի համառօտ և մեկին՝ զիա՞րդ յերից յայնցանէ զմին ընտրէ Վարրոն ։ Իսկ երեք այս աղանդք այսիւ լինին, յորժամ նախկինք բնութեան կամ վասն առաքինութեան են բաղձալիք, կամ առաքինութիւն վասն նոցա, և կամ երկոքին իսկ՝ առաքինութիւն և նախկինք բնութեան վասն ինքեանց ։

ԳԼՈՒԽ Գ.

Յերից անտի աղանդոց պարապելոց 'ի խնդիր ծայրագոյն բարւոյ մարդոյն՝ զո՞ր արդեօք ընտրելի դատի Վարրոն, զհետ երթեալ կարծեաց հնոց ակադեմեանց. որոց առաջնորդ Անտիոքոս ոմն ։

Իսկ արդ ո՞ր այն յերից յայսցանէ ճշմարիտ իցէ և հետևելի, այսպիսաբար իմն ջանայ հաւանեցուցանել ։ Նախ առաջին՝ քանզի զծայրագոյն բարին հետախուզէ իմաստասիրութիւն՝ ոչ զծառոյ, ոչ զանասնոյ, ոչ զաստուծոյ, այլ զմարդոյն, թէ զինչ մարդն իցէ՝ խնդրել արժան դատի ։ Զի երկու ինչ 'ի նորա բնութեան տեսանելով՝ զմարմին և զոգի, և յերկոսին աներկբայելի գիտելով զոգի լաւագոյն լինել և չնաշխարհիկ, խնդրէ ապա միթէ հոգի միայն իցէ մարդ. մինչև մարմնոյն լինել առ նա որպէս ձի առ հեծեալ. քանզի հեծեալն ոչ է մարդ և ձի, այլ մարդ միայն, բայց հեծեալ կոչի՝ յարակցութիւն իմն առ ձի ու-

նեալ։ Կամ թէ մարմինն ևեթ իցէ մարդ, գոլով առ
Հոգին օրինակ իմն իբր ըմպանակ առ ըմպելի. զի ոչ եթէ
բաժակն և ըմպելի որ ՚ի բաժակին է՝ ասի միանգամայն
ըմպանակ, այլ բաժակն ևեթ՝ իբր ըմպելւոյն որ ՚ի նմա
պահականակիր։ Այլ կամ թէ ոչ Հոգի միայն, ոչ մարմին
միայն, այլ համայն երկաքանչիւր իցէ մարդ, որոյ մասն ինչ
իցէ մին, եթէ Հոգի եթէ մարմին։ Իսկ բոլոր երկուցն բաղ-
կացեալ առ՚ի լինելոյ մարդ. զոր օրինակ երկու ձիս լծեալս՝
զոյգս կամ ամոլս կոչեմք, որոց եթէ աջականն, և եթէ
ահեկան՝ մասն է զուգին. իսկ զմի յայնցանէ զիարդ և
կոչիցէ առ միւսն, ոչ ասեմք զոյգս, այլ երկու միանգա-
մայն, Ի՚քո յերից յայոցանէ զերբորդս ընծրէ Ո՚արբան.
և մարդ համարի ոչ զոգի լոկ, ոչ զմարմին լոկ, այլ զոյգ
զոգի և զմարմին. և վասն այսր բարի ծայրագոյն որով
մարդ լինի երանելի, ասէ Տաւտաւեաւ՚ի բարիս երկու-
ցըն ևս՝ և Հոգւոյն և մարմնոյն, Ի՚յոյսիկ ապագաւ հա-
մարի Ո՚արբան, թէ նախկինք ընուէք բաղձալի են սակս
ինքեանց, նոյնպէս և առաքինութենին՝ զոր ուսումն ՚ի
ներքս բերէ, իբր արհեստ կերոյ, որ և գերազանցեալն է
՚ի բարիս Հոգւոյն։ Ո՚ւսեալ առաքինութիւնն՝ որ արհեստն է
քաղաքավարութեան, իբրև յինքն առնու զնախկինս
ընութեանն՝ որք կայինն իսկ առանց նորա, և յոյս չև ևս
՚ի վար արկեալ ուսումնին, զամենայն զայն բաղձալ վասն
ինքեանց, այլ և զինքն վասն իւր. և զամենայնին և զին-
քըն ևս ՚ի կիր առնու՝ զուարճանալ ամենայնիւ և վայե-
լել յաւէտ և նուաղ, իբրև զի են ՚ի նոսա մեծք և փո-
քունք, բայց ընդ ամենայնն ախորժելով, և երբեք զփո-
քունս ոմանս անտես ևս առնելով ըստ պահանջել պի-
տոյից՝ առ ՚ի զմեծագոյնս ՚ի ձեռս բերելոյ կամ պինդ
ունելոյ։ Ո՚ակայն ՚ի բռնադակ բարիս Հոգւոյ կամ մար-
մնոյ՝ և ոչ զմի ինչ գերիվերոյ քան զինքն զնէ առաքինու-
թիւն. զի սա բարիսք վարի և ինքեանմ, և այլովք բա-
րեօք՝ որ զմարդ առնեն երջանիկ. իսկ ուրանօր չիցէ սա,
որչափ և յոլովք իցեն բարիքն, ոչ ՚ի բարիս ունողին են.
որով և ոչ բարիս նոցա ասել արժան է, իբրև զի ոչ յո-

գուտ ինչ զօրէն չարաչար վարեցելումն ։ Ապա ուրեմն կեանք մարդոյ՝ որ յառաքինութիւն վայելէ, և յայլս հոգւոյ և մարմնոյ բարիս՝ առանց որոց ոչ կայ առաքինութիւն, աՀա երանելի ասի. և եթէ վայելիցէ և յայլս՝ 'ի բոլորեսին կամ 'ի բազմագոյնս՝ որոց չկարօտի առաքինութիւն, երանագոյն ասի. ապա եթէ յամենայնսն բովանդակապէս վայելիցէ, ոչ միոյ իրիք բարւոյ պակասելով հոգեկան կամ մարմնական, ամենաերանեան ասի ։ Այլ զի ոչ նոյն է կեանք և առաքինութիւն. զի ոչ եթէ ընդհանուր կեանք՝ այլ կեանքն իմաստուն առաքինութիւն է. և մարթ է որ և է կենաց լինել առանց առաքինութեան. բայց առաքինութիւն չկարէ առանց կենաց ինչ կայանալ ։ Զնոյն և յաղագս յիշողականին և մտաց ասելի կարծեմ, և որ այլն ևս նոյնպիսի կայ 'ի մարդումն. զի կան այսոքիկ և յառաջ քան զուսումն, և առանց սոցա ուսումն չկարէ լինել, որով և ոչ առաքինութիւն՝ որ ուսմամբ ապաքէն ստացանի ։ Իսկ արագընթացութիւն, մարմնոյ գեղեցկութիւն, ուժեղակութիւն, և այլք սոյնպիսիք՝ յայնցանէ են առանց որոց կայ առաքինութիւն, և ինքեանք իսկ առանց առաքինութեան. սակայն բարիք են. և ըստ կարծեաց իմաստասիրացս՝ զայսոսիկ ևս սիրէ առաքինութիւնն վասն իւր, և զնոյնս 'ի կիր առնու և վայելէ՝ որպէս զիարդ պատշաճ է առաքինութեան ։

Զայս երանելի կեանս համարին ընկերական ևս լինել. որ զբարեկամացն բարիս սիրէ վասն ինքեանց իբրև զիւրս. և կամի նոցա վասն ինքեանց զայն ինչ՝ զոր և ինքեան, եթէ 'ի միում տան իցեն, զոր օրինակ կին և որդիք և որ այլ ընտանիք. եթէ 'ի տեղւոջ բնակութեան իցեն, որպէս քաղաքն, զոր օրինակ քաղաքացիքն կոչեցեալք. եթէ 'ի գաւառին ողջոյն, որպէս են ազգքն կըցորդեալք, մարդկային ընկերութեամբ. և եթէ 'ի բուն իսկ աշխարհի որ յանուն երկնի և երկրի իմանի, որպիսի զաստուածոն ասեն՝ զորս բարեկամս համարին մարդոյ իմաստնոյ, և մեք հարազատ ևս հրեշտակս առձայնեմք ։ Արդ յաղագս կատարածի բարեացն՝ որպէս և չարեացն,

ոչ ընաւ երկբայել արժան է՝ ասեն. և զայն իսկ դնեն խը-տիր ընդ ինքեանս և ընդ նոր ակադեմականս. և փոյթ ինչ ոչ է նոցա՝ շնականաւն արդեօք, կամ այլով տարազու կենաց փիլիսոփայիցէ իւրաքանչիւրոք յաղագս կատարածին, զոր հաստատեալ դնեն լինել ճշմարիտ. Իսկ յեռատեսակ կենաց անտի որ հանդարտեալ, և վաստակաւոր և խառն յերկոցունց՝ զերրորդս զայս ընտրելի ասեն. Զայսոսիկ ահա խորհին և ուսուցանեն ակադեմեանքն առաջինք՝ ըստ Վարրոնի ստուգելոյն, առաջնորդ աղանդոյս ունելով զԱնտիոքոս ոմն՝ վարժապետ իւր և Կիկերոնի, թէպէտ և զնա առաւել ստոյիկեան կարծեցուցանէ Կիկերոն՝ քան եթէ նախնի ակադեմեան. Այլ մեզ չէ ինչ փոյթ որք բուն իրացն կամք լինել իրաւադատք, քան եթէ մեծ ինչ համարել զգիտելն զմարդկանէ՝ թէ զինչ ինչ այլ իւրաքանչիւր կարծիս ունիցի.

ԳԼՈՒԽ Դ

Զինչ քրիստոնեայքն կարծիցեն յաղագս ծայրագոյն բարւոյն և ծայրագոյն չարին, հակառակ իմաստասիրացն՝ որք զբարին ծայրագոյն յիւրեանս յինքեանս լինել ասացին.

Եւ արդ 'ի մէնջ թէ խնդրիցէ ոք, զի՞նչ ունիցի պատասխանի քաղաքն այ ըստ իւրաքանչիւրումն հարցեալ, և ընդ առաջինն զի՞նչ զկատարածէ կարծիցէ բարեաց և չարեաց, տայ պատասխանի. կեանքն յաւիտենական է ծայրագոյն բարի, և մահ յաւիտենական՝ ծայրագոյն չար. վասն որոյ 'ի պէտս զայն ստանալոյ, և յայսմանէ զերծանելոյ՝ ուղիղ զկեանս մեր յարդարել արժան է. ըստ որում գրեալն է. "Արդարն 'ի հաւատոց կեցցէ". Ամբակ. Բ. 4. Վասն զի ոչ զմերն բարի դեռ տեսանեմք, ուստի և հաւատալով պիտոյ է զայն խնդրել, և ոչ զուղիղն կեալ մեզէն ինչ ունիմք, թէ ոչ հաւատացելոցն և

հայցողաց նա ինքն ձեռն տայցէ՝ որ զհաւատան ետ, առ 'ի հաւատալոյ որ 'ի նմանէ օգնականութեան մեզ լինելոյ: Իսկ նոքա որք միանգամ զկատարած բարեացն և չարեաց համարեցան լինել յաստի կեանս, հաստատեալք զբարին ծայրագոյն կամ 'ի մարմնի, կամ յոգւոջ, և կամ յերկոսին, և զի բացերևագոյն ևս ասացից, կամ 'ի հեշտութեան, կամ յառաքինութեան, կամ յերկաքանչիւրն. կամ 'ի հանգըստեան, կամ յառաքինութեան, կամ յերկոսին իսկ. կամ 'ի հեշտութեան և 'ի հանգիստ միանգամայն, կամ յառաքինութեան, կամ յերկաքանչիւրն. կամ 'ի նախկինս բնութեան, կամ յառաքինութեան, և կամ յերկոսս յայս միանգամայն, այսպիսի կարծողքն ասեմ՝ հրաշագիտակ ինն ունայնութեամբ կամեցան աստանօր լինել երանելի, և երանանալ անձամբ յանձինս. զորովք ծաղր առնէ Ճշմարտութիւն ասելով մարգարէին. «Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան». կամ ըստ առաքելոյն յառաջ բերելոյ զվկայութիւնս. «Տէր ճանաչէ զխորհուրդս իմաստնոց, զի են ընդունայն»:

Քանզի ո՞վ ոք զեղկութիւնս կենցաղոյս արտայայտել բաւական իցէ՝ թէ զամենայն ևս թափիցէ ճարտարութեան բանից. զոր և ողբալ ողբացաւ Կիկերոն 'ի մխիթարութեան մահու դստերն, զիարդ և կարէրն. բայց քանի ինչ է զոր կարաց: Զի որ նախկինքն ասին բնութեան, երբ արդեօք, ո՞ւր և ե՞ւ իւիք այնպէս յարդարունք լինիցին 'ի կեանս յայս, որ ոչ ծփայցեն բնաւ 'ի դէպս անհաւաստիս. ո՞ր ցաւ հակառակ հեշտութեան, ո՞ր վրդովումն եղծիչ հանգստեան չկարիցէ 'ի ներքս անկանել 'ի մարմին առն իմաստնոյ: Ապաքէն անդամոց հատումն կամ թուլութիւն խանգարէ զանարատութիւն մարդոյ, տգեղութիւն զգեղն, հիւանդութիւն զառողջութիւնն, խոնջումն զոյժ, ընդարմութիւն կամ դանդաղանք զսթափութիւն. և ո՞ր յայսցանէ չհասանիցէ երբեք 'ի մարմին իմաստնոյն: Եթէ մարմնոյ դիրք և շարժումն 'ի պատշաճ կայի իցեն, ընդ նախկինս բնութեան համարեալ են. այլ զի՞նչ եթէ հիւթ չարախտավար զանդամսն զդողանի հարկանիցէ. զի՞նչ

ԼԵՒ՝ ի քամակին կորանալ յափսիեր գնայել մարդ՝ զքառատանեայ բերելով զձևացութիւն. ոչ ապաքէն եղծանել զեղծանել զնա՝ զմարմնոյ կպիլցն և դշարժման տեսիլ և ըզվայելուչն, Օ՜ ինչ և հոգւոյ սկզբնաճինն անուանակալ բաներ, յորս երկու նախապատիւս դնեն առ ի հայհոյութիւն Ճշմարտութեանն, զզգայութիւն և զմիտս. որ զգայութիւն, և որչափ ինչ ինայել արդեօք, եթէ զայլ վտանգն թողեալ, խուլ և կոյր լինիցի մարդ. Լոկ բան և մտաւորութիւն յո երեքեալ գնայցի, ուր հնոյիցի, եթէ յախտի խմբէն խելաշրջի լինիցի մարդ. Հոյժամ խելայեղութեանքն բազում ինչ անպատեհս խոսին կամ գործեն, և այն յոլովակի այլազգիս յիւրեանց ի բարերք կամայն և ի բարոյից, նա և ընդդիմամարտս իսկ նոցունց, ի խորհել կամ ի տեսանել մեր գայնս՝ եթէ քաջ ի միտ առնուցումք, հաղիւ զարտասուս արդելոյլ եթէ կարիցեմք. Օ՜ ինչ և վասն նոցա ասացից՝ որք ի գիւաց լինին. ուրանօր արդեօք թաքուցեալ կայցէ, կամ քօղարկեալ մտաւորութիւն նոցա յորժամ այն չար բան իւրեանն կամի վարել և զգինոցա, և զմարմին. և ո՞ր վատահասցի անմբռնելի յայսմ չարէ լինել խմաստնոյն ի կենցաղումն. Չէ զարձեալ, Ճշմարտութիւնն հաստատն որպիսի արդեօք, և որքան իցէ ի մարմնի աստ, յորժամ բան Ճշմարտաձառն գրոց խմաստութիւնն ե. 15. ընթեռնումք, "՝՝արմին եղծանելի ծանրացուցանէ զոգի, և հակէ հողեղէն յարկ զմիտս բազմահոգս. Լոկ յարձակումնն կամ բռնութիւն բերութեան հոգւոյ, զոր և ընդառաջին բարիս բնութիւնն համարեն, ոչ ապաքէն այն խակ է՝ յորմէ նեղգործին խելագարացն ողորմելի լկմունք և ապարդ պակուցանողականք, յորժամ զգայութիւնոցա խանգարի, և բանն ի թմբիր հարկանի.

Լոկ նա ինքն առաքինութիւն, որ թէ և էհ ի համարի նախկին իրաց բնութիւնն, իբրև զի ուսմանն նպատիւք յետոյ ստացանի, բայց ի ծայրի կայ մարդկօրէն բարեացն, զինչ այլ գործէ աստանօր՝ եթէ ոչ մարտս անդադարելի ընդ ախտից՝ ոչ արտաքնոց, այլ ներքնոց, ոչ օտարոտուց, այլ որ մեր են յատուկ, և մանաւանդ ժուժկալութիւնն ա-

առաքինութեի, կամ զգաստութեի. որով մարմնական յաժառութեեցն սանձ ի վերայ դնի, զի մի զմիտս ի հաւանութի ձգիցեն իւրաքանչիւր ապիրատութեց, ։ Ասացի վերջ գըլխովին առանց ախտից, ուր բան առաքելոյ ասէ՝ ։ Գաղ. ե. 17. “Ի՞արմին ցանկայ հակառակ Հոգւոյ.,. և ամենայն ախտ կայ դիմամարտ առաքինութեին, որպէս և նոյն ասէ. “Ոչ Հոգի ցանկայ հակառակ մարմնոյ ։ Ոչ զի առքա, ասէ, միմեանց հակառակ են, մի զոր կամիցիքն զայն առնիցէք... ։ Ոչ զինչ առնել կամ է մեզ՝ յորժամ զլուսին կատարած ծայրագոյն բարւոյն խնդրեմք, բայց զի մարմինն յցանկանայցէ հակառակ Հոգւոյ, և չգտանիցի առ մեզ ախտ՝ որում հակառակ ցանկացի Հոգին ։ Ոչայց թէպէտ և կամիցեմք զայդ ի կեանս յայս, այլ զի ոչ կարեմք յարդիւնս ածել յայն ինչ գոնէ Հոգւացուբ մինչուն անկանիլ Հոգւով՝ մարմնոյ հակառակաբարն ցանկացողի, և ի գործ մեղացն ձգեալ բերիլ մերովանն հաւանութբ ։ Վ՚ասն որոյ քաւ ի մէնք դնել ի մտի՝ թէ դեռ կալով մեր ի բնակարոր յայսմ կոտւի, արդէն ի ձեռին ունիցիմք զերանութեին՝ առ որ յաղթելովին հասանել կամիմք ։ Ոչ ո՞ այնչափ խնաստուն ոք իցէ, որ ի դիմի յաժարուեցն անպատեհագամ կայցէ ամենայնիւ ։

Օ՚ինչ և առաքինութեին՝ որ խոհեմութեի ասացեալ է. ոչ տպաքէն արձուն կայ բովանդակ ընտրել զարի և ըզչար. որպէս զի սխալուցի ինչ մի սպրդեսցի ի ցանկալ բարւոյն, և խորհել ի չարէ. ահա և նա վկայէ այսուիկ՝ թէ մեք ի չարիս կամք, և չարիքն ի մեզ ։ Օ՚ի ուսուցանէ մեզ՝ թէ չար է հաձիլ ընդ մեզս, և բարի՝ չհաձիլ ընդ ցանկութեի առ ի մեղանչելոյ ։ սակայն զչարն՝ առ որ չհաձիլ խոհեմութեին ուսուցանէ, և ժուժկալութիւն ձեռն տայ, ոչ ի բաց քեզել այսու կենօքս ոչ խոհեմութեին, և ոչ ժուժկալութեին ։ Օ՚ինչ արդարութեին, որոյ գործ է տալ իւրաքանչիւր զիւրն, յորմէ և ի մարգումն արդարացի կարդ իմն է բնութեի՝ զի Հոգի հնազանդեսցի նմա, և մարմին՝ Հոգւոյ, և երկոքին՝ նմա ։ ոչ ահա յայտ առնէ՝ պարապել տակաւին ի վաստակս գործոցն, քան թէ

Հանգչել՝ի կատարածի այս ինչ գործոց։ Օ՛ի այնչափ
Թերի է հոգւոյ առ Ա՛ծ հնազանդութիւն, որչափ սակաւ
ունիցէ զԱ՛ծ՛ի խորհուրդս իւր. և այնչափ նուազ մաս-
ինոյն հնազանդութիւն առ հոգի, որչափ մեծանայի հակա-
ռակ ցանկանայ։ Այսպս ուրեմն մինչդեռ բունեալ կայ՛ի
մեզ այս հիւանդութիւն, այս ժամս, այս նուազուհի, որ-
պէս իշխիցեմք ազատացեալս զմեզ ասել. և եթէ չէ ա-
զատացեալս, զինքդ երանելիս վերջնականն երանութիւն,
Յակ և առաքինութիւնն վերաձայնեալ արիութիւն նա և՛ի
քաջակորովն խմաստութիւն վկայ է պարզաբոս մարգկայ-
նոց չարեաց, որոց տանել կայ համբերութիւն. և ես ընդ
ստոյիկեանն փիլիսոփայս զարմացեալ եմ, որովք դիմօք
ոչ՛ի չարիս գրէն զայնոսիկ, ուր խոստովանին իսկ՝ զի է-
թէ այնպիսիք իցեն որոց այլ խմաստուն ժուժալ չկարիցէ,
կամ չպարտիցի, Հարկ լինի նմա մահ անձինն առնել, խոյս
տուեալ կայսց կենաց։ Իքան իցէ ապրութիւն ամբարշա-
ւաձ մարգկան՝ կարծելոց աստէն ունել զկատարած
բարւոյն, և անձամբ երջանկանալ. որ զի խմաստունն առ
նոսա՝ զորպիսի որ ինքեանք ստութիւն պաշտուձեն, Թէ եր-
բեք կուրասցի, Թէ խլասցի, Թէ Համրասցի, անդամոք
լուծանիցի, ցաւօք տանջեսցի, և զոր ինչ մարթի իցէ ա-
սել կամ խորհել Յոմօրինակ չարեաց՝ Թէ հասանիցէ՛ի
վերայ նորա, մինչև տիպեսցի գնալ գիւրովի, ոչ ամաչեն
զինեանս այսպիսեաց չարեաց կրողական՝ երանելի առձայ-
նել։ Այաբէ երանական կենացս, որ առ՛ի վախճանելոյ՝
օգնութիւն՛ի մահուանէ խնդրէ։ Այն արդարեւ երանելի
է, մեղ՛ի նմա պիտի. իսկ եթէ՛ի պատճառս չարեացս
այսոցիկ փախչելի, երանելի զինքդ իցէ։ Այսմ՝ որպէս ոչ
չար իցեն այսոքիկ՝ որք զարհուրելիս բարի նկուն առնեն,
և բռնադատեն զարհուրելն ոչ միայն մտանելուտը ան-
ձինն լինել, այլ և զառանցել մոլեգնիլ, զինոյն կենաս ա-
տելով երանելի, և ապա Թէ ազդրել Թէ փախչելի է. ո՛ որ
իցէ այնպէս զայացու, մինչև չտեսանել Թէ որ երանելին
է, փախչելի ոչ է։ Իսկ եթէ զի ընդ բնաւոյ տկարունն
ձնդի, այլոր ազգաւ փախչելի ասեն, հիմ ապա չիստոտ-

վանին նոյնպէս թշուառ լինել, խորտակեալ զամբարտաւանութիւն կղակս։ Ա՛յլ բեր ասա աղաչեմ, Պատրոն անձնամոռախին լինել՝ համբերութի՞ւն գործ էր, թէ առաւել չհամբերութի՞ւն. զի ոչ արդեօք արարեալ էր նորա զայդ՝ եթէ չէր անժոյժ լեալ ընդ յաղթութի՞ւն կեսարու։ Այլ ո՞ւր է արիութի՞ւն. ապաքէն տեղի՛ եա, ընդոստնեցաւ, այնպէս ինն պարտեցաւ, մինչև զերանելի կեանն թողուլ։ Երանե՛լ փախչէլ։ Այ՛ն եթէ չև եւս երանելի էր. ապա ուրեմն թշուառ էր։ Այլ զիա՞րդ ապա չար չէին՝ որ թշուառական գործէին զկեանս և տեղի տային։

Ա՛յն այսօրիկ որք միանգամ խոստովան եղեն չարիս լինել զայսօրիկ, որպէս Ճեմականքն և ակադեմականք նոքա, որոց աղանդոյն Ջատագով կայ Ա՛յրքոս, թէպէտ և մեղմագոյն ինն խօսին, բայց է և նոցա մոլորութի՞ւն նորա նշան, զի՝ ինոսին իսկ չարիս ծանրատաղտուկս՝ յորոց ինքնագործ մահուամբ փախչելի առնն զվշտագնեալն, այնգունեն տակաւին թէ երանելի կեանք է։ Զար են, ասէ Ա՛յրքոս, խաչատանգանք և տանջմունք մարմնոյ, և այնչափ չարաչարք, որչափ մեծամեծք լինիցին. յորոց զի ազատանայցես, փախչել՝ի կենաց աստի արժան է։ Յորո՞ց կենաց՝ աղէ ասա։ Յայսմանէ, ասէ, որ այսքանիւք չարեօք ծանրանայ. և իսկ ուրեմն երանելի՝ի նոյն՝ի չարիս՝ որոյ վասն փախչելի զայս առես. միթէ այնու կոչես երանելի զքեզ օրէնն և տեղի տալ մահուամբ՝ի չարեացս յայսցանէ. և զինչ ապա եթէ ըստ ձեմայնոց դատաստանացն՝ի նոսին կալեալ ըմբռնիցիս. ոչ մեռանել տացի քեզ, և ոչ անցաւ երբեք կալ ինալ։ Այդ արեւ գիտէ յայժմ թշուառ ասիցես զայսպիսի կեանս. ուրեմն ապա ոչ յայն ասկս թշուառ չիցէ՝ երբ զի մարթէ արագ վախճանել. ուր զի թէ մշանջենական իցէ, գու ինքնին թշուառ զայն դատիս։ Այ՛ն որոյ ոչ զի կարճատև է, այնու թշուառութիւն չպարտի գրել. կամ որ եւս յանտեղեացն է, թշուառութի՞ւն կարճ ժամանակեայ գոլով, երանութիւն ևս կոչիցի։ Այլապէն բուռն զօրութի՞ւն է՝ի չարիս յայսոսիկ, որք բռնադատեն զմարդ և զիմաստուն անգամ՝ առ նոցա կարծիս՝ մերկա-

նալ խռովլի զմարդն գոլ. ուր ինքեանք ասեն, և արդար ասեն, թէ նախկին իմն գոգցես և մեծագոյն բարբառ է բնութեան՝ մարդոյ սիրով առ ինքն բերիլ, և այնու բնաւորաբար անձնապահ 'ի մահուանէ լինել, և այնպէս իմն բարեկամ անձինն՝ զի զկենդանին գոլ և զանբաժան կապակցութի մարմնոյ և հոգւոյ կամիցի ուժգնակի ախորժելով: Նոյնն է արդարև զօրութի չարեացն այնոցիկ 'ի վատթարել զխռովլին զբնութե զայս ազգունս, խորշել 'ի մահուանէ ամենայնիւ բովանդակ ճգամբ. և սակայն այնպէս վատթարեալ գտնիցի՝ մինչև յորմէ խորշէրն, ըղձալի փափաքելի լինիցի, և եթէ ոչ յայլ ուստեք դիպեսցի, ինքնին զայն յանձն ածիցէ մարդ: Նոյնն է զօրութի չարեացդ, որք զարիութին անգամ առնեն մարդասպան, եթէ սակաւ ինչ արժան իցէ արիութի կոչել, այնպէս իմն 'ի պարտութի մատնեալ նորա, զի որ իբր առաքինութի յիւր տեսչութի և յամրի առեալ է զմարդ, ոչ միայն պահպանել զնա համբերութեամբ չզօրիցէ, այլ ինքնին սպանանել ևս զնա հարկ իցէ: Արդարև պիտոյ է առն իմաստնոյ համբերութք տանել նա և մահու, բայց այնմ որ յայլմէ գայցէ 'ի վերայ. իսկ եթէ ըստ իմաստասիրացդ՝ ինքնին յանձն ստիպիցի գործել զայն, հարկ է նոցա խոստովանել համարձակ թէ ոչ լոկ չարք են, այլ և անհանդուրժելի չար՝ որ հարկ առնեն իմաստնոյ գործել զայդ: Արդ ուրեմն կեանք որ ընդ բեռամբք այսոցիկ չարեաց մեծաց և ծանունց ճնշի, կամ պատահից նոցա ներքոյ անկանի, ոչ բնաւ երանելի ասացեալ էր 'ի մարդոյդ յայդցանէ, եթէ դոքա որպէս 'ի ծանրանալոյ չարեացն յաղթեալք՝ մահ անձանց առնելով՝ նուաճին ընդ թշուառութեամբ, նոյնօրինակ յաղթեալք իրաւացի բանիւք 'ի խնդրել անդ զերանելի կեանս՝ յանձն առնուլին ճշմարտութեան հաւանել, և ոչ համարելին յանձինս թէ մարթ իցէ վայելել մահկանացու կենօքս 'ի ծայրագոյն բարին վերջնական. ուր նոքին իսկ առաքինութիք՝ քան զորս լաւագոյն ինչ և պիտանագոյն չէ գտանել 'ի մարդունս, զոր օրինակ նպաստք են հզօրք հակառակ բռնութե վտան-

գացն և վաստակոց և ցաւոց, նոյնպէս անխաբ վկայք են թշուառութ̃եցն։ Վասն զի եթէ արդարև առաքինութիւք իցեն, որ զտանին միայն յորս ճշմարիտ ա̃ծպաշտութ̃ի կայցէ, ոչ խոստանան անկրելիս յամենայն թշուառութ̃եց առնել զմարդիկ զիւրեանցն ստացողս. զի ոչ ստաբանք են ճշմարիտքն առաքինութիւք թէ զայդ խոստանայցեն. այլ խոստանան թէ կեանքն մարդոյ՝ որ ընդ բազմապատիկ չարեօք կենցաղոյս յեղկութ̃ի կայ վտարանդի, յուսով հանդերձելոյ աշխարհին երանելի է, որպէս և փրկեալ. զի երանելի զիա՞րդ իցէ՝ որ չեւ է փրկեալ։ Սուտի և առաքեալն Պօղոս ոչ վասն անմտաց մարդոց անժուժիցն, անժուժկալից և անխրատից, այլ որք ըստ ճշմարիտ ա̃ծպաշտութ̃են կեցցեն, ունակք ելով ճշմարտիցն առաքինութ̃եց՝ ասէ. «Զի յուսով ապրեցաք. այլ յոյս տեսանելի չէ յոյս. զի զոր տեսանէ ոք, զի՞ եւս յուսայ. ապա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք». Հռ̃մ. Ը. 24։ Ապա որպէս յուսովն ապրեցաք, նոյնպէս յուսով երանելիք եղաք. և զոր օրինակ զապրելն՝ նոյնպէս զերանութ̃ի ոչ եթէ առձեռն ունիմք, այլ հանդերձելումն ակն ունիմք. և այն՝ համբերութ̃բ. զի դեռ 'ի չարիս կամք, որոց համբերութ̃բ պարտիմք ժուժկալել, մինչև 'ի բարիս անդր ժամանիցեմք, ուր ամենայն ինչ եղիցի անճառ զուարճութ̃են արարող, և ոչ մի ինչ վշտըմբեր։ Փրկութ̃ի այսպիսի՝ որ պահեալ կայ հանդերձելոյ աշխարհին, նոյն իցէ և երանութ̃ի վերջնական։ Իսկ իմաստասէրքդ այդոքիկ քանզի անտեսք գոլով երանութ̃են այնմ, հաւատալ չկամին, հնարին աստանօր նիւթել անձանց երանութ̃ի մտացածին՝ առաքինութ̃բ իմն որ ոչ նուազ պատիր քան ամբարհաւաճ։

ԳԼՈՒԽ Ե

Յաղագս ընկերական կենաց՝ որ Թէ և կարի բռնալի ՝ յոլովակի խանգարի բազմապատիկ չնաւոքք ՝

Լուսկ զոր դատիմն իմաստասէրքն՝ զկեանս ընկերական ձահաւոր գոլ առն իմաստնոյ, ընդ այդ առաւել իմն և մեք հաւանիմք ՝ Վ ասն զի ուստի արդեօք այս քաղաք այ՝ զորմ ահա զիմնեաւտատերորդ գիրս առաջնկայս մատենի ունիմք ընդ ձեռամբ՝ սկիզբն առնոյր , կամ յառաջադիմն առնէր, կամ զպատշաճականն ըմբռնելք կատարած , եթէ չէր լեալ ընկերական կեանք սրբոց ՝ Վ.յլ սակայն Թէ քանիք ՝ի տառապանս մահկանացու այսց կենաց յաձախեն չարիք առ մարդկան ընկերութիւն , ո ՝ի համար բնութիւն կարիցէ , ո ՝ի կրիս դնել բաւական իցէ ՝ Վ ուիցեն աղէ յիւրեանցն կատակերգուիմն՝ առն միում բարբառելոյ ըստ միախորհ հաւանութեան բազմոցից մարդկան (առ Տերենտիոսի) ՝ Վկեա ածի , և օրքան տեսի անտաւնօր Թշուառութիւն ՝ Վորիք ծնանս , ահա այլ հոգք ,, ՝ Օ ինչ և այն ախտաւորութիւնք՝ զոր ՝ի սիրելութիւնն յուշ առնէ նա ինքն Տերենտիոս ՝ ,, Վնչամանաք , կասկածք , Թշնամութիւնք , պատերազմ , խաղաղութիւն դարձեալ ,, ՝ Վ.յ ապաքէն սոքիմբք ծայրայրի կան մարդկայինքս ամենայն ուրեք ՝ ոչ ահա և ՝ի գոլելն սիրելութիւն բարեկամաց պատահէն յաձախակի ՝ Վ.յ ապաքէն առ յաձախութիւն այսոցիկ ՝ի մարդկային կենցաղս , յայրես հաւաստիս տեսանեմք զԹշնամանան , զկասկած , զԹշնամութիւն , զպատերազմ , իսկ զխաղաղութիւնն՝ բարի անհաստատ ՝ զի առ որս խաղաղութիւն ունել կամիցիմք , զսիրտն անդիտանամք ՝ և եթէ այսոր գիտակ իցեմք , որպիսի առ վաղիւնիցեն՝ զայն գիտեմք ոչ քնաւ ՝ Վակ այք ոմանք առաւել սիրտնեք առ միմեանս իցեն , կամ լինել պարտին իբրև զպատուսկ՝ որք յարկակիցքն են , սակայն և յայնմ չէ և չէ որ

անէրկեւան . ուր զի չարիք մեծամեծք գործեցան յոլով անգամ ՚ի նոցա գաղտնի նեղգանաց , այնչափ առաւել դառնութիւնք , որչափ անուշակ էր խաղաղութիւնն՝ չնմարիտ կարծեցեալ , այլ դաւանաւք կերպարանեալ : ՚Ա,մին իբր ա- մենեցուն սիրտ հարեալ այսու , ՚ի հառաչել ընդ անոյշ զՔուղղիսի ասացեալն (՚ի Ա Եբրէս) . “ Ա՛լ ինչ ՚ի նեն- գութեց այնպէս գաղտնածածուկ է՝ իբրեւ զծածկեալն ընդ պաշտօնատարութեն առաքեստիս , կամ յանուն մարմնոյ ինչ ազգակցութե : Օ՛ր օր յայտնի ոսոխն է , դիւրաւ ունիս զգուշացեալ խոյս առ ՚ի նմանէն տալ . բայց ծածուկ չարն և նեբբին և ընտանի ոչ միայն հնուց կայ , այլ և ընկէզ , մինչ չև կարացեալ քո ուշ ունել և որո- նել ... ՚Ա՛ան այսորիկ և ճանչինն բաբբառ “ Ա՛յր թշ- նամիք առն ընտանիք իւր ... , մեծաւ սրտցաւութի ընդ լսելիս հարկանի . զի թէպէտ և կարի արիասիրտ ոք իցէ՝ մինչեւ տանել անխռովաբար , կամ այնչափ զգաստ՝ զի նախահոգած խորհրդով անձնապահ լինիցի յորոց նմա հակառակքն նիւթին ՚ի կերպարանաւոր բարեկամու- թէն,սակայն ընդ չարութի գրժամիտ մարդկանն՝ յորժամ յերեւան գայ նոցայն վատթարութե , հարկ է նմա ծա- նուցս վշտանալ՝ եթէ ինքն բարեկիր իցէ . և այս՝ եթէ միշտ չարք էին նոքա՝ և բարիս ձեռնայինն , և եթէ ՚ի բա- րին գոլոյ յայն չարութե փոխեալք իցեն : Ա՛ոկ արդ եթէ տուն՝ հաստարակաց ապաստանարան չէ անբոյնի յայսոսիկ չարիս մարդկութե , զինչ ապա քաղաքն իցէ , որոյ ըստ մեծութե՝ նուիրն չափով և առեւանգ նոքա յաչխարհաբաք ՚ի վէմս ՚ի քաղաքականս և ՚ի փաստարարս , թէպէտ և խաղաղեալ կայցեն ամբոխք ոչ լոկ խռովայոյզք՝ այլ յո- լովակի և արիւնահեղք , և մարտք քաղաքայինք , յորոց ՚ի պատահմանէն ի երբեք զի ազատ են քաղաքք , այլ՚ի վտանգիցն ոչ քնաւ երբեք ։

ԳԼՈՒԽ Ը.

Քաղաքս սխալման մարդկային դատաստանաց՝ յորժամ անյայտ է Ճշմարտութիւն։

Ո՞ՆՉ գարձեալ և մարդկայինքն դատաստանք՝ ի վերայ մարդկան, որ և՝ ի մեծի հանդարտութենէ քաղաքացս չափասէն երբեմն, որպիսիս համարիցիմք արդեօք, քանի եղկականս, որքան ցաւելիս. իբր զի որք դատինն անգիտանան ընտրել զդատեցելոց զմտացն խիղճ. որով բաւ զուտ այն է՝ զի առ ստուգելոյ զգաստ օտարի բռնադատին զանպարտ վկայս խոշտանգել։ Ո՞ինչ յորժամ սակս իւրոյին գաղի չարչարի այս որ և այն. և հարցաքննեալ միթէ իցէ յանցաւոր՝ տանջի. և անյանցն լուծանել պատուհասս հաւասիս սակս անհաւատալի յանցանաց. իբր ոչ եթէ զի՝ ի վեր եկեալ զայն գործեալ իցէ, այլ զի չգործել նորա անյայտ է. և այսր աղագաւ անգիտութենէ դատաւորին ազնւոք են անմեղքն բազում անգամ՝ Այնոր և այժմուսքերեալին է, և որքան արժանի, և աղբիւրս արտասուաց քաւելոյ, յորժամ՝ ի խոշտանգանս արկանել զատաւորն զամբաստանեալն՝ այնու զի մի գուցէ անգիտաբար սպանանիցէ զանմեղն, պատահէ զի սակս արկածից անգիտութենն՝ սպանանիցէ և զտանջեալն և զանպարտն, զոր ինքն տանջէր առ՝ ի չսպանանելոյ զանպարտն, Վասանզ եթէ նա ըստ դոցա իմաստասիրելոյն՝ ընտրեսցէ առաւել կենդանւոյ լինել՝ քան ընդ երկար տանջանացն նեղբոյ կալ, ասէ գործեալ զայն ինչ՝ զոր ոչն արդեօք գործեաց. զոր և պարտաւորեալ դատաւորին և տպանել, զպարտաւորն արդեօք կամ թէ զանպարտն սպան՝ անգիտանայ տակաւին, զնա զոր տանջէրն՝ զի մի անգիտայեալ սպանանիցէ յանպարտս. և այսր օրինակաւ զանպարտն և տանջեաց առ՝ ի գիտելոյ, և սպան ոչ գիտելով՝ Նոյն արդ յայսպիսւոյ՝ ի մեծ ընկերային կենաց նստո-

ցի արդեօք դատաւոր իմաստունն այն, թէ ոչ նստիցի. Այո նստիցի. քանզի հարկ դնէ նմա և 'ի դոյն արարուած ձգէ ընկերութիւն մարդկան, յորմէ հրաժեշտ տալ անպատեհ վարկանի. զի ոչ զայն անպատեհ ինչ համարի՝ թէ վկայք անպարտք տանջեսցին 'ի դատս օտարաց. ուր զի որք յանդիմանինն՝ ընկճեալք բազում անգամ 'ի ցաւոցն բռնութենէ, և սուտս ինքեանց զանձանց խոստովանեալք, մահուամբ ևս պատուհասին յանպարտս, որպէս և տանջեցանն անպարտականք. և եթէ ոչ 'ի մահ մատնեսցին ևս, բազում այն է զի մեռանին 'ի տանջանս անդ կամ 'ի պատճառս տանջանացն. և է երբեք զի և որք ամբաստանենն՝ յօգուտ ընկերութեանն թերևս եղեալք նախանձաւորք, զի մի՛ անպատիժ մնայցեն յանցանքն, եթէ վկայք ժխտեսցեն, և յանցաւորն ինքնին ընդդէմ տանջանացն խիզախելով ոչ խոստովան լինիցի, անկարացեալք և նոքա զորոց ամբաստանն եղեն ցուցանել, թէպէտ և ճշմարտութեամբ էին ասացեալքն, մահու պարտ լինին յանգիտող դատաւորէն: Զայսոսիկ և զայսքան չարիքս ոչ 'ի մեղս համարի նա. զի դատաւոր իմաստունն ոչ 'ի կամաց վնասելոյ առնէ զայնս, այլ յանգիտանալոյն հարկաւորեալ. բայց զի ստիպէ մարդկայինն ընկերութիւն, հարկաւորի և 'ի դատաւորութիւն: Այս է ապա զոր ասեմքն արդարև թշուառութիւն մարդոյ, թէ և ոչ է չարութիւն իմաստնոյ. և եթէ 'ի հարկելոյ անգիտութենէ և դատողութենէ զանմեղսն տանջէ, զանմեղսն պատուհասէ, միթէ փոքր չար թուիցի նմա չլինելն յանցաւոր, եթէ չիցէ միանգամայն և երանելի. քանի՜ ևս իմաստնաբար և արժանի մարդոյ 'ի միտ առնու 'ի հարկիդ յայդմիկ զթշուառութիւն, և ատելով զայն ատէ 'ի սրտի. և եթէ ըստ աստուածպաշտութեան խորհիցի, աղաղակէ առ Աստուած. “Ի վշտաց իմոց հան զիս„. Սղ. ԻԴ. 17:

ԳԼՈՒԽ Ի.

Բազագս պէսպիսութեանց լեզուաց՝ որով տարաւորհնի ընկերութեան մարդկան, և վասն պատճառացն՝ թէ և որդ տարացիք Թուեցան։

Ի Բաբելոն զհետ գան տիեզերք՝ յոր դնեն իմաստասէրք զերծորդ տատիանն մարդկային ընկերութեանէ, սկիզբն առաբեալ ի տանէ, անտուստ ի քաղաք, և ապա ի տիեզերս ամենայնի առնելով. և սա աւադիկ զօրէն ջուրց կուտակաց՝ որչափ ընդարձակատարը, նոյնչափ և բազմավտանգ։ Ի սմա նախ առաջին լեզուացն այլատարազութեանցն զմարդ ի մարդոյ օտարացուցանել. քանզի եթէ երկուց ոմանց միանց պատահէլոց՝ հարկ լինիցի չառնել զանց, այլ կալ կենդանիոյ՝ անծանօթ եղով բարբառոյ միանց, ապաքէն հեշտեն ևս է ընկերանալ նոցա ընդ անխօս այլասեռ կենդանիս՝ քան ընդ իրեարս, մարդ զոլով երկոցունց. քանզի որք զգայունքն են՝ և չմտքերին յիրեարս կցորդել ի պատճառս այլախօս լեզուին և եթէ ոչ ի մի ինչ առ ի յօգելոյ զմարդիկ օգուտ և համատառանն բնաւրէն. մինչ զի ընտրելի ևս է մարդոյ՝ քան ընդ այլալեզու մարդոյ՝ կալ առաւել ընդ շան իւրում։ Ի այլ ասկայն, ասես, իշխանութեանն պերճացելոյ քաղաքին փոյթ եղև ի վերայ դնել ազգացն նուաճելոց ոչ միայն գծառայութեան լուծ, այլ և զիւրական լեզու խաղաղական միաբանութեան. որով առաւելոյր քան թէ նուազելը թարգմանեաց յայնմ ժամանակի։ Ի այս արդար է բանդ. բայց քանի յոլովից և մեծամեծ մարտից արդիւնք են այդ, որքան կոտորածի մարդկան, քանի՛ հազարաց արեան մարդկայնոյ. յորոց ի գադաթէն՝ ոչ ևս այնու չարեացն այնոցիկ ազէտք վախճան առնուն։ Ի այնպէս չէղեն երբէք պակաս, և չ լինիցին թէ հնամիք ազգք օտարք, առ որս չարժեցան և չարժին պատերազմունք. սակայն և ընդարձակութեանն տ, րութեան ինքնին մարտս վատթարագոյնս ծնանի՝ զընկե-

ռականս և զքաղաքականս, յորոց աղխտագոյն ևս վտանգի ազգ մարդկան՝ եթէ 'ի պատերազմէն՝ առ 'ի զՀանգիստ երբէք գտանելոյ, և եթէ յերկնչել՝ զի մի դարձեալ գրգռեսցին. մինչ զի թէ զրուցաբանել ախորժէի ըստ արժանւոյն զայսոցիկ չարեաց զբազում և զյոքնապատիկ Հարուածս, զդժնդակն և զխիստ կարիս, թէպէտ և անկար է բովանդակ Հատուցանել, այլ 'ի վերայ այսր միթէ գո՞յր չափ յաճախութ՟ե բանիցն: Բայց ասեն. այր իմաստուն ոչ մղեաց՝ բայց մարտ արդար: Իսկ արդ եթէ մարդ զանձն գիտիցէ, նա առաւել ևս ցաւագնեսցի ընդ Հարկ լինելոյ արդար մարտից. զի եթէ արդարացի ոչ էին, ոչ արդեօք յայնս մխէր նա, որոյ վասն անպատերազմ լինելոց էր այր իմաստուն: Վասն զի Հակառակ կողմանն անիրաւութ՟ին է որ շարժէ զիմաստունն 'ի մարտ արդար. և այն անիրաւութ՟ի է արդարև մարդոյ ցաւելոյ պատճառ, քանզի մարդկան իսկ է, թէ և ոչ ծնանիցի անտի Հարկ մարտնչելոյ: Արդ որ միանգամ զչարիսս զայսոսիկ զմեծամեծս՝ զաՀագինս և զդժնեայս 'ի միտ առնու ցաւելով Հանդերձ, անշուշտ խոստովան լիցի զթշուառութ՟ին. իսկ որ կրէ զնոյնս կամ խորՀի անցաւութ՟ե, ապաքէն ևս եղկելի է՝ զանձն առ երանելիս ունելով, այնու զի բնաւ յանզգայութ՟ի դարձաւ:

ԳԼՈՒԽ Ը.

Չէ մարթ բարեկամութ՟ե առաքինեաց լինել աներկեան, ունելով 'ի Հարկէ խիթալ ընդ վտանգս աստի կենաց:

Իսկ եթէ չպատաՀիցէ ևս անգիտութ՟ին այն Հանգոյն խելայեղութ՟ե, թէպէտ և պատաՀէ ստէպ 'ի թշուառ Հանգամանս կենցաղոյս, զի կարծեսցի բարեկամ որ թշնամին է, կամ թշնամի որ բարեկամն, զի՞նչ այլ 'ի բազմավիլեպ և յամենավիշտ ընկերութ՟ե մարդկան մխի-

թարել զմեզ կարիցէ, բայց անկեղծաւոր հաւատարմութ՟ն և փոխարէն սիրելութ՟ն բարեկամաց ճշմարտից և առաքինեաց . այլ որչափ բազումս զայսոսիկ ունիցիմք, և 'ի բազում կողմանս, նոյնչափ առաւելապէս 'ի կասկածանս ծփիմք՝ մի՛ արդեօք չար ինչ ընդ նոսա անցանիցէ 'ի բազմակուտակ յաշխարհականս չարեաց ։ Ոչ զի ոչ զայն ևեթ հոգամք, թէ գուցէ սովու տառապեսցին, կամ պատերազմաւ, կամ հիւանդութ՟ք, կամ գերութ՟բ, կամ զի մի՛ արդեօք 'ի ծառայութ՟ն անկեալք՝ կրեսցեն դժնդակս ինչ, զոր զմտաւ անգամ ածել չհանդարտիմք, այլ և որ դառնագոյնի ևս երկիւղի է առիթ, մի՛ գուցէ 'ի խեթ ինչ փոփոխեալք իցեն, 'ի չարութ՟ն և յապիրատութ՟ն ։ Այսոքիկ ահա թէ պատահիցեն, և այն՝ յաճախութ՟բ, որչափ յոլովք իցեն բարեկամքն և 'ի բազում տեղիս, և մեք իրազեկ անցիցն լինիցիմք, ո՛ր հուր տոչորիչ ապաքէն 'ի մեր սիրտ հարկանիցի՝ նա միայն որ այնպիսեաց տարաւ՝ յայտնել կարող է . մինչ զի ընտրեաք լսել յաւէտ զնոցայն մեռանել, թէպէտ և զայն լսել չէր մարթ առանց ցաւոց . քանզի որոց ընդ կեանս զուարճանայաք առ հեշտի բարեկամութ՟են, զի՞արդ հնար իցէ թէ ընդ մահ նոցա անտխուր մնայցեմք . զոր եթէ արգելուլ ոք կամիցի, թող արգելցէ եթէ կարող է՝ զգլխոյս սիրալիրս . խափանեսցէ կամ հատցէ 'ի բաց զբարեկամականն ըղձումն . խզեսցէ զյօդս համայն մարդկօրէն կցորդութ՟եց ապշութ՟բ իմն անկարեկիր մտաց . կամ այնպէս իմն կարծիցէ 'ի կիր առնուլ զայսոսիկ, զի ոչ և մի ինչ ախորժումն քաղցր 'ի յոգւոջ տաքիմբք զեղուցու . իսկ եթէ այսմ ընաւ անմարթ է լինել, զի՞արդ ապա ոչ դառն դիպեսցի մեզ մահ այնորիկ՝ որոյ կեանք քաղցր են ։ Քանզի աստուստ է և թախիծ իմն՝ վէրք գոգցես կամ խոց գորովական սրտի, յորոյ 'ի բժշկութ՟ն սփոփականքն մատուցանին ուղերձք . զի ոչ եթէ բժշկութ՟ե պէտք չիցեն՝ այնու զի որչափ լաւ է հոգի, նոյնչափ ընդ փոյթ դիւրաբուժելի է ։ Ապա զի և ընդ սիրելեացն մահ՝ այնոցիկ առաւել որոց արարուածք կարևորք են 'ի պէտս ընկերութ՟ե մարդկան, վշտանան

կեանք մահկանացուացս՝ է զի մեղմով, և է զի սաստիկս, և 'ի վերայ այսր ընտրեմք առաւել մեռեալս լսել կամ տեսանել զսիրելիս մեր՝ քան թէ անկեալս 'ի հաւատոց կամ 'ի բարեկրօնութենէ, որ և այն է մեռանել 'ի հոգի, քանի՛ աւա պատճառք չարեաց յաճախեն յերկրի. որոյ վասն գրեալ է. «Ո՞չ ապաքէն փորձութիւն են վարք մարդոյ 'ի վերայ երկրի». Յոբ. Է. 1: Վասն այն և տէրն ասէ. «Վա՛յ աշխարհի 'ի գայթակղութեանց»: Եւ դարձեալ. «Եւ վասն բազմանալոյ անօրէնութեան ցամաքեսցէ սէր բազմաց»: Յայսմ պատճառէ ընդ առաքինի բարեկամացն մեռանել ուրախակից անգամ լինիմք. և մինչդեռ մահ նոցա զմեզ տրտմեցուցանէ, նոյն անշուշտ և մխիթար լիցի մեզ, յայն զի զերծան 'ի չարեաց անտի՝ որովք 'ի կեանս յայս կայ և արանց բարեաց կամ ճնշիլ, կամ յոռանալ, կամ երկոքումբք իսկ վտանգիլ:

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս բարեկամութեան հրեշտակացն սրբոց՝ զոր հաւաստի գիտել չէ հնար մարդոյ 'ի կեանս յայս՝ սակս պատրանաց դիւացն, յորս անկեալ են բազմաստուածոյն պաշտօնեայք:

ԻՍԿ յընկերութեան անդ հրեշտակաց սրբոց՝ զոր իմաստասէրքն յառաջ յիշատակեալք 'ի չորրորդումն կարգի դնեն, համարեալ զնոսա աստուածս բարեկամս մեզ, երբ յընդհանուր տիեզերաց եկեալս յայս աշխարհ, որով գոզցես և երկինք 'ի մի կցորդին, յայնմ ընկերութեան ասեմ չունիմք երկնչել բնաւ՝ մի՛ գուցէ բարեկամք այնպիսի տրտմութիւն մեզ առթեսցեն իւրեանցն մահուամբ և կամ զեղծմամբ: Այլ քանզի չեն նոքա կենցաղակիցք մեզ ըստ մարդկաբար ընտանութեան, որ և այս մի է 'ի թշուառութեանց այսր կենաց, և երբեմն ինքնին սատանայ՝ որպէս ընթեռնումքն, 'ի հրեշտակ լուսոյ կերպարա-

նի, առ 'ի փորձելոյ զայնոսիկ՝ որք կամ խրատու պէտս ունին, կամ արդարապէս 'ի պատրանս ըմբռնին, պիտոյ է յայսմ ողորմութ̃ի ոչ մեծ, զի մի՛ արդեօք կարծեցեալ ոք զհրեշտակս բարիս ունել բարեկամս, դիւաց չարաց համդիպեսցի՝ առ երեսս բարեկամաց, և ունիցի զնոսա այնչափ առաւել վնասաբեր թշնամիս, որչափ խորամանկք են և դաւաճանիչք ։ Այլ զինչ այն է կարօտեալ մեծի այսմ ողորմութեան ոչ՝ բայց եթէ մեծ թշուառութ̃ի մարդոյ, որ 'ի թանձր անգիտութ̃ի համակեալ, նոյնչափ ևս դիւրախաբ է 'ի նոցա կեղծաւորութ̃էն ։ Ապաքէն հաւաստեալ իսկ է թէ նոքին իմաստասէրք ամբարիշտ քաղաքին՝ որք ասէին բարեկամս անձանց ունել զաստուածս, յայսս չարս գրաւեցան, որոց և քաղաք նոցա ողջոյն հնազանդեալ է, լուծանել ապա նոքօք համդերձ զտանջանս յաւիտենականս ։ Քանզի յանսուրբ պաշտամանց անտի՝ որովք զնոսայն կարծէին մեծարել, և յաղտապիղծ խաղուցն՝ յորս մծղնէութիւնք նոցա երևութանան առ 'ի հաշտեցուցանելոյ զնոսա, նոցունց իսկ լինելով գտիչ և վերակացու այնպիսեաց քարուականաց, քաջայայտ իսկ է՝ ո՞յք ումանք առ 'ի նոցանէ պաշտիցին ։

ԳԼՈՒԽ Ժ.

Ո՞ր արդիւնք ծնանին որոց 'ի յաղթել նոցա փորձութ̃եց կենցաղոյս ։

ՍԱԿԱՅՆ և սուրբք, և հաւատարիմ միայն ոչ ճշմարտի բարձրելոյ պաշտօնեայք՝ ոչ են անքոյթ 'ի պատրանաց և 'ի բազմօրինակ փորձութ̃է դիւաց ։ Այլ այս հոգողութ̃ի ոչ 'ի զուր ինչ է յայսմ տկարութ̃ե վայրի և յաւուրս չարութ̃ե ։ այլ զի մեծափափաք տենչմամբ 'ի խնդիր լինիցիմք աներկեան վիճակին՝ յորում կայ ամենապատարն խաղաղութ̃ի և անվրդովելի ։ Քանզի անտանօր եղիցին պարգևք բնութ̃ես, այս է՝ որ մերոյին բնութ̃ես շնորհին

'ի հանուրց բնութեանց արարչէն՝ ոչ բարիք միայն, այլ և մշտակայք, ոչ 'ի հոգւոջ միայն՝ որ իմաստութեամբ բժշկի, այլ և 'ի մարմնի՝ որ յարութեամբ նորոգեսցի: Ընդ առաքինութիւնք ոչ 'ի կռուի կացեալք ընդդէմ ախտից և չարեաց այլի ազգի, այլ մրցանակ տանելով յաղթութեան զյաւերժականն խաղաղութիւն, զոր և ոչ մի 'ի հակառակացն ըղտորել կարիցէ: Վասն զի այն է երանութիւն վերջնական, այն ծայր կատարելութեան, որոյ չիք վախճան սպառուածի: Իսկ աստանօր թէ երանելիք ոմանք լինիմք ասացեալք, յորժամ զխաղաղութիւն զոր 'ի բարեկրօն կեանսն է հնարաւոր՝ ունիցիմք, այն առ վերջնականն կոչեցեալ երանութիւն համեմատեալ, թշուառութիւն արդարև ցուցեալ գըտանի: Վասն որոյ յորժամ զխաղաղութիւնս զայս ըստ մարթելոյ ունիցիմք մահկանացուքս յիրս անցանելիս, եթէ ուղղութեամբ կենցաղավարիմք, զյաջողուածս նորա ուղղաբար 'ի կիր առնու առաքինութիւն. իսկ յորժամ չունիցիմք զայն խաղաղութիւն, և զձախողակն անդամ որովք տառապի մարդ, 'ի բարւոքն վարէ առաքինութիւն: Այլ սակայն առաքինութիւն ճշմարիտ յայնժամ է, յորժամ ըզբարիսն զամենայն՝ որովք բարւոքն վարի, և զարդար վարչութիւն յաջողակացն և ձախողակաց, այլ և զանձն ևս իւր համբուն յայն վախճան հայեցուցանէ՝ ուր մնայ մեզ խաղաղութիւն այնպիսի և այնչափ, քան զոր լաւագոյն և մեծագոյն անմարթ է լինել:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս երանութեան յաւիտենից խաղաղութեան, յորում կայ վախճան սրբոցն, այն է՝ ճշմարիտ կատարելութիւն:

ՍՈՐԻՆ վասն ունիմք ասել թէ կատարած բարեաց մերոց՝ խաղաղութիւն է, զոր օրինակ և յաւիտենից կեանսն լինել ասացաք. մանաւանդ զի և առ քաղաքն այս զորմէ երկարապատում մեր ճառս է, ասի 'ի սրբումն սաղմոսի.

ձեր. «Գովեա Երուսաղէմ զՏէր, եւ օրհնեա զա̃ծ քո՝
Սիովն. Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, եւ օրհնեաց
զորդիս քո 'ի քեզ. որ եդ զսահմանս քո 'ի խաղաղութիւն»:
Վասնզի յորժամ զօրացեալ պնդեսցին նիգք դրանց նորա,
ոչ եւս է մուտ ումեք ընդ այն, եւ ոչ ելք անտի. ուստի եւ
սահման նորա կամ կատարած զայն խաղաղութիւն իմանալ
աստանօր արժան է, զոր վերջնականն գիտել հաւանիմք.
զի եւ քաղաքիս այսր խորհրդականն անուն Երուսաղէմ,
տեսութիւն խաղաղութեան թարգմանի, զորմէ եւ կանխաւ
ասացեալ եմք: Այլ քանզի խաղաղութեան անուն յաճա-
խակի եւ առ մահկանացու իրքս լսի, ուրանօր չիք ապա-
քէն կեանք յաւիտենական, այսորիկ աղագաւ զսահման
այնր քաղաքի՝ ուր կայ գերակատար բարի նորա, առա-
ւել ընտրեցաք կեանս յաւիտենականս անուանել քան
խաղաղութիւն. զորմէ եւ առաքեալ ասէ. «Բայց արդ ա-
զատացեալք 'ի մեղացն, եւ ծառայեալք Այ, ունիք զպտ-
տուղ ձեր 'ի սրբութիւն, եւ վախճան նորա կեանք յաւիտե-
նից». Հռով. Զ. 22: Բայց զի դարձեալ՝ որք չեն ընտե-
լակրթեալք 'ի գիրս սուրբս, ունին կեանս յաւիտենից ի-
մանալ եւ զչարացն, կամ սակս հոգւոյ անմահութեան՝ որ
եւ յիմաստասիրաց ոմանց խոստովանեալն է, եւ կամ ըստ
մերոցս հաւատոց՝ սակս անեզր պատուհասից ամբարշ-
տաց, որոց անմարթ է յաւէրժ տանջիլ՝ թէ ոչ յաւիտեան
կեցցեն, սմին իրի զսահմանն յորում քաղաքս այս ընդ-
գրկեսցէ զգերակատար զիւրն բարի, լաւ եւս կոչեմք կամ
խաղաղութիւն 'ի կեանս յաւիտենից, եւ կամ յաւիտենա-
կան կեանք 'ի խաղաղութեան. որ եւ ամենեցուն դիւրահաս
իցէ: Վասնզի այնքան է խաղաղութեան բարի, զի եւ յեր-
կրաւորքս անգամ եւ յանցականս չիք քան զայն ախոր-
ժալուր, ոչ ինչ քան զնա ցանկալի, ոչ ինչ լաւագոյն գոյ
խորհել կամ գտանել: Զորմէ փոքու իմն թէ յերկարել
զբանս կամիցիմք, ոչ 'ի տաղտուկ ինչ ընթերցանելեացն՝
որպէս վարկանիմ, լինիցի. եւ զայն եթէ սակս կատարա-
ծի քաղաքիս Այ՝ զորմէ մեր բանս է, եւ եթէ սակս քաղցր
ճաչակի խաղաղութեան՝ որ ամենեցուն է տարփալի:

ԳԼՈՒԽ ՀԻՆ

Պատերազմողացն գժտակումբեք, և յոչընչանալ ամենայն որ ի մարդկէ զվախճան խաղաղութեն ցանկան ըմբռնել, և առանց այնր բաղձանաց չեք և ոչ մի բնութեն։

Վասն զի որ միանգամ ոք զանկ յառիւղ ընդ իս՝ի մարդկայինքս, և՝ի բնութիս ընդհանուր, ի միտ առնուք թէ զոր օրինակ չէ ոք որ ուրախանալ կամիցի, նոյնպէս չէք որ խաղաղութէ չկամիցի ունել. ուր զի նոքին իսկ որք պատերազմասէրքն են, ոչ զայլ ինչ՝ բայց զյաղթելն կամին. որով՝ի պատերազմէն փառացի խաղաղութէն ցանկան լինել գամագիւտ։ Վասն զի յաղթութէ զինչ այլ է՝ բայց նուաճութէ հակառակամարտից. յորոյ՝ի գլուխ եւ լանէն՝ լինիցի խաղաղութէ։ Վ՚պա ուրեմն՝ի խաղաղութէ սակս մղին և պատերազմք՝ յայնցանէ որք զմարտացու զօրութէ՝ի կիր առնուն իշխելով և կռուելով. որով յայտ իսկ է թէ ցանկալի վախճան պատերազմի՝ խաղաղութէն է. զի ամենայն մարդ նա և՝ի պատերազմել իւրում զխաղաղութէ խնդրէ, և ոչ ոք՝ի խաղաղէն պատերազմի է կամեցող։ Վ՚անզի և որք զանձեան եղեալ զխաղաղութէ վըդովել յօժարին, ոչ եթէ խաղաղութէ ատեցողք են, այլ զայն փոխանակել ցանկան ըստ հաճոյս. ուստի ոչ եթէ զլինել խաղաղութէ չկամին, այլ զի այն խաղաղութէն լինիցի զոր ինքեանք կամին։ Վ՚ւ դարձեալ՝ որք խռովութէք իւրք յայլոցն միաբանութէ զատչիցին, եթէ առ իւրեանցն կռուակիցս կամ ընդդատնաւորս ոչ կալցին գոնէ զերեսցեայ իմն խաղաղութէն, ոչ հասանէն այնմ զոր խընդրեն. վասն որոյ նոքին իսկ ատելագք առ՝ի կարող լինել ոչ ժամանակի և անվրէպ՝ի դիմի հարկանել խաղաղութէն այլոց՝ առ ընկերսն խաղաղութէն ունել գոն գործեն։ Վ՚ւ եթէ ոմն մի այնչափ բուռն զօրութէ իցէ, և՝ի գիտակցաց զգուշացեալ որ և ոչ յընկերացս ոք վտա-

համայ, այլ միայնակ դարանիցի զօրել բաւել զայլսն ճնշելով և խորտակելով զաւարն տանել, 'ի վերայ այսր առ այնոսիկ որոց ստանանեըն չկարէ, և յորոց թաքուցանել կամի զոր գործէն, խաղաղութի իւր կեղծաւորի. Իսկ 'ի բնիկ տանն ընդ կնոջ և ընդ որդիս, և ընդ այլս զորս ոք ընդ իւր ունիցի անտանօր, հաշտ և համբոյր հնարի կեալ. քանզի ընդ կամակատարս իւր ըստ հաճոյից արդարև զուարճանայ յանձն. Օի եթէ ոչ այնպէս լինիցի, զայրանայ, կշտամբէ, պատուհաս ածէ, և զանդորրութի տանն՝ եթէ այնպէս հարկ իցէ, ժանտանալով անգամ 'ի ներքս բերէ, գիտելով չափ թէ անմարթ է անդորր գըտանել, թէ ոչ միում գլխոյ որ ինքն իսկ է յիւրոյին տանըն, այլքն ընտանեկիցք հնազանդեալ կայցեն. մինչ զի եթէ առաջի մատուցեալ լինէր նմա հպատակութիւն բազմաց, կամ քաղաքի կամ ազգի, այնպէս ծառայութի հարկանել նմա՝ զոր օրինակ յիւրում տան կամէր սպասահարկութի, ոչ ևս այնուհետև աւազակաբար յանձուկս գաղտագողանայր, այլ արքայակերպ շքով գահակալէր, նոյն մնալով 'ի նմա և ցանկութեն և ապիրատութեն. Ապա ուրեմն ցանկան ամենեքին՝ խաղաղութի ընդ իւրեանց հաստատել, կամեցեալ կեալ նոցա ըստ իւրեանց հաճոյից. զի և ընդ որս պատերազմ տան, կամին՝ թէ հնար իցէ՝ յիւրեանս զնոսա գրաւել, և օրէնս զիւրեանց խաղաղութեն դնել նոցա իբրև հնազանդեցելոց.

Այլ սակայն բեր, առաջի արասցուք զոք այնպիսի, որպիսի նուագէ քերթողականն առասպելեալ վէպ, զոր թերևս առ անհամբոյր գազանութեն ոչ մարդ կամ այր անուանադրել ընտրեցին՝ քան թէ կիսամարդ կամ կիսայր. Արդ այսպիսում աւազակի արքայարան էր ամայութի դժուարամատոյց անձաւի, այնպէս իմն նշանաւոր եղելոյ 'ի չարութե՝ զի յայնմանէ իսկ անուն տուաւ նմա Կակոս, որ յունարէն չար նշանակէ. ոչ ընդ ումեք 'ի կանանց էր նմա տալ և առնուլ բան քաղցրամոք. ոչ ընդ որդիսն մատաղս խանդաղատէր. ոչ մեծացելոցն հրաման ինչ տայր. ոչ 'ի խօսակիցս լինել բարեկամի և իւ-

բունն իսկ հօր Հեփեստեայ՝ զբօսանէր, փոքու իմն բարեբաղդիկ քան զհայրն այնու գտեալ, զի Ճիւաղ զիւր համանման ինքն ոչ ծննդագործեաց. ոչ ումեք տայր ինչ ընաւ, այլ յորմէ կարէրն, և երբ կարէր, յափշտակէր զոր ինչ և որչափ կամէր ։ Եւ ահա սոյն սա յիւրումն առանձնակեաց անձաւի՝ որոյ յատակ թանայր համապաղ ջերաջերմ արեամբ, որպէս ասի, ոչ այլ ինչ կամէր՝ բայց զխաղաղութ՟ի, զգուշացեալ զի մի զայն դրդուիցէ ոք. մի զհանդարտութ՟ի նորա բռնութ՟ի ուրուք և ահ խռովեցուսցէ ։ Այլ և ընդ իւրումն մարմնոյ ցանկայր պահել զխաղաղութ՟ի. և ըստ չափու խաղաղութ՟են՝ նոյնչափ և բարեկեցիկ գոյր, յորժամ իւրոյն հլու անդամոց իշխեցող էր. և զի զմահկանացու զիւրն բնութ՟ի՝ որ սակս աղցաւորութ՟են գլուխ ամբառնայր, և գրգռութբ քաղցուն քակտել հնարէր զոգի ՚ի մարմնոյ, արագ արագ ՚ի հաշտութ՟ի ածիցէ, յափշտակէր, սպանանէր, լափէր. այնպէս վայրագն այն գազան՝ խնամ տանէր խաղաղութ՟ե իւրոց կենացն և առողջութ՟ե՝ թէպէտ և խժաբար և գազանապէս. սորին վասն եթէ զխաղաղութ՟ի զոր անձինն հայթայթէր յանձաւի անդ իւրում, կամեցեալ էր նորա և ընդ այլոց կալել պահել, ոչ ևս չար անուն կոչէր նմա, ոչ Ճիւաղ, ոչ կիսայր. և կամ եթէ մարմնոյ նորա տեսակ և թխատիպ հրաշնչութ՟ի անմատչելի զնա մարդկան կացուցանէր, գուցէ արդեօք ոչ ՚ի կամաց վնասելոյ գազանանայր նա, այլ ՚ի կարեաց զկեանսն պահելոյ ։ Բայց արդ այլ այդպիսի կամ ոչ եկաց, և կամ հաւանելի ևս կարծել՝ ոչ այնպիսի, որպիսի քերթողականն պաճուճաբանութ՟ի նկարագրէ. զի թէ ոչ ծանուցնս ամբաստանեալ էր Կակոս, նուազեալ գտանէր Հերակլեայ գովեստ ։ Վասն որոյ զայնպիսի այր կամ կիսայր՝ լաւ ևս է կարծել որպէս ասացի, թէ չեղև երբեք, զոր օրինակ բազում այլ ևս քերթողացն ստեղծաբանութ՟իք ։ Քանզի և որ կարի անագորոյնք են ՚ի գազանս՝ յորոց Կակոս իսկ գազանութ՟են բաժանակից լեալ էր, վասն այսր կիսագազան ևս կոչեցեալ, իւրաքանչիւր իւրումն սեռի պահպանիչք են

խաղաղութիւնք իւիք, ի խաւսնոյ գալով, արուսց ծննդա-
գործելով, իգաց սաղմնաւորելով, զկորիւն գիեցուցանելով
և խնամ առնելով, ուր զի յոլովք յայնցանէ անընդելք և
վայրագասունք էն. ոչ իբրև ոչխարքն, եղջերուք, աղաւ-
նիք, տարեք և մեղուք, այլ որպէս առիւծք և աղուէսք, ար-
ծուիք և բուէնք. Օ ի որ վագր է՝ որ ոչ էհ զիկ մնասայ-
ցէ զրգռուով իւրովք, և զգազանութիւն ցածուցեալ
չանդգաղատիցի. Որ ցին մնաշրջիկին այն յարաձոխ
ի յափշտակութիւն՝ ոչ զամուսնութիւք գայցէ, ոչ բոյն կազ-
միցէ, ոչ ձուս տածիցէ, ոչ ձագս գարմանիցէ, և ընդ
վարուժանին իբրև ընդ տիկնոջ չպահիցէ զառնին կե-
նակցութիւն խաղագին օրէսփ կարգն է, Վ՚անիսն առա-
ւել մարդ օրինօք իմն բնութիւնն ձգեալ բերի յընկերա-
կանն կցորդութիւն, պահել ընդ ամենայն մարդոյ օրէսփ
ի կարի է՝ զխաղաղութիւն. ուր և չարագործք անգամ ի
վէգ գան սակս խաղաղութիւն իւրեանցայոյն. և զնոյնբե-
սին եհէ հնար է՝ կամին իւրեանց առնել սեպհական,
որպէս զի ամենեքին և ամենայն ինչ միաւորեալ եհէ ծառայե-
ցէն. և լինիցի այդ օրպէս, բայց եհէ համաչունչք ի խա-
ղաղութիւն նորա լինելով կամ ի սերոյ, կամ առ երկիւղի,
Վ՚անզի այսու օրինակաւ ամբարտաւանութիւնն զնմանութի
իմն այ յանձն բերէ խոտորնակի, իբրև զի առեալ զՀա-
ւասարութիւն ընկերացն ընդ ասէ, այլ զիւրն իշխեցողսն
ի նոցա վերայ կամի արկանել փոխան այ, վասն որոյ ա-
տեալ զխաղաղութիւնն այ զարգացն, և սիրէ զիւրն զանար-
գալ խաղաղութիւն. իսկ չսիրել բնաւ զխաղաղութիւնն ինչ՝
այդ յանհնարիցն է. վասն զի ոչ մի ինչ ախտ մոլեկան
այնչափ ընդ բնութիւն ոգոյն, մինչև անհետ առնել կարե-
ցէ գնորա գլուխն նշմարանս։

Վ՚ղաքէն որ գիտէն ընտրել զուղիղս ի թ իւրոց, և զը-
բաբեկարգս յանկարգացեալոց, տեսանել, այնպիսին՝ զի ան-
օրինացն խաղաղութիւն կշռադատաւել առ այն որ արգարոցն
է, և ոչ անուանն արժանի է. Վ՚այսն և որ անկարգն է,
հարկ է նմա զի հաշտ և համբոյր կայցէ ի մասին ինչ ի-
բաց, և ի մասն և ընդ մասին, որովք ինքն գոյ, կամ

յորոց բաղկանայ. ապա թէ ոչ՝ լինէր և քնաւ ոչ ինչ, Ո՞ր օրինակ եթէ գլուխ ի վայր որ կախիցէ, ապաքէն անկարգ է մարմնոյն դիրք, և յարմարումն անդամոց. զի զոր բնութիւն ի վեր լինել կամի, ի խոնարհ կայ, և զոր ի խոնարհն կամի, այն ի բարձր եկաց. և այս անկարգութեն պղտորեաց զհաղաղութեն մարմնոյ, որով և ցաւեցուցիչ իսկ է. այլ սակայն հոգին հաշտ կայ ընդ իւրում մարմնոյ, և նորա փրկութենն հոգայ. վասն որոյ գոյ՝ որ ցաւագնի. իսկ եթէ սա առ վշտացն չհանդարտեալ ի բաց գնայցէ, ցորչափ կայ պահի անդամոցն յօդակապութենէ, չէ այն առանց խաղաղութեն ինչ մասանցն, որ գեռ ունայ, որով և կախեալ դնի, կամ ուր մարմին հոգեղէն ընդ երկիրն նկրտի, ընդդէմ ձգնեալ վերամբարձիկ կապոյտ, այսու ձկաի նա՛ի կարգ իւրոյ խաղաղութենն, և զտեղի հանէ զըստեանն պաղատի գոգցեա ծանրութենն բարբառով. և ահա անչունչն այն և անշգայուն՝ ի բնականաւորն խաղաղութենէ իւրոյ կարգէն ոչ իւիք մերկանայ, այլ կամ ունի զայն, կամ յայն ելնէ. Կամզի եթէ ի վար արկանիցին դիպապատիկն զեղջ և դարմանատարութենէ՝ որ անյոյծանելի և անբակ պահիցէն զանսակ դիականն, տակաւին մասունք ընդ մասունս խաղաղօրէն ինն չաղկապեալ կան. և մարմինք ողջոյն հանգչի ի պատշաճ գեաներ իւրք յանդորրականն վայրի. կամ եթէ ոչ առնիցին նմա դիապատութենէն խնամք, այլ թողցի ի բնաւորական իւր փոփոխումն, ցայն վայր ի խոռվի կայ հակառակամարտ հիւթոցն չընչանալ, տաղտկալի մերոց զգայութեցս բուրմամբ նեխոյն, մինչև երթեալ միաբանեսցի ընդ տարբս աշխարհի, և ի նոցա խաղաղութենէն փոխադրեսցի մասն մասն առ սակաւ սակաւ. Կայց սակայն այսու ոչ մի ինչ խափանեսցի յօրինաց անտի գերագոյն արարչին և անօրինողին, յորմէ տիեզերացն խաղաղութենէ մատակարարի. զի թէպէտև ի դիոյ մեծամասնին կենդանւոյ ծնանիցին բոլոցք մանուկք, այլ նովին օրինօք արարչին իւրաքանչիւր մարմին փոքրիկ արբանեկեն բոլոցաց իւրաքանչյոյն խաղաղութենէ պէտ և մեռ ելցին մարմինք ծախեացին յայլոց կենդանեաց,

սակայն զնոյն օրէնս գտանեն սփռեալս ընդ համօրէնս առ 'ի պահպանութիւն ամենայն սեռի մահկանացուաց, պատշաճ առ պատշաճ միաբանելով, ընդ որ կոյս և ձգիցին, յոր իրս և շաղկապեալք, յինչ և է իրս փոխադարձեալք և այլակերպեալք.

ԳԼՈՒԽ ԺԳ

Յաղագս ընդհանրական խաղաղութեան՝ որում անմարթ է յաղդել ազգի ամբոխմունս վերելն յօրինաց բնութե, յորժամ յիրաւարար դատաւորէ յայն ինչ հասանէ իւրաքանչիւրոք ըստ հրամանատրութեան՝ որում կամքն դատաարժանի.

ԱՅԼ արդ խաղաղութիւն մարմնոյ՝ է բարեկարգ զուգախառնութիւն մասանցն. Խաղաղութիւն անբանական հոգւոյ՝ է բարեկարգ հանգիստ յօժարութեանց. Խաղաղութիւն հոգւոյ բանաւորի՝ բարեկարգ համաձայնութիւն ճանաչման և ներգործութեանն. Խաղաղութիւն մարմնոյ և հոգւոյ՝ բարեկարգ կեանք և առողջութիւն կենդանւոյն. Խաղաղութիւն մարդոյ մահկանացուի և այ̃ (իմա ընդ այ̃) բարեկարգ հնազանդութիւն հաւատովք ըստ յաւիտենական օրինաց. Խաղաղութիւն մարդկան՝ բարեկարգ միակամութիւն. Խաղաղութիւն տան՝ բարեկարգ միաբանութիւն բնակչաց 'ի հրամայել և 'ի հնազանդիլ. Խաղաղութիւն քաղաքի՝ բարեկարգ միաբանութիւն քաղաքակցաց 'ի հրամայել և 'ի հնազանդիլ. Խաղաղութիւն երկնաւոր քաղաքին՝ ամենայարմար և համաշունչն ընկերութիւն զմայլելոյ ա̃վ և ընդ միմեանս յա̃ծ. Խաղաղութիւն իրաց ամենայնի՝ է հանդարտութիւն կարգի. Կարգն է՝ նմանեաց և աննմանեաց իւրաքանչիւր 'ի դիպան վայրի դասաւորութիւն. Վասն այսորիկ եղկելիքն՝ իբր եղկելիք, ոչ գոլով 'ի խաղաղութեան, արդարեւ անմասն են 'ի հանդարտութենէ կարգի՝ յորում խռովութիւն չիք և ոչ մի. սակայն քանզի ըստ արժանեաց և իրաւամբք եղկելիք են, չկարեն 'ի նմին իսկ յիւրեանց

թշուառութ՟են լինել առանց կարգի, ոչ եթէ կցորդեալք ընդ երջանիկս, այլ մեկնեալք 'ի նոցանէ օրինօք կարգի։ Սոքա յորժամ առանց խռովութ՟ե իցեն, յիրս անդ յորում կանն՝ համազուգին պատշաճութ՟ք իւիք. վասն այն գոյ 'ի նոսա հանդարտութ՟ի ինչ կարգի, որով և խաղաղութ՟ի ինչ։ Բայց այնու եղկելիք են, զի թէպէտ և յապահովացեալք իւիք ոչ ցաւագնին, այլ ոչ անդ կան՝ ուր պարտ է նոցա լինել յապահովի և չցաւագնիլ. իսկ ևս եղկելիք, եթէ խաղաղութ՟ի չիցէ նոցա ըստ այնց օրինաց՝ որով կարգն բնական մատակարարի։ Արդ յորժամ ցաւինն, որով մասամբն ցաւին՝ ահա խռովութ՟ի կայ յայնմ. բայց գոյ դեռ խաղաղութ՟ի յայնմ յորում ոչ ցաւն ծախէ, և ոչ յօդակապն լուծանի։ Ապա զոր օրինակ է գտանել կեանս ինչ առանց ցաւոց, այլ ոչ հնար է լինել ցաւոց առանց կենաց իրիք, սոյնպէս գոյ խաղաղութ՟ի ինչ առանց պատերազմի, բայց պատերազմի լինել առանց խաղաղութ՟ե իրիք անհնար է, ոչ ըստ այնմ որ պատերազմ է, այլ զի մղի յայնցանէ կամ առ այնոսիկ՝ ոյք բնութ՟իք ինչ են, որոց գոլ երբէք անմարթ էր բնաւ, թէ ոչ կայանայր 'ի նոսա խաղաղութ՟ի ինչ։

Այլ արդ գոյ բնութ՟ի, յորում ոչ մի չար կայ, կամ նա և կարէ իսկ ոչ լինել. բայց լինել բնութիւն յորում չկայցէ ինչ բարի, այդ անհնար է։ Սորին վասն և ոչ սատանայի բնութ՟ին՝ իբր բնութ՟ի չար է, այլ թիւրութ՟ին զնա չար ներգործեաց։ Գիտեմք՝ զի ոչ եկաց 'ի ճշմարտու՟ե, այլ 'ի ճշմարտութ՟են դատաստանէ ոչ ապրեցաւ. չմնաց նա 'ի հանդարտութ՟ե կարգի, այլ ոչ յիշխանութ՟է կարգողին փրծաւ. պարգև ա՟յ որ 'ի բնութ՟ե անդ նորա, ոչ կորզեաց զնա յարդարութ՟են ա՟յ որով 'ի պատուհաս անդր սահմանի. և ոչ 'ի նմա 'ի բարւոյն՝ զոր ստեղծ, վրէժս լուծանէ ա՟ծ, այլ 'ի չարէն զոր նայն յանցեաւ։ Զի ոչ եթէ մերկացոյց բովանդակ՝ զոր շնորհեաց բնութ՟են, այլ մասամբ եբարձ և մասամբ եթող. որպէս զի գոցի այն՝ որ ընդ բարձեալն ցաւիցի. և ցաւն ինքնին վկայութ՟ի է բարւոյն բարձելոյ և բարւոյն մնացելոյ. զի եթէ բարի մնա-

ցեալ ոչ էր, չկարէր ցաւել ընդ կորուսեալն։ Վասնզի որ մեղանչէն, չար ևս լինի՝ եթէ խնդայ 'ի տուժի արդարութեն. իսկ որ վշտագնին, թէ և բարի ինչ այնու ոչ ստանայցէ, այլ ցաւի ընդ տոյժ առողջութեն։ Նա՛ և զի արդարութի և առողջութի բարի են երկոքեան, և քան խնդալ ընդ կորուստ բարւոյն՝ առաւել ևս ցաւել արժան է, բայց եթէ կորուստն ընդ լաւագունի իմիք փոխանակեսցի, և հոգւոյ արդարութի լաւագոյն է քան զմարմնոյ քաջողջութի, յայտ է թէ հարկաւ ցաւի անարդարն 'ի տանջանս՝ քան զոր խնդաց 'ի յանցմանն։ Արդ զոր օրինակ խնդութիւն բարւոյն լքելոյ 'ի մեղս անդ՝ նշանակ է կամաց չարի, նոյնօրինակ ցաւ բարւոյն կորուսելոյ 'ի տանջանսն՝ նշանակ է բնութեն բարւոյ։ Վասն զի որ ցաւագնին ընդ կորուսեալ խաղաղութի բնութե իւրոյ, յայտ է թէ 'ի մնացուածոց ինչ խաղաղութե ցաւի ընդ այն, որովք բնութեն սիրելի է նմա։ Իսկ 'ի յետին տանջանսն իրաւամբք լինի այս՝ զի անօրէնք և ամբարիշտք ողբայցեն 'ի խոշտանգանս անդ զտոյժս բնական բարեացն, 'ի միտ առեալք թէ 'ի բառնալ զայնս ամենայնիւ արդար է ած, զորոյ զպարգևսն ամ տուչութեն արհամարհեցին։ Արդ ուրեմն ած ամենիմաստ հաստիչ բնութեց բոլորից, և արդարակշիռ տնտեսիչ՝ որ զմահկանացու զազգ մարդկան 'ի ծայրի կարգեաց եդ երկրային զարդուցն, շնորհեաց մարդկան բարիս ոմանս՝ այսոց կենաց վայելչականս, այն է՝ զառժամանակեայ խաղաղութի ըստ պայմանի մահկանացու կենացս յառողջութե և յանվնասութե և յընկերութե իւրումն ազգի, և զոր միանգամ կարևորքն են 'ի պահել զայն խաղաղութի, կամ յանդրէն ստանալ. զոր օրինակ են անկաւորքն 'ի դէպս զգայութեց, լոյսն երևելի, օդք 'ի շնչել, ջուրք յարբումն, և որ ինչ պիտանին է 'ի սնուցանել զմարմին, 'ի վերարկել, 'ի դարմանել և 'ի զարդարել. ուխտ իրաւացի սակ արկեալ, զի որ 'ի մարդկանէ ոք ուղղութբ 'ի վար արկանիցէ զայնպիսի բարիս զյարմարեալս 'ի խաղաղութի մահկանացուաց, զառաւելագոյնսն առնուցու և զլաւագոյնս, այս է՝ զխաղաղութի անմահութե, և զհամեմատն այնմ ըղ-

փառս և զպատիւ ՚ի կեանսն յաւիտենական՝ առ ՚ի վայելել զնոճ, և զընկերն յոյծ ՚ի Յակ որ չարաչարն վարիցի, յայրացանէ վրիպեսցի, և զայսոսիկ կորուսցէ։

ԳԻ ՅԱՒԱՒ ՕՐՈՒ

Յաղագս կարգի և օրինաց երկնային և երկրային՝ որով և իշխէն խակ և խնամ տանել մարդկային ընկերութեան, և խնամելն և ծառայել։

Վ ԱՍՆ այսորիկ ՚ի կիր արկումն ամենայն ժամանակիցս իրաց կարգեալ է յարդիւնս երկրաւոր խաղաղութեանէ յերկրայինն քաղաքի. իսկ յերկնայինն քաղաքի կարգեալ է յարդիւնս յաւիտենից խաղաղութեան։ Զի՞նչ իրի եթէ հաք մեք կենդանիք ոմանք անբանք, ոչ այլ իմք՝ բայց բարեյաջողութեանն ցանկայաք մասանց մարմնոյ, և հանգստեան ախորժակաց. և չպիտէր այլ բաց ՚ի մարմնոյ հանգստեանէն և ՚ի լրմանել յօժարութեաց, որպէս զի մարմնոյ խաղաղութեանն նպաստաւոր ՚ի խաղաղութեան հոգւոյ լինիցի։ Այլ անդր եթէ պակասիցի խաղաղութեան մարմնոյ, խափանի և խաղաղութեան ոգւոյ անբանաւորի. իբրև զի չկարէ զհանգիստ ախորժակացն գտանել. իսկ երկոքին միաբան նպաստ լինին այմ՝ խաղաղութեան՝ զոր յիրեարս ունին հոգի և մարմին. այն է խաղաղութեան բարեկարգ կենաց և առողջութեան։ Ո՛չ զոր օրինակ ախորժել զխաղաղութեան մարմնոյ ցուցանեն կենդանիք՝ յորժամ ՚ի ցաւոց խուսափեն, և զխաղաղութեան հոգւոյ՝ յորժամ առ ՚ի լրութիւն կարեացն զհետ վարին ախորժակացն վայելման, նոյնպէս ՚ի մահկանացուս խուսկըտին յայտ առնեն թէ քանի սիրեն զխաղաղութեանն՝ որով յիւրաքանչիւր զուգահաւանին հոգի և մարմին։ Այլ քանզի հոգի բանաւոր է ՚ի մարդ՝ զայն ամենայն ինչ՝ որով իւրք ընդ անասունսն հաւասարիլ, նեղքոյ արկանէ բոլորովին խաղաղութեանէ ոգւոյն բանաւորի. որպէս զի մտաւորութեանն նկատեսցէ ինչ, և ՚ի

դէպ այնմ գործեսցէ, և լինիցի բարեկարգ համաձայնու-
թեամբ ձանապհին և ներգործութեանն, զոր և ասացաք լինել
խաղաղութեանն հոգւոյ բանաւորի, Վանզի առ այս խակ
պարտի կամիլ զի ցաւոք չվշտանայցէ, և՝ ի ցանկութենին
չխռովիցի, և մանաւանդ մի լուծանիցի, առ՝ ի կարող լի-
նելոյ զօգտակար ինչ ձանապհել, և ըստ ձանապհին յօրի-
նել զվարուցն կենցաղս։ Այլ զի մի անդէն՝ ի փոյթ ձա-
նապհին ըմբռնիցի երբեք յախտ մոլորութեանն իրիք առ
մարդկային մտացն տկարութեանէ, պէտս ունի ածայիոյ
վարժապետութեան՝ որում անեղկոյ անսայցէ, և օգնակա-
նութեանն՝ զի ազատօրէն անսայցէ։ Այլ քանզի՝ ի մահկա-
նացու մարմնիս եղելով օտարանայ՝ ի տեառնէ, հաւատովք
գնայ՝ և ոչ առ երեսին կարծեօք։ սորին վասն զանձնային
զիաղաղութեանն զմարմնոյ կամ զհոգւոյ, կամ համակ զերբ
կոսին՝ ուղղէ յայն խաղաղութեանն, որ է ընդ մարդ մահկա-
նացու և ընդ անմահն ած։ որպէս զի եղիցի նմա բարեկարգ
հնազանդութեանն հաւատովք ըստ յաւիտենական օրինաց։
Այրդ քանզի ած որպէս վարժապետ երկուս ուսուցանէ, մե-
ծագոյն պատուիրանս զածսիրութեանն և զընկերսիրութեանն, յորս
երբեակ ինչ առ՝ ի սիրել գոյանէ մարդ, զած, զանձն և
զընկերն, և նա և եթէ չսխալէ՝ ի սիրել զանձն՝ որ զած սի-
րել, այսոցիկ ապա զհետ գայ՝ զի և ընկերին հոգ տանի-
նէ առ՝ ի զած սիրելոյ, զոր հրամայէ սիրել իբրև զանձն,
այս է՝ հինգ, և որդւոց, և ընտանեկաց, և այլոց ևս մարդ
ոց որոց կարողն իցէ։ և՝ ի գոյն կամիցէ և ինքն իսամ
ընդունել յընկերէնն՝ եթէ երբեք ունիցի պէտս։ Այսու
օրինակաւ անդորրացեալ լինի յիւրն կողմանէ ընդ ամե-
նայն մարդոյ՝ խաղաղութեանն մարդկան, որ է բարեկարգն
միաձայնութեանն, որոյ այս կարգ է, նախ՝ մի վնասել ումեք,
և ապա՝ օգտել ևս ումեմն կարող է։ Այն որոյ առաջին է
՝ի նմա խնամարկութեանն իւրոցն։ զի առձեռն և դիւր ձա-
նապարհ է նորա խնամ ածել նոցա ըստ կարգի բնութենէն,
այլ և մարդկային ընկերութեանն։ ուստի ասէ առաքեալ։
Եթէ հնար է որ իւրոցն, և մանաւանդ ընտանեացն խնամ
ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է, և չար ևս քան

զանհաւատանալ ,, ... Ցհ. Ե. 8 : Լսոտի ծնանի և խաղաղութիւն տան , որ է բարեկարգ միակամութիւն բնակչացն ՚ի հրամայել և ՚ի հնազանդիլ . քանզի հրամայեն իմաստուքն , որպէս այլք՝ կնոջ , ծնողք՝ որդւոց , տէրք՝ ծառայից . իսկ հնազանդին իմաստուկերակքն , որպէս կանայք՝ արանց , որդիք՝ ծնողաց , ծառայք՝ տերանց : Այսպէս ՚ի տան արդարոյն՝ որ հաւատով կեայ , և գէթ պահպանեսցէ յերկնաւորն քաղաքն , նոքին իսկ որք հրամայեն՝ ծառայեն այնոցիկ որոց հրամայել կարծին . քանզի ոչ է՛թէ յիշխանասիրութենէ բերեալք հրամայեն , այլ ՚ի պարտեաց իւնամարհելոյ . ոչ ամբարհաւաճութենէ տիրելոյ , այլ ՚ի գթոյ դարմանելոյ :

ԳԼՈՒԽ ԺԱ

Յաղագս բնական ազատութեան , և յաղագս ծառայութեան՝ որոյ առաջին պատճառ է մեղքն , որով մարդ լաքասէր՝ թէ և վեհ ասրուհ այլուս մարդոյ , բայց ծառայ է խրատին ցանկութեան :

Լ՚ԱՐԴ զայս օրինադրէ բնաւորականն կարգ . այսպէս յօրինեաց ՅՀ զմարդ , զի տիրեսցէ , ասէ , ձկանց ծովու , և թռչնոց երկնից , և ամենայն սողնոց որ սողին ՚ի վերայ երկրի : ԵՒանաւորն ըստ իւրում պատկերի արարեալ , կամեցաւ անբանաւորացն և՛թէ իշխեցող զնա լինել . ոչ ըզմարդ՝ մարդուն , այլ զմարդ՝ անասնոց . որոյ վասն արգարքն առաջինք խաչանց առաւել հովիւք կարգեցան՝ քան թագաւորք մարդկան . սովիմք այսու յայտ արաբեալ ՚ոյ , թէ զինչ արարածոյն կարգ պահանջիցէ , և ՚ի ինչ միջս մեզքն իցեն արժանի : Վանզի զծառայութենն պայմանս յիրաւի յանձն մեզաւորի սահմանեալ իմանամք . ըստ որում ոչ ուրեք ՚ի գիրս ծառայի անուն ընծեռնումք , բայց յորժամ՝ Կոյ արդար այսու կոյմամբ զմեղս որդւոյն պատուհասեաց . վասն որոյ յանցանքն ծառանգեցին զայդ

անուն, և ոչ քնութեն։ Իսկ սկիզբն լսոին Յոյնիդ սկսաւ (որ է նոյն ընդ Հայուսն Ծառայ և գերի), յայնմանէ կարծի լինել առ Հռովմայեցիս, զի որք ըստ իրաւանց պատերազմի մահու պարտական գտեալք՝ վասն անվնաս պահելոյ ի յաղթողացն՝ պահակ կամ ասպատուձ Յոյնեաւ լինէին։ քանզի սկսանէ է պահել, որ և այս չէ առանց յարժանեաց մեղաց։ Այսպէս զի և ի մէջ անդ արդաբ պատերազմի, սակս մեղաց լինի կուռել ընդդէմ հաւատակից։ և ամենայն յաղթութեան՝ թէ ի յաջողութիւն և յարագործ իցէ, զյաղթեցեալսն խոնարհեցուցանել ծառայիս դատաստանաւ, եթէ ի խրատ, և եթէ ի պատուհաս մեղաց։ Այլ կայ աւագիկ կայ Վանիել այլ այ. որ ի գերութեն անդ զիւր և զժողովրդեան զմեղս խոստովանի լինի այ, վկայեալ բարեպաշտին ցաւագնութեն թէ այն էր նոցա գերութեն պատճառք։ Այսպս սկսեալ ծառայութեն առաջինն պատճառ մեղքն են. որպէս զի մարդ ներքոյ այլոյ մարդոյ անկանիցի ծառայութեն կապանաւք. և լինի այս յածայնին դատողութենէն, առ որում չիք անիրաւութիւն, և գիտէ արժանի յանցաւորաց բաժանել զիւրաքանչիւր պատուհաս. և որպէս ինքնին ամենատէրն ասէ. “Որ առնէ զմեղս, ծառայ է մեղացն։” Յհ. ը. 34. և վասն այսր բազմաց ի բարեկրօնից անդամ ծառային տերանց անօրինաց, այլ ոչ երեք ազատաց. “Օր ի որով իւիք յաղթեցիր ոք, նոքին և ծառայ է ։” Պետ. ը. 19. Այլ սկսաւ քնարեւ քնարելի և ահ ծառայել մարդոյ՝ քան ցանկութեն. քանզի Թող զայլն, նոյն իսկ իշխելոյն ցանկութեն՝ ամենագժնեայ իշխեցողութեն ապականի, զնիրաս մահկանացուաց. իսկ մարդկան՝ ըստ այմ կարգի խաղաղութեն՝ որով այլք այլոց հպատակին, զոր օրինակ խոնարհութեն յօգուտ ծառայելոյն է, նոյն օրինակ հպատուհութեն՝ ի վնաս իշխեցողացն է. բայց ոչ ոք ըստ բնութեն՝ յորում՝ ի սկզբան հաստեաց ած զմարդ, ծառայ է մարդոյ կամ մեղաց։ Սակայն և ծառայութեն պատժողական յայն օրինս կապեալ է՝ որ պահպանել հրամայէ զկարգն քնական, և զհանգիստն արգելու. քանզի եթէ ոչ լինէր

ինչ գործեալ Հակառակ ամէն օրինաց, ոչ պիտոյ էր ասել ինձ արկանել պատժողական ծառայութիւն։ Վասն ասելոյն՝ Ամէն ոք առաքեսցէ իրաւ և ծառայից անգամ աւանդէ՝ հնազանդել լինել տերանց իւրեանց, որպէս մեզ և մեզ առաքեալ նոցա. որով Թէ չկարելիցէ ազատանալ ի տերանց անտի, գէթ զիւրեանցն ծառայութիւն ազատական գոգցէս առնիցեն, ոչ առ ակնեայ երկիւղաբար ծառայելով, այլ հաւատարիմ սիրելութիւն. մինչև անցցէ ա նօրհնութիւն, և իրաւանցն ամենայն պետութիւն և իշխանութիւն մարդկան, և եղիցի Աստ ամենայն յամենայնի։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Բաղադս արգար իրաւանց իշխողութեան։

Վասն այսորիկ ունել ունելին ծառայս և հարկն մեր արդարք, այլ այնպէս ինն զանազանական իրաղաղութիւնն մատակարարք լինելին, զի ըստ ժամանակին բարեացս իարի առնելին վիճակի որդւոցն ի կարգ ծառայից. իսկ ըստ ածպատուհասութեանն յորում ակնկալիք են յաւիտենից բարեաց, զուգաբար սիրով հոգս տանելին՝ համերկին անձանց տան իւրեանց. զոր և այնպէս օրինադրեալ կարգն բնական, զի տանուտէրութեանն անուն ստոյգ սկիզբն կալաւ. բայց և քան զպատշաճն յաձախեաց, մինչև յանիրաւի տիրացելոցն և այս կոչումն պանծալ։ Իսկ որ արդարեւ տանուտէրքն են, անհնազանդ որ առանին՝ իբրև որդւոց իրամ ունին առ ի պատուելոյ զնոճ և հաճոյանալ նմա, ցանկացեալք և ջան եդեալք ժամանել նոցա ի տունն երկնաւոր, ուր ոչ և այ պարիսիք կայցեն հրամայելոյ մահկանացուաց, իբրև զի ոչ այլ հրամայ ածելոյ իցեն երջանկացելոցն յամենայնի անդ. այլ միայն չև հաճելոյ անդր, առաւել տառապել ունին հարք՝ որք տիրեանն, քան ծառայք՝ որք ծառայեն։ Իսկ եթէ ի տանն ընդդիմակ

որ գոցի մտեռսական խաղաղութիւնն անհնազանդութիւ՛ն, կըտամբի բանիւ կամ գանիւ, և կամ այլ ազգ եւս արգար և իրաւացի պատուհասիւ, որպէս թ ողացուցանի ընկերութիւնն մարգկային՝ առ ի չահ կըտամբեցելոյն, որպէս զի յօդուտ ի խաղաղութիւնն յորմէ սպառեաւ։ Վասնզի զոր օրինակ ոչ բարեբարութիւն է՝ ձեռն տալ այլոմ առ ի կոռուսս գործելոյ ապ ծագուսնի բարոյ, նոյնպէս չէ անպատուհաս՝ խնայական նեղոզութիւ՛ն ի ծանր և ս չարի առ կումն պատրաստել։ Վ՚ասն այսորիկ անկ է պարտաւոց առն անմեղի՝ ոչ միայն չգործել ուժգր չար, այլ և արգելուլ ի մեղաց, կամ պատուհասել զմեղս ։ որպէս զի կամ պատժապարտաւն ուղղեսցի կրիւ՛ն, կամ այլքն երկիւղեն օրինակաւ։ Վ՚ասն քանզի գերդաստան մարդոյ պարտի սկիզբն լինել կամ մասն քաղաքի, և ամենայն սկիզբն կարգեալ է յաւարտումն իւրոյ տեսակի, որպէս և ամենայն մասն յամբողջութի՛ն բոլորին՝ որոյ է մասն, ինքնին քաջայայտ է զի խաղաղութիւնն անտեսական կարգի առ խաղաղութի՛ն քաղաքական, այս է՝ զի բարեկարգ միաբանութի՛ն ընակչաց ի հրամայել և ի հնազանդիլ՝ կարգեսցի առ բարեկարգ միաբանութի՛ն քաղաքացեաց ի հրամայել և ի հնազանդիլ։ Վասկ այսորիկ պիտոյ է առն տանուտեառն առնուլ պատուէրս յօրինաց քաղաքին, այնպէս անտեսել նոքօք զիւր տուն՝ զի յանկեսցի խաղաղութի՛ն քաղաքին ։

ԳԻ ՅԱՒԵՍ ԺԱ։

Ի՛ երկրաւոր ընկերութի՛ն խաղաղութի՛ն ունիցի ընդ երկրաւոր քաղաքին. և ի՛ զանհաւատութի՛ն ։

Վ՚ՅԱ տուն մարդկանն որ ոչ՝ ի հաւատոց կեան, զհետ երկրաւոր խաղաղութի՛ն վարի յիրաց աստի և ի հեշտասիրութեանց ժամանակեայ կենացս։ Իսկ տուն մարդկան՝ որ՝ ի հաւատոց կեան, սպասեալ անկն ունի յաւիտենականացն՝

որ յապաւնիսն խոստացեալք են, 'ի կեր արկանելով զերկրաւորքս և զաւժամանակեայս իբրև պանդուխտ, և ոչ զի նովիմբք ըմբռնիցի և կաշկիցի յառ ա̃ծ դիմեցմանէն, այլ զի կազդուրեսցի ևեթ առ դիւրաւ տանելոյ, և ոչ եթէ աճեցուցանելոյ զբեռն եղծանելի մարմնոյ՝ որ ծանրացուցանէ զոգի։ Սորին վասն վարումն իրացն որ մահկանացու կենացս են պիտոյականք՝ հասարակաց է երկաքանչիւր ազգի մարդկան և երկաքանչիւր տան. բայց դիտաւորութ̃ի վարելոյն՝ իւրաքանչիւրում ուրոյն, և կարի տարօրինակ. Որպէս քաղաքն երկրաւոր՝ որ ոչ 'ի հաւատոց կեայ, երկրաւոր խաղաղութ̃են է ցանկացող, և զքաղաքացեացն միաբանութ̃ի 'ի հրամայել և 'ի հնազանդիլ յայն ինչ քանակէ, զի պահեսցի առ նոսա կցորդութ̃ի իմն կամաց յիրս պատկանեալս մահկանացու կենաց։ Իսկ երկնաւորն քաղաք, կամ լաւ ևս՝ այն բաժին նորա որ պանդխտեալն է 'ի մահկանացու վիճակի աստ, և կեայ 'ի հաւատոց, ունի և նա կարիս վարելոյ զնոյն խաղաղութ̃ի, մինչև անցանիցէ մահկանացուս՝ որում այն խաղաղութ̃ի կարևոր է։ Նա այսորիկ աղագաւ մինչդեռ յերկրաւոր քաղաքին իբրև կալանաւոր իմն զնշդեհութ̃է վարէ կեանս, ունելով յանձին իբր առ հաւատչեայ զխոստումն փրկութ̃ե և զհոգևորական պարգևսն, ոչ ինչ խղճէ կալ հպատակ օրէնաց երկրաւոր քաղաքին՝ յայնոսիկ որովք մատակարարին պիտանացուքն 'ի կազդուրումն մահկանացու կենաց. որպէս զի ուր հասարակաց է մեռելութ̃են պայման, միաբանութ̃ի պահեսցի ընդ երկաքանչիւր քաղաք ըստ պատշաճից աղցաւոր կենացն։ Այլ քանզի երկրաւոր քաղաքին եղեն իմաստունք ոմանք պարսաւեալք յա̃ծայինն դպրութ̃է, որք կամ տարակուսեալք, և կամ պատրեալք 'ի դիւաց՝ արժան համարեցան աստուածս բազումս կարգել այլ և այլ իրաց կենցաղոյս, որք ըստ այլ և այլ պաշտամանց ներքոյ անկեալք իցեն զանազան դից, ումեմն մարմինն, միւսումն՝ հոգին, և 'ի նմին իսկ 'ի մարմնի՝ այլում գլուխն, այլում պարանոցն, և այլ մի ըստ միոջէքն առ իւրաքանչիւր աստուածս. նոյնաբար և 'ի հոգւոջ՝ այլում

հանձարն վիճակեալ, այլում ուսումն, այլում բարկութիւն, այլում ցանկութիւն. այլ և յիւրաց անտի որք կենացս են տա- տալք, այլում պատճարն, այլում ցորեան, այլում գինի, այլ լում իւղ, այլում անտառք, այլում դրամք, այլում նաւար կութիւն, այլում մարտք և յաղթութիւք, այլում ամուսնութիւնք, այլում ծնունդ և ազանն, և այլք ևս այսոց՝ի ներքոյ կա ցեալք։ Իսկ զի քաղաքն երկնաւոր զմի միայն ճշ գի- տէր պատճառի, և նմա միայնում հարկանել զնճաւայե- լուչն ծառայութիւն հաւատարիմ բարեպաշտութիւն, յայսմ պատճառի անմարթ էր նմա զօրինս կրօնիցն իբրու հասա- րակաց ունել ընդ երկրաւոր քաղաքին. այլ հարկ էր յայսոսիկ օտարանալ՝ի նմանէ, և գժպհի և ևս յաչս այլա- զար խորհողացն լինել, յանձն առեալ զնոցայն զայրոյթ և զատելութիւն և զչարամտութիւն բռնութիւն, թէ ոչ իբ- րուէն բազմութեամբ մերթ երկիցս յանկերպ զհակառակու- դացն անձինս, և հանապազ յոժարութեամբ օգնականութիւն՝ի բաց վանէր։ Այսպս երկնային այս քաղաք միշ նժգհ կայ յերկրի, հրաւիրէ յամենայն ազգաց իւր քաղաքա- ցիս, և յամենայն լեզուս համահաւաքէ զնժգհականն ժողով, ոչ խորհելով զոր միանգամ տարօրինակ ինչ կոյ- ցէ առ նոսա՝ի բարոյն և յօրէնս և՝ի սովորոյթս, ո- րովք խաղաղութիւնն երկրաւոր ստացանի և կամ պահպա- նի, ոչ ինչ յայնցանէ հատանելով և եղծանելով, այլ ընդ հակառակն պահելով իսկ և նմանող լինելով. որ թէպէտ և պէսպէս կայլ և այլ ազգս իցէ, բայց՝ի նոյն՝ի մի վախ- ճան երկրաւոր խաղաղութիւնն ձգեալ բերի, եթէ չարգե- լուցու միայն զկրօնսն՝ որով ուսանիմք պաշտել զմի ճշ ճմարիտ բարձրեալ։ Ասմին երի՝ի կիր առնու և երկնա- ւորն քաղաք՝ի պանդխտութիւն իւրում յայսմ զերկրաւոր խաղաղութիւնն, և յիրս վայելչականս մարկանացու բնու- թիւն մարդկան՝ պահպանէ և ախորժէ զնոցայն կամացն միաբանութիւն, որչափ ինչ օրէն իցէ առանց աւժանաց բարեպաշտութիւն և կրօնից. և զերկրաւորն զայն խաղա- ղութիւն յերկնաւորն անդր վերառնել տանի, յայն որ ար- դարեւ խաղաղութիւն է, միոչ զի զայն ևեթ համարել և ա-

սէր արժան է խաղաղութի՛ բանաւոր արարածոյ · այս է՝ ամենայարմար և համաչունչ բնակերութի՛ վայելելոյ զոհ, և զմիաբանս չոհ · ուր յորժամ լինիցի հասանել՝ ոչ լիցի այլ կեանք մահկանացու, այլ ամենահին և աւուրգ ապէս կենդանացու · ոչ մարմին ընչաւոր՝ որ յեղծանիլ կարօտ ծանրացուցանիլ զոգի, այլ հոգեւոր՝ համայն անկարօտ, և ըստ բոլոր մասանց հնազանդեալ կամացն · Ո՛վ այս խաղաղութի՛ ունի միւնդեա հաւատովք կայ պանդուխտ, և նովին հաւատովք կեայ արդարապէս, յորժամ՝ առ ի ստանալոյ զայն խաղաղութիւն՝ ի կիր արկանէ զամենայն զբարեգործութիւն որ առ Աստ և առ ընկերն · զի և կեանք քաղաքի է անշուշտ ընկերական ·

ԳԻՒՂԻՍ ԺԲ.

Զանէ այլազան խզէ երկիա յաղագութի՛ նորոց ակադեմականց՝ ի պղտութի՛ քննական հաւատոց ·

Լսեալ զոր յաղագս նորոց ակադեմականց՝ ի մէջ բերէ Վարրոն զխոսիր կարծեաց՝ զամենայն ինչ գնել յանստոյգս, ապաքէն յայդպիսի երկբայանաց ոչ ինչ ընդհատ՝ ի խելայեղութի՛ գարշի քաղաքն ոչ, յանձին կալեալ զիրացն՝ զոր ըմբռնել մտօք և բանիւ զդիտութի՛ թէ և նուազ սակս եղծանելի մարմնոյն զոգի ծանրացուցանէլոյ, զի ըստ առաքելոյ ասացածին՝ փոքր ի շատէ գիտութի՛, բայց ամենևին հաւատի գիտութի՛ · և հաւատս ընծայել զգայութեանց՝ ի բացայայտութի՛ իրս՝ զոր Հոգի՝ ի վար արկանել միջնորդաւ մարմնոյն · զի աւանդելիս ինձ սխալել՝ որ համարիցին թէ զգայութեանց երբեք հաւատալ չէ պարտ · Հաւատալ գարձեալ ածաղունչ սուրբ գրոց հնոց և նորոց, զոր կանոնականս անուանեմք · ուստի սկզբնաւորեալ իսկ են հաւատքն՝ որոյ կեայ արդարն, և նովաւ աներկիւղ գնամք օտարացեալքս՝ ի տեառնէ · Ո՛վ այս

կալեալք հաւատոյ, յիրս յիրս որ միանգամ ոչ զգայուԹէ և ոչ բանին ըմբռնեալք էն, և ոչ ծանուցեալք մեզ կանոնական գրովք, և ոչ՝ի գիանաւորուԹէ մեր հասեալք վկայիւք ոմանցք՝ որոց անտեղի է չհաւատալ, առ այդպիսիս երկմտուԹէ բերիմք ազաւաղ յիրաւացի սաղմոսացոյ,

ԳԼՈՒԽ ՀԻԹ

Զպատգս սարաղու և վարուց քրիստոնէական Ժողովրդեան։

ՎՅՐԹԷ որոյ տարազու կամ ընԹացիւք կենցաղ կալցի իւրաքանչիւր որ զհաւատոյն՝ որով լինի ժամանել առաՔ, ոչ ինչ փոյթ է քաղաքին այլ, եԹէ չիցէ հակառակ ինչ Քաժանոյն պատուիրանաց. ուստի և զորս յիմաստասիրաց անտի՛ի քրիստոնէուԹէն գան, ոչ սոխակ փոխել զտարազ և զսովորոյթ կենցաղավարուԹէն՝ որ ոչն հակառակին ինչ կրօնիցդ, այլ միայն զսուտ ուսմունսն։ Ա՛ն որոյ ոչ փոյթ առնէ որոշմանն՝ զոր՛ի կիւնիկեանց անտի յառաջ բերէ Ա՛ռքոն, միայն զի աղտեղի ինչ և անժուժկալ մի գործեցի։ Իսկ ըստ երրեակ հանգամանաց կեՆացն, այն որ հանդարտեալ կամ վաստակաւորը և կամ խառն յերկոցունց, ապաքէն կարող է այր իւրաքանչիւրը ըստ միում յայնցանէ յօրինել զկեանս առանց վհատութեաց, և յաւէտ խեՆիկ վարձուցն լինել հաստ. բայց զգուշալի այն է՝ Թէ զինչ ինչ կալցի առ սիրոյ ՉմարտուԹէն, զինչ ինչ վաստակիցի ըստ պարտեաց սիրելուԹէն։ Ա՛յ այնպէս ինչ պարապորդ կայցէ ոք, մինչև՛ի պարապման անդ չխորհել ինչ յօգուտ ընկերին. և ոչ այնպէս վաստակաւոր, մինչև անհոգանալ՛ի խոհումն այլ։ Ա՛յ պարապորդուԹէն ոչ եԹէ անգործականն դատարկուԹէի կոչ զուարճացուցիչ, այլ խուզողուԹէի կամ գիւտ ՉմարտուԹէ, որպէս զի իւրաքանչիւրը որ յաւելցու՛ի նմին, և զոր եգիտն՝ պինդ ունիցի, և ոչ ընդ այլում նախանձիցի,

Իսկ՝ի վաստակաւորութե՛ն ոչ պատիւ կամ իշխանութե՛ն իցէ ըղձալի յաստի կեանս, որովհետեւ ամենայն ինչ ընդունայն է՝ի ներքոյ արեգական. այլ ինքնին գործն իցէ սիրելի՝ որ պատուոյն այնուհետեւ կամ իշխանութե՛ն չայծղէ, միայն թէ ուղղութե՛ն և յօգուտ լինիցի. այս է՝ զի յայն փրկութե՛ն հնազանդելոյն որ ըստ նմա է՝ կազդուրեսցէ. զորմէ վերագոյնդ ասացաք։ Վ՚ասն որոյ ասէ առաքեալ. «Լինի՛ր ըստ եպիսկոպոսութե՛ն ցանկալ, բարւոյ գործոյ ցանկալ»։ Յայտ առնել կամեցեալ թէ զինչ եպիսկոպոսութե՛ն իցէ. զի գործոյ անուն է, և ոչ պատուոյ. քանզի յունական ձայնդ անտի առեալ իսկ է, զի յաւաջնորդութե՛ն վերառաքելն տեսուչ կայ առաջնորդելոյն, տանել զնոցա խնամն. զի յայնն ԷՔՒՓՕՓՕՍ վերագիտոյ կամ վերատեսուչ լսի. զի ծանիցի թէ չէ եպիսկոպոս այն՝ որ իշխանանալ ախորժէ, և ոչ օգտել։ Վ՚ասն որոյ ոչ ոք արգելանի՝ի փութոյ Ճանապհոյ զՀմարտուն, որ անկ է գովելի Հանդարտուն կամ պարապոյ. իսկ ըղվերագոյն տեղի՝ առանց որոյ չմարթի առաջնորդել ժողովրդեան, թէպէտ և ունիցի ոք և վարեսցէ որպէս դէպն է, բայց յանդիպս է ցանկալ։ Որքին վասն զպարապորդուն սուրբ սէր Հմարտութե՛ն խնդրէ, և զարդարացի գործակատարութե՛ն յանձն առնու Հարկ սիրոյն։ Վ՚ասն զի զնոսա ոչ գնե ոք՝ի վերոյ, ՚ի Հայեցողութե՛ն Հմարտութե՛ն պատրաստել արժան է. իսկ եթէ՝ի վերոյ գնիցի, յանձն առնուլ առ Հարկի սիրոյն, սակայն և ոչ այնպէս՝ի գլխովին լքանել պարտ է զՀմարտութե՛ն վայելուչն, որով նորայն նուազեսցի քաղցրուն, և սորայն Հարկ ընկձեսցէ խոպառ։

ԳԼՈՒԽ Ի

Քաղաքակից սրբոց Երանելից են յաւուր՝ի ժամանակի ասոի կենացս։

Ասէ արդ քանզի գերագոյն բարւոյ քաղաքին այ է յաւիտենական և լիապատար խաղաղութե՛ն, ոչ այն որով

անմահքն կան և ինձն՝ անկրելիք քնաւին յամենայն ներ-
հարիկ, ո՞ այն ոք է որ ուրասցի զայն կեանս լինել առին-
երանեան, կամ զաստանաւոր կեանս ոչ գտանիցի առ նորա
համեմատութեն լինել երեքթշուառեան, որչափ և լիա-
յեալ իցի բարեօք հոգւով և մարմնով և նեւթոց ար-
տաքնոց։ Ապաքէն որ միանգամ ոք այնպէս ունիցի զայս
կեանս, զի զնորայն վարուին ուղղեալ տանիցի՝ ի վախճան
անդր՝ զոր սիրէ անձկանօք, և վստահուԹիւ ակն ունի, ոչ
տարակուսիլ ինչ երանելի զնա յայժմուս ասել մարթի է,
յուսովին աշխարհիկ առաւել՝ քան ասել իրօք. իսկ այս իրք
առանց այնր յուսոյ՝ երանութեն սուտ են և թշուառութիւն
մեծ. քանզի ոչ՝ ի առյոգ բարիս հոգւոյ պիտանանան։
Ո՞ւ ի՞նչ ձգմարիտ խնամատանՔ այն որ զիւրն գիտասրութեն
յայն իրս զորս խոհեմաբար ընտրէ, և գործէ արիաբար,
և նուաճէ ժուժկալութիւն, և բաշխէ արդարապէս, ոչ
ուղղիցէ յայն վախճան՝ ուր եղիցի ածի ամենայն յամե-
նայնի, առյոգ մշտնջենաւորութեն և կատարեալ խաղա-
ղութիւն։

ԳԻ ՅԱՒԵՍ ԻՒ.

Սիրէ ակաց երբէք պետութեն հռովմէական քան աւանդից Սկիպիոնի՝ ճառելոց ի խոսս Կիկերոնի։

Վ ԱՅՍՈՆ այսորիկ ահա ժամ է աստանօր ի գլուխս տա-
նել կարճառօտ և ակն յայտնի ըստ մարթելոյ՝ զոր յեր-
կրորդ գիրս մատենիս խոստացայ ցուցանել, եթէ հռով-
մէականն պետութեն ոչ եղև ըստ աւանդիցն՝ զոր
յուշ առնէ Պիսիոն առ Կիկերոնն ի մատենին յաղագս
պետութեան։ Վասնզի զպետութեանն հաստատակաց սահ-
մանել համառօտ. "Իրք ժողովրդեան կամ իրաւունք քաղ-
մուեր ,,. և եթէ ձգմարիտ իցէ սահմանդ, ապա չէ լեալ
երբէք պետութիւն հռովմէական. զի այն ոչ եղև բնաւ
իրք կամ իրաւունք ժողովրդեան, որպէս կամի սահմա-

նըդ ։ Վասն զի զժողովուրդն սահմանէ՝ գումար բազմութե լծորդեալ համահաւանութ̃ իրաւանց, և օգտիցն մասնակցութ̃ ։ իսկ թէ զո՛ր ասիցէ համահաւանութիւն իրաւանց, յառաջ երթեալ բացայայտէ, ցուցանելով թէ վարիլ անմարթ է պետութե առանց արդարութե ։ ապա ուրեմն ուր արդարութի ճշմարիտ չիք, և ոչ իրաւունք լինիցի ։ զի որ իրաւամբք լինի, ապաքէն արդարութ̃ լինի ։ իսկ որ ոչ արդարութ̃ լինի, և իրաւամբք չմարթի լինել ։ Քանզի ոչ արժան է իրաւունս ասել կամ համարել զանօրէն օրէնսդրութիւս մարդկան ։ ուր և ինքեանք իսկ զայն ինչ ասեն իրաւունս՝ որ յաղբերէ արդարութե գայցէ յառաջ ։ և 'ի սուտ գրեն զառ 'ի յոմանց ոչ ողջախոհաց արտաձայնեալն, թէ իրաւունք այն է՝ որ առաւել կարողին յօգուտ իցէ ։ Սակս որոյ ուր ոչ է արդարութի ճշմարիտ, չէ և չէ անդ գումար մարդկան համահաւանութ̃ իրաւանց լծորդեալ, ուստի և ոչ ժողովուրդ՝ ըստ սահմանին Սկիպիոնի կամ Կիկերոնի ։ և եթէ ժողովուրդ ոչ, և ոչ իրք ժողովրդեան, այլ խառնակոյտ բազմութե իրիք, զոր ժողովուրդ անուանել ոչ արժան է ։ Եւ արդ եթէ պետութիւն հասարակաց՝ իրք ժողովրդեան է, և չժողովուրդ է որ չէն լծորդեալ համահաւանութ̃ իրաւանց, և ոչ գոն իրաւունք՝ ուրանօր ոչ մի արդարութի ոչ կայ, աներկբայելի ապա գոյ իմաստասիրել՝ թէ ուր չիք արդարութի, և պետութի չիք ։ Իսկ արդարութի այն առաքինութի է, որ բաժանէ իւրաքանչիւրում զիւրն ։ և ո՞ր արդարութի իցէ մարդոյ՝ զնա ինքն զմարդ քեցել յայ̃ ճշմարտէ, և ներքոյ դիւաց անօրէնց արկանել ։ եթէ որ հանէ զկալուած 'ի ստացողէ իւրմէ, և տայ այլում ոչ ունողի իրաւունս՝ անիրաւ ճանաչի, միթէ որ զանձն զիւր 'ի բաց հանիցէ յայ̃ տէրութենէն յորմէ արարաւն, և այսոց չարաց ծառայիցէ, իցէ՞ այնպիսին արդար ։

Ապաքէն 'ի նոյն ճառս որ յաղագս պետութեան՝ հասարակաց լինի պայքարումն սաստիկ և բուռն հակառակ անիրաւութե 'ի կողմն արդարութե ։ Եւ քանզի անիրաւութեն տուեալ էր զառաջինն իրաւաբանել ընդդէմ

արդարութեանէ, ասելով թէ բնաւ անմարթ է կալ և մեծա-
նալ պետութեանէ առանց անիրաւութեանէ, զայս փաստ հզօր
դնելոր առաջի. Այնիրաւ է՝ մարդոյ ծառայել մարդոյ
բռնացելոց. և սակայն թէ ոչ զայդ անիրաւութեանէ՝ի կիր
առնուցու քաղաքն իշխանաւորք, որոյ է ընդարձակ սե-
տութեանն, իշխել գաւառաց ոչ ևս կարողանայ. Այսմ
տուաւ պատասխանի՝ի դիմաց արդարոյն, թէ այնու իսկ
արդար է, վասն զի մարդոց այնպիսեացն՝ի շահ է ծառայու-
թեանն, և՝ի նոցայն օգուտ լինի՝ յորժամ ուղղուքն լինի. այս է՝
յորժամ բառնի յապերաշխից անտի համարձակութեանն զըր-
կանաց, և նուաճեալք լաւագոյն ևս լինին, որք յազատու-
թենն յոտացեալ էին. Յաւելաւ՝ի հաստատել զիրա-
ւարանութեանէ՝ն՝ իբր յարացոյց ինն վանմական առեալ՝ի
բնուստ անտի, ասելով. Այրիմ՝ ասա՝ ճշիւ իշխէ մարդոյ,
և հոգի՝ մարմնոյն, և միաբ՝ ցանկութեանէ և այլոց ևս ա-
տաւոր մասանց հոգւոյ. Այդպիկ օրինակաւս վարդա-
պետիմբ, թէ ծառայութեանէ յօգուտ է ոմանց. իսկ այ
ծառայել՝ բոլորից՝ի շահ օգտի է. և հոգի՝ի ծառայելն
այ ուղղութեանէ իշխէ մարմնոյ. և յոգւոյ անդ միայն հնա-
զանդեալ տեառն այ, ուղիղ իշխէ ցանկութեանէ և այլոց
ախտից. Ալ ասն այսորիկ եթէ մարդ ոչ ծառայէ այ, որ
արդարութեանէ գոլ՝ի նմա կարծիցի. որովհետև՝ի չծա-
ռայել այ՝ ոչ իբր հոգի կարող է արդարապէս իշխել
մարմնոյ, կամ միաբ մարդկեղէնն ախտաւորութենցն. Այս
եթէ՝ի մարդ այնպիսի արդարութեանէ ինչ ոչ է, և ոչ ան-
շուշտ՝ի ժողովի մարդկան՝ որ յայնիսեացս մարդոց է
բաղարկեալ. Այսպա ուրեմն չիք ատանօր համահաւանու-
թիւն իբաւանց՝ որ զմարդկան բազմութեանէ կազմէ ժողո-
վուրդ, որոյ իբր ասի լինել պետութիւն. Ալանդ և յաղագս
օգտակարութենէն զինչ ասիցեմ, որոյ մանաւանդ ընդ
միացեալ ժողովոյ մարդկան՝ ժողովուրդ անուանակոչի,
ըստ աւանդելոյ սահմանիդ. վասն զի քաջ խորհրդով
կշռադատեալ, չէ և ոչ ևս օգտակարութեանէ այնոցիկ՝ որք
ամբարշտութիւք կեան, զոր օրինակ կեայ՝ամ որք ոչ այ ծա-
ռայէ, և ծառայէ դիւոյ՝ անչափ ևս ամբարշտաց, որ-

չափ զի կամին ինքեանց որպէս աստուածոց զպատարագաց մատուցումն, գոլով ոգիք ամենապիղծք ։ Սակայն զոր յաղագս համահաւանութեան իրաւանցն ասացաք, բաւական վարկանիմ 'ի ցուցակութիւն թէ ըստ այսմ սահմանի ոչ է ժողովուրդ այն՝ յորում չիք արդարութիւն, որոյ իրք ասիցի պետութիւն ։ Զի եթէ ասեն, ոչ ոգւոց անսրբոց՝ այլ աստուածոց բարեաց և սրբոց ծառայեցին հռովմայեցիք 'ի պետութեան իւրեանց, զի՞նչ կամին թէ դարձեալ կրկին երկրորդիցեմք զոր ասացաքն ըստ բաւականի և շատ ևս քան զբաւականն. և ո՞ ոք որ յակն արկեալ իցէ ցայս վայր զյառաջագնաց գիրս մատենիս երկբայել այլ ևս ունիցի՝ թէ հռովմայեցիք արդարև սպասեակք եղեն դիւաց չարաց և անմաքրից. բայց եթէ ապուշ ոք իցէ բնաւ, կամ անամօթ բանակռուող ։ Բայց սակայն թողեալ ասել՝ որպիսիք ոմանք իցեն պաշտեցեալքն 'ի նոցանէ զոհիւք, գրեալ է յօրէնս Ճշմարտին այ. «Որ դից զոհէ, սատակեսցի՝ բայց միայն Տեառն» ։ Ապա ուրեմն որ զայդ հրամայէ ահագին սպառնալեօք, 'չկամի երբէք զոհիւք պատուել զդիս՝ ոչ զբարիս, և ոչ զչարս ։

ԳԼՈՒԽ ԻԲ

Եթէ իցէ՞ ած Ճշմարիտ այն զոր քրիստոնեայք պաշտեն, որում միայնոյ արժան իցէ զոհել ։

ԱՅԼ ունի ոք 'ի նոցանէ պատասխանել. ո՞ այդ աստուած իցէ, կամ ի՞ւ ցուցանիցի արժանաւոր առ 'ի հնազանդելոյ նմա հռովմայեցւոց, մինչև բաց 'ի նմանէ չլինել այլում աստուածոյ պատարագաբեր ։ Արդարև կուրութիւն մեծ է՝ հարցանել տակաւին ո՞ այդ ած է ։ Այն ած է՝ որոյ մարգարէք նախաձայնեցին զորս ինչ միանգամ ահա արդեամբք տեսանեմք ։ Այն ած է՝ յորմէ պատգամ ընկալաւ Աբրահամ, «Ի զաւակի քում օրհնես-

ցին ամենայն ազգք երկրի „. զոր և 'ի Ք՟ն կատարեալ, որ ըստ մարմնոյ 'ի նորա զաւակէն ծագեաց, ճանաչեն թէպէտ կամաւ, թէպէտ ակամայ նոքին իսկ մնացեալ թըշնամիք անուան նորա ։ Այն ա՟ծ է՝ որոյ հոգին ա՟ծեղէն խօսեցաւ այնոքիւք, զորոց զգուշակութիւն շարակարգեցի յանցեալ գիրս՝ զլցեալսն յեկեղեցի, զոր ընդ ամենայն տիեզերս ծաւալեալ տեսանեմք ։ Այն ա՟ծ է՝ զոր Վարրոն իմաստնագոյնն հռովմայեցւոց կարծէ լինել Արամազդ, թէ և անգիտացեալ զոր խօսին. այլ յիշատակել դէպ վարկայ առ 'ի ցուցանելոյ թէ այր այնպիսի բազմահմուտ չկարաց անգոյ համարել զայս ա՟ծ, և կամ անարգ. այլ հաւատաց թէ սա այն է, որ գերագոյն աստուած համարեցաւ ։ Աւարտ բանիս, այն ա՟ծ է՝ զոր Պորփիւր գիտնաւորն յիմաստասէրս, թէպէտ և քրիստոնէից գոռ թշնամի, խոստովանի զնա ա՟ծ մեծ 'ի պատգամաց այնոցիկ՝ զորս յաստուածս համարի ։

ԳԼՈՒԽ ԻԳ

Զ՛ինչ ասիցէ Պորփիւր՝ 'ի պատգամաց դիցն յայտնեալ յաղագս Ք՟ի ։

ԲԱՆԶԻ *սա 'ի գիրսն մակձայնեալ "Յաղագս որ 'ի պատգամաց իմաստասիրութե՟ „, յորս 'ի մէջ առեալ արձանագրէ պատգամս ինն ա՟ծեղէն կարծեցեալս յաղագս իմաստասիրական իրաց, ասէ բանիւքս այսոքիւք. "Ի հարցանել ուրուք 'ի դից, թէ ո՞ւմ ումեք յաստուածոց յաշտ առնելով կարողանայցէ նահանջել 'ի քրիստոնէութենէ զկին իւր, զայս ասաց Ապողոն չափով ոտից „. և յարէ իբրև 'ի բերանոյ Ապողոնի՝ ասել. "Իցէ քեզ մարթելի թերևս տառս գծագրել 'ի ջրի, կամ թևս արձակեալ թեթևս՝ հաւու գունակ ընդ օդս սաւառնել, քան եթէ զպառածելոյ զամբարիշտ կնոջն բացադարձուցանել զխորհուրդս ։ Ապա, կալցի պնդապէս որպէս ախորժէն՝ զոր-*

տայօդ պատրանօն, յերգս առեալ ողոմք կարկատնոմք զմեռեալ աստուածն. որ յիրաւախոհն պատուհասեալ դատողաց, ըևեռապինդ սպանաւ մահուամբ անարգագունիւ յամենայն երևելիս»: Յետ այսոցիկ ապողոնեան տողից՝ որ հետևակ թարգմանեցան 'ի լատինականն, 'ի վերայ բերեալ ասէ Պորփիւր. «Այոքիւք ահա մերկացոյց Ապողոն զխարդախանս անողոքելի մտաց նոցա՝ ասելովն թէ Հրեայք առաւել ընդունին զԱծ՝ քան դոքա» (քրիստոնեայք): Ուր զՔս նուաստացուցանել կամեցեալ Պորփիւրի՝ զՀրեայս նախադաս առնէ քան զքրիստոնեայս, խոստովանելովն թէ Հրեայք ընդունին զԱծ. զի այսպէս մեկնաբանեաց զտողսն Ապողոնի յասել անդ, յիրաւախոհ դատողաց սպանաւ Քս, որպէս թէ նոցա արդարապէս դատելովն՝ յիրաւի նա պատուհասեցաւ: Այլ ինքն Պորփիւր տեսցէ՝ զինչ արդեօք զրախօսն այն գուշակ Ապողոնի ասացեալ իցէ յաղագս Քսի, և ինքն իցէ այնմ հաւանեալ, և կամ թերևս զոր գուշակին չէր ասացեալ, սա ինքն յօդէ ասել. իսկ թէ զիարդ ինքն ընդ անձին միաբանիցի, կամ զպատգամսն իսկ յիրեարս ունիցի դաշնաւորել, զայն ապա տեսցուք: Սակայն աստանօր զՀրեայսն իբրև Ածադաւանս՝ ասէ ուղիղ դատիչս լեալ Քսի, զի մահու խայտառակութե արժան համարեցան չարչարել զնա: Ներ լուիցուք ապա Այն Հրէից՝ որում վկայեացն իսկ, որ և ասէ. «Որ դից զոհէ, սատակեսցի, բայց միայն տեառն»: Բայց յես յայտնիւն մատիցուք լսել որչափ մեծ ասէ լինել զՀրէիցն Ած: Պարձեալ հարցանելով նորա զԱպողոն, ո՞ր լաւագոյն իցէ՝ բա՞ն կամ միտք, եթէ օրէնք. արար, ասէ, պատասխանի չափաբերութե. և յարէ զկնի զտողսն, յորոց այսչափ հերիքասցի. «Յաստուած ասէ՝ 'ի ծնող և 'ի թագաւոր յառաջ քան զամենայն, յորմէ դողան երկինք և երկիր և ծով, և սանդարամետք, և աստուածքն գլխովին զարհուրին. որոց օրէնք է հայր, զոր հեբրայեցիք սուրբք առաւելապէս մեծարեն»: Ըստ այսպիսում պատգամի իւրոյինն աստուծոյ Ապողոնի Պորփիւր այնքան մեծացուցանէ

զաստուածն երրայեցւոց, մինչև 'ի նմանէ զարհուրիլ և դից անգամ. և զի այս ած է որ ասացն, «Որ դից զոհէ, սատակեսցի», զարմանամ զի Պորփիւր ինքն ոչ զարհուրեցաւ, և 'ի դիցն զոհել՝ չզանգիտեաց 'ի սատակմանէն։

Նա փիլիսոփոս գովելիս ինձ անգամ բարբառի յաղագս Քրիստոսի, իբր այն թէ փոքր ինչ յառաջ ասացելոցն յիւրմէ թշնամանացն 'ի մոռացօնս եկեալ իցէ, և իւրոյին դիքն յետ իբր յերազի լուտանս խօսելոյ առ Քրիստոս 'ի սթափելն գիտացեալ իցեն զնա բարի լինել, զարժան գովութին մատուցանելով։ Քանզի նորանշան ինձ և անկարծելի խօսել հանդերձեալ, ասէ. «Հրաշափառ անշուշտ թուեսցի զոր ասելոց եմք։ Զի դիք զՔրիստոս յոյժ արարին լինել ամենայնիւ բարեպաշտ, և յանմահութիւն փոխեալ. և զնա գովասանութեամբ յիշատակեցին։ Բայց զքրիստոնեայսն՝ զեղծեալս ասեն, և բծկանս և 'ի մոլորութիւն շաղեալս, և բազում այլ հայհոյանս 'ի նոսա թափեն»։ Զհետ բերէ ապա իբր պատգամս դից նախատանաց զքրիստոնեայս. և յետ այնր ասէ. «Ի հարցանել ումանց՝ եթէ Քրիստոս իցէ աստուած, ետ պատասխանի Հեկատէ (որ և Դիանա հիտ քոյր Ապողոնի). «Գիտես ապաքէն՝ զի հոգի յետ մարմնոյն կայ անմահ, և որ յիմաստութենէ օտարացեալն է, յար 'ի մոլորութեան շրջի. առն գերազանցելոյ 'ի բարեպաշտութեան է այն հոգի, զոր (քրիստոնեայք) պաշտեն առանց ճշմարտութեան»։ Զկնի պատգամական բանիցս յարէ Պորփիւր յիւրմէ՝ ասելով. «Արդ ուրեմն ամենաբարի այր ասէ զՔրիստոս, և յետ վախճանին՝ զհոգի նորա, որպէս և զայլոց բարեպաշտաց անմահութեամբ պերճացեալ, զոր քրիստոնեայք յանգէտս պաշտեն»։ Հարցեալ ապա ասէ. Արդ իմն ուրեմն դատակնքեցաւ, պատգամ ետ աստուածուհին։ «Մարմին նշաւակ կայ միշտ նեղութեան տանջանաց. իսկ բարեպաշտիցն հոգի բազմի յաթոռ երկնաբերձ։ Իսկ այն հոգի ճախողակի ինձ բերեալ առ այլ ոգիս՝ որոց չհաճեցան ճակատագիրք բաժանորդս լինել պարգևաց դից, և զանմահին Արամազդայ ունել զգիտութիւն, եթող ըմբռնել նոցա 'ի մոլորութեան. վասն այսորիկ ատելիք աստուածոցն

եղեն. զի որոց ոչ շնորհեցաւ Ձանազել զնծ, և պարգեւս առ՝ի դիցն ընդունել, այնոցիկ ետ նա ձախողակի շաղիլ՝ի մոլորութիւն. Իսկ նա բարեպաշտ յերկիւղս չուներաց, որպէս այլքն բարեպաշտք. ուստի մի գու զնա հայհոյեսցես, այլ ողորմեսցիս անմտութեանէ մարդկան, որով կարի դիւրաւորիծան է նոցայն վտանգ.,,

Ա.ՀԱ արդ ո՞ այսպէս խօսիս ընդ իմէ, որ չառնուցու՝ի միտ Ձէ պատգամք այսպիսիք կամ՝ի նենգաւժէտ մարդոյ՝ի քրիստոնէից ոմեքիմ Ձհնամոյ իցեն ստայոգեալք, և կամ Համամիտ խորհրդով յանսուրբ դիւացն արարեալ՝ի պատասխանիս. որպէս զի՝ի գովաբանել անդ զՎՆՋ հաւատարիմք այսու լինիցին Ձէ իրաւաբար Ձհնամանեն զքրիստոնեայս. որով եՁէ մարթ ինչ նոցա իցէ՝ խցանել փակել զյաւիտենից փրկութենէն Ձանապարհ, յորում զըտանի այլ քրիստոնեայ. Վասզի սեռանեն Ձէ ոչ խոփան ինչ է բազմորդայն իւրեանցն նենգութենէ առ՝ի ՀԱստել, եՁէ հաւատալիք՝ի գովելն զՎՆՋ լինիցին, միայն զի լեցին նոյնպէս հաւատալիք յանգանեն զքրիստոնեայս. որպէս զի զՀաւանեալն երկաքանչիւր բանից՝ այսպիսի գովիչ ՎՆՋ յարգարիցեն, որ զքրիստոնեայ լճնելն չկամիցի. և այսու օրինակաւ Ձէպէտ և գովեցեն առ՝ի նմանեն ՎՆՋ, այլ ոչ ազատաբար նմին լինիցի յիշխանութենէ դիւաց; Վանաւանդ զի այսպէս՝ի գովելն Ձէն առնուն զՎՆՋ, զի եՁէ հաւատայցէ ոք՝ի նա՝ որպէսի առ՝ի նոցանէն քարոզի, ոչ Ձհմարիտ քրիստոնեայ լեցի, այլ փոխեսեան հերետիկոս, որ մարդ սուտ՝ և ոչ ՁԱծ միանգամայն գաւանեաց զՎՆՋ. ուստի ոչ փրկութենէ գտանէը նովաւ, և ոչ՝ի հաղորդ ստացուածոց դիւաց ունել խոյս տալ կամ արձակիլ. Իսկ մեք ոչ Վչգոյնի հաւանիլք նախատողն զՎՆՋ, և ոչ Ձհեկատեալ գովասանի. զի նա իբր անօրէնն զոմն զՎՆՋ կարծեցուցանէ, չիբաւախոհ գատողաց ասելով զնա սպանեալ. իսկ սա՝ մարդ ասենալաւ, քայց մարդ լըկ՝ Վակայն մի է սորայ և նորայ դիտաւորութենէ, զի մի քրիստոնեայ լճնել կամիցին մարդիկ. քանզի եՁէ քրիստոնեայք չլճնիցին, ոչ ևս յիշխանութենէ դիւացն պրծանել

կաը է նոցա։ Իսկ այդ փիլիսոփայ, կամ մանաւանդ օրք այնպիսեաց պատգամաց ընդդէմ քրիստոնէից հաւատոյ ընծայեն, ազէ նախ զայս արասցեն թէ իցեն ասակ, զի որ վասն Քրիստոսի միաձայնեսցին յիրեարս Քրիստոնեայք զէ՞ կատէ, զոյդ գտանել զնա կամ զոյդ գովել երկոցունցն, Օ՞ր թէ կարողանայիցեն եւս առնել, այլ մեք թէիւնս դարձուցանեաք խաբեպատիր դիւացն եւ նախատեցաք եւ գովեցաք Քրիստոս, յո՛ք քանզի աստուած նոցա եւ աստուածուհի այլախորհուրդք են զՔրիստ, մին ի գովել, եւ մին ի գովել, արդարեւ ի հայհոյել նոցա զքրիստոնէայս՝ մարդիկ որք առողջ խորհուրդս ունիցեն ոչ բնաւ հաւատասցեն։

Քրիստոնէն ի գովել Պօղոսիւբ կամ Հերակլէս զՔրիստ, եւ յասել թէ նա ինքն էտ ձախողակի ի մոլորութեն պատանդիլ քրիստոնէից, մերկանալ եւ զգաստանալ այնր մոլորութենէ ըստ իւրումն կարծելոյ։ Քրիստոս մինչ եւ ի նոքա բանիցն բացայայտեալ զայն, հարցուած նախ առնէմ, եթէ Քրիստոս էտ ձախողակի մոլորութեն գալ քրիստոնէից, կամաւ արդեօք արար զայդ, եթէ յակամայս։ Եթէ կամաւ, իբր արդար. եթէ յակամայս, զիարդ երանելի։ Քայց եկայք լուիցուք զմոլորուէնն պատճառս։ Ասէ, ոգիք ոմանք աստիճանիւք փոքունք ի տէզոզ ուրեք հեռաւոր անկեալք իշխանութենէ այսոց չարաց. ի սոցունց յայսցանէ յամենազարտ դիւաց եւ ի հոգւոց փոքրկանց՝ իմաստունք եբրայեցւոց, յորոց մին Քրիստոս էր ըստ նախասահմանել պատգամաց Քրիստոսի, հրաժարեցուցանելին ըզբարեպարիշտս, արգելեալ տանել նոցա պաշտօն. այլ յարգել առաւել զերկնային աստուածս եւ յաւէտ մեծարել զաստուած հայր. եւ զայս իսկ ասէ՝ հրամայեն աստուածքն. եւ յառաջագոյն ցուցաք՝ զիարդ ազգ առնեն յաստուած պարապել հոգւով, եւ զնա ամենայն ուրեք պաշտել, Քակայն անդէպ եւ ի բնէ ամբարիշտ, որոց ոչ ընդհակեն ձախատագիրք ի պարգեւս աստուածոցն վայելել, եւ զանմահին Քրամազդայ ունել զգիտութիւն, անլուրջ եղեալ աստուածոց եւ ազատեան պանդ, յեւս կացին ի բոլորից աստուածոց, եւ զգեանն արդելեալս եւ

զոգիս փոքունս ոչ միայն չատեցին, այլ պատուեցին․ իսկ զաստուած ձեւանալով պաշտել, որով իւրք միայն երկըր-պագի նա, զայն ոչ առնեն։ Վասնզի ա՟ծ իբր ամենեցունց հայր՝ կարօտի և ոչ ումեք․ այլ մեզ յօգուտ է՝ երկրպա-գել նմա արդարութ՟բ և սրբութ՟բ և այլովք եւս առաքի-նութ՟բք, նմին իսկ աղերս զմեր կեանս մատուցանելով՝ նմանողութ՟բ և նմա այց և խնդիր առնելով․ զի այս մաք-րագործէ, ասէ, և նմանողութ՟ին ա՟ծացուցանէ՝ զախոր-ժակն ըստ նմա ներգործելով„։ Այլ արդ բարւոք ծա-նոյց Պորփիւր զա՟ծ հայր, և թէ որո՛վք կրօնիւք պաշտել արժան է․ և լի են եբրայեցւոց գիրք մարգարէականք այնպիսեօք հրամանօք, յորժամ զարանց սրբոց զվարս կամ ստգտանեն, և կամ գովասանեն։ Բայց առ քրիստո-նեայս այնչափ ինձ ծեքաբանէ կամ զրաբանէ, որչափ հա-ճոյ է դիւաց՝ զորս առ աստուածս համարի․ որպէս եթէ ոչ դիւրաւ ինչ յուշ ածել կարող է ամենայն ոք՝ զզազ-րութիւն և զքարուականսն՝ որ 'ի պաշտամունս աստուածոցն խրագործէին 'ի տեսարանս և 'ի մեհեանս, և 'ի հակա-ռակէն՝ մտ դնել որո՛ց իրաց ընթերցուածք և քարոզու-թիւք և ունկնդրութ՟ի յեկեղեցիս լինին, կամ զի՛նչ նուի-րագործի ա՟յն ճշմարտի․ և այսու իմանալ՝ ու՛ր արդեօք շի-նութ՟ի վարուց կայցէ, և ու՛ր քակտումն։ Այս ո՛ խօսեցաւ 'ի նմա կամ ազդեաց՝ բայց ոգին սատանայական՝ զստու-թ՟ին զայն զտարապարտ և զակնյայտնի, թէ քրիստոնեայք յարգէն առաւել քան եթէ ատիցեն զդեւս՝ որոց պաշտե-լութ՟ի արգելեալ էր յեբրայեցւոց․ այլ նա ինքն ա՟ծ զոր իմաստունք եբրայեցւոցն պաշտէին, խստիւ արգելու զո-հըս մատուցանել նոցունց իսկ երկնային հրեշտակաց սրբոց, և զօրութ՟եց ա՟յ, զորս 'ի մահացու պանդխտութ՟ե մերում իբր գերերջանիկ քաղաքացիս ամենս մեծարեմք և սիրեմք, բացաձայնեալ յօրէնսն զոր աւանդեաց եբ-րայեցի ժողովրդեան իւրում, և ուժգին սպառնալեօք ասելով․ «Որ դից զոհէ, սատակեսցի„։ Այլ զի մի կար-ծել ումեք լիցի թէ զզոհելն արգելու այսոց ևեթ չարաց կամ ստորնային ոգւոցն փքբրկանց, զի և նոքա 'ի սրբա-

զան գիրս աստուածք ձայնեցան ոչ երբայեցւոց, այլ հե-
թանոսաց, յասել յայտնապէս սաղմոսին.ղէ. 5. ըստ եւ-
թանանիցն Թարգմանելոյ. "Ի՛նոցա աստուածք (կամ
կուռք) հեթանոսաց՝ գեաք են ,, ։ Ա՛յդ զի մի ոք կարծէ-
ցէ՝ այսոցիկ միայն դիւաց զղոհէն արգելուլ, բայց ոչ վերս
նականացն ամենեցուն՝ կամ գեթ ոմանց, ի նոցն յասէ.
" Ո՛չայց միայն տեառն ,, . ուր զի փոխան բառիդ՝ միայն,
լատինն ընթեռնու ոճէ, և երկդիմի գոլով ի նշանակել
եւ՝ արեւու ,,ունի որ կերակարծել՝ թէ արեւու իբրև նո-
ղոհել արժան իցէ . և ոչ ներին զայդ խմանալ յոմա-
կան ընթերցուածք, գնելով ՏԽԵ , այսինքն միասում ։

Ա՛յլ արդ երբայեցւոցն ած՝ որում մեծապէս ին վը-
կայեաց մեծիմաստդ փիլիսոփոս , աւանդեաց օրէնս եր-
բայական ժողովրդեան իւրում, գրեալ ի բարբառ եր-
բայեցի՝ ոչ աղօտ, ոչ անծանօթ , այլ ընդ համարձակ ազգս
ծաւալեալ. և յայն օրէնս գրեալ է . " Որ գից զոհէ , սա
տակեսցի , բայց միայն տեառն ,, ։ Ո՛չ զինչ պիտոյ է յա-
զագս այսր իրաց այլ եւս բազմախոյզ լինել յօրէնս նորա
և ի մարգարէսն . մանաւանդ թէ ոչ խուզել, զի ոչ թա-
քուն են կամ սակաւագիւտք, այլ դիւրաւնաբերքառան և
գյաձախեակալս համահաւաքել և դնել ի կարգի ձառիցն
յորոց պայծառ և քան զլոյս բացափայլէ՝ թէ ինքեան
միայոյ , և ոչ այլոյ ընաւ զոհել հրամայէ ած ձշմարիտ
բարեբեալ ։ Ա՛յլ , զմի զայս ջՀամառօտ՝ բայց զմեծ , ըզ-
աստուածային՝ բայց զձշմարիտ՝ զաստուածեալս ի նմին խոկ
չիլ , զոր վերս իմն գերահռչակեն հեթանոսացն գիտնա-
գոյնք , զայս ասեմ լուիցեն , յայտնեսցէ երկիցեն , զայս
կատարեսցեն , զի մի աստուածանելոցն աստուածն ի վե-
րայ հասանիցէ . " Որ գից զոհէ , սատ , սատակեսցի ,
բայց միայն տեառն ,, . իբր ոչ եթէ իրաց իրաց երբեք
կարօտ ինչ իցէ նա , այլ զի մեզ է յօգուտ՝ լինել նորա ըս-
տացուած . զի այսպէս երգեալ է ի սրբազան մատեանս
երբայեցւոց . սղ. ծէ . 2 . " Ո՛տացի տեառն , տէր իմ ես
դու , և բարիք իմ ինձ ի քէն են ,, . կամ ըստ այլ օրինի .
" Ո՛տարիք իմ չեն քեզ ինչ պիտոյ ,, . Ա՛յդ նմին պատուարագ

գերազանց և ընտրական մէք իսկ եմք . այս է՝ քաղաք նո-
րա . զորոյ զխորհուրդն բացայայտաբերեմք մերոյքս ըն-
ծայիւք , որ առ հաւատացեալքս ծանուցեալ իսկ են . որ-
պէս յառաջագոյնս գիրսդ Ձառէացաք : Վասնզի վախճան
առնուլ պատարագացն՝ որ՛ի Հրեից մատուցանէին յօրի-
նակ հանդերձելոյն , և զմի պատարագ նուիրագործել հե-
թանոսաց յարևելից մինչև՛ ի մուտս , զոր օրինակ արդ
լցեալ տեսանեմք , յառաջաձայեցոյն պատգամըն ածելոյնք
՛ի ձեռն եբրայական մարգարէից յորոց զոմանս օրսիմ հե-
րիք գատեցան՝ ՛ի մէջ բերեալ կարգեցաք ՛ի տեղիս տեղիս
այսր մատենիս : Վայն իրի ուր ոչ կայ պահի այս արդարու-
թիւն , զի միակ բարձրեալն ածէ իչխեսցէ քաղաքին հնազան-
դեցելոյ իւրոցն ընտրեալ , և ի՛ր եկեալ միայնում , և ոչ այ-
լում մատուցցի զոհ , որով և յամենայն մարդիկ հաղորդակիցս առնէ քաղաքի , և հնազանդեալս՝ զոհովն իչխեսցէ մարմնոյ , և բանին՝ ախտից օրինադրականն կա-
գաւ ըստ հաւատոց , մինչև զոր օրինակ անցիւր արգար՝
նոյնպէս խաւար և ժողովուրդ արգարոց կերցէ ըստ հա-
ւատոց , որ յաջողեալն է սիրոյն՝ որով մարդ սիրէ զաճ ըստ
որում՝ այ վայելչական , և զընկերն իբրև զանձն , ուր ա-
սեմ չիք այս արդարութիւն , ոչ գոյ ապաքէն և խաւար
մարդկան լծորդեալ համահաւանութիւն իրաւանց , և օգ-
տից մանաւանդ : Այլ եթէ այս ոչ է , չիք ապա և ժո-
ղովուրդ , եթէ ասացեալ սահմանդ ժողովրդեան իցէ ու-
ղիղ : Այլ ուրեմն և ոչ պետութիւն հասարակաց . զի չիք
հասարակաց իրք , ուր ժողովուրդ ոչ գոյ ,

ԳԼՈՒԽ ԻԴ

Որպէս սահմանաւ ոչ հաւասարեցաւ միայն՝ այլ այլոց ևս թագաւորութեանց պաշտաձիցի ուղիղ կոչումն ժողովրդեան և պետութեան :

Այսպէս եթէ ոչ այսպէս սահմանիցեմք զժողովուրդն , այլ
այլով օրինակաւ ասել , ժողովուրդ է խումբ բանական

բազմութեանն լծորդեալ միակամ մտանկցութիւնք իրաց զոր սիրէ, ապաքէն առ ընտրելոյ որսիսի իւրէ ժողովրդէ իւրաքանչիւր, նկատել արժան է զերս ինչ սիրէ։ Վասն զի եւ սիրիցէ, եթէ խոտոր է բազմութեանն ոչ անտանող, այլ բանական արարածոց, եւ այն լծորդեալ միակամ մտանկցութիւնք սիրելոյն իրաց, ոչ անտեղի է ժողովուրդ առնուանակոչել, այնչափ ընտրական, որչափ ի լաւսն իւրէ միակամ, եւ այնչափ խոտան՝ որչափ ի վատէն արագոյնն։ Ասա այս մեծում սահմանի հռովմէականն ժողովուրդ է արդարեւ ժողովուրդ, եւ ընդդէմ հասարակաց իրիւ՝ անշուշտ պետութեան է։ Իսկ եթէ զինչ յառաջինն իւր ժամանակ, եւ զինչ յերկինսն սիրեաց այն ժողովուրդ, եւ որովք գնացիւք անկեալ յարիւնառուշտ գրգռմանսն, եւ ապա ի մարտս ընտանեաց եւ ի քաղաքականս, խղեաց ապականեաց զմիաբանութեանն որ կեանս լինի է ժողովրդեան, աւանիկ վկայեն վէպքն, զորմէ բազումս ինչ ի նախակարգեալ գիրսն առաջի եդաք։ Վասն զի այնք հրաժարեմ ժողովուրդ զնա վերակոչել, և պետութեան հասարակաց, յորշափ կայ միայ բանական խուռն բազմութեանն իրիւք՝ լծորդեալ միակամ մտանկցութիւնք իրացն զոր սիրէ, Եւ զոր յաղագս հռովմէականին ասացիք, զնոյն խնդ ինձ ասել և կարծել յաղագս աթենացւոց և այլոց ևս Յունաց, և վասն հնոյն Իսրաելոյն ասացեալսն այց, յորժամ ի հասարակաց իրսն կալան նոքա իշխանութեանն մանուն կամ ընդարձակ, նոյնպէս և զայլոց ազգաց իւրաքանչիւր։ Ի՞նդրի առ հասարակ քաղաք ամբարշտաց՝ որ զում ոչ իշխէ ած իբր իւրումն հնձ հպատակի, նմա միայնում զնոյն մատուցանելով, որով ի նմա հոգի իշխեցէ մարմնոյ, և բանն ախտից ուղղագործ հաւատարմութեանն, այնպիսին անբաժ է ի Աչմարիտն արդարութենէ։

ԳԼՈՒԽ ԻԵ

Թէ անհնար է քննել Հշմարիտ առաքինութիւնը՝ ուրանօր Հշմարիտ կրօնք չիք։

Որովհետեւ Հոգի որչափ և կարճեացի բարւոք իշխել մարմնոյ, և քանն՝ ախտից, եթէ սա և նա չծառայեն այ՝ որպէս նա ինքն Հրամայէ ծառայել ոչ բնաւ ուղղութիւն իշխեն մարմնոյ և ախտից։ Վասնզի որպիսի կարիցէ իշխեցող մարմնոյ և ախտից վնասել միայ՝ անգիտակ Հշմարտին այ, ոչ Հնազանդեալ ընդ նորա իշխանութիւնէ, այլ մատնեալ ի նշաւակուն չարախտալատ դիւաց ապականչաց։ Այրին վասն առաքինութիւնէ զոյս ունել կարծէ յանձին, և նորօք իշխէ մարմնոյ և ախտից առ ստանալոյ ինչ կամ ի պահել, թէ ոչ ի վէր առ՝ ած ուղղեսցին, ախտք են առաւել քան եթէ առաքինութիւնք։ զի թէ և առաքինութիւնս Համարիցին ոմանք Հշմարիտս և վայելուչս, այլ Հին քանս ևեթ զկայ առեալք, և ոչ այլոց իրիք վասն խրնդրեալք, ուռուցիկ են և ամբարհաւաձք, ուստի ոչ առաքինութիւնէ՝ այլ ընդ ախտից դատաստանաւ են։ Օ՛ի զոր օրինակ ոչ ի մարմնոյ՝ այլ ի վէր քան զմարմին է որ կեանս տայ մարմնոյ, նոյնպէս ոչ ի մարդոյ՝ այլ ի վէր քան զմարդ է որ տայ մարդոյ կեանս երանելիս, և ոչ մարդոյ միայն՝ այլ ամենայն իշխանութէ և զօրութէ որ յերկինս։

ԳԼՈՒԽ Իզ.

Թէ զհաւատոյ Հոգևոյն օտարացելոց չիք՝ վասն և Հոգևորքն ոչ սակս ածպաշտութէ ցօրշակ յաչխարհ ածն պտղիտանալոյ։

Յ[illegible]ՈՐԻԿ աղագաւ զոր օրինակ կեանք մարմնոյ Հոգին է, նոյնպէս երանական կեանք մարդոյ ած է։ զորմէ ասէն

Եբրայեցւոյն ՝ածաղուննալ տառաք . "Իբրանի ժողովրդեան՝ որոյ տէր ՝ած է նոցա ,, . Այդ . ձեւ . 15 . Ա)չեաւակաւն ուրեմն է ժողովուրդն օտարացեալ յայ անտի . այլ ունի և նա զիւրն խաղաղութիւն ոչ անգոնելի , թէպէտ և չունի զայն ՝ի վախճանին , զի ոչ ՝ի բարիոքն ՝ի կիր արկ զայն յառաջ քան զվախճան . Վակայն ունէր նորա զայն յայժմու կենացս ժամանակի՝ է և մերումս խաղաղութիւն նպաստամատոյց . քանզի ցորչափ խառն յիրերաս գտանին երկոքին այս քաղաքք , ՝ի վար արկանեմք և մեք զխաղաղութիւն Իսրաելեան . յորմէ թէպէտ և ազատ գտանի ժողովուրդն այ հաւատովք , բայց տակաւին առաժամանակ մի անտանօր պանդխտանայ . Վոյ վասն և առաքեալ ասդ առնելով եկեղեցւոյ՝ առնել աղօթս վասն թագաւորաց և իշխանաց , յաւելու ասել . "Օ ի խաղաղութիւն և հանդարտութիւ վարեսցուք կեհանս մեր ՝ամ՝ածպաշտութիւ և սրբութիւ ,, . ա . Տիմ . ե . 2 . Վ . Իբեմիաս մեզգ ասէ ՝ի նախապատմել անդ հնոյ ժողովրդեան այ զեկեալ հասեալ գերութիւնն , և հրամայեալ իսկ նոցա յաձակոյս կողմանն զկամաւ տագնացութիւն ՝ի Իսրաելն , իբր պաշտօն իւին արարեալ այ իւրեանց սովին յանձնառութիւ , խրատէ և նա առնել աղօթս վասն բաբելացւոց ասելով . "Օ ի ՝ի նոցա խաղաղութիւնն եղիցի և ձեզ խաղաղութիւն ,, . Իրեմ . ի . 7 . յայտ է , թէ ժամանակակից , որում բաժանակիցք են բաբելորածք և չաբագործք ։

ԳԼՈՒԽ ԻԷ

Ցաղագս խաղաղութեն Ծառայեցն այ՝ զոր ՝ի ժամանակի կենցաղումս անմոռաց և ընդգրկել լեալսառաջ անդրբերէ ։

Լուսկ խաղաղութիւն մեր սեպհական՝ և աստանօր է ընդ այ հաւատովք , և յաւիտեան եղիցի ընդ նմա դէմ յանդիման ։ Այլ աստանօր խաղաղութիւն եթէ հասարա-

կացն այն, և եթէ մեր յատուկ՝ այնպիսի է, զի սփոփումն
է յաւէտ թշուառութէ՝ քան բերկրանք երանութէ։ Այլ
և ինքնին արդարութիս մեր թէպէտ և չնմարիտ սակս
կատարած չնմարիտ բարւոյն յոր կարգեալ բերի, բայց
այնչափ է յառաջիկայ կեանս, զի առաւել՝ի թողութէ
մեղաց հաստատի՝ քան յառաքինութէնն կատարումն։
Այլ կայ են աղօթք բովանդակ քաղաքին՝ այ պանդխտելոյ
յերկրի, ի կարդալ ներ առ՝ած ընդ բերան հաւօրէն անդա-
մոց իւրոց։ "Ողորմեա մեզ զպարտիս մեր, ոյն և մեք թողումք
մերոց պարտապանաց"։ Այս ոչ ազդոյ գտանի և այս խըն-
դրուածք առ այնոսիկ՝ որոց մեռեալ են հաւատք առանց
գործոց, այլ որոց հաւատք սիրով յաջողեալք են։ Ո՛չ
թէպէտ և այս քաղաք ընդ սով հնազանդեալ է, բայց ի
մահկանացու վիճակի ընդ եղծանելի մարմնով՝ որ զոգի
ծանրացուցանէ, ոչ լիով իշխէ ախտից բանսարկուին վասն
այս աղօթք կարևոր են և արդարոց։ Ո՛չ թէ և իշխել
իշխէ, այլ ոչ առանց կռուի գոյ իշխել ախտից։ Ա՛պաքէն
սպրդի աստանօր արկած իմն տկարութէ նա և յայր քաջ
պատերազմող, և իշխեցող իսկ այնպիսի թշնամեաց պար-
տելոց և նուաճելոց, ուստի պատահի մեղանչել թէ ոչ
դիւրապարծ արդեամբք, գէթ անշուշտ վրիպակ բանիւ,
կամ դիւրաշարժ խորհրդով։ Ա՛ման այսորիկ ցոլչատ գոյ
տիրել ախտից, ոչ է համակ խաղաղութէն. զի ախտք որք
դեռ դիմամարտինն, կատածելի մարտիւ յաղթահարին.
և որք յաղթեցեալքն են, չեն ևս ընդ յաղթանակաւ խո-
նարհին անկասկած հանդարտութէք, այլ կան դեռ ընդ-
ձեալք ընդ բազմահոգիակ տիրողութէք։ Ա՛պա ուրեմն՝ի
փորձանս յայսոսիկ զորոց հանդուցա տացաւ յայծեղին
պատգամն, "Երբ զփորձուէն են վասք մարդոյ՝ի վր երկ-
րի,,՝ ոք վստահացի այնպէս քաղաքավարիլ, մինչև ջունել
պէտս առելոյ առաջ, թող մեզ զպարտիս մեր, բայց եթէ
որ բարձրամիտ ոք իցէ. ոչ մեծ ոք, այլ փքուտ և ուռուցեալ
ոգւով արդարապէս հակառակ կայնա՝ որ տայն ընդհակ խո-
նարհայ. ոյն պրեաքն է. "Ո՛չ առքերտաւանիւց հակառակ
կայ. տայ ընդհակ խոնարհայ,,։ Ա՛ն ոյոյ առանձնօր արդա-

*բուն է յայր իւրաքանչիւր, զի մարդոյ հնազանդելոյ իշ-
խեսցէ ած, և հոգի՝ մարմնոյն, և բանն իշխեսցէ ախտից
դիմամարտից կամ նուաճելով, և կամ բուռն մարտնչե-
լով. միանգամայն յաճուստ անտի ժտեսցէ և վաստա-
կոցն ընորհ, և յանցուածոցն ներուին, ընորհս մատուցանե-
լով ապա վանն առելոցն բարեաց։ Սակ'ի վերջնական յայնմ
խաղաղութէ՝ յոր ուղղելին ի այս արդարութէն և առ'ի
նորին ստացուին, քանզի բնուէին անմահութէն բուժեալ
և անապականութէ՝ ի գլխովին անախտակիր, և չէք այլ
իւրաքանչիւրում'ի մէնջ պատերազմ կամ յայլմէ, կամ
յանձնէ, ոչ պիտոյ ի թէ բանն իշխիցէ ախտից, որք չենն
իսկ. այլ ած իշխեսցէ մարդումն, և հոգի՝ մարմնոյն. և այն
չափ ախորժակ և դիւրակատար եղիցի անտանօր հնազան-
դութէնն, որչափ երջանիկ կեալն և թագաւորել։ Եւ
այս յաւէրժ լիցի անդ յամենեսին և յանցնիւրսն, և յա-
ւէրժականն լինել գիտասցի հաւաստեաւ. նմին իրի խա-
ղաղութէն այսր երանութէ, կամ երանութէն այսր խաղա-
ղութէ լինիցի բարի ծայրագոյն։*

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յոր վախձան ունիցի յանգիլ կատարած ամբարշտաց։

*Եւս այնոցիկ ոլոց չիք բաժին'ի քաղաքին այ, եղիցի
ընդ հակառակն թշուառութի մշտնջենաւոր, որ և մահ եր-
կրորդ առացեալ. զի ոչ հոգւոյ կեալ'ի դէպ է առել ան-
տանօր, զոլովն օտարացեալ'ի կենաց անտի այ, և ոչ մար-
մնոյ ըմբռնեցելոյ'ի յաւս մշտակայս. և վասն այսր եր-
կրորդ այդ մահ առաւել դժոխըմբեր լինիցի. զի մա-
հուամբ ոչ ունիցի վախձան։ Այլ քանզի զոր օրինակ
թշուառութէն ներհակ երանութէ է, և մահ՝ կենաց,
նոյնպէս և պատերազմ հակառակ խաղաղութէ թուի
լինել, յիրաւի է ընդրել թէ ուր խաղաղութէն որ'ի կա-*

տարածի բարեացն՝ յայտնեալ է գոլութիւն , զո՞ր ապա , կամ զինչպիսի զպատերազմն իմանայցեմք որ 'ի կատարածի չարացն ։ Այլ որ զայդ հարցանէ , կշռեսցէ աղէ զինչ այն 'ի պատերազմի յաւէտ վշտալին իցէ և մնասակար , և տեսանիցէ ոչ զայլ ինչ՝ բայց զիրացն առ միմեանս անմիաբանութիւն և զմաքառումն ։ Իսկ արդ զո՞ր պատերազմ զմտաւ ածել մարթ իցէ առաւել դժնդակ և դառնաղէտ , քան ուրանօր կամքն այնպէս իմն դիմամարտ են առ կիրս , և կիրք առ կամս , զի և ոչ միոյ 'ի նոցանէ յաղթութիւն՝ թշնամութեանց լինել դադարումն ․ ուր և այնպէս ընդ բնութիւն մարմնոյ մաքառի ցաւոցն բռնութիւն , զի և ոչ մին պարտութիւն խոստովանի ։ Աստ զի թէ յաստանոր կեանս պատահիցէ կռիւ այդպիսի , կամ ցաւքն յաղթեն , և մահ կորզէ զզգայութիւն , կամ բնութիւն յաղթէ , և զցաւսն ապաքինումն փարատէ 'ի բաց ։ Բայց անտանօր և ցաւքն յարանան առ 'ի վշտագնել , և բնութիւն տոկայ առ 'ի զգալոյ , զի երկաքանչիւրումն այնու չիք սպառել , զի մի պատուհասն սպառեսցի ։ Արդ զի յայսոսիկ կատարածս բարեացն և չարաց՝ որոց մին փափաքելի , և միւսն զգուշալի , դատաստանաւ ունին անցանել բարիք և չարք յայն կամ յայս , զայնմ դատաստանէ խօսեսցայց 'ի հետագայ մատենիդ , որչափ 'ի տեառնէ շնորհեսցի ։

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Յաղագս վերջին դատաստանի. որ քարոզի վկայութիւք հին և նոր կտակարանաց։

ԳԼՈՒԽ Ա.

Թէպէտ և յամենայն ժամանակս դատի ա՟ծ, այլ ՚ի գիրս յայս կայ մեզ խօսել առանձինն յաղագս յետին դատաստանի նորա։

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ մեր յաղագս վերջին դատաստանին ա՟յ ճառել որչափ նայն շնորհեսցէ, և հաստատել զնոյն հակառակ ամբարշտաց և անհաւատից, պարտ է իբր հիմն շինուածոյ նախ առաջին զա՟ծայինսն արկանել վկայութիւս. որոց ոչ կամեցեալ ոմանց ընծայել հաւատս, ընդդիմագրութիւնս հնարին մարդկեղէն պատճառանօք ստովք և պատրողականօք, որպէս զի կամ զայլ ինչ նշանակել ասիցեն վկայութեանն առելոյ ՚ի սուրբ գրոց, կամ ուրանայցեն ընաւ առ ՚ի յա՟յ լինել ասացեալ. Քանզի ոչ զոք ՚ի մարդկանէ՝ որ իմանայցէ զնոյնս որպէս ենն ասացեալ, միանգամայն հաւատայցէ ՚ի գերագոյն ՚ի ճշմարտէն ա՟յ խօսեցեալս ՚ի ձեռն արանց որոց, կարծեմ չտալ ունկն այնոցիկ կամ չհաւանել, թէպէտ բերանով ևս խոստովանեսցի, թէպէտ առ եղեանէ իմիք ամաչեսցէ կամ երկիցէ խոստովանել, կամ դժմութբ իմն՝ որ համանման մոլեգնութե իցէ, զյայտնի սուան ծանուցեալ պաշտպանել ջանայցէ բանակռիւ ոգւով հակառակ ծանուցելոյ իւրեան ճշմարտութեն։

Արդ զոր ՚ի հանդիսի դաւանութե ունի ընդհանուր եկեղեցի ճշմարտին ա՟յ, թէ գալոց է Ք՟ս յերկնից դատել զկենդանիս և զմեռեալս, զայն ասեմք վերջին օր

ՅԱԾԱՅԻՆ դատաստանին, այս է՝ յետին ժամանակ։ Վասն զի ՅԱՅ քանի աւուրս ձգիցի այն դատաստան, հաւաստի ոչ ունիմք. բայց օր դնել փոխանակ ժամանակի ըստ սրբազան գրոցն սովորութեան՝ ոչ որ անկիտանայ, ԹԷ և վերին վերոյ զգրուածք եկեալ իցէ։ Վասն յայս սակս յասել մեր՝ օր դատաստանին այ, ի նոյն յաղեալք վերջին կամ յետին, վասն զի և յայժմուս դատի ՅԱԾ, և ի սկզբնաւորն լինելութեէ մարդկան ազգի դատեցաւ, արտաքս ի դրախտէ անտի վտարեալով և ի կենացն փայտէ որոշեալով զնախաստեղծն՝ զծառը մեղայն գործծնեալս. նա և յորժամ ի հրեշտակին յանցուցեալս ոչ խնայեաց, որոց իշխանն ինքնակործան կործանեաց և զմարդիկ առ նախանձու, յայտ է ԹԷ դատեալով դատեցաւ ՅԱԾ։ ՎՉ ոչ առանց նորա խորին և արդար դատողութեէն՝ յորնամբ հեռանեալք և դիւացն և մարդկան, որ յօդս և որ յերկրի, լի են մեղսութեաքը և տուայտանօք։ Վսակայն ԹԷ չէր ևս ուրուք մեղուցեալ բնաւ, ի վերայ այսր ոչ առանց բարեբար և ուղիղ դատաստանի ի յաւիտենից երանութեէ հանդուցանէր զբովանդակ բանաւոր արարածն՝ զանխախտ տէրն յարեալն ի տէր ՅԱԾ իւր։ Վ.յլ և դատի ՅԱԾ ոչ միայն հասարակաբար զազգ դիւացն և զմարդկան՝ լինել նոցա ԹՀՉուառս ըստ արժանի առաքինոց մեղացն, այլ և ըստ անցիւրք յատուկ գործոց՝ զոր անձնիշխան կամաքը առնեն. քանզի և գիւք զի մի տանջեացին՝ աղաչէին. և ոչ առանց իբաւանց իսկ կամ խնայումն լինի առ նոսա, կամ ըստ իւրաքանչիւր ապիրատութէ տանջին։ Վպատճէն և մարդիկ յոլովակի յայտ յանդիման և միւս գաղտնապէս պատիժս լուծանեն զիւրեանցն գործոց առ ի յայ, եԹԷ յաստանաւր կեանս, եԹԷ յետ մահու. ԹԷպէտ և ոչ որ ի մարդկանէ ուղղութիս գործէ առանց յանձնառուս նպաստիցն օգնականութէ. և ոչ ի գիւաց որ կամ ի մարդկանէ անօրէնութիս գործէ՝ բայց յանձայինն ԹՈՂ տալոյ ամենիւրաւ դատաստանին. զի որպէս առաքեալ ասէ. Հ֊. Ե. Ե ֆ֊. "ՎԻԹԷ անիրաւութիւն իցէ յայ ,, . և ևս՝ "Վ.ւանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց զննե-

լոյ են Ամենապարկեշտ նորա ... ։ Այլ արդ ոչ կայ իմ յառաջիկայ մտածութիւն բանախօսել ոչ զնախնականացն և ոչ ըզմիջին գատաստանաց այլ , այլ որչափ նոա ինքն յայտնեցաւ՝ զվերջնոյն զայնմանէ , յորժամ գայցէ յերկնից ։ Այդ գատեալ զկենդանիս և զմեռեալս ։ Այ՝ ասեն զի այս կոչի տիրապէս օր գատաստանի , յորում ոչ եւս այլ անիմաստ քրիստոնեացն կայցէ տեղի , թէ առիմք այն որ չարագործ բարեբաստիկ իցէ , և այն որ արդարագործ՝ վատաբաստիկ . զի յայնժամ բացեւբեւեսցի՝ ամենայն բարեգործացս և ևեթ Աչմարիտ և լիապատարն երջանկութիւն , և ամենայն չարագործաց և ևեթ արժանապատիժ և հասանակ թշուառութիւն ։

ԿԻ ՅԻՒՍ Ն

Ըստ պէսպիսութեան մարդկային անցից՝ ասէ անմարթ է , թէ կայցէ այլ գատաստան , թէպէտ և անդնդելի է ։

Ի՝ոչ յայժմու ժամանակիս ուսանիմք՝ որպէս չարեացն հատուցեալ կամաբ ժուժկալել , զորս և բարեգործքն կրեն , նոյնպէս և զբարիս ոչ մեծ ինչ գրեալ որ և չարագործաց հանդիպին . որով յիրաց չայտ՝ յորս ոչ յայտնեալ ցուցանի ածայինն արդարութիւն , պիտեւան իակ է ածել զկեանս վարդապետութիւն ։ Այ՝ ասեն զի անգիտանամք մեք՝ որով գատաստանաւ այլ այն որ բարեգործ՝ չքաւոր է , և այն չարագործ՝ մեծատուն է . սա յոբաիսութիւն կայցէ՝ զոր ի տիրանս տատապէլոյ արժանի համարիմք բան կրըստական իւրոյն վարուց , և նա թախծեալ գնայցէ՝ ոբուամ կենցաղին գովելիք զինադրեն պարտ վարկանին , Այ՝ անյանց ոչ լոկ անվնաս արձակեսցի ի գատաստանէ , այլ բան իակ պարտաւոր՝ յանիրաւութենէ արդեօք գատաւորին հարատահարեալ , կամ ի տուտ վկայութեանց ընկերեալ . և ընդ հակառակն՝ նորայն ասոն եղեռնաւոր՝ ոչ միայն անպատուհաս , այլ և իրաւունս գտեալ

յոխորտայեալ ։ Մի՛ բարկանար ոք կայ քաջառողջ , և բարեպաշտանն ի ցաւս մարմնի ։ Հրեիսասարդք ժիրք յառաջ գնեն առագաստել առագաստիցեն , իսկ որք և բանիւ անգամ ինասել ուժգին չկարացին , յախտս զանազանս դժբաղակս վշտանայցեն ։ Զգայք ի կենցաղականաբս օգտակարք՝ տարաժամ մահուամբ յախտահիցեն , և որոց ծնանել անգամ ոչ ըմբռնն երևէր՝ յերկրաբաւցեն ի կեանս ։ Մի՛ մեծերեսն յառաջութիւնս ամբարձցի , և մարդ անբամբասելի՝ կայցէ ծածկեալ ընդ անպատուութեանն խաւարաս ։ Օ այսոսիկ և զայլս սոյնպիսիս ո՞ որ համայն յիշատակից , ո՞ի համար բերիցէ ։ Հրե եթէ յայդոսիկ գժպատահ իրսդ պահեալ ինայր ակաստան իմն , այնպէս զի այսու կենաբ յորում ըստ խօսելոյ Հոգերդակ սաղմոսին . Ձխե . 4 . Մարդ նմանելոյ նմանեաց , և աւուրբք նորա որպէս հովանի անցին .. , չարաց միայն էր յօրանալ անցանելի բարեաբս և երկրաւոր , և բարեաց եթէ լինել վըշտակիրս , մարթի էր ապրեսպարել զայդ ի գատաստանին այլ յարդարն , կամ նա և ի խնամակալն . որպէս զի որք անբաժն էին մեղոյ յաւիտենից բարութենէ զերանութենին առնեցին , ժամանակիւբն կամ խաբեսցին առ իւրեանց չարութենէն , և կամ յայլ դեմութենէն մխիթարեսցին բարեաբն . իսկ որոց ազատանալ կայր ի յաւիտենից տանջանաց , ժամանակեան չարեաբս կամ տառապեսցին սակս իւրեանց փորձանց ինչ մերանոց , և կամ ի կատարեալ առաքինութենս մարդեսցին ։ Հայց այժմ քանզի ոչ միայն բարեգործք ի չարին գտանին և չարագործք ի բարին , որ ոչն արդար Թուի , այլ և բազում այն է զի չարագործաց պատահէն չարիք , և բարեգործացն բարիք հասանեն , յայսմ առաւել առանց քննելոյ են գատաստանք այլ , և առանց գննելոյ Հանապարհք նորա ։ Վորին վասն Թէ պէտև ոչ եմք գիտակք՝ որով գատաստանաւ առնիցէ Ած զայսոսիկ , կամ Թողացուցանէ , որոյ ամենակատար զօրութիւն է , ամենակատար իմաստութիւն , ամենակատար արդարութիւն , իսկ տկարութիւն և ոչ մի , ոչ ինչ Թերևութիւն , ոչ ինչ անիրաւութիւն , սակայն ի միտ առնումք ի մեր

օգուտ՝ մի արդյ ինչ գրել զաբիան և զայթիս, զորս մատնաւորեալս տեսանեմք և բարեդործաց և չարագործաց. այլ բարուեխեանցն այնոցիկ լինել ինդրոյդ՝ որ բարեգործացն են յատուկ, և՝ի չարեացն փախչել՝ որ յատուկ չարագործացն են. իսկ յորժամ յայն դատաստան՝ այ ժամ մանիցեմք, որդ ժամանակ ասացեալ է տիրապետս որ դատաստանի, և մերթ օր տեառն կարդացեալ, ոչ միայն որ ինչ միանգամ յայնժամն դատիցին, այլ որ այլ ևս՝ի սկզբանէ դատեցեալքն և որ գինի գեռ մինչ յայն ժամանակ դատելոցքն կայցեն, ամենայնին երևելոցի բնաւ արդար. ուրանօր ծանիցէ և այն դարձեալ, գիարդ ըստ այ արդար դատողութեանն անտեսեալ է, գի բազում՝ և ամենայնն իսկ արդար դատաստանդ այ ծածկեալ կան առ մարդկան միտս և՝ի գիտութէն. բայց միայն գի առ հաւատս բարեպաշտացն չէ ծածկեալ, թէ որ ծածուկն է՝ արդար է,

ԳԼՈՒԽ Գ

Չ ինչ յաղագս իրացն որ՝ի կենցաղումս հասարակաց են և բարեաց և չարաց, ուստ յանկ Սողոմոն՝ ի գիրս ժողովոյն.

Լ ՅԱՆՒԻՒ ամենիմաստուն արքայ Իսրայելի Սողոմոն՝ որ Թագաւորեացն Դաւրուսաղէմ՝ի գիրսն կոչեցեալ ժողովող, և առ Հրեայս և՝ի սրբազան մատենիցն կանոնի ընկալեալ, սկիզբն առնէ այսպէս. «Անցանողութիւն անցանողութեանց, ամենայն ինչ ընդունայն է. Օ ինչ առելի է մարդոյ յամենայն վաստակս իւր զոր տաժանի ընդ արեգականն»։ Ի՞նչ այսմ վճռոյ յառաջ վարեալ և զայլ բանսն, յուշ առնելով զտառապանս և զվրիպումունս աստանօր կենացս, և զդիւրավատնելի չջգնաս ժամանակաց, յորում ոչ մի ինչ կայուն է, ոչ մի ինչ հաստատական, յընդունայնութէն անդ իրացն ընդ արեգականէ՝ յաղագս առնու և զայն, գի Թէպետ և առաւելուն

է իմաստութիւն քան զանմտութիւն՝ որպէս առաւելութիւն է լուսոյ քան զխաւարի, և զի իմաստնոյն աչք 'ի գլխոջ իւրում, և որ անմիտն է ընդ խաւար գնայ, այլ 'ի վերայ այսր ամենայնի՝ պատահար մի պատահելոց է ամենեցուն՝ 'ի կենցաղումս որ ընդ արեգակամբ վարի, նշանակեալ զչարիսն՝ որոց հասարակորդս տեսանեմք զբարեգործս և զչարագործս: Դարձեալ և զայն ասէ, թէ բարեգործաց պատահէ կրել չարիս՝ որպէս թէ չարք ոմանք էին, և չարագործաց 'ի բարիս վայելել, իբր այն թէ բարեգործք իցեն, զայս օրինակ խօսելով. "Գոյ ընդունայնութիւն որ եղեալ է 'ի վերայ երկրի. զի են արդարք որոց ժամանեն առ նոսա գործք ամբարշտաց, և են ամբարիշտք՝ զի հասանեն նոցա իբրև զգործս արդարոց: Ասացի ես թէ սակայն և այն ընդունայնութիւն է": Արդ յայսմ ունայնութեան՝ զոր յարտայայտել առնու այրն գերիմաստ յողջոյն մատենի անդ՝ որչափ բաւական դատեցաւ, ոչ յայլ ինչ պատճառս՝ բայց զի ցանկանայցեմք այնմ կենաց յորում չիք ունայնութիւն որ ընդ արեգակամբս, այլ ճշմարտութիւն ընդ հաստողի արեգականս: Արդ յայնպիսում ունայնութեան զիա՞րդ առանց արդար և ուղիղ Աստուծոյ դատաստանին ընդունայնանայր մարդ՝ նանրոյ նմանեալ: Սակայն յաւուրս ընդունայնութեան իւրոյ այն է մեծապէս խնդրելի, միթէ հակառակեսցի՞ ճշմարտութեան, կամ եթէ անսայցէ՞. և եթէ իցէ՞ արդեօք ճշմարիտ բարեպաշտութեան անբաժ կամ բաժանորդ, ոչ սակս զայժմու կենաց զբարիսն ստանալոյ, կամ 'ի չարեացն խուսելոյ, որք ունայնութեանն անցանեն, այլ վասն հանդերձելոյ դատաստանին, որով բարեգործացն բարիք և չարագործացն չարիք հասանիցեն՝ որ կան մնան անվախճան: Ի կատարածին այսպէս կնքէ իմաստունն զմատեանն ասելով. "ՅԱստուծոյ երկիր, և զպատուիրանս նորա պահեա. զի այս է մարդն ամենեւին: Զի զամենայն արարածս ածցէ Աստուած 'ի դատաստան, յամենայնի անտես արարելոցն, եթէ բարի, և եթէ չար": Զի՞նչ քան զայս կարճառօտ, և ճշմարտաճառ և շահաւէտ մարթ էր ասել. յԱստուծոյ, ասէ, երկիր, և զպատուիրանս

նորա պահեա. զի այս է մարդն ամենևին, կամ ամենայն մարդ. Վասզի որ միանգամ էն, այս է, այլ պատուիրանապահ. և որ չէ այսպիսի, չգոյ է. Վասն զի ոչ նորոգեսցէ նա՝ի պատկեր Աշխարհաշինին՝ յիմանալ՝ի նմանութեն տեսակի. քանզի՝ ամենայն արարած՝ որ՝ի մարդոյ լինին յասալ կեանս՝ եթէ բարի, եթէ չար, ածգէ՝ի դատաստան, նա և զանտես արարածսն, այս է զամենայն հնչին երևեալսն, որ և չտեսանին իսկ. այլ ամէն և զայն տեսանէ, և ոչ անտեսէ, և ոչ՝ի դատողութենն ժամանակի զանց առնէ զայնուիկ։

ԳԼՈՒԽ Գ

Ի խօսել Օգոստինոսի յաղագս յետին դատաստանին այլ՝ նախ զվկայութիւնս նորոց կտակարանացն՝ի մէջ բերէ, և ապա զհնոց կտակարանացն։

ՅԱՆՁն առեալ իմ զվկայութիւնս սուրբ գրոցն չարաչարգիւ որ յաղագս վերջնոյն դատաստանին այլ, լուա վարկանիմ քաղել՝ յառաջ՝ի նորոց կտակարանացն, և ապա՝ի հնոյն։ Ո՛չ թէպէտ հինգն նախկին են ժամանակաւ, այլ ըստ պատուոյ յառաջադասելի են նորքն. զի քարոզք նորոցս են հինգքն։ Վասն որոյ յառաջնում վայրի նորքն՝ի մէջ բերին, և յառաւել նոցին հաստատութեն յառաջ առցին և հինգքն։ Ի հինգն կան օրէնք և մարգարէք, ՝ի նոսա՝ աւետարան և Թուղթք առաքելականք։ Քարոզասէ առաքեալ. «Վանզի օրէնքն է գիտութեն մեղաց, Վայց արդ առանց օրինացն իսկ արդարութենն այ յայտնեալ է, վկայեալ յօրինաց անտի և՝ի մարգարէից, Վանզի արդարութենն այ՝ի հաւատոց անտի Քրիստոսի Վսի Յամենայն հաւատացեալս». Հռ. Գ. 20. Վ՛այս արդարութենէ այ նորոյ կտակիս է անկ, և վկայեալ՝ի հնոց գրոցն ոտիկ, յօրինաց աստէ և՝ի մարգարէից. Վայս ուրեմն զքոյն ոտիկ յօրինաց աստէ և՝ի մարգարէից, և յետ այսր վկայք

'ի մէջ մատիցեն։ Օ՜ սոյն կարգ պահել յայտ արարեալ և նա ինքն տէր ՅԻՇ ՎԱ, ասէ. "Ալէնայն գալիք աշա- կերտեալ արքայութեան երկնից՝ նման է առն տանու- տեառն, որ հանէ 'ի գանձէ իւրմէ զնոր և զհին ,,։ Ա՜ՒՏ. ՃՁ. 52։ Ալ ասաց, զհին և զնոր, զոր ասացեալ էր ար- դեօք՝ եթէ չկամէր առաւել կարգի արժանեացն՝ քան ժամանակաց ուշ ունել։

ԳԼՈՒԽ Ե

Որպէսզի բանիւք Քրիստի փրկչին արտայայտի նոյնային դատաստանն՝ որ լինիցէ 'ի կատարածէ աշխարհի։

ՅՅԼ արդ նա ինքն փրկիչն 'ի նախատել անդ իւրում գիշաւքեան՝ յորս գործեցան մեծամեծ զօրութիւնք իւր և ոչ հաւատացին, յետին քան զօտարազգիսն դասեալ զնո- սա, ասէ. "Ոյայց ասեմ ձեզ, դիւրագոյն լինի երկրին Տիւրոսի և Սիդոնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ ,,։ Ո՜չ զկնի առ այլ քաղաք. "Ոյայց ասեմ ձեզ, եթէ եր- կրին սոդովմայեցւոց դիւրագոյն լինի յաւուրն դատաստա- նի՝ քան ձեզ ,,։ Ոյատանօր ահա բացեբևապէս նախաձայ- նել Թէ գալոց է օր դատաստանի։ Ո՜չ յայլում վայրի. "Ոյքը նինուէացիք յարիցեն 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, և դատապարտեսցեն զսա. զի զղջացան 'ի քարոզուԹիւն Յովնանու. և արդ աւասիկ մեծ քան զՅով- նան է աստ։ Սնչխոյն Հարաւոյ յարիցէ 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, և դատապարտեսցէ զսա, զի եկն 'ի ծագաց երկրի լսել զիմաստուԹիւն Սողոմոնի, և ահա մեծ քան զՍողոմոն է աստ ,,։ Ոյրկուս ինչ ուսանիմք առ տե- ղեաւս. մի՝ զի դատաստան գալոց է, և միւս և՝ զի յարուԹիւն մեռելոց գալոց է. զի զայդոսիկ յորժամ գնիւռէացւոցն ասէր և զշնչխոյնն Հարաւոյ, յայտ է զի մեռելոց խօսէր։ Իսկ զի դատապարտեսցեն ասաց, իբր ոչ եթէ զի նոքա

դատելոց են, այլ զի առ նոցա համեմատութիւն իրաւաբար դատապարտեացին խարայելացիք։

Վարձեալ յայլում վայրի, ուր յաղագս խառն առ միմեանս դանելոյ այժմ բարեաց և չարաց խօսէր, և որ կոտոր այնր որոշման նոցա ի դատաստանի աւուր, ի կիր առեալ զգործեսոյ սերմանեցելոյ զարացոյց և զորմանցն ի վերայ ցանելոց, և միհնաբանելոյ զայն իւրոց աշակերտացն ասէ. «Որ սերմանէ սերմն բարի, է որդի մարդոյ. և ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայութեանն են, իսկ որոմիքն որդիք չարին են. և թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է, և հունձքն՝ կատարած աշխարհիս է, և հնձողքն՝ հրեշտակք են։ Որպէս ժողովի որոմիքն և ի հուր այրի, այսպէս եղիցի ի կատարածի աշխարհիս։ Յղաքէսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս, և զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն, և արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճտել ատամանց։ Յայնժամ արդարքն ծագիցեն իբրև զարեգակն յարքայութեան հարկինի։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ»։

Վարձեալ առ իւր աշակերտան ասէ. «Նմանեալ է արքայութիւն երկնից մարդոյ գանձի ածելոյ ի հողի, զոր որ գտանիցէ մարդ՝ ծածկեսցէ, և յերջանկութենէ իւրմէ երթիցէ, և ծախիցէ զամենայն զոր ունիցի, և գնիցէ զագարակն յայնմանէ։

Վաճառականի ոմանի խնդրելոյ զգեղեցիկ մարգարիտս։ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթիցէ, և ծախիցէ զամենայն զոր ունիցի, և գնիցէ զայն։

Նմանեալ է արքայութիւն երկնից ուխտի ձկնորսական, որ ընկեցեալ ի ծովն՝ ժողովեաց յամենայն ազգաց։ Որ լցաւ՝ հանին զնա ի ցամաքի, և նստեալ ընտրեցին զբարիսն ի սպասս, և զանպիտանսն արկին արտաքս։ Այսպէս եղիցի ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք, և հատցեն զչարսն ի միջոյ արդարոց, և արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճտել ատամանց։

Ասէ ցնոսա Յիսուս. «Ունիցի՞ք զամենայն զայս»։ Ասեն ցնա. «Այո, Տէր»։ Ասէ ցնոսա. «Վասն այսորիկ ամենայն գրագէտ որ ուսեալ է զարքայութենէ երկնից՝ նմանեալ է մարդոյ տանուտեարի, որ հանիցէ ի գանձուց իւրոց նորս և հինս»։

Եկն Յիսուս ի գաւառն Գադարացւոց, և երկու դիւահարք ելին ընդ առաջ նմա, որ էին յոյժ չարագոյնք քան զամենայն որ անցանէին ընդ ճանապարհն յայնմ ժամանակի։ Եւ ահա աղաղակեցին ասելով. «Զի՞ մեզ և քեզ, Որդի Աստուծոյ, եկիր ի ժամանակի մեզ տանջել»։ Էր ոչ հեռի ի նոցանէ հօտ խոզից բազմաց արածեալ։ Դիւքն աղաչեցին զնա ասելով. «Եթէ հանես զմեզ, արձակեա ի հօտ խոզից»։ Եւ ասէ ցնոսա. «Երթայք»։ Եւ նոքա ելեալ ի մարդոյն՝ մտին ի խոզսն։ Եւ ահա ամենայն հօտ խոզից ընթացեալ ի վիմաց ի ծովն՝ խեղդեցան ի ջուրս։ Եւ հովիւքն փախեան, և գնացեալ ի քաղաքն՝ պատմեցին զամենայն և զդիւահարացն։ Եւ ահա ամենայն քաղաքն ելին ընդ առաջ Յիսուսի, և տեսեալ զնա՝ աղաչեցին զի անցցէ ի սահմանաց նոցա։

կամ բովանդակութիւն նշանակի . զի և այն երկու մասն , այս է՝ երեք և չորք , միմեամբք բազմապատկեալք՝ զերկոտասան բացակատարեն . զի չորիցս երեք , և երիցս չորք՝ լինին երկոտասան . և թերևս արդեօք այլ ևս իմաստս իցէ գտանել զայսը երկոտասան թուոյ , ըստ պատշաճի առաջիկայ իրացս ։ Այլա թէ ոչ՝ ահա փոխանակ ընդ Հուդայի մանչի զԱ՛տաթիան ընտրեանսն կարգեալ յառաքելութիւն , Պօղոսի տալա առաքելոյ՝ քան զամենեսին առաւել վաստակաւորի՝ չկայցէ տեղի առ ի գտանել նատելոյ . ուր նա ինքն թուակից գտաւորացն սրբոց զանձն ցուցեալ՝ ասէ . “ Ո՛չ գիտեք եթէ զկրեշտակս դատիմք ,, ։ Այլ և ի վերայ գտանելոցն նմանաբար իմանալի է բան երկոտասան թուոյն . քանզի ոչ եթէ սակս ասելոյն՝ գտանել զերկոտասան ազգ Իսրայէլի , չէոչ գտանելն ցեղն Ղևեայ՝ որ երեքտասանեւերորդ է . կամ թէ զիսրայէլեանն և եթէ ժողովուրդ՝ և ոչ զայլ ազգս ունելիցին գտանել ։ Սակ որ ասի , ի միասնագամ գալստեան , յաւնականն և լսելին ասէ՝ ի միասնագամ լինելոյնէ կամ ի վերահաս ծննդեան , յայտնապէս զմեռելոցն յարութիւնէ կամ մեցեալ ակնարկել բանիւս . քանզի այնպէս վերածնանիցի մարմինս մեր անապականութիւնէ , որպէս Տոգիս մեր վերածնեալ է Հաւատովք ։

Ո՛ զազում ինչ իրս զեղել Հաւանիմ , զորս յաղագս վերջնոյ գտաստանին ի դէպ եր ասել , բայց ի խնամով քննելն երկդիմի տան իմաստս , կամ յայլ ինչ առաւել ուղնին Հայեցուածն . այս է՝ կամ յայս գալուստ փրկչին որով ի բովանդակ յայժմու ժամանակիս գայ նա յեկեղեցի իւր , այսինքն՝ յանդամս իւր հետզհետէ և առ սակաւ սակաւ , որ բովանդակ մարմինն նորա է , կամ Հայինն ի կործանումն երկրայինն Հրեաստանեայն . քանզի զոյց զնմանէ արարեալ , այնպէս ինն յոլով ուրեք խօսի , իբրու այն թէ զկատարած աշխարհն Ձառիցէ , և վասն մեծի և յետին աւուր դատաստանին . մինչ զի չէ մարթ ճշգրտիւ զատանել առանց ընդ իրեարս կշռադատելոյ զամենայն զնմանաբար խօսեցեալ աւետարանչացն երեցուց՝ Ի՝ատեէոսի,

Մարկոսի և Ղուկասու. զի զառ 'ի միոյն ինչ ինչ աղօտ ասացեալսն՝ միւսն յայտնաբանէ. որով ծանիցի՝ յումմէ ասիցեն պատշաճեալքն 'ի մի ինչ. զոր և ես առնել հոգացայ չափով 'ի նամակի ուրեք գրեալ առ բարեյիշատակ այրն Իսիքիոս եպիսկոպոս քաղաքին Սաղոնայ, ընդ վերնագրով “Յաղագս կատարածի աշխարհի„։

Վասն այսորիկ առ տեղեաւս զայն ասացից՝ զոր յըստ Մատթէոսի աւետարանին ընթեռնումք յաղագս որոշման արդարոց և մեղաւորաց 'ի վերջնումն դատաստանի յատենին Տեառն. “Յորժամ եկեսցէ, ասէ, որդի մարդոյ փառօք իւրովք, և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց, և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց՝ որպէս հովիւ զի մեկնէ զօդիս յայծեաց. և կացուսցէ զօդիսն ընդ աջմէ իւրմէ, և զայծիսն 'ի ձախմէ։ Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ որ ընդ աջմէն իցեն. եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն իսկզբանէ աշխարհի։ Զի քաղցեայ և ետուք ինձ ուտել. ծարաւեցի և արբուցէք ինձ. օտար էի և ժողովեցէք զիս. մերկ և զգեցուցէք զիս. հիւանդ էի և տեսէք զիս. 'ի բանտի էի և եկիք առ իս։ Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն և ասասցեն. Տէր, երբ տեսաք զքեզ քաղցեալ և կերակրեցաք, կամ ծարաւի և արբուցաք. երբ տեսաք զքեզ օտար և ժողովեցաք, կամ մերկ և զգեցուցաք. երբ տեսաք զքեզ հիւանդ կամ 'ի բանտի, և եկաք առ քեզ։ Պատասխանի տացէ թագաւորն և ասասցէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց, ինձ արարէք։ Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ որ ընդ ահեկէն իցեն. երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա„։ Զհետ այսորիկ նոյնպէս 'ի համար արկանէ և առ ահեկինսն, զի ոչ արարին զոր ինչ աջեայցն արարեալ յիշատակեաց. և 'ի նոցա հարցանելն՝ թէ երբ զնա տեսեալ իցեն յայնպիսում կարօտութեան, զնոյն առնէ պա-

տասխանի՝ զի զոր իւրոց փոքրկանցն չարարին , ինքեան համարի չարարեալ. և հնար զբանն. “Այլ երթիցէն նոքա ի տանջանսն յաւիտենական , և արդարքն ի կեանսն յաւիտենական ,, : Իսկ Յովհաննէս աւետարանիչ պատմէ յայտնաբարբառ՝ նախագուշակել Յիսի Քի ի յարուցանել մեռեալոց վկնիցի գատաստան . քանզի յետ ասելոյն , “Այս ոչ եթէ հայր դատի զոք , այլ զամենայն դատաստանն ետ որդւոյ իւրոյ . զի ամենեքեան պատուեսցեն զորդի , որպէս պատուեն զՀայրն . որ ոչ պատուէ զորդին , ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա ,, , անդէն ի վերայ ածէ . “Ամէն ամէն ասեմ ձեզ . զի որ զբանն իմ լսէ , և հաւատայ այնմ որ առաքեացն զիս , ընդունի զկեանսն յաւիտենական . և ի դատաստան ոչ մտանէ , այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս ,, : Այս ասէ ոչ ի դատաստան մտանել հաւատացելոց իւրոց . և զիարդ ապա դատաստանաւն զատանին նոքա ի մեղաւորաց , և ընդ աջմէն դասին . այլ զի դատաստան յայտ բանի փոխանակ դատապարտութիւն եդաւ . զի ոչ յայնպիսի դատաստան մտանիցեն որք միանգամ լեալ զբան նորա , և հաւատան յայն որ առաքեացն զնա :

ԳԼՈՒԽ Ը.

Որ խօսէ յարութենէ առաջին , և որ երկրորդն :

Ի վերայ բերեալ ասպա տէրն՝ ասէ . “Ամէն ամէն ասեմ ձեզ , զի գայ ժամանակ , և արդէն իսկ է՝ յորժամ մեռեալք լսիցեն ձայնի որդւոյն նորա , և որք լսիցեն՝ կեցցեն . Ո՛վ որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում , նոյնպէս եւ որդւոյ ունել կեանս յանձին իւրում ,, : Այ ի՞տուի դէռ յաղագս երկրորդ յարութենէ մարմնոց , որ ի կատարածին լինելոց է . այլ զառաջինն՝ որ այժմ է . քանզի զայս անջլատեալ վասն ասէ՝ գայ ժամանակ , և

արդէն իսկ է . ուստի ոչ մաքսիմոյ է այս յարուցեալն է՝ այլ հոգւոյ· զի կայ և հոգւոյ մահ իւր յամբարշտութենէ և՝ ի մեղսն , և մահուամբն այնուիկ մեռեալք կին զոր նոյն տէր ասէ . “Թոյլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց ,, . այս է՝ զի ոգւով մեռեալքն թաղեսցեն զմարմնով մեռեալսն : Կայ սակս այսպիսեաց մեռելոց ոգւով յամբարշտութենէ և յանօրէնութենէ՝ ասէ . “Վայ ժամանակ , և արդէն իսկ է՝ յորժամ մեռեալք լսիցեն ձայնի որդւոյն այ , և որք լսիցեն՝ կեցցեն ,, : Լսիցեն , ասէ , որ հնազանդիցեն , որք հաւատայցեն , և մինչև ի սպառ բառնացեն : Կայ սակս որ խոցոց արդարոց և մեղսոցդ . վասն զի ամենեցուն բարի է լսել ձայնի նորա և կեալ առ՝ի կենաս յաճախագոյնս փոխադրեալք յամբարշտութենէն մահուանէ . զորմէ Պօղոս առաքեալ ասէ . “Կայ պա ուրեմն ամենեքին մեռեալ էին , և՝ ի վերայ ամենեցուն մեռաւ . զի որ կենդանիքն իցեն , մի՛ անձանց իցեն կենդանիք , այլ անդր որ՝ի վերայ նոցայն մեռաւ և յարեաւ ,, . Ը . Կոր . Ե . 14 : Կայ ամենեքին առ հասարակ , ոչ միով ուրուք ազատ ելով , մեռեալ են՝ ի մեղս եթէ ակզնականս , և եթէ՝ ի կամաց ևս յանձնալոցածոյս՝ անգիտութիւն , կամ գիտութիւն , կամ ոչ գործելով զարժանին . և վասն ամենեցուն մեռելոցն մեռաւ միակ կենդանին՝ անպարտականն յամենեցուն մեղաց . զի որ միանգամ կենդանեալքն լինիցին մեղացն քաւութենէ , ոչ ևս անձանց իցեն կենդանիք , այլ անդր որ փոխանակ ամենից մեռելոց մեռաւ վասն մեղաց մերոց , և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոց . որպէս զի հաւատացեալք յայն որ արդարացուցանէն զամբարիշտն , արդարացեալք յամբարշտութենէ անտի՝ որպէս՝ ի մեռելոց՝ ի կենդանիս , բաժանորդք առաջին յարութենէն լինիցիմք որ այժմ է . քանզի նոքին եւեթ յայս առաջին յարութենէ վերադրեին , որք յաւիտեան երանելի լինելոց են . իսկ յերկրորդն՝ զորմէ ահա ասելոց է , բաժանակիցս լինել ցուցանեն և զերանելիսն և զվշտաւորս : Կայժմս՝ ողջմտութեան է , իսկ անտէն՝ դատողութեան . որոյ վասն գրեալ է՝ ի սաղմոսի . ճ . 1 .

“Ողորմութիւն և յիրաւունս օրհնեցից զքեզ տէր”։

Կարգաւորապէս ապա յաղագս այսր դատաստանի յարէ ասելով. “Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել. և զի որդի մարդոյ է”. ցուցեալ աստանօր թէ նովին մարմնով գայցէ 'ի դատել, որով եկն եղև դատելի. զի յայդ իսկ որդի մարդոյ ասէ։ Զհետ բերեալ ապա զորմէ խօսիմքն, ասէ. “Ընդ այն զի՞ զարմանայք, զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ 'ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա և եկեսցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ՝'ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ՝'ի յարութիւն դատաստանաց”։ Սոյն այն դատաստան է՝ զոր փոքր մի յառաջ, որպէս և արդ, 'ի կիր առ փոխանակ դատապարտութեան ասելով. “Որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս, և 'ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս”. այս է վիճակեալ 'ի յարութիւն առաջին՝ որով այժմ փոխի 'ի մահուանէ 'ի կեանս, 'ի դատապարտութիւն ոչ մտանիցէ, զոր դատաստանի անուամբ նշանակեաց. զոր օրինակ և յայսմ վայրի ասելովն, “Որոց զչար արարեալ իցէ, 'ի յարութիւն դատաստանաց”. այս է՝ դատապարտութեան։ Հապա յարիցէ յարութիւն առաջին, որ ոք յերկրորդումն ոչ կամի դատապարտիլ։ Քանզի “Գայ ժամանակ, և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի որդւոյն այ, և որք լսիցենն՝ կեցցեն”. այս է ոչ երթիցեն 'ի դատապարտութիւն, որ մահն երկրորդ ասի. և 'ի նոյն մահ՝ յետ երկրորդի յարութեան որ մարմնոյն է լինելոց, խարդաւանեսցին այնոքիկ որք չյառնեն զյարութիւն զառաջինն՝ որ հոգւոյն է։ Զի եկեսցէ, ասէ, ժամանակ. և աստ ոչ յաւել, և արդէն իսկ է. զի լինիցի 'ի կատարածի աշխարհի, այս է՝'ի վերջնումն 'ի մեծի դատաստանին այ. յորժամ ամենեքին որ 'ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, և եկեսցեն արտաքս։ Ոչ ասաց որպէս յանցելումն, և որ լսիցենն՝ կեցցեն. քանզի ոչ ամենեքին կեցցեն այնու կենօք, որ երանականն գոլով, կեանս կոչել միայն արժանի է։ Ապա թէ ո՞չ և այլոցն չէր մարթ

առանց կենդանութեանէ իրեք լսել, և մարմնով յարուցեալով արտաքս ի գերեզմանացն գալ։ Ոչ թէ ոչ ըրպէս ոչ ամենեքին կեցցեն, յաջորդաւ ուսուցանէ. «Ոչ ոք բարեաց արարեալ իցէ, ասէ, ի յարութեն կենաց», սոքա են որ կեցցեն. «և որոց գործ արարեալ իցէ, ի յարութեն դատաստանաց», սոքա են որ ոչ կեցցեն, զի մեռցին մնացեալքն երկրորդ։ Այսպէսէն չարիս արարին, զի չարչարալ կեցցեն. և չարչարալ կեցցեն, վասն զի որ այժմու առաքինի յարութեն հոգւոց ոչ յարեան, կամ թէ և յարեան՝ ոչ իսպառ ժուժկալեցցեն։ Այսպա զոր օրինակ երկու վերածնութեն է, ըստ որում յառաքելոցդիտ Յառնելի, մի ըստ հաւատոց որ զարդիս լինի միտութեն, և միւս ըստ մարմնոյ՝ որ անապականութեն նորա և անմահութեն լինի ի մեծի դատաստանին յետնում, նոյնօրինակ և կրկին յարութեն է. մի առաջինն որ այժմուս է հոգւով, որ և չեղծող անկանել՝ ի մէնջ

ձեռին իւրում. և ըմբռնեաց զվիշապն զառաջին, որ է բանսարկուն և սատանայ. և կապեաց զնա հազար ամ. և արկ զնա յանդունդս դժոխոց. և փակեաց և կնքեաց զնա, զի մի այլ ևս մոլորեցուսցէ զազգս, մինչև կատարեսցի հազար ամն. և յետ այնորիկ պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ։ Եւ տեսի աթոռս, և նստան 'ի վերայ նոցա, և դատաւորութիւն տուաւ նոցա ընտրել զհոգիս չարչարելոցն վասն վկայութեանն և վասն բանին այ. և զորս ոչ երկիր պագին գազանին, և ոչ առին զդրոշմ նորա 'ի ճակատս իւրեանց, և ոչ 'ի վերայ աջոց ձեռին իւրեանց. և կեցին և թագաւորեցին ընդ Քսի հազար ամ։ Եւ յետ այսորիկ 'ի մեռելոց ոչ ոք եկաց մինչև 'ի կատարել հազար ամին. այս է յարութիւն առաջին. երանի սրբոցն, որք ունին բաժին 'ի յարութեանն առաջնում. 'ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն, այլ եղիցին քահանայք այ, և տեառն Յսի Քսի, և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ,,։ Որք միանգամ 'ի բանից աստի առաջին յարութիւն ապագայ զմարմնականն իմացան, յայտ ձգեցան առաւելապէս 'ի թուոյ հազար ամացն, որպէս թէ պարտ էր այսու օրինակաւ շաբաթանալ սրբոցն զայնքան ժամանակ, այս է զհոգևոր շաբաթումն դատարկանալ յետ վաստակոց վեցհազարեան ամաց, յորմէ հետէ ստեղծաւ մարդ, և արժանի մեծեղեռն յանցմանն յերջանկութենէն դրախտէ տարագրեցաւ 'ի տառապանս մահկանացու կենացս. և զի գրեալ է. "Մի օր տեառն իբրև զհազար ամ է, և հազար ամ իբրև զմի օր,,, 'ի լնուլ վեց հազարացն ամաց իբրև աւուրց վեցից, յաջորդեսցէ իբրև եօթներորդ օր շաբաթուն 'ի վերջին հազար ամին, առ 'ի զայն շաբաթումն տօնախմբելոյ սրբոցն յարուցելոց։ Այս կարծիք էին արդեօք ներելի, եթէ միայն վայելմունս հոգևորականս գնէին լինել սրբոցն յայն շաբաթումն յանդիման տեառն. զի և մեք կալաք երբեմն զայդ կարծիս։ Այլ քանզի հաւանեալքն 'ի դոյն ասեն, թէ որք յարիցեն 'ի ժամանակին յայնմիկ, ունին յօրանալ 'ի խրախունս մարմնականս անչափս, յաճախութբ յուտեստ և

յարբունն՝ ոչ միայն անցեալ ըստ պարկեշտութեն չափ, այլ և ՚ի վեր քան զսահման անկրճտութե՛ն, այդպիսի ոչ ոք այլ, բայց մարմնախորհն և՛ն հաւատալ կարեկեն, Եսկ որ հոգևորքն են, զայդոսիկ կարծողս անուանեն հաւաքանս, իմա հաղարամտութս։ Կ՚ասէ որս մի ըստ միոջէ հերքուն գնել երկար է։ շատ լիցի ցուցանել աստսոնն՝ թէ զինչ իմաստ գրոցս իցեն։

Կ՚ըդ ինքնին Կ՚ինչ ՀՅս տէր մեր ասէ. "Ա՛ն որ կարէ զկարասի հզօրի մտնել ՚ի տունն նորա՝ աւար հարկանել, եթէ ոչ նախ զՀզօրն կապիցէ „. Հզօր կամեցեալ զաստանայ նշանակել զինն զօրացաւ ՚ի գերուէ ունել զմարդկան ազգ. և նորա կարասի զոր յափշտակելոցն էր՝ ելին իւր Հանդերձեալ հաւատացեալքդորս գրաւեալ էր աստանայ ազգի ազգի մեռոք և անօրէնութ՛ը։ Կ՚ըդ առ ՚ի կապելոյ Հզօրիս այսմ եառս ՀՅովհաննէս առաքեալ՚ի յայտնութե՛ն՝ զՀրեշտակ իջեալ յերկինց, որ ուներ զփականս դժոխոց, և զշղթայս ՚ի ձեռն իւրում. և կալաւ զվիշապն զօձն առաջին, որ անուանեաւն է բանսարկու և սատանայ, և կապեաց զնա Հազար ամ. այս է՝ արգել կարձեաց զիշխանութե՛ն նորա ՚ի մոլորեցուցանելոյ և ՚ի գրաւելոյ զայնոսիկ որ ազատելոցքն էին։ Եակ Հազար ամն՝ որքան ինձ ՚ի միտս գայ, կրկնակի մարթ է իմանալ, Կ՚ի, ըստ որում ՚ի վերջնում Հազար ամին գործելոց է այս. այն է՝ ՚ի վեցերորդ Հազարեկին իբր ՚ի վեցերորդում աւուր, որոյ յետին միջոցք ժամանակի շրջաբերին այժմ, որում յաջորդեսցէ շաբաթն աներեկոյ, այս է՝ Հանգիստ սրբոց որոյ չիք վախճան. և ահա զայսր Հազարեկի գլետին մասն՝ որ կայ մնոյ մինչ յաւարտ աշխարհի, Հազար ամն կոչեաց, յայն ձև խօսելոյ՝ որով մանկն ՚ի բոլորե առձայնի։ Կրկրորդ, Հազար ամն զորոր իսկ զամս կենցաղոյս վերակուէաց, հաստատեալ Թուոյն շրջուէն ժամանակին արաւայտելով. Կ՚անգի Հազարեակ Թիւն տայ կացուցանել զքառակուսի Հաստատուն տաճարեակ Թուոյն. զի տաճիցս տամն՝ լինին Հարիւր, որ է ձև քառակուսի, բայց մակարդակ. այլ զի ՚ի բարձրն

կոյս վերածեալ՝ հաստատուն լինիցի, զարձեալ Տարեւրն բազմապատկի տասնիցս, և լինին հազար։ Իսկզբանէ և Տարեւրեանն Թիւ՝ է ուրեք զի փոխանակ համարսի առեալ է, որպէս այն զոր տերն խոստացաւ ամենայն զիւրսն Թողուլ ՚ի նոցանէ հետեւողն՝ ասելովն. «Իսկուցու Տարեւրապատիկ այժմ յայսմ ժամանակի», զոր միւնա֊ բանելով իմն ասաց առաքեալ. «Երբև ոչ ինչ ունիցիմք, և ամենայն ինչ ունիմք», «Իանգի և վաղ ուրեմն գոյ ասացեալ յառակս. «Հաստատելոյն ամենայն աշխարհ ընդիւր լի է», «Իանիօն ապա հազարն առեալ դնիցի փոխան համարսի, յորում գոյ հաստատութիւն քառակուսի տասնեակի. վասն որոյ և ոչ ՚ի տաղմոսի գրեանն Ձահոզա֊ գոյն քան զայս գոյ իմանալ. «Ընկեցաւ յաւիտենից զուխտ իւր, և զբանն զոր պատուիրեաց մինչև ՚ի հազար ամ», այս է՝ ընդ ամենայն ամն։

«Ա֊ւ ասիկ գնա, ասէ, այս է զատանայ, յանդունդս դժո֊ խոց», «Ընդդէմ անուամբ անհամար բազմութիւն ամբարշտաց նշանակի, որոց սիրտք խորանդունդք են չա֊ բաբարութիւն հակառակ եկեղեցւոյն ՚ի, իբր ոչ եթէ յա֊ ռաջն ոչ էր անդ ՚ի նոսա սատանայ. այլ ասի ընկեցեալ անդր, վասն զի արտաքոյ ՚ի հաստատելոյն եղեալ, ուժգ֊ նին և սեպհականեաց զամբարիշտս. քանզի առաւել գրաւի առ ՚ի սատանայէ նա՝ որ ոչ օտարանայ միայն ինքն յայլ, այլև առէ ՚ի նահիր գայ պաշտօնեայս։ «Ա֊ւ փակեաց և ինքեաց գնա, ասէ, զի այլ մի և մոլորեցուցէ զազգս, մինչև կատարեսցի հազար ամն», փակել առացաւ, այն է՝ արգել խափանեաց՝ զի անցանել մի կարիցէ ըստ սահ֊ մանն։ Ա֊ւ զի յաւելու՝ ինքեաց, նշանակել ինձ Թուի՝ Թէ կամեցաւ Թաքուն առնել՝ այլ բաժանակիցք իցեն սա֊ տանայի և այլ ոչ, զի այդ ծածկեալ է առնևեին յաշխար֊ հիս յայսմ. քանզի անհաւատի է՝ Թէ որ յոտին կալ տեսանի, անկանիցի արգեաք. և միՀԹէ իցէ կանգնելոց՝ որ անկեալն Թուի։ Իսկ մոլորեցուցանել խափանի սա֊ տանայ այսու արգելականս կապով զայն ազգս՝ որ ՚ի Ա֊ վետակեալ էն, զորս յառաջնմէ մոլորեցուցանէր, կամ

տիրեալ ունէր . քանզի զայնոսիկ ընտրեաց ՅԾ յառաջ քան զլինել աշխարհի , ազատել յիշխանութեն խաւարի , և փոխել յարքայութեն որդւոյ իւրոյ սիրելւոյ , որպէս առաքեալ ասէ , Լ՚ապա թէ ոչ՝ ի հաւատացելոց որ անգիտանայ , թէ և արդ իսկ մոլորեցուցանէ զազգս սատանայ և ձգէ ընդ իւր՝ ի յաւիտենից պատուհաս , այլ ոչ եթէ գնաց խակարգեալն՝ ի կեանս յաւիտենից , Լ՚ոչ տարակուսանաց իրքէ են այն՝ թէ յոլովակի մոլորեցուցանէ սատանայ զվերածնեալսն՝ ի Լ՚ն , որ գնան ընդ չաւիղս ՅՈ . վասն զի Ո՚՚անեաւ տէր զայնոսիկ որ իւրն են ,, ։ Լ՚ոսցանէ ոչ զմի որ մոլորեցուցէ , նա՝ ի յաւիտենական դատապարտութեն . քանզի այնպէս ծանեաւ գնոսա տէր՝ իրրև ՅԾ , որում ոչ մի ինչ թաքչի և յայտառնեացն . և ոչ իրրև մարդ , որ տեսանէ զմարդ առ ժամն , եթէ իցէ տեսանել արդեօք՝ զորոյ զսիրտն չտեսանէ . իսկ թէ յայսմ որպիսի վիճակի , յայդմ և զանձն անդամ տեսանէ ոչ , Լ՚ապա պարտիկ կապեցաւ սատանայ՝ փակեալ յանդունդս , զի այլ մի մոլորեցուցէ զազգն՝ յորոց կազմեալ է եկեղեցի , զորս յառաջն մոլորեալս ունէր՝ մինչ չև լեալ էր եկեղեցի , ։ Լ՚անզի չասաց , զի մի մոլորեցուցէ զոք , այլ զի Լ՚՚այլ մի և այ մոլորեցուցէ զազգս ,, որովք զնկեղեցի անշուշտ տայ իմանալ՝ Ա՚՚ինչև կատարեսցի , ասէ , հաւաքն աին ,, . այս է՝ կամ ինացեաքն՝ ի վեցերորդ օրէն՝ որ բազկանայ՝ ի հազար ամաց , և կամ ամենայն ամբ՝ որովք յայսմ հետէ կատարելոց է աշխարհս ։

Լ՚ակ զոր ասէն Ո՚Օ՝ի այլ մի և այ մոլորեցուցէ զազգս , մինչև կատարեսցի հազար աին ,, , ոչ այնպէս արժան է իմանալ որպէս թէ յետ այնր ունելոյի մոլորեցուցանել զայնս և եթէ ազգս , յորոց ընտրեալ կանգնի եկեղեցի , և զորս մոլորեցուցանել արգելեալ փակեալ էր ։ Լ՚այլ կամ ըստ այսմ ձևոյ ասացաւ՝ որ՝ ի գիրս կոչ ուրեք , որպէս՝ ի սաղմոսին . Լ՚ինպէս են աչք մեր առ քեզ տէր ՅԾ մեր , մինչև ողորմեսցիս՝ ի վերայ մեր ,, . ուր ոչ եթէ յետ ողորմելոյն՝ աչք ծառայից նորա այլ ոչ և ընկելոյն առ տէր ՅԾ իւրեանց , Լ՚ու կամ շարք բանիցն այս իցեն . փակեաց

և կնքեաց զնա, մինչև կատարեսցի հազար ամն ։ Իսկ 'ի միջոցին եղեալն "Ո՛չ այլ ևս մոլորեցուսցէ զազգըս„ զատուցեալ 'ի կարգէ բանին՝ առանձնաբար իմանայցի, և իբր յետադասեալ այսպիսի բերիցէ իմաստս ․ և փակեաց և կնքեաց զնա՝ մինչև կատարեսցի հազար ամն, զի այլ մի ևս մոլորեցուսցէ զազգս ․ այսինքն է, վասն այն փակեաց մինչ 'ի կատարել հազար ամին, որպէս զի մի այլ ևս մոլորեցուսցէ զազգս ։

ԳԼՈՒԽ Ը

Յաղագս կապանաց և արձակման սատանայի ։

"Իսկ յետ այնորիկ, ասէ, պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ„ ։ Իսկ արդ եթէ սատանայի կապելն և փակելն այն է, զի մոլորեցուցանել չկարիցէ զեկեղեցի, միթէ լուծանիլ նորա իցէ՞ արդեօք կարողն լինել առ այն ։ Ոչ անդր 'ի բաց տար ․ զի եկեղեցի սահմանեալ և ընտրեալ յառաջ քան զաշխարհի լինելութիւն չունի երբէք մոլորիլ 'ի սատանայէ ․ զորմէ ասացաւն․ "Ծանեաւ տէր զայնոսիկ որ իւրն են„ ։ Այլ կացցէ նա աստանօր և 'ի ժամանակին յորժամ լուծանելոց է սատանայ ․ զոր օրինակ յորմէ հետէ սահմանեցաւն՝ եկաց յաշխարհի, և կացցէ ընդ ամենայն ժամանակս յանձինս իւրոցն՝ որք փոխանորդեն ծննդեամբ զվախճանեալս ։ Վասնզի ասէ յետ սակաւուց, թէ արձակեալն սատանայ գրգռեսցէ զազգսն մոլորեալս ընդ ամենայն տիեզերս 'ի պատերազմ հակառակ եկեղեցւոյ, և թիւ թշնամեաց նորա իբրև զաւազ ծովու ։ "Եւ ելցեն, ասէ, 'ի լայնութի երկրի, և պատեսցեն շուրջ զբանակս սրբոցն և զքաղաքն սիրելւոյ ։ Եւ իջցէ հուր յերկնից առ 'ի յայ, և կերիցէ զնոսա և զզօրագլուխն նոցա զսատանայ, որ մոլորեցոյց զնոսա ․ և արկցէ զնոսա 'ի ծովն հրոյ և ծծմբոյ, ուր էր գազանն և սուտ մար-

գարէն, և չարչարեսցին զհիւ և զդիւըն ։ Այս ի հեթանոսին գաւառացան անդր ունի զՀայեցումն, բայց յիշատակել պարտ վարկայ առ տեղեաւս, զի մի համարիցի ոք թէ ի համառօտ յայնմ երբէ՝ յորժամ սատանայ լուծանիցի, ոչ կայցէ եկեղեցի ի վերայ երկրի . որպէս թէ սատանայ ի լուծանել իւրում կամ ոչ գտանիցէ յաչխարհի զեկեղեցի, և կամ սպառեսցէ զնա բնութեամբն ։ Վասն որոյ ընդ բովանդակ ժամանակին՝ զոր յայտնութեանն դիցս պատգրել, այս է յառաջմայ անտի գալստենէ Քրիստի մինչ ի կատարած աշխարհի, յորում երկիրդն գալուստ լինիցի, ոչ այսպէս կապի սատանայ, որպէս թէ այս կապել նորա իցէ՝ չմոլորեցուցանել զեկեղեցի յայն միջոց ժամանակի զոր հազար ամի յորջորջեաց . որովհետև և ոչ ի լուծանել իւրում ունի մոլորեցուցանել զեկեղեցի, Ա՛յ արդարև եթէ կապիլն է նմա չկարելն մոլորեցուցանել, կամ չունել զհնարաւորն, զինչ ապա լուծանելն իցէ՝ բայց կարելն մոլորեցուցանել, կամ թողն գտանելն . որ և այս քաւ լիցի ։ Այլ կապիլ նորա է՝ ոչ համարձակ ի կիր առնուլ զամենայն փորձութիւնն՝ որով կարէ բռնի կամ նենգաւ մոլորեցուցանել զմարդիկ, յիւր կողմն բռնագրաւելով, կամ պատրանօք որսալով . և եթէ այս թողացուցեալ էր նմա ընդ բազում երկայն ժամանակս, և առ բազումս ակարութիւն ներքևէ ածել, ապաքէն գոլոշագոյնս ի հաւատացելոց ի վայր ընկենոյր, զորս ոչ կամի ածել թէ այնպիսի ինչ կրիցեն, այլ և խափան արկանէր զի մի այլք հաւատայցեն . և ահա առ ի չառնելոյ զայդ՝ կապեցաւ ։

Իսկ յայնժամ արձակեսցի, յորժամ սակաւ ժամանակ կայցէ . քանզի ընդհատնումբ թէ զամս երիս և ամիսս վեց թափելոյ է զբովանդակ գիւր զօրանէ և գիւրայոյն . բայց այնպիսիսք իցեն նոքա՝ առ որս տալոց է պատերազմ, զի անպատաբելիք մնայցեն յամենայն դիմի ցմանց և ի գատանայ նորա ։ Իսկ եթէ ոչ լուծանիցէ նա երբէք, սակաւ ի յայտ գոյր նորայն ժամանագործն կարողութիւն, նուազ հանդիսանայր հաւատարիմ երկայնամտութիւն սրբոց քաղաքին . և

ոչ քաջ լինէր Ամասիէլ Թէ քանի առ ՚ի բարին ՚ի կիր առնու ամենակարողն զմեծ գնորա չարութիւն · որ ոչ արգել զնա խոպան ՚ի փորձելոյ զսուրբս, Թէպէտև ՚ի նոցա ՚ի ներքին մարդոյն՝ որով է հաւատալ Յիսուս, արատաբեր անկեալ է նա, որպէս զի չարատաբին նորա մարտակցութիւնն յառաջագոյն լինիցին · իսկ առ այնոսիկ որ բաժանակիցք իւր են, կապեաց զնա առ ՚ի չկարելոյ Թափել և ՚ի վար արկանել զամենայն չարութիւն ։ Որպէս զի մի յանկամար տկարացեալ անտի՝ որովք եկեղեցի առնելոց և կատարելոցն էր, ոմանց ՚ի հաւատս գալով, և այլոց յառաջմէ իսկ գոլով ՚ի հաւատս, զառաջինսն կասեցուցանիցէ ՚ի հաւատոց բարեպաշտութէ, և զչեռնարկելոցն ՚ի կատարածին լուծից զնա տէրն, զի դէմ յանդիմանն տեսանիցէ քաղաքն սուրբ՝ որպիսում հզօր Թշնամւոյ յաղԹող գտաւ ՚ի յաձախութէ փառաց իւրոյն փրկչի օգնականի և ազատարարի ։ Ո՛վ արդարութիւն զոր ելեմք մեք առ համեմատութէ զայնու ժամանակաւ հանդիսացելոցն սրբոց և հաւատացելոց, յորժամ առ գնոսին փորձելոյ սրձակիւսցի Թշնամի այսպիսի, առ որ՝ մինչդեռ կապեալն կայ՝ բազմիք վտանգիմք մեք ՚ի կռուելն ։ Վասն զի պատ և չիք երկարել Թէ յլընթացս այսր ժամանակի ևս եղեն և են զինաւորք ոմանք ՚ի՛նչ՝ քաջախորհուրդք և հզօրբեղք · որոց Թէ կենդանի գտեալ էր յայնժամ ՚ի լուծանել սատանայի, և իմաստնաբար զգուշանային, և համբերութէ տանէին ամենայն դաւադրութեացն նորա և յորձանից,

Իսկ այն կապել սատանայի եղև՝ ոչ միայն յորմէ հետէ սկսաւ եկեղեցի ծաւալել արտաքոյ հրէաստանի ընդ այլ և այլ ազինս, այլ և արդ լինի, և եղիցի մինչ ՚ի կատարած աշխարհի՝ յորում ժամանակի լուծանէլոցն է · քանզի և այժմ յանհաւատութէ անտի՝ որով ըմբռնեալն էր սատանայ զմարդիկ, դառնան նոքա ՚ի հաւատս, և գործեցին անվրէպ մինչ ՚ի կատարած · և այնպէս ահա իւրաքանչիւրումն կապեսցի յայնժամ հզօրն այն ՚ի յափշտակել կարասւոյ նորա · և անդունդք յոր արկաւ նա՝ ոչ եթէ

քարձան՝ի մեռանել այնոցիկ, որք կային յայնժամ՝ի փա-
կիլ նորա, այլ ըստեղն նոցա փոխաբերեցին այլք ծնանե-
լովք և փոխանորդեն այլ ևս մինչ յաշխարհիս վախճա-
նել. որոց զբնեանան առելովք՝ի սերտս նոցա՝ի խաւա-
րինս և՝ի խորինս իբրև յանդունդս աբեղութիւն հանապազ։
Ա՛յլ մեծ՝ի վերջին ամին երիս և յամիսս վեց՝ յորժամ
լուծեալ սատանայ զհիշն զամենայն ունի թափել. եցէ
թէ ընդունիցի որ զհաւատս զոր չունէր յառաջն, ապա-
քէն ինդրելի է, ՚ի՛նչպէս ասացաւն, “Ով որ կարէ
մտեալ՝ի տուն հզօրի՝ զկարասիս նորա ասար հարկանել,
եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ՚՚, ո՛րպէս ձշմարտեսցի ար-
դեօք, եթէ մինչ լուծեալն իսկ է՝ յափշտակիցին նորայքն։
Արդեւ վասն հարկ իմն թուի բատ այսմ վճռոյ կարծել՝
թէ չայն կարձոյ ժամանակ չլինիցի յաւելուլ ումեք՝ի
քառկան ժողովուրդն. այլ ընդ այնոսիկ մարմնիցդի սա-
տանայ՝ որ քրիստոնէացքն գառնիցին. յորոց եթէ չաղ-
թիցեն ոմանք՝ զսատանայի զվեց երեսեալք, ելն նորա՝ի
սահմանեալ թիւս որդւոցն այ, Ո՛վ ոչ վայրապար ինչ
Հովհաննէս առաքեալ՝ այն որ զայսոսիկ գրեաց, ա-
սէ յիւրումն թղթի չաղագս ոմանց. “Ա՛ր՝ի մէնջ ելին,
այլ ոչ էին՝ի մէնջ. զի եթէ՝ի մէնջ էին, ապա առ մեզ
ձնային՚՚, Ա՛յլ զինչ չաղագս տղայոց լինիցի. զի չէ և չէ
հաւատալի, թէ չայնմ ժամանակի չգտանիցին քրիստո-
նէից զաւակք մատաղածինք չև ևս մկրտեալք, կամ չծնա-
նիցին յաւերան չայնոսիկ, կամ թէ զլեալն ոչ հոգայցեն
ծնողքն՝ որպէս զիարդ հնար է՝ յաւազան միանգամ
ծնանեցան հաւուցանել. Ա՛յլ եթէ այդ լինիցի, երբ ապա
սատանայի լուծելոյ չափշտակիցեն կարասիք իւր, յորոյ՝ի
տուն չէ ումեք մտանել առ՝ի զդործիսն չափշտակելոյ՝
թէ նախ ոչ զնա կապիցէ. Ա՛յս ընդ հակառակն առաւել
ևս հաւանելի է, թէ ոչ պակասիցին չայնմ ժամանակի՝
եթէ անկեալք լեկեղեցւոյ, և եթէ անկեալք լեկեղեցի.
այլ լինիցին արդարեւ աշչափ իմն արիականք ծնողքն՝ի
մկրտել զիւրեանց մանկունս, և այլք այնոքիկ որք՝ի ժա-
մանակին չայնմ գայցեն՝ի հաւատս, մինչ զի զհզօրն չայն

զանկայն պարտիցեն. այս է՝ 'ի դարմանել նորա բոլոր արուեստիւքն, և 'ի թափել զամենայն զօրութ՟ի, որպէս յառաջն չէր բնաւ զայրացեալ, սոքա և զարհեստն 'ի միտ առնուցուն զգաստութ՟ք, և բռնութ՟եցն բաւիցեն ժուժկալութ՟ք. և այնպէս յափշտակիցին 'ի նմանէ մինչ արձակն է: Բայց ոչ այսր աղագաւ անկած լինիցի աւետարանականն բան. « Ոչ ոք կարէ մտանել 'ի տուն հզօրի զկարասի նորա աւար հարկանել, եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ »: Քանզի առ 'ի ճշմարիտ լինելոյ բանիդ՝ պահեցաւ այս կարգ, զի նախ կապեսցի հզօրն, և յաւարի առեալ զգործիս նորա, այնպէս իմն համատարած ընդ բոլոր աշխ՟ս ընդարձակեսցի եկեղեցի 'ի հզօրաց և 'ի տկարաց, մինչև 'ի սակս անվրիպելի հաւատարմութ՟ե իւրացն առ 'ի յա՟ծուստ նախաճառելոց և 'ի լրումն եկելոց՝ մարթ լինիցի զսատանայի գործիսն 'ի բաց կորզել նաև մինչ լուծեալն է: Զի զոր օրինակ խոստովանելի է՝ մեղկանալ սիրոյ յոքունց 'ի բազմանալոյ անօրէնութ՟ե, և 'ի տարօրինակ դժնեայ հալածանաց և 'ի պատրանաց այն ինչ լուծելոյ սատանայի՝ բազմաց յետս կալ, որոց չէ գրեալ 'ի դպրութ՟ի կենաց, նոյնպէս հաւանել արժան է, թէ ոչ միայն հաւատացեալքն բարեկրօնք գտեալք զայնու ժամանակաւ, այլ և ոմանք ոմանք որք դեռ արտաքոյ կային՝ օժանդակեալք յա՟յ շնորհացն, և 'ի միտ առեալք զգրոյն նախասացութ՟ի ըստ պէսպէս իրաց և ըստ կատարածին իսկ՝ զոր առ դուրս տեսանեն, հաստատեսցին արդարեւ 'ի հաւատալ զոր ոչն հաւատային, և քաջասցին 'ի յաղթել սատանայի ոչ եւս կապեցելոյ: Եւ 'ի լինել այսմ այսպէս, ասել մնայ՝ թէ յայն սակս յառաջեաց նորայն կապումն, զի կապուտ կողոպուտ կայցէ եթէ 'ի կապելն, և եթէ 'ի լուծանել. զի առ այս ասացաւ, ոչ ոք մտանել 'ի տուն հզօրի յափշտակել կարէ զկարասի նորա, թէ ոչ նախ զհզօրն կապիցէ:

ԳԼՈՒԽ Ժ

Չինչ էին Թագաւորէ որոյ ընդ Քրիստոս սէր, և ի որոյն ի յաւետեանական Թագաւորութիւն։

Ի ՀԱՋԱՐԱՄԵԱՑ յայնմ ժամանակի յորում կասեցաւ սատանայ, Թագաւորեն սուրբք ընդ Քրիստոս ի նոյն հազար ամս, նովին մտաք առեալ զմիջոցդ, այս է՝ ի ժամանակի սատ նախկին գալստեան նորա։ Քանզի եթէ բաց յարքայութենէ անտի զորմէ ասէլոց է՝ ի կատարածին «Լսկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութի՛ն», ոչ Թագաւորէին այժմ սուրբք նորա այլով ինն օրինակաւ՝ Թէ և նուազագունիւ, առ որս և ասաց, «Լհաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի», ապաքէն ոչ և արդեօք եկեղեցի կոչէր այժմ արքայութի՛ն նորա, և արքայութի՛ն երկնից։ զի և այս ժամանակ և արդարեւ՝ յորում գոլիրն աշակերտեալ արքայութե՛ն երկնից՝ հանեն ի գանձէ իւրմէ զնոր և զհին, զորմէ յանգիտալոյ խօսեցաք։ Լյ հնձողքն յեկեղեցւոյ անտի ունին ժողովել զորոմունս սքն, որոց Թոյլ տուաւ ամէն ի միասին ընդ ցորենոյն մինչև ի հունձս։ զոր և մեկնաբանեալ ասէ։ «Հունձքն կատարած աշխարհիս է, և հնձողքն հրեշտակք են։ Որպէս ժողովի որոմին և ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս։ առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութե՛ն նորա զամենայն գայթագղութի՛ս», Լյ յայտ է Թէ ոչ յայնմ արքայութե՛ն, ուր գայթակղութի՛ն չիք և ոչ մի։ ուրեմն ապա ժողովեսցին յայսմ արքայութե՛ն որ աստանօր եկեղեցին է։ Լյ՛ք դարձեալ։ «Որ որ լուծցէ մի ինչ ի պատուիրանացըս յայսցանէ ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութե՛ն երկնից։ իսկ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութե՛ն երկնից»։

Ո՛ երկաքանչիւրն իսկ ասէ լինել յարքայութեան երկնից, եթէ զչգործողն պատուիրանաց՝ զորս ուսուցանէ, զի այն է լուծանելն, չպահել, չառնել, և եթէ զգործողն և զուսուցանողն. միայն զսա մեծ կոչէ, և զնա փոքր. և անդէն զհետ բերեալ յարէ. « Բայց ասեմ ձեզ. զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան ըզդպրացն և զփարիսեցւոց », այս է՝ առաւել քան զարդարութիւն այնոցիկ՝ որք լուծանեն զուսուցեալսն. զի այլուր ասէ յաղագս դպրաց և փարիսեցւոց՝ թէ « Ասեն և ոչ առնեն ». արդ եթէ ոչ առաւելցի, ասէ, քան զնոցայն ձեր արդարութիւնդ՝ չլուծանել, այլ առնել զոր ուսուցանէքդ, « Ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից »: Ապա ուրեմն այլով մտօք իմանի արքայութիւն երկնից, ուր սոքա երկոքեան գտանին, այս է՝ եթէ լուծանող ուսուցելոյն, և եթէ որ առնէն. նա փոքր, և սա մեծ. և այլ մտօք արքայութիւն՝ ուր արարողն եւեթ մտանէ: Ամն իրի ուր կայ երկու այս որոշումն, է արդարև եկեղեցի, որպիսի այժմըս է. իսկ ուր արարողն միայն գտանիցի, է եկեղեցի՝ որպիսի յայնժամն լինելոց է, յորժամ չարագործ ոչ իցէ 'ի նմա: Ապա և զարդիս արքայութիւն Քսի է եկեղեցի, և արքայութիւն երկնից. ուստի թագաւորեն և այժմ սուրբք նորա ընդ նմա, թէպէտ և այլազգաբար քան զոր յայնժամն թագաւորեսցեն. բայց որոմունքն ոչ թագաւորեն ընդ նմա, թէ և յեկեղեցւոջ աճեն ընդ ցորենոյն: Քանզի ընդ նմա թագաւորեն այնոքիկ՝ որք զառաքելոյ ասացեալսն կատարեն. « Եթէ յարերուք ընդ Քսի, ապա զվերինն խնդրեցէք՝ ուր Քսն նստի ընդ աջմէ Այ. զվերինն խորհեցարուք, մի զայս որ յերկրի աստ է »: Եւ զայսպիսեաց ասէ դարձեալ. « Որոց առաքինութիւն յերկինս է »: Միով բանիւ, ընդ նմա թագաւորեն որք միանգամ այնպէս են յարքայութեան նորա, զի ինքեանք իսկ արքայութիւն նորա իցեն: Իսկ զիարդ Քսի արքայութիւն իցեն բնաւ այնոքիկ, որք զի մի զամենայն ասիցեմ, թէպէտ և կան անդ մինչև գայթակղութիւնք ամենայն ժողովեսցին յարքայութենէ նորա 'ի կատարածի աշխարհիս, սակայն

անտանօր զանձանցն՝ և ոչ զՅեհ Վրկիստոսէ խնդրեն։

Ա.ՀԼ արդ յաղագս զինուորական այսր Թագաւորութե՛ն, յորում կայ դեռ ոգորելընդ Թշնամւոյ, երբեմն լինել պատերազմեալ՚ի հակառակել ախտից, երբեմն ելխնուաձեցելոցն, մինչև՚ի խաղաղաւէտն լեցի հասանել՚ի Թագաւորութե՛ն, ուր անպատերազմ Թագաւորել կայ, և վանն այսր առաջին յարութե՛ն որ այժմ է, այսպէս խօսի յայտնութե՛ն գիրս։ Վանզի ասացեալ զսատանայի կապիլն հազար ամ, և ապա լուծանել սակաւ մի ժամանակ, անդէն համառօտէ զի՛նչ ինչ ընդ հազար ամն առնելոց է եկեղեցի, և զի՛նչ ընդ նա առնիցի՝ ասէ. "Եւ տեսի աթոռս, և նստան՚ի վերայ նոցա, և դատաւորութե՛ն տուաւ նոցա"։ Ել պարտ է կարծել թէ զյե՛տին դատաստանէն կայ բանս. այլ զաթոռս առաջնորդաց լմանալն է, և զնոսին իսկ զառաջնորդս որք զտեսչութիւն եկեղեցւոյ վարեն այժմ. և դատաւորութիւն տուեալ նոցա՝ Հոգւոյն Թուի առնուլ զասացեալն. "Որ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս"։ Ուստի և առաքեալ ասէ. "Ո՛վ կայ իմ և զարտաքինան դատելոյ. ո՞չ ապաքէն դուք զներքինան դատիցէք"։ Յարէ յայտնութե՛ն. "Եւ հոգիք սպանելոցն վասն վկայութե՛ն Յի՛ս, և վասն բանին Աստուծոյ"։ ուր լուեալն իմանի զոր զկնին ասելոցն է. "Ո՛չ պատուեցին զնդ Գա՛ղ հազար ամ"։ այս ինքն է՝ հոգիք մարտիրոսացն չև դարձեալք՚ի մարմինս իւրեանց։ Վանզի և հոգիք բարեպաշտաց վախճանելոց ոչ բաժանին յեկեղեցւոյ, որ այժմն իսկ աղքայութե՛ն է Գա՛ղ։ Այսպա թէ ոչ՝ վայրապար էր առ ածայն սեղանոյն յիշատակ նոցա առնել՚ի Գա՛ղ զրդութե՛ն մարմնոյն Գա՛ղ. և ոչ մի ինչ օգուտ էր՝՚ի վտանգս կենաց փութալ՚ի մկրտութե՛ն եկեղեցւոյ, որպէս զի մի անկնութք լեցի վախճանիլ՚ի կենացս, և ոչ՚ի հաշտութե՛ն փութալ՝ եթէ գուցէ յայսաշխարհութե՛ն ոք և անմաքուր խղճիւ մեկնեցաւ՚ի մարմնոյ։ Ո՛վ ահիմ՚ արդեօք գործին այսոքիկ, քայց զի և հաւատացեալքն

ՆՆՋԵՑԱԼք անդամք են եկեղեցւոյ ։ Ա՛ման որոյ Թէպէտ և մերկք ի մարմնոց իւրեանց՝ հոգիք նոցա Թագաւորէն ընդ Քրիստոս ի հոլովել հազարացն այսոցիկ ամաց . ուստի և յայլում վայրի յայտնաՒԹեան գրոցս ընԹեռնումք . " Լրանալ մեռելոցն որք ի տէր ննջեցին՝ այժմիկ վաղվաղակի՝ զայս ասէ հոգին , քանզի հանգիստս յաշխատուԹէ իւրեանց . բայց միայն գործք իւրեանց լցան զհետ նոցա ,, ։ Ա՛ման որոյ այժմէն իսկ նախկին Թագաւորէ եկեղեցի ընդ Քրիստոս ի կենդանիսն և ի մեռեալս ։ Քանզի " Ի նոյն իսկ և Քրիստոս մեռաւ և եկեաց , զի մեռելոց և կենդանեաց առՀասարակ տիրեսցէ ,, ասէ առաքեալ ։ Այլ զմարտիրոսացն աւԷԹ հոգիս այնը առգաւս յիշեաց , զի նոքա առաւելապէս Թագաւորեն ի մեռանելն , քանզի սակս ՁշմարտուԹէ մարտեան մինչև ցմա՛հ ։ Ա՛ակայն ի մտանէ պղտորին և խմաստասիրեմք զայսն վախՁանեալք՝ զվիՃակեալսն յեկեղեցի , որ Թագաւորեալ Քրիստոս է ։

Նոքա զոր զինին գայ , " Օ՞ որս ոչ երկիր պագին գազանին , կամ պատկերի նորա , և ոչ առին զդրոշմ նորա ի ձակատս իւրեանց , և ոչ ի վերայ աջոյ ձեռին իւրեանց ,, , զայս ունիմք առնուլ ի վերայ կենդանեաց և մեռելոց միանգամայն ։ Նոքա Թէ ո՞ այս գազան իցէ , Թէպէտ և մանր քննուԹեան արժանի , այլ յուղիղ մտաց չէ օտար՝ զնոյն զամբարիշտ քաղաքն իմանալ , և զանհաւանիցն ժողովՀ զհակառակամարտն հաւատացեալ ժողովրդեանն և քաղաքին այ ։ Այլ պատկեր այնը գազանի , կեղծաւորուԹիւնն Թուի ինՁ՝ մարդոյն այնոցիկ , որք զՀաւատս գաւանել ձևանան , և կեան գունակ անՀաւատի ։ Քանզի կերպարանին որ ինչ չէնն , և անուանեալ կոչին ոչ Ձնգրիտ գիմամբ՝ այլ պատիր պատկերաւ՝ քրիստոնեաք ։ Օ՞ի այնը գազանի սակի են ոչ միայն յայտնապէս Թշնամիք անուան Քրիստի , և փառազարդեալ քաղաքի նորա , այլ և որոմնէքն որք ի կատարածի աշխարհիս ժողովեսցին յարքայուԹիՀ նոցա՝ որ է եկեղեցի ։ Նոքա այնոքիկ են՝ որք երկիր ոչ պագին գազանին և պատ-

կերպն նորա, բայց որ միանգամ զառաքելոյն կատարեն ըզ-բան․ «Մի՛ լինիք լծակիցք անհաւատից»․ զի ոչ պագանեն երկիր․ այս է՝ ոչ հաճին, ոչ հնազանդին, և ըզդրոշմ նորա՝ զնշանակ մեղացն՝ չառնուն 'ի ճակատ՝ դաւանութեամբ, և 'ի ձեռին՝ արդեամբք գործոց։ Ապա մեկնեալքն յայսոցիկ չարութեանց՝ եթէ տակաւին կենդանիք 'ի մահկանացու մարմնի կացցեն, և եթէ վախճանեալք, թագաւորեն այժմէն ընդ Քսի՝ որպէս այսու ժամանակիս դէպ իցէ, ընդ բովանդակ միջոցն՝ որ հազարամեան թուովն նշանակի։

«Յետ այսորիկ 'ի մեռելոց ոչ ոք եկաց» ասէ․ կամ «Մնացորդք նոցա ոչ կեցին»։ Քանզի արդ իսկ է ժամանակ, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն այ, և որք լուիցենն՝ կեցցեն․ իսկ մնացեալք 'ի նոցանէ ոչ կեցցեն։ Եւ զոր 'ի վերայ բերէ «Մինչև 'ի կատարել հազար ամին», պարտ է իմանալ՝ թէ ոչ կեցին 'ի ժամանակին յարում կեալն պիտոյ էր, 'ի մահուանէ 'ի կեանս փոխելով․ և այնորիկ աղագաւ երբ օրն գայցէ՝ յորում և մարմնոց լիցի յարութիւն, ոչ 'ի կեանս արտաքս ելցեն 'ի գերեզմանաց, այլ 'ի դատաստան՝ 'ի դատապարտութիւն, որ մահ երկրորդ ասի։ Քանզի մինչև հազար ամն լցցի, որ միանգամ ոչ կեցցէ, այս է՝ ընդ ողջոյն ժամանակն յորում լինի յարութիւն առաջին, ոչ լուիցէ զձայն որդւոյն այ, և ոչ 'ի մահուանէ 'ի կեանս փոխեսցի, այնպիսին ապաքէն յերկրորդում յարութեան՝ որ մարմնոյ է, փոխեալ անցանիցէ 'ի մահն երկրորդ մարմնովն հանդերձ։ Որ յառաջ երթեալ ասէ․ «Այս է յարութիւն առաջին։ Երանի սրբոցն որք ունին բաժին 'ի յարութեան առաջնում»․ այս է՝ որ այնմ կցորդ է․ և կցորդի նա՝ որ ոչ միայն 'ի մահուանէ որ մեղացն է՝ յառնէ, այլ և 'ի նմին 'ի կեանս կայցէ հաստատուն։ «Ի վերայ սոցա, ասէ, երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն»․ ապա ուրեմն 'ի վերայ այլոցն ունիցի․ զորոց վերագոյնդ ասաց՝ ոչ կեցեալ մինչև 'ի կատարել հազար ամին․ զի ընդ բովանդակ միջոցս ժամանակին՝ զոր հազար ամն կոչէ, թէպէտ և իւրաքանչիւր նոքա կեցին

'ի մարմնի, այլ ոչ կենդանացան 'ի մահուանէ անտի՝ յոր ըմբռնեալն կային յամբարշտութենէ. որպէս զի զայսօրինակ կենդանացեալք, կցորդք առաջին յարութեան լինելին անտիրելիք այնուհետեւ յերկրորդն մահուանէ։

ԳԼՈՒԽ Ժ

Զինչ պատասխանի տալ արժան է այնոցիկ՝ որք համարին թէ յարութի մարմնոց միայն է, և ոչ հոգւոց։

Են որ կարծեն, թէ մարմնոց եւեթ իցէ մարթ յարութի ասել. որ վասն և զառաջինն զայն յարութի պնդեն լինել 'ի մարմինս։ Քանզի ասեն. որոց է անկանիլ, նոցին և յառնել. իսկ անկանելին մարմինքն մեռանելով, զի և գէշն կամ դի անկեալ՝ անկած կոչի առաւել 'ի յոյնն և 'ի լատինն։ Ապա ուրեմն, ասեն, հոգւոց չմարթի լինել յարութի, այլ մարմնոց։ Եւ ոչ գիտեն, թէ առաքելոյն ընդդէմ կքրին, որ զայն յարութի առձայնէ. քանզի յայտ է՝ թէ ըստ ներքին մարդոյն և ոչ ըստ արտաքնումն յարուցեալ էին նոքա՝ առ որս ասէ. "Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք"։ Զնոյն միտս այլովք բանիւք բացատրեալ ասէ այլուր. "Զի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց փառօքն հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգութեան կենաց շրջեսցուք"։ Ացորդ է և այն. "Արի որ ննջեսդ, և կանգնեաց 'ի մեռելոց. և լուսատու լիցի քեզ Քրիստոս"։ Իսկ զի ասեն, յառնել չմարթի՝ բայց անկեալն միայն, և վասն այսր զյարութի անկ համարին մարմնոց՝ և ոչ հոգւոց, զի և անկանել՝ մարմնոց է, զմէ՞ ոչ զայն լսեն "Իւրում տեառն կայ կամ անկանի". և թէ "Որ համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի՝ գուցէ անկանիցի"։ Քանզի կարծեմ զգուշութի անկմանս առ հոգին ասի՝ և ոչ առ մարմին. իսկ արդ եթէ յարութի անկելոյն է, և ահա անկանին և հոգիք, հաւաստի ապա և հոգւոց

խոստովանելի է յառնել. Արդ յետ ասելոյ՝ թէ 'ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութի, յարէ 'ի նոյն «Այլ եղիցին քահանայք այ և տեառն Յի Քի. և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ,,. Ոչ եթէ յաղագս եպիսկոպոսաց և երիցանց միայն այդ ասացաւ, որք տիրապէս քահանայք անուանին յեկեղեցւոջ. այլ զոր օրինակ զամենեսին կոչեմք քրիստոնեայս 'ի խորհրդական օծութէ, նոյն օրինակ և քահանայս զամենեսին, զի անդամք են միոյ քահանային. զորոց առաքեալն Պետրոս ասէ. «Ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութի,,. Տես ինձ և զայն, զի թէպէտ և հակիրճ բանիւ 'ի հարևանցի, այլ քաջիկ զեկոյց թէ ած է Քս, յասելն. «Քահանայք այ և Քսի,,, այս է՝ հօր և որդւոյ, թէպէտ սակս ծառայական կերպին՝ որպէս որդի մարդոյ, նոյնպէս քահանայ եղև Քս յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի. զորմէ խօսեցեալ եմք 'ի գիրս յայս բազում անգամ.

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Գովգայ և Մագովգայ, զորս գրգռեսցէ սատանայ յարձակել իւրում 'ի վախճան աշխարհի՝ առ 'ի հալածելոյ զեկեղեցի այ.

«Եւ յետ հազար ամին լուծցէ զսատանայ և հանցէ 'ի բանտէ անտի, ելցէ և մոլորեցուսցէ զազգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի. և զՄագոգ ածցէ 'ի ձեռս՝ ժողովել նոքօք զամենայն զօրս 'ի պատերազմ, որոյ թիւ նոցա իբրև զաւազ ծովու,,. Այս ուրեմն յայս իսկ մոլորեցուսցէ յայնժամ, զի 'ի սոյն պատերազմ ձգեսցէ. քանզի յառաջ իսկ քան զայդ՝ որով իւիք կարողն էր՝ յաճախ և բազմադիմի չարեօք մոլորեցուցանէր. Արդ ասացաւ, ելցէ, այն է՝ 'ի դարանէ անտի թշնամութեցն յարձակեսցի 'ի յայտնի հալածանս, զի այս եղիցի հալածումն

վերջին՝ ի մեծենալ յետին գատաստանին, զոր կրել ունի եկեղեցի սուրբ ընդ ամենայն տիեզերս, այն է՝ քաղաքն Երուսաղէմ յերեսաց բռնաւոր քաղաքին սատանայի, որչափ և երկաքանչիւրն սիրեալ կայցէ՝ ի վերայ երկրի։ Օ՛ի այս ազգ՝ զոր Գոգ և Մագոգ անուանէ, ոչ այնպէս իմանին՝ թէ իցեն բարբարոսք ոմանք բնակացեալք ի միում կողմանն երկրի, կամ որպէս ոմանք խորհին, իցէ Վերստայք և Մասագէտ, ի պատճառս նախկին տարից ազնուանցդ, և կամ այլք ոմանք օտարասեռք՝ ոչ ներբոյ անկեալք հռոմայեցւոց. քանզի ընդ ամենայն տիեզերս լինել նոցա յայտ առնէ ասելն. «Օ՛ազգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի», և ըստ նոցանէ յարէ զԳոգ և զՄագոգ։ Իսկ զանուանցդ թարգմանութեանն գտանեմք, զի Գոգ՝ յարկ լսի, և Մագոգ՝ ի յարկէ, որպէս թէ տուն, և որ ի տանէ գայ՝ ի դուրս. ապա են ազգք՝ յորս սատանայ իբր յանդղային վայրի փակեալ է, և ի նոցանէ իբր ի դուրս ինն զեղեալ ելանել, նոցա լինելով յարկ, և սա՝ ի յարկէն։ Իսկ եթէ առանց ուրոյն տալոյ նոցա և սա՝ զերկոսեան և զյարմարիցեմք առ ազգսն, լինին նոքա յարկ, զի այժմուս ի նոցա փակի և իբր ամրացեալ ծածկի հէն թէ նաւմն, և լինին ի յարկի, յորժամ ըզծածկեացն թէ նաւամուն ի բերեսն ածիցեն։ Իսկ այն զի ասէ. «Ելցեն ի լայնութեն երկրի, և պատեսցեն շուրջ զբանակս սրբոցն, և զքաղաքին սիրելեացդ», ոչ եթէ նշանակէ՝ ի մի տեղի ուրեք գալ նոցա, իբր այն թէ բանակք սրբոց և քաղաք սիրելի՝ ի տեղւոջ ուրեք սահմանեալ իցեն, ուր այս ոչ այլ ինչ է՝ բայց եկեղեցի Աստուծոյ ընդ ամենայն տիեզերս. նմին իբր ուր ուրեք լինիցի յաճախ նա՝ որ յամենայն ազգս իցէ որ և նշանակեացաւ լայնութեն երկրի, անտանօր լինիցին բանակք սրբոց, անդ քաղաքն սիրելի այդ. անդ ի բոլորից թէ նաւամեաց իւրոց՝ զի և նոքա իցեն յազգս ամենայն, պաշարեսցի Հալածանացն սատկութեանն, այս է՝ յանձուկս վշտաց ձեղնեցն, սլիցդեացի, շուրջ ըմբռնեսցի. այլ սակայն ոչ ձեռնթափ լինի ի զինուորութեն իւրմէ որ ի բանակի անուն կոչեցաւ,

ԳԻ ՅԱԽՍ ԺՈ

Ընդհօք Ջեսոն տանջանս ամբարշտաց անճարիկի ասացեալն իջանել հրոյ յերկինից, և ուտել զնոսա։

ՈՐ ասէն, "Այս իջցե՛ք հուր յերկինից առ՝ ի յայ, և կե-
րիցէ զնոսա ..., չէ կարծեալ յաղագս վերջին տանջանացն
ասացեալ, որ եղիցի յաւուր անդ "Երթայք յիս անի-
ծեալք՝ ի հուրն յաւիտենական ... ։ Այլ զան զի յայնժամ
ամբարիշտք ընդ ածանիւն՝ ի հուր, և ոչ եթէ հուրն
յերկինուստ անտի թափեցի՝ ի նոցա վերայ ։ Վասն աստա-
նոր հուր յերկինից՝ վասն զի արդարք իմն զհատատուցեալ իւն
արդոյն է իմանալ, որով անտեղիտալիք լինելոց են առ
դժուարացեալն՝ չառնել զկամն նոցա ։ Վասնզի հաստա-
տուեալ են երկինք, որոյ սնոտուեալ չարանախանձ ջնեալ
տանջացին ամբարիշտ, զի ոչ կարացին զսուբբա Վնոյ
՝ի գերբարիստոսին կոյին առարկանել ։ Այս այն եղիցի
հուր որ կերիցէ զնոսա . և այս՝ առ՝ ի յայ ։ քանզի՝ ի նո-
քա պարգևացն անապատելիք լինին սուրբք, որով թերըս-
նամիքն տանջին ։ Ո՞ի որպէս՝ ի բարւոյ մասին ասացաւ
"Վախանդ տան քո կերիցէ զիս ..., նոյնպէս՝ ի նեղհակին,
"Վախանձ առցե՛ք զժողովուրդն անիրսա, և այժմ հուր
զհակառակորդս կերիցէ ... Վա՛ն զի այժմ՝ ասէ, ՝ի բաց
որոչելով՝ ի հրոյ անտի վերջին դատաստանին ։ Այս կամ՝
զայն Հարուածս կոչէ հուր երկնառաք և ծախիչ, որով՝ ի
գալ Վնոի հարկանիցին եկեղեցւոյ հալածիչք՝ կենդանի
գետաքն յերկրի, յորժամ զդերբարիստոն սատակիցէ
Հոգւով բերանոյ Իւրոյ, և ոչ այն վերջին տանջանք ամ-
բարշտացն լինիցին ։ այլ զայն կայ ինայ կրելոցս՝ ի վերնէ
մարմնոյն յարութե՛ն ։

ԳՈՂԱԼԻ ԺՈՂՈ

Արդեաք ժամանակ հալածանաց Սիոնի գնիցի՞ ի համար ընդ այն հազար ամաւն։

Յ.ՅՍՍ հալածումն յետին՝ որ ի դէպաքրիստոսէն չարժիցի, ձգեսցի ամս երիս և ամիսս վեց, ըստ որում յառաջ ասացաք, զի այսպէս եգեալ է ի յայտնութեանէ գիրս, և ի մարգարէն Դանիէլ։ Եւ թէ այս գուշակաբեայ ժամանակ մտանիցէ արդեաք ի համար հազար ամի անդ՝ յորս ասէ զաստանայի կապիչն, և զթագաւորել սրբոց ընդ Քրիստի, և կամ թէ արտաքոյ այնր լինիցի յաւելուած ինչ, յիրաւի ընդ տարակուսանաւք առեալ է։ Վասն զի եթէ ի թիւս հազար ամացն ասիցեմք, գտանիցի սրբոցն ընդ Քրիստի թագաւորել ոչ եթէ նոյնքան ժամանակաւ՝ այլ երկարագոյն ձգեալ քան զկապիլ սատանայի. զի արդարեւ սուրբք ի նմին իսկ հալածմանն առաւելապէս թագաւորեացեն ընդ իւրեանց թագաւորին, այնպիսի մեծամեծ չարեաց եղեալ յաղթականք, մինչդեռ սատանայ չէ կապեալ առ ի կարող լինելոյ հալածել զնոսա ամենայն ձգմամբ։ Եւ զիարդ ապա ի նոյն ի հազար ամսն սահմանէ գիրն զերկաքանչիւր զայս, այն է՝ զկապումն սատանայի, և զթագաւորութիւն սրբոց, ուր երիւք ամբք և ամսովք վեց կանուխ վախճանն առնու կապումն սատանայի քան զթագաւորել սրբոցն ամս հազար ընդ Քրիստի։ Եւ թէ ասիցեմք՝ զայն փոքր ժամանակ հալածմանն ոչ ի հազար ամին թաւալ, այլ ի լման այնց ամաց յաւելուլ ի վերայ, զի ձչգրիտ իմանայցի յետ ասելոյ, քահանայքն ոչ և Քրիստի թագաւորեացեն ընդ նմա հազար ամ, յաւելուլն «Եւ» ի կատարել հազար ամին լուծանիցի սատանայ ի բանտէ իւրմէ,. զի այսու օրինակաւ յայտ առնէ՝ զդադարել և թագաւորութիւն սրբոց, և կապանացն սատանայի. որով այնուհետեւ հալածմանն ժա-

մանակ ոչ ընդ թագաւորութեն սրբոց զուգաթաւալ, և ոչ ընդ բանտարգելութեն սատանայի, որ և երկաքանչիւր ի հազար ամին լինէին, այլ համարիցի աւելեաց իմն և ուրոյն թուելի, ըստ այդմ ասելիցիմք ապա ասել թէ ոչ թագաւորեալքն սուրբք ընդ Քրիստի ի հալածմանն յայսմիկ ։ Այլ իշխիցէ որ արդեօք ասել թէ անդամք Քրիստի ոչ թագաւորիցեն ընդ նմա յայսմ ժամանակի՝ յորում յաւէտ և պնդագոյնս յօդին ի նա, յորժամ որչափ սաստիկ էիցէ մարտին բռնութեն, նոյնչափ մեծ պարծանաք առիթացելոյն, նոյնչափ պերճ և մարտիրոսութեն պսակ ։ Եւ կամ եթէ առ վշտի նեղութեացն զոր կրիցեն, չիցէ մարթ ասել զնոսա թագաւորակից Քրիստի, ապա ուրեմն նոյնպէս յաւուրսն անցեալս հազարամեայ ժամանակին՝ որք միանգամ ի սրբոցն վշտանային վշտանային, ոչ և նա մարիցեն թագաւորել ընդ Քրիստի յայսմ ժամանակի վըշտացն ։ ուստի և նոքա՝ զորոց ոգիս սպանեալոյն վճռվայելեն Յեսի և վճռբանինայ ասէ տեսեալ մատենագրող յայտնութեան, ոչ թագաւորէին ընդ Քրիստի ի կրել անդ զհալածանս, և նոքին իսկ զորս չքեզսպանած ժառանգէք Քրիստ, ոչ էին թագաւորութեն նորա ։ Եւ ահա լի անտեղութեի է բանդ, և մերժելի բացէ ի բաց ։ Այլ ստուգապէս՝ զերափառ մարտիրոսացն հոգիք յաղթականք՝ զերկնաւոր համայն ցաւոց և վատահոգ գրեալք միոչ ի վախճան, յետ ի բաց մերկանալոյ զմահկանացու անդամն՝ թագաւորեցին ընդ Քրիստի և թագաւորեն, մինչև ամքն հազար բոլորեսցին, որպէս զի յետ այնր անմահական առեալ զմարմինսն թագաւորեսցեն ։ Այլմ իրի յայս երիս ամս և կէս՝ հոգիք սպանելոյն վասն վկայութեն նորա, և որք յառաջն վախճանեալք էին, և որ վախճանելոցք ի նոյն հալածանս յետին, թագաւորեսցեն ընդ Քրիստի, մինչև բոլորակատեսցի աշխարհս մահկանացու, փոխադրեալ յայն թագաւորութիւն՝ ուրանոր մահ ոչ իցէ ։ Վասն որոյ սրբոց թագաւորելոց ընդ Քրիստի առաւել երջանկին ամք՝ քան սատանայի կապանացն և բանտարգելութեն ։ զի նոքա թագաւորեսցեն ընդ աթոյի իւ-

րեանց ընդ ծնօրդւոյն այլ եւս երիս ամս եւ ամիսս վեց՝ մինչդեռ սատանայ լուծեալ է ։ Ապա ուրեմն 'ի լռել մեր, թէ քահանայք ա՟յ եւ Ք՟ի թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ, եւ 'ի կատարել հազար ամին լուծանիցի սատանայ 'ի բանտէ իւրմէ, այնպէս ունիմք իմանալ՝ թէ կամ զլրանալ հազար ամին չասէ առ թագաւորել սրբոց, այլ առ կապանս եւ 'ի բանտարգելութ՟ե սատանայի, իբրեւ զի իւրաքանչիւր կողմն ունիցի զամենայն զիւր ամսն վճարել այլ եւ այլ տեւողութ՟ք, սրբոցն թագաւորութ՟ե՝ երկայնագունիւ, եւ սղագունիւ՝ կապանք սատանայի, եւ կամ զի չափ երից ամաց եւ ամսոց վեցից կարի հակիրճ գոլով, ոչ կամեցաւ թերեւս 'ի հաշիւ մուծանել, եթէ պակաս թուիցի ունել կապումն սատանայի, եւ եթէ աւելի ինչ թագաւորութ՟ե սրբոցն ։ զոր օրինակ յաղագս չորեքհարիւր ամացն խօսեցայ 'ի վեշտասաներորդ գիրս մատենիս ։ քանզի էր ինչ մի աւելի, բայց չորեքհարիւր կոչեցաւ ։ եւ յաճախ է զայդպիսիս գտանել 'ի սուրբ գիրս, եթէ խնամով ոք միտ դիցէ ։

ԳԼՈՒԽ ԺԳ

Յաղագս դատապարտութ՟ն սատանայի իւրովքն հանդերձ, եւ համառօտ՝ յաղագս ըստ մարմնոյ յարութ՟ն համօրէն մեռելոց, եւ վասն դատաստանի յետին հատուցմանն ։

ՅԻՇԱՏԱԿԵԱԼ յայտնութ՟ե գրոցն զհալածումն յետին, բովանդակէ սուղ բանիւք զոր ինչ միանգամ կրելոց է իշխան աշխարհի սատանայ եւ ընդ նմա քաղաքն ամբարիշտ 'ի վերջնում դատողութ՟են ։ քանզի ասէ ։ " Իջցէ հուր յերկնից առ 'ի յա՟յ, եւ կերիցէ զնոսա, եւ զզօրագլուխն նոցա զսատանայ, որ մոլորեցոյց զնոսա ։ եւ արկցէ զնոսա 'ի ծովն հրոյ եւ ծծմբոյ, ուր էր գազանն եւ սուտ մարգարէն, եւ չարչարեսցին զտիւ եւ զգիշեր ,, ։ Գազան՝ որ-

պէս վերագոյն առացաք, ի գէպ է զնա ինքն զամէնարիշտ քաղաքն խմանալ, իսկ առա մարգարէ նորա՝ կամ է՝ Աբեան, և կամ պատկերն այն՝ պաՀանՁեալ կերպարանին, զորմէ խօսեցաք անտանօր, Օ Տէր այսոցիկ՝ զդատաստանն վերջին որ յերկրորդ յարուԹիէ մարմնոցն լինիցի մեռելոց, Համառօտ պատմեալ՝ որպէս զնարդ ցուցաւ նմին Հոլհանու, ասէ. "Աչս տեսի աՀռաւսպահակ մեծ, և ի վերայ նորա նստեալ յորոյ երեսացն երկնչէին և փախչէին երկինք և երկիր. և տեղի ոչ գտաւ նոցա,, Աև ասէ զայդ՝ որպէս Թէ յայնժամ ինչ գործեալ իցէ, նախ քան զդատեան կենդանեացց և մեռելոց, այլ Թէ յետ այնր լինիցի. քանզի ի վճռոյ լինել դատողութեանն, այնու Հետև ապա գադարեացէ այս երկին և այս երկիր, ի սկսանել նորոյ երկնի և նորոյ երկրի, Օ ի նուԹեցոյն փոփոխմամբ՝ և ոչ եԹէ Համայնաջինջ բարձմամբ անցանիցէ այս աշխարՀ. զսոն որոյ առաքեալ ասէ. "Օ ի անցանի վայելչութիւն աշխարհս այսորիկ. այլ կամիմ զձեզ անՀոգս լինել,, Ասասի վայելչութիւնն անցանի, այլ ոչ բնութիւնն, Արդ ասացեալ Հոլհաննու Թէ Հետս գնասցին ի վերայ աՀռաւոյ՝ յորոյ երեսացն փախչի երկինն և երկիրն՝ ոչ յապա լինելոց է, յապելու ի նոյն. "Աչս տեսի զմեռեալս մեծամեծս և զփոքրունս՝ որ կային առաջի աՀռաւոյն. և գրեանք բանային. և այլ գիրք բացաւ կնքոց. և դատեցան մեռեալք ի գրելոցն ըստ գործոց իւրեանց,, Վրեանս ասաց բացեալս, և գիր մի այլ՝ զորոյ զորպիսութիւն ասէ լինել կենաց կամ վարուց իւրաքանչիւր, Արդ գրեանք էգիալ յառաջնում տեղոջ՝ խմանալի են առաքինի հին և նոր, յորս ցուցեալ լինելին պատուիրանք առ ի յայ հրամայելոք. իսկ ի գրի կենաց իւրաքանչիւր՝ Թէ զինչ այլ իւրաքանչիւրք արարեալ իցեն կամ չարարեալ, Վիրք եԹէ նիւԹեղէն զայն վարկանիցիմք, ով ոք կշռադատել զնա՞ բա զինծուԹիւնն կամ զերկայնուԹիւնն կարիցէ. և քանի ժամանակ պիտոյ իցէ առ ի կարելոյ վերծանել զմատեանն յորում արձանագրեալ իցեն գոլորիցն քաղաքավարուԹիք. մեԹէ հրեշտակք զուգաԹիւ մերձ կայցեն ըստ համարոյ

մարդկան, և իւրաքանչիւր լուիցէ ընթեռնուլ զանցիւր վարս յոստիկան հրեշտակէ իւրմէ։ Այլա ուրեմն ոչ մի գիրք լինիցի ամենեցուն, այլ ուրոյն իւրաքանչիւր։ Ասայ մի գիրք լինել յայտ առնէ ասելն. "Այս այլ գիրք բացաւ.,, և "ասն որոյ խմանի աստանօր զօրութիւն ինն ձանձ-ւէն՝ որով յուշի լինիցի իւրաքանչիւրում գործք նոցա ամենայն բարիք կամ չարք, արագութիւք սքանչելի՝ի հայեցուածս մտաց անկեալք. որպէս զի գիտութիւն ամբաստան լիցի կամ անպարտ առնիցէ զնիզակ մտաց. և այնպէս ամենեքինեանդրա և իւրաքանչիւր դատեսցին միանգամայն։ Այս զօրութիւն ձայնին զգոյ ընկալաւ զանուն. զի յայնմ լինի իբր ընթեռնուլ՝ որ ինչ միանգամ յազդմանէ նորա գայ յուշ յիշատակի։ Իսկ առ՚ի յուցանելոյ որ մեռեալք իցեն դատելի՝ փոքունք և մեծամեծք, վերստին հանառաւ ինն իբր դարձ արարեալ յայն զոր Թոզեանն էր կամ յապղեալ, ասէ. "Այս ետ ծով զմեռեալս իւր, և մահ և դժոխք զկորեանց մեռեալս,,։ Այս լեալ էր ասպաքէն յառաջ քան զմեռելոցն դատիլ, և սակայն նախ այն ասացեալ. սորին վանս ասացի դառնալ վերստին յայն՝ զորով զանց արարեալ էր։ Իսկ այժմ զկարգն պահել կամեցեալ, և զնոյն բացայայտել, ի պողոպատէս զասացեալն յապագա մեռելոցն դատելեաց երկրորդէ յիւրում տեղոջ. զի յետ ասելոյն ետ ծով զմեռեալս իւր, և մահ և դժոխք զմեռեալս իւրեանց, անդէն զհետ կցէ զիրքն մի յառաջ եդեալն, "Այս դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց,,. և այս իսկ է զոր վերոյն ասացեալ էր։

ԳԻՄՈՒՄ ԺԱ

Ո՛յք են մեռեալքն՝ որ՚ի ծովէ տուան առ՚ի դատիլ. և ո՛յք զորս ետուն մահ և դժոխք։

Այս՝ ո՛րպիսք են այն մեռեալքն իցեն՝ զորս ծով՚ի վեր հ֊ման զեղեալսն՚ի նմին. զի ոչ եթէ՝ի ծովի մեռեալքն

չիցեն 'ի դժոխս. կամ մարմինք նոցա պահիցին 'ի ծովս. կամ զոր յանպատշաճիցն ե ասել, որպէս թէ ծով զառ րեզործ մեռեալն ուներ, և դժոխք զչարագործն. զայդ ո յանձն առնուցու. Ա՛յլ Տէրն զոտպակս ծով առնուն ո մանք աստանօր զայս աշխարհ։ Այլ զի յայտ առնիցէ թէ Ա՛ծ 'ի գալստեան իւրում զդատեալն դեռ 'ի մարմնի ունի դատել զդէպ ընդ յարուցելոցն, զայնոսիկ և մեռեալս անուանեաց. զաբրիան առ որս ասի. "Ա՛նդի մեռա րուք, և կենաքն ձեր ծածկեալ են ընդ Ա՛ծով յՅԾ ,, և զչարան որոց վասն ասի. "Ա՛ոյլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց ,, Այլ և, մարթ է մեռեալս ասել զնոսա՝ սակս մահկանացու կրելոյն մարմնոյ. քան առա քելոյ. "Ա՛արմին մեռեալ է վասն մեղաց, և հոգի կենդանի է վասն արդարութե ,, ցուցեալ զերկաքանչիւրն 'ի կենդանի մարդոյն լինել՝ մինչ 'ի մարմնի դեռ կայ, և թէ զմեռեալ մարմինն, և եթէ զկենդանի հոգին. բայց չասաց՝ մարմին մահկանացու, այլ մեռեալ. Թէպէտ և փորք մի զինչ մահկանացու և անուանէ զնոյն մարմինս՝ ըստ յաձախ կոչմանն։ Ա՛րդ զայսոսիկ մեռեալս ահա զորս 'ի նմայն կայիցն, առաջի կացոյց Ծոմն. այս է՝ աշխարհս ա ռաջի մատոյց զնե և վախճանեալսն որ կայիցն 'ի նմա։ "Ա՛չ մահ և դժոխք, ասէ, ետուն զմեռեալս իւրեանց ,, Ծոմն՝ այն է աշխարհս, մատոյց զորս 'ի նմա գտանե լինն. իսկ մահ և դժոխք անդրէն ետուն, 'ի կենաս դար ձուցանելով յորմէ լուծեալն էին։ Ա՛ղ վայրապար ինչ Թերևս չհամարեցաւ շատ ասել սոսկ մահ, կամ դժոխք. այլ զոզ ասացաւ՝ մահ վասն բարեացն, որք մահուան և եթ կրոզականք են՝ և ոչ դժոխոց. իսկ դժոխք վասն չարացն, որք և զդժոխական պատուհասս լուծանեն։ Ա՛նդի ոչ տա բադեալ ինչ են կարծիքն Թէ նա և արդարքն առաջինք որք 'ի Ա՛ծո գալուստ էին հաւատացեալք, Թէպէտ և կային 'ի տեղի զերծ բնաւ 'ի տանջանացն ամբաղձաց, բայց էին 'ի դժոխս նեղբերիս, մինչև արեամբ Ա՛ծո և իջ մամբն յայն վայրս՝ արտաքս կորզեցան. և այնուհետև հաւատացեալքն բարեգործք՝ որք փրկանաւորեցան զնոյն

վճարմամբ, ոչ ևս ճանաչէին ընաւ դժոխս, ակնկալեալք 'ի զգենուլ անդրէն զմարմինսն՝ ընդունել զբարիսն արժանի ըստ վաստակոց ։ Իսկ իբրև ասաց՝ թէ “ Եւ դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց ”, յաւելու համառօտիւ զգլխաւորդն դատելոյն. ասէ. “ Մահ և դժոխք մատնեցան 'ի լիճ հրոյն ”. Նշանակեալ անուամբք այսոքիւք ոչ միայն զսատանայ՝ զսկզբնաւորն մահու և դժոխական պատուհասից, այլ և զբոլոր ժողով դիւաց միահամուռ ։ Զի այս իսկ է՝ զոր կանխելովն յայտնագոյն ասաց վերագոյն, թէ սատանայ որ մոլորեցոյց զնոսա, արկաւ 'ի լիճ հրոյ և ծծմբոյ. և զոր անդ աղօտաբար իմն ասաց, “ Ուր էր գազանն և սուտ մարգարէն ”, աստանօր յայտնաբանեաց. “ Եւ որ ոչ ոք գտաւ 'ի գիրն կենաց գրեալ, արկաւ 'ի լիճ հրոյն ” ։ Այս գիր կենաց ոչ եթէ առ ա͞ծ յիշեցուցանէ՝ առ 'ի չսխալելոյ ինչ մոռացութ͞ք, այլ նշանակէ զյառաջագոյն հրաւիրանս, իմա զնախասահմանութ͞ի այնոցիկ որոց կեանք յաւիտենական՝ շնորհելոց է ։ Քանզի ոչ եթէ անգիտանայ զնոսա ա͞ծ, և յայսմ գրի ընթեռնու առ 'ի գիտել, այլ մանաւանդ անվրիպելի նորայն յառաջգիտութ͞ի զնոցանէ՝ գիր կենաց է, յորում գրեալ կան, այս է՝ յառաջագոյն ծանուցեալք ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս նորոյ երկնի և նորոյ երկրի ։

ԶՉԱՐԱՑՆ դատաստան նախապատմեալ՝ որով դատելոցն են, հնայ և զբարեացն ասել. զի յետ բացայայտելոյ ըղկարճառօտ ասացեալն ա͞ծն, “ Երթիցեն նոքա 'ի տանջանս յաւիտենականս ”, 'ի դէպ գայ բացայայտել և զնորա զկըցորդն. “ Եւ արդարքն 'ի կեանսն յաւիտենականս ” ։ Արդ ասէ. “ Եւ տեսի երկին նոր և երկիր նոր. քանզի առաջինն երկինք և երկիր եանց. և ծով ոչ գոյր ” ։ Այ-

սու կարգաւ գործեսցին իրքն, ըստ որում կանխելովն ասաց. "Տեսի զնստեալն 'ի վերայ աթոռոյ, յորոյ երեսացն փախչէին երկինք և երկիր,,: Քանզի 'ի դատել անգրելոցն 'ի գիրն կենաց, և յարկանել 'ի հուրն յաւիտենական, զորմէ հրոյ թէ որպիսի՛ իցէ և յորում կողման աշխարհի կամ գոյիցս լինիցի, կարծեմ 'ի մարդկանէ գիտէ և ոչ ոք, եթէ ոչ 'ի հոգւոյն այ̃ ուսեալ թերևս գիտասցէ, յայնժամ կերպարանափոխ եղիցի աշխարհս 'ի հրակիզմանէ երկրական հրոյն, զոր օրինակ 'ի յորդութ̃է երկրական ջուրցն գործեցաւ ջրհեղեղն: Հրայրեցութ̃բ այնուիկ որակք ապականացու տարերաց՝ որ համապատշաճք էին մերոյ ապականելի մարմնոյ, իսպառ ծախեսցին 'ի բորբոքմանէն. և գոյացութ̃ի մարմնոյ որակս զգենուցու այնպիսի, որ անմահացու մարմնոց իցեն վայելչականք զարմանահրաշ փոփոխմամբ. որպէս զի աշխարհի նորոգելով 'ի լաւագոյնսն, մարդկան 'ի լաւագոյնսն նորոգեցելոց մարմնով՝ լինիցի քաջադէպ յարմարեալ: Իսկ զոր ասէ, "Եւ ծով ոչ գոյր,,, ցամաքեսցի՞ այն արդեօք յամենածախ բորբոքմանէ անտի, և կամ 'ի լաւագոյնսն փոխադարձցի, սահմանաւ ասել ոչ իշխեմ. քանզի թէ երկին նոր լինիցի և երկիր նոր՝ զայդ ընթեռնումք. այլ զնորոյ ծովէ ոչ յիշեմ ընթերցեալ ուրեք, բայց զի յայս 'ի սմին գրի գտանի ասացեալ "Ծով ապակեղէն նման սպիտակութ̃ե սառին,,: Սակայն յայնմ վայրի ոչ զկատարածէ աշխարհի էր բանն, և ոչ յաղագս ծովու թուի խօսել տիրապէս, այլ որպէս ծով ասէ: Այլ աստանօր ևս՝ իբրև զի մարգարէականն լեզու ախորժէ խառնել 'ի յատուկ խօսս և զայլաբանականսն, պատրուակել իմն զասացեալն կամելով, մարթ է բանիւս, "ծով ոչ գոյր,,, զայն իմանալ՝ զորմէ յառաջն ասացեալ էր. "Եւ ետ ծով զմեռեալս իւր,,: Վասն զի յայնժամ ոչ ևս լինիցի աշխարհս ամբոխեալ և մրրկածուփ սակս մահկանացուացս կենաց, որով յանուն ծովու առակեցաւ:

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս անվախճան փառաւորութե եկեղեցւոյ յետ կատարածին ։

“Եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի, ասէ, զի իջանէր յայ և յերկնից, զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն՝ առն իւրոյ ։ Եւ լուայ ձայն յերկնից որ ասէր. աՀաւասիկ խորանն այ 'ի մէջ մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա, և նոքա ժողովուրդք նմա, և սա ած նոցա. և ջնջեսցէ զամենայն արտօսր յաչաց նոցա. և մահ ոչ ևս գոյ. ոչ սուգ, և ոչ աղաղակ. ոչ ցաւք և ոչ աշխատանք ոչ ևս գոյ. զի առաջինն էանց ։ Եւ ասաց ցիս որ նստէր 'ի վերայ աթոռոյն. աՀաւասիկ առնեմ զամենայն նոր„ ։ Յերկնից իջանել ասի քաղաքս այս, վասն զի երկնային են շնորհքն՝ որով կազմեաց զայն ած. ուստի և Եսայեաւ ասէ առ նա. “Ես եմ տէր որ հաստատեցի զքեզ„ ։ Ապաքէն 'ի սկզբանէ անտի իւրմէ իջանէ այն յերկնուստ, յորմէ հետէ ընդ ամենայն դարս աշխարհի երկնառաք շնորհօքն այ գամ քան զգամ աճեն քաղաքացիք նորա 'ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն երկնառաք հոգւոյն սրբոյ ։ Սակայն 'ի դատողութե այ յետնում՝ որ լինիցի 'ի ձեռն որդւոյ նորա Յսի Քսի, այնչափ իմն նորահրաշ երևեսցի նորայն փառաւորութիւն, մինչև չմնալոյ և ոչ միոյ նշմարանաց հնութե, յորժամ և մարմինք յառաջնոյ անտի ապականութէ և 'ի մահկանացութէ յանապականութի յեղանակեսցին և յանմահութիւն նոր ։ Վասն զի կարի ծանծաղամտութե ինձ թուի՝ իմանալ զասացեալդ յաղագս արդեան ժամանակիս, յորում քաղաքդ թագաւորէ ընդ արքայի իւրում հազար ամ, ուր մեկնապէս ասէ բանդ, թէ “Ջնջեսցէ ած զամենայն արտօսր յաչաց նոցա. և մահ ոչ ևս գոյ. ոչ սուգ և ոչ աղաղակ. ոչ ցաւք„ ։ Իսկ ո՞ այն յետսամիտ ոք իցէ, և առ 'ի պայքարելն ապառում, որ իշխիցէ պնդել թէ 'ի տառա-

պանս մահկանացու կենացս ոչ միայն ժողովուրդն սուրբ , այլ անցնիւր 'ի սրբոցն որ այսու կենօք վարեալ իցէ , կամ վարի և կամ վարելոցն է , անուանակ լինիցի արտասուաց և ցաւոց . ուր 'ի հակառակէն՝ առաւելեալն 'ի սրբութե և որ լին է հօգևոր տարփանօքն՝ նոյնչափ և արտասուեղ է յաղօթելն . ո՞չ ապաքէն քաղաքացւոյ վերնային Երուսաղէմի է բարբառս . "Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի ,, . և "Լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ , և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի ,, . և "Հեծութի իմ 'ի քէն ոչ ծածկեցաւ ,, . ևս "Ցաւք իմ նորոգեցան յիս ,, ։ Ո՞չ աւանիկ նորին են որդիք՝ որք հեծեն ծանրացեալք , զի ոչ կամին մերկանալ , այլ 'ի վերայ այսր զգենուլ , զի ընկղմեսցի մահկանացուս 'ի կենաց անտի ։ Ո՞չ նոքին իսկ են՝ որք զպտուղ հոգւոյն ունելով , անձամբ յանձինս հեծեն , որդեգրութենն ակընկալեալք փրկութե մարմնոյ իւրեանց ։ Միթէ Պօղոս առաքեալ ո՞չ էր ինքն երուսաղէմացի վերնային , և քանիօն առաւել՝ յորժամ վասն խորշելացւոց եղբարցն ըստ մարմնոյ տրտմութի էր նմա յոյժ , և անպակաս ցաւք սրտի նորա ։ Իսկ երբ արդեօք մահ ոչ իցէ յայսմ քաղաքի , բայց յորժամ ասիցի . "Ո՞ւր է մահ յաղթութի քո , ո՞ւր է դժոխք խայթոցքն քո . խայթոց մահու մեղք են ,, ։ Ա՛յս յայնժամ ապաքէն ոչ լինիցի , յորժամ ասի՝ ո՞ւր է ։ Իսկ յայժմուս ոչ եթէ մ՛ր և է տրուպ քաղաքացի այսր քաղաքի , այլ Յովհաննէս ինքնին աղաղակէ յիւրումն թղթի . "Եթէ ասիցեմք թէ մեղս ինչ մեք ոչ ունիմք , ստեմք , և ճշմարտութի 'ի մեզ ոչ գոյ ,, ։ Եւ 'ի սմին իսկ 'ի յայտնութե գրիս բազում ինչ ընդ աղօտ ասին առսթափ գործելոյ զընթերցանելեացն միտս . և սակաւք են 'ի սմա՝ յորոց պարզաբանութե այլքն արտայայտին աշխատութե . մանաւանդ զի բազմօրինակաբար զնոյնս յեղյեղելով . այլ ինչ և այլ կարծի ասել , ուր 'ի քնին եղեալ՝ տեսանի զնոյն ինչ ասել այլով բանիւ ։ Բայց արդ 'ի բանքս ասացեալ , "Ջնջեսցէ ած զամենայն արտօսր յաչաց նոցա . և մահ ոչ ևս գոյ , ոչ սուգ և ոչ աղաղակ ,, ։

այնչափ լուսաւորան են իմաստքն յաղագս հանդերձելոյ աշխարհին, և վասն անմահութեն և մշտնջենաւորութեն սրբոց, իբր զի յայնժամ միայն և անդանօր միայն չլինիցին այդպիսիկ. մինչ զի եթէ աղօտաբանս և զայդոսիկ համարիցիմք, չմնայ մեզ այլ ևս յայտնականս որոնել կամ ընթեռնուլ 'ի սուրբ գիրս.

ԳԼՈՒԽ ԺԲ.

Զինչ յաղագս վերջին դատաստանին այ քարոզեաց առաքեալն Պետրոս.

ՏԵՍԱՆԵԼ արդ ժամ է, զինչ և Պետրոս առաքեալ գրեաց յերկրորդ թղթի յաղագս յետին դատաստանին. «Յաւուրս յետինս եկեսցեն, ասէ, արհամարհողք այպանողք, որ ըստ իւրեանց ցանկութեցն գնասցեն և ասիցեն. ո՞ւր են աւետիք գալստեան նորա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին, ամենայն ինչ նոյնպէս կայ մնայ 'ի սկզբանէ արարածոց. Եւ զայն մոռացեալ իցէ նոցա որ զայսն կամին, եթէ երկինք էին 'ի սկզբանէ, և երկիր 'ի ջրոց, և ջուրք հաստատեալ կան բանիւն այ. վասն որոյ երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ. Եւ այժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ են, հրոյ պահեալք յօրն դատաստանի, և կորստեան ամբարիշտ մարդկան. Եւ այս ևս մի լիցի 'ի ձէնջ ծածկեալ, սիրելիք. զի մի օր տեառն իբրև զհազար ամ է, և հազար ամ իբրև զմի օր. Ոչ յամեցուսցէ տէր զաւետիսն, որպէս ոմանք յամրըն համարին. այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի թէ ոք կորիցէ, այլ զամենեցուն հասանել յապաշխարութի. Այլ եկեսցէ օր տեառն իբրև գող. յորում երկինք տագնապաւ անցցեն, և բնութիք հրով կիզեալ լուծցին, և երկիր և որ միանգամ 'ի նմա գործք գտանիցին. Եւ 'ի լուծանել այսպէս այսր ամենայնի, որպիսի ինչ պարտ իցէ գտանել, այլ սուրբ և ածպաշտ կարգաւ

ակնունել, և փութալ հասանել գալստեան աւուրն տեա-
ւրն, յորում երկինք հրայրքացք լուծանիցին, և բնու-
թիք հրդեհեալ հալեցին։ Եւ որոյ երկինից և նորոյ երկրի
ըստ աւետեացն հայեցեալ սպասեմք, յորս արդարութիւն
բնակէ ։։ Վէ ինչ ասասցուք յաղագս յարուն մեռելոց ա-
սաց, այլ ասաց լուռ յաղագս կորստեան աշխարհիս. ուր
և՝ ի յոչ բերեալ զանցս՝ որ նախ քան զքննհղեղն, թուի
զեկուցանել մասամբ ինն՝ թէ որով օրինակաւ զկորնչել
այսր աշխարհի հաւատամք՝ ի կատարածի աշխարհի.
քանզի և զաշխարհ որ յայնժամն էր՝ կորուսեալ ասաց
ջրհեղեղաւ. ոչ միայն զերկիրս համատարած, այլ և զեր-
կինս, որով ի խմանալ անչուշտ զգայինս զայս՝ գրաւեալ
համայն ընդարձակութիւնն՝ ի ջուրցն յորդութիւ։ Այս
ուրեմն բովանդակ գոգեալ այս օդք հողմայոյզ, զոր եր-
կին կամ երկինս կոչէ, յայտ է թէ զի՝ նեքքղքղ՝ և ոչ ըղ-
վերկինսն՝ ուր արեւակն և լուսին և աստեղք հաստատեալ
կան, փոխարկեալ ինն էին՝ ի խռնաւուտ բնութիւն, և այն-
պէս կորուսեալ էին ընդ երկրի, որոյ երեսք ապականեալ
էին ջրհեղեղաւն։ Այժմ, ասէ, երկինք և երկիր նո-
վին բանիւ գանձեալ են, հրոյ պահեալք յօրն դատաս-
տանի, և կորստեան ամբարիշտ մարդկան ։։ Այն ո-
րոյ ասէ՝ այն երկին և երկիր, այս է՝ աշխարհն որ փո-
խան աշխարհին ջրհեղեղոյն եղելոյ նորոգեալ պահե-
ցեալ նովին ջրոյք, նոյն գանձեալ կայ՝ ի ծախումն յա-
ւիս հրոյն յօրն դատաստանի և կորստեան ամբարիշտ
մարդոց։ Օ՛ի և մարդկան ասել զկորնչելն՝ ոչ ինչ խղճէ
՝ի պատճառս մեծի փոփոխմանն. սակայն մնալով անասցէ
նոցայն բնութիւն, թէ և՝ ի պատժաւորութիւն յաւիտենից։
Այլ խնդիր առնիցէ ոք թերևս, զի թէ յետ դատաստա-
նին լինելոց հրդեհելոցի այս աշխարհ, մինչ չև փոխանո-
գեալ զնա նորոյ երկինիւն և նորոյ երկրի, ուրանօր արդեօք
գտանիցին սուրբքն՝ ի հրդեհմանն ժամանակի, իբրև
զի մարմին ունելոյ նոցա՝ հարկ է՝ ի մարմնական տեղւոջ
ուրեք լինել։ Հնդիմք պատասխանել, թէ լինիցին՝ ի
բարձրագոյն կողմանս՝ ուր հրդեհին բոց ոչ վերանայցէ,

զոր օրինակ և ոչ ջրհեղեղին ողողմանք. քանզի այնպիսի եղիցին նոցա մարմինք, զի ուր կամիցինն՝ անտանօր և կայցեն։ Սակայն և ոչ երկիւղ է նոցա 'ի հրոյ բոցակիզմանն՝ անմահս լինելով և անապականելիս. ուր և երիցն մանկանց ապականելի մարմինքն և մահկանացուք զօրեցին կեալ անշիջանելի 'ի հնոցին բորբոքելոյ։

ԳԼՈՒԽ ԺԹ

Զինչ առաքեալն Պօղոս առ Թեսաղոնիկեցիս գրեաց, և յաղագս յայտնութեան նեռինն, զորոյ զհետ գայցէ օր տեառն։

ԶՅՈԼՈՎՍ յաւետարանականացն և յառաքելական աստուածոց որ յաղագս ա՟ծային վերջնումն դատաստանի՝ թողլի կարծեմ, զգուշացեալ զի մի քան զչափ երկայնեսցի մատեանս. սակայն զառաքելոյն Պօղոսի առ Թեսաղոնիկեցիս զգրեալսն չէ և չէ պարտ զանց առնել։ «Աղաչեմ զձեզ եղբարք, ասէ, վասն գալստեան տեառն մերոյ Յ՟ի Ք՟ի և մերոյ ժողովելոյն առ նա, մի վաղվաղակի խռովել ձեզ 'ի մտաց և մի զարհուրիլ, մի հոգւով և մի բանիւ և մի թղթովք իբրև թէ 'ի մէնջ, որպէս թէ եկեալ հասեալ իցէ օր տեառն։ Մի ոք ընդ ձեզ խաբեսցէ, և մի իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութի՟ն, և յայտնեսցի մարդն անօրէնութե՟՝ որդին կորստեան, հակառակորդն հպարտացեալ 'ի վերայ ամենայնի որ անուանեալ իցէ աստուած կամ պաշտօն, մինչև նստել նմա 'ի տաճարին ա՟յ, և ցուցանել զանձն թէ աստուած իցէ։ Ո՞չ յիշէք, զի մինչ առ ձեզն իսկ էի՝ ասէի զայս. և արդ դուք ինքնին գիտէք զայն՝ որ ունին յայտնել նմա յիւրում ժամանակի. զի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ. բայց յայնժամ՝ մինչ 'ի միջոյ բարձցի որ այժմդ ունի. և ապա յայտնեսցի անօրէնն, զոր տէր Յիսուս սատակեսցէ հոգւով բերա-

նոյ իւրոյ, և խափանեսցէ յայտնութեամբ գալստեանն
իւրոյ։ Որոյ գալուստն ըստ ազդեցութեանն սատանայի է,
ամենայն զօրութիւք և նշանօք և արուեստիւք ստովք, և ա-
մենայն պատրանօք անիրաւութիւն ի վերայ կորուսելոցն.
փոխանակ զի զսէրն ճշմարտութիւն ոչ ընկալան՝ զի ապրե-
ցին. և վասն այնորհի առաքեսցէ նոցա Ած ազդեցութիւն
մոլորութիւն, հաւատալ նոցա ստութեն. զի դատապար-
տեսցին ամենեքեան որ ոչ հաւատացին ճշմարտութեն,
այլ հաճեցան ընդ անօրէնութեն։

Ի ուժէ գոյ յերկուանալ՝ թէ յաղագս Եւհելինն խօ-
սի, և թէ դատաստանին օր, զի զայն անուանէ օր
տեառն, ոչ եկեսցէ՝ թէ ոչ նախ գայցէ այրն՝ ապստամ-
բութիւն կոչեցեալ, յայտ է թէ ի տեառնէ ՚այ. որ եթէ
բոլորից ամբարշտաց վայրէջական անուն է, որպէս և
մարդոյն այմ։ Ի. Ասէ թէ յորժամ տաճարն ՚այ նստեալց
իցէ նա, հաւատի ոչ է, արգելօք յաւերածի տաճարին
կառուցելոյ յարբայէ Պողմանէ, եթէ յեկեղեցւոջ. զի ոչ
՚ի դէպ է թէ զտաճար կոց ումանց կամ դիւաց՝ ՚այ տա-
ճար կոչիցէ առաքեալն։ Ի. Յորիկ աղագաւ ումանք աս-
տանօր ոչ զբուն իշխանն, այլ համայն զմարմին նորա,
այս է՝ զգազմութիւն մարդկանն յարելոց ՚ի նա իշխանաւն
հանդերձ իմանան ասել՝ Եւհելն. և ուղղակի և համարին
Թարգմանել զպետականն՝ ոչ ՚ի տաճարին, այլ ՚ի տաճար
՚այ. որպէս թէ ինքն նստիցի իբր տաճար ՚այ, որ է եկե-
ղեցի. զոր օրինակ յասելն լատին ոՀով՝ նստի ՚ի բարե-
կամ, այս է՝ իբր բարեկամ. և կամ որ այլ և նոյնօրի-
նակ ձև բանից։ Իսկ զոր ասէ, դուք ինքնին գիտէք որ
այժմ ունի, այս է՝ գիտէք հիմ անագանի, որ պատճառ
յայտնմանն իցէ՝ յայտնիլ նմա յիւրում ժամանակի. և
զի գիտէ նոցա ասաց, մեկնապէս զսմն ակամեցաւ դնել
առաջի. նմին իրի որք անգիտանամբք զոր նոքայն գի-
տէին, աչխատութիւք ցանկամբ հասու լինել մտաց առա-
քելոյն, և կարեմք ոչ. մանաւանդ զի զհետ յաւելեալ
քըն առաւել և մասյլ արկանէն յիմաստան. քանզի
զինչ այն իցէ "Այորհուրդն անօրէնութեն արդէն իսկ զո-

բանայ . բայց յայնժամ՝ մինչ՝ ի միջոյ բարձցի որ այժմդ ունի . և ապա յայտնեսցի անօրէնն ,, : Իդարեւ զոր ասէն՝ ես անգիտանալ բնաւ խոստովանիմ . բայց զայլոց արանց զկարծիս՝ զորս եղև ինձ լսել կամ ընթեռնուլ ոչ լռեցից :

Համարեցան ոմանք յաղագս հռովմէական տէրութեն խօսել . և վասն այն վարագուրաւ կամեցեալ Պօղոսի գրել, զի մի զղջպարտանս կրիցէ՝ իբր չարիս ինն ցանկալով հռովմէական պետութե , որ մշտնջենն կարծիւր . և զասելն՝ խորհուրդն անօրէնութե արդէն իսկ զօրանայ , ՝ի Ւերեն ակնարկել կարծեն . որոյ արարուածք զԼռիւնն բերելն զգուշակութե . մինչ զի կասկածեն ոմանք թէ նա ինքն յառնելոց է , և Ւեռն լինելոց : Իսկ այլք համարին՝ թէ և ոչ իսկ սպասաւ նա , այլ ծածկեցաւ յաչաց՝ կարծիս տալ սպասման , և թէ կէնդանի կայ զօրեալ ՝ի նմին առուգութե հասակի՝ յորում էրն յորժամ մեռեալ կարծեցաւ . մինչև ապա յայտնեսցի յիւրում ժամանակի՝ առնուլ անդրէն զձագաւորութե : Ի յլ ինձ արդարեւ զարմանս մեծ է ընդ կարծողացդ անընտրող համարձակութե , Ասկայն զայն զոր ասէ առաքեալ , ,,Իայց յայնժամ, մինչ՝ի միջոյ բարձցի որ այժմդ ունի ,, ոչ տարադէպ ինչ է յաղագս հռովմէական տէրութե կարծել . իբր ասէ . միայն թէ որ այժմդ տիրէ՝ տիրեսցէ , մինչև բառնայցի ՝ի միջոյ : ,,Եւ ապա յայտնեսցի անօրէնն,, որով զՒեռն նշանակեալ ոչ զբ երկբայի : Իսկ այլք գարձեալ զասելն , գուք ինքնին գիտէք զայն որ ունիւն , և թէ՝ խորհուրդն անօրէնութե զօրանայ , հայեցուցանեն ՝ի չարագործն և ՝ի կեղծաւորս՝ որ յեկեղեցւոջ գտանին . մինչև բազմանայցէն նոքա ՝ի թիւ՝ որ բաւական իցէ կազմել Ւեռին ժողովուրդ բազմաձեռն . և այս խորհուրդ անօրէնութե է , զի գաղտնի երևի : Իսկ առաքեալն խրատէ զՀաւատացեալսն՝ սկզբանէս ժուժկալել ՝ի հաւատոն զոր ունին , ասելովն միայն թէ որ այժմդ ունի՝ կալցի , մինչև ՝ի միջոյ բարձցի , այս է՝ մինչև յերևան ելցէ ՝ի միջոյ եկեղեցւոյ խորհուրդն անօրէնութե ,

որ յայժմուս թաքուն է։ Սակայն զի 'ի սոյն ակնարկել համարին զասել Յովհաննու աւետարանչի յիւրում թղթի. «Որդեակք, յետին ժամանակ է. և որպէս լուարուք եթէ Նեռն գալոց է. և արդէն իսկ Նեռինք բազումք եկեալ են. ուստի մարթեմք իմանալ՝ եթէ յետին ժամանակ է։ Ի մէնջ ելին, այլ ոչ էին 'ի մէնջ. զի եթէ 'ի մէնջ էին, ապա առ մեզ մնային»։ Ապա զոր օրինակ ասեն նախ քան զկատարածն յայսմ իսկ ժամանակի՝ զոր Յովհաննէս կոչէ յետին, յառաջ եկին աղանդաւորք բազումք 'ի միջոյ եկեղեցւոյ, զորս Նեռինս բազումս անուանէ, նոյնօրինակ յայնժամ 'ի կատարածին 'ի վեր երևեսցին յեկեղեցւոյ՝ պատկանեալքն ոչ 'ի Քս, այլ 'ի Նեռնն վերջին, և յայնժամ յայտնեսցի նա։

Այլ արդ ուր զմթին զայսոսիկ խօսս առաքելոյն ոմն այսպէս մեկնաբանէ և ոմն այնպէս, տակաւին աներկբայելի է զայն ասել՝ թէ ոչ գայցէ Քս 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, թէ ոչ նախ եկեսցէ հակառակորդ նորա՝ Նեռն՝ առ 'ի մոլորեցուցանելոյ զմեռեալսն հոգւով. թէպէտև այն իսկ զի մարդիկ նովաւ մոլորեսցին՝ այ գաղտնի դատաստանացն է գիտելի։ Քանզի «Գալուստ նորա, որպէս ասացաւ, ըստ ազդեցութեան սատանայի է, ամենայն զօրութեամբ և նշանօք և արուեստիւք ստովք, և ամենայն պատրանօք անիրաւութեան 'ի վերայ կորուսելոցըն»։ Զի յայնժամ սատանայ արձակեսցի, և ընդ ձեռն Նեռինն գործեսցէ յամենայն զօրութեան իւրում հրաշալիս իմն, այլ պատիրս. ընդ որ գոյ տարակուսանս, միթէ նշանս և արուեստս սուտս այնր աղագաւ ասացաւ, զի երևութիւ առաջօք կախարդելոցն զմարդկան զգայարանս, առնել ձևանալով զոր ոչն առնէ, եթէ արդեօք ստոյգ արուեստք իցեն, այլ 'ի պատրանս ձգեն զայնոսիկ՝ որք համարիցին յանձուստ միայն իրագործիլ այնպիսեաց, անգիտակք ելով զօրութեան սատանայի, ևս առաւել յորժամ այնքան առնուցու իշխանութիւն, որքան ոչ այլ ընաւ երբէք։ Զի ոչ եթէ առաջօք ինչ գործեցան՝ յորժամ հուր յերկնից անտի թափեալ՝ զծառայիցն բազմութիւն Յո-

բայ արդարոյ յոքնաթիւ անդիմալք հանդերձ՝ ի մի չուննչ ծախեաց, և մրբիկ փոթորկեալ տանին կործանմամբ՝ գնոր բա զբրդիսն մահացոյց. և ահա այդոքիկ սատանայի եղեն արարք՝ ի տալ նմա այ զայն իշխանութիւն։ Խայց արդ թէ այր վասն ասացան արուեստ և նշանք սուտք, յայնժամ առաւել ծանիցի. այլ զիարդ և ասիցի, մոլորեալքն ապաքէն այնոքիւք նշանօք և արուեստիւք արժանաւորքն՝ ի մոլորիլ, "Վասնանակ զի զսէրն չէմարտութեն ոչ ընկալան զի ապրեսցին,, ։ Լչ ոչ դանդաղի առաքեալ զնոսն կրկնել ասելով. "Վ ասն այնորիկ առաքեսցէ նոցա ՚ած ազդեցութիւն մոլորութեն, հաւատալ նոցա սուտիցեն,, ։ Լ՚ծ առաքեսցէ, զի նա թողացուցանէ սատանայի առնել զայսոսիկ, ինքն ապաքէն արդարացի դատաստանաւ, թէպէտ և նա գործէ անօրէն խորհրդով և չարիմաց։ "Օ՚ի դատապարտեսցին ամենեքեան որ ոչ հաւատացին չէմարտութեն, այլ հաճեցան ընդ անօրէնութիւն,,։ Վ՚ինչ իրի դատապարտեալք մոլորեսցին, և մոլորեալք դատապարտեսցին։ Վ՚ատեալք մոլորեսցին այ դատաստանաւն՝ որ ծածկակաչս արդարն է, և արդարապէս ծածուկ, որով ՚ի սկզբանէ անտի յանցանելոյ բանաւոր արարածոց՝ ոչ զանց արար ՚ի դատելոյ. իսկ մոլորեալք դատեսցին ՚ի վերջնումն յաշխարհատես դատաստանի ՚ի ձեռն Քրիստոսի՝ որ ամենայն իրաւամբք դատելոցն է՝ բնաւ յանիրաւի դատեցեալն։

ԳԼՈՒԽ Ի

Ջ՚ինչ յաղագս մեռելոցն յարութեն ուսոյց առաքեալ յառաջնումն առ Թեսաղոնիկեացիս Թղթին։

Ա ՈՒԻԹԵԱՄԲ անց առաքեալն աստանօր յերկրորդումն Թղթիս յաղագս յարութեն մեռելոց. բայց գրելով առ նոսա ՚ի Թղթին առաջնում, ասէ. "Ա՚ղ կամիմ եղբարք՝ ե՚թէ տգիտաք իցէք վասն նոքին եղելոցն, զի մի տրտմիցիք որ

պէս և այլքն՝ որոց ոչ գոյ յոյս ։ Լ՚ԵԹԷ հաւատամք եԹԷ
Ի՚ա մեռաւ և յարեաւ , նոյնպէս և նոքա զնեցեալսն ՚ի
ձեռն Իեսի ածցէ ընդ նմա ։ Ո՚այց զայս ասեմք տեառն
բանիւ , ԹԷ մեք որ կենդանիքս եմք մնացեալք՝՚ի գալուս-
տեառն տեառն ոչ ժամանեմք նոքեցելոցն . զի ինքն տէր
հրամանաւ ՚ի ձայն հրեշտակապետի և ՚ի փող այ իջանէ
յերկնից , և մեռեալք ՚ի Ա՚ա յարիցեն յառաջագոյն ։ Լ՚ա-
պա և մեք որ կենդանիսն մնացեալ իցեմք , նոքօք հան-
դերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ տեառն յօդս .
և այնպէս յամենայն ժամ ընդ տեառն լինիցիմք ։ ։ Լ՚ա-
քելական բանքս յայտնաբերաբար ցուցանեն ԹԷ յարու-
ԹԻՆ լինելն է մեռելոցն՝ ՚ի գալ Ա՚նի տեառն առ ՚ի դա-
տելոյ կենդանիս և զմեռեալս ։

Լ՚ԱՀ հարցաքննուԹիւն շարժի աստանօր , միԹԷ կեն-
դանեայն գտեալքն առ գալստեամբն Ա՚նի , զորոց զդէմն
յինքն և յայրը ժամու կենակիցն պատշաձեցուցանէր
առաքեալն , ոչ արդեօք այլ մեռանելոց իցեն , և կամ ԹԷ
՚ի նմին իսկ պահու յորում՚ ՚ի միասին ընդ յարուցելոցն
յափշտակեսցին ամպովք ընդ առաջ տեառն յօդս , փո-
խեսցին անկռռելի արագուԹԻ՚ ՚ի մահուանէ յանմահու-
ԹԻՆ . զի ոչ անհնարաւոր ինչ ասել մարԹ է՝ ԹԷ ՚ի վե-
րաձևելնոցա յօդս՝ յայն միջոց վայրկ և մեռանիցեն և
կենդանասցին ։ Ո՚ր զոր ասէն ՚՚ Լ՚ա այնպէս յամենայն
ժամ ընդ տեառն լինիցիմք ՚՚, ոչ յայն միտս պարտ է առ-
նուլ՝ որպէս ԹԷ յօդս անդր կալոց մնալոց իցեմք միտ ընդ
տեառն , զի և ոչ նա անտանօր մնալոց է , այլ եկեալ ան-
ցանիցէ , քանզի եկեալն լինի ընդառաջել , և ոչ զտեղի
առողջն՝ այլ իմանի՝ այնպէս ուղեղով մարմնոյ մշտակայ՝
ընդ նմա լինիցիմք ամենայն ուրեք ։ Լ՚ԱՀ ԹԷ հաւանելի
վարկանիմք՝ կենդանի յայժամ գտելոցն եա՚ի սուղ միջոց
ժամանակին լինել՚ի մահու , և զգենուլ զանմահութԻՆ ,
՚ի դոյն իմաստս Թուի ԹԷ ստիպէ զմեզ և առաքեալ յա-
սել անդ . ՚՚ Ո՚նիւ ամենեքին կենդանասցին ՚՚ . ուր յայ-
լսւմ վայրկ յաղագս յարուԹԻՆ մարմնոց խօսելով ասաց .
՚՚ Ո՚նու զոր սերմանեան , ոչ կենդանանայ՝ եԹԷ ոչ մեռա-

նիցէ ,, ։ Իբր ասա կենդանիքն գտեալք ի գալստեան Քրիստոսի կենդանատուական նոմանք յանմահականութիւն եւ մեռանիցին, ուր ի գոյն սակս ասացաւ ,, Ով որ սերմանեսցի, ոչ կենդանասցի՝ եթէ ոչ մեռանիցի ։ Կամ եթէ սերմանել զմիոյ մարմնոյ մարդկան ասիցեմք տիրապէս , որք մեռանելով ի հողս լուծանիցին , որպէս և ածասասան գտատիւիրք առ նախայայնցն հայր մարդկութեանս պատճանել ,, Հող էիր , և ի հող դարձցիս ,, , ըստ այդմ ասա մեռեալ խոստովանեալ թէ նոքին զորս եկեալ Քրիստոս չկերակացեալս ի մարմնոյ իւրեանց , ազատ են ի բանից և առաքելոյն և ծննդոցն . վասն որ չտիրտակեալք յօդս անդր ի վեր՝ յայտ է թէ ոչ սերմանին . զի ոչ ի հող գնան , և ոչ ի հողոյ դարձ առնեն, եթէ անփորձք բնաւ ի մահուանէ մեռեալք ։

Այլ սակայն այլ ինչ մի գայ ի մէջ նոքին առաքելոյ ասացեալ ի խօսքին առ կորնթացիս յաղագս յարութեան մարմնոց . այն է ,, Մեռանելեան յարիցուք ,, . կամ ըստ այլոց օրինակաց ,, Քնանեքեան ննջեսցուք ,, ։ Իսկ արդ եթէ ոչ յարութիւն մարդի լինէր առանց մահու կանխելոյ , և ոչ ննջումն այլ ազգ իմանալ մարթէ ի տեզրոյն՝ բայց զմահ ևեթ , զիարդ ապա ամենեքին կամ ննջիցեն կամ յառնիցեն , յորժամ շատ որ գտեալքն յայնժամ ի մարմինի՝ ոչ ննջիցեն և ոչ յառնիցեն ։ Վասն այսորիկ եթէ զարդարան զկենդանի գտեալս ի Քրիստոս գալստեանն, և նմին ընդ առաջ վերասացեալս՝ համարիցիմք ի մահկանացու մարմնոյն ելանել ի յափշտակման անդ , և իսկ և իսկ ի նոյնս դառնալ անմահացեալս , այսու ասա ոչ միով իւրք վարանիցիմք ի բանս առաքելոյն , եթէ յաւելն ,, Ով զոր սերմանեսն, ոչ կենդանասցի՝ եթէ ոչ մեռանիցի ,, , և եթէ յասել անդ ամենեքեան յարիցուք , կամ ննջեսցուք . քանզի և ոչ նոքին կենդանասցին անմահութեան , թէ ոչ առ փոքր մի ժամանակ մեռանիցին նախ . որով ոչ անհաւն լինիցին ի յարութեան , զոր կանխեաց ննջումն թէ և առ սուղ ինչ պահ , բայց ոչ թարմատար ։ Իսկ ես վասն չհաւատալոյ մեզ ինչ թուիցի՝ այնր մար-

միոյն բազմութեան սերմանանալ գոգցես յօդս անդ, և անդէն փաղփաղակի վերակենդանել անմահապէս և անեղծութեամբ, ուր հաւատամք մեք զնորին առաքելոյ բացաձայնութիւն՝ թէ յական թօթափել լինիցի յարութիւն, և մարմինք հողացեալք վաղժամանակեայքն անդրէն կերպարանեսցին յանդամս անվախճանելիս դիւրակատար իմն և անկշռելի երագութեամբ։ Նա ոչ 'ի դատապարտոյ անտի՝ որ մարդոյն տուաւ, հող էիր և 'ի հող դարձցիս, ազատացեալս համարիցիմք զարդարոյն զայնոսիկ, եթէ նոցայն մարմինք մեռեալք չդառնան 'ի հող, այլ 'ի յափշտակութեան անդ զուգապէս մեռանին և յառնեն՝ 'ի վերաթևելն յօդս։ Սան զի ասելդ՝ 'ի հող դարձցիս, նման է այսմ, յայն ինչ դարձցիս կորուսեալ զկեանս, որ զինչ էիր յառաջ քան զկենդանութիւն. այս ինքն է, անշնչանայցես որ ինչ էիր նախ քան զշնչաւորիլ. քանզի 'ի դէմս հողոյ փըչեաց ած շունչ կենդանի, որով եղև մարդն յոգի կենդանի. որպէս թէ ասէր. հող ես շնչաւոր, որ ոչն էիր. հող եղիցիս անշունչ, որպէս էիրդ։ Նա այսպիսի իսկ են ամենայն մեռելոցն մարմինք յառաջ քան զփոխելն նոցա. և նոյն լինիցին և նոքա 'ի մեռանելն՝ ուրանօր և պատահիցէ, որովհետև զրաւին 'ի կենացն՝ զոր ընդ փոյթ ընդունելոց են։ Սան որոյ սովին օրինակաւ դառնայցեն 'ի հող, զի մարդիկ եղով կենդանիք՝ լինիցին 'ի հող. զոր օրինակ 'ի մոխիր գնայ՝ նա որ լինի մոխիր. 'ի հնութիւն գնայ՝ այն որ լինի հնոտի. 'ի խեցի գնայ՝ որ 'ի կաւոյ լինի խեցի. և այսպէս 'ի բազում այլ իրս խօսել սովոր եմք։ Իսկ թէ զիարդ լինելոց իցէ այն՝ զոր արդ ըստ զօրել փանաքխմաց մերոցս մտաց 'ի քնին առնումք փոքր 'ի շատէ, յայնժամ յաջողեսցէ՝ զի գիտել կարիցեմք։ Քանզի հարկ է որք քնեայս լինել կամիցիմք՝ զի հաւատասցեմք թէ արդարև յարութիւն մեռելոցն լինիցի մարմնով յորժամ գայցէ Քս 'ի դատել զկենդանիս և զմեռեալս. բայց ոչ ունայն իցեն հաւատքս մեր, եթէ որպէս լինիցին՝ զայն չկարիցեմք ըմբռնել բովանդակապէս։ Բայց արդ ըստ յառաջագոյն խոստանալոյ մեր՝ պարտ է 'ի մէջ բերել որ-

չափ հերիք թուիցի, զոր ինչ մարգարէականքն հնոց մա-
տեանցն նախասաւանեցին յաղագս յետին գատաստանին այ-
և որպէս վարկանիմն, ոչ հարկ իցէ յամենալ ի յառաջ-
բերութիւն ախտոցիկ և ի բացայայտութիւն, եթէ փոյթ
նայցի ընթերցողին յառաջասացելոցն առնուլ նպաստ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Զինչ մարգարէն Եսայի խօսեցաւ յաղագս յարութեանն մեռելոց, և յաղագս հատուցման գատաստանին։

Ա.ՕՐ Եսայիա մարգարէ. ԻՁ. 19. "Յարիցեն մե-
ռեալք, և կանգնեսցին որ իցեն ի գերեզմանս. և ու-
րախ եղիցին յերկրի. զի ցօղդ որ ի քէն է, բժշկութի՛ է
նոցա. բայց երկիր ամբարշտաց կործանեսցի՛ ,, ։ Ի.րաչինն
բանքդ ողջոյն գյարութի՛ երանելեացն ակնարկէն. իսկ
ասացեալն՝ "Երկիր ամբարշտաց կործանեսցի ,, , զայն
միտս տայ ուղղակի, թէ զամբարշտացն մարմինս ըմբռ-
նեսցէ կործանումն դատապարտութե՛, Իսկ զոր յաղագս
բարեգործացն յարութե՛ ասացեալն՝ թէ խնամով և ման-
բախուզիւ նկատել կամիցիմք, ի յարութե՛ն առաջին է-
լանել ասելն. "Յարիցեն մեռեալք ,, , և յերկրորդն որ
գնինն. "Ա՛յլ եթէ ի խնդիր վնիցիմք և արարոցն՝ զոր աւերն
կենդանիս գտանիցէ աստանօր, ի դէպ գայ նոցա յաւե-
լուածն. "Եւ ուրախ եղիցին յերկրի. զի ցօղդ որ ի քէն
է, բժշկութի՛ է նոցա ,, ։ Ի.ժշկութի՛ յայտ վայրի զան-
մահութի՛ արդարեւ է իմանալ. քանզի ան է բժշկութի՛
ամենակատար, որ ոչ կերակրովք կազդուրի իբր դեղովք
ոմանօք առօրեիւք։ Վարձեալ նոյն մարգարէ յոյս բա-
րեգործացն ընձեռելով նախ, և ապա ահարկուի՛ չա-
րացն, զայս օրինակ բարբառի. ԻՁ. 12. "Ի.սկ ես ասէ
տէր. ահա ասիկ ես գարձուցանեմ՛ ի դոսա իբրև զգետ

զխաղաղութիւն, և իբրև զհեղեղատ յորդեալ զփառս հեթանոսաց. զմանկունս դոցա 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն, և 'ի վերայ ծնգաց իւրեանց գգուիցեն. որպէս մայր որ զմանուկ իւր գգուիցէ, այնպէս գգուեցից զձեզ, և յԵրուսաղէմ մխիթարեսջիք. և տեսջիք և խնդասցեն սիրտք ձեր. և ոսկերք ձեր իբրև զդալարի զուարճասցին. և ծանիցի ձեռն տեառն երկիւղածաց իւրոց, և սպառնասցի անհաւատիցն: Զի ահաւասիկ տէր իբրև զհուր եկեսցէ, և կառք նորա իբրև ըզմրրիկ, հատուցանել սրտմտութբ զհատուցումն իւր, և բոցով հրոյ զպարհամարհանս իւր: Զի 'ի հուր տեառն դատեսցի ամենայն երկիր, և 'ի սուր նորա ամենայն մարմին. բազումք եղիցին վիրաւորք 'ի տեառնէ,,: Ի խոստմունսն առ բարեգործս՝ զասելն գետ խաղաղութեան՝ առնուլ պարտ է անշուշտ 'ի լիապատարն խաղաղութիւն՝ քան զոր յորդագոյն չմարթի լինել. զի սովիմք ոռոգանիցիմք 'ի կատարածի, զորմէ լիով ճառեցաք յանցելում գրի: Զայն գետ առ նոսա դարձուցանել ասէ՝ որոց խոստանայ զմեծն զայն երանութիւն, 'ի միտ առնուլ մեզ թէ յերջանկաւէտ յայնմ գաւառի որ յերկինս է, ամենայն ինչ գետովն այնու յագեսցի: Այլ քանզի յերկրածին մարմինսն ևս հոսելոց է 'ի գետոյ անտի խաղաղութիւն անեղծութե և անմահութե, սորին վասն դարձուցանել ասէ զայն, զի 'ի վերուստ անտի զեղցի և 'ի ստորինս, առնել զմարդիկ զուգահաւասարս հրեշտակաց: Այլ և Երուսաղէմ ոչ զայն որ ծառայէ որդւովք իւրովք, այլ զազատն իմասցուք զմայր մեր՝ ըստ առաքելոյ, զյաւիտենական յերկինս. անտանօր յետ աշխատութեց վշտաց և հոգոց անցաւորաց մխիթարիցիմք, իբրև մանկունք նորա 'ի վերայ ուսոց և 'ի գիրկս վերաբերեալք. քանզի զմեզ զանկիրթքս և զմատաղածինքս յինքն ժողովեսցէ պարգևօք գգուականօք երանութիւն այն՝ անընդդէլ մեզ գլխովին: Ուրդ տեսցուք, և խնդասցեն սիրտք մեր. չյայտնեաց թէ զինչ տեսանիցեմք. և զինչ այլ բայց զԱծ. զի առ մեզ աւետարանականն կատարեսցի խոստումն. «Երանի որ

սուբբ են սրտիւք, զի նոքա զնած տեսցեն ,, : Յետ այնմիկնմբ և զայլն ամենայն՝ զոր ոչ տեսեալ յայժմուս , այլ հաւատացեալ միայն՝ ըստ մարդկօրէն հասողութե կարի ատրև քան զոր լինն ածեմբ զմտաւ . "Յեսոյիք, ասէ, և խնդասցին սիրտք ձեր ,, : Յստանօր հաւատայեալք , անստանօր տեսանիցեք :

Ապայց զի մի սակս ասելոյն՝ խնդայցեն սիրտք ձեր , լինիցի մեզ կարծել թե հոգեպ մերում միայոյ անկ իցեն այն բարութիք խրատակիմ , ասէ . "Եւ ոսկերք ձեր իբրև զգալարի զուարձասցին ,, զյարուն մարմնոցն ձնչգուտաբանելով , իբր այն թե զոր լուեացն՝ հաստուցանել կամեցաւ . քանզի այն ոչ եթե յորժամ տեսանիցեմբն՝ լինիցի , այլ նախ եղեալ՝ տեսանիցեմբ : Օ՛ի և յաղագս նորոյ երկնից և նորոյ երկրի յառաջագոյն ասացեալ էր Ղասայ , ուր զհոսանացեալն առ արդարս 'ի կատարածին՝ յաչախակի և բազմօրինակ բարբառէր ասելով . Ես . 17 . "Ղզիցեն երբ կինք նոր և երկիր նոր , և ոչ ևս յիշեացեն զառաջինան . և ոչ ևս անկեցի 'ի սիրտս նոցա . այլ ուրախութի և ցնծութի գտցեն 'ի նմա , զոր ես հաստատեցից : Օ՛ի ահաւասիկ ես առնեմ զԵրուսաղէմ ցնծութի , և զժողովուրդ իմ ուրախութի . և ցնծացայց 'ի վերայ Երուսաղէմի , և ուրախ եղէց 'ի վերայ ժողովրդեան իմոյ . և ոչ ևս լուիցի 'ի նմա ձայն լալոյ ,, այլովքն Հանդերձ . զոր ամենք գոն գործեն 'ի հազարամեայ մարմնական ժամանակին պատշաճեցուցանել . քանզի ըստ մարգարէական ոճոյ՝ այլաւսիկ զոյցք խառն ընդ յատուկ բանս գտանին . որպէս զի լքջահայեացն քննութի 'ի հոգևորական խոստան հասանիցէ աչխատութի իմն օգտակարաւ առ 'ի շահ . սակս պղերգութի ընդաւոր , կամ անուսումն և անհրահանգ մտաց գանդաղութի շատ համարեալ զվերին երեսս զրոյն , 'ի ներքս անդր խոյզ առնել հոգեպ և ոչ ինչ : Ա՛յժ յաղագս մարգարէական բանիցն նախագրելոց 'ի վերոյ քան զայս տեղ՝ հերքեսցին ասացեալքս : Իսկ գառնալով ուստի խոտորեցաքն , յետ ասելոյն յայսմ վախճի , "Եւ ոսկերք ձեր իբրև զգալարի զուարձասցին ,,

զի ցուցանիցէ Թէ զմարմնոյ յարուԹիՒն արդարոցն և ևԹԷ
Յիշատակէ անտանօր, ած՝ ի վերայ . “ Եւ ծանիցի ձեռն
տեառն երկիւղածաց իւրոց ,, , Եւ այս զինչ է՝ բայց ձեռ-
նըն որ ընտրէ զերկիւղածս իւր յաներկիւղիցն . զորոց՝ ի
յաջորդոդ կարգաբանեալ ասէ . “ Եւ սպառնասցի ան-
հաւատիցն ,, , Եթէ եմք յայնժամ սպառնասցի , այլ որ այժ-
մու սպառնացմամբ ասացեալքն են՝ յայնժամ յարդիւնս
գայցեն , “ Օ՛ի ահաւասիկ , ասէ , տէր իբրև զՇուր ե-
կեսցէ , և կառք նորա իբրև զմրրիկ , հաւատացանել սրբոց-
մտուԹիՒն զՏատուցումն իւր , և բոցով հրոյ զաջհամարհանս
իւր . Օ՛ի ՚ի հուր տեառն դատեսցի ամենայն երկիր , և
՚ի սուր նորա ամենայն մարմին . բազումք եղիցին վիրա-
ւորք ՚ի տեառնէ ,, , Ահա հրոյն և մրրկաւ և սրով զպա-
տուհաս դատաստանին յայտ առնէ , յասելն ԹԷ եկեսցէ
տէր իբրև զՇուր՝ առ այսոսիկ որոց առ ՚ի պատիժ վճռե-
ցին նորայն գալուստ . Ոչ կառս նորա ոչ տարադէպ ինչ
զՀրեշտակական սպասաւորուԹիՒնն իմանամք . Եւ զոր
ասէն՝ ՚ի հուր նորա և ՚ի սուր դատել ամենայն երկրի և
ամենայն մարմնոյ , մի՞ նա և զՀոգևորաց և զարդարոյց ի-
մասցուք աստանօր , այլ զերկրաւորաց և զչնչաւորաց . զո-
րոց ասացաւ “ Որ զերկրաւորս խորհին ,, . և “ Խորհուրդ
մարմնոյ մահ է ,, . որպիսիքն մարմին համարձակ կոչեցան
՚ի տեառնէ բանիւն . “ Ոչ՝ ինասցէ ոգի իմ՝ ՚ի մարդկանդ
յայդմիկ վասն լինելոյ դոցա մարմին ,, . Ոչ յասելն “ Ահա
զուարճ եղիցին վիրաւորքն ՚ի տեառնէ ,, , վիրաբոյս այսու
գործեսցի մահն երկորդ . Ոչ պաքէն և ՚ի բարւոյն կոդին
մարթէ է առնուլ և զՀուր և զսուր և զվէրս . զի տէր ինք-
նին ասաց՝ Հուր արկանել երկիր . և երևեցան նոցա լե-
զուք բաժանեալք իբրև ՚ի հրոյ , յիջանել Հոգւոյն սրբոյ ,
և “ Ոչ եկի արկանել յերկիր զխաղաղուԹիՒն , այլ սուր ,,
Եւ զքանն այ սուր երկայրի ասէ գիրն , ՚ի պատճառս
հրկին սպրիդ երկոցունց կտակարանացն . Եւ յերգոց երգ-
սըն ասի սուրբ եկեղեցի վիրաւորեալ սիրով , իբրև ՚ի
նեռէ հարեալ . Ո՛չ սակայն աստանօր քանզի ընԹեռ-
նուՄք կամ լեռնք՝ Թէ գալոց է տէր վրէժխնդիր , ինքնին

քաջայայտ է՝ յինչ միտս զայսոսիկ իմմանալ արժան իցէ։

Եթէ այսոցիկ՝ ի կարճել յիշատակեալ զայնոսիկ՝ որք սպառեսցին դատաստանաւս այսուհիկ, ի ձև առակի կերակրոցն որ՝ ի հին օրէնս արգելեալ՝ նմանաբերելով զմեզաւորսն և զամբարիշտս զՀրաժարեալսն յայնպիսեաց, համառօտ՝ ի սկզբանէ անտի զնորոյ կտակի ընդհանուր յառաջնմէ գալստենէ փրկչին մերոյ՝ ի յետին դատաստան, զորմէ այժմու ճառս է, ածեալ և աւարտեալ զբանն, Վասանզի պատմէ ասել տեառն՝ Թէ գայ Ժողովել զամենայն ազգս, որք գայցեն և տեսցեն զփառս նորա, զի որպէս առաքեալ ասէ. «Մինչեւ եհան մեզան, և նուաղեալ են՝ ի փառացանսի այ», Այս ասէ՝ Թողուլ՝ ի վերայ նոցա նշանս, յորս զարմացեալ հաւատայցեն՝ ի նա. և Թէ՝ ի նոցանէ առաքելոց է փրկեալս ընդ ազգս զանազան, և՝ ի կղզիս հեռաւորս՝ որոց չիցէ լուեալ զանունն նորա, և ոչ տեսեալ զփառս նորա. և պատմեսցեն զփառս նորա՝ ի մէջ ազգաց. և ածցեն զեղբարս նոցա՝ զորոց խօսէրն, այս է՝ զեղբարս ընտրելոցն իսրայէլացւոց հաւատովքն յԱծ Հայր. և ածցեն յամենայն ազգաց պատարագ տեառն կառօք և երիվարօք, որովք ածային նպաստքն պատշաճապէս իմմանին ըստ պէսպէս պաշտաման այ մատակարարելոք հրեշտակօք կամ մարդկամբ. ածցեն, ասէ, ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, որ այժմ սփռեալ կայ՝ ի սուրբսն հաւատացեալս ընդ ամենայն երկիր։ Վասն զի ուրանօր առ՝ ի յայ օգնութեէ է, անդ հաւատան. և ուր հաւատանն, անդ գան։ Այս տարացուցաւ իմն համեմատել զնոսա տէր՝ որդւոցն Իսրայէլի, որք մատուցին զպատարագս իւրեանց սաղմոսիւք՝ ի տան նորա, զոր ամենայն ուրեք առնէ արդ եկեղեցի. և խոստմամբ առնուլ իւր՝ ի նոցանէ քահանայս և ղեւտացիս, զոր անվրէպ լինել տեսանելիք այսօր։ Օ՛ի ոչ յազգատոհմէ մարմնոյ և արեան, զոր օրինակ էր զառաջինն ըստ կարգին Վհարոնի, այլ որպէս վայել էր՝ ի կտակիս նորումս, յոր ըստ կարգին Վեղբեսեդեկի քահանայապետ է Վյի, ըստ իւրաքանչիւր արժանաւորութեէ յաջողելոյ՝ ի շնորհացն այ՝ տեսանելիք այժմ

ընտրել քահանայից և զնուացուց · զորս ոչ այսու անուամբ
մեծագրել արժան է, զի յոլովակի և անարժանքն հանդի-
պին այնմ · այլ սրբութիւնն այսուիկ որ չէ բարեաց և չա-
րաց հասարակ ։

Օ այսոսիկ բարբառեալ մարգարէին յաղագս որ յայժ-
մուս եկեղեցւոյ պարգևեալ՝ անշրայսին և քաջածանօթ
մեզ բարեգթութենայ, խոստացաւ ասպ և զկատարածն՝
յոր լինիցի ժամանել յետին դատաստանացն յընտրութե
բարեաց և չարաց, ասելով՝ ի ձեռն մարգարէին, մանա-
ւանդ թէ նորին մարգարէի ասելով վասն տեառն ·
“ Օ որ օրինակ երկինք նոր և երկիր նոր զոր ես առնեմ
կալ առաջի իմ ասէ տէր, նոյնպէս կացցէ զաւակն ձեր ։
Եղիցի ամէ յամսոյ, և շաբաթ՝ի շաբաթի եկեսցէ ամ
մարմին երկիր պագանել առաջի իմ ։ Երթասաղէմ, ասէ
տէր ած ։ Եւ ելցեն և տեսցեն զմարդկան առ իս
յանցուցելոց · զի որդն նոցա ոչ վախճանեսցի, և հուր
նոցա ոչ շիջցի · և եղիցին՝ի տեսիլ ամենայն մեղեաց ,, ։
Զայս աւարտեաց մարգարէս զմատեանն, յոր և աւար-
տեսցի աշխարհ ։ Պարզէն ոմանք ոչ թարգմանեցին՝ զոս-
կերս մարդկան, այլ զդիակունս ասացոց · դիակամբք նը-
շանակեալ զսկիներս պատուհաս մարմնոց · թէպէտ և սո
վորաբար դիակին զանշնչացեալ մարմինն անուանեմք ·
իսկ այնոքիկ մարմինք ընչաւորք լինին, ասպ թէ ոչ՝ ընաւ
անզգայք տանջանաց լինելին · բայց է թէ սակս լինելոց նո-
ցա մարմնոյ մեռելոց՝ իբր զի անկեալք են՝ի մէնջ երե-
կրորդ, դիակունս կամ անկածս ասէ զնոսա ոչ անդէպ
ինչ եցէ · Ի սոյն բերի և զոր յառաջն եգիս նորին մար-
գարէի ասացեալ · “ Երկիր ամբարչացաց կործանեսցի ,, ·
զի որ անկանին, դիակն է ։ Ուստ արանց դնել այլոց թաղա-
մանեաց՝ յայտ է թէ փոխանակ մարդկան ասացեալ է · զի
չէ ոք որ կարծիցէ՝ թէ կանայք միզուցեալք անպարտք՝ի
տանջանաց մնալոց էցեն · այլ՝ի գլխաւորսն՝ և մանաւանդ
յորմէ էգն արարաւ, երկաքանչիւր ազգն իմանի ։ Այլ
որ մերում բանիս անկ է, ըստ բարւոյ մասին ևս ասի,
“ Երեսցէ ամենայն մարմին ,, զի յամենայն մարդկան

ազանց կազմեսցի ժողովուրդս այս. զի ոչ եթէ ամենայն մարդիկ անդ լինիցին, յորժամ՝ի պատուհասին բազումք եղիցին. այլ որպէս ասացի, որովհետեւ՝ի բարիսն մարմին կոչին, եւ՝ի չարս՝ ոսկերք, յայտնապէս ապա ակնարկէ՝ յետ յարութեան մարմնոյ՝ որոյ հաւատք հաստատին այդորիւք անուամբք, լինել դատաստանին յորոշումն իւրաքանչիւր կատարածի արդարոց եւ մեղաւորաց։

ԳԼՈՒԽ ԻԲ

Զինչպիսի իցէ ելանելն արդարոց՝ի տեսանել զպատուհաս չարաց։

ԱՅԼ ո՞րպէս արդեօք ելցեն բարիքն առ՝ի տեսանել զչարացն պատուհասս. մինթէ մարմնով տեղափոխեալք թողուլ ունիցին զերանաւէտ կայսն, եւ՝ի պատժարան անդր մտանել ինքնին անձամբ հայելոյ վասն՝ի խոշտանգանս չարաց։ Ոչ անդր՝ի բաց տար, այլ ելանիցեն մտացն ճանաչմամբ. զի այն ինչ նշանակի բայիւդ, թէ որք տանջինն՝ արտաքոյ կալոց են. որոյ վասն խաւար արտաքին եւ տէրն զայնոսիկ վայրս կոչէ, եւ է իսկ այնմ ընդդիմակաց մուտն ասացեալ առ ծառայն բարի. «Մուտ յուրախութիւն տեառն քո»։ Եւ մի՛ կարծիցի թէ անդր մտանիցեն չարք առ՝ի լինելոյ ծանուցեալք, այլ ընդ հակառակն՝ բարիքն ելանեն գոդցես գիտութիւն առ նոսա՝ լինել նոցին ճանաչողս. քանզի զայն որ արտաքոյն է՝ ճանաչել ունին։ Քանզի որք միանգամ՝ի պատժի կան, զինչ՝ի ներքս յուրախութիւն տեառն գործիցի, գիտեն ոչ ընաւ. իսկ որ յուրախութեան յայնմիկ են, քաջ գիտեն զինչ արտաքոյ՝ի խաւարին գործիցի. վասն այսորիկ ասացաւ ելցեն, իբր զի չծածկի առ՝ի նոցանէ որ ինչ արտաքոյ նոցա է։ Զի եթէ զայսոսիկ զչեւ գործեցեալս գիտել կարողացան մարգարէք, ո՞յ՝ի նոցա մտօն դեռ մահկանացուաց չափու իմն լինելով, զիա՞րդ ապա արդարքն անմահացեալք անգիտանայցեն

զայն լինչ ահա եղեալն, ուր ած եղիցի ամենայն յամենայնի ։ Ապա ուրեմն կացցէ մնայցէ յերանութեն յայնմ արդարոցն սէրն և անուն, սէրն այն՝ զորմէ Յովհաննէս ասէ. «Եւ սէրն նորա 'ի նմա մնայ»։ Եւ անուն՝ որ սորին Եսայեայ ասացեալ. «Անուն յաւիտենական տաց նոցա»։ Եւ «Եղիցի ամիս յամսոյ, և շաբաթ 'ի շաբաթէ»․ իբրև թէ 'ի լուսոյ 'ի լուսին, և 'ի հանգստենէ 'ի հանգիստ. և երկաքանչիւր նոքին արդարքն եղիցին, յորժամ 'ի հին և 'ի փախչելի ստուերաց աստի անցանիցեն 'ի նորահրաշ լոյսն մշտնջենափայլ ։ Իսկ որ 'ի պատուհասս չարացն հուր անշէջ ասացեալն և որդն անմահան, զանազանաբար մեկնաբանեալ է 'ի բազմաց․ զի ոմանք զերկոսին ևս 'ի մարմին տանին, և այլք 'ի հոգի զերկոսին. այլք զհուր յատկաբար մարմնոյ տան, և զորդն այլաբանութեն՝ հոգւոյ, որ հաւանելի ևս թուի ։ Բայց զարդիս 'ի վերայ խորանացս այսոցիկ ճառել՝ ժամ դիպող ոչ է. քանզի յաղագս վերջին դատաստանին՝ որով ընտրութի բարեացն լինիցի և չարաց, բովանդակել զմատեանս յանձին կալաք, այլուր զբուն վարձուցն և զպատուհասից թողեալ ճշգրտաբանել ։

ԳԼՈՒԽ ԺԳ

Զինչ մարգարէացաւ Դանիէլ յաղագս հալածանաց Նեռին, և վասն դատաստանին այ և արքայութեն սրբոց ։

ԴԱՆԻԷԼ այնպէս իմն մարգարէանայ յաղագս այսր յետին դատաստանին, մինչև ազգ առնել և զյառաջագոյն գալուստ Նեռին, և 'ի յաւիտենից արքայութի սրբոցն հանգուցանէ զճառն ։ Քանզի տեսեալ նորա մարգարէական դիտողութեն՝ չորս գազանս՝ չորից թագաւորութեց օրինակս, և զչորրորդն յաղթահարեալ 'ի թագաւորէ ումեմնէ՝ որ Նեռն ճանաչի, և յետ այսոցիկ զթագաւորութի

յաւիտենական որդւոյ մարդոյ որ նա ինքն խմոխ վիճ, տեսեալ ասեմ զայսոսիկ՝ այսպէս բարբառի . է . «Պատ կացաւ մարմին իմ յանձին իմում. ես վանիւել, և տեսիլ դէմոյ իմոյ խոովեցոյց զիս . և մատեայ առ ի ոմն որ կայրն անդ , և զչէմարտութիւն խնդրեի ուսանել վասն ա մենայնի այսորիկ . և ասաց ինձ զչէմարտութիւն, և զնիկ նուիրն քանիցն եղոյց ինձ ,, : Այսպա զոր ինչ լուաւն երբ ի միհաքանողէ ըստ իւրումն խնդրելոյ վասն ամենայ նին, այս օրինակ խօսի . «Ա.յդ գազանք մեծամեծք՝ յորք Թագաւորութիւնք յարիցեն ի վերայ երկրի , բարձցին, և առցեն զթագաւորութիւնն սուրբք բարձրելոյն , և կալցին զնա մինչև յաւիտեանս յաւիտենից : Եւ քննեի չմարտիւ վասն գազանի յորրորդի , զի առաւել այլա կերպ էր քան զամենայն գազանսն որ յառաջ քան զնա , և ահագին յոյժ , և ժանիք նորա երկաթիք , և մագիլք նո սղնդիք . ուտէր և մանրէր , և զնիացորդսն առ ոտն կոտո րէր . և վասն եղջերացն տասանց որ էր ի գլուխ նորա , և վե միւսոյն որ ելանէր և զերիսն ի բաց Թափէր , որոյ աչք էին , և բերան որ խօսէր զմեծամեծս , և տեսիլ նորա ա ռաւել էր քան զայլոցն : Տեսանէի՝ և եղ ջիւրն այն տայր պատերազմ ընդ սուրբս , և զօրանայր ի վերայ նոցա . մինչև եկն հինաւուրցն , և ետ իրաւունս սրբոց բարձրե լոյն . ժամանակ եհաս , և զաթոռայութիւնն սուրբք ըմբռնե ցին ,, : Ո այսցանէ, ասէ, Հարցեալ և զոր լուաւն՝ յարէ ի նոյն . «Եւ ասէ . գազանն յորրորդ՝ Թագաւորութիւն յորրորդ կացցէ ի վերայ երկրի , որ առաւել իցէ քան զա մենայն Թագաւորութիւն . և կերիցէ զամենայն երկիր , և կոխիցէ և Հարցէ զնա : Եւ տասն եղջիւրք նորա՝ տասն Թագաւորք յարիցեն . և զնի նոցա յարիցէ այլ որ ա ռաւել իցէ չարեօք քան զամենայն առաջինն , և երիս Թագաւորս խոնարհեցուսցէ . և բանս առ բարձրեալն խո սիցի . և զսուրբս բարձրելոյն մոլորեցուսցէ , և կարծես ցէ զժամանակս և զօրէնս փոխոխել . և տացի ի ձեռս նորա մինչև ի ժամանակ , և ի ժամանակս , և ի կէս ժամանակի : Աւասն նստցի , զիշխանութիւն նորա փոխեա

ցեն, յապականել և 'ի կորուստն մինչև խաւար. և Թա-
գաւորութիւն և մեծութիւն Թագաւորաց որ 'ի ներքոյ երկ-
նից՝ տուաւ սրբոց բարձրելոյն. և արքայութիւն նորա արք-
քայութիւն յաւիտենական, և ամենայն իշխանութիւնք նմա
ծառայեսցեն և հնազանդեսցին։ Ա՝Ինչև ցայս վայր է
վախճան բանիս։ Ես Դանիէլ, և խորհուրդք իմ յոյժ
խռովեցուցանէին զիս. և գոյն երեսաց իմոց չրջեցաւ. և
զբանն 'ի սրտի իմում պահէի ։։ ՎԱռաւակ Թագաւորու-
թեամ իմոցան ամանք զասորեստանեայց, զՊարսից, զՄի-
մակեդնացւոց և զհռովմայեցւոց. և որք անօրժենն
յարմարութեամ մտացն լինել մահացու, զմատեանն վեր-
ծանեսցեն զՀերմիմոսի երիցու գրեալ հնամուխ և հըմ-
տաբար։ Ա՝ակայն թէ 'Աեռնին խոժոժական Թագաւորու-
թեն հակառակ եկեղեցւոյ ցուցանի աստանօր՝ Թէպէտ
և դոյզն ժամանակաւ չափեալ, մինչև յետին դատաստա-
նաւն այ սուրբք կալցին զարքայութեն յաւիտենական,
ոչ ումեք յերկայս ձգել օրհնէ՝ Թէ 'ի քուն ևս լեալ ըն-
թեռնուցու։ ՎԱնգղ ժամանակ, և ժամանակ, և կէս
ժամանակի, են մի ամ, և երկու, և կէս, որով լմնին երեք
ամք և վեց ամիս. որ և 'ի Թուոյ աւուրցն եգելոյ ստորև՝
ակն ցուցանի, և ուրեք 'ի գիրս համարով ամնոյ ևս բա-
ցայայտի, (յասելն՝ աւուրս հազար երկերիւր և վեթ-
սուն և ութ)։ Ո՝ի Թէպէտ անորոշաբար Թուի աստա-
նօր գնել ժամանակս, բայց փոխանակ երկական Թուոյ
ասացեալ է, զոր ոչ ունի լատինն և հայն, այլ ըստ յոնին
ունի և երբայականին. ուստի ժամանակս ասել՝ իմանի
երկու ամ։ Ա՝իայն զի կասկածանս իմն յանձին խոստո-
վանիմ, մի գուցէ 'ի տատեսին Թագաւորան, զորս իբր
տասն արս Թուի գտանել 'Աեռն, սխալեցիմբ արդեօք՝ երբև
զի յանկարծակի իմն եկեալ նորա, ոչ կայցեն այնչափ Թա-
գաւորք 'ի հռովմէական տիեզերակալութենն։ Այլ զինչ՝
եթէ տատնեակ Թուոյն համարիցիմբ նշանակել զըղը-
բուսն Թագաւորաց, որոց զկնի գալոց է նա. զոր օրինակ
և հազարեակ Թուով և հարիւրեկաւ և եօթնեկաւ յո-
լով ուրեք նշանակի ամենայն գումարն, նմանաբար այ-

լավք ևս թուովք, զորս ի ժամուս յիշատակել չէ Տարկ։ Այս ինքն Աստիճանել յայլսմ վայրի։ ՃԸ։ 1։ ասէ։ «Այլ ոչ ժամանակ նեղութեան, նեղութեան որպիսի ոչ եղև յորմէ հետէ եղև ազգս ի վերայ երկրի մինչև ի ժամանակն յայն։ և ի ժամանակին յայնմիկ ապրեսցի ժողովուրդ քո, ամենայն որ գտցի գրեալ ի գրուածս։ Եւ բազումք ի հնջեցելոց ի հող երկրի յարիցեն, ոմանք ի կեանս յաւիտենական, և ոմանք ի նախատինս և յամօթ յաւիտենական, և իմաստունք ծագեացեն իբրև լուսաւորութիւն ի հաստատութեան։ և բազումք յարդարոց իբրև զաստեղս յաւիտեան» և ևս «Այս տեղի ապաքէն զուգաբան է աւետարանական ասացածին։ ՀԱ։ Ը։ 28։ ըստ յարութեան մարմնոյն մեռելոց։ զի որ անդ ասացան լինել ի գերեզմանս, աստանօր ասին հնջեցեալք ի հող երկրի։ որպէս անդ՝ գայցեն արտաքս, և աստ՝ յարիցեն։ անդ «Որոց բարիս գործեալ իցէ» ի յարութիւն կենաց, և որոց չար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց»։ Նոյնպէս յայտ վայրի։ «Ոմանք ի կեանս յաւիտենական, և ոմանք ի նախատինս և յամօթ»։ Այլ այն ինչ մի ընդդիմաբան Թուիցի, իբր զի անտանօր ասացեալ «Ոմանք նեքին որ ի գերեզմանս», ասա ոչ ասէ մարգարէն՝ ամենեքին, այլ «Բազումք ի հնջեցելոց ի հող երկրի»։ քանզի գիրք երբեմն փոխանակ ամենայնի դնեն՝ բազումն։ ուստի «Քրաշամբ ասացաւ, «Հայր ազգայ բազմաց եղի քեզ»։ բայց այլուր ասէ։ «Ի զատիկ քում օրհնեացին ամենայն ազգք երկրի»։ Այլ յայտագրեալ երանելի յարութեն նմին իսկ Տանիէլի մարգարէի ասի յետ սակաւուց։ «Իսկ դու եկ հանգիպ, զի տակաւին են աւուրք և ժամք ի կատարումն վախճանի։ և հանգիցես և յարիցես ի ժամանակի քում՝ ի վախճանի աւուրց»։

ԳԼՈՒԽ ԻԳ

ՈՐ ԹԵՔ ԳՈՒՇԱԿԻՆ Ի ԴԱՀԼԵԱՆ ԱՂՋԻՍ ՅԱՂԱԳ ԿԱՏԱՐԱԾԻ ԱՇԽԱՐՀԻՍ, ԵՒ ՎԱՆ ՎԵՐՋԻՆ ԳԱՏԱՍՏԱՆԻՆ ԱՅ։

Ի ԹՈՒՂՄԱՑ անտի ատացեալցն՝ի սուրհաս յաղագս յե-տին գատաստանին՝ ոչ սակաւք՝ի հարեւանցի ևեթ և հա-մառօտիւք խօսին. բայց զոր յաղագս կատարածի աշխար-հիս բացերևակի ասացեալն է անտանօր, Ոչ. ՃԼ. լռել բնաւ չառնուի յանձն. “Ի սկզբանէ տեր՝ զհիմունս երկ-րի հաստատեցեր. և գործք ձեռաց քոց երկինք են, ‘Ա-քա անցանեն, և դու կաս և ձեռս յաւիտեան։ Ի վերնե-քեան որպէս զձորձս մաշեսցին. որպէս վերարիւս փո-խեսցես զնոսա և փոխեսցին։ Ոչայց դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ անցանեն,,։ Ի՞ւ ինչ իցէ արդեօք, զի Պօր-փիւր՝ի գովութիւն առեալ զերբայեցւոյն բարեպաշտուի, իբրև զի առ՝ի նոցանէ մեծն այն և Չքնաղիան պաշտի՝ ահարկուն նոցունց իսկ աստուածոց, զերիտասարդեայս իր-րու մտանէ ախ ինն երդիծանէ՝ իւրովք իսկ աստուածոց պատգամաք, այնու զի կորնչելի զաշխարհս զայս ասէն. ահաւասիկ՝ի պաշտաման գերս երբայեցւոց՝ առ նա ինքն ած յորմէ ըստ խոստովանելոյ քոյին փիլիսոփոսիկ՝ աս-տուածքն ինքնին գոզան սարսափին, ասի. “Ոչորձք ձե-ռաց քոց երկինք են. Նոքա անցանեն,, Ի՞նչ է՝ի կորնչել երկնից, աշխարհն՝ որոյ վախճադոյն մասն են երկինք և ան-քոյին, ոչ արդեօք կորնչի, Ոչ է Ի՞ամադգայ գժուա-բահաձ են այս կարծիք՝ զորոյ զպատգամ իբր մեծագոյ ինն՝ի սուգասնս առնուն բրիստոնէիցն գիւրահաւանուն, որպէս փիլիսոփոսք գրէ, հիմ գիմաստութիւն երբայեցւոց ոչ նոյնպէս իբր յիմարութիւն ապգատանէ, յորոյ յաղթա-կան գերս նոյն գասնի. Ոչակ եթէ յայնմ իմաստութիւն զոր մեծ ինն գրէ Պօրփիւր՝ իւրոյն աստուածոց բարբա-

ռովք զայն գովասանելով, ընթեռնումք թէ կործանելոց են երկինք, Էր վասն այնչափ 'ի խաբէութի՟ն նանրանան, մինչև 'ի քրիստոնէական հաւատս զայն ինչ ընդ այլ իրաց, կամ առաւել քան զայլս պախարակեն, իբրև զի կործանելի հաւատայ զաշխարհս. ուր եթէ այս ոչ կործանիցի, և ոչ երկնից կործանել մարթ է։ Նաև 'ի սրբազան գիրս՝ որ մերս են յատուկ, և ոչ եբրայեցւոց հասարակ ընդ մեզ, այս է՝ յաւետարանական և յառաքելական մատեանս ընթեռնումք. “Անցեալ է վայելչութի՟ն աշխարհիս այսորիկ„։ Ընթեռնումք “Աշխարհս անցանէ„։ Ընթեռնումք “Երկինք և երկիր անցցեն„։ Բայց կարծեմ ասել՝ անցեալ է, անցանէ, անցցեն, մեղմագոյն է քան ըզկործանիցին։ Նաև 'ի թղթին Պետրոսի առաքելոյ՝ ուր ասացաւ թէ աշխարհ որ յայնժամն էր, ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ, յայտնեալ է քաջ՝ ո՛ր մասն աշխարհի անուամբս բոլորին նշանակեալ, և ո՛րպէս կործանել ասի, և ո՛ր երկինք հրոյ պահեալ են յօրն դատաստանի և կորըստեան ամբարշտ մարդկան։ Եւ յետ սակաւուց դարձեալ. “Եկեսցէ օր տեառն իբրև գող, յորում երկինք տագնապաւ անցցեն, և բնութի՟ւնք հրով կիզեալ լուծցին, և երկիր և որ միանգամ 'ի նմա գործք գտանիցին„։ Յաւելու ապա. “Եւ 'ի լուծանել այսպէս այսր ամենայնի, որպիսի՞ ինչ պարտ իցէ ձեզ գտանել„։ Արդ յայսոսիկ զայն երկինս մարթիմք կործանելի իմանալ՝ զորս ասաց հրոյ պահեալս. և զայն բնութի՟ւնս կամ տարերս համարել կիզանելիս, որ 'ի խոնարհագոյն կողման աշխարհի զետեղեալ կան՝ մրրկալիցք և խռովայոյզք, յորս և գանձեալ ասաց զերկինս, անմերձ գոլով վերին մասանցն և յիւրեանցն մնալով ամբողջութեան. յորոց 'ի հաստատութե՟ն կարգեալ են աստեղք։ Զի և որ գրեալն է թէ աստեղք անկցին յերկնից, թող զի այլ ազգ ևս՝ և առաւել հաւանական բերէ իմաստս, բայց ցուցանէ թէ կալոց են երկինք, թէ և աստեղք անտի անկանիցին. սակայն հաւանելի ևս է՝ փոխաբերական լինել ասացուածոյդ, կամ թէ 'ի ստորային յայս երկին լինիցի այդ առա-

ւել նորանչան քան զայժմու պատահէալն. ըստ որում և վիրաւիլեանն ասաղ ջահազգեցիկ պայծառութիւն ե-
ցեալ, յերեւակայն զադարեաց յանտառի. յ[illegible]. Ե-
[illegible]. Յ[illegible] սակայն ի սաղմոսէ յիշատակեալս բան՝ Թուի Թէ
ոչ արտաքոյ Թողու ի կորնչելոյ և ոչ զմի մանն երկնից.
վասն զի յասէն «Վաղօրօք ձեռաց քոց երկինք են. նորա
անյանձն, կամ կորնչին», որպէս ոչ զմի յերկնից արտա-
քոյ դնէ ի գործոց ՚ՈՅ, նոյնպէս և ոչ զմի արտաքոյ կորըս-
տեան. Ո՚Ի ոչ յանձն առնուն նորա ասացուածով Պետ-
րոսի առաքելոյ՝ զոր անհնարինս առնէն, արդարացուա-
նել զաստուածային էերսն՝ զգովեալն պատգամաբ
աստուածոյ իւրեանց, այնպէս ինն՚ զի մի կարծիցի բո-
վանդակ աշխարհի կորնչել, այլ՚ի բոլորն մանանն ևս ի-
մանայցի յասելն՝ նորա կորնչին. իբրև զի վայրագին եր-
կինքն մնայն ունին կորնչել. զոր օրինակ և յառաքելեան
բանին՝ մանանն առեալ լինի՚ի բոլորին՝ յորժամ ասի աշ-
խարհիս ջրհեղեղաւն կորուսեալ Թէպէտ և ստորին մանն
ինչ նորա ընդ իւրումն երկինի կորուսեալ էր. Ո՚այլ զի
որպէս ասացիք, զայդ ոչ առնուն յանձն՝ զի մի առաքե-
լեան մտաց երեւիցին ձեռնտուք, և կամ այնչափ համա-
զօր դնիցեն զյետին հրայրեցուածին՝ որչափ զջրհեղեղն
ասելմբ, որովհետև սկիզբ ունին Թէ ոչ ջրով և ոչ հրով
համամաջինք կորնչել մարդկան ազգի հնար է. ապա ու-
րեմն մնայ նոցա ասել, Թէ այնր աղագաւ երբայեցւոյն
խմաստութիւն գովիչք եղեն աստուածք իւրեանց, զի զայս
սաղմոս ընթերցեալ ոչ էին.

Ո՚Յ և՚ի քառասներորդ հինեերորդ սաղմոսի խմանամբ
խօսել յաղագս յետին դատաստանին ՚ՈՅ. «Ո՚Ճ մեր յայտ
նապէս եկեսցէ, և ՚ՈՅ մեր մի դադարեսցէ, Հուր առա-
ջի նորա բորբոքեսցի, և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ. Կո-
չեսցէ զերկինս՚ի վերուստ, և զերկիր՚ի դատել զժողո-
վուրդ իւր. ժողովել առ ինքն զսուրբս իւր, և ոչք դնեն
զպատարագս ուխտից՚ի վերայ սեղանոյ», Խմանամբ
մեք զայս՚ի վերայ տեառն մերոյ Ցիսո Ո՚ին, որում ակն
ունիմք յերկնից գալոյ՝ առ՚ի վճենդանիս և մեռեալս

դառել. զի յայնմսակս եկեսցէ, որ դառնայցէ ի արկածս բուռնեալ՝ ի մէջ արդարոց և անարդարոց, այն որ նման եկն՝ ի ծածուկ՝ դառիլ յանիրաւի յանարգարոց անտի։ Այս ասեմ, յայնմսակս եկեսցէ, և ոչ լռեալ դադարեսցէ. այս է՝ ի բարբառ դառաւորի դէմ յանպիտանն երևեսցի, այն որ յառաջն ծածկակից եկեալ՝ լուռ եկաց առաջի դառաւորի, յորժամ իբրև ուխտ՝ ի սպանդ վարեցաւ, և որպէս որոջ առաջի կորչի եկաց անմռունչ. զոր օրինակ ընկեցմամբ գուշակեալ վանականքն՝ ի ձեռն Հայսեայ, և տեսանելեաւք՝ ի գլուխ հելեալ յաւետարանի։ Իսկ յաղագս հրոյն և մըրկին՝ ի խօսել մեր զայսոսիկ բանից՝ ի մարգարէսն Հայսեայ, ասացաք իսկ զիարդ իմանալ արժան է։ Այլ որ ասացաւ, «Կոչեսցէ զերկինս՝ ի վերուստ», քանզի սուրբք և արդարք յիրաւի երկինք անուանակոչին, այն է զոր առաքեալ ասէ «Հրաւիրեցէք յաիերաշտակեացութիւն ամենեքին ընդ առաջ տեառն յօդս»։ Այսպէս է ըստ երեսաց գրոյն առեալ, որպէս՝ի վերուստ կոչեցի երկինս, որ միշտ՝ ի վերոյ կայ։ Իսկ՝ի յաւելուածն «Հրաւիրեսցէ զերկիր՝ ի դառել զժողովուրդ իւր», եթէ լռելեայն իմանայցի՝ կոչեցի, զայս միտս յայտ առնել թուի ըստ ուղիղ հաւատոց, զի երկինս առ այնսոսիկ՝ ի դէպ ելանիցէ որք ընդ նմա դառնալոց են, և երկիրս առ այնսոսիկ որ դառելոքն իցեն։ Արդ եթէ դարձեալ «կոչեսցէ զերկինս» իմանալ առ հրեշտակս, այս է՝ կոչեսցէ զՀրեշտակն՝ի բարձունս անդ, և նորոք հանդերձ իջանիցէ առնել դատաստան. կոչեսցէ և զերկիրս, այս է՝ զմարդիկ առ՝ի դառել։ Այսմ եթէ երկինս և երկիրս առնուցուսիր առ մի իրս, լաւ ևս կարծեմ իմանալ զերկոսեան՝ ի վերայ մարդկանն՝ որք յափշտակիցին ընդ առաջ Քրիստոսի յօդս, երկինս անուանեալ վասն հոգւոցն, և երկիրս՝ վասն մարմնոց։ Իսկ դառել կամ ընտրել զժողովուրդ իւր զինչ այլ է, քայց դառողուն որոշել զարարիս՝ ի չարաց, որպէս զօրհս յայծեաց։ Նէտ այսր առ հրեշտակս է ասացեալն «Ժողովել առ ինքն զտուրբս իւր»։ քանզի հրեշտակականն սպասաւորութիւնք կատարեսցի գործ այնպիսի մեծ։ Իսկ եթէ խընդ-

բիցեմք զմյս ոմանս յարդարոց Ժողովելոյ են առ նա, ա-
ած . « Ա՛յլ գնեն զպատարագս ի վերայ սեղանոյ ». Ա՛յս
է բովանդակ քաղաքավարութեի արդարոց, գնել զոխան
այ պատարագօք ի վերայ սեղանոյ . զի եթէ գործք ողոր-
մութեն իցեն, ի վերայ սեղանոյ գնել պարտ է՝ ըստ ինքն-
առաց բանին. « Օ՛ ողորմութեի կամիմ և ոչ զպատարագ »՝
Կամ եթէ ի վերայ սեղանոյ՝ խմանայցի ի սեղանս, զոր
օրինակ ի վերայ երկրի ասեմք զայն՝ որ յերկրի լինի, ըստ
այսմիկ նաբեն իսկ ողորմութեին գործք լինին պատարագք՝
ընդ որս հաձի ած . որպէս և ի տաճարորդ վիրս այսր
գործոյ յիշեմ խօսեցեալ յաղագս այսր . Ա՛ւ յայդոսիկ
գործս հաստատեն արդարք զուխտս իւր, զի սակս խոստ-
մանցն որ ի նորում ուխտի փակեալ կան, առնեն զայս
ամենայն : Ա՛յսպէս ապա առ ինքն Ժողովեալ Ա՛ՀԻի զար-
դարս իւր, և ընդ աջմէ իւր գասաւորեալ, վերջնով գա-
տաստանաւ ասելոց է . Ա՛ՒՂ . ՀԵ . 34 . « Ա՛գկայք օրհնեալք
Հօր իմոյ, ժառանգեցէք զպատարաստեալ ձեզ զարքայու-
թեին ի սկզբանէ աշխարհի : Օ՛ ի քաղցեայ, և հատաք ինձ
ուտել . այլոցքն հանդերձ որք անտանօք լինին ասացեալ
յաղագս բարեգործութեց արդարոցն, և զհնչանքնաւոր
նոցա հատուցմանցն վերջնական վճռով դատողին :

ԳԻ ՅԱԻԵ ԻՒ

Յաղագս մարգարէութեն Ա՛ղաքիայ ի հանգէս վերջին գասաւորութեն այ.
և թէ ոյք ոմանք ասի լինել արդարեի մարքեան պատմուճան.

Ա՛ՆԴՐԵԱՍ մարգարէ, որ և հրեշտակ ասացեալ կար-
ծի յոմանց լինել նա ինքն Ա՛զգաս քահանայ, որպ և այլ
մատենագրութեիք ընկալեալ են ի կանոն . զի ասէ Հերո-
նեմոս թէ այս կարծիք են երբայեցւոց . Ա՛յդ յաղագս յի-
տեն գասաղոնն մարգարէացեալ սորա՝ ասէ . Ա՛ՂԱԿ . Դ . 1.
« Ա՛հաւադիկ գոյ՝ ասէ տէր ամենակալ . և ոչ ժամկա-

լեսցէ աւուր մի նորա, և կամ ո՞ հանդարտեսցէ յայտնութեանէ նորա. զի նա մտցէ իբրև զոց Հալոցի, և իբրև զօձաո լուանալեաց։ Այլ նստցի սրբել և ձուլել իբրև զարծաթ և իբրև զոսկի. և սրբեսցէ զորդիս Ղևեայ, և հալեսցէ զնոսա իբրև զոսկի և իբրև զարծաթ. և եղիցի տեառն մատուցանել պատարագս արդարութիւն։ Այլ հաճոյ եղիցի տեառն պատարագն Յուդայ և Երուսաղէմի, որպէս յաւուրսն յաւիտենից, և որպէս յամին առաջինո։ Այլ հասից ի վերայ ձեր դատաստանաւ. և եղէց վկայ արագ ի վերայ կախարդաց և գանանց շնացելոց, և ի վերայ սխտոյիկ ոյք երդնուցուն յանուն իմ ստութիւն, և որոց հատանիցեն զվարձս վարձկանի, և որ յաղթահարեն զայրիս, և գործեն զորբս, և խոտորիցեն զիրաւունս պանդխտին, և ոչ երկնչիցին ինձն՝ ասէ տէր ամենակալ. Ո՛չ ես եմ տէր ած ձեր, և ոչ փոխիմ,,։ Այ բանիցս ասացելոց երևի յայտնապէս՝ թէ յայնմ դատաստանի լինելոց է ոմանց պատուհաս մաքրողական. զի զինչ այլ իմանալ անկ իցէ զասելն, մտցէ իբրև զոց Հալոցի, նստցի սրբել ձուլել իբրև զարծաթ։ Ա՛յգպիսի ինչ ասէ և Յասայի. ՟ք. ԺԱ.՝՝Լուասցէ տէր զաղջն ուստերաց և դստերաց Սիոնի և Երուսաղէմի, և զարիւնն ի բաց սրբեսցէ ի միջոց նոցա Հոգւով դատաստանաց և Հոգւով այրման,,։ Այայց եթէ գուցէ սրբել աղտիցն և հալելոյ եղանակ ասիցէ ոք զորդուն լարացն յընտրելոց անտի վրիժագործ դատաստանաւն, մինչ զի լարացն բաժանումն և դատաստարտուն իցէ բարեացն մաքրութիւն, զի այնու հետև ոչ ևս խառն ընդ այնպիսիս կալոց են։ Այակայն զի ասէ զկնի, սրբել զորդիս Ղևեայ, ձուլել իբրև զոսկի, և եթէ մատուսցեն պատարագս արդարութիւն, և այն հաճոյ եղիցի տեառն, այս ցոյցանէ, ապաքէն նոցունց սրբեցելոցն լինել յետ այնր պատարագս արդարութեանն հաճոյս այ. ուստի նոքին իսկ մաքրեսցին յիրեանց արդարութենէն որով անհաճոյք տեառն լինէին. իսկ պատարագք նր և կատարեալ արդարութիւն յորժամ մաքրեալք իցեն, անձինք իւրեանց են. զի այնպիսիք զինչ առաւել ընդունելի այ մատուցանեն քան

անձամբք զանձինս։ Ասեային զայդ խնդիրք յաղագս մաքրողական պատժոց՝ այլևս ժամանակի թողուլն է, զգուշեաւ և առնուլ ի քէն։ Կամ որդիս Պ և եթէ և Հոգեյ և Հրեշտակի պարտ է զնկերցն ոչ ի հրեից միայն ժողովեալ, այլ յայլոց ևս ազգաց. ոչ որպիսի այժմ է, յորում «Ամէն ասիցեմք թէ մեզ ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ. ա. Յովհ. ա. 8. այլ որպիսի յայնժամ լինիցի՝ յետին դատաստանաւն արբեալ, զոր օրինակ կալ Հոսամանն, ոմանց և հրեշտէն մաքրեալ՝ որոց պիտոյն իցէ մաքրութէն այսօրինակ. մինչ զի չէիցէ ոք քնաւ ի նոցանէ՝ որ մատուցանիցէ վասն մեռելոց իւրոց պատարագ։ Օ ի ամենեքին որ այսպէսն մատուցանեն, յայտ է թէ ի մեղս կան, և առնոյին թողուլն մատուցանեն. որպէս զի ի մատուցանելն և ի հաճոյս լինել այ, յայնժամ գոհանիցեն թողութէն։

ԳԼՈՒԽ Ի.Զ

Թէ զինչ ի սրբոցն մատուցեալ պատարագք այնպէս հաճոյացան այ, որպէս հաճոյ եղեն յաւուրսն յաւիտենից և յամսն առաջինս։

Լ՚ՐԴ կամիցեալ այ ցուցանել՝ թէ քաղաք իւր ոչ ևս կալցի յայնժամ զգոյն սովորութիւնն, ասաց թէ որդիք Պ և եթէ մատուցանելոց են զպատարագս իւրեանց արդարութէն. ապա ոչ ի մեզս, և ոչ վասն մեզուց. յորմէ գոյ խնդրել թէ ի կցորդեալ ասացուածին «Եւ հաճոյ եղիցի տեառն պատարագն Յուդայ և Երուսաղէմի որպէս յաւուրսն յաւիտենից և որպէս յամսն առաջինս,,՝ի զոր է Հրեից ակնուհետ անցեալցն ժամանակաց ըստ օրինացն Հնոյ կտակին։ Կանգնի յայնժամ ոչ եթէ արդարութէ՝ այլ մեզէ պատարագս մատուցանիցեն, և առաւելապէս ի սակս մեղաց. մինչ զի և քահանայն ինքնին՝ որում պարտ էր արդարագոյն քան զայլսն լինել՝ սովոր էր ըստ այ հրամա-

նին՝ նախ վասն խորոցն մեղաց մատուցանել, և ապա ժո-
ղովրդեանն ։ Սորին վասն բացայայտել հարկ է զիմաստս
ասացելոյն " որպէս յաւուրսն յաւիտենից, և որպէս յամսն
առաջինս „ ։ Վասնզի զայն ժամանակ թերևս արդեօք
յուշ առնէ՝ յորում նախաստեղծք կային 'ի դրախտին ․ զի
մաքուրք ելով նոցա յայնժամ և առողջք յամենայն աղ-
տէ և յարատոյ մեղաց, զանձինս իւրեանց մատուցանէին
այ̃ պատարագս անարատս ։ Բայց յորմէ հետէ պատուի-
րանազանցութեան աղագաւ արտաքս վարեցան, և դա-
տապարտ գտաւ 'ի նոսա մարդկային բնութիւն բաց
'ի միակ միջնորդէն, և բաց յորոց յետ աւազանին ծնըն-
դեանն այն ինչ տղայոց, " Ոչ իցէ սուրբ յաղտոյ ․ այլ և
ոչ որ ․ թէպէտ և միոյ աւուր իցէ կեանք նորա 'ի վերայ
երկրի „, ըստ որում գրեալն է ․ Յոբ ․ ԺԴ ․ 4 ։ Իսկ եթէ
ընդդէմ որք առարկու լինիցի, թէ մարթ է և զայնցանէ
ասել իրաւաբար՝ թէ արդարութե̃ մատուցանեն պատա-
րագս, որք 'ի հաւատոյ մատուցանեն ․ զի " Արդարն 'ի
հաւատոյ կեցցէ „ ․ թէ և զանձն խաբէ՝ եթէ ասիցէ մեղս
ինչ չունել ․ և այնու չպարտի ասել՝ զի 'ի հաւատոյ կեայ ․
այլ միթէ իշխիցէ՞ որք ասել թէ այս հաւատոյս ժամանակ
հաւասարեսցի այնմ կատարածի՝ յորժամ 'ի հուր յետին
դատաստանին սրբեսցին մատուցանելիքն պատարագաց
արդարութե̃ ։ Նա և քանզի յետ այնպիսի սրբարարութե̃ն՝
չէ կարծելի և ոչ միոյ մեղաց ընդունական զարդարսն գոլ,
յայտ է թէ այն ժամանակ՝ ըստ անմեղութե̃ն պայմանի
ոչ այլում ժամանակի 'ի կշիռ գայ, քան եթէ յորժամ
նախաստեղծք զանմեղակիր երջանկութե̃ն վարէին կեանս
'ի դրախտին՝ մինչ չև եղեալ յանցաւորութե̃ն ։ Ուղղակի
ապա զայս իմանամք նշանակեալ յասելն՝ որպէս յաւուր-
սըն յաւիտենից, և որպէս յամսն առաջինս ․ քանզի և
Եսայեաւ՝ յետ խոստանալոյ զերկին նոր և զերկիր նոր,
ԿԵ ընդ այլոցն զոր յաղագս սրբոցն երանութե̃ 'ի կարգ-
արկանէ այլաբանութ̃ք և առակօք, զորոց զդիպողն հա-
տուցանել զբացայայտութի̃ չներէ երկայնութե̃ն զգու-
շութի̃, այսպէս ասէ ․ " Ըստ աւուրց փայտին կենաց եղի-

ցին աւուրք ժողովրդեան իմոյ .., | Ոսկ ո՞ր ընտեղակիրք-
Թեաւ ի սուրբ գիրս՝ անգիտանայ Թե յորժամ վայրի սրն-
կեալ իցէ ոչ զփայտն կենաց · յորոյ ի ձաշակմանէն զը-
կեալ նախաստեղծին՝ յորժամ տարագիր գնասս ի դը-
բախտին յանցաւորութեան աղաչ, պահ հրեղէն պահու-
ցանողական չուրջանակի այժմ փայտի կարգեցաւ ։

Ա.ՀԼ եԹէ զաւուրս փայտին կենաց զառ ի Հայոցեայ
մարգարէէ յիշատակեալն՝ սկզիցէ ոք իմանալ զարդեան
աւուրց եկեղեցւոյ Ասի, և կենաց փայտ գնա ինքն Ասի
մարգարէաբար ասացեալ, իբրև զի Նա է իմաստութիւն
ոչ, զորմէ Սողոմոն ասէ · Ա.ՀԼ · Ի · 18. “ Փայտ կենաց է
ամենեցուն որք պատսպարին ի Նա .., և եԹէ ոչ յերկա-
բեցին նախաստեղծք տարեւոր ժամանակաւ ի դրախտին,
ուստի արտաքսեցան իսկ վաղվաղակի, ոչ արարեալ անդ
զաւակս, որոյ վասն անմահութիւն իցէ յայն ժամանակ պատ-
կանագրել զասացեալն “ որպէս զաւուրն յաւիտենից և
որպէս յամն առաջինս .., եԹէ ասեմ այսպէս, տեղի
տամ ի խնդրոյ այսի, զի մի հարկ առնիցէ զամենայն ի
խոզ առնուալ երկայն բանիւք, որով Հիմարտութիւն յայտ-
նեալ հաստատեսցի յայս կամ յայն կողմն ։ Վասզի որ-
գաբեւ զայլ իմաստս նշմարեմ ի բանիս Հայոցեայ, մի
գուցէ աւուրս յաւիտենից և ամն առաջինս զմարմնական
պատարագացն համարիցիմք խոստացեալ մեզ մարգա-
րէիւն իբր պարգև գերագոյն ։ Օ ի այն հնոյ օրինացն
պատարագք յամենայն անասնոց՝ հրամայեցան անարատս
մատչել և անբիծս ամենևին, նշանակելով զարս սուրբս,
որպիսի Ասի միայն գտաւ՝ զատեալ յամենայն մեղաց ։ Ա-
պա քանզի յետ դատաստանին ի սրբոյ Հրով այնոցիկ որ
արժանաւորք այնպիսւոմ սրբութեան են, ոչ ևս իցէ մեղ
ինչ գտանել բնաւ յարդարս ամենայն, և այնպէս գիւ-
բեանց անձինս մատուցանիցեն արդարութիւք, որ լինիցին
պատարագք անարատք և յամենայն բծէ սոսկք, եղիցին
արդարեւ որպէս յաւուրսն յաւիտենից և որպէս յամն
առաջինս, յորժամ յօրինակ հանդերձելոց իրացս մատ-
չէին պատարագք սրբանուէրքդ · զի այս եղիցի սրբութիւն

յայնժամ յանմահ մարմնի և 'ի հոգի սրբոյն, որ առակաւ ցուցանիւր 'ի մարմինս պատարագացն առաջնոց ։

Յետ այսոցիկ ասէ և վասն նոցա՝ որք դատապարտութեան և ոչ մաքրութեան են արժանիք. "Եւ հասից 'ի վերայ ձեր դատաստանաւ, և եղէց վկայ արագ 'ի վերայ կախարդաց և կանանց շնացելոց,,, այլովք հանդերձ. ուր 'ի Թիւ արկեալ զյանցմունս արժանապատիժս ածէ 'ի վերայ. "Զի ես եմ տէր ա̄ծ ձեր, և ոչ փոխիմ,,. իբր ասել. յորժամ զձեզ փոփոխիցէ կամ յանցուածն ձեր 'ի վատԹարագոյնս, և կամ շնորհք իմ 'ի լաւագոյնսն, ես ոչ փոխիմ բնաւ ։ Իսկ վկայ ինքնին լինել ասէ, վասն զի յիւրում դատողութեան վկայից չէ կարօտ. և այն՝ արագ, կամ զի յանկարծակի եկեսցէ, և անակնկալ գալստեամբն եղիցի դատաստանն շուտափոյԹ, որ անագանն կարծիւր, և կամ զի յանդիմանելոց է զմտաց նոցա խիղճ առանց յերկար հարցափորձի ։ "Զի խորհրդոց ամբարշտաց հարց և փորձ եղիցի,,. որպէս և գրեալն է. Իմաստ. ա̄. 9 ։ Եւ առաքեալ ասէ. "Յանդիմանել զմիմեանս 'ի խորհրդոց իւրեանց, կամ Թէ պատասխանի իսկ տալ՝ յաւուրն յորում դատիցի ա̄ծ զգաղտնիս մարդկան ըստ աւետարանիս իմում 'ի ձեռն Յ̄սի Ք̄սի,,. Հռ. Բ. 15 ։ Ապա սովին օրինակաւ եւս իմանի լինել տեառն վկայ արագ, յորժամ 'ի սուղ ժամանակի յուշ ածիցէ՝ որովք միանգամ յանդիմանել ունի և պատուհասել զգատեցելոցն գիտակցութեան ։

ԳԼՈՒԽ ԻԲ

Յաղագս որոշման բարեաց և չարաց, որով հանդիսանայ ընտրութիւն յետին դատաստանին ։

ՅԵՏՆՈՒՄՆ դատաստանի 'ի դէպ գայ և միւս բան սորին մարգարէի Մաղաքեայ, զոր յուԹևտասներորդ գիրս ըստ այլ ինչ պատճառի յիշատակեցի, ուր ասէ. "Եւ

եղիցին ինձ ասէ տէր ամենակալ, յաւուր յորում ես արարից փրկութիւն. և փայփայեցից զնոսա՝ որպէս փայփայէ հայր զորդի զհարուք ծառայեալն նմա: Եւ դարձջիք և տեսջիք 'ի մէջ արդարոյն և 'ի մէջ անօրինին, և 'ի մէջ ծառայելոյն ա՛յ և 'ի մէջ չծառայելոյն: Զի ահա եկեսցէ օր տեառն բորբոքեալ իբրև զհնոց, և այրեսցէ զնոսա. և եղիցին ամենայն այլազգիք և ամենայն որ գործեն զանօրէնութիւն՝ եղէգն, և վառեսցի զնոքօք օրն որ գալոց իցէ, ասէ տէր ամենակալ. և մի մնասցէ նոցա արմատ, և մի ոստ: Եւ ծագեսցէ ձեզ երկիւղածաց անուան իմոյ արեգակն արդարութե՛ն, և բժշկութի՛ն 'ի թևս նորա. և ելջիք և խայտասջիք իբրև որթք արձակեալք 'ի կապոյ. և կոխեսջիք զանօրէնս, և եղիցին մոխիր 'ի ներքոյ ոտից ձերոց յաւուրն զոր ես արարից, ասէ տէր ամենակալ»: Այս խտիր վարձուց և պատժոց՝ որ զարդարսն անջրպետէ յանարդարոց անտի, և ոչ տեսանի ընդ արեգակամբս յընդունայնութե՛ն այսց կենաց, յորժամ բացափայլեսցէ 'ի ներքոյ արեգականն արդարութե՛ն յերևման անտի կենացն, յայնժամ ահա լինիցի դատաստան, որ երբէք չէ լեալ:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Թէ զՄովսէսի օրէնս հոգևորապէս իմանալ արժան է, զի մի մարմնեղէն իմաստիւք 'ի քրթմնջիւն վնասակար լիցի անկանիլ:

Իսկ զոր ասէ կցորդէ նոյն մարգարէ, «Յիշեցէք զօրէնսն Մովսէսի ծառայի իմոյ, որպէս պատուիրեցի նմա 'ի Քորեբ զամենայն զհրամանս և զիրաւունս», 'ի դէպ ժամու յուշ առնէ զհրամանսն և զիրաւունսն՝ յետ յայտնաբանելոյ զխտիրն մեծ որ լինիցի օրինապահացն և արհամարհողաց. և զի ուսցին միանգամայն՝ հոգևորապէս իմանալ զօրէնսն, և 'ի նմա զՔ՛ս գտանել, որոյ դատո-

ղութ՟ն համամնիցի ընտրութ՟ի ընդ բարիս և ընդ չարս: Զի ոչ վայրապար ասէ տէրն առ Հրեայս. «Եթէ հաւատայիք Մովսիսի, հաւատայիք արդեօք և ինձ. զի նա վասն իմ իսկ գրեաց»: Վասնզի մարմնապէս նկատեալ Հրէից զօրէնսն, և անդ խտացեալք թէ երկրաւորացն խոստմունք տիպք էին երկնաւորացն, յայն քրթմնջիւն մտաբերեցին, մինչ համարձակել՝ ի բանս. «Զուր է ամենայն որ ծառայէ այ՟. և զինչ աւելի է զի պահեցաք զպահպանութ՟իս նորա, և զի գնացաք պաղատանօք առաջի տեառն ամենակալի: Եւ արդ մեք երանեմք այլոց. և բարեշէն են ամենեքին որ գործեն զանօրէնութ՟ի»: Ի բանից յայսցանէ շարժեցաւ գոգցես մարգարէն զվերջնականն բացայայնել զդատաստան, յորում անօրէնք չլինիցին և ոչ կերպարանօք երջանիկք, այլ ակն յայտնի ծանիցեն երիցս եղկելիք գոլ. և բարեգործք և ոչ միով մարմնական թշուառութ՟բ վտանգեալք, պայծառ՝ և մշտնջենաւոր երանութ՟ն զուարճանայցեն: Վասնզի և վերագոյն ասացեալ էր մարգարէն զնոյնօրինակ խօսս նոցա, զի ասէին. «Ամենայն որ զչար գործէ, բարւոք թուի առաջի տեառն, և ընդ այն իսկ հաճեցաւ նա»: Այս ասեմ, ՚ի քրթմնջմանս այսպիսիս անկան հակառակ այ՟, վասն զի մարմնապէս առնուին զօրէնս Մովսիսի: Աւստի նա ինքն սաղմոսերգուն յեօթանասներորդին երկրորդին խոստովանի, թէ ահա փոքր մի ևս սասանեալ էին ոտք իւր, և գայթակղեալ էին գնացք իւր ՚ի կործանումն, իբր զի նախանձեցաւ ընդ անօրէնս, տեսեալ զխաղաղութ՟ի մեղաւորաց. մինչև ասել հանդերձ այլովքն և զայս. «Զիարդ գիտաց ած՟, կամ գուցէ արդեօք գիտութ՟ի առ ՚ի բարձրելոյ»: Եւ ևս ասել. «Զուր ուրեմն արդարացուցի զսիրտ իմ. լուացայց սրբութ՟բ զձեռս իմ»: Մինչ ՚ի դժուարահաս տարակուսանացդ լուծումն՝ որ ծագէ ՚ի տեսանելն զբարեգործսն թշուառացեալս, և զչարագործսն ՚ի բարօրութեան, ասէ. «Ի մտի եդի թէ սակայն և այս ջան է առաջի իմ. մինչև մտից ՚ի սրբութ՟ի այ՟, և ՚ի միտ առից զկատարած նոցա»: Վասնզի ոչ այդպէս լի-

Նիցէ ՚ի դատաստանի յԵսուա, այլ յայտ յանդիման Թշուառութի՛ն անօրինաց, և ակն յայտնի երանութի՛ն արդարոց՝ կարի այլազգագոյն քան յայժմուս զնակն երևեցոյցէ ։

ԳԼՈՒԽ ԻԹ

Ցաղագս գալստեան Եղիայի նախ քան զդատաստան. զի ՚ի քարոզել նորա երբ յերկան գան՝ որ ՚ի սուրբ դիցս գաղանիք, հրեիցն գոլծիցէ գարհաւրքն։

Յետ ազգ առնելոյ մարգարէին՝ յիչել Հրեից զօրինացն Մովսիսէսի, քանզի տեսանէր կանխաւ՝ զի այլ ևս ընդ երկար ժամանակ ոչ որպէս արժանն էր Հոգևորական խնամոյ օրինացն լինելոց էն մնառուք, անդէն ՚ի վերայ բերէ. «Ա՛յս աշա ես առաքեմ առ ձեզ զԵղիա Թեզբացի, մինչ չև եկեալ իցէ օր տեառն մեծի և երևելոյ, որ պատրաստեցէ զսիրտս Հօր առ որդի, և զսիրտս առն առ ընկեր իւր. գուցէ եկեալ հարկանիցեմ զերկիր միանգամայն»։ Յորժամ մեծն այն և սքանչելին Եղիա մարգարէ բացայայտեցէ Հրեից զօրինացն ՚ի կեանսում ժամանակի յառաջ քան զդատաստանն, կայ ՚ասեյ Հրեից՝ ըստ որում քաջածանօթ իսկ է ՚ի խօսս և ՚ի կարծիս հաւատացելոց, դառնալ առ Չէմարիան Աստ, որ և մեզս է. զի ոչ անպատճառ գոյ յոյս՝ գալ նմա նախ քան զգալուստ փրկչի գատաւորին. որպէս և լինել նորա ցարգ կենդանի՝ յիրաւի հաւատացեալ է. քանզի կառոյ հրեղինեայ յերկրաւորացս աստի յափշտակեցաւ նա, զոր յայնապէս սրբազանն վկայէ մատենագրութի՛ն ՝Ւդգ եկեալ նորա, և զօրինացն ըստ հոգևորականն խնամոյ պատրաստելով, զոր այժմ մարմնապէս իմանան Հրեայք, «Դարձուսցէ զսիրտս հօր առ որդի»։ այս է՝ զսիրտ հարց առ որդիս. զի էգական փոխանակ բազմաբարականի եդեալ էն ևօթն անառն (թ արգմանեաք. և իմանի ասել. որդիքն հրեայք այնպէս իմանայեն

զօրէնս , զոր օրինակ իմացան Հարք նոցա մարդապէտքն , յորս էր և ինքն Մովսէս . զի այսու օրինակաւ սիրտ Հարցըն դառնայցէ առ որդիս , յորժամ Հարցն իմացողութեի՛ անցանիցէ առ որդիս ։ Օ՜հէտ այսը լսելին ընծայերցուածոն ասէ . “Այլ զսիրտ որդւոց առ Հարս նոցա ,, . յորժամ ըստ մտաց որդւոցն և Հարք իմանան ։ Այլ աստանօր եօթնասունեքն ասացին . “Այլ զսիրտ առն առ ընկեր իւր ,, . զի կարի մեքնաւորք էն Հարքն և որդիք ։ Վասն զի՛ բանի եօթանասնից՝ որք մարդապէտքն իմն թարգմանեցին , զայլ իմաստս մարթի է՛ի դուրս բերել , և այն դիպող և . իմանալով թէ Այդպէս զսիրտ այ հօր դարձուցանելոց է առ որդին . ոչ եթէ առնել , զի Հայր սիրիցէ զորդի , այլ ուսուցանելով թէ Հայր սիրէ զորդի , որպէս զի Հրեայք որք նախ առեցին գնա , սիրեսցեն զնոսն զմեր՛ն Փրկի՛չն ։ Վասն զի ըստ հրէական կարծեաց՝ ասի մեզ կուսի ունի այժմ զսիրտ իւր՛ի մերոյն Փրկի՛չէ , ապա ըստ նոցա՝ յայնժամ սիրտ հօր դարձցի առ որդի , յորժամ Հրեայքն սրտիւք դարձելովք ծանիցեն զսէր հօր առ որդի ։ Ապա զկնի եգեալն , “Այլ զսիրտ առն առ ընկեր իւր ,, , այս է՝ դարձուցէ Այդպէս նա և զսիրտ մարդոյ , զինչ այլ՛ի չհայ միտս տայ , բայց զսիրտ մարդոյ առ մարդն Փրկի՛չ ։ Օ՜ր որ՛ի կերպարանս այ է՝ ասէ մեր , զձառայի առեալ զկերպարանս , Հաձեցաւ լինել և ընկեր մեր . և ահա զայս արասցէ Այդպէս , Այլ ասէ . “Վասն զի եկեալ Հարկանիցեմ զերկիր միանգամայն ,, . զի երկիր էն՝ որք զերկրաւորս խորհին . որպէս մինչև յայսօր մարմնական էն Հրեայք . և յայսմ ախտէ այն արտունջք ածընդդէմ յառաջ եկին , թէ “Օ՜ւր է ամենայն որ ծառայէ այ ,,

ԳԼՈՒԽ Ի.

Ի գիրս Հնոց կտակարանաց ուր միանգամ բնթեռնուին թէ գառեւոց է ած. ոչ յայտնապէս ի գէմ Քրիստոսի ասացեալ. բայց ի վկայութենէ ինչ յորս ինքն աւր ած խօսի. յայտնի առնէ թէ անշուշտ ինքն Քրիստոս է.

ՅՈՎՀԱՆՆԷՍ այլ եւս վկայութիւնք են ած ասացուցն գրոց յաղագս յետին դատաստանին այդ, զորս եթէ զննաս ի մի կամիցիմ ժողովել, երկայնի կարի յոյժ. վասն որոյ հերիւրասցի որչափ ինչ ի սուրբ գրոց նորոց եւ հնոց ցուցաք՝ թէ պատմեցաւ այն յաւաքագոյն. Ապահաս ոչ այնպէս բացերեւակի յայտնէն Հնոյն բանք՝ որպէս նորոյս, թէ Քրիստոսիւ լինելոց է դատաստանն, այսինքն է Քրիստոս դատաւոր գալոց է յերկինից. զի ուր ի հինն կամ ած ասէ զանձնէ գալ, եւ կամ զայ ասի թէ գալոց է, ոչ իսկ եւ իսկ Քրիստոս իմանի. Վասնզի տէր ած՝ եւ Հայր է, եւ որդի, եւ Հոգի սուրբ. եւ զայս ոչ արժան է թողուլ անվկայ. Այլ՝ի իւրի զայն ցուցանելն է նախ առաջին, թէ զնոյն Յիսուս Քրիստոս իբրեւ տէր ած խօսէլով՝ի գիրս մարգարէականս, յայտնի ձանաչի լինել ինքն Յովհ. Ա. Ե. Ա. Ի սուր ինձ Հայոց, եւ Հաւատել զոր եաղ կամ. Ես եմ առաջին, եւ ես եմ յաւիտեան. Ձեռն իմ արկ հիմունս երկրի, եւ աջ իմ հաստատեաց երկինս. կոչեցից զամենեսեան զնոսա, եւ կայցեն ի միասին. ժողովեցին ամենեքեան եւ լուիցեն թէ ո պատմեաց նոցա զայն. Կամ տէր քո արարի զկամս քո ի վերայ Քաղդէացւոցն, բառնալ զզաւակն քաղդէացւոց. Ես կոչեցի, եւ ես խօսեցայ. ածի զնա եւ յաջողեցի զձանապարհս նորա. Մատերբ առ իս եւ լուարուք զայս. ոչ ի սկզբանէ ի ծա-

ծուկ ինչ խօսեցայ , և ոչ ՚ի տեղւոջ խաւարին երկրի . յորժամ լինէրն իսկ , ես անդ էի . և արդ տէր տէր առաքեաց զիս և Հոգի նորա ,, : [՚Ահա նոյն ինքն է՝ որ խաւար որպէս տէր ածէ , և սակայն ոչ նշանակիւր լինել [՚Ի [՚Ի՞նչ , եթէ չէր յաւելեալ “ և արդ տէր տէր առաքեաց զիս և Հոգի նորա ,, . քանզի ասէ զայդ ըստ ծառայական կերպին , ՚ի կատարեալ ժամանակ եգեալ զայն փոխանակ ապառնւոյն , զոր օրինակ նորին մարգարէի կայ ընթերցուած . “Երբեմն ոչխար ՚ի սպանդ վարեցաւ ,, . ոչ ասէ՝ վարեսցի , այլ զկատարեալն եդ փոխանակ ապառնւոյն . և յաձախակի այսպիսի մարգարէութիւն ասացուած ։

[՚Ա և այլ տեղւ ՚ի գիրս [՚Ո՞ւրարիայ . է . 8 . որ զայս ցուցանէ բացայայտաբար՝ թէ ամենակալն առաքեաց զաստուածութիւն իւր՝ ոչ թէ՝ ած Հայր զորդին ած . զի այսպէս դրեալ է . “[՚Այսպէս ասէ տէր ամենակալ ։ [՚Ո՞վ փառաց ըզհին արձակեաց զիս յազգն՝ որ կողոպտեցին զձեզ . զի որ մերձենայ ՚ի ձեզ՝ որպէս որ ընդհարկանիցի ընդ բիբ ականն իւրոյ ։ [՚Ո՞ւ ի ահաւասիկ ես ածից զձեռն իմ ՚ի վերայ նոցա , և եղիցին յաւար ծառայեցուցչացն նոցա , և ծանիջիք թէ տէր ամենակալ առաքեաց զիս ,, : [՚Ահաւասիկ տէրն ամենակալ ասէ զամենեսին առաքեալ ՚ի տեառնէ ամենակալէ . և ո՞ իշխեսցէ զայլ ոք խմանալ՝ բայց միայն զ[՚Ի՞նչ որ խօսի առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի . զի ասէ յաւետարանին . “[՚Եւ առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի ,, : [՚Ո՞ր սա առանձինն ՚ի բիբ ականն ոչ օրինակեաց ՚ի տակս կաթողիկն սիրելոյ թէն , և յայնմ դասակէ ոչխարաց եղէն նոքին առաքեաքն , սակայն զիարառաց զկին , այս է՝ յետ փառաց յարուէն իւրոյ , զի յառաջ քան զայն [՚Ի՞նչ չէ եր փառաւորեալ , ասէ աւետարանին , առաքեցաւ և առ հեթանոսս յանձինս առաքելոց իւրոց . և այնու օրինակաւ ՚ի գլուխ եւ գրեաւն ՚ի սաղմոսի . “Փրկեսցէ զիս տէր ՚ի հակառակութենէ ժողովրդոց , և կացուսցէ զիս գլուխ հեթանոսաց ,, : Որպէս զի որք կողոպտեցինն զիարսկեալքեանս՝ ՚ի ծառայութիւն գնասցեն նուաճեալ , ոչ եթէ նոյնպէս փոխա-

նակ կողոպտեացին, այլ ինքեանք լինիցին աւար խոպան-
լեանցն. զի զդոյն խոստացեալ էր առաքելոց ասելովն.
«Ի՛ զարթից զձեզ որորդս մարդկան ... և միւսոյն ի նոցա
նէ, «Հայեցար հեաե զմարդկին որոյցէս ի կեանս ... Այլ
ուրեմն լինելեն աւար, այլ ի բարիս, իբր զդարձիս հզօրին
յախտահակելով, բայց կապեալ նախ զնա հզօրագոյնս.
Վարձեալ նովին մարգարէիս խոսելով առաքն ասէ.
Ծ՚ա. ՃԲ. 9. «Աւ եղիցի յաւուր յայնմիկ խնդրեցից
բառնալ զամենայն ազգս եկեալս ի վերայ Երուսաղէմ.
և հեղից ի վերայ տանն Դաւթի և ի վերայ բնակչաց Ե-
րուսաղէմի հոգի շնորհաց և ողորմածեան. և հայեսցին առ
իս փոխանակ կաքաւելոյն. և կոծեսցին ի վերայ նորա
կոծ իբրև ի վերայ սիրելւոյ, և աշխարհեսցին աշխոյժ իբ-
րև ի վերայ անդրանկան ... Ա՛յ ապաքէն այ միայոյ է
բառնալ զամենայն ազգս դիմամարտս սրբոյ քաղաքին
Երուսաղէմի եկեալս ի վերայ նորա, առ ի նուաճելոյ
զնա, կամ հեղուլ ի վերայ տանն Դաւթի և ի վերայ
բնակչաց նորին քաղաքի զհոգի շնորհաց և զողորմածեան.
Այլապէս այլ է այս, և ի դիմաց այ խոսեցեալ է մարգա-
բէիւն. և սակայն զայս ամ զվիճամեծագդ և զծանօթագոյդ
արարող զինքն իսկ լինել ցուցանէ. «Զի յաւելուածով բա-
նին. «Աւ հայեսցին առ իս փոխանակ կաքաւելոյն ... և
այլն. «Ո՛րանդի յայնմ աւուր ապաշաւելոց են Հրեայք, և
նոքին իսկ ընդունելիքն զհոգի շնորհաց և զողորմածեան, իբ-
րև զի առ չարչարանօք նորա կաքաւեցին և խաղացին
զնովաւ. և ահա տեսցեն եկեալ զնա իբրական փառօքն,
և ծանիցեն Թէ նա այն է, զոր յառաջն ի նոսա առ խո-
նարհաբեր նորա կատակեցին հարբք իբրեանց. այլ և նո-
քին հարբք նոցա զդործոնեայք մեծի ամբարշտութեանն կին-
դանացեալք տեսանելոց են զնա, բայց ի պատժատրու-
թիւն, և ոչ այլ յաղագս Թէ. վասն որոյ ոչ առ նոսա խմանել
ասացեալն առաւօր, «Հեղից ի վերայ տանն Դաւթի
և ի վերայ բնակչաց Երուսաղէմի հոգի շնորհաց և գո-
թութեան ... և այլն, այլ առ տեքեալն ի նոցա զարմին ի-
մանի, որք յայնժամն են հաւատալոց միջնորդաւն Ա-

զխայի ։ Այլ զոր օրինակ սովոր եմք մեք ասել առ Հրեայս՝ դուք սպանիք զՔս, թէպէտ և հարք նոցա արարին զայդ, սոյն օրինակ և սոքա ցաւեսցին՝ իբր ինքեանց գոդ-ցես ներգործեալ զոր նախածնողք իւրեանց արարին ։ Եւ սոքա յետ ընդունելութե հոգւոյ շնորհաց և գթութե գոլով հաւատացեալք, ոչ դատապարտեսցին ընդ ամբարշտեալ ծնողսն, բայց իբր իւրեանց արարուած ողբան զնոցայն. որով ոչ ցաւագնին 'ի պարտեաց յանցման, այլ յամպարտութեան եռանդնէ ։ Ապաքէն ուր եօթանասուն թարգմանքն ասացին "Հայեսցին առ իս փոխանակ կաքաւելոյն" կամ խաղալոյն, յեբրայականէն թարգմանեցաւ "Հայեսցին առ իս զոր խոցեցին" կամ բևեռեցին. և այսու բանիւ յայտնագոյն եւս երևի Քս խաչելեալ ։ Սակայն կաքաւելն կամ խաղալն զնովաւ զոր եօթանասունք ընտրեցին ասել, ընդհանուր յամենայն չարչարանս նորա ճշմարտեալ է ։ Վասն զի ընդ ըմբռնումն նորա և ընդ կապումն, ընդ դատելն և նախատանաց զգեստով ծաղկելն, ընդ փշովքն պսակելն, ընդ հարումն գլխոյն եղեգամբ, ընդ ծաղուծանակն ծնրադրուն, ընդ խաչելն բարձումն և ընդ կախելն զփայտէն՝ արդարև կաքաւս կայթից յօրինեցին ։ Վն որոյ առանց 'ի մի թարգմանութե կալելոյ՝ եթէ զերկաքանչիւրն յարակցեալ ընթեռնուցումք՝ կաքաւեցին և խոցեցին, ամբողջաբար ահա զճշմարտութի տէրունական չարչարանացն 'ի միտ առնումք ։

Ապա ուրեմն յընթեռնուլ անդ 'ի մարգարէականսն գիրս՝ թէ գալոց է ած առնել զդատաստան յետին, եթէ չկայցէ եւս այլ որոշումն, պարտ է զՔս միայն իմանալ 'ի պատճառս դատաստանին, զի թէպէտ և հայր ինքն դատիցի, այլ դատիցի գալստեամբ որդւոյ մարդոյ. զի նա դէմ յանդիման երևմամբ "Ոչ դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ իւրում". որ յայտնեսցի մարդ-դատիչ որպէս եղեն մարդ դատեցեալ ։ Եւ ո՞ք այլ իցէ՝ զորմէ դարձեալ խօսի ած Եսայեաւ յանուն Յակոբայ և Իսրայէլի, յորոյ 'ի զաւակէն ընկալաւ մարմին. և գրեալ այսպէս է. Ես. խբ. 1. "Յակոբ ծառայ իմ, օգնական

եղեց նմա. Խօրայէլ ընտրեալ իմ զոր ընկալաւ անձն իմ. եառ զոգի իմ՝ իվշ նորա, և իրաւունս հեթանոսաց պատ-
մեսցէ. Ո՛չ աղաղակեսցէ և մի վիճեսցէ և մի ոք լուիցէ արտաքոյ զբարբառն նր. զեղգն ջախջախեալ մի բեկցէ, և զպատրոյկն առկայծեալ մի շիջուսցէ. Ո՛ւղիղ հանցէ ի ճշմարտութիւն զիրաւունս. Ծագեսցէ և մի խորտակեսցէ. մինչև դիցէ յերկիր զդատաստան. և յանուն նորա հեթանոսք յուսասցին ,, : Հրբայականն ոչ ընթեռնու՝ Յակովբ և Խօրայէլ, այլ զոր անդ ասի՝ ծառայ իմ, եօթանասնից թարգմանչացն կամեցեալ յայտ առնել թէ ոչինչ միտս ի-ցէ ասացեալ, այս է՝ ի պատճառս ծառայական կերպին՝ որով բարձրեալն ած զանձն խոնարհեցոյց, եդին զանուն առնն՝ յորոյ ազգէն առաւ կերպարան ծառային. Ցուաւ հոգին սուրբ ի վերայ նորա, որ և տեսլեամբ աղաւնոյ ցուցաւ՝ ըստ վկայելոյ աւետարանին. Իրաւունս պատմեաց հեթանոսաց, նախագուշակելով զհանդերձեալն՝ որ անծանօթ էր հեթանոսաց. Ոչ աղաղակեաց առ հեզութեն, և ոչ ի քարոզել զճշմարտութին յուզեաց հակառակութե. Խորհառ նորա ոչ լու եղև արտաքոյ, և ոչ լսիցէ. զի արտաքոյ հատեալքն ի մարմնոյ նորա՝ ոչ հնազանդին նմա. և զիւր իսկ հալածիչս զհրեայսն՝ ըստ նմանեալս եղեգան ջախջախելոյ սակս յողջմտութե անդ հանելոյ, և առկայծեալ պատրուգի առ լուսոյն նուազութե, ոչ խորտակեաց, ոչ շիջոյց, զի խնայեաց ի նոսա՝ որ ոչ ի դառել գնոսա առ ժամն եկեալ էր, այլ ի լինել դառեցեալ ի նոցանէ. Ո՛ւղիղ հանցէ, թէ եհան ի ճշմարտութիւն զիրաւունս, քարոզեալ նոցա զլինելոցն պատուհաս՝ եթէ պնդեալ ի խոտորնակութեանն կացցեն. Ծագեցին երեսք նորա ի լերինն, և ընդ աշխարհ հուչակ նորա. ոչ խորտակեցաւ, ոչ բեկաւ, զի անտեղի-տալի հալածչացն եղեալ՝ չտակասեաց ոչ յանձինն և ոչ յեկեղեցւոջ յիւրում. Ա՛ն որոյ ոչ կատարեցաւ, և կատարեցաւ իսկ ոչ զոր թէնամիք նորա ասացին, կամ ասէն ,, Ո՛չ բե՛ք, զի մեռցի և կորիցէ անուն նորա ,, : Ակ յառաջս ,, Ա՛ինչև դիցէ յերկիր զդատաստան ,, , ահա-

ասսիկ մեկայաւ ծածուկն զոր խնդրեաք. զի այս է դա
տաստանն վերջին՝ զոր դիցէ յերկիր յորժամ գայցէ յեր-
կինից. առ որ տեսանեմք և ս՛ի գլուխ եղեալ զայն՝ որ առ-
տանօր՛ի վերջ գնի. ՚՚ Եւ յանուն նորա հեթանոսք յու-
սացին ,, : Ահա սովիմբ այսու զոր ուրանալ անհնար է,
հաւատարիմ լինել և այն՝ զոր ուրանանն անպատճառա-
պես : Օ՛ի ո՞ոք յուսալ յուսայցէ՝ զոր չկամեցողք իսկ հա-
ւատալ՛ի Աստ տեսանէն ընդ մեզ, և ուրանալ անկարա-
ցեալք զատամունս կրձտին և հաչին և մաչին. ո՛ յուսայցէ
ասել՝ յանուն Աստի յուսալ հեթանոսաց, յորժամ ըմբըռ-
նեալ լինիցէ նա, և կապեալ, գան Հարեալ, կատակեալ, ի
խաչ բևեռեալ, յորժամ և աշակերտք ինքնին անկան յա-
կընկալուէն՝ զոր ՛ի նոյն հաստատեալ էին : Օ՛ զոր յայտ
ժամու հազիւ միոմն յաւազակացն յուսացաւ ՛ի խաչին,
այժմ ամենայն իրօք յուսան հեթանոսք սիրելք ընդ
տիեզերս. և զի մի մեռանիցին յաւիտեան, խաչիւն գրոշ-
մեն զանձինս, յորում նայն մեռաւ :

Այսպա ուրեմն չէ որ որ ուրանայցէ կամ երկմտիցէ, թէ
դատաստանն յետին՝ որպիսի՞ որ գրով նախատպատմեալ է,
կատարեսցի՛ի ձեռն Որդի՛ Աստի. բայց եթէ գայցէ որ՛ որ չա-
ւատալի յանդգնութիւն ինն և կամ կուրութիւն հաւատալ չա-
նուցս յանձն գրոցն այնոցիկ, որոց ստուգութիւն բացերևեալ
իսկ է ընդ ծագս տիեզերաց : Այլ արդ յայնմ դատաստա-
նի, և կամ առ այնս ժամանակաւ զայսոսիկ ուսոյք ՛ի
յայտ գալ, զգալուստս Աղիայի թեզացուց, զհաւատալ
Հրէից, զի Երեմիան գալոցիս, զԱստի դատելն, զմերձեալսն
յարուէն, զորոշումն բարեաց և չարաց, զկրթափոխուէն և զը-
նդորգութիւն աշխարհի : Օ՛ այսոցիկ ամենայնի զլինելու-
թիւն հաւատալ արժան է. բայց թէ զժարդ օրինակաւ և
որով կարգաւ լինիցին, առաւել դէպք իրացն ուսուցանէ
յայնժամ, քան թէ այժմու մարդկեղէնն խելամուտ՛ի
կատարեալն հասանել զօրեսցէ : Այսպէս թուի ինձ՝
թէ որով կարգաւ յիշատակեցի, նոյնիմբ և կատարեսցին :

Այսուհետև մնան մեզ այլ և երկու գիրք ըստ առաջի-
կայս մատենի, զի յանկ հանիցեմք տեառն օգնականութիւ

զմեր խոստացեալս ․ ՚ի միումն խօսել յաղագս տանջանաց մեղաւորացն, և ՚ի միւսումն յաղագս երջանկութեան արդարոց ։ Յորս զպատճառագրութիւնս մարդկօրէնս առաւելապէս ցրեսցուք՝ ըստ յաջողելոյն այ, զորս թշուառացեալքըն մտօք համարին իմաստնաբար լինել ՚ի դիմի արկանել ածայնոցն նախաձայնութենց և խոստմանց, արհամարհեալք զճաշակս փրկական հաւատոցն իբր սուտս և ծիծաղելիս ։ Իսկ որք ըստ այ խորհին, յամենայնումն անհաւատալի կարծեցեալս մարդկան, բայց աւանդեալս ՚ի սըրբազան գիրս՝ որոց ճշմարտութիւն հաստատեալ է ըստ բազում յեղանակս, ապացոյց մեծազօր ունին զայ զանսխալ ամենազօրութիւն, գիտելով հաւաստի՝ թէ ոչ ինչ կարէ նա ստել բնաւ, և թէ առնել կարող է զանհնարինն առ այլ անհաւատ ։

ԳԻՐՔ ԲԱՇՆԵՐՈՐԴ ՀԱՐՑԱՆՔ

Արժանաւոր կատարած քաղաքին սատանայի, այն է մեղանչելուս տանջանաց դատապարտելոց։ Եւ ցոյցն մարգկային ընդդիմացութեանց։

ԳԼՈՒԽ Ա.

Թէ ըստ կարգի Հառիցս՝ նախ խօսել պարտ է զմեղանչելուս պատուհասիդ դատապարտելոցն ընդ սատանայի, քան զյաւերժական երջանկութեն պարոյ։

ՎՐԱՆՁԻ իշխանութիւն տեառն մերոյ Յիսի Քրիստի՝ որ դատաւորն է կենդանեաց և մեռելոց, իւրաքանչիւր ի պատշաճականն ինքեանց կատարած հասանեն երկոքին քաղաքք, որ այն և որ սատանայիին, ժամ է Հառել խըղճամտի ի գիրս յայս՝ որչափ ինչ ձեռնհաս իցեմք ասել, թէ զինչիսիսի լինելոցն տանջանք սատանայի և բոլորից յարեցելոցն՝ինձ։ Ո դոյն կարգ յայն սակս ունել ընտրեցի՝ յետոյ խօսել կամեցեալ զպրեցոյն երջանկութէ, վրդովի երկաքանչիւրն՝ի մարմնոյ լինելոց է, և առաւել դժուարհաւանելի թուի՝ մարմնոյ տակ ունել՝ի տանջանս մշտակայս, քան եթէ անցաւ ամենայնիւ յաւերժական յերանութեն։ Որոյ վա՛ յուցեալ միանգամ ոչ անհաւատալի գոլ զպատուհասն զայն, այդ ինձ մեծապէս յայտնեսցէ՝ դիւրաւ և հաւատալի ցուցանել զանվհատակիր անմահութեն մարմնոյ՝ որ յարդարմն լինելոց է։ Ա՛յս և ոչ յիմծայեցոյն պատգամոյ օտար է այս կարգ. զի ուր մերթ բարեացն երանութեն նախակարգէ, որպէս այն, «Որոց բարիս գործեալ իցէ՝ ի յարութեն կենաց, և որոց չար արարեալ՝ ի յարութեն դատաստանաց ...», այլ երբեմն յետոյ դնի. որպէս, «Գացեքդ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւս, և արկցեն

զնոսա ՚ի հնոց հրոյն․ անդ եղիցի լալ և կրճտել ատամանց ։ „Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից „ ։ Եւ դարձեալ․ „Եւ երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւիտենականս , և արդարքն ՚ի կեանսն յաւիտենականս „ ։ Այլ և ՚ի մարգարէս մերթ այս և մերթ այն կարգ երևի , եթէ ոք զակն յարիցէ , զոր յերկար լինի յիշատակել մի ըստ միոջէ․ բայց ես ասացի աւադիկ՝ յինչ պատճառէ ընտրեցի զայս կարգ ։

ԳԼՈՒԽ Բ

Եթէ արդեօք մարմնոյ հնար՝ կալ անծախելի յաւիտեան ՚ի հուր բորբոքեալ ։

ԻՍԿ արդ զի՞նչ ՚ի ցոյց առից վասն զդժմիտսն հաւանեցուցանելոյ , թէ է հնար մարմնոց շնչաւորաց և կենդանականաց ոչ միայն չլուծանիլ երբէք մահուամբ , այլ և ՚ի մրցմունս յաւերժակաց հրոյ մնալ անծախ ։ Զի ոչ ախորժեն նոքա զկարողութիւն ամենակալին առնուլ մէջ ապացոյց , այլ յարացուցիւ ումեմբ ստիպեն տալ հաւանութիւն ։ Որոց թէ պատասխանի առնիցեմք , ահաւանիկ գոն կենդանիք ոմանք ապականելիք՝ առ մահկանացու գոլոյն , այլ սակայն կան մնան ողջիկ ՚ի հրատին միջի․ և թէ ազգ ամն որդանց գտանի յակունս ջրոց ջերմից՝ յորոյ յեռացումն մերձենալ անմարթ է առանց խարշատելոյ , բայց որդունքն ոչ միայն անվնասելի կան ՚ի ներքս անդ , այլ զի և ոչ այրիլ կարեն արտաքոյ․ բայց դժմիտք կամ ոչ հաւատալ կամին՝ եթէ ցուցանել զայդ չկարիցեմք , և կամ եթէ յերեսս իսկ աչաց յանդիման կարիցեմք դնել զիրողդ , կամ վկայիւք արժանաւորօք հաստատել , նոքա անհաւանութե՞ իւրեանց պնդեն՝ ոչ բաւական լինել առ խնդրոյս օրինակութիւն․ վասն զի ասեն՝ շնչաւորքն այնոքիկ ոչ միշտ կեան․ և յեռացմունս անդ կեան առանց ցաւոց , տարեբոքն այնոքիւք իբր համարնովք մնանելով , քան թէ չարչարելով․ որպէս եթէ քան զչարչարիլն՝ ոչ անհաւատա-

գոյն իցէ այնպիսեօքն բուծանիլ ։ Զի եթէ զարմանք ի-ցեն ցաւագնել ՚ի հուր՝ բայց և կեալ, մեծ ևս զարմանք՝ կեալ ՚ի հուր և ոչ ցաւել. և եթէ այս հաւատարիմ է, զմէ՞ և ոչ այն ։

ԳԼՈՒԽ Գ

Միթէ իցէ՞ հարկ՝ մարմնական ցաւոց եղծումն գործել մարմնոյ ։

ԱՅԼ ասեն. չէ և չէ մարմին՝ որ ցաւել կարիցէ, և մե-ռանել կարիցէ ոչ ։ Բայց իւ զայդ գիտեմք. քանզի յա-ղագս մարմնոցն դիւաց ո՞ ոք գիտիցէ հաւաստի՝ արդեօք զգայցեն ՚ի նոսա ցաւս, յորժամ ինքեանք իսկ խոստովան լինին մեծամեծս տանջիլ ։ Եթէ ընդդէմ ասիցեն, չիք բնաւ մարմին երկրեղէն՝ այս է՝ թանձր և շօշափելի, կամ միով անուամբ մեկնաբանելով՝ չիք մսեղի որ ցաւել կա-րիցէ, և մեռանել ոչ, ահա ոչ զայլ ինչ խօսին՝ բայց զոր ՚ի միտ առնուն մարդիկ մարմնոյ զգացմամբ և ՚ի փորձոյ. զի ոչ գիտեն այլ մարմին՝ բայց զմահկանացու. և յայն և-եթ հաստատի բովանդակ նոցայն իրաւաբանութիւն, զի զորոյ զփորձ ոչ առնուն, զայն անհնարաւոր լինել համա-րեսցին ։ Վասն զի զի՞նչ պատճառք իցեն՝ զցաւսն մահու առդնել ցոյցս, և ոչ առաւել ևս՝ կենաց նշանակ. զի եթէ խնդիր տարակուսի առնեմք՝ արդեօք միշտ կեալ իցէ՞ կա-րելի, բայց անտարակուսելի է՝ թէ ամենայն որ ցաւէ, կեայ. և առհասարակ համայն ցաւք ՚ի կենդանւոջ միայն կարեն գոյանալ ։ Ապա ուրեմն հարկ է զի որ ցաւին՝ կեց-ցէ. այլ չէ հարկ՝ զի ցաւն սպանանիցէ. քանզի և զմար-մինքս զայսոսիկ զմահկանացուս և զմեռանիլ հանդեր-ձեալս ոչ ամենայն ցաւ մեռուցանէ. որ զի թէ ցաւ ինչ իցէ մահառիթ, յայն սակս է՝ զի հոգին այնպէս իմն շա-րալծեալ է ընդ այն ինչ մարմնոյ, զի տեղի տայցէ սաստիկ ցաւոց և ՚ի բաց մեկնեսցի. զի և շաղկապումն անդամոցն կենդանականաց այնչափ տկար է, զի հանդարտել ոչ ու-

նի զօրութեան՝ որ սաստիկ կամ ծայրագոյն ցաւս առթիցէ ։ Իսկ յայնժամ ընդ այնպիսում մարմնոյ շաղկապի հոգին, և այնու օրինակաւ, զի զյօդակապն որպէս ժամանակացն երկարութիւն չլուծանէ, նոյնպէս ոչ քակտիցէ ամենայն ցաւ. նմին իրի թէ և չգուցէ այժմ մարմին այնպիսի, որ զգայակիր ցաւոց լեալ՝ անմեռ մնալ կարիցէ, այլ յայնժամ եղիցի մարմին այնպիսի, որպիսի այժմս ոչ է. զոր օրինակ և մահ լիցի այնպիսի, զինչպիսի զարդիս ոչ է ։ Վասնզի ոչ եթէ մահ բնաւ չգուցէ անտանօր, այլ եղիցի մահ մշտակայ. յորժամ ոչ կեալ կարէ հոգին՝ անունակ Աստուծոյ ելով, և ոչ 'ի ցաւոց մարմնոյ ազատանալ մեռանելովն ։ Առաջին մահն զհոգի կորզէ բռնի 'ի մարմնոյն, և երկրորդն մահ կալ և կապ ունի զնա բռնի 'ի մարմնումն. և յերկաքանչիւր մահուց այն ազդումն գործի միապէս, զի հոգի զոր ինչ ոչն կամի, կրեսցէ 'ի մարմնոյ իւրմէ ։

Ապաքէն բանակռիւքդ այդոքիկ յայն ևեթ հային, թէ չգտանի յայժմուս մարմին ինչ՝ որ ցաւոց կրողական իցէ, այլ մահու ոչ. և ոչ հային թէ կայ ինչ այնպիսի՝ որ մարմնոյ գերիվերոյ է. զի ահա հոգի՝ որոյ մերձաւորութեամբ կեայ և վարի մարմինն, ինքն ցաւոց զգալ կարէ, և մեռանել ոչ կարէ ։ Գտաւ աւադիկ գոյակ ոմն, որ ցաւազգած է միանգամայն և անմահ ։ Ապա ուրեմն դոյն այդ և յայնժամ ընդ դատապարտելոցն մարմինս անցանիցէ, զոր այժմդ 'ի հոգիս ամենեցուն գիտեմք լինել ։ Իսկ եթէ անօսրագոյն ևս զմտաւ ածիցեմք, ցաւք որ մարմնոյ ասին՝ առաւել հոգւոյ անկ են. քանզի հոգւոյ՝ և ոչ եթէ մարմնոյ է ցաւելն՝ ևս և յորժամ ցաւելոյն պատճառ 'ի մարմնոյ անտի լինիցի, յայնմ մասին ցաւելով՝ ուրանօր մարմինն վնասի ։ Ապա զոր օրինակ մարմինս զգայունս ասեմք և մարմինս կենդանիս, թէպէտ և 'ի հոգւոյ անտի է մարմնոյ զգայութիւն և կեանք, նոյն օրինակ մարմինս ցաւակիրս ասեմք՝ մինչ 'ի հոգւոյ ևեթ մարթին լինել մարմնոյ ցաւք ։ Վասն որոյ ցաւագնի հոգի ընդ մարմնոյն յայնմ մասին՝ ուր պատահէ ինչ ցաւեցուցիչ. ցաւէ նմա

և միմեանց՝ ի մարմնի իսկ գոլով, յորժամ յաներևոյթ պատճառեն իմեքեւ տխուր կայցէ՝ մարմնոյն անվնասելի ելով. ցաւէ գարձեալ մերկ ի մարմնոյ, զի ահա ցաւագնէր մեծատունն այն ի դժոխս անդ՝ յորժամ ասէրն. «Պապակիմ ի տապոյ սմոի ,, : Իսկ մարմին ոչ որ անհոգին է՝ ցաւէ, և ոչ հոգևորեալն ցաւէ առանց հոգւոյ: Այսպա ուրեմն եթէ արդարեւ ուղղաբար ի ցաւոց զմահ էր խնամատարել, իբրև զի յայն սակս ասել զմահու արկած՝ զի գոյ ցաւոցն դիպուած, հոգւոյ առաւել հատանէր մեռանելն, որում յաւէտ և ցաւելն անկ է. և եթէ այն որ առաւել ցաւակիրն է՝ չկարէ մեռանել, սակս որոյ պատճառի զմարմինս որք ի ցաւս լինելոց են՝ համարիցիմք ընդ մահու գրաւել: Այսցկին պատասխանիք, թէ ի հոգեղէն մարմնոյ ասի և ի մեռոյ անդամոց լինի՝ ի հոգւոջ երկիւղ ցանկալի, ցաւ և խնդուք. յորմէ եղև և Այրգիլեայ ասել, աստուա՝ ի մահացու անդամոց երկրաւորս մարմնոյ՝ երկնչին և ցանկան, ցաւին և խնդան: Վակայն յանդիմանեցաք զնոսա՝ ի չորեքտասանեերորդ գիրս այսր մատենի, թէ հոգիք մարքեալք յամ արատոյ մարմնոյ՝ ըստ նոցին իսկ կարծեաց կրեն բուռն ցանկալի՝ յօժարեալք դարձ առնել անդրէն միւսանգամ ի մարմինս: Իսկ ուրացնօր ցանկալի է, մարթ է լինել և ցաւոց. քանզի յորժամ ցանկալին ի դերև ելանէ՝ կամ չժամանելով յո դիմէրն, և կամ կորուսանելով զմբռնեաւն, այնուհետև ի ցաւս փոխադարձին: Վամն որոյ եթէ հոգի ցաւի՝ կամ միմեանք ինքն և կամ ինքն առաւելապէս, և ի վերայ այսր ունի զիս բանսն անմահութեն, ոչ յայն սակս մեռանել կայ մարմնոյն այնոցիկ՝ զի ցաւին: Ելս բանիցս, եթէ մարմինքն առնեն զի ցաւիցին հոգիք, զի է զի կարեն ազդել ընդ ցաւս՝ այլ ոչ զմահ, բայց եթէ՝ զի չէք հետևուին թէ որ ցաւեցուցանէ, նոյն և մեռուցանէ: Ելր վասն սպա չիցէ հաւատալի՝ հրոյ այնպէս ազդել ի մարմինս յայսոսիկ ցաւս՝ և ոչ մահ. զոր օրինակ ինքեանք մարմինք ցաւել ցաւեցուցանեն զոգիսն, այլ ոչ այնու ի մահ բռնադատանեն զնոսա: Վերեւին սպա ցաւք ոչ են մահու լինելոյ հատատի նշանակ:

ԳԼՈՒԽ Գ

Բնական օրինակաց տեսութիւն ուսուցանէ՝ Թէ հնար է մարմնոյ կենդանականաց պահել ոջիկ ի մէջ չարչարանաց։

Այլ թէ ըստ վիպագրելոյ այնոցիկ ոջք ի քնին բնութեանէ կենդանեաց պաթապեցին, տալամանդը անուանեալ սոզուն կայ ի հուր կենդանի, և ականատեսք լերինք ոմանք սիկիլիացւոց անդուստ՝ի բազմադարեան՝ի վաղ ժամանակաց մինչև ցայսօր և չէտ այսք և բոցակիզեալք՝ կան պահին անթեղեր, ահա վկայք են արժանահաւատք՝ Թէ ոչ ամենայն որ բորբոքի՝ հարկաւ ծախի. և եթէ հոգի ինքնին ի դմա ածէ՝ ոչ ամենայնի ցաւոտ եղելոյ՝ լինել և մեռուտ, զինչ և յայտացոյցք իրաց առ ի մինչ պահանջինն առ ի տալոյ հաւաստիս՝ Թէ անհաւատալի ոչ է մարմնոյ մարդկան ի մշտնջենաւոր տանջանս մատնելոյ և զոգի չկորուսանել ի հուր, և անվհատելի այրել, և անեղծաբար ցաւել։ Այսու զի զայդպիսի հանգամանս տալու բեալ ունիցի յայնժամ գոյացութեանէ մարմնոյն ի նմանէ՝ որ զայլ և ս հրաշակերտս և զվկայս տալոցոյց յիւրս յօրվուս, զորս առեալ մեր՝ և ոչ զարմանամբ սակս յաճախութեանէ։ Օ՛ ո՞ ոք բաց յամենատեղեակն նոյ բնաւորեաց ի մարմին սիբամարգի մեռելոյ պահել ի նեխոյ՝ որ ծանրաւորագոլով առ ի հաւաստալ դէպ եղև ի Վարթագինէ դնել մեր առաջի եփեալ զձուկնեան զայս, և հրամայեցաք զմսան ինչ ի մնոյ կրծոցն՝ որպէսզի և կամեցաք՝ պահել ուբոյն. և չէտ ժամանակի՝ ցորչափ աւուրս հոտնեխոյ հարկանի յայլ մխ եփեալ, առաջի մնատուցեալ մեզ՝ ոչ մի ինչ գաղջութեանէ յընդունս ընդհարաւ. և անդրէն ի պահ եդեալ, չէտ աւուրց աւելի քան զերեսունն՝ նոյն գտաք ամենևին, և նոյնպէս չէտ տաբուոյ միոյ, բայց միայն զի ցամաքեալ էր խուն մի և կծկեալ։ Այ՛ ետ յարդի զօրութենէն՝ կամ ցրտին, որով զչիւնս ծածկեալս պահպանէ, և կամ

ջերմին՝ որով զաշխատ միտս ածէ՝ ի հաստուածութիւն։

Իսկ զամբարիշտն որ՝ ի հրոյ՝ ոմ որ՝ ի բան առնուցու, որով կիզանքն ամենայն սեանան թխանան, ուր ինքն սպիտակագոյն է. գունագեղեան ինչն ելոյ, զամենայն գոգցես յոր մերձի և լիզանէ՝ տգոյնս գործէ, և՝ ի փայլուն կայծականց առնէ ածուխ տխրատեսիլ։ Այլ և այդ ոչ զուգապէս սահմանեալ է միշտ. քանզի ընդ հակառակն՝ քարինք՝ ի հուր ստատիկ եփեալք՝ լինին և ինքեանք սպիտակագոյն. և թէ և հուր կարմրաչէկ է առաւել, և քարինքն՝ ի սպիտակ հարկանին, սակայն լուսոյ առաւել հուպ է սպիտակն, զոր օրինակ սեան՝ խաւարի. և առ այս հուր ըստ որում եթէ փայտակոյտ առ՝ ի գաղտնի եփելոյ, գործս գիմամարտս երեւեցուցանէ՝ ի նիւթս անհակառակս. զի թէպէտ և զանազանեալ են քարինք և փայտք, այլ ոչ եթէ նեղշահք, ոչ սպիտակ և սեաւ. յորոց զինն ներգործէ՝ ի քարինսն, և զինւովն՝ ի փայտս, ինչն լուսափայլ զառաջինն բացափայլէ, և գլխովինն մթագնէ. ուր արդարեւ՝ ինոսին պակասեր, եթէ՝ ի սոսին չէր կացեալ կինդանի։ Օ ինչ և զածխոյ ասիցեմք, յորում զարմանալի է և տիպարէն մեծ, մինչև թէ և հարմանէ բեկանիլն և փոքուանշմամբ փշրիլ, և սկզբունն մեծ՝ որով ոչ գիշերք իւրք եղծանի, ոչ ժամանակք սպառի. մինչ զի որք կոմոդոս սահմանաց կանգնեն, սովորեցան ածուխ՝ ի նեղբոյ արկանել, զի եղիցի առ՝ ի տալ հաւանութիւն՝ եթէ յարիցէ երբեք յետ երկար ժամանակաց կառուցք սկզբել թէ ոչ՝ ի կէտ սահմանի իցէ կոմոդոս։ Իսկ արդ ո՞ր զածուխ զիաղէսն՝ ի հող գիշին՝ ուր փայտք փտին, երկայնժամանակեայ տեւականութիւն պահէ անեղծանելի, ոչ ապաքէն ամենաձախն հուր արար զայդ։

Իսկ և՝ ի զարմանս կրոյ ակն յառեսցուք. զի թող զոր ասացաքն՝ թէ հրով պայծառանայ, որով պղինձն նիւթք թխանան, սա ծածկաբար ինն՝ ի հրոյ անտի հուր կրէ՝ ի ծոյին, և գոլով կոյտ մի ցուրտ՝ ի շօշափել՝ այնպէս՝ ի թաքուն ունի զհուրն, որ և ոչ միւսմ զդայութիւն յերբևան գայ, այլ՝ ի փորձոյ հաւաստեալ՝ թէ և յերևի, այլ

գլխեմք թէ նիրհեալ կայ 'ի ներքս. սորին վասն կոչեմք
զայն՝ կիր կենդանի, իբր այն թէ հուրն թաքուն՝ իցէ
երևելի նիւթոյն հոգի աներևակ։ Եւ այն քանի ևս զար-
մացուցիչ, զի յորժամ շիջանի, յայնժամ վառի. քանզի
առ 'ի վանելոյ զհուրն թաքուցեալ՝ ջուր 'ի վերայ արկա-
նի, ջրով ողողանի. և ուր յառաջն ցրտային էր, այնու
եռայ՝ որով համօրէն եռանդունք պաղին. այսպէս յան-
շընչանալ գոգցես կոշտոյն, 'ի բաց գնացեալ հուրն որ ծած-
կեալն էր՝ երևի. և այնուհետև կիրն իբրև մահուամբ
պաղեալ, և ոչ հեղեղաւ ունի բորբոքիլ. և զոր կոչէաքն
կիր կենդանի, ապա կոչեմք՝ շիջեալ։ Եթէ իցէ արդեօք
այլ ինչ յաւելուլ յայդ զարմանս։ Եւ կարի իսկ քաջ.
քանզի եթէ փոխանակ ջրոյ իւղ ածիցես 'ի կիրն, որ առա-
ւել լուցիկք է հրոյ, ոչ ընաւ հեղմամբն և թափմամբն
յեռ գայ։ Եթէ զայդպիսի զարմանս ընթերցեալ էր մեր
յաղագս հնդկային քարի միոջ, և կամ լուեալ, զոր չէր
մարթ մեզ ընդ փորձ արկանել, ապաքէն կամ բան սուտ
համարէաք, կամ անշուշտ 'ի հիացումն լինէաք ըմբռնեալ։
Իսկ որոց ցոյցք իւրացն հանապազ աչաց յանդիման շրջաբե-
րին՝ ոչ նուաղ հրաշալիք, յաճախութեամբն անմեծար լինին.
մինչ զի 'ի հնդկաց անտի՝ 'ի բացարձակ կողմանց աշխար-
հի ցանկայաք զարմանալիս իմն՝ թէ հնար էր՝ այսր առ
մեզ անցուցանել առ 'ի զզարմացումն ներգործելոյ։

Ապաքէն ունին բազումք առ մեօք զակն ադամանդ, և
մանաւանդ արծաթագործք և քանդակիչք ականց. և այն
քար ոչ յերկաթոյ տկարանայ, ոչ 'ի հրոյ, և ոչ այլով
բռնութե̃, բայց միայն արեամբ նոխազի, որպէս ասեն։
Այլ որք ստացողք են այնմ և կամ տեղեակք՝ միթէ զար-
մանա՞ն նոյնչափ, որչափ այնոքիկ որոց նորոգապէս ծա-
նուցանի զօրութի̃ն նորա։ Իսկ որոց չէ գիտացեալ, դուցէ
և հաւատան իսկ ոչ. կամ եթէ հաւատան, զարմանան
առանց փորձոյ. և կամ եթէ դէպն տայցէ զփորձ առնուլ,
զարմանան այլ ևս՝ ցորչափ անսովոր է. այլ 'ի փորձոյն
յերկարել՝ դադարէ մեղմով և զարմանալոյն գրգիռ։
Ծանեաք և զմագնեստիս քար՝ յափշտակիչ ամ̃ն նորա-

նշան երկաթոյ լինել. զոր իբրև տեսի զառաջինն, յահ և յապուշ կրթեցայ. քանզի հայէի յափշտակեալ 'ի քարէ անտի զօղ երկաթի և ընդ օդս կախեալ. և որպէս թէ զիւրն զօրութիւն հասարակորդ արարեալ էր յափշտակեցելումն երկաթոյ, նոյն օղ մերձեցուցեալ յայլ օղ՝ ընդ կախ կալաւ և զնա. և որպէս օղն առաջին յեց կայր 'ի քարն, նոյնպէս օղն երկրորդ յառաջինն. յաւելաւ առընթեր նովին օրինակաւ օղ երրորդ և չորրորդ. և այնպէս փոփոխակի յիրեարս յօդելով շրջանակացն, շղթայ իմն կախեալ կայր օղից ոչ 'ի միմեանս աղխաղխելոց, այլ արտաքուստ ևեթ կցորդելոց: Ու ո՞ ոչ հիանայր ընդ զօրութիւնս ընդ այս՝ ոչ միայն 'ի քարի անդ ներգոյացեալ, այլ որ ընդ բազում զաւ 'ի թափ կախեալս անցանէր, յօդիւք իմն աներևութիւք զնոսա կապելով: Բայց զևս հրաշալին յաղագս այսր քարի գիտացի ես յեղբօրէ իմմէ և յեպիսկոպոսակցէ՝ 'ի Սևերոսէ միղեվիտացւոյ. քանզի պատմեաց մեզ՝ թէ գտեալ նորա 'ի Ճաշկերութի առ Բաթանարիոսի կոմսին եղելոյ Ափրիկայ, ետես՝ զի առաջի մատուցեալ զքար մագնեստիս՝ կալաւ զայն 'ի ներքոյ արծաթոյ, և յարծաթոյն վերայ եդ զերկաթ. և ըստ շարժելոյ ձեռամբն զքարն 'ի ներքոյ կողմանէ՝ նոյնպէս շարժէր և երկաթն 'ի վերոյ, ոչ ինչ ազդումն առնելով յարծաթն որ 'ի միջոցին. և այնպէս արագ արագ տարուբերմամբ մարդն զքարն յածեցուցանէր, և քարն զերկաթն: Ահաւադիկ զոր ես ինքնին անձամբ գիտացիդ՝ ասացի. ասացի և զաւ 'ի յայլմէ լուեալն, որում իբրև ինքնին ականատես հաւատացի. այլ ասացից և զոր ընթերցայն յաղագս այսր քարի: Յորժամ հուպ առ նմա դնիցի ադամանդ, ոչ յափշտակէ զերկաթ. և եթէ յափշտակեալն էր յառաջնմէ, անդէն 'ի հպաւորելն՝ իսկոյն թողու լըքանէ: Հնդկաստան մատակարարէ զմագնեստիս քարինս. և եթէ յետ հաստանելոյ այժմ 'ի մեր ծանօթութիւն՝ նուաղագոյն 'ի զարմանալն բերիմք, ո՞րչափ և նոքա՝ յորոց գան այսր. առ որս եթէ դիւրագիւտ իցեն քարինքդ, այնպէս թերևս համարիցին զայնոսիկ, զոր օրինակ մեք

առ ձեռն ունելով՝ չզարմանամք ընդ կիր, որ հրաշապէս իմն յեռանդն հարկանի 'ի ջրոյ՝ որով հուր շիջանի, և ձիթով եռայ ոչ՝ որով հուր բորբոքի ։

ԳԼՈՒԽ Ե

Բազում ինչ իրք են՝ զորոց զպատճառս անկարանամք ճանաչել. այլ ճշմարիտ լինել նոցին չէ երկբայելի։

ԱՅԼ սակայն սովորութիւն է մարդոյ անհաւանից՝ 'ի քարոզել մեր զա̃ծայինսն սքանչելիս զանցեալսն և կամ զապառնիս, զորս անկարանամք 'ի փորձոյ իմեքէ ցուցանել նոցա, զպատճառս իրացն հարցափորձել առ 'ի մէնջ. և զի առ հաստուցանել տկարանամք սակս 'ի վեր անցանելոյ քան զկար մարդկեղէն մտաց, ստայօդս իմն զառ 'ի մէնջ ասացեալսն համարին ։ Հապա, թող ինքեանք զբազմաց իրաց զարմանալեաց՝ զորս տեսանեմք կամ տեսանելն կարող եմք, պարտական ծանիցեն տալ հաւաստի պատճառս ։ Իսկ եթէ տեսանեն քաջ՝ թէ մարդ չէ 'ի դոյն ատակ, զայդ խոստովան լիցին, թէ ոչ յայն սակս չիցէ ինչ եղեալ կամ չլինիցի, իբրև զի զպատճառսն հաստուցանել անմարթ է. որովհետև կան այսպիսի իրք և առ մեօք՝ յորս նոյն օրինակ անկարութիւն է ։ Բայց արդ ոչ ընդ յոլովագոյնսն որ 'ի գիրս կան աւանդեալ՝ անցանեմ, ոչ ընդ վաղնջուց գործեցելոց միայն և անհետացելոց, այլ որ արդ ևս կան մնան յիւրաքանչիւր տեղիս. յորս թէ գնալ ոք կամիցի և կարիցէ, ունիցի կալ հաւաստի յիրացն վերայ. այլ զսակաւսն ևեթ ածից յիշատակ ։ Աղ ինչ պատմեն լինել յԱկրականդ քաղաք Սիկիլիոյ, որ 'ի կրակ մօտեցեալ՝ իբր 'ի ջրի լուծանի. իսկ յորժամ 'ի ջուր արկանի, ճայթիւն գործէ իբր 'ի կրակի ։ Մերձ 'ի Գարամանտ կայ աղբիւր՝ կարի ցուրտ 'ի ցերեկի և անըմպելի. այլ այնչափ եռանդուն 'ի գիշերի՝ որ չէ մերձենալի ։ Աղբիւր կայ

Եպիրոս, յորում ջահք վառեալք շիջանին՝ ոչ յայլ աղբերս, բայց ընդ հակառակն այլոց՝ անդրէն վառին շիջեալ ջահքն ։ Ասվեստոս՝ այսինքն անշէջ քար Արկադիա՝ յայս անուն կոչեցաւ, զի վառեալ միանգամ՝ ոչ ևս ունի շիջանիլ ։ Փայտ թզենւոյ իրիք Եգիպտոս՝ ոչ ըստ այլոցն փայտից լուղի ընդ ջուրս, այլ սուզանի ․ բայց հրաշալի ևս այն է, զի կացեալ առ ժամանակ մի 'ի խորս, անդրէն յերեսս ջրոյն վերանայ, ուր 'ի թրմիլն առաւել ևս պարտ էր ծանրանալ ըստ աճելոյ խոնաւոյն ։ Պտուղք բուսեալ (ըստ Յովսեպոսի) յերկրին սոդոմացւոց, և զհասունութեան երևոյթ ևս առեալք, 'ի խածանելն և 'ի ճնշել ձեռամբ հերձանելով կեղևոյն, լուծանին 'ի ծուխ և 'ի փազախ ։ Գայլախազ պարսկային (ըստ Տակիտոսի) եթէ պնդագոյնս ճնշեսցի, այրէ զձեռս ունողին, որ վասն յունարէն պիւրիտէս՝ հրանիւթ կոչեցաւ ։ Ի նմին պարսկաստանի (ըստ Պղինիոսի) գոյանայ քար՝ սեղենիտ լուսնային կոչեցեալ, որոյ ներքին մասն աճէ և նուազի ընդ լուսնոյ ։ Իսկ 'ի Կապադովկիա ասի, թէ ձիք մատակք սաղմնաւեն նա և 'ի հողմոյ, և ծնունդք նոցա ոչ աւելի քան զերիս ամս բաւեն ի կեանս ։ Տիղոն կղզի 'ի հնդիկս (ըստ Սողինոսի) այնու առաւելու քան զայլ գաւառսն, զի ա̃մ ծառ բուսեալ 'ի նմա՝ ոչ ընաւ լինի տերևաթափ ։

Արդ այսոցիկ և այլոց ևս հրաշալեաց անթուոց՝ զորս աւանդեն վէպք ոչ անցից անցելոց, այլ տեղեաց հաստատնոց, զորոց զհետ կրթիլ բանիւ՝ կարի յերկար է ինձ որ յայլ ինչ ունիմ ուշ նպատակի, ազէ տացեն պատճառս՝ թէ կարող ինչ են՝ անհաւանքդ այդոքիկ, որք հաւատալ չկամին ա̃ծայնոց գրոց, այնու եթէ չհամարեալ ա̃ծայինս, վասն զի անհաւատալիս աւանդեն իրս, որպիսի է և այն զորմէ ճառեմքն ։ Զի ասեն՝ ոչ մի ինչ բան հաւանի, թէ այրիցի մարմին և ոչ ծախեսցի, ցաւիցի և չմեռանիցի ։ Զարմանալի պատճառաբանք՝ որք պատճառս չափել կարիցեն իրաց ամենայնի յայտնապէս հրաշակերտից, թող հատուսցեն պատճառս սակաւուցն առ 'ի մէնջ յիշելոց ․ զորոց զլինել թէ ոչ գիտէին դոքա, և

ասէաք մեք թէ լինելոց են, անշուշտ առաւել ևս չհաւատային, քան զոր այժմու ասացելումս չհաւատան լինել յերբեմն ժամանակի: Զի ո՞ 'ի նոցանէ հաւատայր մեզ, եթէ զոր օրինակ ասեմքն լինել կենդանի մարմնոց մարդկան՝ որ այրիցին միշտ և ցաւիցեն, բայց մեռանիցին ոչ երբէք, ասէաք նոյնպէս թէ լինիցի յաշխարհին հանդերձելում՝ աղի երբէք 'ի հրոյ լուծանիլ որպէս 'ի ջրի, և 'ի ջրի ճայթել իբր 'ի կրակի. կամ թէ լինիցի աղբիւր՝ որ 'ի զովութ՟ե գիշերայնոյ ջուր բղխիցէ յորդեռանդն՝ անմերձենալի, և 'ի տօթաժամու սառիցի առանց կարելոյ ըմպել: Կամ թէ լինիցի քար՝ իւրովն ջերմութ՟բ կիզանող զձեռն ճնշող, և կամ թէ յամենուստ հրավառեալ անշիջանուտ կայցէ մնայցէ, այլովքն հանդերձ սակաւուք՝ զորս միայն յանբաւից անտի յիշատակել պարտ վարկայ առ տեղեաւս: Զայսոսիկ ահա եթէ ասէաք լինել 'ի գալոց աշխարհին, և անհաւանքն 'ի պատասխանիս գային, եթէ կամիք հաւատալ մեզ այդոցիկ, տուք զմիոյ միոյ հաւաստիս, մեք անդէն զանկարանալն խոստովան լինէաք, վասն զի յայսոսիկ և 'ի սոյնպիսիս մ՟յ հրաշակերտութ՟իս նկուն մնայ փանաքի հանճար մահկանացուաց. բայց այն է մեզ հաւաստիք անխախուտ՝ թէ ոչ առանց պատճառաց ներգործէ ամենազօրն, ուր անզօր միտք մարդկեղէն անկարանայ զպատճառն կշռել. և թէ և 'ի յոլով իրս անյայտ է մեզ՝ զինչ նա կամիցի, այլ ամենայնիւ ճշմարտեալ է՝ թէ ոչ մի ինչ յորոց կամիցին, անհնարաւոր է նմա. և մեք հաւատամք նորա յառաջասացութ՟են, զի չկարեմք հաւատալ թէ անկարող իցէ նա, և կամ ստող: Իսկ դոքա հաւատոց կշտամբիչք, և պատճառաց համարակալք, զինչ առ այսոսիկ առնիցեն պատասխանի՝ զորոց չմարթի պատճառս տալ մարդոյ. և սակայն են իրօքն, և բնաւորականն բանի հակառակ իսկ տեսանին. զորս մեր եթէ ասացեալ էր թէ լինելոց են, որպէս և զայլսն ասեմք լինելոցս, անդէն և անդհաւանութ՟ն պատճառս պահանջէին անհաւատք: Ապա քանզի յայսպիսի արարուածս մ՟յ ներգեեալ գտանի բան

մարդոյ 'ի միտս և 'ի խօսս, զոր օրինակ այսոքիկ չեն անեղեալք, նոյնպէս և այնք չեն անլինելիք՝ լոկ վասն այնր զի առ երկաքանչիւրն տկարանայ մարդ կշիռ բերել զպատճառսն:

ԳԼՈՒԽ Զ.

Ոչ ամենայն հրաշալիք բնաւորական ինչ են, այլ բազումք հնարեալք 'ի մարդկեղէն ճարտարութ՟է, և շատք ևս 'ի դիւաց արուեստակեալք:

ԱՅԼ դուցէ պատասխանի յօդեսցեն աստանօր. համբուն և ոչ ասացեալքդ կան, և ոչ այդոցիկ հաւատամք. սուտ են վիպեալքն, ստութ՟ք գրեալք. և փաստս 'ի վերայ յաւելուցուն ասելով. Եթէ հաւատալ այդպիսեաց արժան ինչ իցէ, հաւատասջիք ապա և դուք զպատմեալն 'ի նոյն գիրս, թէ կայր և կամ կայ իսկ տաճար մի Ափրոդիտեայ, և 'ի նմա աշտանակ և ճրագ մշտավառ 'ի բացի, մինչ զի ոչ հողմով և ոչ անձրևով շիջանիլ. որոյ վասն որպէս քարն նախայիշատակեալ, նոյն և այս կոչեցաւ λύχνος ἄσβεστος, այս է՝ ճրագ անշիջանելի: Զայս ունին դուքա ընդդէմ դնել մեզ՝ առ 'ի հատանելոյ զմերս պատասխանատրութ՟ի. զի եթէ ասիցեմք՝ չէ պարտ հաւատալ, տկար առնեմք այսու զգրեալսն 'ի վերայ հրաշալեացն այնոցիկ. իսկ եթէ հաւատարիմս համարիցիմք, լիցի ձեռն տալ պաշտաման հեթանոսաց: Սակայն ըստ որում է իմ ասացեալ յութևտասներորդ գիրս մատենիս, ոչ բռնադատիմք մեք ամենայն ճառելոցն 'ի հեթանոսականացն պատմութ՟իս հաւատս ընծայել, ուր զի և նոքա վիպագիրք հակառակաբար միմեանց գրեն 'ի բազում իրս, և այն որպէս Վարրոն ասէ, 'ի կամակարուց իմն և արուեստակութ՟ք. այլ ընտրողաբար այնոցիկ ևեթ բերեմք հաւատըս՝ որք դիմամարտք ոչ իցեն գրոցն, որոց աներկբայաբար հաւատալ պարտ վարկանիմք: Իսկ ըստ հրաշանշան իրացդ՝ որովք հաւանեցուցանել կամիմք դժնեահաւա-

տիցն զՀանդերձեալսն, մեզ շատ են այնոքիկ՝ զորս մեզէն Հաւաստել կարող եմք, և վկայս գտանել 'ի նոյն արժանաՀաւատս ոչ է դժուարին։ Բայց յաղագս Եփրոդիտեայ տաճարին, և որ 'ի նմա անշէջ Ճրագարանին, ոչ միայն չէ մեզ անձուկ 'ի պատասխանել, այլ արձակավայր ունիմք ասպարէզ. վասն զի յանշիջանելի յայդ Ճրագարան յաւելումք այլ ևս յոլով զարմանագործութիւս 'ի մարդկային և 'ի դիւթական արՀեստից՝ ազդեալս 'ի դիւաց ինքնին, և կամ 'ի ձեռն մարդոյ. զորս եթէ կամիցաք ուրանալ, լինէր ապաքէն ընդդէմ դառնալ ճշմարտութեան սրբազան գրոցն՝ որոց Հաւատս տամք։ Ապա ուրեմն յայն Ճրագարան կամ գործած իմն ճարտարեաց մարդկայինն արՀեստ յանշէջ անուն քարէ անտի, կամ դիւթական արՀեստիւ գործեցաւ՝ զարմացումն բերել մարդկան 'ի տաճարի անդ, և կամ ոք 'ի դիւաց յանուն Եփրոդիտեայ զօրացեալ անտանօր, արար այնմ նշանի երևել մարդկան, և բաւել ընդ երկար։ Քանզի անգիտանան դևք առ 'ի բնակելոյ յարարածս՝ յ̃յ Հաստեալս և ոչ յինքեանց, պէսպէս ախորժելեօք ըստ իւրաքանչիւր զանազանութե̃ն, ոչ իբր անասունք 'ի կերակուրս, այլ որպէս Հոգիք 'ի նըրշանս՝ որ իւրաքանչիւր նոցա ախորժակաց 'ի դէպ իցեն, ըստ ազգս ազգս քարանց, խոտոց, փայտից, անասնոց, տաղից, արարողութե̃ց։ Իսկ վասն զմարդկան տենչ յինքեանս ձգելոյ՝ խոտորեցուցանեն զնոսա նախ խորամանկ Հնարիմացութե̃, թոյն գաղտնի արկանելով 'ի նոցա սիրտըս, կամ պատիր սիրելութե̃ երևելով, և 'ի սոցանէ զսակաւս աշակերտեալ՝ առնեն զնոսա բազմագունից այլոց վարդապետս։ Քանզի անմարթ էր առանց յառաջագոյն վարդապետելոյ դիւացն՝ գիտել թէ զի՛նչ անցնիւր 'ի նոցանէ ախորժէ, յումմէ՛ գարշի, որո՛վ կոչմամբ Հրաւիրիցի, և բռնադատիցի. յորոց յառաջ եկին կախարդացն արուեստք և արուեստագէտք։ Այլ առաւելապէս յանկուցանեն նոքա զսիրտս մաՀկանացուաց, և ընդ այն յաւէտ իմն պարծին, յորժամ կերպարանին 'ի Հրեշտակս լուսոյ։ Այն են ուրեմն բազում ինչ նոցայն արարուածք՝

որչափ հրաշալիս խոստովանեալք 'ի մէնջ, նոյն և զգուշանալոյ արժանիք ։ Սակայն յայժմու մեր խնդիրս և այնք պիտանիք են. վասն զի եթէ առ այսօրիկ բաւականք են այսքն պիղծք, որչափ զօրաւորն ևս են սուրբ հրեշտակք, քանիօն ամենեցուն նոցա հզօրագոյն Ած, որ այնպիսի հրաշագործս զնոսին հրեշտակն արար ։

Վասն այսորիկ եթէ ճարտարութիւն մարդկեղէն բաւական է 'ի կիր արկեալ զարարածս այ՝ ներգործել հրաշակերտս այնքանս և այնպիսիս, կոչեցեալս 'ի Յունաց մեքենայագործութիւնս, մինչ զի անգիտողացն՝ ածայինս իմն կարծել զայնոսիկ. զոր օրինակ 'ի տաճարի ուրեք արարաւ՝ քար մագնիսեայ զետեղեալ 'ի յատակի և 'ի ձեղուանն համեմատ չափով, և 'ի միջնոցս անդ կայր կախեալ կուռք երկաթի՝ յերկաքանչիւր մագնիսացն ձգմամբ. իսկ որք չգիտէին զինչ ծածկեալ կայր 'ի վեր և 'ի վայր, ածականին զօրութիւն զիրսն ընծայէին. նոյնպիսի ինչ ասացաք վերագոյն արուեստագործեալ և 'ի ճրագարանին Ափրոդիտեայ բանիւ անշիջական քարի ։ Արդ եթէ կարողացան դևք զկախարդացն ազդմունս՝ զորս գիրն դեղատուս կոչէ և հմայս, այնչափ իմն զօրացուցանել, մինչև քաջի բանաստեղծին (Վիրգիլեայ) 'ի ճահ համարել առ մարդկան հաւանութիւն՝ ասել զկնոջէ միոյ ճարտար եղելոյ 'ի վհկութիւն,

„Դա 'ի մրմունջ իւր խոստանայ
կեսոց լինել դիւր ոգւոց.
Եւ ըստ քմացն ածել կեսոց
հոգ վշտալիբեր խորհրդոց.
Ոտնակապել զջուր գետոց,
զաստեղց շրջանս ընկրկել.
Եւ զուրուականս գիշերայինս
յառաջ կոչել և դղդել.
Նա այս տեսցես և ընդ ոտիւք
մռնչել զհող թանձրամած,
Եւ զմայրիս ծառոց բարձանց
վայրաբերիլ 'ի լերանց„, յԱնէաւիանն. Դ.

Իսկ արդ եթէ այսոքիկ այսպէս, որչափ ևս առնել կարող է ած զանկարծելիսն առ դժնեահաւատս, բայց դիւրակատարս իւրումն կարողութեան. ուր նորա ինքեան է հաստատեալ զքարանց և զայլոցն իրաց զօրութիս, և զմարդկան հանճար՝ 'ի վար արկանել զնոսա զարմանագործ օրինօք, այլ և զհրեշտակականն բնութիս՝ բոլորից երկրածին կենդանեացն հզօրեղս. որ համայն հրաշակերտից յաղթէ սքանչելահրաշ զօրութբ, և իւրովն իմաստութբ 'ի գործել, 'ի հրամայել և 'ի թողացուցանել՝ 'ի գործ արկանէ զամենայն այնու սքանչելութբ՝ որով և արարչագործեացն։

ԳԼՈՒԽ Ը

Ի զարմանագործ իրս՝ ամենազօր կարողութին արարչին է անհրաժեշտ պատճառ հաւանութե։

Ո՞ր վասն ապա չիցէ կարող ած առնել՝ զի յարիցեն մեռելոցն մարմինք, և զի յաւիտենական տանջեսցին հրով մարմինք դատապարտելոց, նա՝ որ զաշխարհ կերտեաց անհամար զարմանալեօքն լի՝ յերկինս և յերկրի, յօդս և 'ի ջուրս, ուր աշխարհ ինքնին ամենայն իրօք՝ որովք լին է՝ սքանչելիք են մեծ և գերազանց։ Բայց դոքա՝ ընդ որս և որոց ընդդէմն խօսիմք, որք և զած լինել հաւատան՝ յորմէ աշխարհ եղև, և զաստուածս առ 'ի նմանէ եղեալս՝ որովք աշխարհի կարգ մատակարարի, այլ և զկենցաղական զօրութիս հրաշագործօղս զարմանալեաց բնաւորականաց կամ օրինադրելոց յիւրաքանչիւր կրօնից և 'ի պաշտամանց, կամ նա և դիւթականաց՝ ոչ ուրանան, այլ քարոզեն ևս, դոքա ասեմ՝ յորժամ 'ի դէմս բերեմք զզօրութիս զարմանալիս այլոց իրաց՝ որք ոչ բանաւոր կենդանիք են, և ոչ ոգիք մտաւորք, յորոց զսակաւսն յիշատակեցաք, պատասխանի առնեն սովորաբար. Այդ զօրութի է բնութե. նոցայն բնութի այնպիսի է. ազդմունք են անցնիւր բնու-

թէց ։ Ապա ուրեմն այն է բովանդակ պատճառն՝ թէ ընդէր վասն աղն ակրականդեան 'ի բոցոյ լուծանի և 'ի ջրի ճայթէ, վասն զի այս է նորա բնութիւն ։ Սակայն հակառակ բնութեան մանաւանդ այդ տեսանի, որ ոչ եթէ հրոյ՝ այլ ջրոյ ետ լուծանել զաղ, իսկ այրել՝ հրոյ և ոչ ջրոյ ։ Բայց ասեն՝ այնր աղի դոյն բնաւոր զօրութիւն է՝ ներհակաբար յայնցանէ կրել ։ Ապա սոյն պատճառ է համարեալ և զարամանտեան աղբերն, ուր նոյն վտակ զով է 'ի ցերեկի, և եռանդնուտ 'ի գիշերի, և ըստ երկաքանչիւր ազդեցութեան դժուարահաճ որոց մօտիննն ։ Սոյն պատճառ և միւսոյ աղբերն, որ ցուրտ գոլով 'ի շօշափելն, և զջահ վառեալ շիջուցանելով ըստ այլոց աղբերց, բայց հակառակաբար և սքանչելապէս իմն անդրէն վառէ զշիջեալն ։ Սոյն և վասն անշիջական քարի, որ չունելով հուր 'ի բնէ, այնպէս իմն բորբոքի օտար հրով, մինչ անհնարին է շիջանել ։ Սոյն և այլոցն՝ զորս երկրորդել դանդաղիմ, ներհակակիր թուեցելոցն և անսովոր առ զօրութիւն բնութեան, տացի պատճառ՝ և ոչ այլ, թէ այն է նոցայն բնութիւն ։ Հակիրճ է արդարեւ պատճառս, ընդունիմ և ես, և պատասխանի բաւական ։ Իսկ արդ քանզի Աստուած է բոլորից բնութեանցն հաստիչ, առիմէ չհաւանին զզօրաւորն առնուլ 'ի մէնջ պատճառս, յորժամ ընդ անհնարին ինչ կարծեցեալ չհաւատալով՝ պատճառս և փաստս 'ի մէնջ պահանջեն, և պատասխանի առնեմք նոցա՝ թէ այն են կամք ամենազօրին Աստուծոյ ․ որ արդարեւ ոչ յայլ ինչ սակս կոչի ամենազօր, եթէ ոչ՝ զի զոր կամի, կարող է ․ որ արարչագործելն կարաց զբազմապատիկսն զայնոսիկ՝ որք եթէ չէրեւէին, կամ չէին վկայեալ յայժմու հաւատարիմ անձանց, ընդ անհնարաւորս լինէին համարեալ, ոչ միայն անծանօթագոյնքն առ մեզ, այլ և զոր կարի ծանօթմն յիշատակեցի ։ Սան զի յայնս՝ որք բաց 'ի մատենագրացն զորոց զգրեալսն ընթեռնումք, չունին վկայս, և գրեալ եւս են յայնպիսեաց ումանց՝ որք չեն ուսեալք առ յԱստուծոյ, և մարդկօրէնն վրիպութիւն առձեռն է նոցա, այր իւրաքանչիւր իշխան է չհաւատալ առանց իրիք ստգտանաց ։

Վ[ա]նդլ և ոչ ես ինքն ախորժեմ, Թէ ամենայնի զորս շարակարգեցի, հաւատս բերելեմ ոք անընտրողաբար. ու ինքնին ոչ այնպէս ինչ հաւան եմ այնոցիկ՝ որպէս Թէ չկայցէ՛ի խորհուրդս իմ երկբայութիւն, քան յայնցանէ որոց գիտակ եմ անձամբ, և ամենայն ուժեք դիւրին է տեղեկանալ. զոր օրինակ յաղագս կրոյ՝ որ ջրով բորբոքի, և իւղով ցրտանայ. յաղագս մագնեստիս քարի՝ որ չգիտեմ զիա՛րդ անյայտ ձգմամբ ոչ շարժէ զյարդ, քայց յափշտակէ զերկաթ. յաղագս մոլ սերամարգի անդնեխ ծնանելոյ, ուր Պղատոնի մարմին նեխեցաւ. յաղագս յարդի որ ցուրտն գոլով՝ չթողու հալիլ ձեան, և ջերմ գոլով տայ պտղոց հասունանալ. յաղագս հրացեալ փայտի՝ որ ըստ իւրումն փայլման սպիտակացուցանէ զքար եփելովն, և հակառակ այնմ զբազում ինչ Թխացուցանէ այրելով։ Ո՞յնպիսի է և այն՝ զի բիծք սևորակք հարկանին՛ի ձիթոյ վաւելոյ, և գիծք սևաթոյրք տպանան՛ի պայծառ արծաթոյ։ Այս ածուխք գարձեալ, որք հրով վառեալք այնպէս՛ի հակառական այլափոխին, մինչև՛ի փայտից գեղեցկաց լինել Թխատիպս, ի կարծրագունից գիւրաբեկս, ի փեթլեացն անփուտս։ Այսցանէ ինչ ինչ անձամբ գիտացի ես զոյգ ընդ այլս բազումս, և ինչ ինչ գիտացի զոյգ ընդ ամենեսին. Թող զայլ ևս յոլովապոյնս՝ զորս յերկար լինէր կարգել՛ի գիրս յայս։ Ոչ այսպէս յաղագս այնոցիկ զորս ոչ՛ի տեղեկութենէ՝ այլ ընթերցմամբ յիշատակեցի, քայց յաղբերէ անտի ուր ջահք վառեալք շինջանին, և շինջեալքն անդրէն վառին, կամ յաղագս սոդոմական պտղոցն՝ արտաքոյ հասունացեալս եւ լեալս խոսկի. որոյ վասն անձամբ համարիմ երկբայս ար-

կանել ։ Իսկ որք արտաքոյ այսոցիկ են, ոչ 'ի հաստատել առնուլ, և ոչ 'ի մերժել . բայց յայն սակս նշանակեցի, զի ընթերցեալ է իմ առ պատմագիրս նոցա՝ առ որս դիմախօսիմք, առ 'ի դէմս ածել նոցա՝ թէ յոլովս ինչ այսպիսի հաւատամ բազումք 'ի նոցանէ առանց փաստս խնդրելոյ՝ ընթերցեալք ևեթ 'ի մատեանս իմաստնոց իւրեանց . իսկ յորժամ ինչ մի գերազանցեալ քան զնոցայն հմտութ՟ն և զմիտս՝ ասեմք թէ գործելոց է ամենազօրն ա՟ծ, դժկամակ լինին հաւատալ՝ նա և 'ի տալ մեր փաստս իրաւացիս ։ Քանզի զո՞ր այլ փաստ ընտրական և զօրաւոր յաղագս այդպիսեաց իրաց ունիցիմք՝ քան ասել թէ ամենազօրն ա՟ծ առնել զնոյնս կարող է, և առնելոց իսկ է զորս միանգամ ընթեռնումք նախ գուշակեալ՝ ուր զայլ բազում ինչ առ 'ի նմանէ նախաձայնեալս տեսանեմք յարդիւնս եկեալ . վասն զի նա ինքն առնիցէ իսկ և իսկ, իբրև զի կանխաւ ասաց թէ առնելոց է զանհնարինն կարծեցեալս, որ խոստացաւն և արար՝ զի անհաւատալիքն հաւատարիմք լինիցին առ ազգս անհաւանս ։

ԳԼՈՒԽ Ը

Ոչ հակառակ ինչ է բնութ՟ն՝ եթէ 'ի ծանուցեալ բնութ՟ն իմիք յերևան գայցէ այլակերպ ինչ քան զոր ծանուցեալն էր ։

Իսկ եթէ պատասխանի առնիցեն՝ յայն սակս չհաւատալ զոր ասեմքն յաղագս մարդկային մարմնոց, թէ միշտ այրեցեալք՝ ոչ երբէք մեռանիցին, վասն զի ծանուցեալ իսկ է մեզ այսց մարմնոց բնութ՟ի՝ թէ կարի այլազգ է 'ի բնէ . մինչ զի ոչ զօրէ աստանօր այն փաստ՝ զոր յայլսն հրաշակերտ բնութ՟իս 'ի կիր առնումք, ասել թէ այս բընաւոր զօրութ՟ի է, բնութ՟ի իւիդ այն է . զի գիտեմք թէ ոչ այն է բնութ՟ի մարդկեղէն մարմնոյ ։ Առ այդ ունիմք ապաքէն տալ պատասխանի 'ի գրոց սրբոց՝ թէ մար-

մնոյս բնութին ինքնին տարօրինակ հաստեալ էր յառաջ քան զմեղսն, այն է՝ կորէր ոչ ընդ մահու գրաւիլ. և այլ օրինակ յետ մեղացն եղև, որպիսի ծանուցաւ 'ի թըշուառութիւս այսր մահկանացու սահմանի՝ ոչ բաւել 'ի կեանս յաւերժակայ: Ապա նոյնպէս այլ ազգ քան զոր մեզն է ծանօթ, լինիցի 'ի մեռելոցն յարութե: Բայց զի դոքա ոչ հաւատան ա̃ծեղէն գրոց՝ յորս է ընթեռնուլ թէ որպէս կեայր մարդ 'ի դրախտին, և քանի՜ ազատ 'ի մահուն հարկաւորութէ, որոց թէ հաւատային, ոչ պայքարէաք ընդ նոսա յաղագս լինելոց պատուհասի դատապարտելոցն, բեր առաջի դիցուք ինչ մի 'ի նոցին բազմահմուտ արանցն գրոց, զի յայտնեսցի թէ մարթ է իրաց իւրաքանչիւր այլազգաբար կերպաձևիլ քան զյառաջնումն ծանուցեալն յիւրում բնութե պայմանի:

Ի մատեանս Մարկոսի Վարրոնի՝ մակագրեալ՝ յաղագս ազգաց ժողովրդեան Հռովմայ, գոյ ինչ զոր նորայովքն բանիւք եդից աստանօր ըստ ընթերցուածին. "Յերկինս, ասէ, նորահրաշ իմն ցոյցք երևեցան. քանզի ըստ գրելոյ Կաստորի 'ի գեղանշոյլ աստղն արուսեակ, որ և երեկորին կամ գիշերավար կոչի 'ի Պղաւտոսէ, և ըստ Հոմերոսի՝ ամենագեղ կոչմամբ, երևեալ է ցոյցք իմն հրաշազան, մինչ զի փոփոխել զգոյն իւր և զմեծութի, զձև և զընթացս. որ ոչ յառաջն այնպիսի լեալ էր, և ոչ յապայս լինիցի: Զայդ անցս առ Ովգեաւ արքայիւ դիպեալ ասեն Ադրաստոս կիզիկեցի և Դիոն նէապօլսեցի՝ աստեղագէտք երևելիք": Իսկ արդ ոչ արդեօք ցոյցս հրաշալի կոչէր զայդ մեծիմաստն Վարրոն, թէ ոչ հակառակ բնութենն լինել տեսանէր. քանզի զհրաշալիս զամենայն՝ հակառակս ասեմք բնութե, բայց ոչ են: Զի որպէս բնութե հակառակ իցէ՝ որ ա̃ծայինն կատարի կամօք. ուր զի կամք այնպիսում արարչի՝ բնութի իսկ է իրացն հաստելոց իւրաքանչիւր: Ապա ուրեմն ցոյցք հրաշալի ոչ բնութենն հակառակ է, այլ ծանուցելումն 'ի բընութե: Այլ ո՞ ոք 'ի համար բերիցէ զհրաշալեացն յոլովութի արձանագրեալ 'ի վէպս հեթանոսաց. այլ զարդիս

միում այժմ ուշ կալցուք՝ որ մերում քանիս անկ է։ Ո՛րինչ ինչ այնպէս յարդարեալ իցէ յարարչապետէ երկնային և երկրաւոր բնութե՛նց՝ իբրև զամենակշիռ աստեղացն ընթացս. զինչ այնպէս հաստատեալ կանոնափակ և անխախուտ օրինօք. և սակայն ընդ կամելն նորա՝ որ ինքնագոյ տէրութ͞բ և իշխանութ͞բն վարէ զիւր արարած, աստղն որ քան զայլսն ծանօթագոյն է մեզ քանակաւ և նշողիւք՝ անդէն փոխեաց զգոյն, զմեծութիւն, զձև, և որ ևս զարմանալի՝ զկարգ և զօրէն ուրոյն ընթացից։ Յայտ է թէ վեր ՚ի վայր արար յայնժամ զաստեղաբանիցն կանոնս՝ թէ արդեօք կային առ այնու ժամանակաւ, զորս իբրև անստերիւր համարողութեամբ գրեալս ունին յաղագս անցելոյ և ապագայ շարժմանց աստեղացն, և որոց անսացեալ իշխեցին ասել ՚ի վերայ դիպուածոյ արուսեկին՝ թէ ոչ յառաջն, և ոչ զկնի դիպաւ այն։ Իսկ մեք յա͞ծայինսն ընթեռնումք մատեանս՝ թէ նաև արեգակն ինքնին մերթ ոտնակառեաց, յորժամ անարատն այր Յեսու Նաւեայ խնդրեաց զայդ ՚ի տեառնէ, մինչև զձեռնարկեալն պատերազմ ՚ի գլուխ տանիցի յաղթութ͞բ. և մերթ վերջոտնեաց՝ ՚ի նշանակ հնդետասանամեայ կենաց յաւելլոյ Եզեկիայ արքայի, զայդ սքանչելիք ևս վերաբերեալ ՚ի խոստումն ա͞յ։ Բայց դոքա թէ հաւատայցեն ևս իրօք եղեալս զայսոսիկ սքանչելիքս՝ պարգևեալս ըստ արժանեաց արդարոցն, ինքեանք ընծայեն դիւթական արուեստի. զոր օրինակ այն զոր վերագոյնդ յիշատակեցի ասել Վիրգիլեայ, զտեղի առնուլ գետոց հօսանաց, և աստեղաց յետս ընկրկել։ Քանզի արդարև գետոց ՚ի վերուստ կողմանէ կառչիլ, և ՚ի ստորէ հօսել գնալ՝ ընթեռնումք ՚ի սուրբ գիրս, յորժամ ժողովուրդն ա͞յ առաջնորդութ͞բ Յեսուայ Նաւեան ճանապարհ առնէր. և նոյն կատարեցաւ յանցանել Եղիայի մարգարէի, և Եղիսէի նորուն աշակերտի. նոյն և մեծի լուսաւորին անդրադարձումն առ Եզեկիայիւ թագաւորաւ՝ զոր արդ յիշատակեցի։ Իսկ զոր յաղագս արուսեկին գրեաց Վարրոն, չասէ անտանօր թէ ՚ի հայցմանէ մարդոյ ուրուք լեալ իցէ։

Այլ և մի ասա՝ թէ բնութեան ծանօթութեանէ ստուերածս անձանց բերկրեցեր անհաւատաք, կարծեցեալք թէ չիցէ մարթ գործել յերս ինչ յաճուատ այլազգ քան զոր մարդկաբար իբրեանցն տեղեկութեանէ գիտացեր՝ ի բնութենէ իրին. Թէպէտ և որ ինչ միանգամ՝ ի բնութենէս իրաց ակներև կան առնեցուն, ոչ ինչ նուազ զարմանալիք են. և՝ ի հիացուն և լինելին արգելօք քաջախոհից առնեցուն, եթէ չէր մարդկան սովորութենէ զարմացուն բերել ընդ զարմանալիս՝ յորժամ սակաւք են՝ Ո՛ւ ո՞ր մուսուրապէս կըշռելով, չտեսանիցէ յանհամար բազմութենէ մարդկան, և՝ ի նոցա հանմանման բնութենէն՝ այնպէս իմն հրաշաբար կրել իւրաքանչիւրում դէմս ուրոյն, մինչ զի թէ յիրեարս նմանք ոչ էին, տեսակ նոցա ոչ գտանիցէր յայլոց կենդանեաց. և եթէ անմանիք չէին իրեարս, ոչ գոյր որոշել զմարդ՝ ի մարդոյ՝ Այլ՝ մին իրի զոր նմանականս խոստովանիմք, անմանականս զնոսին գտանեմք. և անմանութենէն հայեցուն առաւել զարմանս ունի բերել՝ այնու զի իբաւամբք և թուի զնմանութենէ պահանջել հասարակականն բնութենէ՝ Այլ քանզի որ սակաւքն էն՝ նոքին և զարմանալիք, ահա յաւէտ և սքանչանամբ՝ ի գտանելն երկուս ոմանս այնչափ համանմանս, մինչ զի չկիտարել զնոսա յիրերաց՝ սխալեցեալք միշտ և կամ սակաւ.

Այլ զոր՝ ի Այրոնէ ասացի գրեալ, որ և նոցին իսկ հեթանոսաց պատմաբան է այլն և բազմահմուտ, գուցէ չհաւատան թէ արգարեւ լեալ իցէ գործն. և կամ զի ոչ ընդ երկար տեւեցին այնպիսի ընթացք աստեղն, այլ անդրէնն դարձ արար՝ ի սովորականն իւր, ոչ այնչափ ամաքին յարացուցիւդ. Այնինն աւանիկ գրեա միւս ևս, զոր մարթ է ցուցանել և յայժմուս, և բաւական վարկանիմ՝ ի խրատել զնոսա. զի եթէ տեսանիցէն ինչ՝ ի պայմանի բնութենէ իրիք՝ ծանօթ ինքեանց ամենայնիւ, ոչ վասն այնր պարտին օրինադիրս լինել՝ այ, որպէս թէ չըկարիցէ յեղաշրջել զայն և փոփոխել յայլ ինչ օտարագեղ քան զոր ինքեանց է ծանուցեալ. Այդոմայոցն երկիրք ապաքէն ոչ էղև այնպիսի, որպիսի այժմ է. այլ հան-

գունակ այլոց ունելով զերեսս, նոյին բեղնաւորութբ, և առաւելագունիւ ևս բարգաւաճեալ էր. զի դրախտին այ հաւասար ասացաւ յածային պատգամին: Այլ սակայն յետ երկնառաք հարուածոյն՝ ըստ որում վկայէ և նոցայն պատմութի (առ Տակիտոսի), և տեսանի այժմ յուղւորաց ընդ այն կողմանս, սարսափումն է նորանշան ծխատեսիլ խանձմամբն. և պտուղք նորա ընդ սուտ կեղևանօքն հասուն մրգաց առագաստեն զմոխրատեսակն նիւթաւորութի: Հաւասիկ չէր նա այնպիսի, և արդ այնպիսի է. ահա զարմանագործ փոփոխմամբ 'ի բնութեցն հաստողէ յայն զազրատեսակն այլակերպութիւն շրջեցաւ բնութի նորա. և որ դիպաւն յետ յերկար ժամանակի, կայ տևէ ընդ երկար ժամանակ:

Ուրեմն ապա զոր օրինակ ոչ անհնար եղև այ արարչակերտել զորս կամեցաւն, նոյն օրինակ ոչ անհնարին է նմա զհաստեալսն յիւրմէ բնութիս յեղաշրջել յոր ինչ և կամիցի: Եւ յայսմ պատճառէ յաճախեալ է բազմութի այլանդակացն այնոցիկ՝ որ հրէշք անուանին և ցուցանք, ձիւաղք և նշանք. զորս թէ կամք էին մի ըստ միոջէ յիշատակել, ոչ լինէր ժամանել յամբոկ գործոյս, այլ և այլ անուամբք յայտ առնելով զցոյցս իրաց ինչ, զզարմանութիս, զնախագուշակութիս: Այլ սակայն ինքեանք տեսցեն հնարիչքդ այդոցիկ, զիարդ 'ի խաբս ըմբռնին այսոքիւք 'ի սադրելոյ ոգւոցն այնոցիկ, որոց ջան է 'ի վարմս վնասաբեր աւելախնդրութե պաշարել զանձինս արժանացելոցն այնպիսում պատուհասի, քարոզելով նա և զճշմարիտս ինչ, կամ բազմախօս լինելովն՝ խառնել երբեք ուրեք և զստուգաբանս իմն: Բայց մեզ այս ամենայն իրք՝ որ հակառակ բնութե գոգցես լինին, և ասին իսկ այնպիսի լինել, մինչև առաքելոյ ևս այսու սովորութբ մարդկան խօսեցեալ ասել՝ թէ յանբուն 'ի բարի ձիթենին պատուաստեցաւ ձիթենին վայրենի՝ հաղորդեալ պարարտութե նորա, մեզ ասեմ՝ այդոքիկ կոչեցեալքդ հրէշք, ցոյցք, ձիւաղք, պարտին ցուցանել, ազդ առնել, զեկուցանել՝ թէ կատարելոց է ած զոր ինչ միանգամ յաղագս

մարմնոց մարդկան ծանոյց կանխաւ առնել երբեմն, ոչ խափանեալ իւիք 'ի դժուարութեանց, ոչ ինչ ընդ հակառակն ելանելով օրինաց բնութեան ։ Եւ թէ որով օրինակաւ ծանոյց յառաջագոյն, բաւականապէս որպէս կարծեմ յառաջ բերի յանցելումն գրի, քաղուածս արարեալ 'ի սրբազան գրոցն հնոց և նորոց՝ ոչ զբնաւն 'ի սոյն անկաւոր, այլ որչափ հերիք դատեցայ յառաջիկայ մատենիս ։

ԳԼՈՒԽ Թ

Յաղագս գեհենին, և հանգամանաց յաւիտենական պատժոց ։

ԻՍԿ արդ զոր իւրովն մարգարէիւ Եսայեաւ ասաց Աստուած յաղագս մշտնջենաւոր տանջանացն դատապարտելոց, լինելով արդարև լինիցի. «Որդն նոցա ոչ վախճանեսցի, և հուր նոցա ոչ շիջցի» ։ Զայդ ուժգին ևս կամեցեալ աւանդել տեառն Յիսուսի, անդամս դայթակղեցուցիչս մարդոյ իմանալով զայնոսիկ՝ զորս իբր անդամս աջականս սիրէ իւրաքանչիւրոք, զորս և կտրել հրամայէ, ասէ այսպէս. «Լաւ իցէ քեզ խեղ 'ի կեանսն յաւիտենից մտանել, քան երկուս ձեռս ունել և երթալ 'ի գեհեն 'ի հուրն անշէջ» ։ Նոյնպէս վասն ոտից. «Լաւ իցէ քեզ կաղ մտանել 'ի կեանսն յաւիտենից՝ քան երկուս ոտս ունել և անկանել 'ի գեհեն» ։ Եւ վասն աչաց ասէ նոյնպէս. «Լաւ իցէ քեզ միով ականբ մտանել, քան երկուս աչս ունել և անկանել 'ի գեհեն, ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի». Մարկ. Թ ։ Ոչ դանդաղեցաւ Տէր երիցս 'ի միում վայրի զնոյն բանս ասել. և ո՞ ոչ ահաբեկեսցի ընդ այդ կրկնումն, և ընդ սաստիկ սպառնալիս այնր պատուհասի յաստուածեղէն բերանոյն ։

Արդ որք զերկոսին զայս, զհուր և զորդն՝ հոգւոյ պատուհասս իմանան և ոչ մարմնոյ, ասեն թէ որոշեալքն յարքայութենէն երկնից այրին ցաւօք հոգւոյն ընդ անժամ և

անշահ ապաշաւութեին . ուստի հուր աստանօր ՚ի գէպ համարին իմանալ զկիզողական ցաւան , ըստ որում և առաքելականն . “Ո՞ գայթակղի , և ոչ ես տապանամ ,, : Նոյնպիսի ցաւոնշանակել համարին որդամբն . զի գրեալ է ասեն . “Իբրև ցեց հանդերձի , և որդն փայտի , նոյնպէս տրտմութեի՛ ընաստակար է սրտի առն ,, : Իսկ որք գիտեն աներկբայ՝ թէ յայն տանջանս կայ տուժիլ և հուր և որդ , հաստատեն՝ այրիլ՚ի հուր մարմնոյն , և հոգւոյ կրծիլ որդամբ տրտմութեն : Այս առաւել ևս զհաւանութեն ունի քան , զի արդարեւ անտեղի էին է թէ պակասիցին անդ ցաւք կամ մարմնոյ և կամ հոգւոյ : Բայց ես մտադիւր ևս ՚ի մարմին անդր ասեմ իմանալ զերկաքանչիւրն , քան թէ և ոչ զմի . ուստի լուեալեայն ակնարկին ցաւք հոգւոյն յայն բանս ՚ա՛ծային գրոց՝ ըստ հետևութե՛ իմացեալ , թէպէտ և յայտնապէս չասիցի . իբրև զի մարմնոյն ցաւելով գոյ և հոգւոյն տանջիլ անպատուղ ապաշաւանօք : Ոչ ընթեռնումք՚ի գիրս . Սերաստայ . է . 18 . “Վ՚ երկժխանդրութե՛ մարմնոյ ամբարշտի՝ հուր և որդն ,, : Յամառօտ ևս մարթ էր ասել , վերկժխանդրութե՛ ամբարշտի . վասն էր ապա ասացաւ՝ մարմնոյ ամբարշտի . բայց զի ծանիցի թէ երկոքին և՝ հուր և որդն՝ պատուհաս մարմնոյ են : Կամ եթէ այնր աղագաւ մարմնոյ վերկժխանդրութե՛ ասել ընտրեաց , զի վերկժս պահանջի մարդ սակս ըստ մարմնոյ կենցն , որով և անկանելոց է ՚ի մահն երկրորդ , ըստ ծանուցանելոյ առաքելոյն “Ո՛չ եթէ ըստ մարմնոյ կեցջիք , մեռանելոց էք ,, , ընտրեաց՝ ապա որպէս և ախորժէ այր իւրաքանչիւր , կամ զհուրն մարմնոյ տալով տիրապէս , և զորդն՝ հոգւոյն այլաբանութե՛ , և կամ զերկաքանչիւրն մարմնոյ՝ տիրապէս : Զանգի բաւական են զոր վերագոյնդ իմաստասիրեցի՝ թէ կեանդանեաց անգամ մարթ է ՚ի հուր կեալ յայրուածն առանց ծախելոյ , ՚ի ցաւս առանց մեռանելոյ՝ հրաշագործութե՛ ամենակալ արարչին . որում թէ ոք ժխտիցէ հնարաւոր լինել այսմ , անգիտանայ արդարեւ այնպիսին՝ յումէք իցեն որ ինչ՚ի բնաւ իրիս զարմանութենէ : Ո՛չ

նա ինքն ՚ած է որ զհամային զարմանալին յաշխարհի զմեծամեծս և զմանուն՝ զսակաւուք յիշատակեալքս, և զևս անհամեմատ բազմագոյնն չյիշատակեալ՝ արար, և ընդ-ոգեաց զնոյնս ՚ի մի յայս աշխարհ՝ հանուրց սքանչելեացն վեհագոյն։ Ա՚ան որոյ ընտրեսցէ զմի յերկուց զոր և ՚նաձիցի ոք, եթէ համարիցի զորդն և-ս մարմնոյ անկանիլ տիրապէս, և կամ եթէ հոգւոյ անկ՝ փոխաբերեալ զբառդ ՚ի մարմնականաց յանմարմինն։ Ասկ Թէ ո՞ր յայտցանէ լեալ հաւաստի, զայդ յանկագոյն և-ս դէպք իրացն յայտնեսցեն, յորժամ սրբոցն գիտուԹի այնչափ առաւելուցու, զի առանց պիտոյից փորձոյ ՀանաչիցԷն պատուհասքն այնոքիկ. և միայն իմաստուԹինն որ յայնմ ժամու լի և կատարեալ, բաւական լեալ առ ՚ի և զայդ գիտել։ քանզի արդ փոքր ՚ի շատէ գիտեմք, մինչև եկեսցէ կատարումն. միայն զի մի կարծիցեմք այնպիսի լինել յայնժամ մարմնոց, որ անցաւեալիք լեալն ՚ի հրոյ։

ԳԼՈՒԽ ԺՈ

Եթէ հուր գեհենոյն լեալ մարմնական, ազդել կարիցէ արդեօք այրեցողուԹիւն ՚ի չար ոգիսն, այս է՝ յանմարմին դևս։

Ասէ Աստուած. Եթէ հուրն այն չլեալ աննիւԹական՝ իբրև հոգւոյ ցաւքն, այլ մարմնեղէնն՝ հրոպ մամբն վտանգիչ, որով հնար լեալ տանջիլ մարմնոց, զիարդ և չարաց ոգւոցն պատուհաս այնու գործիցի. քանզի նոյն հուր է կարգեալ ՚ի տանջանս մարդկան և դիւաց, յասել Քան. "Նրբաձայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա,, Ասէ. եզ. 41։ Նմանեալ լեալն և դիւաց մարմինք ինչ, որպէս Թուեցաւ ոմանց յարանց իմաստնոց, ՚ի Թանձր և ՚ի գիջին օդոյ կազմեալք, զորոյ զբաղխուածն յանձին ըզպատմք ՚ի ընչել հողմոյ. և եԹէ այդ ազգ տարրական ոչ

և կրոնական՝ ի հրոյ, ոչ կիզոյր արդեօք՝ ի ջերմութե՛ր բաղանեաց։ քանզի առ կիզելոյ նախ ինքն կիզանի, և զոր կրէն՝ ներգործե՛ ։ Իսկ եթէ հաստատուն կալցի ոք անմարմին լինել զհաց գիտովին, չէ պարտ տաժանիլ՝ ի քին այդր խնդրոյ, և կամ բանակիս վիճմամբ պայքարել։ Օ՛ ի զինչ արգելու ասել, թէ նա և հոգիք անմարմինք ունին մարմնական պատուհասիս հրոյ վշտացնիլ՝ թէ և զարմանալի օրինակաւ, բայց և իրօրէն չնմարտապէս, ուր և հոգիք մարդկան գոլով բնաւին անմարմինք, ի մարմնեղէն անդամն փակեցան այժմ, և յաւիժամ ունին անլուծանելի կապիլ՝ ի մարմնս իւրեանց ։ Իպա ուրեմն և դիւականքն ոգիք թէ և անունակ մարմնոյ իւրեանց, և աննիւթականք, յարեալ յարեսցին՝ ի հուր մարմնական առ՝ ի տանջելոյ, իբր ոչ եթէ զի նոցայն միաւորութե՛ր հուրն՝ յոր մերձենան հնչաւորեալ, լինիցի կենդանի, այն որ՝ ի հոգւոյ և՝ ի մարմնոյ բաղկանայ, այլ որպէս ասացեդ, աբանչելի և անձառ իմն օրինակաւ լծորդեաք, պատուհաս՝ ի հրոյ անտի կրեսցեն, և ոչ եթէ կեանս նմա տայցեն ։ Իայն զի և որ այժմու միս օրինակն՝ հոգւոց ընդ մարմնս կապիլ, և լինել կենդանի, և արդարեւ զարմանահրաշ, և՝ ի մարդոյ անհասանելի։ Թէպէտ և այն իսկ և մարդն ինքնին հոգւովն միայն և ոչ մարմնով՝ կարող է՝ ասել, թէ հոգիք անունակք մարմնոյ՝ այնպէս այրելոց են, զոր օրինակ այրէր մեծատունն այն յասելն. «Պապակիմ՝ ի տապոյ ասի ,, ՝ ։ ՝ ։ ՝ ։ Ղ։ 24 ։ Իայց ինքնին գիտակ եմ զդիպուցն լսել պատասխանի, թէ այնպիսի էր բոցն այն, որպիսի աչքն զոր ամբարձեալ՝ ետես զԻ ազարոս, որպիսի լեզուն՝ որում դպցին զովացումն հայցէր, որպիսի Ի ազարու մատն էր՝ նպաստատուր լինել խնդրոյն. և սակայն անտանօր հոգիք միայն կային մերկ՝ ի մարմնոց ։ Իայսպէս ապա աննիւթական էր բոցն յոր պապակէր, և կաթիլ ջրոյն զոր խնդրէր ։ որպիսի էն և տեսիլք՝ ի քուն եղելոց, կամ որք յաիշտակութե՛ր աւետանէն իբր անմարմնականս՝ բայց՝ ի մարմնոց նմանութե՛ր ։ Իանզի և մարդն ինքնին հոգւովն միայն և ոչ մար-

ՀՈՎ եղեալ յայնպիսի տեսիլս, տակաւին մարմնոյ գոնեակ
զինքն տեսանէ, ոչ կարացեալ որոշել զնոսա։ Ի՝ յայսմանէ
գէհենին այն՝ որ ասացաւ եւս լեռ հրոյ եւ ծծմբոյ, է հուր
մարմնեղէն, և տանջեսցէ զդատապարտեալսն մարմնով՝
կամ զմարդկան թանձր մարմինս, և զդիւացն զօդեղէնս,
կամ զմարդկան եւեթ մարմինս հոգւովք հանդերձ, իսկ
զդիւականսն ոգիս առանց մարմնոյ։ ոլոր յայսցեալսդ
պատուհասս ձգէն, և ոչ եթէ կեանս ազգէն ի հուրն
մարմնական։ Ա՝ ամն զի մարդկան և դիւացդ զմի և զնոյն
հուր լմնեալ սասց Ա՝ստուածութիւն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Թէթէ արդարութեան բան պահանջիցէ ժամանակի պատուհասիցն ոչ յերկարեալ ընդ ժամանակ։

Ասանդ յայսցանէ որոց ի դիմի պաշտպան կամք քաղաքին այ, անարդար իմն համարին՝ ընդ մեղաց ոմանց թէ և մեծամեծաց, բայց կարճ ժամանակեայ գործեցելոց յաւիտենականին տուժիլ մարդոյ պատուհասիս։ որպէս եթէ օրինաւք ինչ արդարութեան յայն քանակեալ իցէ, զի զայնքան ժամանակ ի պատժի կայցէ իւրաքանչիւրոք, որքան ժամանակս զպատժոյ արժանին յանցեալ գործ։ Ուստի ազգս պատժոց գրէ Տուղղիոս սահմանեալ յօրէնս, այն են՝ տուգանք, կապանք, գանք, խեղդութիւն, վատահամբաւութիւն, աքսոր, մահ, ծառայութիւն։ արդ որ ոք յայսցանէ սահմանեցի ընդ տուղ ժամանակ ըստ իւրաքանչիւր մեղացն արագութեան, այնչափ ձգել զնոսա ժամն փոխարէն, որչափ գործն յերկարեաց, բայց թերևս խեղդութիւնն միայն։ քանզի այսու զայն ինչ՝ զոր առնուն՝ կրէ այլ իւրաքանչիւրք։ որպէս այն օրինացն բան։ Գ՝ոյն ընդ ական, ատամն ընդ ատամն։ Օ՝ր մարդ է կորուսանել մարդոյ զակնն ընդ այն փոքր ժամ ըստ

սաստից վրիժուն, որչափ ինքն զայլս ակն խլեաց տարապարտ յանցուածոյն։ Բայց եթէ իրաւունք ասիցեն՝ ըզհամբոյր տուեալ կնոջ օտարի գանիւ պատուհասել, ոչ ապաքէն յանցուցեալըն 'ի վայրկեան ժամանակի՝ առանց չափոյ ժամուցն առնու հարուածս, ընդ դոյզն հեշտալի բանի պատուհասեալ երկարատեւ ցաւօք։ Օ ի՞նչ 'ի կապանս. միթէ 'ի նմին կալ պարտի ոք զայնքան ժամանակ եւեթ, որքան զարժանի կապանացն արար վնաս. ուր 'ի հակառակէն ամենայն արդարութի՟ պատուհասս տարեւորս կրէ յոմնակապս ծառայ, որ հարեւանցի բանիւ կամ հարմամբ անարգեալ իցէ զտէր իւր, եւ կամ գանակոծեալ։ Այլ եւ զի տուգանք, վատահամբաւութիւն, աքսոր, ծառայութի՟, բազում անգամ 'ի վերայ կային առանց իրիք ներողութե՟, ոչ ապաքէն ըստ այժմու կենացս՝ յաւէրժակայ պատժոց յար եւ նման են։ Քանզի յայն սակս չմարթին յաւիտենականս լինել տիրապէս, զի եւ ոչ կեանքն որ սոքիմբք պատուհասի, յերկարեալ ձգի ընդ յաւիտեանս. եւ սակայն մեղքն վրիժակեալք բազմաժամանակեայ պատժովք՝ գործին 'ի համառօտ երբի. եւ չեղեւ ոք երբեք որ խորհէր՝ թէ այնպէս արագավախճան լինել պարտ իցէ տանջանաց յանցուցելոց, որպէս արագ գործեցաւ սպանութի՟, կամ շնութի՟, կամ սեղանակապտութի՟, կամ որ այլ եւս եղեռն, չափել ոչ ըստ ժամանակի երկայնութե՟, այլ ըստ մեծութե՟ ապիրատութե՟ն եւ ամբարշտութե՟։ Իսկ որ 'ի սակս ծանր յանցանաց իրիք 'ի մահ պատուհասի, միթէ ըստ կարճատեւ այնր ժամու եւեթ՝ յորում սպանանի՝ կշռեն օրէնք զնորա տանջանսն, եւ ոչ բառնան զնա յաւիտեանս 'ի մարդկան կենակցութենէ։ Իսկ արդ որ ինչ է բառնալն զմարդիկ յայս 'ի մահկանացու քաղաքէ խոշտանգանօք առաջին մահուն, նոյն է եւ բառնալն զնոսա յանմահ՟ն քաղաքէ անտի տանջանօք երկրորդ մահուն. զի զոր օրինակ ոչ ներեն երկրաւոր քաղաքիս օրէնք անդրէն 'ի նոյն վերակենցաղիլ մահապարտելոյն, նոյնպէս եւ ոչ երկնաւորին օրէնք յանձըն առնուն 'ի յաւիտենից կեանս վերադարձիլ պարտա-

ազելոյն ի մահն երկիւղդ ։ Այլ երբ ապա չնմարտեսցի , ասեն , Չնաի ձերոյ ասացածն ։ “Ոյրով չափով չափիք , չափեսցի ձեզ ,,, եթէ արդարեւ յաւիտենական տանջանաց պատուհասից մեզք ժամանակաւոր ։ Ոչ առնուն գոքա ի միտ , թէ ոչ սակս միառևանն միջոցի ժամանակի առաջաւ՝ նոյն չափով լինել , այլ ըստ անդադարձութեանն չարին . իբրև զի որ չարիս գործեաց , չարիս և կրեսցէ ։ Վասպիտ և մարթի է զասացեալդ առնուել տիրապէս յայն ինչ՝ զորմի առ տեղեաւն խօսեր տէրն , այս է՝ յաղագս գատողութեանն և գատապարտ առնելոյ ։ ուստի որ զգաճի և պարտաւոր առնի յանիրաւի , եթէ ինքն լինի գատեցեալ և պարտաւոր իրաւամբք , ահա ընդունի նովին չափով , թէ և ոչ զայն զոր ետուն ։ զի գատաստանաւ արար , գատաստանաւ և կրէ ։ այլ զի գատապարտելով գործեաց զանիրաւութիւն , գատապարտ լինելոյն կրէ զերաւացին ։

ԳԼՈՒԽ ԺԲ

Յաղագս միջոցի նախնին պատուիրանացուցէ , որ վասն պատուհասս յաւիտենից կայ միայ առնելացուն ծառայեցելոց ի ընծայոյ փրկչին ։

Այլ զժնդակ ինն և անարդար թուի մարդկայնոցս իմաստից՝ պատիժ յաւիտենական ։ և երբ վասն ։ քանզի առթերութեանէ մեռօքինակ զպայուելնէց նուազեալ է իմաստութենէն այն բաձրախորհուրդ և յատակատես , որով կշռադատեալ մարթ իցէ՝ ծրչափ քարուականութենէ գործեցաւ յառաջնումն անդ պատուիրանացուցութեան ։ Ո՛չ որչափ բարձաւաձեալ էր մարդն Ադամոյ , նոյնչափ մեծ և ապիրատութիւն լիք եթող զնծ ։ և եղև յաւժամանաւոր յաւելուածակայ չարի , զի անցոյց զիւրեաւ զարարին՝ որ լինելոցն էր յաւիտենական ։ Այսմ պատճառէ դատապարտ գտաւ միահամուռ զանգուածն մարդկութեան ։ զի որ նախն յանցեաւ , զոյգ պատուհասեցաւ ընդ զարմին՝

որ՝ ի նմանէ արմատացեալ էր. մինչ զի ոչ ուստեք ազատուել էր յարդարակիւռ յայնմ և՝ ի պատուար տանջանաց՝ բայց ողորմութիւնք և ձրիապարգև շնորհք. և այնպէս տարատրոհեալ գոցի ազգ մարդկան, զի յոմանս յայտնի ցուցցի՝ թէ ի՛ր իմիք զօրիցէ ողորմութիւնն շնորհ, և յայլս՝ զինչ արդարն վրէժխնդրութիւն։ Վասանզի ոչ յամենեսին մարթ եր երկուց այսոցիկ յայտնաբանիլ. զի թէ ամենեքին լքեալ ինայէին՝ ի պատժի արդար դատապարտութեանն, չերևէր և ոչ՝ ի մի ոք փրկողին զթութիւնն շնորհ. և դարձեալ՝ եթէ ամենեցուն լինէր՝ ի խաւարէ անցանել՝ ի լոյս, և ոչ՝ ի միուն իսկ հանդիսանայր վրէժոյն խստութիւն. իսկ՝ ի կեանսումդ յայն սակս կարի բազմազոյնք են քան յառաջնումն, զի ծանիցի՝ զինչ ինչ անկ և պարտ էր ամենեցուն. մինչ զի եթէ բոլորիցն հասանէր արժանին հատուցումն, ոչ ոք ստգտանէր իրաւամբք զարդարութեն դատողին. այլ քանզի յոլովք զազատութեն անտի գտանէն, ունին պատճառս մեծապէս շնորհս մատուցանելոյ ձրիական պարգևաց ազատարարին։

ԳԼՈՒԽ ԺԹ

Դիմագրութեն առ կարծիս այնոցիկ՝ որք համարին՝ թէ տանջանք չէտ մահու հասանէն չարագործացն՝ ի պէտս մաքրութեն։

Պղատոնականքն թէպէտև ընդունին՝ թէ ոչ մի ինչ մեղք անպատուհաս մնայ, սակայն զամենայն պատուհաս՝ ի պէտս ուղղութեն լինել համարին՝ զսահմանեալսն եթէ՝ ի մարդկային օրինաց և եթէ յաստուածոց, եթէ՝ յաստի կեանս և եթէ՝ չէտ մահու, եթէ խնայումն իսկ աստուածոր ոմանց լինիցի, և կամ եթէ պատժաւորեալ և ոք՝ ոչ գայցէ յուղղութեն։ Ոչ ասէն այնուհետև և Աստուածոյ զի՝ ի խօսելն զերկրածինն մարմնոցս և զլուծանելի անդամոց, չէտ ասելոյն թէ հոգիք՝ ի պատճառս մար-

ձեռց երկնչին և ցանկան, ցաւին և խնդան, և ոչ ընդեն զօդ, խաւարարկելք և յանլոյս բանտի, ասա՝ ի յայտնել թէ զինչ յաւուրն յետին՝ ի լքանել կենացս լինիցի, ասէ.

ՅԱՆԷԱՆՆ. Ը.

"Ի յետնումն աւուր երբ յաստեաց փոխին,
ոչ գոյ եղկելեացն թոյլ ամէն չարին.
Եւ խաւար մարմնոյ աղէտք փարատին,
և ոչ ամենայն դառնութիւնք ախտին.
Ծերգեաքն և ծխրեալքն հարկ է գվախին,
զի զարմանազան բուսեալք աձեսցին.
Կապա ընդ պատժոց ընդ փորձ մտանեն,
զանցելոց չարեաց ըզվրէժ լուծանեն.
Ամանք հողմավարք ընդ օդս կախին.
այլք ի խոխոջանս լայնարձակ ծովին.
Օ եղեալն մաքրեն ընդ որ չարեցան,
կամ ի հուր փորձեալք, որով և սրբին.,

Ընդ որք զայն խորհին, ախորժեն ասել թէ յետ մահու ոչ գոյ այլ՝ բայց մաքրողական և եթէ պատուհաս, իբրև զի բաձրագոյն քան զՀող գոլով տաքերացն՝ ջրոյ, օդոյ և հրոյ, միով յայսցանէ սրբեացն ի հողոյ անտի ձգեալն ախտաւորութիւն մաքրագործ պատժոլք։ Կանգնի օդ իմա նի յատացեալն, հողմավարքք կախին. և ջուր ի բանն, ի խոխոջանս լայնարձակ ծովին. իսկ հուր յանուանի արտայայտեալ՝ կամ ի հուր փորձեալք։ Կայլ մեք խոստովանիմք լինել նա և յայս՝ի մահկանացու կենաս պատիժս ոմանս, մաքրիչս ոչ այնոցիկ որք վշտակրելոք՝ չիոխին այնու ի լաւագոյնն՝ այլ վատթարանան և, այլ այնոցիկ որք նովիմբ անձակտճեալ գան յաղղութիւն։ Իսկ այլքն ամենայն պատուհասք՝ եթէ ժամանակեալք, եթէ մշանջենաւորք ի վերայ գան իւրաքանչիւր ումեք ըստ սահմանելոց ածային տեսչութեն չարագործ մեղցն անցելոց, կամ որոք առ ժամն իսկ յանցանէ պատուհասեալն, կամ ի մարզուն և ի հանդէս առաքինութեց, ի ձեռն մարդկան ածելոք և հրեշտակաց բարեաց և կամ չարաց։ Օ ի եթէ չար ինչ որ կրիցէ յաղիւրատութիւն և ի սխալ

մանէ այլոյ ուրուք, թէ և մեղանչել մեղանչէ այրն՝ որ անգիտաբար կամ յանիրաւի զչարն առնէ, այլ ոչ եթէ մեղ ինչ է ն̃յ, որ արդարացի դատաստանաւ՝ թէպէտ և գաղտնեաւ՝ թոյլ տայ այնմ լինել։ Այլ զժամանակեան պատուհասս ոմանք յայս կեանս միայն կրեն, ոմանք յետ մահու, այլք՝ և այժմ և յայնժամ. սակայն ամենեքեան յառաջ քան զյետինն զայն սաստկապահանջ դատաստան։ Բայց որք յետ մահու կրեն պատուհաս ժամանակեայ, ոչ գան նոքա 'ի մշտնջենաւորն պատուհաս՝ որ զկնի այնր դատաստանի լինելոց է. քանզի որպէս վերագոյն ասացաք, ոմանց որոց աստանօր ոչ թողաւ, 'ի հանդերձելումն աշխարհի թողեալ լինի, զի մի՛ յաւիտենականաւն պատժեսցին տանջանօք։

ԳԼՈՒԽ ԺԴ

Յաղագս ժամանակեայ պատժոց յաստի կեանս, որոց ներքոյ անկեալ կայ մարդկայինն վիճակ։

Ապաքէն կարի յոյժ սակաւք այնոքիկ են՝ որք անվրէպ զկեանս վճարեալք, յետ այնր ևեթ պատիժս լուծանեն. թէպէտ ոմանց մինչ 'ի ծանրացեալ ծերութ̃ի և ոչ թեթև ջերման զգալ, և խաղաղաւէտ վարել կեանս՝ մեք անձամբ գիտակ եմք, և լուեալ իսկ. սակայն բովանդակ մահկանացուացս կեանք ինքնին պատուհաս է, գոլով փորձութ̃ի ողջոյն՝ ըստ որում ա̃ծայինն տառք յայտ առնեն ասելով. "Ո՞չ ապաքէն փորձութ̃ի են վարք մարդոյ 'ի վերայ երկրի,,. Յոբ. Է. 1։ Քանզի պատուհաս ոչ փոքր է նոյն ինքն անմտութ̃ի կամ տգիտութ̃ի, յորմէ խորշելոյ վասն իրաւացի դատեալ է՝ պատժովք կսկծելեօք բռնադատել զմանկունս յուսումն իւրաքանչիւր արհեստից կամ դպրութեանց. և նոյն ուսանել անգամ՝ յոր պատժովքն ստիպին, այնչափ է նոցա դժուարակիր, մինչև մը-

տաղիւր երբեմն ժուժկալել յանձն առնուն սաստիցն ա-
ռաւել՝ քան եթէ ուսանել. իսկ ո՞ չ զարհուրեսցի և ոչ
զմահ ընտրիցէ, եթէ պայմանեսցի նմա՝ կամ զմահ ընդ-
դրկել, և կամ զտղայուն դարձեալ։ Այս աւադիկ քան-
զի լալով՝ և ոչ ծաղու ծննդաբերի յայս արև, մարգա-
րէանայ ինն գոգցես անգիտաբար՝ թէ յո՞ր չարիս եկեալ
մտանէ։ Յաղագս Ո՞ր դադաշտի ևեթ ասեն վէպքն (առ
Պլինիոսի) ծաղը արձակեալ՝ ի ծնանել իւրում, և ոչ
բարւոյ իրիք ցուցակ նորանշանն այն ծաղը հաւաստե-
ցաւ. քանզի գտիչ կացեալ նորա՝ որպէս պատմի՝ մո-
գութեանն արհեստից, օգտեցաւ ինչ ոչ յայնցանէ, և ոչ
՝ի ննոտի բարօրութիւն այսց կենաց՝ ի ձեռաց թշնա-
մեաց իւրոց. այլ բակտրիացւոց ինքն գոլով թագաւոր,
նկուն եղև մարտիւ՝ ի Ալինոսէ ասորեստանեայց արքայէ։
Ո՞ր ոչ գրեալն է. Աւրա. ե. 1. "Ոչ ոք լուծ (կայ)՝ ի վէր
որդւոց Ադամայ՝ յօրէ յելանելոյ յորովայնէ մօր իւրոյ՝
մինչև յօր թաղելոյ՝ ի մայրն ամենեցուն,,, հարկաւ ունի
ընդ անվրէպ. մինչ զի և տղայք՝ ի կապոյ սկզբնական մե-
ղաց՝ որով միայն ըմբռնեալն էին, ազատացեալք՝ ի ձեռն
աւազանին միւսանգամ ծննդեանն, ՝ի վերայ յոքունց չա-
րեացն կրելոց՝ և երբէք զի և զայսոցն չարաց յարձակմունս
կրեն։ Ո՞ր այս հարուած՝ ինչ ոչ բնաւ ճշմարիտ նոցա, ե-
թէ յայնմ հասակի նուիրն ծանրատաղտուկ և ընչասպառ
կրիւք զնուրեանց կեանս վճարիցեն։

ԳԻՒՂՈՒԽ ԺԱ

*Թէ ամենայն գործ ընորհացն Ա՛ի փրկել զմեզ՝ ի խորոց մեղացն հնոյ՝ անկ
և՝ ի նորոգութիւն հանդերձելոյ աշխարհին։*

Ունայ սակայն յայն՝ ի լուծ ծանր՝ որ՝ ի վերայ եղաւ
որդւոց Ադամայ յելից անտի յորովայնէ մօրն մինչ յօր
թաղման՝ ի մայրն ամենեցուն, զոյ և այս ինչ զարմանա-

ւոր, զի զգաստացեալք՝ի միտ առնուցուք՝ Թէ սակս մեծ
եղեռն յանցմանն որ՝ի դրախտին իրագործեցաւ, եղեւն
բովանդակ այս կեանքս՝ պատժարան. և որ ինչ միանգամ
գործի առ մեզ՝ի ձեռն նորոյ կտակին, ամենայնին՝ի նո-
րոգ ժառանգութիւն Հայի նորոյ աշխարհին. որպէս զի զառ-
հասատչեայն աստանօր ընկալեալ՝ ըմբռնեսցուք՝ի ժա-
մանն և զիսին առհասատչին։ Իսկ այժմ յուսով գնաս-
ցուք, և օր ըստ օրէ առաւելեալք՝ հոգւով զգործս մար-
մնոյ սպանցուք. զի "Ոչ առեալ տեր զամենայն որ իւրն են,
Այլ որ հոգւովն այ վարին, նոքա են որդիք այ,, յայտ է
Թէ՝ ընդ որ՝ոք, և ոչ բնութիւն։ Վասնզի միակ բնութիւնն որ-
դին այ՝ եղև գԹուԹիւն վասն մեր որդի մարդոյ. զի մեք՝ի
բնէ որդիք մարդոյ լինելիմք նոսաւս այ որդիք ըստ ընդո-
հի։ Վասնզի անփոփոխ ինքն կացեալ անացեալ, զմեզ
բնութիւն առընկալաւ՝ի մէնջ առ՝ի զմեզ յինքն ընդու-
նելոյ. և անբաժան յիւրմէ ածութիւնէն՝ եղև մերոյս տկա-
րութեանս հաղորդ. որպէս զի՝ի լաւ անդր փոխեալ մեր,
զմի զանչական և զմահացու մեր արկած՝ի բաց Թողու-
ցումբ՝ անմահին այմմ և արդարոյն կցորդակցութիւնք, և
զառ՝ինամանէ ներգործեալ բարիս մերոյինս բնութիւնք առ-
լցեալ գերագոյն բարեաւն պիղծ կալցուք յամենաբարի
նորա բնութենէն։ Ո՛ր որպէս՝ի միոջէ մարդոյ մեղուցելոյ
յայս՝ի դժոգակ չարիս ածեալ եղաք, նոյնպէս՝ի ձեռն
միոյն մարդոյ՝ որ է միանգամայն ած արդարացուցիչ, եր-
թեալ հասանիցեմք՝ի գերակատար յայն բարիս։ Ի՛ր ոք
վստահասցի յաստեացս յամտիս անցանել, մինչև ոչ գը-
տանիցի անդ՝ուրանօր ոչ միինչ փորձութիւնք եղիցի. և մինչև
ոչ ըմբռնեսցէ զնաղաղութիւնն՝ որում ցանկանայ՝ի բազ-
մապատիկ մրցմանս զանազանս այսր պատերազմի, որով
մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ
մարմնոյ։ Այլ այս պատերազմ ոչ բնաւ երբեք լինիցէ, ե-
թէ բնութիւնք մարդկան հաստատուն կացեալ էր անձինչ-
խան կամաւք յայմմ ուղղուէ՝ յորում արարաւ։ Իսկ արդ
քանզի մինչդեռ երջանկին էր՝ ոչ կամեցաւ խաղաղութիւն
ընդ այ ունել, ինքն ընդ անձին ոգորիլ թշուառացեալ. և

թէ և աւագելի է այս չար, քայց և ընտրելի քան զնախադրեալս այսց կէնցաց · զի լաւ է ի կռուի կալ ընդ ախտից՝ քան անկռիւ իշխիլ առ ի նոցանէ · լաւ է ասեմ՝ պատերազմ յաւուրս չարաչարութեան քան զդերութիւն անյոյս յաղագս աւուրն · Արդարեւ թէ ևանալ ցանկամբ և ի պատերազմէ աստի յայսմանէ, և յրմբռնել զանհնարաւորն զայն խաղաղութիւն յորդորիմբ ի վառմանէ ածայնոյ սիրոյն , ուրանօր անդրդուելի հաստատութիւնն խոնարհագոյնք բարձրագունեցին կան ի ծառայութիւն , Այսպէս եթէ չկայր և այլ մեծի բարւոյ ակնկալութիւն , զոր խորհել քաւ լիցի , առաւել յօժարելի մեզ էր տակալ ժուժալ ի վիշտս այսր պատերազմի , քան անպատերազմ թողուլ անկանիլ մեզ ընդ տերութիւն ախտից ,

ԳԼՈՒԽ ԺՕ.

Ընդ որսիսն որինաց ընորհաց եղեն համարեն հաստակք վերածնելոցն ի Քս ·

ՅԱՅՍ արդ մարգասիրութիւնն այդ այնչափ մեծ է յաղթեալ ողորմութիւն՝ զորս պատրաստեաց ի փառս , մինչ զի և նախկին հաւատակ մարդոյ՝ տղայութիւնն որ անընդհատաբար նեբբոյ կայ մարմնոյ , և երկրորդն՝ մանկութիւն առնանեալ , յորում չև և բանն յայս մարտ չհակատի , այլ անկանի գոգցես ի հրապոյրս համայն ախտից , որ զի թէ և խօսուն է , որով և անցեալ երևի ըստ անխոս տղայութիւնն , այլ մնացն տկարութիւն չև և ընդունակ պատուիրանի է , այս հաստակ ասեմ՝ եթէ բաժանորդ լինիցի խորհրդոց միջնորդին Քրիստոս , թէպէտ և ի նոյն ամ ըղձանան կինքեացն , փոխադրի յիշխանութիւն խաւարի յաքայութիւնն Քրիստ . և ոչ միայն ի պատժոց յատկանացս անպարտ լինի , այլ և ոչ միոյ իրիք մարբրական տանջանաց լոյծ կրօղական . զի շատ է հոգևորականն ծնունդ՝ առ ի չքնաեալոյ նմա յետ մահու այնուհետ զոր մարմնա-

կան ծննդեամբն յիւրեն ձգեաց։ Ոսկ՝ի ժամանել Հասա-
կին՝ որ խելամուտ պատուիրանի լինել կարող է, և ընդ
առնուիլ կալ օրինաց, այնուհետև մարտ ընդ ախտից
դնել պարտի, և այն սատակասիս, զի մի՝ ի կորստական
մեզ տարեալ ձգիցէ։ Ա՛յլ ցորչափ ոչ են ընտելութիւնք
յաղթութեանցն կազդուրեալք, դիւրաբեր արդեօք յաղթին
և խոյս տան։ բայց ընդհակացեալք՝ի յաղթել և՝ի տիրել,
կարի դժուարաւ նկուն լինիցին։ և այս սատակասիս և
տիրապետս յաջողէ ոչ այլ իւիք՝ եթէ ոչ յերջանաց ձգմա-
բիտ արդարութեանն, որ կայ գամանի՝ի հատատս Վիճի։
Ա՛նպէ եթէ մերձ կայցեն օրհնէք հրամանատուս, և հո-
գի ձեռնատու ոչ գոլցէ, առնելով ցանկութիւնք մեզացն և
յաղթելով՝ի պատճառս արգելմանն,՝ի վերայ յաւելու և
յանցաւորութիւնն արատ։ Ա՛յ երբեք՝ զի բացեալ ախտք
յաղթին այլովք անթերևակ ախտիւք, որ կարծին առաքի-
նութիւնք լինել, յորս ամբարտաւանութիւնն զօրանայ, և
անձնահաճ կորուսիչն բարձրամտութեան՝ Ա՛յնմ իւր նուա-
ճուին ախտից յայժմամ է համարելի, յորժամ յաղթին
սիրելն ոչ, զօրնորս միայն է ընդհարել, և ոչ այլով բայց՝ի
ձեռն միշտորդին ոչ և մարգկան՝ որ է մարդն Քն Ա՛ս,
հաղորդեալն մահկանացու մեր բնութիւնէ, զի բաժանոր-
դըս իւրում՝ածութիւնն զմեզ կացուցէ։ Ապրի նուաճունք
են արդարեւ այնչափ բարեբաստիկք, զի անդատին՝ի մա-
տաղ ախոց չյանցանիցեն ինչ մեզ կորուսիչ՝ ապաշաւու-
թիւք, կամ չարագործութիւնք, կամ անօրէն ամբարշտու-
թիւնք իրիք մոլորութիւք, այլ յաւատ պարգևատուրեաւ Հո-
գւոյն ընդ բռամբ կալցին զօր ինչ միանգամ տիրել կարող
էր նոցա մարմնական հեշտասիրութիւք։ Ա՛յլ բազումք այն
են՝ որք յետ չանապէտ զօրին պատուիրանացն, յուժել
ախտիցն պարտեալ մնան զաւակինն, պատուիրանագանգք
եղեալ, և տպա յօգնականութիւնէ չնորհացդ ապաստանեալք,
դառնապէս ապաշաւելովք, և ուժգին մաքառագրութիւք՝
այդ նախ մտանեն՝ի հնազանդութիւն, և այնպէս ապա մը-
տացն զօրանալով յաղթականք Հանդիսանան մարմնոյ։
Ա՛յս ուրեմն եթէ՝ի մշանջենաւոր պատժոց ցանկայ որ

պրծանել, հարկ է նմա ոչ միայն մկրտիլ, այլ և արդարանալ 'ի Քս, որով իսկապէս 'ի սատանայէ անցանիցէ առ Քս. իսկ պատիժս մաքրողականս մի՛ կարծիցէ լինել՝ բայց յառաջ քան զյետին զահաւոր դատաստանն: Սակայն և զայն չէ մարթ ուրանալ, թէ ըստ պէսպէս արժանեաց չարութեանց՝ և յաւիտենական հրոյն ազդուածն առ ոմանս թեթև լինիցի, և առ այլս ծանր. և այդ՝ կամ փոփոխելով զօրութեան և տապոյ հրոյն ըստ իւրաքանչիւր պատժապարտութեան, և կամ զի միապէս բորբոքելով հրոյն՝ ոչ հաւասար լինիցի վշտացն զգայութիւն:

ԳԼՈՒԽ Ժ.

Առ այնոսիկ՝ որք 'ի կարծիս եղեն, թէ ոչ ումեք 'ի մարդկանէ պատուհասն յաւիտեան մնայցէ:

Ար բարեգործովն 'ի մերոց ասոի թուի ինձ ժամ պատեհ դարձուցանել զբանս, և իմաստասիրել հանդարտութե՛, որք դատեցելոյն յամենիրաւ դատաւորէն արժանի լինել գեհենոյն տանջանաց՝ չկամին կամ ամենեցունց, և կամ գէթ ոմանց ոմանց ընծայել պատուհաս մշտատև. այլ համարին ազատիլ նոցա յետ կիտագրեալ ժամանակի՝ անագան կամ վաղ ըստ իւրաքանչիւր մեղանաց չափոյ: Յայսմ մասին առաւելապէս ներողամիտ Որոգինէս լեալ անշուշտ տեսանի, որ և զսատանայ անգամ և զնորուն հրեշտակս յետ ծանունց և երկարաձիգ տանջանաց զերծանիլ համարի, և հրեշտակաց սրբոց լինել դասակիցս: Սակայն 'ի պատճառս այդր բանի և այլոց ես ումանց ինչ, և մանաւանդ յաղագս անդադար դարձադարձ առնելոյ երանութեանցն և թշուառութեանց, որով ընդ սահմանեալ միջոցս դարուց ժամանակաց երթևեկ անվախճան գործիցի յայսմանէ յայն, յիրաւի անարգեաց զնա եկեղեցի. քանզի և զոր գթութիւն կարծիւր՝ կորոյս նա, տալով

սրբոց զատոյգ թշուառութիւնս՝ որովք պատիժս լուծանիցեն, և երանութիւնս սուրս՝ յորս չունիցին զնմարիտ զանկասկած և զանեղկիւղ վայելուչին միանձնութեան բարւոյն։ Այլ կարի օտարաբար սխալէ ողորմածութիւնդ այդ այսպիսեաց՝ մարդկօրէն կրիւք, որք զմարդկան գատաստարանս լոյն թշուառութիւնս հանարիցն առաջամանակեայս լինել, իսկ յաղատիլ նոցա արագ կամ անագան՝ ունել ամենեցուն զերջանկութիւնդ յաւէտակաց։ Այնք բարի են կարծիքդ և արդար սակս ողորմածն լինելոյ, լաւագոյն ևս իցէ և արդարագոյն՝ որչափ բազումողորմն լինիցի։ Հապա, և ևս ձգեալ ճառագեսցի ողորմածութիւնդ աղբիւր մինչև՝ ի հրեշտակսն գատաստարանեալս. զի գէթ յետ բազմաց և երկայնաժամանակեայ դարուց թողցին նոքա յաղաւթսն. հիմարգեօք մինչ յընդհանուր բնութիւն մարդկան գետահեղեալ՝ ի հրեշտակական բնութիւն անգր հասեալ ցամաքեսցի։ Սակայն չհամարձակին յառաւելագոյնսն տարածանել զգթարկութիւնն, և երթալ հատանել մինչ յաղատութիւնն սատանայի. և եթէ օք յայդ համարձակիցի, նա յաղթէ ապաքէն կարծողացդ այդոցիկ. բայց այնչափ ևս ինքն գտանի թշուառաբար ստեբիւթեալ, և ուղիղ պատգամացն այ ընդդիմամարտ, որչափ կարծէ զինքն բազմագութ լինել։

ԳԻ ՅՈՒԼԻՍ ԺԲ.

Եւ այնուհետև՝ որք համարձակ, եթէ ի յեանդամ գատաստանի ոչ որ ի մարդկանէ գատապարտեսցի վասն բարեխաւսութեանն սրբոց։

Այն և այլք որոց անձամբ հանդիպեցաք ի զրուցատութիւնս, մեծարուք առ երեսս գոյց սրբոց, այլ վարուք խոտանք. որք պաշտպան կացեալ իւրեանցն խնդրոյ, առաւել քան զնախասացեալդ մեծացուցանէն զայդ ողորմութիւն առ ազգս մարդկան։ Ո՛վ առեր. Թէպէտ և Ջրշ

մարտիւ սպառնացեալ է առ՝ ի չկոյ՝ չարաց մարդոց և անհաւատից՝ լինել պատուհասի արժանաւորս, սակայն՝ ի դատաստանին հասեալ ժամանակ՝ աղօրմութիւնն չպղտեղոյ է. քանզի, ասեն, ներեսցէ նոցա Աստ աղօթիւք և բարեխօսութիւք սրբոց իւրոց, Օ՛ի եթէ աղօթս վասն նոցա առնիցէ սուրբք՝ մինչդեռ՝ ի նոցա թշնամութիւնն տանջիցին, քանի առաւել և՝ ի տեսանել զնոսա խոնարհեալս և աղերսագիրս. ոչ՝ ի դէպ է կարծել եթէ չարժամ վաւկիցէն սուրբքն զկարեկցութիւնն գութ, երբ առնիցեն անթեղի ստացան սրբութիւն. և որք աղօթէիցին վասն թշնամեաց՝ չարժամ և ինքեանք անկցորդք ոչ էին՝ ի մէջաց, չկամիցին աղօթել սակս աղաչատրաց իւրեանց՝ չարժամ՝ ի բնութ. անմեղութիւնն մնիցէ. և կամ ասել, եթէ ոչ լուիցէ Աստ չարժամ բազմացն այնոցիկ և արժանաւոր որդւոց իւրոց՝ ոչ գտանելով՝ ի գերակատար նոցա սրբութիւնն արդելս լինն Հաճոյական աղօթից. Որպա այսոքիկ, որպէս և այնք որք հաւանին ընդ երկար տանջիլ անհաւատից մարդոց և ամբարշտաց, և ապա դիւրանալ յանհնարս պատուհասիւն, յիւրեանց՝ ի նպատս չրջին զվկայութիւնն սաղմոսին յասելն. «Ը. 40.՝ Որ այսպէս գիտալ Աստ իմ է և. կամ արգելցէ զգթութիւնն իւր բարկութիւնն իւրով՝, Արկութիւնն նորա այն է, ասեն, զի անհնարին չարժանաւորքն միտակայ երանութիւնն՝ ի նորա դատելոյն պատուհասեսցին միտաւև տանջանաց. այլ եթէ Աստ ողորմածեալ ոչ ամենայն ժամանակաւ և կամ սուղ, ոչ այլազգ մարդի այմ լինել՝ բայց արգելուլ զգթութիւնն բարկութիւնն իւրով. զոր ահա սաղմոսն ասէ՝ Թէ ոչ առնիցէ. քանզի չասէ, միթէ արգելցէ յերկար ժամանակ զգթութիւնն բարկութիւնն իւրով, այլ պարզաբար ցուցանէ՝ Թէ ոչ արգելցէ.

Այդ սովին օրինակաւ կամին դնօր ցուցանել՝ Թէ սպառնալիք դատաստանին ոչ ստաբան ինչ են, Թէպէտ և չդատապարտիցէ և ոչ զոր. զոր օրինակ զսպառնալիս նորա՝ ի կործանել Նինուէ քաղաք՝ չմարթիմբ վերծանել Համարել Եթէ զի ոչ արդիւնացաւ, ասեն, զոր ինչ նա-

խառնակեալ էր ՚ած առանց իրիք պայմանի . զի չասէ , ՚Ա-
նուէ կործանեսցի , եթէ չապաշխարիցէն , եթէ չդայցէն
յուղղութիւն . այլ անպայման յառաջ ծանոյց զեկեալ
Հասեալ կործանումն քաղաքին . բայց այնու անուամբ Հա-
մարին զապառնալիսդ , զի որում իմիք ստուգապէս արժա-
նիք էին կրելոյ՝ զայն կանխեաց ծանոյց ՚ած , թէպէտ և
ոչ էր ՚ի գործ զայն դնելոց . զի եթէ յապաշխարել նոցա
իմացեաց , ասէն , ոչ անգիտանայր արդեօք թէ ապաշխա-
րելոց էն . և սակայն պարզաբար և անսահման զնոցայն
գալոց կործանումն նախատնաւեաց ; Ա՚չա ուրեմն էր այդ ,
ասէն , ՚ի Ն՚ամարտութէն , զի արժանապարհ
էին այնմ . այլ ոչ էր ՚ի սակի ողորմութէ . զոր ոչ արգել
բարիութէ իւրով , զի մեղմասցի ՚ի պատուհասել զաղա-
չատօրն՝ զոր խստացելոյն սպառնացեալ էր , Ասէ եթէ ,
ասէն , խնայեաց յայնժամ , գիտելով թէ խնայո-
նու արտաքս ունէր սրբասնեալն մարգարէ իւր Յովնան ,
քանիպատիկ և կարեկցաբար խնայիցէ ՚ի գատաստանի
պաղատողացն , յորժամ ամենայն սուրբք նորա զինեալն
աղօթիցեն ; Ա՚յլ զայս զոր ինքեանք խորհին յանձինս ,
յայն սակս լուեալ Համարին ՚ած՚այնց զրոց , որպէս զի զգա-
ստանայցեն բաղումք յահէ մխանջնեանոր կամ երկարատև
պատուհասից , և գտանիցեն այլք՝ որ կարիցեն աղօթել
վասն նոցա՝ գալ յապղութէ ; Ասակայն առ նոցա կործել՝
և ոչ խոսան լուեն զայդ պատգամբն ՚ած՚եղիևք . զի յինչ
ակնարկէ ասէն՝ գրեալն , " Ալրակս զի բազում է ողոր-
մութէ քաղցրութէ քոյ տէր , զոր պահեցեր երկիւղա-
ծաց քոց ,, Աղ . ե . 21 ; Ա՚յլ զի խմնայեալք թէ սակս
երկիւղի ծածկեալ է առատ և գաղտնի քաղցրուն ՚ած՚այ-
նոյ ողորմութէն ; Հաւելուն ՚ի սոյն միտս ասել և առա-
քելոյն . Հ՚ե . ք . 30 . " Ա՚նզի արգել ՚ած զամենեսին
յանհաւանութէ , զի ամենեցուն ողորմեսցի ,, Նշանակեալ
այսու՝ թէ ոչ զոր դատապարտեսցէ նա ; Ա՚յլ սակայն ոչ
զայսդ կործէն , ոչ ձգէն զանդ մինչև յապաստութէ կամ
՚ի բնաւ անպարտութէ սատանայի և հրեշտակաց նորա .
քանզի մարդկօրէն կարեկցութէ շարժեալ բերին առ մար-

դիկ միայն, և զիւրեանցն մնասաւանդ խնդրեն շահ. իբր ընդհանրական ներողութիւն ոչ առ մարդկան ազգ՝ զուր յուսացուցեալ զանձինս անպատուհաս մնալ չարաչար վարուց իւրեանց. և յայսմ առաւելուն 'ի քարոզել զողորմութիւն ոչ քան զայնոսիկ, որք խոստանան նմա և իշխանին դիւաց և նորուն արբանեկաց կալ մնալ անպատուհաս.

ԳԼՈՒԽ ԺԹ.

Առ այնոսիկ՝ որք անպատուհաս լինել ասեն ամենայն մեղաց՝ եւս և հերետիկոսաց, սակս հաղորդութեան մարմնոյն Քնի.

ԱՅԼՔ ևս ոմանք են՝ որք ազատութիւն դնեն 'ի յաւիտենանից տանջանացն՝ ոչ հասարակաբար ամենայն մարդոյ, այլ միայն լուացելոցն 'ի մկրտութիւն Քնի, որք հաղորդք մարմնոյ նորա լինին, թէպէտ և խառնակեցայք իցեն, կամ 'ի հերձուածս և յամբարշտութեան կացեալք. ըստ ասացելումն Քնի. «Այս է հացն որ յերկնից իջեալ է. զի որ ուտիցէ ոք 'ի սմանէ, մի մեռանիցի. Ես եմ հացն կենդանի՝ որ յերկնից իջեալ. եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ, կեցցէ 'ի յաւիտեան». Յհ. Զ. 50. Արդ ուրեմն հարկ է, ասեն, զերծանիլ նոցա 'ի յաւիտենից մահուանէն, և երբ և է յաւիտենից կենացն լինել հասու.

ԳԼՈՒԽ Ի.

Առ այնոսիկ՝ որք ներողութեան խոստանան ոչ ամենեցուն, այլ միայն մկրտելոցն առ ուղղափառս, թէ և անկեալք իցեն յետոյ 'ի բազում յանցուածս և 'ի մոլորութիւնս.

Այլ և այնոքիկ՝ որք ներումն խոստանան ոչ ամենայն հաղորդելոց խորհրդոյ մկրտութեան Քնի և մարմնոյ նորա,

այլ ուղղափառաց ևս Թէ, Թէպէտ և վարս ունիցին չարաչարս. իբր զի սոքա ոչ լոկ խորհրդեամբ, այլ իսկ ձաշակեցին զմարմին Քրիստոսի, և՝ ի նոսին մարմինն յօդեցան, յաւէտ առաքելոյն. “Այի հաց, մի մարմին եմք բազումք...” Ա. Կոր. Ժ. 17։ Ապրեսցէ այն Թէ, զի Թէ և յետ այնր սահեացին այնպիսիք՝ ի հերձուած ինչ, կամ՝ ի կռամոլութիւն անգամ հեթանոսաց, այնու ևս չէ զի՝ ի մարմնի Քրիստոսի, այս է՝ ի կաթողիկէ եկեղեցւոջ ընկալան զպիրտութիւնն Քրիստոսի, և զնոսա ձաշակեցին զմարմին, ոչ մեռանիցին յաւիտեան, այլ ժառանգք յաւիտենից կենաց երթեալ լինիցին. իսկ ամենայն ամբարշտութիւն քանի և մեծ իցէ, չունի զօրիւ՝ ի մշտնջենաւորութիւն պատուհասիցն, այլ յերկաբուիւն և՝ ի սատակումն։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Որ այնոսիկ՝ որք ասեն Թէ հատանումն կայենալցն յաղագս հաւատոյ Թէ և գեղծանիցին վարուք, որով և պարտաւորք լիցին գեհենի, այլ սակս հիման հաւատոցն ապրեսցին։

Լսեմ ոմանք՝ ի պատճառս բանին որ գրեալ է, “Որ համբերեսցէ հասցաւ, նա կեցցէ,,, Մտթ. Ժ. 43. այնուհետև միայն որք կան ժուժման յաղագսօրէն Թէ և խառնակեցիկք, խոստանան ազատութիւն, այն է՝ հրով կեալ նոցա սակս արժանեաց հիմանն, զորմէ առաքեալ ասէ. “Ոչ ի հիմն այլ որ ոչ կարէ դնել քան զեդեալն, որ է Յիսուս Քրիստոս։ Լիցի Թէ որ ընդ ի վերայ հիմանս այսորիկ ոսկի, արծաթ, ականս պատուականս, փայտ, խոտ, եղէգն, իւրաքանչիւր գործն յայտնեալ լիցի. զի օրն ընտրեսցէ. զի հրով յայտնեալ լիցի է. և զիւրաքանչիւր գործն զիարդ և իցէ՝ հուր փորձեսցէ։ Լիցի Թէ ուրուք գործն զոր շինեաց՝ հասցէ, վարձս առցէ։ Լիցէ Թէ ուրուք գործն այրեսցի, տուժեսցի. բայց ինքն կեցցէ. այլ այնպէս՝ որպէս Թէ՝ ի

Հուբ ,. ՝. Ալբ . Ֆ . 10 ։ Լ՚ասդ ասէն . ուղղափառ քրիստոնեայ օրպիսի վարուք և իցէ , զԼ՚ն ունի հինն , և ոչ հեթանոսաբար լինել ։ Ձուաձօղ ինչ հատեալ է ՝ի միւսեղէ մարմնոյ նորա . և սակս այսր հիման՝ թէ վատնաբեալ և իցէ նա՝ իբր այն որ ՝ի վերայ չինէ փայտ , խոտ , եղէգն , համարին սպրել հրով , այս է՝ յետ պատուհասի հրոյն ազատիլ , որով հրով չարագործքն տանջին ՝ի վերջնում դատաստանի ։

ԳԼՈՒԽ ԻՐ

Եւ այնոքիկ՝ որք չանգամս գործեալս խառն ընդ ազգամեղն գործոց՝ ոչ համարին գալ ՝ի դատաստան պատուհասի ։

Գ՚ԷՊ եղև ինձ Հանապէտ և զոմանս՝ որ կարծեին , այնոցիկ և եթէ տուչքիլ ՝ի յաւիտենից տանջանս՝ որք հեղգանան առնել ազգամեղ արժանի վասն մեղաց իւրեանց , ըստ բանին Տ՚ակոբայ առաքելոյ . Ե . 12 . « Լ՚ազգամ գատաստան լինիցէ ձեզ ոչ առնիցէք ազգամեղն ։ , Լ՚այս ուրեմն որ առնիցէ , ասէն , թէ և չիտնեսցի յուղիղ վարս , այլ անդէնն յազգամեղն՝ անառակութեանէ կեցցէ ՝ի չարեաս , նման ազգամեղեալ լինելոյ և դատաստանին , կամ ոչ միանչ դատապարտութեանէ կրելով , և կամ յետ սուղ կամ յերկար ժամանակի արձակեսցի անդատապարտ ։ Լ՚այր աղագաւ համարեին , թէ նա ինքն դատաւորն կենդանեացս և մեռելոց՝ չկամեցաւ այլ ինչ յիշատակել ՝ի բանս իւր՝ եթէ առ աջակողմանս որոց տալոց է կենդանս յաւիտենական , և եթէ առ ձախակողմեանս զորս յաւիտենից տանջանաւք դատելոց է , բայց միայն ազգամեղութենն զորս արարբէն , և կամ չարարբէն ։ Լ՚այն Տ՚այի , ասէն , և որ ՝ի տէրունական աղօթսն Տ՚այցուածք օր ըստ օրէ . « Լ՚(ք)ողք մեզ զպարտս մեր , որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։ , Օ ՝ի որ որ մեղուցելոյն առ ինքն թողուլ՝ ներելով զանցուածն , յայտ է թէ ազգամեղութենէ առնէ . զոր ինքն տէրն

բացայայտեաց ասելովք. «Ո՛վ եթէ Թողուցուք մարդկան զյանցանս նոցա, Թողցէ և ձեզ Հայրն ձեր զյանցանս ձեր. ապա թէ ոչ Թողուցուք մարդկան, և ոչ Հայրն ձեր երկնաւոր Թողցէ ձեզ զյանցանս ձեր»։ ՈՒՂ. Ը. 14։ Այս՝ ի սոյն ազգ ողորմութեանն և բերի Հակոբայ առաքելոյ ասացածն, դատաստան անողորմ լինիցի այնմ որ չառնէ ողորմութեան. և տերն ոչ եդ,ասեն, խոիր ընդ մեծ յանցանս և ընդ փոքր, այլ Թէ Հայրն ձեր Թողցէ ձեզ զյանցանս ձեր, եթէ և դուք Թողուցուք մարդկան։ Ո՞ր որոյ կարծեն դուք՝ Թէ նա և չարաչար քաղաքավարելոցն մինչև՛ ի կատարած կենաց՝ յանցանքն օր ըստ օրէ մեծամեծք և բազումք՝ Թողեալ լինին առհասարակ սովին աղօթիւք, որպէս և աղօթքն ինքնին մատուցանին զամենայն օր, եթէ այսմ միայն ևեթ ուշ ունիցին, զի ամենայնի՝ որ զինչ և իցէ յանցանս առնոսա գործեալ ներումն հայցիցէ, Թողուցուն սրտի մտօք։ Արդ՝ ի տալ մեր նվ այսմ ՝ամի զպատասխանիս, վախճան տացի գրոյս այսմ։

ԳԼՈՒԽ ԻԳ

Ընդդիմագրութիւն կարծեացն որ ասեն, ոչ ստանայի և ոչ մարդոյ չարաչար լինել տանջանաց մշանջենաւոր։

ՊԱՐՏ և արժան է խնդրել զառաջինն և՛ի միտ առնուլ էր վա՞ր արդեօք չկարէ եկեղեցի անտես առնել զհակառակագրութիւն մարդկանն, որով մաքրութի ինի կամ՝ներողութի խոստանան ստանայի և՝ յետ ասստիկ և երկայնժամանակեայ պատուհասից։ Վասնզի անմարթ էր այնչափ արարոց սրբոց՝ ընդ հինն և ընդ նոր մատեանս սրբազանս դեգերելոց՝ յայտնապես բերել ընդ մաքրագործուի բազմաթիւ հրեշտակաց, և ընդ երանեալս վայելուչս նոցա յերկինսին սրբայութի, յետ յոչնաստեակ և գժնդակ տանջանաց, եթէ ոչ տեսանէին զի անհնար է անկած լինել կամ տկա-

քանալ դատաստանին այնմ զոր կանխաւ ինքնին տէրն
զեկոյց առել՝ ի դատողութենէն օր . "Երթայք լինիմ ա-
նիծեալք՝ ի հուրն յաւիտենական , որ պատրաստեալն է
սատանային և հրեշտակաց նորա ,, . ՈՒՒ . ԻԵ . 41 : Օ՛ի
այս ցուցանէ՝ մշանջենաւոր տոչորիլ հրով սատանային և
հրեշտակաց նորա : Եւ որ՝ ի յայսմ աստիճանէ զերեալ է . Ե .
9 . "Օ սատանայ որ մոլորեցոյց զնոսա արկիլ՝ ի ծովն
հրոյ և ծծմբոյ , ուր էր գազանն և սուտ մարգարէն , և
չարչարեսցին գիշեր և զցերեկս , (յաւել ըստ յն . .)
յաւիտեանս յաւիտենից ,, : Եւ այսպիսի ասացուած
զանվախճանն ըստ ժամանակի նշանակէ՝ ի սոմոլորեալ
ածայնին գրոց : Եվին իբր առ՝ ի պինդ և անդրդուելի ու-
նելոյ իրաւադատ բարեպաշտութէն՝ թէ չէ և չ՛գնաւ
սատանային և հրեշտակացնորա անդրէն դարձ յարդարու-
թէն և՝ ի կանոն սրբոց , ոչ է մարթ ոչ զայլ ցոյցս հաւաս-
տութէն , թող թէ զևս իրաւացէն և գայտնին գտանել ,
բայց զայն՝ զի գիրն որ ոչ խաբէ զոք , ասէ . Է . Պետր .
Է . 4 . Թէ ոչ խնայեաց՝ ի նոսա ած , այլ առ ժամն այնպէս
կանխեաց դատապարտել զնոսա , զի խաւարին կապա-
նօք արկեալ՝ ի տարտարոսն պահեցոյն , Համագէտ է և
ևս պատուհասիլ՝ ի վերջնում դատաստանի , յորժամ ըմ-
բռնեցէ զնոսա Հուրն յաւիտենական , և անդանօր տան-
ջեսցին յաւիտեանս յաւիտենից : Եւ եթէ այս այսպէս ,
զինչդ ասպա կամ ՚ամ մարդիկ , կամ ոմանք ոմանք՝ ի մըշ-
տնջենաւոր յայնմ պատուհասն զերծեալք լինիցին յետ
ժամանակաց ինչ . ասպա թէ ոչ՝ անզօր ինայր հաւատոյն քան
թէ մշանջենան լինելոց են դիւացն տանջանք : Օ՛ի եթէ
որոց ասիցի , "Երթայք լինիմ անիծեալք՝ ի հուրն յաւի-
տենական՝ որ պատրաստեալ է սատանային և հրեշտակաց
նորա ,, ամենեքեան նոքա , կամ ոմանք յայսցանէ ոչ միշտ
անտանօր կայցեն , սակս որոյ պատճառի ասպա լինի հա-
ւատալ՝ թէ սատանայ և հրեշտակք նորա կալոց են անդ
հանապազ . միթէ դատաւորիս՝ այդ զոյգ բարբառեալ՝ ի
վերայ չարաց հրեշտակաց և մարդկան՝ իբրեւ լինիցի առ
հրեշտակս , իսկ առ մարդիկ սուտ : Եւ արդարեւ այդ-

պէս լինիցին իրքդ, եթէ առաւել ակաստան տացի ոչ ա՟յ ասացելոյն, այլ զոր մարդիկ կշռադատեն ։ Եւ զի այդ յանհնարից է, ոչ արժան է հակառակ ա՟յ պատճառաբանել, այլ մինչդեռ ժամանակ է՝ ունկնդիր լինել ա՟ծայնոյ հրամանին՝ որոց 'ի մշտնջենաւոր տանջանացն ցանկան ճողոպրել ։ Եւ դարձեալ, զինչ իցէ՝ յաւիտենական տանջանս իմանալ յաղագս երկարատեւ հրոյ, իսկ յաւիտենական կեանս՝ առնուլ զանվախճանն, ուր Տ՟ր 'ի միում վճռի զերկաքանչիւր միահաղոյն ասէ ․ “Եւ երթիցեն նոքա 'ի տանջանս յաւիտենականս, և արդարքն 'ի կեանս յաւիտենականս” ։ Եթէ երկաքանչիւրն են յաւիտենականք, ապա կամ զուգապէս երկարատեւ վախճանելիք իմանայցեն, կամ զուգապէս առանց վախճանելոյ մշտընջենաւորք ։ Վասն զի նման առ նման համեմատի, մին տանջանք յաւիտենական, միւսն կեանք յաւիտենական ․ իսկ ասել 'ի միում բանի՝ թէ կեանք յաւիտենական՝ լիցին անվախճան, և տանջանք յաւիտենական՝ վախճանելի, ահա բազում ունի անտեղութ՟ի ։ Ապա որպէս սրբոցն կեանք յաւիտենական՝ առանց վախճանի է, նոյնպէս և որոց տանջանք յաւիտենական իցեն, անշուշտ վախճան ոչ ունիցին ։

ԳԼՈՒԽ ԻԳ

Հակառակ այնոցիկ՝ որք համարին խնայութ՟ի լինել 'ի դատաստանին ա՟յ համօրէն յանցաւորաց սակս սրբոցն բարեխօսութ՟ե ։

Զոր ասացաքդ, հարկանէ և զայնոսիկ՝ որք զիւրեանցըն յարգելով պատճառանս՝ 'ի վէճ գան բանիցն ա՟յ, առաւելեալք իմն յողորմածութ՟են ․ իբրև զի այնու ասեն ճշմարտել բանիցն՝ զի զոր սպառնան կրել մարդկան, զարժանաւորութ՟ին յայտնեն, և ոչ զոր կրելոցն են նոքա ։ Քանզի ներեսցէ նոցա ա՟ծ, ասեն, ըստ հայցման սրբոց իւրոց, որք այնչափ առաւել բազմապաղատք լինիցին յայն-

ժամ վասն Թշնամեաց իւրեանց, որչափ առաւելեալք են
՝ի սրբութենէ, և աղօթք նոցա յաւէտ զօրաւորք, և այդ
արժանընդունակք, ոչ ևս մեղս ինչ ունելով նոցա, Խոկ
արդ ընդէր ապա նովին գերակատար սրբութէ, զնոյն
ունելով ամենընդունակ Հայցուածս սրբամատոյցս՝ քա-
րեխնամութ, ոչ նոյնպէս աղօթիցն վասն հրեշտակացն՝
որոց պատրաստեալ է Տէրն յաւիտենական, զի ցաճուա-
ցէ՞ ասէ զնովքն դատաստիճս՝ ի լսապտյան յեղաշրջել, և
՝ի հրոյ անտի զնոսա արտակորզել, Խթէ իսկ ոք ար-
դեօք որ՝ի գոյն համարձակիցն, ասել թէ նա և հրեշտակք
սուրբք զուգակցապէս ընդ սրբոցն՝ ի մարդկանէ՝ ոչք հա-
ւասար հրեշտակաց ՚այ լինիցին, մանաւանս հեղուցուն
վասն դատեցելոց հրեշտակաց և մարդկան, զի գնութէ
անպարտ արձակիցին՝ ոչք արդարութէ արժանապարտքն
են. ոչ ոք յողջամտաց զայդ ասաց, և ոչ ասիցէ ոք եր-
բէք, Խայս թէ ոչ՝ առ ինչ ապա ոչ աղօթել եկեղեցւոյ
և այժմէն իսկ վասն սատանայի և հրեշտակաց նորա,
այն որ ընկալաւ պատուէր յաճայիցն վարդապետէն՝ իւրոց
թշնամեաց վասն առնել աղօթս, Խայ սոյն այս պատճառ՝
այլ վասն ոչ աղօթել այժմ եկեղեցի սակս հրեշտակաց
չարաց, զորս Ճանաչէ իւր Թշնամիս, ոչ ապ աղօթել և
՝ի գատաստանին ժամու սակս մարդկան պարտաւորելոցն
՝ի դատաստանին ժամու սակս մարդկան պարտաւորելոցն
՝ի Տուրն յաւիտենական, Թէպէտ և ինքն սրբութէ կա-
տարեալ է. Օ՝ի այնր աղագաւ աղօթէ այժմ Թշնամեացն
՝ի մարդկան աղգէ, վասն զի դեռ օգտաւէտ ապաշխարու-
Թէ է ժամանակ. Է՝ն զինչ այլ առաւելապէս խնդրէ վասն
նոցա, բայց զի տացէ նոցա Ճշմ ապաշխարութէ, զի սեմա-
փեսցին յորոգայթէից սատանայի, որսացեալք՝ ի նմանէ՝ ի
նորա կամն. Է. Տիմ. Է. 26. Ա՝ինչ զի եթէ եկեղեցի
գիտէր հաւատոյ զոմանց գտելոց տակաւին՝ ի կենցա-
ղումն Թէ՝ի յաւիտենից Տուրն նախակարգեալ են ընդ
սատանայի, ոչ արդեօք աղօթէր վասն նոցա որպէս և ոչ
վասն սատանայի. Ա՝ԱԼ քանզի և ոչ զմիոյ ուրուք հաւա-
տեալ ունի, աղօթէ միայն յաղագս ամենայն մարդկան և
Թշնամեաց իսկ մինչդեռ՝ի մարմնի կան, Թէպէտ վասն

բոլորիցն ոչ լինի լսելի․ զի այնոցիկ վասն միայն կատարին հայցուածքն՝ որք թէ և եկեղեցւոյ հակառակք են, բայց սահմանեալ է՝ զի վասն նոցա լսելի լիցի եկեղեցի, և եղիցին յորդիս նորա։ Իսկ որք միանգամ անապաշաւ ունիցին սիրտ մինչև ցմահ, և 'ի թշնամութէ ոչ դառնայցեն յորդիս, միթէ սակս հոգւոյ այնպիսեաց վախճանելոց աղօթիցէ եկեղեցի․ 'ի բաց տար․ զի բաժանակից սատանայի համարի այնպիսին, որ մինչ կայրն 'ի մարմնի, ոչ յարեցաւ 'ի Քս։

Արդ նոյն պատճառ է՝ որ վասն չլինիցի հայցուած յայնժամ 'ի վերայ մարդոց դատակնքելոց 'ի հուրն յաւիտենական, որ ինչ է չաղօթելոյ պատճառ եթէ այժմ, եթէ յայնժամ սակս հրեշտակաց չարաց․ և նոյն դարձեալ պատճառ է՝ զի և ոչ այժմ լինի աղօթել 'ի վերայ մեռելոց անհաւատից և ամբարշտաց, թէպէտ և մարդ են։ Վասնզի վասն ոմանց ննջեցելոց լսելով լսին աղօթք եկեղեցւոյ, եւս և առանձին բարեպաշտից․ սակայն այնոցիկ վասն, որք 'ի Քս վերածնեալք՝ ոչ կարի չարաչար քաղաքավարեցան 'ի մարմնի, որով անարժանք այնպիսում ողորմութեան դատիցին, և ոչ այնպէս լաւուք՝ զի անկարօտք ողորմութեան գտանիցին։ Որպէս և 'ի լինել մեռելոցն յարութեան, իցեն և այնոքիկ որոց յետ պատժոցն հատուցելոց հոգւով տացի ողորմութիւն չանկանել 'ի հուրն յաւիտենական․ զի ոչ մարթ էր ասել ճշմարտութեամբ յաղագս ոմանց՝ թէ չթողուցու նոցա ոչ յայսմ աշխարհի, և ոչ 'ի հանդերձելումն, եթէ չլինէին այլք՝ որոց յայսմ աշխարհի ոչ, բայց 'ի հանդերձելումն թողուցու։ Այլ յորժամ դատաւոր կենդանեաց և մեռելոց ասիցէ․ “Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն 'ի սկզբանէ աշխարհի”․ իսկ այլոց ներհակաբար․ “Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։ Եւ երթիցեն նոքա 'ի տանջանս յաւիտենականս, և արդարքն 'ի կեանս յաւիտենականս”, ապաքէն ժպրհութիւն մեծ է պատճառաբանել՝ թէ ոչ մշտնջենական

մինչեկին տանջանք ոմանց յայնցանէ՝ որոց ի մշանջենաւոր գնալ տանջանս ասէ՝ ՅՈՎ. և այդպիսւոյ ժպրհուելեան հրապուրանաց զերծ իսկ զյաւիտենական կեանս անյոյս առնել, կամ երկիւղիլ։

Ի՞նչ ոք ապա զնշանակեալ սաղմոսին երգ, "Ի՞նա ասացի" զԹալՅՈՎ իմ եւս, կամ արգելցէ զԹուԹէն իւր բարկուԹէ իւրով.., այնպէս իմասցի, մինչև կարծիս տալ Թէ ոչ բանն իցէ Ճշմարիտ առ բարեգործ մարդիկն, և առ չարսն՝ սուտ. կամ առ բարի մարդիկ և առ հրեշտակսն չարս Ճշմարիտ, իսկ առ չար մարդիկն՝ սուտ։ Ի՞նչ զի սաղմոսին ասացածն Հոյի յանօթս ողորմուԹեան և յորդիս ապստամբուԹեան։ Ոչ զի ինքն մարգարէս էր, որ և յաւասացելոյ անդէն դՀետ բերէ. "Ի՞նացի ԹԷ այժմ սկսայ. այս է նորոգումն աջոյ բարձրելոյն.., Ի՞նով յայտնաբանէ զասելն, "Ի՞րգելցէ զԹուԹէն իւր բարկուԹէ իւրով.., քանզի բարկուԹէն ոչ է և վՀասի առաջինայ մանկանաւոյս կենցաղոյս, ուր մարդ նանրոյ նմանեաց, և աւուրք նորա որպէս Հովանի անցին։ Ի՞ՍՒ՝ի բարկուԹենէս յայտ ոչ մնանայ ՅՈՎ զԹալն, ծադելով զարեգակն իւր ի վերայ բարեաց և չարաց, և անձրև անձրև՝ի վերայ արդարոց և մեղաւորաց. այսպէս ահա ոչ արգելոյս զողորմուԹիւնն բարկուԹէ իւրով. և առաւել ասիս զոր ասացն ի բացայայտուԹէ, "Ի՞նայժմ սկսայ, այս է նորոգումն աջոյ բարձրելոյն.. քանզի ի յոքնանշուաս յայս կեանս՝ որ բարկուԹէ է ոչ, ի լուսազոյնսն փոխեալ զանօԹս ողորմուԹէ, Թէպէտ և ինայ գեռ բարկուԹէ նորա յԵղկելի յայտ ապականուԹէ. զի և ոչ ի բարկուԹենն արգելոյս զիւրն ողորմուԹիւն։ Ի՞նա զի այսու օրինակաւ ի գլուխ եւ լանիլ ՃշմարտուԹիւն ՅՈՎայնոյ երգոյն, ոչ Տարկ է յայն ձգել գնորուն իմասատ՝ ուր օտարքն ի քաղաքէն ոչ պատուհասին մշտակայ տանջանօք։ Ի՞ակայն որոց ախորժել ի ձկտեցուցանել զանս յամբաւշատոյն տանջանաւորուԹիւս, այսպէս գԵԹ իմասցին՝ Թէ կալով ոչ բարկուԹէն ի նոսա ըստ սահմանելոյ յաւիտենից տանջանացն, ոչ արգելուցու տակաւին բարկուԹէ այնու զողորմու-

թեն, տալով չտանջիլ նոցա այնչափ դժնդակ պատժուա-
րութիւք՝ որչափ էն արժանիք. իսկ ոչ եթէ չանկանիցին
բնաւ ընդ պատժոլք, կամ վախճան առնուցուն յերբեմն
ժամանակի, այլ զի մեղմագոյնս կրիցեն և թեթևագ քան
զիւրեանց արժանն, Ա՛ԼՀ զայս զի չիմբռնեմ, մի թուեսցայ
հաստատել.

Իսկ որք համարիցին՝ ոչ սահմանաբար, քան թէ սպառ-
նալեօք ասացեալ, «Այրեսցէք յիւրեանց անիծեալք ի հուրն
յաւիտենական. Այրեսցէ նոցա ի ժանջանս յաւիտե-
նական. Հրդեհ նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի», և
այլովք եւս սոյնպիսեաք, զդոսա ոչ եթէ ես ինչ, այլ ածայինն
զիս յանդիման հարկանէ, խոպան երդիծանելով. Օ՛ ինչ
նուէացիք յայս կեանս արարին ապաշխարութեի, որով և
զարդիւնական, իբրև յայմ ազարակի սերմանելով յոր
ածն կամէր սերմանել լալով զի ասպ ցնծալելոյն հնձել. և
սակայն ո՞ կարծիցէ թէ չկատարեցաւ առնոսա նախազդե-
ցեալն առ ի չար, բայց եթէ որ ոչ յուշի ունիցի զիարդ
կործանել ածն զմեզաւորս ոչ միայն բարեաւթեի, այլ և ողոր-
մութեի. Ա՛նդի կրկնակի է կործանել մեզաւորաց, կամ
ըստ սոգոմացւոցն օրինակի, որով պատուհասեալ լինին
մարդիկ սակս մեզաց իւրեանց, և կամ հանդոյն նինուէա-
ցւոց՝ որով մեզք մարդկան խորտակին ապաշխարութեի. Ա՛-
պա ուրեմն զոր յառաջն ասաց ածն, նոյն կատարեցաւ.
կործանեցաւ Նինուէ՝ որ չարն էր, և բարին չինեցաւ՝
որ ոչն էր. Օ՛ յոտին կալով պարսպացն և ապարանից,
կործանեցաւ քաղաքն ըստ խառնադնաց վարուց. և թէ
և արժանացաւ մարգարէն՝ զի ոչ այն կատարեցաւ յորմէ
մարդիկն խիճային ըստ նոցա գուշակելոյն, բայց լինել-
լով եղև գուշակեալն ըստ այ յառաջգիտութեն. զի որ
կանխաւ ասացն, գիտակ իսկ էր զիարդ ի լաւագոյնն
ունէր կատարիլ բանն,

Ա՛ԼՀ զի ծանիցեն օտարախորհ ողորմածդ պղտոքիկ՝
յինչ արդեօք հայիցէ զբանն. Ա՛ղ. ՚. 26. «Ա՛ղեկս զի
բազում է ողորմութի քաղցրութեդ քոյ տէր, զոր պահե-
ցեր երկիւղածաց քոց», ընդերցցին աղէ զյաջորդն.

«Իարաբէր այնոցիկ ոչք յուսացեալ էին ի քէզ», [1]ըստ զինչ է՝ պահել կամ ծածկել երկիւղածաց, և առնել յուսացելոց. բայց զի այնոցիկ որք առ երկիւղի պատուհասից զիւրեանցն խնդրեն կացուցանել զարդարութիւնն որ յօրինաց անտի է, ոչ է նոցա քաղցր արդարութիւնն որ յայ, զի տգէտք էն այնմ. և ոչ զայն ձաշակեցին, քանզի յուսացան յանձինս, և ոչ յԱստ. վասն այնորիկ ծածկին առ ի նոցանէ ողորմութիւնք քաղցրութենն այ. և թէպէտ երկիւղչին յայ, այլ ծառայականաւն այնուիկ՝ որ ոչ կայ ի սէրն. զի սէր կատարեալ ի բաց մերժէ զերկիւղ՝ վասն իրի յուսացելոց իւրոց առնել ընդ զքաղցրութիւնն իւր, յայնզեալ ի նոսա զիւր սէրն, որպէս զի ողջախոհ երկիւղչին՝ զոր ոչ մերժէ սէրն, այլ ինայ յաւիտեանս յաւիտենից, և թէ պարծին՝ ի տէր պարծեսցին, [2]Ասացի զի արդարութիւն այ ասէ է, «Ի եղև մեզ, ըստ որում առաքեալ ասէ, իմաստութիւնն յայ, արդարութիւնն և սրբութիւնն և փրկութիւնն. զի որպէս գրեալ է, որ պարծին, ի տէր պարծեսցի՝» [3]. Օայս արդարուն այ, զոր ընդրէն պարգևէ առանց արժանեաց, ոչ ձանաչեն այնորիկ որք զիւրեանց արդարութիւն կամին կացուցանել, վասն այն ոչ հնազանդին արդարութեանն այ, որ է Քյայսմարդարէ է բազում տղոց մուելի քաղցրութենէ այ, զոր ընդ նմա ասացեալ է. «Ձաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր», [4]ըստ ասացելոցն զոյն ձաշակեալ մեր ի պանդխտութենս, և ոչ ցյաղ վայելեալ, առաւել ևս քաղցնումք այնմ և ծարաւիմք, որպէս զի յետոյ յագնայցեմք նովաւ՝ յորժամ տեսանիցեմք զնա որպէս էն, և ընդունելն զրեալն. «Յագեցայց յերևեալ փառացդ քոց», [5]յայսպէս առնել Քյայ զբազում ողորմութիւնք քաղցրութենէ իւրոյ առ յուսացեալս իւր։ Այլ արդ եթէ զայն քաղցրութենէ իւր՝ որով չկամի այ դատապարտել զամբարիշտս, ծածկէ երկիւղածաց անտի՝ յայնսակս ըստ կարծելոյ այլասիրհացն՝ զի անգիտաբար երկուցեալք ի դատապարտելոյ՝ ուղիղ վարս կեցցեն, և այնպէս գտանիցին այնոքիկ ոմանք՝ որք աղօթել կարիցեն վասն անուղղ քաղաքավարելոցն, զի արդ ապա առ յու-

տացեալս իւր առնէ զայն ա̃ծ, որովհետև որպէս դո-քայդ յերազէն, այնու քաղցրութ̃բ ոչ դատապարտելոց է զայնոսիկ՝ որք չյուսացան 'ի նա ։ Հապա խնդրեսցի այն քաղցրութ̃ի, զոր յուսացելոց իւրոց առնէ, և ոչ զոր կար-ծի առնել արհամարհողացն և հայհոյչաց ․ և 'ի նմանէ խնդրէ մարդ յետ մերկանալոյ մարմնոյն զայն ինչ, զոր հեղգացաւ ստանալ 'ի մարմնի գոլով ։

Այլ և առաքելականն այն «Քանզի արգել ա̃ծ զամե-նեսին յանհաւանութե̃, զի ամենեցուն ողորմեսցի», ոչ եթէ զի ոչ զոք դատապարտելոց է՝ այնր ազդաւ ասացաւ, այլ 'ի նախ գրելոցն տեսանի ասացելոյն պատճառ ։ Քանզի զՀրէիցն որ յապա գալոց էին 'ի հաւատս՝ խօսելով առա-քելոյն առ այն ինչ հաւատացեալ հեթանոսս՝ որոց և գրէր, ասէ ․ «Զի որպէս և դուք երբեմն ապստամբք էիք յա̃յ, և արդ ողորմութ̃ի գտէք առ նոցա ապստամ-բութ̃բն, նոյնպէս և նոքա այժմ ապստամբք եղեն առ ձե-րով ողորմութ̃բդ՝ զի և նոքա ողորմութ̃ի գտցեն» ։ Այամ ապա զկնի յարէ զբանն՝ յոր դոքա խաբեալք ամոքին ․ «Քանզի արգել ա̃ծ զամենեսին յանհաւանութ̃ի» ։ Զո̃րս արդեօք՝ զամենեսին, բայց զորոց խօսէրն, ասելով զոգ-ցես, և զձեզ և զնոսա ։ Ապա ուրեմն զորս 'ի հեթանո-սացն և 'ի Հրէից յառաջն ծանեաւ ա̃ծ և յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյ իւ-րոյ, զնոսա զամենեսին արգել յանհաւանութ̃ի ․ որպէս զի ընդ դառնութ̃ի անհաւանութե̃ իւրեանց ամաչե-ցեալք ապաշաւանօք, և 'ի քաղցրութ̃ի ողորմութե̃ն ա̃յ դարձեալք հաւատովք, զաղմոսին բարբառեսցին ․ որ-պէս զի բազում է ողորմութ̃ի քաղցրութե̃ քո տէր՝ զոր արարեր յուսացելոց 'ի քեզ ․ ոչ յանձինս, այլ 'ի քեզ ։ Վասն որոյ ողորմեսցի նա ամենեցուն անօթոց ողորմու-թեան ․ ամենեցուն նոցա՝ զորս 'ի հեթանոսաց և զորս 'ի Հրէից յառաջագոյն հրաւիրեաց, կոչեաց, արդարացոյց, փառաւորեաց ․ և ոչ եթէ և ոչ զմի ոք յամենայն մարդ-կանէ ունի դատապարտել, այլ ոչ զոք յամենայնէ 'ի սո-ցունց նախահրաւիրելոց ։

ԳԼՈՒԽ ԻԸ

Արդեօք առ յաղթ խորհրդոյ եկեղեցւոյ իցէ այն ունելն ներողութիւն յաւիտենական սանձանաց՝ այնոցիկ որք մկրտեալք ի մէջ հերետիկոսաց, կամ ի մեռեալ թաղման խառնակ կենաք, կամ ի մէջ ուղղափառաց մկրտեալք՝ խոստովանեցան ի հերետիկոսութիւնս կամ ի հերձուածս. և կամ առանց որոշեցոյ յոյժ ապաշխարութեան՝ յորոց մէջ մկրտեալք են, յանիցէն ի չղջալոյ վարս։

Այս այնուամենայնիւ և ժամ է արդ առնել պատասխանի, որք ասեն թէ և խոստանալ ոչ խոստանան ազատուել ի մեղանչելոյս՝ այլ հրոյն՝ ոչ միայն սատանայի և հրեշտակաց նորա, այլ ոչ նա և մարդկան առ հաւասարակ, սակայն խոստանան ապա նոցիկ ևս եթէ՝ որք լուացեալք ի մկրտութենէն Քրիստոսի, հաղորդք եղեն մարմնոյ և արեան նորա, զհայր և զորդի և զհոգի սրբոյ, և չարժեալք իսկ ի հերետիկոսութենէ ինչ կամ յամբարշտութենէ, Վասն այսպիսեացդ ի գիմի Հարկանի առաքեալ ասելով. Կող. Բ. 14. «Այս յայտնի են գործք մարմնոյ, այս ինքն են հնութիւն, պոռնկութիւն, զինուածութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, հեռատեսութիւն, բարկութիւն, հակառակութիւնք, երկպառակութիւնք, հերձուածք, չարակնութիւնք, սպանութիւնք, արբեցութիւնք, անառակութիւնք, և որ ինչ նոցին նման են. զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս կանխաւն ասէի, թէ որ զայսպիսի ինչ գործեն, զարքայութիւն ոչ ժառանգեն»։ Այս վճիռս առաքելական սուտ լինի անշուշտ, եթէ այնպիսիք յետ երկարագունից և ժամանակաց գերծեալք ժառանգիցեն զարքայութիւնն այ. բայց քանզի սուտ ոչ է, արդարեւ չժառանգիցեն զայն. և եթէ ոչ եղիցին երբեք ի ժառանգութիւնն արքայութիւնն այ, ապա արգելեալ ինասցեն ի յաւիտենից տանջանաց. զի չէք տեղի միջնաւանման՝ յորում առաջատ ի տանջանաց գտցի այն՝ որ ոչ կարգեցաւ յարքայութիւն։

Ա՝ ասն որոյ զասացեալն առառն ՀՀՀ, «Այս է հացն որ յերկնից իջեալ, որ ուտէ որ ի նմանէ մի մեռանիցէ,

Այս եմ Հայն կենդանի՝ որ յերկինէ իջեալ, եթէ որ ուսիցէ ՚ի Հայէ յայսմանէ, կեցցէ յաւիտեան .., զիարդ պարտ իցէ իմանալ՝ յիրաւի խնդրել ։ Այսոց միանգամ այժմ առնեմք պատասխանի, ոչ նեղեմն զանիսկիսն իմասցա նոքին՝ որոց յետոյ ունիմք պատասխանել. զի սոքա ոչ խոստանան զազատութիւն և ոչ ամենեցունցն ընդունողաց խորհրդոյ միրաւթեան և մարմնոյն Վհոի, այլ ուղղափառացն եւեթ, թէպէտ և վարս չարաչար ունիցին. իբրև զի ասեն. ոչ միայն խորհրդեամբ, այլ իբօրէն ձաշակեցին զմարմին Վհոի, ՚ի բուն ՚ի մարմնի նորա զօդեալք, զրկի առաքեալ ասէ. "Ի Հայ, մի մարմին եմք բազումք քրս .., Այս որ կայ ՚ի միութեն մարմնոյ նորա, այս է՝ ՚ի յօդակապութեն քրիստոնէական անդամոց, զորոյ զնշանակն խորհրդական սովոր էն ընդունել հաւատացեալքն Հաղորդք սեղանոյն, այնպիսին արդարեւ ասի ուտել զմարմին Վհոի, և ըմպել զարիւն նորա ։ Այսրէն վասն զատեալքն ՚ի միութեն այսր մարմնոյ հերձուածողք՝ ընդունել կարող էն զնոյն խորհուրդ, այլ ոչ անձանց յօգուտ, նա՛ի ՚ի դատ իսկ. որով ծանրագոյնս դատեսցին, քան թէ անագան ազատեսցին. վասն զի ոչ կան յայն զոր խաղաղութեն՝ որ խորհրդեան այն բացայայտի ։

Այսպէս և սոքա դարձեալ՝ որք ուղղահաւատութեն չեմ մարթեն զՎհոի մարմին ձաշակել այնմ որ ոչն է ՚ի մարմնի նորա, ոչ ուղղութեն խոստանան անկեալսն ՚ի միութեն անտի մարմնոյ նորա ՚ի հերձուած կամ նա և ՚ի հեթանոսական կրօնս՝ ազատութեն երբեմն ՚ի մշտաւարեալ հրոյն ։ Այսպէս քաջ ՚ի միտ առցեն թէ որքան է անբերելի և արտաղի յատաղձ վարդապետութեն, եթէ բազումք և առաջնեկքին զոգոյս՝ որք ազանդս ամբարիշտս հնարեցին՝ արտակացեալք ՚ի կաթողիկէ եկեղեցւոյ, որով հերձածեալք իսկ եղեն, նորա այնպիսիք բարեվիճակ և քան զայնոսիկ գտանիցին՝ որք ոչ քնաւ եղեն ուղղափառք՝ ըմբռնեալք ՚ի նոցա ծուղակս, թէ արդարեւ հերձածեալ տացն այնոցիկ ազատանալ իցէ ՚ի մշանջենաւոր տանջանաց՝ այնու պատճառանօք զի միրաեցան ՚ի կաթողիկէ և-

կեղեցւոջ, և զխորհուրդ մարմնոյն Քրիստոսի ընկալան յառաջին ի Հնմարիա մարմնի նորա . ուր ընդ հակառակին չար ևս ի հաւատադրուժ եղեալն, և ապա պատերազմով խոկ, քան զայն որ ոչ դրժեաց հաւատոյն՝ զոր չընկալաւ երբեք, Աչս դարձեալ, զի ընդդէմ եղանէ նոցա առաքեալ զնոյն բանս բարբառեալ, և ի համար արկեալ զմարմնոյ գործս՝ նովին սաստգութիւն ասէ . « Որ զայսպիսի ինչ գործեն, զարքայութիւն ոչ ժառանգեն »,

Ասաի ոչ լինիցին անբոյժ և զառածեալքն ի վարս կորստական և դատապարտելի արժանիս, եթէ խոպան կացեալք ևս համարիցին ի հաղորդութիւն կաթողիկէ եկեղեցւոյ, հայեցեալք ի բանն, « Որ համբերեցէ խոպան, նա կեցցէ »· որք և անօրհնութիւն կինոքն ճաղոյն լքանեն զարդարութիւն կինոյ՝ որ է Քրիստոս, պոռնկելով, կամ այլ պղծութիւնս եղեռնականս յիւրեանց մարմնի գործելով, զորս և յանուանէ ասել չկամիցաւ առաքեալն . կամ յաղտեղի դիջութիւնս անկզետանալով, կամ այլովք ևս այսպիսեաց յանցանեալով, զորոց ասէ . « Որ զայսպիսիսն գործեն, զարքայութիւն ոչ ժառանգեն »· և զի այսպիսւոցն արաբողք չկարեն լինել յարքայութիւն ոչ, ուր այլ բայց ի մշտնջենական տանջանսն լինիցին . Քանզի երբ յայսոսիկ հանապազորդեն նորա միչ ի զրաւ կենաց, չմարթի ասել իսկութիւնս յար ի Քրիստոս կացեալ իցեն միչ իսպառ . զի կալ իսպառ ի Քրիստ է, ի նորա հաւատս յարատնալ, և այն հաւատոք՝ ըստ որում առաքեալ սահմանէ, սիրոյնն է յաջողեալ . իսկ սէր՝ որպէս նա ինքն ասէ այլուր, չար ոչ առնէ . Այլա և ոչ սոցա ասի՝ Հաշակել զմարմինս Քրիստոսի, զի և ոչ ի Քրիստի անդամոցն համարի են . և զի զայնոսա չասիցեմ, անմարթ է նոցա լինել միանդամայն անդամս Քրիստոսի, և անդամս պոռնկի . Վասնոյ բանիս, նա ինքն Քրիստոս ասելովն « Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ, և ես ի նմա », յայտ առնէ թէ զինչ իցէ ոչ լոկ խորհրդեամբ չափ՝ այլ իբրեւ զմարմին Քրիստոսի ուտել և զարիւնն ըմպել, այս է՝ այնպէս բնակել ի Քրիստոս, զի և Քրիստոս ի նմա բնակիցէ . իբր ասել կամ-

ցեալ . որ ոչ յիս բնակէ , և ոչ ես ի նմա , մի ասիցէ կամ կարծիցէ ուսեալ զմարմին իմ , կամ ըմպել զարիւն իմ ; Ա՝ ան որպ ոչ ի Քրիստոս բնակին՝ որք անդամք ոչ են նորա . և Քրիստոս անդամք ոչ են , որք զանձինս առնեն անդամս պոռնկի . բայց եթէ զղջացեալք դադարեսցեն ի չարէ անտի , և ի բարի անդր դառնայցեն Հաշտութիւն ։

ԳԼՈՒԽ Ի.Ջ.

Չիճել իցէ հիմն ունել զքո . և մի՛ ոմանց խոստացեալ է կեալ որպէս Թէ ի հուր ։

Ասեն հակառակողք , Թէ քրիստոնեայք ուղղափառք զՔրիստոս ունին հիմն յորոյ ի կցորդուիլ ոչ զատանն բնաւ , Թէպէտ և յայսր հիման վերայ չինեցին վարս պիսակս չարաբարս , իբր փայտ , խոտ , եղէգն . վասն որոյ հատուած ուղիղ՝ որով հիմն է ի նոսա Քրիստոս , Թէ և տուժանօք իւիք՝ իբրև զի յայնր վերայ չինեալքն այլեին , այլ կարող է ինքն զերծուցանել զնոսա յերբեմն ժամանակի ի սահմանեալ տարն տանջմանէ հրոյն , Կ՚ըսէ այսոսիկ ի կարձ պատասխանի արասցէ Յակոբոս առաքեալ . ԵՒ . ՚ի . « Կ՚Թէ ոք ասիցէ հաւատս ունել , և գործս ոչ ունիցէ , միԹէ կարիցեն հաւատքն ապրեցուցանել զնա ։ » Կ՚ըսէ այս ասէն . « ո՞ ոք է ասա՝ զորմէ Պօղոս առաքեալ ասէ . « Կայց ինքն կենդանի , այլ այնպէս՝ որպէս Թէ ի հուր ։ » Ա՝ն ա՛ւ ոք իցէ , զայդ և մեք և նորա միաբան Հարցաքննեսցուք . սակայն անդուստ ոչ նա է զոր ինքեանք ասեն . զի մի պատեալմոզ առ իրեարս զերկոցունց առաքելոց բանս զբնիցեմք յասել միոյն՝ Թէ և գործս չարս ոք ունիցի , ապրեցուցանեն զնա հաւատքն հրով , և ի միւսոյն ասել՝ և Թէ գործս ոչ ունիցի , միԹէ կարիցեն հաւատք ապրեցուցանել զնա ։

Իսկ արդ գտանել ունիմք՝ ո՞ ոք ապրել կարիցէ ի հուր ,

եթէ նախ զայն գտանիցիմք՝ զինչ իցէ հինին ունել զՆէ-
զոր և իսկ և իսկ ի յարացուցէ անտի ունիմք կռահա-
տել. իբրև զի ոչ նախ քան զՀինինն ինչ արկանի ի շի-
նուածի. Կ՚ասա որ որ այնպէս՝ ի սթափ զՆէ ունիցի՝ որ ոչ
զմի ինչ եկրկաւոր և ժամանակաց, և և զգաստ և
գՀնարհեալ, նախամեծար քան զՆէ գնիցէ, այնպիսին
զՆէ ունի հինին. իսկ եթէ նախամեծար նմին գնիցէ,
թէպետև և գՀաւատս Նէին ունել կարծիցէ, ի նմա ոչ է
հինին Նէ, որում զայնպիսին յատաջագահ առնէ. և ա-
ռաւել, եթէ զիրկական հրամանաբն արհամարհեալ՝
զանպատեհն գործիցէ, յայտնապէս ոչ եթէ նախագա-
սեաց՝ այլ յետս ընկենց զՆէ, որ հրամայեացն կամ ընդ-
հեաց, յորժամ հակառակ նորին հրամանացն կամ նեղո-
զուեթէ զիւր գցանկութեթէ լնուլ կամեցաւ. այլիրատ գոր-
ծովք. Ա՚ այն որոյ եթէ քրիստոնեայ որ սիրէ զպոռնիկն,
և ի նա մերձեցեալ լինի մի մարմին, ահա հինին ոչ զՆէ
ունի, Կ՚ես թէ որ զիւր կինն սիրէ՝ բայց ըստ Նէոի, ո՚ երկ-
բայեացի զՆէ ունել նմա հինին. և եթէ ըստ աշխարհի
սիրէ, եթէ մարմնապես, եթէ ի բանս ցանկութեան,
որպես և հեթանոսք որք ոչ գիտեն զաճ, և զայդ նեբեռ-
լով հնորհէ առաքեալ, մանաւանդ Նէո նոաւա. ուստի և
սա կարող է հինին զՆէ ունել Կ՚անգին թէ զանորժակ և
գՀեշտութեթէ այդպիսի ոչ վերոյ քան զՆէ գնիցէ, չհինել
չհինէ ի վերոյ գայա, խոտ, եղէգն, բայց Նէո է հինին, ո-
րոյ վասն կեցցէ հրով. զի վայելմունք այսօրինակ և սի-
րելութեթէ եկրկաւորք թէ և ոչ արդարեւ դատապարտե-
լիք ի պատճառս ամուսնական լծակցութեթէն՝ այրեացին
հրով վշտաց. և այնք հրոյ սակի են անգաւակութեթէ, և
որ այլ և տառապանք՝ որք գՀեշտութեան տարագիր առ-
նեն, Աորին վասն այն շինութեթէ ի տոյժս լինի շինողին,
զի ոչ ունիցի զոր շինեացն, և առնչացի կոտտամբ այ-
նոցիկ յորս վայելել խրախանայր. Աակայն հրով այսու
կեցցէ ի պատճառս հիմանն. քանզի եթէ առաջի առ-
ներ նմա հալածիչն, միթէ զայն ունել կամիցէ՝ թէ զՆէ-
Նէ, ոչ արդեօք զՆէ յետոյ դասէր. Ցես առանիկ ի

բանս առաքելոյն զայն՝ որ 'ի վերայ հիման շինէ ոսկի, արծաթ, ականս պատուականս. “ Որ անկինն է, ասէ, հոգայ զտեառն՝ թէ որպէս հաճոյ լիցի տեառն „ ։ Տես և զմիւս ումն շինող փայտի, խոտոյ, եղեգան. “ Եւ որ կանամբին է, հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում „ ։ Արդ “ Իւրաքանչիւր գործն յայտնելոց է. զի օրն ընտրեսցէ „ . յայտ է թէ օրն վշտաց. զի հրով, ասէ, յայտնելոց է ։ Զվիշտան հուր կոչէ. զոր օրինակ և այլուր է ընթեռնուլ. Սիրաք. ԻԷ. 6. “ Զանօթս բրտի փորձէն բովք, և փորձ մարդոյ 'ի խորհուրդս իւր „ ։ Ապա “ Եւ զիւրաքանչիւր գործն զիարդ և իցէ, հուրն փորձեսցէ ։ Եթէ ուրուք գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ „ . քանզի կացցէ զոր ինչ իւրաքանչիւր ոք հոգացաւ զտեառն, թէ որպէս հաճոյ լիցի նմա. և զոր հոգացաւն, զնոյն առցէ ։ “ Եւ եթէ ուրուք գործն այրեսցի, տուժեսցի „ . զի զոր սիրէրն, ոչ ունիցի ։ “ Բայց ինքն կեցցէ „ . զի ոչ մի ինչ արկած սասանէ զնա 'ի պընդութենէ հիմանն ։ “ Այլ այնպէս, որպէս թէ 'ի հուր „ . զի զոր 'ի սիրոյն հրապուրելոյ յինքն ընկալաւ, ոչ թողու 'ի բաց առանց կիզիչ ցաւոց ։ Ահաւասիկ ըստ իմում բանիս տեսութեն գտաւ հուրն, որ ոչ զոք յայնցանէ դատապարտէ, այլ զմին ճոխացուցանէ, և զմիւսն 'ի տոյժ արկանէ, և զերկաքանչիւրն փորձէ ։

Իսկ եթէ հուր զայն իմանալ կամիցիմք առ տեղեաւ՝ զորմէ տէրն առ ձախակողմեանսն ասիցէ, “ Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական „, որպէս թէ յայնցանէ կարծիցեն և սոքա՝ որ 'ի վերայ շինեն հիմանն փայտ, խոտ, եղէգն, և թէ զնոսա ազատեսցէ 'ի հրոյ անտի արժանաւորութի բարւոյ հիմանն՝ յետ ժամանակին սահմանելոյ ըստ արժանի գործոցն չարաց, զորս ումանս համարիցիմք աջակողմեանսն՝ որոց ասիցի, “ Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութի „ . եթէ ոչ զայնոսիկ՝ որք շինեն 'ի հիմանն վերայ ոսկի, արծաթ, ականս պատուականս ։ Սակայն 'ի նոյն հուր՝ զորմէ ասացաւ՝ կեցցէ որպէս թէ 'ի հուր, եթէ

այդու օրինակաւ իմանայցի, ուրեմն արկանելի են երկաքանչիւրն՝ և աջեակք և ահեկեակք։ Իսանզի նովին հրով ընտրել սակ երկաքանչիւրոց։ զի օրն ընտրեսցէ։ զի հրով յայտնելոց է, և զիւրաքանչիւր զ որձն զիարդ և իցէ՝ հուրն փորձեսցէ։ Իսյա ուրեմն եթէ զերկոսին հուրն փորձելոց է, որպէս զի որոյ զորձն չհնարել կացցէ անճախ ի հրոյն՝ վարձս առցէ, իսկ որոյ գործն այրեալ՝ տուժիցէ, յայս և յայնպէս՝ եթէ ոչ է այն յաւիտենական հուր։ քանզի յայն արկանին ահեկեակքն եւեթ ի վերջնումն ի մեռելոց ջհնաւոր դատապարտուէ։ իսկ այս հուր զաջիհան փորձէ, բայց զամանս այնպէս փորձէ, զի չհնաւածն առ ի նոցանէ կառուցեալ ի հիմն Իյա անկէզ և անճախելի կայցէ։ իսկ զայլս տաբօրինակ, զի զոր չհնեցինն՝ կիզեալ տուժիցին, և ինքեանք ապրեսցին, վասն զի զհիմն եդեալ զՒյա հաստատուն կալան նախահնձոյ սիրով։ Իսկ եթէ կեցցէն, ապա ընդ աջմէն կացցեն, և ընդ այլոցն լսիցեն։ եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն։ այլ ոչ ընդ ահեկեն, ուր անիրկանաւորքն եղիցին լսել, երթ այք յհինէն անիծեալք ի հուրն յաւիտեանական։ Իսանզի յայնմ ի հրոյ ապրեսցի և ոչ որ։ զի երթիցեն ամենեքին նոքա ի տանջանս յաւիտենական, ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ չիջանի, ուր զաիւ և զդիշեր չարչարեսցին յաւիտեանս յաւիտենից։

Ո՞չ եթէ վախճանեալ մարմնոյն՝ միով յայն հաստատել՝ որ զինի մարմնոյն յարուցեալ լինիցի յետին օր դատաստանի և հատուցման, եթէ ընդ միջոցս ժամանակիդ ասիցի կրել հուր ինչ այնպիսի հոգւոց ընծիցելոցն, ոչ այնպիսի զգալի որք անուռնակք եղեն այնպիսեաց վարուց և սիրոյ առ կենդանութիւն մարմնոյն՝ որ իբր փայտ և խոտ և եղէգն ծախեսցին, այլ այնպիսի օրք արարուածս նոյնպիսիս տարան ընդ իւրեանս, եթէ ասեմ այդ հոգիք կամ անդ միայն, կամ աստ և անդ, և կամ վասն այն աստ՝ զի մի անդ հանդիպեսիցին հրոյ առժամանակեայ վշտաց՝ որ կիզուցու զերկրաւոր իղձս՝ նեղելիս՝ ի դատապարտութիւն, այդմ ոչ ընդդէմ դառնամ։ զի թերևս ձշմարիտ իցէ։ Իսանզի ընդ

համար այսց վշտաց մարելի մտանել և մահ մարմնոյ՝ որ ձգեցաւն յառաջին յանցաւորութենէ, այնպէս զի ըստ անցնելոյ շինուածոց վայելեսցէ այր իւրաքանչիւր ժամանակին՝ որ վիճի մահկանացու։ Ա. Եւ հալածանացն դէպք՝ որովք մարտիրոսք պսակեցան, և որոց նեղեալոց անկանէն իւրաքանչիւր՝ ի բրիստոնէից, անդուլա փորձէն զերկաքանչիւրս շինուածս զօրէն հրոյ, և զոմանս ծախեն մարդիկ հանդերձ շինողօքն, եթէ հիմն՝ ի նոսա ոչ զՔ՝ գտանեն, զայլս առանց շինողացն՝ զՔ՝ ի նոսա գտանելով. զի թէ և տաժիլ կեցցեն ինքեանք. իսկ զայլ շինուածսն իսկ չծախեն, զի այնպիսիս գտանեն՝ որ կացցեն յաւիտեան։ Այդուհետև և ի կատարած աշխարհի նեղուելն առ դէպքբրիստոսիս, որպիսի ոչ եղեալ բնաւ յառաջագոյն. քանի շինուածք բազումք իցեն յայսմ ժամանակի՝ որ ասկի և որ խոտ՝ ի վերայ բարւոյ հիմանն, որ է Ք՝ Յ՝. որպէս զի ընտրեսցէ հուրն այն զերկաքանչիւրս, ոմանց՝ ի ինդուեալն բերելոյ, և ոմանց՝ ի տուգանս. բայց ոչ զոք կորուսեալ՝ ի շինողաց անտի սակս հաստատուն հիմանն։ Իսկ որ միանգամ մարդկօքն կրիւք ըստ մարմնոյ սիրելով չաեմ զկին, ընդ որում և մարմնոյ իսկ խառնմամբ՝ ի մարմնականն պարապ հեշտուելն, այլ զնոսին զանուանեալս ըստ ազգային գիծոց՝ յորոց օտար է տափուսին այնպիսի, նախանձաւոր զայնոսիկ առնիցէ քան զՔ՝, ոչ գնա ունի հինի. ուստի ոչ եթէ կեցցէ հրով, այլ բնաւ ոչ կեցցէ. զի լինել ոչ կարէ ընդ կեցուցչին, որ յայտնապէս բարբառեալ յաղագս այսր՝ ասէ. "Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի. և որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս, չէ ինձ արժանի.,, Այսպէս թէ զհամագիտ զայսոսիկ այնպէս սիրեսցէ ոք ըստ մարմնոյ, մինչև ոչ վերադրել գնոսա քան զՔ՝, և զպակասումն՝ ի նոցանէ առաւել քան՝ ի Քէ յանձն առնուլ՝ ի ստիպել ժամու փորձութենէն, այսպիսին կեցցէ՝ ի հուր. քանզի յաղագնոցն կորստեան հարկ է այնպէս կիզուլ ցաւոցն, որպէս յարուեան էր սիրոյն։ Ա. որ ըստ Քէ սիրեցէ զհայր, զմայր, զուստերս և զդստերս, առաջնորդելով նո-

ցա ՚ի Քս մերձենալ, և զարքայութիւն նորա ըմբռնել, կամ ընդ այն խնդայ հաճելով՝ զի Քի անդամք են, քաւ մի լիցի թէ այն սէր ծախեալ մաշիցի ընդ փայտին և խոտոյ և եղեգան, քանզի առաւել զնոսա քան զՔս սիրել զիա՞րդ է մարթելի, զորս վասն Քի սիրէ ։

ԳԼՈՒԽ ԻԵ

Հերքումն պատիր մտաց այնոցիկ, որք կարծեն չվնասել ՚ի մեղաց անտի՝ յորս կային ՚ի գործելն զողորմութիւն ։

Առ այնոսիկ մնայ առնել պատասխանի, որք դատել ասեն ՚ի հուր յաւիտենից՝ զհեղգացեալս ևեթ առնել ողորմութիւնս արժանաւոր վասն մեղաց իւրեանց, պատճառելով զՅակոբայ առաքելոյ զասելն. "Անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ զողորմութի,,։ Ապա որ արարն, ասեն, թէպէտ և անուղղելի մնացեալ յանկարգ վարս, և յողորմածութիւնս իսկ չարաչար խառնակեցիկ լեալ իցէ, դատաստան ողորմութբ առ նա լինիցի. իբրև զի կամ ոչ դատիցի բնաւ, և կամ յետ ժամանակի ինչ ազատ՚ի յետին դատապարտութենէն արձակեսցի ։ Եւ ոչ յայլ ինչ աղագս համարին՝ ըստ գործոց ողորմութե ևեթ առնելոյ կամ չառնելոյ դնել Քի որոշումն աջականացն և ահեկանաց, զոմանս յարքայութի արկանելով, և զայլս ՚ի տանջանս ։ Իսկ զի վստահեսցին՝ թէ յանցմունք օրըստօրէն՝ ո՛յք և որքանիք իցեն, յորոց և դադարել իսպառ անմարթ է, ողորմութբ քաւելիք են, ՚ի դոյն և ձեռնտու և վկայ զաղօթսն ՚ի մէջ առնուն առ ՚ի Քսէ ինքեամբ աւանդեալն ։ Զի զոր օրինակ, ասեն, չիք օր յորում չասիցի այս աղօթք ՚ի քրիստոնէից, և նոյնպէս չէ և չէ ամենայն մեղք օրըստօրէ՝ որ չքաւիցի այս աղօթիւք յասել մեր "Թող մեզ զպարտիս մեր,,, եթէ փոյթ կալցուք և զոր զկընինն գայ՝ առնել, "Որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց,,։ Զի և տէրն չասէ, ասեն, եթէ թողու-

ցուք զմեղս մարդկան, թողցէ մեզ հայրն մեր զհանա-պազորդ յանցանս մեր փոքունս, այլ թողցէ մեզ զյանցանս մեր ։ Այլ որպիսիք և իցեն, և որքանիք, թէ և օր ըստ օրէ գործիցին, և չմեկնիցի ոք յայնցանէ՝ վարուցն 'ի լաւագոյնսն փոփոխմամբ, վստահին դոքա քաւութեն հանդիպել ողորմութեն 'ի ներել այլոց ։

Այլ արդ գեղեցկապէս ազդ առնեն դոքա, թէ ողորմութիս արժանիս ըստ մեղաց առնել պիտոյ է ․ քանզի թէ էր նոցա ասացեալ, որով և իցէ ողորմութի արարեալ վասն մեղաց՝ եթէ հանապազօրեայց, եթէ ծանունց, և 'ի սակս մեծեղեռն չարաբարութե(ան)՝ հանդիպել ողորմութեն իւր առ 'ի թողութի օրըստօրէիցն, ինքեանք իսկ տեսանէին՝ անտեղիս խօսել և ծիծաղելիս ։ Զի հարկ էր այնպէս ապա խոստովանել նոցա, թէ առն ընչաւէտի մարթ էր տասամբք դանկիւք աւուր աւուր բաշխելովք յողորմութի՝ առնել հատուցումն սպանութեց, շնութեց, և բազմազան այլ ևս քարուակսնութեց ։ Իսկ զի կարի յանտեղեաց է զայս ասել և թափելոյ մտաց, եթէ հարցանիցի՝ որ են ապա ողորմութիքն արժանիք վասն մեղաց, զորոց և Ք(րիստո)սի կարապետն ասէր ․․ Արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութե(ան) ․․, անշուշտ ոչ այնպիսի ողորմութե(ան) արարողք իցեն նոքա՝ որք յօրըստօրէ վատթարագործութիս ծախեն զկեանս իւրեանց մինչև ցմահ ։ Նախ առաջին՝ զի զօտարի գոյսն բառնալով, յոլովագոյնս յափշտակեն ․ յորոց դոյզն ինչ բաժանելով յաղքատս, թուի նմա՝ յայն սակս կերակրել նոցա զՔ(րիստո)ս, զի կարծեն գնել 'ի նմանէ զընդարձակութի չարիս գործելոյ, կամ թէ օր ըստ օրէ գնեն զայն, որով աներկիւղ յաճախիցեն 'ի գործս դատապարտելիս ։ Իսկ զի թէ ընդ միոյ ևեթ յանցուածոյ զիւրեանցն զամենայն ցրուէին առ կարօտեալ անդամս Ք(րիստո)սի, և ոչ 'ի բաց կային յայնպիսի գործոց, ունելով զսէրն՝ որ ոչ գործէ զչար, ոչ մի ինչ օգուտ էր նոցա ։ Արդ ոք ապա ողորմութիս արժանիս առնէ վասն մեղաց իւրոց, յանձնէ նախ սկսանիցի առնել զնոյնս ․ զի անպատեհ իմն է չառնել ընդ ինքն՝ զոր յընկերն առնէ, յետ լսելոյ

զառ՝ի տեառնէ ասացեալն. «Ահրեայս զընկերք քո իբրև զանձն քո»։ «Աղօթել և զայն. «Աղօրմեաց անձին քում, Հաճոյացեալ ՚ով»։ Եբոտ. ե. 24։ Օ այդ ողորմութեն առ Հաճոյանալոյ ՚ով ոչ արարեալ ոք իւրումն անձին, զիսնդր ասիցի առնել նմա ողորմութիւն արժանիս վասն մեղուց իւրոց։ Վանդի յայս իսկ գրեալ է բանն. Սաղ. ֆէ. 5. «Որ չար է իւրում անձինն, ամ լիցի բարի»։ Աղօթք սպաքէն պիտանիք են յողորմութեն, և Հայել արժան է յերևելոցն ձեն յայս. Սաղ. ե. 1. «Ականեակ, ևեթ մեզաղ, մի ևս յաւելուր. և վասն առաջնոց մեղացն պաղատեա, զի Թողցին քեզ»։ Ա՝ այն որպ այնր աղագաւ առնել պարտ է զաղօրմութ, զի սակս անցելոց մեղաց պաղատեալ լսելի լինիցիմք, այլ ոչ ևեթ ՚ի մեղս յօրացեալք, կարծիցիմք գնոյ առնուլ ողորմութիւնք զմեզանչելոց Համարձակութեն։

Իսկ տէրն յայն սակս ասաց ՚ի դէմս բերել աշակողմանց զինոցանէ արարեալն ողորմութեն, և ձախակողմանց զարարեալն, զի ցուցանիցէ՝ որչափ զօրաւոր են ողորմութիւնք ՚ի ջնջել զառաջին մեղս, և ոչ զի անդադար գործեացին անպատուհաս. և ոչ արժան է ողորմութեն գործողս առել զայնպիսիս ոմանս, որք չկամին ՚ի մեզանչանս սովորութեն անտի առ լուսագոյնս գվարան փոխարերել։ Վանդի և յայնմ գոր ասէ, «Ողովհետև ոչ արարեք միոմ՝ ՚ի փոքրկանցս յայսցանէ, և ոչ ինձ արարեք»։ ակնարկէ Թէ չառնեն իսկ գոր առնէին կարծեն։ Օ ի եԹէ քրիստոնէի քաղցելոյ հաց տային իբրև քրիստոնէի, ոչ արդեօք զանապին իւրեանց անձանց գՀայն արգասուԹէ, որ է Ինձ։ քանզի և ոչ Հայի ՚ած՝ Թէ ուր տուեալ լինի, այլ որով կամաք։ Ա՝յս ուրեմն որ զԻնձ սիրէ յանձէն քրիստոնէի, այնու կամաք մատակարարել նմա զողորմութեն, որով առ Ինձ մատչիցի, և ոչ որով Հարկեալ կամիցի անպատիժ ՚ի Ինէ։ Վանդի այնչափ ոք առաւել լքանէ զԻնձ, որչափ առաւել սիրէ զայն ինչ զոր Ինձ առեալ։ Օ ինչ յօգուտ ումեք բերիցի այն՝ զի միլսի, եԹէ արդարանայ ոչ։ ոչ ապաքէն որ ասացն «Ոչ ոք ծնցի ՚ի Ջրոյ և ՚ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայու-

թէն այ „, նոյն ասաց. “Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից „: Եւ ո՞ր վասն յայնմանէ երկուցեալք՝ ի մկրտիլ փութան բազումք, և յայսմանէ չարհուրեալք՝անփոյթ յարդարանալ գտանին բազումք: Եւ զոր օրինակ ոչ եղբօր իւրում մորթս ասէ նա՝ որ յաչսն զայդ ոչ ընդ եղբայրութիւն զայրանայ, այլ ընդ նորա մեղսն, ապա թէ ոչ՝պարտաւոր լիցի գեհենի հրոյն,նոյնպէս՝ի հակառակէն՝ որ ողորմուի կարկառէ քրիստոնէի, ոչ իբր քրիստոնէի տայ՝ եթէ՝ի նմա ոչ զԱյն սիրէ. իսկ ոչ սիրէ զԱյն որ հրաժարէ արդարանալ՝ի Նմա: Եւ զոր օրինակ եթէ ախտացեալ ոք լիցի յայս յանցուածն, զի մորթս զեղբայրն կոչելով ոչ զնորա մեղսն խափանել յօժարիցի, այլ թշնամանել տարապարտ, զուր է նմա ողորմութիւնս առնել՝ի հատուցուածն այսր մեղայ՝ եթէ ոչ և զհաշտութեանն դարմանն՝ի վերայ յաւելուցու, քստ որում յաջորդն ասէ, “Եթէ մատուցանիցես զպատարագ քո՝ի վերայ սեղանոյ, և անդ յիշիցես եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո „, ոյնպէս ահա՝ի զուր է առնել ողորմութիւն՝ և այն մեծամեծս՝ վասն որոյ և է յանցմանց, և սակայն կար՝ի սովորութենէ մեղացն կալ:

Նոսկ աղօթքն օր ըստ օրէ՝ զոր տէրն ուսոյց, որով և տէրունական ասէ, ջնջել ջնջէ զօրըստօրէ մեղանան, երբ զօր ամենայն ասէ “Ողոջմէզ զպարտիս մեր „, միայն զի և զկնի բերեալն ոչ ասէի լոկ՝ այլ արդիւնացի “Որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց „, սակայն քանզի զործին մեղք, վասն այն ասէ, և ոչ վասն այն զործին, զի ասէ: Ո՞ի այսուհետ ցուցանել մեզ կամեցաւ վրկիչն, թէ քանի՛ և անարատութեանբ կեցցուք՝ի ժամանակին յայս կեանս և՝ի տկարութենէ, չպակասիցին մեզ յանցանք՝ որոց թողութենէ վասն աղօթել պարտական եմք, և յանցուցելոցն առ մեզ նեղողս լինել՝ զի և մեզ տացի նեղուածն: Վասն որոյ ոչ յայն սակս ասէ տէրն “Եթէ թողուցուք

մարդկան զյանցանս նոցա , Թողցէ և ձեզ Հայրն ձեր
զյանցանս ձեր ,, , որպէս զի յայն աղօթս ապաստանք՝
աներկիւղաբար յօրըստօրէ յանցմունս դեգերիցիմք, կամ
իշխանաբար զմարդկային օրէնս յաչս դնելով, կամ Հնար-
իմացութեբ խաբելով զմարդիկ . այլ զի խելս առնիցեմք
Համարել զմեզ անմեղս գլխովին, թէպէտ մեկուսիք յե-
ղեռնութենէ իցեմք . որպէս զդոյն զայդ և առքահանայս
Հնոյ օրինացն զեկոյց ՚ած յաղագս պատարագացն՝ զորս
հրամայեաց մատուցանել նախ վասն մեղաց իւրեանց , և
ապա վասն ժողովրդեանն : Վասնզի և զնոյն իսկ բանս
վարդապետին մերոյ և տեառն ուշի ուշով նկատել ար-
ժան է . զի ոչ ասէ՝ եթէ Թողութիւք մարդկան զյանցանս,
Թողցէ և ձեզ Հայրն ձեր զո՛ր և իցէ յանցանս , այլ ասէ՝
զյանցանս ձեր . զի զՀանապազօրեայ աղօթս ուսուցա-
նէր , և խօսէր առ աշակերտսն որք արդարացեալք իսկ
էին : Ապա զի՞նչ է՝ զյանցանս ձեր , բայց յանցանք՝ ա-
ռանց որոց չլինիցիք և ոչ դուք , որք արդարացեալքդ էք
և սրբեալք : Նոքա՝ որք յայսց աղօթից պատձառանս
որոնեն յառնախելոյ յօրըստօրէ մեղսագործութիւն , ասեն՝
Թէ զմեծամեծ յանցմունս և սոնչանակեաց տէրն՝ յորժամ
չասաց Թողուլ զյանցանս փոքունս , այլ զյանցանս ձեր :
Նայց ՚ի դոյն իսկ ուշ եդեալ մեր՝ առ ո՞յս ոմանս խօսէր ,
և լուեալք՝ զի ձեր ասէ , ոչ այլ յանցուածն ունիմք իմա-
նալ՝ բայց զփոքունս . զի այդպիսեացն ոչ և աս գոյին յան-
ցանք մեծամեծք : Նայց սակայն և մեծամեծքն անգամ
յորոց մեկնիլ իսպառ պիտոյ է՛ի լաւագոյնն փոփոխմամբ
վարուց , ոչ Թողեալ լինին աղօթականաց՝ Թէ ոչ կատա-
րեսցի ասացեալն ,, Որպէս և մեք Թողումք մերոց պարտա-
պանաց ,, : Զի եթէ փոքունց մեղանաց՝ յորոց չեն և ոչ
կեանք արդարոց անկցորդ , ոչ այլով օրինակաւ լինի Թո-
ղութի , շարեալքն ապա՛ի բազմապատիկ մեծեղեռն չա-
րիս՝ Թէ և ՚ի գործոյն յետս կայցեն , ոչ հանդիպին քնաւ
Թողութե՝ եթէ ՚ի Թողուլ յանցուցելոցն առ ինքեանս
անողոքելիք լինիցին . ուր տէրն ասէ . եթէ ոչ Թողուցուք
մարդկան , և ոչ Հայրն ձեր Թողցէ ձեզ : Զուպաբան և

այսմ և Յակոբայ առաքելոյ ասացեալն, թէ "Անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ զողորմութիւն": Եւ որ յիշատակեցի և ծառայն՝ որում պարտապան եղելոյ բիւր տաղանդացն՝ թողացոյց տէրն. բայց ապա հատուցանել զնոյնս հրամայեաց՝ սակս չողորմելոյ նորա իրում ծառայակցի 'ի հարիւր դահեկանացն պարտիս: Եւ այնոսիկ ապա որ աւետեաց որդիքն են և անօթք ողորմութեան, արդարանայ նորին առաքելոյ յաւելուածն. "Բարձրիգլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւ": Քանզի և արդարք գլխովին՝ որք գերակայ վարուցն սրբութբ կարողացան և զայլս 'ի յարկսն յաւիտենականս ընդունել, որոց եղենն բարեկամք 'ի մամոնայէ անիրաւութեան, առ 'ի լինելոյ այնպիսիս՝ ողորմութբ ապրեցան 'ի ձեռն նորա՝ որ արդարացուցանէ զամբարիշտն, համարեալ նմա վարձս ըստ շնորհաց, և ոչ ըստ պարտեաց. 'ի նոցա համարի և առաքեալն է որ ասէ. "Որպէս ողորմելոյ ուրուք 'ի տեառնէ՝ հաւատարիմ լինել":

Իսկ որք միանգամ յարդարոց անտի ընկալեալ լինին 'ի յարկսն յաւիտենականս, յայտ իսկ է՝ թէ չեն նոքա այնպէս գերազանցեալք 'ի վարս, զի իւրեանցն եւեթ քաղաքավարութ բաւական առ ազատութ նոցա իցէ՝ անկարօտ սրբոցն ձեռնտուութեան. վասն որոյ 'ի նոսա առաւելապէս բարձրիգլուխ պարծի ողորմութ առ դատաստանաւ: Սակայն ոչ յայն սակս կարծել արժան է՝ թէ նա և այլ եղեռնագործ չփոփոխեալ 'ի վարս 'ի լաւն կամ 'ի միջակայսն՝ ընդունելի գտանիցի 'ի յարկսն յաւիտենականս, իբրև զի ձեռնտու եղև սրբոց 'ի մամոնայէ անիրաւութեան. այս է՝ յընչից կամ 'ի մեծութեց չարաչար ստացելոց. կամ թէ և իրաւամբք շահեալք՝ բայց ոչ ճշմարիտք, այլ զոր անիրաւութ 'ի մեծութիս համարի. զի անգիտանայ՝ ո՞ր այն ճշմարիտն մեծութիւնք իցեն, որով ճոխանան այնոքիկ՝ որք և զայլս 'ի յարկսն ընդունելին յաւիտենականս: Այլ արդ գոյ ուրեմն չափ ինչ վարուց՝ ոչ կարի չար, մինչև կենցաղելոցն նոցա ոչ ինչ օգտիցէ ողորմութեցն բաշխումն առ ստանալոյ զարքայութ երկնից. յորոց և կարօտութ արդա-

թոց դարման գտանէ , և լինին բարեկամք՝ ընդունելոյ ՚ի յարկսն յաւիտենական . և ոչ այնպէս գովելի , որպէս ինքնին բաւական լինել՚ի մեծի երանութեան ժառանգաւն , և ոչ ողորմութեամբ հանդիպել յարժանաց նոցին՝ զորս բարեկամս արարին , և ինձ արդարեւ զարմանայ զի և առ Ա իրդիլեայ տեսանի տէրտէրութեան այն վճիռ . "Ի դարձիր ձեզ բարեկամս ՚ի մամոնայէ անիրաւութենէ , զի ընկալցին զձեզ ՚ի յարկսն յաւիտենականս ... որովհետև նմանապէս և այն . "Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարեի , վարձս մարգարէի առցէ . և որ ընդունի զարդար յանուն արդարոյ , վարձս արդարոյ առցէ ... "Այսոքիւ ՚ի նկարագրել բերքիցն Ա իրդիլեայ զդաշտան եղիւսեան, ուր գերանելեացն ոգիս համարին բնականալ , ոչ զայնոսիկ և եթէ անդր հանդուցանել՝ որք իւրեանց վաստակօք արժանացան յայն հասանել կայանս, այլ յաւելեալ ասել . "Այնպէսն . ՚Ի . "Որք և յայլոց գոլ յիշելիս , զանձինս եղիցին ընդ արժանիս ... այս է՝ որք չահեցան զայլս , և արժանի յիշատակելոյ նոցա արարին զինքեանս . իբր ասել առ նոսա զայն ինչ՝ որ ՚ի բերան քրիստոնէի յաճախեալ է , խնդարկ յանձնարարութեամբ ասել առ որ ՚ի սրբոցն , Չիլեա զիս . իմա ջան դնելով արժանի այնմ յիշման զանձն կացուցանել . Այլոյ արդ թէ որ այն չափ վարուց իցէ , և որ այն մեզք՝ որք արգելուլ արգելուն զմեզ յարքայութենէն ՚ի , սակայն յարժանաց անտի սրբոցն բարեկամաց՝ թողութիւնք հանդիպիցեն , կարի դժուարին է գտանել , և սահմանաւ ասել՝ վասնզոր լի . ես յոլովհետ եայս խնդիր մտաբերեցի , յամենայն քննութենէն գեռ ոչ բաւականացայ . և թերևս վասն այն թաքուն ինամն , զի մի յառաջագիտին փոյթ ՚ի քննաւիցն խորչելոյ ՚ի մեզանց մեղսիւաւ թուանայցէ . Այնպէս եթէ լինէր գիտել՝ այդ կամ որպիսիք իցեն յանցաւաճքն , որոց մնալով և առանց ՚ի գովելի վարս յառաջելոյ արդարոցն միմիսրգութենէ իցէ խնդրելի և ակնկալելի , յանհոգս այնուհետև մարդկայինն պղերգուն ՚ի նոյնս պատատիք , ոչ փոյթ տարեալ արձակել յամպիսեաց կասկից՝ առաքինութեանն օձանաւ . այլ զատանալ խնդրիչ այլոցն արժանաւորութեամբ , զորս ՚ի

մամանակ անիրաւութիւն առնէր իւր բարեկամն որովք ողորմելի, [illegible] ոչ ոք նեղէր եւ ոչ ոք նեղիչ լինէր, եւ ոչ ոք անիրաւութիւն կացնէր, ապաքէն ջան դնէ ի լուսաղոյսս անդր փոխելոյ՝ մտադիր լինել ոչ ի բաց ի պատկառ կալով, միանգամայն ոչ ի բաց ի ողորմել զնոսա ստանալոյ զորոց բարեկամանէ մամանակիս անիրաւութիւն։

Այլ արդ ազատութիւնդ այդ եթէ աղօթիւք իւրաքանչիւր ուրուք լինիցի, եւ եթէ սրբոցն միջնորդելով, յայն միայն օգտի՝ զի մի արկցի որ ի յաւիտենից հուրն, այլ ոչ զի անդր արկեալ նախ՝ յետ ժամանակի ինչ արասցս կորզեսցի։ Ո՞վ զի եւ նորա որք զդրեաքն՝ թէ երկիր բարի արար պատուղ առատ, ոմն երեսնատուր, ոմն վաթսնատուր, ոմն հարիւրատուր, այսպիսի համարիս ունել խնամս, որպէս թէ սուրբքն ըստ անցնելոյն վաստակոցն տարազս՝ ոմանք զերեսունս ազատին, ոմանք վաթսունս, ոմանք հարիւրս, զայդ յաւուր դատաստանի խորհին լինել, եւ ոչ զկնի դատաստանին։ Այլ ես եգեալ ուրուանի յիմանալոց յայս կարծիս, եւ անեալ զի յաներկիւղութիւնէ զմարդիկ չարչարել թողատանիլ, իբրև զի հնար եր ամենեցուն յաղատութիւնէ վերագրել այսու օրինակաւ, ասի՝ թէ զայս գեղեցիկ պատասխանի արար. առաւել ուրեմն արժան է բարիոք վարել կենաս, որպէս զի իւրաքանչիւր յայնցանէ իցէ՝ որք սակս այլոյն ազատութիւնէ ունին բարեխօսել. զի մի արդեօք այնչափ սակաւք լինիցին սոքա, մինչ վաղվաղակի բովանդակելով իւրաքանչիւր թուոյ՝ երեսնատուրսին, կամ վաթսնատուրսին, կամ հարիւրատուրսին, յորմէ արտաքոյ մնայցեն, ոչ կարացեալք ազատանալ ի պատուհասէն բարեխօսելոյ սրբոց, ընդ որս գտանիցի որ ոք անձին իւրում խոստանալ զանկալուելիսն օտարին վաստակոց նանրախորհուրդ յանդգնութիւն։ Օ՜ այս պատասխանի հաստատեալ աստանօր ըստ ուրում խոստացաքն՝ կնքեալ զիրս։

ԳԻՐՔ ԲԱՄՇԱԼՈՒՆՔ ԼԵԿՈՑ

Զաղագս կարևոր վախճանի քաղաքին այդ, այս է՝ յաւիտենական երջանկութեան արժան հաստատ հաւատոյ յարուցեալ մարմնոց, և նոր սրտիկ ընկերաց է՛ բացայայտ։ Նոր յիսնակերպ թղթէն սուրբ յանձնակ և՛ հոգևոր մարմնեան, վախճան գիր գրոցս։

ԳԼՈՒԽ Ա.

Զաղագս վճռակի հրեշտակաց և մարդկան։

Ա ՍՏ խոստանալոյ մեր՝ի նախադրեալ գիրըդ, յայսմ որ վերջին է բոլանդակ մատենիս, բան ձառ ասցի յաղագս յաւիտենական երանութեանն քաղաքին այդ, որում յաւիտեան անուն կոչի՝ ոչ բան յոգնադարեան երկարաձգութեանց ամաց՝ որ յերբեմն ժամանակի վախճան առնուցու, այլ բան գրեցելոյն յաւետարանի, «Վաղ առաւօտ թէ նորա վախճան մի՛ լիցի»։ Եւ որպես թէ ամանց՝ի բաց չէնելով մահուամբ, և այլոց փոխանորդելով ծննդեամբ, գիշանջնեալոց իմն զգենուցու կերպարան, զոր օրինակ՝ի ծառ մշտասաղարթ դալարութեանն նոյն պահել կարծի, ուր՝ի թառամել և՝ի թափել տերևոյն՝ այլոյն՝ի տեղոջ վերաբուսեալք՝ զուր պահէն հովանոյ։ Այլ յայսմ քաղաքի քաղաքացիքն ամենայն անմահք լինիցին, և մարդիկ իսկ ստացեալ զայն ինչ՝ զոր հրեշտակք սուրբք ոչ բնաւ երբեք կորուսին։ Այդ արասցէ Աստ՝ ամենազոր այնր քաղաքի կառուցող՝ զի խոստացաւ, և տեղի անհնար է՝ և առ հաւատարիմ և առնելոյ՝ զազգում ինչ իցս յիւրոց անտի զխոստացեալս և զխոստացեալսն՝ կանխեաց կատարեաց։

Այս ինքն է՝ որ զաշխարհ նորակերտեաց՝ի սկզբանէ համայն բարեաւք լի՝ երևելեօք և իմանալեօք։ Վերագոյն

ամենայն առ ի քո գՀոգիսն Հաստատեալ՝ ի նմանութիւն որոց զի-
մացասիրութեան Հոգհեաց, և ընդունակս տեսոյ իւրում
պատրաստեաց, ի մի միաբանութեան չադիպեալ, զոր կո-
չեմք քաղաք սուրբ և վերին, յորում գործման՝ ի տածիլ
և երանելի լինել՝ ինքնին ած է նոցա, իբր կենաց և
կենդանութեան ամենեցուն։ Այս պարգևեաց իմացականի
բնութեանն զազատ անձնիշխանութեան այնպիսի, որով է՛ն
նա կամիլ՝ Հողոյս և զաճ՝ գերանութեան իւր, անդէն և
անդ՝ ի թշուառութեան ըմբռնեալ։ Հաւասարեալ իսու տե-
սանիլ Հաստիլն ապաքէն գՀրեշտակս ոմանս՝ զի Հանդեր-
ձեալ նմա մեծոյ լինել գերազոյն բարեացն, ամբարՀա-
ւանեալք իբրև անձամբ անձին առ երանելի կեանսն գոլ
բաւականս. այլ ոչ խափանեաց՝ ի նոցանէ գիշխանու-
թենն զայն. արուարագոյն և Համարեալ և լաւագոյն՝ ի
չարեաց իսկ ներգործել բարիս, քան զբարիս չՀաղացու-
ցանել բնաւ. և ոչ չարիք երբեք գոյանային, եԹէ ոչ բնու-
թենն փոփոխելի՝ Թէ և բարի Հաստեալ, և՝ ի գերագու-
նէն այլ յանփոփոխ բարեայն՝ որ զամենայնան գոյացոյց բա-
րիս, ամենայնիւ՝ առեգծոյր զայնս իւրում անձինն. որ և
իւրոցն մեզաց վկայութիւն՝ ի միտ առնու՝ Թէ ինքն բարե-
զգած բնութենէ է արարչագործեալ։ Այնպէս եՀան ոչ լեալ
էր և ինքն բարի գերագանց, Թէպէտ և իւրումն առեղ-
ծողի ոչ զուգահաւասար, ոչ արդեօք Հողոյսն զած իբր
լոյս իւր՝ լինելոյ չարՀամ։ Օ՜ի զոր օրինակ կուրութիւն
սիտ է աչաց, և նոյն իսկ յայտ առնէ Թէ՝ ի լուսոյ տե-
սողութենէ Հաստեցան աչք. ուստի նովին սիտութեան գերա-
զանց այլոցն անդամոց ցուցանի այս անդամ՝ վերընդու-
նող լուսոյ. քանզի ոչ ըստ այլոցմ ինչ պատճառի սիտ
նմին Համարիւք պակասել՝ ի լուսոյ. նոյնպէս բնութենի որ
յած զուարճանալոյ, չքնաղ ինն զիւրն արարչութենի ցու-
ցանել նովին իսկ սիտասուրութեամբն՝ որով յայն սակս
Թշուառանայ, զի ոչ զուարճանայ նով. որ զՀրեշտակաց
զինքնակամ անկումն չարագանեաց իրաւագատ պատու-
Հասիւ մշանջենաւոր Թշուառութենէ. իսկ այլոցն սքր Հոգ-
պատուոյն կացին՝ ի ծայրագոյն բարւոքին, իբր վարձս ինն

Հաստատութեն ընդհակառակ՝ լինել անբիւրեւս ընդ իւրեանցն անվախճան յաւիտեանս ։ Այս ինքն ասացը եւ զմարդն ուղիղ՝ նոյնն ազատ անձնիշխանութեն , երկրաստեղծ անշուշտ կենդանի, այլ երկնից արժանաւոր՝ եթէ կայը յեցեալ ամենայնէ յարարիչ իւր ։ բայց նոյնպէս ՚ի Թողուսն գնա՝ Թշուառութեն ներքոյ անկանիլ որ այսպիսւմ բնութեն անկ ։ Այս զի տեսանէք նոյնպէս յառաջագոյն և գնորսն մեզանէլ յայտարարութեն օրինաց ՚ոյ՝ ասասուցեալ առ ՚ի նմանէ ,ոչ ՚ի բաց առ ՚ի նմանէ զանձն իշխանական կարողութեւն , նախատես գոլով միանգամայն՝ զինչ բարիս ունէր գործել ՚ի չարէ անտի , իբրև զի ՚ի մահկանացու ազգէ անտի արժանապարսն պատուհասելոյ՝ այլ չամաշաւթէ իւր ժողովրդ , միչև լնուլ և նորոգել զաման վայրանկելոյն հրեշտակաց ։ որով սիրեցեալն այն քաղաք վերին ՚ի Թուոյ իւրոյն քաղաքացեաց ոչ նուազեցի , այլ Թերեւս արդեօք ընդ առաւելագոյնսն բերկրեալ խնդայցէ ։

ԳԻԼՈՒԽ Ը

Զաղագս յաւիտենական և անփոփոխելի կամացն ՚ոյ ։

ԼՈՒԶՈՒՄ ինչ գործին սպաքէն յաւիրաւոյ անտի հաստատակամ կամաց ՚ոյ ։ սակայն այնչափ և նոքայն իմաստութեն և զօրութեն , միչև զամենայն զհաստատակն Թուեցեալ նոքին կամաց՝ տարեալ ձգէ յայն ելս կամ ՚ի վախճան բարի և արդար՝ զոր ինքնին գիտէր կանխաւ ։ Այսոքան որպ Թէ ասի փոխել ՚ոյ զկամն , զոր օրինակ առ ամենայն քաղցր ելեալ վնասոյն զաղցրացեալ , նոքա փոփոխին՝ և ոչ ՚ի Թէ ինքն ։ այլ զնա ըստ իմիք յեղանակի փոփոխել դառնէն յայն իբր զոր ինքնանք կրեն ։ օրինակ ինն՝ փոփոխի արեգակն առ ցաւոտ աչս , ՚ի քաղցրահայեաց դէմսն՝ դժնեաճայեաց գտեալ , և ՚ի հեշտալոյն վշտացուցիչ ,

ուր ինքն կայ միայ որ ինչ էրն նոյն։ Ասաք այ ասի դարձեալ՝ զոր ներգործէ՝ ի սիրտս պատուիրանապահաց իւրոց։ զոմն առաքեալ ասէ. “Ի՞նչ է որ յայդղէ՝ ի մէզ զկամէլն ,, ։ Ասպէս այ արդարութեի՛ ասի՝ ոչ այն ևեթ ո՛ր բով ինքն է արդար, այլ և զոր նայն առնէ՝ ի մարդ արդարացեալ նովաւ. այնպէս օրհնէ կոչին այ, որք մարդկան են առաւել, քայց՝ ի նմանէ աւանդեալ. քանզի յայտ է՝ թէ մարդիկ ևին առ որս ասաց Տէր. “Օրհնեա՛ն ձեր գրեալ է ,, . իսկ այլուր ընթեռնումք. “ Օրհնէ այ իւրոյ են՝ի սրտի իւրում ,, ։ Ալ. ւշ. 31։ Ի՞նչ ըստ այսպիսի կամաց և՝ զոր ներգործէ՞ ած՝ ի մարդիկ, ասի կամէ՞նմա, զոր ոչ ինքն կամի, այլ տայ իւրոյն կամէլ զնոյն. զոր օրինակ ծանուցեալ ասի՝ զի առնէ Հանապէլ յայնցանէ որոց անծանօթ էր։ Ի՞անզի յասէլ առաքելոյն “Իսկ այժմ ծանեալ զՁած, մանաւանդ թէ ծանուցեալ իսկ Նայ ,, , ոչ օրէն է կարծել թէ յայնժամ ծանեաւ զնոսա Ած, զոր յառաջագոյնն Հանապէլ՝ ի սկզբանէ աշխարհի. այլ յայնժամ ասի ծանուցեալ զնոսա, զի ետ նոցա Հանապէլ գինքն։ Յաղագս զոյ սոյնօրինակ ձևոց ասացուածոց յիշեմ խօսեցեալ մեր և յանցեալ գիրսդ։ Ալ ան որոյ ըստ կամեցողութե՛ն ըստ այսմիկ որով կամէլ Նայ ասէմք զայն ինչ՝ զոր տայ կամէլ այլոց, որք անգիտակքն են ապագայից, կամի Ած բազում ինչ, և ոչ առնէ ։

Ալ ան զի սուրբք նորա կամին զազգում ինչ լինել՝ ըստ ազգմանն սուրբ կամաց նորա, այլ ոչ կատարին. զոր օրինակ աղօթեն սերտիւ և սրբութի՛ վասն ոմանց ոմանց, և զոր աղօթեն, ոչ առնէ Ած, թէպէտ և ինքեան ազգեաց՝ ի նոսա զաղօթելոյն կամս հոգւոյն իւրով սրբով։ Ասպէս յորժամ կամին սուրբքն ըստ Նայ և աղօթեն վասն փըրկութե՛ ամենեցուն, կարող եմք ըստ այսմ յեղանակի բանիցն ասել. կամի Ած, և ոչ առնէ. նորին ինքեան կամէլ ասելով զայն՝ զոր սրբոցն տայ կամէլ։ Իսկ ըստ այնմ իբրև կանն կամաց՝ որ կցորդն է մշանջենաւոր յառաջգիտութե՛ն նորա, ապաքէն զոր ինչ կամեցաւն յերկինս և յերկրի՝ զընաւս ոչ զանցեալ միայն և զներկայս, այլ և զապառ-

նման արար : Ասկայն չև հասեալ ժամանակին՝ յորում կամեցաւ զկատարիլ իրացն , զորս յառաջ քան զամենայն ժամանակս ետես և սահմանեաց , ասեմք , եղիցի յորժամ ՅՈՎ կամիցի : Իսկ եթէ ոչ ժամանակն մերձ յորում լինելոցն էր՝ մեզ անգէտ է , այլ թէ լինիցի արդեօք՝ չգիտեմք , ասեմք . եղիցի՝ եթէ ՅՈՎ կամիցի . իբր ոչ եթէ յայնժամ ունիցի ՅՈՎ նորոգ կամս , զոր չունէը յառաջն , այլ թէ յաւիտենից պատրաստեալն յանփոփոխելի նորա կամին՝ յայնժամ կատարումն առնուցու :

ԳԼՈՒԽ Գ

Զաղագս խոստման յաւիտենից պրպտի , և վասն անդրանաստեղանց ամպարշտից :

Ա ԸՍՆ այսորիկ թողեալ ասել զայլ ևս բազում ինչ , զոր օրինակ տեսանեմք արդ ի Պօղ կատարեալ զխոստումն առ Աբրահամ ասացեալ « Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգ ,, , նոյնպես խոստացեալն զաւակի նորա կատարելով կատարեացն յաւետ ի ձեռն մարգարէին . « Անդրնեսցին որ իցեն ի գերեզմանս ,, : Եսա . խգ . 19 . և այն գարձեալ . ՊՂ . ՃԲ . 17 . « Հղիցին երկինք նոր և երկիր նոր . և ոչ ևս յիշեսցին զառաջինսն , և ոչ ևս անկցի ի սիրտս նոցա . այլ ուրախութիւն և ցնծութիւն գտցեն ի նմա , Օ ի ահաւասիկ ես առնեմ զԵրուսաղէմ ցնծութիւն , և զժողովուրդ իմ ուրախութիւն . և ցնծայցից ի վերայ Երուսաղէմ , և ուրախ եղեց ի վերայ ժողովրդեան իմոյ . և ոչ ևս լուիցի ի նմա ձայն լալոյ ,, : Եւ այլում մարգարէիւ նախագուշակեալ ասէ . « Ի ժամանակն յայնմիկ ապրեսցի ժողովուրդ քո , ամենայն որ գտցի գրեալ ի գրոցն . և բազումք ի հնձեցելոց ի հող երկրի յարիցեն , ոմանք ի կեանսն յաւիտենականս , և ոմանք ի նախատինս և յամօթ յաւիտենից ,, : Եւ ևս . ՊՂ . Ի .

18. «Եւ առցեն զթագաւորութիւն սուրբք բարձրելոյն, և կալցին զնա յաւիտեանս յաւիտենից»: Եւ զկնի. «Թագաւորութիւն նորա արքայութիւն յաւիտենական»: Եւ այլ ևս բանք 'ի սոյն յարմարեալք՝ զորս կարգադրեցի 'ի քսաներորդ գիրս, և կամ զանց արարի, բայց կան 'ի նոյն սրբազան գիրս դրոշմեալք, այնքիկ ասեմ գայցեն 'ի գլուխ, որպէս և այժմուքս եկին՝ անլինելի կարծեցեալքն յանհաւանից անտի: Վասնզի նոյն ա̃ծ է որ զերկոսին խոստացաւ, և զերկոսին նախապատմեաց 'ի լինել. և 'ի նմին իսկ յոյժ զարհուրին հեթանոսացն աստուածք, ըստ նորուն ևս Պորփիւրի վկայութեան՝ հեթանոսացն մեծանուն իմաստասիրի:

ԳԼՈՒԽ Դ

Ընդդիմադրութիւն առ իմաստունս աշխարհի, որք անհնար համարին զերկրաւոր մարմնոյն տեղափոխել 'ի բնակութիւն երկնաւոր:

ՍԱԿԱՅՆ գիտնաւորաց արանց իմաստնոց՝ հակառակ մեծազօր այնմ կարողութեան որ զամենայն մարդկան ազգ, ըստ որում յառաջն ասաց՝ նոյն և վերածեաց 'ի հաւատալ զնոյն և յուսալ, թուեցաւ անսոր իմն առարկուածս ընդդէմ դնել մարմնոյն յարութեան, ասելով զԿիկերոնի յիշատակեալն յերրորդ գիրս յաղագս հասարակաց պետութեան. ուր խօսս արարեալ յաղագս Հերակլեայ և Հռոմուլոսի աստուածացելոց 'ի մարդկանէ՝ ասէ. «Որոց ոչ եթէ մարմինք վերաբերեցան յերկինս. զի ոչ տանի այնմ բնութիւն. և որ յերկրէս է, յերկրի հարկ է մնալ»: Այս է ահա իրաւաբանութիւն իմաստնոցն, զորոց՝ տէր ծանեաւ զխորհուրդս՝ զի են ընդունայն: Վասնզի եթէ հոգի սոսկ լեալ էաք՝ առանց իրիք մարմնոյ, և յերկինս գոլով բնակեալք՝ անտեղեակք երկրաւոր կենդանեացն լինէաք, և ասացեալ էր մեզ թէ զօդել ու-

նիք հրաշազան կապով իմն 'ի հոգիացուցանել զմարմինս երկրայինս, ո՛չ ապաքէն ուժգին եւս ընդդէմ դառնայաք, պատճառաբանելով թէ՛ ոչ տանի բնութիւն՝ անմարմնական կապել յօդիւ մարմնականաւ։ Իսկ սակայն ահա լի է երկիր հոգւովք՝ որ կենդանացուցանեն զայսոսիկ անդամս երկրաւորս՝ հրաշալի օրինակաւ շաղկապեալս և յերիւրեալս։ Իսկ ընդէ՞ր ապա 'ի կամել նորին այ որ զայս կենդանի արար, չիցէ հնար մարմնոյ երկրաւորի ամբառնալ 'ի մարմին երկնաւոր, եթէ հոգի որ քան զընաւ մարմինս՝ եւս և քան զերկնայինս գերաշխարհիկ՝ մարթացաւ կապիլ 'ի մարմին երկրաւոր։ Միթէ զգոյակ քան զերկնաւոր մարմին ընտրելագոյն կարողացաւ նիւթն երկրային դուզնաքեայ պինդ առ ինքն ունել, զի զգայութի ունիցի և կեանս, ո՞չ արդեօք հաճեսցի երկին զայն ինչ զգայունն և զկենդանական առ ինքն ընդունել, կամ զընկալեալն պահել ո՞չ կարիցէ, մինչդեռ զգայ և կենդանի կայ գոյին որ լաւագոյն է քան զամենայն երկնային մարմինս։ Բայց յայն սակս չլինի այդ այժմուս, վն զի չև եւս է ժամանակն՝ յորում լինել այնմ կամեցաւ ած՝ այն որ արարն զեւս զարմանաւորն քան զոր դոքա չհաւատան, թէ և ընդելական մեզ լեալ սակս ական տեսանելոյ. զի առ ինչ արդեօք եւս քան զեւս չզարմանամք ընդ կապիլ հոգւոց անմարմնականաց՝ քան զերկնային մարմին վեհագունից՝ 'ի մարմինս հողազանգուածս, քան թէ ընդ վերամբառնալ մարմնոց հողեղինաց 'ի կայանս երկնայինս՝ բայց և մարմնականս, բայց զի յայս տեսութի սովորեցաք և եմք իսկ, իսկ այն չև եմք, և ուրեք երբէք դեռ ոչ տեսաք։ Վանզի զգաստութի զիրսդ կշռեալ, է արդարեւ մեծագոյն հրաշակերտութի ածային՝ անմարմնականաց ընդ մարմնականս յօդակապիլ, քան եթէ մարմնոց առ մարմինս շարալծել՝ թէ և այլազանից, ոմանց երկնային, և ոմանց երկրային։

ԳԼՈՒԽ Լ

Յաղագս յարութեանն մարմնոյ՝ ընդ որ Թէոփհաստեան ամենք, ուր հատուցց զոյն աշխարհ։

Լ.1.1 արդ եր երբեմն այդ անհատատալի. այլ ահա հատատաց աշխարհ թէ երկրային մարմին Քրիստոսի վերամարձաւ յերկինս. զմարմնոյ յարութիւն և զելս ի կայանս վերինս՝ աւանիկ հատատացին և խմաստունք և անխմաստք, բայց ի նուագագունից ոմանց գիտնոց կամ չգիտնոց՝ որ դեռ ինան և հիանան։ Լ.2 թէ արդարեւ ընդ հատատալի ինչ հատատացին այլք, ապուշք ուրեմն են որ ոչն հատատան. իսկ եթէ անհատատալին եղիցի հատատացեալ, և այդ ահա անհատատալի է՝ զի այսպէս հատատացաւ անհատատալին։ Լ.3 ու զերկու զայս զանհատատալիսս, զյարութիւն ասեմ մերոյ մարմնոյս յաւիտեան, և զաշխարհի հատատս բերել այսպիսւոյ անհատատ իրի, նա ինքն ընձ յառաջնակ ազգեաց թէ լինելոց են, մինչ չև և ոչ միւսին եղեալ էր։ Ո՞ մի յերկուց անհատատալեացդ ահա տեսանեմք արգիւնացեալ, հատատալ աշխարհի զոյն՝ որ անհատատալին էր. զի ապա անյուսացեր ընդ մեացեալն, զի կատարեցեր և այն զոր իբր անհատատալի հատատաց աշխարհ, զոր օրինակ կատարեցաւ որ նոյնպէս անհատատալին եղեւ, այն է՝ ընդ յոյժ անհատատալին հատատալ աշխարհի. որովհետև երկաքանչիւր այդ անհատատալիք՝ զորոց տեսանեմք զմին, և զմիւսն հատատամք, նախատառեալք են ի նոցունց իսկ գրոց՝ որովք հատատաց աշխարհ, իսկ և յեզանակն անգամ որով հատատաց աշխարհ, անհատատագոյն թերեւս դատեալ տեսցի ի քաջն ածել զմտաւ։ Լ.4 զայաքէն արս ազատական գպրութեանց անթափս, և ամենայնիւ՝ որ իմաստասիրացդ հմտութեանց անկ է՝ անչրաւանգս, ոչ քերթողականին ակահ, ոչ բանականաւն զինաւորեալք, ոչ ի հաբտարխոսութեանէ պահու-

Ձեռք, ձիներս ասեմ սակաւաւորս առաքեաց Աշտա-
կանաք հաւատոյ ի կենցաղոյս ծով, և այնպէս ի հանուր
ազգաց այնչափ բազմաթիւ որացաւ ձկունս, և այնչափ
զարմանալիս՝ որպիսի սակաւս և գոռնէր ի նոսին իսկ յի-
մաստասէրս։ Այսր երկու անհաւատալիս յաւելցուք և
զայս զերրորդս՝ Թէ ախորժեաս, նա զի ախորժել իսկ Տերի
է, Հրեաք ուրեմն անհաւատալիք էին, որ արդեամբք կա-
տարեցան. անհաւատալի՝ Աշխի յառնել մարմնով, և
մարմնով յերկինս վերանալ. անհաւատալի՝ զդոյն անհա-
ւատալի հաւատալ աշխարհի. անհաւատալի՝ մարդոց ան-
տհմից, տղայոց, սակաւուց, անիմաստից՝ զմեծ զայդ
անհաւատալի ազդոզապէս հաւանեցուցանել աշխարհի,
և որ ի նոմա գիանաւորաց էս։ Հերից այսոցիկ անհա-
ւատալեաց զառաջինն չկամին դոքա առ օրս խոստմանն
հաւատալ. զերկրորդն բռնադատին տեսանել իսկ. այլ
չունեցին ասել ոտաի եղէն, եթէ զերրորդն ոչ հաւա-
տան. Աղաչեն յարութիւն Աշխի, և յերկինս համբառ-
նալ մարմնով յարուցեալ ընդ աշխարհ ամենայն ահա
քարոզեալ է և հաւատացեալ. եթէ չհաւատալի իցէ,
զիարդ ընդ հանուր տիեզերս հաւատացեալ գոյ։ Հրեայ
արդեօք բազումք ազնուականք, և հզօրք և խմաստունք
ասացին տեսեալ զայն յառնել, և զոր տեսոխին՝ փոյթ կա-
լան համբաւել, ոչ ինչ զարմանք ևն Թէ հաւատաց նոցա
աշխարհ, և դոցա խոստ է անհաւատանալ այլ ևս։ Աղա
եթէ՝ որպէս էն իսկ Չմարիա, սակաւուց ոմանց անհաւա-
տից, յետնոց, անուսից, ասացեալ և գրով աւանդեալ Թէ
տեսին զայն, հաւատս ընծայեաց աշխարհ, զի սակաւքդ
համակօրեալ կան ինան անհաւատք աշխարհի՝ որ հաւա-
տացեալն է։ Ասէր ա յայն սակս հաւատոյ սակաւաթի-
արանց անատնից, անարգաց, չդիտաց, վասն զի հրա-
շափառգոյն և յարհամարհ վկայն յայնոսիկ ածուԹիւն
ինքնին հաւանեցուցանէր. զի առ ի քարոզչացն սաս-
ցեալ պատգամէ՝ ոչ քանք առակ էին, այլ հրաշագործու-
Թիւք։ Վասզի որոց զՔրիստոս տեսեալ մարմնով յառնել
և նոյնմբ յերկինս վերելակել, հաւատային տեսողացն

զնոյն՝ ոչ լոկ բանիւքն պատմելոյ, այլ և զարմանապատ նշանացն ցուցմամբ։ Վասն զի արանց՝ որ միւսմ լեզուի, կամ թէ աւելի՝ երկուց եւեթ դիտակք էին, լսելին յեզս կարծուէին զամենայն ազգաց բարբառս համարձակախօսել, կաղն յորովայնէ մօր ծնելոյ՝ յետ քառասնամեայ հասակի բանիւ նոցա յանուն Քրիստոսի ողջանդամ ընթանալ. Թաչկինակաց առելոց՝ ի մարմնոց նոցա՝ ազդել յախտաժետացն բժշկութիւն. յանցանել նոցա ընդ փողոց՝ վտանգելոց՝ ի պէսպէս ախտս կալ դասաւորեալ բազմութիւն, և՝ ի հպել հովանւոյ անցորդացն՝ վաղվաղակի յառողջութիւն պատրաստարիլ. բազում և այլ հրաշանշանս նոքօք ներգործեալս յանուն Քրիստոսի, մինչև ապա զմեռելոց յառնել տեսանէին նոքա։ Այլ թէ հաւանին թէ այսոքիկ որպէս ընթեռնումքն՝ լինելով եղեն, ահա զյոլովագոյն անհաւատալիս յաւելումք յայնս երիս. և առ հաւատարիմ լինելոյ միոյ անհաւատալոյն՝ որ յաղագս մարմնոյ յարութեն և յերկինս վերանալոյ, բերեմք գումարեմք զմեծամեծ վկայութիւնս անհաւատալեաց. և ոչ այսու ամենքեան դեռ կարողանամք զանհաւանիցն խոտասրտութիւն ապատափել։ Այլ եթէ չհաւանին թէ այս աքանչելիք գործեալ իցեն առաքելովք առ՝ ի հաւատս յարութեան և վերացման Քրիստոսի՝ զոր քարոզէինն, այս մի միայն աքանչելիք մեզ շատ է, զի տիեզերական աշխարհ հաւատացեալ իցէ զյարութիւն Քրիստոսի առանց միոյ իրիք աքանչելեաց։

ԳԻՒՂՈՒՍ Ը.

Հռոմի զկառուցող իւր զՀռոմուլոս սիրելին ձծացոյց. իսկ եկեղեցի զԻ զառաջելին սիրեաց։

Յոյժ առնել՝ ի դէպ համարիմք աստանօր և զՑուղղիոսի զարմացումն ընդ կարծեցեալ աստուածութիւն Հռոմուլոսի. և զնորին բանսն որպէս ենն գրեալ՝ ի մէջ մա-

տուցից ։ «Ընդ այն է առաւել զարմանալ, ասէ, 'ի Հռո-
մուլոս, զի որ այլք ոմանք 'ի մարդկանէ աստուածացեալք
ասին, յանգիտութեան ժամանակս անդ մարդկան երևե-
ցան նոքա, յորժամ դիւրամէտ էին խորհուրդք 'ի պաճու-
ճել զկեղծիս, և անուսումնքն առ 'ի հաւատալ դիւրա-
շարժք ։ Իսկ զՀռոմուլի ժամանակն տեսանեմք ահա
իբր վեցհարիւր ամօք բարգաւաճեալ 'ի գիրս և 'ի մա-
կացութիս, և 'ի բաց փարատեալ զամենայն զնախնական
մոլորութի՛ որ յանհրահանգ վարուց մարդկան սպրդեալ»։
Եւ յետ սակաւուց յաղագս Հռոմուլայ այսպէս խօսի նո-
վին մօք ։ «Յորմէ գոյ, ասէ, 'ի միտ առնուլ, թէ բազ-
մամբք ժամանակաւ երէց է Հոմերոս քան զՀռոմու-
լոս, զի ոչ ևս կային դէպք արանց գիտնոց և կրթա-
կանն ժամանակաց յօդել առեղծուածս ։ Քանզի վաղըն-
ջուց ամանակին է ընդունել առասպելս, և այն մերթ
կարի անհարթս իմն ձևակերպեալ. իսկ քաջակրթեալ
այս ժամանակ 'ի բաց արհամարհէ զամենայն որ անլի-
նելին է»։ Արդ 'ի գիտնաւորաց արանց յայնցանէ մի է,
և այն քան զբնաւսն ճարտարախօս՝ սա ինքն Մարկոս
Տուղղիոս Կիկերոն, որ յայն սակս զարմանալի ասէ ըզ-
Հռոմուլայ ընդ աստուածս համարել, վասն զի նորուն
ժամանակք այն ինչ բարեկրթեալք էին, և ոչ ընդ առաս-
պելացն ստութեան էին դիւրահաւանք ։ Իսկ ո՞ որ յաս-
տուած զՀռոմուլոս համարեցաւ՝ եթէ ոչ Հռոմ, այն
ինչ դեռ փոքր և նորաշէն. և զկնի ապա եկելոցն հարկ
էր պահել զոր 'ի յառաջնոցն ընկալան, որպէս զի ունայն
պաշտամամբն այնուիկ իբր մայրենի կաթամբ սնեալ ա-
ճեսցէ քաղաքն, և յայն պետութի մեծատարած հասա-
նիցէ, մինչև 'ի գագաթանց նորա իբրու 'ի բարձր դիտա-
նոցէ ուստեք ծաւալեսցին այն կարծիք ընդ ամենայն ազ-
գըս ներքոյանկեալս, որք թէ և չհաւատային արդեօք,
բայց յանձն առնուին աստուած ասել զՀռոմուլոս. զի
մի գուցէ թշնամանս իշխեցողի քաղաքին առնիցեն 'ի շի-
նող նորա, այլազգաբար զՀռոմուլոս ընդունելով, զոր
Հռոմ աստուած հաւատացեալ էր, ոչ առ սէր այսր մա-

ըղութե՛ն , այլ առ մոլորութեան սիրոյ ։ Իսկ Քրիստոս թէպէտ և շինող է երկնային և մշտնջենաւոր քաղաքին , բայց ոչ զի առ 'ի նմանէ շինեցաւ՝ աստուած զնա հաւատաց , այլ յայն սակս առաւել շինեսցի՝ վասն զի հաւատաց ։ Հռովմ այն ինչ կառուցեալ և նուիրեալ՝ յետոյ ապա զիւրն շինիչ իբրև աստուած պատուեաց 'ի տաճարի ։ Իսկ այս Երուսաղէմ որպէս զի շինեսցի՝ և նուիրեսցի՝ զշինող իւր զՔ՟ս ա՟ծ արկ եդ 'ի հիմն հաւատոց ։ Հռովմ առ սիրելոյն զՀռոմուլոս՝ աստուած զնա հաւատաց ․ իսկ սա զՔ՟ս աստուած հաւատալոյն սիրեաց ։ Ապա ուրեմն որպէս յառաջեաց 'ի նմա սիրելն , զի ախորժաբար 'ի սիրեցելումն անդ հաւատայցէ նա և զբարին սուտ , նոյնպէս 'ի սմա յառաջեաց հաւատալն , որպէս զի անսխալ հաւատով՝ ոչ անընտրողաբար զսուտն , այլ զճըշմարիտն սիրեսցէ ։ Քանզի բաց 'ի յոքնաթիւ և 'ի մեծամեծ սքանչելեաց՝ որք զՔ՟սի ա՟ծութիւն հաւանեցուցին , յառաջեցին և մարգարէութիւք ընդունելիք ըստ առ 'ի ա՟ծ հաւատոցն , որք և ոչ դեռ իբր կատարելիք հաւատացեալ են՝ զոր օրինակ 'ի հարցն , այլ այն ինչ կատարեալք ցուցանին ։ Իսկ յաղագս Հռոմուլոսի թէ ըզՀռովմ կերտեալ իցէ , և 'ի նմա թագաւորեալ , լսեմք և ընթեռնումք իսկ զգործեցեալն , այլ ոչ զյառաջնմէ գուշակեալն ․ բայց թէ ընդ աստուածս վերագրեցաւ , զայդ իբր լոկ հաւատացեալ աւանդեն վիպագիրք , և ոչ եթէ ուսուցանեն արդեամբք եղեալ ․ քանզի ոչ միով իւիք հրաշակերտնշանիւք ցուցանեն ճշմարտեալ զայդ 'ի նմա ։ Զի [illegible] մատակ գայլ անուամբ սնուցիչն այն , զոր առ մեծ իմն հրաշս գրեն , զի՞նչ և ո՞րքան ինչ զօրիցէ առ 'ի աստուած զնա ցուցանելոյ ․ քանզի թէ և ոչ պոռնիկ ոք էր նա՝ այլ գազան , բայց երկոցունց եղբարցն դոլով համասնուցող , միւս եղբայր նորա ոչ յաստուած համարեալ է ։ Իսկ արդ ո՞ւմ ումեք պատուէր եդաւ՝ մի՛ ընաւ աստուած անուանել զՀռոմուլոս կամ զՀերակլէս , կամ զայլս այնպիսիս 'ի մարդկանէ , իսկ նորա մեռանել յանձն առեալ իցէ յաւէտ՝ քան թէ չանուանել ․

կամ ո՞ք յաշխաց զուգամեծար խորոցն աստուածոց առնէր զՌոմուլոս, թէ ոչ հռովմէական անուանն երկիւղ 'ի վերայ կայր։ Այլ ահա ընդ հակառակն ո՞ 'ի համար բերիցէ քանի՛ բազմագոյնք մահուանս դժնդակս անողորմս յանձինս կալան առաւել՝ քան ուրանալ զՔ͞ս ա͞ծ։ Ապաքէն երկիւղ փոքու իմն ցասման՝ որ 'ի հռովմայեցւոցն անձինս լինել խիթալի էր, թէ և արդեամբք չլինէր, հարկ առնէր քաղաքաց ոմանց անկելոց ընդ օրինօք հռովմայեցւոց աստուածօրէն պաշտել զՌոմուլոս. իսկ 'ի Ք͞սի ոչ միայն պաշտամանէն՝ այլ և 'ի խոստովանութենէն չկարաց զայնչափ յաճախութիւն մարտիրոսաց ընդ ամենայն աշխարհ յետս նահանջել երկիւղ՝ ոչ լոկ թեթև իմն դժկամակութեան, այլ և ոչ անչափ տանջանաց ազգի ազգեաց, և ոչ մահու 'ի գլխովին՝ որ այլոցն ամենայնի երկեղուտն է։ Նա և ոչ յայնմ ժամանակի քաղաքն ա͞յ պանդխտացեալ դեռ յերկրի, բայց ունելով գունդս ժողովրդոց բազմաց, մարտ առ ամբարիշտ հալածիչս իւր մղեաց սակս ժամանակեայ փրկութեան, այլ մանաւանդ վասն զյաւիտենիցն փրկութիւն ըմբռնելոյ՝ ոչ ընդդիմամարտեցաւ։ Ապաքէն 'ի կապանս անկանէին, 'ի բանտս արգելեալք, հարուածեալք, խոշտանգեալք 'ի գելարանս, 'ի հուր դատեալք, խզրատեալք, գլխապարտեալք, և սակայն բազմացեալ բազմանային։ Մարտնչել սակս փրկութեան՝ ոչ այլ ինչ էր առ նոսա, բայց զփրկութիւն արհամարհել վասն փրկչին։

Գիտակ իսկ եմ, զի յերրորդ գիրս Կիկերոնի՝ եթէ չսխալեմ, յաղագս պետութեան հասարակաց, բանձառեալ է՝ թէ քաղաք բարեկարգեալ ոչ մխի 'ի պատերազմ, բայց միայն վասն հաւատոյ, կամ 'ի կենաց պատճառս. իսկ թէ զի՞նչ իմանալ կամիցի կեանս ասելով, յայլում վայրի բացայայտեալ՝ ասէ. "Ապաքէն 'ի պատուհասից աստի՝ որոց և բախածքն զգան, 'ի չքաւորութենէ ասեմ, յաքսորանաց, 'ի բանտարգելութենէ, 'ի գանակոծն լինելոյ, փրծանին յոլովակի մարդիկ իւրաքանչիւր՝ 'ի կանխելոյ մահունոցս. իսկ քաղաքաց պատուհաս է նոյն ինքն

մահն՝ որ առանձնաւորացն թեթևացուցիչ պատուհասի կարծեալ է։ Վասնզի պարտ է այնպէս իմն հաստիլ քաղաքի, զի մշտնջեան լիցի. նմին իրի կորուստ ոչ իւիք բնաւորական է պետութեանէ, զոր օրինակ է մարդոյ առանձին, որում ոչ հարկաւոր միայն է մահն, այլ է բազում անգամ և ըղձալի. իսկ քաղաք թէ բարձեալ լինի, թէ քայքայի, թէ չհնչանի, նմանաբար զոգեաս զիպեսցի, զի զիրաքանչիւր մեծացն կշռիցեմք, իբր այն թէ աշխարհս ողջոյն կորիցէ, տապալեսցի»։ Վասն այնու աղագաւ ասէ զայդ Արիկերոն, վասն զի համախորհ ընդ պղատոնեանսն անկորնչելի համարի զաշխարհս։ Այլ յայտ եղև ահա՝ վասն այնր կենաց պատերազմ յանձն առնուլ քաղաքի՝ որով լինի նմա կալ միաւ աստանօր մշտնջեան՝ դպ ասէ, թէպէտ և այս և այն մարդոյ մեռանելով և ծնանելով. զոր օրինակ յարաճնաց է տևականութեի ձիւթենւոյ, սարդենւոյ և այլոց և այս ծառոց, սաղարթիցն ոմանց թօթափելով, և այլոց բուսանելով։ Վասնզի մահն՝ որպէս ասեն իսկ, ոչ է թէ մարդոյ իւրաքանչիւր պատուհաս է, այլ քաղաքին ողջոյն, որ առանձնաւորաց առնէ բազում անգամ դիւրութի՛ւ պատուհասէ։ Այլ վասն վաղիւ ասելոյ, զի՞նչ առաւել ընտրել՛է զհամառօտ կորուստ եղելոյ՝ յորժամ սագուն տայիք ընտրեցին զիւրեանցն քաղաք վտանգել յաւէտ՝ քան դրժել զաշխինն զոր կռեալ էին ընդ հռովմէական պետութեն, յորում գովեալ են նոքա՛ի մարդոյ՝ որք երկրաւոր պետութեն են քաղաքացիք։ Այսպէս չգիտեմ զիարդ այդմ բանի անսալ ունէին, զոր ասեն՝ թէ չիք պատերազմել բայց կամ վասն հաւատոյ, և կամ վասն կենաց. և զայն ոչ ասեն, թէ յերկուցն և զոյգ հասանելն՛ի միում վտանգի, մինչ զի չիցէ մարթ պահել զմին առանց զմիւսն կորուսանելոյ, զի՞նչ առաւել ընտրել՛է ձահ իցէ. զի ահա սագուններս եթէ զկեանն ընտրէին, հրաժեշտ տային՛ի հաւատարմութենէն. եթէ զհաւատն պահել, կեանքն յերերի կային, որպէս եղևն իսկ։ Այլ սակայն այնպիսի են կեանք քաղաքին այդ, զի ընդ հաւատոյ և հաւատովքն միայն մարթի պահիլ, կամ մանա-

ւանդ զբռամբ ածիլ . և 'ի հաւատոյն կորնչել՝ ոչ ուժեք է 'ի կեանսն հասանել ։ Այն այս ահա զմտաւածութ՟ի սնդակազմ և անմեղկելի սրտի՝ արար յաճախեաց զայն-չափ զանպարտելի մարտիրոսս , որպիսի և ոչ զմի ոք ստա-ցաւ կամ ստանալ կարէր Հռոմուլոս , յորժամ յաս-տուածս համարեցաւ ։

ԳԼՈՒԽ Ը

Հաւատալ աշխարհի 'ի Ք՟ն՝ ա՟ծեղէն զօրութ՟են եղև գործ , և ոչ մարդկային հաւանութեան ։

ԲԱՅՑ արդ կարի ծաղու իրք են՝ 'ի խօսել մեր զՔ՟սէ , զՀռոմուլայ յուշ ածել զոչինչ աստուածութ՟ին ։ Բայց զի իբր վեցհարիւրովք ամօք յառաջ քան զԿիկերոն ե-րևեցաւ Հռոմուլոս , և յայնպիսում ժամանակի՝ որ 'ի հրահանգս մակացութ՟եց բարգաւաճեալն էր , մինչ զի ունչս առնել ամենայնի որ անկար թուէր առ 'ի լինել , քանիօ՞ն առաւել յետ ամաց վեցհարիւրոց առ ժամանա-կօք Կիկերոնի , և մանաւանդ զկնի ևս առ Օգոստեաւ և առ Տիբերեաւ 'ի ներվարժեալ ժամանակսն՝ չկարէին մարդկանս միտք տանել մարմնով յարութ՟են Ք՟նի , և յերկինս վերանալոյն , իբր ինչ մի որում անմարթ իցէ լի-նել , այլ մերժել մերժէին զայն յականջաց և 'ի սրտից , թէ ոչ մարթելի զնոյն և արդեամբք իսկ լեալ ցուցանէր ա՟ծայինն ճշմարտութ՟ի , կամ ճշմարիտն ա՟ծութ՟ի , և ան-դիմադարձ նշանացն սքանչելութ՟ի . մինչ զի 'ի խիզախել անդ ահագին և բազմադիմի դժնեայ հալածանաց՝ յա-րութ՟ի և անմահութ՟ի մարմնոյ որ 'ի Ք՟ն կանխաւ կա-տարեալ , և ապա 'ի նորոգման աշխարհի առ այլս՝ կատա-րելի հաստատութ՟բ հաւատացեալ լինէր , և քարոզեալ աներկիւղաբար , և ընդ տիեզերս ամենայն բազմաբե-ղուն աճելոյ վասն՝ արեամբ մարտիրոսացն լինէր սերմա-

նեալ։ Ո՛չ ան ալ ընթերցեալ լինիմ մարդ արժանի նախատ-
ձոյն գուշակութեանք, զոյգ ընթանալոյն յաջողութիւնք զո-
րութեաց. և՛ի հաւան գալը ձմեռուոյն՝ նոր արգաւոր
առ սովորոյթ մարդկան, այլ ոչ դիտմամբար քանաւորու-
թեաւ. մինչև ապա տիեզերք՝ որ նախ մնչեգնութեաւ հալա-
ծելոյն, հաւատովքն վկայի ընթանային։

ԳԻՏՈՒԹԻՒՆ Ժ.

*Յաղագս աքանչելեացն՝ որ եղեն ի յորդոր հաւատալոյ աշխարհի ի Քրիստոս, և
յետ հաւատալոյն ևս ոչ պակասեն։*

Այլ ընդէր, ասեն, աքանչելիքդ զոր լեալս հռչակիք, ոչ և
զարդիս լինին։ Հնարի արդեօք ասել, թէ վասն զի յառաջ
քան զաշխարհն հաւատալ՝ կարևորք էին նշանք՝ ի գոր-
ծել հաւատս աշխարհի. որ ոք այլ ևս ցոյցս հրաշակաւոս
խնդրէ առ՝ ի հաւատալ, այնպիսին ինքն իակ լինի ցոյցս
իմ մեծասքանչ՝ զի աշխարհ հաւատայ, և նա ոչ հաւա-
տայ։ Վասն յայն սակս զայդ ասեն, որպէս զի անհա-
ւատարիմս առնիցեն և զոր յայնժամ գործեցեալսն աքան-
չելիս։ Իսկ արդ այլ վասն ապա Ինչի մարմնով յերկինս
վերբերուեցաւ մեծաւ հաւատով տնօրինելոյն ամենայն ու-
րեք. զի՞ի ժամանակին բազմամարմնոյս յորում ամե-
նայն որ անլինելին է՝ մերժեալ է, հաւատոց աշխարհ ըզ-
կարի անհաւատալիսն առանց իրիք աքանչելեաց. և թէ
արդեօք ասիցեն, իրք հաւատալիք էին, և վա՛ն այն եղիւ հա-
ւատալ, զմի ապա ինքեանք չհաւատան։ Վասն որոյ այս
մեր եղիցի հակիրճ իրաւաբանութեաւն առնոսա. կամ զան-
հաւատալի ինչ անեղեւակի՝ այլ իրք անհաւատալիք յար-
դիւնս և՛ի տես եկեալք՝ արարին հաւատարիմ, և կամ
իրքն՝ ի բնէ հաւատալիս անկարօտ այլոց աքանչելեաց առ-
՝ի հաւանութիւն յանդիմանեն զմեծ նոցա զանհաւանութիւն։
Ո՛յս յերգիծումն նանաթասոցն եղիցի ինձ ասացեալ.

տալ թէ ոչ՝ ուրանալ ոչ կարէ՛ք զԼինելութիւն յոբունց աբանելեաց, որ վկայէն մեծի այնմ և փրկականն աբանելեաց՝ ՎՃոի յերկինս ամբառնալոյ մարմնովն որով յաբեաւ. քանզի արձանագրեալ կայ ամենայն ի Հնգեբատասաւրեան մատեանս՝ և որք եղենն, և վասն զինչ հատատալոյ եղեն. այսոբիկ առ ի հատատս գործելոյ ծանուցան. այսոբիկ հատատովքն զոբ արարչին մեծապայծառ և ծանօթանան. զի ընձերցեալ լինիմ ի մէջ ժողովրդոց առ ի հատատելոյ. այլ ոչ ընձերցեալ լինիմ արդեօք ի ժողովուրդս, եթէ հատատացեալ լինիմ։ Վասն զի լինին լինելով և այժմ աբանելիք յանուն ՎՃոի խորհրդովք Նոբա, և կամ աղօթիւբ կամ յիշատակօք սբբոց Նոբա. բայց ոչ այնչափ՝ ի ծանօթութիւն գան՝ զՀամբաւի Հարեալք իբ՝ բև զառաջինն. քանզի կանոն սբբազան գրոց՝ որ ասէմք նեալ պահի, ընձեռնուլ օբինադբէ վնասու ամենայն ուբեք, և յաւէտ ունել համբերն ժողովրդոց. իսկ այսոբիկ ուբ միանգամ կատաբինն, անտանօթ իսկ Հաղիւ ի գիտնաւորութիւն գան ողջոյն քաղաքին, կամ ի մերձաւոբ բբնակացն տեղիս. Նա յոլովակի սակաւք ամենք իբազեկ լինին ի տեղւոջն, անգիտանալով այլոց բազմաց, մանաւանդ ի քաղաբի մեծի. և յոբժամ այլուբ և առ այլս պատմեալք լինիցին, ոչ այնպիսի է նոցայն ընդունելութիւն, մինչև գիւբաւ և անեբկբայ Հատատս ընծայել, թէպետ և քբիստոնեայ Հատատացեալք առ Հատատացեալս զոբոյ տանին։

Ի Աեգիոյան եղելոյ աբանելեացն՝ լուսաւոբութիւբ կուբի ուբուք, մինչ և մեք անդ էաք, բազմաց մարթի եղև գիտակ լինել՝ զի և քաղաքն մեծ է, և անդ էր ի ժամանակին կայսբն, և վկայելով անհամար ժողովրդեան գործեցան իբքն, յոբժամ խուռն ընթ անայբ յողջոյն նչխարաց մարտիբոսացն Պբոտասիոսի և Վեբուսասիոսի. զի յառաջն ծածկեալք, և բնաւ ի մոռացմս լեալ էին. և անբջական յայտնութիւբ առ եպիսկոպոսն Ամբոսիոս՝ յբեան եկին. անդանօբ ահա կոչին այն ի բաց մբկացեալ զհին խաւարն՝ ետես զբև։

Լսի՛ր ակարծակիհետ ո՛ր ժամուց գիտաց պրժկլեթին եղեալ Յ[illegible]ստովկեհետոս՝ երբեմն առնեսրան նախագահ իշխանութեան, ուրախոր անձամբ գոսբ և մեք, և եղաբ ականատեսք։ Վանդի գարձ արարեալ մեր յայնմ կուսէ ծովուն՝ էս և եղբայր իմ Ա[illegible]զիպիոս, չև էս լեալք կղերիկոսք՝ բայց նուիրեալք ի պաշտօնայ, նա ինքն քան զորս էին համարէն տամբ այր բարեպաշտութիւն զարդարեալ, հիւրընկալեաց զմեզ, և առնմա ունկաբ յայնժամ օթևանս։ Ի գարմանս բժշկացն կայր նա։ քանզի ախտացեալ նորա խղխղայիս բազում և գժոխեբակս առ յատակաբ մարմնոյն, կարեալ էին զայն, և զայլ գարմանս արհեստին ի վար արկանէին. որ և ցաւս երկայնագոյնս և գառնիս կրեալ էր ի հատմանն, Վակաֆն մի՛ ի խղխղայիցն անտի այնպէս ինն անյայտեալ էր առ բժիշկն, զի ոչ յայն մերձեալ էին, Թէպէտ և հատմանն երկաթոյ պէտս ունէր, և յայտաբերիլ այլոցն հատելոյ՝ այն ևեթ կայր ինայր՝ի գերև երեալ ամենայն գարմանատրութեն։ Վասկածեալ ախտացելոյն ընդ յեր կարաձգութեն, երկնչէր մի արգեօք գարձեալ ի հատուն ձեռն արկանիցեն, զոր օրինակ ասացեալ էր յառաջն բժիշկ ոմն այլ՝ որ առանին. զոր և այլ բժիշկք ոչ մերձ թողեալ էին յառաջնում հատմանն՝ տեսանել գնել բզդործոյն յերանակ, և՛ ի տանէն իսկ վարեալ էր արտաքս առ զայրացմանն. բայց ապա անդրէն՛ի տուն ընկալեալ, առ ախտացեալն սաստկութիբ. Վ[illegible]ինել գարձեալ հատանելոց էբ. մինչ զոր առաջնիայ լինել ոչ կամեցայբ՝ նորա բանբն կատարեսցին յիս։ Ա[illegible]յնորա ծաղը արարեալ իբբ զանհմտուտ բժշկաս, բանս աղուականս և խոստմունս՝ ի սիրտսն ախտացելոյ առնն՛ի կիր առնուին։ Ա[illegible]ւսրբ բաղումբ անցին՛ի վերայ, և օգուտ ոչ միոնչ գործէր յաճենայն հնարից. բայց բժիշկբ յամառեալբ այնքեալբ յիւրեանցն խոստմունս, դեղովբ և ոչ երկաթով զայն խղխղայի առնին փարատել։ Ձառաջ մատուցին միւս ոմն բժիշկ հինաւուրց, համբաւեալ յայնմ արուեստի որ տահաւին կենդանի էր, Ա[illegible]մինոխոս անուն նորա. որոյ զնեալ

զանէին, զնոյն զայլոյն խոստանայր յաւուցոյգ ըստ խնամոյ և Հաւատարմութե նոցա։ Իսկ նոքայն զատաստան վատահ ելեալ առնեն, իբր այն թէ առաջացեալ էին՝ զուարճանալ կատականօք այսոր արար զառանին զնոր բժիշկ, որ զայլոց ևս Հասման պէտս լինել ասացեալ էր յառաջագոյն։ Օ՜ինչ այլ յերկաբեցից։ աւուրց բազմաց ճանելոց ի նահիր, վաստակեալ բժշկացն և ամենայնաւետ խոստանան եղեն թէ երկանալ միայն, և ոչ այլ օրինակաւ լինել նմա բժշկութի։ Օ՜ահի Հարաւ այսու, նուաղեցաւ ըմբռնեալ յանհնարին տագնապին. և Հարկ լինէր և կեալ առ ի խօսս յօդելոյ, Հրամայեաց ի բաց ել նիւթ բժշկացն այնոցիկ, և ոչ այլ մատչել առ նա. և ինքն յաթոռսուս Հանգեալ, և ի կարեաց ախտին Հարկանօրեալ, ընթեաց կոչել զաղէքսանդրացի ոմն՝ վերապոյժ Հրաշալի Հաւաքեալ յայմ ժամանակի, նման միայն կանգնեալ կատարել զպրծն, և ոչ այլոց ընդ որս զայրացեալ էր։ Իսկայ իբրև եկն այսր, և զդարմանս այլոց ի սպիս անդ գնեաց արուեստագիտութե, զորին լաւ առն յանձին բերեալ, Հաւանեցոյց զախտացեալն՝ զի զաղաքինութե նոցա առաւել յանձն արասցէ, որք այնչափ ինչ աշխատ լեալ էին՝ օրհաւ ինքն Հայեցեալ զարմանայր, ի վերայ բերեալ թէ արդարև առանց Հատանելոյ՝ ապրել անկնար է. բայց և կարի օտար է իւրոց բարուց՝ ի գոյն յայն ինացուած գյաղեանակ ախտից սաստ վաստակոց լինքն կորզել յարանց անտի, զորոց զաՀինարուեստ արարուած և զձարտարութե և զՀոգոյն զարմացմամբ նկատեր ի սպիս նորա։ Չածեաւ այսն, բայց կամեցաւ զի և աղէքսանդրացին մեծ անդր գացէ ի Հատանել նոցա զինոց, որում ըստ ամենայնեան միաբնակ դատան ոչ էր մարթի այլով օրինակաւ տալ ապրելութեան։ այլ գոհեցաւ ի վաղուի օր ձգեցաւ։ Ի մեհեան նոցա՝ այնպիսի տագնապ կալաւ զառնն առ աստուծի տրիբունոց տանուտեառն, մինչ Հազիւ արկելոյ մեզ զկոճ իբր զմեռելոյ։ Օր ըստ օրէ յայց և լանկին առ նա արբ սուբբ, որ յայմ ժամանակի եպիսկոպոսն էր Ա՛ղաղայ

բարեյիշատակն Սատուռնինոս, և երէցն Գելասոս, և սար-կաւագունք Կարթագինեայ եկեղեցւոյն. յորս էր յայն-ժամ և արդ միայն մնացեալ 'ի կենդանիս՝ գերապատուե-լին 'ի մէնջ եպիսկոպոսն Աւրելիոս, ընդ որում յիշատակ արարեալ մեր սքանչելի գործոյն այ, խօսեցաք բազում անգամ յաղագս իրացս այսոցիկ. և կարի քաջ 'ի միտ ու-նէր զոր պատմեմքս: Արդ սոքա իբրև ըստ սովորութե յայց եկին ընդ երեկս, աղաչեաց զնոսա այրն ողորմ ար-տասուօք՝ զի առ վաղիւ ընդ առաւօտն մերձ գտանիլ հա-ճեսցին իւրումն մեռելապաշտաման՝ քան թէ ցաւոյն, քանզի յահէ առաջնոյ խոշտանգանացն ըմբռնեալ, ան-շուշտ 'ի ձեռս բժշկացն համարէր փչել զոգին: Մխիթա-րեալ քաջալերեցին զնա՝ յոյժ ապըսպարել, և նորին կա-մացն տանել արիաբար: Մտաք ապա յաղօթս, ուր այն ինչ 'ի ծունկս անկեալ էր մեր ըստ սովորութե և յերկիր գետնամածեալ, նա ինքն ախտացեալն այնպէս իմն ընկէց զանձն 'ի վայր, որպէս թէ այլ ոք ուժգին զնա զգետնեալ լինէր, և սկսաւ կալ յաղօթս. բայց ո՞ զիարդն ասել բա-ւիցէ, որպիսի՞ անտանոր մղձուկն, ո՞ր սրտի տագնապ, քա-նի՞ հեղեղ արտասուաց, ո՞ր հառաչումն և հեծութիւնք՝ մինչև զբնաւ անդամս նորա քայքայել, և գոգցես հեղձամղձուկ առնել: Ես գիտեմ եղև՞ արդեօք այլոց զաղօթսն կատա-րել առանց 'ի նորա վիշտսն ձգելոյ ուշոյ մտացն. այլ ես զիմ աղօթսն անկարացեալ, զայս ևեթ սրտիւ ասէի համառօտ. տէր, զո՞ր այլ խնդրուածս քոյոց լուիցես, ե-թէ զայսոցիկ չլսիցես. քանզի թուէր ինձ թէ ոչ մնայր այլ ինչ՝ բայց անշնչանալ նմա յաղօթել անդ: Կանգնե-ցաք յոտս, և օրհնութի ընկալեալք յեպիսկոպոսէն՝ գնա-ցաք 'ի բաց, ուր նա աղաչէր դառնալ առ վաղիւ, և նոքա յորդորեցին կալ յանդորրու: Առաւօտացաւ երկուշա-լին օր. եկին մերձ կացին պաշտօնեայք այ որպէս խոստա-ցեալն էին. 'ի ներքս մտին բժիշկք. ամենայն ինչ ըստ ժամուն պիտոյից պատրաստեալ կազմի. 'ի մէջ մատու-ցանին երկաթեայն անօթք զարհուրեցուցիչք, ամենե-ցուն յահի և 'ի լռութե եղեալ: Որք միանգամ մեծա-

բուք կային անտանելօք՝ յառաջ մատեան՝ի զօրացուցանել զնա. պարզեցաւ մարմին նորա՝ի մահճին ըստ յարմարելոյ ձեռաց հատողին. արձակին կապք պատանացն. մերկանայ տէղին, հայի բժիշկն, և զէնն՝ի ձեռին ուշ եդեալ արձակ զիւոցն հատանելւոյ. աչս կառուցանի, զինև մատամբք, փոքմ փոքմ, ամենայնիւ, և ահա գտանի սպի ողջացեալ։ Որ յայսժամ ցնծութեամբ և օրհնութեամբ և գոհաբանութեամբ առ ամենողորմին Աստ ամենազօր բղխեաց յայնհետուստ բերանոյ արտասուալից ինդութեամբ, ոչ լիմոյս բանիւ խընդրելի է. առաւել լինի համանալ, քան առել։

Ոչնդ՝ի Կարթագինէ, կին ունի բարեպաշտօն՝ի գլխաւորաց քաղաքին՝ կրկը՝ի սահման քաղցկեղ, մերձ ժեռլի՝ որպէս բժիշկք ասեն, դեղով խրթ. այր վասն կամ հատանել սովորեցան և՝ի մարմնոյ անտի զատուցանել զանդամն քաղցկեղաձին, և կամ թէ և մահաբեր է պատն, բայց ըստ Հիպոկրատայ կարծեաց՝՝ի բաց թողուլ պարտ է զանհնարս դարմանատրութեն իբրև փորձ ինն երկաբնելոյ զկենդանն նպաստաւոր։ Այս լուեալ տիկնոջն՝ի Նարտաց բժշկէ ումեքէ՝ որ մտերմութեն էր ընդ իւրում տանն, յորժ միայն կայր ապրսպարեալ աղօթիւք՝՝ի մերձենալ զտակի տանին՝ աղդ եղև նմա յանուրջս, զի առ միրտարանին կացեալ՝՝ի կողման կանանց, միւսին՝՝ի միջոր տեղոյ անտի որ դահլիճն դիպեցի՝՝ տայցէ հնբել զտէղին նշանաւն Աստուծոյ. արար զայն, և նոյնհետայն բժշկութեն արդիւնացաւ։ Իսկ բժիշկն՝ որ խրատն տուեալ էր նմա մի դարմանոց փոյթ առնել՝ եթէ կանիր երկայնել առաւօտ զկենդանն, տեսեալ զնա յետ այնր քաջառողջ առնի՝՝ի յառաջին ծանուցեալ պատճն, Տարցանէր՝՝ի նմանէ զինչ դարման իցէ մատուցեալ արդեօք, զանկացեալ որպէս թէ՝՝ի իմանալ զնաքարին՝ որով Հիպոկրատային դերեւանայր կանան։ Իսկ իբրև լուաւ՝՝ի նմանէ զեղեալն, արհամարհանս ինն՝՝ի ձեռին և՝՝ի դէմին եցոյց այլն, մինչև երկնել տիկնոջն՝ մի գուցէ թէ հանիմ՝՝ի Աստ բարբառեցի. այլ նորա պարկեշտացուցեալ ըզխօսն՝ առացեալ իցէ ըստ որում պատմի. Կարծէի մեծ

ինչ լսել ի քէն։ Այլ մինչ ի յոյժ զմանն կայր տիկինն՝ յաւելու բժիշկն. Օ՜ինչ մեծ եղև Ի՛նձի զբաղդիկդ ապաբիներ որ զաղբեքօրեայ զմեռեալն կենդանացոյց։ Օ՜այս լսեալ իմ, և ի սրտնեղեալ շարժեալ, զի աբանչելիք այնպիսի մեծ ներգործեալ ի քաղաքի և յանձն ոչ առնուին՝ ի աքաղն մնայցէ, Հարկ համարեցայ խրատել զտիկինն յանդիմանական բանիւ. իսկ նորա առ ի չքմեղս պատասխանի արարեալ ինձ՝ Եթէ ոչ լսեցի զիրեն, Հարցաքննեցի զտիկնայն՝ որք յայնժամ մեռելիմբ նորա էին՝ եթէ էր նոցա գիտացեալ յառաջն և ասացին՝ բնաւ անգէտ լինէր Լ՛սեմ ցտիկինն. ահա զիա՞րդ ոչ լսել ասես, ուր սոքա կցորդք քեզ ընտանւոք ոչ են լսեալ, Այլ զի ես կարէ՞ի կարձոյ Հարցեալ էի զիրեն, եւտւ ի լուր նոցա, ի զարմացումն և ի փառաւորել զնա՝ պատմել կարգաւ զհանդիպակն՝ որպէս զիարդ իրագործեցաւն։

Լ՛ժիշկ ոմն պատագրոս ի նմին քաղաքի՝ որ ի գիր անկեալ էր առ ի մկրտութենէ, աւուրբ յառաջ քան զմկրտիլ տեսանել յանուրջս՝ զի մանկունքն ոմանք տեառք գիտասցէք զորմնա գնա համարեր, արգելուին զնա մկրտիլ յայն ամ. և ի չանսալ առնն՝ Ձմիեցին զոտս նորա ի ցաւս դժոգամբս, որպիսի չէր նորա երբէք կրեալ. բայց նա առաւել և յաղթահարեալ զչարն՝ փութացաւ անյապաղ ի լուացումն աւազանին ծնունդեան՝ որպէս ուխտեալն էր. և ահա անդէն ի մկրտութենէն անփորձ մնաց ոչ միայն ի ցաւոցն՝ զոր ըստ ոչ սովորութենէն վշտանայր, այլ և ի պատագրոս ախտէն. և ոչ ևս յետ այնր ի բանմնէ կենացն ժամանակ գիտաց զոք զնա տանջեալ ի ցաւս ոտից։ Օ՜այս գիտացաք մեք, և այլ ևս սակաւք յեղբարց՝ որոց ի գէպ էր իրազեկ լինել։

Լ՛յր ոմն կորուբացի՝ արհեստիւ կատակերգու, անգամանայծ գոլով և փշտանկ՝ ի մկրտիլ իւրում առաջնորդեալ զերծաւ յերկոցունց ևս տառապանաց, եղեալ յաւազանին իբր անցաւակիր մարմնով։ Այլ զոր գիտաց զայս արտաքոյ Կորուբայ, և բաց ի սակաւուց ոմանց՝ որոց մարթի եղև լսել զայդ ի տեղիս տեղիս։ Այ՛ր իբրև զի-

տացաք, տուաք հրամանաւ սրբոյ եպիսկոպոսին Ա՛ր-
դիսոի ածել զայրն ի Կարնոյ գիմել, Եւ պէտ և յառաջն
լուեալ էաք յարանց կարի հաւատարմաց,

Ա՛ստ ոմն սրիկունական՝ անուն Հեսպերիոս՝ կայ առ
մեզ, որոյ են կալուածք ի գետին Փուսաղիա՝ Ս՛ուրբդի
կոչեցեալ. արդ գիտացեալ նորա Եւ ի բռնութենէ այսոց
չարաց վիշտ մեծ հասանել յանասունս և ի ծառայս տան
իւրոյ, աղաչեաց զբահանայս մեր՝ մինչ մեք ի բացակայ
էաք, զի երթեալ միոյ ուրուք անդր՝ հալածեսցէ զաղօթ իւր.
չոքաւ անդր ոմն, և մատուցեալ զպատարագ մաքրոյն
Ա՛ստ՝ աղօթեաց Եւ ախանճանօք զդադարուն նեղութենէն
այնորիկ. և յայ ողորմելոյն դադարեաց առաջմանէ. Ա՛ւ-
նէր այլն այն ընկալեալ ի բարեկամէ իւրմէ մանի՛ սրբ-
բոյ Հոգոյն բերեալ Ա՛յրուսաղէմէ. ուրանօր Եւ աղեալ
Ա՛րիսաոսի փրկչին՝ յարեաւ յերկրորդումն աւուր, և զայն
մանն կախեալ պահէր ի սեհեկի իւրում՝ վինել պահա-
պան անձինն ի չարէ անտի. Ո՛ւակ իբրև սրբեցաւ տուն
նորա ի պատահարէ յայնմանէ, ոչ ևս կամէր յիւրում
սեհեկի Եւ աղալ գՀոգին առ երկիւղածութենէն, և Եւ ի վինչ
առնիցէ՝ խորհէր յանձն. Ա՛ւրճ ի կողմանն գաւազ ըստ
դիպաց ինչ ես և գործակից իմ յայնժամ Ա՛ռաքելական
եպիսկոպոս եկեղեցւոյն Ա՛ինթապ. և աղաչեցեալ յառա-
նէն գնացաք անդր. Հ՛ետ զամենայնն մեզ զեկուցանելոյ
յաւել խնդրել, զի Հոգն սուրբ առաքածեկեցի ուրեք,
և շինեսցի անդանօր աղօթարան, ուր ժողովեսցին հաւա-
տացեալք կատարել զծածկին պաշտամունս. Ա՛ն ընդդէմ
դարձաք մեք, և կատարեցաւ գործն. Ա՛նդ պատահի ոմն
չինական անդամալոյծ լուեալ զայս, աղաչեաց գծնողսն՝
բառնալ տանել զինքն վազվազակի յայն նուիրեալ տեղի.
ածաւ անդր, աղօթեաց, և նորյժամայն մեկնեցաւ ինքնին
ոտիւք ողջանդամ.

Վ՛ասն միոյ լիկաոբանէ անուանեալ՝ կայ Հեռի՛ ի Հիւ-
պոնայ իբրև մղոնիւք երեսուն. ուր է տաճար սրբոյ վը-
կայիցն միջուկեաւոյ Պ՛ետոսեոսի և Վ՛ասբուսեոսի. Ա՛-
ծաւ անդր պատահի ոմն. որ ի լուանալ զձի առ գետոյն

հոսանօք զմիջաւուրբ 'ի տօթի, հարաւ յայսոյն չարէ. և մինչդեռ կայր անդ ընկեցեալ մերձ 'ի մահ, կամ իբր անշնչացեալ, եկն եմուտ անդր ըստ սովորութեան յերեկորին պաշտօներգութեան տիկինն, որ տէր էր վայրացն՝ հանդերձ իւրովք աղախնօք և հաւատաւորօք ոմամբք, և ըսկիզբն արարին օրհներգութեանն: Բաղխեալ իմն դիւին 'ի ձայնէ անտի՝ շարժեցաւ, և ահագին դողմամբ բուռն հարեալ պսեղանոյն՝ ոչ իշխեալ կամ ոչ կարացեալ շարժել զայն, պինդ կալեալ ունէր՝ իբր այն թէ կապեալ իցէ ընդ սեղանն և կամ հեղուսեալ. և մեծաւ ճչով աղաչէր խնայել յինքն, և լինէր խոստովան՝ ուր հարաւ 'ի պատանին, և երբ և որպէս. և ասէր իսկ ելանել գնալ, բայց սպառնացեալ հատանել զանդամս պատանւոյն զմի մի յանուանէ. զայսոսիկ ասացեալ բանս՝ մեկնեցաւ 'ի մարդոյն: Բայց ահա ակն նորա 'ի ծնօտն կոյս վայրիջեալ, մնաց նրբաթել իմն երակաւ յարեալ 'ի ներքին արմատի իւրում, և սեւորակն որ 'ի միջոցին՝ սպիտակացեալ էր ողջոյն: Ընտանեքն որք 'ի բարբառոյ անտի շարժեալք՝ մերձ անդր կային, և յաղօթս սակս պատանւոյն խոնարհեալք, իբրև տեսին զնորայն զգաստանալ և ընդ այն խնդային, տխրեցան ընդ փխասել ականն, և 'ի խնդիր բժշկի ասէին ելանել: Բայց քեռայր պատանւոյն՝ որ անդր զնա ածեալ էր՝ ասէ. կարող է ած որ զդևն հալածեաց աղօթիւք սըրբոցն, նոյն և զլոյսն շնորհել: Իսկ ապա զակնն վայրանկեալ զետեղեաց յակնակապիճ անդր ըստ մարթելոյ, և պատեաց թաշկինակաւ, կամեցեալ յետ եօթն աւուր լուծանել. զոր իբրև արար, եգիտ զայն առողջ ամենայնիւ: Յայնմ տաճարի այլք ևս ընկալան բժշկութիւն. զորոց յերկար լինի խօսել:

Գիտեմ զկոյս ոմն հիպպոնացի, որոյ օծեալ զանձն իւղովն՝ յոր աղօթարար քահանայն խառնեալ էր զարտասուս իւր, բժշկեալ զերծաւ յայսոյ չարէ: Գիտեմ և զեպիսկոպոս ոք, որոյ աղօթեալ միանգամ յաղագս պատանւոյ ուրումն չև 'ի նմանէ տեսելոյ, զերծոյց զնա վաղվաղակի 'ի դիւէն:

Էր ծեր ոմն Հիպպոնացի՝ Փլորենտիոս անուն, այր երկիւղած և աղքատ, որ դերձակութե արհեստիւ զպէտսն հայթայթէր ։ Կորուսեալ նորա զթիկնոցն, և չունելով ինչ առ 'ի գնելոյ զմիւս այլ, յաղօթս ապաստանեալ հայցէ բարձրաձայն 'ի քսանից մարտիրոսացն՝ որոց ականաւոր տաճար կայ առ մեզ, զի զգեցուսցեն զնա ։ Պատանիք ոմանք թերևս մերձ անդր գտեալք՝ լուան զայն, և ծաղր արարեալ, 'ի մեկնիլ ծերոյն զհետ գնային նեղելով զնա, իբրև թէ հինգհարիւր փողս 'ի մարտիրոսացն խնդրեալ իցէ որով գնիցէ իւր զգեստ ։ Իսկ այրն լռութբ գնալով զճանապարհն, տեսանէ 'ի ծովեզերի անդ ձուկն մեծ ընկեցեալ 'ի ցամաք, որ կայտռէր ․ կալաւ զայն՝ ձեռն տալով նմա պատանեացն այնոցիկ, և խահարարի ումեմն քաջ քրիստոնէի անուն Կատոսոս վաճառեաց երեքհարիւր փողոյ՝ համեմել զայն ըստ արհեստին, պատմելով ևս նմա զանցս իւր, և փողովքն կամէր գնել ասր, որով կին նորա գործեսցէ ըստ կարի ծածկոյթ ինչ մարմնոյն ։ Ի հատանել խահարարին զձուկնն, և ահա գտանէ 'ի փորի նորա մատանի ոսկի ․ անդէն 'ի գութ շարժեցաւ այրն, և ըստ երկիւղածութեն խղճեալ՝ դարձոյց զայն առ այրն ծեր ասելով ․ Տես ահա՝ զիարդ մարտիրոսք քսանեքին զգեցուցին զքեզ ։

Պրէյեկտոս եպիսկոպոս բարձեալ տանէր զնշխարս ինչ մեծափառ նախավկային սրբոյն Ստեփաննոսի՝ առ տիբիլի-տեան ջրովք, և էր խուռն ընթացք բազմութե 'ի տաճար անդր ։ Կին ոմն զաչացու անտանօր աղաչեաց տանել զինքն առ եպիսկոպոսն բարձող նշխարաց, և 'ի ծաղկանցն զոր ունէր՝ մատոյց առ եպիսկոպոսն, և ապա առեալ մերձեցոյց յաչս իւր ․ և անդէն վաղվաղակի ընկալաւ տեսութիւն ։ Զարմացան որ անդն կային ․ և կինն յառաջէր ցնծալից՝ հատեալ զճանապարհ առանց խնդրելոյ այլ ևս առաջնորդ ։

Ի տաճարի նորին նախավկայի՝ որ կայ 'ի դղեկին Սենիտայ՝ սահմանակից Հիպպոնայ՝ եպիսկոպոս տեղւոյն Պուկիլլոս բարձեալ տանէր զնշխարս վկային՝ առաջի և

զկնի գնալով ժողովրդեանն ։ Իբր նորա վշտացեալ՝ի բազում ժամանակաց խղճալի իւ յերատասանին, և հայր ընդ դարմանել բժշկի իւրումն մտելմագուհի՝ առ՝ի ցամաքեցուցանելոյ · իսկ՝ի տանէն ջուր հնչեալ՝ յանկարծակի բժշկեցաւ, մինչ զի ոչ և եգիտ զայն՝ի մարմնի իւրում ։

Յետ սորին եղեց սպանիացի բնակեալ՝ի Կազսիա՝ սիւ տանայր յերկար ժամանակաւ կարձոլք՝ի փամիշտին · և՝ի հնչեալոց՝ զրկն Աստեփաննոսի՝ զոր եբեր առ նա Պոսիտոս եպիսկոպոս՝ ապաքինեցաւ ։ Կայ ինքն յետ այսր բիկ ըմբռնեալ յայլ սիտ գժնդակ՝ անկեալ կայր անկենդան , մինչ զի կապեին զձեռս նորա · այլ միջնորդութիւ նախակայնին կենդանացաւ եբեկն՝ յորժամ զնորա շտալինն տարեալ՝ի տաճար զրկն, և բերեալ արկին՝ի վերայ նորա ։

Իբր յայնմ տեղւոջ այր սին երևելի՝ի կարգի իւրում անուն Աթաստեաս, անցեալ ժամանակաւ, քրիստոնեական կրօնից անհամբոյր ։ Հներ դուստր հաւատացեալ, և զիեալ որ յայնմ տարւոջ կինք առեալ էր ։ Նոքա զնոքա ացեալ այրն աղաչէին յորդ արտասուօք ժողովել զի քրիստոնեայ լինիցի · այլ նորա բացե՝ի բաց հրաժարեալ, վարեաց զնոսա խռովայոյզ ցասմամբ ։ Խորհեցաւ փեսայ նորա երթալ՝ի տաճար զրկն Աստեփաննոսի, և աղօթել յամենայն զօրութիւ՝ զի ընդհեսցէ նմա ածծ միտս բարիս, մի այլ և և դանդաղել՝ի հաւատս Քրիստոս · զայս որոշ բազմահաւաք ողովք և յորդեռանդն բարեպաշտուհն բազձանօք ։ Իսկ՝ի մեկնիլ իւրում առեալ՝ի ծաղկանց անտի սեզանոյն՝ որ՝ի ձեռն եկն, եբեր և եդ առ գլխով հիւանդին՝ մինչ գեռ գլխեր էր · և՝ի քուն մտին ։ Իբ ահա ընդ արշալուրջն աղաղակ բարձեալ հիւանդին ասէր՝ ազդ առնել եպիսկոպոսին , որ յայնմ ժամանակի առ իս կայր՝ի Հիպպոնա · և լուեալ նմա ոչ անդ է եպիսկոպոսն, իսկն դրեաց գալ երիցանց · և իբրև եկին , դաւանեցաւ զհաւատս , և մկրտեցաւ , մինչև աբանչանալ և ուրախ լինել բոլորից · և որպէս եկեաց, զայս ունէր՝ի բերանէ · Ինչ, ընկալ զդէ իմ · ոչ գիտելով նա եթէ այս էին յետին բանք երանելին Աստեփաննոսի՝ յորժամ՝ի Հրէից քարկոծեցաւ, որք

և առնս այսմիկ եղեն վերջին, զի ոչ յետ բազմաց ինչ և սա վախճանեաց։

Այդպէս անդադար նորին նախավկային բարեխօսութիւն առաքինիւ երկուց պատգրաց, յորոց մին էր բնիկ քաղաքացի, և միւսն եկ. քաղաքացին բժշկեցաւ հաճութեան. իսկ օտարն ուսաւ յայտնութիւն թէ՝ ի զգալ ցաւոյն զինչ մատուցանիցէ՝ ի դարման. զոր և արարեալ իսկ և իսկ դադարեաց ցաւն։

Ի կալուածն անուանեալ Հրդուրս՝ կայ եկեղեցի, և ի նմա նշխարք Սուրբ փառնոսի նախավկային։ Անուն փոքրիկ խաղայր ի կալ. և ահա եղինք որք զսայլն ձգէին՝ խոտորեալք ի ճանապարհէն, խորտակեցին զմանուկն ընդ անուամբ, և անդէն անշնչացաւ. իսկ մայր նորա բարձեալ տարաւ եդ առ նշխարսըն սրբոյն. և ոչ միայն յարեաւ տղայն, այլ և գոյաւ անսխեղծ ամենևին։

Հաւատաւոր մնեմք ի մերձակայ գետին անդ՝ որ Վասպուրական ասի, ածդնապէտ՝ ի խօթոմէնի անցոյս. զորս զշապիկն տարան յեկեղեցի սրբոյն. այլ միոչ չև այսրէն բերեալ զշապիկն նա եհան զոգին։ Վակայն ծնողք նորա արկին զշապիկն ի վերայ մարմնոյն, և ահա շունչ առեալ կենդանացաւ։

Ա՛օտ ի Հիպպոնա Տասոս անն ասորի կայր յաղօթս յեկեղեցւոջ նորին նախավկային վասն գոյեր իւրոյ հիւանդացելոյ առ ի մահ, տարեալ ընդ իւր և ի գիւղատեղի նորա. և ահա մանկունք տանն հաճապէսք եկին պատմել նմա՝ թէ մեռաւ աղջիկն։ Ոչ ուրացաւ բարեկամքն՝ միւդեռ յաղօթել կայր այրն, և արգելին յայտնել նմա, զի մի յողբս լուծանիցի ի միջ բազմութեան։ Այլ ի տուն գարձ արարեալ նորա ի գոյժ կոծոյ ընտանեացն, զհանգերձ գտաւն զոր առ իւր ունէր՝ ընկէց ի վերայ նորա, և գարձաւ ի կենդանութեան։

Հուսկ առ մեզ գարձեալ Հրանոսի ուրումն հարկահանի որպէս հիւանդացեալ մեռաւ. և մինչ առ անշնչացեալ մարմնոյն կացեալ կոծոզք և աշխարոզք՝ ի թաղումն նորա պատրաստէին, ի միում արուչ բարեկամաց մի ոմն

խրատ ետ օծանել զմեռեալն յիւղոյ սրբոյ վկային. արա-
րին, և կենդանացաւ։

Առ մեօք դարձեալ այր ոմն տրիբունական Ելեւսինոս՝ զտղայ զորդի իւր զմեռեալն յախտէ ինչ տարաւ եդ 'ի սեղան եկեղեցւոյ նախավկային՝ որ կայ յարձակավայրի անդ. և զկնի արտօսրալից աղօթիցն մատուցելոց՝ եբարձ զնա կենդանացեալ։

Բայց զի՞ գործեցից. խոստումն կատարման մատենիս հարկ լինի դնել մի՛ զամենայն զոր գիտեմն՝ յիշատակել աստանօր. սակայն և 'ի մերոյս բազումք յընթեռնուլն զայսոսիկ՝ ցաւել ունին անշուշտ սակս զանց առնելոյ իմ զյոլովագունիւքն, որոց և ինքեանք իբրև զիս իրազեկք են։ Այլ 'ի ժամուս աղաչեմ ներել ինձ, ածեալ զմտաւ՝ թէ քանի՛ երկարավաստակ է առնել զայդ, զոր հարկ յանձն առեալս գործոյ ստիպէ չառնել։ «Քանզի եթէ 'ի հրաշագործ բժշկութեանցն ևեթ՝ լռութե̃ թողեալ զայլսն, զայնս միայն գրել կամիցիմ որ ընդ ձեռն գերափառ նախավկային Ստեփաննոսի գործեցան 'ի սահմանս Կաղամիայ և 'ի մերումս, հարկ է մատեանս բազմացուցանել. և ոչ այնպէս զընաւն մարթացեալ հաւաքել, այլ միայն զորոց տուաւ արձանագիր կամ տոմս՝ առ ընթեռնլոյ 'ի լուր ժողովրդոց։ Զի տեսեալ մեր թէ նման առաջնոց ժամանակաց յաճախէին և առ մեօք նշանք ածագործք, կամեցաք առնել արձանագիր, զի մի՛ անծանօթ 'ի բազմացն գիտնաւորութե̃ լինիցին։ Եւ արդ երկու ամ է, յորմէհետէ 'ի Հիպպոնա մայրաքաղաքիս կանգնեցաւ յիշատակս այս, և բազում սքանչելագործութե̃ցն հաւաստի առ 'ի մէջ ծանուցելոց՝ անգիր մնացեալ, այնք ևեթ որք ընդ գրով արկան՝ յեօթանասուն հասին 'ի թիւ, մինչդեռ գրէի զայսոսիկ։ Իսկ 'ի Կաղամիա ուր յառաջ եւս եղև այս յիշատակ, և յաճախագոյնս կատարին, առաւելուն կարի յոյժ բազմութե̃։

Այլ և 'ի սահմանին Ուզալեայ՝ որ մերձ յՈւտիկէ, յոլովս հրաշանշանս գիտացաք գործեալ 'ի ձեռն նորին նախավկայի. որոյ յիշատակ կանխագոյն եւս քան առ մեզ

կանգնեալ էր անտանօր յԵւոդեայ եպիսկոպոսէ։ Այլ սովորութիւն ոչ գոյ անդ արձանագիր առնելոյ, կամ լաւ ևս ասել՝ ոչ եղև յառաջն, զի այժմ թերևս սկիզբն արարին։ Քանզի փոքր մի յառաջ եղեալ մեր անտանօր, զՊետրոնիա կին քաջազգի՝ որ ապաքինեալն էր սքանչելապէս 'ի սաստիկ և 'ի բազմաժամանակեայ նուաղմանէ, ոչ ինչ օգտեալ 'ի բժշկական հնարից, յորդորեցի առնել արձանագիր՝ հաւանելով և նախայիշատակեալ եպիսկոպոսին, զի լիցի ընթերցեալ առ ժողովուրդն. զոր և կատարեաց մտադիւր, նշանագրեալ 'ի նմա ինչ մի, զոր լռել չկարեմ աստանօր, թէ և փութալ ստիպիմ 'ի կարևորագոյնսն այսր գործոյ։ Պատմէ թէ այր ոմն հրեայ խրատ ետ նմա՝ ագուցանել զօղ մի 'ի գօտի մազեայ, և ածել զայն զմերկ մարմնովն 'ի ներքոյ հանդերձից, հաստատեալ յօղ անդր զքար հանեալ յերիկամանց եզին։ Զայն արարեալ նորա և զանձամբ կապեալ իբր դարմանս իմն, գնայր 'ի տաճար սրբոյ վկային. և ճանապարհ արարեալ 'ի Կարթագինեայ՝ իբրև զտեղի առ 'ի սահմանակցութե գետոյն Բագրատայ՝ ուր կալուածք իւր էին, և յարեաւ ապա գնալ յառաջ, տեսանէ անկեալ առ ոտիւք իւրովք զօղն. զարմացաւ, և զննեաց զմազեայ գօտին որով կապեալն էր, և եգիտ զայն անլոյծ կապովքն պնդեալ. կարծէր ապա՝ թէ օղն բեկեալ և արտաքս փրծեալ իցէ. բայց և այն գտաւ ողջիկ ամենևին։ Յայնժամ հաստատեաց կինն 'ի միտս իւր՝ առհաւատչեայ իմն հանդերձելոյ սքանչելեաց ընկալեալ զայն, և լուծեալ զգօտին՝ ընկէց օղիւն հանդերձ 'ի գետ անդր։ Զայս ոչ հաւատան այնոքիկ ոմանք, որք և զտեառնն Յսի ընդ անխախտելի կուսական արգանդ մօրն անցանել չհաւատան, և ոչ ընմտանել առ աշակերտս դրօքն փակելովք։ Բայց աղէ, այսմ խոյզ արասցեն, և եթէ ստուգեալ գտանիցեն, հաւատասցեն և զայլսն։ Ահա ականաւոր է կինն, յազատաց ծնեալ, ընդ ազատի հարսնացեալ. 'ի Կարթագինէ բնակէ. քաղաքն ընդարձակ, և անձն նոյնպէս երևելի՝ 'ի հետազօտացն թաքչել ոչ ունի։ Մարտիրոսն՝ այր միջնոր-

դուէք սպաքինեցաւ այս կին, հաւատացաք յորդի միշտ հու-
սին, հաւատացաք յայն՝ որ դրօք փակելովք եմուտ առ աչա-
կերտս, և միով բանիւ՝ որ ամենայնի առ ի մէնջ առասցէ-
լոցս կէտ նպատակի է, հաւատացաք յայն որ համբարձաւ
յերկինս մարմնովն՝ որով յարեաւ. և վասն այնորիկ մե-
ծասքանչ կատարին ի ձեռն նորա, զի սակս այսր հաւա-
տոց եղ զանձն։ Այսպա ուրեմն և զարդիս սքանչելիք լինին
բազումք՝ այ ազդեցուք ի ձեռն սրոց կամի, և ոմն զիարդ
կամի. որ և զոր միանգամ ընծայեալն՝ արար. բայց
այժմիկս ոչ իրրև զառաջինսն հրապարակածանօթ լինին,
և ոչ առ անմոռաց պահելոյ յաձախ կարգացմամբ զօրէն
Թուարկու խօսիմք՝ ի յիշողական անդր աւանդին։ Վասն-
զի և ուրանօր փոյթ է որպէս առ մեզ այժմ սովորեցաւ,
զի որոց պարգևին սքանչելեացն ընծորէք՝ ընծայերցեալ լի-
նիցին արձանագիրք առ ժողովուրդն, զայն առ մի նուագ
լսեն որ մերձն կան, բազմաց բացակայ գոլով. և ոչ նոքին
իսկ որք ի տեղւոջն գտան, յետ աւուրց ի մոռ ունին
զլուեալն. և Հաղիւ որ գտանիցի՝ որ զլուեալն պատմիցէ
այնմ զոր գիտէ գոլ ի բացեայ։

Այս մեզ սքանչելիս ինն գործեցեալ, ոչ արգարեւ բան
զոր պատմեցինք՝ մեծագործ, բայց այնչափ քաջածանօթ
և երևելի, որ զի ոչ զոր կարծեմ ի հիպպոնացւոց ան-
տես կամ անլուր այնմ լինել, և ոչ Թէ ի մոռացօնս ար-
կանել մարթ իցէ։ Ջանն եղբարք ունիք ի Կեսարիայ
կապադովկացւոց՝ եօԹն արուք, և այլքն եգ, ոչ աննշանք
ի քաղաքին՝ յանիծանելոյ մօր իւրեանց այն ինչ եղելոյ
այրի ի Հօրէ նոցա, որ սակս անարգանացն կրելոց ի նո-
ցանէ զայրացեալ էր անՀնարին, ձաճասաստ պատուհա-
սիւ այնպէս ինն պաշարեցան, զի լկուածն զարհուրելի ըզ-
դողի Հարկանէր զամենայն անդամս նոցա. մինչ զի չՀան-
դուժեալ նոցա յայն խոժոռադէմ կերպարան երևել
յանդիման քաղաքակցաց իւրեանց, այսր անդր տարա-
գնաց Թափառէին իւրաքանչիւր ըստ Հայոյս գոգցես ընդ
բովանդակ տեղուԹիւն Հռոմայեցւոց։ Այնկին զի չՀան-
առ մեզ երիս ի նոցանէ՝ եղբայրք և քոյր, Պօղոս և Պաւլ-

լսութիւ, որ յառաջն իսկ ծանուցեալք էին ընդ այլ բազում տեղիս ի համբաւելոյ ողբմ վիճակի նոցա. իբր հնդետասան աւուրբք յառաջ քան զգաստին եկեալ սուց յամխելին հանապազորը լեկեղեցին՝ անդէն ի գիրս նշխարաց գերարհաս վկային Վտեփանոսի, պաղատելով հաշտել ՚այ ընդ նոսա, և զնախիկ առաղջունին շնորհել, ՚չ եթէ անտանօր, և եթէ ուր այլ և ուրեք երթային, յիւրեանս գթաղաբարեացն ձգէին հայեցուածս. և ամենք որք զնոսա այլուր տեսեալ էին, և գիտէին զնոցա գողմանն պատճառս, պատմէին այլոց՝ որոց և պատահէին, ՚չհաս զատին, և ընդ առաւօտս կիւրակէին՝ միով գեղ խառնեն ժողովրդեանն կայր լեկեղեցւոջ, պատանին այն կալեալ զանդակատան տեղւոյն՝ ուր էր վկայարանն, կայր յաղօթս. և յեղակարծումն տապաստ անկեալ ընդ գետին՝ եկաց ձեռս իւր ՚ի բուն, բայց առանց գողգողելոյ, ուր յառաջն գողալ սովոր էր և ՚ի հնձել անդ՝ ՚ինդ հիանալ մերձ եղելոցն, ուր կնաք զարհուրեալ էին, և այլք ՚ի ցաւակցումն իւրն ըմբռնեալ, իբրև կանգնել ամենք զնա կամէին, այլք ամենք արգիլին ասելով եղից իբրայն ակնկալեալ սպասել. ՚չ ահա յարեաւ կանգնեցաւ պատանին, ոչ ևս գողալով. զի բժշկեալ կայր անվկանգ, և ընդ հայեցողսն շուրջ հայեր. Իսկ ապա ո՞ կարող էր լռել յօրհնութենէ ՚այ. լցաւ եկեղեցին ընդ ամենայն կողմն ՚ի բարբառոյ այնոցիկ որք գոչէին և գոհանային. ընթացան առ իս ուր նստեալն էի պատրաստ գոլով յերանել. այր ըստ առնէ ամասպարեր, և որ ոք յետոյն գայր՝ իբր նորս ինն աւետաւորեր զառաջնոյն ասացեալն. և միւնչ էն խնդալի, և ՚ի սրտէ գոհութենէ առ ՚ած մատուցանելի, ահա ինքնին պատանին եմուտ ընդ այլոց բազմաց, և ՚ի ծունկս իմ խոնարհեր, այլ ես կանգնեցի զնա առ ՚ի համբուրել. Յառաջ մատեաք առ ժողովուրդն, միւնչ զերեալ էր եկեղեցին, և հնչեր ՚ի բարբառ ցնծութենէ, ամենեցուն աստի անտի աղաղակելով, փառք ՚այ. օրհնութիւն ՚այ. Ալաղաղեցին եւս ժողովրդեանն. այլ անդրէնն մեծամարն ևս բարբառ զնոյն

աղաղակէին. և ապա ուրեմն լռութի՛ կալեալ, եղեն կարդացմունք ա՛ծային գրոց ըստ տօնիցն. և 'ի լինել պատեհ ժամու խմումս բանախօսութե՛, ասացի սակաւս ինչ ըստ աւուր պատշաճի, և ըստ առաջիկայ հրճուողական խնդութե՛ն. քանզի առաւել ընտրեցի՝ յայն գործ ա՛յ զմեծեղէն իմն ճարտարախօսութի՛ մտօք կշռել նոցա՝ քան լսել։ Որ մեզ ճաշեաց պատանին, և զամենայն զդոյցս աղէտին զիւր և զմօրն և զեղբարցն պատմեաց մանրամասն։ Յերկրորդումն աւուր յետ կատարելոյ բանախօսութե՛ն՝ խոստացայ վերծանել առ վաղիւ 'ի լուր ժողովրդեան զարձանագիր անցիցն եղելոց։ Իսկ իբրև լինէր այս յաւուր երրորդի զատկին յաստիճանս սրահին՝ ուր 'ի բարձրաւանդակէ խօսէաք, ետու մերձ կացուցանել զերկոսին հարազատսն՝ յընթեռնուլ անդ զարձանագիր նոցա։ Կայէր ժողովուրդն առհասարակ արք և կանայք, ընդ եղբայրն զի կայր ոչինչ անվայելուչ դրիւք, և ընդ քոյրն՝ զի շարժէր բոլոր անդամօք. և որք յեղբայրն ոչ էին տեսեալ զոր առնա ա՛ծային ողորմութե՛ն գործ, 'ի քոյրն տեսանէին զայն. զի 'ի միումն նկատէին որ խնդալին էր, և 'ի միւսումն զոր աղօթելն պարտ էր։ Ի վճարել կարդացման արձանագրի նոցա, հրամայեցի 'ի բաց գնալ նոցա 'ի միջոյ ժողովրդեանն, և սկսեալ իմ յերկարել սակաւ մի զխօսս յաղագս նոցին իրաց, և ահա բարբառ նորոյ ցնծութե՛ հնչեաց 'ի կողմանց վկայարանին. և որք ինձ ունկըն դնէին՝ անդր դարձուցեալ զերեսս ընթանալ սկսան։ Քանզի աղջիկն իջեալ յաստիճանաց անտի ուր կայրն, դիմեալ էր առ սուրբ նախավկայն աղօթել անդ. և իսկոյն ընդ մերձենալն 'ի վանդակապատսն, յերկիր պարզեալ իբր 'ի քուն հանգոյն եղբօրն՝ յառնէ կանգնի ողջացեալ։ Իբրև մեք հարցանէաք՝ զինչ պատճառք իցեն զուարթաձայն շշնջմանն, մտին ընդ աղջկանն 'ի տաճարն ուր կայաք, ածեալ զնա ողջ անարատ 'ի վկայարանէ անտի. և այնպիսի հնչեաց գոչումն հիացման յարանց և 'ի կանանց, մինչ զի անհնար թուէր վախճան առնել արտասուախառն բացագանչութե՛ն։ Ածաւ աղջիկն 'ի տեղի անդր՝ ուր

փոքր ինչ յառաջ կացեալ էր դողմամբ . խնդային ընդ նա՝ եբր նմանեալ եղեօրն, ընդ որ կարեկցեալն էին սակս աննմանն գոլոյ . և մինչ չև զիւրեանց մաղթանս վասն նորա հեղեալ առ Ած, տեսանէին զի կամք իւրեանց կանխաւ լեալ են լսելի . ցնծային յօրհնութիւս Այ անխօս ձայնիւ 'ի գոչիւն սաստկութե, որում լսելիք մեր չհանդարտէին : Օ՜ ինչ այն, զի՞նչ այլ էր 'ի ցնծացելոցն սիրտըս՝ եթէ ոչ հաւատք Քնի, որ վասն Ստեփաննոսին հեղաւ արիւն :

ԳԼՈՒԽ Թ

Աքանչելիք ամենայն որ յանուն Քնի գործին 'ի ձեռն մարտիրոսաց, տան վկայութի հաւատոյն՝ որով 'ի Քս հաւատային մարտիրոսք :

Ի՞մ իմիք 'ի վկայութի են սքանչելիքս այսոքիկ, բայց հաւատոյն՝ որով Քս քարոզի յարուցեալ մարմնով, և յերկինս նովին մարմնով ամբարձեալ . քանզի և մարտիրոսք ինքնին այսց հաւատոց եղեն մարտիրոսք, այս ինքն է՝ վկայք . այսմ վկայութե բերեալք, ժուժկալեցին պարտախաթափ և անողորմ աշխարհի . և յաղթեցին նմա ոչ դիմամարտելով՝ այլ մեռանելով : Սակս հաւատոյս այսմ մեռան, որք զսքանչելիքդ ընդունել կարող են 'ի տեառնէ՝ յորոյ անուն սպանան : Սակս այսր հաւատոյ յառաջեաց հրաշալի նոցայն համբերութի, որպէս զի զհետ գայցէ մեծազօրութի նոցա 'ի սքանչելագործել : Սամն զի եթէ մարմնոյ յաւէտակացն յարութի ոչ կանխեաց 'ի Քս, կամ չիցէ գալոց ըստ որում 'ի Քնէ նախաձայնեալ, և կամ որպէս առ 'ի մարգարէից նախապատմեցաւ, յորոց և Քս գուշակեալն է, ընդէր ապա այնչափ զօրաւոր են մեռեալքն՝ որք սակս հաւատոց յարութեն քարոզեցելոյ 'ի սուր հատան : Քանզի այն ամենայն որով օրինակաւ և լինիցին, այսմ հաւատոյ որով յաւիտենականն յարութի մարմնոյ քարոզի՝ վկայք են, եթէ Ած ինքնին առնիցէ զայնս յեղանակ հրաշալի՝ որով ժամանակէից իւրաց գոր-

ծող լինի յաւիտենական, և կամ եթէ ձեռամբ իւրոյն պաշտօնէից առնիցէ. և զոր նոքօքն առնէ, եթէ արասցէ ինչ ինչ ի ձեռն հոգւոց մարտիրոսացն, զոր օրինակ և ի ձեռն մարդոց կենցաղելոց ի մարմնի, և եթէ զամենայն ի ձեռն հրեշտակաց գործիցէ՝ որոց իշխէ յանեւթեալ անփոփոխ և անմարմնապէս. միւս զի որ ընդ ձեռն մարտիրոսացն լինել ասացեալքն՝ նոցին աղաչելովքն և ընդունելովքն լինիցին, և ոչ եթէ ի նոցանէ նեղգործեալք. և կամ եթէ այլ օրինակաւ ի սոցանէ, և այլով ի նոցանէ լինիցին. զոր մահկանացուացս միտք բերել անկար է.

ԳԼՈՒԽ Ժ

Քանիք մեծարանաց արժանաւորք են մարտիրոսք՝ որք հրաչս բազումս նեղգործեն յայն սակս, զի ՅԱՅՆ Ա՛ՀՄարիա պաշտեցան, և ոչ եթէ գիք՝ որք իբս իբս առնեն, զի յաստուած ինքեանք համարեսցին.

ԳՈՒՈՑԷ արդեօք ասիցեն յայսմ վայրի հեթանոսք, թէ նա և աստուածք իւրեանց արարին աչանչելի իրս. թողջուացուք նոցա, զի ահա սկսանին զիւրեանց աստուածս ի համեմատութիւն բերել մեռելոցն ի միջի մարդոց. կամ թէ ասիցեն եւս ունել և ինքեանց աստուածս ի մարդոց մեռելոց. զոր օրինակ Հերակլէսն, որպէս Հոմանոյն, և բազում եւս այլք զորս ի թիւ աստուածոցն վերագրեն. Ապաքէն մեզ ոչ աստուածք են մարտիրոսք. զի զմի և ըզնոյն ածծ գիտեմք մեզ և մարտիրոսաց. Այլ չէն և չեն երբեք համեմատելիք առ աբանչելիսն նեղգործեալս ի դիւս մերոց մարտիրոսաց՝ այն աբանչելիք որ ի նոցա մեհեանս իրագործին. իսկ եթէ հանդուգնաբարք ինչ երևիցին, այնպէս յաղթահարեալք ի մերոց մարտիրոսացս գըտանին աստուածք նոցա, զոր օրինակ խաղարդք Վարաւանի ի Ա՛ռվսիսք. Հրաշալեացն այնոցիկ արարողք եղեն գևք՝ այնու փքացմամբ պիղծ ամբարտաւանութեամբ բերեալք, որով աստուած նոցա կամեցան լինել. իսկ մարդ

տիրոք առնեն զայսոսիկ, կամ մանաւանդ ա՟ծ խնդրուածովք նոցա և կամ գործակցութ՟ք, որպէս զի աճեսցեն այն հաւատք՝ որով ոչ եթէ զնոսա առ աստուածս մեր ունիցիմք, այլ զմի ա՟ծ հաւատայցեմք մեզ և նոցա ։ Եւ դարձեալ, հեթանոսք իւրեանցն այնպիսի աստուածոց և տաճարս շինեցին, և սեղանս կանգնեցին, և քահանայս կարգեցին, և պատարագս նուիրեցին ։ իսկ մեք մարտիրոսաց մերոց ոչ տաճարս կառուցանեմք իբրև աստուածոց, այլ յիշատակարանս որպէս մարդոց մեռելոց, որոց հոգիք կենդանի են առ ա՟ծ ։ և անտանօր սեղանս ուղղեմք՝ ոչ զի մարտիրոսաց մատուցանիցեմք պատարագ, այլ միայնումն ա՟յ մեր և նոցա ։ և առ նովին պատարագաւ ըստ տեղւոյ և ըստ կարգի անուանակոչին նոքա իբրև մարդք ա՟յ, որ վասն խոստովանութե նորա յաղթեցին աշխարհի ։ սակայն ոչ 'ի քահանայէն որ պատարագէ՝ կարդացեալք լինին ։ քանզի ա՟յ, և ոչ եթէ նոցա պատարագէ, թէպէտ և 'ի նոցա յիշատակարանին մատուցանէ ։ զի ա՟յ քահանայ է, և ոչ նոցա ։ Իսկ պատարագ՝ ինքն մարմին Ք՟սի է, որ ոչ մատուցանի մարտիրոսաց ։ քանզի ինքեանք իսկ են մարմին ։ Այլ արդ որո՞ց հրաշագործացաց առաւել հաւատալ արժան է ։ այնոցիկ արդեօք որք աստուածանալն կամին առ որս հրաշս առնեն, թէ այնոցիկ որք սքանչելագործեն առ 'ի հաւատալ յա՟ծ, որ և Ք՟ս իսկ է ։ միթէ այնոցիկ որք կամեցան իւրեանց քարուականութեանցն առնուլ պաշտօն, եթէ այնոցիկ որք ոչ 'ի գովութիս անձանց մեծարել խնդրեն, այլ որով ճշմարտապէսն գովելին՝ զամենայն վերաբերեն 'ի փառս այնորիկ յոր գովելինն ։ Ապա ուրեմն նոցա հաւատասցուք, որք և զճշմարիտսն խօսեցան, և զհրաշակերտսն արարին ։ քանզի զճշմարիտսն ասելոյ վասն չարչարեցան, զի կարող լինիցին զհրաշալիսն գործել ։ Եւ 'ի նոյն ճշմարտութիս անդ գերագոյն է Ք՟սի 'ի մեռելոցն յառնել, և զանմահականն յարութի առաջին յիւրումն ցուցանել մարմնի, զոր խոստացաւ լինել և 'ի սկիզբն նորոյ աշխարհին, կամ 'ի վախճան այսր յաւիտենի ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Դիմադրութիւն առ պղտոռնականս՝ որք ի բնականէ ծանրութենէ տարերաց առարկաւածս բերեն, թէ մարմինք հողոյին անշնար է վերկինս։

Աստուածային այժմ պարգեւաց ոյժ հակառակաբանեն Հարտարախօսք հեթանոսաց՝ զորոց ծանեաւ տէր զխորհուրդս զի էն ընդունայն, պատճառս առեալ ի ծանրութենէ տարերաց։ Ասացի ըստ Պղատոնի վարդապետութենն ուսեալ էն, թէ երկրքին մարմինք աշխարհի մեծագոյնք և ծայրականք շարժեցեալ կասկին երկրաւ միջնոյն, օդոյ ասեմ և ջրոյ։ Այսորիկ վասն քանզի աստուստ ի վեր կոյս հողն է, ասեն, առաջին, երկրորդ ջուրն ի վերայ հողոյ, երրորդ օդ ի վերայ ջրոյ, չորրորդ երկինն ի վերայ օդոյ, անշնար է հողաղանգուած մարմնոյ լինել յերկինս։ զի անցնիւք տարր ըստ յատուկ վայրացն կրճի առ ի պահելոյ զնւրեանցն կարգաւորութենէ։ Ասեսիկ սոյնպիսի առարկուածովք մարդոյ տկարամտութենէ՝ որ ունայնաբանէն է տիրեալ ի դիմի Հարկանի աւետարանչացն։ Իսկ արդ զինչ գործ է սուտ յօդաստիչսն հողանալեն մարմնոց՝ եթէ օդ երրորդ է ի հողոյ։ գուցէ որ ընդհեացն հողածին մարմնոց հաւուց զկետրոցն թեթեւութիւն և զթեւոց առ ի պարելոյ յօդս, անկարացաւ արդեօք տալ անմահացելոց մարմնոյ մարդկան զզօրութենէ որով կարողք լինիցին ի վերին իսկ երկինս բընականալ։ այլ և նոցին երկրածին կենդանեաց՝ որոց ոչ է թռչել, զոր օրինակ և մարդկին են, պարտ էր կեալ ընդ հողով, որպէս ընդ ջրով կեան ձկունք՝ կենդանիք ջրականք, և ընդեր ասա գեթ ոչ յերկրորդ տարերն՝ ի ջրոյն կեանս հայթայթել կենդանին հողածին, այլ յերրորդն ի յօդոյ անտի։ Հողոյ գոլով վիճակեալ, զի է զի թէ հարկեսցի կեալ ընդ երկրորդ տարերքն ընդ ջրով որ վերոյ է հողոյ, անդէն և անդ հեղձնու, և յերրորդումն

անդ զօրէ կեալ. մինէ սխալեանց աստանօր տարբերացս կարդ. կամ լաւ ևս՝ ոչ յիւրացն բնութենէ պակասէ, այլ՝ի դոյզ փաստաբանութենս. Ցոյզուտ՝ի բան առնուլ զօր յերբեմնասանելորդ գիրսն ասացի, թէ քանի՞ քանիք՝ի ծանունդ մարմնոյ երկրականաց, զօր օրինակ կապար, ձեւս իմն ընկալեալք յարուեստագիտէ՝ լուծել կարեն ընդ եւ բեսս ջրոյ. իսկ ապա մարմնոյ մարդկային առնուլ հանգամանս ինչ երկնագնացիկ առ՝ի կալոյ յերկինս՝ եղէ անհնարաւոր ամենազօր Հարտարապետին.

Այլ արդ ընդդէմ ասացելոցս վերագոյն ոչ գտանիցեն ինչ պատասխանել. Հայեցեալ ևս և կալեալ զկարգ տարբերացն՝ յոր ապաստանին են. Այնպէս՝ի տարէ տասի՝ի վեր այնպէս առաջին է Հոգ, և երկրորդ՝ Ջուր, և երրորդ՝ օդ, և չորրորդ՝ երկին, զի ամենայնի դէպ վերոյ է Հոգւոյ բնութենէ: Օ՛ն և Այրիստոտել հինգերորդ մարմին զայն ասաց. և Պղատոն՝ ոչ բնաւ մարմին. եթէ հինգերորդ էր, ապաքէն այլոցն գերակայ լինէր. այլ զի ոչ բնաւ մարմին է, ևս առաւել վերոյ ամենայնի անցանէ. Ապա՝ի Հոգեղէնս մարմնումն զինչ առնէ. ի Թանձրագոյնս յայսմ զինչ գործէ բոլորից անօսրագոյնն. զինչ յայմմ ծանրանէ ազդ Թեթեւագոյնն քան զամենայն. մինէ ջուգ մարթ բան արժանաւոր վանականի բըննութեանս լինել՝ զի մարմին նորա յերկինս Թեթեւանայցէ. և ուր այժմ երկրանիւթ մարմնոյն բնութենէ զօրանայ վայրահաւել զոգիս, ոչ արդեօք կարիցեն երբեմն և հոգիք զմարմինս Հոգեղէնս՝ի վեր ամբառնալ.

Այլ՝ի աքանչելիս անդր նոցա մտաւոգեալ յիւրեանցն աստուածոց գործեցեալս, զօրս Հանդէպ արիանեն աքանչելագործութենէ մարթիրոսաց մերոց, ահա և այնք՝ի մեր պիտս լինին, մեզ՝ի գլխովին նպաստիչք. Այնպէս մեծամեծ հրաշակերտութենց աստուածոցն նոցա՝ մի և այն ոչ փոքր, զօր Ավրոմ յիշատակէ՝ վեստեանն կուսանի մահապարտ եղելոյ առ զուր կարծեաց պոռնկութենէ, ջուր առեալ մաղով՝ի Տիբեր գետոյ՝ տանել առ գատաւորս իւր, ոչ ինչ բնաւ՝ի դուրս կաթելով ջրոյն. Այլ ո՞ր՝ի մա

զի անդ արգել և կալաւ զջրոյն ծանրութ̃ի. ո՞ թոյլ ոչ ետ ընդ ծակուն բացեալս յերկիր իջանել ջրոյն: Ասիցեն ապաքէն, աստուած ոք, կամ դև ոք: Եթէ աստուած, միթէ մեծ ոք իցէ քան զա̃ծ՝ աշխարհի արարչագործող: Եթէ դև, միթէ զօրագո՞յն քան զհրեշտակ իցէ, որ ծառայէ ա̃յ, յորմէ աշխարհ եղև: Այլ արդ եթէ աստուած փոքր կամ հրեշտակ կամ դև՝ կարողացաւ 'ի վեր ունել զխոնաւուտ տարերն ծանրութ̃ի, մինչ զի այլափոխեալ ի մի̃ թուի ջուրցն բնութ̃ի, միթէ տկարանայցէ՞ ամենազօրն ա̃ծ՝ բոլորից տարերց արարչական՝ այնպէս խափանել զծանրութ̃ի 'ի հողանիւթն մարմնի, զի յայն տարր բնակեսցէ մարմինն կենդանացեալ, ուրանօր կամիցի հոգին կենդանացուցիչ:

Եւ ևս, դոքա միջին դնեն զօդս՝ վերոյ զհուր ունելով, և ներքոյ զջուր. իսկ այն զի՞ է՝ զի բազում անգամ գտանեմք զօդ ընդ մէջ ջրոյ և ջրոյ, և կամ ընդ մէջ ջրոյ և հողոյ: Զի՞նչ համարիցին զամպսն ջրալիցս, որոց ընդ մէջ և ծովու անջրպետէ օդ. Թող ասասցեն, որո՞վ ծանրութ̃ե և կարգաւ լինիցի այն՝ զի հեղեղք կարկաջահոսք և բազմածուփք մինչ չև ստորև օդոյ յերկիր խոխոջեալք, կախեալ կան վերոյ օդոց յամպս: Եւ զի՞արդ դարձեալ, միջին է օդ ընդ գագաթն երկնից և ընդ յատակ հողոյ՝ 'ի համատարած ծագս տիեզերաց, եթէ արդարեւ տեղի նմա սահմանեալ է ընդ երկին և ընդ ջուրս, որպէս և ջրոյ ընդ նա և ընդ հող:

Եւ պարզաբար, եթէ այնպէս յարմարեալ է տարերցն կարգ, զի ըստ Պղատոնի՝ երկու ծայրքն՝ հուր և հող շարակապիցեն երկուք միջնովք՝ օդով և ջրով, և հուր զբարձու երկնից զտեղին կալցի, իսկ հող՝ զխորոցն իբրև զհիման աշխարհի, և վասն այսր անմարթ իցէ լինել հողոյ յերկինս, ընդէ՞ր ապա ինքն իսկ հուր գտանի 'ի հող: Քանզի ըստ այդմիկ պատճառի պարտ էր տարերցդ երկուց՝ հողոյ և հրոյ՝ այնպէս ի մի̃ ամփոփիլ 'ի յատուկ իւրեանցն տեղիս, ոմ̃ն 'ի խոնարհ, ոմ̃ն 'ի բարձր, մինչ զի զոր օրինակ ոչ հաւանին թէ 'ի բարձու անդ լինիցի ստորնայինն,

նոյնպէս չկարիցէ 'ի ստորէ լինել բարձրագոյնն ։ Ապա ուրեմն որպէս կարծեալ գնեն թէ ոչ մի ինչ մասն հողոյ կայ և կամ լինիցի յերկինս, նոյնպէս ոչ մի ինչ հրոյ մասն պիտէր տեսանել 'ի հող ։ Սակայն ահա ոչ միայն 'ի հող, այլ ընդ հողով իսկ այնպէս բուռնեալ է հուր, զի ընդ կատարս լերանց 'ի դուրս ցայտէ ․ թող և զոր 'ի մարդկան պէտս տեսանեմք՝ լինել հրոյ 'ի հող, և 'ի հողոյ իսկ ծնանել․ իբրև զի 'ի փայտից ծնանի, այլ և 'ի քարանց, որք յայտ է թէ մարմինք են հողանիւթք ։ Բայց, ասեն, վերինն հուր՝ խաղաղիկ է, անխառն, անվնաս, յաւերժական ․ իսկ ստորինս՝ պղտոր, ծխոտ, եղծանելի և եղծիչ ։ Սակայն ոչ եղծանէ ցարդ զլերինս և զխոռոչս հողոյ՝ յորս վառի հանապազ ։ Այլ գրեսջիր, թէ այս հուր այնմ տարօրինակ է՝ իբր հողեղէն կայանիցն զինքն պատշաճելով․ Է՞ր վասն ապա չառնուն յանձն հաւատալ և մեզ, թէ հողանիւթեայ մարմնոցս բնութի՟ն լեալ երբեմն անեղծական՝ զուգայարմար երկնից եղիցի, զոր օրինակ այժմ հուր եղծանելի համակից լինի հողոյ ։ Յայտ է ապա, ոչ մի բան յառաջ բերել նոցա 'ի ծանրութէ՟ և 'ի կարգէ տարերաց, առ 'ի ցուցանելոյ թէ ամենազօրին ո՟յ չիցէ մարթ այնպիսիս առնել զմեր մարմինս՝ զի կարիցեն բնականալ յերկինս ։

ԳԼՈՒԽ ԺԲ

Առ լուտանս անհաւատից՝ որովք ծաղր առնեն զքրիստոնեայս սակս հաւատալոյ յարութե՟ մարմնոյ ։

ԱՅԼ հակառակորդք մանրախոյզ եղեալք, սովոր են զհաւատոյն որով զյառնել մարմնոյ դաւանեմք, հարցմամբ այսպիսեաւ 'ի ծաղր հատանել ։ Միթէ, ասեն, սաղմք վիժեալք յառնիցե՞ն և նոքա ․ և զի տէրն ասէ, “ Ամէն ասեմ ձեզ, մազ մի 'ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ ”, միթէ հասակ և ոյժ հաւասա՞ր լինիցի ամենեցուն, և կամ այլ և այլ

մարմնոյն քանակը։ Այլեւ հաւասարութիւնն պահեսցի մարմնոց, ուստի ունիցին որ յառաջն պակասէր՝ի զանգուածի մարմնոյն վիժածքն ամօթիկ , եթէ արդարեւ յառնեն և նոքա։ Կամ եթէ յառնեն ոչ նոքա, իբրեւ զի չեն ծնողք՝ այլ արտաքոյ օրէնից, զնոյն հարցուած չղջէն՝ի վերայ տը զայոց, ո՛ստ ուստեք ընուցու նոցա չափ մարմնոյն՝ որ պա կասի նոցա՝ի մեռանելն տղայական հասակաւ ։ Վասնզի չունիմք ասել թէ տղայք ոչ յառնիցեն, որք ոչ ծնանեան լոկ, այլ վերստին ծնանեան ևս ընդունայնք են։ Հարցա նեն և ևս. որ տարագ լինիցի հաւասարութիւնն այնմիկ. զի եթէ այնչափ վիճախրիք լինիցին աւելնեքեան, որչափ լեալ են յառաջն ոմանք ոմանք վիճախրիք, այնու հետեւ ոչ զղայոց ևեթ՝ այլ զբազմագունից ևս հարցաբանեն, ուս տի մատակարարեսցի նոցա՝ որ այժմ պակասի , եթէ արդարեւ զայն ինչ առնուցու իւրաքանչիւր, զոր ասասանօր ունէր ։ Այսպա եթէ զասել առաքելոյն , Տասանել աւետե ցան մեզ՝ի չափ հասակի կատարմանն Քրիստի, և զմիւսն դարձեալ՝՝ Օ՜ որս յառաջագոյն և հրաւիրեաց կերպարա նակից լինել պատկերի որդւոյ իւրոյ՝՝, այնպէս իցէ իմա նալ, թէ հասակ և տարագ մարմնոյն Քրիստի լինելոց է յա ւիտեան մարգոյն մարմնոյ՝ եղելոց յարքայութիւն նոցա ՝ ուրեմն, ասեն, բազմաց՝ի բաց հատանիցի՝ի ւիւծուածէ մարմնոյն և յերկայնութիւնէն . և զինչ լինիցի այնու հետեւ քանն ,՝՝Այլ ասի՝ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ՝՝, եթէ յօրինա գոյն մասն՝ի քանակէ իսկ մարմնոյն կորնչիցի ։ Այսպէս և վասն հերաց անգամ մարթի ինդրել, մինչ տալցի ան դրէն որ ինչ գերծմամբ՝ի բաց անկաւ. եթէ անդրէն վե րաբուսցին, ո՛չ զարհուրեսցի՝ի խոժոռատեսութէն ։ Այլոյն և վ՛ր եղեգացն ասացի Տարկաւ , զի տալցի դարձեալ բա զում ինչ որ առ՝ի գարման մարմնոյ կարեցաւ՝ի բաց ։ Այս ուրիցէ այնու հետեւ գեղեցկութէն, որում արժան է չքնաղ և ևս լինել յանմահութէն անդ, քան յապականացու յայսմ վիճակի ։ Իսկ եթէ ոչ տալցին անդրէն , կորիցեն ուրեմն . ապա զիարդ ասեն՝ մազ գլխոյ ոչ կորիցէ ։ Այմանօրինակ Տարցաբանեն և յաղագս մարմնոյ նիհարութէն կամ գիրու

ԹԵ. զի եթէ ամենեքին զուգաչափք էցեն, յայտ է ԹԵ ոչ ոմանք նիհարք լինիցին, և ոմանք գեղք. ուրեմն ասպա՝ ոմանց յաւելանայ ինչ, և այլոց նուազի. և այսպէս ոչ ԹԵ զոր էրն՝ ինայ առնուլ այլ ուրեք յաւելուլ զնէրն, և ուրեք կորնչել որ էրն։

Ա՛յլև մեծապէս խրտչին հակառակորդք ընդ եղծմունս և ընդ քակտմունս մարմնոյն մեռեալոյց. երբեմն զի ոմն ՚ի հողւոյ ածանի, և ոմն յօդս ցնդի. են որ գազանաց, են որ հրոյ ձարակ լինին. ՚ի նաւաբեկութենէ և յայլ արկածս ջուրց այնպէս իմն անհետանան ոմանք, մինչև ՚ի փառն լուծեալ ժողովել մարմնոյ նոցա։ Այլ ահա այսմ ամենայնի անդրէն ՚ի մարմին, և զամբողջանալ զգենուլ անհատանան նոքա։ Յառաջ բերէն և զփախեղծութիւնս ինչ և զաբատա՝ եկամուտս և կամ բնածինս. այլ և զայլանդակ ծնունդս յաւշ ածէն զարհուրմամբ իմն և ծաղրաբանութ, և հարցաբանեալ առնն. իւրաքանչիւր այսց ոգեղութենէ յարութենէ որպէս լինիցի։ Այ՛ԹԵ ասիցեմք, ոչ ինչ յայնպիսեաց գոնեայ ՚ի մարմին մարդոյ, ունայնացուցանել կարծեն զայս զմեր պատասխանի՝ վիրօքն որով զՔՆ զնոր քարոզեմք յարուցեալ Ա՛յայց իբրու բան զանենայն ինդիր դժուարալոյծ՝ զայս գնեն առաջի. յոյր մարմին ասպաքէն դառնայցէ միան, որով այլոց կերոցն մարմին մնանիցի՝ ՚ի ստիպել սովոյ զմարդ. քանզի փոխարկեցաւ ՚ի մարմին մարդոյն՝ որ այնպիսեաք կերակրեցաւ, և զառ ՚ի նիհարութենէն առեալ վճասն նորոգեաց։ Ա՛յդ ապա այնմ մարդոյ զոյ ասացի՝ որում նախն էր մարմին, ԹԵ այնմ որում յետոյն եղև։ Ա՛յսպէս հարցափորձէն՝ ընդ ծաղր բերելով զՀաւատս յարութենէ. որպէս զի կամ ըստ Պղատոնի՝ խոստանայցէն հոգւոյ մարդկայնոյ փոխ ընդ փոխ զատոյգ Թշուառութենս և զսուտ երջանկութենս. և կամ ըստ Պորփիւրի՝ յետ շուրջ յածելոյ նորա ընդ պէսպէս մարմինս, վախճան երբեմն լինիցի Թշուառութենց նորա, ոչ և այլ զնոյնս կրել, ոչ եթէ մարմին առնաւոյլ անմահացու, այլ բնաւ յամենայն մարմնոյ փախչելով։

ԳԼՈՒԽ ԺԳ

Միթէ վիժածք չունիցի՞ն յառնել, եթէ մեռան զմահ մարդոյ։

ԻՑԵՒ արդ առ այսոսիկ՝ զոր 'ի հակառակս խորհողացն բերանոյ ես ինքնին յարմարեցի՝ իբր առ իս դիմադրութի, ապարից պատասխանի՝ այ ողորմութեն ձեռնտուէ յիմ ջանս ։ Յաղագս վիժածացն՝ որք անձնաւորեալք յարգանդի՝ անտանօր և մեռան, թէ արդեօք յառնիցեն՝ ոչ հաստատել իշխեմ, և ոչ մերժել. թէպէտ և չտեսանեմ պատճառ՝ հիմ անմասն լինիցին յարութե մեռելոց, եթէ չեն արտաքոյ մեռելոցն համարոյ։ Վասն զի կամ ոչ ամենայն մեռեալք յարիցեն, և հոգիք ոմանք մարդկայինք կայցեն յաւիտեան ոլիչք 'ի մարմնոյն մարդկային՝ զոր յարգանդի մարցն կրեցին. և կամ եթէ ամենայնքն հոգիք մարդկեղէն առնուցուն զմարմինսն յարուցեալս՝ ընդ որս եղեն կենդանեօք, և մահուամբ թողին, չգտանեմ արդարեւ պատճառ՝ արտաքոյ մեռելոցն յարութե թուել և զայնոսիկ՝ որ մինչդեռ յարգանդի մարցն առին վախճան ։ Սակայն զոր կարծիս և խորհեցի ոք զայնցանէ, որ զինչ ասելոցն եմք յաղագս դեռածին տղայոց, նոյն իմասցի և 'ի վերայ վիժածաց՝ եթէ յառնիցեն ։

ԳԼՈՒԽ ԺԳ

Միթէ յառնիցե՞ն տղայք յայն լրութեն մարմնոյ՝ զոր ունելոց էին 'ի զարգանալ հասակի ։

ԻՍԿ զի՞նչ յաղագս տղայոցն ասել կայցէ մեզ, բայց զի ոչ են յառնելոց յայնմ փոքրութե մարմնոյ յորում մեռանն, այլ զոր 'ի յառաջել ժամանակին աճեցումն՝ զայն ընդու-

նեալոց են ըստ այ սքանչելի և ամենչատաւ ազգեցութեն ։ Վասնզի յասացուածի տեառն “ Այ ազ մի՛ ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ ,, գոյ խմանալ թէ ոչ պակասիցի այն որ եղև , այլ ոչ արգելու զլինել այնմ որ պակասեաց ։ Իսկ տղայոյ մեռելոյ պակասեաց կատարեալ չափ մարմնոյ իւրոյ ։ զի պակասէ նմա լրումն մեծութե իրանացն , որոյ յաձինն ոչ ևս երկայնել միայ հասակի նորա ։ Այս եղանակ կատարելութե անպակս ունին ամենեքեան , մինչ զի նուիմբ իսկ յղանան և ծնանին ։ բայց ունին սահմ ըստ զօրութեն՝ և ոչ զանգուածով ։ զոր օրինակ և անդամք բոլոր կան ծածկապակս ի սերման անդ , ուր զի և ծնելոց իսկ պակասին ինչ ինչ , ոմն ատամունք , և եթէ այլ այսպիսի ։ Այս այսմ մարմնական զօրութե՝ որ բնաւորեալն է ի նիւթ իւրաքանչիւր , գծագրեալ ինն գոգթս տեառնի որ չև ևս է , կամ թաքուն կայ , այլ ըստ յառաջել ժամանակին լինելոյն այն , մանաւանդ թէ յերևան գայցէ ։ Այլա ուրեմն սուիմբ այսու տղայն արգեամբք իսկ կարճ է կամ երկայն , իբրև զի լինելոց է կարճ կամ երկայն հասակաւ ։ Այլ ըստ այսմ զօրութե ոչ երկնիմբ ապաքէն ի թերութե մարմնոյ առ մեռելոյն յարութե ։ վասն զի թէ և ամենեսեան լինելոյ հաւասարութե , մինչև բոլորիցն հասանել ի սակայաձեն մեծութիւն , զի մի այլքն մեծամասութիւնք նուաղագոյք ինայնի՛ հասակ իւրեանց , կորուսանելով ինչ հակառակ ։ Այնի առասացութեանն՝ ոչ կորնչել մազոյ միոյ գլխոյն , մինե ստեղծչին որ զամենայն ի չգոյից արար , պակասեր ինչ առ ի յաւելոյ զոր ի դէպն տեսանէր արուեստագէտ զարմանագործ ։

ԳԻ ԱՍԻՒՍ ԱՒՏ

Մինե ի չափ տերունեան մարմնոյն յառնիցեն հասցէն մեռելոց մարմինք ։

Այլ արդ Այն յայսմ չափու մարմնոյն՝ յոր մեռաւն , նոյնպէս և յարեաւ ։ և ոչ օրէն է ասել , թէ ի հասանել

ժամանակի համօրէն յարութեան՝ առ 'ի հաւասարելոյ երկայնագունիցն յաւելուցու 'ի մարմին փրկչին մեծութի զոր ոչն ունէր, յորժամ 'ի ծանուցելումն մեծութե երևեցաւ աշակերտացն։ Եւ եթէ ասիցեմք, 'ի չափ տէրունական մարմնոյն զուգաքերիլ և այլոյն մեծաչափ մարմնոց, բազում ինչ կորնչիցի այնուհետև 'ի յոլովից մարմնոց, ուր ինքն հաւաստեաց՝ և մազին ոչ կորնչել։ Ապա ուրեմն մնայ ասել, թէ ընկալցի իւրաքանչիւր ոք զիւրն չափ, զոր կամ յերիտասարդութեան կալաւ՝ թէ և 'ի ծերութե վախճանեալ, և կամ զոր ունելոցն էր՝ եթէ վաղ չէր մեռեալ։ Վասն որոյ զառաքելոյն յիշատակեալն յաղագս չափոյ հասակի կատարմանն Քի՝ կամ իմասցուք յայլ միտս ասացեալ, այս է՝ զի անձամբ կատարելութե նմ անդամոցնա րա 'ի քրիստոնեայ ժողովուրդս՝ նմին իսկ գլխոյ չափ հասակին կատարեսցի. և կամ եթէ զմարմնոց յարուէ ասացաւ, իմանայցեմք այսպէս, թէ ոչ առաւել և ոչ նուազ քան զերիտասարդականն ատեխ յարիցեն մարմինք մեռելոց. այլ 'ի հասակն և յառուգութիւն՝ յոր գիտեմք ժամանեալ զՔս. քանզի և աշխարհի գիտունք զերեսնամենիւք բաժանեցին զերիտասարդութին. և յորժամ այս յեզր իւրումն միջոցի ժամանէ, սկսանի այնուհետև մարդ մտանել 'ի տառապանս ծանրացելոյ հասակին ծերունեան։ Վասն այսորիկ ոչ ասացաւ 'ի բանիս, 'ի չափ մարմնոյ, կամ 'ի չափ իրանաց, այլ 'ի չափ հասակի կատարմանն Քի։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Որպիսի է իմանալ զկերպարանակցութիւն սրբոց 'ի պատկեր որդւոյն այ։

ԱՅԼ և զոր ասէն. Հռ. Է. 29. զյառաջագոյն հրաւիրեալսն լինել կերպարանակիցս պատկերի որդւոյն այ, մարթ է իմանալ ըստ ներքին մարդոյն. ըստ որում ասէ մեզ դարձեալ. Հռ. ԺԲ. 2. «Մի՛ կերպարանիք կերպա-

բանօք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք 'ի նորոգութիւն մտաց ձերոց»: Նոյն որով նորոգիմքն՝ առ 'ի չկերպարանելոյ աշխարհիս, նովիմբ կերպարանակից որդւոյն Այ լինիմք: Կայ և այսպէս առնուլ. զի զոր օրինակ նա մահկանացութ̃ եղև մեզ պատկերակից, մեք անմահութ̃ն լցեմք նմին համատիպք. որ և այս 'ի մարմնոյն յարութ̃ի ունի զակնարկութիւն: Իսկ եթէ յայսոսիկ բանս ևս զեկուցութիւն համարեսցիմք լինել յաղագս կերպարանի յարուցելոց մարմնոյ, որպէս վերագոյն՝ չափն հասակի, նոյնպէս առ կերպարանակցութ̃ի ոչ ըստ քանակին իմանալի է, այլ ըստ տիոց հասակի: Ուստի ամենեքին յարիցեն յայն մեծութ̃ի մարմնոյ՝ զոր ստացան, կամ ունելոց էին յերիտասարդական հասակի. Թէպէտ և չկայ ինչ արգել՝ եթէ մարմնոյն ձև լինիցի ևս տղայահասակ կամ ծերունի, միայն զի մի ախտայացի ոչ մտաց և ոչ մարմնոյ ինչ տկարութ̃ի. նմին իրի եթէ ընդեալ համարիցի ոք՝ յայն տարազ մարմնոյ յառնել իւրաքանչիւրում՝ յոր վախճանեցաւն, ընդ այնպիսութիւն ոչ արժան է 'ի պայքար հակառակութ̃ մտանել:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Արդեօք իգայն մարմինք յարիցեն յիւրեանց ազգի և 'ի չափու:

ՈՄԱՆՔ 'ի պատճառս ասացուածին, «Մինչև հասցուք ամենեքեան յայր կատարեալ, 'ի չափ հասակի կատարմանն Քի», և թէ «Կերպարանակից լինել պատկերի որդւոյն Այ», ոչ հաւատան զկանանցն յարութ̃ի լինել 'ի կնոջական ազգի, այլ ամենեցուն՝ առնապէս. քանզի ասեն՝ զայրն միայն արար Ած 'ի հողոյ, և զկին յառնէ: Սակայն քաջախորհուրդ ևս ինձ դատել են այնոքիկ՝ որք աներկմտաբար ընդունին զյառնել երկաքանչիւր ազգի. զի ոչ կայցէ անդանօր հեշտախտութ̃ի, որ ամօթոյ է

պատճառ։ Վ՚ոչ զի մինչ չև մեզանիցեալք, մերկանդամ էինն այլ և կինն, և ամաչել ոչ էր նոցա. ուստի ի մարմնոյ անտի ախտաւորութենէն ի բաց հատանիցին, և պահեսցի բնութենէն. և ոչ ախտ ինչ է ազգն իգական, այլ բնութենի. որ թէպէտ և անկարգիւ լինիցի յարմատ ի խառնից և ի ծնունդս ազգածնութենէ, բայց կացցէն անդամքն կանացի. ոչ ի պէտս առաջինոյ պատշաճեալք, այլ ի նորոգ վայելչութի. որով ոչ եթէ հայեցողին զրգռեսցի ցանկութեն, որ չէ իակ բնաւ, այլ ոչ իմաստութենէն գովաբանեսցի և բարեգործութեն, որ զչէն արար, և յապականութենէ ապրեցոյց զոր արարն։ Վ՚անգիւ ի նախնեացն մարգկան ազգի՝ կուշիւն առեցեալ ի կողայ թմբրելոյ առնն կազմիլ կնոջն՝ զՎ՚յս և զկէզեցի այսպիսեաւ արարուածով ունէր անդրստին նահապետ։ զի թմբրութենէ առնն էր մահ Վ՚յոի. որոյ յանչնչութենէն ի խաչին բացաւ կողն տիգաւ, յորմէ արիւն բղխեաց և ջուր՝ յայտարարք խորհրդոյն ողջոյ չինի եկեղեցի. քանզի սոքին իակ բանիւ վարեցաւ գիրն, ոչ ասելով կազմեաց կամ ձևացոյց, այլ թէ չինեաց գնա՚ի կին. ուստի և առաքեալ չինած մարմնոյն Վ՚յոի ասէ, որ է եկեղեցի, Վ՚այս ուրեմն՝ այ արարած է կինն, որպէս այրն. բայց յառնէ լինելովն միակամութենէն նշանակեցաւ. իսկ ի կողէ լինելով Վ՚յո և եկեղեցի օրինակեցաւ ըստ ասացելումն։ Վ՚այս որ զերկաբանչիւր ազգ նորակերտեաց, զերկաբանչիւր և նորոգեսցէ։ Այս դարձեալ, նա ինքն Վ՚յս հարցեալ ի սադուկեցւոց անտի՝ որք ուրացողք էին յարութե, այր յերգարայն եօթանց եղիցի կինն՝ միոյ միոյ նոցա ամուսնացեալ, որոց և փոյթ էր ըստ օրինացն հրամայելոյ յարուցանել զգաւակ եղբօրն մեռելոյ, Վ՚ոլորեալք, ասէ, ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութենէն այ.։ Այս ուր դեպն տայր ասել, զումիէ կինոջէ հարցանէր, ոչ գոլով անդ կին՝ այլ այր, չասաց այդպէս, այլ ասէ. Օ ի՛ ի յարութեն ոչ կանայս առնեն, և ոչ արանց լինին, այլ են իբրև զհրեշտակս յերկինս։ Օ ուգահաւասարս արդարեւ հրեշտակաց անմահութե և երջանկութե, և ոչ մարմնով, որպէս և ոչ յարութե, որում անկարօրք են

հրեշտակք · զի մեռանել անմարթ էր նոցա ։ Ա՛ստն որոյ
զամուսնութեան նէին ՚ի բաց տանի տէրն ՚ի յարութե՛ն ,
և ոչ գիանայս · և զայս յայտնի վայրկ՚ն՝ ուրանօր շարժիւր
աշխարհի ինդիր, որոց լուծումն կարի հեշտաւ էր՝ արտաքս
հանելով զնեան իգական նէն եղ արդարեւ յատաջածանօթ
էր չլինել այլ այնմ սեռի · մանաւանդ հաստատուած իսկ
լինել, ասելով ոչ կանայս առնել, և ոչ արանց լինել ՚ի չար
ուրեմն լինիցին այնք՝ որոց է առն լինել կամ կին առնել
քայց անառնօր գայդ ոչ առնիցեն ։

ԳԻ ԼՈՒԿԱՍ ԺԻ.

Բազագս առն կատարելոյ՝ որ է Քս, և վասն մարմնոյ նորա՝ խնամակալելոյ՝
որ է նորա ըստմն ։

Լ՚ՅԻ, արդ ՚ի բանի անդ առաքելոյն, "Ա՛ՐԺանի հասցուք
ամենեքեան յայր կատարեալ՝, նկատել արժան է զամ-
բողջ ընթերցուածն՝ որ ունի այսպէս · Լ՚ԺԵ · Բ · 10 ·
"Ա՛ր էջն՝ նոյն է, և որ եկն ՚ի վերոյ քան զամենայն երկինս,
զի լցցէ զամենայն ։ Լ՚ւ նա ետ զոմանս առաքեալս , զո-
մանս մարգարէս , զոմանս աւետարանիչս , զոմանս հովիւս
և վարդապետս, ՚ի հաստատուելն սրբոց, ՚ի գործ պաշտօ-
ման , ՚ի շինուած մարմնոյն Քրիստոսի , մինչև հասցուք ամե-
նեքեան ՚ի մի միաբանութե՛ն հաւատոց և գիտութե՛ն որ-
դւոյն ՚ի՛ , յայր կատարեալ ՚ի չափ հասակի կատարմանն
Քրիստոսի ։ Զի մի այսմ հետէ իցեմք տղայք խռովեալք և
տատանեալք յամենայն հողմոյ վարդապետուե՛ , խաբե-
լութե՛ մարդկան , խորամանկութե՛ ՚ի խաբէութե՛ մոլորու-
թե՛ · այլ ճշմարտեալք սիրով, աճեցուսցուք ՚ի նա զամե-
նայն, որ է գլուխ Քրիստոս · ուստի ամենայն մարմինն յօգեալ
և պատշաճեալ ամենայն խաղալեօք տարաբերութե՛ , ըստ
ազդեցութե՛ չափով ըստ իւրաքանչիւր մասին , զաճումն
մարմնոյ գործէ ՚ի շինած անձին իւրոյ սիրով՝՝ ։ Ի հաւա-

սիկ այրն կատարեալ, գլուխ և մարմին՝ բաղկացեալ յա-
ռենայն անդամոց, ոլք լցեին՝ի ժամանակի իւրեանց. և օր
ըստ օրէ յաւելուն յայն մարմին՝ յորժամ շինի եկեղեցի,
առ ոլ և ասի. “Ա՛յլդուք մարմին Քրիստոսի էք և անդամք”.
և այլուր. “Ա՛ստն մարմնոյ նորա, որ է եկեղեցի”.
և դարձեալ այլուր. “Ո՛ւ հայ, մի մարմին եմք բա-
զումք”: և յաղագս շինուելոյ այսր մարմնոյ ասացաւ
և աստ. “Ի հաստատուելոյ սրբոց, ՚ի գործ պաշտաման,
՚ի շինուած մարմնոյն Քրիստոսի”. որում զհետ բերէ զորմէ
այժմ խօսիմք. “Մինչև հասցուք ամենեքեան ՚ի մի
միաբանուելոյ” այլովքն հանդերձ. և առ ՚ի ցուցանելոյ
թէ չափ հասակին զորմէ մարմնոյ լցէ լմանալն, ասէ. “Ո-
չեցուսցուք ՚ի նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս, ուստի ամե-
նայն մարմինն յօդեալ և պատշաճեալ ամենայն խաղալեօք
տարաբերութեանէ ըստ ազդեցուէ չափով ըստ իւրաքանչիւր
մասին”: Ա՛պա զոր օրինակ գոյ չափ իւրաքանչիւր մա-
սին, նոյնպէս մարմնոյ ողջոյն՝ որ յամենայն իւրոցն մասանց
բաղկանայ, գոյ չափ կատարմանն, զորմէ ասացաւ. “Ի
չափ հասակի կատարմանն Քրիստոսի”: Եւ զայս կատարուածն
յայլուս վայրս և աս յիշատակեաց. Ա՛ե՛ս. ՚ա. 24. ասելով
վասն Քրիստոսի. “Եւ զնա եդ գլուխ ՚ի վերայ ամենայն էրկի
եկեղեցւոյ. որ է մարմին նորա, լրումն որ զամենայն
յամենայնի ընու”: Ասայց արդ եթէ զբանս զայս առ չափ
յարութեանէ յարմարել կամիմք՝ յորում լինիցի իւրաքան-
չիւրօք, զի՞նչ արգելոյր յանուն արուին իմանալ և զէգն,
այր փոխանակ մարդոյ առեալ. ըստ որում և յաստուածն
ասէմուսին. “Երանեալ է այր որ երկնչի ՚ի տեառնէ”,
իմանին և կանայք որ երկնչին ՚ի տեառնէ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Ամենայն արատք մարմնոյ՝ մարդկայնումն գեղոյ հակառակք 'ի կեանս յայս՝ ոչ բնաւ լինիցին 'ի յարութեան • յորում պահելով բնաւորական գոյացութեան, մարմնոյն որակ և քանակ ըստ վայելչութեան պատշաճեսցին ։

Արդ զի՞նչ այլ ևս յաղագս հերաց և եղնգանց ունիցիմ պատասխանել • որովհետև իմացեալ միանգամ թէ այնպէս չկորնչիցի ինչ 'ի մարմնի անդ, զի և ոչ անվայելուչ ինչ գտանիցի 'ի նմա, ինքնին նովիմբ իմանի ևս՝ թէ այն իրք որք անվայելուչ առաւելութի իմն գործիցեն, խառնիցին 'ի զանգուած անդր մարմնոյն, և ոչ 'ի տեղիսն՝ ուր խանգարի տարազ անդամոցն ։ Օրինակ իմն, անօթ կազմեալ 'ի կաւոյ՝ եթէ անդրէն 'ի նոյն կաւ լուծանիցի, և միւսանգամ նորագործեսցի ամբողջաբար, ոչ հարկ է թէ մասն կաւոյն՝ որ 'ի կանթն էր, անդրէն 'ի կանթ ձևանայցէ • և որ յատակն էր, նոյն դարձեալ յատակ լինիցի, միայն թէ բոլորն վերանորոգեսցի ողջոյն • այս է՝ զի կաւն համակ նորոգեսցի յանօթն ողջոյն, ոչ միոյ մասինն կորնչելով ։ Սորին վասն եթէ հերք խուզեալք բազում անգամ, և եղնգունք կտրեալք անվայելչաբար զետեղին յիւրեանց տեղիս, ոչ ևս դառնայցեն այնոքիկ, բայց և ոչ կորնչին իւրաքանչիւր յարուցելոում • այլ 'ի միս փոխարկեսցին նիւթոյն այլայլութբ, կալեալ իւրաքանչիւր տեղի՝ ըստ պատշաճից մասանց մարմնոյն ։ Ի վերայ այսր՝ զասացեալն տեառն "Մազ մի 'ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ", 'ի դէպ ևս է ոչ զերկայնութէ, այլ զթուոյ հերաց իմանալ • ուստի և այլուր ասէ • "Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է" ։ Զայս ոչ յայն սակս ասեմ, իբր կարծել ինձ թէ կորնչիցի անցնիւր մարմնոյ ինչ մի որ 'ի նմայն բնաւորեալ, այլ թէ որ տխեղծն ծնեալ էր, որ և այս ապաքէն 'ի ցոյցս լիցի առեալ՝ քանի եղկական իցէ մահկանացուացս պայման, այնպէս դառ–

նայցէ՝ զի ամբողջ պահելով գոյացութեան, տգեղութիւն ևեթ կորիցէ։ Քանզի եթէ մարդ արուեստագէտ կարող է հալել զարձան մի անվայելուչ յիւրմէ գործեալ ըստ իրիք պատճառի, և առնել զայն 'ի վայելչութիւն, ոչ ինչ 'ի գոյացութենէն կորնչելով այլ միայն տգեղութեանն 'ի բաց բարձմամբ, և եթէ յառաջնումն կերպարանի կայր ինչ անդէպ, չպատշաճող մասանցն բարեյարմարութեան, ոչ եթէ 'ի բաց կտրել 'ի բոլորէն՝ զոր արարն, և զատանել խորհիցի, այլ այնպէս յերիւրել և խառնել ընդ բոլոր անդր, զի ոչ զազրութիւն առնիցէ, և ոչ զքանակն պակասեցուցանիցէ, զի՞նչ արդ, զի՞նչ յաղագս ամենազօր ճարտարապետին խորհել իցէ արժան։ Մի՛թէ ոչ արդեօք կարող իցէ նա՝ զայլանդակութիւնս զամենայն մարդկային մարմնոյ՝ ոչ զսովորականսն ևեթ, այլ և զանսովորս և զճիւաղատեսիլս՝ որք թշուառացեալ կենացս անկ են, այլ մերժեալք գլխովին 'ի սորայն յապառնի երջանկութենէ, այնպէս իմն բառնալ և անհետ առնել, զի թէ և բնաւորական մասունք մարմնեղէն գոյացութեան գործիցեն զայնս ըստ ոչ վայելչականին, բառնայցին առանց նուազելոյ իւիք գոյացութեան։

Այորինակ աղագաւ մի որ վտիտքն են և կամ սոնք մարմնով՝ հոգասցին թէ գուցէ և աննմանօր այնպիսիք լինիցին, որպիսիս աստանօր լինել չկամէին՝ եթէ 'ի ձեռս էր նոցա։ Քանզի առ հասարակ մարմնոյ գեղեցկութիւն է քաջադիպութիւն մասանցն՝ հանդերձ վայելչութեամբ իւիք երանգոյն։ Իսկ ուրանօր քաջադիպութիւն մասանցն պակասի, պատճառք անյարմարութեան կամ յոռութիւն ինչ է, կամ պակասորդ ինչ, և կամ աւելազանց. նմին իրի տգեղութիւն և ոչ մի լինիցի ըստ անհամեմատութեան մասանցն, եթէ որ յոռիքն են՝ ուղղեսցին, և որ պակաս քան զպիտոյն՝ լնուցու ուստի արարիչն գիտէ. և որ աւելի քան զդէպն՝ հատանիցի, պահելով ամբողջութեան նիւթոյն։ Այլ երանգոյն վայելչութիւն քանի՞ ապաքէն եղիցի, յորժամ արդարք ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան հօր իւրեանց։ Պայծառութիւն այնպիսի 'ի մարմին Քրիստոսի յորժամ յարեաւն,

ծածկեցաւ յաչաց աշակերտաց, քան Թէ պակասեալ կարծիցէ ոք. զի ոչ տանեալ այնմ տակաւ Հայեցողութեանն մարդկային, ուր պարտ էր իւրոցն այնպէս ակն կառուցանել ի նա՝ զի ծանուցեալ լիցի. և ի դոյն խորհուրդ զսպիս վերացս իւրոց ցուցանէր ի չօշափել, առնոյր և կերակուր և ըմպելի՝ ոչ առ ի պէտս դարմանոց, այլ ըստ իւրում իշխանութեան։ Չորժամ մնատկայ ինչ չտեսանի այնոցիկ՝ որոց այլք իրք մնատուրք տեսեալ լինին, զոր օրինակ ըզպայծառութենէ Ա՛նի ասեմք ոչ երևեալ այնոցիկ, որք այլոց իրաց նշմարողք էին, այս ի յոյնն առաւել անտեսանի կոչի, իբրև Թէ շլացութենէ. զոր ի ծննդոց գիրս կուրծԹէ ասացին Թարգմանիչք. քանզի այսու ախտացան առդմայեցիք յորժամ զդուրս խնդրելին զառնն արդարոյ, և ոչ գտանել կարելին. այլ եԹէ առոյգ կուրծԹէ լեալ էր, որ զանտեսութենէ ամենայնի ի նեղքս բերէ, ոչ եԹէ զդուռն ընդ որ մտանիցեն՝ խնդրելին, այլ առաջնորդս Հանապազորհի գնալ մեհենիլ ի բաց։

Ա՛յլ երեմի գիտէր մարտիրոսացն երջանկաց սիրելութենէ իղձս իմն ի մեզ զարԹուցանել՝ տեսանել ի մարմինս նոցա փառաւորեալս յարքայութենէ գինացուածս վերացս, զոր յանուն Ա՛նի վերաւորեցան. և Թերևս արդեօք տեսանիցեմք իսկ։ Ո՛չ ոչ եԹէ անարգուն լինիցի նոցա, այլ չքեղութենէ, և գեղ իմն ոչ մարմնոյ, այլ առաքինութենէ բացատրելոցն ի մարմնի նոցա. սակայն եԹէ մարտիրոսաց անդամք ոմանք Հատան և ի բաց ընկեցան, ոչ եԹէ առանց այնոցիկ երևեալոցն ի յարութենէ մեռելոց. որոց ասացաւ իսկ՝ չկորնչել Հերոյ գլխոյն։ Ա՛յլ ըստ ոգւոյն վայել է այնմ նորոյ աշխարհի, նշանակք պանծալի վերացս երևութացեալքն յանմահացու մարմնի անդ, յայնմ տեղւոջ ուր անդամքն Հարան կամ կոտեցան՝ անտանօք երևելով սպեացն՝ նոքիմբք անդամոք Հանդերձ անսպասկաս։ Ա՛յն այսորիկ Թէպէտ և արատք ամենայն եկատմուտք ի մարմին՝ ի բաց չլինիցին յայժմ, բայց ոչ արատս Համարել կամ կոչել արժան է զնշանակս առաքինութենէն։

ԳԼՈՒԽ Ի

Ի յարուԹԵ մեռելոց անԹերի հաւաքեսցին ամենայն ուսաւեք բոլն մարմինք ողջոյն՝ ցրեալք որ և ի օրինակաւ :

Ա.ՐԴՔաւ ՚ի մէնջ կարծել, Թէ արարչին ամենակարն ջօրուԹԵ առ ՚ի կանգնելոյ զմարմինս կենագործուԹԵՔ՝ տկարանայցէ վերակոչել զամենայն՝ զոր գազանք ծախեցին և կամ հուր, կամ զմանրեաքն ՚ի փոշի և ՚ի մոխիր, կամ զփտեաքն ՚ի ջուր, կամ զցնդեաքն յօդս : ( )ն անդր քաւ լիցի, Թէ խորհինչ կամ ծածկոյԹ բնուԹԵ այնպէս իմն գողանայցէ ինչ ՚ի մերոց զգայուԹԵց, մինչև յամենեցունց իսկ արարչագործին ՚ի գիտուԹԷ ծածկեսցի, և կամ ընդ իշխանուԹԵնն արտաքս վազեսցէ : Ա.պաքէն կամեցեալ Աիկերոնի քաջակորով մատենագրի հեԹանոսաց՝ սահմանել ըստ խրտուճն կարի զինչ էցէ ՅԾ, ասէ . ՚է Տ-ա-կ-ղ . ՟. “ Ինչ է արձակ և ազատական մեկուսի յամենայն ՚ի մարմնական ԹանձրուԹէ, ամենայնի գիտակ և շարժիչ, և ինքն տիրապէս մշտաշարժ ,, : Ո.յդ ընԹերցեալ ուսաւ նա ՚ի վարդապետուԹենս ականաւոր իմաստասիրաց . և ահա զնոցին իսկ առեալ իմ բարբառ՝ ասացից զինչ յամենապիտէն ծածկիլ կարէցէ, կամ զինչ ՚ի համայնից շարժողէն խուսել անդարձաբար :

Ամէնքն ապա ՚ի լուծուն առցի և խնդիրն՝ զժուարագոյծ քան զայլսն Թուեցեալ . երբ լինի հարցանել, մարմին մարդոյ մեռեալ լեալ մարմին այլոյ կենդանւոյ՝ ճամուռք ՚ի նոցանէ տացի ՚ի յարուԹԵ : Ա.նդր նքողեալուԹԵ և հարկեալ ՚ի քաղցէ, եԹէ շաղղակեր մարդկան դէպ լինիցի, զոր օրինակ այսպիսեաւմ աղետից պատահել երբէք ուրեք՝ և նախնականն պատմուԹԵ վկայէ, և ժամանակաց մերոց փորձք աղխաղրեմ ուսուցին, Թէ պնդէցէ ոք երաւացի բանիւ՝ բովանդակ կերածն անյանել Թափիլ ընդ երբանն որովայնի, և ոչ մասին երիք

փոխարկեալ յարել 'ի մարմին կերողին , ուր յառաջան-
ցեալն նիհարութի՝ որ էր և բարձաւ , լիով յայտ առնէ՝
որո՛ց փնասուց եղև լրումն 'ի կերակրոց անտի ։ Իսկ արդ
փոքր ինչ յառաջ ասացելովքն 'ի դէպ է և զայս կնճիռն
լուծանել ։ Զի զոր միանգամ 'ի մարմնոյն ծախեաց քաղ-
ցըն , յայտ է թէ յօդս ցնդեցաւ այն . ուստի և ասացաք
թէ կարող է հզօրն ած վերակոչել զփախուցեալն ։ Ապա
ուրեմն միսն այն տացի մարդոյն՝ որում յառաջն եղև մար-
մին մարդկային . վասն զի իբր յանօթ առեալ համարի
առ միսն , և իբրև դրամ օտարին՝ նմա հատուցանելի է
յորմէ առաւ . իսկ միսումն՝ որպէս սեպհական ինչ 'ի
քաղցոյ սպառեալն մարմին տացի յայնմանէ , որ վերա-
կոչելն կարող է զցնդեալն յօդս . այլ թէպէտ և կորուսեալ
իսկ էր բնաւին , և ոչ նիւթոյ ինչ մասն թողեալ 'ի դա-
րանս բնութեան , ապաքէն նորոգէր զայն ամենակարողն
ուստի և կամքն ։ Սակայն 'ի պատճառս վճռոյ ճշմար-
տութեն՝ որով ասացաւ , ոչ կորնչել և մազի գլխոյն , ան-
պատեհ իմն է կարծել՝ թէ մազոյ մարդոյ ոչ լիցի կորնչել ,
իսկ թանձր մսոյ հալելոյ և ծախելոյ 'ի քաղցէ անտի
կորնչել մարթ իցէ ։

Զայս ամենայն զմտաւ ածեալ ըստ մերում չափու և
'ի ճառ արկեալ՝ կատարած զայս դնեմք , թէ 'ի յարու-
թե մարմնոյ՝ մեծութի նոցա զայն ունիցի չափ՝ զոր ու-
նէր կամ ունելոց էր կատարեալ հանգամանք երիտասար-
դութեն բնաւորեալ 'ի մարմին իւրաքանչիւր , պահեալ
և զպատշաճողն վայելչութի 'ի ձևս բոլորից անդամոցն ։
Եւ եթէ առ 'ի պահելոյ զայն վայելչութի՝ բառնայցի
ինչ մի յանպատշաճ մեծութեն եղելոյ 'ի միում մասին , որ
և այն ընդ բոլորն սփռեսցի՝ առ 'ի չկորնչելոյ այնմ ,
միանգամայն առ 'ի բարեյարմարութի մասանց առ հա-
սարակ , այդ չէ անտեղի . նա զի հաւանել ևս ունիցիմք՝
թէ անտի իսկ յաւելուլ ինչ մարթ իցէ 'ի հասակ մար-
մնոյ , բաշխեալ ընդ բնաւ մասունս՝ առ 'ի զվայելչութեն
պահելոյ՝ զայն ինչ որ եթէ աւաւելութե կայր 'ի միում
մասին , ոչ վայելուչ էր ։ Բայց եթէ պինդ կալցի՝ ոք իւ-

բաքանչիւր յայն հասակ մարմնոյ յոր մեռաւն՝ յառնել, ոչ պարտ է ուժգին հակառակարանել. միայն զի տգեղութիւն ամենայն 'ի բաց իցէ, տկարութիւն ամենայն, ամենայն թուլութիւն, ամենայն ապականութիւն, և եթէ այլ ինչ իցէ անպատեհ արքայութեանն, յորում յարութեան որդիք և աւետեացն՝ հրեշտակաց այ են զուգահաւասար, եթէ մարմնով ոչ, եթէ հասակաւ ոչ, բայց երջանկութեամբ անշուշտ ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս նորահրաշ վիճակի հոգևոր անուանեալ մարմնոյն՝ յոր փոխարկի սրբոցն մարմին ։

ՎԱՍՆ այսորիկ որ ինչ կորուսեալ իցէ 'ի կենդանի մարմնոյ, կամ յետ մահու 'ի դիականցն՝ ողջին հատուսցի անդրէն, և զուգակցասցի ընդ մնացելոց 'ի գերեզմանս նշխարացն՝ փոխարկեալ 'ի նորոգումն հոգևոր մարմնոյն 'ի հնութենէ մարմնոյ շնչաւորի՝ յարիցէ, զանապականութիւն զգեցեալ և զանմահութիւն ։ Սակայն եթէ և դժնդակ պատահմամբ ումամբ, և կամ 'ի թշնամեաց դաժանութենէ ողջոյն իսկ մանրեսցի 'ի փոշի, այլ և յօդս և 'ի ջուր լուծանիցի իսպառ, մինչև չմնալոյ ինչ իմիք, այլ չէ և չէ հնար թէ խուսափիցէ յամենակարութենէ արարչին, որում և ոչ մազ գլխոյ կորիցէ ։ Արդ ընդ հոգւով ներքոյ անկցի մարմինն հոգևոր, բայց մարմին գոլով և ոչ հոգի. զոր օրինակ մարմնոյ ներքոյ անկաւ հոգին մարմնական, ինքն հոգի գոլով և ոչ մարմին. և զայսորիկ զչափ տեսանեմք ապաքէն 'ի տխրատեսակ պատժականութեան մերում. զի ոչ եթէ ըստ մարմնոյ՝ այլ հոգւով մարմնաւորք էին, որոց ասէ առաքեալ. “ Ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրև ընդ հոգևորս, այլ իբրև ընդ մարմնաւորս „ ։ Իսկ մարդ հոգևոր այնպէս ասի յաստի կեանս, զի մարմնով չափ դեռ մարմնաւոր է, և տեսանէ այլ օրէնս յանդամս իւր զի-

նեալ Հակառակ օրինաց մնացին . այլ եղիցի և մարմնոյն
Հոգևոր , յորժամ նոյն մարմին այնպիսաբար յառնիցէ՝ զի
կատարեացն գրեաւն ՝՝ Ալբմանի մարմին հնչասը , և յառ-
նէ մարմին Հոգևոր ՝՝ Վասն թէ զինչ և քանի գերազանց
իցէ պարգև մարմնոյն Հոգևորի , քանզի չև է առեալ մեր
զհաշակ իբաւն , խղճեմ մի արդեօք ամենայն բան խօսե-
ցեալ զամմանէ՛ի յանդգնութէն գրեացն , Ասյց քանզի
առ՛ի գովեստ այ ոչ արժան է լռել զինդութէն յուսոյն
մերոյ , և՛ի ներքինն եռացմանէ անտի առնըզ սիրոյն ասա-
ցաւ՝՝ Ձեր , սիրեցի զվայելչութէն տան քո ՝՝ , Հապա , նո-
բա ձեռն տալով՛ի պարգևաց յայնցանէ զոր Հասարակա-
բարն բաշխէ յամենավիշտ յայս կեանս բարեաց և չարաց ,
՛ի միա առնօրք մերոյհանն կարողութէ՛ քանի առաւել ի-
ցէ այն , որում դեռ անհաշակք եղով՝ արժանապէս ձա-
ռալ չեմք բաւական , Ասյողում զայն յորժամ զմարդն ա-
բար ուղիղ Հոգում զերջանկաւէան զայն կեանս երկուց
չափագաց՛ի փառիսն դրախտ , որ այնչափ կարճա-
մանակայ եղև , զի և ծնունդք նոցա ոչ ժամանեցին առ-
նուլ զհաշակն , ոմ որ յայսմ՛ի կեանս՝ զոր ծանեաք , յո-
րում կամքս դեռ , զորոյ զիսրձանս կրեմք անդադար՝ ին-
չափ և յառաջիցեմք , մանաւանդ Թէ ինքն իսկ Համակ
փորձութէն է՝ ցորչափ եմքն ՛ի նմա , ոմ որ ասեմ քա-
ցայայտել կարող իցէ զցոյցս ածմանոյ բարութէնն առ
մարդկան ազգս ։

ԳԼՈՒԽ ԻԴ

Ըստգոգս Թշնառութէց և չարաց յոր վարանդեալ կայ մարդկան ազգ՝ ի պատճառս առաջին յանցաւորութէն , և չիք ուրեք ազատանալ յայնցանէ՝ բայց միայն Հնարիւքն Քրիստ ։

ՎԱՆԶԻ քան նախկին ծագմանն կրեալ , վիայէ առա-
քեալն զի սոյն այս կեանք , եթէ կեանս ասել արժան իցէ՝ այն-
քան յոբնատապարհին լցեալ չարեաք , Թէ Համօրէն մարհկա-

նացուստ Ծնունդ ընդ դատապարտութիւն է : Օ՛ինչ այլ ինչ զեկուցանէ զարհուրելին այն տգիտութիւն խորին, համարձակ մոլորութեանցն գոյիցան, որ խաւարարգել կալեալ ունի զաչիս Վկայիդ առ հասարակ, ուստի Հոգւոյն պրիլ մարգոյ անհնար է առանց տաժանմանց և ցաւոց և երկիւղի : Օ՛ինչ սէգն այն իրաց մնոտեաց և փքաստակաբաց, յորմէ հոգւ անփարատելիք, խռովութիւնք, տխրութիւնք, կասկածանք, անհիմ զուարթութիւնք, գժտութիւնք, վէճք, պատերազմունք, դաւանք, սրտմտութիւնք, թշնամութիւնք, խաթխութիւնք, կեղծաւորութիւն, նենգութիւն, գողութիւն, յափշտակութիւն, հաստատագրծութիւն, ամբարտաւանութիւն, փառասիրութիւն, չարահնութիւն, մարգասպանութիւնք, հայրասպանութիւնք, անողորմութիւն, կատաղութիւն, անզգամութիւն, բղջախոհութիւն, մեծաբանութիւն, անառակութիւն, անպարկեշտութիւն, պոռնկութիւնք, հնութիւնք . մծղնէութիւնք, և որ անբնականք արուի և իգի զանազան աղճապղծութիւնք անասելիք . սեղանակապտութիւնք, հերեսութիւնք, հայհոյութիւնք, սուերգիութիւնք, հաբատահարութիւնք անմեղաց, զրպարտութիւնք, որոգայթք, օրինազանցութիւնք, սուտ վկայութիւնք, դատաստանք անիրաւք, բռնութիւնք, աւազակութիւնք, և որ այլ ևս այսպիսեաց չարիք պրծեալ՝ի յուշոյ՝ այլ ոչ մեկնեալ՝ի մարդկային կենցաղոյս : Վ՛իտեմք՝ զի արգասիք են այսոքիկ մարդոց չարաց, բայց յառաջ բղխեալք յարմատոյ անտի մոլորութենէ և խոտորնակ սիրոյն՝ որով Ծնանի ամենայն որդի Վ՛համայ . զի ո՞ր անդիտանայ՝ քանի տգիտութիւն Չ՛մարտութեն՝ի տղայն տեսանի, և որքան մնոտեսեր եռացուածն՝ի մանկունս՝ի վեր երևի, և այսպէս գայ Հանդիսանայ մարդ՝ի կենցաղս յայս . մինչ զի եթէ տացի նմա Թոյլ կեալ և գործել ըստ կամի, անցանելով անցանէ ընդ ամենայնն և կամ ընդ բազմագոյս յեղեղնութենց և յապիրատութենց զորս յիշատակեցի, և զորս անկարացայ յիշատակել :

Վ՛յլ սակայն ոչ խոպան անտես արարեալ Ձեծախնամ տեսչութենն զպարտաւորքս , և ոչ՝ի բարկութենն արգե-

լեալ ՚ի զողորմութիւն իւր , անդստին ՚ի զգայարանս մարդկութեանս կան արձունք արգելուին և հրաշագործ հակառակ խաւարին՝ յորում ծնանիմք , և ՚ի դիմի հարկանին յարձակմանցն այնոցիկ , բայց և ինքեանք լի աշխատութեամբ են և ցաւոք ։ Օ ի առ ինչ արդեօք բազմերկնակ երկեղութիւնքն այնոքիկ՝ ՚ի կիր արկեալք առ ՚ի զուշացուութիւնս տղայոցն արգելոյ . զինչ դաստիարակք , զինչ վարժիչք , զինչ տանկինակք , զինչ խոտանզանք , զինչ գաւազանք , զինչ խրատն ՚ի սուրբ գիրս ։ Ա՛ե բայ . է . ասացեալ առ ՚ի ջարդելոյ զկողս որդւոյ սիրելւոյ՝ մինդեռ տղայ է . գուցէ խոտացեալ առուեգանեսցէ , և անուղղայ ինայցէ ։ Օ ինչ գործ էցէ այսպիսեացս պատժոց ամենայնի , բայց զի ոգիտութիւնն փաստեսցի , և առնէ արկցի յանկարգաւորս ցանկութիւնն , որովք չարեօք մտանեմք յայս աշխարհ ։ Ա՛ե զինչ այն , զի աշխատութիւնք լիցեմք ինչ , և անաշխատաբար մտանիմք . ուստի՞մք աշխատութիւնք , ոգիտանիմք անաշխատ . աշխատութեամբ ժբռնանամք , և մեղկանամք անաշխատ ։ Ա՛ե ահա ցուցեալ էրևի այսու՝ ինչ ինչ իբրու ծանրութիւնք իւիք հակամետեալ է բնութիւնն ախտաւոր , և քանի օգնականութիւն իւ՛ կարօտեալ առ ՚ի ազատելոյ յայնցանէ ։ Վանդազումն , հեղգութիւն , պղերգութիւն , անշոգութիւն՝ ախտք են սոքա ապաքէն , որովք խոյս տամք յաշխատութիւն , իբրև զի և աշխատութիւնն ինքն թէ և պիտանացու՝ այլ պատուհաս է ,

Վակայն բաց ՚ի տղայական աստիճան՝ առանց որոյ ոչ է ուսանել զոր վերադացուքն կամին , որք և սակաւ ուրեք կամին ինչ յօգուտ , քանի՛ քանի՛ այլովք պատուհասիւք տառապի մարդկութի՛ն՝ ոչ ՚ի չարութի՛ն և յապիրատութի՛ն անօրինացնելոցն՝ այլ ըստ հասարակաստեղծն պայմանի և թշուառութե՛ն . զորս ո՞ր ՚ի բան առնուցու , ո՞ ՚ի խորհուրդս մտացն քանակիցէ ։ Ո՛րքան երկիւղ կայ և տագնապ ՚ի մէրձաւորացն պակասելոյ և ՚ի կոծոյ , ՚ի տուժից և յանպարտ դատից , ՚ի պատրանաց և ՚ի խաբէութեց մարդկան , ՚ի զուր կասկածանաց , և յամենայն որ յօտարոց զործին բռնութի՛ն եղեռն և չարխմացութի՛ն . քանզի

յայեցանէ նիւթին յոլովակի աւարառուածի և գերութեի, և կապանք և բանտք և տարագրութիք, և խոշտանգանք, և անգամից հատուածն, և զգայարանաց աղարտուածն, և մարմնոյ բռնադատութիւն առ՝ի զգարշ տուփանս բռնացեալն կատարելոյ, և այլ ևս յոքնապատիկ արհաւիրք։ Օ՜ ինչ տագնապ՝ի պատահմանց անթուելեաց՝ որ աւտարոյ հարկանէին՝ի մարմին, ի տօթոյ և՝ի ցրտոյ, ի մերկաց, յամուլրուպաց, ի հեղեղաց, ի փայլատակմանէ, յորոտալոյ, ի կարկտէ, ի շանթից, ի գետնաշարժից, ի վերուվարմանց աւերակաց, ի դիպմանէ և յերկիւղէ՝ կամ՝ ի գժտութիւն իսկ անամոթոց, ի զանազան թունաւորութիւնս անկոց, ջրոց, օդոց, կենդանեաց, ի խածուածոց գազանաց՝ և որ ցաւեցուցիչ միայն, և է որ մահաւորիթ ևս, ի մոլեգնութիւն որ՝ի կատաղելոյ շան առնելոյ. մինչ զի անասնիկն հեզ և համբոյր տեառն իւրում երբեմն սաստիկ ևս և դառն երկիւղ արկանէ քան զառիւծունս և զվիշապս, և զմարդ յոր դիպեալ իցէ սրգեօք՝ այնպէս ինն՝ի կատաղիս դարձուցանէ ժանտաբեր պղտորմամբն, զի և ծնողք և լծակից և որդիք ահիւ խուսափին՝ի նմանէ առաւել քան յամենայն գազանէ։ Օ՜ որ վիշտս վշտանան ծովագնացիկք, և զորս որք ընդ ցամաքս հատանէն Ճանապարհս. և ո՞ որ չքջնցի որ ընդ ամենայն կողմն՝ անկարծելի դիպուածոց ոչ նեղբոյ անկեալ իցէ։ Ի հրապարակի գաղձեալ ուրուք՝ի տուն, առողջ ոտիւք անկաւ անդէն. և՝ի քորել զոտն՝ի վիրէ անտի վախճանեաց ըզկեանսն։ Ո՞ որ քան զքաջմեալ աներկեան կարծիցի. և ահա յանուն յոր նստէր Հեղի քահանայ՝ անկաւ և անշնչացաւ։ Յրիկադործաց, և բնաւ ամենայն իսկ մարդոյ՝ քանի պատահարաց ակնկալելի է յաղագս արմտեացն անդոց, որ յերկինէ և որ յերկրէ, և որ յասպականիչ կենդանեաց։ Հաւասիկ սովորաբար անկասկած են մարդիկ ընդ ցորեան քաղեալ և չտեմարանեալ. սակայն գիտակ եմք՝ զի զոմանց զաքգասու բերս ցորենոյն՝ի համբարանոցս անտի՝ի բաց հանեալ տարաւ հեղեղ յանկարծադէպ, անձնապուր լինելով մարդկանն։ Իսկ հա-

կատակ բնութագրի դիմեցմանց այսականաց որ անմեղութիւն վատահ իցէ. ուր զի մի որ վատաճասցի, այնպես ինն լինին նոքա երբեմն և զտայս կենցաղս, քան զորս ոչ գոյ որ անմեղ, զի ըստ այ նոյ տալոյն ի տղայն առաւելապէս՝ երևեալ ծանրացի աչխարհի թշուառութեի կենացս, և փափաքելի երջանկութեի հանդերձելոցն։ Այլ և անդրնտին՝ ի մարմնոյ այնչափ գոյատրելիս հիւանդութեանց ասէ, զի և՝ ի բժշկոյ մատնադրութիւնս ոչ անհնարիք բռնադատեալ կան. և՝ ի բազումս յայնցանէ, և գոգցես՝ ի գնաւան՝ նոքին իսկ Հարաչքն և դեղորայք տանջանք իմն են, իբրև՝ ի պատժոյն արկածէ զերծանիլ մարդկան պատժականաւն օձանաւ։ Այլ ապաքէն զմարդս ծագատիս յայն հարկեցոյց տապն անհնարին, մինչև զմիշ մարդկայինն և զերեսանցն անգամ ըմպել նոցա։ Այլ ահա և քաղցրն եւս չհրաժարել՝ ի մոյ մարդկայնոյ, մինչ զի ոչ լոկ զմեռեալսն գտանել, այլ և կինքնաճեռն սպանեալս, ոչ զօտարս ոմանս, այլ և զղաւակսն ուտել մարդ չհաւատալի անգթութեի զոր՝ ի նոսա ներգործեր քաղցն մոլեգնի։ Ուր գլուխ բանիցս, նոյն իսկ քաւնն՝ հանգիստ յորջորջեալ տիրապետ, քանի՞ անհանգիստ լինի յաճախակի երազոցն տեսլեամբք, ո՛վ որ բանիս արտայայտիցէ. և որչափ արհաւիրս մեծամեծս՝ թէ և իրաց անգոյից առաջի արարեալ, և գոգցես մարմնացուցեալ, մինչև անկարանալ մեզ՝ ի չմարտից անտի զատանել, այսպէս ամբոխել զեղկելի անձինն և զզգայութիւնս։ Այնպիսի տեսլեամբք տապք և արհաւանք անգամ ողորմելի տառապելին յախտս ինչ և՝ ի թուշնառոր արկածս. Թէպէտ և ըստ բազմազան խաթխաթութեանն էր երբեք զի այսք չարք պատահեն և զմարդիկ առաջնոյ տեսլեամբք այնպիսեաք, որպէս զի Թէ սովիմբք կարիցեն իսկ ոչ յիւրեանցն ձգել զնոսա, այլ գնեն գնոյա զգայութիւնսն որսայցեն յախտոյժանս տեղի տալոյ սատանային։

Այդ յայցանէ, իբր՝ ի գժոխոյ գոգցես Թշուառելի կենացս՝ ոչ այլ քայց ընդհարն ապրեցուցանէն փրկչին Աստի, այ և տեառն մերոյ. զի սոյն այս իսկ է անուանդ

ցն, թարգմանեալ փրկիչ. մանաւանդ զի մի՛ յետ այսց կենաց 'ի վերայ գայցէ թշուառագոյնն այն և մշտակայ՝ ոչ կեանք, այլ մահ: Քանզի թէպէտ և լինին յաստի կեանս սփոփանք մեծամեծք բժշկութե՟ց սրբազան խրօք և 'ի ձեռն արանց սրբոց, սակայն ոչ միշտ այն բարերարութի՟ւք պարգևեալ շնորհին հայցողաց, զի մի՛ այսր աղագաւ ա՟ծպաշտութի՟ն խնդրեսցի՝ այն որ յաւէտ հայցելին է սակս անտի կենացն, ուր ոչ մի ինչ չար ոչ լինիցի. և 'ի դոյն իսկ շնորհք ա՟յ ձեռն տան մարդոց ընտրելոց 'ի վիշտս յայսոսիկ, որպէս զի ըստ առաւել հաւատոցն՝ նոյնչափ արիական սրտիւ ժուժկալիցեն: Այլ և զիմաստասիրութիւնն օժանդակել յայս պէտս ասեն գիտնաւորք աշխարհիս, և զստոյգն զայն իմաստասիրութիւն սակաւուց ումանց, ասէ Տուղղիոս, շնորհեցին աստուածքն. ոչ մեծ ևս պարգև տուաւ առ 'ի նոցանէ մարդկան, և ոչ տալ երբէք մարթ էր՝ ասէ: Այսքան ահա և նոքին իսկ՝ առ որս հակաճառեմքն, խոստովանել բռնադատին իւրեանցն օրինակաւ զշնորհսն ա՟ծային՝ առ 'ի ստանալոյ զիմաստասիրութ՟ի զճշմարիտն, և ոչ զումպէտ: Բայց արդ եթէ նուազունց ումանց տուեալ է առ 'ի յա՟յ միայնակ նպաստ ճշմարիտն իմաստասիրուե՟ հակառակ տառապանաց աստանօր կենացս, դոյն իսկ շատ է 'ի բացերևոցել, թէ 'ի լուծանել զպատուհաս թշուառութե՟ց դատապարտեալ է մարդկան ազգ: Այլ զոր օրինակ ըստ նոցա խոստովանելոյն՝ չիք մեծագոյն քան զայս պարգև ա՟ծային, նոյնպէս ոչ այլոյ աստուծոյ է շնորհել՝ բայց այնմ միայնոյ քան զոր մեծագոյն այլ զոք չճանաչեն ինքեանք իսկ բազմաստուածութե՟ն պաշտօնատարք:

ԳԼՈՒԽ ԻԶ

Յաղագս Ձգանց՝ որ սեպհական են արդարոց, բայց ի յաղետից անտի հասարակ եղելոց բարեգործաց և չարագործաց։

ԸՐՏԱՓՈՅ կենցաղոյս վշտաց՝ որ միօրինակ բարեաց և չարաց են դէպք, գոն և արդարոցն առանձնաւոր վաստակք Ձգանց՝ որովք հակառակ ախտից նահատակին, յածեալք միշտ ի փորձանս և ի վտանգս այնպիսեաց պատերազմաց։ Վասնզի եթէ ուժգին երբէք և եթէ մեղմով, այլ ոչ բնաւ դադարէ մարմին ցանկալ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ, զի մի զոր կամիմքն՝ զայն առնիցեմք, սաղբեալք ի կատարել զաւետեան զչար ցանկութեն, այլ զայն՝ առ ի յայլ զօրաւորեալք՝ մեզ հնազանդեսցուք, և ոչ մեք նմին անսասցուք. անդադար արթունք զուարթունք եղեալք, զի մի կարծիք ի կերպան Ձմարտութեն պատրեսցէ, մի բան նենգաւոր խաբեսցէ, մի խաւար մոլորութեն խափուսցէ. մի բարին՝ չար, կամ չարն՝ բարի կարծեսցի. մի երկիւղ ի պատշաճէն պարծոց ընկրկեսցէ, և մի յոչ պատշաճն ցանկութիւնն գթեցուսցէ. մի արեգակն ի վերայ բարկութեն մտանիցէ. մի թշնամութեն գրգռեսցէ հատուցանել չար փոխանակ չարի. մի ընկղմեսցէ տրտմութեն անարժան կամ անչափ. մի միտք ապաշնորհ առ ի բարեբարելն հեղգանայցէ. մի յերեսաց չարախօս շշնջմանց տառապեսցի բարիոք մտացն խիղճ. մի յանդուգն յաղագս այլոց կասկած զմեզ դաւեսցէ, և մի օտարին զմէնջ տարապարտ կարծիք զմեզ խաւեսցեն. մի թագաւորեսցեն մեզք ի մահկանացու մարմնս մեր՝ հնազանդել ցանկութեանց նորա, և մի անդամք մեր պատրաստեսցին զէն անիրաւութեան մեզանից. մի ակն զկնի ցանկութեն գնայցէ. մի քինախնդրութեն զայրոյթ յաղթեսցէ. մի յանարժան հեշտացուցչէն ձգիցի հայեցուածն կամ մտածուն. մի բան անվայելկամ

տգեղ մտադիւր լուիցի․ մի գործեսցի որ չէ օրէն, թէ և հաճելի․ մի յայսմ յոքնավաստակ և 'ի բազմավտանգ պատերազմի՝ յաղթութ՟ի մերով զօրութ՟ք լինել ակնկալցի, և կամ եղեալն գրեսցի մերոյին ուժոյ․ այլ միայն շնորհաց այնորիկ, զորմէ առաքեալն ասէ․ "Այլ շնորհք ա՟յ, որ ետ մեզ զյաղթութի՟ն 'ի ձեռն տեառն մերոյ Յ՟ի Ք՟ի"։ Որ և այլուր ասէ․ "Այլ յայսմ ամենայնի առաւել յաղթեմք նովաւ որ սիրեացն զմեզ"։ Բայց և զայն գիտասցուք թէ որչափ և քաջամարտիկք ընդդէմ ախտից զինիցիմք, որոց թէ յաղթիցեմք ևս և ընդ մեօք նուաճիցեմք, այլ տակաւին 'ի մարմնիս կալով՝ ոչ ազատք բնաւ մնայցեմք յաղօթելոյ առ ա՟ծ, "Թող մեզ զպարտիս մեր"։ Իսկ յարքայութեան յայնմ ուր անմահ մարմնովքն լինիցիմք միշտ, ոչ մարտք լիցին մեզ երբէք, և ոչ պարտիք․ որ և ոչ երբէք, ոչ ուրեք լեալ էին, եթէ բնութիւնս մեր կացեալ մնացեալ էր որպէս ստեղծաւն՝ ուղիղ։ Սորին վասն այս մեր կռիւք՝ որով տագնապիմքս, և յորմէ անդորրանալն ցանկամք վերջին յաղթութեամբն, է 'ի համարուէ չարեաց այսմ կենաց, զոր ահա դատապարտեալ տեսանեմք վկայու՟ք այսքան յոքնախուռն չարեաց։

ԳԼՈՒԽ ԻԳ

Յաղագս չարեացն զոր առատաձեռնեաց արարիչն յայս դատապարտ կեանս։

Բայց այսուհետև ածցուք զմտաւ՝ որպիսեօք բազմաթիւ չարեօք զթշուառութի՟ն մարդկան ազգի, յորում մեծարի արդարութի՟ն դատողին, ճոխացոյց բարութի՟ն նորա՝ այն որ զամենայն արարածս իւր նախախնամէ։ Իւ նախ առաջին, զոր կանուխ քան զմեղանչելն տուեալ էր օրհնութի՟ն ասելով, "Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր", ոչ կամեցաւ արգելուլ յետ մեղացն․ և 'ի դատապարտ արմատի անդ պահեցաւ մնաց արգասաւորութիւն

պարգևեալ. և ոչ զսքանչելին զայն զօրութի̃ սերմանց, նա և զսքանչելագոյնն որով սերմանքն կազմին՝ զընդաբոյսն 'ի մարդկային մարմինս, և իբր ներհիւսեալ գոգցես, բառնալ կարաց մեղացն ախտաւորութի̃, այն որ ըղկարիս մահուն 'ի մեզ արժանացոյց. այլ երկաքանչիւր մակաւասար ընթանայ ընդ գետօրինակ բերմունս մարդկային ազգի, չարն որ 'ի նախածնողէն առբերեալ, և բարին որ յարարչէն պարգևեալ: Ի սկզբնաւոր չարի անդ երկու ինչ են, մեղք և պատուհաս. և 'ի սկզբնաւոր բարւոյն՝ երկու այլ, սերունդ և յօրինուած: Այլ ըստ այժմու մերս դիտաւորութե̃, վաղ ևս ասացեալ եմք բաւականապէս յաղագս չարեացն, որոց մին յառաջաբերեալ 'ի մերմէ հետուէս, այն է մեղքն, և միւսն 'ի դատաստանաց ա̃յ, այն է պատուհասն: Իսկ զարդիս յաղագս բարեացն յանձին կալայ ճառել՝ զոր շնորհեաց ա̃ծ բնութե̃ս նա և յետ արատելոյն և դատապարտուե̃, և շնորհէ մինչև ցայժմ. քանզի ոչ եթէ 'ի դատապարտելն՝ բովանդակ զոր տուեալն էր նմա՝ 'ի բաց հան, ապա թէ ոչ՝ բնաւ և չլիներ իսկ. և կամ արտաքոյ ընկեց զայն յիւրմէ իշխանութե̃, թէպէտ և առ 'ի պատիժ մատնեաց ընդ ձեռամբ սատանայի. ուր զի և սատանայ ինքնին չէ արտակացեալ յա̃յ տէրութե̃ն. զի և զէանալ բնութե̃ սատանայի տայ ինքն էն ծայրագոյն, և տայ լինել որ ինչ միանգամ է:

Արդ յերկուց բարեաց անտի՝ զոր ասացաք յառաջ բղխել 'ի բարութե̃ն ա̃յ իբրև յաղբերէ 'ի մեղօք ապականեալս բնութի̃ և 'ի պատժապարտեալ, զսերունդն պարգևեաց օրհնութե̃ 'ի նախնեղակ գործս աշխարհի, յորոց հանգեաւ յաւուրն եօթներորդի: Իսկ յօրինուածն կայ յարարուածի նորա՝ որով մինչև ցայժմ գործէ. քանզի եթէ զիւր ազդողականն զօրութի̃ 'ի բաց առնուցու 'ի գոյիցս, ոչ յառաջել կարիցեն բնաւ, և իւրեանց չափաբեր շարժմամբք զժամանակս բոլորել, և ոչ ամենևին կայցեն մնայցեն զժամանակ մի յիւրեանցն ստեղծուածի: Վասն որոյ այնպիսի ստեղծ ա̃ծ զմարդ, զի և յաւելուլ 'ի նմա բարգաւաճումն ինչ՝ առ 'ի ծնանելոյ զայլ մարդիկ,

շնորհեալ նմա զկարողութիւն զաւակասերելոյ, այլ ոչ ըղ-
հարկադրութիւն. իսկ ոմանց՝ որոց կամեցան 'ի մարդկա-
նէ, ոչ ետ զայն կարողութիւն, ամուլս զնոսա թողեալ. սա-
կայն զօրհնութիւն ծննդագործութեան՝ զոր երկուց նախկին
լծակցացն շնորհեաց, ոչ իսպառ եբարձ 'ի մարդկան ազ-
գէ: Այս սերումն թէպէտ և չխափանեալ մեղօքն, բայց
ոչ այնպիսի է՝ որպիսի լինէր եթէ չէր ոք երբէք մեղուցեալ:
Վասնզի յորմէ հետէ 'ի պատուի եղեալ մարդն՝ յետ յան-
ցանելոյն անբանից նմանեալ հաւասարեցաւ, հանգոյն
նոցա և ծնանի. այլ ոչ բովանդակապէս շիջեալ 'ի նմա
կայծակն բանի՝ որով 'ի պատկեր այ արարաւ: Իսկ եթէ
յայս սերումն ոչ 'ի վար արկեալ էր յօրինուած, ոչ լինէր
յերիւրեալ այն ըստ ձևոյ և ըստ պայմանաց իւրումն սե-
ռի: Վասնզի եթէ ոչ 'ի զուգաւորութիւն գային մար-
դիկն, և այ կամ էր բազմամարդացուցանել զերկիր, կա-
րող էր՝ զոր օրինակ զմին արարչագործեաց առանց խառ-
նից արուի և իգի, նոյնպէս զհամայնսն առնել. իսկ ա-
մուսնաւորեալքն ոչ կարեն առանց նորա արարչութեան
ծննդականս լինել: Ապա ուրեմն որպէս յաղագս հոգևո-
րական հաստուածոյ՝ որով կերպարանի մարդ յածպաշ-
տութիւն և յարդարութիւն, ասէ առաքեալ, "Ոչ այն
ինչ ոք է որ տնկեացն, և ոչ այն որ զջուրն ետ, այլ որ ա-
ճեցոյցն ած", սոյնպէս և աստանօր մարթ է ասել, ոչ այն
ոք է որ զուգաւորի, և ոչ որ սերմանէն, այլ որ յօրինեալ
կերպարանէն ած. ոչ մայրն ոք է որ զյղացեալն կրէ, և
զծնեալն սնուցանէ, այլ որ աճեցուցանէն ած: Նա ին-
քըն ազդեցութեամբն որով գործէ ցայժմ, տայ սերմանց
գալ յարդիւնս իւրեանց, և զոլորածս իմն թաքունս և
աներևոյթս պարզել յերևելի տեսակս գեղեցկութեան զոր
տեսանեմք: Նա ինքն զանմարմին բնութիւն և զմարմնա-
ւոր, զմին վերանիստ, և զմիւսն ներքոյ անկեալ նմին,
հրաշապէս ընդ իրերաց յօդեալ և զուգեալ առնէ կեն-
դանի. գործած արդարև վսեմ և զարմանալի՝ ոչ միայն
'ի մարդումս, որ կենդանի գոլով բանաւոր՝ երկրաւորացն
բոլոր կենդանեաց է վեհագոյն և չնաշխարհիկ, այլ և 'ի

յոյժ փանաքիս ձանձից հիացուին քէրէ առն ընտող, ’ի գովեստ արարչին զարթուցանելով։

Ընդ նա ինքն ետ մարդկեղէն հոգւոյ միտս, յորում քանն և հանճար իբր ընդարմացեալ ինն գոլով ’ի տղայս, որպէս թէ չկայցէ բնաւ, զարթնու ապա և պարզի ըստ յաւելուլ հասակին. որով գիտութեան և ուսմանց լինին ընդունակ, և յաջողեալ յընդունելութէ ձչմարտու-
թէ և սիրոյ բարւոյն. և յաջողակութէ այսու ստացեալ զնմաստութէ, և առաքինութէքն ներակրթեալ, մարտ դնիցէ խոհեմութէ, արիաբար, ժուժկալութէ և արդա-
րապէս՝ հակառակ մոլորութէց և բնաւորականացն ախ-
տից. որոց և յաղթող հանդիսանայցէ ոչ այլոյ իրիք ցան-
կութէ՝ բայց ծայրագունին այնմ և անփոփոխելի բարւոյն։
Այս թէ և արդեամբք ոչ յայդ բերիցէ, սակայն և յա-
ջողակութէին ինքնին այնպիսեաց բարեաց յաճախուստ տըն-
կեալ ’ի բանականի բնութէն՝ թէ քանիօն լաւ էցէ, և
զիարդ սքանչելի գործ հնչօրին այ, ոմն ոք արժանապէս խո-
սեցի կամ ընդ միտ ածիցէ։ Այլ զի բաց յարուեստից
բարիոքն կելոյ և յանմահ երջանկութէին ժամանելոյ, որ
առաքինութէին կոչին, և այ ընտրհօքն միայն որ ’ի Քէ՝
պարգևին որդւոցն աւետեաց և արքայութէ, ոչ ահա շա-
տից այլ ևս արուեստից գիւտք և վարմունք են ’ի մարդ-
կային հանճարոյ, կէսք պիտելիք, կէսք ախորժելիք, մինչ
զի գերազանց այն կորով մտաց և բանաւորութէ առնէ
վկայութէն ևս և յիրս անդ՝ որոց ցանկայ յաւելորդս, նա
’ի վտանգս իսկ և ’ի վնաս, թէ ուրքան կատարելութէն կայ
’ի բնութէն՝ որով հանճարել զայնոսիկ կարողացաւ, կամ
ուսանել, կամ ’ի վար արկանել։ Որ կազմածս հրաշա-
զանս հանդերձից և շինուածոց եհաս ժամանեաց մարդ-
կան հնարագիտութէ. ուրչափ յերկրագործութէ, ուրքան
’ի ծովագնացութէ լմասանացաւ. զինչ’ի կերտուած պէս
պէս անօթոց, կամ յաղգս ազգս արձանաց և նկարուց
հանճարեաց և ’ի գլուխ տարաւ. զինչ ինչ արուեստա-
կեաց’ի տեսարանս’ի գործ և յերևոյթ՝ զարմանալիս տե-
սողաց, և լսելեաց անհաւատալիս. յորսալ անքանից կեն-

դանեաց, 'ի սպանանել, 'ի հնազանդեցուցանել՝ զո՞րս ինչ և քանի՞ հնարս մեքենայեաց. նա և հակառակ մարդկան իսկ՝ քանի՞ տարազս թունից, ո՞րքան զինուց, ո՞րքան որոգայթից. և կամ զառժամանակեայ կեանս պաշտպանելոյ վասն՝ և անդրէն կազդուրելոյ՝ ո՞րքանս հնարեաց դեղս և նպաստս. առ 'ի հեշտանս քմաց՝ համեմունս ո՞րքան՝ և որկորոյ գրգռիչս խոհարարեաց. քանի՞ յոլովութի և զանազանութի նշանաց առ 'ի զներքին խորհուրդս յայտնելոյ և հաւանեցուցանելոյ, յորս յառաջադասելիք են բարբառ և նշանագիրք. զո՞ր սեթևեթս բանահիւսութե առ 'ի հոգւոյ զուարճութե, և առ 'ի զականջս քաղցրացուցանելոյ ո՞րքան յաճախութի տաղից զանազանից, ո՞րքան նուագարան երաժշտական, ո՞րքան երգոց եղանակս հայթայթեաց. քանի՞ հմտութե չափմանց և թուոց, այլ և զաստեղաց ընթացս և զկարգ բացածանոյց. և թէ զիա՞րդ բազմադէմ տեղեկութի ճոխացաւ իրաց կենցաղականաց՝ ո՞ կարիցէ առնուլ զայս ամենայն 'ի ձառս խօսից, մանաւանդ եթէ ոչ միախուռն կուտակել զամենայնն կամիցիմք, այլ ընդ միըստմիոջէմն դեգերել: Ո՛ հուսկն ասել, աւանիկ 'ի կալ անգամ ջատագով մոլորութեանց և բանից ստոց, ո՞ բաւական իցէ 'ի համար ածել՝ քանի՞ ճարտարութի բազմահանճար երևեցուցին իմաստասէրք և հերետիկոսայք: Քանզի առ տեղեաւս խօսիմք զբնաւոր ուժոյ մարդկեղէն մտաց, որով առժամանակեայս յօրինին կեանք, և ոչ զհաւատոց և վասն ճանապարհի ճշմարտութե, որով զանմահականն ստանամք զկեանս: Իսկ զի գեղեցիկ այսմ բնութե յօրինիչ ած է ճշմարիտ և բարձրեալ, նորա տընտեսելովն զամենայն զոր արար, և նորա իբր ունելով զամենակատարն իշխանութի և զարդարութի, ոչ արդեօք բանաւորն այն բնութի անկեալ էր բնաւ յայսոսիկ աղէտս, և ոչ 'ի սոցունց 'ի մշտնջենաւորսն երթալոց էր, բաց յոմանց անտի ապրեցելոց, եթէ ոչ էին յառաջեալ մեղք ահագին 'ի նախամարդն, յորմէ այլք զծնելութին ընկալան:

Բայց և 'ի նմին իսկ 'ի մարմնումն, որ զուգակցորդն է

անասնոց մահկանացու գոյին, և քան զյոքունս յայնցանէ տկարագոյն, զիա՞րդ մեծապէս փայլէ բարերարութին այ, և խնամակալութի այնպիսոյ արարողի։ Ո՞չ ապաքէն այնպէս կարգաւորեալ են 'ի նմա զգայութեցն կայք և անդամք իւրաքանչիւր, այլ և ողջոյն մարմնոյ տեսակ և տարազ և աստիք այնպէս իմն յերիւրեալ, զի ինքեամբ յայտ առնէ՝ թէ 'ի սպասահարկութի է արարեալ հոգւոյ բանաւորի. զի ոչ ըստ անբան կենդանեաց երկրապինչ եղելոց ստեղծաւ մարդ, այլ ուղղաբերձ յերկինս մարմնոյն տիպ՝ ազդ առնէ նմին զվերինն խորհել։ Իսկ սքանչելին դիւրադարձուն որ 'ի լեզու և 'ի ձեռսն բնաւորեալ, առ 'ի խօսել և 'ի գրել բարեյարմար, այլ և 'ի կատարումն արարոց արհեստից բազմաց և գործոյից՝ ո՞չ ահա ցուցանէ ամ իրօք, թէ որպիսում հոգւոյ 'ի ծառայութի զգեցաւ մարմինն այնպիսի։ Բայց ոչ նկատեալ ես զգործականութեն պէտս, լոկ մասանցն բոլորից ըստ իրեարս պատշաճութի այնչափ բազմապիսի է, և գեղեցիկ համագուգութբ յարմարեալ, մինչև չգիտել որ առաւել դիտեալ եղև 'ի նորայն կազմութե, օգտակարութիւնն արդեօք, եթէ վայելչութի. զի արդարեւ չտեսանեմք արարեալ ինչ 'ի մարմնի անդ առ 'ի պէտս օգտի, որ չունիցի և զվայելչութեն յարգ։ Նացերևակի ես ցուցանիւր այդ՝ եթէ էր մեզ գիտել զթիւս չափմանցն որով ամենայնքն ընդ իրեարըս յօդակապեալք են. զորս գուցէ արդեօք ջան բերեալ մարդկայինն ճարտարութիւն՝ կարող էր յերևան ածել յայնս որ արտաքոյ նշմարին. այլ զծածկեալսն և զ'ի մերմէ տեսութեէ զբացակայսն, զոր օրինակ են երակացն պատուածք և նեարդից և աղեաց, և ներքոյքն կենդանականք, ոչ ոք գտանել կարող է։ Քանզի թէպէտ և անգթական իմն հետազօտուի բժշկաց՝ զորս անդամազնինս անուանեն, յօշոտեաց զմարմինս մեռելոց, կամ որոց անդէն ընդ ձեռամբ կորատողին և զննողին փչէին զոգի, այլ և 'ի զանգուած մսոյ մարդկայնոյ չմարդկապէս իմն զամենայն զաներևոյթսն խուզարկեաց, առ 'ի գիտելոյ զինչ և զիա՞րդ և յորու՞մ վայրի բժշկութի մատուցանել պարտ

լիցի, սակայն զթիւն զայն զորմէ խօսիմ, և յոր հաստատեալ կայ բարեյարմարուն բովանդակ մարմնոյն ներքոյ և արտաքոյ՝ երգեհոնի իմն նմանութբ, ըստ յունին հարմօնիա ասացեալ, այն է յարմարութի կամ ներդաշնակուն, ոչ ոք գտանել կարողացաւ, զի և որոնել ոք ոչ համարձակեցաւ ։ Բայց եթէ կար էր գալ այնոցիկ 'ի ծանօթութի, արդարև 'ի ներքին ախոնդանս իսկ՝ յորս գեղս ցոյցք չիք ընաւ, այնպէս իմն զուարճացուցանէր մտաւորն գեղեցկութի, մինչև մտաց իսկ դատաստանաւ որ վարիչն է աչաց, նախամեծար լինել քան զընաւ ակնախտիղ տեսակս երևեալս ։ Գիտեմք զի կան և ինչ ինչ հաստեալ 'ի մարմնի, որ առ 'ի վայելչութի են պարզաբար՝ և ոչ 'ի պէտս. զոր օրինակ առն մարդոյ ստինս 'ի կուրծս ունել, և մօրուս 'ի դէմսն. որում ոչ 'ի զօրութի ինչ լինել՝ այլ առ 'ի զարդ այրական՝ յայտ առնեն լերկամորթ իգացն դէմք, որոց իբր տկարագունից առաւել անկ էր ամրանալ ։ Իսկ արդ եթէ չիք և չիք ինչ յանդամոց 'ի յայտնապէս ծանօցեալսն առանց ուրուք երկբայելոյ, որ առ 'ի գործ պատշաճաւորեալ՝ չիցէ միանգամայն գեղեցկայարմար, և են այլք ոմանք՝ որոց վայելչութի է միայն, և պիտառութի և ոչ մի, կարծեմ դիւրաբար է իմաստասիրել՝ թէ 'ի հաստուածի մարմնոյն 'ի վեր քան զհարկաւորութի՝ բարեվայելչութիւնն դասեցաւ. վասն զի անցանելի է հարկն, և գայցէ ժամանակ յորում ընդ գեղեցկութի միայն իրերաց սրտանայցեմք առանց տարփանաց. որ և 'ի գովեստ արարչին բերի առաւելապէս, յասել սաղմոսին, “ Խոստովանութի և մեծվայելչութի զգեցար ” ։

Իսկ զայլն ևս զգեղեցկութի և զպիտանութի արարածոց՝ զոր ածականն առատութի 'ի տես և 'ի վայելումն շնորհեաց մարդումն արկելոյ և դատապարտելոյ յայսոսիկ վիշտս և յաղէտս, ո՞ր բան գլխաւորել բաւական իցէ, որ յերկնից և յերկրի և 'ի ծովու գեղեցկութիւնս 'ի բազմօրինակն և 'ի պէսպէս, որ 'ի լուսոյն սփիւռ ծաւալմանն և 'ի սքանչելահրաշ տեսիլն, որ յարեգակն և 'ի լուսին և յաստեղս, և որ 'ի հովանիս անտառաց, որ յերանգս և 'ի

հոտս ծաղկանց, որ 'ի Թեւաւորացն այլատարազութեան և բազմութե ըստ գունակ գունակ ձայնից և փետրոց, որ 'ի յոքնաթիւ սեռս ազգ ազգ կենդանեաց. յորս փոքրկագոյնքն քանակաւ առաւել բերեն զարմանս. քանզի հիանամք յաւէտ ընդ վաստակս մրջմանց և մեղուաց քան ընդ անարի մարմինս կիտից. այլ և 'ի լայնատարր տեսարանի անդ ծովու՝ յորժամ 'ի գոյնս գոյնս իբր զգեստուք ոմամբք վերածածկի, է զի կանաչ բազմագունի, է զի ծիրանի, է զի կապուտակ. և որչափ զուարճալի առ 'ի տեսանել է՝ 'ի ծփանս իսկ եղեալ, զառաւելն ախորժանս բերելով այնու՝ զի հայեցողին առնէ զբօսանս, ոչ վտանգեալ և ոչ կորուսեալ զնաւագնացիկն: Զի՞նչ դարձեալ կերակրոց ընդ ամենայն կողմանս յոլովութիւն հակառակ քաղցոյ. զի՞նչ հակառակ տաղտկութեան՝ համոցն զանազանութիւն սփռեալ 'ի ստացուածս բնութեան, և ոչ խոհարարաց արհեստիւք և աշխատութեամբ ջանացեալ. քանիպատիկ և նպաստք 'ի բազմատեսակ նիւթըս անդ առ 'ի պահել և կազդուրել զառողջութիւն: Զի՞նչ ախորժելի տուընջեան և գիշերի յաջորդութի, օգոյն որքան հեզիկ բարեխառնութի. որչափ հանդերձանք 'ի բոյսս և յանասունս առ 'ի զգանելիս նիւթելոյ: Ո՞վ ոք զբնաւսն 'ի յիշատակ ածել կարող իցէ. և եթէ զայսոսիկ միայն զօրէն շեղջից հաւաքեալս կամ էր ինձ լուծանել իբր ոլորս իմն մանուածոյս և հետաքննել, քանի ժամանակի պէտք էին անցանել ընդ իւրաքանչիւրս, 'ի ներքս ունելով նոցա մի մի այլս բազումս: Նաւահաճմ այսք 'ի սփոփանս հիգացելոց են և դատապարտելոց և ոչ 'ի վարձս երանելեաց. զի՞նչ ապա այնոքիկ իցեն, եթէ սոքա այսքանք են և այսպիսիք. զի՞նչ այնոցիկ տացէ կարգեցելոցն 'ի կեանս, որ զայսոսիկն ետ նա և կարգեցելոցն առ 'ի մահ. որո՞ց բարեաց ժառանգս զնոսին առնիցէ յայն երանաւէտ կեանսն, որոց վասն 'ի Թշուառացելումըս յայսմ կամեցաւ զմիածին զիւր որդի տալ 'ի համբերութիւն մեծամեծ վշտաց մահուամբ չափ: Վասն որոյ խօսելով առաքելոյ զնախահրաւիրելոցն յայն արքայ-

ութիւն , ասէ . « Որ յիւր որդւոյն ոչ խնայեաց , այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա , զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհեսցէ մեզ » . Հռ . Ը . 32 ։ Յորժամ այս խոստումն լնուցու , զի՞նչ լինիցիմք , և որպիսիք . զո՞ր բարիս առընդունիցիմք յարքայութեան անդ , ուր այժմէն այսպիսի առաք գրաւական Քսի մեռանելովն վասն մեր ։ Որպիսի՞ հոգի մարդոյն լինիցի , յամենայնէ անախտակիր , ոչ միում ինչ ներքոյ անկեալ , ոչ 'ի մի ինչ միտեալ , և ոչ գէթ յաղթողապէս յիրս ինչ պատերազմեալ . այլ լի պատարուն անդորրաւէտ քաղցրութբ ։ Իսկ որ անտանօր իրաց ամենայնի գիտութի՜ւն որքան արդեօք , քանի՜ չքնաղ , քանի՜ ստուգագէտ , անմոլար ամենևին և անվաստակ , ուրանօր զայ իմաստութի կայցէ ըմպել անդստին 'ի բուն ականէ ծայրալիր երջանկութբ , առանց միոյ իրիք տաժաման ։ Որպիսի՞ լինիցի մարմինն , բովանդակապէս 'ի հոգի գրաւեալ . և համբուն կենդանագործեալ նովաւ , դարմանոց ոչ միոյ իրիք ունիցի պէտս . զի ոչ շնչաւոր իցէ , այլ հոգևոր , թէ և մարմնոյ գոյացութեն ունակ , այլ անբաժ ամենևին 'ի մարմնական ապականութէ ։

ԳԼՈՒԽ ԻԵ

Առ ոմանց յամառութեն 'ի հակառակել յարութեն մարմնոյ , զոր ըստ յառաջ ասացելոց՝ հաւատայ աշխարհ ամենայն ։

ԱՊԱՔԷՆ յաղագս հոգւոյ բարօրութեց՝ յորս երջանկացեալ վայելեսցէ յետ ստանօր կենաց , ոչ այլամիտս 'ի մէնջ խորհին քաջքն իմաստասիրաց . բայց ընդ մարմնոյ յարութե հակաճառեն , ուրացեալք զայն ամենայն ձգամբ ։ Սակայն ուր բազումք հաւատացին , կարի նուազունս թողին ժխտողս , և առ Քսի որ յիւրում յարութեն հաւատարմացոյց զառ 'ի դոցանէ անտեղի թուեցեալն , դարձան անկեղծաւոր սրտիւ գիտունք և տգէտք , իմաստունք

աշխարհի և անմիտք։ Զայն հաւատաց աշխարհ, զոր յառաջն ասաց ա՟ծ, որ զգոյն իսկ կանխաւ ասացեալ էր՝ թէ աշխարհ հաւատալոց է։ Քանզի ոչ եթէ 'ի կախարդանաց Պետրոսի թախանձեցաւ ա՟ծ այնքան 'ի կանուխ ժամանակաց նախագուշակել զայն գոլութ՟ հաւատացելոցն. զի նա այն ա՟ծ է, յորմէ՝ որպէս յառաջն ասացի ուրեք ուրեք, և ոչ յիշատակել դանդաղիմ, ըստ Պորփիւրի խոստովանութ՟են՝ և ցուցանելով իսկ 'ի պատգամաց աստուածոցն, նոքին իսկ գերագոյնքն զարհուրին. զոր և յաւէտ իմն գովասանեաց՝ ա՟ծ հայր և թագաւոր զնա վերակոչելով։ Բաւ օն անդր, այնպէս իմանալ նորայն գուշակութեանցն, որպէս կամին որք չհաւատացին զայս ընդ աշխարհի. քանզի է՞ր վասն ոչ այնպէս իմանայցի առաւել՝ զոր օրինակ բազում ժամանակաւ յառաջ ասացաւ հաւատալ աշխարհի, քան թէ որպէս սակաւքդ շաղակրատեն՝ չկամեցողք հաւատալ ընդ աշխարհի։ Զի եթէ յայն սակս ասեն այլազգաբար հաւատալ, զի մի՛ գուցէ ունայն զգրեալսն կոչելով՝ թշնամանս բերիցեն ա՟յն այնմ, որում մեծապէսն վկայեցին, սակայն նովին չափով և ծանունս ևս զնա թշնամանեն՝ եթէ ասեն այլ օրինակ իմանալ, և ոչ որպէս աշխարհ զնոյն հաւատաց. նա ինքն զհաւատացողն գովեաց, նա խոստացաւ, նա կատարեաց։ Մի՞թէ արդեօք առնել ո՞չ կարող է՝ զի յառնիցէ մարմին և կեցցէ յաւիտեան. կամ եթէ ա՟յնր աղագաւ հաւատալ չիցէ պարտ, իբրև զի անբարի է և անվայելչական ա՟յ։ Այլ վասն ամենակար նորա զօրութ՟են՝ որով զանհաւատալիսն բազումս և զմեծամեծս գործէ, յաճախագոյնս ասացեալ եմք։ Եթէ գտանել ինչ կամիցին զոր չկարիցէ ամենազօրն, ունին աւանիկ, զայդ ես ասացից. ստել ոչ կարէ. ապա ուրեմն հաւատասցուք զոր կարէն, չհաւատալով զոր ոչն կարէ. վասն որոյ յոչն հաւատալ՝ թէ ստել կարող է, հաւատասցեն թէ առնելոց է զոր առնելն խոստացաւ. և հաւատասցեն այնպէս, որպէս աշխարհ հաւատաց՝ զորմէ յառաջ գուշակեաց ա՟ծ թէ հաւատալոց է, զորոյ զհաւատալ գովեաց, զորոյ զհաւատալ խոստացաւ,

զորոյ զՀաւատալ եցոյց արդեամբք ։ Իսկ թէ չար իցէ այս, իւ ցուցանել ցուցանեն . ոչ եղիցի անտանօր ապականութի ինչ, որ այս միայն է չար մարմնոյ ։ Յաղագս կարգի տարերաց իմաստասիրեցաք յառաջագոյն, և զայլ ևս պատճառագրութիս մարդկայինս լիով հարցաքննեցաք . և թէ քանի՛ արագաշարժութի լինիցի յանապական մարմնի, ցուցաք ըստ բաւականին որպէս կարծեմ յերեքտասաներորդում մատենի՝ յայժմու քաջառողջ կազմածոյ մարմնոյն, թէպէտ և այս ոչ 'ի կշիռ գայ ընդ անմահութեն ընդ այնմիկ ։ Ընթերցցին զյառաջագրեալսն այսր մատենի՝ որ միանգամ չիցեն ընթերցեալ, և կամ յիշատակել կամիցին զոր ընթերցանն ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Պորփիւրի այն կարծիք՝ որով խորշելի համարի հոգւոց երանելեաց զամենայն մարմին, եղծանի Պղատոնի բանիւ՝ յասել նորա թէ գերագոյականն ած խոստացաւ աստուածոց ոչ ընաւ զմարմինս մերկանալ ։

ՍԱՅՑ 'ի դէմս ածեն ասել Պորփիւրի, թէ հոգի երանեալ խորշել ունի յամենայն մարմնոյ ։ Ապա չէ ինչ շահ, զի ասացաք թէ անապական լինիցի մարմին, եթէ արդարեւ ոչ երանաւէտի հոգի՝ թէ ոչ մեկուսի յամենայն մարմնոյ կայցէ ։ Այլ աւանիկ և զայսմանէ որչափ պիտոյն էր խօսեցայ 'ի յիշատակեալ գրի անդ, յորմէ զմի զայս և եթ երկրորդեցից ։ Հապա որ ամենեցուն դոցա վարդապետն է Պղատոն՝ թող կշտամբեսցէ զիւր մատեանս, և ասասցէ թէ աստուածք նոցա սակս երանելի լինելոյն պատճառի փախիցեն 'ի մարմնոց իւրեանց, այս է՝ մեռանիցին, զորոց ասաց փակեալս գոլ յերկնաւոր մարմինս . սակայն ած որ արարն զնոսա, առ անկասկածս գործելոյ խոստացեալ է նոցա զանմահութի, այն է՝ զմիշտ կայումն 'ի մարմինսն, ոչ ընաբար զայն ունելով, այլ 'ի նորա կա-

մայն ընդհանուր ։ Հաւրանօր և զմիւս ասացեալն ունայնացուցանէ, թէ սակս անհնազան գոլոյ չէ պատ հաւատալ զմարմնոյ յարութեանն ։ Վասնզի յայտնապէս ըստ նորին ի-մաստասիրի՝ անհնդն ածէ խոստանալով իւրաստեղծ աստուածոյն զմմահութեանն, զանհնարինն ասաց առնել. զի այսպէս պատմէ Պղատոն խօսել ոմն. “Վասնզի եղական է՛ք դուք, ոչ կարէք անմահս լինել և անքակտելիս. սակայն չլուծանիցիք երբէք. և ոչ ի ինչ մահու արկածք տանանիցեն ձեզ. զի ոչ եթէ զօրագոյնք քան զկամս հրովհրտիս իմ լինիցին, որ աւելի ևս կալ է առ ի ձեր մշտնջենաւորութեան քան զայն որով կապեցաք ։” Եթէ արդարեւ խօսք և խոստք ոչ իցեն որք զայսն լսեն, ոչ յերկաւանան բնաւ՝ եթէ ըստ Պղատոնի աստուածոյն եղականաց ածորը զնոսան ասաք, զանկարելի կարծեցեալն խոստացաւ. զի որ ասէն, ոչ կարէք դուք անմահս լինել, այլ իմովս կամաւ լինիցէք, զինչ այլ յայտ առնէ՝ բայց թէ որում լինելն չմարթի, իմով առնելովս լինիցիք։ Վասն ուրեմն նա յարուցեալ զմարմինն անապական անմահացու և հոգևոր, որ ըստ Պղատոնի՝ խոստացաւ առնել զանլինելին ։ Ո՞չ ինչ այլ ևս յերկարեմ, միթէ զոր ածէ խոստացաւ, զոր աշխարհ հաւատաց ըստ խոստման այ, որոյ և հաւատացին էր խոստացեալ, տակաւին աղաղակիցեն լինել զայն անհնարաւոր. ուր մեք աղաղակեմք թէ առնելոց է զայն ածէ, որ ըստ Պղատոնի առնել զանհնարինն ։ Եւ Տարկ է ասել առ հոգւոյ երանութեն փախչել յամենայն մարմնոյ, այլ մարմին առնուլ անեղծական. ոչ ապաքէն արժան ևս է՝ զի յանապական մարմնի ինդայկեն, որք յապականացուին հեծեծելն ։ Վասնզի այսու օրինակաւ ոչ լինիցի ի նոսա ցանկութեն այն տանջողական՝ զոր ի Պղատոնէ առեալ եդ Վիրգիլիոս ասելով. “Ընդ ելն յօժարեացին գառնալ ի մարմինս ,, ։ Ո՞չ այդ ցանկութեն ասեմ ոչ ևս ունիցին, զի զմարմինն յորս վերադարձիլ յօժարիցեն, ունին ընդ իւրեսս, և այնպէս ունիցին, որ ոչ երբէք չունիցին, ոչ բնաւ և ոչ առ դոյզն ժամանակ զայն ի բաց դնիցեն մահուամբ ։

ԳԼՈՒԽ ԻԵ

Համառօտ դիմաստրա ասացուածոց Պղատոնի և Պորփիւրի. յորս եթէ տեղի միմեանց ասէին, ոչ սոսկանայինն ի հնմարտութիւն։

ԽՕՍՏԱՑԱՆ Պղատոն և Պորփիւր ինչ ինչ առանձինն. յորս եթէ միախորհն լինել կարելիս, թերևս քրիստոնեայք իսկ լեալ եին։ Պղատոն ասաց, հոգւոց յաւիտեան առանց մարմնոյ լինել անհնար է. զի այսր աղագաւ ասէ՝ իմաստնոցն և հոգիք զկնի ձիգ ժամանակաց դառնալոց են ի մարմինս։ Իսկ Պորփիւրիոս ասաց, հոգի մարքս գործեալ յորժամ դառնայ առ Տէր, ոչ և այլ ի վիշտս աշխարհի դարձցի։ Այս ահա եթէ զոր ուղիղ ետես Պղատոն՝ տուեալ էր զայն Պորփիւրի, մարքս ոգւոցն արդարոց և իմաստնոց դառնալ միանգամ ի մարդկային մարմինս, և զոր Պորփիւրն ետես ուղղակի՝ եթէ տուեալ էր Պղատոնի, այն է՝ սրբեցելոցն հոգւոց ոչ այլ դառնալ երբեք յաղէտս ապականացու մարմնոյ, որպէս զի և ոչ միւսն լինէր զնոսա ինչ յաւտուկ ասել, այլ երկոքին ասէին զուգամայնապէս և զայս և զայն, ինձ թուի եթէ անդէն ի միտ առնուին զհետևանսն, զայն եթէ՝ և հոգիք ի մարմինս անդր դառնայցեն, և մարմինս այնպիսի առնուցուն՝ յորս բարերջանիկ և անմահապէս կեցցեն։ Այսն զի ըստ Պղատոնի՝ և մարքսոյն հոգիք դարձցին ի մարդկային մարմինս. ըստ Պորփիւրի՝ ոչ դառնայցեն ի վիշտս կենցաղոյս հոգիք մարքսոյ։ Այսոսկ ուրեմն Պորփիւր կից Պղատոնի, դարձցին ի մարմինս. ասասցէ և Պղատոն կից Պորփիւրի, ոչ դառնայցեն ի վիշտս. և զուգահաւանութ իրերաց կնքեսցեն՝ դառնալ անշուշտ ի մարմինս բնաւ անվշտանալիս անցաւս։ Այս մարմինք լինիցին նոյնք՝ զորս խոստացաւ ած, յորժամ կալցի զերանելի ոգիսն յաւիտեան յիւրեանցն յաւերժական մարմինս։ Ի դոյն որպէս կարծեմ, անհակառակաբար հաւանեալն ընդ

մէզ երկրին դուքս, որը ՚ի խոստովանեցին Թէ սրբոցն Հռ դէք դառնայցեն յանմահական մարմինս, ընդունելին և զայն՝ դառնալ նոցա յիւրական մարմինս՝ յորս տարան վըշտաց աշխարհի, Տոքոք պաշտելով զնոճ սրբութիւնէ և ՀՀմարտուԹիւն առ ՚ի Հանելոյ վնասս ՚ի վշտաց աստի։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ցինչս առ Հմարիա Հաւասս յարուԹիւն Տպատակունէք Պրսաստն կամ Լաբէան կամ վարդն, Եթէ նոցայն կարծիք ՚ի մի միաս միաբանելին։

Ամենք ՚ի մերոց աստի պատուաստիրելով զՊղատոնն յաղագս պէտի ասացուածոյն օրինակի, և զի ողջամիտս ինչ ուրեք Հատցաւ, ասեն (ընդ Հակառակն) Թէ և սակս մեռանելոցն յարուԹիւն Հանդգնին մեզ կարծեալ ինչ իցէ նոքա։ Ո՞յդ Տուղղաս այնպէս իմն յառաջ բերել՝ ի պիսոն յաղագս պետուԹէ, զի խաղ առնել գոգցես Թուխցի, քան Թէ կամիցի իբր Հաստատել։ քանզի զրուցէ՝ Թէ այր ոմն կենդանացեալ պատմեալ իցէ բանս ինչ Համաձայնս պղատոնական ասացուածոց։ Ի՚ս և Հաբէն վիպասանէ, երկուց ոմանց մեռելոց ՚ի միասաւուր՝ Հանդիպել միմեանց ՚ի քառուղի տեղոջ ուրեք։ և ահա Հրամայի նոցա դարձ առնել ՚ի մարմինս իւրեանց։ որոց դարձաւորեալ յիւրեանս՝ կէսս միշտ բարեկամս, նոյնպէս և կացին մինչև մեռան։ Ոչ ակայն մատենագիրդ այդոքիկ այնպիսի յարուԹէ մարմնոյ պատմիչք լինին, զոր օրինակ գիտեմք զոմանս յարուցեալս, այս է՝ կենդանացեալս առաւաւորէ կենաց, այլ ոչ իբրև անմեռս յետ այնորիկ։ Ոչայց առաւելաչքաշ իմն արտադրէ Ոարկոս Ոսրբոն ՚ի մատենն զորս գրեաց յաղագս Հռովմէական ժողովրդեան, զորոյ ՚ի գէպ վարկայ զբուն բանն գնել աստանօր։ "Ի խոտաղբ ոմանք գրոյ գրոչմեցին՝ լինել վերստին ծնունդ մարդկան, կամ ըստ Էնտեսոց նոցա ծնունդ

կատարիլ ընդ ամն չորեքարիւր և քառասուն. իբրև զի մարմին նոյն և հոգի նոյն՝ որք երբեմն միաւորեալք էին ի մարդուն, նոքին անդրէն դառնայցեն ի միաւորել... Ա՝ պաքէն Ա՝ արբունդ այդ, կամ ախտարմոլքն չգիտեմք ոյք ոմանք, զի առանց զանազանութեան յայտնեալոյ զգան նոցա ևեթ յիշատակէ. ասացին ինչ մի՝ որ Թէ և ինքնին սուտ է, իբր զի հոգւոց անդրէն դարձելոց յիւրեանցն յառաջագիր մարմինս՝ ոչ ևս է Թողուլ զնոսիս, սակայն ընդ վայր հարեալ եղծանէ զբազում պատճառադրութիւնս՝ որովք զանհնարութիւնն յարուցեալն հակառակ մեզ չհամարտակին. Ա՝ ասն զի որք զայսդ կարծեն կամ կարծեցին, ոչ անհնաբաւոր ինչ դատեալ տեսանին՝ զի դիակունք լուծեալք յօդս, ի փոշի, ի մոխիր, յաւիշխս, ի մարմինս չաղղակեր անասնոց և կամ մարդոց ևս, անդրէն դարձեալ նոյնք լինելցին՝ որ ինչ եղեն. Ա՝ ասն այսորիկ Պղատոն և Պորփիւր, մանաւանդ այնոքիկ որք զնոսայն պատասխանեն, և գեղ ձգեն զկեանս, եթէ համաչունչք մեզ ասիցեն՝ հոգւոցն մարդոց դառնալ ի մարմինս, որպէս Պղատոն ասէ, բայց ոչ ի վիչտս երբեք դառնալ, որպէս Պորփիւր հաստատէ, մինչ զի յերկուց յայտցանէ կալմ լեցի հետեւումնն՝ զոր քրիստոնէականս քարոզէ Հաւատս, զայնպէս մարմինս վերընդունել հոգւոց՝ յորս անցաւ ամենայնիւ յերանելի կեանս յաւիժանայցեն, դոքա ասեմ առցեն և զայս ի Ա՝ արբունէ, Թէ ի նոյն մարմինս դառնայցեն՝ յորս նախ եղեն. և այսպէս իսպառ դադարեցուցէ առնոսա որ յաղագս յաւիժակաց յարուցն մարմնոյ է խնդիր.

ԳԼ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԼԻԹ

Ցաղագս հանգամանաց ՃՁտառասուն որոց ի հանգերձեալ աշխարհ.

Ա՝ՅՍՈՒՀԵՏԵՒ մնայ մեզ տեսանել, որչափ տեառն կամք իցեն ձեռն տալ Թէ զինչ արդեօք առնիցեն սուրբք

յանմահ մարմինսն հոգևորս, որոց մարմինն ոչ ևս այլ մարմնապէս՝ այլ հոգեպէս կեայ ։ Ո՜ ինչպիսի ունի լինել այն ներգործութիւն, մանաւանդ թէ հանգիստն և պարապումն, զորդարն թէ ասել կամիցիմ, գիտեմ ոչ. քանզի մարմնոյ զգայութիւնք զայդ ոչ տեսին երբէք ։ Իսկ եթէ իմացող մտօք տեսեալ ասիցեմ, որքան իցէ կամ զինչ մերս իմացողութիւն առ նորա գերազանցութիւն. քանզի անտանօր է խաղաղութիւն ա՟յ, որ 'ի վեր է քան զամենայն միտս, որպէս առաքեալ ասէ ։ Քա՞ն զո՞ր միտս, յայտ է՝ քան զմերն, գուցէ և քան զհրեշտակաց սրբոց, այլ ոչ քան զա՟յն ։ Ապա եթէ 'ի խաղաղութեան ա՟յ ունին կեալ սուրբքն, յայտ է՝ յայնմ խաղաղութեան, որ 'ի վեր է քան զամենայն միտս. վերոյ լինելն քան զմեր միտս՝ այդ չէ երկբայելի. իսկ եթէ և քան զհրեշտակացն վերոյ իցէ, մինչ զի քան զամենայն ասելն՝ և ոչ զհրեշտակս թողուցու արտաքոյ, ըստ այդմ խաղաղութիւն ա՟յ զայն պարտ է իմանալ՝ որով ինքն ա՟ծ խաղաղանայ. իսկ զայն որպէս նայն ծանեաւ, ոչ մեք կարեմք այնպէս իմանալ, և ոչ 'ի հրեշտակաց ոք. ուստի և գերազանցէ քան զամենայն միտս՝ բաց յա՟ծայնոյն ։ Այլ քանզի և մեք մերովսամն չափով խաղաղութեան նորա եղեալք կցորդք, զծայրագոյնն կալցուք ընդ մեզ և ընդ նա զխաղաղութիւն, ծայրագոյն որչափ մեզ անկ իցէ. այսու օրինակաւ գիտեն զայն հրեշտակք սուրբք ըստ իւրեանց պայմանի, բայց մարդիկ այժմ կարի ստորև քան զնոսա, որչափ և վսեմամիտք իցեն ։ Ո՞վ ոք է որ ասէրն՝ ածցուք զմտաւ, "փոքր 'ի շատէ գիտեմք, և փոքր 'ի շատէ մարգարէանամք, մինչև եկեսցէ կատարումնն... Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման„. Ա. Կոր. ԺԳ. Թ. Նոյնպէս տեսանեն այժմէն սուրբ հրեշտակք, որ և մեր հրեշտակք ասացան. իբրև զի զերծեալ մեր յիշխանութենէ խաւարի, և ընկալեալք զառհաւատչեայ հոգւոյն՝ փոխեցաք յարքայութիւն Ք՟նի, նոցունց հրեշտակացն բաժանորդս գրեալք. ընդ որոց հասարակորդ մեզ լինիցի սուրբն այն և ըղձալի քաղաքն ա՟յ, որոյ վասն այսչափ մա-

տեղագրեցաւ գիրս ։ Ի չգալ ուրեմն մեր հրեշտակը ևն հրեշտակին այ , զոր օրինակ և Ինձն այ՝ Ինչ մեր է ։ Այ ևն , զի ոչ թողին զնած ։ մեր են , զի իւրեանց գաղաբացիս ընկալան զմեզ ։ Ի գոլ ասաց տէր Ինձ ։ “ Ո՛չ ցոյլ լերուք , մի արհամարհիցէք զմի ի փոքրկանացս յայսցանէ ։ ասեմ ձեզ ։ զի հրեշտակք նոցա Համապատ տեսանեն զերեսս հօր իմոյ որ յերկինս է ։ ” Ա՛ռ . ծէ . 10 ։ Ի չգալ զոր օրինակ տեսանեն նոքա , տեսանելոց եմք և մեք ։ այլ չև ևս նոյնպէս տեսանեմք ։ և յայս իսկ ասէ առաքեալ զիրքր ինչ յառաջ յիշատակէաւն , “ Ի՛մ իրրև ընդ հայելի տեսանեմք օրինակաւ , այլ յայնժամ դէմ յանդիման ,, ։ Ա՛ն որոյ մեզ յաղթանակ Հաւատոց այս տեսուածի պահել կայ ։ զորմէ և Յովհաննէս առաքեալ ասէ ։ “ Յորժամ նա յայտնեսցի , նման նմա լինելոց եմք ։ զի տեսանելոց եմք զնա որպէս և էն ,, ։ ՅՀՌ . Ջ ։ 2 ։ Ա՛ստ ոչ զնածեղէն գայտնուածէն նոքա է խնամալ , և ոչ անդամ ինչ՝ որպիսի մեքս ունիմք ի մարմնի , այնու անուամբ կուչցեալ ։

Ա՛յմն իրրի յորժամ Հարցուած առ իս լինիցի , զինչ առնիցեն արդեօք սուրբքդ ի հոգևոր մարմնի անդ , ոչ զոր տեսանեին՝ ասեմ , այլ զոր Հաւատային՝ ասացից , ըստ սաղմոսին ընթերցուածոյ ։ “ Հաւատացի զոր և խոսեցայ ,, ։ Այս արդ ասեմ , տեսանելոց են զնած ի նոյն ի մարմնի իւրեանց ։ բայց թէ մարմնոյն միջնորդաւ տեսանիցեն , զոր օրինակ տեսանեմք այժմ զարև , զլուսին , զաստեղս , զծով և զցամաք և զորս ի նմա , խընդիրք ոչ դուզնաբերայ է ։ Վանգի օտար է ասել թէ ունիցեն յայնժամ աուրբքն մարմնոյս այսպիսի , զի ոչ կարիցեն երբ և կամին՝ փակել կամ բանալ զաչս ։ բայց օտար և սին՝ թէ անտանօթ փակել ուրուք զաչս՝ ոչ տեսանիցէ զնած ։ Ո՛վ ահա Հղիսէոս մարգարէ ի բացեալ մարմնով եռեւ զՀեզի զպատանեակ իւր՝ զի առնոյր զընծայս մատուցեալս ի Նեեմանայ ասորւոյ , զոր նա ինքն մարգարէն ապաքինեաց ի զազիր բորոտութենէն , թէպէտ և պատանին անխորատ ոչ յանդիման գոլով տեսանն իւրոյ՝ Հա-

